Ի. Ա. Կորաբլյով

ՅԱՆՆԻԲԱԼ

ԿՈՂԿԻՆ

ԱՐԵՎՄՏՅ-ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ
ԵՐԿՐՆԵՐԸ Մ.Թ.Ա. III-II Դ.Դ.
ՍԱԿԵՏՆԵՐ
ՍԱՐՄԱՏՆԵՐ
ՍԱՍԱՆԻԴՆԵՐ
ՍԱՍԱՆԻԴՆԵՐ
ՍԱՍԱՆԻԴ

8И
У-29

Ի. Ց Կորաբլով

ՅԱՆԻԲԱԼ

1860

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1984

ԳՄԴ 63.3 (0) 3
Կ—290

Ռուսերեն II հրատարակությունից
թարգմանեց Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ
խմբագիր՝ Ս. Մ. ԳՐԳԱՇԱՐՅԱՆ

Կորաբլյով Ի. Ճ.
Կ—290 Հաննիբալ: (Ռուս. թարգմ. Վ. Մ. Վարդանյանը).— Եր., Հայաստան, 1984.— 488 էջ: ՝:

Գրքում պատմվում է վաղ ժամանակների խոշորագույն զորավարներից մեկի՝ Հաննիբալի, Կարթագենի և Հռոմի մ. թ. ա. III—II դդ. պատերազմների և Կարթագենի կործանման պատճառների մասին։

Կ $\frac{0504010000}{701\ (01)\ 84}$ 63—84

ԳՄԴ 63.3 (0) 3
9 (Մ) 03

© «Наука», 1981 г.
© Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1984

Մորս՝ ՅՈՒԼԻԱ ԲՈՐԻՍՈՎՆԱՅԻՆ

Մեծ Կարթագենը երբեք պատերազմ է մղել։ Առաջինից հետո այն տակավին մնում էր որպես մեծ տերություն, երկրորդից հետո դեռևս գոյատևում էր, երրորդից հետո՝ ոչնչացվեց։

ՊԵՐՏՈՂ ԲՐԵԽՏ

ՆԱԽԱԲԱՆ

Միջերկրածովյան ավազանի երկրների և ժողովուրդների պատմության մեջ հույժ կարևոր իրադարձություններից մեկը Պունիկյան II պատերազմն էր (218—201 թթ.)։ Այն վերջ դրեց ժամանակի երկու խոշորագույն տերությունների՝ Կարթագենի ու Հռոմի, մրցակցությանը, «համաշխարհային» տիրապետության, այսինքն՝ Պիրենեյան թերակղզուց մինչև Եփրատ, հյուսիսային մերձսևծովյան երկրամասի սկյութական տափաստաններից մինչև Սահարայի անբերրի տարածություններն ընկած երկրամասերի վրա իշխելու համար նրանց մղած պայքարին։ Հաղթանակեց Հռոմը։ Նրա հաղթանակը երկար ժամանակով կանխորոշեց ամբողջ անտիկ աշխարհի ճակատագիրը։ Սակայն իրենց տիրապետությունը հաստատելու համար դեռ հռոմայեցիները պիտի պատերազմեին Գալլիայում, Իսպանիայում, Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում, Աֆրիկայում և Կովկասում։ Դեռ արյան գետեր պիտի հեղվեին ճակատամարտերի ժամանակ և անխնա պիտի ճնշվեին հռոմեական լծի դեմ ժողովուրդների ընդվզումները, դեռ սարսափելի ավերածության պիտի ենթարկվեին հարուստ պետությունները, և Իտալիա բերվեին Միջերկրածովի տարբեր ծայրերից հափշտակված բազմահազար ստրուկներ։ Եվ ամբողջ տիեզերքը (համենայն դեպս այդպես էր թվում) հնազանդությամբ պիտի խոնարհվեր բիրտ ու ամբարտավան տիրակալների առջև։ Պիտի անցներ մոտավորապես երկու հարյուր տարի, և հռոմայեցիները այդ արյունահեղ ազանները պիտի դասեին իրենց արժանիքների շարքը։ Նրանց ֆանատիզմը իրենց հպատակներին պիտի ներշնչեին «հռոմեական խաղաղության» վերաբերյալ միտքը, որն իբր թե փոխարինել էր նախկին անիշխանությունը՝ միայն հռոմեական զենքի հաղթանակների շնորհիվ։ Նրանց ամբարտավանությամբ պիտի քամահրեին մյուս ժողովուրդների*

* Գրքում նշած բոլոր թվականները վերաբերում են մեր թվարկությունից առաջ ընթացող ժամանակներին։

մշակութային նվաճումները, և հռոմեական խոշորագույն բանաստեղծ Վերգիլիոսը պիտի կոչեր.

Ճնշավորված պղինձը բաղ կոեն ուրիշներն ավելի երբոբեն,
Նաև մարմարից բաղ նաեեն կենդանի դեմքեր,
Դատավեեները երանք ավելի լավ են վարում ու դիտում երկնային շարժումներ.
Եղկնով ավելի լավ են գծում և ազդարարում լուսատուների ծագումը:
Հռոմայեցի՛, հիշիր. ադ քո արվեստն է՝
Տիրաբար կառավարել ժողովուրդներին,
Խաղաղություն և կարգ հաստատել,
Խնայել ճնազանդներին և հաղթել անհնազանդներին:

Սակայն, ընդհուպ մինչև բարբարոսների արշավանքները, որոնք ոչնչացրեցին Հռոմի ստեղծած հսկայական տերությունը, հռոմայեցիներին երբեք չի վիճակվի ընդհարվել ավելի վտանգավոր ախոյանի հետ, քան Կարթագենն էր. հետագայում Հռոմը երբեք այդպես մոտ չի լինի կործանման, ինչպես Պունիկյան II պատերազմի ժամանակ։ Զուր չէր, որ Վերգիլիոսի ժամանակակից, հռոմեական խոշորագույն պատմագիր Տիտոս Լիվիոսը, սկսելով III դ. վերջին քառորդի իրադարձությունների պատմությունը, հարկ համարեց նախազգուշացնել իր ընթերցողին. «Ես գրելու եմ երբևիցե մղված բոլոր պատերազմներից առավել հիշարժանի մասին, մի պատերազմի, որը կարթագենցիները մղեցին հռոմեական ժողովրդի դեմ։ Չէ՞ որ դեռ երբեք ավելի հզոր պետություններ զենք չեն բարձրացրել միմյանց վրա և նրանք դեռ երբեք չեն հասել այդպիսի ուժի ու հզորության... Եվ ռազմական բախտն այն աստիճան փոփոխական էր, որ աղետին առավել մոտիկ եղան նրանք, ովքեր հաղթել էին» (Լիվիոս, 21, 1, 1—2)։ Ուշադիր ընթերցողն առանց դժվարության այստեղ կգտնի այն մտքերի գրեթե բառացի վերարտադրությունը, որոնց նա արդեն հանդիպել է թե՛ հույն-պարսկական պատերազմների մասին Հերոդոտոսի երկասիրության նախաբանում, թե՛ Պելոպոնեսյան պատերազմի մասին Թուկիդիդեսի գրքի սկզբում։ Ե՛վ մեկը, և՛ մյուսը շեշտում էին, որ իրենք խոսում են պատմության մեջ ամենակարևոր և հիշարժան անցքերի մասին։ Սակայն մեր առջև առավել հեղինակավոր գրական նմուշների պարզապես մեխանիկական պատճենահանումը չէ։ Տիտոս Լիվիոսը վերարտադրում է հատկապես Պունիկյան II պատերազմի այն գնահատականը, որը նա գտել է իր նախորդների՝ հռոմայեցիների ու հույների, աշխատություններում և որի հիմնավորվածության մեջ ինքը, անկասկած, համոզված էր։

Եվ նրանք չէին սխալվում։ Եթե անտիկ և միջնադարյան շրջանի Արևմտյան Եվրոպայի մշակույթը լատինականն էր և ոչ թե կարթագենականը,

ապա դա տեղի ունեցավ ամենից առաջ այն պատճառով, որ հռոմայեցիները կարողացան հաղթել իրենց ամենասարսափելի հակառակորդին, ջախջախել և ոչնչացնել նրան։

Բայց տարօրինակ բան. չնայած Հռոմը հաղթեց, սակայն Պունիկյան II պատերազմը մեր գիտակցության մեջ մշտապես առնչվում է կարթագենյան պարտված զորավարի անվան հետ։

Ամեն ինչ այդ մարդու մեջ ապշեցնող էր. իր հաղթանակների ժամանակ նրա՝ ժամանակակիցների տեսակետով անթույլատրելի երիտասարդությունը և արշավային կյանքի պայմաններում զինվորական ժուժկալությունը, սառնարյունությունն ու ֆիզիկական դիմացկունությունը, ռազմական գործի գաղտնիքների տիրապետումը և շեշտված դեմոկրատականությունը, կայունությունը, նպատակասլացությունը և միաժամանակ բոլորի կողմից ընդունված բարոյական նորմերի արհամարհումը, դաժանությունը, նենգությունը։ Հիշենք այն բնութագիրը, որ Տիտոս Լիվիոսը (21, 4, 3—9) տվել է Հաննիբալին. «Դեռ երբեք միևնույն բնավորությունն այդպես չի ընտելացել հույժ տարբեր հանգամանքների՝ ենթարկվելուն և հրամայելուն... Որքան նա մեծ քաջություն էր ցուցաբերում, իր վրա առնելով վտանգը, այնքան մեծ իմաստություն էր դրսևորում բուն վտանգի մեջ։ Ոչ մի ծանրություն չէր հոգնեցնում նրա մարմինը և ոչ էլ հոգին ընկճում։ Նա միևնույն համբերատարությամբ տանում էր շոգը և ցուրտը. կերակրի ու ըմպելիքի չափը նա որոշում էր, ելնելով բնական պահանջից և ոչ թե բավականությունից. նա ժամանակ էր ընտրում արթնության և քնի համար՝ շտարբերելով ցերեկը գիշերվանից, աշխատանքից ավելացած ժամանակը նա նվիրում էր հանգստին, որը չէր ընտնում փափուկ օթյակում և ոչ էլ լռության մեջ։ Շատերը հաճախ տեսնում էին, թե ինչպես նա, փաթաթվելով զինվորական թիկնոցում, քնել է գետնին, պահակություն անող զինվորների մեջ։ Հագուստը նրան ոչնչով չէր տարբերում հասակակիցներից. նրան կարելի էր ճանաչել սպառազենքից ու ձիուց։ Նա շատ էր առաջ անցնում հեծյալներից ու հետևազորայիններից, առաջինն էր մտնում մարտի մեջ, վերջինը հեռանում ճակատամարտից։ Այդքան բաղում արիությունները հավասարակշռվում էին հսկայական թերություններով՝ անմարդկային դաժանությամբ, պունիկականից առավել ուխտադրժությամբ. ոչ մի ճշմարտություն, ոչ մի սրբություն, ոչ մի երկյուղ աստվածներից, ոչ մի երդում, ոչ մի խրոնմանք»։

Այս առնչությամբ ուշադրավ է Փրոնտինոսի պատմածը (3, 16, 4) կատարելագործված այն նենգության մասին, որով Հաննիբալը դատաստան էր տեսնում հակառակորդի մոտ փախած իր զինվորների հետ։ Տեղեկանալով իր ճամբարում գտնվող հռոմեական լեր-

տեսների մասին, նա հայտարարեց, որ փախստականները գործում էին համաձայն իր հրամանի և պետք է հետախուզեին հակառակորդի ծրագրերն ու դիտավորությունները։ Հռոմայեցիները հատեցին փախստականների ձեռքերը և նրանց հանձնեցին Հաննիբալին։

Դիոդորոսը (26,2) նույնպես, հետևելով իր աղբյուրներին, նշում է Հաննիբալի ֆիզիկական պիտանիությունը մարտական կյանքին և նրա զինվորական լավ պատրաստվածությունը. մեկ այլ հատվածում (29, 19) Դիոդորոսը խոսում է նաև այն մասին, որ Հաննիբալը ղեկավարում էր բազմացեղ և բազմալեզու զորք. խոսում նրա անպարտելիության մասին և այլն։ Հաննիբալը հայտնի էր նաև որպես գրող, դեռևս նրա կենսագիր Կորնելիոս Նեպոսը (Կորն. Նեպ., Հաննիբ., 13, 2) իր լսարանին կարող էր հիշեցնել, որ Հաննիբալը հունարեն լեզվով երկասիրել է մի քանի գիրք, այդ թվում՝ «Ռոդոսցիներին, Ասիայում Գն. Մանլիոս Վոլսոնոսի կատարած գործերի մասին»։ Հռոմի հանդեպ թշնամական ավանդությունը (Հուստինոս, 32, 4, 9—11), կամենալով առաջին պլանի վրա մղել Հաննիբալի անձնական բարեմասնությունները, նշում է նրա կայունությունը կենցաղային գայթակղությունների հանդեպ («այդքան գերուհիների մեջ»,— գրում է Հուստինոսը և ավելացնում,— «կարելի էր կասկածի տակ առնել նրա աֆրիկական ծագումը»)։ Շնորհիվ իր չափավորության, շարունակում է Հուստինոսը (32, 4, 12), Հաննիբալը, գլխավորելով տարբեր ցեղերից կազմված բանակ, ոչ մի անգամ չդարձավ խարեության կամ դավաճանության զոհ։

Սակայն Ապպիանոսն (Ապպ. Հաննիբ., 43) այլ կերպ է պատկերում Հաննիբալի կենսաձևն այն հանգամանքներում, երբ վճռվում էր Կապուայի ճակատագիրը. Հաննիբալը Լուկանիայում տրվում է ճոխության ու սիրո։ Այս մանրամասնը, անշուշտ, ծագում է կարթագենյան զորավարի հանդեպ թշնամի հռոմեական պատմագրությունից։

Չգտնելով ըմբռնել հռոմայեցիների հաջողությունների և կարթագենցիների պարտության իրական պատճառները, Պոլիբիոսը, որը, կարելի է ասել, գրել է անցքերից անմիջապես հետո, իր հիմնական ուշադրությունը, որքանով այդ մասին կարելի է դատել, հատկացրել է Հաննիբալ-զորապետին (Պոլիբիոս, 11, 19). «... իսկ ո՞վ գովեստներ չի մատուցի այդ մարդու զորավարական արվեստին, արիությանն ու մարտական կյանքի հանդեպ հարմարունակությանը՝ նկատի առնելով մեծ և փոքր ճակատամարտերը, պաշարումները, քաղաքների դավաճանությունները, դժվարին հանգամանքները և ամբողջ մտահղացման ու կատարածի վիթխարությունը։ Ընդ որում Իտալիայում, Հռոմի դեմ տասնվեց տարի պատերազմելով, Հաննիբալը ոչ մի անգամ զորքը դուրս չի հանել մարտադաշտից, բայց հմուտ նավավարի նման, այն իր իշխանության տակ պահելով,

այդպիսի մեծաթիվ զորքը նա է պահել իր դեմ ուղղված խռովություններից ու երկպառակտչական ընդհարումներից, թեև նրա զինվորները ոչ միայն մի ցեղի, այլև նույնիսկ մի ժողովրդի չէին պատկանում։ Չէ որ նրա մոտ կային լիբիացիներ, իբերներ, լիգուրներ, գալլեր, փունիկացիներ, իտալիկներ, հույներ, որոնք ի բնե ոչինչ ընդհանուր չունեին. ո՛չ ընդհանուր օրենքներ ու սովորություններ, ո՛չ ընդհանուր լեզու կամ որևէ այլ բան։ Սակայն առաջնորդի իմաստությունը, այդքան բազմահույլ ու այդպան ժողովուրդներին հարկադրում էր անսալ մեկ հրամանի ու ենթարկվել մեկ կամքի, թեև հանգամանքները փոխվում էին, և ճակատագիրը հաճախակի մերթ նպաստում էր դրանց, մերթ՝ հակառակը։ Այդ պատճառով այս բնագավառում առաջնորդի ունեցած տաղանդը զարմանքի է արժանի, և կարելի է վստահորեն ասել, որ եթե անգամ նա պատերազմն սկսեր աշխարհի ուրիշ մասերում և, ի վերջո, գնար հռոմայեցիների դեմ, նրա մտահղացումներից ոչ մեկը չէր մնա անկատար։ Իսկ այժմ, սկսելով նրանցից, ում վերջում էր անհրաժեշտ դիմել, նա, պատերազմելով նրանց դեմ, թե՛ սկսեց և թե՛ ավարտեց իր գործը։ Պոլիբիոսը չուրյան չի մատնում նաև Հաննիբալի անձնական հատկությունները։ Սակայն, խոսելով դրանց մասին, նա բացառիկ զսպվածություն է դրսևորել։ «Ոմանք կարծում են,— գրել է նա (9, 22, 8—10),— որ Հաննիբալը չափազանց դաժան է եղել, իսկ ոմանք էլ՝ արծաթասեր. սակայն դրանցից չէ ճշմարտությունն ասել թե՛ նրա և թե՛ նրանց մասին, ովքեր փորում են պետական գործերը։ Ուրիշներն ասում են, որ մարդու բնական հատկությունները երևան են գալիս արտասովոր հանգամանքներում, և որոշ մարդիկ իրենց դրսևորում են երջանկության ու իշխանության մեջ, իսկ ուրիշները, ընդհակառակը, դժբախտության մեջ, անկախ այն բանից, թե մինչ այդ ինչպես են նրանք պահել իրենց։ Բայց ինձ, ընդհակառակը, սովածն անհավատալի է թվում։ Իմ կարծիքով բազմերը, նույնիսկ շատ հաճախ, մարդիկ ստիպված խոսում ու գործում են իրենց պատվավորություններին հակառակ, մերթ անսալով բարեկամների հորդորներին, մերթ դյուրափոփոխ անցքերի ազդեցության ներքո»։ Եվ, այնուհետև (9, 23, 4). «Թեև անհավատալի է, որ միևնույն բնավորությունները դրսևորեն հույժ հակադիր գծեր, սակայն, ստիպված լինելով համապատասխանել փոփոխվող հանգամանքներին, որոշ տիրակալներ շրջապատի հանդեպ ցուցաբերում են իրենց բնավորությանը հակասող վերաբերմունք, այնպես որ դրա պատճառով նրանց բնածին հատկություններն ոչ միայն չեն դրսևորվում, այլև ավելի շուտ նսեմանում են»։ Մեջբերելով այնպիսի փաստական նյութ, որն իր կարծիքով հաստատում է իր տեսությունը, դրա հետ մեկտեղ խոսելով Հաննիբալի մի քանի՝ եթե մո-

տենանք «սովորական» չափանիշով, դատապարտելի արարքների մասին, որոնք կատարվել են կա՛մ ընկերների, կա՛մ քաղաքական անհրաժեշտության ազդեցությամբ, Պոլիբիոսը եզրակացնում է (9, 26, 10—11). «Ահա թե ինչու հույժ դժվար է Հաննիբալի բնավորության մասին խոսելը, քանզի նրա վրա ներգործում էին թե՛ ընկերների հորդորները, թե՛ գործերի վիճակը։ Բավական է ասել, որ կարթագենցիների մոտ նա հռչակված էր որպես արծաթասեր, իսկ հռոմայեցիների մոտ՝ դաժան»։ Ինչպես կարելի է տեսնել, Պոլիբիոսն ամենևին չի ժխտում ո՛չ Հաննիբալի շահամոլությունը, ո՛չ էլ դաժանությունը, թեև փորձում է (և այդ սկզբունքորեն անընդունելի է թվում մեզ) նրա վրայից վերցնել այս կամ այն արարքների համար անձնական պատասխանատվությունը։

Իհարկե, չի կարելի հաշվի չառնել, որ Հաննիբալի վերաբերյալ մեր տեղեկությունները մենք քաղում ենք առավելապես այն երկասիրություններից, որոնք վերարտադրում են հռոմեական տեսակետը կամ հարմարվում նրան։ Այդ պատճառով հաղիվ թե կարելի է մինչև վերջ վստահել նրանց, երբ չափազանց մեծ թերություններ են վերագրում Հաննիբալին։ Կարելի է կարծել, որ այս տեսակետից Հաննիբալն ըստ էության դույզն իսկ չի տարբերվել իր հունական և հռոմեական պաշտոնակիցներից։ Հիշենք, որ հեռավոր անցյալում (և արդյո՞ք միայն հեռավոր անցյալում) կողոպուտները, բռնությունները, ավերածությունները և ստրկացումը կազմում էին, եթե կարելի է այսպես արտահայտվել, պատերազմի առօրյան։ Մուրիայի ու Կորնթոսի, Սագունտումի և Կարթագենի, Նումանտիայի ու Երուսաղեմի ոչնչացումը, վանդալների գրաված ու կողոպտած բուն իսկ Հռոմի ողբերգությունը, ժամանակակիցների ուշադրությունը գրավեցին լոկ այն բանի ուժով, ինչ տեղի էր ունեցել։ Լարված զգաստության են կոչում նաև պունիկյան զորավարին հույժ դրվատելը, նրա տաղանդով չափազանց հիանալը։ Որոշ դեպքերում, երբ այդ մասին հռոմայեցիների թշնամիներն են խոսում, հստակորեն նկատելի է Հռոմի հանդեպ եղած ատելությունը, այլ դեպքերում՝ Հռոմի (որն անզոր եղավ մենամարտում հաղթել այնքան ահեղ հակառակորդին) փառքը չափազանցելու ցանկությունը, երրորդ դեպքերում՝ հռոմեական զորապետերի կաճառից Սկիպիոնին (որը Զամայի մոտ տրված ճակատամարտում շահեց միակ և իրրև վճռական հաղթանակը Հաննիբալի նկատմամբ) առանձնացնելը։

Բայց և այնպես փաստը մնում է փաստ։ Թշնամիներից ջախջախված ու հալածված, իր բոլոր հույսերի ու ծրագրերի խորտակումն ապրած աքսորական, իր օրերն անցկացնելով հայրենիքից հեռու, նա հավասարվեց իր ժամանակի մեծագույն զորավարներին, դրվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողքին։ Այնքան ուժեղ էր Հաննիբալի գործած տպավորությունն

այն ժամանակվա ամբողջ աշխարհի վրա, այնպես վառ էին հռոմայեցիների դեմ նրա տարած փայլուն հաղթանակների մասին հիշողությունները, որ դրանք իրենցով ծածկեցին թե՛ նրա պարտությունը, թե՛ տարածությունը և թե՛ կործանումը։ Նույնիսկ մ. թ. I—II դդ. պատմագիրներ Տիտոս Լիվիոսի և Ապպիանոսի մոտ որոշակիորեն զգացվում է այն սարսափը, որ զգում էին հռոմայեցիները լոկ այն մտքից, որ «հավերժական թշնամի» դարպասների մոտ կանգնած է Հաննիբալը։ Հաննիբալի անձնավորությունը իր կնիքն է թողել III դ. վերջին քառորդի և II դ. առաջին քառորդի քաղաքական ու հասարակական կյանքի բոլոր իրադարձությունների վրա։ Եվ հենց միայն դա արդարացնում է նրա հանդեպ մեր հետաքրքրությունը։ Նրա արտասովոր ճակատագիրը, զորավարի անվիճելի տաղանդը ստիպում են խորհել այն մասին, թե ինչպիսին է եղել այդ մարդը, ո՞րն էր նրա ուժը և թուլությունը, ո՞րն է ազդեցության այն աստիճանը, որը պատմական զարգացման ընթացքի վրա կարող է թողնել նման անանավոր անձնավորությունը։

Հեղինակը հեռու է այն մտքից, թե իրեն հաջողվել է լիովին սպառել Հաննիբալի մասին եղած անհատնում գրականությունը, սակայն նա հույս ունի, որ առաջարկվող աշխատանքում այս կամ այն կերպ հաշվի են առնված հիմնական տեսակետները։ Իհարկե, մեր նպատակից դուրս է Հաննիբալի մասին XIX—XX դդ. բազմաթիվ ուսումնասիրողների և քաղաքական գործիչների արտահայտած այլազան կարծիքների շարադրումն ու վերլուծումը. դրա համար կպահանջվեր առանձին գիրք։ Բացի այդ, մեզ հետաքրքրում է իրական մարդը, և ոչ այն, որպիսին ներկայանում է նա հեռավոր սերունդներին, այսինքն՝ ոչ թե Հաննիբալի մասին եղած առասպելը։ Այստեղ նկատենք միայն, որ Հաննիբալի, որպես բոլոր ժամանակների մեծագույն զորավարներից մեկի, մասին անտիկ պատմագրությունից ժառանգած պատկերացումը հաստատուն կերպով արմատավորվել է թե՛ գիտահետազոտական, թե՛ հանրամատչելի գրականության մեջ։ Հաննիբալ զորավարը, որ ոչ մի պարտություն չի կրել, փայլուն հաղթանակներ է տարել, սակայն նրան դավաճանել է առևտրական հանրապետության ժլատ, շահամոլ խորհուրդը,— Հաննիբալի մասին նման նեղմտանական պատկերացումը դարձել է յուրատեսակ մաշված ճշմարտություն։ Ինչ խոսք, Կաննեն Հաննիբալի զորավարական հանճարի գագաթնակետն էր և, ընդհանրապես, ռազմական արվեստի գագաթներից մեկը։ Սակայն մի՞թե Հաննիբալ-զորապետի կյանքը կարելի է հանգեցնել միայն Կաննեին։ Թույլատրելի՞ է արդյոք զորավարական գործունեության մակարդակը չափել միայն մեկ կամ երկու-երեք թռիչքով և ոչ թե նրա զորավարական ամբողջ գործունեությամբ, այն ար-

գյունքներով, որոնց նա հասավ։ Մեծ զորավար... սակայն ի՞նչ է թաքնված այս բառերի ետևում։ Մի՞թե զորավարի մեծությունը որոշվում է միայն նրանով, որ նա իր ռազմական գործունեության ընթացքում շահել է այսքան ճակատամարտեր և հաղթանակ տարել այսքան պատերազմներում։ Չպե՞տք է արդյոք նկատի առնել նաև այն նպատակները, որոնք նա դրել է իր առջև, այն, ինչի համար պատերազմներ են մղվում և հաղթանակներ տարվում։ Մի՞թե կարելի է մեծ անվանել այն մարդուն, որն ուրիշ մարդկանց բերում է ստրկացում, ավերածություններ ու կործանում։

... Արևը տակավին չի երևում հորիզոնի վրա։ Վաղ առավոտ է։ Բոցի բարձր սյունն է զոհասեղանի վերևում։ Այդ կարթագենյան զորավարն է զոհ մատուցում ահեղ ԲաալՀամոնին և քաղաքի հովանավոր Բաալի զարդ Տիննիտին։ Մոռալ են հինավուրց տաճարում խուռներամ լցված զորականները. բարձր գլխարկներ կրող քրմերը ձեռքները կարկառել են աստվածներին։ Հանդիսավոր օրհներգություններ, բարձրագոչ կանչեր, անորոշ շշնջյուն... Եվ ինքնամյա տղան, զորավարի անդրանիկ որդին, բռնելով զոհասեղանի «եղջյուրից», հոր հրամանով երդում է տալիս։ Այդ երդմանը նա ցկյանս հավատարիմ էր մնալու։

Գլուխ առաջին

ՀԱՆՆԻԲԱԼԻ ԵՐԴՈՒՄԸ

Ի շարս այն բարդ խնդիրների, որոնց բախվում է հին աշխարհի պատմաբանը, հույժ դժվարիններից մեկն այս կամ այն անձնավորության կյանքի ճշգրիտ թվականների որոշումն է։ Շատ հաճախ մենք ստիպված ենք լինում սահմանափակվել անորոշ ուղղանիշներով, լավագույն դեպքում՝ մեկ տասնամյակի ճշգրտությամբ, նույնիսկ երբ խոսքը այնպիսի անձնավորությունների մասին է, որոնց կյանքն ու գործունեությունը իր տարբեր փուլերով գրավել է հին պատմագիրների ուշադրությունը։ Ճիշտ է, մեր տրամադրության տակ կան որոշ տվյալներ, որոնք թույլ են տալիս ավելի կամ պակաս արժանահավատությամբ որոշել Հաննիբալի կենսագրության ժամանակագրական հենքը։ Սակայն մեջբերելով դրանք, հին հեղինակները ամենևին էլ հետամուտ չէին այն բանին, որպեսզի նշեն այդ մարդու կենսուղու ինչ որ կարևոր փուլերը։ Խոսելով Հաննիբալի տարիքի և դարաշրջանի տեսակետից նրա ապշեցուցիչ երիտասարդության մասին, այն հանգամանքներում, երբ նա ընդունում էր ամենապատասխանատու քաղաքական վճիռներն ու շահում ամենափայ-

ռան հաղթանակները, նրանք փորձել են մի անգամ ևս ընդգծել նրա հազվագյուտ ընդունակությունները։

Այդ տվյալները խմբվում են երեք հիմնական իրադարձությունների՝ նշանավոր երդման, Պիրենեյան թերակղզում զորքերի հրամանատարի պաշտոնին անցնելու և Իտալիայից հայրենիք վերադառնալու շուրջը։ Բոլոր նրանք, ովքեր գրել են Հաննիբալի մասին, համերաշխ են այն բանում, որ նա իր երդումը տվել է ինը տարեկան հասակում (Պոլիբիոս, 3, 11, 15, Կորն. Նեպ. Հաննիբ., 2, 3, Լիվիոս, 21, 1, 4)։ Այդ անցքը տեղի է ունեցել 237 թ.։ Զորքերի հրամանատարությունը նա ընդունել է 221 թ.։ Ըստ Կորնելիոս Նեպոսի (2, 3), Հաննիբալն այն ժամանակ քսանհինգ տարեկան էլ չկար։ Այնինչ նշանակալիորեն ավելի ուշ շրջանի պատմագիր Եվտրոպիոսը (Եվտրոպիոս, 3, 7) գտնում է, որ Սագունտումի պաշարումը Հաննիբալն սկսել է քսանմյա հասակում և, հետևաբար, հրամանատարությունը նա ընդունել է, երբ տակավին ավելի երիտասարդ է եղել։ Բյուզանդացի Զոնարասի (8, 21) կարծիքով, որը շարադրում է Դիոն Կասիոսին, Հաննիբալն իշխանության է հասել քսանվեց տարեկան հասակում։ Պոլիբիոսի (15, 19, 3) մեկ այլ ցուցումի համաձայն, 203 թ., երբ պունիկյան զորավարը Իտալիայից վերադարձավ հայրենիք, նա քառասունհինգից անց էր։ Պավլոս Օրոսիոսի (4, 19, 4) ասելով, Հաննիբալը Կարթագեն է վերադարձել իր հոր հետ՝ Իսպանիա մեկնելուց երեսունմեկ տարի հետո, այսինքն՝ քառասունհինգ տարեկան հասակում։ Ելնելով դրանից, մենք կարող ենք եզրակացնել, որ, անտիկ ավանդության տվյալներով, Հաննիբալը ծնվել է կամ մինչև 241 թ. (Եվտրոպիոս), կամ 246 թ. (Տիտոս Լիվիոս, Կորնելիոս Նեպոս), 247 թ. (Զոնարաս), 248 թ. (Դիոդորոս)։ Ըստ Պոլիբիոսի, Հաննիբալի ծննդյան ժամանակն է 247—246 թթ.։

Աղբյուրների անհամաձայնությունը բացատրվում է ըստ երևույթին նրանով, որ հին պատմագիրներին մատչելի չէին այն վավերագրերը, որտեղ նշված էր Հաննիբալի ծննդյան թվականը (եթե ենթադրենք, որ այդպիսի վավերագրեր գոյություն են ունեցել) և ստիպված են եղել բավարարվել տեղեկատվության մոտավոր ցուցումներով։ Մենք ևս ուրիշ ելք չունենք։ Մեզ մոտ է արձանագրել, որ մոտավորապես 248 և 246 թթ. միջև, իսկ ավելի ճիշտ՝ մոտ 246 թ., կարթագենյան խոշոր զորապետ և քաղաքական գործիչ Համիլկար Բարկայի՝ Հաննիբալի՝ որդու, ընտանիքում ծնվեց տղա։ Նա ընտանիքը, ըստ երևույթին, պատկանում էր կարթագենյան բարձր արիստոկրատիային և իր տոհմաբանությունը սկսում էր քաղաքի առասպելական հիմնադրումի էլիսայի ուղեկիցներից մեկից (տե՛ս Սիլ. Իտ., [illegible]), ուստի իր ազգանվան կործանումից հետո ատվածացվել է,

որքանով կարելի է դատել, Տիննիտ անունով։ Հայրը իրեն նեղություն չտվեց անվան ընտրությամբ. նորածնին անվանեցին պունիկյան ամենատարածված՝ Հաննիբալ անվամբ (Հաննի Բաալ՝ Բաալն իմ նկատմամբ ողորմած է. ռուսերեն սովորաբար վերարտադրվում է լատինական ձևը՝ Hannibal), թերևս ի հիշատակ պապի, որն, իհարկե, այն ժամանակ վախճանված էր։ Հենց այդ ժամանակ կարթագենցիները հուսահատ մի վերջին ճիգով փորձեցին Հռոմից հաղթանակ կորզել Պունիկյան I պատերազմում և Սիցիլիայում (որտեղ ծավալվում էին հիմնական գործողությունները) զորքերի հրամանատար նշանակեցին Համիլկար Բարկային։

I

Կարթագենի և Հռոմի միջև պայքարը, որի մեջ այնքան աչքառու դեր կատարեցին և՛ Համիլկար Բարկան, և՛ Հաննիբալը, Արևմտյան Միջերկրականի երկրների նախորդ ամբողջ զարգացման բնական լրումն էր։

Տյուրոսից գաղթածների կողմից 825 թ. հիմնադրված Կարթագենը համեմատաբար վաղ (արդեն VII դ.) դարձավ միջերկրածովյան առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը, ինչին բավական նպաստեց նրա աշխարհագրական բացառիկ բարենպաստ դիրքը, և հանդես եկավ այդ շրջանում գերիշխելու հավակնություններով։ Սիցիլիայում, Լիգուրիայում և Պիրենեյան թերակղզում հունական գաղութաբնակների, ինչպես նաև իսպանական հնագույն պետության՝ Տարտեսսոսի դեմ մղած անողոք պայքարի ընթացքում Կարթագենին հաջողվեց էտրուսկների դաշնակցությամբ ոչնչացնել Տարտեսսոսը, իր շուրջը համախմբել փյունիկացիների հյուսիսաֆրիկյան, սիցիլական, սարդինիական և պիրենեյան գաղութները, ինչպես նաև իր իշխանության տակ ձգել ընդարձակ երկրներ Հյուսիսային Աֆրիկայում, Հարավային Իսպանիայում, Արևմտյան Սիցիլիայում և Սարդինիայում[1]։ Կարթագենցիների համար առանձնահատուկ նշանակություն ուներ էտրուսկյան քաղաքների հետ ունեցած դաշինքը։ Ինչպես ցույց են տվել Կերեի (KAI, 277), բովանդակությամբ զուգահեռ, նվիրատվական արձանագրությունները, որոնք կազմված են փյունիկյան և էտրուսկյան լեզուներով և ուղղված փյունիկյան Աստարտ աստվածուհուն ու նրա զուգակշռին՝ էտրուսկական Ունիին (այսինքն՝ Յունոնին), էտրուսկական Կերեի և Կարթագենի միջև եղած դաշինքը աչքի է ընկել նախանձելի ամրությամբ, և (չնայած բնագիրը լիովին պարզ չէ. Կերեի թագավոր Տեֆարիե Վելիանասը, որն իբր թագավոր էր «ընտրվել» աստվածուհու կողմից, իր թագավորության երրորդ տարում նրան նվի-

[illegible] է «տեղ»՝ սրբազան խուց) նկատելի է պունիկացիների մշակութային [illegible] ազդեցությունը էտրուսկների վրա՝ կարթագենական հավատալիքների, սովորույթների, օրացույցի (թվագրումներից մեկը կատարված է հաշվարկման պունիկյան համակարգով) և փյունիկյան լեզվի ներթափանցումը էտրուսկյան աշխարհ։ Ակներևաբար այս խոր առնչությունները դրսևորվել են այն ժամանակ, երբ պունիկյան զորքերը III դ. վերջին քառորդում հայտնվեցին էտրուրիայի տարածքում, թեև այդ մասին մենք չունենք ուղղակի վկայություններ։ Մոտ 480 թ. Սիրակուզայի [illegible] հունա-սիցիլիական քաղաք-պետությունների համադաշնության Հիմերայի (Սիցիլիա) մոտ կարթագենցիների կրած պարտությունը մի քանի տասնամյակ դադարեցրեց կղզում մղված պայքարը։ Սակայն արդեն V դ. վերջին վերսկսվեցին Սիցիլիայում գերիշխանության համար պայքարները Սիրակուզայի դեմ, իսկ III դ. կեսին Կարթագենը դարձավ ամբողջ Սիցիլիայի փաստական տերը, դուրս գալով Իտալիայի մերձավոր մատույցները։

Կարթագենցիների ստեղծած պետությունը հեռավոր անցյալի համար բնորոշ ռազմավարչական միավորում էր, որն իր կազմի մեջ էր [illegible] հասարակական-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող և միմյանց հետ փոքր իսկ կայուն կապեր չունեցող երկրներ և հասարակություններ։ Եթե անտես առնենք պունիկացիների պետական իշխանությունը, նրանց միջև միակ կապող օղակը մնում էր կարթագենական առևտուրը։ Սակայն ձգտելով իրենց մենաշնորհը հաստատել [illegible] և՛ «միջազգային» առևտրում, կարթագենցիները [illegible] արգելակեցին իրենց հպատակ երկրամասերի զարգացումը, [illegible] հաշվով հանդեցրեց կերտած պետության քայքայմանն ու [illegible]։

Կարթագենը ստրկատիրական պետություն էր։ Մեզ հասած տեղեկությունների համաձայն, առանձին սեփականատերերի ձեռքում կարող [illegible] հազարավոր ստրուկներ, որոնցից երկպատերազմների ժամանակ նույնիսկ ստեղծվում էին մասնավոր բանակներ։ Խոշոր ստրկատերեր էին տաճարները։ Այնուամենայնիվ, ստրուկները երբեմն ունեին սեփական տնտեսություն, ինչպես նաև [illegible], որը հանդիսանում էր օրենքով։ Ըստ երևույթին ստրուկների [illegible] կազմությունը հասարակության մեջ միատեսակ չէր։ [illegible] գրություն ուներ ստրուկների ազատ արձակում ինչպես [illegible], այնպես էլ առանց փրկագնի։ Զևական ազատություն ձեռք [illegible], ազատ արձակված ստրուկները շարունակում էին փաստորեն [illegible] ունենալ իրենց նախկին տերերից։ Նրանք չէին ստանում

ազատ ծնված կարթագենցիներին հավասար իրավունքներ. նրանց վերապահվում էր այն անձանց կացությունը, որոնք օգտվում էին «սիդոնյան իրավունքից», որի իրական բովանդակությունը տակավին անհայտ է։ Բացառված չէ, որ այդ արտահայտությամբ նշվում էր իրավունքների այն ամբողջությունը, որից օգտվում էին ոչ քաղաքացի փյունիկացիները, որոնք գաղթել էին առաջավորասիական Փյունիկիայից և Արևմտյան Միջերկրականի գաղութներից[2]։

Կարթագենում կախյալ, թեև ձևականորեն նաև ազատ բնակչության մյուս խումբը կազմում էին բոդերը (կամ հնարավոր է բուդերը, ինչպես սիրալիր կերպով մեզ մատնացույց արեց Ի. Մ. Դյակոնովը), որոնք նույնպես օգտվում էին «սիդոնյան իրավունքից»[3]։

Կարթագենին պատկանող երկրներում ամենածանր վիճակում էին Հյուսիսային Աֆրիկայի բնիկները՝ լիբիացիները։ Նրանց հնազանդության մեջ պահելու համար Կարթագենի կառավարությունը իր լիբիական տիրույթները բաժանեց բնատարածքային շրջանների, նրանց ենթարկելով ստրատեգոսներին[4], վերացրեց տեղական համայնքների գերիշխանությունը, նրանց ինքնուրույնությունը ոչ միայն արտաքին քաղաքականության, այլև ներքին կյանքին առնչվող խնդիրների լուծման բնագավառներում[5]։ Լիբիացիները զավթիչներին վճարում էին անչափ բարձր հարկեր, որոնց հավաքումն ուղեկցվում էր բռնություններով, կորզումներով, արյունալից հանցագործություններով։ Պոլիբիոսը (1, 72, 1—3) հետևյալ կերպ է բնութագրում Պունիկյան I պատերազմի ժամանակաշրջանում Լիբիայի տարածքում պունիկյան իշխանությունների վարմունքը. «Չէ՞ որ նախորդ պատերազմի ժամանակ, կարծելով, թե ունեն բարեպատեհ պատրվակ, նրանք դաժանորեն էին իշխում Լիբիայի բնակչության վրա. մնացած ամբողջ արդյունքներից նրանք հավաքում էին կեսը, քաղաքների վրա նշանակելով նախորդ ժամանակի համեմատ կրկնակի հարկեր, չցուցաբերելով գթություն աղքատների հանդեպ, կամ զիջողամտություն այն ամենում, ինչը վերաբերում էր հարկերի գանձմանը։ Նրանք փառաբանում և պատվում էին ոչ թե այն զինվորական կառավարիչներին, որոնք ժողովրդին վերաբերվում էին գթասրտությամբ ու մարդասիրությամբ, այլ նրանց, ովքեր իրենց համար ապահովում էին առավել շատով պարհակներ և պաշարներ, իսկ բնակչության հետ վարվում ամենադաժան ձևով»։ Եվ այնուհետև (1, 72, 5) նա խոսում է ընտանիքների ղեկավար տղամարդկանց մասին («ամուսիններ և հայրեր»), որոնց բանտարգելության կամ ստրկության էին տարել՝ հարկերը և ուժից վեր տուրքերը չվճարելու համար։ Լիբիայում պունիկացիների դաժանության մասին հաղորդում է նաև Դիոդորոսը (20, 55)։ Կարթագենցիները լիբիացիներից խլեցին ընդարձակ և ամենից պիտանի հողատարածությունները Բագրադա գետի հովտում, ինչպես նաև միջերկրածովյան ափերին։ Այդ հողերը զավթեցին պունիկյան արիստոկրատները, այնտեղ ստեղծելով իրենց շքեղ ամառանոցները[6]։ Տիտոս Լիվիոսի (33, 47—48) արտահայտությամբ, այդպիսի տնտեսական միավորները կոչվում էին «աշտարակներ», որի մեջ կարելի է տեսնել առաջավորասիական (աքադական) պիրամու տերմինի արտացոլքը։ Այդ տերմինը տակավին II հազարամյակի կեսին տարածված էր Փյունիկիայում[7]։ Վերջապես, Լիբիայի տարածքում կարթագենցիները, իրենց բանակը համալրելու համար, անցկացնում էին նորակոչիկների կանոնավոր զորահավաքներ (Դիոդորոս, 13, 44, 1. 13, 54, 1)։ Լիբիացիներին զրկելով երիտասարդությունից, որը զինվորական ծառայությունը կատարում էր հայրենիքից հեռու, արյուն հեղելով ուրիշների շահերի համար։ Դրությունը Լիբիայում միշտ ծայրահեղորեն լարված էր. ժամանակ առ ժամանակ այնտեղ բռնկվում էին խռովություններ, որոնք դաժանությամբ ճնշվում էին։ Կարթագենցիների թշնամիները, ափ իջնելով Հյուսիսային Աֆրիկայի տարածքում, միշտ կարող էին հույս դնել տեղաբնիկների բարեկամական վերաբերմունքի և ուղղակի աջակցության վրա։

Կարթագենյան տերության բնակչության մյուս խումբը կազմում էին փյունիկյան քաղաքների բնակիչները՝ հույները, սիկուլները և սիկանները։ Նրանք պահպանում էին, թեև մեծ ու էական սահմանափակումներով, իրենց ինքնուրույնությունը, որը գործուն էր, երբ օրակարգում դրվում էին ներքաղաքական խնդիրներ։ Կարթագենից նրանց կախվածությունն արտահայտվում էր իրենց արտաքին քաղաքականության ուղղությունը պունիկացիների շահերին համապատասխանեցնելու և բերքի տասանորդ բաժին կազմող հողային հարկը վճարելու մեջ (Դիոդորոս, 13, 59, 3. 13, 114, 1։ Ցից., II Վեր., 3, 6, 13)[8]։ Բացառված չէ, որ նրանք պարտավոր էին կատարել նաև այլ պարտություններ։ Կարթագենին հպատակ փյունիկյան քաղաքները, հակառակ Արևմտյան Միջերկրականում ամբողջ առևտուրն իր մենաշնորհին ենթարկելու Կարթագենի ձգտմանը, պահպանեցին պունիկյան առևտրականների միջնորդությանը չդիմելու հնարավորությունը և հաստատեցին ուղղակի առևտրական կապեր, այդ թվում նաև կարթագենական տերության սահմաններից դուրս։ Այսպես, Հռոմի հետ Կարթագենի առաջին պայմանագրում սահմանվեց (Պոլիբիոս, 3, 22, 10), որ հռոմայեցիները Սիցիլիայում օգտվելու էին կարթագենցիներին հավասար իրավունքներից։ Երկրորդ պայմանագրում համանման սահմանում կար (նույն տեղը, 3, 23, 12) շարադրված է հետևյալ կերպ. «Սիցիլիայի այն մասում, որտեղ իշխում են կարթագենցիները և Կար-

թագենում թող (հռոմայեցին—Ի. Կ.) կատարի և վաճառի այն ամենը, ինչ թույլ է տրվում քաղաքացուն»։ Անկասկած, իրադրությունը ենթադրում էր նաև իրենց՝ սիցիլացիների համապատասխան իրավական կացություն։

Երրորդ խումբը Արևմտյան Միջերկրականում Կարթագենի շուրջը համախմբված փյունիկյան գաղութների բնակիչներն էին։ Նրանք ձևականորեն համարվում էին Կարթագենի դաշնակիցներ՝ արտաքին քաղաքականության բնագավառում առավել կամ պակաս սահմանափակ ինքնուրույնությամբ։ Նրանց պետական-վարչական կառուցվածքը, ինչպես նաև օրենսդրությունը, համընկնում էին կարթագենականի հետ։ Գաղութներից եկածները գործնականում հավասարված էին կարթագենցիներին, քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև՝ ինչը հատկապես էական էր, նրանք ունեին կարթագենցիների հետ ամուսնանալու իրավունք, որը ճանաչվում էր օրենքով։ Ամուսնական այդպիսի միությունները չէին հանգեցնում երեխաների քաղաքացիական ոչ լիիրավության (Դիոդորոս, 20, 55, Պոլիբիոս, 7, 9, 5)։ Սակայն նրանք չէին կարող մասնակցել Կարթագենի քաղաքական կյանքին և, հետևաբար, չէին կարող ուղղակի ազդեցություն ունենալ այն պետության ճակատագրի վրա, որի մի մասն էին կազմում։ Մեկ ուրիշ, ոչ պակաս կարևոր հանգամանք ևս. կարթագենցիները ձգտում էին թույլ չտալ, որ նրանց դաշնակիցները առևտուր անեն տերության սահմաններից դուրս։ Բնութագրական է հատկապես հետևյալ պայմանը, որը հաստատվել է Հռոմի հետ Կարթագենի երկրորդ պայմանագրում (Պոլիբիոս, 3, 11). «Սարդինիայում և Լիբիայում հռոմայեցիներից ոչ ոք թող առևտուր չանի և քաղաքներ չհիմնի, միայն կարող է ձեռք բերել սննդամթերք ճանապարհի համար կամ կառուցել նավ։ Իսկ եթե վատ եղանակն է նրան բերել, ապա հինգ օրվա ընթացքում թող նա հեռանա»։ Այստեղ, անկասկած, արդելվում է շփման մեջ մտնել ոչ միայն հիշյալ երկրների, այլև փյունիկյան գաղութաբնակների հետ։ Բացի այդ, փյունիկյան գաղութներում վաճառականների գործունեությունը հարկվում էր բարձր մաքսերով (Լիվիոս, 36, 62)։

Բուն Կարթագենում իշխանության ղեկի մոտ էր կանգնած ավագանին։ Վարչական ամբողջ համակարգը, V դ. կեսին ձևավորված պետական ապարատի ողջ կառուցվածքը, պետք է ապահովեր նրա գերիշխանությունը։ Իշխանության բարձրագույն մարմինը նշանավոր և ընտրյալ մարդկանցից համալրվող խորհուրդն էր (Պոլիբիոս, 6,51, 1—2, Արիստ. 2, 8, 3, Սերվիոս, 4, 682)։ Խորհրդի ներսում առանձնանում էր յուրատեսակ «նախագահություն» («առաջնություն ունեցողներ», «ավագներ», այդպես են սովորաբար անվանվում նրա անդամները մեր սկզբնաղբյուրներում), որը սկզբում կազմված էր տասը (Հուստինոս, 18, 6, 11. 7, 17), իսկ հետագայում, հավանաբար V դարից՝ 30 մարդուց (Լիվիոս, 30, 16, 3)։ Այստեղ քննարկվում ու վճռվում էին քաղաքային կյանքի բոլոր խնդիրները, սկզբում՝ «նախագահության» նիստում, ապա, ի վերջո, ամբողջ խորհրդում։ Ժողովրդական ժողովը ձևականորեն համարվում էր Կարթագենի պետական կառուցվածքի բաղադրամասերից մեկը, սակայն փաստորեն այն չէր գործում։ Նրան, որպես յուրատեսակ միջնորդի, դիմում էին միայն այն դեպքերում, երբ խորհուրդն ի վիճակի չէր լինում ընդունել համաձայնեցված վճիռներ (Արիստ., 2, 8, 3)։ V դ. կեսին, հատկապես այն բանի համար, որպեսզի կանխվեր ռազմական դիկտատուրայի առաջացումը, ստեղծվեց 104-ի խորհուրդը, որի առջև հաշվետու էին պաշտոնատար անձինք (Հուստինոս, 19, 2, 3, Արիստ., 2, 8, 2, հմմտ. Դիոդորոս, 20, 10, 3)։ Այդ խորհրդի անդամներին նշանակում էին հինգական անձից բաղկացած հատուկ հանձնաժողովները՝ պենտարքոսները, որոնք համալրվում էին կոոպտացիայի կարգով (Արիստ., 2, 8, 4), մեծատոհմիկության հատկանիշի համաձայն (Արիստ., 2, 8, 2)։ Կարթագենում կային նաև իշխանության կոլեկտիվ այլ մարմիններ, ինչպես օրինակ, տասը հոգուց բաղկացած հանձնաժողովը, որը կառավարում էր տաճարները (CIS, I, 175)։

Յարդ վատ է հայտնի քաղաքում գործադիր իշխանություն իրականացնող մագիստրատների կարթագենյան համակարգը։ Այն գլխավորում էին երկու սուֆետները (Süpütim—դատավորներ, հունական աղբյուրների արտահայտությամբ՝ «թագավորներ»), որոնք ընտրվում էին մեկամյա ժամկետով (Լիվիոս, 34, 61, Կորն. Նեպ., Հաննիբ., 7, 4, հմմտ. CIS, I, 165)։ Բացի սուֆետներից, ռազմական գործողությունները ղեկավարելու համար հաճախ նշանակվում էին հատուկ զորապետներ, որոնք միաժամանակ քաղաքային մագիստրատներ չէին (հմմտ. Արիստ., 2, 8, 5)։ Դատելով ըստ ամենայնի, պունիկյան կառավարող շրջանները ջանում էին թույլ չտալ, որպեսզի միևնույն ձեռքերում կենտրոնանա ռազմական և քաղաքացիական իշխանությունը, թեև ժամանակ առ ժամանակ տեղի էր ունենում սուֆետի և զորապետի պաշտոնների համատեղում (Հուստինոս, 22, 7, 10, Դիոդորոս, 15, 15, 2)։ Աղբյուրները հիշատակում են նաև քաղաքային գանձապահներին (Լիվիոս, 33, 46)։ Պետք է կարծել, որ Կարթագենում սրանով չէր սպառվում պաշտոնատար անձանց ցանկը։ Քանի որ մագիստրատների պարտականությունների կատարումը անվճար էր և պահանջում էր մեծ ծախսեր, ուստի պետական պաշտոնները մատչելի էին միայն հասարակության վերնախավի անդամներին, որոնք ունեին

1860

դրամական մեծ միջոցներ։ Ինչպես իշխանության կոլեկտիվ մարմինների համալրման, նույնպես և պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ, պարտադիր կերպով պահպանվում էր միայն հարուստներին ու երևելիներին ընտրելու սկզբունքը[9]։

Այդպիսով, բնակչության դեմոկրատական շրջանները՝ բազմաթիվ վարձու աշխատողները, արհեստավորները, մանր ու միջին առևտրականները հաստատապես հեռու էին մղված պետական գործերը վարելուց։ Դեռ ավելին. այդ խավերից դուրս եկածները հույս չէին կարող ակնկալել, որ երբևիցե կարող են «վերև» բարձրանալ։ Բացի դրանից, անհրաժեշտ էր ունենալ նաև տոհմիկության ցենզ, այսինքն՝ վաղնջական պատկանելիություն կառավարող վերնախավին։

Կարթագենի քաղաքական կյանքում հատուկ դեր էր խաղում նաև զորքի համալրման համակարգը։ Այստեղ վաղուց արդեն հրաժարվել էին ժողովրդական աշխարհազորից. պունիկյան բանակի հիմքը կազմում էին զինվորական վարձու կազմավորումները (Հուստինոս, 19, 1, 1)[10] և, ինչպես արդեն ասվեց, բուն զորակոչված լիբիացիների միավորումները։ Նմանօրինակ կառուցվածքի թերությունները ակնհայտ են. վարձու զորականները մարտնչում են ոչ թե հայրենիքի, կամ գաղափարի, այլ ոռճիկի, պարտվածներին կողոպտելու հնարավորության համար։ Նրանց վրա կարելի է հենվել միայն հաջող հաղթական արշավանքում. դժվարությունները, պարտությունները, զրկանքները, ոռճիկի ուշացումը, նրանց դարձնում էին ծայր աստիճան անհուսալի։ Իհարկե, Հաննիբալին հաջողվեց, ինչպես այդ նշում են բազմաթիվ աղբյուրներ, հնազանդության մեջ պահել իր բազմալեզու բանակը։ Սակայն նրա զինվորների հարաբերական կարգապահությունը դյուրությամբ կարող է բացատրվել նաև Իտալիայում տարած փայլուն հաղթանակներով և նոր հաջողությունների նկատմամբ տածած հույսերով։ Հավանաբար, իր դերն էր խաղում նաև զինվորական միջավայրում հույժ ժողովրդական դարձած Հաննիբալի անձնական ազդեցությունը։ Վարձու զորքերի օգտագործումն ուներ ներքաղաքական կարևոր տեսանկյուն. ժողովրդական զանգվածները, հեռացված լինելով զինվորական ծառայությունից, ի վիճակի չէին լինի իրենց շահերի համար ազդել իրադարձությունների ընթացքի վրա։

Բուն կարթագենյան վերնախավի մեջ չկար միասնություն։ Այդ միջավայրում եղած պառակտումը առաջանում էր նրա տարբեր խմբերի տնտեսական կացության տարբերությունից։ Նրանց քաղաքական ուղեգիծը որոշվում էր նրանով, թե ինչն էր աղբյուր ծառայում նրանց բարեկեցության համար։ Աֆրիկայի տարածքում համեմատաբար մեծ հողատիրություններ ունեցող պունիկյան ավագանու ներկայացուցիչները բոլորովին էլ չէին ցանկանում գործուն արտաքին քաղաքականություն վարել։ Այդ շրջանների տրամադրությունները ճշգրտությամբ արտահայտվել են Հնագարում հայտնի, կարթագենացի գիտնական-գյուղատնտես Մագոնի աշխատությունում։ Վերջինս պահանջում էր, որպեսզի երկրագործը հրաժարվեր քաղաքում ունեցած իր տնից և ամբողջապես նվիրվեր իր տնտեսությունը վարելուն (Պլինիոս, 18, 35, հմմտ. Կոլումելա, I, 18)։ Նրանց հարստության հիմքը հողն էր, ուստի նրանք ձգտում էին ամրապնդել Կարթագենի գերիշխանությունը լիբիացիների նկատմամբ։ Նրանց շատ քիչ էր հետաքրքրում Կարթագենի՝ որպես մեծ տերության վիճակը. նրանք միջերկրածովյան ավազանում նվաճողական քաղաքականություն վարելուց ոչ միայն իրենց համար չէին ակնկալում որևէ օգուտ, այլև նույնիսկ կանխատեսում էին պետական (այդ դեռ ոչինչ) և իրենց սեփական միջոցների նոր ծախսումների անհրաժեշտության ծանրությունը[11]։

Կարթագենյան արիստոկրատիայի մյուս խումբը կազմում էր խոշոր վաճառականությունը, որի բարեկեցությունը կախված էր միջերկրածովյան և նրա սահմաններից դուրս գտնվող երկրների հետ կատարվող ծովային առևտրից։ Ինչպես հայտնի է, Կարթագենը առևտրական գործուն կապեր էր պահպանում Եգիպտոսի[12], Իտալիայի և հունական աշխարհի[13], ինչպես նաև Իսպանիայի հետ, որտեղ (Պիրենեյան թերակղզու հարավում) պունիներն ունեին տիրապետող դիրք[14]։ Կարթագենի առևտրականները զորքուն մասնակցություն ունեին Կարմիր ծովին հարող շրջաններում[15] կատարվող առևտրին. նրանք թափանցում էին նաև Սևծովյան ավազանը[16]։ Բնականաբար, այդ պայմաններում չէր կարող չառաջանալ ազդեցիկ մի խավ, որի շահերը առնչվում էին առավելապես, եթե ոչ բացառապես, ծովային առևտրի հետ։ Լիովին հասկանալի է, որ այդ մարդիկ հետամուտ էին ծովային առևտրաուղիներում Կարթագենի իշխանության պահպանմանը, ամրապնդմանը և ընդլայնմանը։ Սրանց շահերը շաղկապված էին նրանց շահերի հետ, ովքեր այսպես թե այնպես զբաղվում էին ծովային առևտրով կամ վաճառքի համար պատրաստում զանազան արհեստագործական ապրանքներ։ Նրանք Կարթագենի արտաքին քաղաքականության հիմնական նպատակն էին համարում պունիկյան առևտրական մենաշնորհի հաստատումը այն ժամանակ հայտնի ամբողջ աշխարհում։ Այլ կերպ ասած, եթե նկատի առնենք մրցակիցներին ոչնչացնելու կամ ենթարկելու անհրաժեշտությունը, խոսքը «համաշխարհային» տերություն ստեղծելու մասին էր, որը պետք է ընդգրկեր բովանդակ օյկումենեն՝ մարդու բնակեցրած և նրան մատչելի աշխարհը, Կարթագեն կենտրոնով։ Հատկապես այդ խնդիրն էին փորձում վճռել Համիլկար Բարկան և Հաննիբալը։

Ինքնաստինքյան այդ խնդիրը չէր կարող բացարձակապես անլուծելի թվալ։ IV դ. երկրորդ կեսին, հարյուր տարուց մի փոքր առաջ, Ալեքսանդր Մակեդոնացին կատարեց իր նվաճողական արշավանքը, գրավելով ամբողջ Մերձավոր Արևելքը, Իրանը, Միջին Ասիան և Հնդկաստանի մի մասը։ Մահը վրա հասավ նրան նոր, այս անգամ դեպի արևմուտք, Կարթագենի դեմ արշավանքի նախապատրաստման եռուն շրջանում։ Եվ, նայելով դեպքերի ընթացքին, դժվար չէր հանգել այն մտքին, որ եթե չլիներ նրա վաղաժամ մահը, նա կկարողանար հաջողությամբ իրագործել նաև իր այդ ձեռնարկումը։ Մի՞թե հենց Պարսից տերությունը չէր ընդգրկում, բացի Միջին Ասիայից և բուն Իրանից, գործնականորեն ամբողջ Արևելյան Միջերկրականը։ Իհարկե, Ալեքսանդրի պետությունը քայքայվեց։ Բայց արդյոք ա՞յն պատճառով չփլուզվեց, որ նրա զորապետները մասնատեցին այդ պետությունը և ապա անընդմեջ պատերազմներում իրենց համար ստեղծեցին քիչ թե շատ, նայած տաղանդին և հաջողությանը, ընդարձակ տիրույթներ։ Այն, ինչ հաջողվեց Ալեքսանդրին, և ինչին ձգտում էին նրա հաջորդները, կարող էր կրկնել նաև Կարթագենը, եթե նրա զորավարները բավականին հմտություն ու բարեբախտություն ունենային։

Գոյություն ունեի՞ն, արդյոք, օբյեկտիվ նախադրյալներ նմանօրինակ «համաշխարհային» տիրությունների ստեղծման համար։ Անշուշտ, այո. հակառակ դեպքում, օրինակ, Հռոմեական կայսրությունը չէր կարող մի քանի հարյուրամյակի ընթացքում իր գերիշխանության տակ պահել միջերկրածովյան ավազանի բոլոր երկրները։ Իհարկե, նրանք իրենցից ներկայացնում էին նվաճողի նիզակով «միավորված», մշակույթով և սոցիալ-տնտեսական մակարդակով տարբեր շրջանների, ցեղերի ու ազգությունների բավականին խայտաբղետ մի խառնակույտ։ Տվյալ պետության գոյությունը հաճախ կախված էր այս կամ այն թագավորի կամ զորավարի ռազմական ընդունակություններից։ Բայց չէ՞ որ կործանվող քաղաքական մարմինների տեղը մշտապես ծագում էին նորերը, ամեն անգամ ընդգրկելով միևնույն կամ մոտավորապես միևնույն տարածքները. այդ երևույթը չի կարելի բացատրել սոսկ հանգամանքների պատահական ընթացքով։

Այդպիսի նախադրյալների թվին է պատկանում այդ տարածքներում, չնայած մշտական պատերազմներին, ամենից առաջ առևտրական և ուրիշ կապերի զարգացումն ու պահպանումը այն հասարակությունների միջև, որոնք լուրջ դժվարություն էին կրում այն բանի պատճառով, որ իր ցեղի, իր քաղաքացիական կոլեկտիվի սահմաններից դուրս մարդը գործնականորեն օրենքից դուրս էր մնում։ Թույլ էր տրվում նրան անպատիժ

սպանել, գերեվարել, վաճառել ստրկության։ Բոլորի միջև մշտական ընդհարումների պայմաններում այդպիսի վտանգը հույժ իրական էր։ Այն փորձում էին նվազեցնել կամ նույնիսկ բոլորովին վերացնել փոխադարձ հյուրընկալության վերաբերյալ դաշնակցային պայմանագրերով, մասնավոր անձանց (փոխադարձ հյուրընկալության յուրատեսակ ձև), ինչպես նաև պետությունների միջև փոխադարձ անձեռնմխելիություն ապահովող համաձայնություններով։ Սակայն այս կիսամիջոցները հուսալի երաշխիքներ չէին տալիս։ Միայն բնատարածքային պետությունը կարող էր իր ուժերով ապահովել խաղաղություն և անվտանգություն ընդարձակ տարածություններում։ Այլ կերպ ասած, ապրանքային արտադրության զարգացումը և որպես հետևանք՝ միջերկրածովյան շուկայի առաջացումն էր հին բնատարածքային պետությունների ստեղծման հիմնական նախապայմանը։

Էապես սահմանափակելով նրանում ընդգրկված խմբերի ներքին ինքնուրույնությունը, այդպիսի պետությունը երբեք այն լիովին չէր վերացնում։ Բնատարածքային պետությանը հպատակ համայնքները, որպես կանոն, պահպանում էին իրենց վարչաքաղաքական կառուցվածքը, քիչ թե շատ ինքնուրույնությամբ վարում էին ներքին քաղաքականությունը և դիվանագիտական կապեր էին հաստատում նույնիսկ պետության սահմաններից դուրս, ունենում էին սեփական օրենքներ և այլն։ Հպատակ քաղաքական կազմակերպությունների հետ բնատարածքային պետության հարաբերությունները ձևոք էին բերում դաշնակցային բնորոշ գծեր։ Գերագույն իշխանության նրա իրավունքներն արտահայտվում էին կենտրոնական կառավարության քաղաքականության հետ տեղական իշխանությունների վարած քաղաքականության համաձայնեցման և հարկերից ու ռազմատուգանքներից գոյացող դանդաղ տուրքերի վճարման մեջ։ Այդ սահմանափակումները իրենց ամբողջ ծանրությամբ հանդերձ, շատ երևույթին, լիովին փոխհատուցվում էին խաղաղության և անվտանգության հաստատմամբ, ինչպես նաև այն աջակցությամբ, որը կենտրոնական կառավարությունը ցուցաբերում էր տեղական հողատիրական և առևտրաարհեստագործական ավագանու նկատմամբ՝ նրա իշխանության ամրապնդման համար։ Երբ բնատարածքային պետությունն ի վիճակի չէր լինում ապահովել ո՛չ այս, ո՛չ էլ մյուսը, երբ տեղական կառավարող շրջանների շահերը անհաշտելի հակասության մեջ էին մտնում կենտրոնական կառավարության շահերի հետ, երբ այն վեր էր ածվում բացառապես տիրող հասարակության կամ բնակչության որևէ խավի շահերի համար հպատակներին շահագործելու գործիքի, այդ ժամանակ այն կորցնում էր իր հենարանը և կործանվում։

Համիլկար Բարկան և Հաննիբալը իրենց առջև դրել էին իր բուն իսկ էությամբ հատկապես այդպիսի անիրագործելի խնդիր՝ ամրապնդել ու ընդարձակել Կարթագենյան պետությունը, որն ստեղծված էր այն բանի համար, որպեսզի կարթագենցի հողատերերի ու վաճառականների համար ապահովի բոլոր մնացած մարդկությանը ճնշելու և շահագործելու, նրա հաշվին հարստանալու հնարավորություն։ Այդ ճանապարհին կարթագենցիները բախվեցին Հռոմի հետ։

III դ. կեսին Հռոմը վաղուց արդեն գերաճել էր բազմաթիվ արտաքին թշնամիների դեմ ոչ միայն և ոչ այնքան իր տիրապետող դիրքի, որքան իր իսկ գոյատևման համար հարկադրված պայքարող արիստոկրատական հանրապետության ոչ մեծ ռազմատենչ քաղաք-պետության շրջանակները[17]։ Անցել էին այն ժամանակները, երբ քաղաքում իշխանությունը պատկանում էր բացառապես պատրիկներին։ Բազում տարիների համառ պայքարի հետևանքով պլեբեյները ձեռք բերեցին լիակատար քաղաքացիական իրավահավասարություն պատրիկների նկատմամբ և ստացան բարձրագույն պետական պաշտոններ, ինչպես նաև սենատ (որը համալրվում էր նախկին պաշտոնատար անձանցից) մուտք ունենալու հնարավորությունը։ Իհարկե, այդ իրավունքից օգտվել կարող էր միայն հռոմեական պլեբսի վերնախավը։ III դ. Հռոմում ոչ մեծաթիվ (30-ից ոչ ավելի) պատրիկական և պլեբեյական տոհմերից կազմավորվում է նոր ավագանի՝ նոբիլությունը, որի տնտեսական հիմքը խոշոր հողատիրությունն էր։ Այս նոր ավագանին դուրս եկավ հեծյալների, այսինքն՝ այն քաղաքացիների միջավայրից, որոնց գույքային դրությունը նրանց թույլ էր տալիս ծառայելու հեծելազորում։ Հատկապես բարձր գույքային ցենզ և տոհմիկություն («նոբիլականություն») ունեցող հեծյալներից առաջացան պաշտոնատար անձինք, որոնք իրենց ծառայությունը ավարտելուց հետո զբաղեցնում էին սենատորական բազկաթոռները։ Այդպիսով սենատը վերածվում էր նոբիլության միջնաբերդի։ Հենվելով ձևականորեն ազատ, սակայն փաստորեն կախյալ, կլիենտների ու կոլոնների վրա, որոնք աշխատում էին նրանց դաշտերում և պաշտպանում նոբիլներին՝ պաշտոնների համար մրցակցության, ինչպես նաև ժողովրդական ժողովում քվեարկության ժամանակ, նոբիլները ամեն ինչ անում էին, որպեսզի իրենց ձեռքում ամուր պահեն պետության կառավարումը և օտար միջավայրից դուրս եկածներին թույլ չտան ստանալու բարձրագույն ռազմական և քաղաքացիական պաշտոններ։ Ինչպես և պետք էր սպասել, նոբիլությունն այնպիսի մի խավ չէր, որին խորթ էին ներքին ցնցումներն ու հակասությունները. ինչպիսիք էլ դրանք լինեին, ընդհակառակը, կարելի է արձանագրել ամբողջ իշխանությունը զավթել ցանցող տոհմերի տարբեր

մասնավորումների՝ քաղաքական խմբավորումների միջև եղած մրցակցությունը։ Դրանցից մեկը գլխավորում էին Ֆաբիոսները, որոնք սերտորեն կապված էին Ատիլիոսների, Լիկինիոսների, Մանլիոսների, Օտակիլիոսների, Փուլվիոսների, Մանիլիոսների, Օգուլնիոսների և Լետորիոսների հետ։ Մյուս խմբավորման կորիզը կազմում էին Էմիլիոսները, որոնց շուրջը համախմբված էին Լիվիոսները, Վետուրիոսները, Սերվիլիոսները, Պապիրիոսները, Կորնելիոս-Սկիպիոնները։ Ֆաբիոսներից պառակտվելուց հետո նրանց հարեցին նաև Լիկինիոսները։ Հռոմում մեծ հեղինակություն ունեին Կլավդիոսները, որոնց հետ միաբանված էին Վալերիոսները, Սուլպիցիոսները, Վոլումնիոսները, Տունիոսները, Մարկիոսները, Սեմպրոնիոսները։ III դ. սկզբին նրանք միաբանվեցին Ֆաբիոսների հետ, բայց հետագայում բաժանվեցին նրանցից[18]։ Որքանով որ այդ մասին կարելի է դատել, նշված խմբավորումների միջև չկային սկզբունքային տարաձայնություններ. պայքարն ընթանում էր առանձին թեկնածուների, առավել նպատակահարմար գործելակերպի շուրջը։ Հռոմեական պետության նկատմամբ եղած առավելագույն սպառնալիքների և ընդհանրապես հռոմեական քաղաքականության երկարատև, արմատական նպատակների որոշման ժամանակ նրանք բոլորը միաբան էին գործում։ Այն հեծյալները, որոնք իրենց գույքային դրությամբ և հռոմեական տեսակետից անհրաժեշտ տոհմիկությունից զուրկ լինելու պատճառով չէին կարող մտնել նոբիլության միջավայրը, III դ. հետզհետե կազմեցին հատուկ («հեծյալների») դաս, որը բարձրագույն զորապետներ էր մատակարարում և իր ձեռքն էր վերցրել առևտուրն ու ֆինանսական գործառնությունների վարումը։

Գաղափարագային սուր բախումների մյուս կարևոր արդյունքը պարտության տարկության վերացումն էր (թեև պարտքերի դիմաց տարկացության աշխատավճարումների համակարգը չվերացվեց և նորից ու նորից նորանոր եկավ Իտալիայում). դրանով իսկ որոշակի աստիճանի ամրապնդվեց հռոմեական գյուղացիության դրությունը։ Իհարկե, գյուղական բնակչության զգալի մասը կազմում էին կլիենտներն ու կոլոնները, որոնք կապված էին խոշոր սեփականատերերից և, ամենայն հավանականությամբ, հողազուրկ էին։ Այնուամենայնիվ հռոմեական հասարակության նշանակալի և հույժ ազդեցիկ միջնախավը կազմում էին ազատ գյուղացիները՝ պլեբեյները (սրանք հնարավորություն ստացան մուտք ունենալու պետական հողեր, որոնց ֆոնդերն անընդհատ աճում էին նվաճողական պատերազմների ժամանակ) մանր ու միջին սեփականատերերը նույն պլեբեյական միջավայրից։ Հասարակական կյանքում զգացվում էր նաև հողազուրկների՝ պրոլետարների, կողմից եղած մշտական ճըն-

շումը։ Ժողովրդական այս զանգվածը կարողանում էր գործուն կերպով պաշտպանել իր շահերը, իր առաջնորդներին առաջադրում էր դեկավար պաշտոններում, հաղթահարելով նոբիլության ընդդիմադրությունը։ Ժողովրդին դիմելը կամ նույնիսկ այդպիսի դիմումի սպառնալիքը կարողանում էր կառավարող խմբակցությանը ստիպել նահանջելու։

Նոր ավագանու և շարքային քաղաքացիների միջև մղվող պայքարի հիմնական առարկան հողն էր, և հատկապես այդ հանդամանքը թե՛ նրանց և թե՛ մյուսներին շահագրգռում էր նվաճողական պատերազմներում։ Պատերազմները բերում էին «օրինական» հասույթներ, պայմաններ ստեղծելով հարստանալու համար, մեծացնում էին պետական հողային ֆոնդը («հանրային դաշտը»), որի հաշվին բոլոր քաղաքացիները կարող էին ընդարձակել իրենց տիրույթները (գոնե տեսականորեն. գործնականում, իհարկե, պետական հողերը՝ այսպես թե այնպես, հիմնականում ընկնում էին նոբիլների ձեռքը)։ Պատերազմները հնարավորություն էին տալիս պարբերաբար գաղութաբնակեցնել Իտալիայի զանազան վայրերը և այդպիսով հողեր շնորհել հողազուրկներին ու սակավահողներին, միաժամանակ ազատվելով բուն Հռոմում հույժ անհանգիստ, «պայթուցիկ» տարրից։ III դ. կեսին գործնականում Հռոմի գերիշխանության տակ ընկավ ամբողջ Իտալիան։ Բնական էր սպասել, որ այժմ նա պետք է փորձեր տիրանալ նաև Սիցիլիային՝ Ապենինյան թերակղզու անմիջական շարունակությանը։

Հռոմի պետական կառուցվածքը[19], այստեղ մեզ հետաքրքրող ժամանակ ամբողջությամբ վերցրած, հին հասարակական կարգից առաջացած ժողովրդայնության նշանակալիորեն ավելի շատ գծեր էր պահպանում, քան Կարթագենը։

Այդ ժողովրդայնությունը դրսևորվում էր նախ և առաջ ժողովրդական ժողովների գործունեության մեջ։ Անհիշելի ժամանակներից Հռոմում գոյություն ուներ ժողովրդական ժողովների (կոմիցիաների) երեք տեսակ՝ վերապրուկի ձևով պահպանվող կուրիալ (սկզբնապես պատրիկների) ժողովներ, որոնք վարում էին որդեգրումները, կտակների հաստատումը և մագիստրատների իշխանությունը ձևականորեն հաստատելը. ցենտուրիալ (ռազմիկների ժողովներ), սրանք ընտրում էին բոլոր բարձրագույն պաշտոնատար անձանց, ընդունում օրենքներ, որոնք ուժի մեջ էին մտնում սենատի կողմից հաստատվելուց հետո, հայտարարում էին պատերազմ և կնքում հաշտություն, իրագործում արդարադատությունը քրեական գործերի գծով. տրիբուտային, որոնք V դ. կեսին առաջացան պլեբեյական ժողովներից։ III դ. առաջին կեսից տրիբուտային կոմիցիաների որոշումները իրենց նշանակությամբ հավասարվեցին ցենտուրիալ

[illegible] կոմիցիաների վճիռներին, իսկ նրանց աշխատանքին սկսեցին մասնակցել ոչ միայն պլեբեյները, այլև պատրիկները։ Հռոմեական ժողովրդական ժողովի բազմաձիմությունը կարող է որոշ զարմանք հարուցել, որը [illegible] հեշտ է բացատրվում։ Քաղաքացիական կոլեկտիվը տարբեր հանդամանքներում հանդես է գալիս տարբեր կերպարանքով. մի իրավիճակում բառիս ուղղակի իմաստով, որպես քաղաքացիների ընկերակցություն, այլ պարագաներում՝ որպես ժողովրդական աշխարհազոր կազմող զինվորների ամբողջություն, երրորդ դեպքում՝ որպես իրենց ժողովներում պետական գործեր քննող պլեբեյների զանգված։ Իհարկե, ժողովրդական ժողովում և սենատում գործեր վարելու համակարգը ընդունող շրջաններին թույլ էր տալիս հասնելու իրենց համար ընդունելի որոշումների։ Բանն այն է, որ ցենտուրիաներում քաղաքացիները բաշխված էին անհավասարաչափ, և ցենտուրիաների մեծ մասը քանակապես գերակշռում էին գույքային բարձր ցենզ ունեցող մարդիկ, որոնք, բացի այդ, առաջինն էին քվեարկում։ Ժողովրդական ժողովներում քննարկման համար հարցեր առաջադրել կարող էին միայն մագիստրատները, և, հետևաբար, նրանց շարքային մասնակիցները զրկված էին օրենսդրական և քաղաքացիական նախաձեռնությունից։ Ցենտուրիալ կոմիցիաների որոշումները կարիք ունեին հաստատման, իսկ IV դ. կեսից՝ սենատի նախնական հավանության։ Այնուամենայնիվ, ժողովրդական զանգվածները որոշ հնարավորություն ունեին իրենց կամքի արտահայտությամբ և քվեարկությամբ որոշակի ազդեցություն թողնել իրադարձությունների ընթացքի վրա։ Բավականին ցուցանշական է, թեկուզև բազմամյա ընդհարումներից հետո, ժողովրդական զանգվածների համար նպաստավոր [illegible] ընդունումը։ Ավելին, համաձայն Հորտենզիոսի օրենքի [illegible] թ.), ըստ տրիբուսների պլեբեյական ժողովների որոշումները՝ [illegible], ընդհանրապես սենատի հավանության կարիքը չունեին։ [illegible] նաև այն, որ հռոմեական բանակը տակավին շարունակում էր մնալ ժողովրդական աշխարհազոր, որը նույնպես դեմոկրատական շերտերին միջոց էր ընձեռում կառավարության վրա ազդելու համար։

Հռոմեական պետական կառուցվածքը, ամբողջությամբ վերցրած, [illegible] նոբիլության տիրապետությունը, սկզբունքորեն չէր բացառում քաղաքական կյանքին յուրաքանչյուր անհատի գործուն մասնակցությունը և նույնիսկ բարձր պաշտոնների համար առաջադրվելը (տե՛ս [illegible], Տից., Սեստ., 137)։ Մագիստրատների հռոմեական համակարգում հատուկ էր ներդաշնակությունը և միաժամանակ բարդությունը։ [illegible] բաժանվում էին հաստիքայինների (երկու կոնսուլների կոլեգիան, [illegible], ցենզորները, պլեբեյական տրիբունները, էդիլները, քվես-

տորները) և արտահատիքայինների (դիկտատորն ու նրա՝ օգնականը՝ հեծելազորի հրամանատարը, ռազմական տրիբունը՝ կոնսուլական իշխանությամբ)։ Որոշ պաշտոնյաներ (կոնսուլները, պրետորները, դիկտատորը, զինվորական տրիբունը կոնսուլական իշխանությամբ) ունեին իմպերիումի իրավունք և ավելի բարձր էին դասվում մյուսներից։ Բարձրագույնների թվին էին պատկանում նաև ցենզորներն ու ժողովրդական տրիբունները։ Վերջապես, մագիստրատներից մի քանիսը համարվում էին կուրուլային. կոնսուլները, դիկտատորը, զինվորական տրիբունը կոնսուլական իշխանությամբ, պրետորը, ցենզորը և կուրուլային էդիլը։ Նրանք իրավունք ունեին բազմելու բացառիկ պատվավոր՝ այսպես կոչված կուրուլային բազկաթոռին, իսկ մագիստրատությունը թողնելուց հետո, ընկնելով նախկին մագիստրատներից համալրվող սենատ, այնտեղ առաջատար դիրք էին զբաղեցնում («կուրուլային սենատորներ»)։ Հռոմում, ինչպես նաև Կարթագենում, պետական պարտականությունների կատարումը ոչ միայն չէր վճարվում, այլև պահանջում էր զգալի ծախսեր մագիստրատի կողմից։ Այն դիտվում էր որպես պատիվ, որը տրվել էր ընտրյալին, նրա նկատմամբ բարեհաճ ժողովրդի կողմից։ Հասկանալի է, որ նման հանգամանքներում այստեղ ևս ծագում էին թեկնածուներին «ըստ տոհմիկության և հարստության» ընտրելու նախադրյալներ։ Բայց և այնպես հռոմեական ավանդության համար հատկանշական է խստաբարո գյուղացի Լուկիոս Քվինկտիոս Կինկինատոսի կերպարը, որին հայրենիքը արորի մոտից հրավիրում է պետական բարձրագույն պաշտոնի, և որը, կատարելով հայրենիքի փրկարարի իր պարտքը, վերադառնում է իր խղճուկ հողակտորին (Լիվիոս, 3, 26, 6—12)։ Այս «հին կոփվածքի հռոմայեցու» քրեստոմատիական կերպարը ամայի տեղում չի ստեղծվել։ Մանիոս Կուրիոս Դենտատոսը, հելլենիստական Հունաստանի ամենատաղանդավոր զորավարներից մեկին՝ Էպիրոսի թագավոր Պյուրոսին, հաղթողը, ծագումով գյուղական խուլ վայրից էր, եղել էր շքավոր, իսկ հաղթանակից հետո, Իտալիան ընդմիշտ Հռոմի ձեռքը հանձնեց և շարունակեց նախկինի պես տնտեսավարել իր շատ փոքր դաշտում և անձամբ, իր սեփական ձեռքերով հերկելով այն, ցանում և հավաքում էր բերքը։ Այցելուները նրան գտնում են գյուղացիական համեստ խրճիթում, կրակարանի առջև նստած, շաղգամից կերակուր եփելիս և կավե կոպիտ ամանով բավականացած (Ցից., Պետութ., 13, 40, Ցից., Կատ., 55, Պլինիոս, 19, 87)։ Նրա դուստրն օժիտ է ստանում պետությունից (Ապուլեյոս, 18)։ Պունիկյան I պատերազմի ժամանակ Աֆրիկայում հռոմեական զորքերի հրամանատար Մարկոս Ատիլիոս Ռեգուլոսը սենատին դիմեց նամակով, որի մեջ ուշադրություն էր հրավիրում իր փոքր

[illegible] աղետալի վիճակի վրա, տիրոջ բացակայության ժամանակ գրաբավորներն այն լիակատար անկման էին հասցրել, քայքայելով [illegible] ուղարկել փոխարինող և իրեն տուն արձակել ([illegible], 18)։ Դեռ ավելին, Ապպիոս Կլավդիոսը, լինելով ցենզոր, [illegible] արձակված ստրուկների սերունդներին մտցրեց սենատ (Դիոդորոս, 20, 36, 3)։ Հենց իր՝ Ապպիոսի ազատ արձակված ստրուկ Գնեոս [illegible], որի հայրը եղել էր ստրուկ, ստացավ կուրուլային էդիլի պաշտոն (Դիոդորոս, 20, 36, 6, Լիվիոս, 9, 46, 10)։ Ազատ արձակված ստրուկների սերունդներ էին նաև Կլավդիոս Մարկելլոսները, որոնցից մեկը [illegible] II պատերազմում կատարեց այնքան կարևոր դեր։ Իհարկե, Հռոմում ևս նման երևույթներ համեմատաբար սակավադեպ էին [illegible] Ապպիոս Կլավդիոսի միջոցառումները հարուցեցին ավագանու վրդովմունքը), սակայն դրանք ցուցանշական էին, որպես հասարակության կյանքի որոշակի միտումների արտահայտություն։ Իրապես, [illegible] միջավայրին և բարձրագույն պաշտոններին մոտենալու հնարավորությունը ոչ որի համար մեկընդմիշտ վերացած չէր։ Դարաշրջանի [illegible] և պատմագրության մեջ բավական լայնորեն [illegible] էին այս կամ այն մագիստրատների «բտորին», ապատոհմիկ [illegible] վերաբերյալ ցուցումները։ Այստեղ կխոսենք միայն մի մարդու՝ [illegible] Տերենտիոս Վառոնի մասին։ Կաննեի մոտ ջախջախվելով, նա իր [illegible] անհաջողությունից հետո նույնպես զբաղեցրեց աչքի ընկնող ընտրովի պաշտոններ, թեև, հասկանալի պատճառներով, հեռացվեց ռազմական գործողությունները ղեկավարելուց։ Բառիս իսկական իմաստով [illegible] նա չուներ[20]։

Եվ վերջապես, մի հանգամանք ևս։ Նվաճված երկրները կառավարելու հռոմեական համակարգը, իհարկե, նախատեսում էր նրանց լիակատար հնազանդությունը նվաճողին ու նրանց բնակչության շահագործումը։ Տարբեր նահանգների ու քաղաքների համար ստեղծելով իրավական տարբեր դրություններ, հռոմայեցիները ձգտում էին բացառել ընդհանուր թշնամու դեմ նրանց միավորման հնարավորությունը։ Հռոմին հպատակված քաղաքական միավորների մեջ կային. 1) ինքնավար մունիցիպիումներ, որոնց քաղաքացիներն ունեին հռոմեական քաղաքացիություն (ժողովրդական ժողովին մասնակցելու իրավունքով կամ առանց դրա), 2) լատինական իրավունքի քաղաքներ, որոնց բնակիչները գյուղային տեսակետից իրավունակ էին, իսկ որոշ դեպքերում կարող էին հռոմայեցիների հետ ամուսնանալ, որը օրինական էր ճանաչվում, 3) դաշնակիցներ, որոնք, թեկուզ և որոշակի սահմանափակումներով, պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը. նրանք պար-

տավոր էին Հռոմի հետ համաձայնեցնել իրենց արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև նրան տրամադրել օժանդակ զորաբաժիններ։ Վերջապես, Հռոմին հպատակ հասարակությունների առանձին խումբ էին կազմում իրավազուրկ «հպատակները», որոնք զրկված էին որևէ ինքնավարությունից։ Հռոմի «դաշնակիցների» ու «հպատակների» համար ամենից ծանրն այն էր, որ հռոմայեցիները նրանցից խլում էին հողային ֆոնդի մեկ երրորդից մինչև կեսը։ Սակայն ամբողջությամբ առած, իտալիկների կացությունը Հռոմի գերիշխանության տակ, անկասկած, շատ ավելի թեթև էր, քան լիբիացիների դրությունը Կարթագենի իշխանության տակ։ Հռոմը, որքանով որ այդ մասին կարելի է դատել առկա տվյալներից, խոշընդոտներ չէր հարուցում իր ազատ կամ անազատ «դաշնակիցների» ու «հպատակների» տնտեսական զարգացման և առևտրական գործունեության ճանապարհին։ Հռոմեական կառավարության մտքով երբեք չէր անցնում իր մենաշնորհին ենթարկել ծովային ու ցամաքային երթուղիները, հումքի և վաճառահանման շուկաները։ Այդ պատճառով նա, իր գերիշխանության ոլորտում ապահովելով որոշակի կարգ և կայունություն, կարող էր ակնկալել հասարակության բավականին ազդեցիկ խավերի, ամենից առաջ կառավարող արիստոկրատական վերնախավի պաշտպանությունը։ Վերջինիս իշխանությունն ապահովում էր սենատը իրեն մատչելի բոլոր միջոցներով։ Եվ իրոք, Հռոմեական կառավարությունը չէր կամենում իտալիկների մոտ առանձնապես ուժեղ դժգոհություն հարուցել։ Հետագայում մենք կտեսնենք, որ իտալիկները, հատկապես Կաննեի մոտ տրված ճակատամարտից հետո, այնպես միասնական չէին, ինչպես կարելի էր կարծել։ Նրանց դիրքավորման վրա էական ներգործություն էին թողնում և՛ ընդհանուր քաղաքական իրադրության զարգացումը, և՛ ներքաղաքական պայքարը, և՛ անկախություն ձեռք բերելու իղձերը (թվում էր, թե հեռավոր Կարթագենի իշխանությունը ավելի քիչ էր ճնշելու, մանավանդ որ Հաննիբալը պատրաստ էր երաշխավորելու անհրաժեշտ ամեն ինչ)։ Կային նաև հնուց և հաստատուն կերպով Հռոմին թշնամի համայնքներ՝ Սամնիումը, Բրուտիումը։ Սակայն ընդհանուր առմամբ, հատկապես Կենտրոնական Իտալիայում, նաև հարավում, հռոմեասեր միտումները ավելի զորեղ դուրս եկան, քան հակահռոմեականները։

Վերն ասվածն ամփոփելով, կարելի է պնդել, որ Կարթագենի դեմ մղած պայքարում Հռոմն ուներ քաղաքական որոշակի առավելություններ։ Այդ առավելությունները այն բանում չէին կայանում, որ հռոմեական պետական կառուցվածքը արիստոկրատական էր (Կարթագենը նույնպես արիստոկրատական պետություն էր) և ոչ էլ ժողովրդայնության

մասնակիցներում (Բարկյանները, ինչպես կտեսնենք, հենվում էին Կարթագենի ժողովրդական զանգվածների վրա, արտահայտում նրանց շահերը, իսկ Հասդրուբալը՝ Համիլկարի փեսան, դեմոկրատական կուսակցության առաջնորդն էր)։ Հռոմին ամենակարևոր առավելությունն ընկալվում էին ժողովրդական աշխարհազորի որպես պետության հիմնական ռազմուժի պահպանումը (համապատասխանաբար՝ հռոմեական բանակի ռազմական հատկանիշներն ավելի բարձր էին, քան կարթագենականները) և նրա իտալիկական քաղաքականությունը։

Հռոմի դեմ Կարթագենի մղած պայքարում ընդհարվեցին ռազմական ռազմակերպության երկու համակարգեր, որոնք պայմանավորված էին հասարակությունների սոցիալական կառուցվածքի և քաղաքական կարգի առանձնահատկություններով։

Կարթագենյան բանակի հիմնական զանգվածը (բացի երկար նիզակներով զինված «սրբազան ջոկատից», որտեղ պունիկյան արիստոկրատները ռազմական ծառայություն էին անցնում և փորձ ձեռք բերում, հրամանատարական պաշտոններ զբաղեցնելու համար) կազմում էին, ինչպես ասվեց, վարձկան զինվորները՝ իբերները, գալլերը, իտալիկները, հույները, աֆրիկացիները։ Որպես կանոն, նրանց զորակոչում էին պունիկյան իշխանությունները։ Բացի ծանրազեն (սրերով ու նիզակներով զինված) հետևազորից, որը կազմում էր զորաշարքի՝ փաղանգի հիմքը, կարթագենյան հրամանատարությունը սովորաբար իր տրամադրության տակ ունենում էր նումիդիական կամ իբերական հեծելազոր, որոնք տեղավորում էին զորաթևերում, բալեարյան պարսատիկավորների, որոնք լինում էին մարտակարգերի առջևում և մարտական ուժեր, որոնք պետք է ոչնչացնեին հակառակորդի կենդանի ուժը։ Պետք է ասել, սակայն, որ հենց կարթագենցիների համար ևս փղերը կազմում էին բանակի ամենավտանգավոր մասը։ Շատ հաճախ թշնամուն հասցվում էր փղերին շուռ տալ պունիկյան զինվորների դեմ։ Զորաբաժիններում սովորաբար զորքերը տեղավորվում էին ամբացված ճամբարում։ Այդպիսի ճամբարի կառուցվածքն անհայտ է։

Հռոմեական բանակում բոլոր զինվորները բաժանվում էին հետևյալ մասերի. վելեներ (զինված էին սրով, տեգով, աղեղնազենով, պարսատիկով), նիզակավորներ (ունեին սուր, պիլում, ինչպես նաև պաշտպանական զրահազենք՝ վահան և կաշվե զրահ, որի եզրերին կարված էին մեծաքիթ թիթեղիկներ), «առաջապահներ» (ավելի վաղ սրանք տեղավորվում էին առաջին տողանում. սպառազինությունը նույնն էր, ինչ նիզակավորները), երրորդ շարքի վետերանները (պիլումի փոխարեն սրանք ունեին սովորական նիզակ)։ Հռոմեական բանակի հիմնական զորամիա-

վորումը լեգեոնն էր, որը բաղկացած էր 30 մանիպուլոսից. յուրաքանչյուր մանիպուլոսում հաշվվում էր 120 զորային՝ նիզակավորներ և «առաջապահներ» կամ 60 զինվորներ (տրիարիներ)։ Մանիպուլոսները կազմված էին 2 ցենտուրիայից. առաջին ցենտուրիայի հրամանատարը միաժամանակ նաև մանիպուլոսի հրամանատարն էր։ Լեգեոնի կազմի մեջ էին մտնում նաև 10 հեծելազորային ջոկատներ («տուրմաներ»), յուրաքանչյուրում՝ 30 հեծյալ։ Մարտի համար սովորաբար լեգեոնը դասավորվում էր 3 շարքով, յուրաքանչյուրում՝ 10 մանիպուլոս։ Մանիպուլոսների միջև եղած տարածությունը հավասար էր նրանց զորաճակատին։ Շարքերի միջև եղած հեռավորությունը կազմում էր 15—20 մ։ Մանիպուլոսները շարվում էին 10 տողանով, յուրաքանչյուրում՝ 12 մարդ։ Առաջին շարքում սովորաբար դասավորվում էին նիզակավորները, նրանց հետևում էին «առաջապահների» մանիպուլոսները. մարտաշարքը վերջափակում էին տրիարիները։

Որպես կանոն, կարթագենյան կողմից մարտն սկսում էին պարսատիկավորները, իսկ հռոմեականից՝ թեթևազեն վնլեսները, որոնք տեգերը, նետերն ու քարերը նետելուց հետո հեռանում էին թիկունք և զորաթևեր։ Նիզակավորները իրենց նիզակներով հարվածում էին հակառակորդի վահաններին և, այդպիսով, զրկելով նրան պաշտպանվելու հնարավորությունից, սրերով նետվում էին նրա վրա։ Եթե այդ գրոհը հաջողության չէր հանգեցնում, նիզակամարտիկները զորաշարքերի միջև եղած անցարաններով տեղափոխվում էին թիկունք, և նրանց փոխարինում էին ավելի փորձառու «առաջապահները», իսկ այնուհետև մարտի մեջ էր մտցվում վերջին ռեզերվը՝ տրիարիները։

Հռոմեական հետևակորի և հեծելազորի այսպիսի կազմակերպումը կարթագենականի հետ համեմատած՝ որոշակի առավելություններ էր ստեղծում։ Հռոմայեցիներն ավելի դյուրաշարժ էին։ Նրանց հրամանատարությունը կարող էր ազատ մանևրել, ընդ որում՝ նաև ոչ մեծ զորախմբերով։ Սակայն պետք է անցներ երկարատև ժամանակ, մինչև որ հռոմեական զորավարները կսովորեին հաղթել Հաննիբալի զինվորներին։

Յուրաքանչյուր մեկօրյա չվերթից հետո հռոմայեցիները ստեղծում էին ճամբար՝ շրջապատված խրամափոսերով, հողապատնեշով։ Յուրաքանչյուր կողմում այն ուներ դարպասներ և հյուսածո վահաններ։ Ճամբարում վրանները տեղավորվում էին խստիվ որոշված հաջորդականությամբ, այնպես, որ յուրաքանչյուր զորական ճշտորեն գիտեր թե՛ իր տեղը, թե՛ բոլոր ստորաբաժանումների դասավորությունը։ Ճամբարում եղած ժամանակ զինվորները սովորաբար լիակատար անվտանգության մեջ էին զգում իրենց[21]։

Կարթագենցիների և հռոմայեցիների ամենահին առնչությունները [illegible] մինչև խոր անցյալ։ Պոլիբիոսը (3, 22) հաղորդում է, որ [illegible] Կարթագենի առաջին պայմանագիրը թվագրվում է Լուկիոս Յունիոսի և Մարկոս Հորացիոսի կոնսուլության ժամանակով, [illegible] թագավոր Քսերքսեսի՝ Հունաստան կատարած ներխուժումից [illegible] առաջ, այլ կերպ ասած՝ 509 թ.[22]։ Կազմված լինելով, անշուշտ, [illegible] էքսուակյան դաշնակիցների հետ Կարթագենի կնքած համաձայնությունների[23] ձևով, այն նախ և առաջ նախատեսում էր կարթագենյան մենաշնորհի ոլորտի հաստատումը Գեղեցիկ հրվանդանից այն [illegible], կարգավորում էր հռոմեական (ավելի ճիշտ կլինի ասել՝ [illegible]) առևտուրը Սարդինիայում, Սիցիլիայում և Հյուսիսային [illegible], երրորդ, արգելում էր կարթագենցիներին որևէ տարածք [illegible] Լատիումում և պատերազմներ մղել Հռոմի դաշնակիցների [illegible] մոտ առավելագույն հետաքրքրություն և ամենայն [illegible] բանավեճեր է հարուցել Գեղեցիկ հրվանդանի տեղադրության [illegible]։ Պոլիբիոսը (3, 22, 5) գրում է. «Ո՛չ հռոմայեցիները, ո՛չ էլ նրանց [illegible] չպետք է նավարկեն Գեղեցիկ հրվանդանից այն կողմ, [illegible] եղանակից ու թշնամիներից ստիպված չլինեն» (մեջբերում [illegible])։ Պայմանագրին կցված իր մեկնաբանության մեջ Պոլիբիոսը (3, 22, 1—4) այդ կետը հետևյալ կերպ է պարզաբանում. «Գեղեցիկ հրվանդանը այն է, որը գտնվում է հենց Կարթագենի դիմաց, դեպի [illegible]։ Կարթագենցիները հաստատ կարծում էին, որ հռոմայեցիներին անհրաժեշտ չէ երկար նավերով նավարկել այն կողմը՝ դեպի [illegible], ինչպես կարծում եմ, նրանք չէին կամենում, որպեսզի [illegible] հետաքրքրեն Բիսատիս և Փոքր Սիրտիսի շուրջն ընկած վայրերը, [illegible] նրանք անվանում են էմպորիումներ, որովհետև այդ երկիրը [illegible] է։ Եթե վատ եղանակի կամ թշնամիների պատճառով հեռացած [illegible] մեկը զգա զոհաբերություններ կատարելու և նավերը հանդերձելու համար անհրաժեշտ բաների կարիքը, նրանք կարծում են, [illegible] է վերցնել, և որ ափ ելածները պետք է անպայման հեռանան [illegible] ընթացքում։ Իսկ հռոմայեցիներին թույլ է տրվում առևտրի [illegible] նավարկել դեպի Կարթագեն ու բովանդակ Լիբիա՝ Գեղեցիկ հրվանդանից այս կողմ և Սարդինիա ու Սիցիլիա, որոնց տիրում են կարթագենցիները։ Եվ կարթագենցիները խոստանում են պետական երաշխիքներ տալ [illegible] ապահովել օրինականության պահպանումը»։ Պոլիբիոսի մեկնաբանությունից ակնհայտորեն երևում է, որ Գեղեցիկ հրվանդանը պետք է փնտրել Հյուսիսային Աֆրիկայում, Կարթագենի անմիջական [illegible]կայքում[24]։ Սակայն այդ հարցն ըստ երևույթին չի կարող

այդքան միանշանակ ձևով լուծվել։ Ուշադրություն են գրավում հետևյալ հանգամանքները։ Նախ՝ պայմանագրի բնագրում իսկ ցույց չի տրված Դեղեցիկ հրվանդանի տեղադրությունը։ Միաժամանակ, երբ նրանում խոսք է լինում Լիբիայում կատարվող առևտրի մասին, բացակայում են տարածքային որևէ սահմանափակումներ։ Այս փաստը հակասում է Պոլիբիոսի առաջարկած տեղադրությանը։ Երկրորդ, Պոլիբիոսի մեկնաբանության մեջ առկա է ներքին հակասություն. համաձայն Հռոմի հետ Կարթագենի երկրորդ պայմանագրի (Պոլիբիոս, 3, 24, 4) և այդ վավերագրի շուրջը Պոլիբիոսի հատուկ մեկնաբանության (3, 24, 2), Դեղեցիկ հրվանդանի անմիջական մերձակայքում էին գտնվում Մաստիան և Տարսեսսոսը (այսինքն՝ Տարշիշ, Տարտեսսոս), որոնք ընկած են Պիրենեյան թերակղզում։ Այս փաստերը մեր տեսակետով ավելի ճշմարտանման են դարձնում Դեղեցիկ հրվանդանը Հյուսիսային Աֆրիկայի սահմաններից դուրս, ամենայն հավանականությամբ, Իսպանիայի միջերկրածովյան ափին, նաև հրվանդանի շրջանում[25] տեղադրելը։ Ակներևաբար Հռոմի հետ կնքված պայմանագիրը շատերից մեկն էր միջազգային-իրավական ակտերի շարքում, որոնց միջոցով Կարթագենը VI դ. վերջին, Տարտեսսոսյան պետության ջախջախումից և Տարտեսսոսի կործանումից հետո ամրապնդեց իր քաղաքական գերիշխանությունը և առևտրական մենաշնորհը Պիրենեյան թերակղզու հարավում։

Հռոմի հետ Կարթագենի երկրորդ պայմանագիրը սովորաբար թվագրվում է 348 թվականով (հմմտ. Լիվիոսի մոտ, 7, 27, 2, Օրոսիոս, 3, 7, 1—3, Դիոդորոս, 16, 69, 1)[26], սակայն 1958 թ. առաջադրվեց նոր տեսակետ. ցույց տրվեց, որ երկրորդ պայմանագիրն իրենից ներկայացնում է, ըստ էության, լոկ առաջինի զարգացումը, կոնկրետացումն ու ճշգրտումը, ուստի ժամանակագրորեն շատ հեռու չի կարող ընկնել առաջինից։ Ասվածից ելնելով, առաջադրվում է Հռոմի հետ Կարթագենի երկրորդ պայմանագիրը թվագրել VI դ. վերջով կամ ավելի ստույգ՝ 500 թ. մոտերքն ընկած ժամանակով[27]։ Այս վարկածը հույժ ճշմարտանման է թվում, սակայն, ցավոք, տակավին պակասում են խնդիրը վերջնականապես լուծելու հնարավորություն ընձեռող տվյալները։ Համենայն դեպս, համաձայն այդ պայմանագրի (Պոլիբիոս, 3, 24, 3—13), հռոմայեցիներին արգելվում էր նավարկել Դեղեցիկ հրվանդանից այն կողմ, դեպի Մաստիա և Տարսեսսոս-Տարշիշ, այսինքն՝ Հարավային Իսպանիա, ինչպես նաև Սարդինիա և Լիբիա։ Առևտուր անելու իրավունք և հնարավորություն հռոմայեցիները պահպանում էին սոսկ պունիկյան Սիցիլիայում և բուն Կարթագենում։ Բացի այդ, պայմանագրով կարգավորվում է կարթագենցիների ծովահենային հարձակումների «կարգը», եթե կարելի

[illegible] արտահայտվել, Լատիումի այն շրջանների վրա, որոնք Հռոմին [illegible] չէին։ Ընդ որում նախատեսվում էր գերի վերցված դաշնակիցներին (Հռոմինը՝ Հռոմի, Կարթագենինը՝ Կարթագենի տարածքում) ազատագրելու հնարավորություն։

Փոխհարաբերությունների այս գծի հետագա զարգացումը իր արտացոլումը գտավ այն պայմանագրում, որի հիմնական բովանդակությունը պահպանել է ուշ հռոմեական հեղինակ Սերվիոսը, Վերգիլիոսի «Էնեական»ի շուրջը իր մեկնաբանության մեջ (4, 628)։ Սովորաբար այդ պայմանագիրը թվագրվում է 306 թվականով[28], սակայն այժմ երկրորդ պայմանագրի վերանայման կապակցությամբ առաջարկում են այն դնել 343 թ.[29]։ Այստեղ նախատեսվում է կարթագենցիներին հռոմեական տիրույթների, իսկ հռոմայեցիներին կարթագենականի մոտերքում նավարկելու լիակատար արգելում։ Յուրատեսակ բուֆերային, մեկը մյուսից անկախող տարածք էր դառնալու Կորսիկան։ Համանման տեղեկություններ եղել են կարթագենամետ (Պոլիբիոս, 1, 14, 3) հույն պատմագիր Փիլինոսի աշխատություններում։ Համաձայն Պոլիբիոսի շարադրանքի (3, 26, 3), Փիլինոսը գրել է, որ «հռոմայեցիների և կարթագենցիների միջև եղած պայմանագրերի համաձայն, հռոմայեցիները պետք է հրաժարվեին ամբողջ Սիցիլիայից, իսկ կարթագենցիները՝ Իտալիայից»։ Պոլիբիոսը կտրուկորեն ժխտում է Փիլինոսի հաղորդումը. նմանօրինակ համաձայնություն, ըստ նրա խոսքերի, երբևիցե չի եղել, և դրա վերաբերյալ որևէ գրառումներ չկան (3, 26, 4)։ Սակայն հույն պատմագրի փաստարկը Սերվիոսի ցուցումների լույսի տակ համոզիչ չի կարող համարվել։ Բացառված չէ, որ հռոմայեցիները նրանից թաքցրել են այն վավերագիրը, որը թշնամիներին (նաև նույն Փիլինոսին) թույլ կտար [illegible] մեղադրել ուխտադրժության մեջ։ Բոլոր դեպքերում IV դ. վերջի քաղաքական իրադրությունը, երբ որոշակիորեն զգացվում էր աղդեցության ոլորտների բաժանման պահանջը, և երբ տակավին կողմերը չէին կարող հավակնություն ունենալ ո՛չ Իտալիայի (Կարթագեն) և ո՛չ էլ Սիցիլիայի (Հռոմ) նկատմամբ, չի բացառում դրա գոյությունը։ Ըստ երևույթին, հենց այդ պայմանագիրն ի նկատի ունի Տիտոս Լիվիոսը (9, 43, 26), երբ գրում է, որ «նաև կարթագենցիների հետ հենց նույն տարում (այսինքն՝ 306 թ.—Ի. Կ.) երրորդ անգամ վերանորոգվեց դաշինքը, [illegible] դրա համար ժամանած նրանց դեսպաններին սիրալիորեն ընծաներ [illegible]»։

Լիվիոսի երկում հիշատակություն կա (Լիվիոս, Կոդ., 13) նաև Հռոմի ու Կարթագենի միջև չորրորդ անգամ դաշինքը «վերանորոգելու» մասին։ Այդ ցուցումը պարունակող կոնտեքստը ցույց է տալիս, որ պայ-

մանագիրը կնքվել է Հարավային Իտալիայում գերիշխանության համար հռոմայեցիների և Էպիրոսի թագավոր Պյուրոսի միջև ընթացիկ պայքարի եռուն շրջանում։ Կանխապես կարելի է ենթադրել, որ խոսքը վերջինիս դեմ ուղղված ռազմաքաղաքական դաշինքի մասին է։ Պոլիբիոսը (3, 25, 3—5) տեղեկություններ է պահպանել 280 թվականով թվագրվող համաձայնագրի մեջ մտցված նմանօրինակ պայմանների մասին։ Ըստ երևույթին հենց դրա մասին է խոսում նաև հռոմայեցի պատմագիրը։ Կողմերն ստանձնում են հետևյալ պարտավորությունները. «Եթե նրանք Պյուրոսի հետ դաշնագիր կնքեն, թող դա կատարեն և՛ իրենք, և՛ մյուսները, որպեսզի կարողանան օգնել միմյանց՝ նրա երկրում, ով կենթարկվի հարձակման։ Որ կողմն էլ որ նավերի կարիք ունենա, թող տրամադրեն կարթագենցիները, ինչպես ճանապարհների պաշտպանության, այնպես էլ հարձակման համար։ Յուրաքանչյուր կողմ ինքն է ոռճիկ վճարում իր զորականներին։ Կարթագենցիները թող օգնեն հռոմայեցիներին նաև ծովում, եթե անհրաժեշտ լինի։ Իսկ անձնակազմին թող ոչ ոք չհարկադրի ափ դուրս գալ իր կամքին հակառակ»։

Այսպիսով, Հռոմի ու Կարթագենի միջև հարաբերությունները ոչ մի անգամ աչքի չեն ընկել արտակարգ մտերմությամբ։ Պայքարն ընդհանուր թշնամու՝ Պյուրոսի դեմ, որը մտահղացել էր հռոմեական ու կարթագենյան հզորության ավերակների վրա արևմուտքում իրեն համար ստեղծել հզոր թագավորություն, թվում էր, թե պետք է մերձեցներ նրանց։ Սակայն հետագայի անցքերը ցույց տվեցին, որ կողմերը դաշնակցից վախենում էին ոչ պակաս, եթե ոչ ավելի, քան հակառակորդից։ Համենայն դեպս, դա կարելի է ասել Հռոմի վերաբերյալ։ Ի կատարումն պայմանագրի, կամ այդ պատրվակով, իբր Հռոմին օգնելու համար ուղարկվեց 120 նավից բաղկացած նավախումբ, սակայն սենատը, քաղաքավարությամբ շնորհակալություն հայտնելով, հրաժարվեց դրանից։ Նրա համար այդ անելը հեշտ էր այն պատճառով, որ անմիջական վտանգն անցել էր։ Այն ժամանակ կարթագենցի Մագոնը մեկնեց Պյուրոսի մոտ։ Հայտարարվեց, որ նա կամենում է նպաստել Հռոմի ու Պյուրոսի միջև խաղաղության հաստատմանը, թեև իրականում նա փորձեց պարզել վերջինիս պլանները. կարթագենցիներին շատ էին անհանգստացնում լուրերն այն մասին, որ Պյուրոսը մտադիր է ներխուժել Սիցիլիա (Հուստինոս, 18, 2, 1—4, Վալ. Մաքս., 3, 7, 10)։

Ստեղծվում է այն տպավորությունը, որ դաշնակիցները գործում էին առանձին-առանձին, փաստորեն միմյանցից անկախ, թեև Դիոդորոսը (22, 7, 5) նույնիսկ պահպանել է տեղեկություն այն մասին, որ իբր պունիկացիները հռոմայեցիներին տրամադրել են իրենց նավերը, զինվորներին Ռեգիում տեղափոխելու համար։ Երբ Կարթագենի կառավարությանն ամենավատթար սպասումներն արդարացան, երբ Պյուրոսն անցավ Սիցիլիա և նույնիսկ իրեն հռչակեց այդ կղզու թագավոր, կարթագենցիները մնացին միայնակ և, կրելով մի շարք կործանիչ պարտություններ իրենց հակառակորդից, որին պաշտպանում էր տեղի հույն բնակչությունը, կորցրեցին գրեթե ամեն ինչ (Հուստինոս, 23, 3, 1—4, Ապպ., Սամն., 12)։ Միակ բանը, որ նրանք ի զորու եղան պահպանել, ընդհանրապես ծովում իրենց ունեցած տիրապետության, Լիլիբեոն նավահանգիստն էր։ Վտանգն այնքան ահավոր էր պատկերացվում, իսկ Հռոմի անգործությունը դրսից փրկարար օգնության հույսն այնպես էր ի դերև հանում, որ կարթագենցիները վճռեցին, գիտակցաբար խախտելով դաշնակցային պարտավորությունները, թշնամուն առաջարկել խաղաղություն։ Նրանք պատրաստ էին հաշտվել կորուստների հետ և նույնիսկ նավատորմ տրամադրել իրենց ոչ վաղուցվա հակառակորդին։ Բանակցություններն ապարդյուն անցան, քանի որ Պյուրոսը պահանջեց իրեն տալ նաև Լիլիբեոնը (Պլուտ., Պյուր., 22—24)։ Կարթագենցիների գերիշխանությունը Սիցիլիայում հնարավոր եղավ վերականգնել սոսկ այն պատճառով, որ Պյուրոսի սիցիլական քաղաքականությունը (հարկերի ու պարտությունների բռնագանձումը, կայազորների տեղակայումը և այլն) Սիցիլիայի հույներին դարձրեց կարթագենցիների դաշնակիցը։ Ի վերջո Պյուրոսը Սիցիլիայից դուրս մղվեց Իտալիա (Ապպ., Սամն., 12)։ Սակայն անտիկ պատմագրության մեջ կա նաև այլ կարգի ցուցում, նշում են, որ Պյուրոսը հեռացել է Սիցիլիայից, զիջելով իր իտալական դաշնակիցների համառ խնդրանքներին։ Վերջիններս վախենում էին հռոմայեցիների նոր արշավանքից (Հուստինոս, 23, 3, 5—9)։ Ըստ երևույթին թե՛ այս և թե՛ մյուսը կատարել է իր դերը, թեև Պյուրոսին և, հնարավոր է, նաև Հռոմին քաղաքական տեսակետից ձեռնտու էր շեշտել հատկապես երկրորդ հանգամանքը։ Համենայն դեպս, եթե Պյուրոսը իր դեմ չհաներ Սիցիլիայի հույներին, ինչն իրենց նպատակների համար օգտագործեցին կարթագենցիները, Իտալիա նրա մեկնումը հազիվ թե կարողանար կղզու հետ կապված բոլոր պլանների խորտակման պատճառ դառնալ։

Այն բանից հետո, երբ Պյուրոսն ստիպված եղավ թողնել Սիցիլիան, ապա նաև Իտալիան, Կարթագենի ու Հռոմի միջև դաշինքի մասին արդեն խոսք լինել չէր կարող։ Վերականգնվեց նրանց ընդդիմակայությունը, որն այժմ հղի էր անմիջական ընդհարմամբ։ 306 թվականի պայմանագրի փոխադարձ խախտումները՝ հռոմեական նվաճմանը Տարենտոնի դիմադրությանը օժանդակություն ցույց տալու Կարթագենի փորձը (Լիվիոս, Եպիտ., 14, Օրոսիոս, 4, 3, 1—2. 5, 2, Զոնարաս, 8, 6) և հռոմայեցիների մի-

ջամտությունը Մեսսանայի գործերին (Պոլիբիոս, 1,8—11), առիթ ծառայեցին պատերազմն սկսելու համար։

Իրապես Կարթագենի ու Հռոմի միջև մղված առաջին պատերազմի՝ Պունիկյան I պատերազմի (264—241 թթ.), ելքը կանխորոշված էր սկզբից ևեթ։ 264—262 թվականների պատերազմի ընթացքում հռոմայեցիներին հաջողվեց Սիրակուզայի թագավոր Հիերոն II-ին, որը մինչ այդ պունիկացիների դաշնակիցն էր, հարկադրել անցնելու Հռոմի կողմը (որի հետևանքով Կարթագենը քաղաքականապես մեկուսացավ) և, բացի այդ, գործնականում իրենց գերիշխանությունը հաստատել ամբողջ կղզում։ Կարթագենցիների համար հատկապես ծանր հարված էր ռազմական տեսակետից Սիցիլիայում ամենակարևոր կետի՝ Ակրագանտի անկումը։ Դրանից հետո նրանց տիրապետության տակ մնացին միայն մի քանի ծովամերձ քաղաքներ, որոնք այժմ մատակարարվում և պաշտպանվում էին ծովից։

Մինչ այդ Հռոմի ռազմական նավատորմը ոչ մի կերպ չէր կարելի համեմատել կարթագենականի հետ, այդ պատճառով էլ թվում էր, թե Հռոմը երբեք չի կարող հաղթահարել պունիկացիների առավելությունն այդ բնագավառում։ Մրցակիցների առաջ բացվեց երկարատև, հյուծիչ պատերազմի հեռանկարը։ Կարթագենը միայն ծովային ուժերով հաղթանակի չէր կարող հասնել։ Բայց Հռոմը ևս չէր կարող հաղթել սոսկ ցամաքային զորքերի օգնությամբ։ Այդ պատճառով առաջինի առջև ծառացավ մարտունակ հետևակազոր ստեղծելու խնդիրը, այն դեպքում, երբ երկրորդը կանգնեց նոր ռազմանավերի շուտափույթ կառուցման ու ծովայինների ուսուցման անհրաժեշտության առջև։ Մենք տեղյակ ենք գլխավորապես Հռոմայեցիների գործողությունների մասին, սակայն հետագա իրադարձությունները ինքնին խոսում են իրենց մասին՝ հռոմեական զորապետները շահեցին մրցակցությունը։ Գրավելով ծանծաղուտին նստած կարթագենական պենտերան, նրանք այն օգտագործեցին որպես նմուշ և, արդեն 260 թ. իրենց տրամադրության տակ ունեին 120 նավից բաղկացած նավատորմիզ։ Դեռ ավելին. որպեսզի խափանեն ծովամարտի՝ այն ժամանակվա համար սովորական ձևերը՝ նավերի և նավախոյերի շարքի ճեղքումը, հռոմայեցիները մշակեցին նոր տակտիկա։ Նրանք հնարեցին թշնամու նավերի ճանկման կամրջակներ («ագռավներ»)։ Այդ կամրջակներով զինվորները վազելով անցնում էին թշնամական նավը և ձեռնամարտի բռնվում այնտեղ։ Դրանով իսկ հռոմայեցիները հնարավորություն էին ստանում ծովում, նավաճանկման մարտում օգտագործել իրենց հետևազորի առավելությունը։ Ճիշտ է, հռոմայեցիների ծովային առաջին ձեռնարկումը անհաջողությամբ վերջացավ. նրանք փոր-

ձում էին գրավել Լիպարոսյան կղզիները, սակայն փակվեցին նավահանգստում և գերի վերցվեցին (17 նավ՝ կոնսուլ Գնեոս Կորնելիոս Սկիպիոնի հրամանատարությամբ)։ Բայց պարտությունը լիովին փոխհատուցվեց Միլեի մոտ 259 թ. տարած հաղթանակով, որտեղ ջրասույզ արվեցին կամ գերի վերցվեցին մոտ 50 ռազմանավեր՝ պունիկյան նավատորմի գրեթե կեսը։ Այդ հաջողությունը ցնցեց ժամանակակիցներին, առանձնապես իրենց՝ հռոմայեցիներին։ Հռոմեական նավատորմի հրամանատար կոնսուլ Գայոս Դուիլիոսը, բացի սովորական տրիումֆից, արժանացավ միանգամայն բացառիկ պատիվների. սենատի որոշմամբ հասարակական վայրերում նրան պետք է ուղեկցեր ֆլեյտահարը։ Մեզ է հասել մի արձանագրություն, որը կազմվել է այն բանի համար, որպեսզի հավերժացնի Դուիլիոսի սխրագործությունը (CIL, I, 195, Պլինիոս, 34, 20)։

Այժմ արդեն հռոմեական իշխանությունները Աֆրիկայի տարածքում հարավորություն ունեին փորձելու ջախջախել Կարթագենը։ 256 թ. Էգեան, որոնց գլխավորում էին երկու կոնսուլները՝ Մարկոս Ատիլիոս Ռեգուլոսը և Լուկիոս Մանլիոս Վոլսոնը, 330 նավերով ուղարկվեցին Աֆրիկյան ցամաք։ Կարթագենցիները, հակառակորդին հանդիպելով Էկնոմոսի մոտ, չնայած իրենց թվական գերակշռությանը (նրանք ունեին 350 նավ), չկարողացան խանգարել իրենց թշնամիներին և ստիպել նրանց՝ վերադառնալու Սիցիլիա։ Կորցնելով 94 նավ (հռոմեական 24-ի դիմաց), պունիկյան նավատորմը նահանջեց դեպի Աֆրիկա։ Հռոմայեցիները ափ իջան այնտեղ, ուր նրանց բոլորովին չէին սպասում՝ Կլուպեա բերդի շրջանում։ Այդ բերդը դարձավ նրանց հենակետը։ Դեսանտի կեսը՝ Վոլսոնի գլխավորությամբ, սենատի պահանջով վերադարձավ Իտալիա։ Ռեգուլոսը կարողացավ իր հսկողության տակ դնել Կարթագենի աֆրիկյան գրեթե բոլոր տիրույթները և ձեռք բերել դաշնակից, ի դեմս ապստամբած լիբիացիների։

Ռազմական հաղթանակի հույս չունենալով, Կարթագենի կառավարությունը փորձեց դուրս գալ պատերազմից, հաշտվելով Սիցիլիայի ու Սարդինիայի կորստյան հետ։ Սակայն Ռեգուլոսին այդ քիչ էր թվում։ Բանակցությունների ժամանակ նա պահանջեց, որպեսզի պունիկացիները ոչնչացնեն իրենց ռազմական նավատորմիզը և պարտավորություն առանձնեն նավեր մատակարարելու Հռոմին։ Նման պայմանների ընդունումը կնշանակեր Կարթագենի՝ որպես մեծ տերության վերացում և Հռոմից նրա ուղղակի կախվածության հաստատում։ Կարթագենցիները վրճռեցին պաշտպանվել։ Սիցիլիայից զորքեր կանչվեցին։ Բացի այդ, հույն վարձկան զինվորներից ստեղծվեց նոր զորաբանակ՝ տաղանդավոր զո-

բապետ, սպարապետի Քսանթիպոսի գլխավորությամբ (նրա նախորդ և հետագա գործունեությունը հայտնի չէ)։ Դրա հետևանքով ուժերի հարաբերակցությունը կտրուկ կերպով փոխվեց, և կարթագենցիները, շնորհիվ գլխավորապես Քսանթիպոսի ռազմավարական վարպետության, ի զորու եղան, Թունետից ոչ հեռու, գլխովին ջախջախել Ռեգուլոսի բանակը։ Կարթագենցիները Հռոմի Լիբիական դաշնակիցների համար արյան բաղնիքներ սարքեցին, և հաղարավոր սպանվածների ու մահապատժի ենթարկվածների մասին հիշողությունը դեռևս երկար ժամանակ կենդանի մնաց աֆրիկյան գյուղերում ու ավաններում։

Ռազմական գործողություններն այժմ վերստին կենտրոնացան Սիցիլիայում և սկզբնապես ընդունեցին պունիկացիների համար բացահայտորեն անբարենպաստ ընթացք, թեև ծովում հռոմայեցիների գործողությունները առանձնապես հաջող չէին։ 254 թ. կարթագենցիները թողեցին Պանորմոսը, իսկ 251 թ. ծանր պարտություն կրեցին այդ քաղաքի պարիսպների տակ, կորցնելով 120 մարտական փիղ։ 249 թ. ընկավ Էրիքսը, և պունիկացիների ձեռքին մնացին միայն Դրեպանումը և Լիլիբեոնը։ Հաշտություն կնքելու համար Կարթագենի երկրորդ փորձն անցավ ապարդյուն։ Մինչդեռ հռոմայեցիներն ի վիճակի չեղան ամբողջությամբ շրջափակել Դրեպանումն ու Լիլիբեոնը ո՛չ ծովի և ո՛չ էլ ցամաքի կողմից։ Կարթագենյան ծովայինները, փոքր առագաստանավերով, անցնելով հռոմայեցիների ստեղծած արգելքներից, թափանցեցին նավահանգիստ։ Պունիկյան հեծյալները զգալի հարվածներ հասցրեցին հակառակորդին և գրավեցին հռոմեական գումակները՝ պաշարողների համար նախատեսված սննդամթերքներով հանդերձ։ Կամենալով կտրուկ կերպով փոխել դրությունը, կոնսուլ Պուբլիոս Կլավդիոսը փորձ արեց ոչնչացնել կարթագենյան նավատորմը Դրեպանումի նավահանգստում, սակայն պունիկյան ծովակալ Ատարբային հաջողվեց շրջապատել հռոմեական նավերը և նրանցից 80-ը խլել, 100-ը՝ ոչնչացնել։ Կլավդիոսը կարողացավ փրկել ընդամենը 30 նավ։ Ջախջախումը ավարտվեց Գելայի ու Կամարինեի շրջանում հռոմեական փոխադրանավերի ոչնչացմամբ. դրա հետևանքով նույնիսկ վերացվեց Լիլիբեոնի և Դրեպանումի այն ոչ լրիվ շրջափակումը, որ կատարել էին հռոմայեցիները։ Տասներեքամյա հյուծիչ պայքարից հետո կողմերը վերադարձան այն կացությանը, որ արդեն ստեղծվել էր 262 թվականին և, ըստ երևույթին, այնպես, ինչպես 60-ական թվականների վերջին, հեռու էին վերջնական հաղթանակից։

Այդպիսին էր իրադրությունը, երբ 247 թ. Սիցիլիայում կարթագենական նավատորմի հրամանատար նշանակվեց Համիլկար Բարկան, իսկ

նրա ընտանիքում, մոտավորապես նույն այդ ժամանակ, ծնվեց Հաննիբալը՝ ոչ հեռավոր ապագայում Հռոմի ամենահամառ և ամենավտանգավոր թշնամին։

II

Համիլկարը՝ Հաննիբալի որդին, որը կրում էր թերևս տոհմական Բարկա («շանթ») մականունը, համաձայն իր կենսագրի հաղորդման, զբաղեցնում էր այն ժամանակի համար կարևոր պաշտոն և պատանի հասակում փաստորեն ստանձնել էր Հռոմի դեմ պատերազմի ելքի ամբողջ պատասխանատվությունը (Կորն. Նեպ., Համ., 1, 1)։ Ինչպես մեզ է թվում, հաղիվ թե ճիշտ լինի այդ տեղեկություններին չափազանց վստահելը։ Համիլկարին կարող էին վերագրվել նրա՝ անհամեմատ ավելի հռչակավոր որդուն և հաջորդին վերաբերող կենսագրական տվյալներ. ամեն դեպքում, մինչև այդպիսի նշանակում ստանալը, Համիլկարը պետք է անցներ ռազմական լուրջ դպրոց, զանազան պաշտոններով մասնակցություն ունենալով հռոմայեցիների դեմ տարվող մարտական գործողություններին, ինչպես նաև ձեռք բերեր որոշակի վարչական փորձ, կատարելով մագիստրատների, այդ թվում նաև բարձր մակարդակի պարտականություններ։ Դժվար է պատկերացնել, որ Կարթագենի ճակատագիրը կարող էր վստահվել անփորձ և դեռահաս պատանու, որը մինչ այդ ոչ մի նշանակալից բանով իրեն չէր դրսևորել։ Այս կապակցությամբ նշենք, որ մոտավորապես 240—230 թթ., երբ լրացել էր Հաննիբալի յոթ-ութ տարին, Համիլկարը համենայն դեպս արդեն ուներ երկու դուստրը, որոնք հասել էին ամուսնական տարիքի (Պոլիբիոս, 1, 78, 8, Ապպ., Իսպ., 4)։ Հետևաբար նրանք ծնվել էին 255—252 թվականներից ոչ վաղ և, ուրեմն, ինքը՝ Համիլկարը ամուսնացել էր 256 թվականից ոչ վաղ։ Բոլոր այս հաշվարկներն, իհարկե, հեռու են անհրաժեշտ ճշգրտությունից և շատ մոտավոր պատկերացում են տալիս զորավարի տարիքի մասին, երբ նա առաջին անգամ ոտք դրեց պատմության նախաբեմ։ Որոշակի չափի հավանականությամբ կարելի է ենթադրել, որ 247 թ. արդեն լրացել էր մոտավորապես նրա երեսուն տարին, գուցե և ավելին։ Կորնելիոս Նեպոսի օգտագործած սկզբնաղբյուրը կարող էր ի նկատի ունենալ, եթե ենթադրենք, որ այն արտացոլում է իրական անցքերը, զորավարի ոչ թե բացարձակ երիտասարդությունը, այլ հարաբերական՝ նրա ընկերակիցների և հակառակորդների համեմատությամբ։

Հետաքրքիր է, որ Ցիցերոնը (Ցից., Պարտ., 3, 99) և Զոնարասը (8, 10) Համիլկար Բարկային նույնացնում էին այն Համիլկարի հետ, որը

261—256 թթ. գլխավորում էր պունիկյան զորքերը Սիցիլիայում և մասնակցեց էկնոմոսի մատույցներում մղված ծովային ճակատամարտին, ինչպես նաև Աֆրիկայում պայքար կազմակերպեց Ռեգուլոսի և նրան սատարող Նումիդիացիների դեմ։ Սակայն այդպիսի նույնացումը քիչ հավանական է թվում։

Եթե նմանօրինակ համընկնումը իրոք տեղի ունեցած լիներ, մեր հիմնական սկզբնաղբյուրները չէին կարող խոսել Համիլկար Բարկայի նշանակման մասին այնպիսի տոնով, որը ցույց է տալիս, որ նա միայն 247 թ. է առաջին անգամ հանդես գալիս Պունիկյան I պատերազմի մասին պատմության մեջ։ Այսպես, օրինակ, Պոլիբիոսը (1,56,1) գրում է. «Կարթագենցիները դրանից հետո զորապետ նշանակեցին Բարկա մականվանյալ Համիլկարին և նրան հանձնարարեցին նավատորմի հրամանատարությունը»։ «Բարկա մականվանյալ» արտահայտությունը որոշակիորեն ցույց է տալիս, որ Պոլիբիոսը կամ նրա աղբյուրը կամեցել են տարբերել հատկապես տվյալ Համիլկարին մյուս՝ մականուն չունեցող, Համիլկարներից[30]։

Ինչպես էլ լինի, 247 թ. Համիլկար Բարկան ստացել էր ամենապատասխանատու նշանակում, որը հետագայում նրա համար ուղի հարթեց պետության մեջ ամբողջ իշխանությունը գրավելու։ Եթե ստույգ է, որ Նոր Կարթագենից ծագող դրամներից մեկի վրա փյունիկյան աստված Մելկարտի պատկերին հաղորդվել է Համիլկար Բարկայի դիմապատկերին յուրահատուկ գծեր[31], ապա մենք կարող ենք որոշ պատկերացում կազմել նրա դեմքի մասին, թեև պատկերը ոճավորված է կատարողի ժամանակակից հելլենիստական եղանակի ոգով։ Հեղինակն, անշուշտ, ջանացել է ոչ միայն հասնել արտաքին նմանության, այլև տալ բնօրինակի հոգեբանական բնութագիրը. նրան հաջողվել է հաղորդել տիրական և իր նկատմամբ վստահ, զորոց արիստոկրատի ամուր կամքը, վճռականությունը, խստությունը և թերևս դաժանությունը։ Կիպ սեղմված բարակ շրթունքներ, գանգուր մորուք, ուշադիր, ասես սրաթափանց հայացք... Նկարիչը փութաջանորեն խուսափել է այն ամենից, որը կարող էր այդ անվիճելիորեն արտասովոր մարդու մեջ դրսևորել այլ հատկություններ՝ մեղմություն, բարություն, նրբազգացություն։ Մեր առջև զինվորն է, որը կանգ չի առնի արյան հեղեղի առաջ, հաշվենկատ և անհողդողդ քաղաքական գործիչ, այնպիսին, ինչպիսին նրան դաստիարակել է կարթագենյան իրականությունը, իր խարդավանքներով, կաշառակերությամբ, մահացու թշնամանքով, իշխանության համար մղեցին պայքարով։ Անտիկ ավանդությունը Համիլկար Բարկային վերագրում է պետական իմաստություն, արհամարհանք վտանգի հանդեպ, ռազմական

բացառիկ վարպետություն։ Նա երբեք ոչ ոքի հաղորդակից չէր դարձնում իր մտահղացումներին, որպեսզի հակառակորդը չիմանար դրանց մասին, իսկ նրա զորայինները իրարանցման մեջ չընկնեին, խորհրդածելով այն վտանգների մասին, որոնք սպասում էին նրանց (Դիոդորոս, 24, 5—7)։ Կարթագենում հույս էին տածում, որ այդպիսի մարդուն կհաջողվի ռազմական գործողությունները հանել փակուղուց և հասնել հաղթանակի։

Սկզբնապես հանգամանքները բարեհաջող դասավորվեցին Կարթագենի համար[32]։ Հրամանատարությունն ընդունելով, Համիլկարն ամենից առաջ ավերիչ հարձակումների ենթարկեց Իտալիայի ծովափերը և հատկապես Ապենինյան թերակղզու հարավում, Էպիզեֆիրոսյան Լոկրիսը և Բրուտիումը։ Այս գործողությունը, որում պունիկյան զորքերն ըստ երևույթին չհանդիպեցին հակառակորդի գործուն դիմադրության (Պոլիբիոսն ընդհանրապես չի խոսում այդ մասին), կարող էր ունենալ մի քանի նպատակ։ Նախ՝ ստիպել հռոմայեցիներին, ավելի մեծ ուշադրություն դարձնելու Իտալիայի պաշտպանությանը և դրանով իսկ նվազեցնել նրանց ռազմական ճնշումը Սիցիլիայում՝ ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմում։ Երկրորդ՝ վերցնել գերիներ, որպեսզի կատարեն փոխանակություն և փրկեն, եթե ոչ բոլորին, ապա գոնե յուրայինների մի մասին։ Եվ իրոք, ռազմագերիների հավասար (մեկը-մեկի դիմաց) փոխանակումը տեղի ունեցավ հենց նույն տարում, թեև պունիկացիներին չհաջողվեց հասնել իրենց բոլոր հայրենակիցների գերեզարձությանը. ըստ երևույթին ռազմավարը չէր բավականացնում։ Վերջապես, երրորդ՝ ցուցադրել կարթագենական նավատորմի ուժը և հռոմայեցիներին նախապատրաստել խաղաղության մտքին՝ 247 թ. գոյություն ունեցած իրավիճակը ճանաչելու հիման վրա։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Համիլկարն իր մտահղացումները միայն մասնակիորեն կարողացավ իրագործել։ Պատերազմի բախտը վճռվում էր Սիցիլիայում։ Համիլկարը վճռեց հատկապես այդտեղ կենտրոնացնել իր հիմնական ջանքերը։ Նրան հաջողվեց անարգել կերպով, Պանորմոսից ոչ հեռու, ափ իջնել և գրավել Էյրկտե (այժմ Մոնտե Պելեգրինո) լեռը, որը նա դարձրեց իր ռազմական հենակետը։

Ավելի լավ ընտրություն չէր կարելի կատարել։ Գահավեժ զառիթափերը լեռը դարձնում էին բոլոր կողմերից անմատչելի և հնարավորություն էին տալիս այն ամրացնել, առանց հատուկ դժվարությունների։ Դագաթին՝ մեծ, ողորկ ու բոլորաձև սարահարթում, կային արոտատեղեր և մշակության համար պիտանի հողեր։ Նույն տեղում կար նաև մի բլուր, որը դյուրությամբ կարելի էր դարձնել ներքին ամրոց և դիտակետ։ Լե-

ման ստորոտի բնական նավահանգիստը հուսալիորեն ապահովում էր ելքը դեպի ծով և կապը արտաքին աշխարհի հետ։ Դեպի էյրկատե տանող ճանապարհները, երկուսը՝ Սիցիլիայի խորքն ընկած շրջաններից և մեկը՝ ծովից, գրավված էին պունիկյան զորքերից և դժվարանցանելի էին, այնպես որ Համիլկարի հենակետը գրեթե մատչելի չէր թշնամիներին։ Սակայն, որքանով որ կարելի է դատել այդ մասին, Համիլկարն այդպես էլ չմշակեց կղզում կատարելիք հարձակողական գործողությունների հրատակ պլան։ Համենայն դեպս, նրա հետագա գործողություններում չի նկատվում որևէ պլանայնություն։ Դեռ ավելին. այն տպավորությունն է ստեղծվում, որ Համիլկարը կաշկանդված էր էյրկատեի իր հենակետով։

Հենվելով դրա վրա, Համիլկարը մշտապես հարձակումներ էր կատարում Իտալիայի մարզերի վրա։ Երբ հռոմայեցիները Պանորմոսից ոչ հեռու ստեղծեցին իրենց հենակետը, կամենալով կաշկանդել հակառակորդին, նա երեք տարվա ընթացքում նրանց դեմ ամենօրյա հյուծիչ պատերազմ մղեց։ Պոլիբիոսը, հրաժարվելով այդ երեք տարիների իրադարձությունների մանրամասն ու հետևողական նկարագրությունից, պատերազմողներին նմանեցրել է միմյանց դեմ կռվող բոնցքամարտիկների, որոնց միմյանց հասցրած հարվածներին կողմնակի դիտողի համար, դժվար է հետևելը։ Պոլիբիոսը սահմանափակվել է ընդհանուր գնահատականով. ռազմական բոլոր հնարիմացությունները, խորամանկությունները և հնարները փորձվեցին, իսկ վճռական ճակատամարտ, միևնույն է, տեղի չունեցավ։ Հավասարակշռությունը խախտվեց միայն այն ժամանակ, երբ պունիկացիներին հաջողվեց գրավել Էրիքս քաղաքը և պաշարել հռոմեական ճամբարը, որը գտնվում էր նույնանուն լեռան գագաթին։ Սակայն այստեղ նույնպես Համիլկարը չհասավ վճռական արդյունքների։ Պաշարումը ձգձգվեց։ Դրա հետևանքով պունիկյան զորավարը կորցրեց նախաձեռնությունը և չկարողացավ խանգարել թշնամուն՝ դեպքերի ընթացքը փոխելու։

243 թ. հռոմայեցիները վերստին՝ պատերազմի ընթացքում երրորդ անգամ, կառուցեցին նավատորմ, այս անգամ՝ 200 նավից բաղկացած։ Դա կատարվեց այն քաղաքացիների հաշվին, որոնք անհատապես կամ ընկերակիցներով՝ երկու-երեք փայատերերով (կախված իրենց գույքային դրությունից), պարտավորվեցին կառուցել յուրաքանչյուրը մեկական՝ հինգ տախտակամած ունեցող նավ։ Պետությունը պարտավորվեց ծախսերը փոխհատուցել միայն ռազմական գործողությունների հաջող ելքի դեպքում։

Երբ հռոմեական մեծ նավատորմիղը երևաց ծովում, Համիլկար Բարկան կտրված մնաց Կարթագենից։ Պունիկյան իշխանությունները որոշեցին միջոցներ ձեռք առնել այն բանի համար, որպեսզի իրենց զորքերը դուրս բերեն Սիցիլիայից։ Դեպի կղզու հյուսիսային ափերն ուղարկվեց կարթագենական նավատորմը, սակայն արշավանքն անհաջող դուրս եկավ։ Էգատեյան կղզիների մոտ տեղի ունեցած ճակատամարտում կարթագենյան նավախումբը ջախջախվեց։ Այժմ ուրիշ ելք չտեսնելով, կարթագենյան իշխանությունները Համիլկար Բարկային լիազորեցին հաշտություն կնքել։ Եվ իրականում, այնպիսի պայմաններում, երբ պետության միջոցներն սպառվել էին (պունիկացիներն ստիպված եղան, թեև ապարդյուն, Եգիպտոսում փոխառություն խնդրել), Կարթագենն արդեն ոչ մի հույս չէր կարող ունենալ իր ծովային հզորությունը վերականգնելու համար։ Համիլկարը հանկարծակի կանգնելով իր բոլոր մտահղացումների խորտակման առջև, պետք է սրտապնդվեր ու հնազանդվեր հանգամանքներին (հմմտ. Կորն. Նեպ., Համ., 1, 3, Պոլիբիոս, 1, 62, 3—6)։

Պատերազմը վերջացնելու վերաբերյալ Կարթագենի առաջարկը հռոմայեցիների համար ևս կատարվեց ավելի քան ճիշտ ժամանակին. Հռոմի գանձարանը դատարկ էր։ Այդ պատճառով կոնսուլ Գ. Լուտակիոս Կատուլոսը, որը գլխավորում էր հռոմեական լեգեոնները Սիցիլիայում, «ուրախությամբ», ինչպես գրում է Պոլիբիոսը (1, 62, 7), ընդունեց Համիլկար Բարկայից ստացված առաջարկությունը։ Այնուամենայնիվ բանակցությունների ժամանակ Համիլկարը պետք է գործի դներ իր բոլոր դիվանագիտական կարողությունները, որպեսզի հասներ ընդունելի պայմանների. նրա հետ բանակցող կողմը, մեծանկես օգտագործելով էգատեյան հաղթանակի առավելությունները և ծովում ունեցած տիրապետությունը, ջանում էր պայմանագրի մեջ մտցնել այնպիսի հոդվածներ, որոնց կատարումը պետք է ստորացներ պունիկյան զորականներին և դրանով իսկ դժվարացներ վարձկան զինվորների հավաքագրումը, լրջորեն թուլացներ Կարթագենի պաշտպանունակությունը։ Գ. Լուտակիոս Կատուլոսը պահանջեց, որպեսզի Համիլկարի զինվորները Սիցիլիայից հեռանան զինաթափված (Կորն. Նեպ., Համ., 1, 5, Դիոդորոս, 24, 13)։ Սկզբնաղբյուրները, որոնք ճիշտ է, շատ ուշ շրջանի են, սակայն վերարտադրում են Տիտոս Լիվիոսի ավանդությունը. դրանցում նույնիսկ տեղեկություններ կան, որ իբր հռոմեական հրամանատարությունը պնդում էր, որպեսզի պունիկյան զորքերն անցնեին լծի տակով (Զոնարաս, 8, 17)։ Բանակցությունների ընթացքի մասին մենք չգիտենք, սակայն դրանց հետևանքներից երևում է, որ Բարկան կոնսուլին ստիպել է նահանջել. պունիկյան զորքերը հնարավորություն ստացան հեռանալ կղզուց, երբ վճարեցին փրկագինը՝ յուրաքանչյուր անձին 18 դինար։ Բայց

և այնպես այդ համեմատարար ոչ մեծ դիվանագիտական հաղթանակը չէր կարող լիովին փոխհատուցել պատերազմի հետևանքները, որոնք հույժ անբարենպաստ էին կարթագենցիների համար, թեև ինքնըստինքյան հասկանալի է, Համիլկարն ամեն ինչ արեց, որպեսզի հաշտության պայմանները չչլատեին Կարթագենի մարտունակությունը և չխանգարեին նրան ռևանշի պատրաստվելու համար։

Պոլիբիոսն (1, 62, 8—9) այսպես է շարադրում Գ. Լուտակիոս Կատուլոսի և Համիլկար Բարկայի միջև կնքված պայմանագիրը. «Կարթագենցիների և հռոմայեցիների միջև բարեկամությունը պետք է լինի հետևյալ պայմաններով, եթե դա ձեռնտու կլինի հռոմեական ժողովրդին. կարթագենցիները մաքրելու են ամբողջ Սիցիլիան և չեն պատերազմելու Հիերոնի դեմ և զենք չեն բարձրացնելու ո՛չ սիրակուզացիների և ո՛չ էլ նրանց դաշնակիցների դեմ։ Կարթագենցիները առանց փրկագնի. հռոմայեցիներին հանձնելու են բոլոր գերիներին։ Կարթագենցիները քսան տարվա ընթացքում հռոմայեցիներին վճարելու են 2200 եվբեական տաղանդ արծաթ»։ Համաձայնություն ձեռք բերվեց նաև պունիկյան ռազմագերիների ճակատագրի շուրջը (Եվտրոպիոս, 2, 27)։ Կարթագենցիները թույլտվություն խնդրեցին փրկագնելու նրանց, բայց հանդիպեցին ոչ վաղուցվա հակառակորդի բացառիկ սիրալիրությանը. հռոմեական իշխանությունները ընծաներով վերադարձրեցին նրանց, ովքեր պահվում էին պետական բանտերում։ Մասնավոր անձանց մոտ եղած գերյալ կարթագենցիները կարող էին փրկագնվել. ընդ որում դրանում գործուն մասնակցություն ունեցավ հռոմեական գանձարանը։ Հավանարար արդեն բանակցությունների տվյալ փուլում հաստատվեց այն համաձայնությունը, որը Կարթագենին արգելում էր իր նավերն ուղարկել Հռոմի և նրա դաշնակիցների հսկողության տակ եղած շրջանները (ասենք նա այդպիսի հնարավորություն չուներ) և Իտալիայի տարածքում հավաքագրել վարձկանների։ Փոքր-ինչ ավելի ուշ, այն մտավ պայմանագրի վերջնական բնագրի մեջ (Զոնարաս, 8, 17, Ապպ., Սից., 2)։

Բոլոր այս պայմանները ապշեցնում են Հռոմի համար բացարձակապես անսպասելի մեղմությամբ։ Պարտված Կարթագենը, լիովին հրաժարվելով Սիցիլիայից, որը երբեք էլ ամբողջապես նրա գերիշխանության տակ չէր եղել, պահպանեց ոչ միայն անկախությունը և բոլոր մյուս տիրույթները Արևմտյան Միջերկրականում, այլև իր, որպես մեծ տերության կացությունը, այսինքն՝ մնաց որպես ահեղ հակառակորդ։ Զարմանալի չէ, որ Հռոմում նման պայմանագիրը հարուցեց դժգոհություն, և ժողովրդական ժողովը հրաժարվեց այն հաստատելուց։ Սիցիլիա ուղարկվեց տաս հոգուց բաղկացած հատուկ հանձնախումբ, որպեսզի տեղում

[illegible] հաշտության պայմանները։ Սակայն նրա գործունեության արդյունքը ծիծաղելու աստիճանի չնչին էր։ Ռազմատուգանքը հասավ 3200 տաղանդի՝ տաս տարվա ընթացքում վճարելու պարտավորությամբ։ [illegible] այդ, պայմանագրում արձանագրվեց կարթագենցիների պարտավորությունը՝ հեռանալ Իտալիայի ու Սիցիլիայի միջև ընկած կղզիներից (Պոլիբիոս, 1, 63, 1—3)։ Սակայն վերջին կետը, ինչպես հիմնավոր կերպով կարծում է Թ. Մոմզենը[33], իհարկե, սոսկ ձևակերպեց և իրավաբանորեն ամրապնդեց այն դրությունը, որը ձևավորվել էր ռազմական գործողությունների դադարեցումից հետո։ Իրոք, դժվար է պատկերացնել, որ կորցնելով Սիցիլիան, Կարթագենը կարող էր որևէ տիրույթ պահպանել [illegible] ծովի ավազանում։ 10-ի հանձնաժողովը որոշում ընդունեց, [illegible] համոզվելով այն բանում, որ ոչ թե Գ. Լուտակիոս Կատուլոսի զիջողամտությունը, այլ իրական հանգամանքներն են հռոմայեցիներին ստիպում չափավորելու իրենց ախորժակները։ Մենք հակիլ թե [illegible]ենք, ենթադրելով, որ Համիլկար Բարկան հռոմայեցիներին համոզեց չառաջադրել իրենց այն պահանջները, որոնք կարող էին հանգեցնել հաշտության բանակցությունների խափանմանը։ Իսկ Ռեգուլոսի աշշավախմբի և հենց իր՝ կարթագենյան գերության մեջ գտնված Ռեգուլոսի ճակատագիրն, իհարկե, հույժ անմոռանալի էր։

241 թ. հաշտությունն ստորագրվեց։ Պատերազմն ավարտվեց։ Համիլկար Բարկան իրեն ենթակա զորքերը Հյուսիսային Սիցիլիայից տեղափոխեց Լիլիբեոն, որից հետո հրաժարվեց իր լիազորություններից, և, [illegible] երեսուներեքին, մեկնեց հայրենիք (Պոլիբիոս, 1, 66, 1)։ Հրամանատարի հրաժարականը, որի իսկական շարժառիթները մենք չգիտենք, իրենով նշանավորեց իշխանության անցումը Համիլկարին թշնամի արիստոկրատական խմբավորման ձեռքը։ Վերջինիս խոշորագույն գործիչներից մեկն էր Հաննոնը, որը քիչ հետո, այսպես կոչված Լիբիական պատերազմի ժամանակ, կարթագենցիների նկատմամբ այնքան բացասական դեր կատարեց։

Այդ ժամանակ Հաննիբալը մոտավորապես հինգ տարեկան էր։ Նա լսում էր հոր սխրագործությունների մասին պատմությունների մթնոլորտում, սխրագործություններ, որոնց պատուղները Համիլկարից խլեց գեշատիպ թշնամին, կարթագենյան մեծատոհմիկների՝ նրա քաղաքական հակառակորդների ապաշնորհության պատճառով։ Համիլկարը բուռն ոգևորությամբ ցանկանում էր կործանել ու ոչնչացնել հռոմայեցիներին։ Նույն այդ զգացմունքները նա ներշնչեց նաև իր որդիներին՝ Հաննիբալին, Հասդրուբալին և Մագոնին։ Հռոմում բերնից բերան էին անցնում նրա խոսքերը, որոնք Տիտոս Լիվիոսից բխող ավանդությամբ պահպանվեցին

մինչև մեր օրերը (Զոնարաս, 8, 21). իր որդիներին նա սնուցանում էր որպես այուծների, գրգռելով նրանց հռոմայեցիների վրա։

Ինչպես տղայի տված նշանավոր երդումը, պետք է կարծել, որ ավարտեց նրա դաստիարակության մի որոշակի փուլը։ Հայրը ո՛չ պատահական և ո՛չ էլ սոսկ հանկարծակի հոգեկան մղման ենթարկվելով էր, որ երեխային ստիպեց գալու տաճար և մասնակցելու զոհաբերություններին. նրա որդին պարտավոր էր ժառանգել նաև նրա ատելությունը։ Սակայն մինչև այդ պահը դեռևս պետք է անցներ ամբողջ չորս տարի, իսկ Կարթագենին վերապահված էր դիմանալ մահացու ընդհարմանը, հանուն իր իսկ գոյատևման, և Համիլկարին՝ գլխավորելու այդ պայքարը։

Սովորականի պես ամեն ինչ սկսվեց չնչին, անհաշվենկատ ժլատությունից։ Կարթագենական կառավարության առջև բավականին բարդ խնդիր էր ծառացած՝ իր վարձկան զինվորներին (հավանաբար մոտավորապես 20 հազար) Լիլիբեոնից տեղափոխել Աֆրիկա (Պոլիբիոս, 1, 67, 13, Կորն. Նեպ., Համ., 2, 2), նրանց տալ ոռճիկ և ընծաներ, իսկ այնուհետև, խոստումներից և բռնություններից խույս տալու նպատակով, ուղարկել հայրենիք։ Լիլիբեոնի պարետ Գիսկոնը խելամտորեն որոշեց զինվորներին Կարթագեն ուղարկել համեմատաբար ոչ մեծ խմբերով, որոշակի ժամանակահատվածների ընթացքում, կանխելով քաղաքում լավ սպառազինված, կարգապահության, կարգի մասին բոլոր տեսակի պատկերացումներն արդեն կորցրած հսկայական քանակությամբ մարդկանց կուտակումը։ Մինչդեռ Կարթագենի կառավարությունը նպատակադրվել էր վարձկաններին ստիպել հրաժարվելու իրենց հասանելիք ոռճկաթաժնից։ Միամտաբար հույս ունենալով, որ ավելի արագ կհասնեն իրենց նպատակին, եթե բոլոր զինվորները միատեղ հավաքվեն, պունիկյան իշխանությունները նրանց բաց չթողեցին Կարթագենից։ Դրա հետևանքով քաղաքում շատ շուտ խախտվեց կանոնավոր կյանքը։ Կողոպուտներն ու սպանությունները տեղի էին ունենում ոչ միայն գիշերը, այլև օրը ցերեկով։ Ոչ ոք իրեն ապահով չէր զգում։ Իշխանությունները ի վիճակի չեղան դրության տերը դառնալու և, կամենալով խուսափել ավելի վատթարից, այժմ որոշեցին վարձկաններին ուղարկել հարավ, Սիկկա քաղաքը, որն ընկած էր Կարթագենի աֆրիկյան տիրույթների բուն կենտրոնում։

Այս գործողության իմաստը հասկանալի է։ Այստեղ կարելի էր ոչ միայն բանակցություններ վարել, այլև անհրաժեշտության դեպքում մեկուսացնել, իսկ այնուհետև նաև ճնշել զինվորական բոլոր տեսակի խոստումները, եթե... եթե կարթագենցիներն իրենց տրամադրության տակ ունենային բավարար քանակությամբ զինվորական պահեստի զորամասեր, և եթե վարձկաններին չպաշտպաներ տեղական գյուղացիությունը։ Սակայն հանգամանքները բոլորովին այլ կերպ դասավորվեցին, և վարձկաններին ուղարկելով հարավ, պունիկացիներն իրենց ձեռքով խռովության կենտրոն ստեղծեցին։ Այս բոլորը երևան եկավ հետագայում, իսկ առայժմ զինվորները մեկնեցին Սիկկա, հույս ունենալով փոխարեն ետ վերադառնալ և վերջապես ստանալ իրենց ոռճիկը, չէ՞ որ մեկնելուց առաջ, համենայն դեպս, նրանց տվեցին ապրուստի համար ոչ մեծ գումար, այնպես որ նրանց հույսերը, թվում էր, թե արդարացան։ Իհարկե, որոշակի անհանգստություն պետք է ներշնչեր այն հանգամանքը, որ կարթագենցիներն ստիպեցին հետները վերցնել իրենց ողջ ունեցվածքը, սակայն զինվորները դրա վրա ուշադրություն չդարձրեցին։

Չնայած վարձկանների նկատմամբ իր ունեցած բացասական վերաբերմունքին, Պոլիբիոսը (1, 66, 10) համեմատաբար հանգիստ ձևով նկարագրում է նրանց ճամբարը Սիկկայում. վարձկանները բավականություն են ստանում հանգստի, անդորրի մեջ, որին նրանք վաղուց էին ձգտում (ճիշտ է, պատմագիրը չի մոռանում ավելացնել, որ հատկապես պարապությունն է հանգեցնում զինվորական խռովությունների)։ Իր ամբողջ ցանկությամբ հանդերձ, նա չի կարող այստեղ գտնել անկարգություն և անիշխանություն։ Ըստ երևույթին, վարձկանները սպասում էին և այդպիսով մոտավոր հաշվումներ էին անում, միմյանց հետ քննարկում, թե ինչքան են իրենք ստանալու։ Ամեն անդամ պարզվում էր, որ նրանց ավելի շատ է հասնում, քան կարծում էին նախկինում, և որ Կարթագենի զորավարները, հատկապես Համիլկար Բարկան, նրանց խոստացել են բացի ոռճիկից հսկայական չափով դրամ (Պոլիբիոս, 1, 66, 11—12, Ապպ., Իսպ., 4)։

Այդ մարդկանց մոտ ժամանեց վերջապես նաև Հաննոնը, որն այդ ժամանակ Լիբիայի ստրատեգոսը՝ կառավարիչն էր։ Սակայն նա բոլորովին էլ այնպիսի ճառեր չասաց, որպիսիք սպասում էին նրանից։ Ի մեծ հիասթափություն իր ունկնդիրների, Հաննոնը երկար ծավալվեց, Կարթագենի դժվարին կացության, գանձվելիք հարկերի ծանրության շուրջը և պնդեց այն բանի վրա, որպեսզի վարձկանները համաձայնվեն հրաժարվել իրենց ոռճիկի մի ինչ-որ մասից։ Բնականաբար, ճամբարում սկսվեցին հուզումներ, զինվորական ժողովներում հնչում էին զայրալից ճառեր, իսկ Հաննոնը իզուր էր փորձում հանգստացնել մարդկանց ծովը։ Նրա դրությունը բարդանում էր նաև այն պատճառով, որ նա ստիպված էր դիմել խիստ զայրացած, դաժան ամբոխներին, այդ բոլոր գալլե-

ին և իբերներին, լիգուրներին ու բալեարներին, լիբիացիներին և կիսահույներին, որոնք հաճախ չէին հասկանում պունիկերեն լեզուն, և որոնց նա դիմում էր նույն այդ զինվորների կամ նրանց հրամանատարների թվից կամավոր-թարգմանիչների միջոցով։ Իսկ թարգմանիչները կա՛մ իրենք ի վիճակի չէին կարդին ըմբռնել, թե նա ինչ է ասում, կա՛մ դիտակցաբար խեղաթյուրում էին նրա խոսքերի իմաստը։ «Ամեն ինչ հագեցված էր,— գրում է Պոլիբիոսը,— անընդունողությամբ, անվստահությամբ, անկարգությամբ»։ Վարձկանները հանգեցին այն մտքին, որ կարթագենցիները իրենց մոտ են ուղարկել հատկապես հենց Հաննոնին (որին ոչ ոք երբևիցե չէր տեսել ռազմի դաշտում), և ոչ թե նրանց, ովքեր իրենց խոստումներով նրանց ստիպել էին հաղթանակի հասնելու և արյուն հեղելու։ Խորամանկ պունիկացիները խաբեություն էին ծրագրել։ Ընդհատելով բանակցությունները, վարձկանները շարժվեցին դեպի Կարթագեն և տեղավորվեցին ճամբարներում, ուղղակի նրա մերձակայքում, լիբիական Թունետե քաղաքից ոչ հեռու։

Միայն այժմ, երբ արդեն ուշ էր, կարթագենյան կառավարիչները հասկացան, թե ինչի հանգեցրին իրենց գործողությունները։ Հնարավորություն չունենալով պաշտպանություն կազմակերպել, նրանք իրենց իսկ ձեռքերով ստեղծեցին խռովության խիստ վտանգավոր օջախ և անմիջական սպառնալիք Կարթագենին։ Որպեսզի վիժեցնեն սկսված ապստամբությունը, նրանք համաձայնեցին այժմ տառացիորեն ամեն ինչի, վարձկանների ճամբարներում կազմակերպեցին սննդամթերքների առատուր, այնպիսի գներով, որոնք նշանակում էին իրենք գնորդները, ընդունեցին զինվորների՝ ռոճիկին վերաբերող բոլոր պահանջները։ Այս ուշացած զիջողականությունը միայն դրդեց վարձկաններին նոր պահանջների. նրանք ցանկացան, որպեսզի կարթագենցիները հատուցեն պատերազմի ժամանակ սպանված իրենց ձիերի արժեքը։ Բայց սա ևս նրանց քիչ թվաց։ Հացաբաժնի դիմաց, որը քանի դեռ պատերազմ էր ընթանում, զինվորները լրիվ չէին ստանում, պունիկացիները պարտավոր էին վճարել պատերազմական ժամանակի ամենաբարձր գներով։ Սակայն արդեն նույնիսկ այդ ցանկության բավարարումը չէր կարող խաղաղություն հաստատել։ Պոլիբիոսն, ըստ երևույթին, ճիշտ է, երբ գրում է, որ վարձկանների մեջ կային մարդիկ, որոնք ընդհանրապես դեմ էին որևէ համաձայնության։ Լավ հիշելով իրենց ռազմական հաջող գործողությունները Սիցիլիայում, նրանք կարող էին հույս դնել Կարթագենի նկատմամբ դյուրին հաղթանակի վրա։ Վերջինս չուներ բանակ, որն ի զորու լիներ պաշտպանելու քաղաքը։ Կարելի է կարծել, որ նրանց աչքի առջև էր նաև մամերտինների հրապուրիչ օրինակը։ Կարթագենյան խորհրդի պատվի-

[illegible]ները մեծ դժվարությամբ համոզեցին գրգռված վարձկաններին՝ վերջնական լուծումը վստահելու մի որևէ զորավարի, որը գլխավորել էր հենց նոր ավարտված գործողությունները Սիցիլիայում։ Բնականաբար, խնդրանքով հայտնվեց Համիլկար Բարկայի անունը, սակայն այդ թեկնածությունը չանցավ։ Վարձկանները գտնում էին, որ նա դավաճանել է իրենց, կամավորապես հրաժարվելով հրամանատարությունից և հեռացավում, որպես դեսպան, հրաժարվելով Սիկկա ներկայանալուց։ Վերջինիս, ըստ երևույթին, երկար վեճերից և փոխադարձ սպառնալիքներից հետո, կողմերը կանգ առան Գիսկոնի վրա, որը պունիկյան զորքերը դուրս էր բերել Լիլիբեոնից։

Գիսկոնը ծովային ճանապարհով ժամանեց Թունետե և սկսեց բանակել գրամը։ Դիմելով հրամանատարներին ու շարքային զինվորներին, նա նորից ու նորից նրանց կոչ արեց չապստամբել, պահպանել հավատարմությունը Կարթագենի նկատմամբ, որը վճարելու է նրանց ռոճիկը։ Սակայն հատկապես այժմ, երբ թվում էր, թե կոնֆլիկտը մոտ է լուծման, կարթագենյան կառավարական պրոպագանդայի նկատմամբ եղած ընդդիմակայությունը դարձավ բացահայտ ու առավել դաժան։ Այն կազմակերպում էր կամպանիացի Սպենդիոսը, փախստական ստրուկ, որն աչքի էր ընկնում ֆիզիկական մեծ ուժով ու արտասովոր քաջությամբ։ Պոլիբիոսի ասելով, նա երկյուղում էր, որ կհանձնվի իր տիրոջը և հռոմեական օրենքների համաձայն, կենթարկվի մահապատժի։ Նրան համագործակցում էր նաև լիբիացի Մաթոսը, որը հենց սկզբից, ինչպես ասում է Պոլիբիոսը, Կարթագենի հետ համաձայնության գալու առավել եռանդուն հակառակորդներից մեկն էր։

Վարձկանների մեջ հատկապես այդ մարդկանց առաջքաշումը հազիվ թե կարելի է բացատրել հանգամանքների պատահական զուգադիպությամբ։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը արտահայտում էին վարձկանների այն խմբերի տրամադրությունները, որոնք շահագրգռված էին ոչ միայն այն բանում, որ ռոճիկ ստանան և վերադառնան իրենց օջախները։ Փախստական ստրուկների համար, որոնք բավական շատ էին (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 1,67,7) խռովության «բարեհաջող» (կարթագենցիների և Իբերիայից կամ Լիգուրիայից ծագող ազատ վարձկանների տեսակետով) վախճանը լավագույն դեպքում նշանակում էր նոր թափառումներ, վատթարագույն դեպքում՝ վերադարձ դեպի ստրկություն։ Ինչ վերաբերում է լիբիացիներին, ապա նրանց համար տուն վերադառնալը նշանակում էր վերստին ընկնել կարթագենյան հարկահանության ծանր մամլակի տակ։ Այդ պատճառով, երբ Մաթոսը, որն, անշուշտ, վաղօրոք պայմանավորվել էր Սպենդիոսի հետ, դիմեց լիբիացիներին, դրանով ոչ

միայն խռովության «դրդեց» նրանց, այլև արտահայտեց նրանց իսկական տրամադրությունները։ Նա ասաց. օտարերկրյա բոլոր վարձկանները կհեռանան, իսկ իրենք՝ լիբիացիները մնալու են։ Եվ այն ժամանակ կարթագենցիները հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ։ Այս խոսքերը պարարտ հող գտան։ Լիբիացիները դեռևս լավ էին հիշում իրենց երկրում Ռեգուլոսի ջախջախմամբ կարթագենցիների սարքած արյան բաղնիքը։ Եվ բացի այդ, պարզվեց, որ Գիսկոնը այնուամենայնիվ չի վճարում հացի և ձիերի դիմաց վարձատրությունը, իսկ լիբիացիներն ընդհանրապես ոչինչ չստացան։ Վարձկան զինվորների չբավարարված ընչաքաղցությունը, փախստական ստրուկների՝ իրենց ազատությունը պահպանելու և լիբիացիների՝ կարթագենյան գերությունից ազատվելու ձգտումները՝ բոլոր այդ գործոնները հանգեցրին ճամբարում խռովության հետագա աճին։ Զինվորական ժողովներում այժմ լսում էին միայն Սպենդիոսին ու Մաթոսին և ապստամբության դեմ նախազգուշացնողներին թույլ չէին տալիս խոսելու։

Գիսկոնի բոլոր փորձերը՝ ի դերև հանելու Սպենդիոսի ու Մաթոսի ազդեցությունը հաջողություն չունեցան։ Եվ նա չդիմացավ։ Երբ լիբիացիները մեկ անգամ ևս պահանջեցին, որպեսզի նա ներկայանա իրենց մոտ և վճարի դրամ, Գիսկոնը բացականչեց. «Լիբիացիները թող ոռճիկը պահանջեն իրենց պարագլուխ Մաթոսից»։ Այս խոսքերը ամբոխին հասցրեցին կատաղության. նետվելով կարթագենցիների վրա, լիբիացիները ձերբակալեցին Գիսկոնին և նրա ուղեկիցներին, կողոպտեցին դրամները։ Այժմ Կարթագենի ու նրա վարձկանների միջև վեճի որևէ խաղաղ կարգավորումն անհնարին դարձավ։

Թևակոխելով զինված ընդհարման փուլը, վարձկանների սկսած ապստամբությունը հետզհետե սկսեց կորցնել զինվորական խռովության գծերը, վերածվելով շահագործողների դեմ շահագործվողների հզոր շարժման։ Ուշադրության արժանի են Ապպիանոսի խոսքերը (Ապպ., Սից., 2), որոնց համաձայն ապստամբների ճամբար են փախել շատ ստրուկներ, հավանաբար Կարթագենից։ Սակայն ամենից էականն այլ էր. Մաթոսն ու նրա զինակիցները դիմեցին լիբիական քաղաքներին, կոչ անելով պայքարել հանուն իրենց ազատության և օգնել ապստամբներին։ Նրանց ձայնը լսելի դարձավ։ Ամեն կողմից լիբիական ռազմիկների ջոկատները ձգվեցին դեպի Թունետի մերձակայքի ճամբարը. բոլոր կողմերից ուղարկում էին պարեն և այլ մթերքներ։ Խանդավառությունն այն աստիճան մեծ էր, որ մարդիկ հաղթանակի համար զոհաբերում էին իրենց ողջ ունեցվածքը, նույնիսկ կանացի զարդեղենները։ Մաթոսի և Սպենդիոսի ձեռքն ընկավ հսկայական դրամ. նրանք ոչ միայն վճարեցին

[illegible] ընկերների ոռճիկը, այլև զգալի միջոցներ պահեցին ապագայի համար։ Ընդամենը բանակի մեջ մտավ, Պոլիբիոսի ասելով (1, 73, 3), մոտավորապես 70 հազար լիբիացի։ Վարձկանների զինվորական խռովությունը վերաճեց ժողովրդաազատագրական պատերազմի՝ Լիբիական պատերազմի, ինչպես այն անվանում են սկզբնաղբյուրները։

Իրենց ուժերը բաժանելով երկու մասի, ապստամբները պաշարեցին Կարթագենի անմիջական մերձակայքում գտնվող պունիկյան խոշորագույն քաղաքները՝ Ուտիկեն և Արքայական Հիպոնը (հունական աղբյուրներում՝ Հիպակրիտես), դրանով իսկ Կարթագենն անջատելով Աֆրիկյան մայրցամաքից։ Քաղաքում պատերազմի տենդագին նախապատրաստություն էր ընթանում. փութապես հավաքում էին նոր վարձկան զորքեր, մոբիլիզացնում քաղաքացիներին, վարժեցնում հեծյալներին, վերասարքավորում ռազմանավերը։ Պունիկյան բանակի հրամանատար դարձավ Հաննոնը, նույն ինքը, որն ապստամբության հենց սկզբում այնպես անհաջող բանակցություններ էր վարում խռովարար զինվորների հետ։

Հաննոնը զորքով (ունենալով ի միջի այլոց ավելի քան 100 մարտական փիղ) շարժվեց դեպի Ուտիկե և, այնտեղից ստանալով բարաններ և ուրիշ ծանր սպառազինություն, դրոհի դիմեց ապստամբների ճամբարի վրա։ Փղերը ճեղքեցին պաշտպանության գիծը, և ապստամբները փախուստի դիմեցին, ամրանալով մոտակա բլրի վրա։ Եվ այդ պահին Հաննոնը, հոգ չտանելով հաղթանակի ամրապնդման, ճամբարի ու պաշտպանության կազմակերպման և հաղթողների մեջ տարրական կարգ ու կանոն հաստատելու մասին, քաշվեց Ուտիկե՝ հանգստանալու, իսկ նրա զինվորները ցրվեցին իրենց տեղերը։ Ապստամբներն օգտվելով այդպիսի անհոգությունից, հարձակվեցին նրանց վրա, սպանեցին շատերին, ավելի շատերին փախուստի մատնեցին և խլեցին Հաննոնի ամբողջ գումակը, Ուտիկեից ստացած սպառազինության հետ։ Մի քանի օր հետո, Գորզայի մոտակայքում Հաննոնը վերստին բաց թողեց հակառակորդին ջախջախելու հնարավորությունը։ Պոլիբիոսը նրա վարքագիծը բացատրում է այն բանով, որ նա սովոր էր պատերազմելու լիբիացիների դեմ, որոնք պարտություն կրելով, փախուստի էին դիմում և հրաժարվում կռիվը շարունակելուց։ Մինչդեռ Հաննոնը գործ էր ունեցել փորձված ռազմիկների հետ, որոնք ընտելացել էին նահանջից հետո դիմել հակագրոհի և հաղթանակ կորզել թշնամու ձեռքից։

Այս իրավիճակում պունիկյան զորքերի նոր միավորումների հրամանատարությունը հանձնարարվեց Համիլկար Բարկային։ Նրա տրամադրության տակ կային 70 մարտական փղեր և մոտավորապես 10 հա-

զար զինվոր՝ նոր վարձկաններ, որոնք փախել էին ապստամբների ճամբարից, և քաղաքացիական աշխարհազորի հեծյալներ ու հետևակազորայիններ։

Ռազմական գործողության սկզբում իրադրությունը հետևյալ կերպ էր դասավորվել։ Կարթագենից դեպի Լիբիայի խորքերը տանող և դժվարանցանելի բլուրների վրայով (դրանք մայրցամաքից անջատում են թերակղզին, որի վրա տեղավորված էր քաղաքը) ձգվող բոլոր երեք ճանապարհները կտրել էին ապստամբների ջոկատները, որոնց գլխավորում էր Մաթոսը։ Նրա մարդիկ գրավեցին նաև Բագրադա գետի վրայի կամուրջը, կառուցելով այնտեղ ոչ մեծ ամրություն։ Այս օղակից դուրս պրծնելը և մանավանդ աննկատ մնալը, ոչ միայն խոշոր զորամիավորման, այլև անհատի համար անհնար էր թվում։ Սակայն Համիլկարն ընտրեց այլ ճանապարհ. ոչ ոքի կողմից չպաշտպանվող Բագրադայի գետաբերանը։ Ժամանակ առ ժամանակ քամին այնտեղ ավազ էր բերում, և այն ժամանակ հնարավոր էր լինում անցնել ծանծաղուտով։ Սպասելով բարենպաստ պահի, խոր գիշերով Համիլկարն իր զորքերը հանեց քաղաքից, իսկ այգաբացին, ոչ միայն հակառակորդի, այլև իր համաքաղաքացիների համար անսպասելիորեն հայտնվեց մյուս ափին։ Այժմ նա ուղղվեց դեպի Բագրադայի վրայի կամուրջը, կամենալով գրավել ռազմավարական այդ կարևոր կետը։

Սպենդիոսի ու Մաթոսի պատասխան գործողությունները լավ էին մտածված, թեև նրանց այդպես էլ չհաջողվեց շահել այդ կարևոր մարտը։ Ապստամբների մի խումբը (10 հազարից ոչ պակաս) կամուրջից շարժվեց Համիլկարին ընդառաջ, այն դեպքում, երբ մյուսը (ավելի քան 15 հազար) հարձակումն սկսեց Ուտիկեից։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը գնում էին միմյանց միանալու, կամենալով շրջապատել Համիլկարի բանակը և ձեռնամարտում ջախջախել նրան։ Համիլկարը հանկարծակի այնպես կտրուկորեն փոխեց շարժման ուղղությունը, որ նրա փղերն ու հեծյալները հայտնվեցին թշնամու թիկունքում։ Դրանից հետո տեղի ունեցած անկանոն մարտում սպանվեցին մոտավորապես 6000 լիբիացի և վարձկան , իսկ մոտավորապես 2000-ը գերի ընկավ։ Մնացածները փախուստի դիմեցին. ոմանք՝ Ուտիկեի կողմը, ուրիշները՝ կամուրջի մոտակայքի ամրությունը, իսկ այնտեղից՝ Թունետ։ Գրավելով կամուրջն ու ամրությունը, Համիլկարը իր գերիշխանությունը հաստատեց Կարթագենին անմիջականորեն հարող ամբողջ տարածքում։

Ծանր պարտությունը չվհատեցրեց ապստամբներին։ Մաթոսը, իր ուշադրությունը կենտրոնացնելով Արքայական Հիպպոնի պաշարման վրա, որոշեց խուսափել վճռական ճակատամարտից։ Նա Սպենդիոսին և

[illegible] համագործակցող Ավտարիտոսին, որը գալլական ծագում ունեցող վարձկանների պարագլուխն էր, առաջարկեց շարժվել Համիլկարին [illegible] և միաժամանակ պահվել լեռնային վայրերում, որպեսզի անհնարին դառնա փղերի ու հեծելազորի օգտագործումը։ Նրանք պետք է [illegible] գրոհներով ուժասպառ անեին հակառակորդին։ Բացի այդ, [illegible] վերստին դիմեց լիբիացիներին և նումիդիական ցեղերին՝ օգնության խնդրանքով և ստացավ այն։ Երբ Համիլկարը տեղավորվեց մի [illegible] վայրում, նրա մոտակայքում դիմացից հայտնվեց լիբիացիների [illegible], թիկունքում դիրքեր բռնեցին նումիդիացիները, իսկ թևերից [illegible] Սպենդիոսը։ Համիլկարն ընկավ որոգայթի մեջ։

Այն պահին, երբ կարթագենյան զորքի կործանումն անխուսափելի [illegible] թվում, պարզվեց, որ Մաթոսը լուրջ սխալ է թույլ տվել, օգնություն ընդունելով նումիդիական ավազակներից, որը բոլորովին էլ շահագրգռված [illegible] Կարթագենի պարտությամբ։ Նումիդիական մեծատոհմիկներից մեկը՝ Նարավասը, անցավ Համիլկարի կողմը և մոտավորապես 2000 հոգուց բաղկացած ջոկատը բերեց նրա ճամբար։ Նարավասի սպասումները [illegible] արդարացան. կարթագենյան զորապետը խոստացավ իր դստերը [illegible]ության տալ նրան։ Դավաճանությունը Համիլկարին թույլ տվեց հաղթել նաև այս անգամ։ Ավտարիտոսն ու Սպենդիոսը փախուստի դիմեցին. նրանց զորականներից մոտավորապես 10 հազարը զոհվեց, և գրեթե [illegible] հազարը գերի ընկավ։

Հակառակ սպասումներին, Համիլկարը ռազմագերիների հետ վերաբերվեց վերին աստիճանի խաղաղասիրությամբ։ Մահապատիժների ու հաշվեհարդարների փոխարեն նա ցանկացողներին թույլ տվեց վերստին մտնել կարթագենական ծառայության մեջ, իսկ մյուսներին թույլ տվեց գնալու ով որտեղ կուզենար։ Որպեսզի առ ոչինչ դարձնեն Համիլկարի այդ քաղաքականության ներգործությունը, Մաթոսը, Սպենդիոսը և Ավտարիտոսը կազմակերպեցին ապստամբների ձեռքում գտնվող Գիսկոնի և նրա ընկերակիցների տանջալից մահապատիժը և, հակառակ իր ժամանակի սովորություններին, հրաժարվեցին նրանց մարմինները հանձնել հուղարկավորության համար։ Դեռ ավելին. կարթագենյան իշխանությունների պատվիրակներին նրանք հայտարարեցին, որ հետագայում ապստամբների մոտ գերի ընկած բոլոր պունիկացիները մահվան են ենթարկվելու։ Այսպիսով, խռովարարներին կաշկանդելով համապարտ երաշխավորությամբ, Մաթոսը, Սպենդիոսը և Ավտարիտոսը հույս ունեին ստիպել իրենց զինվորներին, ինչ կերպ էլ որ լիներ, հասնելու հաղթանակի, հրաժարվելով կարթագենցիների հետ հաշտվելու բոլոր տեսակի հույսերից։

Կանգնելով ոչնչացնող պատերազմի սպառնալիքի առաջ, Համիլկարն ու Հաննոնը խորհրդի պահանջով միավորեցին իրենց բանակները, փոխադարձ թշնամանքը «մոռանալով» մինչև լավագույն ժամանակները։ Սակայն պունիկյան զորապետները չկարողացան միմյանց հետ պայմանավորվել։ Նրանց մշտական ընդհարումները ջլատեցին բանակը։ Վերջի-վերջո Կարթագենի կառավարությունը ստիպված եղավ նրանցից մեկին, զինվորների ընտրությամբ՝ առաջարկելու թողնել զորքը։ Նախապատվությունը տրվեց Համիլկարին. Հաննոնը հեռացավ գործերից։ Այս գործողությամբ, անկախ նրանից, թե որքանով էր այն նպատակահարմար, կառավարությունն ստեղծեց իր համար վտանգավոր նախադեպ. հետագայում մենք կտեսնենք, որ բանակը Հռոմի դեմ նոր պատերազմի նախօրյակին հրաժարում էր իր հրամանատարներին, ավելի ուշ իշխանության օրինական մարմիններին ստիպելով հաստատել իր որոշումները։ Հավանաբար հատկապես այժմ Համիլկարը զգում էր իրեն ոչ այնքան կարթագենական մագիստրատ, որքան զինվորական առաջնորդ։ Հատկապես այժմ նա սովորեց հույսը դնել բացառապես (կամ գրեթե բացառապես) իր զինվորների վրա, թեև չէր հրաժարվում նաև դեմոկրատական շրջանների պաշտպանությունից։

Համենայն դեպս, Համիլկարը մնաց միայնակ։ Նա վճռեց դաժանությանը պատասխանել դաժանությամբ, սպանելով գերիներին և նետելով նրանց վայրի գազանների առաջ՝ հոշոտելու։

Այդ միջոցին, քանի դեռ պատերազմող կողմերը մրցակցում էին արյունոտ հաշվեհարդարներում, Հիպպոնում և Ուտիկեում իշխանության գլուխ անցան Կարթագենին թշնամի ուժեր։ Աֆրիկայի միջերկրածովյան ափի կարևորագույն քաղաքները, որոնք ընկած էին Կարթագենի անմիջական մերձակայքում, փյունիկյան հնագույն գաղութները, հին «դաշնակիցները» հարեցին ապստամբությանը։ Ուտիկեն նույնիսկ դիմեց Հռոմին, խնդրելով ընդունել իրեն հռոմեական միությունների համակարգը։ Եթե Հռոմն օգտվեր այդ առաջարկից, նրա աֆրիկյան պրովինցիան, անկասկած, կարող էր ստեղծվել մոտավորապես հարյուր տարով ավելի վաղ։

Սակայն պունիկացիները կարողացան հաղթահարել ահեղ վտանգը։ Կարթագենից մի զորաջոկատ՝ ոմն Հաննիբալի հրամանատարությամբ, ճեղքեց, հասավ Համիլկար Բարկայի մոտ։ Իրենց ասպատակումներով Համիլկարը, Հաննիբալը և Նարավասը խափանեցին Սպենդիոսի և Մաթոսի ճամբարին պարենի մատակարարումը և ստիպեցին նրանց հեռանալու Կարթագենից։ Այդ պահին Կարթագենին նշանակալից օգնություն ցույց տվեցին Սիրակուզայի տիրան Հիերոնը և Հռոմը։ Վերջինս կազմակերպեց սննդամթերքի մատակարարումը պունիկացիներին։ Նա

[illegible] Ուտիկեի առաջարկը և դրանով իսկ հրաժարվեց հյուսիսաֆրիկյան [illegible] ամրանալու փայլուն հնարավորությունից։ Մեզ հայտնի [illegible] հռոմեական կառավարությունը ինչպիսի շարժառիթներով էր [illegible]՝ այդպիսի բացառիկ արարք կատարելիս։ Առավել հանելուկային է, որ նա պարզապես դեռ իրեն բավական ուժեղ չէր համարում, որպեսզի միջամտեր հյուսիսաֆրիկյան գործերին։

Այն բանից հետո, երբ Կարթագենի նկատմամբ եղած անմիջական սպառնալիքը վերացվեց, ապստամբությունը թևակոխեց նոր փուլ։ Մեծ [illegible] ընդհարումներում ջլատելով թշնամու ուժերը, Համիլկարը հասավ այն բանին, որ ապստամբները բաժանվեցին. նրանց մի մասը Մաթոսի հրամանատարությամբ հաստատվեց Թունետեում, իսկ մյուսը, որին գլխավորում էին Ավտարիտոսն ու Սպենդիոսը (մոտավորապես 40 հազար)՝ Պրիոնե վայրում։ Հենց այնտեղ էլ նրանց պաշարեց Համիլկարը։

Պաշարվածների մեջ համեմատաբար արագ սով սկսվեց։ Բանը հասավ մինչև մարդակերություն։ Մաթոսից օգնություն ստանալու հույսը կորցնելով, Ավտարիտոսն ու Սպենդիոսը որոշեցին բանակցությունների մեջ մտնել Համիլկարի հետ։ Վերջինս այսպիսի պայման առաջարկեց. կարթագենցիներն ապստամբների միջից իրենց հայեցողությամբ պետք է ընտրեն և պատժեն տասը հոգու, իսկ մյուսները հնարավորություն են ստանալու գնալ ուր որ կկամենան, սակայն զինաթափված։ Ի՞նչ էր մնում անելու։ Ավտարիտոսին և Սպենդիոսին այլ ելք չէր մնում. նրանք ընդունեցին Համիլկարի պահանջը։ Պունիկյան զորապետն անմիջապես հայտարարեց, որ ինքն ընտրում է նրանց, ում հետ բանակցություններ է վարում։ Նրա ձեռքն ընկավ պաշարված ապստամբ ճամբարի ամբողջ հրամանատարությունը։ Ապստամբ լիբիացիները, ոչինչ չիմանալով հաշտության պայմանների մասին և միայն տեսնելով, որ իրենց պետերը ձերբակալված են, զենքի դիմեցին, սակայն ոչընչացվեցին։

Այժմ Լիբիայում միակ ապստամբ զորաճամբարը մնում էր Թունետեում։ Համիլկարի, Հաննիբալի և Նարավասի ջոկատները լիբիական քաղաքներին հարկադրեցին իրար ետևից զենքը վար դնել, դադարեցնել դիմադրությունը և ապա Թունետեում պաշարեցին Մաթոսին։ Մի կողմից բանակեց Հաննիբալը, իսկ հակադիր կողմից՝ Համիլկարը։ Մաթոսին և նրա զինվորներին վախեցնելու համար Համիլկարը հրամայեց խաչել Սպենդիոսին և նրա ընկերներին, այն հաշվով, որպեսզի թշնամին կարողանա տեսնել այդ մահապատիժը։ Սակայն Համիլկարը նպատակին չհասավ. Մաթոսը խիզախ գրոհով կործանեց Հաննիբալի կայանը, իրեն՝

Հաննիբալին գերի վերցրեց և ծանր խոշտանգումներից հետո գամեց նույն այն խաչին, որի վրա բոլորովին վերջերս զոհվել էր Սպենդիոսը։ Բարկան նահանջեց Թունեստեից և բանակը Բազրադայի՝ Միջերկրական ծով թափվելու տեղում։

Կարթագենցիների առաջ վերստին ծառացան նախկին խնդիրները. անհրաժեշտ էր ստեղծել լրացուցիչ զորամիավորումներ, նշանակել նոր հրամանատարների, մշակել ռազմական գործողությունների նոր պլաններ։ Կարթագենյան խորհրդի հատուկ պատվիրակություններին մեծ դժվարությամբ հաջողվեց մեկ անգամ ևս հասնել Հաննոնի (որը նորից ստացել էր մեծ զորամիավորումների հրամանատարությունը) և Համիլկար Բարկայի զոնե ժամանակավոր հաշտեցմանը. նրանք անցկացրեցին համատեղ և համաձայնեցված ռազմական գործողություններ։ Մի շարք ընդհարումներից հետո տեղի ունեցած խոշոր ճակատամարտում, որի մանրամասները հայտնի չեն, լիբիացիներն ու վարձկանները ջախջախվեցին, իսկ ինքը՝ Մաթոսը գերի ընկավ։ Ավելի ուշ, կարթագենյան բանակի հաղթարշավի ժամանակ կարթագենցիները քաղաքի փողոցներում գանահարելով սպանեցին նրան։ Հիպոնը և Ուտիկան, որոնք պաշարված էին Հաննոնի ու Համիլկարի կողմից, անձնատուր եղան։

Այսպես վերջացավ Կարթագենյան տերությունը սասանած վարձկան զինվորների, փախստական ստրուկների և լիբիական գյուղացիների ապստամբությունը, որը տևեց ավելի քան երեք տարի (241—239 թթ.)[34]։ Այդ պահին Հաննիբալը՝ Համիլկար Բարկայի որդին, մոտավորապես յոթ տարեկան էր։

Այն բանից հետո, երբ Կարթագենի աֆրիկյան տիրույթներում խաղաղություն տիրեց, Համիլկար Բարկան հնարավորություն ստացավ կենտրոնանալ այն բանի վրա, ինչը նա առավել կարևոր էր համարում՝ Հռոմի դեմ պատերազմի նախապատրաստման, պատերազմը վարելու համար անհրաժեշտ պլացդարմ ստեղծելու վրա։ Երկու տարի նա կորցրեց այն բանի համար, որպեսզի, Աֆրիկայում ամրապնդելով պունիկյան տիրապետության ոլորտը, Արևմտյան Միջերկրականի աֆրիկական ամբողջ ծովափը դարձնի Կարթագենին հպատակ երկրամաս (Կորն. Նեպ., Համ., 2,5)։

Միաժամանակ Համիլկար Բարկան ամրապնդեց իր դրությունը քաղաքի ներսում։ Թեև մեզ են հասել Կարթագենում ապստամբության վերացումից անմիջապես հետո բռնկված քաղաքական ընդհարումների մասին եղած տեղեկությունների լոկ թույլ արձագանքները, դրանք ցույց են տալիս, որ պայքարը, ըստ երևույթին, Հաննոնի ու Համիլկարի՝ վերջին

հաշվով խաղաղ քաղաքականության կողմնակիցների և նրանց միջև, ովքեր ձգտում էին Հռոմի դեմ պատերազմի, հասել էր բացառիկ լարվածության։ Թշնամիները Համիլկար Բարկային դատի տվեցին, որպես հաշվեհարդարի կրած արհավիրքների պատճառի (Ապպ., Իսպ., 4)։ Սակայն Համիլկարը կարողացավ ձեռք բերել ժողովրդական զանգվածների պաշտպանությունը։ Դրան մեծապես նպաստեց նրա դուստրերից մեկի ամուսնությունը դեմոկրատական շարժման առաջնորդ Հասդրուբալի հետ (նույն տեղը, հմմտ. Դիոդորոսի մոտ, 25, 8)։ Դեռ ավելին. Համիլկարը վերստին իր կողմը գրավեց բանակը (Ապպ., Հաննիբ., 2)։ Դրա հետևանքով նրա քաղաքական հակառակորդները թուլացան, իսկ նա ինքը հնարավորություն ստացավ գործել առանց կարթագենյան իշխանությունների ձևական հրամանի (նույն տեղը)[35], ձեռք բերելով այդպիսով կատարելապես բացառիկ դրություն։ Թվում էր, թե վերադառնում են Մաքոնյանների ռազմական դիկտատուրայի ժամանակները։

237 թ. Համիլկար Բարկան վճռեց գործունեություն ծավալել Իսպանիայում։ Արշավանքի սկզբում զոհեր մատուցելիս նա դիմեց որդուն, հարցնելով, թե չի՞ կամենում արդյոք ուղեկցել իրեն դեպի Պիրենեյան թերակղզի։ Եվ, լսելով դրական պատասխան, Հաննիբալին մոտեցրեց զոհասեղանին ու ստիպեց նրան Հռոմի նկատմամբ ցկյանս ատելության երդում տալ։ Այս եղելությունը ընդմիշտ տպավորվեց ապագա զորավարի հիշողության մեջ։ Շատ տարիներ անց, Ասորիքի թագավոր Անտիոքոս III-ի արքունիքում նա հանդիպեց հռոմայեցիների, որոնք ամեն ինչով հոգ էին տանում իրենց ոչ վաղուցվա հակառակորդի մասին, նախապատվում նրան և անում ամեն ինչ, որպեսզի Անտիոքոսը կասկածեր նրան դավաճանության մեջ։ Այն ժամանակ Հաննիբալը կասկածամիտ արքային պատմեց հեռավոր մանկության ժամանակ իր տված երդման մասին (Պոլիբիոս, 3,11, Կորն. Նեպ., Հաննիբ., 2,1—6, Լիվիոս, 35,19)։

Անսպասելիորեն մանկությունն ավարտվեց։ Զինվորական ճամբարներում, թշնամիների դեմ արշավանքներում պետք է կոփվեր Համիլկար Բարկայի որդին՝ հոր գործակիցը և նրա մտահղացումների ժառանգորդը։

Գլուխ երկրորդ

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ։ ԱՐՇԱՎԱՆՔ ԴԵՊԻ ԻՏԱԼԻԱ

I

Համիլկար Բարկան պատահականորեն չէր, որ դիմեց հենց Իսպանիային։ Տակավին խոր անցյալում, II հազարամյակի վերջին, այդ եր-

կիրը դարձել էր փյունիկացիների գաղութարարական և առևտրական ուժգին գործունեության բնագավառ։ II հազարամյակի վերջին և I-ի սկզբին Թերակղզու հարավում նրանք հիմնեցին մի ամբողջ շարք մեծ քաղաքներ, որոնց թվում էին նաև այնպիսի խոշոր առևտրաարհեստագործական կենտրոններ, ինչպես Գադեսը, Մալական, Սեկսին և ուրիշ մի քանիսը։ Արյունահեղ պայքարի ընթացքում համախմբվելով ընդդեմ Տարտեսսոսի և Պիրենեյան Թերակղզու հունական գաղութաբնակեցման, նրանք համեմատաբար վաղ ստիպված եղան ճանաչել Կարթագենի գերակայությունը։ Հասկանալի է, որ խոր անցյալից սկիզբ առնող այդպիսի կապերի առկայության պայմաններում դեպի Իտալիա արշավանքի կազմակերպման համար ամենից հարմար պլացդարմը հենց Իսպանիան էր, եթե, իհարկե, ընդունենք, որ Բարկան արդեն վճռել էր Ապենինյան Թերակղզի ներխուժել հյուսիսից։ Եթե նման ենթադրությունը ճիշտ լինի, կարելի կլիներ կարծել, որ հետագայում Հաննիբալը գործում էր համաձայն իր հոր ռազմավարական մտահղացման, որին, իհարկե, քաջատեղյակ էր։ Ասենք, Բարկայի և նրա հաջորդների համար, ըստ երևույթին, ուրիշ հնարավորություն չկար. 241—239 թթ. լիբիական ապստամբության ժամանակ Հռոմը, օգտվելով Կարթագենի ծանր կացությունից, գավթեց Սարդինիան, դրանով իսկ փակելով Կենտրոնական Իտալիայի բոլոր ծովային մատույցները։

Ցավոք, Պիրենեյան Թերակղզում Համիլկարի գործունեության մասին մեր տեղեկությունները խիստ թերի են։ Պոլիբիոսը (2, 1, 5—9) սահմանափակվել է համառոտ նշումով. տասը տարվա ընթացքում նա անընդհատ ընդարձակել է Իսպանիայում Կարթագենի տիրապետության ոլորտը, վարելով պատերազմներ ու բանակցություններ, մինչև որ զոհվել է մարտում (հմմտ. Լիվիոսի մոտ, 21, 2, 1—2, Կորն. Նեպ., Համ., 4, 1. Հուստինոս, 44, 5, 4)։ Ապպիանոսի և Դիոդորոսի մոտ պահպանված լրացուցիչ տեղեկությունը թույլ է տալիս բացահայտել միայն առավելագույն մանրամասները։

Համիլկարն ափ իջավ Գադեսում։ Կելտերի հետ համագործակցող տուրդետանների ու բաստուլների դեմ նրա ռազմական գործողությունների թատերաբեմը Գվադալկվիվիր գետի հովիտն էր (Դիոդորոս, 26, 10, 1)[36]։ Այնտեղ նրան հաջողվեց կարևոր հաղթանակ տանել. ճակատամարտում սպանվեցին կելտերի առաջնորդներ Իստոլատիոսն ու նրա եղբայրը, որի անունը աղբյուրը չի տալիս։ Զգալով իր կողմը գրավել ոչ վաղուցվա հակառակորդներին (ինչպես ասվել է վերևում, նմանօրինակ քաղաքականություն նա վարել է նաև 241—239 թթ.), Համիլկարն իր բանակում ընդգրկեց գերի վերցված 3000 թշնամի զորայիններին։ Այս

վերջինիծը յուրացրին նաև Համիլկարի մահվանից հետո Իսպանիայում կարթագենյան զորքերի այն հրամանատարները, որոնք հաջորդեցին նրան։

Իբերական առաջնորդներից մեկը՝ Ինդորտոսը, որ հավաքել էր 50 հազար հոգուց բաղկացած աշխարհազոր, շուտով փորձ ձեռնարկեց՝ վերականգնելու դիմադրությունը պունիկյան արշավանքին։ Սակայն գործը հասավ մինչև ճակատամարտի։ Ինդորտոսը փախավ և ի վերջո ընկավ թշնամու ձեռքը։ Նրա զինվորներից շատերը զոհվեցին, իսկ նրանց, ում կարթագենցիները կարողացան գերի վերցնել, Համիլկարը լիակատար ազատություն տվեց։ Կամենալով ահաբեկել հնարավոր հակառակորդներին և կանխել նոր ընդհարումների առաջացման հնարավորությունը, Համիլկարը հրամայեց միայն Ինդորտոսին կուրացնել և ապա խաչել (Դիոդորոս, 25, 10, 1—2)։

Իսպանիայի կողոպուտը Համիլկար Բարկային հսկայական ռազմավար տվեց։ Այն օգտագործվեց զինվորներին բաշխելու համար, ուղարկվեց նաև Կարթագեն, որպեսզի ամրապնդվի նրա ժողովրդականությունը կարթագենյան պլեբսի մեջ։ Ռազմավարի մի մասը Համիլկարը բաշխեց իր կողմնակիցներին (Ապպ., Իսպ., 5, Կորն. Նեպ., Համ., 4, 1, Կորն. Նեպ., Հաննիբ., 2)։ Համիլկարին հաջողվեց ամուր հաստատվել Պիրենեյան Թերակղզու հարավում և նախապատրաստել Իսպանիայում Կարթագենի տիրապետության ընդլայնումը։ Նույն այդ նպատակն ի նկատի առնելով, Համիլկարը շարունակեց պունիկյան քաղաքականության ևս մեկ ուղղությունը իրեն հետաքրքրող շրջանում՝ գաղութարնակեցումը, այստեղ հիմնելով խոշոր քաղաք, որը կոչվեց (այդ անվանումը մեզ է հասել հունարեն հաղորդմամբ) Ակրա Լևկե՝ «Սպիտակ ամրոց» կամ «Սպիտակ բլուր» (Դիոդորոս, 25, 10, 3)։

Բարկայի գործողությունները հարուցեցին Պիրենեյան Թերակղզում հունական գաղութների բնական անհանգստությունը։ Նրանք զգացին իրենց անկախությանն սպառնացող վտանգը և դիմեցին Հռոմին՝ պաշտպանության համար։ Վերջինս ստացավ իր ցանկացած պատրվակը՝ իսպանական գործերին միջամտելու համար։ Ապպիանոսի վկայության համաձայն (Ապպ., Հաննիբ., 2), արդեն Համիլկարի կենդանության ժամանակ Հռոմի ու Կարթագենի միջև բանակցություններ էին ընթանում, և նրանց միջև բաժանվեցին ազդեցության ոլորտները (հարավայինը՝ պունիկյան, հյուսիսայինը՝ հռոմեական), իսկ նրանց միջև սահման ճանաչվեց Իբեր գետը։ Գոնվելով այդպիսով կռանի ու սալի միջև, հունական քաղաքները, համենայն դեպս, ստիպված էին հրաժարվել իրենց քաղաքական ինքնուրույնությունից, այս անգամ Հռոմի օգտին։ Վերջինիս

իշխանությունն, ըստ երևույթին, նրանց այնքան ծանր չէր թվում, ինչպես վարձկան զինվորության իշխանությունը, թեկուզ դա լիներ Համիլկար Բարկայի գլխավորությամբ։ Այնուամենայնիվ, Բարկան բոլոր հիմքերն ուներ գոհ լինելու բանակցությունների ելքից. նա ոչ միայն չպետք է հրաժարվեր իր ձեռքբերումներից, այլև, ընդհակառակը, հնարավորություն ստացավ ընդարձակելու իր երկիրը, գոնե սկզբնական շրջանում, երկյուղ չկրելով հռոմեական միջամտությունից։

Առժամանակ Համիլկարի համար մտահղացման նպատակ դարձավ Հելիկե քաղաքը։ Սկզբնապես նրա պաշարումը պունիկացիների համար հաջող դասավորվեց, և նրանց հրամանատարը որոշեց իր բանակի և փղերի մեծ մասն ուղարկել Ակրա Լևկեում ձմեռելու։ Սակայն այդ պահին օրիսների ցեղի «թագավորը», որն ինչպես երևում էր, բարեկամական հարաբերություններով կապված էր Համիլկարի հետ, անսպասելիորեն օգնության եկավ Հելիկեին, և պունիկացիները, չդիմանալով նրա հարվածին, փախուստի դիմեցին։ Անմիջական վտանգ ստեղծվեց Համիլկարի որդիների համար, որոնք գտնվում էին մարտակարգերում, և որպեսզի վերացնի այն, Համիլկարը հիմնական հարվածն ընդունեց իր վրա։ Հետապնդելով հակառակորդներից, նա խեղդվեց գետում, իսկ որդիները նույն ժամանակ հասցվեցին Ակրա Լևկե (Դիոդորոս, 25,10, 3—4)[37]։

Համիլկարի կորստյան լուրը հազիվ էր հասել Ակրա Լևկե, երբ պունիկյան զորքերի գլխավոր հրամանատարությունն ստանձնեց նրա փեսա Հասդրուբալը, որը տվյալ պահին նավերից մեկի նավապետն էր (Պոլիբիոս, 2,1,9)։

Մեզ համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես է Հասդրուբալը իշխանության գլուխ անցել։ Պոլիբիոսի ասելով (2,1,9, հմմտ. Ապպ. մոտ. Իսպ. 6), հրամանատարի պաշտոնը նրան «հանձնել են» կարթագենցիները։ Սակայն նման խիստ ընդհանուր ցուցումը հնարավորություն չի տալիս բացահայտելու գործի էությունը։ Դրա վրա որոշ չափով լույս է սփռում Տիտոս Լիվիոսի պատմությունը (21,2,3—4). լինելով Համիլկարի փեսան, Հասդրուբալը այդ դիրքին հասավ շնորհիվ բարկայական «կուսակցության» ազդեցության, որը, հակառակ կարթագենյան ավագանու ցանկության (և, պետք է ենթադրել, նաև դիմադրության), հատկապես մեծ էր զինվորների ու քաղաքային պլեբսի մեջ։ Այս առթիվ կարևոր լրացում ենք գտնում Դիոդորոսի մոտ (25,12). Հասդրուբալին զորապետ են հռչակել «ժողովուրդն» ու կարթագենցիները։ Հավանաբար, «ժողովրդի» տակ Դիոդորոսի սկզբնաղբյուրը ի նկատի է ունեցել Կարթագենի բնակչության դեմոկրատական

շրջանակներին։ Ելնելով ամբողջ շարադրվածից, իրադարձությունների ընթացքը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. Հասդրուբալը, Կարթագենում դեմոկրատական շարժման պարագլուխներից մեկը, անիրոջ հանկարծակի մահվանից հետո դարձավ բարկայական «կուսակցության» ղեկավար։ Իշխանությունն ստանալով զինվորների ձեռքից, փաստորեն գլխավորելով բանակը, հենվելով ժողովրդի մեջ իր հետևորդների և բարկայանական քաղաքականության կողմնակիցների վրա, նա կարողացավ հասնել պաշտոնական հաստատման։ Ըստ էության, Հասդրուբալը ձեռք բերեց ռազմական դիկտատորի այն դիրքը, որին ձգտում էր, և որը Իսպանիայի տարածքում ուներ Համիլկարը։

Այս ժամանակ լրացել էր Հաննիբալի տասնյոթ տարին։ Հետագա իրադարձություններից երևում է, որ հոր զոհվելուց հետո նա եղբայրների հետ միասին հեռացավ Իսպանիայից և վերադարձավ Կարթագեն։ Զորաձամբարի իրավիճակը, մասնակցությունը արշավանքներին, հոր և փեսայի դիվանագիտական գործունեությանն ականատես լինելը, անկասկած, վճռական ազդեցություն ունեցան նրա, որպես զորավարի և պետական գործչի ձևավորման վրա։ Հաննիբալի զինվորական արժանիքները, որոնց մասին խոսում է Տիտոս Լիվիոսը (21,4,3—8)՝ քաջությունը, շրջահայեցությունը, դիմացկունությունը, անխոնջությունը, պարզությունը, դրանք բոլորը ձևավորվել են, իհարկե, Համիլկարի անմիջական ազդեցության ներքո։ Հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ Հաննիբալը հենց հորն էր պարտական նաև իր արտասովոր կրթությամբ, այդ թվում՝ հունարեն լեզվի և գրականության իմացությամբ, հունարեն գրել կարողանալու մեջ։ Թե որքան սկզբունքային էր Համիլկար Բարկայի այս քայլը (երեխաներին հելլենական մշակույթին հաղորդակից դարձնելը), երևում է նրանից, որ դա արվեց հակառակ հինավուրց օրենքի, որն արգելում էր ուսումնասիրել հունարեն լեզուն (Հուստինոս, 20,5,13)։ Խախտելով վաղ ժամանակների օրենքը, որը պունիկացիներին պետք է պատնեշեր վաղեմի թշնամուց՝ Սիրակուզայից, բայց փաստորեն նրանց մեկուսացրեց շրջապատող աշխարհից, Համիլկարը չէր ձգտում միայն նախապատրաստել իր որդիներին, ամենից առաջ Հաննիբալին, ապագայում քաղաքական ակտիվ գործունեության։ Նա կամենում էր շեշտել Կարթագենը հելլենիստական (հունական և հունականացված) աշխարհ մտցնելու իր միտումը, բայց ոչ թե որպես օտար երևույթ, այլ որպես օրգանական մաս, և նրա համար ապահովել հույների պաշտպանությունն ու համակրանքը հռոմեական «բարբարոսներին» դեմ առաջիկա պայքարում։

Մենք չգիտենք այն պատճառները, որոնք Հաննիբալին հարկադրեցին թողնել Իսպանիան։ Բացառված չէ, որ Հասդրուբալը հոգատարություն էր ցուցաբերում իր կնոջ եղբայրների նկատմամբ։ Հնարավոր է նաև, որ նա կամենում էր, թեկուզ կարճատև ժամանակով, ազատվել իշխանության վտանգավոր և ոչ վերացնելի հավակնորդից։ Այսպես թե այնպես, մոտակա հինգ տարիները Հաննիբալն անցկացրեց Կարթագենում, ըստ երևույթին ուշադիր հետևելով հայրենիքի քաղաքական կյանքին։ Սակայն արդեն 224 թ. Հաննիբալը վերադարձավ Իսպանիա և այստեղ, փեսայի գլխավորությամբ, սկսեց անցնել զինվորական ծառայության, գլխավորելով հեծյալներին։

Մինչդեռ Հասդրուբալը Ակրա Լևկեում հավաքեց նշանակալից ուժեր՝ 200 փիղ, 50 հազար փորձառու հետևազորային և վեց հազար հեծյալ։ Ամենից առաջ դիմելով օրիսների վրա, նա ջախջախեց նրանց, և, ինչպես ասում է Դիոդորոսը (25,12), կոտորեց բոլոր նրանց, ովքեր մեղավոր էին Համիլկարի պարտության և կորստյան համար։ Հասդրուբալը իրեն ենթարկեց օրիսների 12 քաղաք, ինչպես նաև մի քանի այլ քաղաքներ Իսպանիայում։

Հասդրուբալի կարևորագույն քաղաքական միջոցառումը, որով նա իր մյուս գործողություններից առավել չափով շարունակեց Համիլկարի քաղաքականությունը, Միջերկրական ծովի պիրենեյան ափին նոր Կարթագենի հիմնադրումն էր։ Հարմարավետ ծովածոցի ափին ընկած և անմատչելի բլրաշարքով շրջապատված այս քաղաքի բախտն ավելի բերեց, քան Ակրա Լևկեինը. եթե վերջինս, որքանով կարելի է դատել այդ մասին, միշտ մնում էր որպես գավառական հետամնաց քաղաք և ի վիճակի չէր մրցակցել Գադեսի հետ, ապա նոր Կարթագենը իսկույնևեթ դարձավ Իսպանիայում պունիկյան տիրույթների վարչական կենտրոն և բովանդակ Միջերկրականի կարևորագույն առևտրական կենտրոններից մեկը։

Գործելով գլխավորապես խաղաղ միջոցներով, իբերական ցեղերի առաջնորդների հետ հաստատելով բարեկամական, հյուրընկալական հարաբերություններ (Լիվիոս, 21,2,5), Հասդրուբալը կարողացավ նշանակալիորեն ընդարձակել Պիրենեյան թերակղզում Կարթագենի գերիշխանության ոլորտը։ Առանձնապես կարևոր էին հյուրընկալական հարաբերությունները։ Դրանք ենթադրում էին թե՛ սերտ միություն, թե՛ փոխադարձ օգնություն ընդհանուր թշնամու դեմ, և անհրաժեշտության դեպքում՝ տվյալ ցեղի բնատարածքում պունիկացիների անվտանգության ապահովում։ Հասդրուբալը նույնիսկ ամուսնացավ (հավանաբար Համիլկարի դստեր մահից հետո) իբերական առաջնորդներից մեկի դստեր հետ (Դիոդորոս, 25,12)։

Հասդրուբալի քաղաքական հաջողությունները անհանգստություն առաջացրեցին Հռոմում։ Հյուսիսից գալլական ներխուժման սպառնալիքը հռոմայեցիներին զրկեց Իսպանիայի գործերին ուղղակի ռազմական միջամտության հնարավորության կենսագործումից (Պոլիբիոս, 2,13,5)։ Ընդհանրապես հռոմայեցիները կենսականորեն շահագրգռված էին վտանգավոր թշնամու չեզոքացման մեջ. վերջինս, բացի այդ, կարող էր դառնալ գալլերի դաշնակիցը։

Ըստ երևույթին, հռոմայեցիների միջամտության մեջ ավելի շահագրգռված էին Պիրենեյան թերակղզու արևելյան ափի հունական գաղութները, ինչպես նաև Մասիլիան, որոնց համար դեպի հյուսիս Հասդրուբալի առաջխաղացումը մահացու սպառնալիք էր նշանակում։ Բացառված չէ, որ հենց Մասիլիայի դիվանագիտությունն էր, հատկապես, նաև դուն կերպով հռոմեական կառավարությանը դրդում կանգնեցնելու Բարկիյանների առաջխաղացումը[38]։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները հաղորդում են այն պայմանագրի մասին, որը հռոմեական հատուկ դեսպանությունը կնքել էր Հասդրուբալի հետ, նկատի ունենալով, որքանով կարելի է դատել այդ մասին, հաստատել ավելի վաղ Համիլկարի հետ ձեռք բերված համաձայնությունը և թույլ չտալ Իսպանիայում կարթագենական գոտու ընդարձակումը։

Այս պայմանագրի վերաբերյալ անտիկ ավանդության պահպանած տեղեկությունները աչքի չեն ընկնում միաձայնությամբ։ Պոլիբիոսը (2,13,7) գրում է. «Այդ պատճառով (այսինքն՝ գալլական սպառնալիքի— Ի. Կ.) կնքեցին պայմանագիր, որտեղ լռելով մնացյալ Իսպանիայի մասին, սահմանեցին, որ կարթագենցիները պատերազմելու համար չպետք է անցնեն Իբեր անունով գետը»։ Լիվիոսի բնագիրը (21,2,7) էապես տարբերվում է Պոլիբիոսի խոսքերից. «Այս Հասդրուբալի հետ... հռոմեական ժողովուրդը վերականգնեց դաշինքը, որպեսզի թե՛ մեկի և թե՛ մյուսի տիրապետության սահմանը լինի Իբեր գետը, և մեջտեղում (այսինքն, ըստ երևույթին, Իբերի և Նաո հրվանդանի միջև, որը կարթագենյան տիրակալության նախկին սահմանն էր—Ի. Կ.) երկու ժողովուրդների տիրապետության ոլորտների միջև տեղավորված սագունտուցիների համար պահպանվի ազատությունը»։ Լիվիոսի պատմածի մեջ ուշադրություն է գրավում ամենից առաջ դաշինքը վերականգնելու վերաբերյալ դարձվածը, որի տակ ակնհայտորեն հասկացվում է Համիլկարի հետ ավելի վաղ կնքված պայմանագիրը։ Պոլիբիոսն իր պատմությունն այնպես է շարադրում, որ ասես թե նման պայմանագիր գոյություն չի ունեցել։ Լիվիոսը հստակորեն խոսում է հռոմայեցիների ու կարթագենցիների միջև եղած սահմանի մասին, այն դեպքում, երբ Պոլիբիոսը սոսկ

հաղորդում է պունիկյան հնարավոր տիրապետության ոլորտի սահմանափակման մասին։ Պոլիբիոսի խոսքերը՝ «լռելով մնացյալ Իսպանիայի մասին», բացառում են Լիվիոսի ցուցումը՝ «որպեսզի թե՛ մեկի և թե՛ մյուսի տիրապետության սահմանը լինի Իբեր գետը», ինչպես նաև նրա մոտ եղած առանձին կետը Սագունտումի քաղաքական դրության մասին։ Ինչպես երևում է, տվյալ դեպքում Լիվիոսն օգտվել է Պոլիբիոսից անկախ աղբյուրից. ամենից հավանական է, որ նա վերարտադրում է Կատոնի պատումը (տե՛ս Ֆրագմ., 84), որը Պունիկյան II պատերազմի պատճառ էր համարում պայմանագրի խախտումը (ի նկատի է առնվում Հաննիբալի կողմից Սագունտումի պաշարումը)։ Կատոնի պատմությունը, հասկանալի է, ունի իր քաղաքական միտումը. այն պետք է հիմնավորեր հենց Կատոնի և նրա ետևում կանգնած սենատական խմբավորման դիրքավորումը Պունիկյան II պատերազմից հետո և Կարթագենը կործանելու վերաբերյալ նրանց պահանջը։ Լիբիական ավանդությունից են ծագում Ապպիանոսի հաղորդումները (Ապպ., Իսպ., 7, Ապպ., Հաննիբ., 2, Ապպ., Լիբ., 6), սակայն այս գրողը Սագունտումը տեղադրում է Իբերի և Պիրենեյան լեռների միջև, թույլ տալով էական աշխարհագրական սխալ։ Ապպիանոսի վկայությամբ (տե՛ս հատկապես. Ապպ., Իսպ., 7) Պիրենեյան թերակղզու հյուսիսում կարթագենցիների առաջխաղացումը սահմանափակող պայմանագիրը հռոմայեցիները կնքեցին այն բանից հետո, երբ պաշտպանության համար նրանց դիմեցին այնտեղի հունական քաղաքները (ամենից առաջ՝ Սագունտումը), որոնք վախենում էին Հասդրուբալից։ Ապպիանոսի այս հաղորդման մեջ անհավանական ոչինչ չկա։ Այն միայն ցույց է տալիս, որ այժմ, ինչպես և նախկինում, Պիրենեյան թերակղզում կային հռոմեամետ տարրեր։ Հետաքրքիր է, սակայն, պայմանագրի բովանդակությունը Ապպիանոսի շարադրման մեջ. Կարթագենյան տիրապետության ոլորտի հյուսիսային սահման է հայտարարվում Իբեր գետը, հռոմայեցիները պարտավորվում են նրանից հարավ պատերազմ չվարել, Սագունտումն ու մյուս քաղաք-պետությունները հայտարարվում են ազատ և ինքնավար[39]։

Հասդրուբալի հետ հռոմեական իշխանությունների կնքած պայմանագրի բովանդակության և, հետևաբար, այս կամ այն պատումի արժանահավատության խնդիրը շաղկապվում է այդպիսով մեկ այլ հարցի՝ պատերազմի սանձազերծման մեջ Հռոմի ու Կարթագենի (տվյալ դեպքում ներկայացված Հասդրուբալի ու Հաննիբալի կողմից) պատմական պատասխանատվության հետ։

Այս խնդրին հատուկ աշխատություն է նվիրել Վ. Օտտոն։ Նա ընդհանրապես չի գտնում, որ Համիլկար Բարկան ձգտում էր ռևանշի[40]։

[illegible]ի նպատակն էր Իսպանիայում Կարթագենի դիրքերի ամրապնդումը և դրանով իսկ Կարթագենի հզորության նոր հենակետի ստեղծումը։ Մինչդեռ Հռոմը սկսում էր հետաքրքրվել Միջերկրականի արևմտյան [illegible]ի գործերով, Սագունտումի հետ կնքելով դաշինք, որն անմիջականորեն ուղղված էր Կարթագենի դեմ և նպատակ ուներ կասեցնելու [illegible] առաջխաղացումը դեպի հյուսիս։ Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող պայմանագրին, ապա նրա մեջ պետք է լիներ ռազմական [illegible]ներով Իբերը չանցնելու վերաբերյալ Հռոմի փոխադարձ պարտավորությունը բովանդակող կետ։ Կարթագենը իր գերիշխանության [illegible] գտնվող Սագունտումը չէր ճանաչում որպես Հռոմի դաշնակից, [illegible] դեպքում, երբ Հռոմը, հակառակ պայմանագրին, բացահայտորեն [illegible] էր պնդում։ Սագունտումը պաշարած և ավերած Հաննիբալի գործողությունները չէին հակասում գերիշխանության ոլորտների շուրջը եղած համաձայնությանը և, հետևաբար, ուղղված չէին Հռոմի դեմ։ Կարթագենյան զորավարի և կառավարության դեմ Հռոմի մեղադրանքները անօրինական էին։ Այս առումով ուշադրության արժանի է Վ. Պիրոգովի հետաքրքիր ենթադրությունը, որի համաձայն Պոլիբիոսի տարբերակի հետ զուգահեռ գոյություն է ունեցել պայմանագրի հռոմեական (և անհասկած կեղծ) փոփոխակը, որի մեջ մտցվել է Սագունտումին վերաբերող հոդվածը։ Այս կեղծիքը, Վ. Պիրոգովի համոզմամբ, սենատին անհրաժեշտ էր այն բանի համար, որպեսզի խլացներ Հռոմում եղած դժգոհությունը թե՛ պատերազմի հեռանկարով և թե՛ պայմանագրի՝ հռոմեական տեսանկյունից անբավարար խմբագրմամբ[41]։ Օ. Գիլբերտը կարծում է, որ Հասդրուբալի և հռոմեական վարչակազմի միջև կնքված պայմանագիրը նախատեսում էր Սագունտումի լիակատար չեզոքացում, բացառելով նրա գործերին Հռոմի ու Կարթագենի միջամտությունը։ Այսպիսի իրադրության մեջ Սագունտումի՝ Հռոմի դաշնակից դառնալը պետք է դիտվեր որպես սենատի կողմից համաձայնության պայմաններից մեկի դիտավորյալ խախտում (Պոլիբիոսի հաղորդումը Օ. Գիլբերտը համարում է հռոմեամետ կեղծարարություն, քանի որ այստեղ Սագունտումի չեզոքացման մասին խոսք չկա)[42]։ Վ. Կոլբեի կարծիքով[43], ազդեցության դերում հանդես էր գալիս Կարթագենը։ Կարթագենի մեղքը նա տեսնում է նրանում, որ վերջինս հրաժարվեց ճանաչել Հասդրուբալի պայմանագիրը որպես մի փաստաթուղթ, որը քաղաքական որոշակի պարտավորություն էր դնում ամբողջությամբ վերցրած՝ պետության վրա։ Մ. Գելցերը կարծում է, որ Իբերի մասին պայմանագրում Սագունտումի (որն արդեն, ամենայն հավանականությամբ, Հռոմի դաշնակիցն էր) գրությունը չի որոշված. խոսքն այդ ժամանակ լոկ այն մասին էր, որ-

պեսզի կանխվեին Հասդրուբալի կապերը գալլերի հետ՝ «Ալպերի այս կողմում»[44]։ Եթե հռոմայեցիները կարողանային, նկատում է նա, այդ պայմանագրից նյութ քաղել այն բանի համար, որպեսզի Կարթագենին մեղադրեին իր պարտավորությունների խախտման մեջ, ապա նրանք կկատարեին անըմբռնելի հիմարություն, չհղելով դրան (Պոլիբիոսի մոտ հենց այդպես է)[45]։ Այստեղից անհրաժեշտաբար հետևում է, որ ավելի ուշ, պաշարելով Սագունտումը, Հաննիբալը չխախտեց պայմանագրային պարտավորությունները։

Այս նյութի շուրջը Ժ. Կարկոպինոյի գրչին պատկանող ուսումնասիրության մեջ[46] առաջ է քաշվել անհեթեթ տեսակետ. Մեծ Իբերի (Սագունտումից 160 կմ հյուսիս գտնվող Էբրոն) հետ միասին այդ քաղաքից հարավ պետք է գոյություն ունենար մեկ այլ Իբեր՝ Վալենսիայի և նաև հրվանդանի միջև։ Այն Ժ. Կարկոպինոն նույնացնում է Խուկար (հին հեղինակների մոտ սովորաբար անվանվում է Սուկրո) գետի հետ։ Մեզ հետաքրքրող պայմանագրում ի նկատի է առնվել հենց այդ Փոքր Իբերը։ Այսպիսով՝ Սագունտումը գտնվել է հռոմեական տիրապետության ոլորտում, նրա անվտանգությունն ապահովվել է համաձայնագրերով, և, հարձակվելով նրա վրա, Հաննիբալը պատերազմ է սանձազերծել Հռոմի դեմ։ Ֆ. Ու. Ուոլբենկը Պոլիբիոսի աշխատությանը նվիրած իր մեկնաբանությունների մեջ որոշակի եզրակացության չի հանգում, թեև կտրուկ դեմ է արտահայտվում Կարկոպինոյի ըմբռնմանը[47]։ Նրա կարծիքով դժվար է պատկերացնել, որ հռոմայեցիները կաշկանդված չէին համանման կետով (Իբերից անդին անցնելն արգելելը)։ Սակայն պայմանագիրը հանդես է գալիս որպես Կարթագենին արված զիջում, որը ճանաչում էր այն, ինչ տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենալու Իբերից դեպի հարավ։ Կնքված լինելով Հասդրուբալի և սենատական հանձնաժողովի միջև, այն, ըստ երևույթին, Հռոմում հաստատվել է, իսկ Կարթագենում՝ ոչ[48]։ Հնարավոր է, որ Բարկայանները իրավունք ունեին կնքելու տեղական պայմանագրեր։ Եթե Սագունտումի հետ Հռոմի դաշինքը կնքվել է պայմանագրի ստորագրումից հետո, ապա վերջինս խախտվել է Հռոմի կողմից, իսկ եթե մինչ այդ՝ ապա պարզ չէ, թե Սագունտումի հետ կնքված պայմանագիրն ինչ կապ է ունեցել Հռոմի և Հասդրուբալի միջև կնքված պայմանագրի հետ։ Մեր կողմից այստեղ կնշենք, որ վերջին հարցին պատասխան է տալիս պայմանագրի՝ Տիտոս Լիվիոսի մոտ եղած խմբագրությունը, սակայն ընդհանուր կարծիքի համաձայն, այն իրենից ներկայացնում է ժամանակագրական կեղծիք[49]։ Այս առնչությամբ սրամիտ տեսություն է առաջադրել Է. Բիքերմանը[50]։ Մանրազնին ուսումնասիրելով Հաննիբալի և Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս V-ի միջև

[illegible] պայմանագիրը (այս մասին տե՛ս առաջիկայում), Է. Բիքերմանը ճանգել է այն եզրակացության, որ ինչպես վերջինս, Էբրոյի վերաբերյալ պայմանագիրը նույնպես, իրենից ներկայացնում էր Հասդրուբալի միակողմանի անձնական երդումը (այսպես կոչված բերիտը՝ «սուրբը»), որը պունիկյան, իսկ վերջին հաշվով, համաաֆրիկյան պատերազմներով չէր կաշկանդում ո՛չ նրա հնարավոր հաջորդներին և ո՛չ Կարթագենի իշխանությանը։ Վերջապես, Ի. Ի. Վեյցկովսկին ելնում է այն բանից, որ պայմանագիրը բաժանում էր Կարթագենի ու Հռոմի հնարավոր առաջխաղացման ոլորտները։ Հռոմայեցիները խախտեցին այն, միջամտելով Սագունտումի ներքին գործերին[51]։ Հավանաբար առաջիկայում, մինչև նոր աղբյուրների հայտնաբերումը, այդ պայմանագրի բովանդակությանն առնչվող խնդիրը մնալու է, Ժ. Կարկոպինոյի դիպուկ արտահայտությամբ՝ «յուրատեսակ պրոկրուստյան մահիճ», որի վրա տանջաքննում են բնագրերը, որպես արդյունք ստանալով հակասական և անընդունելի եզրակացություններ։ Ցավոք, Ժ. Կարկոպինոն ևս չի խուսափել նմանօրինակ գայթակղությունից։

Մեր տեսակետով Պունիկյան II պատերազմի սանձազերծման մեջ այս կամ այն կողմի պատմական մեղքի վերաբերյալ խնդիրը այն տեսքով, ինչպես այն առաջադրել են Վ. Օտտոն և Ժ. Կարկոպինոն, ընդհանրապես զուրկ է իմաստից։ Համիլկար Բարկայի և Հասդրուբալի բոլոր գործողությունները ցույց են տալիս, որ նրանք Իսպանիայում պլացդարմ էին պատրաստում Հռոմի դեմ պատերազմ մղելու համար։ Իր հերթին Հռոմը չէր կարող չգտնել այն բանին, որպեսզի նախ՝ կանգնեցնի Կարթագենի առաջխաղացումը և այնուհետև՝ խորտակի Կարթագենի հզորությունը միջերկրածովյան երկրներում։ Պունիկյան I պատերազմից հետո անցքերի տրամաբանությունը երկու հակառակորդներին անխուսափելիորեն մղում էր նոր ընդհարման, և այդ տեսակետից թե՛ մեկը և թե՛ մյուսը հանդես էին գալիս ագրեսորի դերով, և խնդրո առարկա պայմանագիրը ոչ այլ ինչ էր, քան կարգավորման ժամանակավոր փորձ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ ամեն տեսակ հիմքից զուրկ է Ժ. Կարկոպինոյի փորձը՝ հաստատելու մեկ այլ Իբերի գոյությունը Սագունտումից հարավ։ Հազիվ թե կարելի է ապացուցված համարել նաև այն ըմբռնումը, որի համաձայն Տիտոս Լիվիոսի բնագիրը իրենից ներկայացնում է ոչ ավելի, քան կեղծարարություն, որը ստեղծվել էր հայրենասիրաբար տրամադրված հռոմեական պատմագրության մեջ։ Այն, բոլոր դեպքերում, իրադարձությունների հետագա զարգացմանը ավելի է համապատասխանում, քան Պոլիբիոսի բնագիրը։

Հաշվի առնելով մեր տրամադրության տակ եղած բոլոր տեղեկու-

թյունները, կարելի է կարծել, որ դեպքերը զարգանում էին հետևյալ կերպ. Հասդրուբալը բոլոր արևմտյան սեմական ժողովուրդների, այդ թվում և փյունիկացիների մոտ գոյություն ունեցող հնավանդ սովորույթի համաձայն, բերիտ կնքեց, պարտավորվելով չանցնել Իբերը և չխախտել Սագունտումի և Պիրենեյան թերակղզում հունական այլ գաղութների իրավունքները։ Միայն դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ մի քանի տարի հետո Հռոմի ու Կարթագենի միջև պատերազմի առիթ ծառայեց հատկապես Սագունտումի պաշարումը։ Հավանաբար Պոլիբիոսն ընտրել է ոչ արժանահավատ մի պատում, որը չի համապատասխանում իրադարձությունների հետագա ընթացքին, այն վերցնելով Կարթագենի կողմը միտված սկզբնաղբյուրից։ Բոլոր դեպքերում Սագունտումը Հռոմի դաշնակից է դարձել ըստ երևույթին, արդեն Հասդրուբալի հետ կնքված պայմանագրից հինգ տարի առաջ, 231 թվին[52]։ Այդ երդումը Կարթագենում չի հաստատվել, թերևս այն պատճառով, քանի որ խոսքը գնում էր Հասդրուբալի անձնական պարտավորությունների մասին, և կառավարությունը պունիկյան տեսակետից չպետք է խառնվեր իրադարձությունների ընթացքին։ Համենայն դեպս, դրա հետևանքով առաջացավ ձևականորեն դիվանագիտական սողանցք, որը թույլ էր տալիս խոսելու Իբերի ափերի անձեռնմխելիությունը և Սագունտումի անվտանգությունը երաշխավորող պայմանագրին կարթագենյան խորհրդի բոլորովին անմասն լինելու մասին։

Այսպիսով 226 թ. ձեռք բերվեց ժամանակավոր հավասարակշռություն, որը փաստորեն Կարթագենի ձեռքը հանձնեց Իբերից դեպի հարավ ընկած ամբողջ կամ գրեթե ամբողջ Իսպանիայի տարածքը։ Ընդ որում կարթագենցիների պետությունը չէր կաշկանդվում ոչ մի ձևական պարտավորությամբ։ Հասդրուբալին առայժմ ավելին հարկավոր չէր։

221 թ. Հասդրուբալը որսի ժամանակ սպանվեց մի կելտ ստրուկի կողմից (աղբյուրները չեն հիշում նրա անունը), որը կարթագենյան զորավարից վրեժ լուծեց իր տիրոջ մահապատժի համար (Պոլիբիոս, 2, 3, 6, 1, Լիվիոս, 21, 2, 6, Ապպ., Իսպ., 8., Ապպ., Հաննիբ., 2, Դիոդորոս, 25, 12, Հուստինոս, 44 5, 5)։ Լիվիոսը վառ գույներով է պատկերում սպանողի ողևորությունը, որը իրեն պահում էր այնպես, որ ասես նրան հաջողվել էր խուսափել վտանգից, և խոշտանգումների ժամանակ թվում էր, թե ծիծաղում է դահիճների երեսին։ Հանրապետության վերջի և կայսրության սկզբնական տարիների հռոմայեցուն արդեն անհասկանալի այս իրադրության մեջ, ըստ երևույթին, արտացոլում են գտել ծայրահեղ արխաիկ հասարակության նորմերը. տոհմի կազմի մեջ մտցված ստրուկը պարտավոր էր իր ազատացնող տիրոջ վրեժը նույնիսկ իր կործանման

գնով։ Օրենքի կատարումը բարոյական ամենամեծ բավարարվածություն է պատճառում նրան. նա չպետք է թուլություն դրսևորի թշնամու առջև։

Կարթագենում Բարկայանների թշնամի քաղաքական խմբավորումը՝ արիստոկրատական կուսակցությունը՝ Հաննոնի գլխավորությամբ, փորձեց Հասդրուբալի սպանությունն օգտագործել այն նպատակով, որպեսզի Բարկիները մաքրի իր քաղաքական հակառակորդների հետ և նրանց զրկի իշխանությունից (Ապպ., Իսպ., 8, հմմտ., Ապպ. մոտ Հաննիբ., 3)։ Սակայն այդ փորձերը չհաջողվեցին։ Իսպանիայում գտնվող պունիկյան բանակի զորայինները, Հասդրուբալի մահվանից անմիջապես հետո գլխավոր հրամանատար հռչակեցին Հաննիբալին։ Որոշ ժամանակ հետո, Կարթագենի ժողովրդական ժողովը և խորհուրդը հաստատեցին այդ նշանակությունը (Ապպ., Իսպ., 8, Ապպ., Հաննիբ., 3, հմմտ. Պոլիբիոսի մոտ, 3, 13, 3—4, Լիվիոս, 21, 3, 1)։

Ինչո՞վ բացատրել նմանօրինակ որոշումը։ Ամենից առաջ, իհարկե, Հաննիբալի ծագմամբ։ Համիլկար Բարկայի որդին բնականաբար կարող էր հույսը դնել իր հոր և փեսայի ստեղծած բանակի պաշտպանության վրա։ Նրա հիմքը կազմող վարձկանները իրենց կապված էին համարում ոչ այնքան Կարթագենի, որքան զորապետների տոհմի հետ, որոնք ոգեշնչ էին վճարում իրենց, աբշավանքների տանում և առատորեն կիսում էին ռազմամարտը։ Այն կարելի է բացատրել նաև Հաննիբալի քաղաքական դիրքորոշմամբ։ Պետք է կարծել, որ նա արդեն հայտնի էր որպես Հռոմի անհաշտ թշնամի։ Ապպիանոսի վկայությամբ (Ապպ., Իսպ., 9), նա հաղիվ էր ստանձնել պաշտոնը, երբ արդեն առիթ գտավ, Կարթագենում իր բարեկամներին հիշեցնելու իր երդման մասին, որ երբ իշխանություն ստանա, թշնամի է լինելու հռոմայեցիներին։ Նրա խոսքերն, իհարկե, նախատեսված էին ի գիտություն ամենքի։ Բարկայանների՝ այդմ արդեն ավանդական ուղեգծի շարունակումը զինվորներին խոստանում էր Իտալիայի կողոպուտը, իսկ կարթագենյան վաճառականներին՝ արհեստավորներին՝ առատ եկամուտներ՝ կարևորագույն շուկաների և ռազմավարական ճանապարհների ձեռքբերման շնորհիվ, ինչպես նաև իրենց պետությունը բնակեցված աշխարհի տիրակալ տեսնելու հեռանկարը։ Եվ վերջապես, դա կարելի է բացատրել նաև Հաննիբալի անձնական հատկություններով։ Տիտոս Լիվիոսը (21, 4, 1—4) գրում է, որ երբ Հաննիբալը 224 թ. վերադարձավ Իսպանիա՝ Հասդրուբալի հրամանատարության տակ, նա կարողացավ հեղինակություն ձեռք բերել զինվորների մոտ. «Իսպանիա ուղարկված Հաննիբալը հաղիվ էր երևացել, երբ իր կողմը գրավեց ամբողջ զորքը. հին ռազմիկները համարում էին, թե նրանց մոտ է վերադարձել երիտասարդ Համիլկարը. դեմքին նույն կո-

բովը, աչքերի զորությունը, նույն կերպարանքն ու դիմագծերը»։ Եվ իրոք, Նոր Կարթագենից ծագող դրամներից մեկի[53] վրայի՝ Հաննիբալի դիմանկարներից դատելով, նա ապշեցուցիչ կերպով հիշեցնում էր հորը։ Լիվիոսի բնութագիրը հույժ ճշգրտորեն համապատասխանում է այն հատկանիշներին, որոնք պատկերահանը կամեցել է դրսևորել իր օրինակում։ «Սակայն,— շարունակում է հռոմայեցի պատմագիրը,— նա կարճ ժամանակում այնպես արեց, որ հորը նրա նմանությունը դարձավ ամենափոքրն այն հատկություններից, որոնք տրամադրում էին նրա նկատմամբ։ Դեռ երբեք միևնույն անձնավորությունը այդպես չէր ընտելացել խիստ տարբեր գործերի՝ ենթարկվելու և հրամայելու։ Այնպես որ դժվար էր որոշել, հրամանատարի, թե զորքերի համար էր նա թանկ. Հասդրուբալն ուրիշ, որևէ մեկին ավելի մեծությամբ չէր նշանակել ծառայության, որտեղ հարկավոր էր գործել արիությամբ ու անհողդողդ կերպով, և ոչ էլ զինվորներն էին մեկ այլ հրամանատարի հետ իրենց նկատմամբ եղել ավելի վստահ ու քաջ»։

Հաննիբալի առաջին քայլերն իսկ ցույց տվեցին, որ նրա կողմնակիցները չէին սխալվել իրենց ակնկալություններում։

II

Երբ Հաննիբալն անցավ իշխանության գլուխ, քանհինգ-քսանվեց տարեկան էր։ Իսպանիայում ընդհանուր առմամբ ամուր կերպով արդեն հաստատվել էր կարթագենցիների տիրապետությունը, շնորհիվ Համիլկար Բարկայի և Հասդրուբալի համառ ու հետևողական քաղաքականության, և թվում էր, թե Պիրենեյան թերակղզու հարավային մասը քիչ թե շատ հուսալի հենարան է Հռոմի վրա հարձակվելու համար։ Ինքը՝ Հաննիբալն արդեն իբերական աշխարհի հետ ձեռք էր բերել Բարկայանների համար ավանդական դարձած ամուր կապեր. նա ամուսնացած էր իբերուհու հետ, որը Կարթագենին դաշնակից Կաստուլոն քաղաքից էր (Լիվիոս, 24, 41, 7)։ Պունիկյան նոր զլխավոր հրամանատարը երիտասարդությանը հատուկ ծայրահեղությամբ իրեն այնպես էր պահում, որ ասես թե արդեն որոշված էր պատերազմը Հռոմի դեմ և այն հանձնարարված էր իրեն, իսկ որպես իր գործունեության ոլորտ նշանակված էր Իտալիան (Լիվիոս, 21, 5, 1)։ Նա, ըստ երևույթին, չէր էլ թաքցնում հռոմայեցիներին դաշնակից Սագունտումի վրա հարձակվելու և դրանով իսկ Հռոմը ուղղակի ընդհարման մեջ ներքաշելու իր դիտավորությունը։ Սակայն, միաժամանակ, նա ձգտում էր այնպես ձևացնել, որ Սագունտումի վրա հարձակումը տեղի է ունենալու ինքնաբերաբար, իրադարձու-

թյունների բնականոն զարգացման հետևանքով։ Հենց այդ պատճառով նա հրահանգում է Տիտոս Լիվիոսը (21, 5, 3), նա իր հարվածն ուղղեց ամենից առաջ օլկադների դեմ, որոնք բնակվում էին Իբերից հարավ, Տագոս և Անաս գետերի միջև ընկած տարածքում, որը, ինչպես ընդունված էր, պատկանում էր կարթագենցիներին։

Սակայն, ընդհանուր-քաղաքական այս ծրագրին զուգահեռ, Հաննիբալն ուներ ուրիշ ավելի մերձավոր նպատակներ։ Օլկադների իր բնութագրման մեջ Տիտոս Լիվիոսը (նույն տեղը) անում է թռուցիկ, բայց և այնպես բազմանշանակ դիտողություն. «Այդ ժողովուրդը գտնվում էր Իբերից անդին, ավելի շուտ կարթագենցիների երկրամասում, քան նրանց գերիշխանության տակ»։ Ակներևաբար նրանց նկատմամբ փաստական իշխանությունը դեռ պետք էր հաստատել, և հենց այդպիսի խնդիր դրեց իր առջև Հաննիբալը, երբ սրընթացորեն խուժեց օլկադների երկիրը, պաշարեց ու գրոհով գրավեց նրանց գլխավոր քաղաքը[54]։ Կարթագենցիների հաջողությունը օլկադների մյուս քաղաքներին ևս հարկադրեց ճանաչելու Կարթագենի գերիշխանությունը։ Բնականաբար, նրանց հարկման ենթարկեցին (Լիվիոս, 21, 5, 4)։ Կողոպտելով պարտվածներին և ձեռք բերելով հարուստ ռազմավար, Հաննիբալը վերադարձավ ձմեռելու Նոր Կարթագենում։ Այնտեղ նա զինվորների միջև առատաձեռնությամբ բաժանեց ավարը, տալով ոռճիկ, որով ավելի ուժեղացրեց թե՛ զորքում ծառայող կարթագենցի քաղաքացիների և թե՛ վարձկանների համակրանքն իր նկատմամբ (Լիվիոս, 21, 5, 5)։

Մեզ համար էական նշանակություն ունի օլկադների հասարակական-քաղաքական կարգին առնչվող խնդիրը, քանի որ կարևոր է (չխոսելով արդեն մյուս նկատառումների մասին) իմանալ, թե զարգացման ինչպիսի մակարդակի վրա էին գտնվում իսպանական այն ցեղերն ու ազգությունները, որոնց հետ բախվեց Հաննիբալը։ Սակայն մենք կարող ենք ելնել սոսկ այն բանից, որ օլկադների բնակավայրերը Պոլիբիոսը կոչում է հունարեն πόλις բառով, իսկ Լիվիոսը դրա լատիներեն համարժեքով՝ urbs։ Դրանց մեջ կար մեկը, որ ամենից զորեղն էր ու գլխավորը։ Բացառված չէ, որ նշված գրողների պատկերացմամբ, օլկադները ստեղծել էին «քաղաքների» միություն։ «Քաղաքներից» մեկը գերիշխում էր մյուսներին։

220 թ. գարնանը Հաննիբալն արշավանքի դուրս եկավ վակկեյների դեմ, որոնք բնակվում էին Դուրիս գետի միջին հոսանքում, և, հաղթահարելով համառ դիմադրությունը, նրանց երկրում գրավեց կարևորագույն քաղաքներ Սալամանտիկան (Պոլիբիոսի մոտ (3, 14, 1)՝ Գելմանտիկան, Լիվիոսի մոտ (21, 5, 6)՝ Գերմանդիկան) և Արբոկալան։

Հարավային Գվադատամայից[55] դեպի նոր Կարթագեն վերադարձի ճանապարհին հաղթական զորավարը հանդիպեց մի հակառակորդի հետ՝ կարպետաններին. ջախջախումից հետո փրկված օլկադներն ու վակեյները, որոնք փախել էին Սալամանտիկայից, նրանց դրդել էին դիմել զենքի (Պոլիբիոս, 3, 14, 3, Լիվիոս, 21, 5, 7)։ Թե՛ իրենց՝ կարպետանների և թե՛ նրանց հորդորողների դատողությունների տրամաբանությունը ակնհայտ է. երեկ ջախջախվել են օլկադները, այսօր՝ վակեյները, վաղն, անկասկած, կարպետանների հերթն է գալու։ Ավելի լավ չէ՞ արդյոք կանխել և փորձել ջախջախել թշնամուն, որը չափից ավելի ծանրաբեռնված է կողոպտված բարիքով և հարձակման չի սպասում։

Թշնամիները Հաննիբալին սպասում էին Տագոսի գետանցարանի մոտ, սակայն Հաննիբալը խուսափեց վճռական ճակատամարտից։ Բանակելով գետափին, նա առաջին իսկ հարմարագույն պահին, երբ կարպետանների ճնշումը փոքր-ինչ թուլացավ, ծանծաղուտով անցավ գետը։ Այժմ նրա ու իր հակառակորդի միջև կար բնական հզոր սահմանագիծ ու պատնեշ, որը սակայն այնպես էր դասավորված, որ կարպետանների համար այն ելք էր բացում դեպի գետը։ Հաննիբալն սպասում էր, որ նրանք կփորձեն հետապնդել նահ քաշվող կարթագենական զորքին, և այն ժամանակ իր փղերը և հեծյալները կարպետանական հետևազորին կհանդիպեն գետի մեջ։ Հակառակորդն ընկավ ծուղակը, սխալմամբ հույսը դնելով ըստ երևույթին իր թվական գերակշռության վրա։ Ըստ Պոլիբիոսի (3,14,8) և Լիվիոսի (21,5,11) կարպետանների զորքը օլկադների ու վակեյների հետ միասին հասնում էր 100 հազար մարդու։ Վստահ լինելով, որ Հաննիբալը մարտը չի ընդունել հնարավոր պարտության հանդեպ ունեցած երկյուղից, կարպետանները բարձրագոչ աղաղակներով, չպահպանելով նույնիսկ տարրական կարգը, նետվեցին գետը։ Իրագործելով իր պլանը, Հաննիբալը Տագոսի մեջ մտցրեց իր մոտ եղած, թվով 40 փղերին և հեծելազորը։ Ճակատամարտի ժամանակ կարպետանական զորաջիները փոքր իսկ լուրջ և կազմակերպված դիմադրություն ցույց չտվեցին։ Դժվարությամբ շոշափելով ծանծաղուտը, ձիերից զրկված, նրանք անզոր էին հեծյալների և փղերին քշողների առաջ։ Կարպետանական հետևազորայինների մեծ մասը զոհվեց անհավասար մարտում, շատերը ջրահեղձ եղան։ Կարպետանների վերջին շարքերը շուտ եկան դեպի ափ, սակայն մինչ նրանք կկարողանային գրավել պաշտպանական դիրքեր, Հաննիբալն իր հետևակազորը դասավորելով քառանկյունաձև մտցրեց գետը և, հասնելով հանդիպակաց ափին, կարպետանական զորքի բարոյալքված մնացորդներին մատնեց խուճապահար փախուստի։ Հրով ու սրով անցնելով Կարպետանիայով, Հաննիբալն այն

[illegible] Կարթագենին (Պոլիբիոս, 3, 14, 2—8, Լիվիոս, 21, 5, [illegible])։

Տագոսի մոտ տարած հաղթանակը ունեցավ բացառիկ քաղաքական նշանակություն։ Այժմ Հաննիբալի հսկողության տակ ընկավ Պիրենեյան թերակղզու՝ Իբերից դեպի հարավ ընկած ամբողջ տարածքը, բացառությամբ Սագունտումի (Պոլիբիոս, 3, 14, 9, Լիվիոս, 21, 5, 17, Հուստինոս, [illegible], 5, 61)[56]։ Հետագայում մենք կտեսնենք, որ այդ հաջողությունները պատրանքային էին և, որ Պիրենեյան թերակղզում կարթագենցիների տիրապետությունը աչքի չէր ընկնում ո՛չ ամրությամբ և ո՛չ էլ կայունությամբ, իսկ նրա բնակչությունը, այդ թվում նաև փյունիկյան գաղութները, [illegible] պահին պաշտպանում էին հռոմայեցիներին[57]։ Սակայն այդ [illegible] դեռևս առջևում էր։ Իսկ առայժմ փայլուն հաղթանակներով արբեցած, իր թիկունքում ունենալով ավերված, հնազանդեցված, «խաղաղեցված» երկրներ, Հաննիբալն իրեն զգում էր բավականին ուժեղ, որպեսզի մարտահրավեր նետեր Հռոմին։ Որոշ իմաստով Տագոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտն իրենով նշանավորեց Արևմտյան Միջերկրածովի երկրների պատմության կարևոր դարաշրջանի՝ Պունիկյան II պատերազմի նախապատրաստման ժամանակաշրջանի ավարտը։

Տագոսի մոտ տարած հաղթանակը առանձնահատուկ տեղ է գրավում նաև իր՝ Հաննիբալի կենսագրության մեջ։ Այստեղ նա առաջին անգամ դրսևորեց իր տակտիկական արտասովոր ընդունակությունները, ցուցաբերեց խիզախ վճիռներ կայացնելու կարողությունը, փշրելով սահմանված ռազմական կանոնները և իր օգտին ծառայեցնելով տեղանքի այն առանձնահատկությունները, որոնք առաջին հայացքից անխուսափելի պարտություն էին խոստանում։ Եթե Հաննիբալը Տագոսից այն կողմ չանցներ, նրա զորքը սեղմվելով գետի ափին, իհարկե, կճզմվեր հակառակորդի գերակշիռ ուժերից։ Սակայն պունիկյան հրամանատարը, իր համար առավել նպաստավոր պայմաններում, թշնամու վրին փաթաթեց ճակատամարտը և շահեց հաղթանակ։

Այժմ Պիրենեյան թերակղզում Հաննիբալի քաղաքականության անմիջական նպատակը դարձավ գրավել Սագունտումը՝ Զակինթոսի հնագույն այն գաղութը, որի հիմնադրման գործում մասնակցություն էին ունեցել նաև ռուտուլական Արդեայից եկածները (Լիվիոս, 21, 7, 2)[58], որը, սակայն, III դ. արդեն իբերական քաղաք էր (ինչպես ցույց են տալիս սագունտումական դրամները, այն բնակեցնում էր արսաք ցեղը)[59]։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրը վկայում է Սագունտումի հարստության մասին, որի համար քաղաքը պարտական էր ծովային առևտրի ու երկ-

բագործության բուռն թափով զարգացմանը, բնակչության աճին և բարքերի խստությանը (Լիվիոս, 21, 7, 3)։ Ակներև է Տիտոս Լիվիոսի վերջին դիտողության՝ Սագունտումը իդեալականացնելու միտումը։ Սակայն հարստությունը չէր, որ գայթակղում էր Հաննիբալին, երբ նա ռազմական գործողություններ ձեռնարկեց այդ քաղաքի դեմ. Սագունտումը գրավելուց հետո միայն նա կարող էր շարժվել դեպի հյուսիս։ Սակայն եթե Հաննիբալը մինչ այդ գոնե անմիջականորեն չէր դիպչում Հռոմի շահերին, խստիվ գործելով Հասդրուբալի ստանձնած պարտավորությունների շրջանակներում, ապա այժմ նրա մտահղացումների իրագործումը սպառնում էր բախում առաջացնել Հռոմի հետ, մանավանդ որ Սագունտումն այդ ժամանակ արդեն ուներ հռոմեական դաշնակցի իրավական դրություն, և նրա անվտանգությունը ինչ-որ ձևով երաշխավորել էր դեռևս Հասդրուբալը։ Այնուամենայնիվ Հաննիբալը կարող էր հույս դնել այն բանի վրա, որ Հռոմը, որի ձեռքերը կապված էին Իտալիայի հյուսիսում գալլերի դեմ մղվող երկարատև ու ծանր պայքարով, ինչպես նաև Բալկանյան թերակղզում իլլիրիական ծովահենների դեմ տարվող պայքարով, չէր կարող գործուն միջամտություն ունենալ իսպանական գործերին և, ինչպես կտեսնենք հետագայում, այդ հաշիվը (եթե այն գոյություն ուներ) ընդհանուր առմամբ արդարացավ։

Հաննիբալի համար քաղաքական բարենպաստ մթնոլորտ էր ստեղծում «կուսակցական» պայքարը Սագունտումում։ Սկզբնաղբյուրը (Պոլիբիոս, 3, 15, 7) չի ասում, թե ինչ պատճառով, իսկապես ասած, տեղի ունեցան ընդհարումները, այնուամենայնիվ, և՛ ամբողջ իրադրությունը, և՛ հատկապես Հռոմի նոնդուն գործողությունները ցույց են տալիս, որ խոսք կարող էր լինել միայն մի բանի մասին. արդյոք հավատարիմ մնալ Հռոմի հետ ունեցած դաշինքին, թե՞ կամավորապես անցնել Կարթագենի կողմը և ընկնել նրա գերիշխանության տակ։ Վերացնելով խողովությունները և մահապատժի ենթարկելով սագունտումական ավագանու մի քանի ներկայացուցիչների, որոնք հավանորեն թշնամի էին հռոմեամետ կողմնորոշմանը, հռոմայեցիները, խառնվելով Սագունտումի գործերին, ի դեմս հանեցին Սագունտումում Կարթագենի հետ դաշինքի կողմնակիցների վրա Հաննիբալի դրած հույսերը. եթե ընդունենք, որ նա իրոք տածում էր նման հույսեր։ Դեռ ավելին. դրանք ցույց տվեցին, որ Հռոմը երբեք չի հաշտվի Սագունտումի կորստյան հետ, Հաննիբալը հռոմեական կառավարությանը կկանգնեցնի Կարթագենին պատերազմ հայտարարելու անհրաժեշտության առաջ։ Հաննիբալը հենց դրան էլ ձգտում էր։ Հարկավոր էր միայն շտապել, որպեսզի Սագունտումին օգնելու համար չհայտնվեին հռոմեական լեգեոնները, որպեսզի նրանք Հաննիբալի վրա

պատերազմ չփաթաթեին Իսպանիայում, չխանգարեին նրան Պիրենեյան թերակղզում կլորացնելու պունիկյան տիրույթները և մեկնելու Իտալիա՝ այն նվաճելու համար։

Հաննիբալը ձգտում էր հասնել իր քաղաքական այս նպատակներին, անմիջականորեն գործելով կարթագենա-հռոմեական համաձայնությունների շրջանակներում։ Ուղղակի բախման մեջ չմտնելով դեպի Հռոմը կողմնորոշված Սագունտումի կառավարության հետ, նա, Տիտոս Լիվիոսի (21, 6, 1—2) խոսքերի համաձայն, ընդհարումներ էր առաջացնում Սագունտումի և Կարթագենի գերիշխանության ոլորտում գտնվող հարևան իբերական ցեղերի (գլխավորապես տուրդուլների[50]) միջև, կողմերին առաջարկելով իր ծառայությունները, որպես միջնորդի։ Հաննիբալը հույս ուներ Սագունտումին պարտադրել այնպիսի վճիռ, որն այդ քաղաքը կախման մեջ կդներ Կարթագենից, Հռոմին ձևական առիթ չտալով պատերազմ հայտարարելու։

Ապպիանոսի մոտ (Ապպ., Իսպ., 10) պահպանված ավանդությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանելու քաղաքական այդ խաղի մի քանի մանրամասներ։ Համաձայն նրա խոսքերի, Հաննիբալը համոզել է տորբոլետաներին (այսինքն՝ տուրդուլներին), իրեն բողոք ներկայացնել սագունտումցիների, որպես տորբոլետաների երկիրը ներխուժողների և նրանց ամեն կերպ ճնշողների դեմ։ Ստեղծելով ընդհարման իրավիճակ, Հաննիբալը, որոշում չընդունեց և տորբոլետական դեսպաններին ուղարկեց Կարթագեն, որպեսզի այնտեղ խորհրդի առաջ նրանք շարադրեն իրենց պահանջները, և միաժամանակ իր կողմից խորհրդին ուղարկեց նամակ, որտեղ ամենամռայլ գույներով նկարագրեց գործերի վիճակը. հռոմայեցիները կարթագենցիներին հպատակ իբերական ցեղերին համոզում են անջատվելու, իսկ սագունտումցիները ամեն կերպ օժանդակում են հռոմեական գործակալներին։ Խորհրդի որոշումը, որն անշուշտ նշանակված էր իր իսկ Հաննիբալի և բարկյական խմբավորման կողմնակիցների կողմից, լիովին բավարարում էր իրեն. նրան հրամայվեց Սագունտումի վերաբերմամբ գործել այնպես, ինչպես ինքը անհրաժեշտ կհամարեր։

Դժվար է գերագնահատել այս քայլի նշանակությունը. այն ցույց տվեց, որ Հաննիբալը ոչ միայն տաղանդավոր զորավար է, այլև արտասովոր քաղաքական գործիչ։ Հաննիբալը Կարթագենի հասարակական կարծիքին ցույց տվեց, որ նա խորին ակնածությամբ է համակված պետական իշխանության բարձրագույն մարմինների նկատմամբ, և, ինչպես գրել է հայրենիքի հավատարիմ ու համեստ ծառային, պատշաճ խոնարհությամբ սպասում է նրանց հրամաններին։ Դրական պատասխան

ստանալով իր նկրտումների համար, Հաննիբալը կարթագենյան խորհրդին կաշկանդեց հենց նրա սեփական որոշումներով. այժմ նա հանդես էր գալիս ոչ թե որպես զորավար, որն իր վրա վերցնելով անբարեհաջող հետևանքների համար պատասխանատվությունը, բարդ արկածախնդրական խաղ է խաղում, որպեսզի Կարթագենը ներքաշի վտանգներով հղի պատերազմի մեջ, այլ որպես մի մարդ, որը կատարում է խորհրդի որոշումները, իմա՝ գործում է, խստիվ ընթանալով պաշտոնական քաղաքականության հունով։ Այժմ կարթագենյան խորհուրդը, նույնիսկ եթե նա կամենար (իսկ նա բոլորովին այդ չէր ցանկանում), ի վիճակի չէր լինի հրաժարվելու Հաննիբալից։ Սագունտումի դեմ նրան գործողությունների ազատություն ընձեռելով, խորհուրդը,— և դա բոլորը քաջ գիտակցում էին,— կանխորոշեց պատերազմը Հռոմի դեմ։

Այժմ արդեն Հաննիբալի ձեռքերն ազատ արձակվեցին։ Նա վերստին իր մոտ հրավիրեց տորբոլետներին, և այս անգամ՝ Սագունտումի ներկայացուցիչներին, որոնք սակայն հայտարարեցին, որ վճիռը կհանձնեն Հռոմի դատարանին։ Այլ կերպ ասած, նրանք հրաժարվեցին ճանաչել Կարթագենի գերագույն իշխանությունը, Հաննիբալն ընդհատեց բանակցությունները, իր ճամբարից, ինչպես պատմում է Ապպիանոսը, դուրս քշեց սագունտումցիներին, խուժեց Սագունտումի երկրամաս, ավերեց նրա շրջակայքը և, իր զորքը բաժանելով երեք մասի, շրջապատեց քաղաքը։

Այն ժամանակ, երբ դեռ Հաննիբալը հարձակում էր նախապատրաստում Սագունտումի վրա, վերջինիս բնակիչները դիվանագիտական եռանդուն գործունեություն ծավալեցին, որպեսզի Հռոմին դրդեն գործուն կերպով միջամտելու իսպանական գործերին (Պոլիբիոս, 3, 15, 1, Լիվիոս, 26, 6, 1)։ Սակայն մեր ձեռքի տակ եղած աղբյուրները տարբեր կերպ են նկարագրում հռոմայեցիների գործողությունները։ Ըստ Տիտոս Լիվիոսի (12, 6, 3—5), սենատը վճռեց Իսպանիա ուղարկել պատվիրակների, որոնք տեղում պետք է ուսումնասիրեին գործերի վիճակը և, եթե անհրաժեշտ գտնեին, Հաննիբալից պետք է պահանջեին հանգիստ թողնել հռոմեական ժողովրդի դաշնակից Սագունտումին, ապա մեկնեին Կարթագեն և այնտեղ շարադրեին սագունտումցիների բողոքները։ Մինչ պատվիրակների ճանապարհ ընկնելը, Սագունտումի պաշարման մասին լուրը հասավ Հռոմ, և սենատում նշանակվեց Սագունտումին վերաբերող գործերի նոր քննարկում։ Պոլիբիոսն (3, 15, 2—13) իրադարձությունների ընթացքն այլ կերպ է պատկերում. նրա մեկնաբանությամբ, հռոմեական այն նույն պատվիրակությունը, որը Լիվիոսի վկայությամբ որոշված էր սենատի կողմից, եղավ Հաննիբալի մոտ։ Հաննիբալը նրան

[illegible] Նոր Կարթագենում։ Բնական է, որ բանակցությունների առարկա դարձավ Սագունտումը։ Հռոմայեցիները պահանջում էին, որպեսզի Հաննիբալը ետ քաշվի Սագունտումից և չանցնի Իբերը, ինչը նախատեսված էր նաև Հասդրուբալի երդմամբ. պատասխանելով պատվիրակներին, Հաննիբալը հռոմայեցիներին մեղադրեց այն բանում, որ նրանք միջամտել էին Սագունտումի գործերին և մահավճիռ էին կայացրել տեղական [illegible] մի քանի ներկայացուցիչների նկատմամբ։ Նա ասաց (ըստ Պոլիբիոսի պատումի), որ կարթագենցիները չեն կարող վրիժահատույց [illegible] այդ հանցագործության համար։ Միաժամանակ Հաննիբալը Կարթագենից պահանջեց ցուցումներ, թե ինքն ինչպիսի քաղաքականություն [illegible] է հետևի, քանի որ սագունտումցիները, ապավինելով Հռոմի հետ [illegible] դաշինքին, ամեն տեսակ սանձարձակություններ են կատարում [illegible]արթագենահպատակների նկատմամբ։ Այստեղ Պոլիբիոսն ընդհատում է իր պատմությունը, և մենք նրանից չենք տեղեկանում, թե Հաննիբալն ինչպիսի պատասխան է ստացել իր կառավարությունից։ Հռոմեական պատվիրակները, բավարար պատասխան չստանալով Հաննիբալից և պարզորեն տեսնելով, որ Հռոմին պատերազմ է սպասում, մեկնեցին Կարթագեն, որպեսզի կարթագենյան կառավարությանը անմիջականորեն հայտնեն իրենց պահանջները։ Այս պատվիրակության (եթե ընդունենք, որ այն իրոք եղել է) հետագա ճակատագրի մասին մենք տեղեկություններ չունենք։

Պոլիբիոսի պատմության մեջ տեղեկությունների կցկտուր լինելը չէ միայն, որ ուշադրություն է գրավում։ Այն հիմնական կետերում խիստ հիշեցնում է Տիտոս Լիվիոսի պատմածն այն պատվիրակության մասին, որը հռոմայեցիներն ուղարկեցին Հաննիբալի մոտ և Կարթագեն՝ պաշարումն սկսվելուց հետո։ Տարակարծության հիմնական կետը այն է, որ վերջին անգամ Հաննիբալը չընդունեց պատվիրակներին։ Սագունտումցիների գործողությունների առնչությամբ Կարթագենից հրահանգներ պահանջելու միջադեպը ևս իր զուգահեռներն ունի սագունտումցիների և [illegible]ների միջև Հաննիբալի միջնորդության վերաբերյալ պատումի մեջ։ Այս բոլորը թույլ է տալիս կարծելու, որ Պոլիբիոսը տվյալ իրադրությանն է վերագրել այնպիսի իրողություններ, որոնք փաստորեն տեղի են ունեցել կա՛մ մինչ այդ, կա՛մ ավելի ուշ ժամանակ, և հետևաբար տվյալ դեպքում ճշմարտությանն ավելի մոտ է Լիվիոսը, որն այստեղ Պոլիբիոսից անկախ հենվում է հռոմեական ավանդության վրա։ Ի՞նչն է [illegible]պել Պոլիբիոսին (եթե մեր արած ենթադրությունները ճիշտ են) դիմելու ճշմարտության գիտակցաբար խեղաթյուրմանը։ Բացառված չէ, որ Պոլիբիոսը, որը մոտիկ էր այդ տարին Հռոմում ականավոր, Ինարա-

վոր է նաև, վճռորոշ դեր կատարող Սկիպիոնների[61] հետ, ձգտել է հռոմեական կառավարության վրայից վերցնել մեղադրանքն այն մասին, որ նա ոչ մի քայլ չի ձեռնարկել Սագունտումը խիստ վտանգավոր թշնամուց պաշտպանելու համար։

Այսպիսով, ամենից հավանականը պետք է համարել հետևյալը. մինչ հռոմեական սենատը քննարկում էր դրությունն Իսպանիայում, Հաննիբալն սկսեց Սագունտումի պաշարումը (219 թ.)[62]։ Պետք է ասել, որ ռազմական այդ գործողությունը (հատկապես մինչ նրա վիրավորվելը), ի տարբերություն նախորդ և դրանից հետո տեղի ունեցածների, պունիկյան զորավարը կատարեց արտակարգ ցածր տակտիկական մակարդակով։ Առաջիկայում մենք կտեսնենք, որ նրան հաջողվեց գրավել քաղաքը բացառապես կենդանի ուժի հսկայական գերակշռության և հռոմայեցիների՝ բացարձակորեն չմիջամտելու շնորհիվ։ Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Հաննիբալը քաղաքային պարիսպների քանդման տեղն ընտրեց ծայրահեղ անհաջող՝ ճիշտ նրա այն անկյունում, որը մյուս մասերից ավելի էր դուրս գալիս հարթ ու արձակ դաշտահովտի մեջ։ Այնտեղ շատ դյուրին էր մոտեցնել վիներ[63] և խոյեր։ Սակայն նա հաշվի չէր առել, որ հենց այդտեղ էր գտնվում հսկայական աշտարակը, որ հատկապես այդտեղ պարիսպն ավելի բարձր էր, քան մյուս տեղերում։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ հենց այդ կետի պահպանությունը հանձնարարված էր «ընտրյալ երիտասարդությանը»՝ սագունտումական զորայինների ամենահուսալի և մարտունակ ջոկատին։ Հարաժամ նետաձգությամբ նրանք կարթագենցիներին պարիսպներից պատկառելի հեռավորության վրա էին պահում, թույլ չտալով հարմարանքներ մոտեցնել և սկսել պաշարողական աշխատանքները։ Անընդմեջ դիմելով անսպասելի հարձակումների, սագունտումցիները մեծ վնաս հասցրեցին կարթագենցիներին. ինքը՝ Հաննիբալը, որ գործուն մասնակցություն ուներ ընդհարումներում, տեղով ծանր վիրավորվեց ազդրից և ցած ընկավ, որը կատարյալ խուճապ առաջացրեց պաշարողների մեջ։

Քանի դեռ Հաննիբալը վերքն էր բուժում, կարթագենցիները եռանդուն ռազմական գործողություններ չէին վարում, բավականանալով բացառապես քաղաքի շրջափակմամբ, բայց այնուամենայնիվ նրանք ուժեղ կերպով պաշարողական կառույցներ էին կանգնեցնում, իսկ սագունտումցիները՝ ամրություններ։ Հավանաբար այդ շրջանում Հաննիբալը վերանայել է ավելի վաղ իր ընդունած զորակարգը, որը ոչ միայն չհանգեցրեց ցանկալի հետևանքի, այլև նախաձեռնությունը տվեց հակառակորդի ձեռքը։ Նա որոշեց պարսպի խորտակումն սկսել միաժամանակ մի քանի կետերում, որը հնարավորություն կտար օգտագործելու և՛ տեխ-

նիկան, և՛ թվական գերակշռությունը։ Խոյերն սկսեցին գործել։ Պարսպապատերին սկսեցին երևան գալ ճեղքեր։ Եվ հանկարծ ահռելի դղրդյունով փուլ եկան երեք աշտարակներն ու նրանց միջև եղած պարսպամասը։ Սկսվեց ճակատամարտ, ոչ թե անկանոն, ինչպես դա լինում է նման դեպքերում, այլ, նշում է Լիվիոսը, ռազմական արվեստի բոլոր կանոնների համաձայն։ Զինվորները՝ թե՛ սագունտումցիները և թե՛ կարթագենցիները, դասավորվեցին մարտակարգով. պունիկացիները չկարողացան հաղթահարել քաղաքացիների դիմադրությունը և ստիպված եղան նահանջել։ Սագունտումցիները սկզբում նրանց ետ մղեցին դեպի պարիսպների ավերակները, ապա ստիպեցին փախչել ճամբարի կողմը։ Հենց այդ պահին, երբ թվում էր, թե նոր պարտությունը վտանգի տակ էր դրել Հաննիբալի հիմնական մտահղացումը՝ Սագունտումի գրավումը և, հետևաբար, պատերազմը Հռոմի դեմ, ժամանեց հռոմեական պատվիրակությունը։

Ինչպես մենք արդեն վերևում ասել ենք, Սագունտումի պաշարման վերաբերյալ լուրը հռոմեական սենատին հարկադրեց մեկ անգամ ևս վերանայել ամբողջ քաղաքական իրադրությունը։ Տիտոս Լիվիոսի վկայությամբ (21, 6, 6—8), սենատում կարծիքները տարամիտվեցին. ոմանք պնդում էին այն բանի վրա, որպեսզի կոնսուլների համար որպես պրովինցիաներ (այսինքն՝ հատուկ առաջադրանքի բնագավառներ) նշանակվեն Իսպանիան և Աֆրիկան, պատերազմը վարելով ցամաքում և ծովում. ուրիշներն առաջարկում էին ռազմական բոլոր գործողությունները կենտրոնացնել Իսպանիայում, ուղղելով դրանք Հաննիբալի դեմ, մյուսները խորհուրդ էին տալիս սպասել, մինչև որ տեսնեն, թե պատվիրակներն ինչ են բերելու Իսպանիայից, և այն ժամանակ արդեն կայացնել վերջնական որոշումը։ Հաղթեց վերջին տեսակետը. պատվիրակներ նշանակեցին Պուբլիոս Վալերիոս Փլակկոսին և Քվինտոս Բեբիոս Տամփիլիոսին, նրանց հանձնարարվեց այցելել Սագունտում, Հաննիբալից պահանջել, որպեսզի քաղաքից ետ քաշի իր զորքերը և, եթե նա հրաժարվի, մեկնել Կարթագեն և այնտեղ իտալական հինավուրց սովորույթի համաձայն, պահանջել հանձնելու հենց Հաննիբալին, որպես պայմանագիրը խախտողի, պատժելու համար։ Դիոն Կասսիոսից բխող ավանդության (Զոնարաս, 8, 2) համաձայն, ռազմական գործողություններն անմիջապես սկսելու և Աֆրիկա ու Իսպանիա ներխուժելու օգտին արտահայտվեց Լուկիոս Կորնելիոս Լենտուլոսը, որը մոտիկ էր կանգնած Էմիլիոսների և Սկիպիոնների արիստոկրատական խմբավորմանը։ Էմիլիոսների և Սկիպիոնների հանդեպ թշնամաբար տրամադրված սենատական մյուս «կուսակցության» ղեկավար Քվինտոս Ֆաբիոս Մաքսիմոսն առաջարկեց ուշադրություն դարձնել

բակությունը[64]։ Նա ի նկատի ուներ մասնավորապես, որ եթե բանակցությունները ձախողվեն, ապա պատերազմի սանձազերծման համար մեղքը բարդել Կարթագենի կառավարության վրա։ Հետաքրքիր է, որ Պոլիբիոսը (3, 20, 1—5) խիստ կտրուկ ձևով ժխտում է հետագա գործողությունների առթիվ Հռոմում տեղի ունեցած խորհրդակցությունների մասին պատմածները։ Նա հավաստում է, որ սենատը Սագունտումի անկման մասին լուրն ստանալուց հետո միահամուռ որոշել է սկսել պատերազմը և համապատասխան պատվիրակություն է ուղարկել Կարթագեն։ Մինչ այդ սենատի տատանումները, եթե նույնիսկ ի նկատի չառնենք Հռոմում ընթացող ներքաղաքական պայքարը, հեշտ է բացատրել. Հռոմին Իլլիրիայում դեռ պատերազմ էր սպառնում։ Այդ սպառնալիքն արագորեն զգալ էր տալիս իրեն (Պոլիբիոս, 3, 16—19), և քանի դեռ հռոմայեցիներն այնտեղ չէին ամրապնդել իրենց տիրապետությունը, նրանք չէին կարող մտածել Կարթագենի դեմ լուրջ ու երկարատև պատերազմի մասին[65]։ Դժվար է հավատալ Պոլիբիոսին նաև այն բանում, որ սենատն սկսել է գործը քննել միայն Սագունտումի անկումից հետո։ Չէ՞ որ խոսքը Հռոմի ընդարձակման, նրա գերիշխանության ոլորտի ընդլայնման մասին էր, իսկ դրանում շահագրգռված էին հռոմեական հասարակության ազդեցիկ շրջանները, որոնց շահերն էլ հենց ներկայացնում էր Էմիլիոսների և Սկիպիոնների խմբավորումը[66]։

Ինչպես էլ որ եղած լինի (մենք հետևում ենք Տիտոս Լիվիոսի (21, 9, 3—11) պատմածին, որն ավելի հավաստի է թվում), տեղեկանալով հռոմեական պատվիրակության ժամանման մասին (Ապպիանոսի վկայության համաձայն (Ապպ., Իսպ., 11), նրա հետ ներկայացան նաև Սագունտումի պատվիրակները, որոնք գտնվում էին Հռոմում), Հաննիբալը խիզախ քայլի դիմեց. հրաժարվեց ընդունել Փլակկոսին և Տամփիլիոսին։ Նրա կարգադրությամբ պատվիրակներին հայտնեցին, որ նրանց անվտանգությունը չի կարող երաշխավորվել, իսկ ինքը՝ զորավարը, այդպիսի վտանգավոր իրավիճակում հնարավորություն չունի ունկնդրել նրանց[67]։ Կանխամտածված այս վիրավորանքը հռոմայեցիներին պետք է ստիպեր առաջադրելու անընդունելի պահանջներ և հանգեցներ բանակցությունների վիժեցմանը։ Հասկանալով, որ այժմ պատվիրակները կմեկնեն Կարթագեն, Հաննիբալն իր հերթին նամակներ հղեց բարկյական խմբավորման ղեկավարներին, որպեսզի նրանք կանխորեն նախապատրաստվեին։ Դատելով ըստ Տիտոս Լիվիոսի պատմածի, ամեն ինչ հիանալիորեն իրագործվեց. բարկյան խմբավորմանը հաջողվեց խորհրդում ցուցադրել քաղաքական միասնություն[68]։ Միակը, որ համարձակվեց Կարթագենյան խորհրդում պաշտպանել հռոմայեցիների պահանջները,

Բարկյանների հին թշնամի Հաննոնն էր, սակայն նրա վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց։

Իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ է շարադրում Զոնարասը (8, 22), որը, սակայն, դրանք արդեն կապում է պատերազմը ձեռակալելն հայտարարելու համար ժամանած պատվիրակության հետ։ Ըստ Զոնարասի, բարկյական խմբավորման տեսակետն արտահայտում է Հասդրուբալ, որին ապարդյունորեն առարկում է Հաննոնը։ Դա մնաց անհետևանք, թեև ծերերը և նրանք, ովքեր հիշում էին Հռոմի դեմ մղած առաջին պատերազմը պաշտպանեցին նրան. երիտասարդությունը և Բարկյանների կողմնակիցները վճռականորեն առարկեցին նրան։ Համաձայն այդ պատումի, Հասդրուբալը, խոսելով «հին ազատությունը» ձեռք բերելու մասին, բացահայտորեն պատերազմի կոչ էր անում, քանի որ նրա պատկերացմամբ խաղաղ զարգացման հետևանքը ստրկությունն էր։ Այնուամենայնիվ Լիվիոսի և Զոնարասի մեկնակերպերը հեշտությամբ կարելի է համաձայնեցնել, ընդունելով, որ հակաբարկյական «կուսակցության» միակ հռետոր իրոք հանդես է եկել Հաննոնը, այն դեպքում, երբ նրա կողմնակիցները մասնավոր զրույցներում իրենց համակրանքն էին արտահայտում նրա նկատմամբ, չհամարձակվելով (տեսնելով իշխող տրամադրությունը) խորհրդի նիստում պաշտպանել իրենց քաղաքական դիրքավորումը[69]։

Տիտոս Լիվիոսն իր երկասիրության մեջ բերում է Հաննոնի ելույթը (21, 10), որը փաստորեն հորինել է հենց ինքը՝ Լիվիոսը։ Այստեղ կարթագենցիների վարքն այն աստիճան ակնհայտորեն է հակադրված հին հռոմեական առաքինություններին՝ հավատարմությանը, բարեպաշտությանը և այլնին[70], որ այն ոչ թե պատմական վավերագիր, այլ Լիվիոսին ժամանակակից բարքերի այլասերման դեմ ուղղված պարսավագրի տպավորություն է թողնում։

Ընդհանուր առմամբ, Կարթագեն մեկնելը հաջողություն չբերեց հռոմայեցիներին։ Կարթագենցիները մեղադրեցին Սագունտումին՝ իրենց հպատակների նկատմամբ ապօրինի արարքների համար (Ապպ., Իսպ., 12) և իրենց վերջնական պատասխանը ձևակերպեցին հետևյալ կերպ (Լիվիոս, 21, 11, 2). «Պատերազմն սկսվել է ոչ թե Հաննիբալի, այլ սագունտումցիների կողմից։ Հռոմեական ժողովուրդն անարդարացի կվարվեր, եթե սագունտումցիներին գերադասեր Կարթագենի հետ ունեցած հնագույն դաշինքից»։ Դրանով հռոմեական պատվիրակները վերադարձան հայրենիք։

Նույն այդ ժամանակ Սագունտումի պաշարումը մտավ նոր փուլի մեջ։ Լուրջ պարտություն կրելով քաղաքի պարսպի բացվածքի մոտ, Հան-

նիբալը որոշեց մի քանի օր հանգիստ տալ իր զինվորներին (սագունտումցիներն օգտվեցին դադարից, որպեսզի ավերված պարիսպների տեղում կանգնեցնեն պաշտպանական նոր կառույցներ)։ Անհաջողությունը ցույց տվեց, թե իսկապես որքան ցածր է կարթագենյան զորքի մարտական ոգին, և Հաննիբալն անում էր այն ամենը, ինչը կարող էր բարձրացնել նրա մարտունակությունը, խոստանում-պարգևներ և գլխավորապես խոսք էր տալիս, որ Սագունտումի գրավման դեպքում ձեռք բերված ամբողջ ռազմաավարը բաշխելու է զինվորներին։ Ինչպես երևում է, Հաննիբալը լավ էր ճանաչում իր զեկավարության տակ ծառայող վարձկաններին։ Եվ նա չսխալվեց իր հաշիվներում։ Լիվիոսը (21,11,4) գրում է, որ նրանք «բոլորն այն աստիճանի գրգռված էին, որ եթե այդ պահին (երբ Հաննիբալն արտասանեց իր ճառը—Ի. Կ.) ազդանշան տրվեր, թվում էր, թե ոչ մի ուժ չէր կարող դեմ կանգնել նրանց»։

Կարթագենցիները նոր հարձակումն սկսեցին միաժամանակ շատ կետերում, այնպես որ սագունտումցիները նույնիսկ չգիտեին, թե որտեղ պետք է կենտրոնացնեն իրենց ուժերը։ Ինքը՝ Հաննիբալը գտնվում էր պաշարողական շարժական աշտարակի մոտ, որը բարձր էր քաղաքային բոլոր ամրություններից։ Աշտարակի վրա տեղակայված բարաններից, քարաձիգ մեքենաներից Սագունտումի պարիսպները, ենթարկելով ուժգին հարվածների, Հաննիբալը քաղաքի պաշտպաններին ստիպեց պահվել թաքստոցներում, ապա 500 զինվոր ուղարկեց ավերելու հենց նոր կառուցված ամրությունները։ Ճեղքվածքների միջով կարթագենցիները վերջապես մտան քաղաք, որտեղ գրավելով ինչ-որ բարձունք, բարանները և քարաձիգ մեքենաները տեղափոխեցին այնտեղ և այն շրջապատեցին պարսպով։ Այդպիսով կարթագենցիները ամրացված դիրքեր ձեռք բերեցին Սագունտումում. քաղաքի ճակատագիրը կանխորոշված էր։ Շրջապատման օղակը հետզհետե սեղմվում էր. սագունտումցիները շարունակ կանգնեցնում էին նորանոր պարիսպներ, որոնք կարթագենցիները գրավելով, հակառակորդին ավելի ու ավելի էին մղում դեպի քաղաքի խորքերը։ Ի լրումն դրա, Սագունտումում սով սկսվեց։

Անսպասելիորեն Հաննիբալի դրությունը բարդացավ. օրիսների (օրեանների) և կարպետանների մոտ բռնկվեցին խռովություններ, որոնք Հաննիբալին կարող էին շեղել Սագունտումից։ Թե՛ նրանց և թե՛ մյուսներին զայրացնում էր այն դաժանությունը, որով անց էին կացվում կարթագենյան բանակի համար կատարվող հավաքագրումները։ Նրանք բռնում էին իրենց մոտ ուղարկված պունիկյան աստիճանավորներին, և թվում էր, թե արդեն պատրաստ էին թոթափելու օտարի լուծը, սակայն Հաննիբալը արագաթաց ու վճռական հարվածով հարկադրեց նրանց զենքը [illegible] դնել։ Միաժամանակ շարունակվում էր պաշարումը (Հաննիբալի [illegible]ությամբ, որը ոչ ոք չնկատեց, այն գլխավորում էր Հիմիլկոնի որդի Մահարբալը)։ Սագունտումի նոր պարիսպների վրա նորանոր անցքեր բացվեցին, և վերջապես, երբ Հաննիբալը վերադարձավ, նրան հաջողվեց գրավել ակրոպոլիսի մի մասը։

Հաննիբալի դեմ դիմադրություն ձևավորելով, սագունտումցիներն, [illegible], հույս էին դրել հռոմայեցիների միջամտության վրա, սակայն [illegible]ությունն օրեցօր ավելի ու ավելի հուսահատական էր դառնում, իսկ հռոմեական զինվորները դարձյալ չէին երևում Սագունտումի պարիսպների տակ։ Ոչ մի տեղից օգնություն չէր սպասվում, և ազդեցիկ սագունտումցիներից մեկը՝ Ալկոնը, դիմեց վերջին միջոցին։ Սեփական նախաձեռնությամբ և նույնիսկ առանց համաքաղաքացիների գիտության նա ներկայացավ Հաննիբալին, հույս ունենալով աղերսել նրան, գթալու դրժբախտ քաղաքին։ Սակայն հանձնման այն պայմանները, որ առաջարկեց նրան հաղթանակի մեջ համոզված կարթագենյան զորավարը, այնպիսիք էին, որ Ալկոնը նույնիսկ չհամարձակվեց դրանց մասին հայտնել սագունտումցիներին և մնաց թշնամու ճամբարում։ Հաննիբալը պահանջեց, որպեսզի սագունտումցիները բավարարեն տուրգուլների բոլոր պահանջները և, նրանց տալով ամբողջ ոսկին ու արծաթը, հեռանան քաղաքից, հետները վերցնելով յուրաքանչյուր մարդու համար միայն մեկական հագուստ, և բնակվեն այնտեղ, որտեղ նրանց կկարգադրի հաղթողը։ Այս պայմանները սագունտումական իշխանություններին հաղորդելը հանձնառավ Հաննիբալի զորքում ծառայող, բայց ավելի վաղ Սագունտումից «բարեկամի» և «հյուրընկալի» (պրոկսենի) իրավունք ստացած իսպանացի Ալորկը, որը կարող էր անձնական անվտանգության հույս ունենալ։ Լսելով այն մասին, թե ինչպիսի վիճակ է սպասում իրենց, սագունտումցիները ոսկե և արծաթե իրերը նետեցին խարույկի մեջ, չցանկանալով, որ դրանք մնան թշնամուն։ Շատերն իրենք էին նետվում կրակի մեջ... Իսկ պունիկացիները նույն ժամանակ ճեղքեցին ամրությունները և վերջապես ամբողջությամբ գրավեցին քաղաքը։ Հաննիբալը հրամայեց կոտորել բոլոր չափահաս քաղաքացիներին, որոնք դեռևս անկանոն դիմադրություն էին ցույց տալիս փողոցներում և այրվող տներում, սակայն հաղթողները չխնայեցին նաև փոքրահասակներին։ Սագունտումը կործանվեց։ Ապպիանոսի (Ապպ., Իսպ., 12) պատմածի համաձայն, սագունտումյան ռազմիկները զոհվեցին պունիկյան զորաճամբարի վրա կատարած դիշերային հարձակման ժամանակ, այն բանից հետո, երբ նրանք անպետքացրին թանկարժեք մետաղը։ Զայրացած Հաննիբալը հրամայեց ոչնչացնել քաղաքի ամբողջ բնակչությանը, ապա այն լցրեց

պունիկյան գաղութաբնակներով։ Ապպիանոսի մոտ հավանաբար միայն պունիկյան գաղութի ստեղծման մասին հաղորդումն է ինչ-որ չափով համապատասխանում ճշմարտությանը։ Սակայն մնացածը վատ է կապակցվում այն ամենի հետ, ինչ հայտնի է Սագունտումի պաշարման մասին։

Եվ այսպես, տվյալ փուլում Հաննիբալի գլխավոր նպատակն իրագործվեց. Սագունտումն ընկավ, և Հաննիբալի զորքերի առաջ անարգել ճանապարհ բացվեց դեպի հյուսիս՝ Իտալիա։ Սակայն նոր ձեռնարկման համար անհրաժեշտ էր բոլորովին այլ տեսակի նախապատրաստություն, և Հաննիբալը վճռեց այդ նպատակով օգտագործել Նոր Կարթագենում ձմեռելը։

Հռոմում Սագունտումի սահմռկեցուցիչ ճակատագրի վերաբերյալ լուրը, ինչպես պետք էր սպասել, առաջացրեց միահամուռ հակազդեցություն՝ հենց այն, ինչին ձգտում էր Հաննիբալը. բոլորն, առանց բացառության, պահանջում էին պատերազմ հայտարարել Կարթագենին։ 218 թվականի կոնսուլների համար (երկուսն էլ Էմիլիոսների-Սկիպիոնների խմբավորումից) որպես պրովինցիաներ, նշանակվեցին Իսպանիան (Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն) և Սիցիլիան ու Աֆրիկան (Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոս, Եվրոպիոսի մոտ (3, 9) այլ կոգնոմեն է՝ Գրակքոս), այլ կերպ ասած՝ նրանք կանխորոշեցին պատերազմը Հաննիբալի դեմ։ Եթե Սկիպիոնին հաջողվեր Հաննիբալին հեռու պահել Իտալիայից, Լոնգոսը պետք է ներխուժեր Աֆրիկա։ Ժողովրդական ժողովում առաջարկ մտցվեց պատերազմ հայտարարել կարթագենյան ժողովրդին։ Հռոմեական սովորույթների համաձայն, անհրաժեշտ ձևականությունների պահպանման համար, Կարթագեն ուղարկվեց պատվիրակություն, որի մեջ մտնում էին Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսը, Մարկոս Լիվիոս Սալինատորը, Լուկիոս Էմիլիոս Պավլոսը, Գայոս Լիկինիոսը և Քվինտոս Բեբիոս Տամփիլոսը։ Ինչպես կարելի է տեսնել, պատվիրակության,-ինչպես նաև կառավարության մեջ գերիշխող դիրք ունեին Էմիլիոսների կողմնակիցները, թեև ղեկավարությունը հանձնվեց Փաբիոսին, որը հայտնի էր խաղաղ կարգավորման նկատմամբ իր ունեցած հակումով։ Այդպիսի ընտրությամբ Հռոմում թերևս կամենում էին ցույց տալ, որ բանակցությունների համար դուռը դեռևս բաց է մնում[7]։ Պատվիրակները պետք է հարցնեին, թե Հաննիբալը կարթագենյան իշխանությունների որոշմա՞մբ է արդյոք պաշարել Սագունտումը, և եթե ստանային դրական պատասխան, պետք է պատերազմ հայտարարեին Կարթագենին։ Լիվիոսի վկայությամբ (21, 18, 3), Փաբիոսը, ոչ մի բառ չավելացրեց այդ ձևակերպմանը։ Ինչպես գրում է Պոլիբիոսը (3, 20, 8) պատվիրակությունը պետք է պահանջեր հանձնել

Հաննիբալին (հմմտ. նաև Ապպ. մոտ, Իսպ., 13)։ Մի կողմ թողնելով այն հարցը, թե Հաննիբալն իր սեփական հայեցողությամբ է գործել, թե իր կառավարության հանձնարարությամբ, քանի որ դա Կարթագենի ներքին գործն էր և չէր վերաբերում հռոմայեցիներին, կարթագենցիները ապացուցեցին, որ Հասդրուբալի հետ հռոմայեցիների կնքած պայմանագիրը, որի մեջ վերապահություն կա Սագունտումի վերաբերյալ, չի հաստատվել պունիկյան իշխանությունների կողմից, և այդ պատճառով նրանց համար կորցրել է իր ուժը։ Հետևաբար հարկ չկա, որպես պատերազմ հայտարարելու պատրվակ, վկայակոչել իսպանական դեպքերը (Լիվիոս, 21, 18, 4—12, Պոլիբիոս, 3, 21, 1—5)։ Պոլիբիոսի վկայությամբ (3, 21, 3—5), կարթագենցիներն ընդգծեցին, որ Պունիկյան I պատերազմից հետո կնքված պայմանագրում, որը Կարթագենի ու Հռոմի միջև փոխհարաբերությունները կարգավորող հիմնական վավերագիրն է, ոչ մի խոսք չի ասվում Իսպանիայի կամ Սագունտումի մասին, այլ միայն խոսք է գնում դաշնակիցների՝ միմյանց վրա չհարձակվելու մասին։ Մինչդեռ Սագունտումը, ինչպես պնդում էին պունիկացիները, Հռոմի դաշնակիցը չէր։ Իրենց հերթին հռոմեական պատվիրակները հրաժարվեցին բանակցություններ վարել որևէ մեկի իրավունքների շուրջը. այդ խոսակցությունները իմաստ կունենային, եթե Սագունտումի անվտանգությունը խախտված չլիներ։ Հենց այժմ Կարթագենի կառավարությունը կա՞մ պետք է հանձնի այդ քաղաքի վրա հարձակման համար մեղավորներին և դրանով իսկ ապացուցի, որ ինքը չի մասնակցել կատարված անօրինականությանը, կա՞մ ճանաչի իրեն որպես դրա մասնակից (Պոլիբիոս, 3, 21, 6—8)։

Երկու կողմերի փաստարկումները, ինչպես երևում է, առաջադրվել էին նախնական բանակցությունների ընթացքում, քանի որ, որքանով որ մենք տեղյակ ենք այդ մասին, կարթագենյան խորհրդի նիստում հռոմայեցիներն ընդհանրապես հարցն ըստ էության չեն քննարկել (Լիվիոս, 21, 18, 13, Պոլիբիոս, 3, 33, 1)։ Լսելով խորհրդի այն անդամի հայտարարությունը, որին հանձնարարվել էր պատրաստել պաշտոնական պատասխան, և հատկապես, կարթագենյան կառավարության կողմից սագունտումական գործերին Հռոմի միջամտության իրավունքի մերժումը, պատվիրակությունն անցավ իր հանձնարարության երկրորդ մասի կատարմանը։ Պաթետիկ տեսարան խաղարկվեց (Պոլիբիոս, 3, 33, 2—4, Լիվիոս, 21, 18, 13—14, Ապպ., Իսպ., 13)։ Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսը իր պարեգոտի փեշը վեր քաշեց և ծայրերից բռնելով ասաց. «Սրանով մենք բերում ենք ձեզ պատերազմ կամ խաղաղություն, ընտրեցեք դրանցից այն, ինչը ձեզ ավելի հարմար է գալիս»։ Նիստում նախագահող

սոֆետը բացականչեց. «Դրանցից տուր այն, ինչ ինքդ ես ցանկանում»։ —Ես ձեզ տալիս եմ պատերազմ,— պատասխանեց Փաբիոսը, փեշը վար թողնելով, և ժողովի մասնակիցների՝ «ընդունում ենք» բարձրագոչ աղաղակների տակ իր ընկերակիցների հետ թողեց դահլիճը[72]։

III

Հաննիբալը հասավ իր ցանկացածին. Պիրենեյան թերակղզում մի քանի ռազմական գործողություններով և հատկապես Սագունտումի պաշարմամբ ու գրավմամբ նա հռոմայեցիներին ստիպեց պատերազմ հայտարարելու Կարթագենին (218 թ.), իսկ կարթագենյան կառավարությունը դրեց այնպիսի կացության մեջ, որ նա արդեն, եթե նույնիսկ կամենար, չէր կարող անհամաձայնություն հայտնել Հաննիբալին և նրան հանձնել թշնամիներին։ Այժմ Հաննիբալը կարող էր պատրաստվել Իտալիա կատարելիք արշավանքին, դրա համար օգտագործելով նոր Կարթագենի ձմեռային բնակատեղերում մնալը։

Նրա առաջին միջոցառումն այն էր, որ նա, ինչքան էլ այդ տարօրինակ է, իր մոտ՝ զորքերում ծառայող իբերներին երկարատև արձակուրդ տվեց և թույլ տվեց նրանց ցրվելու տները (Պոլիբիոս, 3, 33, 5, Լիվիոս, 21, 21, 1—8)։ Ըստ Պոլիբիոսի, այդ միջոցառման նպատակն էր «ապագայի համար պատրաստել» կայուն և խանդավառ մարտիկների։ Եվ իրոք, հայրենիքում, ընտանեկան միջավայրում, զորանոցային իրադրությունից և ճամբարային կենցաղից հեռու անցկացրած հանգիստը վերականգնեց իբերների ուժերը, իսկ նոր հաղթանակների, հարուստ ռազմաավար ձեռք բերելու հույսը և ինչ-որ չափով կարթագենյան իշխանությունների հանդեպ ունեցած երկյուղը նրանց ստիպեցին զարնանը վերադառնալ բանակի շարքերը։

Հաննիբալի մյուս՝ ամենակարևոր հոգսերից մեկը պատերազմի «գաղափարական» նախապատրաստումն էր։ Արշավանքը դեպի Իտալիա վախեցնում էր զինվորներին. ճանապարհը հույժ երկար ու վտանգավոր էր թվում. պարենի պատրաստումը գրեթե անհաղթահարելի դժվարություններ էր խոստանում. ճանապարհին պետք է որ հանդիպեին վայրենի բարբարոսական ցեղեր։ Պատմում էին, որ իբր ռազմական խորհրդում, որտեղ հաճախ էին խոսում այն փորձությունների մասին, որոնց առաջիկայում պետք է բախվեին Հաննիբալն ու իր բանակը, նրա «ընկերներից» մեկը, դարձյալ Հաննիբալ անվամբ, Մոնոմաքոս մականվանյալը, լրջորեն հավատացնում էր, որ իբր Իտալիա հասնելու միայն մի եղանակ կար՝ զինվորներին սովորեցնել մարդկային միս ուտելու և հոգ տանել, որպեսզի նրանք ընտելանան այդ սննդին։ Հաննիբալն իբր գնահատում

[illegible] խիզախ և նպատակահարմար լինելը, բայց միայն չի կարողանում ստիպել իրեն և իր մերձավորներին, հետևելու Մոնոմաքոսի խորհրդին (Պոլիբիոս, 9, 24, 4—6)։ Թե որքանով է այս պատմությունը հավատալի, դժվար է ասել, քանի որ դրանում հստակորեն զգացվում է Հաննիբալի նկատմամբ թշնամի քաղաքական միտումը, սակայն հռոմեական քաղաքական պրոպագանդայում, ինչպես կտեսնենք, դրանից [illegible] նյութը խիստ ուռճացվել է։ Հաննիբալն իբրև թե գիտակցաբար իր զինվորներին ընտելացրել է մարդակերության։ Ամենից հավանական է, որ մեր առջև է Հաննիբալի շրջապատում եղած կատաղի վեճերի արտացոլքը։ Այդ վեճերն այն մասին էին, թե նրա հղացած ձեռնարկումը որքանով է իրագործելի, և Մոնոմաքոսը շարունակեց իր խոսքերը, կամենալով ավելի ցայտունորեն արտահայտել արշավանքի հանդեպ իր ժխտական վերաբերմունքը։ Հաննիբալը, անհեթեթության հասցնելով Մոնոմաքոսի [illegible], նույնպիսի ցայտունությամբ ցույց տվեց, որ ոչ մի խոչընդոտ իրեն չի կանգնեցնի։

Ինչ կերպ էլ լիներ, Հաննիբալն իր զինվորներին, իր թշնամիներին և բարեկամներին պետք է համոզեր, որ աստվածները կվում են իր կողմում, որ կարթագենյան բանակի հաղթանակն ապահովված է։ Այդ նպատակով նա մեկնեց Գադես և համաձայն ավելի վաղ տրված խոստումների, Մելկարտին (Հերակլեսին, ըստ Լիվիոսի) զոհեր մատուցեց, կատարեց նվիրատվություններ։ Նույն տեղում՝ Մելկարտի տաճարում, նա հանձնարարեց նաև աստվածներին տրված նոր երդումնավոր խոստումներ այն դեպքում, եթե մտահղացված ձեռնարկումը հաջողությամբ պսակվեր (Լիվիոս, 21, 21, 9)։ Ըստ երևույթին հենց այդ ժամանակ զինվորների մեջ, և ոչ միայն զինվորների մեջ, լուրեր տարածվեցին այն հրաշալի երազի մասին, որն իբր երևացել էր Հաննիբալին և ակնհայտորեն կանխագուշակել հաղթանակ (Ցից., Կանխ., 1, 49, Լիվիոս, 21, 22, 6—9, Վալ. Մաքս., 17, Սիլ., Իտ., 3, 163—214, Զոնարաս, 8, 22)։

Ամենալուրջ միջոցառումները Հաննիբալը ձեռնարկեց թիկունքն ապահովելու համար՝ ինչպես Աֆրիկայում, որպեսզի այն ապահովի Սիցիլիայից կատարվող հնարավոր հարձակումից, այնպես էլ Պիրենեյան թերակղզում։ Այդ միջոցառումները նկարագրելիս Պոլիբիոսը (3, 33, 18), որին տվյալ դեպքում լիովին հետևում է նաև Տիտոս Լիվիոսը, վկայակոչում է պղնձե այն տախտակի վրայի արձանագրությունը, որը Հաննիբալի հրամանով կանգնեցվել էր Լատինիումի տաճարում. այնտեղ հույն պատմագիրը գտել է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները։ Հաննիբալը վճռեց Աֆրիկա ուղարկել իսպանական ծագում ունեցող զինվորներին, իսկ Իսպանիայում տեղակայել աֆրիկյան կայազորներ։ Այդ միջոցառ-

մամբ,— ասում է Պոլիբիոսը (3, 33, 8),— «նա իր բանակի երկու մասերը միացրեց փոխադարձ հավատարմության կապերով»։ Տիտոս Լիվիոսը (21, 21, 11) Հաննիբալի արարքը պատճառաբանելիս, ըստ երևույթին, ավելի մոտ է ճշմարտությանը. պունիկյան զորավարը կամենում էր, որպեսզի աֆրիկացիները ծառայեին Իսպանիայում, իսկ իսպանացիները՝ Աֆրիկայում, այն պատճառով, որ իրենց տնից հեռու գտնվելով, թե՛ սրանք և թե՛ մյուսները, ասես փոխադարձաբար պատանդներ փոխանակելով, ավելի լավ կկատարեին իրենց պարտականությունները։ Ինչպես երևում է, Հաննիբալը երկյուղ էր կրում ոչ միայն հռոմեական ներխուժումից, այլև Կարթագենին հպատակ լիբիական և իբերական ցեղերի խռովություններից։ Այդ դեպքում, իհարկե, ավելի նպատակահարմար էր խռովությունները ճնշելու համար օգտագործել օտարերկրացի զինվորներին։ Համենայն դեպս, Հաննիբալն Աֆրիկա ուղարկեց 13850 հետևակազորայինների և 1200 հեծյալների, որոնք հավաքվել էին իսպանական ցեղերից՝ տերսիտներից, մաստիաններից, օրետաններից և օլկադներից։ Հենց այդտեղ նա ուղարկեց նաև 870 բալեարյան պարսավորների (Պոլիբիոս, 3, 33, 9—11, Լիվիոս, 21, 21, 12)։ Նրանց մի մասին տեղավորեցին հենց Կարթագենում, իսկ հիմնական զանգվածը՝ լիբիական քաղաքներում։ Հաննիբալի պահանջով բուն Լիբիայում զորակոչեցին 4000 մարտիկների և տեղավորեցին Կարթագենի բնակարաններում, որպեսզի եթե հարկ լիներ, օգտագործեին քաղաքի պաշտպանության համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որպես պատանդներ (Պոլիբիոս, 3, 33, 14—16, Լիվիոս, 21, 21, 13)։

Հաննիբալը Իսպանիայում պունիկյան զորքերի հրամանատար նշանակեց իր եղբայր Հասդրուբալին, նրա իրավասությանը հանձնելով նշանակալի չափով զինվորական ուժեր՝ 11850 լիբիացիների, 300 լիգուրների, 500 բալեարների, որպես հետևակազորայիններ, 450 լիբիափյունիկացիների ու լիբիացիների, 300 իլերգետների, 800 նումիդիացիների, որպես հեծելազորայիններ։ Բացի այդ, Հասդրուբալն ուներ 21 փիղ և ծովից սպասվող հռոմեական ներխուժումից առափնյա շրջանները պաշտպանող նավատորմ, բաղկացած 50 պենտերայից, 2 տետրերայից և 5 տրիերայից։ Ճիշտ է, դրանցից միայն տրիերաները և 32 պենտերաներ ունեին անձնակազմեր (Պոլիբիոս, 3, 33, 14—16, Լիվիոս, 21, 22, 1—4)։

Իտալիա արշավելու համար Հաննիբալն ուներ մոտավորապես 90 հազար հետևազորայիններ և 12 հազար հեծելազորայիններ (Պոլիբիոս, 3, 35, 1, Լիվիոս, 21, 23, 1)։ Բացի բուն կարթագենցիներից, որոնք այդ բանակում ընդհանուր առմամբ աննշան շերտ էին կազմում՝ առավելապես հրամանատարական կազմը, նրա հիմնական բանակակազմը ստեղծ-

վում էր մասամբ բռնությամբ զորակոչված գաղութացիներից ու իբերացիներից, ինչպես նաև ծագումով ու դիրքով տարբեր վարձկաններից։ Զինվորական հավաքներում Հաննիբալը խոսում էր այն մասին, թե հռոմայեցիներն ինչպիսի ամբարտավանությամբ էին պահանջում հանձնել իրեն և բոլոր զորապետներին, պատմում էր, թե որքան բերրի ու հարուստ է այն երկիրը, ուր գնում են իրենք, և թե ինչպիսի բարեկամությամբ են վերաբերվում իրեն գալլերը՝ Հռոմի վաղեմի թշնամիները (Պոլիբիոս, 3, 34, 8)։ Հարուստ ռազմատավարի համար թեթև գրգռանք,— այսպիսին էր նա իր զինվորներին պատկերում առաջիկա պատերազմը։

Եվ իրոք, գալլերի պաշտպանության վրա հույս դնելու համար նա հիմքեր ուներ։ Օգտագործելով ձմեռային ժամանակը, Հաննիբալը հետախուզական և դիվանագիտական եռանդուն գործունեություն ծավալեց։ Հաննիբալի գործակալները հեղեղեցին Հարավային Գալլիան։ Նրանք հետախուզում էին ճանապարհները, շոշափում գալլական ցեղերի և, որ հատկապես կարևոր էր, գալլական առաջնորդների տրամադրությունը, բանակցություններ էին վարում նրանց հետ և իրենց տիրոջ անունից խոստանում այն ամենը, ինչ միայն կարելի էր ցանկանալ՝ ի տրիտուր պաշտպանության և տեղական բնակչության հարձակմանը չենթարկվելով, Գալլիայով անցնելու հնարավորության։ Այդ շփումների արդյունքները կարծես հուսադրող էին. գալլերի հակահռոմեական տրամադրությունները թույլ էին տալիս հույս դնել եթե ոչ ուղղակի օգնության, ինչին Հաննիբալը ձգտում էր, ապա առնվազն բարեկամական չեզոքության վրա (Պոլիբիոս, 3, 34, 1—6, Ապպ., Իսպ., 13)։

Հռոմայեցիները պատրաստվեցին դիմադրություն ցույց տալու։ Տակավին մինչև Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսի պատվիրակության կողմից Կարթագենին ձևականորեն պատերազմ հայտարարելը, նրանք կոնսուլների տնօրինության տակ դրեցին խոշոր զորամիավորումներ։ Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսը, որի համար, ինչպես արդեն ասվել է, որպես պրոկոնսուլ էր նշանակվել Սիցիլիան՝ Աֆրիկա ներխուժելու հեռանկարով, տացավ երկու լեգեոն (դրանցից յուրաքանչյուրում կային 4000 հետևազորային և 300 հեծյալ), 16 հազար հետևազորային և 1800 հեծյալ՝ դաշնակիցներից, ինչպես նաև 160 մարտական, և 12 ոչ մեծ ռազմական նավեր։ Այսպիսով Սեմպրոնիոսն ընդամենը ուներ 24 հազար հետևազորային և 2400 հեծյալ։ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը նույնպես ուներ երկու լեգեոն՝ 14 հազար հետևազորայիններով և 1800 հեծյալներով, համալրված դաշնակիցներից և, բացի այդ՝ 60 պենտերաներով, ընդամենը նրա տնօրինության տակ կային 22 հազար հետևա-

զորային և 2200 հեծյալ։ Դրանից զատ, նշանակալի ուժերով Գալլիա ուղարկվեց պրետոր Լուկիոս Մանլիոսը, այնտեղ բնակարանավորեցին երկու լեգեոն՝ դաշնակիցներից կազմված 10 հազար հետևակազորայինների և 1000 հեծյալների հետ։ Ընդամենը հռոմայեցիները Գալլիայում ունեին 18 հազար հետևազորային և 1600 հեծյալ։ Ամբողջովին վերցրած՝ հռոմեական բանակն ուներ 64 հազար հետևակազոր և 6200 հեծելազոր (Լիվիոս, 21, 17, 5—9)՝ նշանակալիորեն քիչ, քան ուներ Հաննիբալը։ Հռոմայեցիների էական առավելությունն, ի միջի այլոց, այն էր, որ նրանց վիճակված էր կռվել հայրենիքում և որ իրենց համար լրացուցիչ միավորումների զորահավաքը ավելի հասարակ գործ էր, քան պունիկյան զորավարի համար օժանդակ ուժեր ստանալը։ Սակայն չի կարելի չպատկերացնել հռոմեական բանակի ցրվածությունը և միասնական հրամանատարության բացակայությունը, որն, իհարկե, հռոմայեցիներին դժվարություն էր պատճառում՝ ռազմական գործողությունները անցկացնելիս (հմմտ. նաև Ապպ. մոտ, Իսպ., 14)։

Պատերազմի դիվանագիտական նախապատրաստությունը, որը հռոմեական կառավարությունը փորձում էր կիրառել, երևան հանեց Հռոմի գրեթե լիակատար մեկուսացումը։ Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսի պատվիրակությունը, վերադառնալով Կարթագենից, վերստին ժամանեց Իսպանիա (բնականաբար Իբերից հյուսիս)։ Այնտեղ նա տեղական ցեղերին պետք է համոզեր դաշնակցել Հռոմին, և սկզբնապես հասավ որոշակի հաջողության։ Գալով բարգուսիների մոտ, որոնք ատում էին կարթագենցիներին, նրանք կարողացան ձեռք բերել նրանց պաշտպանությունը, սակայն այնուհետև մեկնեցին վոլկիանների մոտ և այնտեղ հանդիպեցին հակահարվածի, այնքան սարսափելի, որ այն հօդս ցնդեցրեց Իսպանիայում դաշնակիցներ ձեռք բերելու բոլոր հույսերը։ Ինչպես էլ որ չվերաբերվեն այն ճառերի բնագրերին, որոնք Լիվիոսը դնում է իր հերոսների, և մասնավորաբար այստեղ՝ վոլկիանական ավագի շուրթերին, պատասխանի հիմնական իմաստը նա, անկասկած, ճիշտ է հաղորդում։ Ավագը («ծնունդով ավագը», գրում է Լիվիոսը) պատվիրակներին հիշեցրեց Սագունտումի ճակատագրի մասին. վերջինս հույսը դրել էր հռոմեական օգնության վրա և կործանվեց, այդպես էլ սպասածը չտեսնելով։ Դեպի Իսպանիա այդպիսի ապարդյուն ուղևորություն կատարելուց հետո Փաբիոսն ու նրա ընկերակիցները մեկնեցին Գալլիա (Լիվիոս, 21, 19, 6—11)։ Այնտեղ նրանց է՛լ ավելի անբարյացակամությամբ ընդունեցին։ Լիվիոսը պատկերում է գալլական ցեղերից մեկի ժողովրդական ժողովը, որը Հաննիբալին Գալլիայով Իտալիա չթողնելու վերաբերյալ հռոմայեցիների խնդրանքը դիմավորեց ծիծաղի պոռթկումով։ Գալլերը ամենևին

[illegible] կամենում խառնվել ծանր պատերազմին և իրենց երկիրը ավերածության մատնել Հռոմի փրկության համար։ Եվ բացի այդ, Այսրալպյան գալլերի նկատմամբ Հռոմի գործադրած ճնշումները չէին ոգևորում Անդրալպյան գալլերին, որպեսզի վերջիններս օգնություն ցույց տային նրան։ Այդպիսի կամ մոտավորապես այդպիսի տեսարաններ էին տեղի ունենում ամենուրեք։ «Ընդհանրապես,— գրում է Լիվիոսը,— պատվիրակները չլսեցին ոչ մի քիչ թե շատ սիրալիր և խաղաղասիրական խոսք, քանի դեռ չէին եկել Մասսալիա» (Լիվիոս, 21, 20, 1—7)[73]։ Բնական է, որ հռոմեական կառավարությունը հատուկ նշանակություն էր տալիս Անդրալպյան Գալլիայում իր դիրքերի ամրապնդմանը և ամենից առաջ այդ երկրի գաղութացմանը։ Գալլիայում արագորեն կանգնեցվեցին քաղաքային պարիսպներ, և հայտարարվեց, որ 30 օրվա ընթացքում գաղութարարները պետք է ներկայանան իրենց տեղերը (սկզբնապես յուրաքանչյուր գաղութում սահմանված էր 6000 բնակիչ)։ Այդպես ամենակարճ ժամանակներում հռոմայեցիները հիմնեցին երկու գաղութ. Պլակենտիան՝ գաղոս գետից հարավ, և Կրեմոնան՝ նրանից հյուսիս։ Սակայն այդ պատրաստությունները ամենամոտ ապագայում հանգեցրեցին նոր բարդությունների։

Մինչ այդ, 218 թվականի գարնանամուտին, անհրաժեշտ պատրաստությունները ավարտելուց հետո, Հաննիբալը նոր Կարթագենից ծովափի երկայնքով՝ ավերված Սագունտումի, իբերական խոշորագույն քաղաքի՝ էտովիսսայի մերձակայքով շարժվեց դեպի հյուսիս և երեք զորամասերով անցավ Իբերը (Լիվիոս, 21, 22, 5, 21, 23, 11)։ Այստեղ սահմանային գետից հյուսիս նա հաստատեց իր (կամ, որ տվյալ դեպքում միևնույն էր՝ Կարթագենի) տիրապետությունը տեղական ցեղերի՝ իլերգետների, բարգուսիների, ավսետանների վրա, հաղթահարելով նրանց համառ դիմադրությունը, ինչպես նաև Պիրենեյան լեռներին անմիջականորեն հարող երկրի՝ Լակետանիայի վրա (Լիվիոս, 21, 23, 2, Պոլիբիոս, 3, 35, 2—4)։ Հաննիբալն այդ երկրի փոխարքա կարգեց Հաննոնին, նրան հանձնելով 10 հազար հետևազորային և 1000 հեծյալ։ Հաննոնի կարևորագույն խնդիրը բարգուսիների նկատմամբ հսկողության պահպանումն էր (որի համար Հաննիբալը նրան վերապահեց անսահմանափակ լիազորություններ) և Պիրենեյան լեռներով անցնող լեռնանցքներն իր ձեռքում պահելը (Պոլիբիոս, 3, 35, 4—5, Լիվիոս, 21, 23, 23)։

Հաննիբալը լուրջ դժվարությունների հանդիպեց նաև Պիրենեյան լեռներն անցնելիս. այս անգամ նա գործ ունեցավ իր սեփական զորքում եղած դժգոհության հետ. կարպետաններից 3000 հետևակայիններ հրա-

ժարվեցին ավելի հեռուն գնալուց և ընդհանրապես՝ պունիկյան գրոշների ներքո ծառայելուց։ Ըստ երևույթին Լիվիոսի հռոմեական հայրենասիրությանը պետք է վերագրել նրա այն հայտարարությունը, թե իբր այդ իրադարձությունները տեղի ունեցան այն պատճառով, որ բարբարոսներն ավելի ճշգրտորեն սկսեցին պատկերացնել Հռոմի դեմ իրենց վերապահված պատերազմը։ Հենց այդտեղ Լիվիոսը տալիս է նաև ավելի անկանխակալ բացատրություն. կարպետանները երկյուղում էին ոչ այնքան բուն իսկ պատերազմից, որքան դեպի Իտալիա կատարելիք երկարատև արշավանքից և Ալպերի անմատչելիությունից։ Հաննիբալի համար կացությունը խիստ անախորժ ձևով դասավորվեց. չհաջողվեց համոզել խոովարար զինվորներին՝ վերադառնալու ծառայության, իսկ նրանց նկատմամբ ուժ գործադրել նույնպես նա չէր կարող, եթե չէր կամենում դժգոհություն առաջացնել իր մյուս զինվորների մեջ։ Հաննիբալը խիզախ որոշում ընդունեց. նա ձևացրեց, որ իբր կամավոր կերպով բաց է թողնում կարպետաններին և միանգամից հայրենիք ուղարկեց ևս 7000 հետևակորային, որոնց մասին տեղեկություն կար, որ նեղվում են իր բանակում ծառայելուց (Լիվիոս, 21, 23, 4—6, Փրոնտինոս, 27, 7)։ Միաժամանակ Հաննիբալը լուր տարածեց, որ իբր այդ զինվորներին ինքն արձակում է այն պատճառով, որ նրանք հավատարմություն պահպանեն իր՝ Հաննիբալի հանդեպ, որպեսզի մյուս բոլորի մոտ ամրապնդվեր տուն վերադառնալու հույսը, և վերջապես, որպեսզի բոլոր իբերները՝ թե արշավանքի մեկնածները և թե՛ տանը մնացածները եռանդով կատարեն այն, ինչ պահանջվում է իրենցից, անշուշտ կարթագենական տիրապետության ամրապնդման համար (Պոլիբիոս, 3, 35, 6)։ Պունիկյան զորապետի տրամադրության տակ այժմ մնացին 50 հազար հետևակորային և մոտավորապես 9000 հեծյալ, որոնց հետ նա հաղթահարեց Պիրենեյները և մտավ Գալլիա (Պոլիբիոս, 3, 35, 7)։

Գալլական ցեղերի մեջ հուզումներ և տագնապ առաջացրեց տեղեկությունն այն մասին, որ կարթագենյան զորքն իրենց երկրում է, և որ Հաննիբալն իր զորաճամբարը տեղավորել է Իլիբեռա քաղաքի մատույցներում, թեև Հաննիբալի լրտեսները հավաստիացնում էին, որ իրենց տերը մտադիր չէ պատերազմելու Գալլիայում և ավերելու այն։ Գալլերը շատ բան էին լսել այն մասին, թե Հաննիբալն Իբերն անցնելով, ինչպես է վարվել իբերական ցեղերի հետ, ինչպես է ուժով հնազանդեցրել նրանց և տեղակայել նրանց մոտ իր կայազորները։ Ազատությունը կորցնելու երկյուղը գալլերին ստիպեց զենքի դիմել. մի քանի ցեղեր հավաքվեցին Բուսկինոնում, բացահայտորեն պատրաստվելով պատերազմի։ Դիվանագիտական նախապատրաստությունը, որ այնպես վարպետորեն կատարեց Հաննիբալը, զուր անցավ. ինչպես և Իսպանիայում, նա վերստին [illegible] ընտրության առջև. կա՛մ զենքով հնազանդեցնել գալլական [illegible], կա՛մ բանակցությունների օգնությամբ ձեռք բերել նրանց [illegible] համակամ չեզոքությունը։ Հաննիբալը վճռեց դիմել երկրորդ միջոցին և գալլական «արքայիկների»՝ հավանորեն ցեղառաջնորդների ու ավագների մոտ, ուղարկեց իր «հետորներին», հրավիրելով ներկայանալ անձնական բանակցությունների։ Հաննիբալի պատվիրակները նորից ու նորից կրկնեցին, որ նա Գալլիա է եկել որպես հյուր և ոչ թե թշնամի, որ [illegible] գալլերի համար այդ ցանկալի է, ապա նա իր սուրը կմերկացնի [illegible] Իտալիայի տարածքը մտնելիս։ Գալլական «արքայիկները» եկան Հաննիբալի ճամբար և, վերջնականորեն հանգստանալով նրա խաղաղասիրական ճառերով ու լիովին բավարարվելով հարուստ նվերներով, նրան թույլ տվեցին Բուսկինոնի մերձակայքով անցնելու իրենց երկրների միջով (Լիվիոս, 21, 24)։ Ցեղերից մի քանիսին վախ ներշնչելով, մյուսների [illegible] նվիրատվությամբ ազդելով, Հաննիբալը անարգել մոտեցավ վոլկերի գալլական ցեղի զբաղեցրած երկրին, Ռոդանոսի ափերին (հմմտ. նաև Պլիբիոսի ցուցումը (3, 41, 7), որտեղ ասվում է, որ անցնելով Գալլիայի միջով, Հաննիբալը պետք է դիմեր նաև բռնության։ Սակայն Զոնարասը (8, 23) գրում է, որ քանի դեռ Հաննիբալը Գալլիայի միջով գնում էր դեպի Ռոդանոս, ոչ ոք դիմադրություն ցույց չտվեց նրան)։

Հյուսիսային Իսպանիայի և Գալլիայի միջով Հաննիբալի հաջող առաջխաղացումը ուղղակի սպառնալիք ստեղծեց Հյուսիսային Իտալիայում հռոմեական տիրույթների նկատմամբ։ Մինչ այդ Հռոմը ներքաշվել էր ծանր ու արյունահեղ պատերազմի մեջ՝ Այսրալպյան Գալլիայի ցեղերի (բոյերի և ինսումբրների) հետ, որոնք ընդհանրապես չէին կամենում հանդուրժել հռոմեական տիրապետությունը, և արդեն իսկ Կրեմոնայի ու Պլակենտիայի հիմնադրումը ընդունում էին, որպես ուղղակի սպառնալիք իրենց ունեցվածքային շահերի և իրենց անկախության մնացորդների նկատմամբ։ Պարզ էր, որ հռոմեական գաղութաբնակները ամենամոտ ժամանակներում Պադոսի հովտից դուրս էին մղելու տեղական բնակչությանը։ Բոյերը, հույս տածելով Հաննիբալի շուտափույթ գալստյան և տար լծից շուտով ազատագրվելու վրա և հույս ունենալով, որ հռոմեական կառավարությունը, զբաղված լինելով Կարթագենի դեմ մղվող պատերազմով, չի կարող բավականին միջոցներ գտնել նաև իրենց դեմ պայքարելու համար, հարձակվեցին այդ երկու գաղթավայրերի վրա և նորաբնակներին, ինչպես և հողերը գաղութաբնակների միջև բաշխելու համար ուղարկված տրիումվիրներին ստիպեցին փախչել Մուտինա։ Պնտեղ հռոմայեցիներն ընկան շրջապատման մեջ և, առայժմ փրկության

այլ միջոց չտեսնելով, որոշեցին բանակցություններ սկսել հակառակորդի հետ։ Բոյերն, ամենայն հավանականությամբ, համաձայնվեցին, սակայն, ի սարսափ գաղութաբնակների, կարծիքների փոխանակության փոխարեն նրանք պարզապես գերի վերցրեցին հռոմեական ներկայացուցիչներին, որպեսզի հետագայում նրանց փոխանակեն որպես պատանդ վերցված յուրայինների հետ։

Տեղեկություն ստանալով Մուտինայի պաշարման և բոյերի մոտ առաքված պատվիրակների ճակատագրի մասին, պրետոր Լուկիոս Մանլիոսը, նույն ինքը, որին հանձնարարված էր Հյուսիսային Իտալիայի պաշտպանությունը, մեկնեց Մուտինա։ Դեպի այդ քաղաքը տանող միակ ճանապարհն անցնում էր խուլ անտառներով, և բոյերն այնտեղ դարանամուտ եղան։ Մեծ դժվարությամբ և հսկայական կորուստներով Մանլիոսը ճեղքեց-անցավ Պադոս գետից ոչ հեռու գտնվող Տաննետոս բնակավայրը։ Այնտեղ հռոմայեցիները փութապես կառուցեցին ամրություններ և մնացին պաշարված վիճակում։ Նրանց դրությունը փոքր-ինչ թեթևացավ նրանով, որ Պադոսի վրայով նրանք ստանում էին անհրաժեշտ մթերքներ, և, բացի այդ, նրանց օժանդակում էր Հռոմին դաշնակից գալլական բրիկսիաններ ցեղը։

Այժմ սենատը, մեկ այլ պրետորի՝ Գ. Ատիլիոսի տնօրինության տակ դնելով մեկ լեգեոն և 5000 նոր հավաքագրված դաշնակիցների, հանձնարարեց գնալ փրկել Մանլիոսին։ Իր ճանապարհին չհանդիպելով հակառակորդի, Ատիլիոսը առանց դժվարության եկավ Տաննետոս և վերացրեց պաշարումը (Պոլիբիոս, 3, 40, 6—14, Լիվիոս, 21, 25, 2—26, 2)։ Այնուամենայնիվ Այսրալպյան Գալլիայում դրությունը մնում էր խիստ լարված։ Բոյերն ու իրենց դաշնակիցները ամենևին էլ հնազանդեցված չէին և ոչ միայն անհամբերությամբ սպասում էին Հաննիբալին, այլև, ինչպես կտեսնենք առաջիկայում, ուղղակի բանակցությունների մեջ մտան նրա հետ։

Հռոմայեցիների համար ավելի հաջողակ էին ռազմական գործողությունները Սիցիլիայում (Լիվիոս, 21, 49—51)։ Պատերազմը հայտարարելուց կարճ ժամանակ հետո կարթագենյան կառավարությունը 20 պենտերա 1000 զինվորներով ուղարկեց ամայացնելու իտալական ծովափը. նրանցից 9-ը խարիսխ ձգեցին Լիպարոսյան կղզիների մոտ, 8-ը՝ Վուլկանոս կղզու մոտ, իսկ երեքին հոսանքը տարավ Մեսսինական նեղուց, որտեղ և գրավվեցին Սիրակուզայի թագավոր Հիերոնի՝ Հռոմի հին դաշնակցի կողմից։ Գերի վերցվածներին հարցաքննելով, Հիերոնն իմացավ, որ 35 այլ նավեր ևս գնում են Սիցիլիա, որպեսզի այնտեղ Կարթագենի հին դաշնակիցներին դրդեն հակահռոմեական ելույթների և գրավեն Լի-

լիբեոնը։ Հիերոնն այդ տեղեկությունները խնայելով հաղորդեց պրետոր Մարկոս Էմիլիոսին, որը կղզում հռոմեական պրովինցիայի կառավարիչն էր։ Էմիլիոսը հրամայեց ծովափերում ամենուրեք մարտական պատրաստության մեջ լինել, իսկ ծովայիններին կարգադրեց նավերում [illegible] օրվա համար պաքսիմատի պաշար տեսնել, որպեսզի պատրաստ լինեն առանց հապաղելու դուրս գալ ծով։ Հետևելով Հիերոնի խորհրդին, նա իր զորքերը կենտրոնացրեց Լիլիբեոնում։ Կարթագենյան նավատորմը չկարողացավ աննկատ մոտենալ Լիլիբեոնին. երբ այն մոտեցավ, [illegible] գիշերին քաղաքում տագնապ բարձրացրին. բոլոր զինվորները անթարթորեն գրավեցին իրենց տեղերը՝ պարիսպների, աշտարակների և նավերի վրա։ Առավոտյան կարթագենցիները նահանջեցին բաց ծով և այնտեղ, նավերը կեռերով բռնելու համար մղած մարտում պարտություն կրեցին։ Հռոմայեցիները գրավեցին պունիկյան 7 նավ՝ 1700 հոգուց բաղկացած անձնակազմով և առանց կորուստների վերադարձան Լիլիբեոն։ Նույն այդ ժամանակ Սիցիլիա ժամանեց կոնսուլ Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսը և Հիերոնի հետ միասին շարժվեց Լիլիբեոն։ Այնտեղ, իմանալով տարած հաղթանակի մասին, նա Հիերոնին ետ ուղարկեց Սիրակուզա, իսկ ինքը, պրետորին հանձնարարելով պաշտպանել սիցիլիական ծովափը, հարձակվեց Մելիտա կղզու վրա։ Այնտեղի պունիկյան կայազորը (մոտավորապես 2000 զինվոր) պարետ Համիլկարի՝ Գիսկոնի որդու գլխավորությամբ, գերի հանձնվեց։ Որոշ ժամանակ հետո բոլոր գերյալները վաճառվեցին ստրկության։ Փոքր-ինչ առաջ անցնելով, խոսենք նաև Իտալիայում Հաննիբալի արշավանքի ժամանակ Սեմպրոնիոսի ծավալած ուրիշ գործողությունների մասին։ Գրավելով Մելիտան, Սեմպրոնիոսը վճռեց արդեն հաշվեհարդար տեսնել կարթագենական նավատորմի հետ, որը կանգնած էր Վուլկանոս կղզու մոտ, սակայն նա այնտեղ չգտավ հակառակորդին։ Կարթագենցիներն ուղղվեցին դեպի Իտալիայի ափերը և ասպատակեցին Վիբոնը։ Ճիշտ այդ պահին կոնսուլը տեղեկություն ստացավ, որը ստիպեց նրան, հապշտապ միջոցառումներ ձեռնարկելով կղզու և իտալական ծովափի պաշտպանության համար, անհապաղ մեկնել հյուսիս։

Եվ իրոք, Հռոմայեցիներին գլխավոր վտանգը սպասում էր ոչ թե այնտեղ՝ Այսրալպյան Գալլիայում և ոչ էլ Սիցիլիայում ու Իտալիայի հարավում, այլ Բոդանոսի ափերի մոտ, որտեղ Հաննիբալը պատրաստվում էր գետանցման։ Կոնսուլ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի հիմնական խնդիրը և ուղղակի պարտականությունն էր կասեցնել այդտեղ պունիկյան հարձակումը, թույլ չտալ Հաննիբալին դեպի արևելակողմ ավելի հեռու շարժվելու. չէ՞ որ հենց նրա համար էր պրովինցիա սահ-

մանվել Իսպանիան և, հետևաբար, նրան էր հանձնարարվել զինված պայքար մղել Հաննիբալի դեմ։ Մենք որոշակի տեղեկություններ չունենք այն վայրի մասին, որտեղ Սկիպիոնին լուր հասավ այն մասին, որ Հաննիբալն անցել է Պիրենեյները և շարժվում է դեպի Ռոդանոս։ Պոլիբիոսի (3, 41, 2) և Ապպիանոսի (Հաննիբ., 5) պատմածի համաձայն, նա արդեն 60 նավերով մեկնել էր Իբերիա։ Տիտոս Լիվիոսի (21, 26, 3) պատմածից հետևում է, որ կոնսուլը տակավին գտնվում էր Հռոմում և այնտեղ զորակոչ էր կատարում նոր լեգեոնի համար, որը պետք է փոխարիներ Գ. Ատիլիոսի գլխավորությամբ Հյուսիսային Իտալիա ուղարկված լեգեոնին։ Մի բան պարզ է. տեղեկություններ ստանալով Հաննիբալի շարժման մասին, Սկիպիոնը, դեռևս լիովին համոզված լինելով, որ թշնամին գտնվում է Պիրենեյների մոտակայքում ինչ-որ մի տեղ, նետվեց դեպի Մասսալիա։ Ափ իջնելով այնտեղ և խորին զարմանքով իմանալով, որ հակառակորդն արդեն Ռոդանոսին է մոտեցել, նա Ռոդանոսի հոսանքն ի վեր մասսալիացի ուղեկցորդների և մասսալիական զորքերում ծառայող վարձկան գալլերի հետ ուղարկեց 300 ընտիր հեծյալների։ Նրանք պետք է հետևեին այն բանին, թե ինչ են ձեռնարկելու կարթագենցիները (Պոլիբիոս, 3, 41, Լիվիոս, 21, 26, 3—5)։

Իսկ Հաննիբալը պատրաստվում էր գետանցման։ Առաջիկայում նրա անելիքը հիրավի ծանր էր։ Թեև նա կարողացավ իր կողմը գրավել Ռոդանոսի աջ ափին բնակվող վոլկերին (Պոլիբիոս, 3, 42, 2, Լիվիոս, 21, 26, 7), բայց գետի ձախ ափին, և այդ լավ հայտնի էր կարթագենյան զորավարին, ահագին զորք էր հավաքվել. այն կազմված էր ուրիշ վոլկերից, որոնք մարտականորեն էին տրամադրված և նպատակադրվել էին թույլ չտալ անցումը (Լիվիոս, 21, 26, 6)։ Խորն ու սրընթաց գետով պետք է անցկացվեին ոչ միայն մարդիկ և պաշարողական մեքենաները, այլև ձիերը և, որ ամենից դժվար էր՝ փղերը։ Նավից չորս օրյա հեռավորության վրա Հաննիբալի դրած պունիկյան զորաճամբարում եռում էր աշխատանքը. շրջակայքի բնակիչները այնտեղ էին տանում փորածո մակույկներ և իրար կարված տախտակներ, որոնք պատրաստված էին նավակողի հիմնակմախքի համար, ինչպես նաև փորովի մակույկներ պատրաստելու համար փայտանյութ։ Երկու օրվա ընթացքում Հաննիբալի զինվորները կառուցեցին բազմաթիվ փոքր նավեր, որոնք կարող էին իրենց վրա կրել ծանր բեռներ (Պոլիբիոս, 3, 42, 2—3, Լիվիոս, 21, 26, 7—9, հմմտ. նաև Զոնարասի մոտ, 8, 23)։

Այնուամենայնիվ ամբողջ այդ նախապատրաստությունը կարող էր ապարդյուն անցնել. քանի դեռ թշնամին մյուս ափին էր, Հաննիբալը սիրտ չարից անցկացնել զինվորներին, քանի որ նրա բանակը կարող

[illegible] մեծ կորուստներ կրել և մանավանդ որ չէր կարող տեղափոխել [illegible]ին ու փղերին։ Անհրաժեշտ էր վնասազերծել ձախափնյակի վոլ[illegible]ին։ Այդ նպատակով Հաննիբալը գիշերն ուղարկեց իր բանակի մի մասը, [illegible]ավորապես իբերներին, սուֆետ Հաննոնի՝ Բոմիլկարի որդու հրամա[illegible]ությամբ (ըստ Զոնարասի (8, 23), հեծյալների մի ջոկատով [illegible]ուղարկվեց Հաննիբալի եղբայր Մագոնը) գետի հոսանքն ի վեր։ Այնտեղ [illegible] պետք է անցնեին ձախ ափը, դրանով իսկ սպառնալիք ստեղ[illegible]ով թշնամու համար։ Դեպի հյուսիս անցնելով մոտավորապես 200 [illegible]ապարեզ, Հաննոնի զինվորները մոտեցան այն տեղին, որտեղ Ռոդա[illegible]ոսի հունը բաժանվում է զույգ բազուկների։ Փութապես պատրաստված [illegible]տանավերով և ձեռքի տակ եղած այլ միջոցներով, իսկ շատ իբեր[illegible]ներ նաև լողալով, անցան գետի ձախ ափը (Պոլիբիոս, 3, 42, 5—9, Լիվիոս, 21, 27, 2—5)։ Մեկօրյա հանգստից հետո Հաննոնի ջոկատը շարժվեց դեպի վոլկերի ճամբարը և, մոտենալով նրան, խարույկների միջոցով Հաննիբալին իմաց տվեց իր գալստյան մասին։ Հաննիբալն անմիջապես սկսեց գետանցումը։ Նրա զինվորներն ստիպված էին պայքարել արագ հոսանքի և հատկապես թշնամու դեմ, որը գետի մեջ արդեն կռիվներ էր սկսել։ Ռոդանոսի ձախ ափին վոլկերի հսկայական բազմությունը, ռազմական երգեր երգելով, սպասում էր կարթագենցիներին, նակայն նույն այդ ժամանակ Հաննոնը գրավեց նրանց ճամբարը, ապա նրանց հարվածեց թիկունքից։ Սկզբնապես վոլկերը փորձեցին դիմադրել, բայց հետո, չդիմանալով միանգամից երկու ճակատով մղած մարտին, փախան այս ու այն կողմ։ Հաննիբալը հնարավորություն ստացավ հանգիստ կերպով ավարտել գետանցումը (Պոլիբիոս, 43, 1—12, Լիվիոս, 21, 27, 7—28, 4)։

Հաջորդ օրը, երբ Հաննիբալին դեռևս մնում էր կատարելու ամենից դժվարը՝ մարտական փղերին մյուս ափ տեղափոխելը, նրան տեղեկացրին, որ Ռոդանոսի գետաբերանում հայտնվել է հռոմեական նավատորմիղը։ Հաննիբալը 500 նումիդիացի հեծելազորայիններին ուղարկեց հետախուզելու, սակայն իրենց իսկ ճամբարի մոտակայքում նրանք ընդհարվեցին հռոմեական հեծյալ ջոկատի հետ, որին Սկիպիոնն ուղարկել էր հյուսիս։ Կատաղի զոռեմարտում նումիդիացիները կորցրեցին ավելի քան 200 հոգի (այն դեպքում, երբ նրանց հակառակորդները կորցրեցին 160 մարդ, ոչ միայն հռոմայեցիներից, այլև նրանց գալլական դաշնակիցներից) և փախուստի դիմեցին։ Հռոմայեցիները հետապնդեցին նրանց ընդհուպ մինչև ճամբար, ապա ետ դարձան։ Այսպիսով, այդ պատերազմում հռոմայեցիների և կարթագենցիների առաջին ընդհարումը հաղթանակ բերեց հռոմեական զենքին, սակայն այդ հաղ-

թությունը փոքր իսկ նշանակալից ազդեցություն չթողեց ռազմական գործողությունների ընթացքի վրա (Պոլիբիոս, 3, 44, 3 և 45, 1—3, Լիվիոս, 21, 29, 1—4)։

Մենք չգիտենք, թե ինչպիսին էր հետագա անցքերի հաջորդականությունը։ Պոլիբիոսի (3, 44—47) տվյալների համաձայն, քանի դեռ նումիդիացի հեծելազորայինները չէին վերադարձել ճամբար, Հաննիբալը կազմակերպեց զինվորական հավաք, որտեղ ելույթներ ունեցան բոյերի ներկայացուցիչները, պունիկյան զորականներին հրավիրելով Իտալիա։ Դրանից հետո նա փոխադրեց փղերին և ապա շարժվեց ավելի հեռու՝ դեպի արևելք։ Լիվիոսը (21, 28—30) գրում է, որ փղերին տեղափոխեցին նումիդիական հեծելազորայինների արշավի հետ միաժամանակ, հետագայում, երբ հեծելազորայինները վերադարձան, կայացավ հավաք՝ բոյերի մասնակցությամբ, որից հետո, ոգեշնչելով իր զինվորներին, Հաննիբալն սկսեց ալպիական արշավանքը։ Ըստ երևույթին, կարծիքների այդքան նշանակալից տարբերությունները բացատրվում են նրանով, որ թվարկված բոլոր իրադարձությունները ավելի կամ պակաս չափով տեղի են ունեցել միաժամանակ, այնպես որ տարբեր ականատեսների մոտ դրանք տարբեր կերպ են տպավորվել։

Բոլոր պարագաներում փղերի գետանցումը ռազմական ամբողջ գործողության թերևս ամենածանր մասն էր։ Այդ մասին մեզ են հասել մի քանի պատումներ։ Ըստ Լիվիոսի (21, 28, 5), բոլոր փղերին հավաքեցին գետափին. դրանցից ամենից անհանգիստին հաջողվեց կատաղեցնել, և նա իրեն քշողի ետևից նետվեց գետը. նրա ետևից արագ շարժվեց նաև ամբողջ հոտը։ Երբ կենդանիները կորցրեցին անցահունը, հենց հոսանքը նրանց ափ հանեց։

Սակայն Լիվիոսն ավելի ճշմարտանման է համարում մեկ այլ ավանդություն (21, 28, 6—12), որը շարադրում է նաև Պոլիբիոսը (2, 46)։ Համաձայն այդ պատումի, փղերին տեղափոխել են լաստերով։ Պունիկացիները գետափին ճոպաններով ծառերից կապեցին ճմերով ծածկված լայն տախտակամածը, որտեղ քշողները մղեցին իրենց փղերին և այնտեղից արդեն կենդանիներին ստիպեցին անցնել լաստերի վրա, որոնք նույնպես ծածկված էին ճմերով և արտաքնապես չէին տարբերվում տախտակամածից։ Բոլոր կողմերից ջրով շրջապատված փղերը գրգռվում էին, իսկ մի քանիսը նույնիսկ ընկան գետը, բայց նրանք ևս կարողացան ափ հասնել։ Ամեն ինչ բարեհաջող վերջացավ։

Սակայն Հաննիբալին միայն գետանցումը չէր հոգս պատճառում։ Պակաս կարևոր չէր անսպասելիորեն ծառացած մյուս խնդրի լուծումը։ Հաննիբալը երկու հնարավորություն ուներ. կա՛մ պետք է ճակատա-

մարտ տար Սկիպիոնի բանակին, որը գտնվում էր Ռոդանոսի գետաբերանում (Սկիպիոնը, որքանով որ կարելի է այդ մասին դատել, սպասում էր, նախաձեռնությունը թողնելով թշնամուն), կա՛մ շարունակեր արշավանքը դեպի Իտալիա (Լիվիոս, 21, 29, 5—6)։ Տատանումներին վերջ տրվեց բոյերի մոտից պատվիրակության ժամանմամբ. վերջիններիս մեջ էր նաև նրանց «արքայիկ» Մահալը (ըստ Պոլիբիոսի՝ Մահիլ)։ Բոյերը համառորեն համոզում էին Հաննիբալին չհրաժարվել Իտալիա գնալու իր սկզբնական մտահղացումից և առաջարկում էին իրենց ծառայությունը, որպես ուղեկիցներ ու դաշնակիցներ։

Իսկապես, նմանօրինակ որոշման բոլոր առավելությունները պարզ էին նաև Հաննիբալի համար. գալով Հյուսիսային Իտալիա, նա ընկնելու էր դաշնակիցների միջավայրը, կարող էր զինված պայքարի հանել հռոմայեցիների հպատակեցրած բոլոր իտալիկներին և դրանով ապառնալիք ստեղծել Հռոմեական պետության բուն իսկ գոյությանը, այն դեպքում, երբ Սկիպիոնի դեմ մղած ճակատամարտը, լուծելով այս կամ այն ռազմաքաղաքական խնդիրը, հանգեցնելու էր լոկ ավերդ ու անիմաստ կորուստների. չէ որ նույնիսկ հաղթանակից հետո միևնույնն է, հարկ կլիներ գնալ Իտալիա և այնտեղ ամեն ինչ սկսել նորից։ Հավաքելով իր զորականներին, Հաննիբալը առանց դժվարության ստացավ նրանց հավանությունը (Պոլիբիոս, 3, 44, 5—13, Լիվիոս, 21, 30, 1—31, 2)։

Ձեռնարկելով իր անցումն Ալպերով, Հաննիբալը, ինչը նրա համար խիստ հատկանշական էր, մեծ խնամքով նախապատրաստվեց այդ խիստ դժվարին արշավանքին. հետախույզները նրան մատուցեցին ճշգրիտ տեղեկություններ թե՛ այն երկրի մասին, որի միջով նրան վիճակված էր անցնել և թե՛ նրա բնակիչների հակահռոմեական տրամադրությունների մասին (որը, ինչպես կտեսնենք առաջիկայում, բոլորովին էլ նրանց չէր խանգարում հետագայում հարձակվելու պունիկացիների վրա, խիստ դժվարացնելով նրանց գործը)։ Հաննիբալին հաջողվեց տեղական բնակիչներից ստանալ հուսալի ուղեկցորդներ, որոնք քաջ ծանոթ էին ճանապարհին և, հակառակ բոլոր դժվարություններին ու ձախորդություններին, հավատարմություն էին պահպանում իրենց գործատիրոջ նկատմամբ (Պոլիբիոս, 3, 48, 10—11)։ Պունիկյան զորավարը, անշուշտ, գիտեր նաև այն մասին, որ Ալպերը բոլորովին էլ անմատչելի չէին մեծաթիվ բանակի համար. նրան տեղեկություններ հաղորդողները չէին կարող չպատմել, թե ինչպես Ռոդանոսի հովտից գալլերը Ալպերով՝ բազմիցս անցել էին Այսրալպյան Գալլիա, որպեսզի

այնտեղ միանային տեղական գալլական ցեղերին, Հռոմի դեմ համագաշն պայքարելու համար (Պոլիբիոս, 3, 48, 6)[74]։ Այնուամենայնիվ, նա չէր կարող նախատեսել բոլոր վտանգները։

Սկզբնապես, ինչպես գրում է Լիվիոսը, գինվորական հավաքի հաջորդ օրը, Հաննիբալն ուղղվեց դեպի հյուսիս՝ Ռոդանոսի հոսանքն ի վեր, հույս ունենալով այդպիսով ավելի ապահովապես հեռանալ հռոմայեցիներից և նրանց թույլ չտալ, որ իրեն ստիպեն ճակատամարտելու Ռոդանոսի հովտում կամ Ալպերի նախալեռներում։ Չորս օր հետո նրա բանակը մոտեցավ Օստրովումին, այն վայրին, որը բոլոր կողմերից ողողվում է Ռոդանոսի և Իսարայի ջրերով։ Այնտեղ նա բախվեց իր համար բոլորովին անսպասելի և, այնուամենայնիվ, հույժ բարենպաստ քաղաքական իրավիճակի։ Ալոբրոգների գալլական ցեղը, որ բնակեցնում էր Օստրովումը և նրան հարող շրջանները և իր ձեռքն էր պահում Ալպեր տանող ճանապարհը, խռովահույզ ժամանակաշրջան էր ապրում. այնտեղ իշխանության համար պայքար էր գնում երկու եղբայրների միջև։ Նրանցից ավագը՝ Բրանկոսը, որ ղեկավարում էր ցեղը և վայելում ծերերի խորհրդի («սենատի», գրում է Լիվիոսը) և ավագանու պաշտպանությունը, տապալվել էր կրտսերի կողմից, որի շուրջն էր համախմբվել «երիտասարդությունը», այսինքն, ըստ երևույթին, բոլոր նրանք, ովքեր չունեին իշխանությանը մոտենալու հնարավորություն։ Ավագի ուղղակի խնդրանքով, ինչպես գրում է Լիվիոսը, միջամտելով այդ պայքարին, Հաննիբալն օգնեց վտարելու կրտսեր հավակնորդին։ Շնորհապարտ հաղթողը առատորեն վճարեց նման օգնության համար։ Հաննիբալի բանակը ստացավ պարենամթերք և Ալպերն անցնելու համար անհրաժեշտ տաք հագուստ, բոլոր հին ու փչացած զենքերը փոխարինվեցին նորերով։ Սակայն Հաննիբալի համար ամենաէականը դա չէր։ Ալոբրոգների հետ ունեցած բարեկամական հարաբերությունները կարծես թե նրան հնարավորություն ընձեռեցին չվախենալու անակնկալ հարձակումից։ Բրանկոսը իր ռազմիկներով պաշտպանում էր կարթագենյան բանակի թիկունքը (Պոլիբիոս, 3, 49, 5—13, Լիվիոս, 21, 31, 1—9)։

Օստրովումից Հաննիբալը շարժվեց դեպի արևելք՝ տրիսկաստինների երկրով և ապա վիկոնտիների երկրամասի սահմանների երկայնքով՝ դեպի տրիկորինների երկիրը, իսկ այնտեղ անցավ Դրուենկիա գետը (Լիվիոս, 21, 31, 9—12)։

Մինչդեռ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը վերջապես որոշեց նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը, ճակատամարտ տալ և Հաննիբալի՝ դեպի հյուսիս մեկնելուց մոտավորապես երեք օր հետո, իր լեգեոնները

[illegible]ական կարգով շարժեց դեպի կարթագենյան զորաճամբարը, [illegible]... խորին զարմանքով տեսավ, որ թշնամին վաղուց արդեն հեռացել էր։ Հաննիբալի ետևից հասնելը նրան անհուսալի գործ էր [illegible], և նա վճռեց մեկնել Իտալիա, որպեսզի այնտեղ, Ալպերի ստորոտում հանդիպի ահեղ հակառակորդին։ Իսպանիայում Հասդրուբալ Բարկայանի դեմ պատերազմ մղելու համար նա, որպես լեգատ, ուղարկեց իր եղբորը՝ Գնեոս Կորնելիոս Սկիպիոնին, նրան հանձնելով իր [illegible] բոլոր զորամիավորումները։ Գալով Ապենինյան թերակղզի, Պուբլիոսը գլխավորեց Պադոսի հովտում գտնվող հռոմեական զորքերը (Պոլիբիոս, 3, 49, 1—4, Լիվիոս, 21, 32, 1—5)։

Չորսերթի իններորդ օրը Հաննիբալը մոտեցավ լեռներին և նկատեց, որ լեռնանցքի վրա իշխող բարձունքները զբաղեցրել են լեռնականները (ըստ Պոլիբիոսի՝ ալոբրոգները)։ Իր ճամբարը տեղավորելով լեռնանցքի մոտ և սպասելով, պունիկյան զորավարը իր հետախույզներին ուղարկեց ալոբրոգների մոտ և իմացավ, որ լեռնականներն իրենց գերքերը զբաղեցնում են միայն ցերեկները, իսկ գիշերները, թողնելով ոչ մեծ պահապան զորամաս, հեռանում են իրենց կողմերը՝ «քաղաք» (հավանաբար ի նկատի ունի լեռնցի ալոբրոգների բնակավայրը)։ Օգտագործելով այդ հանգամանքը, Հաննիբալը ցերեկը, ի տես հակառակորդի, շարժվում է առաջ, իսկ գիշերը, ճամբարում հանգցնելով խարույկները, համեմատաբար փոքր ջոկատով գրավում է բարձունքները։ Հաջորդ օրը պունիկյան բանակն սկսեց իր երթը լեռներով։ Օգտվելով այն բանից, որ այդտեղի ճանապարհը զառիթափ էր ու նեղ, որ բեռնակիր կենդանիները փոքր-ինչ անուշադիր շարժման դեպքում ընկնում էին անդունդը, և Հաննիբալի բանակում թագավորում էր նմանօրինակ դեպքերում սովորական դարձած խառնաշփոթություն, ալոբրոգները, ուշքի գալով հարմար բնագծերը կորցնելու պատճառով առաջացած շփոթությունից, վճռեցին հարվածել կարթագենցիներին։ Հսկայական կորուստների գնով Հաննիբալին հաջողվեց փախուստի մատնել նրանց և գրավել «քաղաքը», որտեղ նա ձեռք բերեց պարենամթերք, բեռնակիր ձիեր և գերիներ։

Դրանից հետո, երեք օրվա ընթացքում, Հաննիբալը կարողացավ շարժվել, չհանդիպելով խոչընդոտների, սակայն չորրորդ օրը ծուղակն ընկավ։ Լեռնալանջերով Հաննիբալի շարժմանը զուգահեռ ընթացող լեռնականները նրա գինվորների վրա թափում էին քարեր և հսկայական զուգձեր։ Նրանց նույնիսկ հաջողվեց մի ինչ-որ ժամանակ ճեղքել պունիկյան զորայուղը և Հաննիբալի հետևակազորը անջատել հեծելազորից ու գումակներից։ Անչափ մեծ ջանքերի գնով պունիկյան բանակը

դուրս եկավ կիրճից։ Հետագայում Հաննիբալն Ալպերում չհանդիպեց այդքան լուրջ վտանգի, սակայն այնտեղի բնակիչները օգտվում էին ամեն մի հարմար առիթից, որպեսզի ձեռք բերեն ձիեր՝ իրենց բեռներով, կամ գերիների՝ հոգնաբեկ ու ցրտահարված զինվորների, որոնք դանդաղորեն շարժվում էին ավելի ու ավելի բարձր, դեպի լեռները։ Վերջապես պունիկացիները հասան լեռնանցքին, որի վրայով ճանապարհ էր բացվում դեպի Իտալիա[75]։

Երկու օր Հաննիբալը բանակեց լեռնանցքում. ծանր ու վտանգավոր վերելքի հետևանքով տանջահար զինվորները պետք է հանգստանային ոչ պակաս դժվարին ու վտանգավոր վայրէջքից առաջ։ Սակայն Հաննիբալին այդպես էլ չհաջողվեց լիովին վերականգնել իր զորքի ուժերը։ Վրա էր հասնում խոր աշունը, սկսվում էին ցրտերը, իսկ բաղմաստեղքի մայրամուտի գիշերը (այսինքն՝ նոյեմբերի 7-ին) ձյուն եկավ։ Այդ պատճառով Հաննիբալը հրամայեց ճանապարհ ընկնել. զինվորները գնում էին դանդաղորեն, ասես ակամայից. բոլորի դեմքերին, գրում է Լիվիոսը, կարելի էր կարդալ վշտի ու հուսահատության արտահայտություն։ Այդ ժամանակ, առաջ անցնելով, Հաննիբալը լեռների բարձունքից նրանց ցույց տվեց Իտալիան, լեռնաշղթային հարող բարերար դաշտերը՝ Պադոսի հովտում։ Լիվիոսը նրա շուրթերին է դնում ուշագրավ խոսքեր. այժմ նրա զինվորները կհաղթահարեն ոչ միայն Իտալիայի պատնեշները, այլև Հռոմի պարիսպները. այժմ ամեն ինչ ընթանալու է ասես հարթ ու թեթև վայրէջքով։ Մեկ կամ ծայրահեղ դեպքում երկու ճակատամարտ նրանց ձեռքը կհանձնեն Իտալիայի կարևորագույն ամրոցն ու գլխավոր քաղաքը։ Փորձված միջոցը ներգործություն ունեցավ. հարուստ և, թվում էր թե անպարտելի երկրի արդեն մոտալուտ կողոպտումը նոր ուժ ներարկեց Հաննիբալի զինվորներին։

Նրանք իջնում էին նեղ, զառիվայր, ձյունածածկ և սայթաքուն կածանով. անդադար մի շարժում, և մարդը կթռչեր անդունդը։ Այդպես կարթագենցիները մոտեցան այն ժայռին, որի մոտ կածանն ավելի էր նեղանում, դառնալով խիստ զառիթափ։ Այդ տեղը շրջանցելն անհնարին էր. սկզբում գնում էին ձյան վրայով, ապա սկսեցին սահել մերկ սառույցի վրայով, չունենալով ո՛չ հենարաններ և ո՛չ էլ բարձրանալու հնարավորություն։ Ձիերը սմբակներով ջարդում էին սառույցները և, ասես թակարդի մեջ ընկնելով, չէին կարողանում առաջ շարժվել։ Բանակելով լեռնանցքում, Հաննիբալը հրամայեց ճանապարհը մաքրել ձյունից։ Ժայռի մոտ նրա զինվորները մեծ խարույկ վառեցին, ապա շիկացած ժայռի վրա լցրեցին քացախ և, աշխատելով երկաթյա գործիքներով, ճանապարհ գցեցին փխրունացող զանգվածի վրայով։ Ապ-

ալանոսի ասելով (Ապպ., Հաննիբ., 4), Հաննիբալի զինվորների կատարած ճանապարհը շարունակում էր գոյություն ունենալ տակավին մ. թ. II դարում, և պունիկյան զորավարի անունով այն դարձյալ կոչվում էր «Հաննիբալի անցում»։ Երեք օր հետո հնարավոր դարձավ հավիտ դուրս բերել բեռնակիր ձիերին (որոնց հենց այդտեղ ուղարկեցին արոտի) և փղերին։ Խոնջացած զինվորներին լրացուցիչ հանգիստ տալուց հետո անցավ դարձյալ երեք օր, և Հաննիբալը դուրս եկավ հարթավայր (Պոլիբիոս, 3, 50—56, Լիվիոս, 21, 32—37, Օրոսիոս, 4, 14, 3—4)։

Գլուխ երրորդ

ԱՆՕԳՈՒՏ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ
(Տիկինոսից մինչև Կաննե)

I

Հյուսիսային Իտալիա կարթագենական զորքերի ներխուժումը էապես փոխեց քաղաքական կացությունը, իհարկե, ի վնաս Հռոմի։ Հաննիբալը երկար ժամանակ Իտալիան վերածեց ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմի, խպանական ռազմաճակատը դարձնելով երկրորդական և հռոմայեցիներին ստիպելով հրաժարվել Սիցիլիայում եռանդուն մարտական գործողություններից և, մանավանդ, Աֆրիկա ներխուժելու մտքից։ Ապենինյան թերակղզում հայտնվեց մի ահեղ ուժ, որին կարող էին ապավինել բոլոր նրանք, ովքեր երազում էին հռոմեական տիրապետությունից ազատվելու մասին՝ հյուսիսում մշտապես ապստամբող բոյերից և ինսումբրներից մինչև Հարավային Իտալիայում ակամա «դաշնակիցները» (ճիշտ է, իտալիկներն սկզբնապես գերադասեցին սպասել)։ Սակայն հռոմեական հրամանատարությունն սկզբում թերագնահատեց իր հակառակորդին։ Սկիպիոնը կարծում էր, թե Հաննիբալը երբեք չի համարձակվի անցնել Ալպերը, իսկ եթե դիմի այդպիսի խելացնոր քայլի, ապա անխուսափելիորեն կկործանվի (Պոլիբիոս, 3, 61, 5—7)։

Եվ իրոք, Հաննիբալի զորքը հսկայական կորուստներ կրեց։ Ըստ Պոլիբիոսի (3, 56, 4 հմմտ. նաև 3, 60, 5), որը տվյալ դեպքում վկայակոչում է Լատինիուսի արձանագրությունը, այսինքն՝ հենց Հաննիբալից բխող տեղեկությունները, Իտալիա մտնելիս նա իր տրամադրության տակ ուներ 12 հազար լիբիական և մոտավորապես 8 հազար իբերական հետևազորայիններ (հետևաբար, ընդամենը մոտավորապես 20 հազար) և ոչ ավելի քան 6 հազար հեծելազորայիններ։ Ըստ երևույթին, այս տվյալներին ավելի պետք է նախապատվություն տալ, քան այն ավանդու-

թյանը, որը պատմում է, թե իբր Հաննիբալն Իտալիա է բերել 80 հազարից մինչև 100 հազար հետևազորային, 20 հազար հեծյալ և 37 փիղ (Եվտրոպիոս, 3, 8, Օրոսիոս, 4, 14, 5)։ Բացի այդ, Հաննիբալի բանակը հանգստի կարիք ուներ։

Զարմանալի չէ, որ Հաննիբալը հոգ էր տանում ամենից առաջ իր զինվորների բարոյական ու ֆիզիկական ուժերի վերականգնման մասին (Պոլիբիոս, 3, 60, 7)։ Ճիշտ է, նա դեռ պետք է ընդհարվեր այն զորքերի հետ, որոնց Սկիպիոնն ընդունել էր Մանլիոսից և Ատիլիոսից, և որոնք կազմված էին մասամբ նորակոչիկներից, մասամբ էլ՝ այն զինվորներից, որոնք ծանր ու խայտառակ պարտություն էին կրել գալլերի դեմ մղած պատերազմում (Լիվիոս, 21, 39, 3)։ Եվ, այնուամենայնիվ, հռոմեական զորքերը պետք է կռվի մեջ մտնեին երկարատև հանգստից և խիստ համակողմանի նախապատրաստությունից հետո։ Եվ բացի այդ, Սկիպիոնը ամենևին էլ այնպիսի անընդունակ զորավար չէր, որպիսին թվում էր Հաննիբալին։ Վերջինս հաստատ համոզված էր, որ Սկիպիոնը չէր կարողանա կարճատև ժամանակամիջոցում Ռոդանոսի գետաբերանից հասնել Ալպերի ստորոտները, բայց հռոմայեցի կոնսուլին դա հաջողվեց, և Հաննիբալն ստիպված եղավ ընդունել, որ իր դեմ կանգնած է տակտիկական ու կազմակերպչական մեծ ընդունակություններ ունեցող զորապետ (Պոլիբիոս, 3, 61, 1—4)։ Դրանից զատ Հաննիբալը պետք է հաշվի առներ նաև մեկ այլ հանգամանք։ Տեղեկություն ստանալով այն մասին, որ Հաննիբալն գտնվում է Իտալիայում, սենատը մյուս կոնսուլին՝ Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսին, առաջարկեց Սիցիլիայից վերադառնալ Իտալիա։ Սեմպրոնիոսն առանց հապաղելու նավատորմն ուղարկեց հայրենիք, իսկ հետևազորը տեղափոխեց Արիմինում (Պոլիբիոս, 3, 61, 9—11, Լիվիոս, 21, 51, 5—7)։

Սկիպիոնի գլխավոր նպատակն էր կարթագենցիներին թույլ չտալ ուժեր հավաքելու նոր արշավանքի համար, սակայն նա ուշացավ։ Հանգրստի համար Հաննիբալին ավելի քիչ ժամանակ էր հարկավոր, քան կարելի էր կարծել։

Սակայն Իտալիայում նրա առաջին հակառակորդները ոչ թե հռոմայեցիներն էին, այլ, ըստ երևույթին, նրանց դաշնակից թավրիններն։ Կես գալլական, կես լիգուրիական ցեղը (որի անունը ցարդ հարատևում է Թուրին քաղաքի անվանման մեջ), որը բնակվում էր Ալպերի ստորոտներում և նույն այդ պահին արյունահեղ պայքար էր մղում ինսումբրների դեմ։ Հաննիբալը, Իտալիա գալով որպես բոյերի և, հետևաբար, ինսումբրների դաշնակից, զգում էր թավրինա-ինսումբրիական երկպառակությունների դադարեցման և, ինքնին հասկանալի է, թավրինների պաշտպանության կարիք։ Վերջիններիս առաջարկեց բարեկամություն և դաշինք։ Մերժում ստանալով, նա շրջապատեց թավրինների բերդը և եռօրյա պաշարումից հետո գրավեց այն։ Անխնա կերպով հաշվեհարդար տեսնելով բոլոր նրանց հետ, ովքեր փորձում էին դիմադրություն ցույց տալ, Հաննիբալը շրջակայքի գալլական ցեղերին ստիպեց սարսափ ներշնչեց, որ սրանք շտապեցին ենթարկվել նրա «հավանավորությանը»։ Սկիպիոնի ժամանումը Պլակենտիա, որոշ չափով խախտեց նրա պլանները. հռոմայեցիները Հաննիբալից հեռացրեցին նրա հետ դաշնակցած գալլերի զգալի մասին և նույնիսկ հարկադրեցին նրանց ելնելու պունիկյան բանակի դեմ։ Այդ պայմաններում Հաննիբալը վճռեց հարձակողական գործողություններ ձեռնարկել հռոմայեցիների դեմ, իրավացիորեն կարծելով, որ հաղթանակելուց հետո ինքը կդառնա Հյուսիսային Իտալիայի լիիշխան տերը, և հենց այդ ժամանակ էլ գալլերը իրենց բարի կամքով կամ հարկադրաբար կանցնեին իր կողմը (Պոլիբիոս, 3, 60, 8—13, Լիվիոս, 21, 39, 3—7)։ Սակայն այդմ արդեն Սկիպիոնը առաջ անցավ նրանից։ Նա անցավ Պադոսը և տեղավորվեց Տիկինոսի աջ ափին (Լիվիոս, 21, 39, 10)։

Պարզ չէ, թե մենք կարո՞ղ ենք արդյոք վստահել Պոլիբիոսի և Տիտոս Լիվիոսի բնագրերին, որոնք մեզ են հասցրել ճակատամարտի նախօրյակին զորավարների արտասանած ճառերը. մեր առաջ, ըստ երևույթին, բուն օրինակի բառացի վերարտադրությունը չէ, թեև ընդհանուր իմաստը հավանաբար նրանք ճիշտ են հաղորդում։ Իրոք, ի՞նչն էր ավելի բնական, քան Պունիկյան I պատերազմում տարած հաղթանակի, Հաննիբալի կողմից պայմանագիրը ուխտադրժորեն խախտելու և հայրենիքին սպառնացող վտանգի մասին հռոմայեցիներին հիշեցնելը, որը, ինչպես երևում է, կատարեց Սկիպիոնը (Լիվիոս, 21, 40—41, Պոլիբիոս, 3, 64)։ Եվ ի՞նչն էր ավելի բնական, քան պունիկյան զինվորներին հիշեցնելը, որ նրանք նահանջելու տեղ չունեն, որ նրանց սպասում է հաղթանակ կամ ոչնչացում, իսկ լավագույն դեպքում՝ գերություն (Լիվիոս, 21, 43—44, Պոլիբիոս, 3, 63). այս խոսքերը ավանդությունը վերագրում է Հաննիբալին։ Լիովին հնարավոր է, որ այն պատմագիրները, որոնցից Պոլիբիոսն ու Լիվիոսը քաղել են իրենց նյութը, օգտվել են զորավարների, այդ թվում նաև իրագործությունների անմիջական մասնակիցների ասածների շուրջը հյուսված պատմություններից։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները միաբերան վկայում են, որ մինչև ճառն արտասանելը, Հաննիբալն իր զորականներին ցույց տվեց տպավորիչ տեսարան։ Ալպերն անցնելիս վերցված ռազմագերիները, որոնք ուժասպառ էին եղել ծանր շղթաների, ծեծի, սովի ու ծարավի

Հետևանքով, նրա հրամանով դուրս բերվեցին խաղասպարեզ, որը բոլոր կողմերից շրջապատված էր պունիկացիներով։ Թարգմանչի միջոցով Հաննիբալը գերիներին հարցրեց, թե նրանցից ո՞վ է համաձայն կռվելու իր հետ միասին դժբախտության մեջ ընկած ընկերոջ հետ, պայմանով, որ հաղթողն ստանալու է մարտական ձի, սպառազինություն և, բնականաբար, ազատություն, իսկ հաղթվողը, ոչնչացվելով, ազատվելու է անտանելի տանջանքներից։ Բոլոր լեռնցիները հրճվանքով համաձայնվեցին. շատերն աղոթում էին աստվածներին, որպեսզի վիճակն ընկնի իրենց։ Կենաց և մահու այդ գոտեմարտին մասնակցում էին մի քանի զույգեր։ Հանդիսատեսները՝ Հաննիբալի զինվորները և մյուս գերիները, ջերմորեն ապրում էին մարտի բոլոր իրադարձությունները, իսկ երբ այն վերջացավ, աղմուկով ողջունեցին հաղթողներին և փառաբանեցին պարտվածներին, որոնք արիաբար ընկան ազատության համար մղված պայքարում (Պոլիբիոս, 3, 62, Լիվիոս, 21, 42, Դիոն Կասս., Ֆրագմ., 57, 4)։ Հաննիբալի զինվորները անձամբ պետք է պատկերացնեին իրենց դրությունը, որ ոչնչով չէր տարբերվում այդ գերիների կացությունից. հաղթել կամ մեռնել՝ ուրիշ ելք նրանք չունեին։

Ռազմական գործողություններն սկսվեցին նրանից, որ հռոմայեցիները Տիկինոսի վրա կառուցեցին կամուրջ և նրա պաշտպանության համար՝ ոչ մեծ ամրություն և գետի աջ ափից անցան ձախը՝ ինսուբրների երկիրը, որտեղ գտնվում էին կարթագենցիները։ Հաննիբալը ինքն էր ձգտում ճակատամարտի, ուստի և չխանգարեց նրանց. առայժմ նա Մահարբալի գլխավորությամբ նումիդիական հեծյալների մի ջոկատ ուղարկեց ավարի մատնելու Հռոմին դաշնակից գալլական ցեղերի դաշտերը։ Սակայն Հաննիբալի իտալիկական քաղաքականության համար բնորոշն այն էր, որ նա կարգադրում էր ամեն կերպ խնայել գալլերին և ամեն ինչ անել նրանց իր կողմը գրավելու համար։ Այնքան էլ հասկանալի չէ, թե ինչպես կարելի էր այդ ուղղությունը համատեղել գալլական հողատիրությունների ավարառության հետ... Իրագեկ դառնալով, որ հռոմեական լեգեոններն ավարտել են գետանցումը, Հաննիբալը Մահարբալին հրամայեց փութապես բանակատեղ վերադառնալ։

Ինչպես պատմում է Լիվիոսը, Հաննիբալն այժմ՝ մարտից անմիջապես առաջ, վերստին դիմեց իր զորականներին, խոստանալով նրանց այն ամենը, ինչ միայն կարող է հաղթության դեպքում վարձկան զինվորներին խոստանալ նրանց պարագլուխը. ով որտեղ կամենար, հող էր ստանալու, ազատվելով պարտությունից. դա պետք է տարածվեր ոչ միայն ստացողի, այլև նրա զավակների վրա։ Կամ, ըստ ցանկության, կարող էր ստանալ դրամ, կարթագենական քաղաքացիություն և

անարգում կյանք հայրենիքում, իսկ իրենց տերերի հետ բանակում գտնվող ստրուկներին նա ազատություն խոստացավ։ Հաննիբալին հաղթանակը խիստ անհրաժեշտ էր, բայց դրա նկատմամբ, ըստ երևույթին, նա դեռ վստահ չէր։ Իր խոստումը Հաննիբալն ամրապնդեց երդմամբ. ձախ ձեռքով վերցնելով գառանը, իսկ աջով՝ քարը, նա ուժգին դիմեց աստվածներին, խնդրելով խոստումնադրուժ լինելու դեպքում իրեն արժանացնել նույնպիսի մահվան, ինչպիսին նա մատնում է զոհաբերվող կենդանուն. այդ խոսքերի հետ Հաննիբալը քարով ջարդեց գառան գլուխը։ Զինվորները Հաննիբալին արձագանքեցին խիստ ոգևորության ու նվիրվածության արտահայտություններով, պահանջելով անմիջապես մեկնել մարտի։

Հակառակորդներն իրենց զորքերը հետևյալ կերպ էին դասավորել։ Սկիպիոնն առջևում դասավորեց նիզակամիգներին և գալլական հեծյալներին, իսկ մնացածներին՝ հռոմայեցիներին և դաշնակիցների լավագույն ուժերը, դասավորեց նրանց ետևի շարքերում։ Հաննիբալը ծանր հեծելազորը տեղավորեց ուղղակի հռոմայեցիներին դեմ հանդիման, իսկ զորաթևերում՝ նումիդիական հեծելազորայիններին, հույս ունենալով հետագայում շրջապատել թշնամուն։ Հակառակորդներն սկսեցին արագորեն մոտենալ միմյանց։ Հռոմեական նիզակամիգները, հազիվ մեկական նիզակ արձակելուց հետո, փախան դեպի իրենց ետևում կանգնած հեծյալ ջոկատները։ Սկսվեց հեծելամարտը. շատ հեծյալներ ձիերից ցած նետվեցին, իսկ ուրիշները իրենք էին ձիաթափ լինում։ Ճակատամարտը հետզհետե վերածվեց հետևակորայինների մարտի։ Մինչ այս, մինչ այն, Հաննիբալի նումիդիական հեծելազորայինները, թևերից շրջանցելով կռվողներին, հայտնվեցին հռոմեական զորքի թիկունքում. նիզակամիգները դարձան նրանց ձիերի ոտքի կոխան. հռոմայեցիների շարքերում խուճապ սկսվեց. ինքը՝ Սկիպիոնը վերք ստացավ, և նրա կյանքն ու ազատությունը ենթարկվեց վտանգի (ըստ ավանդության, Սկիպիոնին փրկեց այն ժամանակ դեռևս անչափահաս նրա որդին՝ ապագայում Հաննիբալին հաղթողը, որը նույնպես կոչվում էր Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն. մեկ այլ պատումի համաձայն, կոնսուլին փրկողը լիգուրիացի մի ստրուկ էր)։ Հռոմեական բանակը փախուստի դիմեց (Պոլիբիոս, 3, 65, Լիվիոս, 21, 46, Ապպ. Հաննիբ., 5)։

Հռոմայեցիների դեմ Հաննիբալի տարած այս առաջին հաղթանակը բացառիկ նշանակություն ունեցավ նրա համար։ Այն ոչ միայն երևան հանեց կարթագենյան հեծելազորի և, հատկապես, նումիդիական հեծյալների գերազանցությունը հռոմեականի նկատմամբ, և ոչ միայն ամրապնդեց նրա դրությունը Հյուսիսային Իտալիայում, այլև ցույց տվեց,

որ կարթագենցիները հռոմայեցիներին կարող են հաղթել մարտադաշտում։ Սկսեց խամրել անպարտելիության այն փառապսակը, որով կարթագենցիների աչքին, Պունիկյան I պատերազմից հետո, երփնազարդված էր հռոմեական զենքը։ Եվ այն, Հաննիբալի բոլոր ճառերից, հորդորներից, խոստումներից առավել, նպաստեց նրա բանակի բարոյական ոգու ամրապնդմանը։

II

Սակայն Տիկինոսի մոտ տարած հաղթանակը չէր կարող բավարարել Հաննիբալին։ Իրապես Սկիպիոնը մարտից դուրս բերեց հռոմեական բանակի գլխավոր ուժերը՝ հետևազորը։ Հաննիբալը հույս ուներ, թե հռոմայեցիները կհամարձակվեն նոր ճակատամարտ տալ, և նույնիսկ նրանց դրդում էր այդ քայլին, սակայն մարտի հաջորդ գիշերը Սկիպիոնը անաղմուկ դուրս եկավ բանակատեղից, նախօրոք գցված կամրջով անցավ Պադոսը և հաստատվեց Պլակենտիայի մերձակայքում։ Հաննիբալը նետվեց հռոմայեցիների ետևից, սակայն ուշացավ։ Նրան միայն հաջողվեց գերի վերցնել 600 հռոմեական զինվորների, որոնք քանդում էին կամուրջը։ Լիվիոսը ժխտում է Կելիոս Անտիպատրոսի պատմածը, որի համաձայն Մագոն Բարկայանը, Հաննիբալի եղբայրներից մեկը, հեծյալների և իբերական հետևազորի հետ լողալով անցավ Պադոսը։ Նրա պատմելով, նմանօրինակ անցման համար գետի հոսանքը հույժ սրընթաց էր։ Երկու օր որոնումների վրա կորցնելուց հետո, Հաննիբալը, ուղղվելով դեպի հոսանքն ի վեր, հարմար տեղ գտավ, կամուրջ գցեց և Հասդրուբալին հրամայեց զորքն անցկացնել մյուս ափը։ Նա անձամբ անցավ առաջինը և հենց կամրջի մոտ հանդիպեց մոտակայքի գալլական ցեղերի դեսպաններին։ Արդեն սկսել էին պատմել Տիկինոսի մոտ տարած հաղթանակի արդյունքների մասին. գալլերը ներկայացան հաղթական զորապետին՝ բարեկամության արտահայտությամբ և դաշինքի առաջարկներով։ Նրանք պատրաստ էին Հաննիբալին մատակարարել անհրաժեշտ պարենամթերք և անմիջական մասնակցություն ունենալ Հռոմի դեմ մղվող պայքարում։ Մինչ այդ բանակցություններն էին վարվում, Մագոն Բարկայանը հեծյալների ջոկատով գետի հոսանքն ի վար իջավ ցած՝ դեպի Պլակենտիա։ Շուտով այդտեղ մոտեցան նաև կարթագենյան բանակի հիմնական ուժերը, իր՝ Հաննիբալի գլխավորությամբ։ Վերջինս հույս ուներ Սկիպիոնին դրդել նոր ճակատամարտի և նույնիսկ թշնամու աչքի առաջ իր զորքը դասավորեց մարտական կարգով։ Սակայն հռոմեական բանակատեղից ոչ ոք

դուրս չեկավ, և Հաննիբալին ոչինչ չէր մնում անելու, քան ուղղակի բանակել, դարձյալ Պլակենտիայից ոչ հեռու, հռոմեական զորքերի անմիջական մոտակայքում (Պոլիբիոս, 3, 66, 21, 47)։ Սակայն չի կարելի բացառել, որ Հաննիբալը չհամարձակվեց հարձակվել հռոմեական զորաճամբարի վրա, թեև լիակատար հնարավորություն ուներ դրա համար, մանավանդ, որ Սկիպիոնը բուժում էր իր վերքը և, ընդհանուր առմամբ, անմարտունակ էր, հռոմայեցիների մեջ կային շատ վիրավորներ, և բացի այդ, ինչպես հայտնի դարձավ, կարթագենցիները կարող էին հույսերը դնել նաև բուն իսկ հռոմեական զորաճամբարի որոշակի գրգռության վրա։ Ասենք, վերջին հանգամանքի մասին Հաննիբալը կարող էր նաև չիմանալ։ Իր դանդաղկոտության հետևանքով Հաննիբալը Սկիպիոնին ժամանակ տվեց, որն անհրաժեշտ էր նրա բանակի վերականգնման համար, մի դրություն, որը հետագայում, թեև զգալիորեն մեծ մասշտաբներով, ճշտորեն կրկնվելու էր Կաննեի մոտ մղած ճակատամարտում։

Սակայն Հաննիբալի բախտը բերեց։ Պլակենտիային նրա մոտենալուց շատ չանցած՝ հռոմեական զորաճամբարում ապստամբեցին գալլերը (1200 հետևակային և մոտ 200 հեծյալ) և գիշերային կոտորածից հետո (որտեղ, հակառակ Լիվիոսի պատմածի, ոչնչացան շատ հռոմայեցիներ) փախան պունիկացիների մոտ։ Ընդունելով փախստականներին, Հաննիբալն ուղարկեց նրանց հայրենիք, որպեսզի նրանք իրենց հայրենակիցներին համոզեին դաշնակցելու կարթագենցիների հետ։ Նա ենթադրում էր, որ ինչպիսին էլ լիներ այդ փորձի հետևանքը, այն ցեղերը, որոնց պատկանում էին փախստականները, չէին կարող հույս դնել Հռոմի բարեկամության վրա։ Ճիշտ նույն ժամանակ Հաննիբալին ներկայացան նաև բոյերը, որպեսզի հաստատեն նրա հետ իրենց դաշինքը։ Նրանք նույնիսկ կամեցան նրան հանձնել հռոմայեցի մագիստրատներին, որոնք, Մուտինյան պատերազմից ի վեր, նրանց մոտ գերության մեջ էին, բայց Հաննիբալը վճռեց, որ կարող է իրեն թույլ տալ ցուցաբերելու մեծահոգի վարմունք. նա գերիներին վերադարձրեց բոյերին, որպեսզի սրանք կարողանան նրանց փոխանակել իրենց պատանդների հետ (Պոլիբիոս, 3, 67, Լիվիոս, 21, 47)։ Սակայն որոշ ժամանակ հետո Հաննիբալը տեսավ, որ գալլերի դիրքավորումը նշանակալիորեն ավելի բարդ էր, քան սկզբում թվում էր իրեն և, որ նրա ձեռնարկած դիվանագիտական քայլերը, չնայած ջերմ ու բարեկամական իրադրության մեջ կատարված բոլոր բանակցություններին և փոխադարձ ժպիտներին, բոլորովին էլ բավարար չէին և չէին ապահովում ոչ միայն նրանց

աջակցությունը, այլև նույնիսկ լեգեոնությունը։ Գալլերը գեռևս շատ չէին հավատում կարթագենյան զենքի վերջնական հաղթանակին և, կամենալով իրենց վտանգաղերծել ապագայում հնարավոր պատիժներից, գաղտնի բանակցություններ էին վարում նաև հռոմայեցիների հետ (Պոլիբիոս, 3, 69, 5, Լիվիոս, 21, 52, 3)։

Գալլերի ապստամբությունը չափազանց անհանգստացրեց Սկիպիոնին։ Նա երկյուղ էր կրում, որ այդ կոտորածը Հռոմի դեմ բոլոր գալլերի ելույթի ազդանշանն է, և ընդունեց, իր տեսակետով, անհրաժեշտ նախազգուշական միջոցներ. հաջորդ գիշերը հռոմեական զորքերը դանդաղորեն դուրս եկան ճամբարից և շարժվեցին Տրեբիա գետի կողմը, որտեղ բլրաշատ տեղանքը դժվարացնում էր հեծելազորի գործողությունները։ Հաննիբալը նրանց ետևից ուղարկեց իր հեծելազորին, սակայն նրա նումիդիական հեծելազորայինները նեռվեցին հռոմայեցիների լքած ճամբարը, և մինչ նրանք ավար էին որոնում այնտեղ և հրդեհում կառույցները, թշնամիները կարողացան անցնել Տրեբիան։ Հաննիբալը, շարժվելով Սկիպիոնի հետքերով, վերստին իր զորքերը տեղավորեց հռոմեական բանակատեղի մոտ։ Գալլերն օգնում էին կարթագենցիներին, այդ թվում նաև պարենամթերքով. բացի այդ, Հաննիբալին հաջողվեց նաև գրավել հռոմեական Կլաստիդիում ամրոցը, որտեղ կենտրոնացված էին ցորենի հսկայական պաշարներ։ Դա Հաննիբալին նստեց 400 ոսկի, որոնք դավաճանության դիմաց վճարվեցին տեղի կայազորի պետ բրունդիսիումցի Դասիոսին։ Պունիկացիներն այդ հացահատիկից օգտվեցին այն ամբողջ ժամանակաընթացքում, քանի դեռ կանգնած էին Տրեբիայի մոտ (Պոլիբիոս, 3, 68, 1—8, 69, 1—5, Լիվիոս 21, 48)։ Հետևելով Հռոմի իտալիկյան դաշնակիցների նկատմամբ իր անփոփոխ վարքագծին, Հաննիբալը կարգադրեց Կլաստիդիումում գերի վերցվածների նկատմամբ չափազանց մեղմ վարվել. նա կամենում էր ցույց տալ, որ իտալիկները կարող են իրենից չվախենալ, որ նույնիսկ գերության մեջ նրանց համար ապահովված է կարթագենցիների ներողամտությունն ու բարեհաճությունը։

Մինչ այդ, Տրեբիայի մոտակայքում Սկիպիոնի զորաճամբար ժամանեց Սեմպրոնիոս Լոնգոսը իր զինվորների հետ։ Այժմ արդեն երկու կոնսուլները և գրեթե հռոմեական ամբողջ բանակը, բացառությամբ այն զորամիավորումների, որոնց Սկիպիոնն ուղարկել էր Իսպանիա, կամ Լոնգոսը թողել էր Իտալիայի ու Սիցիլիայի ծովափերը պաշտպանելու համար, կանգնած էին Հաննիբալի դեմ։ Հռոմում, որտեղ Տիկինոսի մոտ կրած պարտությունը, ինչպես այդ առիթով նրբանկատորեն արտահայտվում է Պոլիբիոսը, զարմանք առաջացրեց, և որտեղ հակամետ էին

անհաջողությունը վերագրել թե՛ Սկիպիոնի անկարողությանը և թե՛ գալլերի դավաճանությանը, Սեմպրոնիոսի ժամանումը նոր հույսեր մեջ. հասարակական կարծիքն անհամբերությամբ սպասում էր վճռական և այս անգամ՝ հաղթական ճակատամարտի (Պոլիբիոս, 3, 68, 9—[illegible]։ Զարմանալի չէ, որ Սեմպրոնիոսը նույնպես կռվի էր ձգտում, թեև նա ողջամտություն ունեցավ իր զինվորներին հանգիստ տալու Լիլիբեոնից դեպի Հյուսիսային Իտալիա կատարած քառասնօրյա անցումից հետո (Պոլիբիոս, 3, 68, 14)։

Ընդհանրապես թե՛ Պոլիբիոսը և թե՛ Տիտոս Լիվիոսը գործն այնպես են պատկերում (և այդ միտումնավոր նկարագրությունը բազմիցս նկատվում է նաև հետագայում), որ իբր հռոմեական զորաճամբարում վեճ կար պետության շահերով վճռականորեն առաջնորդվող և Հաննիբալի հետ նոր ճակատամարտի դեմ հանդես եկող ողջամիտ ու փորձված կոնսուլ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի և նրա թեթևամիտ ընկերակցի՝ Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսի միջև, որը կարիերիստական նպատակներով պնդում էր նոր ճակատամարտ տալ, վտանգի տակ դնելով Հռոմեական պետության շահերն ու բուն գոյությունը։ Այստեղ չի կարելի չտեսնել Սկիպիոններին, ինչպես նաև հետագայում Լուկիոս Էմիլիոս Պավլոսին իդեալականացնող ավանդության արտացոլումը։ Մեկ անգամ ևս հիշեցնենք, որ Պոլիբիոսը մոտիկ էր հատկապես Սկիպիոններին, իսկ չէ որ Էմիլիոսներն ու Կորնելիոս Սկիպիոնները պատկանում էին միևնույն քաղաքական խմբավորմանը։ Այդ ավանդությունը պետք է հակադրվեր Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսի մասին եղած ավանդություններին։ Վերջինս իբր թե մեն-մենակ, ինչպես գրել է Էննիոսը, իր քաղաքականությամբ փրկել է Հռոմը։ Անտիկ պատմագիրները ձգտում են ցույց տալ, որ Կորնելիոս Սկիպիոնները և Էմիլիոսները հետևում էին քաղաքական նույն սկզբունքներին, ինչ Փաբիոսները. թե՛ Տրեբիայի և թե՛ Կաննեի մոտ կրած պարտությունները պարզապես բացատրվում են նրանով, որ ժամանակին նրանց չանսացին։ Նկատենք նաև, որ Սեմպրոնիոսները մոտիկ էին Կլավդիոսներին, և այդ հանգամանքը նույնպես բացասական առումով ազդեց կոնսուլի գործողությունների գնահատման վրա։ Ճիշտ է, Լիվիոսը (21, 52, 2) սկզբում կոնսուլների միջև եղած վեճի և հատկապես Սկիպիոնի դիրքավորման մասին խիստ զուսպ է խոսում. կոնսուլներից մեկը, սեփական դառը փորձից ելնելով, խորհուրդ էր տալիս սպասել, մյուսը, որ ավելի վճռական էր, ամենափոքր հետաձգումն իսկ չէր հանդուրժում։ Մի քիչ հետո պատմելով պունիկացիների հետ փոքր և քիչ թե շատ լուրջ նշանակություն չունեցող ընդհարման ժամանակ հռոմայեցիների տարած

հաղթանակի մասին, Լիվիոսը (21, 53, 1—7) բերում է Սեմպրոնիոսի դեմագոգիական ճառերը (զինվորները քաջալերված են հաղթանակով, բոլորը ճակատամարտի են ձգտում, բացի Սկիպիոնից. էլ ինչի պետք է սպասել. դարձյալ մի հաղթանակի և մի կոնսուլի. թշնամին կանգնած է գրեթե Հռոմի պարիսպների տակ, այն դեպքում, երբ «մենք», խայտառակելով «մեր» նախնիների փառավոր անցյալը, վախկոտությամբ թաքնվում ենք նրանից ճամբարում) և ավելացնում է, որ Սեմպրոնիոսը կամենում էր հնարավորությունն օգտագործել և հաղթանակ տանել մեն-մենակ, առանց ընկերակցի մասնակցության և նոր կոնսուլների ընտրություններից առաջ չկանգնել պատերազմը վարելու գործը նրանց հանձնելու անհրաժեշտության առաջ։ Պոլիբիոսը (3, 70, 2—8) այս մասին նշանակալիորեն ավելի հանգամանորեն է խոսում։ Նա մանրամասնին շարադրում է Սկիպիոնի պատճառաբանությունը։ Վերջինիս կարծիքով ավելի լավ կլիներ, եթե հռոմայեցի զորականները ձմռան ընթացքում զբաղվեին ռազմական արվեստով. կարելի է հույս դնել նաև այն բանի վրա, որ եթե պունիկացիները երկար ժամանակ անգործ նստեն, գալլերը կանցնեն հռոմայեցիների կողմը։ Պոլիբիոսը լռությամբ չի անցնում նաև Սկիպիոնի անձնական դրդապատճառների կողքով, սակայն դրանց մասին խոսում է զուսպ ու հարգալից արտահայտություններով. Սկիպիոնը հույս ուներ, վերքը բուժելուց հետո, օգտակար լինել պետությանը (պետք է հասկանալ անձամբ գլխավոր հրամանատարի դերով հանդես գալու իմաստով)։ Իսկ Սեմպրոնիոսի մասին խոսելիս Պոլիբիոսը հարկ չի համարում նրա դիրքավորումը շարադրել գոնե այնպես, ինչպես այդ արել է Լիվիոսը, և հասնում է ուղղակի հիշոցների. Սեմպրոնիոսը հասկանում էր, որ Սկիպիոնը գործնական բան է ասում, սակայն փառասիրությունից դրդված և ինքնավստահորեն նա շտապում էր պատերազմել, նախքան Սկիպիոնը ի վիճակի կլիներ պայքարին գործուն մասնակցություն ունենալ, և նոր կոնսուլները իշխանությունը կվերցնեին իրենց ձեռքը։ Այդ իսկ պատճառով, խրատական ձևով եզրակացնում է Պոլիբիոսը, նա անխուսափելիորեն պետք է պարտություն կրեր. չէ որ նա առաջնորդվում էր ոչ թե ընդհանուր, այլ շահադիտական նպատակներով։

Իրենց ամբողջ միասնավորությամբ հանդերձ, այդ պատմությունները արտացոլում են որոշակիորեն իրական փաստեր՝ կոնսուլների մրցակցությունը, այն կոնսուլները, որոնք ձգտում էին հաղթել Հաննիբալին, բայց չէին կամենում միմյանց հետ կիսել հաղթողի դափնիները։

Իսկ Հաննիբալը նույնպես մարտի էր ձգտում։ Պոլիբիոսի պատմածի համաձայն (3, 70, 9—12), նա քաջատեղյակ էր այն մասին, թե

ինչպիսի ձգտումներ էին փոթորկում Սեմպրոնիոսին, և իր կողմից ամեն կերպ խրախուսում էր հռոմեական զորավարին, նրան ուղղակի հրապուրելով դեպի իր լարած որոգայթը։ Հաննիբալի մտքերի ընթացքը մոտավորապես նույնն էր, ինչ Սկիպիոնինը։ Ճակատամարտն արդեն անհրաժեշտ էր այն պատճառով, որ դեռևս առկա էր գալլերի օժանդակությունից օգտվելու հնարավորությունը. ճակատամարտն անհրաժեշտ էր նաև այն պատճառով, որ այժմ կարթագենյան բանակի դեմ կանգնած էին անվարժ նորակոչիկներ (և բացի այդ, Սկիպիոնը նույնպես, քանի դեռ բուժում էր իր վերքը, չէր կարող մասնակցել ճակատամարտին)։ Վերջապես,— և դա Պոլիբիոսի տեսակետով ամենաէականն էր,— Հաննիբալը անհրաժեշտ էր համարում գործել և ոչ թե ժամանակը անցկացնել պարապության մեջ։ Մեր սկզբնաղբյուրն այդ առթիվ նկատում է. այն զորավարը, որն իր զորքերը բերել է օտար երկիր, ձգտելով իրագործել չափազանց հանդուգն ձեռնարկումներ, պարտավոր է մշտապես նորանոր հույսեր արթնացնել իր զինակիցների մեջ. նրա համար փրկություն տանող միակ ճանապարհը նմանօրինակ գործելակերպի մեջ է։ «Փրկություն» բառն ակամայից ուշադրություն է լարում. այժմ արդեն ոչ միայն իր զինվորներին դիմող կարթագենյան զորավարի շուրթերին է դրվում դարձվածն այն մասին, որ նրանց միայն մի ընտրություն է մնում՝ հաղթանակ կամ կործանում։ Այժմ, որպես իր խորհրդածությունների ամփոփում, նույն այդ միտքը մատուցում է հեռավոր անցյալի պատմագիրներից գրեթե ամենախոշորը, ներհուն դիտողը, խոր մտածողը, որը նաև փորձված զորական էր և պետական գործիչ։

Սակայն միայն այդ նկատառումները չէին, որ Հաննիբալին հարկադրեցին վերջ ի վերջո հրաժարվելու այն սպասողական դիրքավորումից, որը նա գրավել էր Տիկինոսի մոտ մղած ճակատամարտից անմիջապես հետո։ Վերահաս իրադարձությունները նրան ցույց տվեցին, որ քանի դեռ հռոմեական լեգեոնները գտնվում են Հյուսիսային Իտալիայում, նա, ինչպես հարկն է, չի կարող համոզված լինել իր դրության կայունության մեջ։ Ինչպես վերևում արդեն ասվել է, Հաննիբալն իմացավ, որ նրան դաշնակցած մի քանի գալլական ցեղեր, որոնք բնակվում էին Պադոսի հովտում, Տրեբիայից ոչ հեռու, բանակցություններ էին սկսել հռոմայեցիների հետ, հույս ունենալով այդպիսով հռոմեական զենքի հաղթանակի դեպքում վրիժառությունից ապահովել իրենց, և որ հռոմայեցիները բացահայտորեն արդեն գոհ են այն բանից, որ այդ ցեղերը փորձում են պահպանել չեզոքություն և բարեհաճորեն են ընդունում նրանց։ Լիվիոսը գրում է Հաննիբալին համակած զայրույթի

մասին. սաստիկ զայրացած պունիկացին կրկնում էր, որ ինքը չէ որ գալլերի կանչով է եկել Իտալիա, որպեսզի նրանց ազատագրի հռոմեական ճնշումից։ Եվ ահա այժմ, կամենալով ըստ երևույթին ամրապնդել գրեթե արդեն ձեռք բերված ազատությունը, Հաննիբալը մերձապատության ցեղերի դեմ ուղարկեց պատժիչ արշավախումբ (2000 հետևազորային և 1000 հեծյալ գալլեր ու նումիդիացիներ)։

Ահավոր ավերածության ենթարկվելով, այդ ցեղերը դիմեցին կոնսուլներին, խնդրելով օգնություն, քանի որ նրանք իբր տուժել էին հռոմայեցիներին չափազանց նվիրված լինելու պատճառով։ Լիվիոսի պատմածի համաձայն, կոնսուլների միջև այս անգամ ևս վեճ սկսվեց։ Սկիպիոնին դուր չէր գալիս մարտի մեջ մտնելու համար հռոմայեցիներին առաջարկված ժամանակը և ոչ էլ բուն առիթը, քանի որ նա չէր վստահում գալլերին, որոնց համարում էր պատրաստ նոր դավաճանությունների համար։ Սեմպրոնիոսը համառորեն պնդում էր, ասելով, որ դաշնակիցներին պահպանելու լավագույն միջոցը դա նրանցից դժբախտության մեջ ընկածներին և օգնության կարիք ունեցողներին սատարելն է։ Եվ որովհետև Սկիպիոնը դանդաղում էր և որոշակիորեն չէր կամենում գործել, Սեմպրոնիոսը Հաննիբալի հեծյալների դեմ ուղարկեց իր անմիջական հրամանատարության տակ գտնվող հեծելազորի մեծ մասը, 1000 նիզակաձիգներով հանդերձ։ Անսպասելիորեն հարձակումը իրարանցման մեջ գցեց ավարով ծանրաբեռնված կարթագենական զինվորներին, որոնք բոլորովին անկարգ, ցիրուցան եղած թափառում էին երկրում. նրանցից շատերն սպանվեցին, իսկ մնացածները փախան բանակատեղ՝ պահակների պաշտպանության տակ։ Հռոմայեցիները ևս ետ քաշվեցին իրենց զորատեղը, սակայն Սեմպրոնիոսը վերստին մարտի ուղարկեց արդեն իր ամբողջ հեծելազորը և բոլոր նիզակաձիգներին։ Հաննիբալը, իր զինվորներին կանգնեցնելով ճամբարի ամրությունների մոտ, դասավորեց թշնամուն դեմ հանդիման, նրանց թույլ չտալով շփման մեջ մտնել թշնամու հետ, ակնհայտորեն այն պատճառով, որ այս անգամ մարտը պարտադրվում էր նրան և ընթանալու էր իրեն համար անցանկալի ձևով։ Հաննիբալը կամենում էր ճակատամարտ տալ իր իսկ ծրագրերին ու մտահղացումներին համապատասխան ձևով։ Հենց այդպես հավանաբար պետք է հասկանալ Պոլիբիոսին, երբ նա գրում է, թե կարթագենցի զորապետը այդ պահին պատրաստ չէր վճռական ճակատամարտի և գտնում էր, որ առանց վաղօրոք մշակված ծրագրի և այն էլ դատարկ առիթով, չպետք է այն ձեռնարկել (Պոլիբիոս, 3, 69, 5—14, համմ. Լիվիոսի մոտ, 21, 52, 3—11)։ Եվ այնուամենայնիվ, գլխավորն արված էր. Հաննիբալը Սեմպրոնիոսին ներշնչեց

այն միտքը, որ նա հաղթել է կարթագենցիներին (նրան այդպես կարծելու իրավունք էր տալիս այն, որ այդ ընդհարումներում պունիկացիների կորուստներն ավելի էին, քան հռոմայեցիներինը) և դրանով իսկ ամրապնդեց նրա վստահությունը մոտալուտ վճռական հաղթանակի հանդեպ։ Խնդությամբ համակված Սեմպրոնիոսը նույնիսկ չկամեցավ ունկնդրել իր պաշտոնակցին. նա այլևս չէր կամենում սպասել։ Սակայն այս անգամ ճակատամարտը նախապատրաստեց և դրա համար տեղ ընտրեց Հաննիբալը։

Պունիկյան զորաճամբարի և Տրեբիայի միջև հոսում էր մի գետակ (Նուրետտա՞), որն ուներ եղեգներով, թփուտներով և ծառերով պատած բարձրադիր ափեր։ Այդ վայրը վաղուց արդեն գրավել էր Հաննիբալի ուշադրությունը։ Իր կատարած շրջագիտումների ժամանակ նա հետազոտեց այն և համոզվեց, որ այնտեղ դյուրությամբ կարելի է թաքցնել ոչ միայն հետևազորայիններ, այլև հեծյալներ, հատկապես, եթե զենքերը դրվեն գետնին, իսկ սաղավարտները թաքցվեն վահանների տակ։ Հաննիբալը վճռեց հենց այդտեղ էլ դարան սարքել։ Նախապես նա իր պլանը քննարկեց ռազմական խորհրդում, որտեղ հրավիրեց իր բանակի բարձր հրամանատարներին, և, ստանալով նրանց հավանությունը, սկսեց ձևավորել հատուկ զորաջոկատ։ Հաննիբալը վերջինիս հրամանատար կարգեց իր եղբորը՝ Մագոնին, որը Տիկինոսի ճակատամարտից հետո դեպի Պլակենտիա կատարած երթի ժամանակ արդեն գլխավորում էր նումիդիական հեծելազորը, և նրան հանձնարարեց զորանի համար ընտրել 100 հետևազորային և նույնքան էլ հեծելազորային։ Երբ ընտրված զորականներով Մագոնը ներկայացավ Հաննիբալին, սա իր հերթին նրանց հրամայեց, որ իրենց զորամիավորումներից դարձյալ ընտրեն 9-ական մարդ։ Հավաքելով, այդպիսով, 1000 հետևազորային և նույնքան էլ հեծյալ, նա գիշերը տեղավորեց նրանց այն վայրում, որը մինչ այդ ինքն էր ընտրել։

Ձմեռային արևադարձի օրն էր։ Վաղ առավոտյան ձյուն եկավ, ապա անձրևեց։ Հաննիբալն իր նումիդիական հեծելազորին հրամայեց անցնել Տրեբիան և, սրարշավ մոտենալով թշնամու ճամբարի դարպասներին, պահակների վրա տեղեր նետել, հռոմայեցիներին մարտի հրավիրել, իսկ Իբրը սկսվի ճակատամարտը, դանդաղորեն նահանջել դեպի գետը և ստիպել, որ հակառակորդն իր հերթին, անցնի այն ափը, որտեղ կանգնած էին կարթագենցիները։ Բոլոր մնացածներին կարգադրվեց նախաճաշել, պատրաստել զենքերն ու ձիերը և սպասել ազդանշանի։

Նումիդիացիները փայլուն կերպով կատարեցին առաջադրանքը։

Երբ նրանք ճամբարի դարպասների մոտակայքում կազմակերպեցին աղմուկ ու անկարգություն (ըստ Պոլիբիոսի, հազիվ էր նկատվում նրանց մոտեցումը), Սեմպրոնիոսը, հաջողության նկատմամբ ոչ մի կասկած չունենալով, նրանց դեմ հանեց իր հեծելազորը, ապա նաև մյուս զինվորներին։ Սակայն նա այդ արեց խիստ շտապողականության։ Նրա զինվորները դաշտ դուրս եկան քաղցած ու ոչ բավականաչափ տաք հագնված, ձիերը չէին կերակրվել։ Երբ հռոմայեցիները մտան գետի մառախլապատ շերտը, հետապնդելով նահանջող նումիդիացիներին, նրանք ավելի ու ավելի սառեցին։ Գետի սառը ջուրը հասնում էր նրանց կուրծքը, այնպես որ, երբ զինվորները դուրս եկան մյուս ափ, նրանք հազիվ էին կարողանում զենքերը պահել ձեռքներին։

Կարթագենյան զինվորները նույն այդ ժամանակ տաքանում էին խարույկների մոտ, շփվում ձիթայուղով և նախաճաշում։ Ստանալով պայմանավորված ազդանշանն այն մասին, որ հռոմայեցիներն անցել են գետը, Հաննիբալն իր զորքերը դաշտ դուրս բերեց։ Առջևում նա կանգնեցրեց բալեարներին՝ թեթև հետևազորը (8 հազար մարդ), նրանից հետո՝ ծանրազեն հետևազորը (20 հազար մարդ՝ իբերներ, գալլեր և լիբիացիներ), իսկ երկու թևերում՝ հեծյալներին (ըստ Լիվիոսի, 9 հազար, իսկ ըստ Պոլիբիոսի՝ ավելի քան 10 հազար մարդ) և փղերին։ Սեմպրոնիոսը, տեսնելով, որ իր հեծյալները չափազանց շատ են տարված մերթ նահանջող, մերթ դարձյալ հակագրոհի դիմող նումիդիացիների հետապնդմամբ և իրենց ենթարկում են խիստ մեծ վտանգի, նրանց հրամայեց նահանջել և միանալ հիմնական ուժերին։ Սեմպրոնիոսը կենտրոնում դասավորեց հետևազորը (ըստ Պոլիբիոսի, 16 հազար, իսկ ըստ Լիվիոսի՝ 18 հազար հռոմայեցիների, 20 հազար դաշնակիցների և նրանց, ովքեր ունեին լատինական քաղաքացիության իրավունք, դրանից զատ՝ կենոմանների գալլական ցեղի զինվորներին՝ ինսումբրների և, հետևաբար, Հաննիբալի թշնամիներին), իսկ թևերում՝ հեծելազորը (մոտավորապես 4 հազար մարդիկ)։

Ճակատամարտն սկսեցին բալեարները, որոնք հռոմեական նիզակաձիգներին ստիպեցին նահանջել (Պոլիբիոսի պատմածից հայտնապես փաստվող այս մանրամասնի մասին Լիվիոսը, հասկանալի նկատառումներով, լռում է), իսկ այնուհետև միացան կարթագենական հեծելազորայիններին, որոնք թևային հարված էին հասցնում։ Հռոմեական հեծելազորը չախչախվեց հակառակորդի թվական գերակշռություն ունեցող հեծելազորի, բալեարների և փղերի կողմից։ Ծանրազեն հետևազորայինները մարտնչում էին մեծ համառությամբ, կատաղի կերպով, սակայն առանց որոշակի արդյունքի։ Հռոմայեցիների համար անսպասելիորեն, դարանից Մագոնի ջոկատը հարվածեց նրանց թիկունքին և հռոմայեցիների վերջին շարքը դրեց իրարանցման մեջ։ Շրջապատման մեջ ընկած հռոմեական հետևազորը, արիաբար դիմադրելով, ճեղքեց կարթագենացիների մարտակարգը և հարկադրեց ետ շրջել փղերին, որոնք դեռ էր մնացել նեսվեին հենց իրենց՝ պունիկացիների վրա։ Հաննիբալը հրամայեց փղերին տեղափոխել թևերը և ուղղել նրանց կենոմանների դեմ, որոնք դիմեցին խուճապահար փախուստի։ Այդ պայմաններում 10 հազար հռոմեական հետևազորայիններ ճեղքեցին-անցան կարթագենական զորաշարքերը և դուրս եկան շրջապատումից։ Հնարավորություն չունենալով վերադառնալ իրենց ճամբարը, նրանք նահանջեցին դեպի Պլակենտիա։ Նույն տեղը, իսկ այնտեղից Սկիպիոնի հրամանատարությամբ Կրեմոնա մեկնեցին նաև մարտի ժամանակ ճամբարում մնացած զորամիավորումները (հմմտ. սակայն Ապպիանոսի մոտ. հռոմայեցիները փախչում են իրենց ճամբարը, և արդեն այնտեղից Սկիպիոնը բանակի մնացորդները հասցնում է Պլակենտիա և Կրեմոնա)։

Կարթագենցիները հաղթանակ տարան նաև այս անգամ, սակայն այժմ արդեն զգալիորեն ավելի մեծ կորուստներով։ Նրանց շարքերը հատկապես խիստ քայքայեց վատ եղանակը. մահանում էին մարդիկ, ընկնում ձիերը, ոչնչացան գրեթե բոլոր փղերը։ Պոլիբիոսը գրում է, որ կարթագենցիների մոտ մնացել էր միայն մեկ փիղ, սակայն Լիվիոսի՝ մեր կարծիքով ավելի ճշգրիտ տվյալների համաձայն, Հաննիբալը Տրեբիայից հետո իր տրամադրության տակ դեռևս ուներ ավելի քան 7 փիղ (Պոլիբիոս, 3, 71—74, Լիվիոս, 21, 54—55, 58, 11, Ապպ., Հաննիբ., 6—7)։

III

Հաննիբալը կարող էր գոհ լինել։ Տրեբիայի մոտ տարած հաղթանակը նրա ձեռքը հանձնեց Այսրալպյան Գալլիան և հնարավորություն ընձեռեց իր կողմը գրավելու այդ երկրում բնակվող բոլոր ցեղերին (Պոլիբիոս, 3, 75, 2)։ Թվում էր, թե այն նրա առաջ ճանապարհ էր բացում նաև դեպի Կենտրոնական Իտալիա՝ էտրուրիայով դեպի Հռոմ։ Վերջապես այն խուճապ դրեց նաև բուն Հռոմում, ինչը, բնականաբար, բարենպաստ ազդեցություն թողեց նաև Իտալիա ներխուժած կարթագենցիների վրա։

Սեմպրոնիոսն սկզբնապես ջանում էր հռոմեական կառավարությունից և մանավանդ ժողովրդից թաքցնել աղետի ճշգրիտ չափերը։

Նա Հռոմ տեղեկություն հաղորդեց, որ ճակատամարտ է տեղի ունեցել, սակայն վատ եղանակը թույլ չի տվել հաղթանակ տանելու (Պոլիբիոս, 3,75,1)։ Բայց Հռոմում հետզհետե իմացան ճշմարտությունը, այն, որ կարթագենցիները գրավել են հռոմեական ճամբարը, և բոլոր գալլերը հարել են նրանց, որ հռոմեական զորքերը, կամ ավելի ճիշտ՝ նրանց մնացորդները, թաքնվել են քաղաքներում, և որ նրանց սնունդամթերք է մատակարարվում ծովից՝ Պադոսի վրայով. դա միակ ուղին էր, որին Հաննիբալը չէր կարող հսկել (Պոլիբիոս, 3,75,2—3)։ Այս տեղեկությունները ահավոր տագնապ տարածեցին Հռոմում։ Դատելով ըստ այնմ, թե ինչպես է Լիվիոսը (21,57,1—2) պատկերում իրավիճակը, այնտեղ հակված էին նույնիսկ խիստ մեծացնելու աղետի չափերը։ Օրեցօր սպասում էին Հաննիբալի զորքերի մոտենալուն բուն իսկ Հռոմին, և.ո՞չ փրկության հույս էին տեսնում, ո՞չ էլ դրսից օգնություն ստանալու կամ ազդու դիմադրության հնարավորություն։ Այդպիսին էին տրամադրությունները, երբ հերթական կոնսուլական ընտրությունների անցկացման համար Հռոմ ներկայացավ Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսը, անցնելով Այսբալպյան Գալլիայում սփռված թշնամական հեծելազորի ջոկատների միջով։ Կատարելով իր առաքելությունը, նա նույն կերպ վերադարձավ ձմեռային կացարանները։

217 թվականի համար կոնսուլներ ընտրվեցին Գնեոս Սերվիլիոս Գեմինոսը և Գայոս Փլամինիոսը։ Որքանով որ կարելի է դատել, այդպիսի ելքը հետևանք էր հռոմեական հասարակության մեջ եղած քաղաքական սուր պայքարի, հասարակություն, որտեղ հիմնական խնդիրը հաղթական թշնամու դեմ պաշտպանության կազմակերպումն էր։ Այն նաև որոշակի կոմպրոմիսի արտահայտություն էր։ Ինչպես արդեն ասվել է, էմիլիոսների և Կորնելիոսների արիստոկրատական խմբավորմանը մոտիկ կանգնած Սերվիլիոսների տոհմի ներկայացուցչի՝ Գնեոս Սերվիլիոսի, ընտրությունը այդ տոհմին հնարավորություն ընձեռեց, չնայած նույնիսկ Սկիպիոնի անհաջողությանը, պահպանելու իր դիրքերը կառավարության մեջ։ Սակայն, այնուամենայնիվ, կարևոր փաստ էր Գայոս Փլամինիոսի կոնսուլ ընտրվելը։ Այդ անձնավորությունը վաղուց արդեն աչքի էր ընկել որպես դեմոկրատական շարժման ղեկավար, ժողովրդական առաջնորդ, որն անհաշտ պայքար էր մղում սենատի դեմ։ Հայտնի է, որ 232 թ., որպես ժողովրդական տրիբուն, նա առաջարկեց քաղաքացիներին Գալլական դաշտում հողեր բաժանելու օրենք, որն անմիջականորեն ուղղված էր նոբիլության շահերի դեմ։ Նա նոանդուն կերպով պաշտպանում էր նաև «Կլավդիոսի օրենքը», որը սենատորներին արգելում էր 300 մեծ սափոր տարողությունից ավելի խոշոր նավեր ունենալը, և, հետևաբար, խիստ սահմանափակում էր ծովային առևտրին նրանց մասնակցությունը։ 223 թ., երբ Գայոս Փլամինիոսը առաջին անգամ ընտրվեց կոնսուլ, բախում տեղի ունեցավ նրա և սենատի միջև, որը հրաժարվեց այն ժամանակվա ընտրությունների ելքն օրինական ճանաչելուց։ Փլամինիոսը, քամահրելով սենատի որոշումը, արշավանքի մեկնեց ընդդեմ ինսուբրների, հաղթանակ տարավ նրանց դեմ, իսկ այնուհետև կատարեց տրիումֆ, դարձյալ ժողովրդական ժողովի որոշմամբ և սենատի կամքին հակառակ։

Իսկ ի՞նչ էր անում Հաննիբալը։ Լիվիոսը (21,57) գրում է, որ մինչև ցրտերն ընկնելը, Հաննիբալը գիշերով հարձակում գործեց, լավ ամրացված հռոմեական էմպորիումի վրա, որը հեռու չէր Պլակենտիայից։ Սակայն նրան չհաջողվեց աննկատ մնալ. պահակներն աղմուկ բարձրացրեցին, որը լսելի էր Պլակենտիայում, և վաղ առավոտյան հեծելաջոկատով հայտնվեց Սեմպրոնիոսը։ Մարտում Հաննիբալը վիրավորվեց և հեռացավ ճակատամարտի դաշտից։ Մարտն ինքնաբերաբար դադարեց։ Ավելի հաջող վերջացավ մեկ այլ հռոմեական էմպորիումի՝ Վիկտումվիայի դեմ նրա ձեռնարկած արշավանքը։ Պունիկացիները կարողացան փախուստի մատնել քաղաքացիներին և պարիսպների ետևում թաքնված շրջակա բնակիչներին, որոնք դուրս էին եկել այն պաշտպանելու։ Հաջորդ օրը քաղաքը հանձնվեց, ընդունելով կարթագենական կայազորին, բնակչությունից խլեցին զենքերը, իսկ Վիկտումվիան ավարի մատնվեց։ Գիտահետազոտական գրականության մեջ Տիտոս Լիվիոսի տեղեկությունները կասկածի տակ են առնվել։ Գտնում են, որ նրա պատկերած ռազմական գործողությունները հնարավոր չեն և, հետևաբար, տեղի չեն ունեցել։ Մեզ այդ ենթադրությունները համոզիչ չեն թվում։ Ընդհակառակը, Հաննիբալին անհրաժեշտ էր Հյուսիսային Իտալիայում ամրապնդել իր հաղթանակը և իշխանությունն այն պայմաններում, երբ տակավին այնտեղ էին գտնվում հռոմեական զորքերը։ Վերջիններս թեև ջախջախվել էին երկու մեծ ճակատամարտերում, բայց, այնուամենայնիվ, իրենցից ներկայացնում էին խոշոր և լուրջ ուժ, որի հետ հարկ էր հաշվի նստել։ Միանգամայն բնական էր նաև այն, որ, խուսափելով խոշոր քաղաքների պաշարումից, Հաննիբալը վճռեց հարվածներ հասցնել հռոմեական մատակարարման կենտրոններին, կամենալով խոչընդոտել գաղութների համար պարենամթերքի հայթայթումը։ Վերջապես, այն մանրամասները, որոնք բերում է Տիտոս Լիվիոսն իր պատմածի մեջ, դուրս չեն գալիս իրականության շրջանակներից։ Եվ իրոք, ընդհանրապես ի՞նչ նպատակ պետք է հետամտեր Տիտոս Լիվիոսը կամ նրա աղբյուրը, որպեսզի պատմություն

հնարեր այն ճակատամարտերի մասին, որոնցից մեկը հանգեցրեց նրան, որ հռոմայեցիները ետ մղեցին Էմպորիումի վրա կատարված հարձակումը, իսկ մյուսն ավարտվեց եթե ոչ կանոնավոր զորամիավորումների, ապա բոլոր պարագաներում հռոմեական գաղութաբնակների ևս մեկ պարտությամբ։ Հաղիվ թե կարելի է ենթադրել, որ նմանօրինակ մարտական գործողությունների մասին եղած պատմությունը կարող էր շոյել հայրենասիրական զգացումը։ Մնում է այն հարցը, թե ինչո՞ւ Պոլիբիոսը ոչինչ չի ասում այդ իրադարձությունների մասին. Սակայն Պոլիբիոսի լռությունն ինքնըստինքյան չի վկայում Լիվիոսի պատմածի դեմ։ Վերջինս, համենայն դեպս, որոշակի այդ հատվածում հենվում է հույն հեղինակից կախում չունեցող հռոմեական աղբյուրների վրա։ Ըստ երևույթին, իրադարձությունների ընդհանուր շղթայում Պոլիբիոսին այդ ձեռնարկումներն այնքան աննշան են թվացել, որ նա հնարավոր է համարել, առանց շարադրանքին վնաս հասցնելու, չհիշատակել դրանց մասին։

Այնուհետև Լիվիոսը (21, 58—59) պատմում է գարնան առաջին նշանների հետ Էտրուրիա ներխուժելու Հաննիբալի կատարած փորձի մասին, որի նպատակն էր այնտեղ ուժի կամ համոզելու միջոցով իր կողմը գրավել տեղական բնակչությանը։ Սակայն Ապենիններով անցնելիս կարթագենյան զորքն ընկավ փոթորկի մեջ, որը ռազմիկներին ստիպեց կանգ առնել. խիստ ուժեղ քամին, անձրևն ու կարկուտը, ապա նաև սառնամանիքը նոսրացրեցին կարթագենցիների շարքերը։ Ոչնչացան բազմաթիվ ձիեր և, ավելացնում է Լիվիոսը, յոթը այն փղերից, որոնք Տրեբիայից հետո տակավին մնում էին Հաննիբալի մոտ։ Ապենիններից իջնելով, ինչպես հաղորդում է մեր աղբյուրը, Հաննիբալը վերստին շարժվեց դեպի Պլակենտիա. այստեղ ճակատամարտ տեղի ունեցավ, սկզբում հռոմայեցիների բացահայտ գերակշռությամբ. վերջիններս փախուստի մատնելով կարթագենցիներին, հետապնդեցին նրանց ընդհուպ մինչև զորաճամբար։ Սակայն Հաննիբալը, մարտի մեջ լրացուցիչ ուժեր մտցնելով, հռոմայեցիներին հարկադրեց նահանջել։ Պլակենտիայի մոտ մղված ճակատամարտը ավարտվեց ոչ որքան թե՛ հռոմայեցիները և թե՛ կարթագենցիներն ստիպված էին նահանջել. առաջինները, համաձայն Լիվիոսի պատմածի՝ դեպի Լուկա, իսկ երկրորդները՝ Լիգուրիա։ Այնտեղ լիգուրները Հաննիբալին հանձնեցին հռոմեական երկու քվեստորների՝ Գայոս Փուլվիոսին և Լուկիոս Լուկրեսիոսին, երկու զինվորական տribունների և հինգ հոգու հեծյալների դասից՝ մեծ մասամբ սենատորների որդիներ։ Դրանով իսկ տեղական ցեղերը ցուցադրեցին իրենց ցանկությունը՝ դաշնակցային հարաբերություններ հաստատել Հաննիբալի հետ և մասնակցել Հռոմի դեմ նրա մղած պայքարին։

Ինչպես և նախընթաց դեպքում, Լիվիոսի՝ վերոնշյալ պատմության արժանահավատության վերաբերյալ եղած կասկածները չհիմնավորված են մեզ թվում։ Չխոսելով արդեն այն մասին, որ գոյություն չունի Լիվիոսի հաղորդումը ժխտող որևէ ավյալ (Պոլիբիոսի հաղորդումը միայն այն մասին, որ Հաննիբալը «ձմեռել է Գալլիայում», հույժ անորոշ է (3, 77, 3)), այլև Հաննիբալի բոլոր գործողությունները, որոնց մասին պատմում է հռոմայեցի պատմագիրը, պատկերվում են հոգեբանորեն արդարացված և ռազմական տեսակետից՝ նպատակահարմար։

Պատերազմն Էտրուրիա տեղափոխելու փութեռանդ այն ձգտումը, որն, ըստ երևույթին ցուցահանեց Հաննիբալը, կազմակերպելով Ապենիններով իր անցումը, դյուրությամբ է բացատրվում նրա ռազմաքաղաքական կացությամբ։ Իհարկե, նրան քաջ հայտնի էր, որ հռոմայեցիներն իրենց կայազորներն ուղարկում էին բոլոր այն կետերը, որտեղ նրանք կարող էին հարձակում սպասել՝ Սիցիլիա, Սարդինա, Տարենտոն, և որ նրանք կառուցել են ևս 60 պենտերա, որ կոնսուլները (Սերվիլիոսն ու Փլամինիոսը) հենց Հռոմում անց են կացնում նոր համալրումների զորահավաք, նոր դաշնակիցներից կազմակերպում են աշխարհազոր, որ նրանք նույնիսկ օգնություն են պահանջել Սիրակուզայի թագավոր Հիերոնից, որը նրանց ուղարկել է 500 կրետացի վարձկանների և 1000 պելտաստաների, և վերջապես այն, որ հռոմայեցիները սննդամթերքի պաշարները կենտրոնացրել են Արիմինումում և Էտրուրիայում, բացահայտորեն կամենալով այնտեղ փակել կարթագենցիների ճանապարհը (Պոլիբիոս, 3, 75, 4—7)։ Այդ պայմաններում Հաննիբալի համար կենսական կարևորություն ուներ հակառակորդին կանխելը և իր համար առավել բարենպաստ իրավիճակ ստեղծելը. նրա համար կարևորը հատկապես դաշնակիցներն էին։ Պատահական չէ, որ Պոլիբիոսը նշում է, որ Հաննիբալը գերի վերցված հռոմեական դաշնակիցներին ամեն կերպ համոզում էր, որ ինքն Իտալիա է եկել միայն Հռոմի դեմ պատերազմելու համար։ Եթե գերեվարված հռոմայեցիներին նա պահում էր հսկողության տակ և քաղցած վիճակում, ապա դաշնակիցների հանդեպ նա կամենում էր ցուցաբերել իր խորին բարեհաճությունը և, վերջիվերջո, պարզապես նրանց ուղարկեց տները, առանց փրկագնի, որպեսզի նրանք համաքաղաքացիներին համոզեին միանալու կարթագենցիներին, որոնք պայքարում էին հռոմեական տիրակալության դեմ, իտալիկական ազատությունը վերականգնելու համար։ Այսպիսին էր այն կարծիքը, որն ըստ Պոլիբիոսի պունիկյան զորապետը

ներշնչում էր բոլոր միջոցներով։ Եվ եթե չլիներ փոթորիկը, Հաննիբալի նպատակն, իհարկե, կիրականանար։

Դա բոլորովին էլ միակ պատճառը չէր։ Հաննիբալին հույժ անհանգստացնում էին նրա գալլական դաշնակիցների տրամադրությունները։ Նա դավաճանության և նույնիսկ իր կյանքի նկատմամբ մահափորձի երկյուղ էր կրում։ Նախազգուշական նկատառումներով Հաննիբալը գործադրեց, Պոլիբիոսի (3, 78, 1—4) խոսքերով ասած, զուտ «փյունիկյան» խորամանկություն. նա մշտապես փոխում էր տարբեր տարբերների համապատասխանող կեղծամներ ու հագուստ, այնպես որ նրան չէին կարող ճանաչել նույնիսկ ամենամոտիկ զինակիցները։ Պետք է ասել, որ Հաննիբալը բոլոր հիմքերն ուներ անհանգստանալու համար։ Գալլերն, իհարկե, Հաննիբալին կանչել էին Իտալիա և Հռոմի դեմ նրա պատերազմից ակնկալում էին իրենց ազատությունը, սակայն նրանք խիստ անբավական էին նաև նրանից, որ պատերազմը հույժ երկար ժամանակ էր, ինչ ընթանում էր իրենց սեփական երկրում, և այն բանից, որ ձգձգվում էր ներխուժումը Կենտրոնական Իտալիա, որտեղ նրանք հարուստ ռազմամավար էին սպասում իրենց համար (Պոլիբիոս, 3, 78, 5, Լիվիոս, 22, 1, 1—4)։ Դժգոհությանը վերջ տալու միակ միջոցը Այսբալպյան Գալլիայից, որքան հնարավոր էր, արագ Էտրուրիա հեռանալն էր։ Ապենինները հաղթահարելու փորձն, անշուշտ, պետք է նպաստեր Հաննիբալի բանակում եղած ներքին տարաձայնությունների վերացմանը։

Վերջապես, տաղնապալի լուրեր էին գալիս նաև Իբերիայից, որտեղ կարթագենցիների համար հույժ անբարենպաստ կացություն էր ստեղծվել։ Բանն այն է, որ Գնեոս Կորնելիոս Սկիպիոնը, որին նրա եղբայր Պուբլիոսը, ինչպես արդեն ասվել է, որպես իր ներկայացուցիչ, ուղարկել էր Իսպանիա, ափ իջավ հունական գաղութ Էմպորիումում և վերստին աստիճանաբար հռոմեական գերիշխանությանը ենթարկեց ամբողջ Միջերկրածովը, ընդհուպ մինչև Իբեր գետը, և Կիսսայի մոտ մղված ճակատամարտում ջախջախեց իբերո-պունիկյան միացյալ զորքը, գերի վերցնելով նրանց հրամանատարներին, ինչպես նաև ձեռք բերելով հարուստ ռազմամավար, այդ թվում՝ Հաննիբալի հետ Իտալիա մեկնած զորականներին պատկանող գույքը։ Հաննիբալի եղբայրը՝ Բարկայան Հասդրուբալը, որը դեռևս մինչ այդ ճակատամարտը անցել էր Իբերը, Կիսսայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո չհամարձակվեց դրոհել Գնեոս Կորնելիոս Սկիպիոնի վրա։ Հարձակվելով հռոմեական ծովայինների վրա, որոնց ջոկատները թափառում էին Տառակոնի մերձակայքում, նա նրանցից շատերին ոչնչացրեց, իսկ հետո հեռացավ Իբերի այն կողմը։ Սկիպիոնը դրությունը վերականգնեց Տառակոնում և նույնիսկ այնտեղ տեղակայեց ոչ մեծ կայազոր։ Նույն այդ ժամանակ Հասդրուբալը դարձյալ հայտնվեց Իբերից հյուսիս և իլերգետների ցեղին դրդեց հրաժարվել Սկիպիոնի հետ ունեցած դաշինքից, փորձեց նրանց հետ միասին ամայացնել հռոմեական դաշնակիցների գաղութները։ Իսկ երբ Սկիպիոնը եկավ նրա դեմ, Հասդրուբալը նորից հեռացավ Իբերի այն կողմը, իլերգետներին թողնելով իրենց սեփական բախտին։ Որոշ ժամանակ անց, Սկիպիոնը վերստին հնազանդեցրեց իլերգետներին, իսկ այնուհետև Կարթագենի հին դաշնակիցներին՝ ավանդաններին։ Ասածից, ի միջի այլոց, հետևում է, որ Ապպիանոսը սխալվում էր, կարծելով, որ իբր Գնեոս Կորնելիոս Սկիպիոնը Պուբլիոսի՝ Իսպանիա ժամանելուն սպասելիս ոչինչ չի ձեռնարկել (Ապպ., Իսպ., 15)։ Նրա գործողությունների շնորհիվ Հյուսիսային Իսպանիան վերադարձվեց հռոմեական տիրապետության ոլորտը, Պիրենեյան թերակղզին վերածվեց ռազմական գործողությունների թատերաբեմի, որտեղ իրական վտանգ ստեղծվեց պունիկյան տիրապետության նկատմամբ, և թերակղզու պաշտպանության համար թողնված կարթագենական զորքերը չկարողացան խոչընդոտել դրան (Պոլիբիոս, 3, 76, Լիվիոս, 21, 60—61)։

Ապենինները հաղթահարելու անհաջող փորձը, Պլակենտիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի «ոչ ոքի» ելքը կոնսուլներին ժամանակ ընձեռեցին նոր արշավանքի նախապատրաստությունն ավարտելու և Էտրուրիայում Հաննիբալին հանդիպելու համար։

Հռոմեական կառավարությունը նոր արշավանքին նախապատրաստվում էր ծայրահեղ ջղագարության մթնոլորտում։ Քաղաքում խոսակցություններ էին գնում սոսկ տարբեր տենակի տաղնապալից նախանշանների շուրջը և, իհարկե, միշտ գտնվում էին ականատեսներ, որոնք «իրենց աչքերով» տեսել կամ «իրենց ականջներով» լսել էին այն, ինչի մասին երկյուղով բերանից բերան էին հաղորդում, ինչը հետագայում խնամքով արձանագրվելով, մուծվել է պատմագիրների երկասիրությունների մեջ։ Պատմում էին, որ բանջարեղենի շուկայում աղատ ծնողների մի ինչ-որ վեցամսյա երեխա բարձրաձայն արտասանել է «տրիումֆ» բառը, որ անասնաշուկայում ցուլը բարձրացել է երրորդ հարկ և, երբ մարդիկ աղաղակ են բարձրացրել, վախեցած ցած է նետվել, որ երկնքում երևացել են նավերի պատկերներ, որ բանջարեղենի շուկայում Հույսի տաճարին հարվածել է կայծակը, որ Լանուվիումի տաճարում աստվածուհու ձեռքում շարժվել է նիզակը։ Դեռ ավելին. ագռավը թռել մտել է տաճար և նստել նրա օթյակում։ Պատմում էին,

որ Ամիտերնումի մերձակայքի շատ վայրերում երևացել էին սպիտակ սավաններ հագած ուրվականներ, որ Պիկենումում տեղացել է քարե անձրև, իսկ Կերեում կաղնե փոքր տախտակները, որոնցով այնտեղի քրմերը կանխագուշակում էին ապագան, ավելի էին փոքրացել, որ Գալլիայում պահակի պատյանից գայլն արագ դուրս է քաշել և տարել է սուրը։ Իշխանությունները որոշեցին ծեսերով հանգստացնել քաղաքը, կատարեցին մաղթանքներ, մատուցեցին ընծայաբերումներ, զոհեր, պետության անունից խոստումներ տրվեցին, որը, ինչպես ասում է Լիվիոսը (21, 62), զգալի չափով հանգստացրեց մարդկանց։

Սակայն, ինչպես երևում է նրա իսկ պատմածի շարունակությունից (22, 1, 8—20), հանգստացումը կարճատև էր։ Փլամինիոսը չէր հասցրել ստանձնել իր պաշտոնը, երբ քաղաք սողոսկեցին նոր լուրեր (և նույնիսկ ոչ թե լուրեր, այլ պաշտոնական տեղեկություններ էին տարածվում) աննպաստ նշանների մասին (հմմտ. Պլուտ. մոտ, Փաբ. Մաքս., 2)։ Օրինակ, հաղորդում էին, որ արևի սկավառակը փոքրանում է, որ Պրենեստեում երկնքից ցած են թափվել շիկացած քարեր, իսկ Արպիքի երկնքում տեսել են վահաններ և լուսնի հետ կռվող արև, որ գուշակման համար արվող վիճակահանության առարկաները, որոնց վրա գրի էին առնվում պատգամախոսների ասածները, իրենք իրենց փոքրացել էին, և նրանցից մեկը վիճակ էր ընկել հետևյալ գրությամբ. «Մարսը նիզակ է ճոճում», որ բուն Հռոմում Մարսի պատկերները ծածկվել էին քրտինքով, որ Կապուայում երկինքն ասես բոցավառվել էր, և լուսին երևացել էր անձրևի հետ ցած ընկնելիս, թե իբր ինչ-որ քաղաքացիների այծեր բրդի փոխարեն ծածկված են եղել մազերով, հավերը դարձել են աքաղաղներ, իսկ աքաղաղները՝ հավեր (հմմտ. Պլուտ. մոտ, Փաբ. Մաքս., 2)։ Սենատը կոնսուլ Գնեոս Սերվիլիոսի գլխավորությամբ որոշեց կատարել ողորմածարար նոր զոհաբերություններ ու նվիրատվություններ, աղոթքներ ու տոնակատարություններ։ Հատկապես հետաքրքիր է, որ քաղաքում զոր ու գիշեր անընդմեջ կազմակերպվում էին սատուրնալիաներ՝ տոնախմբություններ, որոնք պետք է հիշեցնեին «ոսկեդարի» մասին, դրսևորեին հռոմեական ժողովրդի միասնությունը, անկախ հասարակական դիրքից և դասային պատկանելությունից։

Սակայն Հռոմում կային նաև անհանգստության այլ պատճառներ։ Փլամինիոսն իր կոնսուլությունն սկսեց «Կլավդիոսի օրենքի» շուրջը խիստ սրված պայքարի իրավիճակում։ Կոնսուլը երկյուղ էր կրում, որ իրեն ատող սենատորները ինչ-որ պատրվակով կխանգարեն Հռոմից իր հեռանալը և, նախապես Սեպրոնիոսին հրաման ուղարկելով՝ զորքը Պլակենտիայից տեղափոխել Արիմինում (իսկ վիճակահանությամբ Փլա-

մինիոսին հենց այդ լեգեոններն էին բաժին ընկել), ինքը գրեթե թաքուն հեռացավ քաղաքից, և, չկատարելով սովորական կրոնական արարողությունները, մեկնեց հյուսիս։ Ընդունելով զորքի հրամանատարությունը, նա լեռնային կածաններով իր զինվորներին տարավ Էտրուրիա։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հռոմեական պետական արարողակարգի և, հատկապես նրա անխզելի և կարևորագույն մասը կազմող կրոնական-պաշտամունքային ծիսակարգի. նկատմամբ Փլամինիոսի դրսևորված բացահայտ արհամարհանքը լավագույն նյութ ընձեռեց նրա հանդեպ թշնամաբար տրամադրված սենատորական պրոպագանդայի համար. նրա մոտ նույնիսկ պատվիրակներ ուղարկեցին Քվինտոս Տերենտիոսին և Մարկոս Անտիստիոսին, պահանջելով վերադառնալ և կատարել այն ամենը, ինչ անհրաժեշտ է, սակայն Փլամինիոսը նրանց խոսքերին ուշադրություն չդարձրեց։ Մի կողմ թողած սենատի հետ ունեցած թշնամական հարաբերությունները և նրա համար սենատորների այս կամ այն պահանջին ենթարկվելու բարոյական լիակատար անհնարինությունը, Փլամինիոսը պարզապես չէր կարող զուր տեղը ժամանակ վատնել։ Նա պետք է փակեր Հաննիբալի ճանապարհը դեպի կենտրոնական Իտալիա (Լիվիոս, 21, 63, 22, 1, 4—7)։

217 թ. գարնանը կոնսուլական զորքերը դասավորված էին հետևյալ կերպ. զորամասեր, որոնք գտնվում էին Գնեոս Սերվիլիոսի հրամանատարության տակ և հայտնվեցին Արիմինումում, սակայն Սերվիլիոսը մնաց Հռոմում ծեսեր ու զոհաբերություններ կատարելու համար, և իր զորքերի կենտրոնացման վայրը ժամանեց Փլամինիոսից զգալիորեն ավելի ուշ։ Նա զորքերն ընդունեց Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնից. որն իբրև պրոկոնսուլ ուղարկվեց Իսպանիա (Ապպ., Իսպ., 8)։ Փլամինիոսը բանակեց Առետիումի մերձակայքում (Պոլիբիոս, 3, 77, 1—2)։

Թվում էր, թե կարթագենցիների առաջ փակված էին Էտրուրիա տանող բոլոր ճանապարհները, և կարելի էր հանգստությամբ սպասել նրանց հայտնվելուն՝ այդ երկրի մատույցներում ճակատամարտ տալու համար։ Սակայն Փլամինիոսից առաջ, անսպասելիորեն հասավ ցնցող լուրը. Հաննիբալն արդեն Էտրուրիայում էր։

Ինքյան հասկանալի է, որ նոր արշավանքի (որ կարող էր իրեն թույլ տալ Հաննիբալը) նախապատրաստությունը կայանում էր դաշնակիցներին իր կողմը գրավելու և, ամենից առաջ, հետախուզության մեջ։ Անհրաժեշտ էր գտնել առավել հարմար ու անվտանգ ճանապարհ, որպեսզի ճակատամարտը տրվեր կարթագենցիների համար բարենպաստ

իրավիճակում։ Սակայն Հաննիբալի ստացած տեղեկությունները լավատեսության համար առիթ չէին տալիս. բոլոր սովորական ճանապարհները գտնվում էին հռոմայեցիների հսկողության տակ, և նրանք, իհարկե, խանգարելու էին նրա բանակի առաջխաղացմանը։ Եվ այն ժամանակ Հաննիբալն անսպասելի որոշում ընդունեց՝ էտրուրիա անցնել մի ճանապարհով, որը երբեք ոչ ոք չէր օգտագործել, և որն այդ իսկ պատճառով Փլամինիոսը բոլորովին հաշվի չէր առել։ Ճանապարհը ձգվում էր գրեթե անանցանելի ճահճուտի միջով, որը թունավոր գոլորշիներ էր արձակում։ Ջրի մակարդակն այնտեղ սուր կերպով բարձրացավ Առնոս գետի վարարման հետևանքով։ Սակայն ճանապարհը հնարավորություն էր տալիս խուսափելու հռոմայեցիների հետ վաղաժամ հանդիպումից և անսպասելի արագությամբ հայտնվել էտրուրիայում։ Հաննիբալի այդ պլանը, որը թեև քիչ դժվարություններ չէր խոստանում, ռազմավարական տեսակետից լիովին արդարացավ, զորավարի համար ապահովելով այն, ինչն ամենաէականն էր նրա կացության մեջ՝ հանկարծակիության գործոնը (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 3, 78, 6—8, Լիվիոս, 22, 2, 2)։

Այսպիսով Գալլիայից դեպի էտրուրիա՝ Հաննիբալի անցումը իր բարդությամբ, այն ամենով, ինչ վիճակվեց կրել նրա բանակին, լիովին կարելի էր համեմատել Ալպերի կատարած անցման հետ։ Ջորասյան առջևում Հաննիբալը դասավորեց լիբիացիներին ու իբերներին, գումակի հետ միասին. դրանք ամենից ավելի կոփված ու փորձված ռազմիկներն էին և կարող էին հաղթահարել ցանկացած խոչընդոտ։ Նրանց ետևից պետք է գնային գալլերը։ Ջորասյունը վերջափակում էին հեծելազորայինները, որոնց մեջ էր նումիդիական հեծելազորը՝ Բարկայան Մագոնի հրամանատարությամբ. վերջինիս Հաննիբալը հատուկ հանձնարարություն էր տվել. եթե գալլերը ապստամբեին և կամենային հայրենիք վերադառնալ, Մագոնը ուժով պետք է հարկադրեր նրանց առաջ ընթանալու։ Ջորասյունը գնում էր, թաղվելով ճահճացեխի մեջ, հաղթահարելով վարարած Առնոսի ալիքները, գրեթե առանց դադարի, չորս օր ու երեք գիշեր։ Հատկապես տուժեցին գալլերը, որոնք այնքան էլ սովոր չէին զորաերթային կյանքի։ Նրանք հազիվ էին շարժվում կլպլուն տղմի միջով, ընկնում էին սատկող բեռնակիր ձիերի կողքին և արդեն չէին կարողանում վեր կենալ. ուրիշները պառկում էին բեռան կամ անասունների դիակույտերի վրա, փնտրելով այնպիսի տեղ, ուր կարելի լիներ գոնե մի քանի ժամ հանգստանալ։ Հաննիբալն ինքը գնում էր իր մոտ մնացած միակ փղով։ Անսպասելիորեն, խոնավությունից, ճահճային թունավոր գոլորշիներից և անքնությունից բորբոքեցին նրա աչքերը, և որովհետև Հաննիբալը ո՛չ ժամանակ ուներ և ոչ էլ բուժման հնարավորություն կորցրեց իր մի աչքը (Պոլիբիոս, 3, 80, Լիվիոս, 22, 2)։

Մինչդեռ, Հաննիբալը եկավ էտրուրիա՝ Փեսուլիումի և Առետիումի միջև ընկած երկրամասը. թեև մեծ կորուստներով, բայց հռոմայեցիների համար անսպասելի արագությամբ և սովորական հետախուզությունից դուրս հաստատեց, որ իր հիմնական և ոչ այնքան դժվարին խնդիրն այժմ այն է, որ Փլամինիոսին դրդի մի ճակատամարտի, որտեղ Սերվիլիոսի զորքերը չէին մասնակցելու։ Փլամինիոսին, ի միջի այլոց, հաղթանակ էր հարկավոր նաև այն բանի համար, որպեսզի է՛լ ավելի ամրապնդեր իր դիրքերը և վերջնականապես վարկաբեկեր և իշխանությունից հեռացներ թշնամաբար տրամադրված արիստոկրատական խմբավորումներին։ Հաշվի առնելով Փլամինիոսի բնավորության և քաղաքական դիրքորոշման առանձնահատկությունները (այն Փլամինիոսի, որը, ինչպես նկատում է Լիվիոսը, մարտի կդիմեր նույնիսկ այն դեպքում, եթե Հաննիբալն ընդհանրապես մատնվեր անգործության), պունիկյան զորապետը, կանգ առնելով ճահճի եզրին, վճռեց հրահրել հռոմեական կոնսուլին։ Առետիումի մոտ ընկած վայրը նա հարմար չէր գտնում մարտի համար և, ձախակողմում թողնելով հակառակորդի բանակատեղը, շարժվեց դեպի Փեսուլիում, իսկ այնուհետև, չհանդիպելով դիմադրության, արդեն ուղղություն վերցրեց դեպի Հռոմ, ավերածություններ գործելով և ոչնչացնելով խաղաղ բնակչությանը, հրդեհելով տներն ու տնտեսական կառույցները։ Փլամինիոսը նետվեց նրա ետևից։ Տեսնելով, որ Փլամինիոսի զորքերը մոտենում են, Հաննիբալը ճակատամարտի համար լեռնոտ տեղանքն ընտրելով Կարտոնա քաղաքից ոչ հեռու, Տրազիմենոսյան լճի մոտակայքում, իր զինվորներին հրամայեց պատրաստվել մարտի։

Հաննիբալի ընտրած տեղանքի պայմանները նրա համար հույժ բարենպաստ էին։ Այստեղ լեռների ու լճերի միջև ընկած էր մի հովիտ, դեպի ուր արևմուտքից մի նեղ կիրճ էր ձգվում. հովտաբերանի մոտ բարձրանում էր ելքը եղերող բլուրը։ Հաննիբալն ինքը լիբիական ու իբերական իր վետերանների հետ տեղավորվեց կենտրոնական բարձունքների վրա, որոնք ընկած էին ափին զուգահեռ։ Հովտաբերանի մոտ նա ծածուկ տեղավորեց հեծյալներին ու գալլերին, իսկ հովտի ելքի մոտ՝ բալեարներին և թեթևազեն հետևազորայիններին։ Մարտի նախօրյակին, երկոյան Փլամինիոսը հասավ լճի մոտ, իսկ հաջորդ առավոտյան արշալույսին սկսեց շարժվել դեպի կիրճը։

Երբ հռոմայեցիները հետզհետե մտան մառախլապատ հովիտը, Հաննիբալն իր զորամասերին միաժամանակյա հանկարծակի հարձակման ազդանշան տվեց։ Կարթագենցիներն անհայտացան ներքևում, և թանձր մառախուղի միջով ընթացող հռոմայեցիները, լսելով թշնամիների աղաղակները, հասկացան, որ շրջապատված են։ Նրանք նույնիսկ չէին կարողանում պարզ պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում։ Մարտը վարում էին միաժամանակ ճակատից, թիկունքից և թևերից (հմմտ. Փրոնտինոսի մոտ, 2, 5, 24)։ Իր զինվորներին ճակատամարտի համար դասավորելու կոնսուլի փորձերը ոչնչի չհանգեցրին. զինվորները չէին հնազանդվում հրամաններին, շատերը փորձում էին փախչել։ Ճակատամարտն այնպիսի անողոք բնույթ ընդունեց, որ կովողները նույնիսկ չնկատեցին սարսափելի երկրաշարժը (Պլուտ., Փաբ., 3, 3թց., Կանխ., 1, 35, Պլինիոս, 2, 86, Փլորոս, 2, 6)։ Ինքը՝ կոնսուլն սպանվեցավ ինսումբրի՝ Դուկարիոսի կողմից։ Դրանից հետո հռոմայեցիները դիմեցին խուճապահար փախուստի. ոմանք ապարդյունորեն փորձում էին լողալով փրկվել կամ մտնում էին լիճը, քանի դեռ հնարավոր էր, և այնտեղ ոչնչանում էին Հաննիբալի հեծյալների հարվածների տակ։ Միայն 6000 հռոմայեցիներ կարողացան դուրս պրծնել այդ դժոխքից, սակայն շրջապատվեցին վրա հասած կարթագենական հեծելազորի կողմից, որին գլխավորում էր Մահարբալը։ Նա խոստացավ, որ այդ հռոմայեցի զինվորներն ազատ կարձակվեն, եթե զենքերն հանձնեն, և հռոմայեցիները գերի հանձնվեցին։ Սակայն Հաննիբալը հայտարարեց, որ Մահարբալը իրավունք չուներ հակառակորդին որևէ խոստում տալու, հրամայեց շղթայակապ անել հռոմայեցիներին, և նրանց հանձնեց գալլերի հսկողությանը։ Նա բաց թողեց միայն լատինացիներին՝ Հռոմի դաշնակիցներին, վերստին կրկնելով այն, ինչն ասել էր բազմիցս. ինքը պատերազմելու է եկել ոչ թե իտալիկների, այլ հռոմայեցիների դեմ, հանուն Իտալիայի ազատագրման։

Ըստ Լիվիոսի, որը տվյալ դեպքում վկայակոչում է Փաբիոս Պիկտորին, Տրազիմենոսյան լճի մոտ հռոմայեցիները կորցրեցին ընդամենը սպանված 15 հազար զորական։ Ապպիանոսը Փլամինիոսի բանակը հաշվում է 30 հազար հետակ և 3000 հեծյալ (Ապպ., Իսպ., 8), Եվտրոպիոսն ու Օրոսիոսը գրում են, որ Փլամինիոսը կորցրել է 25 հազար սպանված (Եվտրոպիոս, 3, 9, Օրոսիոս, 4, 15, 5)։ Օրոսիոսի տվյալներով 6000 հռոմայեցիներ գերի են վերցվել։ Հաննիբալի հրամանով սպանվածների մեջ փնտրեցին Փլամինիոսի դիակը, արժանավայել կերպով հողին հանձնելու համար։ 10 հազար հռոմայեցի զորականներ ցրվեցին զանազան կողմեր և ապա գաղտագողի անցան Հռոմ, 10 հազարը գերի ընկան (հմմտ. Վալ. Մաքս. մոտ, 1, 6, 6)։ Ըստ Լիվիոսի, կարթագենցիների կորուստները կազմում էին 2500, ըստ Պոլիբիոսի՝ 1500 (Պոլիբիոս, 3, 80—85, Լիվիոս, 22, 3—7, 5, Ապպ., Հաննիբ., 9—10, Զոնարաս, 8, 25), համաձայն Օրոսիոսի (4, 15, 5)՝ 2000 մարդ։

IV

Երբ Արիմինումում Գնեոս Սերվիլիոս Հեմինոսը տեղեկություն ստացավ այն մասին, որ Հաննիբալը գտնվում է Էտրուրիայում և բանակել է Փլամինիոսի ճամբարի մերձակայքում, նրա առաջին միտումը, ինչպես պատմում է Պոլիբիոսը, իր բանակը ընկերակցի լեգեոններին միացնելը և հռոմեական զենքի ողջ հզորությունը Հաննիբալին հակադրելն էր։ Սակայն նա չկարողացավ այդ անել «զորքի ծանրաշարժության պատճառով»։ Ակներև է, որ պատրվակը մտացածին էր։ Սերվիլիոսի վարմունքի իսկական դրդապատճառների մասին, իհարկե, կարելի է սոսկ կռահումներ անել. թվում է, թե իրականում այստեղ վճռորոշ դեր է խաղացել արիստոկրատական շրջանների դրածո Սերվիլիոսի չկամենալը գործուն աջակցություն ցույց տալ դեմոկրատական շարժման առաջնորդ Փլամինիոսին։ Սակայն բացարձակորեն անգործ մնալ, Սերվիլիոսը նույնպես չէր կարող և այդ պատճառով Փլամինիոսի մոտ ուղարկեց 4000 հեծյալ՝ նախկին պրետոր Գայոս Կենտենիոսի հրամանատարությամբ։ Իրազեկ լինելով, թե ինչ է տեղի ունեցել Տրազիմենոսյան լճի մոտ, Կենտենիոսը շուտ եկավ դեպի Ումբրիա։ Նույն ժամանակ Հաննիբալը, տեղեկանալով նոր հակառակորդի մասին, նրա դեմ ուղարկեց Մահարբալին՝ թեթևազեն նիզակավորների մի ջոկատով և որոշ թվով հեծելազորայիններով։ Հակառակորդին վրա հասնելով, Մահարբալի ռազմիկներն արդեն առաջին իսկ ընդհարման ժամանակ կոտորեցին մոտավորապես 2000 հռոմայեցիների, իսկ մնացածներին քշեցին ինչ-որ բլրի վրա, շրջապատեցին ու գերի վերցրեցին (Պոլիբիոս, 3, 86, 1—5, Լիվիոս, 22, 8, 1)։

Այժմ նոր փայլուն հաղթանակից հետո Հաննիբալի առջև վերստին ծառացավ այն խնդիրը, թե ի՞նչ է անելու առաջիկայում։ Հատկապես դրա մասին նա խորհրդակցեց և՛ իր եղբոր, և՛ մերձակիցների, այսինքն, այն ժամանակվա արտահայտությամբ՝ «ընկերների», ինչպես երևում է, պունիկյան բանակի բարձրագույն հրամանատարական կազմի հետ։ Այժմ, Տրազիմենոսյան լճի մոտ ունեցած այդպիսի հաջողությունից հետո, նա լիովին վստահ էր իր վերջնական հաղթանակի նկատմամբ (Պոլիբիոս, 3, 85, 6)։ Հավանաբար հենց այդ վստահությունը նրան հան-

գեցրեց այն մտքին, որ առայժմ պետք է հրաժարվել Հռոմի վրա արշավելուց, անհրաժեշտ է ուժերը կենտրոնացնել իր իտալիկական դիրքերը ամրապնդելու և զինվորների մարտունակությունը բարձրացնելու վրա։

Այսպես թե այնպես, Հաննիբալն անհրաժեշտ չհամարեց դիմել Հռոմի վրա և դրա փոխարեն, ինչպես պատմում է Տիտոս Լիվիոսը (22, 9, 1—2), Ումբրիայի միջով շարժվեց դեպի Ապուլեիում և, ամայացնելով այդ քաղաքի շրջակայքի դաշտերը, նա մոտեցավ նրա պարիսպներին, սակայն, մեծ կորուստներ կրելով, ետ մղվեց։ Հանդիպելով դիմադրության և նպատակ չունենալով պաշարման վրա ժամանակ վատնել, Հաննիբալը որոշեց ետ քաշվել, շարժվելով դեպի Պիկենում, որտեղ մնաց մի քանի օր, իսկ այնտեղից դիմեց Ադրիական ծովի ափերը և ավելի հեռու՝ Ապուլիա։ Այնտեղ նա կանգ առավ Առնոսի և Լուկերիայի շրջանում։ Ըստ Պոլիբիոսի, Հաննիբալը եկավ Ցապիգիա, ուր տեղավորվեց Օյբոնիումի մոտակայքում և այնտեղից հարձակումներ գործեց գաուլոսների երկրի վրա (Պոլիբիոս, 3, 86, 8—87, 5,88, 1—6, Լիվիոս, 22,9)։

Հասկանալով, որ իրեն դեռ նոր մարտեր են սպասվում, Հաննիբալն իր հիմնական ուշադրությունը հատկացրեց զինվորների մարտունակության բարձրացմանը։ Թե՛ նրա մարդիկ և թե՛ ձիերը հիվանդացել էին զանազան հիվանդություններով, այդ թվում՝ քոսկեղով, որից ազատվելու համար, նա հրամայեց նրանց լողացնել հին գինով։ Զենքը նա փոխարինեց ռազմաավարայինով, հռոմեականով, որից այնքան էին ձեռք բերել, որ կարող էր բավարարել կարթագենցիների բոլոր կարիքները։

Այժմ իր ճանապարհին Հաննիբալն անխնա կերպով ավարի էր մատնում ու ոչնչացնում տեղական բնակչությանը։ Նա հրամայեց ոչնչացնել չափահաս բոլոր տղամարդկանց, ովքեր կհանդիպեին իրենց զինվորներին։ Այնքան շատ ավար էին հափշտակել, որ այն արդեն չէին կարողանում հետները տանել, և դա տանջապատկում էր պունիկյան վարձկանների ուժերը, ստիպում նրանց նեղվելու նոր ճակատամարտերի։ Ըստ երևույթին, Տրազիմենոսյան լճից հետո Հաննիբալը միառժամանակ կասկածել է իտալիկական դաշնակիցներին իր կողմը գրավելու կարելիությանը, վճռելով դիմել «այրված երկրի» յուրատեսակ տակտիկայի, հնարավոր թշնամուն վախեցնելու համար։ Շատ չանցած նա փոխելու էր իր տակտիկան, վերադառնալով նախկին ռազմաքաղաքական ուղղությանը։

Միայն Տրազիմենոսյան լճի մոտ տրված ճակատամարտից հետո,

[illegible] գալով Ադրիական ծով, Հաննիբալը հնարավոր և անհրաժեշտ համարեց կարթագենյան խորհրդին պաշտոնապես տեղեկացնել գրեթե երկու տարի տևած պատերազմի արդյունքների մասին։ Կարթագենի խորհուրդն իր հերթին վճռեց անհրաժեշտ ամեն ինչ անել, Իսպանիայում և Իտալիայում պունիկյան զորքերին օգնելու համար (Պոլիբիոս, 3, 87, 4—5)։ Այստեղ ցուցանշական է այն արհամարհանքը, որով Հաննիբալը վերաբերվում էր իր հայրենիքում եղած իշխանության բարձրագույն մարմնին, գործելով բացարձակապես նրանից անկախ և նույնիսկ այնքան էլ չհետաքրքրվելով նրա ցուցումներով ու կանխագծումներով։ Իրոք, դժվար է կարծել, որ այդքան երկարատև ժամանակաընթացքում, իրար ետևից հաղթանակներ տանելով, Հաննիբալը հնարավորություն չուներ որևէ ձևով Կարթագեն հաղորդելու գործերի դրության մասին։ Պարզ է, որ նա չէր կամենում կորցնել վերահսկողությունից զերծ զորավարի դրությունը և իր մարտական գործողությունների հետևանքով ստացած իշխանությունը կիսել խորհրդի հետ, թեև այն տրամադրված էր Բարկայանների օգտին։ Նա խորհրդին դիմեց հենց այն պահին, երբ նրան անհրաժեշտ էր ռազմական օժանդակություն, հույս ունենալով և ոչ առանց հիմքի, ինչպես ցույց տվեց խորհրդի վերաբերմունքը, ստանալ այդ օգնությունը։

Սակայն ինչպիսի նկատառումներով էլ որ Հաննիբալն առաջնորդվեր, ձեռնարկելով իր առաջխաղացումը դեպի Ադրիական և ապա հարավ, ինչպիսի ռազմամավար էլ որ նա ձեռք բերեր, ինչ կերպ էլ որ ամրապնդեր իր բանակի ուժերը, վերջին հաշվով նրա այդ առաջխաղացումը, թեև այս միտքն ինքնին տարօրինակ է թվում, ձեռնտու եղավ Հռոմին, որը մեկ անգամ ևս ձեռք բերեց կենսականորեն ամենաանհրաժեշտը՝ ժամանակ, կորցրած մարտունակությունը վերականգնելու համար։

Տրազիմենոսյան լճի մոտ կրած պարտության մասին առաջին իսկ լուրերի ժամանակ հռոմայեցիները սաստիկ երկյուղով, խուճապահար վազելով հավաքվեցին Ֆորումում։ Կանայք թափառում էին փողոցներում և հարցնում էին հանդիպողներին, թե այդ ինչ լուր է ստացվել ջախջախման մասին, և ինչպիսին է զորքի ճակատագիրը։ Վերջապես ամբոխը, մեկնելով կոմիցիա և կուրիաներ, սկսեց կանչել մագիստրատներին, սակայն միայն երեկոյան պրետոր Մարկոս Պոմպոնիոսը դուրս եկավ համաքաղաքացիների առաջ և ասաց. «Մենք պարտվել ենք մեծ ճակատամարտում»։ Ճշգրիտ տեղեկության բացակայությունը, ինչպես միշտ, ծնեց զանազան կարծիքներ ու լուրեր։ Քաղաքային դարպասնե-

րի մոտ մի քանի օր հոծախումբ կանգնած կանայք սպասում էին կա՛մ իրենց հարազատների գալստին, կա՛մ նրանց մասին եղած լուրերի։ Հռոմում տագնապն Է՛լ ավելի մեծացավ այն բանից հետո, երբ իրազեկ դարձան Կենտենիոսի ջոկատի ճակատագրի մասին (Լիվիոս, 22, 7, 6—8, 4)։

Մինչդեռ անհրաժեշտ էր ինչ-որ միջոցառումներ ձեռնարկել։ Ճիշտ է, Գնեոս Սերվիլիոսը, լսելով պաշտոնակցի ոչնչացման և նրա բանակի ճակատագրի մասին, արագ շարժվեց դեպի Հռոմ, որպեսզի հարկ եղած դեպքում պատերազմի քաղաքի պարիսպների մոտ (Լիվիոս, 22, 9, 6), սակայն դա շատ քիչ էր։ Սենատը, որ մի քանի օրվա ընթացքում արեվածագից մինչև արևամուտ նիստեր էր անում, գտավ միակ և, թվում էր, հնարավոր ելքը՝ դիկտատուրան, որը հնարավորություն էր տալիս ամբողջ իշխանությունը կենտրոնացնել մեկի ձեռքերում և, հետևապես, պետության բոլոր ջանքերը համակենտրոնացնել անհրաժեշտ ուղղությամբ[76]։ Սակայն այս անգամ թույլ տվեցին Հռոմի համար սովորական ընթացակարգից խիստ էական շեղումներ։ Որպես կանոն, այդպիսի արտակարգ մագիստրատի նշանակման մասին որոշումը սենատը պարտավոր էր արտահայտել այսպիսի բանաձևով. «Թող կոնսուլները միջոցառումներ ձեռնարկեն, որպեսզի պետությունը վնաս չկրի», դրանով իսկ կոնսուլներին ընձեռելով արտակարգ լիազորություններ, և արդեն այդ լիազորությունների շնորհիվ կոնսուլները իրենց իրավասությամբ կհռչակեին դիկտատորին։ Սակայն կոնսուլներից մեկն սպանվել էր, իսկ մյուսը քաղաքի սահմաններից դուրս էր գտնվում։ Օգտագործելով այդ պատրվակը, սենատը և Հռոմում գտնվող մագիստրատները դիկտատուրային առնչվող հարցը դրեցին ժողովրդական ժողովի քննարկմանը. վերջինս ընտրեց Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսին։ Դեռ ավելին։ Սովորաբար դիկտատորն ինքն իր իշխանությամբ իրեն օգնական՝ հեծելազորի հրամանատար էր նշանակում, մի միջոցառում, որը բխում էր դիկտատուրայի բուն էությունից, երբ ամբողջ իշխանությունը պետք է կենտրոնանար մեկի ձեռքերում և բխեր միայն դիկտատորից։ Պատահական չէր, որ դիկտատուրայի հաստատման ժամանակ բոլոր ընտրովի մագիստրատները, բացառությամբ ժողովրդական տribունների, ցած էին դնում իրենց լիազորությունները։ Սակայն այս անգամ ոչ միայն դիկտատորը, այլև հեծելազորի հրամանատարը ընտրվեց ժողովրդական ժողովում, թեև սովորական արարողակարգից այդպիսի շեղման ոչ մի անհրաժեշտություն չկար (Պոլիբիոս, 3, 87, 6—9, Լիվիոս, 22, 8, 6)։ Դրա հետևանքով հեծելազորի պետ դարձած Մարկոս Մինուկիոս Ռուֆոսը որոշակի ինքնուրույնություն ստացավ։ Քանի դեռ

Փաբիոսի և Մինուկիոսի միջև տարաձայնություններ չկային, ամեն ինչ խաղաղ էր, սակայն երբ Մինուկիոսի մոտ կասկածներ առաջացան Փաբիոսի քաղաքական գծի անսխալության նկատմամբ, նա չհապաղեց զրկվել իր դիրքից։ Ի՞նչ էր պատահել. ինչո՞ւ հռոմեական կառավարությանը անհրաժեշտ եղավ հատկապես այդպես և ոչ թե ուրիշ կերպ ազատելու իշխանությանն առնչվող խնդիրը՝ ի խախտումն Հռոմում միշտ գերիշխանորեն պահպանվող ավանդությունների։

Փլամինիոսի սոսկալի պարտությունն ու կործանումը լուրջ հարված հասցրեց Հռոմի դեմոկրատական շարժմանը։ Փլամինիոսի մահը դեմոկրատներին զրկեց իրենց ամենաականավոր ղեկավարից, իսկ Տրասիմենոսյան լճի մոտ կրած պարտությունը բացահայտեց կրոնական ավանդություններն ու դարավոր հիմքերն արհամարհող դեմոկրատների՝ ճշնամուն դիմադրություն կազմակերպելու անկարողությունը։ Այդպիսի պայմաններում իշխանության նկատմամբ հավակնություն կարող էին ունենալ սենատական երկու խմբավորումներ՝ Փաբիոսներն ու Էմիլիոս-Կորնելիոսները։ Փաբիոսին դիկտատոր և Էմիլիոս-Կորնելիոսին մոտիկ կանգնած տոհմից սերող Մինուկիոսին հեծելազորի հրամանատար նշանակելը, ըստ երևույթին, հետևանք էր փոխադարձ այն համաձայնության, որին հասան երկու «կուսակցությունները»։ Մասնավորապես Մինուկիոսի պաշտոնը Էմիլիոս-Կորնելիոսներին թույլ տվեց պահպանելու իրենց ազդեցությունը պետական գործերի ընթացքի վրա։ Ընտրությունների ելքի նկատմամբ ոչ ոք չէր կասկածում. դրանց ընթացակարգը պետք է ցուցադրեր Փաբիոսների քաղաքական գծի համաժողովրդական պաշտպանությունը, իսկ Մինուկիոսին հեծելազորի հրամանատար ընտրելը վերջինիս համար ապահովեց (թեև բոլորովին էլ ոչ լիակատար, բայց նրա խմբավորման համար անհրաժեշտ) անկախություն դիկտատորի հանդեպ։

Իր գործունեությունը Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսը սկսեց բացահայտորեն Փլամինիոսի դեմ ուղղված ցույցով։ Հաղիվ ստանձնելով պաշտոնը, նա նույն օրն իսկ հավաքեց սենատը և ճառով դիմելով նրան, հայտարարեց, որ Փլամինիոսը մեղանչել է ոչ այնքան իր անխելամտությամբ և անկարողությամբ, որքան արարողությունների և նախանշանների նկատմամբ ունեցած քամահրանքով և, հետևաբար, հենց աստվածներից պետք է խնդրել և խորհուրդ ստանալ, թե ինչպես մեղմացնել, նրանց զայրույթը և քավության ինչպիսի զոհեր մատուցել։ Սիբիլլական գրքերից տեղեկանալով, հայտնարերեցին, որ ինչպես հարկն է, չի կատարվել պատերազմի առթիվ Մարսին տրված խոստումը, որ այն պետք է կատարել ավելի մեծ ծավալով, քան պատ-

շաճում էր արված խոստմանը, որ Յուպիտերին պետք է ձոնել մեծ խաղեր, իսկ Էրուկինումյան Վեներային և Բանականության՝ տաճարներ, որ անհրաժեշտ է կատարել նոր մաղթանքներ և լեկտիստերնիումներ և, վերջապես, եթե պատերազմը բարեհաջող ընթացք ստանա, իսկ պետությունը պահպանվի մինչև պատերազմն ունեցած դրությամբ, աստվածներին ձոնել այսպես կոչված Սրբազան գարունը՝ գարնանային բերքի և անասունների երախայրիքը։ Ամեն ինչ կատարվեց ճշգրտությամբ, ընդ որում Սրբազան գարնան և մեծ խաղերի վերաբերյալ որոշումն ընդունեց ժողովրդական ժողովը, Էրուկինումյան Վեներայի տաճարի կառուցման խոստումն իր վրա վերցրեց դիկտատորը, իսկ Բանականության տաճարինը՝ պրետոր Տիտոս Օտակիլիոսը (Լիվիոս, 22, 9, 7—10, 10)։

Այդպիսով, ցուցաբերելով իր իսկական հռոմեական բարեպաշտությունը և դրանով իսկ պետության համար ապահովելով աստվածների բարյացակամությունն ու պաշտպանությունը, Փաբիոսն այժմ կարող էր զբաղվել նաև երկրային խնդիրներով։ Սենատի որոշմամբ նա պետք է ընդուներ Սերվիլիոսի հրամանատարության ներքո գտնվող զորքերը։ Դրանից զատ, Փաբիոսը հավաքեց ևս երկու լեգեոն, որոնց կարգադրված էր կենտրոնանալ Տիբուրում։ Ջամրացված բնակավայրերի (և հատկապես այն շրջանների, որոնց միջով ինչպես ենթադրվում էր, պետք է անցներ Հաննիբալը) բնակիչներին դիկտատորը կարգադրեց հեռանալ անվտանգ կետեր, հրդեհելով տները և ոչնչացնելով բերքը, որպեսզի թշնամուն ոչինչ չմնա։ Այդ կարգադրություններն անելով, Փաբիոսը Փլամինիոսյան ճանապարհով գնաց Սերվիլիոսին ընդառաջ։ Տիբերի վրա, Օկրիկուլումի մոտ դիկտատորը տեսավ հռոմեական զորականներին և իրեն՝ Սերվիլիոսին, որը հեծյալների ջոկատի գլուխ անցած սուրում էր իր մոտ, և հենց այդտեղ մարդ ուղարկեց հայտնելու, որ կոնսուլն իրեն ներկայանա առանց լիկտորների ուղեկցության, այսինքն՝ ոչ իբրև բարձրագույն իշխանությամբ օժտված մագիստրատ, այլ որպես մասնավոր անձ։ Սերվիլիոսը հնազանդվեց և, գալով Փաբիոսի մոտ, իր ամբողջ վերաբերմունքով ջանաց ընդգծել թե՛ դիկտատորական իշխանության նշանակությունը Հռոմեական պետության մեջ և թե՛ այդքան կարևոր լիազորություններով օժտված Փաբիոսի դերը (հմմտ. Պլուտ. մոտ, Փաբ., 4)։ Մինչ դիկտատորը հրամանատարությունն էր ընդունում, տագնապալից տեղեկություն ստացվեց. հռոմեական բեռնանավերը, որոնք Օստիայից պետք է պարենամթերք հասցնեին Իսպանիա, Կողայից ոչ հեռու դրավվել են կարթագենական նավատորմի կողմից։ Փաբիոսն անմիջապես Սերվիլիոսին հրամայեց մեկնել Օստիա

և այնտեղ հռոմեական ռազմանավերը համալրելով անձնակազմով, հետապնդել պունիկացիներին և պաշտպանել Իտալիայի ծովափերը։ Այս նպատակով Սերվիլիոսը Հռոմում անցկացրեց ևս մեկ զորահավաք, որը վերաբերում էր նաև զինվորական ծառայության համար պիտանի ազատ արձակված ստրուկներին։ Նոր զորակոչվածների մի մասին նա թողեց Հռոմում, քաղաքի պաշտպանության համար (Լիվիոս, 22, 11)։ Ինքը՝ դիկտատորը, ընդունելով կոնսուլական զորքը, դիմեց Տիբուր, իսկ այնտեղից, Պրենեստեի մոտով՝ դեպի Լատինական ճանապարհը և այնուհետև՝ Արպիք, ու ի տես կարթագենցիների տեղավորեց իր համբարը (Պոլիբիոս, 3, 88, 9, Լիվիոս, 22, 12, 1—3)։

Եվ այսպես, հռոմեական կառավարության և ամենից առաջ հենց Փաբիոսի (որոնք հմտորեն օգտագործեցին Տրազիմենոսյան լճի մոտ տրված ճակատամարտից հետո ստեղծված իրադրությունը) գործողությունների շնորհիվ, վերստին՝ արդեն չորրորդ անգամ, Հաննիբալն ընկավ նույն այն դրության մեջ, ինչ նա գտնվում էր թե՛ այդ ճակատամարտից, թե՛ Տրեբիայից և թե՛ Տիկինոսից առաջ. նրա դիմաց նորից կանգնած էր 4 լեգեոնից բաղկացած հռոմեական բանակը։ Անհրաժեշտ էր վերստին հենց սկզբից սկսել պատերազմը։

Տեղեկանալով թշնամու գալստյան մասին, Հաննիբալը նույն օրն ելնելով իր զորքերը դուրս բերեց ճամբարից և դասավորեց նրանց նոր ճակատամարտի համար, բայց Փաբիոսը չենթարկվեց այդ պրովոկացիային. հռոմայեցիները ակնհայտորեն պահպանեցին լիակատար հանգստություն և չհեռացան ճամբարից։ Որոշ ժամանակ ապարդյուն սպասելուց հետո, Հաննիբալը ետ քաշեց իր զինվորներին (Պոլիբիոս, 3, 89, 1, Լիվիոս, 22, 12, 3—4)։

Ակնհայտ են այն պատճառները, որոնք Փաբիոսին հարկադրեցին հրաժարվելու հերթական գլխավոր ճակատամարտից և անցնելու այն ժամանակվա համար ոչ սովորական, ուրիշ տակտիկայի՝ փոքր ընդհարումներով և յուրատեսակ պարտիզանական հարձակումներով հակառակորդին ուժասպառ անելուն։ Պոլիբիոսը (3, 89, 4—9) դրանք ձևակերպում է հետևյալ կերպ։ Կարթագենցիների զորքերը արդեն վաղուց և անընդհատ հմտացել էին ռազմական արվեստի մեջ. նրանց առաջնորդը մեծացել էր զորաճամբարում և իրենց հետ մեկտեղ ձեռք բերել ռազմական վարպետություն, նրանք բազմիցս հաղթել էին Իսպանիայում և կրկնակի անգամ (Տիկինոսը, հավանաբար, հաշվից դուրս է)՝ հռոմայեցիներին, նրանց դաշնակիցների հետ միասին։ Վերջապես, և այդ ամենագլխավորն էր, նրանք ամեն ինչ թողել էին ծովի մյուս կող-

մում, և այժմ նրանց միակ փրկությունը հաղթանակի մեջ էր։ Իսկ ինչ վերաբերում է հռոմայեցիներին, ապա նրանց մոտ ամեն ինչ այլ կերպ էր, այսինքն, որքանով կարելի է հասկանալ, նրանց ռազմական պատրաստությունը և նրանց զորավարների մարտական հատկությունները զիջում էին կարթագենականին. նրանք բազմիցս արդեն, մեկը մյուսի ետևից սարսափելի պարտություններ էին կրել. վերջապես, նրանք, ըստ երևույթին, դեռևս չէին հանգել այն մտքին, որ իրենց համար սեփական անձի և պետության փրկության միակ միջոցը հաղթանակն է, այլ կերպ ասած, նրանց բարոյական ու մարտական հատկությունները զիջում էին պունիկյան բանակի հատկություններին։ Այդ պատճառով Փաբիոսը, որոշակիորեն կանխատեսելով, որ նոր մեծ ընդհարումը անխուսափելիորեն կվերջանա հռոմայեցիների պարտությամբ, որոշեց ամեն կերպ խուսափել նրանից, հույս դնելով մշտապես գործող այն ազդակների վրա, որոնք Հռոմին բացարձակ առավելություն էին տալիս. Հաննիբալի բանակի համեմատությամբ նրա նյութական միջոցների անսպառությունը և զինվորական քանակակազմի թվական գերակշռությունը (հմմտ. նաև Դիոն Կասս., Ֆրագմ., 57, 9, Զոնարաս, 8, 25, Պլուտ., Փաբ., 5)։

Կարելի է հավատալ Տիտոս Լիվիոսին, երբ նա գրում է, որ հռոմայեցիներին մարտի հրավիրելու անհաջող փորձը Հաննիբալի մոտ ծնեց ներքին խոր անհանգստություն։ Թեև Հաննիբալը նույնիսկ ասում էր, որ հռոմայեցիների մարտական ոգին ընկել է, և պատերազմն ավարտված է, որ կարթագենցիները փառքով ու արիությամբ գերազանցել են հռոմայեցիներին,— այդպիսի ելույթները ստիպողաբար անհրաժեշտ էին այն բանի համար, որպեսզի պահպանեին իր սեփական վարձկան զինվորների մարտական ոգին,— պունիկյան զորավարը հոգու խորքում երկյուղ էր կրում, որ այժմ իրեն հարկ կլինի գործ ունենալ ոչ թե Փլամինիոսների ու Սեմպրոնիոսների հետ, այլ ձիրքով և ռազմական վարպետությամբ իրեն հավասար զորավարի հետ, որին վերջապես իրենց համար գտան բազմաղան ու մեծաթիվ դժբախտություններից դաս առած հռոմայեցիները (Լիվիոս, 22, 12, 4—5)։ Այնուամենայնիվ, նա եռանդուն կերպով ջանում էր Փաբիոսին հրահրել մարտի։ Նրա զորականները մանր ջոկատներով շրջում էին երկրում, պարենամթերք և անասնակեր ձեռք բերելու համար, իրենց ճանապարհին ավարելով, ավերելով և ոչնչացնելով ամեն ինչ։ Հաճախ զորաճամբարն առաջ տանելով և ամայացնելով Հռոմի դաշնակիցների դաշտերը, Հաննիբալը մերթ ծածկվում էր տեսողությունից, մերթ վերստին հայտնվում, մերթ գարանամուտ լինում, սպասելով, որ Փաբիոսը դաշտավայր է իջնելու

[illegible], որտեղ տեղավորված էր նրա զորակայանը։ Թվում էր, թե Հաննիբալը այդօրինակ գործողություններով, ձգտելով առաջացնել հռոմայեցիների կույր կատաղությունը, ինքը հարված տակ էր դնում իր զինվորներին, որպեսզի հակառակորդին հետզհետե վստահություն ներշնչի հաղթանակի նկատմամբ։ Սակայն Սեմպրոնիոսի և Փլամինիոսի [illegible] անվրեպ կերպով ներգործող այդ հնարամտությունները այժմ շոշափելի արդյունքներ չտվեցին։ Դիկտատորը իր լեգեոններով, առանց [illegible] մնալու, հետևում էր Հաննիբալին, տեսողությունից չկորցնելով նրան, բայց և չիջնելով հարթավայր, մշտապես մնում էր տեղանքին [illegible] բարձրադիր կետերում։ Իր տնօրինության տակ և իր թիկունքում ունենալով պարենամթերքի մեծ պաշարներ, առանց ծայրահեղ անհրաժեշտության, նա դուրս չէր գալիս ճամբարից։ Անասնակեր և փայտ հայթայթելու համար հռոմայեցիները դուրս էին գալիս մեծ ջոկատներով։ Նրանց և պունիկյան զինվորների միջև տեղի ունեցած ընդհարումներում, որպես կանոն, հաղթում էին հռոմայեցիները, և դա աստիճանաբար, ինչպես հույս ուներ Փաբիոսը, նպաստում էր նրանց բարոյական դրության ամրապնդմանը։ Սակայն հակառակ Հաննիբալի բոլոր հույսերին, Փաբիոսը խուսափում էր մեծ ճակատամարտից (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 3, 90, 1—5, Լիվիոս, 22, 12, 6—10)։

Հաննիբալը համարձակ որոշում ընդունեց՝ շարունակել իր առաջխաղացումը դեպի Իտալիայի հարավ։ Կենտրոնական Իտալիայում նրա գտնվելը ցույց տվեց, որ, համենայն դեպս, նա դեռևս չի կարող հույս դնել տեղական բնակչության վրա։ Չնայած բոլոր հաղթանակներին, Իտալիայի քաղաքներից ոչ մեկը դեռ չէր անցել Հաննիբալի կողմը. նրանք հավատարիմ էին մնում Հռոմին, թեև այդ պատճառով կրում էին նաև շատ դժբախտություններ (Պոլիբիոս, 3, 90, 13)։ Հաննիբալը հույս ուներ, որ հարավում կա՛մ ինքը Փաբիոսին կհարկադրի ընդունել մարտը, կա՛մ ցույց կտա, որ լիակատար ու վերջնական հաղթանակ է տարել։ Սարսափը կհարկադրի իտալիկական քաղաքներին, հրաժարվելու Հռոմի հետ ունեցած դաշինքից, նրա փոխարեն նախապատվություն տալով պունիկացիների հետ բարեկամական հարաբերություններին (Պոլիբիոս, 3, 90, 11—12)։ Սակայն այդ մտահղացումները չկենսագործվեցին։

Շարժվելով դեպի Սամնիում, ամայացնելով Բենևենտումի հողերը և գրավելով Տելեսիա քաղաքը (ըստ Պոլիբիոսի՝ Վենուսիա (3, 90, 7—8, հմմտ. նաև Լիվիոսի մոտ, 22,13, 1)), Հաննիբալը որոշեց մեկնել Կամպանիա։ Թվում էր, թե հանգամանքները նպաստում են այդ ձեռնարկմանը։ Հռոմեական դաշնակիցներից Կամպանիայի երեք հեծյալ-

ներ, որոնք գերի էին վերցվել Տրազիմենոսյան լճի մոտ և ապա ազատ արձակվել, պունիկյան զորավարին համառորեն համոզում էին, որ իր զորքերը բերելով Կամպանիա, նա կարող է գրավել Կապուան և, հետևաբար, լիիշխան տեր դառնալ Ապենինյան թերակղզու հարավում։ Կամպանիացի հեծյալների վարքը կարելի էր բացատրել որպես կարթագենցիներին պաշտպանելու համար տվյալ մարզի ամբողջ բնակչության պատրաստակամության դրսևորում։ Բայց և այնպես, Հաննիբալը երկար տատանումներից հետո միայն հետևեց կամպանիացիների խորհրդին։ Իրենք՝ խորհրդատուներն էլ շատ անհուսալի և ոչ բավականաչափ հեղինակավոր էին թվում նրան։ Բայց ինչ արած. ոչ մի կերպ չէր հաջողվում Փաբիոսին դրդել ճակատամարտի. մշտապես մնալ միևնույն տեղում և սպասել, մինչև որ հռոմայեցիները փոխեին իրենց ռազմավարությունը, նույնպես չէր կարելի, քանի որ առանց հաղթանակների ու հաջողությունների, առանց նոր երկրների ավարառության, Հաննիբալի զորքը գուցե կորցներ իր մարտական հատկությունները։ Նիստ սուր էր զգացվում և օրեցօր ավելի ու ավելի էր սրվում դաշնակիցների բացակայությունը, պունիկյան բանակի միայնակությունը։ Կամպանիացիներին ուղարկելով հայրենիք և նրանց կարգադրելով վերադառնալ ուրիշ, այդ թվում նաև իշխանությամբ օժտված անձանց հետ, Հաննիբալը որոշեց շարժվել Կապուայի ուղղությամբ՝ Կասինում քաղաքին պատկանող երկրամասը։ Գրավելով այն, նա, տեղանքին քաջատեղյակ անձանց տանելով, կարող էր հռոմայեցիներին կտրել իրենց դաշնակիցներից և, հետևաբար, հասնել կարևոր ռազմավարական առավելության։ Սակայն ուղեկիցը չէր հասկանում (կամ չէ՞ր կամենում հասկանալ) պունիկացու լատիներեն խոսքերը. Կասինումի փոխարեն նրան թվաց, թե լսում է Կասիլինում (Վոլտուրնոս գետի զույգ ափերին. Կամպանիայի և Փալերնոսի սահմանագլխին ընկած քաղաք)։ Այնտեղ էլ նա տարավ կարթագենական զորքը։ Շարժվելով Ալիփքի, Կալիփքի և Կալենիումի միջով, պունիկացիները նեղ կիրճով դուրս եկան Կամպանիայի Շողազարդ անունով դաշտավայրը, և միայն այդ ժամանակ Հաննիբալը մի ինչ-որ տհաճ բան զգաց։ Տեսնելով իրեն լեռներով ու գետերով շրջապատված, Հաննիբալն իր մոտ կանչեց ուղեկցողին և հարցրեց, թե իրենք որտեղ են գտնվում։ Ուղեկցողը պատասխանեց, թե իրենք այսօր իսկ իրենք կհասնեն Կասիլինում։ Հաննիբալի կատաղությանը չափ չկար. Կասինումը բոլորովին այլ կողմում էր գտնվում, ինչ-որ մի թյուրիմացություն նրան բերեց հասցրեց ծուղակի... Հաննիբալը հրամայեց ուղեկցորդին ճիպոտահար անել, ապա ուրիշներին խրատելու նպատակով խաչել։ Այնուամենայնիվ, նրան այլ բան չէր մնում անե-

լու, քան Վոլտուրնոսում ամրացնել իր ճամբարը և նումիդիական հեծյալների գլուխ անցած Մահարբալին ուղարկել Փալերնոսի մարզ այն կողմպտելու համար։ Մինչև Սինուեսսա ընկած ամբողջ տարածքը ամայացվեց (Պոլիբիոս, 3, 92, 1—2, Լիվիոս, 22, 13)։

Նույն այդ ժամանակ Փաբիոսը սրընթացորեն իր լեգեոնները տանում էր Մասսիկա լեռնաշղթայի բարձունքներով, սակայն, մոտենալով Փալերնոսին, նա միայն հայտնվեց լեռնալանջերին և մշտապես իր աչքն տեսնելով թշնամուն, ցած չիջավ հովիտ (Պոլիբիոս, 3, 92, 5—7, Լիվիոս, 22, 14, 1—3)։ Մինուկիոսին նա ուղարկեց պահպանելու Տերրաչինայի մերձակայքի անցքը, որտեղ Հաննիբալը կարող էր Սինուեսսայի կողմից, Ապիյան ճանապարհով թափանցել բուն հռոմեական երկրամասերը (Լիվիոս, 22, 15, 11)։ Դրա հետևանքով Հաննիբալը կանգնեց ամեռային կացարաններ փնտրելու և, հետևաբար, արդեն կատարելապես ամայացված, ձմեռելու համար ոչ պիտանի Փալերնոսը լքելու անհրաժեշտության առաջ։ Փաբիոսը լավ էր հասկանում, որ Հաննիբալն ստիպված էր լինելու հեռանալ նույն այն ճանապարհով, որով նա եկել էր, և նրա ճանապարհը փակելու համար, համեմատաբար ոչ մեծ ջոկատներով՝ 4000 մարտիկներով գրավեց Կալիկուլա լեռը և Կասիլինում քաղաքը, իսկ մնացած զորամասերը նույն բլուրներով ետ տարավ, հետախուզության ուղարկելով դաշնակիցների հեծյալ ջոկատը Լուկիոս Հաստիլիոս Մանկինոսի հրամանատարությամբ։ Վերջինս մարտի բռնվեց նումիդիացիների հետ, և նրա ջոկատը գլխովին ոչնչացվեց։ Հռոմայեցիները բանակ դրեցին այն ճանապարհի մոտ, որով Հաննիբալը դուրս պետք է գար (Պոլիբիոս, 3, 92, 10—11, Լիվիոս, 22, 15)։

Հաջորդ առավոտյան կարթագենցիները գրավեցին պունիկյան և հռոմեական բանակատեղերի միջև ընկած ճանապարհը։ Հռոմեական զորքերը դիրքավորվեցին իրենց իսկ հողապատնեշի մոտակայքում. Հաննիբալը հենց այնտեղ էլ տարավ իր թնթաղեն հետեազորը և, մերթ մարտի դիմելով, մերթ նահանջելով, ջանում էր Փաբիոսին ստիպել մեծ ճակատամարտ տալու։ Հռոմեական զորաշարքը մնաց տեղում. ճակատամարտը, ինչպես գրում է Լիվիոսը, վարվում էր «դանդաղորեն», ավելի շուտ դիկտատորի մտահղացումներին, քան Հաննիբալի ծրագրին համապատասխան։ Այդ ընդհարման ժամանակ, համաձայն Լիվիոսի (22, 16, 1—4) տվյալների, սպանվեցին 200 հռոմայեցիներ և 800 կարթագենցիներ։ Լիովին հնարավոր է, որ Լիվիոսի տվյալները ստույգ չեն. բացառված չէ, որ նրա աղբյուրը չափազանցրել է սպանված կարթագենցիների թիվը։ Սակայն գլխավոր արդյունքը դրանում չէր։ Հաննիբալը չկարողացավ հաղթահարել հռոմեական դիմադրությունը և ճեղ-

քելով դուրս գալ Կասիլինում. նա պետք է ուրիշ ելք փնտրեր, որպեսզի դուրս գար շրջապատումից, որի մեջ էր ընկել բոլորովին անսպասելիորեն։ Այդպիսի ելք կարող էր դառնալ միայն Կալիկուլայով առաջ շարժվելը։ Հարկավոր էր լեռները հաղթահարել այնպիսի զգուշությամբ, որ թշնամիները, քանի դեռ չէին շրջապատված, չհայտնաբերեին կարթագենական զորքերը։ Հաննիբալին անհրաժեշտ էր շշմեցնել թշնամուն, վիժեցնել նրա բոլոր գործողությունները։

Եվ ահա, «նա, ով նշանակվել էր գործերը անօրինելու համար» (Պոլիբիոս, 3, 93, 4), այսինքն՝ կարթագենյան բանակի համբարակային և ինժեներական ծառայության պետ Հասդրուբալը, իր հրամանատարից կարգադրություն ստացավ՝ շոր փայտից որքան հնարավոր է շատ ջահեր պատրաստել։ Երբ դա կատարվեց, Հաննիբալը կարգադրեց վառվող ջահերը կապել դաշտերից քշված-բերված ցուլերի (դրանցից նրա բանակատեղում կար մոտավորապես 2000 գլուխ) եղջյուրներին և գիշերով նրանց քշել դեպի լեռները, ամենից առաջ՝ հռոմայեցիների գրաված բարձունքները։ Զոնարասը (8, 26) ավելացնում է նաև (հետևելով Դիոն Կասսիոսին), որ Հաննիբալի հրամանով պունիկյան բանակատեղում ոչնչացվեցին բոլոր ռազմագերիները, որպեսզի ոչ ոք չկարողանար փախչել հռոմայեցիների մոտ և հաղորդել պատրաստվող միջոցառման գաղտնիքը։ Մութը վրա հասնելուն պես, ջահերը կապեցին ցուլերի եղջյուրներին և, դրանք վառելով, ցուլերին քշեցին նրանց ետևից դանդաղորեն ընթացող պունիկյան զորքի առջևից։ Երբ նրանք մոտեցան լեռների ու բարձունքների ստորոտներին, Հաննիբալը պայմանական նշան տվեց, և ցուլերին քշեցին դեպի գագաթները։ Կրակի տենքից, այրվող եղջյուրների և գլխի սարսափելի ցավից կատաղած կենդանիները վազելով ցրվեցին ամբողջ շրջանում։ Ջահերից սկսեցին այրվել թփուտները։ Լեռնանցքի մոտ դիրքեր բռնած հռոմեական զինվորները կարծելով, թե իրենք արդեն շրջապատված են թշնամիների կողմից, փախուստի դիմեցին, և Հաննիբալի թեթևազեն նիզակավորները գրավեցին Կալիկուլան՝ նրա համար հույժ կարևոր այդ կետը։ Աղմուկի և բոցերի մեջ, երբ արդեն ոչ ոք չէր կարող հասկանալ, թե իսկապես ինչ է տեղի ունենում, ո՛չ կարթագենցիները և ո՛չ էլ հռոմայեցիները չհամարձակվեցին ճակատամարտի բռնվել։ Ասենք Հաննիբալին դա հարկավոր էլ չէր։ Նա իր զորքերը դուրս բերեց շրջապատումից, չհանդիպելով դիմադրության, և բանակ դրեց Արիփքի տարածքում[77]։ Այնտեղ նա երկար չմնաց։ Սպասելով մինչև որ իբերական հեծյալները բարձունքներից դուրս բերեին այնտեղ մնացած նիզակավորներին, Հաննիբալը ձևացնելով, թե իբր գնում է դեպի Հռոմ, Սամնիումի միջով

գնաց պելիգնների երկիրը, նախկինի պես ամեն ինչ ոչնչացնելով իր անցած ճանապարհին, իսկ փոքր-ինչ սպասելուց հետո, շարժվելով դեպի Ապուլիա, գրավեց Գերեոնիում քաղաքը, որը լքված էր բնակիչների կողմից, քանի որ նրա պարսպապատը քանդված էր։ Այդպես է մեկնաբանում Ավիոսը. Պոլիբիոսի (3, 100, 3, 4) տվյալներով, Հաննիբալն այդ քաղաքը գրավեց պաշարումից հետո և կոտորեց նրա բնակիչներին։ Փաբիոսը առանց դադար առնելու, գնում էր Հաննիբալի ետևից՝ շմտնելով ճակատամարտի մեջ և ապա բանակ դրեց Լարինիումի շրջանում։

Անսպասելիորեն Հռոմից ստացվեցին կարգադրություններ, որոնք ոչ ոք չէր կարող կանխատեսել. դիկտատորին առաջարկվում էր շտապ վերադառնալ քաղաք, զոհաբերություններ կատարելու համար։ Փաբիոսի բացակայության ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարությունը, բնականաբար, անցավ հեծելազորի հրամանատար Մարկոս Մինուկիոս Ռուֆոսի ձեռքը (Պոլիբիոս, 3, 93—94, Լիվիոս, 22, 16—18, Պլուտ., Փաբ., 6—7)։

Փաբիոսի ընդունած ռազմավարական ծրագիրը Հաննիբալին դրեց ծանր կացության մեջ։ Առանց դաշնակիցների, առանց դրսի նշանակալից օժանդակության, մշտապես, մերթ այս, մերթ այն ընդհարումներում մարդկանց կորցնելով, իր առջև ունենալով հակառակորդի ուժեղ և կարգավարժ բանակ, Հաննիբալը երկրում այս ու այն կողմ էր ընկնում, առանց ակնհայտ ծրագրի, առանց որոշակի նպատակադրման։ Ավելի ճիշտ, նրա ցանկությունները պարզ էին։ Նրան անհրաժեշտ էր ևս մի հաղթական ճակատամարտ, որը կկոտրեր Հռոմի դիմադրությունը և Հաննիբալին ու նրա զինվորներին կդարձներ Իտալիայի տերեր։ Կաննեի ճակատամարտից հետո տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, թե որքան անիրական էին այդ հաշիվները։ Սակայն ճակատամարտ տեղի չէր ունենում։ Կարթագենական զորքերը հյուծվում էին. հռոմայեցիներից սպասվող վտանգը հետզհետև ավելի սպառնալից էր դառնում. իտալիկական քաղաքներից ոչ մեկը չէր անցնում «ազատության» կարթագենցիների կողմը։ Նույնիսկ Կապուան գերադասեց սպասել։ Չհաջողվեց ճեղքել դուրս գալ Իտալիայի հարավը։ Հաննիբալը օգնության խնդրանքով դիմեց նաև կարթագենական խորհրդին, սակայն այնտեղ նրա նկրտումներին ծիծաղով դիմավորեցին. զորավարը պրոմում է, թե հաղթել է թշնամուն, իսկ ինքը, ինչպես պատշաճում է հաղթողին, հայրենի քաղաք ռազմաավար ուղարկելու փոխարեն, նոր մարդիկ է պահանջում (Դիոն Կասս., Ֆրագմ., 57, 14, Զոնարաս, 8, 26)։ Ինչպես երևում է, Հաննիբալի դրությունն այն աստիճան ծանր էր,

որ Բարիայաններին թշնամի քաղաքական խմբավորումը խորհրդում ինչ-որ ժամանակ կարողացավ հաղթանակ տանել և Հաննիբալին մերժել այն բանում, ինչը կենսականորեն անհրաժեշտ էր նրան։ Ապպիանոսն այդ դիմումը վերագրում է այն ժամանակին, երբ Հաննիբալն ամրացել էր Գերեոնիումի մոտ (Հաննիբ., 16)։ Ապպիանոսի ասելով (նույն տեղում) Հաննիբալը գրեց նաև Իսպանիա՝ իր եղբայր Հասդրուբալին, նրան առաջարկելով զորքերը հավաքել և ներխուժել Իտալիա։ Դժվար է ասել, թե որքան արժանահավատ է այդ հաղորդումը. պարզ է միայն, որ Հասդրուբալը, Պիրենեյան թերակղզում ավելի ու ավելի ներքաշվելով հռոմայեցիների դեմ սուր պայքարի մեջ, ի վիճակի չէր օգնելու եղբորը։ Հաննիբալի առջև հստակորեն ուրվագծվում էր հաղթանակների և ռազմավարի բացակայության դեպքում թշնամու դեմ հյուծիչ դիմակայությունը, բանակի քայքայումը և կործանումը օտար ու թշնամական երկրում։

Եվ, այնուամենայնիվ, Փաբիոսի ռազմավարությունը խոր դժգոհություն առաջացրեց Հռոմում։ Ավելի ու ավելի բարձր էին հնչում հանցագործ դանդաղկոտության, մինչև իսկ դավաճանության մեջ Փաբիոսին մեղադրող ձայները։ Փաբիոսի ծրագիրը նախատեսված էր երկարատև ժամանակի համար և չհանգեցրեց անմիջական արդյունքների։ Հռոմայեցի զորականները իրենց առջև տեսնում էին հաղթանակող հակառակորդին, որը տեր ու տնօրինություն էր անում Իտալիայում, գնում այնտեղ, ուր իրեն պատեհ էր թվում, ավարի էր մատնում ու ամայացնում երկիրը։ Մինչդեռ դիկտատորը որևէ նշմարելի միջոցառում ձեռք չէր առնում, որպեսզի խոշընդոտի կողոպտչին ու մարդասպանին, կասեցնի նրա զորքի սանձարձակությունները, պաշտպանի Հռոմի դաշնակիցներին և հենց իրենց՝ հռոմայեցիներին։ Փաբիոսի ռազմավարության բացասական կողմն այն էր, որ այն իր ետևից բերում էր թե՛ իտալիկական, այդ թվում նաև հռոմեական մանր գյուղացիության, և թե՛ խոշոր հողագործական տնտեսությունների քայքայում։ Սակայն, եթե վերջիններս իրենց տրամադրության տակ ունեին իրենց գոյապահպանման համար քիչ թե շատ նյութական միջոցներ, ապա առաջինները պարզապես կանգնած էին կործանման եզրին։ Տարօրինակ չէր, որ հռոմեական վերին աստիճանի կարգապահ բանակում անբավականությունը, հետզհետե խորանալով, օրեցօր ավելի էր ջրի երես դուրս գալիս։ Զարմանալի չէր նաև այն, որ դժգոհների գլուխ էր կանգնած հեծելազորի հրամանատար Մարկոս Մինուկիոս Ռուֆոսը։

Իրադարձություններին ժամանակակից և ժամանակամերձ անտիկ ավանդությունը նրա վարմունքը բացատրում է որպես «թեթևամտություն» և իմաստուն ու իդեալականացված Փաբիոսի խորհուրդներին չանսալու հետևանք։ Այս առնչությամբ հետաքրքիր է, որ Փրոնտինոսի (1, 8, 2) գնահատմամբ Մինուկիոսը ո՛չ քաջությամբ և ո՛չ էլ ռազմական վարպետությամբ Փաբիոսին չէր հավասարվում։ Այս գնահատականը, ինչպես նաև Էննիոսի այն նշանավոր ասույթը, որը Փաբիոսին և միայն նրան էր վերագրում հայրենիքի փրկությունը, ծագում էին միևնույն միջավայրից։ Դիկտատորի հանգստությանը և անվհեր դիմացկունությանը հակադրվում է հեծելազորի հրամանատարի հիստերիկ ջղագարությունը, և «ամբոխի» կարծիքից վերջինիս կախվածությունը որակվում է վերջին հաշվով որպես դատարկ անսկզբունքայնություն։ Ի հակադրություն Մինուկիոսի, Փաբիոսը ցույց է տրված որպես Հռոմին վնասացնող հին հռոմեական առաքինությունների՝ բարեպաշտության, կարգապահության, կայունության, մագիստրատների հանդեպ հնազանդության կրող[78]։

Իրականում, իհարկե, գործն ավելի բարդ էր։ Մենք արդեն հիշատակել ենք, որ Մինուկիոսը, երբ իշխանության գլուխ անցավ, սենատում Փաբիոսի հանդեպ թշնամական քաղաքական խմբակցության ներկայացուցիչն էր։ Այն եղանակը, որով նրան պաշտոն հանձնվեց, որոշակիորեն Մինուկիոսին անկախ դարձրեց դիկտատորից։ Պատահական չէր, որ դարձյալ հակառակ հռոմեական բոլոր ավանդությունների ու նորմերի, ցանկացած մարդուն իր հայեցողությամբ պատժելու իրավունքով օժտված դիկտատորը, մանավանդ պատերազմի ժամանակ, ոչինչ չձեռնարկեց հուգումներին վերջ տալու համար, իհարկե, ոչ թե այն պատճառով, որ չէր կամենում, այլ որովհետև չէր կարող։ Զինվորների դժգոհությունը, ինչպես և հենց նաև բուն Հռոմում եղած դժգոհությունը, Մինուկիոսին պատեհ առիթ ընծայեց՝ Փաբիոսին ետ մղելու և առաջատար դիրքերի տիրանալու համար։ Նրա ետևում կանգնած Էմիլիոսների և Կորնելիոսների խմբավորմանն այժմ բացառիկ հնարավորություն ընձեռվեց Հռոմի քաղաքական կյանքի ղեկավարությունից Փաբիոսներին հեռու վանելու համար։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Հաննիբալը նույնպես ամեն ինչ անում էր Փաբիոսին վարկաբեկելու համար։ Մասնավորապես նա կարգադրեց, որ երկիրը կողոպտելիս չդիպչեն Փաբիոսին պատկանող վարելադաշտին, որպես թե ի տրիտուր իրականության մեջ գոյություն ունեցած ինչ-որ գաղտնի համաձայնության կատարման (Լիվիոս, 22, 23, 4, Պլուտ., Փաբ., 7, Փրոնտինոս, 1, 8, 2)։

Նույն այդ ժամանակ տեղի ունեցավ մի միջադեպ ևս, որը Փաբիոսի թշնամիները ներկայացրեցին որպես նրա կողմից սենատին և ամ-

բոլոր պետությանն ուղղված կանխամտածված մարտահրավեր։ Եվ իրոք, դիկտատորի վարքագիծը դժվար էր համաձայնեցնել պոլիսային բարոյականության նորմերին, որոնք պատվիրում էին խիստ հնազանդություն իշխանության բարձրագույն մարմիններին։ Դեպքն այսպես է տեղի ունեցել։ Հռոմայեցիների ու կարթագենցիների միջև գերիների փոխանակության ժամանակ, որը կատարվեց պատերազմի հենց այդ փուլում, համաձայնություն կնքվեց, որ յուրաքանչյուր մարդու փոխանակելու են մեկ մարդու հետ։ Այն կողմը, որ մյուսի համեմատ ավելի շատ գերեզարձված զորականներ էր ստանալու, պարտավոր էր յուրաքանչյուրի համար տալ երկուսուկես ֆունտ արծաթ, որպես փրկավճար։ Հռոմայեցիների մոտ 247 հոգի ավելի վերադարձան, քան կարթագենցիների, սակայն սենատը հապաղեց փող հատկացնել։ Այն ժամանակ Փաբիոսը, Հռոմ ուղարկելով իր որդուն՝ նույնպես Քվինտոս անունով, վաճառեց իր հողատիրությունը, հենց այն, որին ձեռք չէր տվել Հաննիբալը, և իր միջոցներով մուծեց փրկագինը (Լիվիոս, 22, 23, 5—2, Դիոն Կասս., Ֆրագմ., 57, 15, Պլուտ., Փար., 7)։

Դժգոհությունը երևան եկավ արդեն Փաբիոսի գործունեության առաջին իսկ շաբաթում, երբ կարթագենական և հռոմեական բանակները Ապուլիայում կանգնած էին դեմ դիմաց, և երբ առաջին անգամ հայտնի դարձավ գլխավոր ճակատամարտից ամեն կերպ խուսափելու՝ դիկտատորի ցանկությունը։ Մեզ հասած պատումները ընդդիմադրության կենտրոնում դնում են Մինուկիոսին։ Միանալով «ամբոխի» կարծիքին, նա հրապարակայնորեն անարգեց Փաբիոսին, որն իբր թե պատերազմը վարում է անպատշաճորեն ու երկչոտությամբ, իսկ ինքը՝ Մինուկիոսը ջերմորեն կամենում է մարտնչել (Պոլիբիոս, 3, 90, 6)։ Դիկտատորի ողջամիտ ծրագրերը հանդիպեցին անողոք հակառակորդի, ի դեմս հեծելազորի պետի, որին սոսկ իշխանության պակաս լինելն էր խանգարում խորտակելու պետությունը։ Դաժանաբարո, իր վճիռներում փութկոտ, լեզվով անզուսպ, նա սկզբնապես քշերի, ապա նաև «ամբոխի» մեջ Փաբիոսին կոչեց ոչ թե դանդաղկոտ, այլ ալարկոտ, ոչ թե զգույշ, այլ երկչոտ։ Նրան իբրև արժանիքներ, վերագրելով թերություններ, նա բարձրացնում էր իրեն, ստորացնելով բարձրագույնին (Լիվիոս, 22, 12, 11—12)։ Ջնայած արտահայտությունների մեջ եղած տարբերությանը (Պոլիբիոսը զգալիորեն ավելի զուսպ է իր գնահատումներում, քան Լիվիոսը), իրադարձությունների գլխավոր հենքը թե՛ մեկի և թե՛ մյուսի մոտ համընկնում է, ճիշտ է, մի էական տարբերությամբ։ Լիվիոսի մոտ Մինուկիոսը հանդես է գալիս որպես խռովության նախաձեռնող, իսկ Պոլիբիոսի մոտ նա սոսկ հարում է «ամբոխին»։

Մենք չգիտենք, թե Փաբիոսին ինչպես հաջողվեց, թեկուզև կարճ ժամանակ, հակառակորդներին ստիպել լռելու։ Համենայն դեպս, մինչև Հաննիբալի ետևից նրա գալը Փալերնոս, մենք չենք լսում հռոմեական բանակում նոր հուզումների մասին։ Փաբիոսի պաշտոնակից (Պոլիբիոսն օգտագործում է «կառավարչակից» արտահայտությունը) Մինուկիոսը, բանակում գտնվող բոլոր զինվորական տրիբունները և ցենտուրիոնները, այսինքն՝ ամբողջ հրամանատարական կազմը, դիկտատորի կամքին հակառակ, գտնում էին, որ հենց այժմ իսկ անհրաժեշտ է հարմար տեղանքում հասնել թշնամուն, փակել նրա ճանապարհը, իջնել հարթավայր և Հաննիբալին հնարավորություն չտալ ավերելու այդքան հարուստ ու արգավանդ երկիրը (Պոլիբիոս, 3, 92, 4)։ Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում էլ Մինուկիոսը Պոլիբիոսի պատմածի մեջ միայնակ հանդես չի գալիս. նա գործում է հռոմեական բանակի ուրիշ հրամանատարների հետ, վերստին, թեև ոչ այնպես կտրուկ, ինչպես նախկինում, հանդես գալով զորքի և պետության մեջ բարձրագույն իշխանությամբ օժտված անձնավորության դեմ։ Լիվիոսը (22, 14), իր միտումին համապատասխան, Մինուկիոսին կրկին պատկերում է որպես հուզումների նախաձեռնող։ Նա հեծելազորի ընդվզումն պետի շուրթերին մերկացնող ամբոխավարական ելույթ է դնում, որի մեջ նա ողբում է Հռոմի անկման համար, այն բանի համար, որ թույլ է տրվում Իտալիայի ավերումը, որ կորսվել է հռոմեական երբեմնի եռանդն ու վճռականությունը, ինչը մեկ անգամ չէ, որ փրկել է պետությունը։ Հիմարություն է կարծել, ասում է Մինուկիոսը Լիվիոսի պատմածի մեջ, որ նստելով և խոստումներ տալով, կարելի է վերջացնել պատերազմը (Մինուկիոսի թշնամական ելույթը փաբիոսյան հին հռոմեական բարեպաշտության դեմ) անհրաժեշտ է զենքի դիմել, իջնել դաշտավայր և ճակատ առ ճակատ կռվել։ Հռոմեական պետությունը աճել էր քաջությամբ և գործունեությամբ և ոչ թե այն դանդաղկոտությամբ, որը վախկոտներն անվանում են զգուշավորություն։ Մինուկիոսին շրջապատում էին զինվորական տրիբունները և հեծյալները. նրա խոսքերը թռչում-հասնում էին մինչև շարքային զինվորները. ձայներ էին հնչում, որ եթե նրանք կարողանային ընտրություն կատարել, ապա հաստատապես Մինուկիոսին կնախընտրեին Փաբիոսից։

Այս անգամ նույնպես գործը չհասավ ուղղակի գժտության։ Սակայն շատ չանցած՝ դրան հետևեց Փաբիոսի ետկանչումը Հռոմ՝ խիստ պարզ պատրվակով (մեր ձեռքի տակ եղած աղբյուրները նույնիսկ հարկ չեն համարում հիշատակել, թե իսկապես Փաբիոսն ինչպիսի՞ զոհաբերություններ պետք է կատարեր Հռոմում), որը միաժամանակ դիկ-

տատորի գործունեության նկատմամբ կառավարության դժգոհության արտահայտությունն էր և, անկասկած, դիկտատուրայի դեմ տարվող երկարատև, թշնամական պրոպագանդիստական միջոցառումների բնական ավարտը։ Փաբիոսի մեկնումով հրամանատարությունն անցավ Մինուկիոսին. ընդ որում, և դա խիստ բնութագրական էր նրանց փոխհարաբերությունների համար, Փաբիոսը, փոխանակ հրամայելու Մինուկիոսին, որպեսզի սա հետևի որոշակի վարքագծի, հորդորով դիմեց նրան՝ չկործանել իր զորքերը և չհետևել Սեմպրոնիոսի ու Փլամինիոսի օրինակին։ Մինուկիոսը բոլորովին ուշադրություն չդարձրեց նրա խոսքերին (Պոլիբիոս, 3, 94, 8—10, Լիվիոս, 22, 18, 8—10)։

Հետագա իրադարձությունների ընթացքի մասին Պոլիբիոսը (3, 101—102) հետևյալն է պատմում։ Մինուկիոսը, տեղեկանալով, որ Հաննիբալը գրավել է Գերեոնիումը, որ նրա մարդիկ դաշտերում հավաքում են բերքը, իսկ հիմնական ուժերը կանգնած են քաղաքի պարիսպների տակ, իջավ հովիտ և գրավեց Կալելա բերդը, որն իշխում էր Լարինիումի վրա, վճռելով հենց այդտեղ ճակատամարտ տալ։ Իր հերթին Հաննիբալը, տեսնելով որ հակառակորդը մոտենում է իրեն, իր զորքի մեկ երրորդն ուղարկեց հացահատիկը հավաքելու, իսկ մնացածների հետ 16 ասպարեզ (մոտավորապես 3,5 կմ) հետ քաշվելով քաղաքից, նույնպես մոտեցավ թշնամուն և բանակեց մի ինչ-որ բարձունքի վրա։ Դրանով իսկ նա թե՛ սպառնալիք ստեղծեց հռոմայեցիների համար և թե՛ պաշտպանեց դաշտավայրում գործող իր զորաբաժինները։ Գիշերը նա մոտավորապես 2000 նիզակավորների ուղարկեց կարթագենական և հռոմեական բանակատեղերի միջև ընկած ևս մի բլուր գրավելու։ Սակայն այդ փորձն անհաջող անցավ։ Առավոտյան Մինուկիոսը կարթագենցիների դեմ հանեց իր թեթևազեն հետևազորը, գրավեց նույն այդ բլուրը, իր ճամբարը տեղափոխելով այնտեղ։ Նույն այդ ժամանակ Հաննիբալն իր զինվորներից մի խումբ ևս ուղարկեց անասուններին արածացնելու և հացահատիկը հավաքելու համար. նրա զորքի մեծ մասը ցրված էր դաշտահովտում։ Օգտվելով հանգամանքների այդքան բարեհաջող ընթացքից, Մինուկիոսը ցերեկը մոտեցավ կարթագենական բանակատեղին, նրա դիմաց դասավորեց ծանրազեն հետևազորը, իսկ հեծյալներին ու թեթևազեն հետևազորն ուղարկեց ոչնչացնելու Հաննիբալի հովիվներին և անասնակեր հավաքողներին, հրամայելով ոչ ոքի գերի չվերցնել։ Հռոմայեցիների ծանրազեն հետևազորը ճեղքեց կարթագենցիների ամրությունները և քիչ մնաց շրջապատեր նրանց։ Դրությունը փրկեց Գերեոնիումի պարիսպների պաշտպանության տակ փութով խմբված 4000 զինվորների հեռ արագ վրա

հասած Հաղորդությունը։ Այժմ Հաննիբալն ինքն անցավ հակագրոհի, դասավորեց, թեև ոչ առանց դժվարության, իր զինվորներին և ետ շպրտեց թշնամուն։ Հաջորդ օրը Հաննիբալը լքեց իր բանակատեղը, որն անմիջապես գրավվեց Մինուկիոսի կողմից, և հեռացավ դեպի Գերեոնիում։

Տիտոս Լիվիոսը (22, 24) գրում է, որ Մինուկիոսը, այն բանից հետո, երբ ճամբարը տեղափոխեց երկրորդ բլրի վրա՝ կարթագենցիների անմիջական մերձակայքը, հեծելազորը և թեթևազեն ջոկատները ճամբարի ետևի դարպասներով ուղարկեց հաց մթերող պունիկացիներին ոչնչացնելու։ Ըստ նրա պատմածի, Հաննիբալը չէր համարձակվում միջամտել, հապաղում էր, սպասում, իսկ այնուհետև վերադարձավ Գերեոնիում։ Ինչ վերաբերում է մնացած փաստերին, ապա դրանց մասին Լիվիոսը գրում է ոչ թե իբրև իրականում տեղի ունեցածների, այլ որպես «որոշ հեղինակների» հաղորդածների մասին. վերջիններս համաստում են, որ տեղի է ունեցել ճակատամարտ, ընդ որում սկզբում կարթագենցիները ետ են շպրտվել դեպի իրենց բանակատեղը, ապա հակագրոհել են հռոմայեցիների դեմ, և միայն դիկտատորի հրամանով Մինուկիոսին օգնելու համար սամնիացի Նումերիոս Դեկիմիոսի բերած զորաջոկատի (8000 հետևազորայիններ և հեծյալներ) հայտնվելն է Հաննիբալին ստիպել նահանջելու։ Հռոմում տեղեկություն ստացվեց Ֆայլուն հաղթանակի մասին, հեծելազորի պետի պարծենկոտ նամակով հանդերձ։

Դժվար չէ տեսնել, որ Լիվիոսի շարադրածի մեջ մեզ հասած ավանդությունը ամեն կերպ ձգտում է վարկաբեկել Մինուկիոսին, համենայն դեպս, նվազեցնել նրա գործողությունների նշանակությունը։ Հռոմայեցիների և պունիկացիների միջև տեղի ունեցած ճակատամարտի մասին եղած վկայությունները հենց նյութի ընծայման եղանակով իսկ կասկածի տակ են դրվում, թեև դա ուղղակիորեն չի արտահայտվում. ընդ որում, եթե անգամ ճակատամարտ տեղի ունեցել է, ապա նրա ելքի համար վճռական դեր են կատարել Փաբիոսի ուղարկած զորականները. վերջապես, կողմերի կորուստները հենց նույն պայմաններում գրեթե միահավասար են հաշվում (6000 կարթագենցի, ավելի քան 5000 հռոմայեցի), այնպես որ հիմք չկար փայլուն հաղթանակի վերաբերյալ Հռոմ տեղեկություն ուղարկելու համար։ Ճակատամարտի մասին պատմության հռոմեական այս տարբերակը բացահայտորեն բխում է պաշտոնական ռազմական զեկուցագրերից։ Այստեղից է գալիս կորուստների թիվը և Նումերիոս Դեկիմիոսի մասին հիշատակությունը, որը բացակայում է Պոլիբիոսի մոտ։ Այստեղ, ընդհանուր առմամբ,

հակասություն չկա Պոլիբիոսի վկայության հետ։ Այն լոկ լրացնում և ճշգրտում է նրան։ Հետևաբար, կարելի է կարծել, որ իրադարձությունները հիմնականում ծավալվել են այնպես, ինչպես դրանց մասին պատմում է Պոլիբիոսը, բայց նաև Նումերիոս Դեկիմիոսի ջոկատի ժամանումը եղել է այն գործոններից մեկը, որոնք Հաննիբալին ստիպել են նահանջել։

Ինչ կերպ էլ որ այնտեղ եղած լինի, այս անգամ հռոմեական զենքի հաջողությանը ոչ ոք չէր կասկածում, թեև կարելի էր վիճել այն մասին, թե ինչպիսիք էին հաղթանակի չափերը։ Միայն Փաբիոսն էր, որ չէր հավատում ո՛չ լուրերին, ո՛չ էլ նամակներին և ասում էր, որ եթե նույնիսկ ամեն ինչ ճիշտ լինի, ինքը հաջողությունից ավելի շատ է վախենում, քան պարտությունից (Լիվիոս, 22, 25, 2, Պլուտ., Փաբ., 8)։ Սակայն նրա վրա ուշադրություն չէին դարձնում։ Հռոմում, դատելով ըստ ամենայնի, հակված էին չափազանցնել տեղի ունեցածի նշանակությունը։ Թվում էր, թե արդեն շրջադարձ է կատարվում դեպի լավը. Հաննիբալի նկատմամբ տարած փայլուն հաղթանակը վկայում էր, որ զինվորների անգործունության և բարոյական ծանր կացության պատճառը ոչ թե նրանց երկչոտությունն էր, այլ նրանց հրամանատարի չափից ավելի զգուշավորությունը (Պոլիբիոս, 3, 103, 1—2)։ Բացահայտորեն այդպիսի մտքեր էր արտահայտում ժողովրդական տրիբուն Մարկոս Մետելլոսը, որը սերում էր պլեբեյական նշանավոր տոհմից։ Չէ որ տրիբուններն, ինչպես հայտնի է, օգտվում էին սրբազան անձեռնմխելիությունից, և Մետելլոսը կարող էր անպատիժ կերպով հանդես գալ ընդդեմ դիկտատորի։ Լիվիոսի պատմելով (22, 25, 3—11) ահա թե ինչ է ասել նա։ Գոյություն ունեցող իրավիճակն արդեն բոլորովին անտանելի է դարձել. դիկտատորը պատերազմը հաջողությամբ վարելուն խանգարում է ոչ միայն գործող բանակում իր առկայությամբ, այլև նույնիսկ այնտեղ չլինելով ջանում է հականերգործել. նա ձգտում է ձգձգել պատերազմը, որպեսզի ավելի երկար պահպանի գերագույն իշխանությունը. Իտալիան ամայանում է, իսկ դիկտատորը Կասիլինումում նստած հռոմեական զորքերով պաշտպանում է իր վարելադաշտը. փութեռանդորեն մարտի ձգտող զինվորներին նա ասես պահում է աքսորի մեջ, ճամբարի ամրությունների ետևում. միայն այն ժամանակ, երբ նա հեռացավ բանակից, զինվորները դուրս եկան հողապատնեշից և ջախջախեցին թշնամուն. եթե հռոմեական պլեբսը հին ոգով համակված լիներ, ապա նա՝ Մետելլոսը համարձակորեն կառաջարկեր Քվինտոս Փաբիոսին զրկել իշխանությունից, սակայն այժմ ինքը բավարարվում է դիկտատորի և հեծելազորի հրամանատարի իրա-

ջանքների հավասարեցման վերաբերյալ համեստ առաջարկով (հմմտ. Պլուտ. մոտ, Փաբ., 8)։

Հռոմում նմանօրինակ բան դեռ չէր կատարվել. նախկինում, ասենք նաև հետագայում, միևնույն առաջադրանքով և լիազորություններով երկու դիկտատորներ չեն նշանակվել։ Մետելլոսի առաջարկը հիմքից խարխլում էր դիկտատուրայի բուն իսկ սկզբունքը՝ վերահսկողությունից զերծ իշխանության կենտրոնացումը մեկի ձեռքում, և հանգեցնում էր փաստորեն կոնսուլականին հար և նման կոլեգիալ իշխանության վերականգնմանը։ Ըստ էության դա տրամաբանական զարգացումն էր այն իրավիճակի, որն ստեղծվել էր հենց սկզբից, Մինուկիոսին պաշտոնի ընտրելու հետևանքով։

Պլեբեյական ժողովներին մասնակցություն ունենալուց խուսափող Փաբիոսի՝ սենատի առջև արդարանալու և դիկտատորի իր դիրքերն ամրապնդելու փորձերը հաջողություն չունեցան. Սենատում, նա, ինչպես պատմում է Լիվիոսը (22, 25, 12—15), դրվատում էր թշնամուն, այսինքն, պետք է կարծել, ջանում էր իր լսարանին հասկացնել, որ Հաննիբալը ուժեղ և փորձված հակառակորդ է, հիշեցնում էր հռոմայեցիների պարտությունների մասին, որոնք հետևանք էին հրամանատարական կազմի անհեռատեսության և անկարողության, պահանջում էր, որպեսզի հեծելազորի պետը հաշիվ տա, թե ինչու նա, հակառակ իր՝ Փաբիոսի ցուցումների, պատերազմում էր կարթագենցիների դեմ։ Եթե ինքը պահպանի գերագույն իշխանությունը,— ասում էր Փաբիոսը,— ապա շատ կարճ ժամանակում կկարողանա ապացուցել, որ լավ զորավարի համար կարևորը բախտ ունենալը չէ, և որ իշխողը բանականությունն ու շրջահայեցությունն են, որ փառքից առավել է ժամանակին և առանց խայտառակվելու բանակը պահպանելը, քան բազմահազար թշնամիներ սպանելը։ Բոլորին ձանձրացրած ծերունուն այլևս չէին կամենում լսել և այն ժամանակ դիկտատորը, չցանկանալով մասնակցել ժողովրդական ժողովին, որտեղ պետք է որոշվեր իր իշխանությանն առնչվող խնդիրը, նախօրյակին, գիշերով մեկնեց բանակ։

Սակայն առավոտյան, երբ հավաքվեց ժողովրդական ժողովը, որտեղ մեծամասնությունը դիկտատորի դեմ էր տրամադրված, այնուամենայնիվ կառավարող վերնախավից գեթ մի մարդ գտնվեց, որը համարձակվեց լսելի ձայնով արտահայտվել ի պաշտպանություն Մետելլոսի առաջարկի։ Դա Գայոս Տերենտիոս Վառոնն էր, որը հռոմեական նոբիլիության մեջ նոր մարդ էր, սակայն բոլորովին վերջերս զրաղեցրել էր պրետորի պաշտոնը (Լիվիոս, 22, 25, 17—18), Փլամինիոսի կոր-

ծանումից հետո դառնալով Հռոմում դեմոկրատական շարժման պարագլուխներից մեկը։ Մետելլոսի առաջարկին ոչ ոք դեմ չարտահայտվեց, այն ընդունվեց։ Ապպիանոսի (Հաննիբ., 12) պատմածի համաձայն, որը բացարձակորեն սխալ է, Մետելլոսի առաջարկի վերաբերյալ որոշումն ընդունել է սենատը։

Ճանապարհին տեղեկություն ստանալով դիկտատորի և հեծելազորի պետի իրավունքների հավասարեցման մասին, Փաբիոսը վերադարձավ գործող բանակ։ Առաջին իսկ հանդիպման ժամանակ Մինուկիոսն առաջարկեց, որպեսզի երկուսն էլ իշխանությունից օգտվեն հերթականությամբ՝ օրընդմեջ, կամ ավելի երկար ժամանակամիջոց անցնելուց հետո։ Փաբիոսը կտրուկ կերպով հրաժարվեց այդ որոշումից, որը նրան լիակատար կախման մեջ կդներ Մինուկիոսի մտահղացումներից ու գործողություններից։ Փաբիոսի առաջարկով դիկտատորները միմյանց միջև հավասարապես բաժանեցին հետևազորը, հեծյալներին և դաշնակցային զորամիավորումները։ Առաջին և չորրորդ լեգեոնները բաժին ընկան Մինուկիոսին, երկրորդը և երրորդը՝ Փաբիոսին (Լիվիոս, 22, 27, 5—11)։ Համաձայն Պոլիբիոսի պատմածի (3, 103, 7—8), Փաբիոսն առաջարկեց իր գործընկերոջը, որպեսզի կամ հրամանատարություն անեն հերթականությամբ, կամ բաժանեն զորքը, և որովհետև Մինուկիոսը համաձայնվեց վերջինին, զորքը բաժանեցին միմյանց միջև։ Մենք հավանորեն երբեք չենք իմանա, թե ինչպես է ձեռք բերվել համաձայնությունը, եթե միայն երևան չհանվեն նոր սկզբնաղբյուրներ, որոնք լրացուցիչ լույս կսփռեն այդ խնդրի վրա. սակայն մեզ թվում է, որ ճշմարտությանն ավելի մոտ է Լիվիոսի պատմածը։ Իրականում կամենալով Հաննիբալին վճռական ճակատամարտ տալ, Մինուկիոսը շահագրգռված էր այն բանում, որ հնարավորություն ունենա տնօրինելու հռոմեական ողջ զորքը, թեև իհարկե, Փաբիոսի հետ միասին՝ հերթականությամբ։ Նա միշտ կարող էր հարմար ժամանակ գտնել իր դիտավորությունները իրագործելու համար, մրցակցին վերածելով անզոր դիտողի, մի դրություն, որը միանգամայն անընդունելի էր Փաբիոսի համար։ Փաբիոսին, եթե միայն նա կամենում էր հետևել իր նախկին վարքագծին, միայն ձեռնտու էր զորքը բաժանելը, ինչին և նա հասավ։ Բանը վերջացավ նրանով, որ Մինուկիոսը, հռոմեական ճամբարից դուրս տանելով իր զորքերը, ինքնուրույնորեն բանակեց Հաննիբալի զորատեղից ոչ հեռու։

Հաննիբալն անկասկած, մեծ բավականությամբ էր հետևում Հռոմում ծավալվող իրադարձություններին, իսկ այնտեղ քաղաքական ճգնաժամի լուծումը առանձին բավականություն պատճառեց նրան։ Այժմ նա իր առջև ուներ մի հակառակորդ, որը թուլացել էր ներքին երկպառակությունների և բանակը երկու մասի տրոհվելու հետևանքով։ Վերջիններիս հրամանատարներն էին միմյանցից անկախ, ռազմավարական տարբեր ընդունումների հետևանքով երկու զորավարներ։ Նրանցից առավել վտանգավորը՝ Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսը, փաստորեն կորցրել էր նախկին իշխանությունը և կարթագենցիներին լրջորեն սպառնալու հնարավորությունը, իսկ մյուսը՝ Մարկոս Մինուկիոս Ռուֆոսը, իր տրամադրության տակ բավականին ուժեր չուներ, որպեսզի հաղթանակ տաներ։ Եվ բացի այդ, երկու դիկտատորների միջև եղած հակասությունների վրա խաղալով, կարելի էր փորձել ջախջախել նրանց առանձին-առանձին։

Կարթագենցիների և Մինուկիոսի ճամբարների միջև ընկած էր մի բարձր բլուր, որը Հաննիբալը վճռեց դարձնել մարտի կենտրոն։ Նրա շուրջը, տարբեր թաքստոցներում, անհարթություններում և փոսերում, շարան դնելով մոտավորապես 5000 հետևազորայինների և հեծյալների, Հաննիբալը, որպեսզի հակառակորդի ուշադրությունը նրանցից շեղի, իր թեթևազեն զորամասերով գրավեց այդ բլուրը։ Մինուկիոսը փութապես գործի անցավ։ Բլրի գրավման համար նա ուղարկեց թեթևազեն ջոկատ, նրանից հետո՝ հեծյալներին, իսկ վերջիններից հետո դուրս բերեց նաև մնացած ամբողջ զորքը։ Հաննիբալը նույնպես դեպի բլուր ուղարկեց անհրաժեշտ օգնական ուժեր, որոնք կասեցրին հակառակորդի գրոհը և փախուստի մատնեցին նրա թեթևազեն ջոկատին։ Տագնապը համակեց նաև հռոմեական հեծյալներին. Մինուկիոսի միայն հետևազորն էր շարունակում առաջ շարժվել. հանկարծակի թիկունքից նրա վրա հարձակվեցին դարաններում թաքնված կարթագենցիները, և հռոմայեցիներն ընկան օղակման մեջ։ Այդ պահին Մինուկիոսի լեգեոններին օգնության հասավ Փաբիոսը։ Տեսնելով, որ հակառակորդի թարմ ուժեր են մոտենում, և որ երկու դիկտատորների զորքերը վերախմբավորվում են հակահարձակման համար, Հաննիբալը, բացարձակապես պատրաստ չլինելով իրադարձությունների այդպիսի շրջադարձին, իր զինվորներին հրամայեց նահանջել դեպի ճամբար։

Հռոմեական բանակում, իսկ այնուհետև նաև հենց Հռոմում, ճակատամարտի արդյունքը, և ոչ առանց հիմքի, դիտեցին որպես Փաբիոսի հաղթանակ։ Մինուկիոսին ուրիշ ոչինչ չէր մնում անելու, քան վերադառնալ իր մրցակցի ճամբարը և հրաժարվել այն իրավունքներից, որոնք նրան բոլորովին վերջերս ընձեռել էր ժողովրդական ժողովը, և նախկինի պես անցնել հեծելազորի պետի պարտականությունների կատարմանը (Պոլիբիոս, 3, 104—105, Լիվիոս, 22, 28—30)։

V

Այսպիսով, Տրազիմենոսյան լճի մոտ տրված ճակատամարտից հետո տեղի ունեցած անցքերի հետևանքով Հաննիբալը կորցրեց իր փայլուն հաղթանակի բոլոր պտուղները։ Իտալիայում կատարած իր բոլոր տեղաշարժումներից հետո Հաննիբալը կարողացավ ճամբար դնել միայն Գերեոնիումի մերձակայքում, անմիջականորեն իր առջևում ունենալով հռոմեական բոլոր շորս լեգեոնները։ Վերահաս ձմռան պատճառով Հաննիբալը դատապարտվեց անգործության։

Իսպանիայում պատերազմը 217 թվականին ծավալվեց կարթագենցիների համար հույժ բարենպաստ ձևով։ Ճիշտ է, Հասդրուբալ Բարկայանը 218—217 թթ. ձմռանը, կազմելով ուժեղ նավատորմիդ, իր բանակը ծովով և ցամաքով շարժեց դեպի Իբեր, սակայն վերջինիս գետաբերանից ոչ հեռու տեղի ունեցած ծովային մարտում կարթագենյան նավատորմը ջախջախվեց։ Հռոմայեցիներն իրենց զորքերն ափ հանեցին Օնուսսայի մոտ և նույնիսկ մոտեցան Նոր Կարթագենի պարիսպներին, ինչպես նաև հարձակվեցին Էբեսոս կղզու վրա։ Երբ հռոմեական նավատորմը Իբերից շուտ եկավ դեպի հյուսիս, Գնեոս Կորնելիոս Սկիպիոնը սկսեց հարձակումը դեպի Կաստուլոնյան լեռները, այն դեպքում, երբ Հասդրուբալը նահանջեց Լուսիտանիա, դեպի Ատլանտյան օվկիանոսի ափերը։ Նույն այդ ժամանակ իլերգետներն ապստամբեցին հռոմայեցիների դեմ։ Գնեոս Սկիպիոնը առանց որևէ դժվարության, ճնշեց նրանց, սակայն ապստամբությունը Հասդրուբալի համար ազդանշան ծառայեց Իբերից հյուսիս ընկած շրջաններ ներխուժելու համար։ Հարկ չեղավ, որ կարթագենյան զորապետը երկար մնա այնտեղ և գոտեմարտի պատրաստվի հռոմայեցիների դեմ. անսպասելիորեն նրան իրազեկեցին, որ կարթագենական տիրույթներ են ներխուժել կելտիբերների ցեղերը, որոնք դաշինք էին կնքել հռոմայեցիների հետ։ Նրանք գրավեցին երեք քաղաք և երկու անգամ պատերազմեցին Հասդրուբալի դեմ, որը նեռվեց հարավ՝ պաշտպանություն կազմակերպելու համար. կարթագենցիները կորցրեցին 15 հազար սպանված և 4000 գերի։ Այդ պահին 30 նավով և 8000 զորականներից կազմված ջոկատով Իսպանիա ժամանեց Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը։ Միանալով եղբորը և օգտվելով այն բանից, որ պունիկացիները զբաղված էին կելտիբերների դեմ մղվող պատերազմով, նա հռոմեական զորքերը տարավ դեպի Սագունտում, որտեղ այդ ժամանակ պահվում էին իբերական ցեղերի պատանդները։ Վերջիններս խորամանկության և դավաճանության շնորհիվ կարողացան հեռանալ Սագունտումից, և դա Սկիպիոն

[illegible]ներին հնարավորություն ընձեռեց, որպեսզի իրենց կողմը գրավեն իբերական նորանոր ցեղերի։ Ձմեռային վերահաս ցրտերն ընդհատեցին պատերազմը (Պոլիբիոս, 3, 95—99, Լիվիոս, 22, 19—22), որն ավարտվեց հռոմայեցիների ակներև առավելությամբ։

Կարթագենցիների համար դրությունն ավելի լավ դասավորվեց [illegible] շրջանում։ Կոնսուլ Գնեոս Սերվիլիոս Գեմինոսը, գլխավորելով 120 նավից բաղկացած նավատորմը, պատվեց Սարդինիայի և Կորսիկայի ափերի շուրջը, ամենուրեք վերցնելով պատանդներ, իսկ այնուհետև մեկնեց Աֆրիկա։ Անցնելով Մենինգայի միջով, նա ամայացրեց այն, իսկ Կերկինեից վերցրեց 10 տաղանդ արծաթ, որպես փրկագին այն բանի համար, որպեսզի հրի ու ավերածության չմատնի նրա տիրույթները։ Նրան հաջողվեց ափ իջնել Աֆրիկայում։ Սակայն այդ կերպ առեղծված պլացդարմն ամրացնելու փոխարեն, նա իր զինվորներին ու ծովայիններին տարավ շրջակա դաշտերն ամայացնելու, և, երբ նրանք դարձան երկրում, նրանց հանդիպեցին զարանամուտ սպասող կարթագենցիները։ Հռոմայեցիները փախան դեպի նավերը։ Կորցնելով մոտավորապես 1000 մարդ, նրանք նավերով մեկնեցին Սիցիլիա (Լիվիոս, 22, 31, 1—5)։ Սակայն, չնայած արշավանքի այդպիսի ելքին, Գնեոս Սերվիլիոսի փորձը ցույց տվեց Աֆրիկայում կարթագենական տիրույթների խոցելիությունը։ Հռոմայեցիների պարտությունը հետևանք էր նրանց սեփական անբավարար կազմակերպվածության, և բնավ ոչ աֆրիկյան ծովափերի անպաշտպանվածության։

Ժամանակն անցնում էր. լրացավ Քվինտոս Ֆաբիոս Մաքսիմոսի դիկտատուրայի վեցամսյա ժամանակամիջոցը, և նա դիմեց կոնսուլներին հռոմեական զորքերի հրամանատարությունն ընդունելու առաջարկով։ Գնեոս Սերվիլիոս Գեմինոսը, Լիլիբեոնում իր նավատորմը հանձնելով պրետոր Տիտոս Օտակիլիոսին, որպեսզի վերջինիս ներկայացուցիչ Պուբլիոս Սուրան այն հասցնի Հռոմ, ինքը մեկնեց Հաննիբալի դեմ գործող լեգեոնները։ Հենց այնտեղ եկավ նաև իր պաշտոնակիցը՝ Մարկոս Ատիլիոս Ռեգուլոսը։ Փոխարինելով դիկտատորին և նրա հեծելազորի պետին, կոնսուլները խստիվ հետևեցին Ֆաբիոսի ռազմավարական ուղեգծին. նրանք մշտական սպառնալիքի տակ էին պահում Հաննիբալի բանակը, սակայն նախկինի պես խուսափում էին վճռական հակատամարտից, որն այնպես ցանկանում էր պունիկյան զորավարը։ Պունիկյան զորքն սկսեց պատանդամբեղծ սուր պակաս զգալ, և Հաննիբալը նույնիսկ մտածում էր՝ չգնա՞լ արդյոք դեպի հյուսիս, Գալլիա։ Նրան տեղում պահեց միայն այն միտքը, որ թշնամիներն ու բարեկամները այդ նահանջը կդիտեն որպես փախուստ, և այն ժամանակ

ինքը վերջնականապես կկորցնի Իտալիայում գերիշխելու բոլոր հավանականությունները (Լիվիոս, 22, 31, 6—32, 3, հմմտ. Դիոն Կասս., մոտ, Ֆրագմ., 57, 21)։

Ամեն սկսվելուն պես, Գերեոնիումի մոտ ռազմական գործողություններն աստիճանաբար դադարեցին։ Սակայն վերջ չդրան այն իրադարձությունները, որոնք ցույց տվեցին Իտալիայում Հաննիբալի լիակատար միայնակությունը, որը հետևանք էր Փաբիոսից նրա կրած ռազմաքաղաքական պարտության։ Առանձնապես լուրջ իրողություն էր Հռոմում Նեապոլիսի՝ Ապենինյան թերակղզու հարավում հունական խոշորագույն գաղութներից մեկի, պատվիրակների նվերներով հայտնվելը։ Համանման պատվիրակություն Հռոմ ժամանեց նաև Պեստումից (Լիվիոս, 22, 36, 9)։ Սիրակուզայի թագավոր Հիերոնը ևս Հռոմ ուղարկեց պարենամթերքի հսկայական պաշարներ և 1000 նետաձիգներից ու պարսատիկավորներից բաղկացած օժանդակ զորաջոկատ (Լիվիոս, 22, 37)։ Նեապոլիսցիներից նվերներն ընդունելու ժամանակ, եթե հավատ ընծայենք Տիտոս Լիվիոսի պատմածին (22, 32, 4—9), խոսվեց այն մասին, որ Հռոմը՝ բովանդակ Իտալիայի գլուխը և միջնաբերդը, պայքարում է ոչ միայն իրեն և իր իշխանության, այլև իր դաշնակիցների, նրանց քաղաքների և վարելահողերի համար։ Այդպիսին էր քաղաքական այն պրոպագանդան, որը հռոմեական կառավարությունը հարկ համարեց հակադրել Հաննիբալի ճառերին, սակայն վերջինս ավյալ դեպքում նույնպես ոչինչ չկարողացավ ձեռնարկել։ Հաղթանակներ չկային, իսկ ավարառությունները, սպանությունները և մեծատարած հրդեհները խիստ թույլ էին կպչում Իտալիայի ազատարարի այն կերպարին, որով պունիկյան զորավարը կամենում էր ներկայանալ նրա բազմաթիվ ցեղերի և ազգությունների առջև։

Հաննիբալին մնում էր միայն օգտվելով ձմեռային դադարից սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը։ Նրա բախտը բերեց։ Այն պահին, երբ Հռոմում պետք է տեղի ունենային կոնսուլների ընտրություններ 216 թվականի համար, այնտեղ բռնկվեց ևս մեկ խիստ սուր քաղաքական ճգնաժամ, որի ելքը անմիջականորեն ազդեց ինչպես հռոմեական զորապետների, այնպես էլ Հաննիբալի վարած ռազմական գործողությունների վրա։

Քաղաքական այդ ճգնաժամը իրենից ներկայացնում էր հռոմեական պլեբսի և սենատի միջև իշխանության համար մղված պայքարի հերթական բռնկումը։ Վիճում էին այն մասին, թե ինչպես պետք է անցկացնել ընտրությունները։ Սենատի հանձնարարությամբ պրետոր Մարկոս Էմիլիոսը նամակով դիմեց Սերվիլիոսին և Ատիլիոսին, պնդելով, որ նրանցից մեկնումեկը ներկայանա Հռոմ ընտրություններն անցկացնելու համար։ Սերվիլիոսն ու Ատիլիոսը հրաժարվեցին. նրանք գտնում էին, որ առանց պետությանը վնաս պատճառելու, հնարավոր չէր իրենք հեռանան բանակից և, իրենց հերթին առաջարկեցին, որ դա հանձնարարվի միջթագավորին։ Սենատն ավելի նպատակահարմար էր համարում դիկտատուրային դիմելը։ Կոնսուլները կանգ առան Լուկիոս Վալերիոս Փիլոնի վրա։ Վերջինս իր հեծելազորի պետ նշանակեց Մարկոս Գոմպոնիոս Մատոնին։ Սակայն երկու շաբաթ չանցած, ավգուրները նշանակման արարողության մեջ հայտնաբերեցին ինչ-որ դանցաություններ, և դիկտատորն ու իր օգնականը հրաման ստացան պաշտոններից հրաժարվելու վերաբերյալ։ Սենատն ընտրությունների անցկացումը հանձնարարեց միջթագավորին, այդպիսով ընդունելով Սերվիլիոսի և Ատիլիոսի տեսակետը (Լիվիոս, 22, 33, 9—12)։

Լիվիոսի պատմածի մեջ շարադրված է իրադարձությունների պաշտոնական մեկնակերպը։ Կարելի է ենթադրել, որ սենատը հույս էր ակնկալում, օգտագործելով դիկտատուրայի մեխանիզմը, ընկճել օպոզիցիայի դիմադրությունը, սակայն այդ փորձը անհաջող անցավ։ Հնարավոր է սակայն, որ դիկտատուրան մի զիջում էր պլեբսին, որից շտապում էին ազատվել ընտրությունների ընթացքում։ Պատահական չէր, որ Լիվիոսը (22, 34, 9—10) ընտրություններում ելույթ ունեցած հռետորներից մեկի՝ Քվինտոս Բեբիոս Դերենիոսի շուրթերին է դնում խոսքերն այն մասին, որ դիկտատորն ատելի էր սենատին, և որ միջթագավորությանը դիմեցին միայն մի նպատակով՝ սենատին հնարավորություն տալ ազատ կերպով «նորինություն անելու ընտրությունների ժամանակ։

Սակայն հույժ կարևոր էր մյուս խնդիրը. հաջորդ տարում ովքե՞ր էին ստանալու կոնսուլական պաշտոնները։ Թեկնածուներից մեկի դեմում հանդես եկավ Գայոս Տերենտիոս Վառոնը, հենց նա, որը ժամանակին պնդում էր, որպեսզի հավասարեցվեն Փաբիոսի և Մինուկիոսի իրավունքները. նա բացառիկ ժողովրդականություն ձեռք բերած պլեբեյական առաջնորդ էր։ Լիվիոսը (22, 25, 18—26, 3, հմմտ. Դիոն Կասս., Ֆրագմ., 57, 23—25) այդ մարդուն, որն, անկասկած, դուրս էր եկել հասարակության ստորին խավերից, պատկերում է որպես նորեկ և կարիերիստ։ «Հաղորդում են», որ նրա հայրը մսագործ էր, ինքն էր տեղ հասցնում իր ապրանքը և այդ ստրկական զբաղմունքի մեջ նա օգտվում էր որդու օժանդակությունից։ Իսկ տղան, որին հոր շահած դրամները հնարավորություն տվեցին ապագայում մարդ դառնալու, իր համար ընտրեց քաղաքական կարիերան։ Ճառեր արտասանելով ի

պաշտպանություն ստորին ծագում ունեցող մարդկանց, ընդդեմ ավագանու շահերի, նա իր վրա ուշադրություն հրավիրեց, իսկ այնուհետև հասավ նաև պաշտոնների, Հռոմի համար սովորական կարիերա անելով. եղավ քվեստոր, պլեբեյական և կուրուլային էդիլ և պրետոր. այժմ նա հավակնում էր պետական բարձրագույն պաշտոնի։ Այս հույժ կողմնակալ և օբյեկտիվությունից բոլորովին հեռու նկարագրության մեջ մենք կարող ենք, այնուամենայնիվ, նկատել ավագանու ատելի և, ըստ երևույթին, Փլամինիոսին հետևորդ ժողովրդական առաջնորդի գծերը։

Մեզ համար չափազանց կարևոր է պարզել, թե ինչպիսին էր քաղաքական այն ծրագիրը, որով ընտրությունների եկավ Գայոս Տերենտիոս Վառոնը։

Լիվիոսը (22, 34, 3—11) Վառոնի կողմնակցի և ազգականի՝ վերոհիշյալ Քվինտոս Բեբիոս Գերենիոսի շուրթերին է դնում պլեբեյական թեկնածուի պաշտպանության համար արտասանված ճառ. նոբիլները բազում տարիների ընթացքում ձգտում էին պատերազմել Հաննիբալի դեմ և վերջիվերջո նրան բերեցին Իտալիա. բազմիցս հնարավորություն ունենալով պատերազմը հաղթականորեն ավարտելու համար, ինչը նրանց Մինուկիոսի օրինակով, նրանք շարամտորեն ձգձգում են այն։ Ոչ այլ բան, քան դավադրություն գոյություն ունի նոբիլների միջև, և պատերազմը չի կարող վերջանալ, մինչև կոնսուլ չընտրվի իսկական պլեբեյ, այսինքն՝ նոր և նոբիլությանը չպատկանող անձնավորություն, քանի որ ականավոր պլեբեյները (նոբիլները) կորցրել են կապը պլեբսի հետ և պատրիկների պես արհամարհում են նրան։ Ցուցանշական է, որ այստեղ Բեբիոսը, ըստ Լիվիոսի շարադրանքի, ասես փոխ է առնում Հռոմում գործածական դարձած «նորելուկ» (homo novus) բառի հայհոյական նշանակությունը, վերադարձնելով նրան բառացի իմաստը։ Անշուշտ, Լիվիոսի շարադրած ճառը Բեբիոսի կամ Վառոնի մյուս կողմնակիցների խոսքերի բառացի վերարտադրությունը չէ։ Այսուհանդերձ, հաղիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ նրանում բերված են պլեբեյական պրոպագանդայի ինչ-որ ծեծված արտահայտություններ, որոնց վերաբերյալ տեղեկությունները Լիվիոսին են հասել Հռոմեական պատմագիրների, ամենից առաջ Կելիոս Անտիպատրոսի երկասիրությունների միջոցով։ Բեբիոսի ճառը կատաղի դրոհ էր Փաբիոսի գործելակերպի դեմ, որը սկզբում հռոմայեցիներին խանդարեց հաղթանակ տանելու և արդեն միայն հետագայում՝ պարտված լինելու։ Անվիճելիորեն պարզ են նմանօրինակ արամադրություններ հարուցող պատճառները. Հռոմեական, ամենից առաջ մանր հողատիրության համար պահպանվում էին Փաբիոսի ռազմավարության բոլոր բացասական

հետևանքները։ Եթե կոնսուլները գալիք տարում ևս այն պահպանեին, ապա հաջորդ տարին նույնպես ոչինչ չէր տա, բացի քայքայումից։

Նախընտրական պայքարը բացառիկորեն տուր էր։ Ընտրվեց միայն Վառոնը։ Հաղթեց պլեբեյական ուղեգիծը, որը կողմ էր պատերազմի արագ ու վճռական ավարտմանը։ Սակայն համաձայն Հռոմում գործող քաղաքական օրենքների, մյուս կոնսուլին պետք է ընտրեին պատրիկները։ Միակ անձնավորությունը, որ կարող էր քիչ թե շատ հաջողությամբ քաղաքական պայքար մղել Վառոնի դեմ և նրան հարկադրել հրաժարվելու իր դիտավորություններից, նոբիլությունն այդ պայմաններում համարում էր պլեբեյների հայտնի թշնամի Լուկիոս Էմիլիոս Պավլոսին։ Բոլոր նրանք, ովքեր ավելի վաղ հասել էին կոնսուլության, հանեցին իրենց թեկնածությունը, Փաբիոսների անմիջական դրածոները հեռացան, և առաջիկա ժողովրդական ժողովում կոնսուլ ընտրվեց Լուկիոս Էմիլիոս Պավլոսը, միակ հավակնորդը, որը ոչ այնքան Վառոնի պաշտոնակիցն էր, որքան նրա թշնամին,— նկատում է Լիվիոսը (22, 35, 1—4)[79]։

Հռոմում կատարված ընտրությունների արդյունքները կանխորոշեցին 216 թվականի պատերազմի ընթացքը։ Հաննիբալը կարող էր գոհ լինել. Հռոմեական կառավարության մեջ միասնություն չկար և չէր էլ կարող առաջանալ, քանի որ նոբիլության և պլեբսի միջև մղվող պայքարն արդեն վեր էր ածվել կոնսուլների միջև մղվող պայքարի. վերջիններիս մոտ ոչ միայն համաձայնություն չկար այն խնդրի շուրջը, թե ինչպես պետք է կռվեն Հաննիբալի դեմ, այլև նրանք հետևում էին ուղղակի միմյանց հակընդդեմ քաղաքական ըմբռնումների։ Կառավարման Հռոմեական համակարգը (կոնսուլները բանակը կա՛մ բաժանում էին երկու մասի, կա՛մ հերթով գլխավորում էին այն) Հաննիբալին թույլ էր տալիս հուսալու, որ Վառոնը, ինչ կերպ էլ լիներ, կենսագործելու էր իր ծրագիրը, և, հետևաբար, այն որոշակի հավանականություններ էր ընձեռում նրան հաղթելու և դուրս գալու այն դժվարին կացությունից, որի մեջ նա ընկել էր։

Ինչպես արդեն ասվել է, Փաբիոսի ռազմավարության կարևորագույն հետևանքներից մեկն այն էր, որ Հաննիբալը փաստորեն զրկվեց ռազմական նախաձեռնությունից, և իրադարձությունների ընթացքը զգալապես որոշվում էր Հռոմեական հրամանատարության գործողություններով։ Վերջինս ծայրահեղ ջղագարության պայմաններում սկսեց պատրաստվել նոր պատերազմի։ Քաղաքում վերստին լուրեր տարած-

վեցին ահեղ նախանշանների մասին, ինչը հույժ ահարեկեց բնակչությանը (Լիվիոս, 22, 36, 6—9)։ Սակայն Վառոնն ու Էմիլիոս Պավլոսը չշփոթվեցին այդ խոսակցություններից։ Նրանք խիստ մեծացրին զորքի թվաքանակը։ Մենք ստուգապես չգիտենք, թե ինչպես է դա կատարվել։ Արդեն Լիվիոսը (22, 36, 1—5) այլազան տեղեկություններ ուներ կոնսուլների միջոցառումների մասին։ Աղբյուրների մի մասի համաձայն, նրանք լրացուցիչ կերպով զորակոչի են ենթարկել 10 հազար մարդու, այլ աղբյուրների հավատամքով՝ բացի արդեն Հաննիբալի դեմ գործող չորս լեգեոններից, որոնցից բաղկացած էր հռոմեական բանակը, նրանք կազմավորեցին ևս չորսը, դրանից զատ, յուրաքանչյուր լեգեոնում ավելացնելով հետևազորայինների թիվը հազարական մարդով (այսինքն՝ հասցնելով 5000-ի), հեծյալներինը՝ հարյուրական (իմա՝ հասցնելով 300-ի)։ Ավելի քան կրկնապատկվեց նաև դաշնակցային հետևազորի թվաքանակը և հասցվեց բուն հռոմեական լեգեոնների մակարդակին, իսկ դաշնակիցների հեծելազորը պետք է կրկնակի (ըստ Պոլիբիոսի (3, 107, 9—12) եռակի) չափով գերազանցեր բուն հռոմեականին։ Եթե ելնենք երկրորդ տարբերակից, որն ավելի արժանահավատ է թվում, կարելի է եզրակացնել, որ ընդամենը հռոմեական զորքում կար 87200 մարդ։ Պլուտարքոսը (Պլուտ., Փաբ., 14) բերում է այլ թիվ՝ 92 հազար։ Այս փաստի նշանակությունը հասկանալի կդառնա, եթե նկատի առնենք, որ Հաննիբալի բանակը, նույնիսկ այն ժամանակ, երբ ռազմական ակտիվ գործողություններ չէին կատարվում, անընդհատ նվազում էր (բազմաթիվ զինվորներ ոչնչացան պարենամթերք և անասնակեր հայթայթելու համար կատարված արշավանքներում), և որ նա իր տրամադրության տակ չուներ օժանդակ զորամասեր։ Բացի այդ, վերստին պրետոր ընտրված Լուկիոս Պոստումիոս Ալբինոսը մի լեգեոնով ուղարկվել էր Գալլիա, որպեսզի Հաննիբալի ուշադրությունը գրավի այն կողմը, իսկ նրա բանակում եղած գալլերին զրդի հայրենիք վերադառնալու (Պոլիբիոս, 3, 106, 6)։ Վերջապես Սիցիլիայում մեծացվեց հռոմեական նավատորմը, և նախկին պրետոր Տիտոս Օտակիլիոսը լիազորություններ ստացավ, որ եթե օգտակար համարեր, ափ իջներ Աֆրիկայում (Լիվիոս, 22, 37, 13)։ Ճիշտ է, Պոլիբիոսն (3, 106, 7) այլ կերպ է պատկերում Սիցիլիայում հռոմեական զորքերի նախապատրաստությունները։ Նրա ասելով Սիցիլիայում հռոմայեցիները մտահոգված էին այն բանի համար, որպեսզի վերադարձնեն Լիլիբեոնում ձմեռող նավատորմը։ Դատելով ըստ այնմ, ինչ հայտնի է հետագա անցքերի մասին, կարելի է ասել, որ Պոլիբիոսը և նրա աղբյուրը փոքր-ինչ շփոթել են տեղի ունեցածի հաջորդականությունը։

Մինչդեռ Հաննիբալի դրությունը օրեցօր ավելի ու ավելի էր վատթարանում։ Նա առաջվա պես կանգնած էր Գերեոնիումի պարիսպների առաջ։ Սենդամթերքն սպառվում էր. Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտի նախօրեին կարթագենցիներն ունեին ընդամենը տասնչորս մթերապաշար։ Այն ոչ մի տեղից հնարավոր չէր լրացնել, այն ամենը, ինչ հնարավոր էր, պունիկյան զինվորներն արդեն ամայացրել, ոչնչացրել էին։ Հաննիբալի ճամբարում հուզումներ տեղի ունեցան։ Զինվորները պատրաստվում էին անցնելու թշնամու կողմը (Լիվիոս, 22, 49, 7—9)։ Զինվորները ոռճիկ էին պահանջում և տրտնջում սկզբում պարենամթերքի պակասի, իսկ հետագայում նաև՝ պարզապես սովի պատճառով։ Այնպիսի կացություն էր ստեղծվել, որ երբեմն հենց Հաննիբալի գլխում միտք էր հղանում թողնել հետևազորը և հեծյալների հետ ճեղքել-անցնել Գալլիա (Լիվիոս, 22, 43, 2—4)։

Այդ իրադրության մեջ Հաննիբալի համար բնականաբար ձեռնտու էր Վառոնի ձգտումը՝ որքան հնարավոր է շուտափույթ ճակատամարտ տալ, և նա ամեն ինչ անում էր, որպեսզի ավելի ամրապնդի հռոմեական զորապետի դիտավորությունը։

Սակայն մենք քիչ գիտենք 216 թվականի պատերազմի մասին։ Ինչպես պատմում է Պոլիբիոսը (3, 107, 1—7), տակավին մինչև հռոմեական բանակ նոր կոնսուլների ժամանումը, Հաննիբալը Գերեոնիումի մերձակայքի ճամբարից գանեց իր զորքերը և գրավեց Կաննեի՝ այդ փոքր քաղաքի բերդը. հռոմայեցիները պարենամթերք էին տեղափոխում Կաննե։ Մինչև կոնսուլների ժամանումը, հռոմեական բանակը գլխավորող Սերվիլիոսն ու Ատիլիոսը սենատից հրահանգներ պահանջեցին, քանի որ թշնամուն մոտենալու պայմաններում ոչ մի կերպ հնարավոր չէր խուսափել ճակատամարտից, և որ երկիրը մատնվում էր ավարառության, ու դաշնակիցները տրտնջում էին։ Սենատն արտահայտվեց ճակատամարտ տալու օգտին, սակայն հրամայեց սպասել մինչև նոր կոնսուլների ժամանումը։ Կոնսուլները գործող բանակ ներկայացան այն ժամանակ, երբ Հաննիբալն արդեն վաղուց և հաստատուն կերպով գրավել էր Կաննեն։ Նշանավոր ճակատամարտի նախօրյակին առաջին ընդհարումները տեղի ունեցան այդ քաղաքի մոտակայքում (Պոլիբիոս, 3, 110)։

Պոլիբիոսի պատմածի մեջ առկա են որոշ կասկածելի մանրամասներ։ Ամենից առաջ, հետագա ռազմավարական գծի վերաբերյալ որոշումներ ընդունելու համար պրոկոնսուլները սենատի ցուցումների կարիք չունեին. նրանք կարող էին և, իրենց իսկ իրավազորությամբ, պետք է այդ կատարեին, ելնելով հանգամանքներից։ Երկրորդ, և՛ Սերվիլիո-

սը, և՛ Ատիլիոսը, որոնք հետևում էին Փաբիոսի տեսակետին, չէին կարող անսպասելիորեն և այդպես կտրուկ ձևով փոխել իրենց դիրքավորումն ու խոսել ճակատամարտի անհրաժեշտության մասին։ Չէ՞ որ ըստ էության հանգամանքները չէին փոխվել։ Տարօրինակ է թվում նաև սենատի դիրքավորումը. մինչև այդ պահը, որքան մեզ հայտնի է, սենատը հականերգործում էր իր տեսակետով Վառոնի արկածախնդրական մտահղացումներին, իսկ այժմ հանկարծ պարզվում է, որ սենատը բաժանում է Վառոնի ռազմաքաղաքական ըմբռնումները։ Մեր առջև է ակնհայտնի մի ավանդություն, որը կոչված է արդարացնել ձախողակ կոնսուլին և Կաննեի համար պատասխանատվությունը բարդել սենատի վրա, որն իբր պահանջում էր ճակատամարտ։ Սակայն մեզ ավելի շատ ուրիշ բան է հետաքրքրում. ճի՞շտ է արդյոք Պոլիբիոսը, երբ գրում է, որ կարթագենցիները արշավանքի հենց սկզբից գրավել են Կաննեի բերդը։ Սկզբունքորեն դրանում անհնարին ոչինչ չկա։ Այդուհանդերձ, եթե բացահայտորեն անճշմարտանման է այն, ինչ գրում է Պոլիբիոսը Կաննեի գրավման հետևանքի մասին, ապա կասկածանքի ստվեր է ընկնում նաև վերջին ցուցումի վրա. Եվ բացի այդ, քանի դեռ Սերվիլիոսն ու Ատիլիոսը հռոմեական բանակի գլուխ էին կանգնած, Հաննիբալը չէր կարող փոքր իսկ հիմնավոր հույս ունենալ, թե իր գործողություններով կկարողանա նրանց ստիպել մարտի բռնվելու, որից նրանք մշտապես խուսափում էին, իսկ Կաննեի գրավումը ըստ էության նրա դրությունը չէր փոխում։ Այդպիսի գործողությունն իմաստ կարող էր ունենալ լոկ այն դեպքում, երբ Հաննիբալին դիմակայեր հաղթանակի և պատերազմը շուտափույթ կերպով ավարտելու մասին երազող մի նոր հակառակորդ։

Տիտոս Լիվիոսը (22, 41, 1—4) այլ կերպ և, ըստ երևույթին, ավելի ճշգրտորեն է պատկերում 216 թվականի պատերազմը։ Երբ գործող բանակ եկան նոր կոնսուլները՝ Գայոս Տերենտիոս Վառոնը և Լուկիոս Էմիլիոս Պավլոսը, նրանք միավորեցին ավելի վաղ գործող և մարտական գործողություններն սկսելուց առաջ մոբիլիզացված զորամիավորումները, ստեղծելով երկու ճամբար, որոնցից փոքրը մոտեցրեցին Հաննիբալի դիրքերին (այդ ճամբարում կային 1 լեգեոն և 2000 դաշնակից՝ հեծյալներ և հետևազորայիններ. նույն ճամբարի հրամանատարությունը հանձնարարեցին Գնեոս Սերվիլիոս Գեմինիոսին)։ Մեծ ճամբարում գտնվում էր բանակի մնացած մասը։ Արդեն զառամյալ տարիքի հասած Մարկոս Ատիլիոս Ռեգուլոսը Հռոմ վերադառնալու թույլտվություն ստացավ։

Հռոմայեցիների և կարթագենցիների միջև առաջին ընդհարումը տեղի ունեցավ ընդհանուր առմամբ զորավարների համար անսպասելի կերպով։ Երբ կարթագենյան զինվորները հերթական անգամ ճամբարից դուրս եկան հաց և անասնակեր հայթայթելու, նրանց վրա նետվեցին Հռոմայեցիները՝ ավարառությունը խոչընդոտելու միտումով. անկանոն մարտ բռնկվեց, որը վերջացավ Հռոմայեցիների ակնհայտ հաջողությամբ. վերջիններից ու նրանց դաշնակիցներից սպանվեց մոտավորապես 100 մարդ, այն դեպքում, երբ կարթագենցիները կորցրեցին շուրջ 1700 հոգի։ Հռոմայեցիները ցանուցիր հետապնդեցին նահանջող թշնամուն, սակայն նույն օրը հրամանատարություն անող կոնսուլ Լ. Էմիլիոս Պավլոսը կանգնեցրեց հարձակումը, երկյուղ կրելով դարանից։ Վառոնը խիստ դժգոհեց. թշնամին ձեռքից բաց է թողնված. եթե լիներ իրենց անգործությունը, արդեն կարելի կլիներ ավարտել պատերազմը։ Ընդհանուր առմամբ Հաննիբալը ևս չվշտացավ. նա հասկանում էր, որ հռոմայեցիների այդ հաջողությունը կամրապնդի հաղթանակի նկատմամբ Վառոնի վստահությունը և, հետևաբար, իրեն՝ Հաննիբալին, կմոտեցնի իր մտահղացումների իրագործմանը։

Հաննիբալը վճռեց խորամանկության դիմել։ Հենց հաջորդ գիշերը նա իր զորքերը հանեց ճամբարից, այնտեղ թողնելով ամբողջ գույքը։ Լեռների ետևում, ձախ կողմում նա թաքցրեց հետևազորայիններին, աջակողմում՝ հեծյալներին։ Հենց որ հռոմայեցիները հայտնվեին, իբր թե հապճեպորեն լքված ճամբարը կողոպտելու համար, Հաննիբալը հույս ուներ հարձակվել նրանց վրա և ոչնչացնել։ Որպեսզի հռոմայեցիներին հաստատապես համոզի, որ իբր ճամբարը լքված է, և կարթագենցիները հապճեպորեն փախել են, Հաննիբալը թողեց հուրհրատին տվող բազում խարույկներ, իբրև թե իր նահանջը քողարկելու համար (22, 41, 6—9)։

Լուսադեմին հռոմեական զինվորները համոզվելով, որ պունիկացիները փախել են՝ նետելով իրենց գույքը, սկսեցին կոնսուլներից պահանջել, որպեսզի նրանք անմիջապես իրենց տանեն հակառակորդին հետապնդելու և ճամբարը թալանելու։ Վառոնը հենց դրան էր ձգտում։ Էմիլիոս Պավլոսը պնդում էր, որպեսզի ձեռք առնվեն նախազգուշական միջոցառումներ, բայց միայն կարողացավ հետախուզության ուղարկել լուկանիական հեծյալներին՝ Մարիոս Ստատիլիոսի հրամանատարությամբ։ Հետախույզները վերադարձան և զեկուցեցին, որ դարան, իհարկե, գոյություն ունի. կրակները թողնված են միայն ճամբարի այն մասում, որն ընկած է հռոմայեցիների կողմը. վրանները բաց են, բոլոր թանկարժեք իրերը ի տես են թողնված, ինչ-որ

տեղ նույնիսկ արծաթ է երևում. այն ցրիվ է տրված ճանապարհին, ասես հրապուրելու համար։ Մարիոս Ստատիլիոսի հաղորդումը Էմիլիոս Պավլոսի սպասածին հակառակ ազդեցություն գործեց. զինվորներն սկսեցին ավելի բարձրաձայն և ավելի մեծ վճռականությամբ պահանջել, որպեսզի հարձակման ազդանշան տրվի. հակառակ դեպքում նրանք կգնան ինքնակամորեն և առանց ազդանշանի։ Վառոնը հրամայեց հարձակվել, և միայն վերջին պահին Պավլոսին հաջողվեց ետ կանգնեցնել պաշտոնակցին։ Լեգեոնների մարտական նշանակներն արդեն դարպասներից դուրս էին հանել, երբ Էմիլիոսի պատվիրակը Վառոնին հայտնեց, որ հավահմայություն անելիս Էմիլիոսը բարեհաջող նախանշան չի ստացել։ Անահավատ երկյուղը Վառոնին ստիպեց կանգ առնել, սակայն նա դեռ երկար ժամանակ ստիպված էր բորբոքված զինվորներին համոզել վերադառնալու իրենց ճամբարը։ Մինչ վիճում էին դարպասների մոտ, այնտեղ եկան երկու ստրուկ։ Նրանցից մեկի տերը փորմիանական, մյուսինը՝ սիցիլիական հեծյալ էր։ Նախընթաց պատերազմի ժամանակ նրանց գերել էին նումիդիացիները, իսկ այժմ նրանք փախել էին իրենց տերերի մոտ։ Կոնսուլների մոտ բերված այդ ստրուկները հայտարարեցին, որ Հաննիբալի ամբողջ բանակը թաքցված է լեռների ետևում գտնվող դարանում (Լիվիոս, 22, 42)։

Հաննիբալի ծրագիրը, որ հիմնված էր զինվորի (այդ թվում նաև հռոմեական) հոգեբանության խոր իմացության վրա, ձախողվեց Էմիլիոս Պավլոսի դիմադրության և կույր պատահականության՝ երկու ստրուկների փախստի պատճառով. վերջիններս հակառակորդին հաղորդեցին կարթագենյան զորապետի բոլոր դիտավորությունները։ Հաննիբալի առջև վերստին ծառացավ այն խնդիրը, թե ինչ պետք է անել առաջիկայում, և նա վճռեց տեղափոխվել Ապուլիայի առավել տաք վայրերը, որտեղ բերքը վաղ էր հասունանում։ Գիշերով վերստին կարթագենյան զորքերը հեռացան ճամբարից, այնտեղ թողնելով մի քանի վրան և կրակներ, որպեսզի թշնամին նախկինի պես երկյուղ կրեր դարանակալությունից։ Սակայն այս անգամ ոչ մի դարան չկար։ Հաննիբալը բանակեց Կաննե բնակավայրի մոտ, թիկունքը դարձնելով դեպի հարավային քամին, որը իր հետ բերում էր փոշու զանգվածներ։ Ցուցանշական է, որ Լիվիոսը չգիտե այն մասին, որ Հաննիբալը դրավել էր Կաննեի ակրոպոլիսը։ Հռոմայեցիները համոզվելով, որ դարան գոյություն չունի, շարժվեցին նրա հետքերով (Լիվիոս, 22, 43)։

Անմիջականորեն մոտիկ գտնվելով Կաննեին և թշնամական դիրքերին, հռոմայեցիները, ինչպես պատմում է Լիվիոսը (22, 41, 1—45, 1), կառուցեցին, ինչպես եղել էր Գերեոնիումի մոտ, երկու ճամբար.

մեկը՝ Աուֆիդոսի մի ափին, փոքրը՝ մյուս, որտեղ ընդհանրապես կարթագենական զորք չկար (այսինքն, հավանորեն, ձախ ափին)։ Այժմ Հաննիբալն արդեն կարող էր հաստատապես հույս ունենալ, որ ցանկալի ճակատամարտը տրվելու է, ընդ որում կարթագենցիների համար հույժ նպաստավոր պայմաններում՝ հարթավայրում, որը հարմար էր հռոմեականին զգալիորեն գերազանցող նրանց հեծելազորի հարձակումների համար։ Դասավորելով իր զինվորներին, Հաննիբալն առաջ շարժեց նումիդիական հեծյալներին, որպեսզի հռոմայեցիներին ճակատամարտի դրդի։ Հռոմեական ճամբարում հուզումներ սկսվեցին. զինվորները կամենում էին մարտի դիմել, կոնսուլները տաք-տաք վիճում էին միմյանց հետ։ Մինչ այդպես անցնում էր ժամանակը, Հաննիբալն իր զինվորներին վերադարձրեց ճամբար։

Պոլիբիոսն (3, 110) այլ կերպ է շարադրում այդ իրադարձությունները։ Ըստ նրա պատումի, կոնսուլները ժամանելով գործող բանակ, ամբողջ զորքը տարան դեպի հակառակորդի դասավորությունը, և երկօրյա անցումից հետո տեղավորվեցին նրանից մոտավորապես 50 ասպարեզ (գրեթե 10 կմ) հեռավորության վրա։ Էմիլիոս Պավլոսը, տեսնելով, որ տեղանքը նպաստավոր է հեծելազորային մարտի համար, գտնում էր, որ առայժմ անհրաժեշտ է խուսափել մարտից, հեռանալ և թշնամուն հրապուրել այնպիսի վայր, ուր մարտի ելքը կարող էր վճռել հետևազորը։ Վառոնը այլ կարծիքի էր հակված և, երբ եկավ հրամանատարություն անելու նրա հերթը, հրամայեց հռոմեական ճամբարն ավելի մոտեցնել թշնամուն։ Այդ անցման ժամանակ Հաննիբալը թեթևազեն հետևազորի և հեծյալների ջոկատներով անսպասելիորեն հարձակվեց հռոմայեցիների վրա, խուճապ առաջացնելով նրանց շարքերում։ Սակայն հռոմայեցիները դիմացան առաջին հարվածին և, առաջ անելով ծանրազեն հետևազորայիններին, իսկ այնուհետև կարթագենցիների դեմ ուղղելով տեգաձիգներին ու հեծյալներին, վճռական հաղթանակ տարան (այդպես է գրում Պոլիբիոսը)։ Գիշերը հակառակորդները հեռացան միմյանցից։ Հաջորդ օրը Էմիլիոսը, որին այժմ պատկանում էր հրամանատարությունը, հնարավոր չհամարեց շարունակել ճակատամարտը։ Նա չկարողացավ նաև նահանջել և զորքի երկու երրորդով բանակեց Աուֆիդոսի ափին։ Մնացածներին նա տեղավորեց գետի մյուս ափին, գետանցարանի արևելակողմում, գլխավոր ճամբարից մոտավորապես 10 ասպարեզ հեռավորության վրա։ Այնուհետև Պոլիբիոսը (3, 112) շարադրում է այն իրադարձությունները, որոնց մասին պատմում է Լիվիոսը։

Այս երկու՝ շատ կողմերով իրարամերժ պատումներից ո՞րն է գերադասելի։ Պոլիբիոսը խոսում է հռոմեական զորաճամբարը Կաննեի տակ տեղափոխելու և հռոմեական զենքի հաղթանակի մասին։ Մինչդեռ Լիվիոսն այդ մասին ոչինչ չգիտե։ Ըստ նրա պատումի, հռոմայեցիներն անմիջապես տեղավորվել են ուղղակի հակառակորդի մերձակայքում. վերջինս ապարդյուն կերպով փորձում էր մարտի կոչել նրանց, բայց վերջիվերջո ստիպված եղավ իր զորքերը ետ քաշել մարտական դիրքերից։ Ընդհանուր առմամբ Լիվիոսի պատումը ավելի տրամաբանական է թվում, և երկու կողմերին նրա վերագրած գործողությունները՝ ավելի նպատակամետ։ Իրոք, թշնամուց 50 ասպարեզ հեռավորության վրա գտնվող ճամբարում մնալը նշանակում էր նրան աչքաթող անել և կորցնել նրա գործողություններին հետևելու հնարավորությունը։ Հռոմեական հրամանատարությունը ձգտո՞ւմ էր արդյոք դրան։ Հաղիվ թե, նույնիսկ եթե բացառենք պատերազմելու ցանկությունը և ընդունենք սոսկ գործուն դիմակայությունը։ Եթե ուշադրության առնենք այն պլանը, որը Պոլիբիոսը վերագրում է Էմիլիոս Պավլոսին, ապա այն նույնպես չէր կարող իրագործվել, առանց հակառակորդի հետ անմիջական շփման. հռոմայեցիները չէին կարող առանց մարտի հեռանալ և Հաննիբալին թողնել տեր ու տնօրինություն անելու Կաննեի շրջանում։ Մյուս կողմից նոր վայր տեղափոխվելը և նոր ճամբարի կառուցումը հռոմեական զորքերին դարձնում էին խոցելի։ Դժվար է պատկերացնել մի զորապետի, նույնիսկ այնպիսի անկարողի, ինչպիսին ավանդությունը պատկերում է Վառոնին, որն այդքան անբարենպաստ պայմաններում գիմեր նմանօրինակ գործողության։ Ի դեպ ասած, հռոմայեցիների հաղթանակը, որը տարվեց հենց Վառոնի հրամանատարությամբ, նույնպես անհարիր է պոլիբիոսյան պատումի անփորձ և ապաշնորհ ռազմավար Վառոնի մասին եղած պատկերացմանը։ Բոլորովին չարդարացված են թվում նաև Էմիլիոսի գործողությունները. վերջինս առտակարգ զգուշավորության պատճառով ընդհատում է հաղթականորեն սկսած հարձակումը։ Մինչդեռ Լիվիոսի պատմածի մեջ երկու կողմերի գործողությունները լավ են բացատրվում, թե՛ օբյեկտիվ պահանջմունքներով և թե՛ գործող անձանց սուբյեկտիվ մղումներով։ Հռոմայեցիները տեղավորվում են Հաննիբալի անմիջական մերձակայքում, Աուֆիդոսի զուլգ ափերին, հնարավորություն են ստանում հսկելու ավելի մեծ երկրամասի վրա և կրկնելու այն, ինչը Ֆաբիոսն ու Մինուկիոսը, իսկ նրանցից հետո Սերվիլիոսն ու Ատիլիոսը կատարեցին Գերեոնիումի տակ, այն է՝ Հաննիբալի զորքը մատնելու խիստ ծանր կացության։ Հաննիբալը, բնականաբար, փորձում է հռոմայեցիներին մարտադաշտ դուրս

տանել, իսկ Էմիլիոսը, երնելով իր, իսկ հիմնականում փաբիոսյան ռազմավարական ըմբռնումից, հռոմեական զինվորներին ճամբարից դուրս չի թողնում։

Համենայն դեպս Հաննիբալը ետ քաշեց իր ամբողջ զորքը, բացառությամբ նումիդիական հեծյալների, որոնց հրամայեց անցնել Աուֆիդոսի ձախ ափը և հարձակվել ճամբարից դուրս տանելու մեկնած հռոմեական զինվորների վրա։ Հայտնվելով այնտեղ, հեծյալները փաթաստի մատնեցին հռոմայեցիների անկարգ բազմությունը և ճամբարի հողապատնեշի առջևով սլացան դեպի պահակակետն ու գրեթե հասան դարպասներին։ Այս ամենը է՛լ ավելի գրգռեց առանց այդ էլ հուզված հռոմեական զինվորներին (պունիկացիները համարձակվում են արդեն մոտենալու նաև ճամբարին), և միայն Էմիլիոս Պավլոսի իշխանությունը, նաև զինվորական կարգապահությունը, նրանց ետ պահեցին անմիջապես գետն անցնելուց։ Ըստ Պոլիբիոսի (3, 112, 2), Էմիլիոսի գործողությունները բացատրվում են նրանով, որ համաձայն նրա ենթադրությունների, Հաննիբալը շուտով պետք է իր ճամբարը տեղափոխեր այլ տեղ. անձամբ Էմիլիոսը դժգոհ էր տեղանքից։ Սակայն հաջորդ օրը հրամանատարությունն անցավ Վառոնին, և նա իր իրավասությամբ (առանց պաշտոնակցի հետ խորհրդակցելու, նկատում է Լիվիոսը) ամբողջ զորքն անց կացրեց ձախափնյակ։ Այնտեղ կոնսուլները հռոմեական ողջ զորքը դասավորեցին մարտական կարգով. աջ զորաթևում, որն ավելի մոտ էր գետին, դասավորեցին հեծյալներին, ձախում՝ դաշնակիցների հեծելազորը և կենտրոնին ավելի մոտ՝ նրանց հետևազորը։ Կենտրոնում գտնվում էին հռոմեական լեգեոնները, իսկ զորաշարքի առջևում՝ պարսատիկավորները և թեթևազեն մյուս զորականները։ Զախ թևի հրամանատարությունն իր վրա վերցրեց Գայոս Տերենտիոս Վառոնը, աջ թևինը նա հանձնարարեց Լուկիոս Էմիլիոս Պավլոսին և կենտրոնինը՝ Գնեոս Սերվիլիոս Գեմինոսին (Պոլիբիոս, 3, 112, 1—5, 3, 113, 1—5, Լիվիոս, 22, 45)։ Այս իրադարձություններն այլ կերպ է պատկերում Ապպիանոսը (Հաննիբ., 19)։ Ըստ նրա պատմածի, կենտրոնի հրամանատարն էր Էմիլիոսը, ձախ թևինը՝ Սերվիլիոսը, աջինը՝ Վառոնը։

Հաննիբալը հասավ իր առջև դրած նպատակին։ Վաղ առավոտյան նա Աուֆիդոսի ձախ ափ տեղափոխեց բալեարական զորամասերը և թեթևազեն այլ միավորումներ, իսկ նրանց ետևից նաև մնացած զինվորներին։ Զախ թևում, որն ամենից մոտ էր գետին, նա տեղավորեց իբերական և գալլական հեծյալներին, որոնք պետք է գործեին հռոմեական հեծելազորի դեմ, կենտրոնում՝ հետևազորը (կեսը՝ ծանրազեն

լիբիացիներին, այդ շարքի մեջտեղում՝ գալլերին և իբերներին, իսկ նրանց ետևում դարձյալ լիբիացիներին) և աջ թևում՝ նումիդիական հեծյալներին, որոնք այստեղ պետք է կռվեին հռոմեական դաշնակիցների դեմ։ Լիբիացիները զինված էին ռազմասավարային զենքերով, որոնք խլվել էին հռոմայեցիներից։ Կարթագենական զորքը բաղկացած էր 40 հազար հետևազորայիններից և 10 հազար հեծյալներից։ Հիշենք, որ հռոմեական զորքում հաշվվում էր ավելի քան 80 հազար մարդ։ Կարթագենցիները դասավորվել էին բացառիկորեն հարմար ձևով. դեմքերը դեպի հյուսիս, թիկունքները՝ քամուն, որը փչում և ավազախառն փոշի էր ցանում հռոմայեցիների դեմքերին. արևի ճառագայթները չէին շլացնում զինվորներին։ Շարքերը դասավորելիս Հաննիբալը առաջ տարավ իբերներին և գալլերին, որոնք առաջինը պետք է մտնեին մարտի մեջ, իսկ մնացածներին այնպես դասավորեց, որ կազմվեց դեպի ճակատի կողմը կորացված հսկայական կիսալուսնի նման մի բան, որի եզրերը գնալով ավելի էին բարակում։ Ձախ թևի հրամանատարությունը Հաննիբալը հանձնեց Հասդրուբալին, աջը՝ Մահարբալին (ըստ Պոլիբիոսի՝ Հաննոնին), իսկ ինքն իր եղբոր՝ Մագոնի հետ ստանձնեց կենտրոնը։ Ապպիանոսի տեղեկությունները (Հաննիբ., 20) այս դեպքում էապես տարբերվում են մյուս հեղինակների տեղեկություններից. նրա տվյալների համաձայն, աջ թևի հրամանատարն էր Մագոն Բարկայանը, ձախինը՝ զորավարի ազգական Հաննոնը, կենտրոնինն ինքը՝ Հաննիբալը։ Մահարբալին հանձնվեց 1000 հեծյալից բաղկացած մի ջոկատ։

Ճակատամարտը սովորականի պես սկսեցին թեթևազեն զինվորները։ Այնուհետև Հաննիբալի գալլո-իբերական հեծելազորը հարձակվեց հռոմեական ձախ թևի վրա։ Կատաղի ճակատամարտում ռազմիկները, կույտ-կույտ հավաքվելով, ձիերից քաշում գցում էին միմյանց, անողոքաբար կոտորում։ Վերջապես հռոմայեցիները, թշնամուց հետապնդվելով, փախան գետի երկայնքով։ Նույն այդ ժամանակ մարտի մեջ մտավ հետևազորը, և Հաննիբալի իբերո-գալլական հետևազորայինները, համառ դիմադրությունից հետո սկսեցին դանդաղորեն նահանջել, իրենց ետևից հրապուրելով հռոմայեցիներին, որոնք գնալով ավելի խորն էին թափանցում կարթագենական զորքերի դասավորության մեջ։ Այդ միջոցին լիբիական հետևազորայինները զույգ թևերից գրոհեցին հռոմայեցիների վրա, իսկ փոքր-ինչ հետո նրանց շրջափակեցին նաև թիկունքից։ Հռոմեական հետևազորն ընկավ օղակման մեջ։ Ձախ թևում նումիդիական հեծելազորի հարձակումն սկսվեց նրանից, որ մոտավորապես 500 հեծյալ ներկայացան հռոմայեցիների դասավորության վայրը և, վահաններն ու աղեղնազեները ցած դնելով, հայտարարեցին, որ գերի են հանձնվում։ Կարճ ժամանակ անց, դուրս քաշելով նախօրոք թաքցված սրերը, նրանք թիկունքից նետվեցին հռոմայեցիների վրա։ Նումիդիացիների հիմնական զանգվածին Հասդրուբալն ուղարկեց հետապնդելու նահանջող հակառակորդին[30]։

Ճակատամարտի ելքը վճռված էր։ Կոնսուլ Լ. Էմիլիոս Պավլոսը սպանվեց։ Հռոմայեցիներն ավելի ու ավելի մեծ լարվածությամբ էին կատարում շրջանաձև պաշտպանությունը։ Մարտիկներն ընկնում էին մեկը մյուսի ետևից։ Ըստ Պոլիբիոսի տվյալների (3, 117, 3), մարտում զոհվեցան մոտավորապես 70 հազար հռոմայեցիներ, իսկ փախչել կարողացան մոտավորապես 3000 մարդ։ Եվտրոպիոսը (3, 10) հռոմայեցիների կորուստները հաշվում է հետևյալ կերպ. 60 հազար հետևազորայիններ, 3500 հեծյալներ և բացի այդ, ավագանու 350 ներկայացուցիչներ՝ սենատորներ և Հռոմում նախկինում բարձր պաշտոններ զբաղեցրած անձինք։ Ըստ Օրոսիոսի (4, 16, 2), որի տվյալները բացահայտորեն նվազեցված են, հռոմայեցիները կորցրել են 44 հազար սպանված։ Պլուտարքոսը (Փաբ., 16) գրում է, որ հռոմայեցիները կորցրել են 50 հազար սպանված, 4000 գերեվարված, մոտավորապես 10 հազար հոգի գերի են վերցվել նաև երկու ճամբարներում։ Սպանվածների մեջ էին Գնեոս Սերվիլիոս Գեմինոսը և Մարկոս Մինուկիոս Ռուֆոսը։ Վառոնը 50 հեծյալներով (ըստ Պոլիբիոսի (3, 117, 2)՝ 70 հեծյալներով) փախել է Վենուսիա (Պոլիբիոս, 3, 115—116, Լիվիոս, 22, 47—49, Զոնարաս, 9, 1, Ապպ., Հաննիբ., 17, 24, Փրոնտինոս, 2, 3, 7)։ 7000 հռոմայեցիներ կարողացան փախչել փոքր ճամբար, 10 հազարը՝ մեծ, իսկ գրեթե 2000-ը՝ Կաննե։ Վերջիններիս շրջապատեց և գերի վերցրեց կարթագենցիների մի զորաջոկատ՝ Կարտալոնի հրամանատարությամբ։ Հռոմեական զորականների մի մասը, զինվորական տրիբուն Պուբլիոս Սեմպրոնիոս Տուդիտանոսի գլխավորությամբ, փոքր ճամբարից ճեղքեց-հասավ մեծը (Լիվիոս, 22, 50)։ Նրանք, ովքեր մնացել էին փոքր ճամբարում, կարճատև դիմադրությունից հետո հանձնվեցին Հաննիբալին։ Նրանց և պունիկյան զորավարի միջև կայացած համաձայնությամբ նրանք պարտավոր էին հանձնել զենքը և ձիերը։ Մարդկանց համար փրկագին սահմանվեց. 300 արծաթ դինար հռոմայեցու, 200՝ դաշնակցի, 100՝ ստրուկի համար։ Որոշ ժամանակ հետո մեծ ճամբարից 4000 զորայիններ հեռացան Կանուսիում, իսկ մյուսները հանձնվեցին նույն պայմաններով։ Ինքը՝ Հաննիբալը, համաձայն Լիվիոսի տվյալների (22, 52), կորցրեց 8000, իսկ ըստ Պոլիբիոսի տեղեկությունների (3, 117, 6)՝ մոտավորապես 6000 ռազմիկների։

Գլուխ չորրորդ

ՄԱՑՐԱՄՈՒՏ ՏԱՆՈՂ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ
(Կաննեից մինչև Կապուայի անկումը)

Կաննեի մոտ տարած փայլուն հաղթանակը ցնցեց ժամանակակիցներին։ Հռոմեական բանակը ամբողջությամբ ոչնչացվեց։ Թվում էր, թե բովանդակ Իտալիան Հաննիբալի իշխանության տակ էր։ Այնուամենայնիվ, Հռոմը դեռևս նվաճված չէր, և Հաննիբալի առջև վերջապես ծառացավ այն հարցը, թե այնուհետև ինչ պետք է անել։

Լիվիոսը պատմում է (22, 51, 1—4), որ պունիկյան սպաները, շնորհավորելով Հաննիբալին Կաննեի մոտ տարած հաղթանակի առթիվ, նրան խորհուրդ տվեցին հանգիստ տալ իրեն և հոգնաբեկ զինվորներին։ Միայն հեծելազորի պետ Մահարբալն էր առաջարկում առանց մի րոպե իսկ կորցնելու շարժվել Հռոմի վրա։ «Հինգերորդ օրը,— հաղորդում է Լիվիոսը նրա խոսքերը,— դու, որպես հաղթող, խնջույք կանես Կապիտոլիումում։ Հետևիր ինձ, ես հեծյալների հետ կգնամ առջևից, որպեսզի ավելի վաղ հասնեմ, քան նրանք կարող են իմանալ, թե ես պատրաստվում եմ գնալու»։ Սակայն, ինչպես պատմում է Լիվիոսը, Հաննիբալին այդ ձեռնարկումը արդեն հույժ վիթխարի թվաց, որպեսզի նա իսկույն կարողանար որոշում ընդունել։ «Մահարբալի խորհրդի վրա մտածելու համար ժամանակ է պետք»,— այսպիսի խոսքերով սահմանափակվեց պունիկյան զորավարը։ «Աստվածները միևնույն մարդուն ամեն ինչ չէ, որ տալիս են,— պատասխանեց Մահարբալը,— դու, Հաննիբալ, կարողանում ես հաղթել, հաղթանակից օգտվել չես կարողանում»։ Մենք չգիտենք, թե Հաննիբալն ինչպես է արձագանքել լսված այդ հանդգնությանը. ամենից հավանական է, որ նա գերադասել է լռել։ Սակայն այդ միջոցին ներկա եղած պունիկացիներն ու հույները լավ էին հիշում Հաննիբալի թե՛ խորհուրդը, թե՛ որոշումը և թե՛ Մահարբալի վերջին խոսքերը։ Ամբողջ միջադեպը հասատուն կերպով մտել է անտիկ պատմական ավանդության մեջ, որին շատ է հետաքրքրել, թե ինչու Հաննիբալը չի դիմել Հռոմի վրա (հմմտ. Պլուտ. մոտ, Փաբ., 17, Ջոնարաս, 9, 1, Վալ. Մաքս., 9, 5, 3)։ Կատոնը նույնպես, պատմելով Հաննիբալի և Մահարբալի երկխոսության մասին (Կատոն, Ֆրագմ., 86, Գելլ., 10, 24, 7, հմմտ. նաև Կելիոս, Ֆրագմ., 25, Գելլ., 10, 24, 6. նրա շարադրանքը նույնպես բխում է Կատոնից), ավելացնում է, որ հաջորդ օրը Հաննիբալը իր մոտ կանչեց հեծելազորի պետին և ասաց նրան. «Ես ուղարկում եմ քեզ, եթե

կամենում ես, հեծյալների հետ»։ «Ուշ է,— պատասխանեց Մահարբալը,— նրանք արդեն գիտեն» (Կատոն, Ֆրագմ., 87, Գելլ., 2, 19, 9)։ Ինչպես երևում է, Մահարբալը հույսը դրել էր լիակատար հանկարծակիության ազդեցության վրա. և իրոք, նրա առաջարկած գործողությունը միայն մի դեպքում կարող էր հաջող լինել՝ եթե թշնամուն թույլ չտար ուշքի գալու կրած սարսափելի պարտությունից։

Հետաքրքիր է հետագայում Հաննիբալի և շրջապատի ունեցած վերաբերմունքը Կաննեից հետո նրա գործողությունների նկատմամբ։ Լիվիոսի ասելով (26, 7), նրանք քաջ գիտակցում էին, որ բաց են թողնված բարեպատեհ հնարավորություններ. Լիվիոսը խոսում է նույնիսկ զորավարի ամենամերձավոր գործակիցների անբավականության մասին։

Առայժմ, սակայն, Հաննիբալի առաջնորդությամբ Իտալիա եկած կարթագենական զորքի հրամանատարության մեջ միմյանց հակադրվում էին երկու տեսակետներ։ Չի կարելի ժխտել թե՛ մեկի և թե՛ մյուսի տրամաբանական լինելը։ Զորքերին հանգիստ տալու խորհուրդն իմաստ ուներ, եթե ընդունենք, որ Հաննիբալի հիմնական նպատակը ոչ թե Հռոմին ուղղակի հարվածելն ու ոչնչացնելն էր, այլ Իտալիկական միության քայքայումը[81] և բոլոր իտալիկներին միավորելը Հռոմի դեմ պայքարելու համար[82], եթե կարծենք, որ Հաննիբալը նույնիսկ Կաննեից հետո բավականաչափ ուժեր չուներ (կամ գտնում էր, որ չունի) Հռոմն անմիջապես ոչնչացնելու համար մղվելիք հաղթական մարտի համար[83], եթե ընդունենք, որ Հաննիբալը սոսկ կամենում էր Հռոմին հարկադրել կնքելու Կարթագենի համար ձեռնտու հաշտության պայմանագիր[84]. ենթադրում են նույնիսկ, որ Հաննիբալն ընդհանրապես չէր կամենում վերացնել Հռոմը, որպեսզի Իտալիայում չստեղծվեր քաղաքական վակուում, որը Մակեդոնիան պետք է կարողանար լցնել[85]։ Մահարբալի դիրքավորումը համապատասխանում էր մյուս տեսակետին, որի համաձայն պատերազմի նպատակը ուղած միջոցներով Հռոմի կործանումն ու ոչնչացումն էր։ Մահարբալը հիմնվում էր այն բանի վրա, որ Աուֆիդոսի ափերի մոտ տեղի ունեցած արյունահեղ ջարդից հետո Հռոմն իր տրամադրության տակ կազմակերպված զինված ուժ չուներ և, հետևաբար, չէր կարող փոքր իսկ չափով գործուն դիմադրություն ցույց տալ։ Այժմ արդեն գլխավորն արված էր, և մնում էր միայն վերջին վճռական հարվածով վերջ տալ թշնամուն և հռոմեական բուն օջախում վերացնել պատերազմը[86]։

Դժվար է ասել, թե պատերազմը վարելու վերաբերյալ բոլոր այս ըմբռնումները որքանով էին հիմնավորված։ Մենք չենք կարող պատմա-

կան փորձ հասարել, որպեսզի պատկերացնենք, թե ինչպես կծավալվեին իրադարձությունները, եթե Հաննիբալը հետևեր իր հեծելազորի պետի խորհրդին։ Բայց և այնպես, Իտալիայի հարավում նրա հետագա գործողությունների արդյունքները խոսում են իրենք իրենց մասին։ Ինչպես մենք կտեսնենք առաջիկայում, Կաննեից հետո Հաննիբալը ցանկանում էր պայմանագիր կնքել։ Հնարավոր է, որ նա գտնում էր, թե իր բանակը, որը, իհարկե, զգալի կորուստներ էր կրել Ալպերն անցնելու ժամանակ և Իտալիայում ռազմական գործողությունների ընթացքում, բավարար ուժ չունի, որպեսզի գրոհի Հռոմը և պաշարի այն։ Սակայն բանը միայն դրանում չէր։ Այն տպավորությունն է ստեղծվում, որ Հաննիբալը բարոյապես պատրաստ չէր պատերազմը շարունակելու համար և կարծում էր, թե Կաննեի տակ հռոմեական զորքի ջախջախումն ու ոչնչացումը ավարտում է պատերազմը և Կարթագենին դարձնում Արևմտյան Միջերկրականի տերը, Հռոմին հարկադրելով ինքնաբերաբար ենթարկվելու պունիկյան իշխանությանը։ Սակայն հռոմեական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ սկսելու ուղղությամբ Հաննիբալի կատարած փորձերը արհամարհանքով մերժվեցին։ Կաննեից հետո իր ուժերը վերականգնելու համար Հռոմն ամենից առաջ կարիք ուներ ժամանակի և այն նա ստացավ։ Պատահական չէ, որ հռոմեական ավանդությունը բավականաչափ հաստատակամությամբ պնդում է, որ հատկապես Հաննիբալի այդ օրվա դանդաղկոտությունն էր, որ փրկեց թե՛ քաղաքը և թե՛ պետությունը (Լիվիոս, 22, 51, 4, Օրոսիոս, 4, 16, 4, Զոնարաս, 9, 1)։ Հաննիբալը մնաց հարավում, և ամբողջ Կենտրոնական Իտալիան պահպանեց Հռոմի հետ ունեցած դաշնակցությունը։ Հաննիբալը ժամանակ և ուժեր էր վատնում մեկ այս, մեկ այն քաղաքի ապարդյուն պաշարման վրա։ Իսկ Հռոմը նույն այդ ժամանակ պատրաստեց և վինավարժեց նոր բանակ[87], ինքն անցավ հարձակման և հաջողության հասավ[88]։ Պատերազմը վարելու հռոմեական համակարգը Կաննեից հետո ընդհանրապես հույժ էական փոփոխություններ կրեց[89]։ Զորքի դլուխ կանգնեցվեցին փորձված զորապետներ, որոնց լիազորություններն անհրաժեշտության դեպքում երկարաձգվում էին մեծ ժամանակամիջոցի համար։ Հռոմեական զորավարներն արդեն չէին սահմանափակվում լոկ հակառակորդի գործողությունները դիտելով, բայց նաև հախուռն ձևով չէին նետվում թշնամու վրա. նրանք գրավում էին ամրացված դիրքեր, ձգտում էին ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած շրջանում ամրապնդել Հռոմի դիրքերը, մարտի մեջ էին մտնում այն ժամանակ, երբ հաղթանակը լուրջ արդյունքներ էր խոստանում, իսկ պարտությունը կործանում չէր սպառնում։ Նույն այդ ժամանակ Հաննիբալը երկար տարիներ տևած պատերազմի ընթացքում կորցրեց իր վետերաններին՝ բանակի հիմնական կորիզը, և նրանց պետք է փոխարիներ նորակոչիկներով՝ իտալիկներով ու գալլերով[90]։

Պատերազմի արդյունքները ցույց են տալիս, որ անկախ նրանից, թե ինչպիսի հաշիվներով էր Հաննիբալն առաջնորդվում, դրանք սխալ էին։ Իրադարձությունների հետագա ամբողջ ընթացքը վկայում է, որ եթե Հաննիբալը երբևիցե ունեցել է իրական հնարավորություն վերջնական հաղթանակի հասնելու համար, ապա դա եղել է միայն Կաննեից հետո և սոսկ Հռոմին ուղղակի հարվածելու միջոցով։ Պատերազմի ընթացքում, իրոք բեկման կետ դարձած Կաննեից հետո Հաննիբալը, հավանաբար չկամենալով վտանգի ենթարկել այդքան փայլուն հաղթանակի արդյունքները, և, դատելով ըստ ամենայնի, չունենալով ռազմական գործողությունների որոշակի ծրագիր, չկարողացավ խլել գլխավորը՝ ռազմավարական նախաձեռնությունը և կորցրեց ամեն ինչ։

I

Համենայն դեպս, Հաննիբալի արդեն առաջին քայլերը վկայում էին այն մասին, որ նա պատերազմն համարում էր ավարտված, իսկ իրեն, անկասկած՝ հաղթող։ Պատմում էին, որ նա հայրենիք է ուղարկել հեծելների և սենատորների ատտիկական երեք մեդիմնոսի չափով (մոտավորապես 157,59 լ) ոսկի մատանի. դրանք զինվորները հանել էին ապանված թշնամիների մատներից (հմմտ. Դիոն Կասս. մոտ, Ֆրագմ., 27, Օրոսիոս, 4, 16, 5). դժվար էր ավելի ակնառու կերպով ցույց տալ հռոմայեցիների կորուստների իսկական չափերը, այն հուսահատական վիճակը, որի մեջ ընկել էին նրանք։ Սակայն միաժամանակ Հաննիբալը որոշեց Հռոմի նկատմամբ բարեկամական ժեստ կատարել, դուռ բացել բանակցությունների համար, անիուսափելի թվացող աղետից փրկության հույս մատուցել։

Ղեկավարվելով իտալիկների համակրանքը շահելու և Հռոմից նրանց կտրելու՝ իր վաղեմի քաղաքական հաշիվներով, Հաննիբալը, ինչպես դա եղել էր նաև նախկինում, գերիների ընդհանուր զանգվածից առանձնացրեց Հռոմի դաշնակիցներին և առանց փրկագնի, նրանց ազատ արձակեց (Լիվիոս, 22, 58, 2)։ Այնուհետև նա դիմեց հռոմայեցիներին և, ինչպես պատմում է Լիվիոսը (22, 58, 3—9), որն ըստ երևույթին, քիչ թե շատ ճշգրտությամբ հաղորդում է Հաննիբալի ճառի բովանդակությունը, հայտարարեց նրանց, որ ամենևին չի կամենում հռոմայեցիների դեմ բնաջնջող պատերազմ մղել։ Նա պատերազմում էր

Հռոմի դեմ պատվի ու իշխանության համար. այժմյան կարթագենցիների հայրերը պարտվել են հռոմեական քաջությունից, այժմ նա՝ Հաննիբալը, կամենում է, որպեսզի Հռոմը պարտություն կրի իր արիությունից ու հաջողությունից։ Այդ պատճառով ինքը գերի ընկած հռոմայեցիներին հնարավորություն է տալիս փրկագնվելու և նշանակում է փրկագինը. հեծյալների համար՝ 500, հետևազորայինների համար՝ 300, ստրուկների համար՝ 100 դինար։ Այդ առաջարկը սենատին հաղորդելու համար գերիներն իրենց միջից ընտրեցին տասը հոգի, և վերջիններս, առանց որևէ գրավի, մեկնեցին Հռոմ։ Նրանցից երդում առան, որ սենատում հարցի քննարկումից հետո կվերադառնան գերիների մոտ։ Այս բոլոր ասածների, սիրալիր խոսքերի ետևում, ցանկանալու դեպքում, դժվար չէր լսել հաշտություն կնքելու հրավեր՝ այնպիսի պայմաններով, որոնք նման էին այն պայմաններին, ինչով իր ժամանակին ավարտվել էր Պունիկյան I պատերազմը (միայն այժմ պայմանագրի հիմնական դրույթները պետք է թելադրեր Հաննիբալը, իսկ Սիցիլիայում և Իտալիայում ունեցած տարածքային և այլ կորուստները բաժին էին ընկնելու Հռոմին)։ Դեռ ավելին. Հռոմ մեկնած գերիների հետ Հաննիբալն ուղարկեց իր մերձավորներից մեկին՝ Կարտալոնին, որը շփման մեջ պետք է մտներ հռոմեական իշխանությունների հետ և հարցուփորձի միջոցով իմանար, թե արդյոք նրանք չե՞ն ցանկանում հաշտության բանակցություններ սկսել։ Սակայն հռոմեական դիկտատորը (մենք առաջիկայում հանգամանորեն կանգ կառնենք աղետի հետևանքները վերացնելու ուղղությամբ հռոմեական կառավարության ձեռք առած միջոցառումների վրա) Հաննիբալի կիսապաշտոնական պատվիրակին ընդառաջ ուղարկեց մի լիկտորի, հրամայելով մինչև մութը վրա հասնելը հեռանալ Հռոմին պատկանող երկրամասից (Դիոն Կասս., Ֆրագմ., 36)։

Կարտալոնի պատվիրակության անհաջողությունը Հաննիբալի համար առաջին ու թերևս ամենաշարագույժ հայտանիշն էր. Հռոմը հրաժարվում էր պատերազմը համարել տանուլ տրված, Հաննիբալին դիտել որպես հաղթող և նրանից խնդրել գթություն ու խաղաղություն։

Եվ հռոմեական կառավարությանը դժվար չէր հասկանալ. Հաննիբալի հետ պայմանագիր կնքելով, նա իր իսկ ձեռքերով պետք է ոչընչացներ Իտալիայում իր տիրապետության ամբողջ շենքը, վտանգի տակ դներ երկարատև ու արյունահեղ պայքարի հետևանքով հռոմեական գյուղացիության ձեռք բերած հողերը։ Կարթագենի տիրապետությունը և Իտալիայում նրա անխուսափելի գերիշխանությունը ուղղակի վտանգ կստեղծեին Հռոմի եթե ոչ ֆիզիկական ոչնչացման, ապա, հա-

մարյա դեպս, անկախության կորստի և Կարթագենի պետությանը հպատակված քաղաքներից մեկը դառնալու համար։ Հռոմի համար Կաննեից հետո պատերազմը կտրուկ կերպով փոխեց իր բնույթը. Արևմտյան Միջերկրականի, այդ թվում և Իտալիայի վրա գերիշխելու համար մղվող պատերազմից ինչ-որ մի ժամանակ այն վերածվեց օտարերկրյա լծի դեմ ազատության և անկախության համար մղվող պատերազմի։

Հաննիբալը վատ էր հաշվառել։ Բանակցությունների փոխարեն նա պետք է նախապատրաստվեր պատերազմի նոր փուլին։

Խոսելով Կաննեից հետո պատերազմող կողմերի կացության մասին, Տիտոս Լիվիոսը (22, 61, 10—12) գրում է. «Թե որքանով այդ պարտությունն ավելի լուրջ էր նախորդ պարտություններից, ցույց է տալիս այն, որ դաշնակիցների հավատարմությունը, որը մինչ այդ մնում էր հաստատուն, այդ ժամանակ սկսեց տատանվել միայն այն պատճառով, որ նրանք կորցրեցին հռոմեական տիրապետության պահպանման նկատմամբ ունեցած հույսը։ Պունիկացիներին հարեցին հետևյալ ժողովուրդները՝ ատելլաները, կալատինները, գիրպինները, ապուլիացիների մի մասը, սամնիացիները, պենտրներից բացի, բոլոր բրուտիները, լուկանները, իսկ բացի նրանցից, ուզենտինները և գրեթե ամբողջ հունական ծովափը (Իտալիայի—Ի. Կ.)՝ տարենտոնցիները, մետապոնտացիները, կրոտոնցիները և լոկրերը, ինչպես նաև Այսրալպյան բոլոր գալլերը»։ Մոտավորապես դրությունն այդպես է որակում նաև Գալիբիոսը (3, 118, 2—4). «Շնորհիվ այդ հաղթանակի, կարթագենցիները անմիջապես տիրացան գրեթե մնացած ամբողջ ծովափին և այսպես կոչված Մեծ Հունաստանին. չէ՞ որ տարենտոնցիները հենց նույն ժամանակ հանձնվեցին նրանց, իսկ ապրիպինացիները և կապուացիներից ոմանք իրենց մոտ հրավիրեցին Հաննիբալին։ Այնուամենայնիվ, մյուսները ևս իրենց հայացքներն ուղղեցին կարթագենցիների կողմը, մեծապես հույս տածելով, որ նրանք առանց հապադելու, կդրավեն նաև բուն Հռոմը»։ Հար և նման պատկեր են ընձեռում նաև անտիկ մյուս պատմագիրները. «Այդ ճակատամարտից հետո Իտալիայի՝ Հռոմի գերիշխանության տակ եղած շատ քաղաքներ անցան Հաննիբալի կողմը» (Եվտրոպիոս, 3, 11). «Կամպանիան և գրեթե ամբողջ Իտալիան, լիովին հիասթափվելով այն բանում, թե հռոմայեցիներն ի զորու կլինեն վերականգնել իրենց դրությունը, անցան Հաննիբալի կողմը» (Օրոսիոս, 4, 16, 10)։

Փորձենք, այնուամենայնիվ, պարզաբանել, թե Կաննեից հետո ստեղծված իրադրության՝ Հաննիբալի համար լավատեսական այդ գնա-

հատականը որքանով էր համապատասխանում ռեալ իրավիճակին և, որ հատկապես էական է, այն արդյոք Հաննիբալին ընձեռե՞ց իրական ռազմաքաղաքական առավելություններ։ Առաջին հայացքից այդ առավելությունները ակնհայտ էին. Իտալիկական միությունը, եթե վերջնականապես չքայքայվեց, ապա, համենայն դեպս, շատ բան կորցրեց իր ամրակուռությունից, իսկ Հաննիբալը Իտալիայում ձեռք բերեց հարաբերականորեն հուսալի թիկունք։ Բայց և այնպես չէր կարելի մոռանալ, որ Կաննեի մոտ մղված ճակատամարտը ազդանշան ծառայեց իտալիկական քաղաքներում հասարակական-քաղաքական պայքարի սրման համար և, հետևաբար, այնտեղ ստեղծեց քաղաքական հեղհեղուկ մթնոլորտ, և որ կենսական որևէ շահ նորահայտ դաշնակիցներին չէր կապում Կարթագենի հետ։ Մեկ անգամ դավաճանելով Հռոմին, նրանք ճակատագրի նոր շրջադարձի դեպքում, կարող էին դավաճանել նաև Հաննիբալին։ Ամեն ինչ կախված էր նրանից, թե ամեն մի այդպիսի դեպքում հատկապես ինչպիսի՞, դեմոկրատակա՞ն, թե արիստոկրատական, հռոմեամե՞տ, թե հակահռոմեական խմբավորություն էր հայտնվելու իշխանության ղեկի մոտ, իսկ դա, իր հերթին, քիչ չափով կախված չէր հենց Հաննիբալի հաղթանակներից ու պարտություններից։ Բացի այդ, Իտալիայի հարավում քաղաքների մի զգալի խումբ նույնպես հրաժարվեց Հաննիբալի իշխանությունը ճանաչելուց, այնպես որ հարկ եղավ, որպեսզի նա զինված ուժ գործադրի նրանց նկատմամբ։

Ինքնին հասկանալի է, որ Հռոմի կողմում մնացին Հարավային Իտալիայի լատինական գաղութները՝ Բրունդիսիումը, Վենուսիան, Պեստումը և ուրիշներ, որոնք Հաննիբալի հաղթանակի դեպքում իրենց հողերը կորցնելու վտանգն աչքի տակ էին առնելու. դրանք պունիկյան զորավարը խոստացել էր վերադարձնել բնիկ ազգաբնակչությանը[91]։ Ապուլիական քաղաքների դիրքավորման մասին մենք ընդհանրապես լավատեղյակ չենք։ Ճիշտ է, հայտնի է, որ հռոմեական զորքի մի մասը Կաննեից փախավ Կանուսիում, որտեղ միայն տեղական կին մեծատոհմիկներից մեկը՝ Բուսան փախստականներին տրամադրեց պարեն, հագուստ և դրամ (Լիվիոս, 22, 52, 7)։ Քաղաքաբնակների հիմնական զանգվածի՝ նրանց նկատմամբ ցուցաբերած բացահայտորեն սառն ընդունելությունն, ըստ երևույթին, բացատրվում է Հաննիբալից հատուցում կրելու երկյուղով։ Ապուլիական մեկ այլ քաղաք՝ Արգիրիպիքը (Արպիքը) անցավ Հաննիբալի կողմը։ Այդ գործի կազմակերպիչը Դասիոս Ալտինիոսն էր՝ տեղական մեծատոհմիկներից մեկը, որը համարվում էր արգոսցի Դիոմեդեսի՝ քաղաքի հիմնադրի շառավիղը (Լիվիոս, 24, 45, 2, Ապպ., Հաննիբ., 31)։ Հռոմի հանդեպ թշնամական դիրք էր բռնել նաև Սալապիան, որտեղ պունիկացիների կողմը միավված կուսակցությունն գլուխ էր կանգնած Դասիոսը (Լիվիոս, 26, 38, 6, Ապպ., Հաննիբ., 45), որն, ամենայն հավանականությամբ, Ալտինիոսի ազգականն էր։ Բացառված չէ, որ տվյալ դեպքում տեղի ունեցավ ընդհանուր դեկավարությամբ զույգ քաղաքների համատեղ ելույթ։ Որքանով մեզ հայտնի է, Վենուսիան համակրանքով վերաբերվեց Կաննեի մոտից փախած հռոմայեցիների նկատմամբ (Լիվիոս, 22, 54, 1—3). այն, թերևս, բացատրվում է հենց այդ քաղաքում կոնսուլ Գ. Տերենտիոս Վառոնի ներկայությամբ. վերջինս այնտեղ հավաքում և կազմակերպում էր ողջ պրծած զինվորներին։

Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից անմիջապես հետո Հաննիբալն Ապուլիայից շարժվեց դեպի Սամնիում։ Հատկապես այստեղ, հռոմայեցիներին ամենից համառ և հաջող դիմադրություն ցույց տված երկրում (բավական է հիշել Հռոմի համար ստորացուցիչ 321 թ. դեպքերը, երբ Կավդիական կիրճում շրջապատված հռոմայեցիները պետք է կնքեին հույժ խայտառակ հաշտություն, պարտավորվելով հեռանալ Սամնիումից, և նույնիսկ անցնել «լծի» տակով), այն երկրում, որտեղ տակավին կենդանի էին ազատության և անկախության համար պայքարի ավանդները, նա կարող էր գործուն պաշտպանության հույս ակնկալել։ Ընդհանուր առմամբ Հաննիբալի հույսերն արդարացան։

Պունիկյան զորքերի հարձակման անմիջական նպատակը գիրպինների երկիրն էր, որտեղ Հաննիբալին հրավիրել էր ոմն Ստատիոս Տրեբիոս, որը պատկանում էր Կոմպսա քաղաքի արիստոկրատական շրջաններին։ Կոմպսայում իշխանության գլուխ էին կանգնած Տրեբիոսի թշնամիները՝ Մոպսիոսների տոհմը, բազմաթիվ կլիենտներով և կողմնակիցներով հանդերձ, որոնք հենվում էին Հռոմի պաշտպանության վրա։ Մեր եղակի աղբյուրը՝ Տիտոս Լիվիոսը (23, 1, 1—3), նույնիսկ ասում է, թե Մոպսիոսները Հռոմի դրածոներ էին։ Երբ տեղեկություն ստացվեց Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին, Տրեբիոսը լուր տարածեց այն մասին, թե Հաննիբալը գնում է դեպի Կամպսա, և ահաբեկված Մոպսիոսները իրենց բոլոր կողմնակիցների հետ լքեցին քաղաքը։ Կոմպսան առանց մարտի հանձնվեց Հաննիբալին, իր պարիսպներից ներս թողնելով պունիկյան կայազորը։ Այս իրադարձությունները Հաննիբալին ցույց տվեցին, որ նա կարող էր հույս դնել նույնիսկ տեղական արիստոկրատիայի որոշակի շրջանների պաշտպանության վրա, հատկապես նրանց, ում առջև հռոմայեցիները փակել էին գնալի իշխանություն տանող ճանապարհը, և ով պայքարում էր Հռոմի կամակատարների դեմ, առաջնության և տիրապետության համար։ Դրանք սա-

կայն ցույց տվեցին նաև այլ բան. դեպի Հռոմ կողմնորոշվող տոհմերը տարագրությունը գերադասեցին Հաննիբալի հետ համաձայնության գալուց[92]։

Հաննիբալը որոշեց Կոմպսան, գոնե սկզբնական շրջանում, դարձնել իր հենակետը։ Այդտեղ նա թողեց ռազմամավարն ու գումակը, այստեղից նա իր եղբորը՝ Մագոնին, կարգադրեց շարժվել դեպի Սամնիումի խորքերը, որպեսզի այնտեղ Կարթագենի տիրապետության տակ ընդուներ նրանց, ովքեր կանգնեին իր կողմը, իսկ նրանց, ովքեր կամավոր չէին կամենա, ուժով հարկադրեր (Լիվիոս, 23, 1, 4)։ Ըստ երևույթին, Մագոնի արշավանքը հաջող էր և, դատելով այն բանից, ինչ հայտնի է սամնիական քաղաքների, ինչպես ասենք Կոմպուլտերիայի, Տրեբուլայի և Ավստիկուլայի հետագա վերաբերմունքի մասին (Լիվիոս, 23, 39, 6), և այն հաշվեհարդարից, որ հռոմայեցիները կատարեցին Կավդիայի շրջանում (Լիվիոս, 24, 20, 4—5), սամնիական քաղաքները կամավորապես և հաճույքով ճանաչեցին հռոմեական տիրապետությունից իրենց ազատող Հաննիբալի իշխանությունը։

Իսկ ինքը՝ Հաննիբալը շարժվեց դեպի Նեապոլիս, որպեսզի պաշարի և գրավի Հարավային Իտալիայի կարևորագույն ծովեզրյա այդ քաղաքը և այդպիսով ելք ունենա դեպի ծով (Լիվիոս, 23, 1, 5)։ Մտնելով նրա տարածքը, Հաննիբալն իր նումիդիական հեծյալների մի մասը տեղավորեց դարաններում (ինչին քիչ ընպատեց խիստ անհարթությամբ կտրատված տեղանքը, որտեղ պետք է գործեին կարթագենական զորքերը), իսկ մնացածներին ճանապարհին խլած ռազմամավարի հետ շարժեց ուղղակի դեպի քաղաքամուտ դարպասները։ Նումիդիացիներն ընթանում էին ոչ այնքան հոծ, անկանոն խմբերով, և թվում էր, դյուրությամբ կարող էին ոչնչացվել. այդ խնդիրը փորձեց լուծել Նեապոլիսյան հեծյալների ջոկատը, գրոհելով մերձեցող հակառակորդին։ Նումիդիացիներն սկսեցին նահանջել, թշնամուն հրապուրեցին դեպի դարանը, որտեղ շրջապատելով նրան, համարյա գլխովին ոչնչացրեցին։ Նեապոլիսցիներից նրանք, ովքեր կարող էին լողալ, մասամբ փրկվեցին մարտադաշտից ոչ հեռու իրենց սովորական գործով զբաղված ձկնորսների լաստանավերով։ Մի քանի նեապոլիսյան երիտասարդ մեծատոհմիկներ գերվեցին և սպանվեցին։ Այդպիսով նեապոլիսյան իշխանությունները չկամեցան կարթագենցիներին իրենց մոտ թողնել։ Մենք ոչինչ չենք լսել նաև Նեապոլիսի ու Կարթագենի միջև դաշինք կնքելու որևէ փորձի մասին։ Հավանաբար Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտը նեապոլիսցիների վրա չէր թողել այն տպավորությունը, ինչ ակնկալում էր Հաննիբալը։

Թ. Մոմզենը Նեապոլիսի այդ դիրքավորումը բացատրում է պունիացիների և վերջիններիս իտալիկյան դաշնակիցների նկատմամբ նրա բացասական վերաբերմունքով. Իտալիայի հույները նվիրված էին Հռոմին, որը նրանց հետ չափազանց մեղմ էր վերաբերվում և երբեք չէր թողնում իր հելլենականությունը ցուցադրելու համար[93]։ Ա. Կարշեդոը նշում է երկու հանգամանք. Նեապոլիսի հունական ծագումը և նրա թշնամական հարաբերությունները կամպանիական մեծաշխարհի քաղաքների հետ[94]։ Ի. Լ. Մայակը Նեապոլիսի վերաբերմունքի բացատրությունը փնտրում է այդ քաղաքի պատմության մեջ. 236 թ. տեղական մեծատոհմիկներին հաջողվեց Նեապոլիսը դնել Հռոմի գերակայության տակ՝ նրանց ինքնավարության պահպանմամբ։ Պունիկյան II պատերազմի ժամանակ արիստոկրատական կուսակցությունը պահպանեց իր տիրապետող դիրքը և Հռոմի հետ իր ունեցած կապերը[95]։ Այս բոլոր նկատառումները, ինչպես երևում է, ճշմարտության որոշակի բաժին են պարունակում։ Հունական քաղաքները, ի դեմս Կարթագենի, չէին կարող չտեսնել իրենց վաղեմի մահացու թշնամուն, որի դեմ Արևմտյան Միջերկրականի հույները արդեն մի քանի հարյուրամյակ կենաց և մահու պայքար էին մղում, և որի հաղթանակը կհանգեցներ նրանց բոլոր առևտրական կապերի լիակատար կորստին, միգուցե նաև՝ իրենց կործանմանը։ Հաննիբալի դաշինքը Հարավային Իտալիայի բնիկ ազգաբնակչության հետ, որը թշնամաբար էր վերաբերվում հունական գաղութարարներին և ձգտում էր վերացնել գաղութները, նույնպես չէր կարող չզգուշացնել հույներին։ Վերջապես, ինքյան հասկանալի է, որ Նեապոլիսում իշխանության գլուխ էր կանգնած ամենայն հավանականությամբ Կարթագենին թշնամի, Հռոմի հետ վաղեմի և ամուր թելերով կապված արիստոկրատական խմբավորում։

Դյուրին հաղթանակ տանելով Նեապոլիսյան հեծյալների նկատմամբ, Հաննիբալն, այնուամենայնիվ, չհամարձակվեց պաշարել Նեապոլիսը (Լիվիոս, 23, 1, 10, հմմտ. Զոնարասի մոտ, 9, 2) և իր զորքերը տարավ դեպի Կապուա, որը Նեապոլիսի հարևանն էր և վաղեմի թշնամին։

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները, երբ փորձում են բացատրել Կաննեի ճակատամարտից հետո Կապուայի բռնած դիրքը, հիմնական ուշադրությունը դարձնում են կապուացիների «փափկակեցության» և «ապականվածության» վրա, հատկություններ, որոնք բացահայտ և որոշակիորեն հակադրվում են այն անձանց քաղաքացիական և զինվորական առաքինություններին, ովքեր պահպանեցին հավատարմություն-

նը Հռոմի հետ ունեցած դաշինքին (Պոլիբիոս, 7, 1—2, Լիվիոս, 23, 2, 1)։ Սակայն Տիտոս Լիվիոսի պատմածի մեջ, երբ նա խոսում է անսահմանորեն աղատությունից օգտվող Կապուայի պլեբսի ինքնակամության մասին, նկատելի է պատմական իրողություն՝ սոցիալական սուր պայքարը, որն այդ պահին ընդգրկել էր Կապուան, պայքար, որը դատելով նրա հետագա պատմածից (23, 2, 3), ընթանում էր պլեբսի և սենատի, այսինքն՝ տեղական արիստոկրատական շրջանների միջև։

Կաններից հետո Կապուայի համար հիմնական քաղաքական խնդիրը հետևյալն էր. այնուհետև արդյոք կողմնորոշվել դեպի Հռոմի հետ ունեցած դաշնակցությունը, թե՞ նախընտրել Հաննիբալին։ Պարզ էր, որ բավական էր միայն, որ Հաննիբալը մոտենար քաղաքին, կապուացիները կընտրեին վերջին որոշումը (Լիվիոս, 23, 2, 3)։

Ինչպես պատմում է Տիտոս Լիվիոսը (23, 2—3, հմմտ. Դիոդորոսի մոտ (26 10)), Կապուայի քաղաքական պայքարից կարիերիստական նպատակներով որոշեց օգտվել Կապուայի արիստոկրատներից մեկը, որն օգտվում էր դեմոկրատական շրջանների լայն օժանդակությունից և արդեն մի անգամ՝ Տրազիմենոսյան ճակատամարտի տարում, քաղաքում դրազեցրել էր բարձրագույն մագիստրատուրան (Մեդիքս Տուտիկոս)՝ Պակուվիոս Կալավիոսը։ Իր նպատակներին հասնելու համար Պակուվիոս Կալավիոսին անհրաժեշտ էր, ըստ կարելվույն, խաղաղ միջոցներով կոտրել Կապուայի սենատի դիմադրությունը, և այդ խնդիրը նա փայլուն կերպով գլուխ բերեց։ Սենատի նիստ գումարելով, Պակուվիոս Կալավիոսը ճառով դիմեց վախեցած մեծատոհմիկներին, ամենասև գույներով նկարագրելով նրանց վիճակը։ Նա ինքը՝ Պակուվիոսը ամուր կապերով կապված է Հռոմի հետ, ուստի ինքը կհամաձայնվի հռոմայեցիներին զավաճանել միայն ծայրահեղ դեպքում. բայց և այնպես, ժողովուրդը նպատակադրվեց սպանել բոլոր սենատորներին և այնուհետև պետությունը հանձնել Հաննիբալին և կարթագենցիներին։ Միայն ինքը՝ Պակուվիոսը կարող է անխուսափելի կործանումից փրկել սենատորներին, եթե նրանք վստահեն իրեն։ Ստանալով սենատորների համաձայնությունը և մասամբ նրանց իրազեկ դարձնելով իր հետագա անելիքներին, նա փակեց նրանց կուրիայում, մուտքի մոտ կանգնեցնելով պահակներ։ Այդ կերպ Կապուայի սենատը կտրելով արտաքին աշխարհից, Պակուվիոսը հավաքեց ժողովրդական ժողովը և անցավ իր մտահղացած գործողության երկրորդ մասի իրագործմանը։ Ինչպես պատմում է Տիտոս Լիվիոսը, քաղաքացիներին նա առաջարկեց պատժել սենատորներից յուրաքանչյուրին ըստ նրա կատարած հանցագործությունների, սակայն պարտադիր մի պայմանով, որ ամեն մի հեռացված կամ մահապատժի ենթարկված խորհրդի անդամի փոխարեն ֆեոդալներ ընտրվեր նորը։ Այդ պայմանի կատարումը, ինչպես և պատասում էր Պակուվիոսը, անհնարին դարձավ. ուղած թեկնածությունը սուր առարկություններ հարուցեց. ժողովի մասնակիցներից ոմանք գոռում էին, թե ծանոթ չեն սենատորական աթոռի այսինչ հավակնորդին, ուրիշները մերկացնում էին նրա խայտառակ արարքները, մի մասն էլ խոսում էր ստորին ծագման, սենատորի կոչման հետ անհամատեղելի աղքատության, դարաշրջանի տեսանկյունից վարկազրկող՝ արհեստավորական զբաղմունքների մասին։ Ի վերջո պարզ դարձավ, որ ոչ ոք չկա, որպեսզի փոխարինի սենատորներին, և նրանց բաց թողեցին կալանքից[96]։

Այս դեպքերի հետևանքով ահաբեկված սենատորները (չնչին բացառություններով, ինչպես կտեսնենք ստորև, բացառություններ, այնուամենայնիվ, կային) այլևս չընդդիմադրեցին Պակուվիոսի ստեղծած դիկտատորական վարչակարգին։ Բնութագրելով հեղաշրջումից հետո Կապուայում ստեղծված կացությունը, Լիվիոսը (23, 4, 2—6) գրում է. «Այդ ժամանակվանից սենատորները, մոռանալով իրենց արժանապատվության և ինքնուրույնության մասին, սկսեցին սողալ պլեբսի առջև՝ ստորաքարշություն անել, սիրալիր կերպով հրավիրել, կազմակերպել կերուխումներ, ստանձնել նրանց դատական գործերը և, որպես դատավորներ, վեճը լուծել հօգուտ այն կողմի, որն ավելի էր սիրված ժողովրդից և ավելի շուտ կարող էր ամբոխին բարեհաճության տրամադրել։ Ընդհանուր առմամբ, սենատում ամեն ինչ վճռվեց այնպես, որ ասես թե այնտեղ տեղի էր ունեցել պլեբեյների ժողով։ Պետությունը, որ միշտ հակված էր շքեղության, ոչ միայն քաղաքացիների արատավորության, այլև ծովում և ցամաքում ամեն տեսակ բավականության հանդեպ տածած մեծ հաճույքի ու հրապուրանքի հետևանքով այն ժամանակ ավագանու հաճոյակատարության և պլեբսի ինքնակամության պատճառով դարձավ այն աստիճան սանձարձակ, որ չափ չէր ճանաչում ո՛չ ցանկությունների և ո՛չ էլ ծախսերի մեջ։ Օրենքների, իշխանությունների, սենատի նկատմամբ արհամարհանքին այն ժամանակ, Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, ավելացավ նաև քամահրանքը հռոմեական ուժի նկատմամբ, որը մինչ այդ մի ինչ-որ պատկառելի վախ էր ներշնչում»։

Պակուվիոսի գործողությունների հետևանքով Կապուայի սենատը կորցրեց իր քաղաքական նշանակությունը. իրական իշխանությունն անցավ պլեբսի առաջնորդների ձեռքը, որոնք հնարավորություն ունեին նրանց կամքը թելադրել սենատին և մագիստրատներին (Լիվիոս, 23, 4,

2—6)։ Պակուվիոսի հաղթանակն ունեցավ նաև ուրիշ հետևանք. նշանակալիորեն ուժեղացան հակահռոմեական միտումները։ Համաձայն Լիվիոսի պատմածի (23, 4, 7—8), անմիջական խզումից Կապուային ետ էր պահում միայն այն, որ Կապուայի արիստոկրատական շատ ընտանիքներ խնամիական կապերով կապված էին Հռոմի հետ, նաև այն, որ կապուացիների որոշ մասը, այդ թվում առավել ականավոր տոհմերից 300 հեծյալ, գտնվում էին հռոմեական բանակում և կայազորային ծառայություն էին կատարում Սիցիլիայում։

Նրանց ծնողների ու հարազատների պահանջով, դրում է Լիվիոսը (23, 5), կապուական կառավարությունը պատվիրակություն ուղարկեց կոնսուլ Գ. Տերենտիոս Վառոնի մոտ, որին նրանք հանդիպեցին Վենուսիայում։ Սակայն հետագայում տեղի ունեցածից պարզ երևում է, որ պատվիրակության նպատակն էր՝ սեփական աչքերով որոշել պարտության չափերը և համապատասխան վարքագիծ ընտրել իր քաղաքի համար։ Ինչպես երևում է, պլեբսի կամայականությունը հռոմեական իշխանության հանդեպ ունեցած արհամարհանքը, որի մասին պատմում է Լիվիոսը, կապուական նոր կառավարությանը չխանգարեցին ջանադիր կերպով կշռադատելու իր արտաքին-քաղաքական գործողությունները, փորձելու հաշվի առնել ուժերի իրական հարաբերակցությունը և բոլոր հնարավոր հետևանքները։

Վենուսիայում Գայոս Տերենտիոս Վառոնը պատվիրակների վրա թողեց արհամարհանքի արժանի մարդու տպավորություն։ Այդ տպավորությունն էլ ավելի ուժեղացավ այն ճառից հետո, որով Վառոնը դիմեց պատվիրակներին, որոնք, ինչպես պետք էր սպասել, ցավակցություն արտահայտեցին Կապուայի աղետի առթիվ, առաջարկելով (հակառակ դեպքում խոսակցությունը ընդհանրապես չէր կարող կայանալ) օգնություն։ Դատելով այն բանից, թե ինչպես է Լիվիոսը շարադրում Վառոնի ճառը, վերջինս անհրաժեշտ չհամարեց Կապուայից թաքցնել Հռոմի հիրավի հուսահատական կացությունը։ Հռոմայեցիները կորցրել են ամեն ինչ՝ բանակը, պարենամթերքը, դրամները, այնպես որ, դաշնակիցները պետք է ոչ այնքան օժանդակեն հռոմայեցիներին, որքան պատերազմ մղեն հռոմայեցիների փոխարեն, թշնամուց պաշտպանեն ընդհանուր հայրենիքը։ «Պատերազմը մղվում է ոչ թե սամնիացիների կամ էտրուսկների դեմ,— ասաց նա (մեջ ենք բերում Լիվիոսի շարադրանքը),— այնպես որ, եթե անգամ իշխանությունը խլվեր մեզանից, միևնույն է, այն մնալու էր Իտալիայում։ Թշնամին պունիկացի է, նույնիսկ ոչ աֆրիկական ծագումով, աշխարհի հեռավոր կողմերից, Օվկիանոսի նեղուցից (ի նկատի ունի Ջիբրալթարի նեղուցը— Ի. Կ.) ու Հերակլեսյան Սյուներից

[illegible] դարձնում է մի [illegible] որևէ օրենք, չի կարողանում ապրել մարդավարի, նույնիսկ գրեթե չի տիրապետում մարդկային խոսքին։ Նրանց, որ բնությամբ ու բնավորությամբ անգութ են ու վայրենի, զորավարն ավելի դաժանացրեց, կամուրջներ և ամբարտակներ կառուցելով մարդկային մարմնի կրծքերից և, որը նույնիսկ ասելը նողկալի է, վարժեցրեց սնվել մարդկային մսով։ Նրանց (որ սնվել են այդօրինակ սարսափելի սնունդով, որը շոշափելն իսկ ամոթալի է)՝ Աֆրիկայից և հատկապես Կարթագենից եկածներին տեսնել որպես տերերի, նրանցից ստանալ օրենքներ և հանդուրժել, որ Իտալիան դառնա նումիդիացիների ու մավրերի նահանգը,— բնիկ իտալացիներից ո՞ւմ մոտ դա գարշանք չի առաջացնի։ Կապուացիները կարող են տալ 20 հազար հետեւազորայիններ և 4000 հեծյալներ. նրանք ավելի քան բավական պարեն ու զինահանդերձանք ունեն, և եթե նրանք ելնեն Հաննիբալի դեմ, ապա Հռոմի իշխանությունը կփրկվի։ Հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ այս շարադրանքը ծագում է հռոմեական աննալներում տեղ գտած ավանդությունից և ընդհանուր գծերով համապատասխանում է հենց բանակցությունների բովանդակությանն ու հռոմեական կառավարության ընդունած ուղեգծին և հակակարթագենական այն պրոպագանդային, որը նա տանում էր Իտալիայում։

Պատգամավորները հաստատ համոզվեցին, որ Հռոմն ի վիճակի չէ պատերազմելու։ Կապուացիներին առաջարկվում էր իրենց ձեռքերով վերականգնել հռոմեական տիրապետության շենքը կասկածելի այն հիմքի վրա, որ վաղուց, ինչ-որ մի ժամանակ հռոմայեցիները պաշտպանել էին Կապուան սամնիացիներից և կապուացիների զգալի մասին իրենց մոտ քաղաքացիական իրավունքներ էին ընձեռել։ Սակայն սամնիացիները վաղուց արդեն վտանգավոր չէին, իսկ քաղաքացիական իրավունքները... Ի՞նչ արժեք կունենային քաղաքացիական իրավունքները, եթե այսօր կամ վաղը Հռոմը կործանվելու էր, և, միևնույն է, հարկ կլիներ գործ ունենալ Հաննիբալի հետ։

Վենուսիայից դեպի Կապուա վերադարձի ճանապարհին պատգամավորներից մեկը՝ Վիբիոս Վիբիոսը ճառեր ասաց, որոնք վճռապես հակադիր էին այն բանին, ինչին ձգտում էր. այժմ, ասաց նա, հասել է ժամանակը, երբ կապուացիները ոչ միայն կարող են վերադարձնել իրենցից մի ժամանակ հռոմայեցիների խլած հողերը, այլև Իտալիայում ձեռք բերել իշխանություն. Հաննիբալի հետ նրանք կարող են դաշինքի մեջ մտնել ուզած պայմաններում, իսկ պատերազմը վերջանալուց հետո, երբ Հաննիբալը հեռանա Աֆրիկա, Իտալիայում իշխանությունը պատկանելու է Կապուային (Լիվիոս, 23, 6, 1—2)։ Վիբիոս Վիբիոսն արտահայտում էր

ընդհանուր կարծիքը։ Պատվիրակների վերադառնալուց հետո Կապուայում հռոմեական գործը համարում էին արդեն տանուլ տված. պլեբսը և սենատի մեծամասնությունը ավելի վճռականորեն սկսեցին հակվել Կարթագենի հետ դաշինք կնքելուն, բայց սենատի որոշ անդամների ընդդիմադրության պատճառով գործը մի քանի օրով ձգձգվեց։ Հավանորեն խոսքը վերաբերում է Հռոմի կողմը հակված, ավելի ու ավելի նոսրացող արիստոկրատական խմբավորման (որին, դատելով Լիվիոսի հետագա պատմածից, գլխավորում էր Դեկիոս Մագիոսը) վերջին փորձերին, որոնց նպատակն էր թույլ չտալ, որ Հռոմի հետ խզում տեղի ունենա, կանխել բանակցությունները Հաննիբալի հետ։

Տիտոս Լիվիոսը (23, 6, 6—8) պատմում է, թե որոշ անալիստների երկերում ինքը գտել է պատմություն այն մասին, որ իբր Կապուան վերջնական վճիռ ընդունելուց առաջ պատվիրակություն է ուղարկել Հռոմ, խոստանալով օգնություն ցույց տալ՝ պարտադիր մի պայմանով, որ կոնսուլներից մեկը պետք է լիներ կապուացի։ Դրա հետևանքով ոչ միայն Իտալիայում, այլև բուն Հռոմում, իշխանությունը Հռոմի ձեռքից դուրս կգար և կանցներ Կապուային։ Հռոմեական կառավարությունը, զայրացած իր համար բոլորովին անընդունելի այդ պահանջից, պատվիրակությանը հրամայեց անմիջապես հեռանալ Հռոմից։ Լիվիոսն այս ավանդությունը համարում է ոչ արժանահավատ, քանի որ այդ մասին ոչինչ չեն ասում Կելիոս Անտիպատրոսը և մյուս անալիստները, որոնց նա վստահում է։ Սակայն տվյալ փաստի մեջ անհնարին ոչինչ չկա։ Բացառված չէր, որ Պակուվիոսի կառավարությունը որոշել էր խզումից առաջ հռոմայեցիներից առավելագույն չափով գին կորզել իր համագործակցության համար. պատահական չէր, որ նրանք հռոմայեցիներից պահանջեցին այն նույնը, ինչ հույս ունեին ստանալ Հաննիբալից։ Հնարավոր է նաև, որ Հռոմ պատվիրակություն ուղարկելը պետք է Հաննիբալին ստիպեր ավելի զիջողամիտ լինել կապուացի պատվիրակների հետ ունենալիք բանակցություններում[97]։

Համենայն դեպս, մի քանի օր հապաղելով, թերևս Հռոմից պատվիրակների վերադարձին սպասելով, կապուական կառավարությունը իր ներկայացուցիչներին ուղարկեց Հաննիբալի մոտ։

Այսպիսով, քաղաքական պայքարը Կապուայում ավարտվեց Հաննիբալի համար հույժ բարեհաջող ձևով. Իտալիայի հարավում ամենահզոր քաղաքներից մեկում հաղթանակեց դեմոկրատական շարժման վրա հենվող խմբակցությունը, որը թշնամի էր Հռոմին. Հաննիբալի ճամբար եկան այդ քաղաքի պատվիրակները՝ դաշինքի կամավոր առաջարկով։ Փույթ չէր, որ Կապուան, գլխավորելով հակահռոմեական շարժումը, հաղթանա-

կից հետո հավակնելու էր իշխել Ապենինյան թերակղզում։ Նախ կարթագենցիների գերագույն իշխանության պահպանման պայմաններում դա ինքնուրույնության այնքան էլ սարսափելի չէր, և երկրորդ, հաղթանակից հետո կերևար, թե ինչպես պետք էր վարվել Կապուայի ու նրա հավակնությունների նկատմամբ։ Առայժմ Հաննիբալի համար կարևոր էր ուղած միջոցներով ամրապնդել իր քաղաքական հաջողությունը, զարմանալի չէ, որ նա փաստորեն կապուացիներին տվեց այն ամենը, ինչ նրանք կամենում էին։ Կապուայի հետ Հաննիբալի կնքած դաշնագրի պայմանների համաձայն (Լիվիոս, 23, 7, 1—2), կարթագենցի ոչ մի զորապետ կամ քաղաքացիական պաշտոնյա իշխանություն չուներ Կապուայի քաղաքացիների նկատմամբ, կապուացի ոչ մի քաղաքացու նրանք չէին կարող հարկադրել կատարելու զինվորական ծառայություն կամ պարհակներ. Կապուայում պահպանվում էին նրա սեփական օրենքներն ու մագիստրատները։ Դրանից զատ, Հաննիբալը խոստացավ կապուացիներին հանձնել 300 հռոմայեցի ռազմագերի, որոնց կարելի կլիներ փոխանակել 300 կապուացի հեծյալների հետ, որոնք, ինչպես արդեն ասվել է, Սիցիլիայում ծառայություն էին կատարում հռոմեական զորքերում։

Թվում էր, թե արդեն վերջնականապես և անդառնալիորեն Հռոմի հետ խզում տեղի ունեցավ։ Հռոմեական բոլոր այն քաղաքացիները, որոնք այդ պահին այս կամ այն պատճառով գտնվում էին Կապուայում, բռնվեցին և նետվեցին բաղնիքներ և այնտեղ հեղձամահ եղան անտանելի տապից (Լիվիոս, 23, 7, 3). նրանց կործանմամբ կապուացիները ամրապնդեցին հաղթական զորավարի հետ իրենց դաշինքը։

Այդ միջոցին Հաննիբալը անհրաժեշտ միջոցառումներ ձեռք առավ, որպեսզի Կապուայում տեղավորի իր զորքերը։ Երբ այդ մասին լուրը տարածվեց քաղաքում, Դեկիոս Մագիոսը հուսահատ ջանքերով փորձեց կանխել նորահայտ դաշնակիցների կողմից քաղաքի գրավումը. նա համաքաղաքացիներին հորդորեց թույլ չտալ Հաննիբալին Կապուա մտնելու։ Ավելի ուշ, երբ պունիկացիները գրավեցին այն, Դեկիոսը համառորեն խորհուրդ էր տալիս դուրս քշել նրանց կամ կոտորել։ Դեկիոսի ելույթները Հաննիբալին հայտնի դարձան, և նա պահանջեց, որպեսզի Դեկիոսը ներկայանա նրա մոտ՝ ճամբար, սակայն կապուացին հրաժարվեց. հենց նոր կնքված պայմանագրի համաձայն Հաննիբալը իշխանություն չուներ նրա նկատմամբ։ Այնժամ պունիկացին, որին ճանաչեցրել էին բոլոր այդ ձեռականությունները, կարգադրեց ձերբակալել և կապկպված բերել Դեկիոսին (Կապուայում այդ հրամանը չկատարվեց այնքան ժամանակ, մինչև որ այնտեղ հայտնվեց ինքը՝ Հաննիբալը) և մինչ այդ կապուական իշխանություններին հայտնեց, որ կամենում է քաղաք ժամանել։ Այնտեղ

նրան հանդիսավորապես դիմավորեցին։ Դեկիոս Մագիոսին արդեն ոչ ոք չէր ունկնդրում (Լիվիոս, 23, 7, 4—12)։

Հաջորդ օրը Հաննիբալի պահանջով հրավիրվեց Կապուայի սենատի նիստը, որտեղ կարթագենյան զորավարը հանդես եկավ ճառով։ Նրա հայտարարությունը նախատեսված էր, իհարկե, Կապուայի համար, բայց նրան ունկնդրեցին ոչ միայն կապուացիները. այդ ճառը ամբողջ Իտալիային ցույց տվեց, թե նրա համար ինչպիսի ճակատագիր է նախապատրաստում Կաննեի մոտ հաղթողը, ուստի այն ծրագրային էր և շատ տեսակետից՝ վճռական։ Շնորհակալություն հայտնելով կապուացիներին այն բանի համար, որ նրանք իր հետ ունեցած բարեկամությունը գերազանցեցին Հռոմի հետ ունեցած դաշինքից, Հաննիբալը խոստացավ, որ շուտով հենց Կապուան է գլխավորելու Իտալիան, այսինքն՝ դրավելու է Հռոմի տեղը, որ հռոմայեցիները, ինչպես նաև մյուսները, իրենց օրենքները արդեն պետք է ստանան Կապուայից (Լիվիոս, 23, 10, 1—2)։ Այս օրինակ արտահայտություններն, իհարկե, հաճելի էին Կապուայի կառավարությանը. պունիկացին պարզ ու աներկմտորեն հավաստեց, որ Իտալիայում տիրապետություն ունենալու վերաբերյալ նրանց երազանքը հույժ մոտիկ ապագայի գործ է, և փոխարենը նրանք պատրաստ էին ընդունելու Հաննիբալի յուրաքանչյուր պահանջը։ Այլ հարց է, թե ինչպես էին դրան վերաբերվում մյուս իտալիկները։ Նրանց առաջարկվեց միակ հեռանկարը՝ պայքարել հռոմեական գերիշխանության դեմ, հանուն Կապուայի գերիշխանության և Կարթագենի տիրապետության հաստատման։ Մենք մեր տրամադրության տակ չունենք ուղղակի տվյալներ այն մասին, թե իտալիկյան քաղաքներն ինչպես էին արձագանքում Կապուայում Հաննիբալի ձևակերպած ծրագրին։ Թվում է, սակայն, որ այն ընդդիմադրությունը, որին նա բախվում էր մեկ այս, մեկ այլ դեպքում, զգալիորեն բացատրվում է կապուացիներին Հաննիբալի տված խոստումների նկատմամբ նրանց բացասական վերաբերմունքով։

Միայն մի մարդ, շարունակեց այնուհետև Հաննիբալը (Լիվիոս, 23, 10, 3), պետք է հեռացվի կարթագենա-կապուական դաշնակցությունից՝ Դեկիոս Մագիոսը, որին նույնիսկ կամպանիացի չի կարելի անվանել. հռետորը պահանջեց, որպեսզի տեղնուտեղը, իր ներկայությամբ, սենատը գատապարտի Դեկիոսի վարքագիծը և հանձնի նրան կարթագենցիներին։ Հաննիբալի պահանջը կապուական իշխանությունների համար անսպասելի չէր. չէ՞ որ նա վաղուց էր պնդում, որ Դեկիոսը ձերբակալվի և հանձնվի իրեն, թեև, ինչպես երևում է, այն ժամանակ նրա ցանկությունները չկատարվեցին։ Ակնհայտ են ամենամերձավոր այն նպատակները, որոնց հետամուտ էր Հաննիբալը. նրան անհրաժեշտ էր Կապուայում լիովին

ամրապնդել հռոմեամետ խմբակցությունը և այդ միտումով հաշվեհարդար տեսնել Դեկիոս Մագիոսի նման առավել անհաշտ հակառակորդների հետ։ Հաննիբալին հազիվ թե հայտնի չլիներ, որ Դեկիոսի մերձավորագույն կուսակիցներից մեկը՝ Պակուվիոս Կալավիոսի որդին պատրաստվում էր ազատել իրեն և միայն Պակուվիոսի միջամտությունը պատանուն ստիպեց հրաժարվելու այդ դիտավորությունից (Լիվիոս, 23, 8, 7—9, 12)։ Դեկիոսի ճակատագիրը վճռվեց. կապուական սենատն ընդունեց այն որոշումը, որին հետամտում էր Հաննիբալը. դժբախտ սենատորին սկզբում ուղարկեցին պունիկյան ճամբար, ապա նավ նստեցրին, որպեսզի տեղափոխեն Կարթագեն։ Անխուսափելի մահից Դեկիոսին փրկեց պատահականությունը, սակայն Հաննիբալի հիմնական նպատակն իրագործվեց. Կարթագենի հանդեպ թշնամաբար տրամադրված կուսակցությանը հարկադրեցին լռել, իսկ նրա ճանաչված առաջնորդը հեռացվեց Կապուայից։

Դժվար է ասել, թե Հաննիբալի նմանօրինակ գործելակերպը որքանով էր արդարացված ու նպատակահարմար։ Դեկիոսի ճակատագիրը, համենայն դեպս, ցույց տվեց, որ այն պայմանագրերը, որ կնքել էր, կամ կարող էր կնքել Հաննիբալը, նրա համար ավելի մեծ նշանակություն չունեին, քան պապիրուսի մի կտորը, և որ իր քաղաքական նպատակներին հասնելու համար Հաննիբալը չէր տատանվի խախտել ուղած երդումը և պարտավորությունը։ Կապուայում Հաննիբալի ճառը և հատկապես Դեկիոս Մագիոսի նկատմամբ գործադրած բռնությունը չէին կարող բացասական հետևանքներ չունենալ նրա համար, չէին կարող որոշակի և բավականին ազդեցիկ շրջաններին չատիպել փորձելու խուսափել այնքան ծանր ու վտանգավոր դաշինքի բեռից, մանավանդ որ, ինչպես անսպասելիորեն հայտնի դարձավ, Հռոմն արդեն ամենևին էլ անպաշտպան չէր և սկսում էր ցույց տալ իր մագիլները։

Չնայած Կապուայի հետ ունեցած դաշինքին[98], Հաննիբալի դրությունը գնալով ավելի էր ծանրանում։ Առաջվա պես նա ելք չուներ դեպի ծովը. Նեապոլիսը նախկինի պես հրաժարվում էր նրա իշխանությունը ճանաչելուց (Լիվիոս, 23, 14, 5), իսկ Նոլայում նա հանդիպեց բոլորովին անսպասելի դիմադրության (Լիվիոս, 23, 14, 6—13)։ Հետևաբար Պոլիբիոսի այն ցուցումը (7, 1, 4, Սուիդաս, Καπύη), թե իբր Կապուայի ազդեցությամբ ուրիշ քաղաքներ ևս անցել են Հաննիբալի կողմը, ոչ լիովին է ճշգրիտ։ Հաննիբալի առաջ նախկինի պես ծառացած էր Հարավային Իտալիայի համար զինված պայքարի հեռանկարը։

Ինքնին հասկանալի է, որ պատրաստվելով Հռոմի դեմ պատերազմի նոր փուլին, հրապուրիչ առաջարկներով իր կողմը գրավելով, կամ ուժով հպատակեցնելով Հարավային Իտալիայի տարբեր հասարակությունները,

Հաննիբալը կարիք ուներ նոր օժանդակ զորամիավորումների։ Հենց այդ նպատակադրումով, որպեսզի կարթագենյան խորհրդին ապշեցնի փայլուն հաղթանակի վերաբերյալ տեղեկությամբ և հասնի այն բանին, որ Իտալիա ուղարկվեն նոր զորամիավորումներ, Հաննիբալը հայրենիք ուղարկեց իր եղբայր Մագոնին։ Տիտոս Լիվիոսը (23, 11, 7—13, 8) մանրամասն տեղեկություն է պահպանել և՛ խորհրդին Մագոնի ներկայացրած զեկույցի, և՛ վիճաբանությունների, և՛ այն մասին, թե խորհուրդն ի վերջո ինչ միջոցառումներ է ձեռնարկել։

Մագոնը, բնականաբար, ջանում էր իրերի դրությունը պատկերել Հաննիբալի համար առավել նպաստավոր լույսի տակ։ Նա պատերազմել էր վեց զորավարների դեմ, այդ թվում՝ չորս կոնսուլների, մեկ դիկտատորի և մեկ հեծելազորի պետի դեմ. կարթագենական զորքերը կոնսուլների վեց բանակների հետ խաչաձևել էին իրենց սրերը. չորս կոնսուլներից երկուսն սպանվել էին, մեկը փախել էր վիրավոր, իսկ մեկն էլ մի կերպ խուսափելով իր բանակի իսպառ ոչնչացումից, մարտադաշտից հազիվ դուրս էր տարել 50 հոգու. հեծելազորի պետը գլխովին ոչնչացվել էր. դիկտատորն ականավոր զորավար էր համարվում լոկ այն պատճառով, որ այնպես էլ չհամարձակվեց մարտի մեջ մտնել։ Ընդամենը թշնամին կորցրել էր 200 հազար սպանված և ավելի քան 50 հազար գերի. Բրուտիումը, Ապուլիան, Սամնիումի և Լուկանիայի մի մասը և, որ հատկապես կարևոր էր, Կամպանիան անցել էին Հաննիբալի կողմը։ Իր ասածները հաստատելու համար Մագոնը հրամայեց այն շենքի նախասրահը, որտեղ տեղի էր ունենում խորհրդի նիստը, թափել հեծյալների և սենատորների 3 միդիմնուս մատանիները։ Քանի որ Հաննիբալը պատերազմը վարում է տնից հեռու, թշնամական երկրում, շարունակեց Մագոնը, անցնելով իր հանձնարարության առավել փափկանկատ մասին, ծախսում է հսկայական քանակությամբ պարեն և դրամ, կենդանի ուժի կորուստներ է կրում այնքան ճակատամարտերում, որպեսզի ոչնչացնի թշնամուն, ուստի անհրաժեշտ է նրան ուղարկել օժանդակ զորամիավորումներ, իսկ ռազմիկներին՝ սննդամթերք ու դրամ։

Համընդհանուր ցնծությունը պատասխան էր Մագոնին, և միայն մի միջադեպ որոշ աննկարագրելի անհանգստություն մացրեց բերկրանքի արտահայտության այդ համերգի մեջ։ Հաննիբալի կողմնակիցներից մեկը՝ Հիմիլկոնը, կամենալով ավելի խորը խցել հակաբարկայական խմբավորման ղեկավար Հաննոնին, սկսեց կշտամբել նրան՝ նախկին ելույթների համար, երբ նա վճռապես դեմ էր արտահայտվում պատերազմին և նույնիսկ առաջարկում էր Հաննիբալին հանձնել հռոմայեցիներին։ Հաննոնը պարտք չմնաց։ Դատելով Լիվիոսի պատմածից, նա այժմ ասում էր, որ Հաննիբալի տարած հաղթանակներն, ըստ էության, անօգուտ են։ Հաղթողը նոր թշնամի պահանջում է զինվորներ, պարենամթերք ու դրամ, կարծես նա պարտված է և բոլորովին ձեռք չի բերել ռազմավար։ Հռոմի դաշնակից լատինական քաղաքներից ոչ մեկը չի անցել Հաննիբալի կողմը. հռոմեական կառավարությունը չի մտածում պայմանագիր կնքելու մասին (հմմտ. Վալ. Մաքս. մոտ, 7, 2, 16)։ Սակայն այդ ելույթների վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց։ Խորհուրդը որոշեց Հաննիբալին ուղարկել 4000 նումիդիական հեծյալ, 40 փիղ և դրամ։ Բացի այդ, Իսպանիա ուղարկվեց հատուկ գործակալ (Լիվիոսը նրան անվանում է դիկտատոր)՝ վարձկաններ հավաքագրելու նպատակով (20 հազար հետեւակորային և 4000 հեծյալ). վերջիններս պետք է համալրեին կարթագենական զորքը Պիրենեյան թերակղզում և Իտալիայում։

Ավելի ուշ Հասդրուբալ Բարկյանը, որ գլխավորում էր Իսպանիայում եղած կարթագենական զորքերը, կարգադրություն ստացավ շարժվել դեպի Իտալիա, սակայն հնարավոր չէր այդ հրամանը կատարել։

Մագոնի առաքելության հետևանքները, ինչպես տեսնում ենք, չէին համապատասխանում Հաննիբալի սպասումներին։ 4000 հեծյալը և 40 փիղն, իհարկե, մի կաթիլ էր ծովում, ասենք նաև, որ դրանք պետք էր հասցնել դեպի ծով ելք չունեցող Հաննիբալին։ Եվ բացի այդ, պունիկյան կառավարությունը չէր էլ շտապում կատարել իր որոշումները (Լիվիոս, 23, 14, 1)։ Ինչպես կտեսնենք առաջիկայում, Մագոնին հաջողվեց զգալիորեն ավելի քիչ զորայիններ հավաքել, քան այդ նախատեսվում էր խորհրդի որոշմամբ, սակայն, այնուամենայնիվ, նրանք չհասան Հաննիբալի ճամբարը։ Կարթագենական խորհրդի գործողությունները բացահայտորեն ցույց տվեցին, որ Հաննիբալն առանձնապես հույս չպետք է դնի իր սեփական պետության կողմից սպասվող օգնության վրա, որ նա առաջիկայում նույնպես պետք է հույս ակնկալի գերագանցապես իր բանակից ու դաշնակիցներից, եթե վերջիններիս հնարավոր լինի գտնել։ Մագոնի դեսպանության վհատեցուցիչ արդյունքները մի փոքր բարձրացրին նաև ուրիշ, էլ ավելի տհաճ հանգամանքի վրայի վարագույրը։ Չէ որ հակառակ լայն տարածում գտած տեսակետի, որը գրեթե դարձել է տափակ ու ծեծված ճշմարտություն, կարթագենական խորհուրդը հատկապես այդպիսի որոշումներ էր ընդունել ոչ այն պատճառով, որ վաճառականական հանրապետության անհեռատես կառավարությունը ժլատության, անընդունակության կամ թաքուն անբարյացակամության պատճառով չէր կամենում օգնություն ցույց տալ Հաննիբալին, նրան նետելով բախտի քմահաճույքին[99]։ Ընդհակառակը, դատելով նույնիսկ ըստ Տիտոս

Լիվիոսի, որը բնականաբար իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել է Հաննոնի ելույթի վրա, հենց Հաննիբալին օգնելու բարի կամքն ու ցանկությունը նույնիսկ ավելի քան բավական էր։ Չէր բավականացնում ուրիշ բան՝ նյութական միջոցներն այն բանի համար, որպեսզի այդ օգնությունը իսկապես արդյունավետ լիներ։ Իսկ դա նշանակում էր, որ ապագայում նույնպես Հաննիբալը հույս չպետք է տածեր Կարթագենի գործուն աջակցության նկատմամբ։

Հաննիբալին տագնապալի լուրեր էին հասնում նաև Իսպանիայից։ 216 թվականի պատերազմը (Լիվիոս, 23, 26—29) այնտեղ սկսվեց նրանից, որ դաշնակցային նավատորմը դավաճանեց կարթագենցիներին, և թշնամու կողմն անցած զորականները հակապունիկյան, թշնամական ելույթների դրդեցին տարտեսիններին, որոնք, ըստ երևույթին, VI դ. վերջին կարթագենցիների կողմից ջախջախված ու հնազանդեցված տարտեսսոսցիների անմիջական հետնորդներն էին։ Մի քանի փոքր ընդհարումներից հետո տարտեսինները կարողացան լուրջ հաջողության հասնել. նրանք գրավեցին Ասկուա քաղաքը։ Սակայն առաջին խոշոր հաղթանակն այնպիսի գլխապտույտի մեջ գցեց նրանց, որ Հալբը (ապստամբության առաջնորդներից մեկը) կորցրեց նրանց նկատմամբ ունեցած հսկողությունը, և Հասդրուբալ Բարկայանին հաջողվեց սկզբում օդակման մեջ առնել, իսկ այնուհետև ոչնչացնել անհոգությամբ դաշտերում ցրիվ եկած թշնամիներին։

Շուտով Հասդրուբալը կարթագենական խորհրդից հրաման ստացավ իր զորքը տանել Իտալիա և այնտեղ միանալ Հաննիբալին։ Պունիկյան կառավարության նմանօրինակ որոշման վերաբերյալ լուրերը արագությամբ տարածվեցին Իսպանիայում և, բնականաբար, այնտեղ առաջացրին հոմեամետ տրամադրությունների նոր վերելք։ Հենց այդ մասին Հասդրուբալը գրեց Կարթագեն. բավական է միայն, որ ինքը՝ Հասդրուբալը շարժվի դեպի հյուսիս և հասնի մինչև Իբեր, բովանդակ Իսպանիան կգտնա հոմեական. նա ո՛չ բանակ ունի և ո՛չ էլ հրամանատարներ, որպեսզի իր փոխարեն թողնի նրանց. եթե խորհուրդը թեկուզև ինչ-որ չափով անհանգստացած է Իսպանիայի ճակատագրով, ապա նա պետք է ուղարկի իրեն փոխարինող՝ ուժեղ զորքի հետ։ Այս դիմումը խորհրդի վրա թողեց այն տպավորությունը, ինչին ձգտում էր Հասդրուբալը։ Ճիշտ է, Իտալիա շարժվելու վերաբերյալ ավելի վաղ ստացած կարգադրությունը հաստատվեց (կարթագենական խորհուրդը,— գրում է Լիվիոսը,— իր հիմնական ուշադրությունը հատկացրեց Իտալիային, որտեղ վճռվում էր պատերազմի բախտը. իսպանական ռազմաճակատն, այնուամենայնիվ, համարվում էր երկրորդական), բայց վարձկան զորքերով և նավատորմիզով Իսպանիա ուղարկվեց Հիմիլկոնը։ Բոլոր հպատակ ցեղերից հավաքելով արտահերթ տուրքեր, Հասդրուբալը արշավանքի ելավ գեպի հյուսիս։

Պիրենեյան թերակղզում հռոմեական զորքերը գլխավորող եղբայրներ Պուբլիոս և Գնեոս Կորնելիոս Սկիպիոնները նույնպես իրենց լեգեոնները տարան դեպի Իբերի կողմը, միացան, անցան գետը և այնտեղ շարժվեցին Հասդրուբալի դեմ։ Կատաղի ճակատամարտում հաղթող հանդիսացան հռոմայեցիները. նրանք կարթագենական հետևազորին մասամբ կոտորեցին, մի մասին էլ ցանուցիր արեցին. պունիկացիների մավրիտանական և նումիդիական հեծելազորը փախուստի դիմեց, քշեց տարավ նաև փղերին։ Համաձայն Եվտրոպիոսի տվյալների (3, 11), այդ մարտում կարթագենցիները կորցրեցին 25 հազար սպանված և 10 հազար գերի ընկած։ Ինքը՝ Հասդրուբալը հաղիվ փրկվեց։

Հասդրուբալի անհաջողությունը ծանր անդրադարձավ Հաննիբալի ռազմաքաղաքական կացության վրա։ Այն ոչ միայն նորից հարցականի տակ դրեց Իսպանիայում Կարթագենի տիրապետությունը և ցույց տվեց Պիրենեյան թերակղզին հռոմայեցիներից մաքրելու՝ նրա անընդունակությունը. Իբերի մոտ տեղի ունեցած անցքերից հետո պարզ դարձավ, որ, համենայն դեպս, Հաննիբալը դեռևս հույս չի կարող դնել Իսպանիայից ակընկալվող օգնության վրա։ Նրան մնում էր ապավինել միայն իր սեփական ուժերին։ Չպետք է նվազեցնել նաև բարոյական գործոնի նշանակությունը։ Կաննեից հետո առաջին իսկ խոշոր ճակատամարտում Սկիպիոնների հաղթանակը ցույց տվեց, որ Հռոմը բոլորովին էլ մտադիր չէր հանձնվելու հաղթողների ողորմածությանը և հաջողությամբ սկսում էր ռազմական գործողությունների նոր փուլը։

II

Կաննեի մոտ կրած պարտության լուրը ցնցեց Հռոմին։ Քաղաքով մեկ լուրեր տարածվեցին, թե ամբողջ բանակը ոչնչացված է, սպանվել են կոնսուլները (Հռոմում դեռևս չգիտեին, որ Վառոնը կենդանի էր և ջանում էր փախստական գինվորներից ստեղծել զորամիավորմանը թեկուզ ինչ-որ չափով նման մի բան), գրեթե ամբողջ Իտալիան արդեն Հաննիբալի ձեռքում է, ոչ մի հռոմայեցի զորական չի մնացել, ոչ ոք չկա, որ պաշտպանի քաղաքը։ Դժբախտության իրական չափերը դեռևս պարզ չէին. բոլոր տներում սգում էին սպանվածներին ու ողջերին։ Չէին տարակուսում, որ Հաննիբալն անմիջապես կանցնի Հռոմի պաշարմանը, քանի որ

պատերազմն ավարտելու համար մնում էր միայն այդ անել (Լիվիոս, 22. 55, 2)։ Այդ պայմաններում պրետորներ Պուբլիոս Ֆուրիոս Ֆիլոսը և Մարկոս Պոմպոնիոսը սենատի նիստ գումարեցին, որպեսզի քննարկեն միայն մեկ հարց՝ ինչպես պաշտպանել քաղաքը։ Լիվիոսը (22, 55, 3) նկատում է, որ հրապարակից լսվող լացող կանանց ողբ ու կականը խլացնում էին սենատորների ձայները։ Վերջերս դիկտատոր դարձած Քվինտոս Ֆաբիոս Մաքսիմոսը առաջարկեց Ապիյան և Լատինական ճանապարհներով ուղարկել հեծյալների՝ հարցուփորձով իմանալու, թե ինչ վիճակում են կոնսուլներն ու բանակը, որտե՞ղ է Հաննիբալը և ի՞նչ է նա մտադիր անելու, իսկ բուն քաղաքում հաստատել խաղաղություն, կանանց արգելել երևալու հասարակական վայրերում, դադարեցնել ազգականների վրա սգալը, լրարերներին ուղարկել պրետորների մոտ, քաղաքից ոչ ոքի դուրս չթողնել, քաղաքացիները թող նստեն տներում և սպասեն իրենց մերձավորների ճակատագրի վերաբերյալ լուրերին (Լիվիոս, 22, 55, 4—8, Զոնարաս, 9, 2)։

Որոշեցին այդպես էլ անել, սակայն նիստից անմիջապես հետո Հռոմ հասավ Վառոնի զեկույցը, որը սենատին հնարավորություն տվեց ավելի ճշգրտորեն պատկերացնել աղետի չափերը և որոշել, թե ինչ միջոցառումներով պետք է վերականգնել պետության ուժերը պայքարը շարունակելու համար։ Պետք է ասել, որ ահավոր ջարդից փրկված զորականների մեջ ևս խուճապ էր տիրում. նույնիսկ մտադրություն առաջացավ թողնել Իտալիան և փախչել որևէ թագավորի մոտ, այնտեղ զինվորական ծառայության վարձվելու համար։ Այդ ձեռնարկության նախաձեռնողին անվանում են Լուկիոս Կեկիլիոս Մետելլոսն, որը սերում էր Կեկելիոս Մետելլոսների տոհմից. վերջիններս հայտնի էին իրենց հակադեմոկրատական տրամադրություններով։ Միայն Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն-կրտսերի՝ այն ժամանակ դեռևս պատանի զինվորական տրիբունի, իսկ ապագայում՝ Հաննիբալին հաղթողի միջամտությունը կանխեց այդ մտահղացման իրագործումը (Լիվիոս, 22, 53, Դիոն Կասս., Ֆրագմ., 28, Օրոսիոս, 4, 16, 6, Նշան., 46, 5—6)։ Ողջ մնացած և գերի չընկած հռոմեական բոլոր զորականները հավաքվեցին Վենուսիայում, որտեղ էր գտնվում նաև կոնսուլը, ինչպես և Կանուսիումում։ Վերջիվերջո Վառոնը նույնպես իր շուրջը հավաքված բոլոր զինվորների հետ անցավ Կանուսիում (Լիվիոս, 22, 52—54)։ Վառոնը սենատին գրեց, որ իր մոտ հավաքվել է մինչև 10 հազար զորական, որոնք, սակայն, կատարելապես անկազմակերպ են, իսկ պունիկացին նստել է Կաննեի մոտ, հաշվում է ռազմասավարը և առևտուր է անում։ Հռոմ ուղարկված նամակի հետ տեղ հասան կորուստների վերաբերյալ լուրերը, և քաղաքում տիրապետեց սուգը. հարկ եղավ

նույնիսկ վերացնել Կերերայի պատվին կատարվող ամենամյա տոնախմբությունները, քանի որ դրանց չէին կարող մասնակցել սգի մեջ ընկղմված մարդիկ։ Որպեսզի թույլ չտա վերացնելու նաև կրոնական մյուս արարողությունները, սենատը սպանվածների համար արվող սուգը սահմանափակեց մինչև 30 օր (Լիվիոս, 22, 56, 2—5)։

Ընդհանրապես սենատն իր կարևորագույն խնդիրներից մեկն էր համարում աստվածների ողորմածությունը շարժելը, այնկողմնային ուժերի միջոցով հաղթանակ ապահովելը։ Հենց 216 թ. երկու վեստալուհիներ՝ Օպիմիան և Ֆլորոնիան բռնվեցին անհավատարմության մեջ, և բոլորն այդ փաստի մեջ տեսան չափազանց վատ նախանշան, նույնիսկ մեղք, որի պատճառով հռոմեական ժողովրդի վրա թափվեց աստվածների զայրույթը։ Նրանցից մեկն, ըստ սովորության, թաղվեց հողի մեջ Կոլինիումյան դարպասների մոտ, իսկ մյուսը, շպասելով մահապատժի, ինքնասպանություն գործեց։ Ֆլորոնիայի սիրեցյալին՝ ոմն Լուկիոս Կանտիլիոսի, որը գրագրի պաշտոն էր զբաղեցնում մեծ պոնտիֆեքսի մոտ, վերջինս իր իսկ ձեռքերով, ժողովրդական ժողովում սաստիկ ծեծելով, հասցրեց մահվան։ Քվինտոս Ֆաբիոս Պիկտորին՝ դիկտատորի ազգականին և հետագայում Պունիկյան II պատերազմի պատմագիրներից մեկին, սենատն ուղարկեց դելֆյան պատգամախոսի մոտ, հարցում անելու, թե հռոմայեցիներն ինչպիսի՞ մաղթանքներով ու զոհաբերություններով կարող են շարժել աստվածների ողորմածությունը, և ինչպիսի՞ն է լինելու այդքան մեծ արհավիրքների վերջը։ Ճակատագրերի գրքի ցուցումով կատարվեցին հատուկ, այդ թվում նաև մարդկանց զոհաբերություններ (Լիվիոս, 22, 57, 2—6)։ Պետք է ասել, որ ինչքանով որ կարելի է այդ մասին դատել, նմանօրինակ զոհամատուցումները Հռոմում սովորաբար կիրառվում էին արտակարգ հանգամանքներում։ Այն, մասնավորապես, տեղի ունեցավ 226 թ., երբ սպասում էին գալլերի արշավանքին (Օրոսիոս, 4, 13,3, Պլուտ., Մարկ., 3), ինչպես նաև 114 թ. վեստալուհիների կողմից իրենց ուխտը խախտելու առնչությամբ (Պլուտ., Հռոմ. գործ., 83), որի պատճառով Հռոմում ամեն տեսակի արհավիրքների էին սպասում[100]։

Քվինտոս Փաբիոս Պիկտորի առաջարկությունը բարենպաստ արդյունքներ ընձեռեց հռոմայեցիներին։ Պատգամախոսը թվեց այն աստվածներին ու աստվածուհիներին, որոնց անհրաժեշտ էր զոհեր մատուցել, ցույց տվեց, թե ինչպես պետք է այդ անել և ապա ավելացրեց. «Եթե դուք, հռոմայեցիներ՝ այդպես վարվեք, ձեր դրությունը կբարելավվի, Կիբեբեանա, ձեր պետությունը կընկնի բարեհաջող վիճակի մեջ, և պատերազմում հաղթանակը բաժին կընկնի հռոմեական ժողովրդին։ Երբ ձեր պետության գործերը լավ ընթանան, և նա փոկվի, հասնելով հաջո-

զության, նվերներ կուղարկեք պյութիական Ապոլլոնին, կպատվեք ռազմաավարով, դրա վաճառքից ձեռք բերված դրամով, սպառազինությամբ. խուսափեցեք անզուսպ զվարճությունից»։ Հենց այնտեղ՝ Դելֆիքում Պիկտորը բոլոր աստվածներին զոհ մատուցեց խունկ և գինի ու, վրայից չհանելով դափնեպսակը, որով նա կատարում էր զոհաբերությունները, մեկնեց Հռոմ։ Այնտեղ նա պսակ դրեց Ապոլլոնի զոհասեղանին։ Սենատն որոշմամբ անմիջապես կատարվեցին բոլոր մաղթանքներն ու զոհաբերությունները (Լիվիոս, 23, 11, 1—6)։

Այդ գործողությունները, որոնք դարաշրջանի պատկերացումների համաձայն, երաշխավորում էին աստվածների բարյացակամությունն ու օժանդակությունը և հատկապես ապահովում կանխագուշակումը գալիք հաղթանակի, որում ոչ ոք չէր համարձակվի կասկածել, պետք է թողնեին Հռոմին անհրաժեշտ բարոյաքաղաքական ներգործություն. իրենց՝ հռոմայեցիներին, պետք է հավատ ներշնչեին թշնամու նկատմամբ անխուսափելի վերջնական հաղթանակի նկատմամբ, Հաննիբալի զինվորներին, որոնց, իհարկե, հասել էին Պիկտորի առաքելության և նրա արդյունքների վերաբերյալ լուրերը, պետք է համոզեին անխուսափելի պարտության մեջ, այն բանում, որ աստվածները բացահայտորեն անբարեհաճ են նրանց զորավարի և նրա ձեռնարկման նկատմամբ, իսկ Հռոմի դաշնակիցներին ետ պետք է պահեին Կարթագենի կողմն անմիջապես անցնելուց։ Դելֆյան պատգամախոսի բռնած դիրքը քաղաքական ազդու ցույց էր հօգուտ Հռոմի։ Այն ցույց տվեց, որ Կաննեում պատերազմը չի ավարտվել, և որ դելֆյան քրմությունը չի կասկածում Հռոմի համար պատերազմի բարեհաջող ելքին։ Հռոմեական կառավարությունը կամենում էր պահպանել գոնե հելլենական աշխարհի չեզոքությունը։ Հենց դրանով է բացատրվում հատկապես հունական պատգամախոսին՝ ամենահեղինակավորներից մեկին դիմելը, ի շրջանցումն իտալական սրբություններին։ Պյութիայի կանխագուշակումներն, անկասկած, բարենպաստ ազդեցություն էին թողնելու։ Քվինտոս Փաբիոս Պիկտորի դեսպանության արդյունքները Կաննեից հետո Հռոմեական կառավարության ունեցած առաջին և հույժ կարևոր քաղաքական հաջողությունն էին։

Հանգամանքները արագ ու վճռական գործողություններ էին պահանջում նաև այլ ուղղությամբ։ Չէր կարելի կորցնել այն ժամանակը, որը Հաննիբալը վատնեց Հարավային Իտալիայում, մանավանդ որ Սիցիլիայից պրետոր Տիտոս Օտակիլիոսից զեկույց ստացվեց կղզում կարթագենական նավատորմի՝ Հռոմի դիրքերին սպառնացող գործողությունների մասին։ Եթե սենատը, գրում էր Օտակիլիոսը, մտադիր է պաշտպանել Սիցիլիան, պետք է դարձյալ ուղարկել լրացուցիչ նավեր (Լիվիոս, 22, 56, 6—8)։ Սակայն սենատն իր հիմնական ուշադրությունը հատկացրեց բուն Իտալիային և Օստիայում գտնվող հռոմեական նավատորմի հրամանատար պրետոր Մարկոս Կլավդիոս Մարկելլոսին կարգադրեց մեկնել դեպի Կանուսիում՝ հռոմեական բանակի մնացորդների մոտ և տեղեկանալ Վառոնից ընդունել հրամանատարությունը։ Այդ նշանակումը սաստկարգ դիրքեր մղեց Կլավդիոսներին, որոնք տեսական ժամանակաշրջանում իրենց ձեռքերում կենտրոնացրին անմիջականորեն Հաննիբալի դեմ գործող բանակների հրամանատարությունը։ Վառոնին առաջարկվեց Հռոմ վերադառնալ, հենց որ դա հնարավոր դառնար՝ առանց պետության շահերին վնասելու։ Երբ Վառոնը ժամանեց քաղաք, նրան դիմավորեց խուռներամ ժողովուրդը և շնորհակալ եղավ այն բանի համար, որ նա հուսակորույս չեղավ պետությունը փրկելու խնդրում. դրանով իսկ սենատը ցույց տվեց հռոմեական ժողովրդի միասնությունը և պետության գոյությանն իսկ սպառնացող ահեղ վտանգին դեմ-հանդիման «կուսակցական» և այլ երկպառակությունները մոռանալը[101]։ Պաշտպանության կազմակերպման, և ամենից առաջ զինվորական նոր հավաքագրումներ հավաքելու համար, սենատը դիկտատոր նշանակեց Մարկոս Յունիոս Պերոսին, նրա մոտ հեծելազորի պետ կարգելով Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսին։ Բանակի համար այժմ ցուցակագրում էին նույնիսկ տասնյոթ տարեկաններին, իսկ երբեմն՝ ավելի փոքրերի։ Այդպես հավաքեցին 4 լեգեոն հետևակազորային և 1000 հեծյալ։ Պետության հաշվին փրկագնվեց և հռոմեական զորքի մեջ ընդունվեց 8000 գերուկ։ Բոլոր այս զինվորներին սպառազինելու համար օգտագործվեցին բոլոր պաշարները, այդ թվում ռազմաավարային զենքը, որը նվիրված էր աստվածներին և պահվում էր տաճարներում ու սյունասրահներում (Լիվիոս, 22, 57, 9—12)։ Բացի այդ, կալանված հանցագործներին և անվճարունակ պարտապաններին հնարավորություն տրվեց բանակ ընդունվելու՝ պատժից կամ պարտավճարումից ազատվելու հեռանկարով։ Նրանց (6000 հոգու) նույնպես զինեցին ռազմաավարային գալլական զենքով։ Այսպիսով հռոմեական կառավարությունն իր տրամադրության տակ ուներ ընդամենը 25 հազար զորական (Լիվիոս, 23, 14, 3—4, Զոնարաս, 9, 2)։

Այդ միջոցին դժվար ու նրբանկատ խնդիր էր ծառացել սենատի առաջ։ Անհրաժեշտ էր լուծել Կաննեից հետո Հաննիբալի մոտ գերի մնացած հռոմայեցիների ճակատագրին առնչվող խնդիրը։ Ինչպես արդեն ասվել է, Հաննիբալը գերիներին թույլ տվեց իրենց միջից ընտրելու տասը հոգու և նրանց ուղարկել Հռոմ՝ բանակցությունների համար։ Տիտոս

Լիվիոսը բերում է երկու պատում այդ պատվիրակության և այն մասին, թե ինչպես էր Հռոմում տեղի ունեցել հարցի քննարկումը։

Դրանցից մեկի համաձայն (22, 58, 5—61, 4), իրադարձությունները հետևյալ կերպ են ծավալվել։ Երբ պատվիրակները մեկնեցին հայրենիք, նրանցից մեկը (բոլորովին ոչ հռոմեական կերտվածքի մարդ, խրատական տոնով նկատում է Լիվիոսը) վերադարձավ կարթագենական ճամբար, այն պատրվակով, որ ինքն այնտեղ ինչ-որ իր է մոռացել, ապա հասավ իր ընկերներին, որոնք շտապում էին Հռոմ։ Այստեղ իրենց մերձավորների ճակատագրի որոշմանը երկյուղով և հուզմունքով սպասող մարդկանց խմբերով շրջապատված սենատի նիստում իշխող էր Տիտոս Մանլիոս Տորկվատոսի ծայրահեղորեն խստաբարո կարծիքը. որոշվեց հրաժարվել գերիների փրկագնումից, և դեսպանները վերադարձան Հաննիբալի ճամբարը։ Նրանցից մեկին, որը համարելով, թե իբր շինծու վերադարձը իրեն ազատում է երդումից, այն է փորձում էր մնալ Հռոմում, սենատը հրամայեց ձերբակալել և պահակների հսկողության տակ հասցնել թշնամու մոտ։

Լիվիոսի մյուս պատումի համաձայն (22, 61, 5—10), սկզբնապես գերիներից Հռոմ ներկայացան տասը պատվիրակներ, և սենատը երկար ժամանակ տատանվում էր, թե պե՞տք է արդյոք նրանց քաղաք թողնել. ի վերջո որոշեցին թույլ տալ նրանց մտնելու քաղաքի դարպասներից ներս, բայց նրանց պատճառով սենատի նիստ չանել։ Բանակցությունները խիստ ձգձգվեցին, և Հռոմ ժամանեց դարձյալ երեք գերի՝ Լուկիոս Սկրիբոնիոսը, Գայոս Կալպուրնիոսը և Լուկիոս Մանլիոսը (եթե այս պատումը համապատասխանում է իրականությանը, լրացուցիչ պատվիրակություն ուղարկելու փաստն ինքնին կարող է վկայել ապշեցուցիչ այն հաստատակամության մասին, որով Հաննիբալը հետամտում էր Կաննեից հետո դադարեցնել Հռոմի դեմ պատերազմը)։ Միայն դրանից հետո, ժողովրդական տրիբուններից մեկը՝ Լ. Սկրիբոնիոսի ազգականը, սենատում դրեց գերիների փրկագնման հարցը։ Սենատը մերժեց։ Վերջին երեք պատվիրակները (Սկրիբոնիոսը, Կալպուրնիոսը և Մանլիոսը) վերադարձան Հաննիբալի մոտ, իսկ առաջին տասը մնացին. ուղևորվելիս նրանք ճանապարհից վերադարձել էին պունիկյան ճամբարը, իբրև թե գերիների ցուցակն ստուգելու համար. այժմ նրանք իրենց ազատ էին համարում պատվիրակության անհաջող ելքի դեպքում վերադառնալու վերաբերյալ երդմամբ իրենց ստանձնած պարտավորությունից։ Նրանց ճակատագրի շուրջը սենատում բուռն վիճաբանություններ տեղի ունեցան, և ձայների չնչին մեծամասնությամբ նրանց թույլ տրվեց մնալ։ Սակայն այդ մարդկանց վիճակն, այնուամենայնիվ, աննախանձելի էր. ցենզորները նրանց

[illegible] էին նկատողություններով, տուգանքներով, այնպես որ նրանցից [illegible] գերադասում էին ինքնասպան լինել, իսկ մյուսները վախենում էին տանից դուրս գալ (հմմտ. Զոնարասի մոտ, 9, 2)։ Ըստ Ավլոս Գելլիոսի (Գելլ., 6, 18), որը վկայակոչում է Կորնելիոս Նեպոսին, տասը պատվիրակներից Հռոմում մնացին երկուսը. սրանք ավելի ուշ ցենզորների կողմից ենթարկվեցին ճնշումների. սենատում քննարկվեց նրանց թշնամուն հանձնելու վերաբերյալ հարցը, սակայն ձայների մեծամասնությամբ այդ առաջարկը մերժվեց։

Այս նյութի վերաբերյալ պատումի մեկ այլ տարբերակ կա Ապպիանոսի մոտ (Ապպ., Հաննիբ., 28). գերիները, համաձայն այդ ավանդության, Հռոմ ուղարկեցին երեք պատվիրակների՝ Գնեոս Սեմպրոնիոսի գլխավորությամբ. սենատը ազգականներին թույլ չտվեց փրկավճարը մուծել և այդպիսով հրաժարվեց վավերացնել այն անձանց ազատագրումը, ովքեր Կաննեից հետո մնացել էին Հաննիբալի իշխանության տակ։ Պունիկացին, կատաղության մեջ ընկնելով, նրանց մարմիններով փակեց Վերգելլոս գետի առաջը և այդ կամրջի վրայով տեղափոխեց իր զինվորներին (հմմտ. Վալ. Մաքս. մոտ., 9, 2, 2), իսկ ամենից ակնավորներին ստիպեց կռվել, հորը՝ որդու, եղբորը՝ եղբոր դեմ, ի զվարճություն լիբիացիների (հմմտ. Զոնարասի մոտ, 9, 2)։

Դիոն Կասսիոսի բնագիրը (Ֆրագմ., 36) պահպանել է մյուս մասերից առանձնացված մի ավանդություն. հռոմայեցիները, ըստ նրա խոսքերի, բանակցություններ էին վարում Հաննիբալի հետ, պահանջելով վերադարձնել գերիներին, բայց հրաժարվում էին փոխանակությունից և մանավանդ փրկագնումից։ Այս աղբյուրը չի հիշում գերիների պատվիրակության մասին, սակայն պետք է ի նկատի առնել, որ մեր առջև լոկ մի հատված է, և ոչ թե ամբողջական պատումը։

Արդեն Լիվիոսը (22, 61, 10) մելամաղձորեն նշում էր, որ կարելի է միայն զարմանալ պատմագիրների միջև եղած այդօրինակ տարակարծության վրա, գտնելով, որ ոչ մի միջոց չկա որոշելու համար, թե որ պատումն է հավաստի։ Մենք ավելի լավ վիճակում չենք։ Առայժմ մենք չունենք այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեին նախապատվություն տալու այդ պատումներից մեկնումեկին։ Համենայն դեպս, հավաստի է մի բան. Հաննիբալը հռոմեական կառավարությանն առաջարկեց փրկագնել գերիներին և դրանով սկսել խաղաղ բանակցությունների նախապատրաստությունը (այդ միտքն ուղղակիորեն չէր արտահայտվում, բայց, անկասկած, հասկացվում էր), իսկ սենատը որոշակիորեն հրաժարվեց գերիներին փրկագնելուց, դրանով իսկ ցուցադրելով իր անհաշտ դիրքավորումը[102], և, եթե հավատանք Դիոն Կասսիոսին,

նույնիսկ արեց բացարձակապես անընդունելի առաջարկներ (այնպես որ, ասես Հռոմը պարտված չէր), գիտակցաբար դիմելով բանակցությունների վիժեցմանը։

Հաննիբալի կողմից իրեն ընձեռած ժամանակից լավ օգտվող սենատի ձեռնարկած վճռական միջոցառումները հռոմայեցիներին թույլ տվեցին շուտափույթ խառնվելու Իտալիայի հարավում ընթացող պայքարին։

III

Մինչ այդ, Հաննիբալն իր զորքերով մտավ Նոլային պատկանող տարածքը։ Եթե դատենք ըստ Լիվիոսի պատմածի (23, 14), նա հույս ուներ, որ առանց մարտի իրեն կհաջողվի գրավել նաև այդ քաղաքը, մանավանդ որ ժողովրդական զանգվածները, երկյուղ կրելով իրենց դաշտերի ու կենդանի քարշուժի ոչնչացումից, որն անխուսափելիորեն հետևելու էր պաշարմանը, համառորեն պահանջում էին լուծել Հռոմի հետ ունեցած դաշինքը և անցնել կարթագենցիների կողմը։ Միայն տեղի ավագանին (սենատն, ինչպես գրում է Լիվիոսը) էր ձգտում պահպանել Հռոմի հետ նախկինում ունեցած հարաբերությունները, հավանաբար այն պատճառով, որ վերջինիս տիրապետությունն ապահովում էր Նոլայում արիստոկրատական շրջանների իշխանությունը։ Պլեբսի վրդովմունքն այնաստիճան մեծ էր (Պլուտարքոսը (Պլուտ., Մարկ., 10) նույնիսկ խոսում է ուղղակի ապստամբության մասին), որ սենատը վախեցավ որևէ բացահայտ քայլ ձեռնարկել։ Դեռ ավելին. նա հայտարարեց, որ պատրաստ է Հաննիբալի հետ պայմանագիր կնքելու։ Անհրաժեշտ է միայն ժամանակ, որպեսզի համաձայնության համար մշակվեն ընդունելի պայմաններ։ Թվում էր, թե Նոլայում կրկնվում էր այն ամենը, ինչ արդեն տեղի էր ունեցել Կապուայում. իշխանությունն անցել էր ժողովրդի ձեռքը, արիստոկրատիան կորցրել էր ամեն մի աղդեցություն և սարսափով համակված՝ հնազանդությամբ բավարարում էր նրա պահանջները։ Ամեն ժամ Հաննիբալը կարող էր իր ճամբարում սպասել Նոլայի պատվիրակներին՝ քաղաք մտնելու հրավերով։

Սակայն ամեն ինչ այլ կերպ տեղի ունեցավ։ Բացահայտորեն տեղի տալով պլեբսի ցանկությունների առաջ և պատրաստակամություն հայտնելով համաձայնվել Հաննիբալի հետ, Նոլայի սենատը գաղտնի պատվիրակություն ուղարկեց, սակայն ոչ թե պունիկյան զորավարի մոտ, այլ Կասիլինում, որտեղ կար հռոմեական զորք՝ մասամբ հավաքված Վառոնի կողմից, մասամբ Օստիայից ուղարկված Կասիլինում, որտեղ հենց նոր էր ժամանել նոր հրամանատարը՝ պրետոր Մարկոս Կլավդիոս Մարկելլոսը։ Նոլայի սենատի պատվիրակները Մարկելլոսին հայտնեցին, որ քաղաքին վտանգ է սպառնում. Հաննիբալն արդեն Նոլային պատկանող տարածքում է. պլեբսը ձգտում է դաշնակցել նրա հետ, և սենատին միայն ցանկու համաձայնությամբ հնարավոր եղավ հետաձգել վերջնական որոշման ընդունումը։ Մարկելլոսն առաջարկեց հետագայում նույնպես գործել նույն ոգով, իսկ որոշ ժամանակ հետո, ընթանալով լեռնային ճանապարհներով, անձամբ իր լեգեոններով ժամանեց Նոլա։

Սպասվում էր Իտալիայի սահմաններում Կաննեից հետո հռոմայեցիների առաջին ընդհարումը կարթագենցիների հետ։ Ճիշտ է, տեղեկանալով հռոմեական զորքերի ժամանման մասին, Հաննիբալը որոշեց խուսափել մարտից և մեկնեց դեպի Նեապոլիս, որպեսզի մեկ անգամ ևս փորձի տիրանալու այդ կարևորագույն ծովափնյա քաղաքին։ Սակայն այդ պահին Նեապոլիսում հաստատվել էր տեղական իշխանությունների կողմից հրավիրված հռոմեական կայազորը՝ Մարկոս Յունիոս Սիլանոսի գլխավորությամբ, և Հաննիբալը, չհամարձակվելով պաշարել քաղաքը, նահանջեց դեպի Նուկերիա։ Այնտեղ պաշարելով քաղաքը, իր զինվորներին մշտապես գրոհի նետելով նրա ամրությունների դեմ և ապարդյուն ջանքերով փորձելով հաշտության բանակցություններ սկսել քաղաքացիների հետ, պունիկյան զորավարը վերջապես որոշ հաջողության հասավ. դաժան սովը Նուկերիայի բնակիչներին ստիպեց հանձնվել հաղթողի ողորմածությանը։ Անդեն, մի տակ հագուստով նրանք լքեցին քաղաքի պարիսպները և, արհամարհելով տեղում մնալու վերաբերյալ Հաննիբալի առաջարկները, հեռացան կամպանիական ուրիշ քաղաքներ, առավելապես Նոլա և Նեապոլիս (Լիվիոս, 23, 15, 1—6)։ Սակայն բոլորին չէր, հավանորեն, որ հաջողվեց խուսափել հաշվեհարդարից։ Ապպիանոսի (Ապպ., Լիբ., 63) և Դիոն Կասսիոսի (Ֆրագմ., 30) տվյալների համաձայն, երբ Նուկերիայի բնակիչները դուրս եկան քաղաքից, կարթագենցիները, բռնելով տեղացի սենատորներին, քշեցին նրանց բաղնիք և այրեցին, անշուշտ այն պատճառով, որ Նուկերիայի սենատը դեմ էր դուրս գալ Հաննիբալի հետ համաձայնություն կնքելուն[103]։ Քաղաքից հեռացող անդեն պլեբեյներին նիզակներով խողխողում էին ճանապարհին (հմմտ. նաև Զոնարասի մոտ, 9, 2)։

Թեպետև Հաննիբալը միաժամանակ մեկնեց Նեապոլիսի կողմը, իսկ այնուհետև պաշարեց և գրոհեց Նուկերիան, Մարկելլոսի դրությունը Նոլայում հույժ ծանր էր։ Հռոմեական զինվորները նրան անհրաժեշտ հավատ չէին ներշնչում հաջողության նկատմամբ. քաղաքացիներից նրան անվերապահորեն պաշտպանում էր միայն ավագանին, այն դեպքում, երբ պլեբսը նախկինի պես դաշինքի էր ձգտում Հաննիբալի հետ։

Մարկելլոսին հաջողվեց իր կողմը գրավել հակահռոմեական շարժման ղեկավարներից մեկին՝ Լուկիոս Բանտիոսին, սակայն բուն շարժման վրա դա գրեթե չանդրադարձավ։ Այն էլ ավելի ուժեղացավ, երբ Հաննիբալը, հաշվեհարդար տեսնելով Նուկերիայի հետ, վերստին մոտեցավ Նոլայի պարիսպներին (Լիվիոս, 23, 15, 7—16, Պլուտ., Մարկ., 10)։

Իր զորքերը շարժելով դեպի քաղաք, սկզբնական շրջանում Մարկելլոսը սահմանափակվեց միմյանցից անջատ և պատահական ընդհարումներով. այդպես վարվեց նաև Հաննիբալը, որը բանակցություններ էր սկսել Նոլայի պլեբսի ղեկավարների հետ։ Պայմանավորվեցին, որ երբ հռոմայեցիները ներս մտնեն դարպասներից, նոլացիները ավարի կմատնեն նրանց գումակը, կփակեն դարպասները և կդրավեն քաղաքի պարիսպները, որպեսզի ի վերջո ընդունեն կարթագենցիներին։ Հույսը դնելով այս համաձայնության վրա, Հաննիբալը սկսեց օրըստօրե իր զորքերը դասավորել մարտական կարգով, մարտի հրավիրելով հակառակորդին։

Երբ Մարկելլոսը Հաննիբալի և իրենց իսկ համաքաղաքացիների հանդեպ խուճապային սարսափով համակված Նոլացի սենատորներից տեղեկացավ ամբողջ կատարվածի մասին, որոշեց այլևս չսպասել։ Իր զինվորներին Մարկելլոսը դասավորեց քաղաքի ներսում, քաղաքամուտ դարպասների մոտ, գումակին հրամայեց ընթանալ ետևից, իսկ գումակալիներին՝ զինվել ցցերով. պահեստային զորամիավորումները կարգվեցին գումակը պահպանելու համար։ Նոլացիներին Մարկելլոսն արգելեց մոտենալ դարպասներին և քաղաքային պարիսպներին։ Թվում էր, թե ուր որ է լայն կբացվեն դարպասները, հռոմայեցիները դուրս կգան քաղաքից, սակայն դարպասները չբացվեցին, իսկ պարիսպների մրայից ընդհանրապես անհայտացան զինված մարդիկ։ Հաննիբալը, մտածելով, թե հռոմայեցիները իմացել են Նոլացի դեմոկրատների հետ իր համաձայնության մասին և սարսափահար եղած մատնվել են անգործության, որոշեց սկսել գրոհը։ Այն պահին, երբ կարթագենցի զորականները մոտեցան քաղաքային դարպասներին, Մարկելլոսը հրամայեց բացել դարպասները և հարձակվել թշնամուն։ Կարթագենցիները նահանջեցին։ Նոլան գրավելու հույսը կորցնելով, Հաննիբալը հեռացավ դեպի Ակերռ (Լիվիոս, 23, 16, 2—17, հմմտ. Պլուտ. մոտ, Մարկ., 11)[104]։ Վերադառնալով Նոլա, Մարկելլոսը հաշվեհարդար տեսավ բոլոր նրանց նկատմամբ, ովքեր փորձել էին բարեկամական հարաբերություններ հաստատել Հաննիբալի հետ։ Ինչպես պատմում է Լիվիոսը (23, 17, 1—2), հռոմեական պրետորի հրամանով մահապատժի ենթարկեցին ավելի քան 70 հոգու. հռոմեական իշխանությունները բռնագրավեցին նրանց ունեցվածքը։ Այդ եղանակով Նոլայում ամրապնդելով սենատի իշխանությունը, Մարկելլոսը հեռացավ քաղաքից և բանակեց Սուեսուլայից ոչ հեռու։

Իրեն՝ Հաննիբալի համար Նոլայի տակ կրած անհաջողությունը վերածվեց լուրջ ռազմաքաղաքական պարտության։ Կանանի մոտ հաղթողները Նոլայի պարիսպներից ետ շպրտվեցին նրանց կողմից, ովքեր դեռ բոլորովին վերջերս փախչում էին Կարթագենյան սրից և նույնիսկ խուճապի մատնված, վճռում էին այն հարցը, թե չպե՞տք է արդյոք Իտալիայից հեռանալ ուրիշ վայրեր։ Նոլայի տակ ունեցած անհաջողությունը Հաննիբալին ցույց տվեց, որ փաստորեն Կաննեն ոչ միայն նրան չմերձեցրեց վերջնական հաղթանակին, այլև ընդհանրապես փոքր-իսկ չափով էական փոփոխություն չմտցրեց նրա կացության մեջ։ Նախկինի պես նրան վերապահված էր հյուծիչ կռիվներ մղել Հարավային Իտալիայում։ Ինչպես պարզվեց, նոր դաշնակիցներ ձեռք բերելու խիստ կասկածելի հույսերը փոխարկվեցին դառը հիասթափության։

Ակերռի մոտ տեղի ունեցած իրադարձությունները անմիջապես հաստատեցին, թե որքան իրական դուրս եկան բոլոր այն ռազմաքաղաքական ազդակները, որոնք գործում էին ընդդեմ Հաննիբալի։ Ինչպես այդ մեկ անգամ հաջողվեց Կապուայում, ինչպես նա կամեցավ դա կատարել Նոլայում, Հաննիբալն այստեղ ևս փորձում էր քաղաքի բնակիչներին համոզել կամավոր հանձնվելու։ Սակայն այստեղ նույնպես, ինչպես պատմում է Լիվիոսը (23, 17, 4—7), նա բախվեց վճռական ու կտրուկ մերժման (մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրները տեղեկություններ չեն պահպանել քաղաքին Հաննիբալի զորականների մոտենալու պահին այնտեղ ստեղծված կացության մասին. բացառված չէր, որ այստեղ ևս հակակարթագենական շարժումը գլխավորում էր սենատը), տեսավ, որ ստիպված է պաշարել քաղաքը և գրոհով վերցնել այն։ Ուժ չունենալով պաշտպանվելու, քաղաքացիները գիշերով փախան և ցրվեցին Կամպանիայում։ Հաննիբալը ավարի մատնեց ու հրդեհեց Ակերռն։ Ապպիանոսը (Ապպ., Լիբ., 63) և Դիոն Կասսիոսը (Ֆրագմ., 34) գրան ավելացնում են, որ, ձերբակալելով տեղացի սենատորներին, Հաննիբալը հրամայեց գերյալներին նետել ջրհորները, հավանաբար այն պատճառով, որ հանձինս նրանց տեսնում էր իր տիրապետության հակառակորդներին[105]։

Ապպիանոսի պատմածից հետևում է, որ, հաշվեհարդար տեսնելով տեղացի սենատորների հետ, Հաննիբալը գործում էր հակառակ Ակերռի հետ կնքած պայմանագրի։ Հեղինակը կամենում է ընդգծել նենգ պունիկացու ոխերգությունը, սակայն նրա այս սխալ արտահայտությունը իմաստ է ստանում սոսկ մի ենթադրության դեպքում. եթե Ակե-

ռեում կային ինչ-որ իշխանություններ, որոնք կարող էին Հաննիբալի հետ համաձայնություն կնքել անձնատուր լինելու պայմանների վերաբերյալ, եթե այդպիսի պայմանագիրն իրոք կնքվել էր, և եթե սենատորները չէին հեռացել քաղաքից։

Հաշվեհարդար տեսնելով Ակեռեի հետ, Հաննիբալը տեղեկություն ստացավ, որ հռոմեական զորքերը շարժվում են դեպի Հարավային Իտալիա։ Կամենալով կանխել նրանց հայտնվելը, գրավել Վոլտուրնոսի վրայի գետանցարանը և, որքան հնարավոր է, ռազմական գործողություններ ծավալել Կապուայից հեռու, Հաննիբալն իր զորքը շարժեց դեպի Կասիլինում, որտեղ այն ժամանակ կար հռոմեական ոչ մեծ կայազոր՝ բաղկացած 500 պրենեստեացիներից և 460 պերուզացիներից, որոշ թվով բուն հռոմայեցիներից ու լատինացիներից։ Նրանք գրավեցին քաղաքի մի մասը, որն ընկած էր Վոլտուրնոսի հյուսիսային ափին։ Մոտենալով Կասիլինումին, Հաննիբալն ուղարկեց առաջ գետուլների հեծելազորատը, նրա հրամանատար Իսալկային հանձնարարելով, եթե հնարավոր լինի, տեղի բնակիչների հետ բանակցություններ սկսել, իսկ անհաջողության դեպքում՝ հարձակվել քաղաքի վրա։ Կասիլինումում և հատկապես նրա պարիսպների վրա մեռյալ լռություն էր տիրում, երբ սրարշավ նրան մոտեցան գետուլները. նրանք արդեն կարծեցին, թե հռոմեական զինվորներն ու քաղաքացիները փախել են քաղաքից, և սկսեցին բախել փակված դարպասները։ Հանկարծակիորեն դարպասներն ազմուկով բացվեցին, և հռոմայեցիների երկու կոհորտա նետվեց հեծյալների վրա։ Իսալկան հրամայեց նահանջել։ Հաննիբալը նրան օգնության ուղարկեց Մահարբալին (նույն ինքը, որը Հաննիբալին խորհուրդ էր տալիս Կաննեից հետո առանց հապաղելու դիմել Հռոմի վրա), սակայն հռոմայեցիները նրան ևս հարկադրեցին ետ քաշվել քաղաքամուտ դարպասներից։ Ոչինչ չէր կարելի անել. բանակ դնելով Կասիլինումի պարիսպների տակ, Հաննիբալն սկսեց պաշարումը։ Կասիլինումցիների մի հարձակման ժամանակ նրան հաջողվեց քաղաքից կտրել նրանց. ընդհարման ժամանակ շատերը կոտորվեցին։ Հաջորդ օրն սկսվեց գրոհը, սակայն պաշարվածները ջլատում էին կարթագենցիների բոլոր գործողությունները։ Ի վերջո, Կասիլինումի մերձակայքում թողնելով ամրացված ճամբար կայազորով, որը բավական էր շրջափակումը շարունակելու համար, Հաննիբալն իր հիմնական ուժերով մեկնեց դեպի Կապուայի ձմեռային կացարանները (Լիվիոս, 23, 17, 7—18, 9)։

Հռոմեական աննալներում պահպանված ավանդությունը Կապուայի ձմեռային կացարաններում կարթագենական զորքերի մնալը համարում

Հաննիբալի ամենալուրջ ռազմավարական սխալներից մեկը[106]։ Լիվիոսը (23, 18, 11—12) վառ գույներով պատկերում է պունիկյան զորքի քայքայումը. «Նրանց, ում ոչ մի զրկանք չէր հաղթել, կործանեցին խիստ սառն հարմարությունները և անշափ բավականությունները, և որքան նրանք մեծ ագահությամբ անսովոր կերպով ընկղմվում էին դրանց մեջ, այնքան քայքայումը խորանում էր։ Բանն այն է, որ քունը, գինին, կերակրումները, անառակ կանայք, բաղնիքները և պարապությունը, որոնք սովորության համաձայն օրեցօր ավելի գրավիչ են դառնում, նրանց հոգիներն ու մարմիններն այնպես քայքայեցին, որ հետագայում նախկին հաղթանակները ավելի էին պաշտպանում նրանց, քան առկա ուժերը»։ Եվ այնուհետև (23, 18, 14—16). «Արդ, Հերակլեսը վկա, եթե նա Կապուայից մյուս բանակով դուրս գար, ոչինչ չէր պահպանի նախկին կարգապահությունից, քանզի շատերը, կապվելով անառակ կանանց հետ, փչացան, և հենց որ կամեցան նրանց պահել վրաններում, ինչպես նաև ստիպեցին կրել արշավանքների դժվարությունները և ռազմական ուրիշ նախորդություններ, նրանց մոտ, նորակոչիկների պես, չէին բավականացնում ո՛չ ֆիզիկական և ո՛չ էլ հոգևոր ուժերը։ Եվ այնուհետև ամբողջ ամռան ընթացքում շատերը առանց արձակուրդի լքեցին դրոշները. և դասալիքների համար բացի Կապուայից, ուրիշ ապաստան չկար» (հմմտ. նաև Դիոդորոսի մոտ, 26, 11, Վալ. Մաքս., 9, 1, 9)։

Այս նկարագրության մեջ չի կարելի չնկատել որոշակի չափազանցություն. իրապես Իտալիայում Հաննիբալի՝ հետագա բաղում տարիների ընթացքում կատարած ռազմական գործողությունները ցույց են տալիս, որ Կապուայում ձմեռելու պատճառով նրա զորքերին հասցված վնասն այնպես մեծ չէր, ինչպես դա իր ընթերցողին է ներկայացնում Տիտոս Լիվիոսը։ Այսուհանդերձ նախկին կարգապահության անկումն, բոլոր երևույթին, խիստ սուր էին զգում (թեև ոչ այդ չափերով) և՛ ինքը՝ Հաննիբալը, և՛ ընդհանրապես բոլոր դիտողները։

Համենայն դեպս, դեռ նոր էին սկսել ցրտերը մեղմանալ, երբ Հաննիբալն իր զորքը վերստին շարժեց դեպի Կասիլինում, որի կայազորը և բնակիչները պաշարման մեջ դաժան տառապանքներ էին կրում սովից։ Պատմում էին, թե մարդիկ իրենց ցած էին նետում պարիսպներից, երբեքերը դեմ անելով թշնամական նիզակների հարվածներին, մահը նախընտրելով անտանելի տվայտանքներից։ Պաշարվածները, թվում էր, շատափույթ օգնության հույս չունեին։ Մարկելլոսն իր ամբողջ ուշադրությունը հատկացրել էր Նոլային, իսկ դիկտատոր Մ. Յունիոս Պերան մեկնեց Հռոմ գուշակությունների համար, հեծելազորի պետ Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսին արդելելով որևէ գործողություն ձեռնարկել։

Փաբիոսի և Մինուկիոսի մղած պատերազմները լավ էին տպավորվել հիշողության մեջ։ Միակ բանը, որ Գրակքոսն իրեն թույլ տվեց, Վոլտուրնոսի հոսանքն ի վար տակառների մեջ լցրած հացահատիկ ուղարկելն էր, մինչև այն ժամանակ, երբ մի անգամ հոսանքն ափ հանեց տակառը, որին տիրացան պունիկացիները։ Փորձեցին նաև դեռը լցնել ընկույզներ (քաղաքում դրանք հանում էին զամբյուղներով), սակայն դրանից քիչ օգուտ եղավ։ Սովից ուժասպառ եղած կասիլինումցիներն ու հռոմեական զինվորներն սկսեցին ուտել կաշի, խոտ, մկներ։ Տեսնելով, որ Հաննիբալի զինվորները քաղաքի պարսպապատի առջև հերկել են դաշտը, նրանք շաղգամի սերմեր ցցեցին այնտեղ։

Սակայն Հաննիբալը նույնպես, դուցե Լիվիոսի՝ վերը բերված խոսքերում արտացոլված պատճառներով, վճռական գործողություններ չէր ձեռնարկում։ Ակնհայտ էր, որ եթե հռոմայեցիները տակավին իրենց չէին զգում այն կացության մեջ, որ վճռեին նոր գլխավոր ճակատամարտ տալու, ապա Հաննիբալը նույնպես, Կապուայում ձմեռելուց հետո, իր համար այդպիսի հնարավորություն չէր տեսնում։ Հասկանալով, որ Կասիլինումի պաշարումը կաշկանդում է իր ուժերը և ստիպում զուր տեղը ժամանակ վատնելու (իզուր չէ նրան վերագրվում հետևյալ զայրալից բացականչությունը. «Մի՞թե ես դատապարտված եմ նստելու Կասիլինումի մոտ, մինչև կաճի շաղգամը»), չհամարձակվելով քաղաքն ուժով գրավել Հաննիբալը վերջիվերջո սկսեց բանակցությունները։ Ցուրաքանչյուր անձից 7 ունցիա ոսկի փրկավճարով նա պաշարվածներին թույլ տվեց հեռանալ քաղաքից։

Կասիլինումի գրավումը և հատկապես պատերազմի սկզբում հռոմայեցիների անգործությունը Հաննիբալի առջև ճանապարհ բացեցին Հարավային Իտալիայում նոր հաջողությունների համար, նրան հնարավորություն ընձեռեցին որոշ քաղաքներ, որոնք տակավին հավատարիմ էին մնում Հռոմին, ուժով գրավելու կամ ստիպելու դաշինք կնքել։

Դրանց մեջ նրա առաջին զոհը դարձավ Պետելիան՝ համաձայն Լիվիոսի խոսքերի, միակ քաղաքը Բրուտիումում, որը չէր դավաճանել Հռոմի հետ ունեցած դաշինքին։ Այն ընկել էր անելանելի դրության մեջ. կարթագենցիներից ու բրուտիումցիներից պաշարված Պետելիան օգնություն խնդրեց Հռոմից, սակայն մերժում ստացավ. սենատը հայտարարեց, որ ստեղծված հանգամանքներում նա ոչ մի օժանդակություն չի կարող ցույց տալ այդքան հեռու ընկած դաշնակիցներին, և պետելիացիներին առաջարկեց, որպեսզի իրենք հոգ տանեն իրենց մասին։ Տեղական սենատի պնդմամբ Պետելիայում որոշեցին դիմադրել (Լիվիոս. 23, 20, 4—10), սակայն մի քանի (ըստ Պոլիբիոսի՝ 11) ամիս տևած

պաշարումից հետո սովից հյուծված քաղաքացիները հռոմեական կառավարության թույլտվությամբ անձնատուր եղան կարթագենական զորապետ Հիմիլկոնին, որին Հաննիբալը հանձնարարել էր պաշարել քաղաքը (Լիվիոս, 23, 30, 1—4, Պոլիբիոս, 7—1, 2)։ Համաձայն Ապպիանոսի (Հաննիբ., 29), որը մի դեպքում լրացնում է, այլ դեպքերում՝ հակասում Պոլիբիոսին ու Լիվիոսին, իրադարձությունները Պետելիայում հետևյալ կերպ են ծավալվել. Հաննիբալը, քաղաքին մոտեցնելով պաշարողական մեքենաներ, բախվեց ոչ մեծաթիվ քաղաքացիների՝ տղամարդկանց և կանանց, հուսահատ դիմադրությանը. վերջիններիս հաջողվեց հրկիզել այդ սարքերը։ Հաշվի առնելով, որ Պետելիայի պաշտպանները հույժ քիչ են, որ նրանք ոչնչացել են պաշտպանական մարտերում, սովից ու զրկանքներից, Հաննիբալը որոշեց ավելի խստացնել շրջափակումը։ Նրա հրամանով Պետելիայի շուրջը պաշարողական պարիսպ կանգնեցվեց. Հաննիբալը պաշարողների հրամանատարությունը հանձնեց Հաննոնին։ Պետելիացիները սկզբում մարտի ուղարկեցին նրանց, ում ոչնչանալը քաղաքին ավելի քիչ վնաս կարող էր պատճառել. սրանց հետևեցին նաև մյուսները։ Միայն սովահարների ու հիվանդների (որոնք ի վիճակի չէին զենք բռնել) ոչնչացումից հետո Հաննոնը կարողացավ մտնել քաղաք։ Բնակչությունից փախստականներ ազատվեցին միայն 800 մարդ։ Երբ պատերազմն ավարտվեց, հռոմայեցիները նրանց բնակեցրին նախկին տեղում։

Վերոհիշյալ երկու պատումները միմյանց հետ համեմատելիս, չի կարելի չընդունել, որ Պոլիբիոսի և նրան հետևող Լիվիոսի ավանդածը ավելի արժանահավատ ու անաչառ տպավորություն է թողնում։ Նրա օգտին են արդեն խոսում Հռոմի հետ Պետելիոսի անհաջող բանակցությունների վերաբերյալ նյութերը։ Իր ամենահավատարիմ դաշնակիցներին օգնելուց Հռոմի հրաժարվելը, ինչպիսիք էլ որ լիներն դրա պատճառները, հաղիվ թե նպաստեր հռոմայեցու անվան հեղինակության բարձրացմանը, և Պոլիբիոսը, իսկ նրանից հետո Լիվիոսը, իհարկե, կարող էին այդ տեղեկությունը բաց թողնել այնպես, ինչպես դա արել էր Ապպիանոսի օգտագործած սկզբնաղբյուրը։ Ուշագրավ է նաև Պետելիայի անձնատուր լինելու վերաբերյալ պատմությունը։ Ի վերջո հաղթողի ողորմածությանը հանձնված քաղաքի ճակատագիրը Լիվիոսի մոտ նվազ հերոսական է հանդես բերված, քան Ապպիանոսի։

Ինչ կերպ էլ որ լիներ, այնուամենայնիվ, Պետելիան ընկավ կարթագենցիների ձեռքը. հռոմայեցիները զրկվեցին Բրուտիումում ունեցած վերջին ամրոցից։

Դրանից հետո շուտով, ինչպես պատմում է Լիվիոսը (23, 30, 6—7), Հաննիբալի դաշնակից բրուտիները գրավեցին հունական Կրոտոն քաղաքը. բրուտիների կողմն անցավ նաև հունական մեկ այլ քաղաք՝ Լոկրիսը, որտեղ ավագանին, ինչպես նշում է Լիվիոսը (23, 30, 8), դավաճանեց ժողովրդին։

Համաձայն մեկ այլ պատումի, որը նույնպես վերաշարադրել է Լիվիոսը (24, 1—3), Լոկրիսը և Կրոտոնը կարթագենցիները գրավել են այն բանից հետո, երբ Հաննոնի՝ Բոմիլկարի որդու զորքերը, Կամպանիայում ռազմական գործողությունները վերջացնելուց հետո, 215 թ. վերադարձան Բրուտիում։ Սակայն դրան հակասում է այն հանգամանքը, որ 215 թ. դեպքերից առաջ Հաննիբալի համար Կամպանիա ժամանած օժանդակ զորամիավորումները ափ իջան Լոկրիսում, որն այդ ընթացքում արդեն դարձել էր կարթագենցիների դաշնակիցը։ Ասվածը թույլ է տալիս կասկածել նաև այդ պատմության առանձին մանրամասների վրա։ Այսպես, Լիվիոսը գրում է, թե Լոկրիսը կարթագենցիներին հանձնվեց այն պատճառով, որ քաղաքացիների մի մասը, որոնք գտնվում էին դաշտում, կտրվեցին քաղաքից, իսկ «թեթևամիտները» նախընտրեցին նոր դաշինքը և նոր պետական կառուցվածքը. բայց և այնպես նրանք հռոմեական կայազորին թույլ տվեցին ծածուկ հեռանալ քաղաքից։ Այստեղ, ինչպես երևում է, ավանդության մեջ կա ներքին հակասություն. այն խոսում է իր քաղաքական ուղղվածությամբ բացահայտորեն հակահռոմեական պետական հեղաշրջման մասին, և միևնույն ժամանակ՝ այն գործողությունների մասին, որոնք անկասկած կարող էին նոր դաշնակցի առջև վարկաբեկել Լոկրիսին։ Եվ բացի այդ, այն ամենը, ինչ պատմվում է տվյալ բնագրում, հակասում է ժողովրդին դավաճանած ավագանու վերաբերյալ հենց Լիվիոսի դիտողությանը։ Ինչ վերաբերում է Կրոտոնին, ապա այստեղ, ըստ Լիվիոսի պատմածի, գոյություն ուներ հակահռոմեական դեմոկրատական շարժում, որը բրուտիներին թույլ տվեց մտնելու քաղաք, սակայն տեղական ավագանին թաքնվեց ակրոպոլիսում։ Ի վերջո ակրոպոլիսում ամուր նստած կրոտոնցիները տեղափոխվեցին Լոկրիս։ Լիվիոսի երկրորդ պատումի մեջ, այսպիսով, չեն բացառվում ժամանակագրական շեղումները. այդտեղ կարող էին արտացոլում գտնել մինչև կարթագենական օժանդակ զորամիավորումների ժամանումը Բրուտիումում տեղի ունեցած իրադարձությունները։

Հռոմի նկատմամբ թշնամի տարրերի որոշ աշխուժություն էր նկատվում նաև Սիցիլիայում. Սիրակուզայի թագավոր Հիերոն II-ի ավագ որդի Գելոնը Կաննեից հետո բացահայտորեն անցել էր Կարթագենի

[illegible] Նա զինեց ժողովրդին, բոլոր միջոցներով իր կողմը գրավեց դաշնակիցներին, պատրաստվելով գրավել իշխանությունը, և միայն Գելոնի [illegible] մահը, որում, թերևս ոչ առանց պատճառի, մեղադրում էին [illegible] հորը, պահպանեց, թեկուզև կարճատև ժամանակաընթացքում, [illegible]-սիրակուզական դաշինքը (Լիվիոս, 23, 30, 10—12)։

IV

Մինչ Հաննիբալն ու դաշնակիցները պատերազմում էին Հարավային Իտալիայում, նրա եղբայր Մագոնը Կարթագենում օժանդակ զորամիավորումներ էր հավաքում։ Նրան հաջողվեց ձեռք բերել 12 հազար հետևակազորային, 1500 հեծյալ (խորհրդի որոշմամբ նախատեսված 4000-ի փոխարեն), 20 փիղ (40-ի փոխարեն) և միաժամանակ 1000 տալանտ ոսկի և 60 մարտական նավ։ Նա մտադրվել էր այս բոլոր մարտիկներին, կենդանիներին, դրամը և նավատորմը ուղարկել Իտալիա, երբ անակնկալ կերպով հանգամանքներն ստիպեցին կտրուկորեն փոխել որոշումը (Լիվիոս, 23, 32, 5)։

Նախ, Իսպանիայից տեղեկություններ ստացվեցին այնտեղ կարթագենական զորքերի կրած պարտությունների և այն մասին, որ թերակղզու գրեթե ամբողջ բնակչությունն անցել էր հռոմայեցիների կողմը (Լիվիոս, 23, 32, 6)։ Երկրորդ, Սարդինիայից, որը վաղուց հետե գաղութաբնակեցվել էր փյունիկացիների կողմից[107], գաղտնի պատվիրակություն ժամանեց Կարթագեն։ Պատվիրակները պատմեցին, որ կղզում հռոմեական ոչ մեծ կայազոր է կանգնած, որ նախկին կուսակալը՝ պրետոր Ավլոս Կլավդիոսը ետ է կանչվում, և առայժմ դեռ միայն նորին են սպասում, որ պրովինցիայի բնակչությունը հասունացել է ապստամբության համար. նա ուժասպառ է եղել հռոմայեցիների երկարատև, դաժան ու ընչաքաղց տիրապետության, ծանր, ուժից վեր հարկերի և հռոմեական զորքերին շտապանց շատ պարենամթերք մատակարարելու հետևանքով։ Պատվիրակներին Սարդինիայից Կարթագեն ուղարկեցին սարդինական արիստոկրատները. Լիվիոսը (23, 32, 7—10) դավադրության գլխավոր նախաձեռնող է համարում Համպսիկորոսին՝ կղզում ամենահեղինակավոր և ամենահարուստ մարդուն։ Հետաքրքիր է, որ ըստ Լիվիոսի պատմածի, Սարդինիայում հակահռոմեական շարժումը գերազանցապես արիստոկրատական էր։ Թերևս այստեղ արտահայտություն են գտել Կարթագենի [illegible] Սարդինիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային վաղեմի կապերը, որոնք խզվել էին Պունիկյան I պատերազմից հետո, երբ Հռոմեական տիրապետության տակ ընկնելու ժամանակ, մանա-

վանդ որ Սարդինիայում կարթագենա-փունիկյան քաղաքակրթության ավանդները պահպանվեցին գոնե մինչև մ. թ. III դարը։ Բացառված չէ, որ Սարդինիայում հակահռոմեական շարժումը կարող էր հրահրված լինել կարթագենցիների կողմից (Լիվիոս, 23, 41, 2)։

Համենայն դեպս, կարթագենական խորհուրդը որոշեց Մագոնին՝ նրա հրամանատարության ներքո գտնվող բոլոր զորքերով հանդերձ, ուղարկել Իսպանիա, իսկ Սարդինիա՝ Հասդրուբալ Ճաղատին, որին հանձնեցին նույնպիսի բանակ, ինչպիսին տվել էին Մագոնին (Լիվիոս, 23, 32, 11—12)։ Կարթագենական կառավարության որոշումը լավ բացատրվում է քաղաքական այն կացությամբ, որն ստեղծվել էր արևմտամիջերկրածովյան աշխարհում. անհրաժեշտ էր ամրապնդել Պիրենեյան թերակղզում խախտված դրությունը, ըստ հնարավորին այնտեղից վերացնել հռոմեական սպառնալիքը, իսկ Սարդինիան ետ գրավելու հեռանկարը կենտրոնական Իտալիա նոր ներխուժման դեպքում իրական հույս էր ստեղծում հարմար ռազմավարական բնագծերի տիրանալու համար։ Այդ բոլորն այդպես է։ Սակայն այդ պայմաններում Կարթագենից որևէ օժանդակ զորամիավորում ստանալու մասին արդեն ոչ մի խոսք չէր կարող լինել։ Դրանով իսկ Հաննիբալի համար ավելի կարևոր էին դառնում դիվանագիտական քայլերը, որոնք, թվում էր, հնարավորություն էին ստեղծում ձեռք բերելու այդքան ցանկալի դաշնակից և սկսելու բովանդակ օյկումենեի միավորումը՝ Հռոմի դեմ պայքարելու համար։

Աշխարհի երկու հզորագույն ժողովուրդների պայքարը, գրում է Լիվիոսը (23, 33, 1) գրավեց բոլոր թագավորների ու ցեղերի, այդ թվում նաև Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս V-ի ուշադրությունը։ Վերջինս հույս ուներ իր քաղաքական նպատակներին հասնելու համար օգտվել Կարթագենցիների դժվարին կացությունից։

221 թ. վախճանվեց մակեդոնական թագավոր Անտիգոնոս Դոսոնը։ Նրան հաջորդած Փիլիպոս V-ը պետք է, այսպես ասած, ժառանգաբար պատերազմեր Մակեդոնիայի վաղեմի թշնամու՝ Էտոլիական միության և նրա հետ կապված Սպարտայի ու Էլիսի դեմ (220—217 թթ. դաշնակցային պատերազմը)։ Տեղեկություն ստանալով Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ելքի մասին, թագավորը իր ամենամոտիկ «բարեկամներից» մեկի՝ Դեմետրիոս Փարոսացու, խորհրդով որոշեց դադարեցնել Էտոլիայի դեմ մղվող պատերազմը։ Խորհրդատուն նրա մտահայացքի առջև պատկերեց ոչ միայն Հունաստանին իշխելու (որին արդեն հասել էին), այլև Իտալիայի, իսկ այնուհետև նաև ամբողջ աշխարհի նվաճման հեռանկարը (Պոլիբիոս, 5, 101, 9—102, 1)։ Փիլիպոսն ուներ

նաև այլ նպատակ՝ ետ գրավել Իլլիրիան, որը բոլորովին վերջերս՝ 229—228 թթ. պատերազմների հետևանքով, ընկել էր Հռոմի տիրապետության տակ։ Հռոմայեցիների գրաված իլլիրական երկրամասերի մեջ կային այնպիսի շրջաններ, որոնք պատկանում էին Դեմետրիոս Փարոսացուն. վերջինս, այդպիսով, անձամբ շահագրգռված էր Հռոմի դեմ մղվող պատերազմով։ Մենք չգիտենք, թե ինչպիսիք էին Փիլիպոս V-ի և նրա հակառակորդների միջև խաղաղ կարգավորման այն պայմանները, որին նրանք հասան Նավպակտոսում (Պոլիբիոս, 5, 105, 1—2)։ Ըստ երևույթին, վերականգնվեց նախապատերազմյան իրավիճակը՝ հունական բոլոր համայնքների «դաշինքը» Մակեդոնիայի հետ, այսինքն՝ Հունաստանում մակեդոնական թագավորի փաստական տիրապետությունը։ Հետաքրքիր է, որ, ինչպես պատմում է Պոլիբիոսը (5, 104), Նավպակտոսյան հաշտության կնքման համար կարևոր խթան էր արևմուտքից եկող սպառնալիքը։ Բանակցությունների ժամանակ Նավպակտոսացի Ագելայոսը մատնանշում էր, որ Իտալիայում ովքեր էլ որ հաղթանակեն՝ հռոմայեցիները, թե կարթագենցիները, նրանք փորձելու են իրենց իշխանությունը տարածել նաև Հունաստանի վրա։ Այս կանխատեսությունը, ինչպես հայտնի է, լիովին իրականացավ։

Այդ սպառնալիքին դիմակայելու համար անհրաժեշտ էր հենց Հունաստանում հաստատել խաղաղություն ու հանգստություն, իսկ Փիլիպոս թագավորի ռազմաշունչ ավյունը շուռ տալ դեպի արևմուտք, որտեղ հույները կդառնային նրա հուսալի ու եռանդուն դաշնակիցները։ Ստորև մենք կտեսնենք, որ Փիլիպոս V-ը միայն կարճատև ժամանակամիջոցում կարող էր դառնալ Հաննիբալի դաշնակիցը. ապագայում Հռոմի դեմ տարած հաղթանակի դեպքում Փիլիպոս V-ը դառնալու էր կարթագենցիների հույժ վտանգավոր թշնամին։

Առայժմ հենց Նավպակտոսյան հաշտությունը ապատ էր արձակում Մակեդոնիայի ձեռքերը։ Փիլիպոս V-ը, կառուցելով ու զինելով 100 նավ, իր զորքերով դուրս եկավ բաց ծով, ժամանեց Կեֆալոնիա և Լեվկադա, իսկ այնուհետև, տեղեկանալով, որ հռոմեական նավատորմը խարիսխ է գցել Լիլիբեոնի մոտակայքում (Սիցիլիա), ծովով մեկնեց Ապոլլոնիայի կողմը՝ ուղղություն վերցնելով դեպի Իլլիրիա։ Սակայն այնտեղ թագավորը կեղծ հաղորդում ստացավ, որ իբր իր վրա է դիմում հռոմեական նավատորմը, և խուճապահար նահանջեց դեպի Կեֆալոնիա, իսկ այնուհետև վերադարձավ Մակեդոնիա (Պոլիբիոս, 5, 109—110)։ Այդպիսով Իլլիրիան գրավելու նրա առաջին փորձը անհաջողությամբ վերջացավ, գլխավորապես հռոմայեցիների հանդեպ իր իսկ ունեցած չարդարացված զգուշավորության և խուճապային սարսափի հետևանքով։ Իրականում

Ռեգիումի մոտակայքում նկատվել էր հունական 10 նավ, որոնք, իհարկե, չէին կարող մարտի մեջ մտնել մակեդոնական նավատորմի հետ։ Բայց հենց նրանք էլ պատճառ դարձան չափազանցված այն լուրերի, որոնց համաձայն հռոմեական նավատորմն իբր արդեն գտնվում էր Ադրիական ծովի մատույցներում։

Այս անհաջողությունը Փիլիպոս V-ին հատկապես շահագրգռեց Հաննիբալի հետ դաշինքի խնդրում. վերջինիս համար, իր հերթին, Մակեդոնիայի պաշտպանությունն ուներ առաջնակարգ նշանակություն։ Նախ կարելի էր հուսալ, որ հռոմեական ուժերի մի մասը կարող էր հեռացվել Իտալիայի սահմաններից դուրս, հունա-մակեդոնական զորքերի դեմ պայքարելու համար։ Երկրորդ, այդ դաշինքը թույլ էր տալիս դուրս գալու դիվանագիտական մեկուսացումից. կարելի էր հուսալ, որ հելլենիստական արևելքի ուրիշ տիրակալներ նույնպես կհարեն Հաննիբալին, Հռոմի հետ նրա մահացու գոտեմարտում։ Հաննիբալը հավանաբար ջանում էր շմտածել հաղթանակից անմիջապես հետո իրեն սպասող պայքարի մասին, որի շուրջը, ինչպես կարելի էր տեսնել, խոսում էին բարձրաձայն. ամենից գլխավորն այժմ Իտալիայում հաղթանակ տանելն էր, իսկ այնուհետև ժամանակ կլիներ որոշելու, թե ինչ պետք է անել և՛ Իլլիրիայի, և՛ Մակեդոնիայի, և հե՛նց Փիլիպոս V թագավորի հետ։

Այդպիսիք էին հանգամանքները, երբ Հաննիբալի ճամբարն ուղարկվեց մակեդոնական պատվիրակությունը, որին գլխավորում էր Քսենոփանեսը։ Շրջանցելով Բրունդիսիումը և Տարենթոնը, որոնց պաշտպանում էին հռոմեական պահականավերը, մակեդոնացիները ափ իջան Լատինիումյան Յունոնի տաճարի մերձակայքում, Կրոտոնից փոքր-ինչ հարավ, և այնտեղից Ապուլիայի միջով շարժվեցին դեպի Կապուա, սակայն ճանապարհին բախվեցին հռոմեական պահակային զորամասին։ Զինվորները պատվիրակներին հասցրեցին պրետոր Մարկոս Վալերիոս Լևինոսի մոտ, որը բանակել էր Լուկերիայի մերձակայքում[108]։ Դրությունը փրկեց Քսենոփանեսը. չկորցնելով հոգու կորովը, նա հայտարարեց, որ իբր Փիլիպոս V թագավորի կողմից ուղարկվել է հռոմեական ժողովրդի հետ բարեկամական դաշինք կնքելու, որ իրեն համապատասխան լիազորություններ ու հանձնարարություններ են տրված կոնսուլների, սենատի և ամբողջ հռոմեական ժողովրդի համար։ Ուրախացած պրեպրոր պատվիրակներին տվեց ուղեկցորդներ, որպեսզի սրանք ցույց տային ամենից հարմար ճանապարհները և բացատրեին, թե որտեղ են գտնվում հռոմեական և կարթագենական զորքերը։ Առանց հետագա արկածների, պատվիրակությունը, շրջանցելով հռոմեական կայազորները, ժամանեց

Կամպանիա, իսկ այնտեղ ուղիղ ճանապարհով հասավ Հաննիբալի ճամբարը (Լիվիոս, 23, 33, 4—9)։

Հայտնի չէ, թե ինչպես են ընթացել բանակցությունները Հաննիբալի և Քսենոփանեսի միջև։ Ճիշտ է, Եվտրոպիոսը (3, 12) ասում է, որ Փիլիպոսը օգնություն է առաջարկել Հաննիբալին ընդդեմ Հռոմի, այն նպատակով, որ հաղթանակից հետո Հաննիբալն օգներ նրան ընդդեմ հույների, սակայն երևում է, որ նա հենվում է համաձայնագրի՝ իրեն հայտնի բնագրի վրա։ Մենք տեղյակ ենք միայն դաշնակցային համաձայնագրի պայմաններին, որոնք Լիվիոսը (23, 33, 10—12) շարադրում է հետևյալ կերպ։ Փիլիպոս թագավորը, անցնելով Իտալիա, ամայացնելու էր ծովափնյա շրջանները, ինչպես նաև, իր ուժերի ներածին չափով, պատերազմ էր մղելու ծովում և ցամաքում։ Պատերազմը վերջանալուց հետո ամբողջ Իտալիան Հռոմ քաղաքի հետ միասին պատկանելու էր Կարթագենին և Հաննիբալին, ընդ որում, վերջինիս էր մնում նաև ռազմավարը։ Գրավելով Իտալիան, դաշնակիցներն անցնելու էին Հունաստան և այնտեղ պատերազմելու էին նրանց հետ, ում հետ կցանկանար թագավորը։ Մակեդոնիայի սահմանակից մայրցամաքային պետություններն ու կրդզիները, այսինքն՝ գործնականում ամբողջ Բալկանյան Հունաստանը ափամերձ կղզիներով և արշիպելագով, պատկանելու էին Փիլիպոսին։ Պայմանագրի բովանդակությունը մոտավորապես նույն կերպ է հաղորդում նաև Զոնարասը (9, 3). նրանք պատերազմելու էին միասին, և Իտալիան գրավելու էին կարթագենցիները, իսկ Հունաստանը Էպիրոսի և կղզիների հետ միասին՝ Փիլիպոս թագավորը։

Մենք, որքանով որ խոսքը գնում է հեռավոր անցյալի մասին, հազվագյուտ հնարավորություն ունենք այս շարադրանքները համեմատելու պայմանագրի իսկական բնագրի հետ, որն ամբողջապես բերվում է Պոլիբիոսի (7, 9) ուշագրավ պատմության մեջ.

«Այն երդումը, որ Հաննիբալ-զորավարը, Մագոնը, Միրկանը, Բարմոկարը ու նրա մոտ եղած կարթագենական բոլոր գերուսիականները և նրա հետ մեկտեղ պատերազմող բոլոր կարթագենցիները ավելին աթենացի Քսենոփանեսին՝ Կլեոմաքոսի որդուն, զեսպանին, որին նրանց մոտ էր ուղարկել Փիլիպոս թագավորը՝ Դեմետրիոսի որդին, իր, մակեդոնացիների և դաշնակիցների անունից Զևսի և Հերայի, Ապոլլոնի, կարթագենցիների աստվածու (Ἐπίορκος Καρχηδόνιων —հավանորեն ի նկատի ունի Տիրոնիա աստվածուհուն— Ի. Կ.) և Հերակլեսի, Իոլայոսի, Արեսի, Տրիտոնի, Պոսեյդոնի, Արևին, Լուսնին ու Երկրին զինակցող աստվածների, գետերի ու լճերի, ջրերի, Կարթագենին տիրող բոլոր աստվածների, Մակեդոնիային և մնացյալ Հունաստանին տիրապետող աստվածների, արշավանքին մասնակցող և այդ երդման ժամանակ ներկա եղած աստվածների առջև։ Հաննիբալ-զորավարը և նրա հետ եղած կարթագենական բոլոր գերուսիականները և նրա հետ մեկտեղ պատերազմող բոլոր կարթագենցիներն ասացին, որ մենք և զուր որոշել

ենք բարեկամաբար և բարեհաճ տրամադրությամբ երդվել, որ լինելու ենք բարեկամներ, ազգականներ ու եղբայրներ, որպեսզի Փիլիպոս թագավորը, մակեդոնացիներն ու մյուս հույները, որոնք իսկապես նրանց դաշնակիցներն են, նեղ վիճակից հանեն կարթագենական քաղաքացիներին (Κορίους Καρχηδονίους հունարեն ձևակերպման մեջ անկասկած, վերարտադրված է փյունիկա-պունիկյան b'ly qrthdšt-տերեր, կարթագենի քաղաքացիներ ձևը— Ի. Կ.), և՛ Հաննիբալ-զորավարին, և՛ նրանց, ովքեր նրա հետ են, և՛ նրանց, ովքեր կարթագենցիների իշխանության տակ են ու օգտվում են նույն օրենքներից (ինչ կարթագենցիները—Ի. Կ.), Ուտիկեի քաղաքացիներին և կարթագենցիներին հպատակ քաղաքներին ու ժողովուրդներին, և՛ զինվորներին, և՛ դաշնակիցներին, և՛ բոլոր այն քաղաքներին ու ժողովուրդներին, որոնց հետ մենք բարեկամ ենք, Իտալիայում, Գալլիայում և Լիգուրիայում, և որոնց հետ մենք բարեկամություն ենք հաստատելու այդ երդմամբ։ Նույնպես և Փիլիպոս թագավորին և նրանց դաշնակից ուրիշ հույների պետք է նեղ վիճակից հանեն ու պաշտպանեն, պատերազմին մասնակցող կարթագենցիները, և Ուտիկեի քաղաքացիները, նաև կարթագենցիներին հպատակ բոլոր քաղաքներն ու ժողովուրդները, և դաշնակիցները, և զորականները, և բոլոր մեզ բարեկամ ժողովուրդներն ու քաղաքները Իտալիայում, Գալլիայում ու Լիգուրիայում, և ուրիշներ, որոնք դաշնակիցներ կդառնան Իտալիայի այդ վայրերում։ Մենք միմյանց հանդեպ չար դիտավորություններ չենք ունենա, դավեր չենք նյութի։ Ամբողջ եռանդով ու բարեհաճությամբ, առանց խորամանկության ու չար դիտավորության, մենք կլինենք նրանց թշնամիները, ովքեր կարթագենցիների թշնամիներն են, բացառությամբ այն թագավորների, քաղաքների ու նավահանգիստների, որոնց հետ մենք ուխտ ենք կապել, կնքել բարեկամության պայմանագրեր։ Մենք նաև կլինենք նրանց թշնամիները, ովքեր թշնամի են Փիլիպոս թագավորին, բացի այն թագավորներից, քաղաքներից և ժողովուրդներից, որոնց հետ մենք ունենք բարեկամական ուխտ և պայմանագրեր։ Դուք կդառնաք նաև մեր դաշնակիցներն այն պատերազմում, որը մենք մղում ենք Հռոմի դեմ, քանի դեռ աստվածները հաղթանակ չեն պարգևի մեզ և ձեզ։ Եվ դուք մեզ կօգնեք, որքանով անհրաժեշտ կլինի և ինչպես որ մենք կպայմանավորվենք։ Եթե այն ժամանակ, երբ աստվածները հաղթանակ պարգևեն ձեզ և մեզ՝ հռոմայեցիների ու նրանց դաշնակիցների դեմ, և հռոմայեցիները խնդրեն բարեկամության պայմանագիր կնքել, մենք կհամաձայնվենք այնպես, որպեսզի նրանք ձեզ հետ ունենան նույնպիսի բարեկամություն, պայմանով, որ նրանց թույլ չտրվի երբևիցե պատերազմ սկսելու մեր դեմ, և որպեսզի հռոմայեցիները իշխանություն չունենան կերկիրացիների, ապոլլոնիացիների, էպիդամնոսցիների, ինչպես նաև Փարոսի, Դիմալայի և Ատինտապիայի նկատմամբ։ Նրանք Դիմետրիոս Փարոսացուն կհանձնեն նրա բոլոր այն հպատակներին, որոնք հռոմեական պետության սահմաններում են։ Իսկ եթե հռոմայեցիները պատերազմ սկսեն ձեր կամ մեր դեմ, մենք կօգնենք միմյանց, ինչքանով որ այդ անհրաժեշտ կլինի կողմերից յուրաքանչյուրին։ Նույն կերպ կվարվենք, եթե հարձակվի մեկ ուրիշը, բացի այն թագավորներից, քաղաքներից ու ժողովուրդներից, որոնց հետ մենք ուխտ և զգաստության պայմանագիր ունենք։ Եվ եթե մենք որոշենք այդ պայմանագրից որևէ բան հանել կամ ավելացնել, ապա մենք դա կանենք այնպես, ինչպես կորոշենք մենք երկուսով։

Պոլիբիոսի մոտ պահպանված և իր արժանահավատությամբ կասկած չհարուցող (հատկապես բնութագրական է հունարեն թարգմանության մեջ տպրված փյունիկերենի բառապատճենումը) կարթագենա-հռոմեական պայմանագրի բնագրի համեմատումը Լիվիոսի, Զոնարասի ու Դիոդորոսի շարադրածի հետ, ցույց է տալիս, որ վերջիններս վերարտադրել են ոչ այնքան համաձայնագրի բովանդակությունը, որքան նրա մեկնաբանությունը հռոմեական պաշտոնական պրոպագանդայի կողմից, որը, ինչպես դրանում հեշտությամբ կարելի է համոզվել, բխում էր Կաննեից անմիջապես հետո Գ. Տերենտիոս Վառոնի ճառերից։ Պայմանագրում չկա Փիլիպոս V-ի որևէ կոնկրետ պարտավորություն, խիստ անորոշ ձևով խոսք է գնում Հռոմի դեմ պատերազմում օգնություն ցույց տալու մասին։ Պայմանագրում չկա նաև այնպիսի հոդված, որը կարող էր Կարթագենին երաշխավորել գրավելու Իտալիան։ Դեռ ավելին. կողմերը նույնիսկ պատրաստակամություն են հայտնում դաշնակցային պայմանագիր կնքել Հռոմի հետ, ընդ որում, այդտեղ վերապահված նախնական միակ պայմանը Բալկանյան թերակղզում նվաճումներից Հռոմի հրաժարվելն էր։ Այս վերջին հանգամանքը հատկապես էական էր. շրջանցելով Կաննեից անմիջապես հետո սկսած իր նախկին քաղաքականությունը, Հաննիբալը Փիլիպոս V-ի հետ կնքված համաձայնության մեջ նույնպես փաստորեն կրկնում է հաշտության և բարեկամության պայմանագիր կնքելու համար Հռոմին արված հրավերը։ Սակայն այս կոչը նույնպես լսելի չեղավ։ Պայմանագրում խիստ անորոշ կերպով են ձևակերպված նաև իր մակեդոնական դաշնակցին օգնություն ցույց տալու վերաբերյալ Հաննիբալի պարտավորությունները։ Այստեղ վերջինիս որևէ երաշխիք չի տրվում նաև Հունաստանում տիրապետություն ունենալու վերաբերյալ։ Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ պայմանավորվող կողմերը բացառիկ զգուշություն են ցուցաբերել, չկամենալով իրենց կաշկանդել որոշակի պարտավորություններով[109]։

Հատկանշական է նաև մերձավորարևելյան դիվանագիտության սովորական ընթացակարգին համապատասխան կնքված այդ պայմանագրի ձևը։ Ինչպես ցույց է տվել Է. Բիքերմանը այդ փաստաթղթի վերաբերյալ իր հույժ հետաքրքիր ուսումնասիրության մեջ[110], Փիլիպոս V-ին Հաննիբալի տված երդման հունարեն բնագիրը Պոլիբիոսի մոտ փյունիկա-պունիկյան բնագրի՝ բառացիորեն ճշգրիտ թարգմանությունն է։ Իր հիմնական գծերով այն իրենից ներկայացնում է բերիտը՝ դաշնակցային հարաբերություններ հաստատող այն երդումը, որը կատարվում էր աստվածների ներկայությամբ և բովանդակում էր իր և պայմանագիր կողմի աստվածներին ուղղված դիմում։ Է. Բիքերմանի կարծիքով նրա մեջ եղած անուններն ու տերմինաբանությունը սկիզբ են առնում II հազարամյակի մերձավորարևելյան պայմանագրերից։ Երդումը տալիս է ինքը՝ Հաննիբալը և նրա ճամբարում գտնվող բոլոր կարթագենցիները։

Այդպիսի երդումը թեև նախատեսում էր մակեդոնացիներին օգնություն ցույց տալ պատերազմին մասնակցող կարթագենցիների, Կարթագենին ենթակա համայնքների և դաշնակիցների կողմից, բայց Կարթագենական պետության, որպես այդպիսի կողմի վրա նման պարտավորություններ չէր դնում և կարթագենական կառավարությանը չէր կաշկանդում նրա գործողությունների մեջ, ինչպես ժամանակին Իբերից այն կողմ չանցնելու վերաբերյալ Հասդրուբալի երդումը չէր կաշկանդել ո՛չ նրա հաջորդներին և ո՛չ էլ կենտրոնական իշխանություններին։

Վերջին հանգամանքը, որն, ինչպես երևում է, Փիլիպոսը նկատի չէր առել, Կարթագենի և Մակեդոնիայի միջև եղած դաշինքը դարձնում էր խիստ անկայուն և հետագայում կարող էր ծնել շատ բարդություններ։ Ըստ էության, դա դաշինք էր Մակեդոնական պետության անունից գործող և նրան անձնավորող Փիլիպոսի ու սոսկ իր իսկ անունից հանդես եկող և լոկ իրեն ներկայացնող Հաննիբալի միջև։

Բայց և այնպես, դաշինքի կնքումը թե՛ մեկի և թե՛ մյուսի համար դիվանագիտական մեծ հաջողություն էր։ Ինչպես արդեն ասվել է, նոր հակառակորդի երևան գալը բոլոր պարագաներում պետք է հռոմեական զորքերի մի մասը հեռացներ Հարավային Իտալիայում մղվող պայքարից[111]։ Թվում էր, թե Փիլիպոս V-ը հնարավորություն էր ստանում առանց դժվարության Իլլիրիան խլելու ուժասպառ եղած Հռոմից։ Սակայն կողմերը չկարողացան իրականացնել այդ հնարավորությունները, կամ գոնե օգտվել իրենց իսկ ստեղծած քաղաքական նոր իրադրությունից։

Բանակցությունները վերջացնելուց հետո մակեդոնական պատվիրակները, դուրս գալով կարթագենական ճամբարից, շարժվեցին հետադարձի ճանապարհով։ Հաննիբալը նրանց հետ ուղարկեց նաև իր կողմից լիազորվածներին՝ Գիսկոնին, Բոստարին (այսինքն՝ Բոդաշտարտին) և Մագոնին, որոնք Փիլիպոս V-ից պետք է ստանային պայմանագրի վավերացումը և ընդունեին նրա երդումը։ Առանց հատուկ արկածների, նրանք հասան Լատինիումյան Յունոնի տաճարին, որի մոտ թաքցված էին նավերը, և այնտեղից դուրս եկան ծով, սակայն նրանց նկատեցին Կալաբրիայի ափերը պաշտպանող հռոմեական նավերը։ Մակեդոնացիներն այն է փորձում էին փախչելով ազատվել, բայց համոզվելով, որ հռոմայեցիները իրենց հեշտությամբ կհասնեն, նրանք որոշեցին հանձնվել։ Այս իրադրության մեջ Քսենոփանեսը որոշեց դիմել հին և արդեն փորձված հնարանքին. նավախմբի հրամանատարին նա հայտարարեց, որ իբրև թե Փիլիպոս թագավորն իրեն ուղարկել է հռոմայեցիների մոտ դաշնագիր կնքելու համար, որ ինքը եկել է Մարկոս Վալերիոսի մոտ,

կարող է միայն նրան ներկայանալ՝ վտանգի չենթարկելով իր անձը, սակայն չի կարողացել անցնել հակառակորդի զորքերի կողմից գրավված Կամպանիայի միջով։ Այս անգամ Քսենոփանեսին հավատ չընծայեցին։ Կարթագենացու կերպարանքն ու հագուստը, վերջապես, առոգանությունը մերկացրեցին Հաննիբալի պատվիրակներին, իսկ այնուհետև վախեցած պատվիրակների մոտ գտան Փիլիպոսին Հաննիբալի հաստատագրած նամակը և պայմանագիրը։ Հռոմեական նավախմբի հրամանատարն անհրաժեշտ գտավ անհապաղ Հռոմ ուղարկել պատվիրակներին ու ձեռք բերված նյութերը. գերյալներին տարան 5 նավերով (յուրաքանչյուրին առանձին նավով), պահելով խիստ մեկուսացման մեջ (Լիվիոս, 23, 34, 1—9)։ Հռոմում սենատը կարգադրեց գերիներին բանտ նետել, իսկ նրանց ուղեկցորդներին վաճառել ստրկության (Լիվիոս, 23, 38, 7)։

Մինչ այդ, հռոմայեցիների կողմից գրավված մակեդոնական նավերից մեկը, ճանապարհից փախչելով, հեռացավ դեպի հայրենիք. նրա ժամանումից հետո հայտնի դարձավ, որ թե՛ Փիլիպոսի պայմանները, թե՛ պունիկացիները և թե՛ փաստաթղթերը հափշտակված են թշնամու կողմից։ Թագավորը չիմանալով, թե Քսենոփանեսն ինչպիսի պայմաններով է համաձայնություն ձեռք բերել Հաննիբալի հետ, վերջինիս մոտ՝ նախկին հանձնարարությամբ, ուղարկեց նոր պատվիրակների. այս անգամ ամեն ինչ բարեհաջող վերջացավ։ Սակայն ժամանակը ձեռքից բաց էր թողնվել. ամառը վերջացավ ավելի շուտ, քան թագավորը կկարողանար որևէ բան կատարել (Լիվիոս, 23, 39, 1—4)։ Կորսվեց նաև գաղտնիության հանգամանքը. տեղեկանալով Հաննիբալի և Փիլիպոս V-ի դաշինքի ու դրա մանրամասների մասին, հռոմեական կառավարությունը կարող էր անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել՝ նոր թշնամուն հակահարված տալու գործը կազմակերպելու համար։

Նույն այդ ժամանակ Իտալիայում պատերազմն ընթանում էր իր հունով՝ «ալարկոտաբար», ինչպես ասում է Լիվիոսը (23, 35, 1), քանի որ կողմերից մեկը տակավին խիստ թույլ էր, իսկ մյուսը կորցրել էր հարձակողական թափը։ Այս անգամ նույնպես նոր ռազմարշավի նախաձեռնողը Կապուան էր, որը վճռել էր իր գերիշխանությանը ենթարկել Կումեն։ Այդ մտահղացման իրագործումը լուրջ սպառնալիք էր ներկայացնում Հռոմի համար. դրանով իսկ Կապուան ոչ միայն հայտարարում էր Իտալիայում գերիշխելու իր հավակնությունների մասին, այլև դրանք կենսագործելու համար կատարում էր առաջին քայլերը։ Անհամեմատ ավելի բարդ էր Հաննիբալի դրությունը։ Մի կողմից Կապուայի գործո-

գությունները ունեին շեշտված հակահռոմեական բնույթ և, հատկապես, նպաստավոր էին Հաննիբալի համար. դրանք դուրս չէին գալիս Հաննիբալի և Կապուայի միջև եղած դաշնակցային հարաբերությունների շրջանակներից։ Մյուս կողմից Կապուայի բուն իսկ ձեռնարկությունը կարող էր դառնալ ապագա ընդհարումների վտանգավոր նախագուշակը. նա իր գործողությունները չէր համաձայնեցրել Հաննիբալի հետ։ Սակայն անսպասելիորեն իրագործությունները անբարեհաջող ընթացք ստացան թե՛ կապուացիների և թե՛ իր իսկ Հաննիբալի համար։

Իրենց մտահղացումն իրագործելու համար կապուացիները որոշեցին օգտվել Գամեում կատարվող ամենամյա համակամպանիական զոհաբերություններից։ Նրանք հաղորդեցին Կումե, որ այս անգամ հանդիսավոր արարողության համար լիակազմ ժամանելու է Կապուայի սենատը, և խնդրեցին, որպեսզի Կումեի սենատը նույնպես ներկայանա հենց այնտեղ՝ խորհրդակցության և միասնական քաղաքական ուղեգծի մշակման համար։ Կապուացիները խոստացան Գամեն պաշտպանել հռոմայեցիներից ու կարթագենցիներից։ Կումեն չմերժեց առաջարկը, սակայն բոլոր տեղի ունեցածի մասին հայտնեց հռոմեական կոնսուլ Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսին, որն այդ պահին Լիտերնումի մոտակայքում զբաղված էր իր զինվորների վարժեցմամբ։ Գրակքոսը կումեցիներին կարգադրեց դաշտերից ամեն ինչ տեղափոխել քաղաք ու նրա պարիսպներից դուրս չգալ, և ինքը զորքը տարավ Կումե, որը Գամեից երեք մղոն հեռավորության վրա էր։

Կապուացիները հավաքվեցին Գամեում։ Զոհաբերությունները շարունակվեցին երեք օր։ Նույն այդ ժամանակ դարանում կանգնած էր այն ժամանակվա չափերով մի մեծ զորաջոկատ (14 հազար մարդ), Կապուայի գերագույն մագիստրատ Մարիոս Ալիֆիոսի հրամանատարությամբ։ Երբ զոհաբերությունն ավարտվեց, Գրակքոսը հարձակվեց կապուական ճամբարի վրա, կոտորեց այնտեղ ավելի քան 2000 հոգու և փութապես վերադարձավ Կումե։

Այս իրադարձությունները տեղի ունենալիս, պունիկյան զորքերը բանակել էին Կապուայից ոչ հեռու, Տիֆատա լեռների մատույցներում։ Կապուայում հազիվ էին տեղեկացել Գամեում տեղի ունեցած կոտորածի մասին, երբ Հաննիբալը արագ շարժվեց այնտեղ, հուսալով վրա հասնել Գրակքոսի զորականներին, որոնք, ինչպես ինքն էր կարծում, զբաղված պետք է լինեին ավարառությամբ և ռազմասավարի փոխադրմամբ։ Սակայն այնտեղ նա գտավ միայն դաշնակիցների դիակներ և կոտորածի հետքեր։

Հաննիբալի առջև վերստին ծառացավ այն հարցը, թե ինչ պետք է անի հետագայում։ Ոմանք (մեր սկզբնաղբյուրը չի նշում՝ հատկապես ովքեր) նրան առաջարկեցին անհապաղ պաշարել Կումեն. հենց ինքը՝ զորավարը նույնպես հակված էր այդ վճռին։ Սակայն քաղաքի վրա դիմելու փոխարեն, Հաննիբալը վերադարձավ Տիֆատայի կողմը, քանի որ նրա զինվորները բացի զենքերից, ոչինչ չունեին իրենց հետ։ Միայն հաջորդ օրը նա մոտեցավ Կումեին և սկսեց պաշարումը։ Քաղաքը գրավելու՝ կարթագենցիների առաջին փորձը չհաջողվեց։ Հաննիբալի հրամանով քաղաքային պարիսպների մոտ կառուցեցին պաշարողական աշտարակ, սակայն նրա դիմաց, հենց պարսպի վրա, Գրակքոսը կարգադրեց կառուցել մեկ ուրիշ և նշանակալիորեն ավելի բարձրը։ Երբ պունիկացիներն իրենց աշտարակն ընդհուպ մոտեցրին պարսպին, պաշարվածներն այրեցին այն։ Միաժամանակ քաղաքի դարպասներից կատարած խիզախ արտելքով կարթագենական պահակաջոկին ստիպեցին փախչել ճամբար։ Հաջորդ օրը Հաննիբալն իր զորքերը դասավորեց քաղաքի դարպասների առջև, այն հաշվով, որ հաջողությամբ արբեցած հակառակորդը կկամենա իսկական մարտ տալ։ Գրակքոսը պրովոկացիայի չենթարկվեց, և Հաննիբալն ստիպված եղավ չգրավված քաղաքից հեռանալ դեպի Տիֆատա (Լիվիոս, 23, 36, 1—37, 9)։

Մոտավորապես նույն այդ ժամանակ հայտնի դարձավ կարթագենցիների ևս մեկ անհաջողության մասին։ Լուկանիայում, Գրումենտումի մոտակայքում պունիկյան զորապետ Հաննոնը՝ Բոմիլկարի որդին, պարտություն կրեց հռոմայեցի Տիբերիոս Սեմպրոնիոս Լոնգոսից և վերադարձավ Բրուտիում։ Հռոմայեցիներն ուժով վերահաստատեցին իրենց իշխանությունը Վերկելումի, Վեսկելիումի և Սիկիլինումի վրա, դժվարանալով՝ հաշվեհարդար տեսնելով կարթագենցիների կողմնակիցներին նկատմամբ (Լիվիոս, 23, 37, 10—13)։ Հաննիբալին լուրջ հարված հասցրեց նաև կոնսուլ Քվ. Փաբիոս Մաքսիմոսը, երբ, տարբեր տեսակի զոհամատուցումների պատճառով ուշանալուց հետո, վերջապես հնարավորություն ստացավ անցնել Վոլտուրնոսը։ Քվ. Փաբիոս Մաքսիմոսը դրոհով վերցրեց Տրեբուլան և Ավտրիկուլան[12], իսկ այնուհետև, բանակելով Սուեսսուլայի մերձակայքում, այնտեղից զորք ուղարկեց Նոլա, որպեսզի խոչընդոտի նրա՝ Հաննիբալի կողմը անցնելուն (Լիվիոս, 23, 39, 5—8)։

Ինչպես արդեն ասվել է, կարթագենական կառավարությունը, տեղեկանալով Սարդինիայում հակահռոմեական շարժում սկսվելու և այն Հռոմից ետ նվաճելու հնարավորության մասին, որոշեց այնտեղ ուղարկել Հասդրուբալ Ճաղատին, սակայն սարսափելի փոթորիկը ցրեց պու-

նիկյան նավերը և նրանց քշեց-տարավ Բալեարյան կղզիների կողմը։ Այնտեղ Հասդրուբալը երկար ժամանակ վերանորոգել տվեց իր նավերը, մինչև որ նրանք հասցվեցին մարտական վիճակի (Լիվիոս, 23, 34, 16—17)։ Երբ այս լուրը Հռոմ հասավ, սենատը հրամայեց լրացուցիչ հավաքել 5000 հետևազորայիններ և 400 հեծյալներ և այդ ջոկատը Տիտոս Մանլիոս Տորկվատոսի գլխավորությամբ ուղարկել խռովությունը ճնշելու (Լիվիոս, 23, 34, 10—15)։

Անցնելով Սարդինիա, Մանլիոսը հրամայեց Կարալիսի մոտ նավերը ափ դուրս հանել և ծովայիններից կազմավորեց հետևազորային միավորումներ, ընդունեց բանակի հրամանատարությունը և այդպիսով ստացավ ընդամենը 25 հազար հետևազորային և 1200 հեծյալ[113]։ Առաջին իսկ մարտում, որը հռոմայեցիների դեմ սկսեց Գոստիոսը՝ ապստամբության նախաձեռնող Համպսիկորոսի որդին, սարդինացիները ջախջախվեցին, կորցրեցին 3000 սպանված և 800 վիրավոր, մնացածները, որ ցրվել էին կղզում, հավաքվեցին Կորնե քաղաքում։ Նույն այդ ժամանակ ապստամբներին օգնելու համար վերջապես Սարդինիա ժամանեց Հասդրուբալի նավատորմը, և Մանլիոսը բարվոք համարեց հեռանալ Կարալիս. իրենց հերթին Հասդրուբալն ու Համպսիկորոսը նույնպես շարժվեցին դեպի Կարալիս։ Մանլիոսը դուրս եկավ նրանց դեմ հանդիման, կարթագենցիներն ընկան շրջապատման մեջ և գրեթե լիովին ոչնչացան։ Հռոմայեցիները հատկապես հպարտանում էին նրանով, որ գերի էին ընկել կարթագենական երեք խոշոր գործիչներ՝ ինքը Հասդրուբալ Ճաղատը, ապստամբության կազմակերպիչ Հաննոնը և Մագոնը (սա ծագում էր Բարկյանների տոհմից և Հաննիբալի մերձավոր ազգականն էր)։ Համպսիկորոսի որդի Գոստիոսը ընկավ մարտում, իսկ ինքը՝ Համպսիկորոսը, իմանալով այդ մասին, ինքնասպան եղավ։ Կղզում լիովին վերականգնվեց հռոմեական տիրապետությունը (Լիվիոս, 23, 40—41, Եվտրոպիոս, 3, 12)։

Մոտավորապես նույն այդ ժամանակ տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որը մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրներում նշված է սոսկ թռուցիկ հիշատակումով (Լիվիոս, 23, 41, 8)։ Սիցիլիայի հռոմեական կոնսուլ պրետոր Տիտոս Օտակիլիոսը իր նավատորմով Լիլիբեոնից շարժվեց դեպի Աֆրիկայի ափերը և այնտեղ ամայացրեց կարթագենցիներին պատկանող տարածքը։ Դժվար է գերագնահատել այդ գործողության նշանակությունը, թեև այն առայժմ չհանգեցրեց Կարթագենի անմիջական մատույցներում հռոմեական պլացդարմի ստեղծմանը։ Այն ցույց տվեց, որ Կաննեից հետո նույնպես Կարթագենի հյուսիսաֆրիկյան տիրույթները ապահովված չեն հռոմեական ներխուժումից, և որ

[illegible] խիստ արագ կերպով շտկում է աղետավոր (ինչպես կարծվում էր սկզբում) ջախջախման հետևանքները։ Այս տպավորությունը պետք է ավելի ուժեղանար այն բանից հետո, երբ վերադարձի ճանապարհին Տ. Օտակիլիոսը ջախջախեց ու ցրեց Սարդինիայից հայրենիք վերադարձող պունիկյան նավախումբը և նույնիսկ գրավեց 7 նավ (Լիվիոս, 23, 41, 9)։

Սակայն ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմ շարունակում էր մնալ Հարավային Իտալիան։ Վերջապես Լոկրիս ժամանեցին Կարթագենից ուղարկված օժանդակ զորամիավորումներ. զինվորներ, փղեր և պաշարամթերք։ Ջոկատի հրամանատարն էր Բոմիլկարը։ Նրան հանկարծակիի բերելու համար հռոմեական զորապետ Ապպիոս Կլավդիոսը իր զորքերն արագ տեղափոխեց Մեսսանա, իսկ այնտեղից մոտեցավ Լոկրիսին, սակայն Բոմիլկարը հեռացավ Բրուտիում և այնտեղ միացավ Հաննոնին։ Լոկրիսը իր նավահանգստից ներս չթողեց հռոմեական նավերին, և Ապպիոս Կլավդիոսն ստիպված եղավ վերադառնալ Մեսսանա (Լիվիոս, 23, 41, 10—12)։

Այնուամենայնիվ հռոմեական հրամանատարությունը ամբողջապես իր ձեռքում էր պահում ռազմական նախաձեռնությունը։ Պրոկոնսուլ Մարկոս Կլավդիոսը, որ գլխավորում էր Նոլայի հռոմեական կայազորը, կարողացավ օգտագործել Տիֆատա լեռան մատույցներում բանակ դրած Հաննիբալի անգործությունը Հռոմի վաղեմի թշնամիների՝ գիրպիններիի և կավդինական սամնիացիների երկիրն ասպատակելու և այնպես ամայացնելու համար, որ սամնիացիները հիշեին հռոմայեցիների դեմ մղած պայքարում նախկինում իրենց կրած պարտությունները (Լիվիոս, 23, 41, 13)։ Գիրպիններն ու սամնիացիները օգնության համար դիմեցին Հաննիբալին (Լիվիոս, 23, 42—43, 4), և վերջինս վճռեց գրոհել Նոլան։ Բրուտիումից հենց այնտեղ ժամանեց Հաննոնը, Բոմիլկարի ջոկատի հետ։ Կարթագենցիների մոտենալը նկատելով, Մարկելլոսն իր զորքը տեղափոխեց քաղաքում, իսկ Նոլական սենատորներին հրամայեց պարբերաբար վրայից դիտել հակառակորդի գործողությունները (Լիվիոս, 23, 43, 5—8)[114]։

Նոլայի մերձակայքում իր ռազմական նոր գործողությունները Հաննիբալը որոշեց սկսել տեղական բնակչության հետ պայմանավորվելու փորձով։ Անկասկած նրա հրամանով էր, որ քաղաքային պարիսպներին մոտեցավ Հաննոնը[115] և զրուցելու համար դուրս կանչեց Գերենիոս Բասսին ու Գերիոս Պետիոսին, որոնք, հավանաբար, Նոլայի առավել ազդեցիկ սենատորներն էին։ Մարկելլոսի թույլտվությամբ նրանք դուրս

եկան դարպասներից, սակայն Հաննիբալի սպասած արդյունքը չստացվեց։ Հաննոնը, եթե հավատանք Լիվիոսի պատմածին (23, 43, 9—44, 2), նոլացիներին առաջարկեց հանձնվել և իր ձեռքը տալ հռոմեական կայազորը. այս դեպքում միայն նոլացիներից էր կախված լինելու նրանց ու Հաննիբալի միջև դաշինքի պայմանների թելադրումը։ Գերենիոս Բասոսը պատասխանեց, որ Նոլան պահպանում է հռոմայեցիների հանդեպ իր հավատարմությունը, և դրանով երկու կողմերը բաժանվեցին միմյանցից։

Բանակցությունների նման ելքը Հաննիբալին ցույց տվեց խաղաղ ճանապարհով Նոլան գրավելու հույսի ունայնությունը, և նա ձեռնարկեց գրոհի նախապատրաստությունը. շրջապատեց քաղաքի պարիսպները, որպեսզի բոլոր կողմերից միաժամանակ հարձակվի քաղաքի վրա։ Մարկելլոսը արտելք կատարեց, և, երբ զորայինները վազելով հավաքվեցին ընդհարման վայրը, այնտեղ կոտորած սկսվեց, որը դադարեց միայն տեղատարափ անձրևի պատճառով։

Երրորդ օրը, երբ Հաննիբալը իր զինվորների մի մասն ուղարկեց ավարի մատնելու Նոլայի շրջակայքը, նոր ընդհարում տեղի ունեցավ։ Թե՛ հռոմեական, թե՛ պունիկյան զորականներն սկզբում խիստ անվճռական էին կռվում և, ըստ երևույթին, ոչ մեծ հաճույքամբ, սակայն, դատելով Լիվիոսի պատմածից, Նոլացիների պաշտպանության ազդեցության տակ հետզհետե աճում էր հռոմայեցիների ոգևորությունը։ Ի վերջո կարթագենցիները փախան իրենց ճամբարը. հռոմայեցիներն այն է կամենում էին գրոհով գրավել այն, սակայն Մարկելլոսը նրանց տարավ Նոլայի պարիսպների ետևը։ Մարտում Հաննիբալը կորցրեց 5000 սպանված և 600 գերի. բացի այդ, ոչնչացավ 4 փիղ, իսկ երկուսը խլեցին հռոմայեցիները։ Ճակատամարտից շատ չանցած՝ 272 հեծյալներից բաղկացած մի ջոկատ անցավ Մարկելլոսի կողմը։ Նոլայի տակ մղած մարտերի արդյունքը Հաննիբալի համար թերևս ամենից տհաճն էր։ Նա արդեն չէր կարող լիովին վստահ լինել իր սեփական զինվորների հանդեպ, որոնք սկսեցին հուսախաբ լինել իրենց առաջնորդի հաջողակության նկատմամբ։ Մարտնչելով հռոմայեցիների կողմում, նրանք, ըստ երևույթին, ապագայի հանդեպ ավելի մեծ վստահություն էին տածում։ Ի դեպ ասած, նրանց հույսերը լիապես արդարացան. պատերազմից հետո նրանք հողաբաժիններ ստացան Իսպանիայում և Աֆրիկայում (Լիվիոս, 23, 44, 6—46, 7, Պլուտ., Մարկ., 12)։ Պետք է ասել, որ հռոմեական ավանդությունը բարձր է գնահատել Նոլայի տակ Մարկելլոսի տարած հաղթանակը (տե՛ս Օրոսիոսի մոտ, 4, 16, 12). այնքան ազետ-

նրից հետո Մարկելլոսն առաջինը հույս արթնացրեց այն բանի նկատմամբ, որ Հաննիբալը կարող է պարտվել։

Եվ այդպես, Նոլան գրավելու համար կարթագենցիների ձեռնարկած նոր փորձը չհաջողվեց, ինչպես որ չէին հաջողվել նաև նախկիններ[116]։ Ձմեռը վրա հասավ, և Հաննիբալը, չցանկանալով մնալ իր համար անմատչելի քաղաքի պարիսպների տակ, Հաննոնին նրա զորքի հետ ուղարկեց Բրուտիում, իսկ ինքը մեկնեց Արպիքի կողմը, Ապուլիա՝ ձմեռային կացարանները (Լիվիոս, 23, 46, 8)։

Լսելով այդ մասին, Քվ. Փաբիոս Մաքսիմոսը մտավ Կապուային պատկանող երկրամասը, սկսեց այն ամայացնել և կապուացիներին ստիպեց քաղաքից դուրս գալ և բանակել բաց դաշտում՝ պարիսպների առջև։ Սկսվեցին հեծելաբախումներ, որոնք սակայն հաջողություն չբերեցին ո՛չ այս և ո՛չ էլ մյուս կողմին (Լիվիոս, 23, 46, 9—48, 1)։ Փաբիոսն իր ձմեռային բնակարանները կառուցեց Սուեսսուլայի մերձակայքում, իսկ Մարկելլոսին հրամայեց Նոլայում թողնել պաշտպանության համար անհրաժեշտ կայազոր, մնացյալ զորականներին արձակել Հռոմ գնալու (Լիվիոս, 23, 48, 2)։ Մյուս կոնսուլը՝ Տիբ. Սեմպրոնիոս Գրակքոսը, իր զորքերը Կումեից տեղափոխեց Լուկերիա և այնտեղից պրետոր Մ. Վալերիոսին ուղարկեց Բրունդիսիում՝ մակեդոնացիների հնարավոր հարձակման դեպքում պաշտպանություն կազմակերպելու համար (Լիվիոս, 23, 48, 3)։

Իսպանիայում նույնպես կարթագենական զորքերի դրությունը գնալով ավելի էր վատթարանում։ Հռոմայեցիները կարթագենցիներին հարկադրեցին վերացնել Իլիտուրգեի, իսկ այնուհետև նաև Ինտիբիլոսի պաշարումը (Լիվիոս, 23, 48, 4—49)։ Իսպանիայի գրեթե բոլոր ցեղերն ու ազգություններն անցան հռոմայեցիների կողմը։

215—214 թ. ձմեռը Հաննիբալն անցկացրեց Ապուլիայում, Արպիքից ոչ հեռու, ժամանակ առ ժամանակ մանր ընդհարումներ ունենալով հռոմայեցիների՝ Տիբ. Սեմպրոնիոս Գրակքոսի զորայինների հետ, որոնք ձմեռում էին Լուկերիայում (Լիվիոս, 24, 3, 16—17)։ Քվ. Փաբիոս Մաքսիմոսն այդ ժամանակն օգտագործեց այն բանի համար, որպեսզի գրավի Պուտեոլին (Լիվիոս, 24, 7, 10), հռոմայեցիների համար ապահովելով Կամպանիայում այդ առևտրական կարևոր կենտրոնին տիրանալը։

Հարավային Իտալիայում ռազմական նոր գործողություններն սկսվեցին նրանից, որ Հաննիբալը փութով վերադարձավ Տիֆատա լեռան մատույցներում գտնվող իր հին ճամբարը։ Նրան այդ բանին դրդեցին կապուացիների համառ պահանջները. վերջիններս երկյուղ էին կրում,

թե հռոմայեցիներն իրենց գործողությունները կվերսկսեն Կապուայի պաշարմամբ։ Ձմեռելուց առաջ դեպի Արպիք Հաննիբալի շարժումը, որը պետք է Ապուլիայում ամրապնդեր նրա տիրապետությունը, ապարդյուն անցավ. նա այնտեղից հույժ արագ կերպով պետք է հեռացներ իր զորքերը, իսկ հռոմայեցիները մնացին այնտեղ։ Սակայն Հաննիբալը Տիֆատայի մոտ երկար չէր կամենում մնալ. իր նումիդիական և իսպանական զինվորներին թողնելով այնտեղ, Հաննիբալը մեկնեց դեպի Ավերնոսյան լիճ, իբրև թե զոհաբերություններ կատարելու համար. իրականում նա կամենում էր գրոհել Պուտեոլիի և այնտեղ գտնվող հռոմեական կայազորի վրա (Լիվիոս, 24, 12, 1—5)։

Նրա այդ տեղափոխություններն ի նկատի առնելով, կոնսուլ Քվ. Ֆաբիոս Մաքսիմոսը Գրակքոսին հրամայեց իր զորքերը Լուկերիայից շարժել դեպի Բենևենտում, իսկ իր որդի պրետոր Քվ. Ֆաբիոս Մաքսիմոսին՝ գրավել Լուկերիան (Լիվիոս, 24, 12, 5—6)։

Մինչ այդ, Հաննիբալը հասավ Ավերնոսյան լճին։ Մինչ նա զոհեր էր մատուցում, նրան ներկայացան չորս մեծատոհմիկ պատանիներ Տարենթոնից։ Ինչ-որ մի ժամանակ նրանք եղել էին կարթագենական գերության մեջ, ոմանք Տրազիմենոսյան լճից հետո, մյուսները Կաննեից հետո տուն էին արձակվել և այժմ Հաննիբալին առաջարկում էին առիթից օգտվել և գրավել Տարենթոնը։ Նրանք պատմում էին, որ Տարենթոնի երիտասարդության մեծ մասը համաձայն է Կարթագենի հետ ունեցած բարեկամությունը և դաշինքը դերադասել Հռոմի հետ ունեցած բարեկամությունից և դաշինքից, և ահա այժմ իրենք եկել են Հաննիբալի ճամբարը, որպես այդ մարդկանց պատվիրակներ, և նրան խնդրում են, որպեսզի իր զորքերով որքան կարելի է ավելի մոտենա իրենց քաղաքին։ Հենց որ Տարենթոնից տեսնեն նրա մարտական տարբերանշանները, նրա ճամբարը, քաղաքն անմիջապես կհանձնվի, քանի որ ժողովուրդն այնտեղ գտնվում է երիտասարդության ազդեցության տակ (Լիվիոսն օգտագործում է նույնիսկ ավելի կտրուկ արտահայտություն՝ «իշխանության տակ»), իսկ պետությունը՝ ժողովրդի ձեռքում (Լիվիոս, 24, 13, 1—3)։ Լիվիոսի այս պատմածից կարելի էր հետևցնել, որ Տարենթոնում, ինչպես այդ եղել էր շատ այլ դեպքերում, Հաննիբալը հրահրել է հակահռոմեական դեմոկրատական շարժում, որը գլխավորում էին տեղական ավագանու որոշ ներկայացուցիչներ, հույս ունենալով անխուսափելի հեղաշրջման հետևանքով անցնել իշխանության գլուխ։

Հաննիբալի համար տարենթոնցիների առաջարկը և՛ չափազանց հրապուրիչ էր, և՛, թվում էր, հեշտ իրագործելի։ Տարենթոնի գրավումը հնարավոր էր դարձնում Հաննիբալի և Փիլիպոս V-ի միջև ուղղակի

շփումը. անհրաժեշտության դեպքում Տարենթոնում կարող էին ափ իջեցնել մակեդոնական զորքեր։ Զարմանալի չէ, որ, ինչպես գրում է Լիվիոսը, Հաննիբալը համակված էր այդ քաղաքը գրավելու մեծ ցանկությամբ։ Սակայն նախքան հարավ-արևելք շարժվելը, Հաննիբալն այնուամենայնիվ վճռեց սկզբում հարձակվել Պուտեոլիի վրա. երեք օր նա կրցրեց Պուտեոլիի պարիսպների տակ, ապարդյուն կերպով ջանալով զոհով գրավել այն, և այնտեղից դիմեց Նեապոլիսի վրա, որպեսզի ամայացնի նրա շրջակայքը։ Հաննիբալի մոտեցումը Նոլայում տեղացի հասարակ ժողովրդի մեջ առաջացրեց Հռոմի հանդեպ թշնամական տրամադրությունների նոր բռնկում. նույնիսկ Հաննիբալի մոտ Նոլայից պատվիրակներ ժամանեցին, խոստանալով նրան հանձնել քաղաքը։ Նոլացի մեծատոհմիկները փութապես օգնության կանչեցին Մարկելոսին, որն օգտվելով Հաննիբալի դանդաղկոտությունից (վերջինս շատ չէր վստահում Նոլայում ունեցած իր կողմնակիցներին) այնտեղ տեղավորեց 6000 հետևազորային և 300 հեծյալ (Լիվիոս, 24, 13, 6—11)։

Մինչ Հաննիբալն այդ աննպատակ տեղաշարժերն էր կատարում, Կամպանիայում տեղի ունեցավ երկու իրադարձություն, որոնք էապես պետք է ներգործեին գրության զարգացման վրա. կոնսուլ Քվ. Ֆաբիոս Մաքսիմոսը սկսեց կարթագենական կայազորի կողմից գրաված Կասիլինումի պաշարումը (Լիվիոս, 24, 14, 1), իսկ Բոմիլկարի որդի Հաննոնը Բրուտիումից մոտեցավ Բենևենտումին։ Լուկերիայից հենց այնտեղ եկավ նաև Գրակքոսը։ Նա մտավ քաղաք և տեղեկանալով, որ Հաննոնը իր ճամբարը տեղավորել է երեք մղոն հեռավորության վրա, Կալոր գետի մոտ, դուրս գալով Բենևենտումից, տեղավորվեց պունիկացիներից մոտավորապես մեկ մղոն հեռավորության վրա։ Պատրաստվելով մարտի, նա իր զինվորներից յուրաքանչյուրին, որոնց ստրկական կացությունը տակավին պահպանվում էր, խոստացավ ազատություն՝ թշնամու մի գլուխ բերելու դեպքում։ Երբ հաջորդ օրն սկսվեց ճակատամարտը, այդ պայմանը քիչ էր մնում հռոմայեցիներին խանգարեր հաղթանակի հասնելու։ Սպանելով թշնամիներին, հռոմեական զինվորները ջանում էին կտրել նրանց գլուխները, իսկ այնուհետև՝ գլուխները աջ ձեռքում բռնած, հեռանում էին մարտադաշտից։

Երբ զինվորական տրիբունները տեղի ունեցածի մասին հաղորդեցին Գրակքոսին, նա հրամայեց անմիջապես դեն նետել գլուխները. զինվորներն արդեն ապացուցել են իրենց քաջությունը և նրանք անպայման կստանան ազատություն։

Ճակատամարտը վերսկսվեց նոր թափով. Հաննոնի նումիդիական հեծելազորի դեմ նետվեցին հեծելակներ, սակայն ճակատամարտի ելքը

տակավին պարզ չէր։ Այն ժամանակ Գրակքոսը հայտարարեց, որ իր զինվորները ազատություն կտանան լոկ այն դեպքում, եթե թշնամին փախուստի մատնվի։ Հռոմեական հետևազորի բուռն գրոհը այն աստիճան ուժեղացավ, որ Հաննոնի զինվորները չդիմացան և փախուստի դիմեցին։ Խառնաշփոթ կոտորածի վերածված մարտը շարունակվեց կարթագենական ճամբարում։ Հաննոնի 7000 հետևազորայիններից, որոնք բաղկացած էին զլխավորապես բրուտիներից ու լուկաններից և 1200 հեծելազորայիններից՝ նումիդիացիներից, մավրերից և ոչ մեծաթիվ իտալիկներից, զորավարի հետ մեկտեղ փրկվեց ավելի պակաս քան 2000 հոգի, դերազանցապես հեծյալներ։

Գրակքոսը կատարեց իր խոստումը։ Բենևենտումի տակ տեղի ունեցած ճակատամարտին մասնակցած բոլոր ստրուկներն ստացան ազատություն։ Հետաքրքիր է, որ կարթագենական ճամբարում ձեռք բերված անասունները Գրակքոսը դուրս հանեց ընդհանուր ռազմավարից և հայտարարեց, որ անասնատերերը (հավանաբար տեղացի բնակիչները) կարող են մեկ ամսվա ընթացքում անասունների նկատմամբ հարուցել իրենց իրավունքը և վերցնել նրանց։ Այսօրինակ միջոցառումը իտալիկներին պետք է ցույց տար, որ հռոմեական զորքերը իրենց դաշնակիցներին պաշտպանում են կողոպուտներից ու բռնություններից (Լիվիոս, 24, 14—26։)

Որոշ ժամանակ հետո Գրակքոսը Լուկանիայում հավաքեց ու կազմավորեց մի քանի կոհորտա և նրանց ուղարկեց ավարի մատնելու հռոմայեցիների թշնամիներին։ Հաննոնը հարձակվեց դաշտերում ցրված զինվորների վրա և հակառակորդին պատճառեց Բենևենտումի տակ իր կրածից ոչ պակաս կորուստ, ասում է, մեր սկզբնաղբյուրը, ապա փութապես հեռացավ Բրուտիում, խուսափելով Գրակքոսի հիմնական ուժերի հետ նոր հանդիպումից (Լիվիոս, 24, 20, 1—3)։

Նույն այդ ժամանակ Հաննիբալը մոտեցավ Նոլայի պարիսպներին[117], Նկատելով նրա մոտենալը, Մարկելոսը շտապ Սուեսսուլայից Նոլա կանչեց լրացուցիչ համալրումներ. բացի այդ, մութ գիշերին քաղաքից նա մի հեծելաջոկատով դուրս ուղարկեց Գայոս Կլավդիոս Ներոնին, որը շրջանցելով կարթագենցիներին, պետք է կրնկակոխ հետևեր նրանց, և երբ սկսվեր ճակատամարտը, թիկունքից հարձակվեր նրանց վրա։ Ներոնն, ըստ երևույթին, ճանապարհը կորցրեց. գուցե նրա ժամանակը չբավականացրեց. այսպես թե այնպես, նա չկատարեց հրամանը։ Այդուհանդերձ, Նոլայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կարթագենական զորքերն ստիպված եղան նահանջել։ Մարկելոսը չհամարձակվեց հետապնդել նրանց։ Հաջորդ օրը նա իր զինվորներին վերստին մարտադաշտ հանեց, սակայն Հաննիբալը պատերազմի ամբողջ ընթացքում առաջին անգամ գերադասեց խուսափել մարտից։ Այս, ըստ երևույթին, մեր փաստը (մեր աղբյուրը գրեթե նրա վրա չի պահում ընթերցողի ուշադրությունը, նենգամտորեն նշելով միայն, որ Հաննիբալը, չընդունելով մարտը, լռելյայն իրեն պարտված ճանաչեց) յուրովի շատ նշանակալից էր։ Ինչպես երևում է, անցել էր այն ժամանակը, երբ հենց Հաննիբալն էր ձգտում ճակատամարտ պարտադրել հռոմայեցիներին, իսկ նրանք, համենայն դեպս, այնպիսի զորավարներ, ինչպիսիք էին Փաբիոսն ու Էմիլիոս Պավլոսը, ջանում էին խուսափել դրանից։ Դժվար էր ավելի ակնառու կերպով ցույց տալ, թե ինչպես կտրուկ կերպով փոխվել էր ուժերի հարաբերակցությունը Իտալիայում։ Համենայն դեպս, Նոլային տիրանալու Հաննիբալի երրորդ փորձը ձախողվեց. երեք օր նրա պարիսպների տակ անցկացնելուց հետո նա հեռացավ Տարենթոն (Լիվիոս, 24, 17)։

Նոլայի տակ Հաննիբալի կրած անհաջողությունը և փութապես դեպի Տարենթոն նրա հեռանալը հռոմեական հրամանատարությանը հնարավորություն տվեց մեծ ուշադրություն հատկացնել Կասիլինումի պաշարմանը. վերջինս պաշտպանում էին 2000 կապուացի և Հաննիբալի 700 զինվորներ (կայազորի հրամանատարն էր Ստատիոս Մետիոսը)։ Կամենալով հարձակվել Փաբիոսի ճամբարի վրա, Կասիլինումի անմիջական մատույցներում գտնվող Ստատիոս Մետիոսը զինեց և իր ջոկատին միացրեց տեղացի պլեբեյներին։ Փաբիոսն օգնության կանչեց Մարկելոսին, սակայն պաշարումը հռոմայեցիների համար անհաջող դասավորվեց։ Փաբիոսն առաջարկեց հրաժարվել այն շարունակելուց և նահանջել։ Մարկելոսը չհամաձայնվեց. անհրաժեշտ էր սկսված գործը մինչև վերջ հասցնել՝ չխայտառակվելու համար։ Հռոմայեցիներն սկսեցին պաշարողական աշխատանքները, և կապուացիները, հասկանալով, որ անխուսափելի գրոհի ժամանակ իրենք չեն կարող արդյունավետ դիմադրություն ցույց տալ, դիմեցին Փաբիոսին, խնդրելով իրենց թույլ տալ տուն մեկնելու։ Սակայն Մարկելոսը գրավեց քաղաքի դարպասները, և քաղաքից դուրս եկած բոլոր կապուացիները սրի քաշվեցին։ Կոտորածը շարունակվեց նաև հենց Կասիլինումում։ Միայն 30 կապուացիներ, որոնք մինչ այդ հաջողացրել էին փախչել Փաբիոսի մոտ, հնարավորություն ստացան նրա պաշտպանության տակ հասնել Կապուա. բոլոր մյուսները՝ թե՛ ողջ մնացած կապուացիները, թե՛ պունիկյան կայազորի զինվորները, գերի ընկան։ Գրավելով Կասիլինումը, հռոմայեցիներն այն դրեցին հարևանների իրավասության տակ. վերջիններս պետք է կանխեին նոր դավաճանությունը (Լիվիոս, 24, 19)։

Իսկ Հաննիբալը, իր ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ, շարժվեց դեպի Տարենթոն։ Միայն այդ քաղաքին պատկանող տարածքում նրա զորքերը դաղարեցրին ավարառությունը, ոչ այն պատճառով (նկատում է Սամնիումում Փաբիոսի հրեշավոր «սխրագործությունների» մասին հենց նոր պատմող Լիվիոսը), որ նրանք ավելի կարգապահ էին դարձել, այլ որովհետև Հաննիբալը չէր կամենում զրկել տարենթոնցիներին։ Սակայն նա այստեղ ևս ուշացավ։ Նրա հայտնվելուց երեք օր առաջ նախկին պրետոր, Բրունդիսիումում հռոմեական նավատորմի հրամանատար Մարկոս Վալերիոսը Մարկոս Լիվիոսին ուղարկեց Տարենթոն՝ պաշտպանություն կազմակերպելու։ Այնտեղ հավաքելով երիտասարդությանը և տեղավորելով նրան դարպասների մոտ, ինչպես նաև պարիսպների վրա, նա Հաննիբալին թույլ չտվեց հանկարծակի հարձակվելու քաղաքի վրա, և ոչ էլ դավադիրներին հնարավորություն տվեց կատարելու իրենց մտահղացումը։ Տարենթոնի պարիսպների տակ մի քանի օր անգործ անցկացնելուց հետո, Հաննիբալը մեկնեց դեպի Սալապիա, ուր որոշել էր տեղավորվել ձմեռելու համար (Լիվիոս, 24, 20, 9—16)։

Ինչպես արդեն ասվել է, Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Սիրակուզայի կառավարող շրջաններում երևան եկավ մի «դիսակցություն», որը ձգտում էր խզում առաջացնել Սիրակուզայի ու Հռոմի միջև։ Այն գլխավորում էր Գելոնը՝ զառամյալ Հիերոն թագավորի որդին։ Միայն Գելոնի մահը, որ վրա հասավ խիստ առեղծվածային հանգամանքներում, խանգարեց նրան իշխանության գլուխ անցնելու և իրագործելու այդ մտահղացումը։ Սակայն 215 թ. ամռանը իննսունամյա Հիերոն II-ը վախճանվեց, և արքայական թագը ժառանգեց նրա դեռևս բոլորովին պատանի թոռը՝ Գելոնի որդի Հիերոնիմը։

Հռոմեական անալիստական ավանդությունը սև գույներ չի խնայում այդ կառավարչին բնութագրելու համար։ «Երեխա, որը հաղիվ թե շափավոր կերպով կրեր ազատության բեռը, ուր մնաց թե իշխանությունը։ Ինչպիսին տարիքն է, այնպիսին էլ բանականությունն է. և՛ խնամակալները, և՛ բարեկամները օգտվում էին դրանից, որպեսզի նրան նետեն ամեն տեսակի ախտերի մեջ»,— կարդում ենք Լիվիոսի մոտ (24, 4, 1—2)։ Եվ այնուհետև (24, 5, 1—2). «Հիերոնիմը, ասես կամենալով իր թերություններով հավերժացնել պապի հիշատակը, արդեն իր հայտնվելու պահից իսկ, ցույց տվեց, թե որքանով է ամեն ինչ փոփոխվել։ Նրանք, ովքեր այդքան տարիների ընթացքում չէին նկատել, որ Հիերոնը կամ նրա որդի Գելոնը հագուստով կամ որևէ այլ պատվանշանով առանձնանում են մյուս քաղաքացիների մեջ, այժմ տեսնում էին ծիրանի,

ոսկեզարդ, զինված շքախումբ, և նույնիսկ այն, որ նա Գիոնիսիոս բրոնդեսի պես երբեմն արքունի պալատից դուրս էր գալիս չորս սպիտակ ձիերի լծած կառքով։ Այսքան փայլուն ու հպարտ արտաքինին համապատասխանում էին բոլոր մարդկանց հանդեպ տածած արհամարհանքը, հպարտ կեցվածքը, որով նա ունկնդրում էր ուրիշներին, վիրավորական մատները, ոչ միայն կողմնակի անձանց, այլև նույնիսկ խնամակալների համար մուտք ունենալու հազվադեպ հնարավորությունը, չտեսնված սարսափները, անմարդկային դաժանությունը»։ Պոլիբիոսի մոտ հանդիպում ենք այսպիսի արտահայտությունների. «Ի ծնե անկայուն» (7, 4, 6), «տղայի անկայունությունն ու անխելամտությունը» (7, 4, 8), «տիրակալի հիմարությունը» (7, 5, 3)։ Սակայն նույն Պոլիբիոսը (7, 7, 1—5) կտրուկորեն դեմ է արտահայտվում Հիերոնիմին որպես դաժան հրեշ և մոլությունների կիզակետ պատկերելուն. «Որոշ պատմագիրներ, գրելով Հիերոնիմի կործանման մասին, շարադրում են երկարաշունչ պատումներ, հագեցնելով դրանք հնարածո փաստերով. պատմում են մինչև իշխանության գլուխ նրա անցնելը նրանց (իմա՝ սիրակուզացիներին— Ի. Կ.) պատահած նախանշանակների և սիրակուզացիների դժբախտությունների մասին. ողբերգակների օրինակով պատկերում են և՛ դաժան բարքը, և՛ զեղծարարո արարքները, և վերջում՝ աներևակայելի այն սարսափները, որոնք պատահեցին նրա կործանման ժամանակ, կարծես ո՛չ Փալարիդոսը, ո՛չ Ապոլլոդորոսը և ո՛չ էլ որևէ այլ բռնապետ նրանից ավելի դաժանաբարո չէին։ Եվ երեխա էր, երբ ստացավ իշխանությունը ու դրանից հետո, ապրելով ոչ ավելի քան 13 կամ 12 ամիս, հրաժեշտ տվեց կյանքին։ Այդ ժամանակաընթացքում կարող էր այնպես լինել, որ սա կամ նա ենթարկվեին խոշտանգումների, և մերձավորներից կամ ուրիշ սիրակուզացիներից որևէ մեկը սպանվեր, սակայն անհավանական են թե՛ շափազանց անօրինականությունը, թե՛ անլուր զեղծարարությունը։ Կարելի է ասել, որ նա բնավորությամբ ծայրահեղորեն անխոհեմ էր և խախտում էր օրենքները, այնուամենայնիվ նրան չի կարելի վերոհիշյալ բռնապետներից որևէ մեկի հետ համեմատել»[118]։

Կանգ չառնելով Հիերոնիմի անհատական գծերի վրա, մանավանդ որ դրանց մասին դատելու համար մենք այնուամենայնիվ անաչառ տեղեկություններ չունենք[119], կնշենք, որ Հիերոնիմը լոկ հետևում էր իր հոր՝ Գելոնի, քաղաքական ուղեգծին. վերջինիս մասին հռոմայեցի մատենագիրը, որից վերևում մեջբերում արեցինք, ընդհանուր առմամբ, ոչ մի վատ բան չի կարողանում ասել, իսկ Պոլիբիոսը (7, 8, 9) նրան պատկերում է որպես հնազանդ և նվիրված որդի, այսինքն՝ որպես

հնարավոր առաքինություններից լավագույններով օժտված մարդու[120]։ Եվ բացի այդ, Գելոնը Հիերոն II-ի կառավարչակիցն էր։ Հիերոնիմի անկումից հետո Սիրակուզան, ինչպես հայտնի է, համառությամբ դիմակայում էր Հռոմին, որին հաջողվեց քաղաքը գրավել միայն երկարատև ու ծանր պաշարումից և արյունահեղ գրոհից հետո։ Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Սիրակուզայում զանգվածային դժգոհություն էր նկատվում հռոմեական կողմնորոշման նկատմամբ։

Ինչպիսի՞ք կարող էին լինել այն պատճառները, որոնք կյանքի կոչեցին նմանօրինակ տրամադրություններ։ Գրականության մեջ մատնանշում էին ի միջի այլոց կարթագենական հելլենականությունը, հունական աշխարհի հոգևոր կյանքին կարթագենցիների գործուն մասնակցությունը (մասնավորապես որոշ իմաստասիրական համակարգերի մշակումը) և, ընդհանրապես, Կարթագենում մշակութային բուռն կյանքը, որը չէր կարող չհարուցել հունական կրթված շրջանների, այդ թվում նաև Սիրակուզայում, մասնավորապես Սիրակուզայի հույժ հռչակված գիտնական և հասարակական գործիչ Արքիմեդի և նրա մերձավորների համակրանքը[121]։ Այս նկատառումներն, անկասկած, պետք է իրենց դերը խաղային. հռոմայեցիների ու կարթագենցիների միջև արծարծվող վեճում հունական «մտավորականության» (բոլորովին էլ ոչ ամբողջ «մտավորականությունը») որոշակի շերտեր հակված էին պահելու կարթագենցիների կողմը։ Այսպես, պունիկյան կողմնորոշմանն էր հետևում պատմագիր Փիլինոսը (Պոլիբիոս, 1, 14, 3)։ Որոշ հույն մատենագիրներ՝ Սոսիլոս Իլիացին, որը հեղինակել է Հաննիբալի կենսագրությունը բաղկացած յոթ գրքից (Դիոդորոս, 26, 4), և Սիլենոսը, գտնվում էին Հաննիբալի ճամբարում (Կորն. Նեպ., Հաննիբ., 13, 3)։ Սակայն Պոլիբիոսի (3, 20, 5) քննական դիտողությունները ցույց են տալիս, որ Սոսիլոսը բնավ չէր վայելում քիչ թե շատ հեղինակավոր պատմիչի համբավ։ Սակայն չպետք է մոռանալ նաև այն, որ Կաննեից անմիջապես հետո հռոմայեցիները դիմեցին Դելփիքին կանխագուշակության համար, և պատգամախոսը նպաստավոր պատասխան տվեց, դրանով իսկ քաղաքական ու բարոյական մեծ աջակցություն ցույց տալով Հռոմին, և որ Փաբիոս Պիկտորը Պունիկյան II պատերազմի իր պատմությունը գրել է հունարեն լեզվով, որ արդեն II դարում Սկիպիոնների շուրջն էին համախմբվել հույն գրողները։ Այլ կերպ ասած, նկատվում է հելլենական աշխարհ մտնելու հռոմայեցիների որոշակի ձգտումը, և այդ հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չթողնել հույների վրա։ Համենայն դեպս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հունական քաղաք-պետությունների դիրքորոշումը, ինչպես ցույց է տալիս մասնավորապես Նեապոլիսի կամ դելփյան պատգամախոսի օրինակը, բոլորովին միանշանակ չէր և այն որոշվում էր, անկասկած, շահադիտական դրդապատճառներով։ Ինչ վերաբերում է ուխտադրժությանն ու պատերազմը վարելու բարբարոսական եղանակներին, ապա դրանում թե՛ Հաննիբալը և թե՛ հռոմեական զորավարները միմյանց չէին զիջում։

Կաննեի ճակատամարտից հետո Սիրակուզայի դիրքավորումը գնահատելիս չպետք է մոռանալ հետևյալ հանգամանքները։ Հռոմի հետ ունեցած դաշնակցային հարաբերությունները թեև Սիրակուզայի համար խաղաղություն և որոշակի աստիճանի անկախություն էին ապահովում, այդուհանդերձ, պետության ուսերին ընկած ծանր բեռ էին, քանի որ Հռոմին ցույց տրված նյութական օժանդակությունը քիչ ծախսեր չէր պահանջում։ Եվ բացի այդ, առանձնապես Կաննեից հետո, այն Սիրակուզային դնում էր սպառնալից կացության մեջ. վերջինս ուզած պահին կարող էր սանկցիաներ սպասել Կարթագենից։ Վերջապես, Հռոմի հետ ունեցած դաշինքը Սիրակուզային ոչ մի հեռանկար չէր ընձեռում նրա տիրույթները Սիցիլիայում ընդարձակելու համար. ամբողջ կղզին, բացառությամբ բուն Սիրակուզայի տարածքը, արդեն իրենից ներկայացնում էր հռոմեական մի պրովինցիա, և վերջինիս կողմից Սիրակուզայի կլանումը, այսինքն՝ նրա ինքնուրույնության վերջին մնացորդների կորուստը, միայն ժամանակի խնդիր էր. Կարթագենի հետ Սիրակուզայի մերձեցումը հանգեցրեց հռոմեական կախվածության թոթափմանը։ Իտալիայում Հաննիբալի վարվելակերպը թվում էր, թե հիմք է տալիս, որ Կարթագենի հետ ունեցած փոխադարձ կապերը այնքան ծանրաբեռնող չեն լինի և կընդունեն իրավահավասար պետությունների դաշինքի ձև. վերջապես, ի տրիտուր հավանական հաղթողին ցույց տված օգնության, կարելի էր Հռոմի սիցիլիական տիրույթներից համեղ պատառ պոկելու հույս ունենալ։ Հաննիբալի համար Սիրակուզայի հետ ունեցած դաշինքը նշանակում էր Հարավային Իտալիայում Կարթագենի տիրապետության ընդլայնում, Հռոմի դեմ պատերազմի մեջ նոր ուժերի ներգրավում, որն ամբողջությամբ առած, նրա համար չէր կարող բարենպաստ ձևով չներգործել իրադրության վրա։ Դրա համար Հաննիբալը պատրաստ էր խոստանալու այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, մանավանդ որ Սիրակուզայի ճակատագիրը վերջնականապես կարելի էր վճռել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերանայել միայն գլխավոր թշնամու՝ Հռոմի ոչնչացումից հետո, երբ ամբողջ Սիցիլիան վերստին կդառնար Կարթագենինը։ Ուստի բացառված չէր, որ Սիրակուզայում տեղի ունեցող իրադարձությունների ետևում կանգնած էր Հաննիբալը։ Իհարկե, կասկածից

դուրս է, որ Սիրակուզայի կառավարությունն անում էր այն, ինչ որ ձգտում էր Հաննիբալը[122]։

Իրադարձությունները Սիրակուզայում ծավալվեցին հետևյալ կերպ։ Հիերոն II-ի մահվանից հետո, նրա կտակի համաձայն, Սիրակուզայի թագավոր հռչակվեց դեռևս բոլորովին պատանի Հիերոնիմը, որին վախճանվող թագավորը 15 խնամակալ էր նշանակել։ Պատմելով այս մասին, Լիվիոսը (24, 4, 1—3) ավելացնում է, որ անհանգստանալով իր թոռան վարքից, որը չէր կարող «ժուժկալ» կյանք վարել և, մանավանդ, «չափավոր ձևով» կառավարել պետությունը, Հիերոնը վախճանվելուց առաջ, լուրերի համաձայն, մտածում էր այն մասին, որ Սիրակուզայում հաստատի «ազատություն», այլ կերպ ասած՝ իշխանությունը հանձնի պոլիսային վարչական մարմիններին և այդպիսով կանխի երեխայի կողմից կառավարվող պետության անկումը։ Միայն տեղի տալով իր դուստրերի՝ Դեմարատայի և Հերակլեայի, համառ խնդրանքներին (վերջիններս հույս ունեին, որ մանկահասակ արքայի օրոք փաստական կառավարիչներ կդառնան իրենք և իրենց ամուսինները՝ Անդրանոդորոսը և Զոիպոսը), Հիերոնը կարծես թե փոխեց իր դիտավորությունը։ Սակայն Հիերոնի մերձավոր ազգականները առանց քաշվելու խախտեցին նրա կտակը։

Շուտով այն բանից հետո, երբ Հիերոնիմը հռչակվեց թագավոր, Անդրանոդորոսը ցրեց ժամանակավոր կառավարչության խորհուրդը, հայտարարելով, որ Հիերոնիմն արդեն հասել է պատանեկան տարիքի և կարող է ինքնուրույնորեն կառավարել պետությունը։ Խնամակալի լիազորություններից հրաժարվելով, նա պահպանեց երիտասարդ թագավորի վրա ունեցած ազդեցությունը (Լիվիոս, 24, 4, 9), ինչպես պարզվեց՝ Զոիպոսի և Փրաասոնի հետ միասին (Լիվիոս, 24, 5, 7)։ Ըստ Լիվիոսի (24, 5), Հիերոնիմը պետական գործերին անչափ մեծ ուշադրություն չէր հատկացնում։ Լիվիոսը գրում է, որ նրան գլխավորապես հետաքրքրում էին խորհրդականների գժտություններն ու նկրտումները։ Սակայն նա չէր կարող շրջանցել հիմնական այն խնդիրը, թե ո՞ւմ պետք էր միանալ, Հռոմին, թե՞ Կարթագենին։ Այդ խնդրի լուծումը բարդանում էր նրանով, որ Անդրանոդորոսը և Զոիպոսը հակված էին կարթագենական կողմնորոշման, իսկ Փրաասոնը՝ հռոմեական։

Անսպասելիորեն Հիերոնիմի հասակակիցը և մոտիկ ընկերը տեղեկացրեց, որ թագավորի նկատմամբ մահափորձ է նյութվում։ Ըստ երևույթին, Սիրակուզայի ավագանու խմբավորումներից մեկը հույս ուներ թույլ կառավարչի ձեռքից խլել իշխանությունը։ Նա նույնիսկ մատնացույց արեց դավադիրներից մեկին՝ ոմն Թեոդոտոսի։ Վերջինս խոշտանգումների ժամանակ դրդարտեց (Լիվիոսի (24, 5, 11—12) հավաստմամբ՝ կեղծաբար) Փրաասոնին, որն իբրև թե եղել էր ամբողջ ձեռնարկման կազմակերպիչը. Փրաասոնին և թագավորի մի քանի այլ մերձավորների, որոնք նույնպես ամբաստանվել էին Թեոդոտոսի կողմից, անմիջապես մահապատժի ենթարկեցին։ Լիվիոսն այնուհետև գրում է (24, 5—14), որ չնայած Թեոդոտոսի ձերբակալությանը, դավադրության իսկական մասնակիցներից ոչ ոք չթաքնվեց և ոչ էլ փախուստի դիմեց. նրանք վստահ էին Թեոդոտոսի արիության և հավատարմության վրա։ Վերջինս նրանցից ոչ մեկին չմատնեց։

Փրաասոնի կործանման հետևանքն այն եղավ, որ հռոմայեցիների հետ Սիրակուզայի դաշինքի գաղափարը, կորցնելով իր միակ ազդեցիկ պաշտպանին, անհուսալիորեն վարկաբեկվեց Հիերոնիմի աչքում, նրա կյանքի դեմ իսկական կամ կեղծ դավադրությանը Փրաասոնի մասնակցությամբ։ Անկասկած, ոչ առանց իր փեսաների ազդեցության (հմմտ. Պոլիբիոսի մոտ՝ 7, 2, 1), Հիերոնիմը պատվիրակություն ուղարկեց Հաննիբալի մոտ կիրենեացի Պոլիկլետոսին և արգոսցի Փիլոդեմոսին (Պոլիբիոս, 7, 2, 2)։ Հաննիբալն իր հերթին Սիրակուզա ուղարկեց իր շրջապատի մարդկանցից՝ երիտասարդ արիստոկրատ Հաննիբալին, որն այն ժամանակ տրիերարքոս էր (Պոլիբիոս, 7, 2, 3), ինչպես նաև Կարթագենում ծնված Հիպոկրատեսին և Էպիկիդեսին, որոնք սիրակուզացի մի տարագրյալի թոռներն էին և մայրական գծով սերում էին պունիկյան տոհմից (Պոլիբիոս, 7, 2, 4)։ Դաշինքը կնքվեց, իսկ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը, որոնք փաստորեն Հաննիբալի գործակալներն էին, մնացին Հիերոնիմի արքունիքում (Լիվիոս, 24, 6, 1—3)։

Իմանալով այդ բանակցությունների մասին, պրետոր Ապպիոս Կլավդիոսը, որին հռոմեական կառավարությունը հանձնարարել էր Սիցիլիայի կառավարումը, անմիջապես պատվիրակներ ուղարկեց Սիրակուզա։ Այդ առաքելությունը հաջողություն չունեցավ։ Հռոմայեցիներին լսելով Հիերոնիմը միայն հարցրեց, թե նրանց համար ինչպե՞ս վերջացավ Կաննեի ճակատամարտը. կարթագենական պատվիրակներն այդ իրադարձության մասին անհավատալի բաներ էին պատմում նրան, իսկ նա կկամենար իմանալ ճշմարտությունը, որպեսզի որոշում ընդուներ։ Հռոմայեցիները հեռացան, հայտարարելով, թե կվերադառնան, երբ թագավորը կամենա լրջորեն խոսել, և նրան նախազգուշացրին պայմանագիրը չխախտել (Լիվիոս, 24, 6, 4—6)։

Պոլիբիոսն (7, 3, 1—9) այլ կերպ է պատմում հռոմեա-սիրակուզական բանակցությունների մասին։ Հռոմեական պատվիրակների ելույթը զայրացրեց Հիերոնիմին, և նա ասաց, որ կարեկցում է հռոմայեցիներին,

որոնք այդպիսի խայտառակությամբ կարթագենցիների կողմից ջախջախվեցին Իտալիայում։ Պատանի թագավորի հանդգնությունից քարացած պատվիրակները միայն կարողացան հարցնել, թե իրենց մասին այդ բոլորը ո՞վ է հայտնել նրան։ Հիերոնիմը մատնացույց արեց կարթագենական պատվիրակներին և հռոմայեցիներին առաջարկեց հերքել նրանց պատմածները։ Հռոմայեցիները հրաժարվեցին։ Նրանք սովորություն չունեին թշնամիներին հավատալու։ Վերադառնալով իրենց նյութին, նրանք վերստին թագավորին համոզեցին բարեկամական հարաբերություններ պահպանել Հռոմի հետ։ Հիերոնիմը պատասխանեց, որ ինքը հասուն մտածողությամբ պատասխան կտա, և առանց հապաղելու հարցրեց, թե ինչո՞ւ իր պապի մահվանից քիչ առաջ հռոմեական նավատորմը անսպասելիորեն մոտեցավ Պաքինոս հրվանդանին, իսկ այնուհետև, նույնպես առանց ակնհայտ պատճառի, ետ դարձավ։ Այդ առթիվ հռոմեական պատվիրակները նկատեցին, որ պրովինցիալ իշխանությունները լոկ կամենում էին պաշտպանել Հիերոնիմին և ամրապնդել նրա իշխանությունը, եթե Հիերոնը մահացած լիներ. երբ հայտնի դարձավ, որ Հիերոնը ողջ է, նավերին հրամայվեց վերադառնալ։ Ինձ նույնպես թույլ տվեք, հռոմայեցիներ՝,— զրույցը եզրափակելով ասաց Հիերոնիմը,— որպեսզի պաշտպանեմ իմ իշխանությունը, այժմ արդեն հույս ակնկալելով կարթագենցիներից։

Երկու հեղինակներից որն էլ որ ճշմարիտ չլինի, պարզ է, որ Հիերոնիմը հռոմեական պատվիրակներին ընդունել է վերին աստիճանի անբարյացակամ կերպով, կոպտորեն նրանց հիշեցնելով հռոմեական զենքի հույժ ծանր պարտության մասին և, առանց կողմնակի ակնարկների, հասկացնել է տվել, որ Սիրակուզայի քաղաքական ընթացքը կտրուկ կերպով փոխվում է։

Հենվելով Հաննիբալի հետ ունեցած պայմանավորվածության վրա, Հիերոնիմը Կարթագեն ուղարկեց պատվիրակներ՝ Ագաթարքոսին, Օնեսիգենեսին և Հիպոսթենեսին (Պոլիբիոս, 7, 4, 1), և այնտեղ կնքվեց դաշինքի վերաբերյալ նոր (ըստ երևույթին արդեն ոչ թե բերիտ, այլ միջպետական) պայմանագիր։ Սիցիլիայում սիրակուզական և կարթագենական տիրույթների ապագա սահմանը, կողուց հռոմայեցիներին դուրս քշելուց հետո, պետք է դառնար Հիմերա գետը, ինչպես դա եղել էր V դ. վերջին, Հիմերայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո (Պոլիբիոս, 7, 4, 2)։ Սակայն որոշ ժամանակ անց, Հիերոնիմը պահանջեց, որպեսզի հաղթանակից հետո իրեն հանձնվի ամբողջ Սիցիլիան։ Կարթագենական կառավարությունը համաձայնվեց նաև դրան. առայժմ նրա համար վճռական նշանակություն ուներ Հիերոնիմի հետ ունեցած դաշինքը և բնավ ոչ այդ դաշինքի պայմանները (Լիվիոս, 24, 6, 7—9, Պոլիբիոս, 7, 4, 4—8)։

Տեղեկություն ստանալով Սիրակուզայի և Կարթագենի միջև ձեռք բերված համաձայնության մասին, Սիցիլիայի հռոմեական իշխանությունները վերստին Հիերոնիմի մոտ ուղարկեցին դիվանագիտական հանձնախումբ։ Անհրաժեշտ էր վերջնական վճիռ ընդունել։ Թագավորական խորհրդում միասնություն չկար։ Բնիկ սիրակուզացիները լռում էին. սպարտացի Դամիպոսը և թեսալացի Ավտոնոոսը Սիրակուզայի արտաքին քաղաքականության հռոմեամետ ուղղվածության կողմ արտահայտվեցին, իսկ Անդրանոդորոսը, Հիպոկրատեսը և Էպիկիդեսը՝ հօգուտ Կարթագենի հետ դաշնակցելուն։ Հիերոնիմն ընդունեց վերջին երեք խորհրդատուների տեսակետը և հռոմայեցիներին հղված պատասխանում հայտարարեց, որ ինքը հավատարիմ է մնալու Հռոմի հետ ունեցած դաշինքին, եթե վերջինս վերադարձնի Հիերոնից ստացած ամբողջ ոսկին, հացը և բոլոր նվերները ու համաձայնվի սիրակուզացիներին զիջելու Սիցիլիայի տարածքը մինչև Հիմերա գետը (Պոլիբիոս, 7, 5, 1—8)։ Հիերոնիմի պայմանները բացարձակորեն անընդունելի էին։ Այդ պահից Հռոմի և Սիրակուզայի միջև եղած դաշինքը դադարեց գոյություն ունենալուց։

Ինչպես տեսնում ենք, Հիերոնիմի քաղաքական ծրագրերը համապատասխանում էին սիրակուզական բոլոր կառավարությունների վաղեմի ձգտումներին։ Խոսքը ոչ ավելի և ոչ պակաս քան Սիցիլիայում Սիրակուզայի գերիշխանության հաստատման և կղզում Դիոնիսիոս Ավագի պետության վերստեղծման մասին էր։ Քանի դեռ կղզում Հիերոնիմի հակառակորդները հռոմայեցիներն էին, նրա ու Հաննիբալի քաղաքական միտումները համընկնում էին։ Հենց սրանով էլ բացատրվում է պայմանավորվող երկու կողմերի ավանդական փոխհարաբերություններին հակասող անսպասելի այն դաշինքը, որ կնքվեց Սիրակուզայի ու Կարթագենի միջև։ Հաննիբալը կարող էր գոհ լինել։

Պայմանագրի կնքումից անմիջապես հետո, Հիերոնիմը ձեռնարկեց բոլոր անհրաժեշտ քայլերն այն բանի համար, որպեսզի պատերազմ սկսի Հռոմի դեմ։ 214 թ. ամռանը նա Հիպոկրատեսի և Էպիկիդեսի հրամանատարությամբ 2000 զինվորներից բաղկացած մի ջոկատ ուղարկեց՝ գրավելու այն քաղաքները, որտեղ հռոմեական կայազորներ կային։ Թագավորն անձամբ՝ 15 հազարանոց զորքի գլուխ անցած, շարժվեց դեպի Լեոնտինի, որը Սիցիլիայի խորքերում՝ Սիրակուզայի հյուսիս-արևմուտքում գտնվող խոշորագույն և ռազմավարական տեսակետից հույժ կարևոր քաղաքներից մեկն էր։ Տիրանալով Լեոնտինին, Հիե-

ռոնիմը հնարավորություն էր ստանում հռոմայեցիների դեմ անմիջականորեն պայքարելու նրանց սիցիլիական տիրույթներում (Լիվիոս, 24, 7, 1—2)։

Սակայն նախկինի պես Հիերոնիմի կյանքին վտանգ էր սպառնում։ Չվախենալով ո՛չ Թեոդոտոսի ձերբակալումից և ո՛չ էլ Փրաստոնի մահապատժից, դավադիրները, որոնք, ինչպես գրում է Լիվիոսը, զինվորական ծառայության մեջ էին և, հետևաբար, մասնակցում էին Հիերոնիմի ձեռնարկումներին, նրա հետ միասին եղել էին Լեոնտինեում, հարմար առիթի էին սպասում, որպեսզի ի կատար ածեն իրենց մտահղացումը՝ սպանեն երիտասարդ թագավորին։ Այդ պահը վրա հասավ հենց այն ժամանակ՝ 214 թվականի ամռանը։ Լեոնտինեի փոքր ու նեղ մի փողոցում, որտեղով սովորաբար Հիերոնիմը գնում էր Ագորա, նրանք դրաղեցրին մի աղատ տու և այնտեղ զենքը ձեռքերին սպասեցին իրենց զոհին։ Նրանցից մեկը՝ թագավորի անձնապահ Դինոմենոսը, պետք է ամեն կերպ ձգձգեր երթը։ Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես մտահղացել էին։ Իբրև թե կամենալով ուղղել ոտնամանները, Դինոմենոսը կանգնեցրեց թագավորի շքախումբը, և երբ Հիերոնիմը միայնակ անցավ դարպասների մոտ կանգնած զինված մարդկանց կողքով, վերջիններս հանկարծակիորեն հարձակվեցին նրա վրա և մի քանի հարվածներ հասցնելով սպանեցին։ Աղմուկ բարձրացավ։ Դեպի Դինոմենոսը, որն արդեն բացահայտորեն փակում էր ճանապարհը, սկսեցին նիզակներ նետել։ Երկու վերք ստանալով, նա այնուամենայնիվ կարողացավ թաքնվել։ Թագավորական անձնապահները այս ու այն կողմ փախան (Լիվիոս, 24, 7, 3—7)։

Հիերոնիմի սպանությունը ծանր հարված էր Հաննիբալի ռազմաքաղաքական պլաններին, մանավանդ որ, դավադիրները ձեռք առան բոլոր միջոցները, որպեսզի կանխեն Անդրանոդորոսի և նրա կուսակիցների կողմից իշխանության զավթումը (Լիվիոս, 24, 7, 7—8)։ Ճիշտ է, սկզբնապես սիրակուզացիք կողմնակից չէին արքայասպաններին։ Լեոնտինեում եղած զինվորների մեջ հուզումներ սկսվեցին, և նույնիսկ լսվում էին բարձրաձայն պահանջներ՝ վրեժ լուծել Հիերոնիմի արյան համար (Լիվիոս, 24, 21, 2)։ Սակայն դավադիրների քաղաքական ագիտացիան վերջիվերջո կատարեց իր գործը։ Ամենուրեք ճառեր էին ասվում ազատությունը վերականգնելու, բռնապետի նողկալի հանցագործությունների և գարշելի հեշտասիրության մասին, հույս էին տալիս մեծ ոռճիկի, ավելի արժանավոր զորավարների հրամանատարության տակ ծառայելու վերաբերյալ. և սիրակուզական այն զինվորները, որոնք նոր հենց պահանջում էին մահապատժի ենթարկել մարդասպաններին, Հիերոնիմի դիակը

[illegible] անթաղ, թեև հունական կրոնական պատկերացումների համաձայն, մահացողների թաղումը կրոնական պաշտամունքին առնչվող կարևորագույն պարտականություն էր (Լիվիոս, 24, 21, 3)։ Այդպիսով սիրակուզական դավադիրները կարողացան հաջողությամբ իրենց կողմը գրավել բանակը։ Նրանց համար պակաս կարևոր չէր նաև մեկ այլ բան՝ իշխանության զավթումը բուն Սիրակուզայում։

Դավադիրներից երկուսը՝ Թեոդոտոսն ու Սիսիոսը արքայական ձիերը [illegible]՝ սլացան Սիրակուզա, սակայն թագավորի սպանության վերաբերյալ լուրերը կանխեցին նրանց։ Անդրանոդորոսը իր կայազորները տեղակայեց Օրտիգիա կղզում[123]։ Ուշ երեկոյան, արևմուտից հետո, Թեոդոտոսն ու Սիսիոսը մտան քաղաք, ժողովրդին կոչ անելով զինավառված գնալ Աքրադինա՝ ազատության համար պայքարելու։ Հաջորդ օրն ազատության սիրակուզացիները հավաքվեցին Աքրադինայում՝ խորհրդի շենքի դիմաց, և վերջինիս անդամներից մեկը՝ Պոլիենոսը, առաջարկեց Անդրանոդորոսի մոտ պատվիրակներ ուղարկել և երկարակությունից խուսափելու նպատակով նրանից պահանջել անձնատրություն։ Փոքր-ինչ տատանվելուց հետո, Անդրանոդորոսը ենթարկվեց խորհրդի և ժողովրդական ժողովի պահանջին. նման դիջողականության շնորհիվ նրան հաջողվեց մտնել սիրակուզական նոր կառավարության կազմի մեջ (Լիվիոս, 24, 22—23)։

Սակայն դրանով քաղաքական պայքարը Սիրակուզայում չավարտվեց։ Նրան միջամուխ եղան նաև Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը։ Սկզբում նրանք դիմեցին Սիրակուզայի խորհրդին, իրենց կացության համար թվում է թե բնական պահանջով. իրենց հնարավորություն ընձեռել վերադառնալու Հաննիբալի մոտ, և քանի որ ամբողջ Սիցիլիայում վիստում են զինված հռոմայեցիներ, ճանապարհի՝ մինչև Լոկրիս ընկած հատվածի համար նրանց տրամադրել պահակախումբ։ Նրանց այդպիսի ճառերն ու դիտավորությունները ամբողջապես համապատասխանում էին խորհրդի ցանկություններին. վերջինս կամենում էր նրանց հեռացնել քաղաքից։ Խորհուրդը որոշեց ընդառաջել Հիպոկրատեսին ու Էպիկիդեսին, սակայն Սիրակուզայի մագիստրատները չէին շտապում կատարել այդ որոշումը, և Հաննիբալի գործակալներին ժամանակ ընձեռվեց իրենց դիտավորություններն իրագործելու համար։ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը սկսեցին հակահռոմեական ագիտացիա տանել դեմոկրատական շրջաններում, զինվորների և Սիրակուզա փախած հռոմեական ծովակալների մեջ։ Նրանք ասում էին, որ Հիերոնիմի սպանությունից հետո իշխանության գլուխ անցած խմբակցությունը կամենում է քաղաքը

հանձնել հռոմայեցիների ձեռքը և, օգտվելով նրանց պաշտպանությունից, դառնալ Սիրակուզայի միանձնյա տերը (Լիվիոս, 23, 23, 5—11)։

Հիպոկրատեսի և Էպիկիդեսի կողմից Սիրակուզայում վարպետորեն սերմանած այս տրամադրություններից փորձեց օգտվել Անդրանոդորոսը՝ Հիերոնիմի հակահռոմեական քաղաքականության ոգեշնչողներից մեկը, որը Գելոնի դստերը (հետևաբար, Հիերոնիմի քրոջը) կնության առած Թեմիստոսի հետ միասին որոշեց կատարել պետական հեղաշրջում։ Դավադրությունը չհաջողվեց։ Անդրանոդորոսն իր մտահղացման մասին պատմեց ողբերգախաղաց դերասան Արիստոնին, որը վայելում էր նրա լիակատար վստահությունը. սա հայտնեց մագիստրատներին, որի հետևանքով, երբ Թեմիստոսն ու Անդրանոդորոսը ներկայացան խորհրդի նիստին, տեղնուտեղը սպանվեցին առանց դատի (Լիվիոս, 24, 24, 1—5)։ Մարդասպանները կարողացան ձեռք բերել ժողովրդական զանգվածների կամակցությունը. վերջիններս ոչ միայն հետին թվով արդարացրին նրանց գործողությունները, այլև մահվան մատնեցին Հիերոնի և Գելոնի դստերին (Լիվիոս, 23, 25—26)։ Դրությունը Սիրակուզայում ինչպիսին էլ որ լիներ, ակնհայտ էր, որ այնտեղ ոչ ոք չէր կամենում որևէ ձևով վերականգնել նախկին արքայական տան իշխանությունը։ Վերջին հաշվով Թեմիստոսի և Անդրանոդորոսի փորձն օգուտ տվեց Հիպոկրատեսին և Էպիկիդեսին. լրացուցիչ ընտրություններում նրանք սպանված դավադիրների փոխարեն մտցվեցին բարձրագույն մագիստրատների կոլեգիայի մեջ (Լիվիոս, 24, 27, 1)։

Իրադարձությունների զարգացումը Սիրակուզայում բնականաբար չէր կարող չգրավել հռոմեական կառավարության սեւեռուն ուշադրությունը։ Սիցիլիայում եղած հռոմեական զորամիավորումները բոլորովին էլ բավարար չէին հակահարված կազմակերպելու համար։ Եվ բացի այդ, մինչև Հիպոկրատեսի ու Էպիկիդեսի իշխանության գալուն անցնելը, հռոմայեցիները լիակատար հանգստություն պահպանող Սիցիլիային նայում էին ոչ թե որպես ռազմական գործողությունների թատերաբեմի, այլ որպես քարացած, քիչ պատվաբեր կայազորային ծառայության վայրի, որտեղ չէր կարելի առաջ քաշվել, արժանանալ պատիվների և այլն։ Զուր չէր, որ սենատի որոշմամբ հատկապես Սիցիլիայում, որպես յուրատեսակ աքսորավայրում, առանց ոոճիկի, առանց մարտական սխրագործության իրենց արդարացնելու հույսի, առանց մինչև պատերազմի վերջը հայրենիք վերադառնալու հույսի, պարտավոր էին ծառայել Կաննեի տակից փախածները՝ բոլոր նրանք, ովքեր ողջ էին մնացել։ Անսպասելիորեն ամեն ինչ փոխվեց։ Սիցիլիան վերածվեց ճակատամարտի դաշտի, և հռոմեական կառավարությունը կոնսուլ Մարկոս Կլավդիոս

Մարկելոսին հանձնարարեց նրա կառավարումը (Լիվիոս, 24, 21, 1)։ Այս նշանակումը, նույնիսկ անկախ Մարկելոսի ասպիճանից, ցույց տվեց, թե Հռոմում ինչպիսի մեծ նշանակություն էին տալիս ռազմական գործողությունների սիցիլիական թատերաբեմին։

Մինչդեռ սիրակուզական կառավարությունը, հակառակ սպասումների, որոշեց փորձել խաղաղ կարգավորման հասնել հռոմեական իշխանությունների հետ։ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը, թեև մտան բարձրագույն մագիստրատների կոլեգիայի մեջ, այդուհանդերձ այդքան ուժեղ չեն, որպեսզի խոչընդոտեին այդ քայլին, որի վրա համառորեն պնդում էին հռոմեական կողմնորոշման կողմնակիցները։ Սիրակուզական իշխանությունների վրա հատկապես զարհուրեցնող ներգործություն ունեցավ Մուրգանտիայում 100 նավից բաղկացած հռոմեական նավատորմի ներկայությունը. վերջինիս հրամանատարությունը պետք է հետևեր Սիրակուզայի կացությանը և գործեր իրադրության համապատասխան։ Սիրակուզայից Ապպիոս Կլավդիոսի մոտ պատվիրակներ ուղարկվեցին զինադադար կնքելու համար, իսկ այնուհետև նույն տեղից նրան ներկայացան նաև այլ պատվիրակներ դաշինքի շուրջը բանակցություններ վարելու համար։ Այդ պահին Սիցիլիա ժամանեց Մարկելոսը, և հետագա դիվանագիտական կապերը Ապպիոս Կլավդիոսը հանձնեց նրա տնօրինությանը (Լիվիոս, 24, 27, 4—5)։

Մարկելոսն ընդունելի էր համարում թե՛ կարգավորման պայմանները, որոնց վերաբերյալ Սիրակուզայի պատվիրակները պայմանավորվել էին Ապպիոս Կլավդիոսի հետ, և որոնք ընդունելի էին Հռոմի համար, և թե՛ կենսականորեն անհրաժեշտ էր համարում բուն այդ կարգավորումը։ Հաստատելով Ապպիոս Կլավդիոսի գործողությունները, նա Սիրակուզա ուղարկեց իր ներկայացուցիչներին՝ բանակցություններն ավարտելու համար (Լիվիոս, 24, 27, 6)։

Քանի դեռ տեղի էր ունենում այդ ամենը, Սիցիլիայի ծայր հյուսիս-արևմտյան կետում, Սիրակուզայից ոչ հեռու, Պաքինոս հրվանդանին մոտեցավ կարթագենական նավատորմը։ Տեղեկանալով կարթագենական կառավարության այդ գործողության մասին, ինչը վկայում էր, որ նա մտադիր էր Սիրակուզայում իր կողմնակիցներին գործուն աջակցություն ցույց տալ, Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը վերսկսեցին հակահռոմեական քարոզչությունը, այժմ արդեն մեղադրելով իրենց ընկերակիցներին՝ Հռոմի հետ համաձայնության հասնելու և նրան հանձնվելու դիտավորության մեջ։ Նրանց խոսքերը, թվում էր, թե հաստատեցին նաև իրենք՝ հռոմայեցիները. Ապպիոս Կլավդիոսը ոչինչ ավելի լավ բան չգտավ, քան տեղակայել իր նավատորմը Սիրակուզայի նավահանգստի մուտքի մոտ, որ-

պեսզի, ինչպես հայտարարում էր պաշտոնական մեկնաբանությունը արիությունն ներշնչի հռոմեացիներին «կուսակցությանը»։ Իսկն ասած, Կլավդիոսի վարմունքը հռոմայեցիների համար Պարթևների հրվանդանի մոտ կարթագենական նավատորմի հայտնվելու բնական արձագանքն էր։ Սակայն Սիրակուզայում հռոմեական նավատորմի հայտնվելը նույնպես բնականորեն ժողովրդական վրդովմունքի պոռթկում առաջացրեց. քաղաքացիները խուռնիխուռն դիմեցին նավահանգիստ, որպեսզի հռոմեական ծովայիններին թույլ չտան ափ դուրս գալու (Լիվիոս, 24, 27, 8—9)։ Այնուամենայնիվ «հռոմեամետ» կուսակցությանը վերջիվերջո հաջողվեց ժողովրդական ժողովին համոզել Հռոմի հետ կնքելու հաշտության պայմանագիր։ Քննարկման ժամանակ առաջ քաշված հիմնական փաստարկն այն էր, որ Հռոմի հետ հաշտության պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքում, Սիրակուզան կանգնելու է անխուսափելի և հույժ մոտալուտ պատերազմի հեռանկարի առջև (Լիվիոս, 24, 28)։

Մի քանի օր հետո Լեոնտինեից Սիրակուզա ժամանեց պատվիրակություն՝ իրենց սահմանները պաշտպանելու համար կայազոր ուղարկելու խնդրանքով։ Հակակարթագենական խմբավորման առաջնորդները վճռեցին հարմար պատրվակն օգտագործել այն բանի համար, որպեսզի Սիրակուզայից հեռացնեն իրենց քաղաքական հակառակորդներին։ Հիպոկրատեսը հրաման ստացավ Լեոնտինե մտցնել փախստականների ջոկատներ. նրան միացան նաև սիրակուզական բանակի օժանդակ զորամիավորումներում ծառայող վարձկանները։ Ընդամենը նրա հրամանատարության տակ էին 4000 մարդ (Լիվիոս, 24, 29, 2)։

Հիպոկրատեսն իր գործունեությունը Լեոնտինեում (որի բնակչությունը խիստ թշնամաբար էր տրամադրված հռոմայեցիների նկատմամբ) սկսեց հռոմեական տիրույթների վրա կատարած հարձակումներով, որոնք սկզբնապես գաղտնի էին։ Երբ Ապպիոս Կլավդիոսը կայազոր ուղարկեց Լեոնտինեին սահմանակից շրջանները պաշտպանելու համար, Հիպոկրատեսը գրոհեց ուղեկալ ջոկատներից մեկի վրա և կոտորեց շատ զորականների (Լիվիոս, 24, 29, 4)։ Մարկելլոսն անմիջապես դիմեց Սիրակուզային. ուխտադրժորեն խախտվում է խաղաղությունը. այն չի կարող պահպանվել, եթե Սիրակուզայից և ընդհանրապես Սիցիլիայից չվտարվեն Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը, որոնք, ինչպես բոլորի համար պարզ էր, գործում էին Հաննիբալի շահերի օգտին, հնարավոր է նաև նրա հրահանգներին համապատասխան (Լիվիոս, 24, 29, 5)։ Էպիկիդեսը իր նկատմամբ բացահայտ վտանգ տեսնելով, սլացավ Լեոնտինե, որպեսզի միանա եղբորը։ Փոքր-ինչ հետո այնտեղ հայտնվեց նաև սիրակուզական պատվիրակությունը։ Պատվիրակները տեղի ժողովրդական

[illegible] դիմեցին կշտամբանքներով՝ հռոմեական ուղեկալ ջոկատի վրա հարձակում գործելու առիթով։ Նրանք պահանջեցին, որպեսզի Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը մեկնեն Լոկրիս կամ ուր որ կկամենան, միայն թե հեռանան Սիցիլիայից։ Սակայն սիրակուզացիները բախվեցին լուրջ դիմադրության։ Դիմելով Լեոնտինեի բնակչությանը, Էպիկիդեսը բարձրաձայնով ասում էր, որ իբր Սիրակուզան պայմանագիր է կնքել Հռոմի հետ, որպեսզի իր տիրապետության տակ պահի այն երկրամասերը, որոնց նախկինում տիրում էին թագավորները, և հետևաբար՝ նաև Լեոնտինեն։ Լեոնտինեն իրավունք ունի ազատություն ձեռք բերելու, ուստի նա պետք է ձգտի այն բանին, որպեսզի հռոմեա-սիրակուզական պայմանագրից այդ պայմանը հանվի կամ ընդհանրապես պայմանագիրը մերժվի։ Սիրակուզացիները, որպես պատասխան իրենց պահանջների, ասացին, որ ոչ ոք նրանց չի լիազորել Լեոնտինեի անունից պայմանագիր կնքելու Հռոմի հետ, և որ նա՝ Լեոնտինեն, կապված չէ ուրիշների դաշնակցային հարաբերություններին (Լիվիոս, 24, 29, 6—12, հմմտ. Ապպ. Սից., 3)։ Սիրակուզական կառավարությունն այս պատասխանը հաղորդեց Մարկելլոսին, ավելացնելով, որ Լեոնտինեն չի ճանաչում Սիրակուզայի իշխանությունը, և, հետևաբար, հռոմայեցիները կարող են, խախտելով դաշինքի պայմանները, պատերազմել Լեոնտինեի դեմ, և միաժամանակ, որ Սիրակուզան նույնպես մասնակցություն կունենա այդ պատերազմին, եթե նրան երաշխիք տրվի, որ հաղթանակից հետո տիրանալու է այդ խոովարար քաղաքին (Լիվիոս, 24, 29, 12)։ Իր կողմից սիրակուզական կառավարությունը հույժ թանկարժեք պարգև նշանակեց Հիպոկրատեսի և Էպիկիդեսի գլուխների համար (Ապպ., Սից., 3)։

Հռոմեական զորքերը վճռական հարվածով գրավեցին Լեոնտինեն (Լիվիոս, 24, 30, 1)։ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը փախան Հերբես։ Սիրակուզացիները, որոնք 8000 զինվորից բաղկացած ջոկատ էին ուղարկել, ոչնչացան, սակայն այն, ինչ նրանք լսեցին քաղաքի ճակատագրի մասին, սարսափի մեջ ձգեց նրանց։ Պատմում էին, որ Լեոնտինեում կոտորել են բոլորին՝ թե՛ զինվորներին, թե՛ խաղաղ ազգաբնակչությանը, որ [illegible] չափահաս քաղաքացիներից ոչ ոք կենդանի չի մնացել, որ քաղաքը ավարի է մատնված, և ռազմավարը բաժանված է զինվորներին։ Դժվար է ասել, թե որքանով էր այդ ամենը ճշմարիտ։ Լիվիոսը (24, 30, 4, հմմտ. Պլուտ. մոտ, Մարկ., 14) հասկանալի պատճառներով իր բերած տեղեկությունները հիշում է որպես ճշմարտության ու ստի խառնուրդ, սակայն նա նույնպես չի ժխտում, որ գրեթե 2000 փախստականներ վիրավորվեցին, իսկ այնուհետև մահապատժի ենթարկվեցին Մարկելլոսի հրամանով։ Սիրակուզական զորապետները ո՛չ կարողացան իրենց զինվոր-

ներին ստիպել շարունակելու առաջխաղացումը դեպի Լեոնտինի (Լեոնտինների ճակատագրի մասին տեղեկությունը սիրակուզական ջոկատին հասավ Միլա գետի մոտ) և ո՛չ էլ հարկադրեցին նրանց մնալու տեղում սպասելով նոր լուրերի։ Ի վերջո նրանք իրենց ջոկատը տարան Հիբլեական Մեգարա (ծովափնյա փոքր քաղաք Սիրակուզայից փոքր-ինչ ավելի հյուսիսում), իսկ այնուհետև իրենք ոչ մեծաթիվ հեծյալներով սլացան դեպի Հերբես՝ Սիցիլիայի խորքերը, դեպի հյուսիս, հույս ունենալով ընդհանուր խառնաշփոթության մեջ, առանց հատուկ դժվարության, գրավել քաղաքը։ Այդ մտահղացումը չհաջողվեց, և հաջորդ օրը սիրակուզացիները Մեգարայից Հերբեսին մոտեցրին իրենց ամբողջ զորքը։ Հիպոկրատեսի ու Էպիկիդեսի դրությունը հուսահատական էր թվում։ Հենց այդ ժամանակ երկու բախտախնդիրները խիզախ վճիռ ընդունեցին՝ հանձնվել սիրակուզական զորականներին։ Նրանք մեծ խանդավառությամբ ընդունվեցին. Հիպոկրատեսին ձերբակալելու փորձն այնպիսի բուռն հակազդեցություն առաջացրեց, որ սիրակուզական զորապետներ Սոսիդեսն ու Դիոնոմենեսը ստիպված եղան տեղի տալ։ Հիպոկրատեսին հաջողվեց հռոմեական բանակից փախածներին, որոնք ծառայում էին սիրակուզացիների մոտ, համոզել, որ սիրակուզական իշխանությունները հավանություն են տալիս արյունոտ այն հաշվեհարդարին, որ Մարկելլոսը կատարել էր Լեոնտինեում։ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը դժվարությամբ կարողացան հանգստացնել զինվորներին, նրանց ետ պահելով հրամանատարների վրա անմիջապես հարձակվելուց։ Սոսիդեսն ու Դիոնոմենեսը խուճապահար փախան։ Միևնույն ժամանակ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը Սիրակուզա ուղարկեցին մի լրատարի, որը խորհրդին պետք է հաղորդեր այն ամենը, ինչ բոլորովին վերջերս սիրակուզական զորականներն իմացել էին Լեոնտինիի ճակատագրի մասին (Լիվիոս, 24, 30, 5—31, 15)։

Համբավաբերի պատմածը Սիրակուզայի խորհրդի ու ժողովրդի վրա շատ խորը տպավորություն թողեց։ Հռոմայեցիների ընչաքաղցությունն ու դաժանությունը, ասում էին քաղաքում, դրսևորվեցին Լեոնտինեում. նույն կերպ, և նույնիսկ առավել վատթար ձևով, նրանք կվարվեին նաև Սիրակուզայում, որտեղ կարողանալու էին ավելի մեծ չափերով, քան Լեոնտինեում, բավարարել իրենց ագահությունը։ Որոշվեց փակել դարպասները և պաշտպանել քաղաքը (Լիվիոս, 24, 32, 1—2)։ Սակայն տեղացի մեծատոհմիկներից ոմանք և մագիստրատները հռոմայեցիներից ավելի վախենում էին հասարակ ժողովրդից և Հիպոկրատեսի ու Էպիկիդեսի զինվորներից, որոնք արդեն կանգնած էին Հեկատոմպիլեի (Սիրակուզայի քաղաքամոտ դարպասները՝ բաղկացած վեց խուցերից, որոնք

[illegible] մատույցներում։ Չնայած նրանց [illegible]թյանը, Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը թափանցեցին քաղաք. [illegible]վորդը նրանց առջև բացեց դարպասները։ Մագիստրատները փա[illegible] Աքրագինա, սակայն առաջին խզբի գրոհի ժամանակ այն նույնպես [illegible]։ Մագիստրատներից նրանք, ովքեր իրարանցման ժամանակ չէին [illegible]ել, սպանվեցին։ Հաջորդ օրը հայտարարվեց ստրուկների ազա[illegible]ման մասին, իսկ բանտերից ազատ արձակեցին ձերբակալվածներին։ Այսպես, հենվելով Սիրակուզայում եղած դեմոկրատական շարժման [illegible]։ Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը վերստին անցան իշխանության գլուխ [illegible] անգամ ընտրվեցին բարձրագույն մագիստրատներ (Լիվիոս, [illegible], 32—33)։

Տեղեկություններ ստանալով Սիրակուզայում կատարվածի մասին, Մարկելլոսն անմիջապես իր զորքերը Լեոնտինիից շարժեց դեպի Սիրակուզա։ Հռոմեական կառավարությունը Հիպոկրատեսի ու Էպիկիդեսի [illegible]թյունը կարող էր ընկալել որպես Սիրակուզայի՝ Կարթագենի դաշնակցի վերածվելու ստույգ հայտանիշ։ Նախկին դաշնակցային հարաբերությունների վերականգնման հույսն այլևս ի չիք դարձավ. ասենք հենց սիրակուզական նոր կառավարիչները ցույց տվեցին, որ իրենք չեն ցանկանում Հռոմի հետ բանակցություններ վարել. երբ Ապպիոս Կլավդիոսը [illegible]ային ուղիով գրեթե արդեն իր պատվիրակներին ուղարկել էր Սիրակուզա, սիրակուզացիները փորձեցին գերի վերցնել նրանց, այնպես որ, պատվիրակները հազիվ ազատվեցին փախստականի (Լիվիոս, 24, 33)։

Հռոմայեցիների ցամաքային զորքերը բանակեցին քաղաքից մեկեկես մղոն հեռավորության վրա, Օլիմպիայում, Զևսի տաճարից ոչ հեռու (Լիվիոս, 24, 33, 3)։ Հռոմեական քրմական իրավունքը պահանջում էր (պատերազմը «օրինական» և աստվածներին հաճելի լինելու համար), որպեսզի ապագա հակառակորդին ձևականորեն պատերազմ հայտարարվեր և միաժամանակ նրան ներկայացվեին այնպիսի պահանջներ ու հավակնություններ, որոնք կարդարացնեին խաղաղ հարաբերությունների խզումը։ Տվյալ դեպքում հռոմեական տեսակետից այդ անհրաժեշտ էր նաև այն պատճառով, որ Հռոմի ու Սիրակուզայի միջև ձևականորեն շարունակում էր գոյություն ունենալ դաշինքի վերաբերյալ պայմանագիրը։ Այս բոլոր հանգամանքները Մարկելլոսին հարկադրեցին վերսկսելու բանակցությունները, որոնք փաստորեն արդեն ոչ ոքի սլեռը չէին և բացահայտորեն դատապարտված էին ձախողման։ Որպեսզի հռոմայեցիներին թույլ չտան մտնել Սիրակուզա, Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը դուրս եկան դարպասներից. այդտեղ՝ քաղաքի պարիսպների մոտ, կարճառոտ ճառեր փոխանակվեցին։ Հռոմեական պատվիրակության ղեկավարը հայտարա-

րեց, որ ինքը սիրակուզացիներին ոչ թե պատերազմ է բերել, այլ օգնություն և պաշտպանություն նրանց, ովքեր փրկվելով կոտորածից, փախել են հռոմայեցիների մոտ, ինչպես նաև նրանց, ովքեր սարսափով համակված ստիպված են եղել հանդուրժել ստրկությունը, որն ավելի նողկալի էր, քան աքսորը կամ նույնիսկ մահը։ Հռոմայեցիներն անպատիժ չեն թողնի իրենց դաշնակիցների խայտառակ կոտորածը. եթե նրանց (հռոմայեցիների) մոտ փախածներին թույլ տրվի անվտանգ վերադառնալ հայրենիք, եթե սպանությունների կազմակերպիչները հանձնվեն, եթե Սիրակուզայում վերականգնվեն ազատությունն ու օրինականությունը, պատերազմ չի լինի. իսկ եթե դա տեղի չունենա, հռոմայեցիները, որպես թշնամու, կհետապնդեն յուրաքանչյուրին, ով կփորձի դիմադրություն ցույց տալ։ Այլ կերպ ասած, Հռոմի ներկայացուցիչները պահանջում էին Սիրակուզայում վերականգնել Հռոմի կողմը հակված արիստոկրատական շրջանների իշխանությունը, հաշվեհարդարի հանձնել Հիպոկրատեսին, Էպիկիդեսին և նրանց կողմնակիցներին։ Բնական էր, որ սիրակուզական նոր կառավարողները չէին կարող այդպիսի համաձայնության գնալ, և Էպիկիդեսը կտրուկորեն նկատեց, որ ինքը կպատասխաններ, եթե պատվիրակները իրեն ուղղված հանձնարարություն ունենային. թող պատվիրակները վերադառնան, երբ Սիրակուզայում իշխանության գլուխ կանգնեն նրանք, ում մոտ իրենք եկել են. իսկ եթե հռոմայեցիները պատերազմ սկսեն, ապա նրանք գործի ընթացքից կհասկանան, որ շրջափակել Սիրակուզան դա նույնը չէ, ինչ Լեոնտինիի պաշարումն էր։ Դրանից հետո Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը հեռացան պատվիրակներից և հրամայեցին փակել դարպասները (Լիվիոս, 24, 33, 3—8)։

Այժմ հռոմայեցիներն սկսեցին Սիրակուզայի վրա գրոհել միաժամանակ ցամաքից (Հեկսապիլեի կողմից) և ծովից (Աքրադինայի կողմից)։ Սակայն բախվեցին բոլորովին անսպասելի դիմադրության, որի կազմակերպիչը, համաձայն անտիկ ավանդության, այն ժամանակի խաշորագույն գիտնականներից մեկը՝ Արքիմեդն էր։ Այստեղ մենք նպատակ չունենք փոքր-իսկ մանրամասնությամբ բնութագրելու Արքիմեդ-հետազոտողին և, ընթերցողին հղելով այս անձնավորության մասին Ս. Յա. Լուրյեի մենագրությունը[124], կսահմանափակվենք լոկ մի քանի ընդհանուր դիտողություններով։

Արքիմեդը ծնվել է մոտավորապես 287 թ. մաթեմատիկոս և աստղաբաշխ Փիդիասի ընտանիքում և Հիերոն II-ի ազգականն էր։ Հայրական տանն ստանալով իր ժամանակի համար մաթեմատիկական լավ պատրաստություն, նա իր զբաղմունքները շարունակեց Ալեքսանդրիայում, որտեղ ամենից առաջ նա ուսումնասիրեց Էվկլիդեսի աշխատությունները։ Արքիմեդը կատարեց խիստ հետաքրքիր աստղագիտական դիտարկումներ, մասնավորապես որոշեց արևի տրամագիծը և արբանյակների միջև եղած հեռավորությունը։ Նա հնարեց աստղագիտական այնպիսի մի կարևոր գործիք, ինչպիսին էր գլոբուսը՝ երկնքի գլոբուսը, որը հնարավորություն էր ընձեռում ուսումնասիրելու արբանյակների շարժումը, լուսնի փուլերը, արեգակի և լուսնի խավարումները։ Արքիմեդը շատ և հաջողությամբ աշխատեց նաև մեխանիկայի բնագավառում տարբեր տեսակի գործիքների ու հարմարանքների գյուտի (ի դեպ, նա մշակեց ծանրության կենտրոնի և լծակի մասին ուսմունքը), ինչպես նաև մաթեմատիկական ու ֆիզիկական խնդիրների լուծման վրա։ Արքիմեդի քաղաքական դիրքավորումն, ըստ երևույթին, զգալի չափով որոշվում էր արքայական տան հետ նրա ունեցած աղդակցությամբ. հաղիվ թե նա կարողանար համակրել այն մարդկանց, ովքեր կազմակերպել էին Հիերոնի բոլոր շառավիղների ու մատիկ հարազատների ոչնչացումը, մինչդեռ ի դեմս Հիպոկրատեսի ու Էպիկիդեսի, նա չէր կարող չտեսնել Հիերոնիմի ուղեգիծը շարունակողներին։ Վերջապես, օտարերկրյա զավթիչներից (որոնք որոշակիորեն ցանկանում էին Սիրակուզային զրկել իր անկախությունից) հայրենիքի պաշտպանության մեջ նա պետք է տեսներ իր քաղաքացիական պարտքը։ Համենայն դեպս, գիտնականի իր ամբողջ վիթխարի տաղանդը և կյանքի վերջին ամիսներն Արքիմեդը, բացահայտորեն հարելով Հիպոկրատեսին ու Էպիկիդեսին, նվիրեց հռոմայեցիներից հայրենի քաղաքի պաշտպանությանը։ Ի դեպ ասած (մենք իմիջիայլոց արդեն հիշատակել ենք այդ մասին), Սիրակուզայի պարիսպների վրա պաշտպանական շատ մեխանիզմներ Արքիմեդի ղեկավարությամբ ստեղծվել էին տակավին Հիերոն II-ի թագավորելու տարիներին (Լիվիոս, 21, 34, Պոլիբիոս, 8, 9, 2, Պլուտ., Մարկ., 14)։

Լիվիոսը պատմում է (24, 34), որ Աքրադինայի պարիսպների վրա Մարկելոսը 60 քվինքվերեմաններով գրոհել է ծովակողմից։ Նպատակից որոշ հեռավորության վրա գտնվող մի քանի նավերի վրայից պարսատիկավորները, նիզակավորները և աղեղնագնավորները իսկական որս էին կազմակերպում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հայտնվում էին քաղաքային պարիսպների վրա։ Մյուս նավերից յուրաքանչյուր երկուսին նա հրամայեց կապել միմյանց և, նրանց վրա տեղակայելով պաշարողական սարքեր, մոտեցնել սիրակուզացիների ամրություններին։ Արքիմեդը հեռվում եղած նավերին հարվածում էր հսկայական քարերով, որոնք զինվորները նետում էին բարանների օգնությամբ. պարիսպների անմիջական մերձակայքում գտնվող նավերին նա հասցրեց մի շարք անընդմեջ, բայց ավելի թեթև հարվածներ։ Որպեսզի սիրակուզական զինվորները կարողանային առանց վտանգի ենթարկվելու հարվածներ տեղալ թշնամու վրա, Արքիմեդը կարգադրեց պարսպի մեջ բացել բազմաթիվ ակնատներ։ Երբ տեղացող հարվածներից փրկվելով, հռոմեական նավերը մտնում էին քաղաքային պարիսպների անմիջական մատույցներում գտնվող մեռյալ տարածության մեջ, սիրակուզացիները վերամբարձ աքթի միջոցով թշնամու նավերի նավաքթերի վրա էին գցում երկաթյա ճանկեր։ Ճանկերով նավի ցուցակը ջրից դուրս քաշելով, նավը ցից կանգնեցնում էին նեռի կողմի վրա։ Իսկ հաճախ այն վեր էին բարձրացնում

ծովից, այնուհետև ճանկերը պոկվում էին, և նավն անձնակազմի հետ, անչափ մեծ բարձրությունից ընկնելով ծով, ջարդվում էր ու խորտակվում։ Ծովակողմից քաղաք ներխուժելու՝ Մարկելոսի բոլոր փորձերն ապարդյուն անցան։ Ցամաքից Սիրակուզայի վրա գրոհելը նույնպես հաջողություն չբերեց հռոմեական զենքին. Արքիմեդի քարանետ մեքենաները զինվորների գլխներին էին նետում վիթխարի քարաբեկորներ. սիրակուզացիները պարիսպների վրայից նույնպիսի քարեր էին գլորում գրոհողների վրա։ Այս բոլոր փորձերի ի դերև լինելը հռոմեական հրամանատարությանն ստիպեց հրաժարվել քաղաքը գրավելու մտքից և սահմանափակվել միայն ծովից ու ցամաքից կատարվող շրջափակմամբ։

Հռոմայեցիների կողմից Սիրակուզայի պաշարման մասին մեր տրամադրության տակ կան նաև այլ պատումներ՝ մասնավորաբար Պոլիբիոսի պատմածը (8, 5—9), որը մի քանի կետերում լրացնում կամ ճշգրտում է Լիվիոսին։ Այսպես, Պոլիբիոսի ասելով, հռոմեական նավերի վրա, որոնք պետք է մոտենային քաղաքի պարիսպներին, շինված էին սամբուկներ՝ բարձրացնովի աստիճաններ, որոնց վրայով կարելի էր բարձրանալ պարսպի վրա։ Բաբաններից սիրակուզացիների նետած քարերը Մարկելոսին հնարավորություն չտվեցին նավերը մոտեցնելու պարիսպներին, և այն ժամանակ նա վճռեց դիմել գիշերային գրոհի. հենց այդ ժամանակ էլ հռոմայեցիները հանդիպեցին ակնատներից կատարվող նոր քարաձգության։ Արքիմեդը գործողության մեջ դրեց նավերը ջրից դուրս հանող սարքերը և բաբանները։ Մի քան նավեր, գրում է Պոլիբիոսը (8, 8, 4) ընկան կողքի վրա, ուրիշները շուռ եկան, իսկ մեծ մասն այնպես խորն ընկղմվեց ծովի մեջ, որ ջրով լցվեց և անպետքացավ։ Ցանկանալով ուրախության տակ սքողել իրեն համակած տագնապը, Մարկելոսն ասաց, որ Արքիմեդն իր նավերին հյուրասիրում է ծովի ջրով, իսկ իր սամբուկները խայտառակ կերպով դուրս են քշվել գինարբուքից (Պոլիբիոս, 88, 6)։ Ցամաքում տեղի էր ունենում մոտավորապես նույնը. բնդ որում ճանկավոր սարքերն այստեղ արագորեն շարքերի միջից վերցնում էին զինվորներին և մեծ բարձրությունից գետին էին նետում նրանց։ (Պոլիբիոս, 8, 9, 4)։

Պլուտարքոսի վկայությամբ (Պլուտ., Մարկ., 14—17), որի մեջ նույնպես կան մի քանի լրացուցիչ մանրամասներ, Մարկելոսը իրար միացրեց 8 նավ, իսկ նրանց վրա կանգնեցրեց պաշարողական աշտարակ, որի դեմ Արքիմեդն օգտագործեց իր հնարած սարքը։ Մի քանի նավեր խորտակվեցին հրեշային ճանկերի հարվածից։ Հանկարծ ջրից օդի մեջ բարձրացած նավը այնքան էր ճոճվում այս ու այն կողմ, մինչև որ անձնակազմը ցած էր թափվում ծովի մեջ։ Ծիծաղելով իր անհաջողությունների վրա, Մարկելոսը գոչեց. «Արդյոք չպե՞տք է մենք դադարեցնենք պայքարը այդ երկրաչափ Բրիարեոսի դեմ, որը հանգիստ նստել է ծովափին ու ոչնչացնում է մեր նավերը և, միաժամանակ մեր վրա տեղալով այդքան մեծ քանակությամբ նետեր, գերազանցում է առասպելական հարյուրաձեռն հսկաներին»։ Մարկելոսը հիմքեր ուներ այդպես ասելու. վերջիվերջո Արքիմեդը այնպիսի սարսափ էր ներշնչել հռոմայեցի զորականներին, որ նրանք քաղաքի պարիսպների վրա ճոպանի մի կտոր կամ գերան տեսնելիս խուճապահար փախչում էին։

Այս բոլոր հաղորդումները (հմմտ. նաև Դիոդորոսի (26, 18) և Զոնարասի (9, 4) մոտ) փոխադարձաբար լրացնում են միմյանց և ամբողջովին վերցրած ստեղծում կատաղի և հռոմայեցիների համար ծայրահեղորեն անհաջող գրոհի պատկերը. այդ գրոհը կարող էր ավարտվել լոկ նրանով, ինչով ավարտվեց։ Մարտական ակտիվ գործողությունները վերջացան և անցան նոր տակտիկայի՝ շրջափակման, որը հնարավորություն տվեց Սիրակուզայի հոգին սպառել։ Արքիմեդի ստեղծած բաբաններն ու մարտական սարքերը անզոր էին պատերազմ վարելու այդպիսի եղանակի դեմ։

Այս բոլոր իրադարձությունների ժամանակ ինչպիսի՞ դիրք էին բռնել կարթագենցիները, և այդ թվում, որը մեզ համար առանձնապես կարևոր է, Հաննիբալը։ Վերևում մենք արդեն ասել ենք, որ իր ժամանակին, որպեսզի Սիրակուզայում պաշտպանեն կարթագենամետ տրամադրությունները, Պաքինոս հրվանդանի կողմն ուղարկվեց կարթագենական նավատորմը։ Այն բանից հետո, երբ Սիրակուզայում իշխանության գլուխ կանգնեցին Հիպոկրատեսն ու Էպիկիդեսը, այդ նավատորմի հրամանատար Հիմիլկոնը փութապես մեկնեց Կարթագեն. այնտեղ հասան նաև Հիպոկրատեսի պատվիրակները՝ Հաննիբալի նամակով։ Վերջինիս բովանդակությունը հատուկ հետաքրքրություն ունի, քանի որ այն երևան է հանում թե՛ իր սեփական և թե՛ Սիրակուզայում նրա գործակալների բոլոր արարքների իսկական նպատակները։ Հաննիբալը գրում էր, որ արդեն ժամանակն է, որպեսզի իրենց մեծ փառքով պսակելով, վերստին գրավեն Սիցիլիան։ Հենվելով Հաննիբալի պաշտպանության և Սիրակուզայի պատվիրակության խնդրանքի վրա, Հիմիլկոնը կարթագենական խորհրդից ստացավ օժանդակ նոր զորամիավորումներ (Լիվիոս, 24, 35, 4—5)։ Պարզ էր, որ հռոմեական հրամանատարությունը փորձելու էր վրիժահատույց լինել Սիրակուզայի պարիսպների տակ կրած անհաջողության համար և վերականգնել իր դիրքերը մնացյալ Սիցիլիայում։ Եվ իրոք, չցանկանալով, ինչպես գրում է Պոլիբիոսը (8, 9, 11—12), զուր տեղը ժամանակ կորցնել քաղաքի պաշարման վրա, Մարկե-

լոսն ու Ապպիոս Կլավդիոս Պուլքերը զորքը բաժանեցին միմյանց միջև։

Վերջինիս հրամանատարությամբ զինվորների երկու երրորդը մնաց շրջափակելու Սիրակուզան, իսկ մնացածին Մարկելլոսը տարավ գրավելու սիցիլիական այն քաղաքները, որոնք հրաժարվել էին հռոմեական տիրապետությունն ընդունելուց։ Հելորն ու Հերբեսը կամավորապես հանձնվեցին նրան, բայց Հիբլեական Մեգարան նա վերցրեց գրոհով, մատնելով ավերածության ու ավարառության, որպեսզի, նկատում է Լիվիոսը, որն այս անգամ չի ցանկանում ժխտել հռոմայեցիների հրեշավոր և կանխամտածված դաժանությունը, վախ ներշնչի մյուս սիցիլիացիներին և առանձնապես սիրակուզացիներին (Լիվիոս, 24, 35, 1—2, Պլուտ., Մարկ., 18)։

Հիմիլկոնը պատրաստ էր իրադարձությունների նմանօրինակ շրջադարձին։ Հաղիվ էին ժամանել լրացուցիչ զորաբաժինները, երբ նա իր նավատորմը շարժեց դեպի արևմուտք, կղզում եղած կարթագենական վաղեմի տիրույթների կողմը, որտեղ զգալի թվով փյունիկական բնակչություն կար, և որտեղ դյուրությամբ կարելի էր հույս դնել կարթագենական զորքի աջակցության վրա։ Այնտեղ նա ափ իջեցրեց 25 հազար հետևազորային, 3000 հեծյալ և 12 փիղ, գրավեց Մինոյան Հերակլեան, իսկ նրանից հետո նաև Ակրագանտը։ Մարկելլոսն այն է ուզում էր խանգարել նրան, բայց ուշացավ (Լիվիոս, 24, 35, 3—6)։

Ակրագանտում կարթագենական զորքերի հայտնվելը և Մարկելլոսի բացահայտ անհաջողությունը կղզում հակահռոմեական տրամադրությունների նոր վերելք առաջացրին։ Սիրակուզայում պաշարվածները վճռեցին որոշ չափով աշխուժացնել իրենց գործողությունները. ենթադրելով, թե հաջողությամբ կարող են պաշտպանվել նաև փոքրաթիվ կայազորով, նրանք զորքը բաժանեցին երկու մասի. դրանցից մեկը Էպիկիդեսի հրամանատարությամբ մնաց Սիրակուզան պաշտպանելու, իսկ մյուսը՝ Հիպոկրատեսի գլխավորությամբ (10 հազար հետևազորային և 5000 հեծյալ) գիշերով հեռացավ քաղաքից, որպեսզի գնա միանա Հիմիլկոնին, և առայժմ տեղավորվեց Ակրիլայի մոտակայքում։ Այնտեղ ճամբար կառուցող սիրակուզացիներին, որոնք հարձակման չէին սպասում, վրա հասավ Մարկելլոսը, որը վերադառնում էր աննվաճ Ակրագանտից։ Հիպոկրատեսի հետևազորը, առանց հատուկ ջանքերի, շրջապատվեց հռոմայեցիների կողմից, սակայն հեծելաջոկատը իր հրամանատարի հետ սլացավ Ակրե։ Մի քանի օր հետո Հիմիլկոնն ու Հիպոկրատեսը միացան և մոտեցան Անապոս գետին. նրանք կանգ առան Սիրակուզայից մոտավորապես 8 մղոն հեռավորության վրա (Լիվիոս, 24, 35, 7—36, 2, Պլուտ., Մարկ., 18)։

Պատերազմը Սիցիլիայում ավելի ու ավելի սուր բնույթ էր ընդունում։ Հանկարծակի Սիրակուզայի նավահանգիստ մտավ կարթագենական նավախումբը (55 «երկար» նավ) Բոմիլկարի հրամանատարությամբ. այդ պունիկյան խորհուրդն էր վճռել Սիցիլիա ուղարկել լրացուցիչ զորամիավորումներ։ Հռոմեական կառավարությունը նույնպես չկամեցավ սիցիլիական ռազմաճակատը թողնել բախտի քմահաճույքին, և 30 քվինքվերեմայից բաղկացած նավախումբը Պանորմոսում ափ իջեցրեց մեկ լեգեոն։ Հիմիլկոնը ջանում էր հանդիպել նրան, բայց սխալվեց իր հաշիվներում. պունիկացիները դեպի կղզու խորքերը շարժվեցին այնպիսի ճանապարհով, որը թվում էր, թե հռոմեական հրամանատարությունը պետք է ընտրեր Սիրակուզա անցնելու համար, սակայն հռոմայեցիները նավատորմի ուղեկցությամբ ծովափով դիմեցին Պաքինոս հրվանդանի կողմը, որտեղ նրանց դիմավորելու համար ժամանեց Ապպիոս Կլավդիոսը։ Բոմիլկարը, երկյուղ կրելով ծովում հռոմայեցիների ունեցած թվական գերակշռությունից, երկար չմնաց Սիրակուզայում. չկամենալով ենթարկվել՝ իր կարծիքով, ավելորդ վտանգի, նա իր նավերը տարավ Աֆրիկա։ Մարկելլոսի հետ ընդհարվելու համար Հիմիլկոնի կատարած բոլոր փորձերն ի դերև ելան. հռոմեական զորապետը հմտորեն խուսափում էր մարտից։ Այն ժամանակ Հիմիլկոնը շարժվեց դեպի Սիցիլիայի խորքերը, հռոմայեցիներին պատեհություն տալով պաշարելու Սիրակուզան (Լիվիոս, 24, 36)։

Սիցիլիայում Կարթագենի տիրապետությունն առաջինը ճանաչեց Մուրգանտիան, որը Հիմիլկոնի ձեռքը հանձնեց թշնամու կայազորը (Լիվիոս, 24, 36, 10)։ Այս իրադարձությունը Սիցիլիայի մյուս քաղաքներին նույնպես դրդեց դուրս քշելու հռոմեական զինվորներին կամ նրանց հանձնելու կարթագենցիների ձեռքը։ Միայն Գեննայում հռոմայեցիները խուսափեցին նման վիճակից, այն էլ լոկ այն բանի շնորհիվ, որ այնտեղ կանգնած ջոկատի հրամանատար Լուկիոս Պինարիոսը բանակցությունների ժամանակ նենգաբար հարձակվեց քաղաքացիների վրա և նրանց բոլորին խողխողեց (Լիվիոս, 24, 37—39)։ Սակայն Գեննայում տեղի ունեցած արյան բաղնիքը հակառակ ներգործություն ունեցավ, քան սպասում էր Պինարիոսի գործողություններին հավանություն տված Մարկելլոսը. նույնիսկ նրանք, ովքեր դեռևս տատանվում էին, այժմ անցան կարթագենցիների կողմը (Լիվիոս, 24, 39)։

Այդ միջոցին Սիցիլիայում ռազմական ակտիվ գործողությունների ժամանակը մոտենում էր իր ավարտին։ Հիպոկրատեսն իր զինվորներին տարավ Մուրգանտիա, Հիմիլկոնը՝ Ակրագանտ, Մարկելլոսը՝ Լեոնտինի, իսկ այնտեղից՝ դեպի Սիրակուզա։ Լեոնտոս վայրում, քաղաքային դար-

պաններից մոտավորապես 5 մղոն հեռավորության վրա, Մարկելլոսը կառուցեց ձմեռային կացարաններ (Լիվիոս, 24, 39, 10—13)։

Այժմ տեսնենք, թե իրադարձություններն ինչպես էին զարգանում այդ դաշնակցության արևելյան թևում, այն ռազմաճակատում, որն ստեղծել էր Հաննիբալը, ընդամենը մեկ տարի առաջ դաշինք կնքելով Փիլիպոս V-ի հետ։ Փիլիպոս V-ը, հենվելով Կարթագենի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների վրա, 214 թ. ամռանը վերսկսեց Էպիրոսում ու Իլլիրիայում, ինչպես և նրանց մատույցներում, ամրանալու իր փորձերը։ Նրա առաջին զոհը վերստին պետք է դառնար Ապոլլոնիան, որին թագավորը մոտեցավ 120 բիրեմաներով։ Պաշարումը ձգձգվեց. Փիլիպոս V-ը գրոհեց Օրիկոսի վրա և առանց կանգ առնելու գրավեց վատ պաշտպանված այդ քաղաքը։ Էպիրոսում և Իլլիրիայում տեղի ունեցած դեպքերի մասին Օրիկոսի պատվիրակները իրազեկեցին Իտալիայի հարավի հռոմեական հրամանատարությանը՝ պրետոր Մարկոս Վալերիոս Լևինոսին, որը պաշտպանում էր Բրունդիսիումը և Կալաբրիայի ծովեղերքը։ Պրետորը, թողնելով 2000 զինվորից բաղկացած կայազորը, որը գլխավորում էր Պուբլիոս Վալերիոսը, անցավ Էպիրոս և այնտեղ, առանց հատուկ ջանքերի, գրավեց Օրիկոսը։ Հենց այնտեղ էլ ժամանեցին Ապոլլոնիայից եկած պատվիրակները։ Նրանք պահանջեցին հռոմեական կայազոր ուղարկել. քաղաքը պաշարված է, և եթե հռոմայեցիները չօգնեն, նա չի կարող շարունակել դիմադրությունը։ Լևինոսն Ապոլլոնիա ուղարկեց նավախումբ՝ Քվինտոս Նևիոս Կրիսպոսի հրամանատարությամբ. այն կարողացավ գիշերով թափանցել մակեդոնական ճամբարը, որը շատ վատ էր պաշտպանված, և այնտեղ գործել սարսափելի ավերածություններ։ Հաջողության չհասնելով և կրելով ծանր կորուստներ, Փիլիպոս V-ը հեռացավ Մակեդոնիա (Լիվիոս, 24, 40)։ Այսպիսով Փիլիպոս V-ը չկարողացավ իրական օգնություն ցույց տալ Հաննիբալին. ընդհակառակը, Իլլիրիայի նկատմամբ իր հավակնությունները իրագործելու համար նա ինքը կարիք ուներ կարթագենցիների պաշտպանության։

Պիրենեյան թերակղզում 214 թվականի պատերազմաշրջանն սկսվեց նրանից, որ Մագոն և Հասդրուբալ Բարկայանները, օգտվելով այն բանից, որ հռոմեական զորքը հեռացավ Իբերի այն կողմը, ջախջախեցին տեղական ցեղերի հսկայական բանակը։ Որպեսզի մշտապես տատանվող իբերացիներին թույլ չտա անցնելու կարթագենցիների կողմը, Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը փութապես շարժվեց դեպի ետ և բանակեց Ակրա Լևկեի մոտ։ Այդ վայրը հեղեղվեց պունիկյան զինվորներով։ Սկիպիոնին առանձնապես անհանգստացրեց թշնամու հեծյալների հարձակումը. վերջիններս ոչնչացրեցին մոտավորապես 2000 հռոմայեցի զինվորների։ Սկիպիոնը որոշեց հեռանալ այդ աստիճանի վտանգավոր վայրից և ամրացավ Նիկե (Լիվիոսը բերում է լատիներեն ձևը՝ Victoria—հաղթանակ) լեռան մատույցներում։ Այնտեղ ժամանեց նաև Հասդրուբալը՝ Գիսկոնի որդին, ինչպես նաև Գնեոս Կորնելիոս Սկիպիոնը։

Միմյանց ընդդիմակայելու ժամանակ, երբ Պուբլիոս Սկիպիոնը շրջադիտում կատարելիս քիչ էր մնում ընկներ շրջապատման ու գերության մեջ և երբ նրան փրկեց իր եղբայր Գնեոսը, տեղի ունեցան մի քանի իրադարձություններ, որոնք ընդհանուր առմամբ անբարեհաջող էին պունիկացիների համար։ Նախ Հռոմի կողմն անցավ Կաստուլոն քաղաքը։ Երկրորդ, Իլիտուրգեն, որտեղ կար հռոմեական կայազոր, գրոհով գրավելու՝ կարթագենցիների փորձը ձախողվեց Գնեոս Սկիպիոնի միջամտության պատճառով, իսկ երբ նրանք մոտեցան Բիգեռեի պարիսպներին, Գնեոս Սկիպիոնի հայտնվելը նրանց ստիպեց վերացնել պաշարումը։ Մունդա քաղաքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ. այն վերջացավ կարթագենցիների պարտությամբ, որի հետևանքով նրանք կորցրեցին 12 հազար սպանված, 3000 գերի և 39 փիղ։ Այնտեղից պունիկացիները նահանջեցին Աուրինգում։ Հենց այդտեղ Մագոնը բերեց օժանդակ զորամիավորումներ՝ գալլացի նոր վարձկանների, սակայն դա ևս չօգնեց. կարթագենական զորքը վերստին ջախջախվեց։

Այսպիսով, 214 թվականի պատերազմն Իսպանիայում հռոմեական հաղթանակների մի ամբողջ շարք էր ներկայացնում. այդ հաղթանակները լրջորեն խախտեցին Պիրենեյան թերակղզում պունիկացիների տիրապետությունը (Լիվիոս, 24, 41—42)։ Զարմանալի չէր, որ հռոմեական կառավարությունը հատկապես այժմ հնարավոր գտավ բացառիկ նշանակություն ունեցող քաղաքական ցույց ձեռնարկել՝ վերականգնել Սագունտումը, որը մի քանի տարի առաջ ավերել էր Հաննիբալը. նույն այն Սագունտումը, որը առիթ էր դարձել Կարթագենի ու Հռոմի միջև պատերազմի համար։

VI

214 թվականի պատերազմի ռազմաքաղաքական արդյունքներն այնպիսիք էին, որ նրանք Հաննիբալին թույլ չտվեցին հաջորդ, 213 թ. ձեռնարկելու փոքր-ինչ լուրջ հարձակողական գործողություններ։ Քանի դեռ Իտալիայի, Աֆրիկայի և Իսպանիայի ուրիշ վայրերում հռոմեական հրամանատարության նախաձեռնությամբ ռազմական գործողություններ

էին ծավալվում, Հաննիբալը Տարենթոնի հանձնվելուն սպասում էր սկզբում Սալապիայում (Լիվիոս, 24, 47, 9), իսկ ավելի ուշ՝ սալենտինների երկրում՝ Իտալիայի ծայր հարավ-արևելքում, Տարենթոնի և Բրունդիսիումի անմիջական մատույցներում (Լիվիոս, 25, 1, 1)։ Այնտեղ նրա կողմն անցան մի քանի քիչ նշանակալից սալենտինական քաղաքներ (Լիվիոս, 25, 1, 1)։ Բրուտիումում, որտեղ հռոմայեցիների կողմն անցան կոնսենտիններն ու տավրիանները, Հաննոնին հաջողվեց ջախջախել հռոմեական հեծելաջոկատը, որի հրամանատարն էր պրետոր Տիտոս Պոմպոնիոսը (Լիվիոս, 25, 1, 2—4)։ Սակայն այդ բոլորով հանդերձ (իհարկե, Տարենթոնը Հաննիբալի համար խիստ անհրաժեշտ էր. այն, ինչպես ասվել է, Մակեդոնիայի հետ հույժ անհրաժեշտ կապեր էր ընձեռում նրան), Հաննիբալը կանգնեց պատերազմի եզրին և չկարողացավ ոչ միայն հռոմայեցիներից խլել նախաձեռնությունը կամ ընդհանրապես իրադարձությունների ընթացքի վրա որևէ ազդեցություն թողնել, այլև զորու չեղավ խոչընդոտել Ապենինյան թերակղզու հարավում հռոմեական դիրքերի հետագա ամրապնդմանը։

Իտալիայում այդ պահին Արպիքը դարձել էր այն կետերից մեկը, որի շուրջը հռոմեական հրամանատարությունը կենտրոնացրեց իր ջանքերը։ Պատերազմի հենց սկզբին կոնսուլ Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսին՝ Դանդաղկոտի որդուն երեք սորուկների ուղեկցությամբ ներկայացավ Արպիքի շատ հայտնի մեծահարուստ քաղաքացի Դասիոս Ալտինիոսը և արտասանեց անսպասելի ճառեր. նա խոստացավ քաղաքը հանձնել հռոմայեցիներին, եթե դրա դիմաց իրեն վարձահատուցում խոստանային (Լիվիոս, 24, 45, 1)։ Դասիոսի այդ դավաճանությունը, նույն նրա, ով Կաննեից հետո պահեց Հաննիբալի կողմը, դառնալով Արպիքի և Կարթագենի միջև դաշնակցային հարաբերությունների նախաձեռնողն ու կազմակերպողը (Լիվիոս, 24, 45, 2), խորապես ցնցեց ռազմական խորհրդին, որին հարցը լուծելու համար դիմեց կոնսուլը։ Ինչպես պատմում է Լիվիոսը (24, 45), այս եղելության քննարկման մի քանի մասնակիցներ ելնում էին «հին հռոմեական» բարոյաէթիկական սկզբունքներից. նրանք պահանջում էին, չմտնելով հարցի հետագա քննարկման մեջ, ճիպոտահարել Դասիոսին և մահապատժի ենթարկել, որպես ընդհանուր երկդիմի թշնամու. կարծելով, թե հավատարմությունը պետք է ուղեկցի հաջողությանը, նա Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո դավաճանորեն անցավ Հաննիբալի կողմը, իսկ այժմ, երբ, հակառակ նրա սպասումների ու ցանկությունների, հռոմայեցիների գործերը սկսեցին լավանալ, նա մտահղացավ նոր դավաճանություն, այս անգամ հօգուտ նրանց, ում մի ժամանակ դավաճանել էր։ Ուրիշ ձևով

և իհարկե, ավելի խորությամբ հաշվի առնելով հռոմեական պետության շահերը, արտահայտվեց Քվ. Փաբիոս Մաքսիմոսը, հայտնի դիկտատորը, Ֆաբիուսի հայրը, որը որպես լեգատ գտնվում էր որդու բանակում։ Այժմ, սակայն նա, անհրաժեշտ է մտածել այն մասին, թե ինչպես պետք է պահպանել իտալիկյան դաշնակիցներին և միաժամանակ ետ վերադարձնել նրանց, ովքեր միացել են Հաննիբալին։ Դասիոսի նկատմամբ հաշվեհարդարը ցույց կտա, որ ովքեր Կաննեից հետո հրաժարվել են Հռոմի հետ ունեցած բարեկամական հարաբերություններից, նրանց համար հետադարձի ճանապարհ չկա, և այն ժամանակ բովանդակ Իտալիան կդառնա Կարթագենի դաշնակիցը։ Փաբիոսը Դասիոսի վերաբերմունքի մեջ տեսնում էր գլխավորը. Իտալիայում հասարակական կարծիքի մեջ բեկում է սկսվել։ Հաննիբալի առջև, ճիշտ է տակավին հեռավոր կերպով, երևան է գալիս ռազմաքաղաքական միայնակության հեռանկարը։ Այդ պայմաններում Փաբիոսն առաջարկում էր Դասիոսի նկատմամբ անհամաստորեն դաժան հաշվեհարդարով հեռու չվանել հնարավոր փախբուսակներին, որքան էլ թույլ ու երկդիմի լինեին նրանք։ Ճիշտ է, նա չէր պնդում նաև Դասիոսի ազատման վրա, այնպես որ վերջինս Կալեում ենթարկվեց տնային կալանքի։

Բուն Արպիքում Դասիոս Ալտինիոսի հանկարծակի անհայտացումը հարուցեց ամբողջ բնակչության անհանգստությունը։ Երկյուղ էին կրում հեղաշրջումից և ամենից առաջ որոշեցին դիմել Հաննիբալին։ Սակայն վերջինս միայն մի բան ասաց. Դասիոսի ունեցվածքը բռնագրավեց և ամբողջապես վաճառեց, իսկ նրա կնոջն ու երեխաներին, որոնց կալանել և բերել էին կարթագենական բանակատեղ, հրամայեց ողջ-ողջ այրել (Լիվիոս, 24, 45, 11—14)։

Նույն այդ ժամանակ Փաբիոս-որդին Սուեսսուլայից մտնեցավ Արպիքին, և գիշերը, կոտրելով դարպասները, հռոմայեցիները ներխուժեցին քաղաք (Լիվիոս, 24, 46)։ Փողոցային մարտերի ժամանակ արպիքցիների ու հռոմայեցիների միջև խոսակցություններ սկսվեցին. վերջիվերջո տեղի բարձրագույն մագիստրատը, համաքաղաքացիների կողմից հրահրվելով, ներկայացավ կոնսուլին, և, ստանալով դաշինքը վերականգնելու վերաբերյալ երդմամբ տրված հավաստիացում, արպիքցիները հարվածեցին կարթագենական կայազորին։ Արպիքում հռոմայեցիների կողմն անցան նաև իսպանական 1000 հեծյալներ, սակայն նրանք կարթագենցիների համար ձեռք բերեցին քաղաքից ազատ կերպով հեռանալու իրավունք (Լիվիոս, 24, 47, 1—11)։

Մոտավորապես նույն այդ ժամանակ պրետոր Պուբլիոս Սեմպրոնիոս Տուդիտանոսը վերցրեց Ատրինումը՝ այնտեղ եղած 500 գերիներով հան-

գերձ (Լիվիոս, 24, 47, 14)։ Սակայն ավելի կարևոր նշանակություն անցավ առաջին հայացքից ոչ էական մի փաստ։ Բուն Կապուայի մեծատոհմիկների միջավայրում երևան եկավ մի հոսանք՝ հօգուտ Հռոմի հետ հարաբերությունների վերականգնման։ Ճիշտ է, հռոմեական կառավարությունը չկարողացավ օգուտ քաղել նմանօրինակ հանգամանքից, սակայն այդ տրամադրությունները ինքնըստինքյան պետք է լրջորեն անհանգստացնեին Հաննիբալին։ Բանն այսպես էր. քանի դեռ կոնսուլները բացակայում էին, դեպի հռոմեական բանակատեղ սլացան կապուական 120 հեծյալ՝ առաջարկելով հանձնել Կապուան, եթե նրանց երաշխիք տրվեր իրենց ունեցվածքը պահպանելու վերաբերյալ։ Նրանց տասը ներկայացուցիչների հետ զրուցող պրետոր Գնեոս Փուլվիոս Կենտիմալոսը, իհարկե, նրանց խոստացավ լիակատար պաշտպանություն և այն ամենը, ինչ նրանք խնդրել էին (Լիվիոս, 24, 47, 12—13)։ Ավելի կերպ չէր էլ կարող լինել։ Թվում էր, թե սասանվեց Հարավային Իտալիայում կարթագենական տիրապետության անկյունաքարը։ Հատկապես կարևոր էր այն, որ հեծյալները ակնհայտորեն գործում էին կապուական իշխանությունների թողտվությամբ։ Այնուամենայնիվ, ամեն ինչ սահմանափակվեց սոսկ բանակցություններով։

213 թ. տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որը և՛ բուն Կարթագենում, և՛ Հաննիբալի ճամբարում չէին կարող չընդունել որպես լուրջ սպառնալիք. Սկիպիոն եղբայրները, որոնք հաջողությամբ պատերազմում էին Պիրենեյան թերակղզում, ափ իջան Հյուսիսային Աֆրիկայում։ Այդ արդեն պատերազմն անմիջականորեն կարթագենական տերության տարածքը տեղափոխելու ուղղությամբ հռոմեական հրամանատարության ձեռնարկած երկրորդ փորձն էր։ Այս անգամ աֆրիկական արշավանքը դիվանագիտական խոշոր հաջողություն բերեց հռոմայեցիներին։ Նրանց հաջողվեց օգուտ քաղել այն բանից, որ վեճեր առաջացան կարթագենցիների և նումիդիական «արքաներից» մեկի՝ մասայսիլիների ցեղի առաջնորդ Սիփաքսի միջև, և վերջինիս հետ կարողացան կնքել դաշինք։ Ցենտուրիոն Քվինտոս Ստատորիոսը նույնիսկ մնաց Սիփաքսի մոտ, որպեսզի նրա զորականներին ուսուցանի հռոմեական մարտաշարքը և ռազմական արվեստը։ Արդյունքները անհապաղ երևան եկան. շուտով ընդհարումներից մեկի ժամանակ մասայսիլիները ջարդեցին կարթագենցիներին (Լիվիոս, 24, 48, 1—13)։ Թե կարթագենական կառավարությունը որքան վտանգավոր էր համարում ստեղծված կացությունը, երևում է արդեն նրանից, որ, համաձայն Ապպիանոսի տվյալների (Ապպ., Իսպ., 15), նա Աֆրիկա կանչեց Հասդրուբալ Բարկյանին իր զորքի մի

մասի հետ միասին։ Գործողությունը վերջացնելուց հետո Հասդրուբալը վերադարձավ Իսպանիա։

Մասայսիլիներից եկող հարաժամ սպառնալիքներին կարթագենցիները կարող էին վերջ տալ միմիայն մի եղանակով՝ Սիփաքսի դեմ հրահրելով նրանց վաղեմի թշնամիներին՝ նումիդիական մեկ այլ ցեղի՝ մասիլիներին, որոնց «արքան» այն ժամանակ Գալան էր։ Կարթագենական զորավիրակներն առանց հատուկ դժվարության Գալային համոզեցին, քանի դեռ հռոմայեցիները մեծաքանակ զորամիավորումներ չէին տեղափոխել Աֆրիկա, և նրանց ու Սիփաքսի միջև եղած դաշինքը գոյություն ուներ ավելի շուտ խոսքով, քան գործնականում, հարձակվել մասայսիլիների վրա։ Կռվելու ցանկությամբ հատկապես վառվում էր Գալայի տասնյոթամյա որդին՝ Մասինիսան, որին զառամյալ «թագավորը» հանձնել էր գլխավոր հրամանատարությունը։ Իր ջոկատներին միացնելով կարթագենական կազմավորումներ, Մասինիսան մի մեծ ճակատամարտում ջախջախեց Սիփաքսին և նրան ստիպեց փախչել Մավրիտանիա, Բոգուդարի կողմը։ Այնտեղ Սիփաքսը նոր բանակ կազմեց և անցավ Իսպանիա։ Սիփաքսի դեմ պատերազմը շարունակելու համար այնտեղ մնաց նաև Մասինիսան (Լիվիոս, 24, 13—49, 6)։ Լիվիոսը հատկապես նշում է, որ Մասինիսան այդ պատերազմը վարում էր ինքնուրույնաբար, առանց կարթագենցիների օգնության։

Դժվար է ասել, թե այս հաղորդումը որքանով է արժանահավատ, մանավանդ որ ռազմական գործողությունների թատերաբեմը Իսպանիան էր, որտեղ տվյալ պահին եթե անգամ մարտական ակտիվ գործողություններ չէին տարվում, այնուամենայնիվ միմյանց դեմհանդիման կանգնած էին պունիկյան (Մասինիսայի հնարավոր դաշնակիցները) և հռոմեական (դեպքերի բերմամբ Սիփաքսի դաշնակիցները) բանակները։ Համենայն դեպս, Մասինիսայի աֆրիկական արշավանքին Հասդրուբալ Բարկյանի մասնակցությունը հույժ հավանական է թվում։ Ըստ երևույթին, հռոմեական ավանդությունը շահագրգռված էր ամեն կերպ նվազեցնելու Մասինիսայի երիտասարդական հանցանքը՝ նրա դաշնակցելը Կարթագենի հետ։ Ինչ կերպ էլ որ եղած լիներ, պունիկացիները վերացրեցին մասայսիլիների կողմից Կարթագենին սպառնացող վտանգը, իսկ Մասինիսայի հաղթական զորքերը, դալով Պիրենեյան թերակղզի, վաղ թե ուշ պետք է միանային կարթագենցիներին։

Եկավ 212 թվականը, այն տարին, երբ Հաննիբալին հնարավորություն տրվեց Իտալիայի տարածքում մեկ անգամ ևս ճաշակելու ռազմական հաջողություն։

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ Տարենթոնում 214 թ. իրեն դրսևորել էր հակահռոմեական դեմոկրատական այն շարժումը, որի զեկավարները հրավիրել էին Հաննիբալին և խոստացել նրան առանց դիմադրության հանձնել քաղաքը։ Այն ժամանակ Իտալիայի հարավ-արևելքում հռոմեական հրամանատարության եռանդուն գործողությունների շնորհիվ, այդ մտահղացումը չիրագործվեց։ Սակայն այժմ ավելի բարենպաստ պայմաններ էին ստեղծվել. Իտալիայի հարավի, այսպես կոչված, Մեծ Հունաստանի հունական գաղութներում զգալի չափով հակահռոմեական շարժման նոր վերելքն առաջացրեց պատանդների՝ թուրիացիների և տարենթոնցիների նկատմամբ (վերջիններս ձգտում էին փախչել Հռոմից) հռոմեական իշխանությունների հրեշավոր և քաղաքական տեսակետից ծայրահեղորեն վնասակար դաժանությունը։

Ինչպես պատմում է Լիվիոսը (25, 7), իրադարձությունները ծավալվեցին հետևյալ ձևով։ Հռոմում արդեն վաղուց, դեսպանի պարտականություններ կատարելու պատրվակով, ապրում էր տարենթոնցի Փալեոսը, որին հաջողվեց մուտք ունենալ պատանդների մոտ, որոնց վերցրել էին Թուրիայից և Տարենթոնից վերջիններիս հավատարմությունն ապահովելու համար։ Այս պատանդները պահվում էին Ազատության տանը։ Հռոմեական իշխանությունները նրանց պահպանում էին ոչ առանձին ջանադրությամբ, որովհետև մտածում էին, որ ո՛չ նրանց և ո՛չ էլ նրանց պետությունների համար ձեռնտու չէր խաբել հռոմայեցիներին։ Փալեոսը կաշառեց երկու պահակներին և աղջամուղջը վրա հասնելուն պես՝ պատանդներին հանեց կալանատեղից և նրանց հետ միասին փախավ քաղաքից։ Ըստ երևույթին, Փալեոսի խնդիրն էր՝ հռոմայեցիների ճանկերից դուրս կորզել պատանդներին։ Առավոտյան փախուստը հայտնի դարձավ։ Հետապնդելու համար ուղարկված զորականները բոլոր փախստականներին գտան Տառակինայի մերձակայքում. նրանց բռնեցին, քարշ տալով բերեցին Հռոմ և ժողովրդական ժողովի որոշմամբ սկզբում խողխողեցին, ապա ցած նետեցին ժայռից։

Այս հաշվեհարդարը խորապես ցնցեց և վիրավորեց Թուրիայի և Տարենթոնի բնակչությանը, ոչ միայն բուն իրողությամբ, այլև այն պատճառով, որ մահապատժին միտումնավոր կերպով խայտառակ բնույթ տրվեց։ Իրագործվեց հատկապես այն, ինչի դեմ նախազգուշացնում էր Փաբիոս Դանդաղկոտը, երբ վճռվում էր Դասիոս Ալտինիոսի գործը. հռոմայեցիները չհաբեկեցին տատանվող «դաշնակիցներին», սակայն նրանց ետ վանեցին իրենցից, կարելի է ասել, որ իրենց ձեռքերով նրանց ուղարկեցին հակառակորդի ճամբարը։ Ամենուրեք զգացվեցին ընկերական և աղգակցական զգացումները. սպանվածների արյունը վրեժի էր

կոչում. ոչ ոք չէր կարող վստահ լինել ո՛չ ազատության և ո՛չ էլ անվտանգության նկատմամբ, և Տարենթոնում երիտասարդության նոր դավադրություն կազմակերպվեց Նիկոնի և Փիլեմենոսի գլխավորությամբ (Լիվիոս, 25, 8)։ Ներկայանալով Հաննիբալին, նրանք շարադրեցին նրան իրենց պլաններն ու դիտավորությունները։ Նիկոնն ու Փիլեմենոսը այդ օրերին քանիցս եղան Հաննիբալի մոտ, քաղաքից դուրս գալով մերթ իբրև որսորդության, մերթ իբր կարթագենական անասուններին քշելու համար։ Բանակցությունների ընթացքում կողմերը մշակեցին անձնատուր լինելու պայմաններ. ազատ տարենթոնցիները պահպանելու էին իրենց օրենքներն ու ողջ ունեցվածքը. նրանք հարկ չէին վճարելու կարթագենցիներին և պարտավոր չէին լինելու իրենց կամքին հակառակ ընդունել օտարերկրյա զորքեր։ Դավադիրները խոստացան հռոմեական կայազորը հանձնել Հաննիբալին։

Որպեսզի Հաննիբալին դյուրություն ընձեռի քաղաք ներթափանցելու, Փիլեմենոսն սկսեց նույնիսկ ավելի հաճախ, քան նախկինում, դուրս գալ գիշերային որսորդության. վերջապես քաղաքամուտ դարպասների պահապաններն արդեն այնքան էին ընտելացել նրա զրոսանքներին, որ առաջին իսկ աղդանշանով նրա առջև բացում էին մուտքը։ Հենց այդ ժամանակ Հաննիբալը, որ հակառակորդի զգոնությունը թուլացնելու միտումով հիվանդ էր ձևանում, վճռեց, որ եկել է ժամանակը։ Նոր գիշերին (չորրորդ պահաժամին, նշում է մեր աղբյուրը) նա դեպի Տարենթոն շարժեց 10 հազար հետևազորային և հեծյալ, մոտավորապես 80 նումիդիական հեծյալ ուղարկելով որպես դեսք և պահակազոր, և բանակեց Տարենթոնից 15 մղոն հեռավորության վրա։ Կամենալով գաղտնի պահել իր մտադրությունը, Հաննիբալը խուսափում էր որևէ բացատրությունից։ Նա միայն զինվորներից պահանջեց խստագույնս կարգ պահպանել, ճանապարհից դուրս չգալ և կատարել հրամանատարների բոլոր հրամանները։ Երբ ժամանակը գա, նա ինքը կպատմի, թե ինչ է կամենում անել։ Նորից վրա հասավ գիշերը, և Հաննիբալն իր զինվորներին տարավ դեպի պարիսպները։ Այդ միջոցին Տարենթոնում լուր տարածվեց, որ իբր թե նումիդիական հեծյալների մի ոչ մեծ խումբ ամայացնում է դաշտերը, երկյուղ ներշնչելով հողագործներին։ Հռոմեական կայազորի պետը իր հեծելազորի մի մասն ուղարկեց, առաջադրանք տալով կասեցնել ավարառությունը, սակայն նախազգուշական ավելի լուրջ միջոցառումների չդիմեց. նա կարծում էր, թե Հաննիբալն ընդհանրապես չի հեռացել իր նախկին ճամբարից։ Հաննիբալի համար ուղեկցորդ էր ծառայում Փիլեմենոսը, որն իբրև թե վերադառնում էր որսորդությունից։ Փիլեմենոսը Հաննիբալի սպառազինված զորախումբը պետք է անցկացներ այն

դռնակով, որից օգտվելով, նա սովորաբար քաղաք էր մտնում, իսկ իր զորքի հիմնական մասը Հաննիբալը մտադիր էր մոտեցնել Տեմենիտյան դարպասներին, որոնք տեղավորված էին քաղաքի պարիսպների արևելյան մասում։ Այնտեղ նրանց սպասում էր Նիկոնը։

Մոտենալով դարպասներին, Հաննիբալը հրամայեց վառել ազդանշանային կրակը։ Ի պատասխան փայլփլեց Նիկոնի ազդանշանը, և ապամեն ինչ ընկղմվեց մթության մեջ։ Կարթագենական զինվորները, լիակատար լռության մեջ, պահպանելով բացարձակ հանգստություն, հավաքվեցին դարպասների մոտ։ Հանկարծակիորեն Նիկոնը հարձակվեց քնած ժամապահների վրա, նրանց կոտորեց անկողինների մեջ և լայն բաց արեց դարպասները։ Հաննիբալը հետևազորայինների հետ միասին մտավ քաղաք, իսկ հեծյալներին հրամայեց մնալ քաղաքի դարպասներից դուրս։ Նույն ժամանակ Փիլեմենոսը նույնպես մոտեցավ իր դռնակին, արթնացրեց պահակներին և «դժվարությամբ է հնարավոր պահել հսկայական մսեղիքը» բառերով ներս մտավ։ Որսվածի ծավալը, իսկ այդ իրոք մեծ մարմնով մի վարազ էր, ապշեցրեց պահակին, և նա մի ակնթարթ շուռ եկավ Փիլեմենոսից, որպեսզի ավելի լավ դիտեր գազանին. այդ պահին Փիլեմենոսը գեղարդով հարվածեց պահակին. անմիջապես դռնակով ներխուժեցին 30 սպառազինված զորայիններ, կոտրեցին ամենամոտիկ դարպասները, և կարթագենական ջոկատը նույնպես մտավ քաղաք[125]։ Լիակատար լռության մեջ այն գնաց շուկայական հրապարակ և այնտեղ միացավ Հաննիբալին։ Մոտենում էր առավոտը։ Հաննիբալը 2000 գալլերից կազմեց 3 ջոկատ և ուղարկեց քաղաքի տարբեր մասերը՝ բռնելու բաղմամարդ փողոցները, սպանելու հռոմայեցիներին (Լիվիոս, 25, 8—9)։

Աղմուկի, իրարանցման և տագնապի մեջ, որոնք, չնայած անդորրն ու կարգը պահպանելու ուղղությամբ Հաննիբալի ներդրած ջանքերին, վերջիվերջո պատեցին քաղաքը, տարենթոնցիներն ու հռոմայեցիները երկար ժամանակ չէին կարողանում հասկանալ, թե իսկապես ինչ է կատարվում։ Տարենթոնցիները կարծում էին, թե հռոմայեցիները դուրս են եկել քաղաքն ավարելու. հռոմեական զինվորները գտնում էին, որ դա քաղաքացիների ձեռնարկած խռովությունն ու դավաճանությունն է։ Հռոմեական կայազորի պետ Գայոս Լիվիոսը, տագնապի առաջին իսկ ազդանշանների ժամանակ արթնանալով (գինարբուքից հետո նա մեռածի պես քնած էր), փախավ նավահանգիստ, իսկ այնտեղից լաստանավով տեղափոխվեց Տարենթոնի ակրոպոլիս։ Լուսադեմին հռոմայեցիները ճանաչեցին պունիկյան և գալլական զենքերը, տարենթոնցի հույները փողոցներում տեսան հռոմեական զինվորների դիակներ։ Բոլոր տեսակի

[illegible]ները վերացան. Հաննիբալը գրավել էր քաղաքը։ Կոտորածից [illegible] հռոմայեցիները հավաքվեցին ակրոպոլիսում։ Հաննիբալը հրամայեց անզեն տարենթոնցիներին և հրամայեց նրանց նշել իրենց տները, որպեսզի դրանք պահպանեն կողոպուտից։ Հռոմայեցիների տներն [illegible]ածքը ավարի մատնվեցին (Լիվիոս, 25, 10)։

Հաջորդ օրը Հաննիբալը փորձեց գրավել ակրոպոլիսը, որտեղ ամրացել էին հռոմեական կայազորի մնացորդները և որոշ տարենթոնցիներ, որոնք չէին կամենում կապերը խզել Հռոմի հետ։ Տարենթոնի ակրոպոլիսը մի կողմից պաշտպանված էր ծովով և ժայռերով, իսկ մյուս կողմից՝ պարսպապատով և հսկայական խրամափոսով։ Հաննիբալը նվազագույն հնարավորություն իսկ չուներ այն գրավելու համար։ Այդ պատճառով նա որոշեց քաղաքը պատնեշելով անջատել ակրոպոլիսից։ Երբ [illegible]վեցին աշխատանքները, հռոմայեցիները հարձակում գործեցին, սակայն ջարդվեցին և փախուստի մատնվեցին ու այլևս Հաննիբալի զինվորներին չխանգարեցին փոս փորելու և հողապատնեշ կանգնեցնելու։ Աշխատանքները վերջացնելուց հետո Հաննիբալը փորձեց մեկ անգամ ևս գրոհել ակրոպոլիսի վրա, բայց ապարդյուն. հռոմեական զինվորները, որոնց Մետապոնտոսից օգնության էր եկել մի ջոկատ, գիշերը ավերեցին և մասամբ այրեցին պաշարողական կառույցները։ Այժմ Հաննիբալը իր ամբողջ հույսը դրեց ակրոպոլիսի շրջափակման վրա, սակայն այն չէր կարող բավարար չափով արդյունավետ լինել, քանի դեռ ակրոպոլիսը ելք ուներ դեպի ծով։ Ընդհակառակը, ակրոպոլիսում ամրացած հռոմայեցիներն ու տարենթոնցիները, իշխելով դեպի բաց ծով դուրս գալու ելքի վրա, Տարենթոնը կտրեցին նրանից։ Հաննիբալն իր տարենթոնցի կողմնակիցներին հայտարարեց, որ հռոմայեցիներին ակրոպոլիսից դուրս քշելու միակ միջոցը ծովից այն շրջափակելն է։ Տարենթոնցիները հույս ունեին, որ ծովակողմից պաշարելու գործը կկազմակերպի ինքը՝ Հաննիբալը, կարթագենական նավախումբ հրավիրելով Սիցիլիայից, քանի որ իրենց՝ տարենթոնցիների նավատորմը հնարավորություն չուներ բաց ծով դուրս գալու։ Սակայն պունիկացին այլ ծրագիր առաջարկեց. տարենթոնական նավերը սայլերի վրա փոխադրեցին ակրոպոլիսի շուրջը, ջուրն իջեցվեցին և խարիսխ ձգեցին նավահանգստի մուտքի մոտ (Լիվիոս, 25, 11)[126]։

Ծովից ու ցամաքից կազմակերպելով Տարենթոնի ակրոպոլիսի պաշարումը, Հաննիբալը հեռացավ քաղաքից։ Այն հանգամանքը, որ նրան չհաջողվեց հռոմայեցիներին դուրս քշել ակրոպոլիսից և, հետևաբար, ամբողջապես գրավել քաղաքը, բացասաբար անդրադարձավ Հաննիբալի զինվորական-քաղաքական կացության վրա, մանավանդ որ Տարենթոնի թի-

կունքում էր գտնվում Բրունդիսիումը՝ հռոմեական կայազորով։ Այդ-հանդերձ Տարենթոնի գրավումը Հաննիբալի խոշոր հաջողությունն էր։ Տարենթոնը ծագումով սպարտական, հնագույն հունական գաղութ էր Իտալիայի հարավում. կարելի էր հուսալ, որ Մեծ Հունաստանում, ինչպես նաև Պելոպոնեսում, տարենթոնցիների՝ Կարթագենի կողմն անցնելու շնորհիվ Հաննիբալի ազդեցությունն է՛լ ավելի հաստատուն կդառնար։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը անմիջապես ի հայտ եկան մարտական գործողությունների ընթացքում։

Բավական էր միայն, որ հռոմեական հրամանատարությունը իր կայազորը Մետապոնտոսից տեղափոխեր Տարենթոն, որպեսզի Մետապոնտոսի քաղաքացիները անցնեին Հաննիբալի կողմը։ Նույն կերպ վարվեցին նաև Մեծ Հունաստանի մյուս քաղաքները, ի թիվս որոնց Լիվիոսը հիշատակում է Թուրիան։ Հռոմում մահապատժի ենթարկված Թուրիացի պատանդների ընկերներն ու ազգականները նամակներով դիմեցին կարթագենական զորապետներ Հաննոնին և Մագոնին, որոնք գլխավորում էին Բրուտիումում եղած պունիկյան զորքերը, առաջարկելով հանձնել քաղաքը, եթե միայն նրանք մոտենան նրա պարիսպներին։ Կարթագենցիները բաժանեցին իրենց բանակը. Հաննոնը հետևազորայինների մի ջոկատով դիմեց քաղաքի վրա, իսկ Մագոնը հեծելազորով թաքնվեց բլուրների մեջ։ Այնուհետև, մարտի ժամանակ դարանից նա հարձակվեց հռոմեական կայազորի զինվորների վրա, որոնց պունիկյան հետևազորայինները հաջողությամբ հրապուրում էին բլուրների կողմը։ Ընդհարման ժամանակ հռոմայեցիներին ուղեկցող Թուրիացիները փախուստի դիմեցին. շուտով նրանց հետևեցին նաև հռոմեական զինվորները, սակայն դավադիրները քաղաք թողեցին միայն իրենց համաքաղաքացիներին և մի քանի հռոմայեցիների՝ կայազորի հրամանատար Մարկոս Ատինիոսի հետ։ Կատաղի վեճերից հետո նրանք Ատինիոսին թույլ տվեցին հեռանալ Թուրիայից և վերջապես կարթագենցիների առջև բաց արեցին դարպասները (Լիվիոս, 25, 15)։

Համաձայն Ապպիանոսի վկայության (Հաննիբ., 34), իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ են ծավալվել. տարենթոնցիները խլել են ակրոպոլիսում թաքնված կայազորին Թուրիայի ուղարկած պարենամթերքը. Հաննիբալն ազատել է Թուրիացի գերիներին, և նրանք համոզել են իրենց համաքաղաքացիներին՝ հանձնվելու կարթագենցիներին. հռոմեական կայազորը նավերով գաղտնի հեռացել է Բրունդիսիում։ Ապպիանոսի ասելով (Հաննիբ., 35) Մետապոնտոսից Տարենթոն է տարվել կայազորի միայն կեսը, իսկ հռոմեական մնացած զինվորներին քաղաքացիները կոտորել են։ Թուրիայի և Մետապոնտոսի հետ միասին կարթագենցիների կողմն անցավ նաև Հերակլեան։

Սակայն կարթագենցիների այս հաջողության թողած տպավորությունը զգալի չափով թուլացավ մեկ այլ հանգամանքի պատճառով, որն առաջին հայացքից անհամեմատ ավելի պակաս էական էր, քան Հաննիբալի կողմն այնպիսի քաղաքների անցումը, ինչպիսիք էին Մետապոնտոսը, Թուրիան և Հերակլեան։ Լեգատ Գայոս Սերվիլիոսը, որն ուղարկվել էր Էտրուրիա՝ սննդամթերք հայթայթելու, կարողացավ մի քանի նավերով ռազմական փակոցների միջով ճեղքել դուրս գալ Տարենթոն և այդ պարենամթերքը հասցնել հռոմայեցիներին, որոնք, ինչպես ասվել է, ամրացել էին այնտեղի ակրոպոլիսում։ Սերվիլիոսի այս գործողությունները հռոմեական կայազորին միացած տարենթոնցիներին դրդեցին ժողովրդի մեջ ուժեղացնել իրենց պրոպագանդան, իրենց համաքաղաքացիներին համոզելով անցնելու հռոմայեցիների և նրանց արբանյակների կողմը (Լիվիոս, 25, 15)։ Ըստ երևույթին նրանց ճառերին անսացին։ Համենայն դեպս Լիվիոսի հակիրճ դիտողությունից կարելի է հետևեցնել, որ հակադիր ագիտացիան դադարել էր։ Եվ իրոք, Գայոս Սերվիլիոսը ցույց տվեց, որ տարենթոնցիների կողմից նավահանգստի մուտքի մոտ կարգված պահակազորը չի կարող գործուն կերպով խոչընդոտել ակրոպոլիսում պաշարվածների և հռոմեական բանակի հիմնական ուժերի միջև կապերի հաստատմանը։ Եվ Հաննիբալի ու Տարենթոնի համար դա ահեղ հայտանիշ էր։

Մինչդեռ դնալով ավելի ու ավելի խիտ ամպեր էին կուտակվում Կապուայի՝ Հարավային Իտալիայում կարթագենական տիրապետության այդ կարևորագույն հենակետի վրա։ Հաննիբալն զբաղված էր Տարենթոնի ճակատագրով, Կապուան թողնելով փաստորեն առանց որևէ պաշտպանության։ Այդ պատճառով թեև երկու կոնսուլները՝ Քվինտոս Ֆուլվիոս Ֆլակոսը և Ապպիոս Կլավդիոս Պուլքերը գտնվում էին Սամնիումում, հռոմեական զորքերն սկսեցին հետզհետե ուժեղացնել իրենց ճնշումը Կապուայի վրա, այն շրջափակման ենթարկելու մտադրությամբ։ Կապուացիներն արդեն սկսել էին ենթարկվել սովի և դիմեցին Հաննիբալին, խնդրելով կարգադրել շրջակայքից հաց բերելու Կապուա, քանի դեռ կոնսուլները չէին թափանցել նրա տարածքը և չէին կտրել ճանապարհը։ Հաննիբալը գրեթե անտես արեց Կապուացիների ելույթներում պարունակվող անարկմիտ նախազգուշացումը. համենայն դեպս նա ոչինչ չարեց պաշարումը կանխելու համար և միայն հրամայեց Հաննոնին Բրուտիումից անցնել Կամպանիա, որպեսզի Կապուան ապահովի սննդա-

մթերքով։ Խուսափելով հակառակորդի հետ հանդիպումից, Հաննոնը մոտեցավ Բենևենտումին և իր ճամբարը դրեց քաղաքից 3 մղոն հեռավորության վրա։ Նա հրամայեց հաց ուղարկել այդ ճամբարը և Կապուան հաղորդեց, թե իբր կարելի է գալ այդ հացի համար։ Սակայն նշված կապուացիները (իրենց թեթևամիտ անհոգության պատճառով, նկատում է Լիվիոսը) ուղարկեցին ընդամենը 400-ից փոքր-ինչ ավելի սայլեր և մի քանի բեռնատար կենդանիներ։ Դա բացարձակապես չբավականացրեց, և զայրացած Հաննոնը կապուացիներին հրամայեց վերստին ներկայանալ և այս անգամ բավարար քանակությամբ սայլերով (Լիվիոս, 25, 13)։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման գործողությունները հնարավոր չէր գաղտնի պահել. շատ շուտով Բենևենտումի քաղաքացիները իրազեկ դարձան այն ամենին, ինչ տեղի էր ունենում կարթագենական ճամբարում և ամեն ինչի մասին հայտնեցին Բովիանում՝ հռոմեական կոնսուլներին։ Վերջիններս որոշեցին, որ Հաննոնին պետք է խանգարի Քվինտոս Փուլվիոս Փլակոսը, մանավանդ, որ նրան հատկապես հանձնարարվել էր պատերազմել Կամպանիայում։ Ներխուժելով այնտեղ, Փուլվիոսը գիշերը մտավ Բենևենտում։ Հաննոնն այդ օրերին նույնպես խիստ զբաղված էր հաց բաշխելով։ Նրա ճամբարում կային բազմաթիվ անզեն կապուացիներ՝ 2000 սայլերով. թվում էր, թե այնտեղ արդեն զինվորական կարգ գոյություն չուներ։ Օգուտ քաղելով այդքան բարենպաստ հանգամանքներից, Փուլվիոսը գրոհեց պունիկացիների վրա. մեծ կորուստները նրան հարկադրեցին նահանջի ազդանշան տալ, սակայն հռոմեական զորայինները և նրանց դաշնակից պելիգնիները, ուշադրություն չդարձնելով նույնիսկ կոնսուլի հրամանին (հռոմեական բանակում չլսված դեպք), ներխուժեցին կարթագենցիների ճամբար և այնտեղ սարսափելի սպանդ սարքեցին։ Նրանք սպանեցին ավելի քան 6000 պունիկյան զորայինների և ավելի քան 7000-ին էլ գերի վերցրեցին. դրանց մեջ էին նաև հացի համար Հաննոնի մոտ եկած կապուացիները։ Ինքը՝ Հաննոնը, մարտի պահին գտնվելով չգիտես ինչու Կոմինիա Կերիտնում (Լիվիոսը (25, 13—14) չի հայտնում պատճառները) և տեղեկանալով իր ճամբարի ավերման մասին, մի քանի անասնակեր հայթայթողների հետ, որոնք պատահականորեն հայտնվել էին նրա մոտ, փութապես հեռացավ Բրուտիում (նույն տեղը)։

Կապուացիները Հաննիբալի մոտ ուղարկեցին նոր պատվիրակություն։ Նրանք իրենց հեռավոր դաշնակցին հաղորդեցին, որ երկու կոնսուլները գտնվում են Բենևենտումում (քանի դեռ Փուլվիոսը պատերազմում էր կարթագենցիների դեմ, Բենևենտում ժամանեց նաև Ապ-

պիոս Կլավդիոս Պուլքերը), Կապուայից ընդամենը մեկօրյա ճանապարհի վրա հեռավորության վրա։ Պատերազմը գրեթե նրանց քաղաքի դարպասների ու պարիսպների մատույցներում է։ Եթե Հաննիբալն օգնության չհասնի, Կապուան թշնամիների ձեռքը կընկնի ավելի արագ, քան Տարենտոնը։ Տարենտոնի և մանավանդ նրա ակրոպոլիսի պատճառով չպետք է զբաղված ու անպաշտպան Կապուան, որը նա միշտ միևնույն մակարդակի վրա է դրել Կարթագենի հետ, հանձնի հռոմեական ժողովրդին։ Հաննիբալը լավ էր հասկանում կապուացի պատվիրակների ելույթներում պարունակվող սպառնալիքը. նրան հիշեցրին բոլորովին վերջերս հռոմայեցիների կողմն անցած Արպիքի և կարթագենցիների այնպիսի, թվում էր թե, հավատարիմ բարեկամի՝ Դասիոս Ալտինիոսի մասին, որն այնուամենայնիվ ծառայական էր գտնվել հռոմայեցիների հանդեպ։ Վանդը և Կապուան կորցնելու երկյուղը ներգործեցին Հաննիբալի վրա. նա խոստացավ զբաղվել կապուական գործերով, իսկ առայժմ ավերածությունից քաղաքը պաշտպանելու համար ուղարկեց 2000 հեծյալ (Լիվիոս, 25, 15)։

Ապպիանոսը (Հաննիբ., 36—37) փոքր-ինչ այլ կերպ է շարադրում այս իրադարձությունները։ Համաձայն նրա մեկնաբանության, Հաննիբալը Հաննոնին 1000 հետևազորայիններով և նույնքան հեծյալներով ուղարկել է Կապուա, նրա անվտանգությունը ապահովելու համար։ Երբ հռոմայեցիները մտան Կամպանիա և այնտեղ կողոպտեցին Կապուայի և այլ քաղաքների դաշտերը, կապուացիները օգնության համար դիմեցին Հաննիբալին։ Վերջինս հայտարարեց, որ ինքը Ցապիգիայում բավականաչափ մթերապաշար ունի և կապուացիներին առաջարկեց որքան կամենան վերցնեն։ Ինքը՝ Հաննիբալը Ցապիգիայից ընդառաջ գնաց կապուացիներին և բանակեց Բենևենտումի մերձակայքում, Կալոր գետի ափին։ Սակայն անսպասելիորեն Հաննիբալը, իր ճամբարում թողնելով ոչ մեծ կայազոր, հեռացավ Լուկանիա, ուր նրան կանչել էր Հաննոնը։ Նրա բացակայության ժամանակ հռոմայեցիները գրավեցին և ավարի մատնեցին ճամբարը։ Թվում է այնուամենայնիվ, որ Հաննիբալի գործողությունները Լիվիոսն ավելի տրամաբանորեն և ավելի հետևողականորեն է շարադրում, քան Ապպիանոսը։

Կապուական կառավարության ենթադրությունները լիովին հաստատվեցին։ Ձուր տեղը ժամանակ չկորցնելով, կոնսուլները իրենց լեգեոնները Բենևենտումից տարան դեպի Կապուայի պարիսպները։ Նրանք հույս ունեին, որ մինչև իրենց կոնսուլության վերջը կգրավեն և կավերեն այն։ Բենևենտումի պաշտպանության համար նրանք Լուկանիայից կանչեցին Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսին՝ հեծյալների ու թեթևազեն հետևա-

զորայինների ջոկատով (Լիվիոս, 25, 15)։ Լուկանիայում այդ պահին տեղի ունեցան, ինչպես երևում է, ոչ առանց Մեծ Հունաստանում Հաննիբալի ունեցած հաջողությունների ազդեցության, կարևոր իրադարձություններ. հռոմեամետ «կուսակցության» ղեկավար Փլավոսը (ըստ Ապպիանոսի՝ Փլավիոսը) հռոմայեցիների համար անսպասելիորեն փոխեց իր կողմնորոշումը և սկսեց այժմ կապեր որոնել կարթագենցիների հետ։ Նրանց հետ իր բարեկամական հարաբերությունները նա որոշեց ամրապնդել հռոմեական զորապետի գլխի գնով. վերջինիս հետ նրան կապում էր փոխադարձ հյուրընկալության վերաբերյալ պայմանագիրը։ Եվ այդ հանգամանքն, իհարկե, հռոմայեցիների աչքին ավելի մեծացրեց Փլավոսի ուխտադրժությունն ու հանցապարտությունը։ Պայմանավորվելով Բրուտիումում կարթագենական զորքերի հրամանատար Մագոնի հետ, Փլավոսը առանց դժվարության, խաբեությամբ որոգայթի մեջ ձգեց Գրակքոսին։ Այնտեղ թե՛ ինքը Գրակքոսը, թե՛ նրան ուղեկցող զինվորներն առանց դժվարության ոչնչացվեցին (Լիվիոս, 25, 16, Ապպ., Հաննիբ., 35)[127]։ Պատմում էին, որ Հաննիբալը Գրակքոսի համար արժանավայել թաղում է կազմակերպել. մեկ այլ պատումի համաձայն, Հաննիբալը հրամայեց Գրակքոսի գլուխը տանել հռոմեական զորաճամբար՝ քվեստոր Գնեոս Կորնելիոսին, և վերջինս Գրակքոսի դին հանդիսավորապես հողին հանձնեց Բենևենտումում (Լիվիոս, 25, 17)։

Համենայն դեպս Գրակքոսի կործանումը ոչ մի փոփոխություն չմտցրեց ո՛չ գործերի ընթացքի և ո՛չ էլ հռոմեական հրամանատարության դիտավորությունների մեջ. վերջինս պարզապես ուշադրություն չէր դարձնում Լուկանիայի իրադարձություններին։ Տարենթոնի, Մետապոնտոսի և Թուրիայի՝ կարթագենական ճամբար անցնելը չէր կարող չներգործել Լուկանիայի ավագանու տրամադրությունների վրա։ Կոնսուլները բացահայտորեն հույս ունեին, որ Բրունդիսիումում և Տարենթոնի ակրոպոլիսում պահպանելով իրենց դիրքերը, գրավելով Կապուան, իրենք կկարողանան առանց դժվարության Լուկանիայում վերականգնել հռոմեական տիրապետությունը։ Հռոմեական զորքերը մտան Կապուային պատկանող տարածքը։ Ճիշտ է, քաղաքացիների և Հաննիբալի ուղարկած կարթագենական հեծյալների առաջին հարձակումն ավարտվեց մեծ հաջողությամբ. հռոմայեցիները ջախջախվեցին և կորցրեցին մոտավորապես 1500 մարդ (Լիվիոս, 25, 18)։ Իր հերթին Հաննիբալը նույնպես իր զորքերը շարժեց Կապուայի կողմը (ուշացումով, եթե նկատի առնենք, որ հռոմայեցիներն արդեն մոտեցել էին քաղաքի պարիսպներին), և Կամպանիա ժամանելուց երեք օր հետո ճակատամարտեց հռոմայեցիների դեմ։

Նետերի ու տեգերի տարափի տակ, նեղվելով հեծելազորից, հռոմեական զինվորները կանգնած էին անբերբ, մինչև որ նրանց հրամանատարները հեծելազորային գրոհի ազդանշան տվեցին։ Այդ ժամանակ դուրս եկան Գրակքոսի զինվորները, որոնց այժմ գլխավորում էր Գնեոս Կորնելիոսը։ Թե՛ հռոմայեցիները և թե՛ կարթագենցիներն այն ընդունեցին որպես թշնամու կողմը դնացող օժանդակ զորամիավորում։ Երկու կողմից հետևեց նահանջի հրաման։ Կողմերից ոչ մեկն այդ մարտում չիրագործեց իր խնդիրը. Հաննիբալին չհաջողվեց վերացնել շրջափակման սպառնալիքը, իսկ կոնսուլներին՝ իրենց պաշարողական աշխատանքների նկատմամբ եղած սպառնալիքը։ Թվում էր, թե նոր ընդհարումից հնարավոր չէր խուսափել. անսպասելիորեն Հաննիբալն ստացավ ապշեցուցիչ հաղորդում։ Հռոմեական ճամբարը դատարկ է, Փուլվիոսը հեռացել է Կումե, իսկ Ապպիոս Կլավդիոսը՝ Լուկանիա։ Դժվար չէ պատկերացնել Հաննիբալի մտքերի ընթացքը. հռոմայեցիները վերջապես նորից են նահանջում, հռոմայեցիներն իրենց պարտված են ճանաչում... Կարճատև տատանումներից հետո Հաննիբալը նետվեց Ապպիոս Կլավդիոսի ետևից, անշուշտ հույս դնելով լուկանական իր դաշնակիցների պաշտպանության վրա, և ճանապարհին ոչնչացրեց ցենտուրիոն Մարկոս Կենտենիոս Պենուլոսի պարտիզանական ջոկատը (16 հազար զորականներ), որը ոչ վաղուց էր, ինչ գործում էր Լուկանիայում։ Ապպիոս Կլավդիոսը՝ իր ետևից տարբեր ուղղություններով ման ածելով Հաննիբալին և, ինչպես երևում է, կտրվելով նրանից (նրան մեծ ծառայություն մատուցեց Մ. Կենտենիոսը, որը Հաննիբալին շեղեց հետապնդումից), վերադարձավ Կապուայի կողմը։ Հռոմայեցիների ձեռնարկած խաբեական զորաբերթը փայլուն արդյունքներ տվեց (Լիվիոս, 25, 19)։

Կոնսուլները վերստին, և է՛լ ավելի մեծ եռանդով ու համառությամբ սկսեցին Կապուայի պաշարումը. նրանք կայազորներով ամրացրեցին Փուտեոլին և Կասիլինումը, Կասիլինումում ստեղծեցին պարենամթերքի մեծ պաշարներ (Լիվիոս, 25, 20)։ Հռոմայեցիների նախապատրաստությունները մեծ և արդարացված անհանգստություն էին ներշնչում Հաննիբալին, սակայն այս անգամ նա մեկնեց Ապուլիա, որտեղից անընդհատ նրան հաղորդում էին պրետոր Գնեոս Փուլվիոս Կենտիմալոսի հաջող գործողությունների մասին։ Կենտիմալոսն այդ պահին գտնվում էր Գերդոնիայի պարիսպների մոտ։ Հաննիբալը, քաջատեղյակ լինելով թշնամու տրամադրություններին (Կենտիմալոսի զինվորները տառացիորեն մարտ էին տենչում), վճռեց այդտեղ ճակատամարտ տալ։ Նա չէր կասկածում հաջողության վրա, տեսնելով, որ Կենտիմալոսը հազիվ է իշխանությունը պահպանում իր զինվորների վրա և, բացի այդ, հույժ

ոգևորված լինելով նախկին հաջողություններով, կորցրել է իրադրությունը ստույգորեն գնահատելու ընդունակությունը։ Ուշ գիշերին Հաննիբալը շրջակա ամառանոցներում, անտառներում և մացառուտներում տեղավորեց 3000 թեթևազեն հետևազորային։ Մագոնին նա հանձնեց գրեթե 2000 հեծյալ և կարգադրեց գրավել հնարավոր փախուստի ուղղությամբ ընկած բոլոր ճանապարհները։ Հաջորդ առավոտյան հռոմայեցիները դասավորվեցին, ձգվելով երկարությամբ և չունենալով բավարար խորություն, ինչպես գրում է Լիվիոսը, առանց որևէ կարգի։ Ցուրաքանչյուրը կանգնում էր այնտեղ, ուր կկամենար։ Կարթագենցիների առաջին բուռն գրոհն արդեն իսկ կոտրեց թշնամու դիմադրությունը. տեսնելով որ ամեն ինչ կորած է, Կենտիմալոսը 200 հեծյալների հետ շատ արագ հեռացավ։ 18 հազար հռոմեական զորականներից այդ մարտում փրկվեցին ընդամենը ոչ ավելի, քան 2000-ը (Լիվիոս, 25, 20—21)։

Հաննիբալի այս հաղթանակը թեպետև վախեցրեց հռոմեական կառավարությանը, սակայն անօգուտ դուրս եկավ։ Կոնսուլները և Սուհսուլայից նրանց միացած պրետոր Գայոս Կլավդիոս Ներոնը շարունակում էին երեք կողմերից պաշարողական աշխատանքներ տանել Կապուայի մատույցներում։ Նրանք նախապատրաստում էին պատնեշների կառուցումը, կանգնեցնում էին ամրություններ և այնպիսի հաջողությամբ էին ետ մղում կապուացիների հարձակումները, որ նրանց ի վերջո ստիպեցին հրաժարվել թշնամուն փոքր-իսկ լուրջ ընդդիմադրություն ցույց տալու փորձերից։ Կապուան վերստին օգնության խնդրանքով դիմեց Հաննիբալին, որը նույն այդ ժամանակ իր զինվորներին Գերդոնիայից տանում էր դեպի Տարենթոն, հուսալով, թե կգրավի Տարենթոնի ակրոպոլիսը, իսկ այնտեղից, առանց շոշափելի հաջողության, շարժվեց դեպի Բրունդիսիում, որտեղ հույս ուներ, թե կգտնի կողմնակիցներ և նրանց օգնությամբ կգրավի քաղաքը։ Հաննիբալը կապուացիներին ավեց մեծամիտ պատասխան. մեկ անգամ արդեն ինքը կոնսուլներին հարկադրել է վերացնել պաշարումը, և այժմ տեղի է ունենում նույնը։ Սակայն երբ կապուացի պատվիրակները վերադարձան, նրանց քաղաքն արդեն շրջապատված էր կրկնակի խրամատոսով և պատնեշով։ Մինչ կանոնավոր պաշարումն սկսելը, հռոմեական իշխանությունները հարկ համարեցին Կապուայի քաղաքացիներին առաջարկել, որպեսզի մինչև մայիսի կեսերը հեռանան քաղաքից, հետևերը տանելով իրենց ունեցվածքը։ Նրանց խոստացան ազատություն և ինչքի ապահովություն։ Կապուան կտրականորեն մերժեց, իսկ մերժումն արտահայտվեց վրդովեցուցիչ ամբարտավանությամբ և կոպիտ ձևով։ Սկսվեց Կապուայի պաշարումը, իսկ դրա

հետ միասին նաև Իտալիայում մղվող պատերազմի նոր փուլը (Լիվիոս, 25, 22)։

Պետք է ասել, որ Կապուայի պաշարումն, անկասկած, հռոմայեցիներին ավելի քան փոխհատուցեց Հարավային Իտալիայում և Մեծ Հունաստանում նրանց կրած բոլոր անհաջողությունների դիմաց։ Հռոմեական հրամանատարությունը դուր չէր հատկապես այդ կետում կենտրոնացրել բոլոր իր գլխավոր ջանքերը։ Կապուայից օգնություն ստանալու փոխարեն, Հաննիբալը ինքը պետք է նրան օգնություն ցույց տար։ Իսկ չէ՞ որ թե՛ Հաննիբալը, թե՛ հռոմայեցիները շատ լավ գիտեին, որ Փուլվիոսի և Ապպիոս Կլավդիոսի առաջին փորձի ժամանակ նույնպես նրան ոչ միայն չէր հաջողվել վերացնել պաշարումը, այլև նա նույնիսկ տեղի էր տվել հաջողակ այն զորաշարժի առջև, որը քաղաքից հեռացրել էր նրան։ Այժմ Հաննիբալը կաշկանդված էր թե՛ Կապուայի պաշարմամբ, թե՛ Տարենթոնի ակրոպոլիսում եղած հռոմեական կայազորով։ Կապուայի անկումն, անշուշտ, կհանգեցներ Հաննիբալի բոլոր կամ գրեթե բոլոր դաշնակիցների՝ Հռոմի կողմն անցնելուն։ Զբաղված լինելով Տարենթոնով, Հաննիբալը պատշաճ ուշադրություն չդարձրեց մահացու այդ վտանգին և նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր պաշարումը, փաստորեն արհամարհեց այն։

Ռազմական գործողությունների մյուս թատերաբեմում՝ Սիցիլիայում, 212 թ. իրադրությունը Կարթագենի համար դատավորվեց ծայրահեղորեն անբարենպաստ։ Այստեղ կարևորագույն իրադարձություն էր Սիրակուզայի անկումը, որը տրամաբանորեն հանգեցրեց Սիցիլիայից պունիկացիների վերջնական վտարմանը։

Ընդհանուր առմամբ Սիրակուզայի պաշարումը, թեև 214 թ. անմոռանալի անհաջող գրոհից հետո տարվում էր ամենայն խնամքով, որին ընդունակ էին հռոմայեցիները, Մարկելոսին, որը նախկինի պես գլխավորում էր հռոմեական զորքերը Սիցիլիայում և անմիջականորեն ղեկավարում Սիրակուզայի շրջանում ընթացող գործողությունները, չափազանց անհեռանկար գործ էր թվում։ Քաղաքն ուժի միջոցով գրավելու մասին մտածելու անգամ հարկ չկար։ Արքիմեդի պաշտպանական սարքերը մահացու սպառնալիք էին յուրաքանչյուրի համար, ով կհամարձակվեր մոտենալ Սիրակուզայի պարիսպներին։ Քաղաքի շրջափակումը պակաս արդյունավետ դուրս եկավ, այնպես որ Կարթագենից կանոնավոր կերպով պարենամթերք էր բերվում Սիրակուզա (Լիվիոս, 25, 23)։ Մարկելոսը թե՛ իր ճամբարում և թե՛ պաշարված քաղաքում իր հույսը դրել էր սոսկ փախստականների, այն էլ Հռոմի կողմը հակված սիրակուզացիների վրա (ինչպես ասում է Լիվիոսը, հռոմեական բանակում կա-

յին մի քանի շատ նշանավոր սիրակուզացիներ, որոնք արտաքսվել էին հակահռոմեական քաղաքականության հետ իրենց լիակատար անհամաձայնության պատճառով)։

Հույժ երկար ժամանակ սիրակուզացի տարագրյալներին չէր հաջողվում կապեր հաստատել քաղաքի պարիսպներից դուրս գտնվող իրենց ընկերների հետ։ Սիրակուզական իշխանությունները հատկապես աչալրջորեն հետևում էին այն բանին, որ թույլ չտան որևէ հանդիպում կամ բանակցություններ։ Վերջապես առիթը գտնվեց. մի վտարանդու ստրուկը փախստականի անվան տակ հնարավորություն ստացավ քաղաք ներթափանցելու և այնտեղ խոսելու սակավաթիվ այն անձանց հետ, որոնց սիրակուզացիները՝ Մարկելոսի մերձավորները, համարում էին էպիկիդեսի և նրա կառավարության առավել հուսալի թշնամիները։ Այդ ստրուկը իր զրուցակիցներին կարող էր հաղորդել հույժ մխիթարական նորություններ. Մարկելոսը, որը հայտնի էր, ինչպես արդեն ասվեց, այն հաշվեհարդարի մասին եղած լուրերից, որը նա կատարել էր կամ իբրև թե կատարել էր Լեոնտինեում, առաջարկում է Սիրակուզայի անձնատուր լինելու դեպքում պահպանել նրա քաղաքացիների ազատությունը և սեփական օրենքներն ունենալու իրավունք,այլ կերպ ասած, խոստանում է հռոմայեցիների հետ «դաշինքի» շրջանակներում, այսինքն՝ Հռոմի գերակայության պայմաններում, պահպանել պոլիսային ինքնավարությունն ու ներքին անկախությունը։ Ինքնրստինքյան պարզ էր, և, իհարկե, լրացուցիչ պարզաբանումներ չէր պահանջվում, որ Սիրակուզայում իշխանության գլուխ էր անցնելու նոր կառավարություն, նրանք, ովքեր կտապալեին էպիկիդեսին և քաղաքը կհանձնեին հռոմեական զինվորների ձեռքը։ Բանակցություններն սկսվեցին։

Զկնորսական նավակներում ցանցերով քողարկված մի քանի սիրակուզացիներ ծովային ճանապարհով քաղաքից անցան հռոմեական ճամբար և այնտեղ կապ հաստատեցին վտարանդիների հետ. հետզհետե այդ ուղևորությունները դարձան ավելի հաճախակի։ Շրջափակված Սիրակուզայում դավադրությանը հաղորդակից անձանց թիվն աճեց և արդեն հասավ 80 հոգու... Հանկարծակի ամեն ինչ փուլ եկավ։ Ատտալոսը, մի մարդ, որ մոտիկ էր դավադիրներին, բայց, ըստ երևույթին, լիովին նվիրված չէր նրանց մտահղացումներին (Լիվիոսը (25, 23) ասում է, որ նրան վիրավորել էր իր հանդեպ ցուցաբերված անվստահությունը), իր իմացածի մասին հաղորդեց էպիկիդեսին։ Դավադիրները բռնվեցին և խոշտանգումներից հետո մահապատժի ենթարկվեցին (նույն տեղը)։ Սակայն շատ չանցած, Մարկելոսին այլ առիթ ներկայացավ։

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Սիրակուզան գրեթե փորձեց անմիջական համագործակցություն սկսել մակեդոնական թագավոր Փիլիպոս V-ի հետ։ Նրանց այդ փորձերն ըստ էության շարունակում էին Հաննիբալի համաբնույթ քաղաքականությունը և վերջիվերջո պետք է ամրապնդեին վերջինիս ստեղծած հակահռոմեական դաշինքների համակարգը։ Բանակցությունները վարելու համար Սիրակուզայից Մակեդոնիա ուղարկվեց սպարտացի Դամիպոսը, սակայն նրան վիճակվեց Հաննիբալի մոտ Փիլիպոս V-ի ուղարկած առաջին դեսպանության ճակատագիրը. Դամիպոսը գերի ընկավ հռոմայեցիներին։ Էպիկիդեսն սկզբից եռանդուն կերպով հոգ տանել նրա փրկագնման մասին, և Մարկելոսը հաճույքով ընդառաջ գնաց սիրակուզական կառավարությանը. Փիլիպոս V-ի դեմ մղվող պատերազմով զբաղված հռոմայեցիներին նպատակահարմար էր թվում նախապես ձեռք բերել էտոլիական միության աջակցությունը. վերջինիս հետ բարեկամական կապերի մեջ էր Սպարտան։ Բանակցությունները վարվում էին այսպես կոչված Տրոգիլյան նավահանգստին հարող վայրում (թերակղզու հյուսիսային ափը, որտեղ գտնվում է Սիրակուզան), Գալեագրա աշտարակից ոչ հեռու։ Սիրակուզական ներկայացուցիչների հետ հանդիպման համար բավականին հաճախակի կատարած ուղևորությունների ժամանակ հռոմայեցիներից մեկը նկատեց, որ այդ վայրում պարսպապատը համեմատաբար նեղ է, և որ նրա վրա կարելի է նույնիսկ բարձրանալ ոչ բարձր աստիճաններով (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 8, 37, 1)։ Իր դիտումների մասին նա հաղորդեց Մարկելոսին. հռոմեական հրամանատարը տեսավ, իհարկե, որ հենց այդտեղ սիրակուզացիները քաղաքը պաշտպանում են հատկապես աչալրջորեն։ Պարսպապատին մերձենալու ամենափոքր իսկ հնարավորություն չկար (Լիվիոս, 25, 23)։

Վերջապես հռոմեական ճամբար եկավ մի փախստական (Սոսիստրատես. տե՛ս Փրոնտինոսի մոտ [3, 3, 2]) և պատմեց, որ պաշարված քաղաքում Արտեմիս աստվածուհու պատվին տեղի է ունենում երեքօրյա սովորական տոնակատարություն. կերուխումներում ուտելիքը չի բավականացնում, բայց դրա փոխարեն առատորեն խմում են գինի, որը էպիկիդեսը լիուլի բաժանում է ժողովրդին։ Տեղեկանալով այդ մասին, Մարկելոսը վճռեց օգտվել հարմարադեպ պահից՝ քաղաք ներխուժելու համար։

Ուշ գիշերին, երբ Սիրակուզայի հարբած պահակները քնած էին մեռյալի պես կամ, ոչ մի քանի ուշադրություն չդարձնելով, շարունակում էին գինարբուքը, 1000 զորականներից բաղկացած հռոմայեցիների ջոկատը, պահպանելով լիակատար լռություն, թափանցեց քաղաք և մո-

տեցավ Հեկսապիլեին։ Այնտեղ հռոմայեցիները կոտրեցին ոչ մեծ մի գունակ, որը գտնվում էր գլխավոր դարպասների մոտակայքում։ Նույն այդ ժամանակ հռոմեական այլ զորականներ, փողերի հնչյունների տակ, աղմուկ-աղաղակով սկսեցին գրավել պարիսպները։ Հագիվ արթնանալով և սթափվելով, պահակները, կարծելով, թե ամեն ինչ կորած է, փախան, ուր աչքները կտրում էր. ցած էին թռչում պարիսպներից, ավելացնելով միայն խուճապն ու անկարգությունը։ Ուրիշները շարունակում էին քնել։ Լուսաբացից առաջ Հեկսապիլեի դարպասները կոտրվեցին, և Մարկելոսը մնացած ամբողջ զորքով մտավ քաղաք (Տիբայի և Էպիպոլեի շրջանները)։ Օրտիգիա կղզուց անցնելով, Էպիկիդեսը այն է կամենում էր ներխուժել Էպիպոլե և այնտեղից դուրս վանել թշնամուն, սակայն նրա ուժերը բացարձակապես անբավարար էին։ Եվ նա ուղղությունը փոխեց դեպի ետ (Պոլիբիոս, 8, 37, 2—11, Լիվիոս, 25, 23—24, Պլուտ., Մարկ., 18)։ Հնարավոր է, որ Տիտոս Լիվիոսը ճիշտ է, երբ գրում է (25, 24), որ Էպիկիդեսը երկյուղ էր կրում Հռոմին բարեկամ տարրերի ապստամբությունից. վերջիններս կարող էին գրավել քաղաքի մնացած շրջանները և նրա առջև փակել Աքրադինայի դարպասները։

Համենայն դեպս Էպիկիդեսի ձեռքում տակավին մնում էին Աքրադինան և Օրտիգիա կղզին, երբ Մարկելոսն առաջարկեց սկսել քաղաքը հանձնելու վերաբերյալ բանակցությունները (նույն տեղը)։ Սակայն Աքրադինայի դարպասները և նրա պարիսպները գրավեցին փախստականները, որոնք մի ժամանակ դեն էին նետել հռոմեական կամ հռոմայեցիների դաշնակիցների գրոշները և այժմ մատնում էին սիրակուզական զորքի կողմում։ Հասկանալով, որ բոլոր դեպքերում իրենց անխուսափելի կործանում է սպասում, նրանք ոչ ոքի թույլ չէին տալիս նույնիսկ մոտենալու պարիսպներին։ Մարկելոսի դրությունն Էպիպոլեում նկատելիորեն բարդացավ։ Չհաջողվեց առանց կանգ առնելու գրավել Աքրադինան և մանավանդ Օրտիգիան. հաշտության բանակցությունները անհնարին դուրս եկան. և բացի այդ, Թիկունքում, Սիրակուզայի ծայր արևմտյան սահմանում Էվրիալոս բլրի վրայի փորը բերդը նախկինի պես զրաղեցնում էր սիրակուզական կայազորը՝ Էպիկիդեսի նշանակած արգոսցի Փիլոդեմոսի հրամանատարությամբ (Լիվիոս, 25, 25)։

Էվրիալոս բլուրը ռազմավարական տեսակետից հույժ կարևոր էր. այն իշխում էր կղզու խորքը տանող ճանապարհի վրա, այնպես որ այնտեղ ամրացած սիրակուզացիները կարող էին լրջորեն դժվարացնել հռոմայեցիներին պարենամթերքի մատակարարումը. և բացի այդ, Էվրիալոսին կարող էին մոտենալ Հիմիլկոնի կարթագենական զորքերը ու Հիպոկրատեսի ջոկատները, որպեսզի այնուհետև Էպիպոլեի փոքր

[illegible] կոտորեին հռոմայեցիներին։ Մարկելոսը հրամայեց ետ քաշվել դեպի Էվրիալոս և փորձեց բանակցություններ սկսել Փիլոդեմոսի հետ, նրա մոտ ուղարկելով Հիերոնիմի սպանողներից մեկին՝ Սոսիդեսին։ Փիլոդեմոսը մտածում էր, տատանվում և բացահայտորեն ձգձգում բանակցությունները. երևում էր, որ նա չէր սպասում Հիմիլկոնին ու Հիպոկրատեսին։ Առայժմ հնարավորություն չունենալով գրավել Էվրիալոսը, Մարկելոսը վերստին իր զորքերը տարավ քաղաքի խորքը և տեղավորեց Տիբայի ու սիրակուզական Նեապոլիսի միջև։ Նա երկյուղ էր կրում, որ եթե մանի առավել բնակեցված թաղամասերը, իր զորքը կենտրոնի բնակչությանը կողոպտելու, և այն ժամանակ, վտանգի դեպքում, ինքը չի կարողանա դիմադրություն կազմակերպել (Լիվիոս, 25, 25)։ Այնուամենայնիվ խոսք չէր կարող լինել ավարառության, բռնաբարությունների դեմ փոքր-իսկ արդյունավետ պայքարի մասին։ Դրանք, միևնույն է, սկսվեցին։ Գրեթե Մարկելոսի ճամբար եկան Տիբայի և Նեապոլիսի բնակչության պատվիրակները, խնդրելով կասեցնել հրդեհները ու սպանությունները։ Մարկելոսին գործն այնքան լուրջ ու դժվարին էր թվում, որ դրա լուծման համար նա հրավիրեց ռազմական խորհրդի հատուկ նիստ և միայն ընդհանուր համաձայնություն ստանալուց հետո հրամայեց ոտնձգություններ չկատարել ազատ մարդկանց նկատմամբ։ Մնացած ամեն ինչ Մարկելոսը մատնեց իր զորքի բացարձակ կողոպուտին (հմմտ. Պլուտ. մոտ, Մարկ., 19, Դիոդորոս, 26, 20, 1)։ Հանկարծադեպ հարձակումը կանխելու համար ամրացնելով ճամբարը, Մարկելոսը տվեց երկար սպասված ազդանշանը։ Անհամբերությունից կոտրելով սեփական ճամբարի դարպասները, հռոմայեցիները ցրվեցին փողոցներում և հրապարակներում։ Աղմուկի ու իրարանցման մեջ քաղաքացիներից ոչ ոք չսպանվեց, քանի որ հռոմեական զինվորները խստորեն պահպանեցին իրենց հրամանատարի կարգադրությունը։ Բայց և այնպես, ավարառությունը դադարեց միայն այն ժամանակ, երբ հափշտակեցին այն ամենը, ինչ կարող էին տանել (Լիվիոս, 25, 25)։

Մինչդեռ Հիմիլկոնն ու Հիպոկրատեսը բացահայտորեն ուշանում էին, Փիլոդեմոսի համար ավելի ու ավելի դժվար էր դառնում Էվրիալոսում մնալը, և վերջիվերջո նա վճռեց հանձնել ամրությունը, իր և իր ջոկատի համար ձեռք բերելով Աքրադինա՝ Էպիկիդեսի մոտ հեռանալու իրավունք։ Մարկելոսը հաճությամբ համաձայնվեց այդ պայմանին. Էվրիալոսի հանձնումը նրան հնարավորություն էր ընձեռում խուսափելու Թիկունքից սպասվող հարձակումից և բոլոր ուժերը կենտրոնացնելու Աքրադինայի պաշարման վրա (նույն տեղը)։ Բացի այդ, Էպիկիդեսի մոտ Փիլոդեմոսի անցնելը, ոչ մի փոփոխություն չմտցնելով

ուժերի հարաբերակցության մեջ, Էպիկիդեսի մոտ ավելացրեց կերակրվողների թիվը և համապատասխանաբար մեծացրեց նրա պարենային ծանր կացությունը։

Սիրակուզայում հռոմեական զորքի հաջողությունները խոր տագնապ առաջացրին Սիցիլիայում։ Սիցիլիական քաղաքները բացահայտորեն աջակցում էին Հիպոկրատեսին, նրան ուղարկում էին պարենամթերք և զորք, որի թիվը հասավ մինչև 20 հազար հետևակորայինի և 5000 հեծյալի (Ապպ., Սից., 4)։ Նրանք հասկանում էին, որ Սիրակուզայի անկումը վերջիվերջո հանգեցնելու էր ամբողջ կղզում հռոմեական գերիշխանության հաստատմանը։

Մինչ Սիրակուզայում տեղի էին ունենում այս իրադարձությունները, կարթագենական կառավարությունը և Սիցիլիայում պունիկյան զորքերի հրամանատարությունը միջոցառումներ ձեռնարկեցին դիմադրություն կազմակերպելու համար։ Հարմարադեպ պահի սպասելով, կարթագենական նավատորմի հրամանատար Բոմիլկարը, Էպիկիդեսին թողնելով 55 նավ, 35 նավից բաղկացած նավախմբով փութապես մեկնեց Կարթագեն։ Այնտեղ նա զեկուցեց այն կացության մասին, որի մեջ ընկել էր Սիրակուզան, և մի քանի օր հետո վերադարձավ, բերելով 100 նավ (Լիվիոս, 25, 25)։ Ցամաքում վերջապես Սիրակուզային մոտեցան Հիմիլկոնն ու Հիպոկրատեսը։ Հիպոկրատեսը, կանխորեն Աքրադինա հաղորդելով իր դիտավորությունների մասին, հարձակվեց հռոմեական նախկին ճամբարի վրա, որին գլխավորում էր Կրիսպինոսը։ Միաժամանակ Էպիկիդեսը գրոհի դիմեց Մարկելոսի դեմ, իսկ կարթագենցիները դեսանտ հանեցին, որպեսզի Մարկելոսին թույլ չտան Կրիսպինոսին օգնելու։ Այս բոլոր գործողությունները ցանկալի արդյունքներ չտվեցին։ Հիպոկրատեսին Կրիսպինոսը փախուստի մատնեց, իսկ Էպիկիդեսին Մարկելոսը հարկադրեց վերադառնալ Աքրադինա (Լիվիոս, 25, 26)։

Կողմերը վճռել էին սպասողական դիրք գրավել նոր ընդհարումների համար, սակայն այդ պահին (աշուն էր) թե՛ պունիկա-սիրակուզական, թե՛ հռոմեական ճամբարներում սկսվեց համաճարակ, որն առաջացել էր չափից դուրս շոգի և ճահճային թունավոր գոլորշիացումների պատճառով։ Երկու բանակներում մահը հնձում էր զինվորներին, բայց հռոմայեցիները, գտնվելով քաղաքում և հնարավորություն ունենալով լավ ծածկվել տներում, ավելի քիչ տուժեցին, քան կարթագենցիները։ Հիմիլկոնի և Հիպոկրատեսի մոտ ծառայող սիցիլիացիները ցրվեցին իրենց քաղաքները. կարթագենական զորքը ոչնչացավ Սիրակուզայի պարիսպների տակ (Լիվիոս, 25, 26)։

Որքանով կարելի էր դատել այդ մասին, ծանր ձախորդությունը, բացի սկզբնական շրջանում, չթուլացրեց կարթագենցիների և հենց սիցիլիացիների՝ Սիցիլիայից հռոմայեցիների վտարմանը հասնելու վճռականությունը։ Այն սիրակուզացիները, ինչպես նաև մյուս սիցիլիացիները, որոնք բոլորովին վերջերս կազմում էին Հիպոկրատեսի ջոկատը, գրավեցին երկու ոչ մեծ քաղաք, որոնցից մեկը Սիրակուզայից՝ 3, մյուսը 15 մղոն հեռավորության վրա էր, և արդեն այնտեղից սկսեցին նոր զորքեր կանչել Մարկելոսի դեմ պատերազմելու համար։

Բոմիլկարը, որ այժմ կղզում պունիկյան գլխավոր հրամանատարության միակ ներկայացուցիչն էր, վերստին մեկնեց Կարթագեն՝ օգնական ուժեր բերելու համար։ Այնտեղ նա խորհրդին համոզեց Սիրակուզայում նստած հռոմայեցիներին գերի վերցնելու իրական հնարավորության մեջ և 130 մարտական ու 700 բեռնատար նավերից բաղկացած հակայական նավատորմով վերադարձավ Սիցիլիա։ Քամիները, որ Բոմիլկարին օգնեցին բարեհաջող Սիցիլիա հասնելու, այժմ, երբ նա նավարկում էր կղզու հարավային ափերի երկայնքով, խանգարեցին նրան շրջանցելու Պաքինոս հրվանդանը։ Իր հերթին Էպիկիդեսը Աքրադինայի պաշտպանությունը հանձնելով վարձու զորամասերի հրամանատարներին, ծովով ուղևորվեց Բոմիլկարին ընդառաջ։ Մարկելոսը, տեսնելով որ կղզում հակահռոմեական նոր աշխարհազոր են հավաքում, և որ այդ աշխարհազորին օգնության է եկել կարթագենական նավատորմը, որոշեց Բոմիլկարին թույլ չտալ Սիրակուզա մտնելու։ Պաքինոս հրվանդանից ոչ հեռու գտնվող հռոմեական և կարթագենական նավատորմները միայն բարեհաջող եղանակի էին սպասում, որպեսզի վճռական մարտի մեջ մտնեն, սակայն երբ եղանակը լավացավ, Բոմիլկարը անսպասելիորեն դուրս եկավ բաց ծով, Մինոյան Հերակլեայում կանգնած փոխադրանավերին հրաման ուղարկեց վերադառնալ Կարթագեն, իսկ ինքը նավով մեկնեց Իտալիա, ուղղվելով դեպի Տարենթոն (Լիվիոս, 25, 27)։ Թերևս դա տեղի ունեցավ այն պատճառով, որ վերջին պահին նա հանգեց այն մտքին, որ իր օգնությունը Հաննիբալին անհրաժեշտ է ռազմական գործողությունների իտալական թատերաբեմում, որ ինքը հատկապես այնտեղ, և ոչ թե Սիրակուզայի պարիսպների տակ, կարող է վճռական ազդեցություն թողնել պատերազմի ընթացքի և ելքի վրա... Պոլիբիոսի (9, 9, 11) ասելով, Բոմիլկարը Իտալիա եկավ տարենթոնցիների խնդրանքով, որպեսզի նրանց օգնի հռոմայեցիների դեմ մղվող պայքարում։ Համենայն դեպս սիցիլիական հույները Բոմիլկարի անսպասելի վարմունքը մեկնաբանում էին այն իմաստով, որ Կարթագենը հրաժարվում է Սիցիլիայի համար մղվող պայքարից։ Էպիկիդեսը, չկամենալով վե-

ըստին հայտնվել պաշարված քաղաքում, հեռացավ Ակրագանտ, որպեսզի այնտեղ սպասի մինչև պատերազմի արդյունքների ի հայտ գալը (Լիվիոս, 25, 27)։ Հենց այնտեղ՝ Ակրագանտում թաքնվեց նաև կարթագենական հետևազորի մի ինչ-որ մասը՝ Հաննոնի հրամանատարությամբ (Լիվիոս, 25, 40)։ Սիցիլիացիները, որոնք ամրացել էին Սիրակուզայի մոտակայքում և բոլորովին վերջերս ոչ-ոչ կերպով նախապատրաստվում էին նոր ճակատամարտերի, բանակցություններ սկսեցին Մարկելոսի հետ՝ Սիրակուզայի հանձնման պայմանների շուրջը (Լիվիոս, 25, 28)։

Այն պայմանները, որոնց միջոցով երկու կողմերը համաձայնության եկան, հետևյալն էին։ Այն ամենը, ինչ բոլորովին վերջերս, որտեղ էլ լիներ, պատկանում էր թագավորներին, այժմ պատկանելու էր հռոմեական ժողովրդին։ Դրանով իսկ վճռվում էր Սիրակուզայի, Լեոնտինիի և Հիերոն II-ի ու Հիերոնիմի իշխանության ներքո եղած մյուս քաղաքների ճակատագիրը։ Բայց և այնպես, մյուս սիցիլիացիները պահպանում էին իրենց ազատությունը և իրենց օրենքները, այսինքն՝ ներքին ինքնավարությունը (նույն տեղը)։ Ըստ երևույթին, վերջին պայմանը չէր կարող տարածվել մինչև պատերազմական գործողությունների սկսվելը հռոմեական պրովինցիա եղած տարածքի վրա, թեև պայմանագրի բնագրում, որ բերում է Լիվիոսը, այս մասին ուղղակի ոչինչ չի ասվում։ Չեռք բերելով այս պայմանները, սիցիլիական ներկայացուցիչները դիմեցին Սիրակուզայի կառավարիչներին, որոնց էպիկիդեսը (նավերով ընդառաջ գնալով Բոմիլկարին) հանձնել էր Աքրադինայի և Օրտիգիայի պաշտպանությունը, և ստացան քաղաք մտնելու թույլտվություն։ Այնտեղ ազգականներին, ընկերներին և ծանոթներին պատմելով Մարկելոսի հետ իր զրույցների արդյունքների մասին (ինչպես երևում է, նրանք հատկապես ուժեղ շեշտում էին այն, որ Բոմիլկարի հեռանալուց և, հետևաբար, սիցիլիական գործերին միջամտելուց Կարթագենի հրաժարվելուց և այն բանից հետո, երբ էպիկիդեսը իր կողմնակիցներին թողել էր բախտի քմահաճույքին, ամեն մի դիմադրություն հռոմայեցիներին, անօգուտ էր), նրանք նույն այդ ժամանակ կազմակերպեցին պետական հեղաշրջում և էպիկիդեսի կուսակալների (Պոմիկլիտեսի, Փիլիստոնոսի և էպիկիդես Սինդոնոսի) սպանությունը (Լիվիոս, 25, 28), միգուցե այն պատճառով, որ սրանք եռանդուն կերպով հականերդործում էին հաշտության բանակցություններին։ Ժողովրդական ժողով գումարելով, դավադիրները քաղաքացիներին համոզեցին առիթից օգտվել և սկսել հաշտության բանակցությունները։ Նոր մագիստրատներին հանձնարարվեց իրենց միջից պատվիրակներ ընտրել և նրանց ուղարկել Մարկելոսի մոտ։ Սակայն այն ժամանակ, երբ հռոմեական ճամբարում

բանակցություններ էին ընթանում, Սիրակուզայում վերսկսվեցին ընդհարումներն ու խռովությունները. հռոմեական փախստականները, որոնք երկյուղ էին կրում Մարկելոսից սպասվող հաշվեհարդարից և այդ պատճառով, բնականաբար, խորին անհանգստությամբ հետևում էին բանակցությունների ընթացքին, սիրակուզական բանակի վարձու դինվորներին համոզեցին այն բանում, որ իրենց ևս նույնպիսի ճակատագիր էր սպասում։ Կոտորելով բանակցությունների համար հենց նոր ընտրված մագիստրատներին, վարձկանները ցրվեցին քաղաքում. իրենց ճանապարհին սպանելով հանդիպող բոլոր սիրակուզացիներին, հափշտակելով ինչ որ պատահեր։ Հետզհետե նրանց կատաղությունը մեղմացավ։ Առանց իշխանության և ղեկավարության չմնալու համար, նրանք ընտրեցին վեց հրամանատար։ Երեքին հանձնարարեցին Աքրադինայի, երեքին՝ Օրտիգիա կղզու պաշտպանությունը։ Հետզհետե հասու լինելով բանակցությունների բովանդակությանը, վարձկանները եկան այն եզրակացության, որ իրենք հռոմեական զրոշներին դավաճանած մարդկանցից ավելի բարեհաջող կացության մեջ են։ Այս բանում նրանց համոզեցին նաև հռոմեական ճամբարից վերադարձած սիրակուզական պատվիրակները. հռոմայեցիների մոտ, ասում էին նրանք, բոլորովին պատճառներ չկան վարձկաններին հետապնդելու կամ պատժելու համար (Լիվիոս, 25, 29—30)։

Ե՛վ պատվիրակները, և՛ հռոմեական հրամանատարությունը հատուկ ուշադրություն դարձրեցին իբերացի Մերիկոսի վրա. վերջինս վարձկանների ընտրած այն երեք հրամանատարներից մեկն էր, որոնց տնօրինության տակ էր Աքրադինան։ Նրա մոտ ուղարկեցին մի իսպանացու, որը Մերիկոսին հակեց դավաճանության։ Պնդելով բանակցությունների դադարեցման և Աքրադինայի բոլոր մատույցների պահպանության ուժեղացման վրա (այդ նպատակով նա առաջարկեց պաշտպանության գիծը բաժանել առանձին տեղամասերի և ամեն մեկը դնել վարձկանների առաջնորդներից մեկնումեկի հրամանատարության տակ), Մերիկոսը իր վերահսկողության տակ վերցրեց Արետուսա աղբյուրից մինչև Աքրադինայի հարավային վերջավորության մերձակայքը՝ մեծ նավահանգստի մուտքը հասնող տեղանքը։ Ուշ գիշերին Մարկելոսն այդ վայրի մոտակայքը քշեց բերեց մի մեծ քվաղրիրեմա և դեսանտ հանեց. Մերիկոսը Արետուսայից ոչ հեռվում հռոմայեցիներին դարպասներից ներս թողեց։ Լուսաբացին Մարկելոսն սկսեց Աքրադինայի գրոհը. մինչ թշնամուն հակահարված տալու համար ամեն կողմից դուրս թռչում էին զորականները, նա ևս մեկ դեսանտ հանեց Օրտիգիա կղզում և կարճ ընդհարումից հետո գրավեց այն (Լիվիոս, 25, 30)։ Սիրակուզացիների ձեռ-

քին մնում էր սոսկ Աքրադինայի մի մասը, երբ Մարկելլոսը հրամայեց դադարեցնել հարձակումը. նա երկյուղ էր կրում, որ չլինի թե իր զորականները կողոպտեն սիրակուզական արքաների անհամար հարստությունները (նույն տեղը)։ Օգտվելով անդորրից, փախստականները հեռացան քաղաքից, իսկ բնակիչները դուրս գնացին հաղթողի մոտ, այժմ խնդրելով միայն իրենց կյանքը պահպանել։ Մարկելլոսը կայազոր ուղարկեց Օրտիգիա արքունի գանձերը պահպանելու համար, պահակներ կարգեց նրանց տներում, ովքեր մարտերն սկսվելու հենց սկզբից եղել էին հռոմեական զորքում, և Աքրադինան հանձնեց իր զինվորներին կողոպտելու։ Այս կատարյալ անկարգության, բռնության և ավարառության ժամանակ (Լիվիոսն ասում է, որ «ցուցաբերվեցին ոխակալության բաղում զարհուրելի օրինակներ, մեծ ագահություն») սպանվեց նաև Արքիմեդը, որը խորասուզված էր ավազի վրա իր կատարած գծագրի ուսումնասիրությամբ։ Լիվիոսի ասելով (25, 31), Արքիմեդին սպանեց մի զինվոր, չիմանալով, թե ում է հանդիպել. իբրև թե այդ մահը վշտացրել է Մարկելլոսին, նա հոգ է տարել մեծ գիտնականի հուղարկավորության մասին, իսկ նրա ազգականներին պաշտպանել է բռնացումներից։

Արքիմեդի սպանությունը երկար ժամանակի ընթացքում նյութ է ծառայել բազմաթիվ պատմությունների համար. Պլուտարքոսը (Պլուտ., Մարկ., 19), որ Լիվիոսի նման չանում է ընթերցողին հավատացնել, թե իբր Արքիմեդի մահը խորապես վշտացրել է հռոմեական հրամանատարին, բերում է երեք պատմություն նրա մահվան մասին։ Դրանցից մեկի համաձայն, Արքիմեդը մասասուզված էր երկրաչափական գծագրերի ուսումնասիրության մեջ. նա ուշադրություն չդարձրեց փողոցով վազող հռոմայեցիների վրա, և նույնիսկ չգիտեր, որ քաղաքն արդեն գրավված է թշնամու կողմից։ Երբ հանկարծակիորեն նրա առջև կանգնեց հռոմեական մի զինվոր և նրան կանչեց Մարկելլոսի մոտ, գիտնականը հրաժարվեց, պատասխանելով, որ ինքը դեռևս չի լուծել խնդիրները և չի վերջացրել ապացույցները. զինվորը պատյանից հանեց սուրը և խողխողեց Արքիմեդին։ Մեկ այլ պատումի համաձայն, երբ Արքիմեդին ներկայացավ ձեռքին սուր բռնած հռոմայեցի զինվորը, գիտնականը խնդրեց իրեն մի փոքր ժամանակ տալ, որպեսզի այն խնդիրը, որով ինքը զբաղվում էր, լուծված չմնար. մարդասպանը, ուշադրություն չդարձնելով Արքիմեդի խոսքերին, իր սրով խոցեց նրան։ Պլուտարքոսի մոտ պահպանված է նաև մի պատմություն. Արքիմեդը մեկնեց Մարկելլոսի մոտ, հետը տանելով մաթեմատիկական գործիքներ։ Ճանապարհին նրան հանդիպած զինվորները, կարծելով, թե նա գանձ է տանում, սպանեցին նրան կողոպտելու համար։ Վալերիոս Մաքսիմոսի մոտ նույնպես ավանդություն է պահպանվել, որ իբր Մարկելլոսը հրամայել է խնայել Արքիմեդին, որ սպանվել է ոչ միայն առանց Մարկելլոսի գիտության, այլև հակառակ նրա պարզագույն ցուցման։ Իր տուն ներխուժած զինվորին Արքիմեդն ասաց. «Մի փչացրու սա [գծագիրը]»։ Այս խոսքերից վիրավորված հռոմայեցին կտրեց նրա պլուխը։ Դիոդորոսի (26, 18) և Դիոն Կասիոսի շարադրանքում (Ֆրագմ., 45) Արքիմեդը խորասուզված էր աշխատանքի մեջ, երբ ինչ-որ մի հռոմայեցի կանգնեց նրա առաջ. չտեսնելով թե ում է իրեն խանգարում, Արքիմեդն ասաց. «Հեռացիր, ո՞վ մարդ, իմ գծագրից»։ Բռնվելով բարկության կողմից և հասկանալով, որ ինքն ընկել է հռոմայեցու ձեռքը, ծերունին գոչեց. «Մերանցից մեկնումեկը թող մի որևէ գործիք տա ինձ»։ Վախեցած հռոմայեցին տեղնուտեղը սպանեց նրան։ Մարկելլոսը ողբաց Արքիմեդի համար և հրամայեց հանդիսավոր կերպով նրան հուղարկավորել տոհմական դամբարանում. սպանողին մահապատժի ենթարկեցին։ Ըստ Զոնարասի (9, 5) Արքիմեդն ինչ-որ գծագիր էր կազմում, երբ նրա մոտ եկավ հռոմայեցի զորականը. ոչ թե գծագրի, այլ գլխի համար է նա եկել,— նկատեց Արքիմեդը և շարունակեց աշխատել, գրեթե ուշադրություն չդարձնելով զինվորի վրա։ Հազիվ հասցնելով ասել. «Հեռացի՛ր, ո՞վ մարդ, գծագրից», նա սպանվեց կատաղած հռոմայեցու կողմից։ Զոնարասը հարկ չի համարում որևէ բան ասել Մարկելլոսի գործողությունների մասին և սահմանափակվում է հետևյալ հավատամքով. «Գրավելով զրանք (Աքրադինան և Օրտիգիա կղզին— Ի. Կ.), հռոմայեցիները սպանեցին շատ ուրիշների և Արքիմեդին։ Համաձայն այդ ավանդության, Մարկելլոսը չի հրամայել խնայել գիտնականին, չի վշտացել նրա մահվան համար և, իրոք, այնուամենայնիվ ոչ ոքի չի պատժել։

Ինչպես և շատ այլ դեպքերում, մենք ստիպված ենք լուծված թողնել Արքիմեդի մահվան հանգամանքների և այդ իրադարձությանը Մարկելլոսի իսկական վերաբերմունքին առնչվող հարցը։ Փաստը մնում է փաստ. Արքիմեդն սպանվել է Սիրակուզայում Մարկելլոսի սանձազերծած կողոպուտի ու սպանությունների վայրենի խրախճանքի ժամանակ։ Բացառված չէ, որ Մարկելլոսը հարկ է համարել այդքան տխուր միջոցների առթիվ ի ցույց դնել իր վիշտը և վերջին հարգանքը մատուցել սպանվածին. այն իրադրությունում, որն ստեղծվել էր թե՛ բուն Սիցիլիայում, թե՛ բալկանյան Հունաստանում, որտեղ հռոմայեցիները սաստկորեն գրգռում էին հույն դաշնակիցների պաշտպանության կարիքն ընդդեմ Փիլիպոս V-ի, հռոմայեցիների համար քաղաքականապես չափազանց անձեռնտու էր հանդես գալ մարդասպանների ու բռնադատողների դերում, որոնք սառնասրտորեն ոչնչացնում էին հունական մտքի լավագույն ներկայացուցիչներին։ Հիշենք, որ հռոմայեցիներն արդեն ջանում էին իրենց կողմը գրավել դելֆյան պատգամախոսին։ Հաննիբալի հետ համեմատվելը (վերջինիս շտաբին կից, ինչպես ասվել է, կային հունական գրողներ) հույժ անձեռնտու կլիներ[128]։ Համենայն դեպս ստուգապես հայտնի է (Ցից., Պետութ., 1, 14), որ Մարկելլոսը արքիմեդյան նշանավոր «ընդերքից» մեկը նվիրել է Արիությանը տաճարին, իսկ մյուսը վերցրել է, որպես ռազմատավարից իրեն հասնող բաժին։ Այդ մասունքը նրա ընտանիքում փոխանցվում էր սերնդեսերունդ։

Սակայն կասկածից վեր է նաև մեկ այլ բան. Սիրակուզայում, երբ այն ընկավ հռոմայեցիների գերիշխանության տակ, բոլորովին էլ անվտանգ չէր Արքիմեդին՝ հռոմեական արշավանքին դիմադրություն կազմակերպողներից մեկին և, ըստ երևույթին, հռոմայեցիների առավել

128 Հաննիբալ

անգիջում թշնամուն հիշելը[129]։ Պետք է կարծել, որ դրանով է բացատրվում այն, որ Արքիմեդի գիրեզմանը լքվել ու մոռացության էր մատնվել, և միայն Ցիցերոնը, արդեն I դարում, մեծ աշխատանքներից հետո, կարողացավ այն որոնել և գտնել (Ցից., Տուսկ., 5, 64—66)։

Սիրակուզայի գրավմամբ Սիցիլիայում մղվող պատերազմը դեռևս չվերջացավ։ Սիցիլիական քաղաքներում ընդհարումներ տեղի ունեցան Հռոմի կողմնակիցների և Կարթագենին համակրողների միջև. միայն Մարկելոսի միջամտությունը կարողացավ ապահովել հռոմեամետ խմբակցությունների հաղթանակը (հմմտ. Պլուտ. մոռ., Մարկ., 20)։ Այն մասին, թե Մարկելոսն ինչպիսի զիջումների էր ստիպված գնալ, վկայում է Ապպիանոսի ցուցումը (Սից., 5). պայմանագիր կնքելով Տավրոմենիայի հետ, Մարկելոսը հրաժարվեց այդ քաղաքում հռոմեական կայազոր տեղակայելուց և հռոմեական բանակի օժանդակ միավորումների համար այնտեղ զինվորներ հավաքելուց։ Ակրագանտում տակավին նստած էր էպիկիդեսը. պունիկյան զորամիավորումներով այնտեղ էր գտնվում նաև Հաննոնը. վերջապես Հաննիբալը այնտեղ ուղարկեց նաև Մուտոնին՝ Հիպոն Դիարիտումի քաղաքացուն, որը նրա գլխավորությամբ լավ ուսումնասիրել էր ռազմական գործը։ Էպիկիդեսն ու Հաննոնը նումիդիական հեծյալներին դրեցին Մուտոնի ենթակայության տակ։ Ինչպես երևում է, Հաննիբալը կղզում դրությունը շտկելու նկատմամբ դեռևս հույսը չէր կորցրել։ Եվ իրոք, մի ջոկատի գլուխ անցած՝ կատարելով խիզախ արշավանքներ, Մուտոնը վերստին ամբողջ Սիցիլիայում հարուցեց հակահռոմեական շարժում։ Վերջապես, Էպիկիդեսն ու Հաննոնը Մուտոնի հետ միասին իրենց զորքերը դուրս բերեցին Հիմերա գետի մոտերքը։ Այնտեղ Մուտոնը մի քանի ընդհարումներում կարողացավ ջախջախել հռոմայեցիներին, սակայն նումիդիացիների խռովությունը (վերջիններիս մի մասը անսպասելիորեն հեռացավ Մինոյան Հերակլեա) նրան ստիպեց շեղվել հռոմայեցիների դեմ մղվող պայքարից։ Մինչ նա բացակայում էր, Հաննոնն ու Էպիկիդեսը վճռեցին ճակատամարտ տալ։ Սակայն նրանց զինվորները չդիմացան առաջին իսկ բուռն գրոհին և փախուստի դիմեցին։ Շահելով այդ հաղթանակը, Մարկելոսը հանդիսավորապես վերադարձավ Սիրակուզա (Լիվիոս, 25, 40—41, Զոնարաս, 9, 7)։

Սիրակուզայի անկմամբ և Հիմերա գետի մոտ կարթագենցիների և հույների ջախջախմամբ վճռվեց Սիցիլիայի համար մղվող պայքարի ելքը։ Թեև Ակրագանտում դեռևս մնում էին կարթագենական զորքերն ու Էպիկիդեսի ջոկատները, կղզին վերածվեց հռոմեական պրովինցիայի։ Կարթագենական կառավարության բոլոր պլանները ևթբ իսկ Հաննիբալի՝ Սի-

[illegible]ի ու մասնավորապես Սիրակուզայի հետ առնչվող բոլոր ռազմաքաղաքական ձգտումները խորտակվեցին։ Հաննիբալին Կարթագենի հետ կապելու փոխարեն Սիցիլիան վերածվեց անանցանելի մի պատնեշի, որը Իտալիայում պունիկյան բանակը կտրում էր օժանդակ ուժերի հնարավոր աղբյուրներից։ Հաննիբալի բանակի համար հուսալի թիկունք դառնալու փոխարեն, Սիցիլիան վերածվեց պլացդարմի, որտեղից ուղած ժամանակ կարելի էր սպասել և՛ հռոմեական զորքերի ներխուժումն Աֆրիկա, և՛ Ապենինյան թերակղզու հարավային շրջաններով կարելի էր հարվածել Հաննիբալին։ Հռոմին ոչնչացնելու համար Մակեդոնիայի, Տարենթոնի, Կապուայի, Սիրակուզայի և Կարթագենի միջև դաշինք ստեղծելու հույսը խորտակվեց։ Տարենթոնի ակրոպոլիսում նստած էին հռոմայեցիները, Կապուան պաշարված էր, Սիրակուզան գրավված էր Մարկելոսի կողմից։ Էլ ո՞րն ասենք։ Թերևս Տիտոս Օտակիլիոսի նոր արշավանքն Աֆրիկա։ Սիրակուզայի գրավումից մի քանի օր առաջ, վաղ առավոտյան 80 քվինքվերեմաներով ներխուժելով Ուտիկեի նավահանգիստը, նա քշեց տարավ պարենամթերքով բեռնված փոխադրամիջոցները, ամայացրեց Ուտիկեի շրջակայքի դաշտերը և հանդիսավորապես վերադարձավ Լիլիբեոն (Լիվիոս, 27, 31)[130]։

Իսպանիայում 212 թվականի պատերազմն սկսվեց հետևյալ հանգամանքներում։ Ինչպես հայտնի է, այդ պահին Պիրենեյան թերակղզում կային հռոմեական երկու բանակ. մեկը՝ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի և մյուսը՝ նրա եղբոր՝ Գնեոսի հրամանատարության տակ։ Երբ եկավ մարտական գործողությունների ժամանակաշրջանը, հռոմեական զորավարները դուրս եկան ձմեռային կացարաններից և միավորեցին իրենց ուժերը։ Նրանց դեմ կանգնած էր կարթագենցիների երեք բանակ. երկուսը՝ Գիսկոնի որդի Հասդրուբալի և Համիլկար Բարկայի որդի Մագոնի գլխավորությամբ, գտնվում էին ընդհանուր զորաճամբարում, հռոմայեցիներից մոտավորապես հինգօրյա ճանապարհով հեռու, իսկ մեկը կանգնած էր Անտորգում քաղաքի մատույցներում (այն գլխավորում էր Համիլկար Բարկայի որդի Հասդրուբալը)։ Պատերազմի պլանը մշակելու և ամենամոտիկ ժամանակների համար նրա նպատակները որոշելու միտումով Սկիպիոնները ռազմական խորհուրդ գումարեցին. նրա մասնակիցները հանգեցին միասնական կարծիքի. մինչև այժմ ջանացել են Հասդրուբալ Բարկայանին սոսկ խանգարել Իտալիա թափանցելու, իսկ այժմ (անշուշտ նախընթաց պատերազմների փայլուն հաջողություններից հետո) ժամանակն է պատերազմը վերջացնել Իսպանիայում։ Միջոցները պետք է որ բավականացնեին. հռոմայեցիներին միացել էին 20 հազար կելտիբերներ՝ այն ժամանակների համար հույժ ահեղ մի ուժ։ Սկզբում

հռոմեական հրամանատարությունը վճռեց հարվածել Հասդրուբալին՝ Համիլկար Բարկայանի որդուն։ Բոլորը համոզված էին հաջողության մեջ և անհանգստանում էին այն բանի համար, որ չլինի թե հանկարծ, վախենալով նրա պարտությունից, Գիսկոնի որդի Հասդրուբալը և Մագոն Բարկայանը հեռանային լեռները և ձգձգեին պատերազմը։ Այդ պատճառով հռոմայեցիները բաժանեցին իրենց զորաուժը։ Նախկին բանակի երկու երրորդը Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը տարավ Մագոն Բարկայանի և Գիսկոնի որդի Հասդրուբալի դեմ. նախկին զորքի մեկ երրորդը և կելտիբերներին Գնեոս Կորնելիոս Սկիպիոնը շարժեց դեպի Անտորգում՝ Հասդրուբալ Բարկայանի դեմ (Լիվիոս, 25, 32)։ Կարթագենցիները հռոմայեցիներին թողեցին ռազմական գործողությունները սկսելը։

Քաջ գիտակցելով, որ Գնեոս Սկիպիոնն իր հույսը փաստորեն դնում է կելտիբերների վրա, Հասդրուբալ Բարկայանը ամեն ինչ արեց, որպեսզի նրանց կորի հռոմայեցիներից։ Նրա փաստարկներն այնքան ծանրակշիռ էին և այդ պատճառով նաև այնքան համոզիչ՝ թե՛ շարքային կելտիբերական զորականների և թե՛ նրանց առաջնորդների համար, որ նրանք հեռացան հռոմեական ճամբարից, հրաժեշտ տալիս հայտարարելով, որ իբր երկպառակտչական գժտությունները խանգարում են իրենց՝ մասնակցելու Սկիպիոնների ձեռնարկումներին։ Գնեոսն, այժմ չունենալով ո՛չ բավականաչափ զորք, որպեսզի իրագործի նախնական պլանը և պատերազմի Հասդրուբալ Բարկայանի դեմ, ո՛չ եղբոր հետ միանալու հնարավորություն, վճռեց նահանջել, ըստ հնարավորին խուսափելով բաց տեղանքում պատերազմելուց. կարթագենցիները կրնկակոխ հետապնդում էին նրան (Լիվիոս, 25, 33)։

Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի դրությունը նույնպես գնալով ավելի էր վատանում։ Մասանասայի նումիդիական հեծելազորի ասպատակությունները մշտապես տագնապի մեջ էին ձգում նրա զինվորներին։ Նրա հասցրած հարվածները օրեցօր ավելի ու ավելի էին զգալի դառնում, այնպես որ վերջիվերջո հռոմայեցիները բառիս լիակատար իմաստով պաշարման մեջ ընկան իրենց սեփական ճամբարում։ Սկիպիոնին խիստ անհանգստացրեց այն լուրը, որ կարթագենցիներին օգնության է գալիս իսպանական առաջնորդներից մեկը՝ Ինդեբիլոսը, իր հետ բերելով սուսեսետանների ջոկատը՝ բաղկացած 7500 մարդուց։ Կամենալով կանխել վատթարագույնը և, համենայն դեպս, որպեսզի Ինդեբիլոսին թույլ չտա միանալու կարթագենցիների հետ, Պուբլիոս Սկիպիոնը գիշերով նետվեց նրան ընդառաջ, ճամբարում թողնելով ոչ մեծ կայազոր՝ Տիբերիոս Փոնտեոսի հրամանատարությամբ։ Ճակատամարտն սկսվեց թափով, և թվում էր, թե հռոմեական հետևազորն արդեն հաղթում է,

երբ անսպասելիորեն թևերից նրա վրա հարձակվեցին նումիդիական հեծելազորայինները, իսկ թիկունքից՝ կարթագենցիները, որոնք, ինչպես նշվում է, ուշիուշով հետևում էին Պուբլիոսի բոլոր տեղաշարժերին։ Մարտի ժամանակ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնն սպանվեց, և այդ կորուստը կանխորոշեց գործի ելքը. հրամանատարից զրկվելով, հռոմայեցիներն սկսեցին դես ու դեն վազել. նրանցից շատերը արդեն փախչելու ժամանակ սրածվեցին (Լիվիոս, 25, 34)։ Ապպիանոսի տվյալների (Բպ., 15) համաձայն, Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնն սպանվեց շրջապատման ժամանակ, որը նա կատարում էր ոչ մեծաթիվ հեծելազորատով։

Այս հաղթանակից անմիջապես հետո Գիսկոնի որդի Հասդրուբալը և Մագոն Բարկայանը իրենց զորքերն առաջնորդեցին Հասդրուբալ Բարկայանին միանալու համար։ Նրանց ժամանումը նկատելով, Գնեոս Սկիպիոնը վճռեց վերստին նահանջել և գիշերը հեռացավ իր ճամբարից։ Կարթագենցիներն սկսեցին հետապնդումը, առաջ ուղարկելով նումիդիական հեծելազորը, որը հռոմայեցիներին հարկադրեց կանգ առնել և ընդունել մարտը։ Հաջորդ գիշերամուտին Սկիպիոնին հաջողվեց տեղանքին իշխող բլրի վրա շրջանաձև պաշտպանություն կազմակերպել և նույնիսկ գումակի բեռներից արգելափակոցի նման մի բան կանգնեցնել։ Այնուամենայնիվ հռոմեական զինվորները չկարողացան դիմակայել թվապես իրենց գերակշռող հակառակորդին։ Մեկը մյուսի ետևից տանելով գետնին գցված ծանր առարկաները, կարթագենցիները, իսպանացիները, նումիդիացիները մաքրեցին իրենց ճանապարհը և սկսեցին կոտորածը. հռոմայեցիների մեծ մասը թաքնվեց շրջակայքի անտառներում, իսկ այնուհետև փախավ ճամբար՝ Տիբերիոս Փոնտեոսի մոտ։ Գնեոս Սկիպիոնն սպանվեց մարտի ժամանակ. ոմանց պատմելով, նա սպանվեց ուղղակի բլրի վրա, ուրիշների ասելով՝ վազեց դեպի բլրի մոտակայքի աշտարակը և սպանվեց այնտեղ, երբ այն գրավեցին կարթագենցիները (Լիվիոս, 25, 35—36, հմմտ. նաև Ապպ., Բպ., 15)։

Երկու Սկիպիոնների մահը և հռոմեական բանակի ջախջախումը կարթագենցիների համար ճանապարհ բացեց դեպի Պիրենեյան թերակղզու հյուսիսը, և նրանք փութապես ուղղվեցին Իբերի կողմը, դեպի ուր նահանջում էին նաև հռոմեական զորքի մնացորդները, որոնք հավաքվել էին Լ. Մարկիոսի կողմից և միավորվել Փոնտեոսի հետ։ Երբ հռոմայեցիները անցան Իբերը և այնտեղ սկսեցին կառուցել իրենց ճամբարը, նրանք հրամանատար ընտրեցին Լ. Մարկիոսին։ Հասդրուբալը՝ Գիսկոնի որդին, նույնպես անցավ Իբերը և մոտեցավ հռոմեական ճամ-

բարին։ Հուսահատ քաջությամբ կռվելով, հռոմայեցիները ետ մղեցին կարթագենցիների հարձակումը, և վերջիններս հեռացան, լիակատար քամահրանք ցուցահանելով բոլորովին վերջերս գլխովին ջախջախված հակառակորդի նկատմամբ։ Իրենց ճամբարի պահպանության, ինչպես նաև հակառակորդին հսկելու գործում կարթագենցիները ծայր աստիճան անզգույշ էին և անուշադիր. գործ ունենալով Սկիպիոնի բանակի մնացորդների հետ, որոնցից, ինչպես կարծում էին նրանք, փոքր իսկ լուրջ վտանգ չէր կարող բխել, պունիկյան հրամանատարությունը հարկ չհամարեց պահպանել նախազգուշական միջոցները։ Օգտվելով դրանից, Լ. Մարկիոսը որոշեց պաշարել Հասդրուբալի՝ Գիսկոնի որդու, ճամբարը. մութ գիշերին հռոմայեցիները ներխուժեցին կարթագենական ճամբար և ոչնչացրեցին այն (Լիվիոս, 25, 37—39)։ Լիվիոսը տվյալ դեպքում հետևելով հռոմեական անալիստական ավանդությանը, ինչպես երևում է, հակված է չափազանցնելու Լ. Մարկիոսի հաղթանակի նշանակությունը. այդ հաղթանակի նկարագրությանը նա, բնականաբար, ավելի մեծ տեղ է հատկացրել, քան Սկիպիոնների կորստյանը և Պիրենեյան թերակղզում հռոմեական ամբողջ բանակի ջախջախմանը[131]։

Պուբլիոս և Գնեոս Սկիպիոնների դեմ տարած հաղթանակը վերջապես կարթագենցիների ձեռքը հանձնեց Իբերից հարավ ընկած Իսպանիան։ Սակայն չպետք է թերագնահատել նաև Լ. Մարկիոսի կատարածի նշանակությունը. նա կործանումից խուսափած զինվորների անկարգ զանգվածը վերածեց զորամիավորման, որն ընդունակ էր հաջողությամբ ընդդիմակայել կարթագենցիներին և նույնիսկ զգալի հարվածներ հասցնել նրանց. նաև պահեց Իբերի հյուսիսակողմի հռոմեական պլացդարմը։ Իսպանիայում մղվող պայքարն այժմ կարող էր վերսկսվել։

Մինչ այս, մինչ այն, Բալկանյան թերակղզում իրադարձությունները, որոնցում հույժ գործուն դեր էր խաղում Հաննիբալի դաշնակիցը՝ մակեդոնական թագավոր Փիլիպոս V-ը, զարգանում էին իրենց կարգով։ Ապոլլոնիայի տակ կրած անհաջողությունը չկանգնեցրեց Իլլիրիայում Փիլիպոսի գործողությունները։ Արդեն 213 թ. Ադրիական ծովի իլլիրիական ափին նա գրավեց Լիսոս քաղաքը (Պոլիբիոս, 8, 15—16), որն ընկած էր Իլլիրիական թագավորության հյուսիսային սահմանի մատույցներում, իսկ այնուհետև հռոմայեցիներից խլեց Ատինտանիան և Պարթինիան։ Իլլիրիական քաղաքների մեծ մասը առանց դիմադրության հանձնվեց նրան (Պոլիբիոս, 8, 16, 10). Հռոմայեցիները տեսան, որ իրենք դիմանում են Իլլիրիայի ադրիական ծովափի նեղ հողաշերտում։ Թվում էր, ևս մի ճիգ, և Փիլիպոս V-ը, ծովը նետելով հռոմայեցիներին ու վերջնականապես իր տիրապետությունը հաստատելով Բալկանյան թերակղզու հյուսիսում, կկարողանա միջամտել իտալական գործերին։ Սակայն այստեղ նույնպես հռոմայեցիները կարողացան մակեդոնական թագավորի հաղթանակներին (և հետևաբար, նրա կարթագենական դաշնակցի մտահղացումներին) հակադրել իրենց եռանդն ու համառությունը. առայժմ հնարավորություն չունենալով Բալկանյան թերակղզում պահելու այնպիսի ուժեր, որոնք կարող էին բավականացնել մակեդոնական բանակը ոչնչացնելու համար, բայց իրենց ձեռքում պահելով պլացդարմը, հռոմեական կառավարությունը, ըստ երևույթին, արդեն 212 թ. գաղտնի բանակցություններ սկսեց էտոլիական միության՝ բալկանյան Հունաստանում գերիշխանության համար մղվող պայքարում Փիլիպոս V-ի ընական հակառակորդի հետ։ Հաննիբալը հավանաբար ոչինչ չգիտեր այդ կապերի մասին, իսկ եթե գիտեր, ապա ոչինչ չարեց հռոմեական դիվանագիտության այդքան կարևոր հաղթանակը կանխելու համար։ Փիլիպոս V-ի ամեն մի դաշնակիցը ինքնաբերաբար դառնում էր էտոլիացիների թշնամին և, հետևաբար, նույնիսկ ավելի բարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակում, Հաննիբալը չէր կարող այս կամ այն հնարամտության օգնությամբ նրանց իր կողմը գրավելու հույս ունենալ։

VII

211 թվականի պատերազմի սկզբին արդեն պարզ դարձավ, որ ռազմական գործողությունների կենտրոն է դառնալու Կապուան, և որ հատկապես նրա ճակատագիրն է վճռելու թե՛ այդ պատերազմի և թե՛ ընդհանրապես Իտալիայում ծավալվող ռազմական գործողությունների ելքը։ Պատահական չէր, որ Հռոմի սենատը ոչ միայն երկարաձգեց Կապուան պաշարած Քվինտոս Ֆուլվիոս Ֆլակոսի և Ապպիոս Կլավդիոս Պուլքերի լիազորությունների ժամկետը (այդ տարվա համար կոնսուլներ էին ընտրվել Գնեոս Ֆուլվիոս Կենտիմալոսը և Պուբլիոս Սուլպիկիոս Գալբան), այլև հրամայեց, որպեսզի նրանք չհեռանան Կապուայի պարիսպներից, մինչև որ գրավեն այն։

Պատահական չէր, որ Հաննիբալը նույնպես, որը մի ինչ-որ ժամանակ տատանվում էր Տարենթոնի ակրոպոլիսը անպայման գրավելու ցանկության և Կապուային օգնություն ցույց տալու անհրաժեշտության միջև, վերջիվերջո վճռեց իր ջանքերը կենտրոնացնել Կապուայի շրջանում, մանավանդ որ Կապուայից նրան տեղեկություններ հասան այն ծանր կացության մասին, որի մեջ ընկել էր արտաքին աշխարհից կտրված և պարենամթերքից զրկված քաղաքը, և որ պաշարողների ու պաշարվածների միջև սկսվել էին ընդհարումներ, որոնց մեջ մերթ կապուա-

կան հեծելազորն էր հաղթում, մերթ հռոմեական հետևազորը (Լիվիոս, 26, 4)։ Ինչպես հռոմեական կառավարությունը, նույնպես և Հաննիբալը հիանալի կերպով հասկանում էին, որ Կապուայի ճակատագիրը վճռական ազդեցություն կթողնի Հարավային Իտալիայում իրադարձությունների զարգացման վրա, և այդ պատճառով, Բրուտիումում թողնելով գումակի մեծ մասը և ծանրազեն զինվորներին, նա, գլխավորելով ընտիր հետևազորը և հեծելազորը, որոնց ետևում էին նաև 33 փիղ, արագացված զորաբերթով ժամանեց Կամպանիա և վերստին բանակեց Տիֆատա լեռան մոտակայքում։

Ճանապարհին գրավելով Գալատիա փոքրիկ ամրոցը և այնտեղից դուրս քշելով հռոմեական կայազորը, Հաննիբալը միջոց գտավ պաշարվածներին իրազեկելու, թե երբ է կամենում հարձակվել հռոմեական զորքերի վրա, որպեսզի կապուացիները նույնպես, իրենց հերթին, հարված հասցնեին թշնամուն, նրա ուժերի մի մասը գրավելով իրենց կողմը։ Ստեղծված իրավիճակում հռոմեական հրամանատարությունը որոշեց բաժանել իր զորքերը. Ապպիոս Կլավդիոս Պուլքերը պետք է պատերազմեր կապուացիների դեմ, Քվինտոս Փուլվիոս Փլակոսը՝ ընդդիմակայեր Հաննիբալին. նախկին պրետոր Գայոս Կլավդիոս Ներոնը գրավեց Սուեսսուլա տանող ճանապարհը, իսկ լեգատ Գայոս Փուլվիոս Փլակոսը դաշնակիցների հեծելազորով՝ Վոլտուրնոս գետին հարող տեղանքը։

Ճակատամարտը ծավալվեց այնպես, ինչպես նախատեսել էին երկու բանակների զորավարները։ Կապուացիները հարձակվեցին Ապպիոս Կլավդիոսի լեգեոնների վրա, և սա սկզբում հաջողությամբ ետ մղեց նրանց գրոհը, ապա ետ վանեց դեպի դարպասները։ Հաննիբալը պատերազմում էր Փուլվիոսի լեգեոնների դեմ և սկզբնական շրջանում լուրջ հաջողության հասավ. լեգեոններից մեկը (վեցերորդը, ասում է Լիվիոսը) չդիմացավ Հաննիբալի իսպանական վարձկանների բուռն գրոհին և նահանջեց։ Իսպանացիների ջոկատը, 3 մարտական փղերի ուղեկցությամբ, ճեղքեց հռոմայեցիների զորաշարքը և մոտեցավ հռոմեական ճամբարի պատնեշին։ Այստեղ Փուլվիոսը կատաղի դիմադրություն կազմակերպեց և մի շարք հակագրոհներով պունիկացիներին հարկադրեց կանգ առնել։ Տեսնելով, որ իր իսպանական ջոկատը ոչնչանում է հռոմայեցիների հարվածների տակ, որ թշնամիները համառորեն ետ են մղում իրենց ճամբարը գրավելու բոլոր փորձերը (մարտի ընթացքում ոչնչացան մարտական փղերը. նրանց մարմիններով ամբողջապես լցվեց ճամբարի պատնեշի առջևի խրամափոսը, և զինվորները կռվում էին ոչ միայն պատնեշի, այլև կենդանիների մարմինների վրա, որոնք յուրատեսակ

կամուրջ էին գոյացրել), Հաննիբալը հրամայեց նահանջել. Փուլվիոսը չկամեցավ նրան հետապնդել (Լիվիոս, 25, 5—6)։ Լիվիոսը (նույն տեղում) այս դեպքի մասին մեկ այլ պատմություն է հաղորդում. նումիդացիներն ու իսպանացիները փղերի հետ իբրև թե անսպասելիորեն ներխուժել են հռոմեական ճամբարը, խուճապ են առաջացրել այնտեղ, իսկ Հաննիբալի՝ լատիներեն իմացող զորականները հռոմեական հրամանատարի անունից հռոմայեցիներին հրամայել են ճամբարից փախչել մոտակա լեռները, որպես թե ճամբարն իբր արդեն գրավված էր Հաննիբալի կողմից։ Գործն այնուամենայնիվ վերջացավ հռոմեական ճամբար ներխուժած զինվորների կոտորածով, իսկ փղերին հռոմայեցիները փախցրեցին կրակով։

Նույն այս ավանդությանը հարում է նաև Ապպիանոսը (Ապպ., Հաննիբ., 41), սակայն նա ճակատամարտը դնում է Հռոմի վրա կատարած արշավանքից հետո ընկած շրջանում։

Համենայն դեպս, ճակատամարտը բացարձակապես վերջացավ ոչ ոքի, սակայն այդ ոչ ոքին Հաննիբալի համար հավասարազոր էր պարտության։ Կապուայի պարիսպներից հռոմայեցիներին հեռացնելու նրա փորձը չհաջողվեց։ Նա այլևս գրոհներ չձեռնարկեց հռոմեական ճամբարի վրա, ըստ երևույթին գտնելով, որ ինքն ի զորու չէ ուղղակի հարվածով Փուլվիոսին և Ապպիոս Կլավդիոսին ստիպելու հեռանալ Կամպանիայից։ Անհրաժեշտ էր ինչ գնով էլ լիներ գտնել մի ինչ-որ ուրիշ միջոց՝ հռոմեական հրամանատարության ուշադրությունը պաշարված քաղաքից շեղելու համար։ Եվ հանկարծ նրանց թվաց, որ այդպիսի միջոց գոյություն ունի. պետք է մահացու սպառնալիք ստեղծել Հռոմեական պետության գոյության համար կամ գոնե այդպիսի սպառնալիքի առաջացում կեղծել։ Այն ժամանակ հռոմեական հրամանատարությունն ամեն ինչ դեն կնետի և կջանա փակել հայրենիքը։ Այսպես որոշվեց արշավել Հռոմի վրա։

Մենք արդեն ասել ենք այն մասին, որ Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից անմիջապես հետո. Հաննիբալի մերձավորագույն զինակիցների մեջ ծնվել էր անհապաղ Հռոմի վրա արշավելու գաղափարը. մենք նույնիսկ տեսանք, որ նումիդիական հեծյալների հրամանատար Մահարբալը այդ առաջարկեց Հաննիբալին և, պատասխանը լսելով, իրեն թույլ տվեց բարձրաձայն կասկած հայտնել՝ իր հաղթանակների պտուղներից օգտվելու Հաննիբալի կարողության նկատմամբ։ Մենք հիշատակել ենք նաև այն մասին, որ հետագա պատերազմների ժամանակ նույնպես Հաննիբալն ստիպված է եղել իր զորավարներից լսելու հանդիմանություններ և հանդուրժելու նրանց տրտունջները. այնուամենայ-

նիվ նա ոչ մի բարոյական իրավունք չուներ անցանկալի խոսակցությունները դադարեցնելու, և որ հենց նրան մինչև հոգու խորքը տանջում էր զղջումը, որ նա ինքն էլ էր հասկանում, թե ինչպիսի հնարավորություններ է ձեռքից բաց թողել (հմմտ. Լիվիոսի մոտ, 26, 7, 3)։

Իսկ երբ այժմ, գրեթե չորս տարի հետո, Հաննիբալը վերջապես վճիռ կայացրեց, իրադրությունն արմատապես փոխվել էր։ Կաննեից հետո Հռոմն այն աստիճան անպաշտպան էր, որ ստիպված եղավ իր լեգեոնները կազմավորել կամավոր ստրուկներից, որոնց ծառայության դիմաց իբրև պարգև խոստացվեց ազատագրություն։ Այժմ Հռոմը բավական ուժեր էր կուտակել, որպեսզի հաջող կերպով կամ փոփոխական հաջողությամբ պատերազմ վարեր և՛ Իտալիայում, և՛ Սիցիլիայում, որի ճակատագիրը փաստորեն վճռվել էր 212 թվականի պատերազմով, և՛ Իսպանիայում, և՛ նույնիսկ ասպատակություններ կատարեր Հյուսիսային Աֆրիկայում, ինչպես նաև խափաներ մակեդոնա-կարթագենական դաշինքը։ Այս բոլորը Հաննիբալը չէր կարող չհասկանալ։ Նա հույս ուներ, որ եթե Հռոմը վտանգի ենթարկվի, ապա կա՛մ հռոմեական երկու հրամանատարները, կա՛մ նրանցից մեկը կհեռանա Կապուայից։ Երբ նրանք բաժանեն իրենց զորքերը, յուրաքանչյուրն ավելի կթուլանա, և կա՛մ ինքը՝ Հաննիբալը, կա՛մ կապուացիները մի ինչ-որ հաջողության կհասնեն։ Միակ բանը որ անհանգստացնում էր Հաննիբալին, դա Կապուայի դիրքավորումն էր։ Նա վախենում էր, որ իմանալով դեպի հյուսիս նրա հեռանալու մասին, կապուացիները հանկարծ կհանձնվեն պաշարողներին։ Կամենալով կանխել դեպքերի այդպիսի զարգացումը, Հաննիբալը միջոց գտավ Կապուա նամակ ուղարկելու, որտեղ բացատրեց իր ծրագիրը. նրա մեկնելը հռոմայեցիներին կհարկադրի հեռանալ Կապուայի պարիսպներից Հռոմը պաշտպանելու համար, մի քանի օր ևս դիմանալով, կապուացիներն ընդհանրապես կազատվեն պաշարումից։ Մի գիշեր, անցնելով Վոլտուրնոսը (իր ճամբարում նա հրամայեց չմարել կրակները), Հաննիբալը շարժվեց դեպի հյուսիս (Լիվիոս, 26, 7)։

Հաննիբալի մտահղացած ամբողջ ձեռնարկման հաջողությունը մեծապես կախված էր այն բանից, թե Հռոմի վրա նրա հարձակման մեջ որքան մեծ էր լինելու հանկարծակիության տարրը։ Սակայն Հաննիբալին չհաջողվեց գաղտնի պահել իր մտահղացումը. Փուլվիոս Փլակոսն ամեն ինչի մասին տեղեկացավ փախստականներից և անմիջապես տեղեկացրեց հռոմեական հրամանատարությանը։ Հռոմում փութապես սենատի նիստ գումարվեց։ Սենատորներից մեկը՝ Պուբլիոս Կորնելիոս Ասինոսը, պահանջեց Հռոմի պաշտպանության համար կանչել բոլոր զորավարներին և Իտալիայում գործող ամբողջ զորքը, այսինքն՝ կատարել հենց այն, ինչ

կամենում էր Հաննիբալը։ Նրան առարկում էր Քվինտոս Ֆաբիոս Մաքսիմոսը։ Նա հանցագործություն էր համարում Կապուայի պաշարումը թողնելը և, վախին հանձնվելով, Հաննիբալի սպառնալիքների ու գործողությունների ազդեցության տակ ռազմական որևէ զորաշարժ կատարելը։ «Մի՞թե,— բացականչում էր նա,— Կաննեից հետո հաղթող լինելով, նա չհամարձակվեց դիմել Հռոմի վրա, այժմ Կապուայից ետ շրջվելով, հույս կունենա գրավել Հռոմը։ Նա գնում է ոչ թե Հռոմի պաշարման, այլ Կապուան պաշարումից ազատելու համար։ Հռոմը պաշտպանվելու է իր ունեցած զորքերով, Ցուպիտերով, որը վկա էր այն բանին, թե Հաննիբալն ինչպես էր խախտում պայմանագրերը, և մյուս աստվածներով»։ Քննարկումն ավարտվեց Պուբլիոս Վալերիոս Ֆլակոսի՝ փոխադարձ զիջում անելու վերաբերյալ առաջարկի ընդունմամբ։ Ապպիոս Կլավդիոսին և Փուլվիոսին նամակ գրեցին, որտեղ հայտնեցին, թե Հռոմն իր տրամադրության տակ պաշտպանության համար ինչպիսի ուժեր ունի։ Եվ եթե նրանցից մեկնումեկը թերևս զորքի մի մասով ուղարկվել է քաղաքը պաշտպանելու, ապա նաև, ինչպես հարկն է, պետք է շարունակել Կապուայի պաշարումը, և նրանք միմյանց հետ պայմանավորվեն, թե ո՛վ է պաշարումը շարունակելու, և ո՛վ է գնալու դեպի Հռոմ, որպեսզի այնտեղ դիմակայի Հաննիբալին։

Ինքնին հասկանալի է, որ Կապուայի մոտ հռոմեական հրամանատարությունը, ինչպիսին էլ լիներ Հաննիբալի իրական նպատակները, չէր կարող արհամարհել Հռոմի վրա կախված վտանգը և սենատի նամակը։ Ուստի նա որոշեց իր զորքերի մի մասն ուղարկել Հռոմ (15 հազար հետևազորային և 1000 հեծյալ)։ Կապուացիների դեմ մղված մարտերում վիրավորված Ապպիոս Կլավդիոսը չէր կարող գլխավորել այդ արշավանքը, մանավանդ որ անհրաժեշտ էր շտապել, և այդ պատճառով հրամանատարությունն իր վրա վերցրեց Քվինտոս Փուլվիոս Փլակոսը (Լիվիոս, 26, 8, հմմտ. Ապպ. մոտ, Հաննիբ., 40)։ Այսպիսով Հաննիբալի մտահղացումը սոսկ մասնակիորեն իրագործվեց. նրան այդպես էլ չհաջողվեց հռոմայեցիներին ստիպել վերացնելու Կապուայի պաշարումը[32]։

Այն լուրը, որ Հաննիբալը գիմում է Հռոմի վրա, և առանձնապես կարթագենական մեծ զորքի մոտենալու մասին՝ Փրեգելեից արագ տեղ հասած հեծելակի հաղորդումը, քաղաքում հսկայական տագնապ առաջացրեց։ Մարդիկ վազում էին փողոցներով, նորություններ և լուրեր հաղորդում միմյանց, իրականին միահյուսելով ամեն տեսակ ստահոդ պատմություններ, ամենուրեք տարածելով սարսափ ու իրարանցում։ Օրինակ, պատմում էին, որ կարթագենցին միայն այն պատճառով է

համարձակվել դիմել Հռոմի վրա, որ նա արդեն ոչնչացրել է Կապուայի պարիսպների տակ կանգնած լեգեոնները (Պոլիբիոս, 9, 6, 2)։ Տներից լսվում էին կանացի լացի ձայներ, փողոցներում մի տաճարից մյուսն էին վազում ընտանիքների պատկառելի մայրերը և իրենց մազերով ծածկում էին զոհարանների աստիճանները, ձեռքերը կարկառում աստվածներին, որպեսզի սրանք քաղաքը պատշպանեին թշնամուց և անվնաս պահեին հռոմայեցի կանանց ու երեխաներին (Պոլիբիոս, 9, 6, 2—3)։ Այս քաոսում, Լիվիոսի ասելով (26, 9), կաղմակերպող ուժ էին սենատն ու մագիստրատները։ Սենատն անընդհատ մնում էր ֆորումում, այն դեպքի համար, եթե պահանջվեր նրա որոշումը. այնտեղ էին գալիս բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին և ֆիզիկական հնարավորություն ունեին մասնակցելու պաշտպանությանը, հրամաններ էին ստանում և մեկնում էին իրենց պարտականությունները կատարելու։ Ըստ Ապպիանոսի պատմածի (Հաննիբ., 39), բոլոր նրանք, ովքեր զենք կարող էին կրել, պահպանում էին դարպասները. ծերունիները պաշտպանում էին պարիսպները, կանայք և երեխաները մատուցում էին քարեր և նետող սարքեր (հմմտ. նաև Պոլիբիոսի մոտ, 9, 6, 3)։ Մինչև Փուլվիոսի մոտենալը (տեղեկություն ստանալով դեպի Հռոմ նրա շարժվելու մասին, սենատը, որպեսզի նրան չզրկի քաղաքի շրջագծի սահմաններում հրամանատարի իշխանությունից[133], որոշեց նրան տալ կոնսուլի իրավունքներ և լիազորություններ), հռոմեական իշխանությունները կայազորներ տեղակայեցին բերդում, կապիտոլիումում, քաղաքի շրջապարիսպների վրա, ինչպես նաև Հռոմի հեռավոր մատույցներում՝ էսուլա բերդում և Ալբանական բլրի վրա (Լիվիոս, 26, 9)։ Հայտնի չէ, թե ինչքանով են արժանահավատ Ապպիանոսի այն տեղեկությունները (Հաննիբ., 39), ըստ որոնց, երբ Հաննիբալը ձեռնարկեց իր արշավանքը, Հռոմում բավականաչափ ուժեր չկային պաշտպանության համար։ Դրանք, համենայն դեպս, հակասում են Լիվիոսի և Պոլիբիոսի տեղեկություններին։ Համաձայն Պոլիբիոսի (9, 6, 6) տվյալների, կոնսուլներն հենց այդ պահին ավարտեցին մի լեգեոնի կազմավորումը և զբաղվեցին մյուսի ստեղծմամբ։

Մինչդեռ Հաննիբալն ու Փուլվիոսը շտապում էին դեպի Հռոմ։ Փուլվիոսը փոքր-ինչ ուշացավ Վորտուրնոսն անցնելիս. Հաննիբալն այրեց գետանավերը, և հռոմայեցիները շտապ լաստանավեր կառուցեցին. փայտանյութը չէր բավականացնում։ Մինչև այդ դժվարության հաղթահարումը, պետք է շատ ժամանակ անցներ։ Իսկ Հաննիբալը գնում էր դեպի հյուսիս, իր ճանապարհին ավերելով ամեն ինչ և գրեթե չհանդիպելով դիմադրության։ Միայն այն ժամանակ, երբ նա մտավ Փրեգելեի տարածքը և մոտեցավ Լիրիս գետին, նրա շարժումը փոքր-ինչ դանդաղեց, քանի որ կամուրջն ավերված էր։ Անխնա ավերելով Փրեգելեն և վերականգնելով գետանցարանը, Հաննիբալը շարունակեց իր ճանապարհը դեպի Լարիկե, այնուհետև, մի կողմ թողնելով Ալբիդոսը՝ դեպի Տուսկուլում, իսկ այնտեղից՝ դեպի Գաբիում և վերջապես բանակեց Պուպինիումում, Հռոմից 8 մղոն հեռավորության վրա (Լիվիոս, 26, 9)[134]։ Մոտավորապես նույն այդ ժամանակ, վերջապես հաղթահարելով Վոլտուրնոսը և այլևս ոչ մի խոչընդոտի չհանդիպելով, Հռոմ ժամանեց Փուլվիոսը, որը Կապենիումյան դարպասներով մտավ քաղաք և տեղավորվեց Էսքվիլինեյան և Կոլինիումյան դարպասների միջև։ Փուլվիոսի և իր զոկատի հայտնվելը հռոմեական իշխանություններին հարկադրեց ինչ-որ չափով վերանայել ավելի վաղ արված կարգադրությունները։ Այժմ որոշվեց, որ կոնսուլներն իրենց զորքերը տեղավորելու են Կոլինիումյան և Էսքվիլինեյան դարպասների միջև, այսինքն՝ փաստորեն միանալու են Փուլվիոսին։ Կապիտոլիումում և բերդում եղած զորամիավորումների հրամանատարությունը հանձնարարեցին քաղաքային պրետոր Գայոս Կալպուրնիոսին։

Իսկ Հաննիբալն ավելի մոտեցավ Հռոմին։ Այժմ նա բանակեց Անիոնոս գետի մոտ, քաղաքից 3 մղոն (40 ասպարեզ, ըստ Ապպիանոսի (Հաննիբ., 39), 32 ասպարեզ, ըստ Պոլիբիոսի (9, 5, 9)) հեռավորության վրա, ապա 2000 հեծյալների գլուխ անցած՝ սլացավ Կոլինիումյան դարպասների ուղղությամբ շրջազննում կատարելու համար։ Նա արդեն մոտեցել էր Հերակլեսի տաճարին և հետազոտում էր քաղաքային դարպասներն ու փողոցների դասավորությունը, երբ Փուլվիոսը նրա դեմ ուղարկեց մի հեծելաջոկատ և պունիկացիներին հարկադրեց հեռանալ իրենց բանակատեղը (Լիվիոս, 26, 10)։

Հաննիբալը դարպասների մոտ էր։ Թվում էր, թե բովանդակ Իտալիան շունչը պահած անշարժացել էր սպասման մեջ։ Բուն Հռոմում մերթ այստեղ, մերթ այնտեղ տագնապ էր առաջանում, սկսվում էր խուճապը, մարդիկ իրարանցման մեջ սպասում էին, որ մարտերն ուր որ է կսկսվեն քաղաքի փողոցներում։ Առանձնահատուկ տագնապ հարուցեց հեռալյալ միջադեպը։ Հռոմում այն պահին, երբ Հաննիբալը մոտեցավ նրա պարիսպներին, Ավենտինումի վրա կային մոտավորապես 1200 նումիդիական հեծյալ փախստականներ։ Քանի դեռ Կոլինիումյան դարպասների մոտ ընդհարում էր տեղի ունենում հռոմեական և կարթագենական հեծելազորների միջև, սենատն այդ փախստականներին հրամայեց կենտրոնանալ Էսքվիլինեում, կարծելով, որ նրանք մյուսներից ավելի լավ կարող են կռվել այնտեղ, ձորերի, այգիների, գերեզմանների ու առուների մեջ։ Երբ փախստականները բլրից ցած իջան, բնակչությունը, չգիտենալով, թե

ինչ է պատահել, որոշեց, որ Ավենտիումն արդեն գրավել են կարթագենցիները։ Վազելով դեպի տներն ու շինությունները, մարդիկ հարձակվում էին նումիդիացիների վրա, նրանց վրա նետելով քարեր ու տեգեր, և ամենափոքր իսկ հնարավորություն չկար բացատրելու, թե ինչ է պատահել և հանդարտեցնելու ժողովրդին։ Այդպիսի պայմաններում (բացի այդ, քաղաքը լեփլեցուն էր փախստականներով, նրանց սայլերով ու անասուններով) իշխանությունները դիմեցին ծայրահեղ միջոցառման։ Բոլոր նախկին դիկտատորներին, կոնսուլներին և ցենզորներին տրվեց իմպերիում, այսինքն՝ բարձրագույն ռազմավարչական իշխանության լիազորություններ՝ կարգը պահպանելու համար, մինչև քաղաքից թշնամու հեռանալը (Լիվիոս, 26, 10)։

Հաջորդ օրը Հաննիբալն անցավ Անիոնոսը և ճակատամարտի մեջ մացրեց իր բոլոր ուժերը։ Փուլվիոսն ու կոնսուլները նույնպես վճռեցին չխուսափել ճակատամարտից։ Երկու բանակներն արդեն դասավորվել էին և պատրաստվում էին մարտի։ Հանկարծ տեղաց կարկտախառն սոսկալի անձրև, որը թե՛ հռոմայեցիներին, թե՛ կարթագենցիներին այնպիսի խղճուկ կացության մատնեց, որ նրանք հազիվհազ հասան մինչև իրենց ճամբարները։ Հաջորդ օրը կրկնվեց նույնը, և պունիկյան ճամբարում լուրեր սողոսկեցին, թե Հաննիբալին ասուվածներն են խանգարում պատերազմելու. ասում էին, թե իբր Հաննիբալն ինքը բացականչել է. երբեմն խելքը, երբեմն բախտը իրեն չի բավականացնում՝ Հռոմը գրավելու համար (Լիվիոս, 26, 11)։ Հավանաբար այս միշադեպը հիմք է ծառայել Պոլիբիոսի այն պատումի համար, թե քաղաքի առջև շարված կոնսուլական զորքերը կանգնեցրին Հաննիբալին, երբ նա շարժվում էր Հռոմի վրա (9, 6, 8—10)։

Մինչ այդ Հաննիբալին մեկն զեկուցեցին երկու իրադարձության մասին, որոնք բացառիկ ազդեցություն թողեցին նրա վրա։ Նախ նա իմացավ, որ մինչ ինքը կանգնած է Հռոմի պարիսպների տակ, հռոմեական կառավարությունը Իսպանիա է ուղարկել լրացուցիչ զորամիավորումներ։ Հռոմայեցիների ռազմաքաղաքական այդ ցույցը պարզ դարձրեց, որ նա այդպես էլ իր նպատակներից ոչ մեկին չհասավ։ Թեև Փուլվիոսը մեկնեց Հռոմ, հռոմեական զորքի մի ինչ-որ մասի հետ, որը կանգնած էր Կապուայի տակ, նախկինի պես շարունակվեց այդ քաղաքի պաշարումը։ Ո՛չ իրեն և ո՛չ էլ կապուացիներին այնպես էլ չհաջողվեց հաղթանակ տանել. հռոմեական կառավարությունը բոլորովին էլ չի վախեցել և նույնիսկ իր զինվորներին ուղարկում է ռազմական գործողությունների հեռավոր, անդրծովյան թատերաբեմերը, ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, որ նա՝ Հաննիբալը, կանգնած է հենց Կարթագենի դարպասների մոտ։ Երկրորդ, Հաննիբալն իմացավ, որ այն գաշտը, որտեղ բանակել էր ինքը և որը պատերազմի իրավունքով պատկանում էր իրեն, ինչ-որ մեկը, հավանաբար դրա իրավատերը, սովորական գնով այն վաճառել է Հռոմում. գնողի վրա ոչ մի ազդեցություն չէր թողել այն, որ տվյալ պահին այդ գաշտին փաստորեն տիրում է ոչ թե վաճառողը, այլ Հաննիբալը։ Հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ առևտրական այդ գործարքը նույնպես սրամիտ ու փայլուն կերպով իրագործված քաղաքական ցույց էր, որը բովանդակ Իտալիային և ամենից առաջ, իհարկե, Հաննիբալին պետք է ցույց տար, թե ինչքան ամուր են Հռոմի դիրքերը և որքան հռոմայեցիները վստահ են իրենց նկատմամբ (Լիվիոս, 26, 11, 5—6)։

Հռոմայեցիները, պետք է ասել, Հաննիբալի վրա թողեցին հատկապես այն տպավորությունը, որին հետամուտ էին։ Ճիշտ է, անզոր կապադոկիայի պոռթկումի մեջ կարթագենական զորավարը հրամայեց վաճառել իր ճամբարում եղած հռոմեական դրամափոխների կրպակները (Լիվիոս, 26, 11, 7)։ Սակայն նա այդպես էլ չհամարձակվեց այլևս Փուլվիոսին առաջարկել պատերազմելու Հռոմի պարիսպների տակ. սկզբում նա իր ճամբարը տեղափոխեց Տուտիոս գետի մոտ, Հռոմից 6 մղոն հեռավորության վրա, իսկ այնուհետև, կողոպտելով քաղաքի շրջակայքը (Պոլիբիոս, 9, 6, 10), այդ թվում նաև Փերոնիայի պուրակում եղած տաճարը, հեռացավ Ապենինյան թերակղզու հարավը (Լիվիոս, 26, 11)[135]։ Հռոմում Հաննիբալի նահանջն ընկալեցին որպես «ետ դարձնող» (Rediculus) կամ «Պահապան—ետ դարձնող» (Tutunus Rediculus) աստծու կատարած հրաշք (Փեստ., 282). վերջինիս զոհարան կանգնեցրին այնտեղ, որտեղից կարթագենական ահեղ զորավարը սկսել էր իր շարժումը դեպի հարավ[136]։

Հաննիբալի հռոմեական արշավանքն ավարտվեց ռազմաքաղաքական ծանր պարտությամբ, թեև քաղաքի պարիսպների տակ փոքր-իսկ լուրջ մարտեր տեղի չունեցան (թերևս հենց այդ պատճառով), իսկ հակառակորդները միայն փորձեցին միմյանց։ Այն ցույց տվեց, որ Հաննիբալը լուներ պատերազմը վարելու լավ կշռադատված պլան և ոչ էլ թշնամու նկատմամբ նոր լուրջ հաղթանակ տանելու կամ գոնե պաշարումից Կապուայի ազատագրման և փոքր-ինչ շոշափելի բեկման հասնելու համար ուժեր։ Ինչ վերաբերում է Կապուային, ապա նրա ճակատագիրը կանխորոշված էր։ Հաննիբալն, ըստ երևույթին, շատ չէր տրրվում նրա ապագայի մասին տաղտկալի խորհրդածությունների, վճռականապես ամբողջովին ջնջեց նրա հետ կապված իր բոլոր հույսերը, և

այն ժամանակ, երբ Փուլվիոսը Հռոմից վերադառնում էր Կապուա, շարժվեց Լուկանիայի միջով (այդպես է նաև Ապպիանոսի մոտ (Հաննիբ., 43), որը գրում է, թե Հաննիբալը Լուկանիայում մնացել է ձմռան պատճառով) դեպի Բրուտիում և այնուհետև Ռեգիում, դեպի Մեսսինական նեղուցը (Լիվիոս, 26, 12, 2)։ Ըստ Պոլիբիոսի (9, 7, 7), այդ արշավանքի ժամանակ Հաննիբալը հարձակվեց իրեն հետապնդող կոնսուլական լեգեոնների վրա և լուրջ վնաս հասցրեց նրանց (հմմտ. նաև Ապպ. մոտ, Հաննիբ., 41—42)։ Ռազմական տեսակետից կատարելապես աննպատակ այս շարժումը ցույց տվեց, որ կարթագենական զորավարը ներքուստ արդեն հաշտվել է Կապուայի անկման ու կորստյան հետ, այդ իրադարձության բոլոր հետևանքներով հանդերձ։

Կապուայում Հաննիբալի հեռացումը Բրուտիում մեկնաբանեցին միայն մի իմաստով, այնպես, ինչպես և պետք էր բացատրել. կարթագենցիները, հուսահատվելով քաղաքը փրկելու իրենց փորձերի մեջ, այն թողնցին բախտի քմահաճույքին։ Հռոմայեցիները կարող էին հույս ունենալ, որ այժմ խռովարար կապուացիները խելքի կգան, կդադարեցնեն անօգուտ դիմադրությունը և կփորձեն համաձայնության եկր գտնել հռոմեական կառավարության հետ, որը կամենում էր ընդդծել թե՛ իր խաղաղասիրությունը, թե՛ անցյալը մոռանալու իր պատրաստակամությունը։ Ի կատարումն սենատի որոշման, պաշարող բանակի հրամանատարներից մեկը (Փուլվիոսը) հրապարակեց հրաման այն մասին, որ Կապուայի բոլոր այն քաղաքացիները, որոնք մինչև նշանակված ժամկետը կանցնեն Հռոմայեցիների կողմը, չեն հետապնդվի Հռոմի դեմ իրենց կատարած հանցագործությունների համար։ Դատելով այն բանից, թե Լիվիոսը (26, 12) ինչպիսի ձևակերպումներով է մեջբերում այդ հրամանը, հռոմեական հրամանատարությունը Կապուային խոստանում էր «ներում» և դաշնակցային հարաբերությունների վերականգնում։ Սակայն, չնայած Հաննիբալի դավաճանությանը և հետագա պայքարի բացարձակ անհեռանկարայնությանը, Կապուան մերժեց Հռոմի հաշտարար վերաբերմունքը. չեղավ մի դեպք, վկայում է Լիվիոսը (26, 12), որ կապուացիներն անցնեին հռոմեական ճամբարը։

Լիվիոսը Կապուայի քաղաքացիների այդօրինակ վարմունքը բացատրում է ոչ այնքան նրանց «հավատարմությամբ» (Հաննիբալի՞ն, հայրենիքի՞ն), որքան երկյուղով (հմմտ. նաև Դիոդորոսի մոտ, 26, 17)։ Այնուամենայնիվ, թվում է, որ մենք իրավունք ունենք կասկածելու այս պատումի արժանահավատությանը, որն ամենայն հավանականությամբ ծագում է հռոմեական պաշտոնական մեկնակերպից, մանավանդ որ այդտեղ շարադրված հրամանը, ինչպես այն հաղորդում է ինքը Լիվիոսը,

ներում էր խոստանում անկախ կատարված արարքների ծանրությունից ու բնույթից։

Հետազոտողի տրամադրության տակ եղած նյութը թույլ է տալիս այլ կերպ մոտենալ խնդրին։ Լիվիոսն ինքը հետևյալ ձևով է բնութագրում Կապուայում ստեղծված դրությունը. ավագանին թողել էր պետական գործերը, և հնարավոր չէր նրան խորհրդի հավաքել. իշխանությունը անարժան մարդու ձեռքերում էր. այդ տարի Կապուայում մեդիքս տուտիկոս էր Սեպիոս Լեսիոսը, որը դուրս էր եկել տեղի չքավոր խավից (Լիվիոս, 26, 6)։ Ո՛չ ֆորումում, ո՛չ հասարակական վայրերում ավագանին չէր երևում և, փակվելով տներում, սպասում էր իր և քաղաքի ճակատագրին։ Բոլոր գործերի վարումը հանձնարարվեց Կապուայում պունիկյան կայազորի հրամանատարներ Բոստարին և Հաննոնին (Լիվիոս, 26, 12)։ Եթե մի կողմ թողնենք այն գունազարդումը, որ այդ փաստերին տվել է մեր աղբյուրը, կարելի է հավաստի համարել, որ Կապուայում իշխանությունը գտնվում էր կարթագենական հրամանատարության և պլեբեյական զանգվածների ներկայացուցչի՝ մագիստրատի ձեռքերում. ավագանին կա՛մ ինքն էր գործից ետ քաշվել (համենայն դեպս նրանք, ովքեր չէին կամենում մասնակցություն ունենալ հակահռոմեական գործողություններին), կա՛մ նրան հեռացրել էին, սակայն, բոլոր պարագաներում չէր մասնակցում քաղաքի կառավարմանը։ Այն հանգամանքը, որ նույնիսկ Հռոմի կողմը հակված «սենատորները» (իսկ այդպիսիներ քաղաքում անշուշտ կային) չէին օգտվում հռոմայեցիների երաշխիքներից ու խոստումներից, միայն մի բանով կարելի է բացատրել. թե՛ Բոստարը, թե՛ Հաննոնը և թե՛ Սեպիոս Լեսիոսը այնպիսի իրավիճակ էին ստեղծել, որի պայմաններում հանձնման վերաբերյալ միտքն իսկ անհնարին էր թվում։ Դժվար չէ հասկանալ նրանց դրդապատճառները։ Կարթագենցիները չէին կամենում գերության գնալ, կապուացի պլեբեյները չէին ցանկանում իրենց քաղաքը մատնել հռոմեական զինվորների բացարձակ կողոպուտին, մանավանդ որ հռոմեական տիրապետության վերականգնումը հանգեցնելու էր իշխանության գլուխ կապուական արիստոկրատիայի այն մասի անցմանը, որի վրա միշտ հենվում էին հռոմայեցիները։

Պաշարվածները հույս կարող էին տածել միայն դրսի օգնության նկատմամբ։ Բոստարն ու Հաննոնը որոշեցին նամակով դիմել Հաննիբալին։ Նրանք հանդիմանեցին նրան այն բանի համար, որ նա թշնամուն է հանձնել ոչ միայն Կապուան, այլև իր զինվորներին։ Եթե նա վերադառնա Կապուայի մոտերքը և այստեղ սկսի եռանդուն ռազմական գործողություններ, ապա կապուացիները նույնպես պատրաստ կլինեն ար-

տագրոհի դիմելու։ Կարթագենցիներն Ալպերն անցել են ոչ թե Ռեգիումի կամ Տարենտոնի դեմ մաքառելու, այլ Հռոմի դեմ պատերազմելու համար։ Որտեղ հռոմեական լեգեոններն են, այնտեղ էլ պետք է լինեն պունիկյան զորքերը։ Կարթագենցիներն այս նամակը հանձնեցին մի խումբ նումիդիացիների, որոնք փախստականների անվան տակ ներկայացան հռոմեական բանակատեղ, իսկ այնտեղից պետք է դաղտագողի անցնեին Հաննիբալի մոտ։ Սակայն այդ կծու նամակը չհասավ հասցեատիրոջը։ Կապուացի ինչ-որ մի կին՝ նումիդացիներից մեկի սիրուհին, մտահոգման մասին հաղորդեց թշնամական հրամանատարությանը։ Բռնելով ամբողջ խմբին, ինչպես և բանակատեղում թափառող փախստական ուրիշ նումիդիացիների, հռոմայեցիները կտրեցին նրանց ձեռքերը և դուրս քշեցին (Լիվիոս, 26, 12)։

Լեսիոսը որոշեց ինչ գնով էլ լինի սենատ գումարել։ Ինչպես պատմում է Լիվիոսը (26, 13), հարկ եղավ, որ նա սպառնա, թե կդիմի հարկադիր բերման, որպեսզի սենատորներին ստիպի հավաքվելու։ Համենայն դեպս, սենատը միահամուռ արտահայտվեց անհապաղ անձնատրության օգտին։ Վիբիոս Վիրիոսը, որ բոլորովին վերջերս կապուացիներին համոզում էր լուծել Հռոմի հետ ունեցած դաշինքը, այժմ ասում էր, որ հռոմայեցիները դաժան հաշվեհարդար են տեսնելու Կապուայի նկատմամբ. նա ինքը, չսպասելով խայտառակ մահապատժի, գերադասում է կամովին հեռանալ կյանքից (ի դեպ ասած, Վիրիոսը և նրա կողմնակիցները հենց այդ ժամանակ թունավորվեցին (Լիվիոս, 26, 14))։ Հանձնման շուրջը բանակցություններ վարելու համար հռոմեական բանակատեղ ուղարկվեցին կապուացի պատվիրակներ (նույն տեղը), իսկ հաջորդ օրը լայն բացվեցին Յուպիտերին նվիրված քաղաքային դարպասները, և հռոմեական զորքերը մտան Կապուա։ Պունիկյան կայազորը գերի վերցվեց, կալանվեց, և այն սենատորները, որոնք հայտնի էին որպես Հռոմից անջատվելու նախաձեռնողներ, պահակների հսկողության տակ տեղավորվեցին Կալեում և Թեանումում։ Այնտեղ Գուլվիոսն էլ հենց հաշվեհարդար տեսավ նրանց հետ, քամահրելով Ապպիոս Կլավդիոսի առարկությունները և նույնիսկ ուշադրություն չդարձնելով պրետոր Գայոս Կալպուրնիոսի նամակին և հռոմեական սենատի որոշմանը. սենատը ինքն էր կամենում վճռել կապուական ավազակների ճակատագիրը։ Գուլվիոսը նամակը բացեց այն ժամանակ, երբ արդեն ուշ էր (Լիվիոս, 26, 15, հմմտ. Օրոսիոսի մոտ, 4, 17, 12, Ապպ., Հաննիբ., 43)։ Մյուս մեծատոհմիկները կա՛մ մնացին բանտերում, կա՛մ պահակների հսկողության տակ ուղարկվեցին լատինական կարգավիճակ ունեցող քաղաքները. բազում կապուացիների վաճառեցին ստրկության։ Քաղաքի

ներսում թույլ տվեցին մնալու այն քաղաքացիներին, որոնք նախկինում քաղաքացիական իրավունքներ չունեին՝ ազատ արձակված ստրուկներին, մանր առևտրականներին, արհեստավորներին (այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր, դրանից առաջ, Կապուայում չունենալով քաղաքացիական իրավունքներ, չէին կարող ազդել դեպքերի ընթացքի վրա), սակայն քաղաքային-հողերը և հասարակական շենքերը հայտարարեցին հռոմեական ժողովրդի սեփականություն (հմմտ. Ապպ. մոտ, Հաննիբ., 43)։ Հաղթողները թույլ չտվեցին Կապուայում ինքնավարության նման որևէ բան կազմակերպել. քաղաքում դատ ու դատաստան էր անելու ամեն տարի փոփոխվող հռոմեական կուսակալը (Լիվիոս, 26, 16)։ Հռոմի վաղեմի մրցակիցը, որ բազում տասնամյակների ընթացքում վիճարկում էր Իտալիայի վրա նրա ունեցած իշխանությունը, Իտալիայի երկրորդ «մայրաքաղաքը» ոչնչացվեց։

Թեև Հաննիբալին դեռ վիճակված էր գրեթե տասը տարի պատերազմելու Իտալիայի տարածքում, պատերազմի արդյունքներն այնտեղ ըստ էության արդեն պարզվել էին[137]։ Նա այլևս ոչինչ չէր կարող անել այն բանի համար, որպեսզի լրջորեն, փոքր-ինչ չափով քայքայեր Ապենինյան թերակղզում հռոմեական տիրապետության հիմքերը։ Չէին բավականացնում նաև նրա մարդկային միջոցները. Ու. Կարշտեդտի հաշվարկումներով, 211 թ. (Կաննեից մոտավորապես հինգ տարի հետո) Հաննիբալը դեռևս ուներ մոտ 26 հազար զինվոր, իսկ հնարավոր է նաև, դրանից էլ պակաս[138]։

Գլուխ հինգերորդ

ՄԱՅՐԱՄՈՒՏ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
(Կապուայի անկումից մինչև Զամա)

Կապուայի անկումը Հաննիբալին զրկեց Հարավային Իտալիայի սահմաններում ամենաուժեղ և, թերևս, ամենաազդեցիկ դաշնակցից։ Իսկ այն դաժան հաշվեհարդարը, որ հռոմեական հրամանատարությունը կատարեց Կապուայի բնակչության նկատմամբ, ամբողջ Իտալիային ցույց տվեց, թե ինչպիսի ճակատագիր է սպասում նրանց, ովքեր անզգուշություն էին թույլ տվել դավաճանելու Հռոմի հետ ունեցած դաշինքին և համառորեն չէին կամենում հրաժարվել կարթագենցիների հետ ունեցած բարեկամական հարաբերություններից։ Կապուայի անկումը դրսևորեց նաև Հաննիբալի անզորությունը. նա չկարողացավ կանխել իրադարձությունների՝ իրեն համար վերին աստիճանի անբարենպաստ զարգացումը։ Զարմանալի չէ, որ Հաննիբալի հետ կապված իտալական քաղաքներում

խլրտումներ սկսվեցին. բոլորն աշխատում էին միայն հարմար առիթ կամ պատրվակ գտնել հռոմայեցիների կողմն անցնելու համար։ Այս գրությունը չափազանց խորը տագնապ էր ներշնչում Հաննիբալին. նա չէր կարող միաժամանակ ամեն տեղ լինել, որպեսզի տատանվողներին ետ պահեր դավաճանությունից։ Նա չէր կարող նաև ցրել իր զորքերը, եթե չէր կամենում Թշնամուց ավելի թույլ լինել։ Հարկ եղավ որոշ քաղաքներ լքել, իսկ մյուսներից դուրս հանել կայազորները. մի քանի տեղերից Հաննիբալը բնակչությանը գաղթեցրեց այլ վայրեր, իսկ նրանց ունեցվածքը մատնեց իր զինվորների կողոպուտին։ Այս բոլոր գործողությունների ժամանակ, երբ կարթագենցիները գրավում էին իտալիկյան քաղաքները և երբ հեռանում էին այնտեղից, մարդիկ դաժան կերպով տուժում էին Հաննիբալի զինվորների կատարած կողոպուտներից, բռնություններից և սպանություններից. վերջիններս վստահ էին, և ոչ առանց հիմքի, այն բանում, որ բավական էր հեռանալ, և բնակչությունն անմիջապես կհանձնվեր Թշնամուն (Պոլիբիոս, 9, 26, 2—9, Լիվիոս, 26, 38)։ Ապպիանոսը (Ապպ., Հաննիբ., 44) պատմում է հույժ հատկանշական մի դիպվածի մասին. Տիսիա քաղաքում (Բրուտիում) կարթագենցիների բռնությունները հանգեցրեցին այն բանին, որ այնտեղ դավադրություն կազմակերպվեց, քաղաքը հռոմայեցիներին հանձնելու նպատակով։ Դավադիրները կարողացան գերիների անվան տակ Տիսիայում կենտրոնացնել հռոմեական զինվորների մի մեծ խումբ, որը հարձակվեց պունիկյան կայազորի վրա և գրավեց քաղաքը։ Փոքր-ինչ ժամանակ անցնելուց հետո, երբ Հաննիբալն անցավ Տիսիայի մոտով, հռոմայեցիներն այնտեղից փախան Ռեգիում, և կարթագենցիները վերստին իրենց զինվորներին տեղավորեցին այնտեղ։ Դավադրության մասնակիցներին նա հրամայեց ողջակիզել։

Այնուամենայնիվ Հաննիբալը դեռևս կարող էր դիմանալ. նրա թիկունքում էին Լուկանիան և Բրուտիումը, նրան դեռևս զորավիգ էր մնում Մեծ Հունաստանը, և որ առանձնապես կարևոր է, Տարենթոնում մնում էր պունիկյան կայազորը։ Հաննիբալը նույնիսկ կարող էր Թշնամուն բավականին զգալի հարվածներ հասցնել, սպասել հարմար դիպվածի, իրադարձությունների բարեհաջող շրջադարձի։ Սակայն այժմ ամեն ինչ կախված էր նրանից, թե ռազմական գործողություններն ինչպիսի ընթացք էին ստանալու Իսպանիայում։

I

Խոսելով Պիրենեյան թերակղզում 212 թվականի պատերազմի մասին, մենք հիշատակեցինք, որ Լ. Մարկիոսի խիզախ ու ձեռներեց գոր-

ծողությունները, չնայած Գնեոս և Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնների կորստին, հռոմայեցիներին թույլ տվեցին պահպանելու Իբերի հյուսիսում եղած պլացդարմը և, հետևաբար՝ Իսպանիայի համար վերստին պայքար սկսելու հնարավորությունը։ Մենք տեսանք նաև, որ հենց այն պահին, երբ Հաննիբալը կանգնած էր Հռոմի դարպասների մոտ, սենատը հնարավոր գտավ մարտական մի քանի ստորաբաժանումներ ուղարկել Իսպանիա։ Իհարկե, դա ցույց էր, բայց ոչ միայն ցույց. հռոմեական կառավարության գործողությունները ցույց տվեցին, թե իսկապես նրա համար որքան կարևոր էր դարձել պատերազմի իսպանական թատերաբեմը։ Ըստ երևույթին, մասամբ նաև սրանով է բացատրվում սենատի հրաժարվելը՝ Լ. Մարկիոսին հաստատելու այն պաշտոնում, որտեղ նա իրեն այնպես լավ էր դրսևորել և որտեղ ընտրվել էր հրամանատարից զրկված զորայինների կողմից։ Ինքնին հասկանալի է, սենատն իրեն վիրավորված, նույնիսկ խոցված էր զգում իր իրավունքների սահմանափակման համար. բոլորին անծանոթ ինչ-որ մի Լուկիոս Մարկիոս, ճիշտ է, հեծյալ, բայց «հայր-սենատորների» կողմից չնշանակված, որին ընդամենը միայն ընտրել էին զորականները, իրեն թույլ էր տվել բոլոր տեղի ունեցածի մասին զեկուցելիս իրեն անվանել նախկին պրետոր։ Հռոմի օլիգարխիական կառավարությունը այդտեղ տեսնում էր ապագայի համար չափազանց վտանգավոր նախադեպ. եթե զորականները, սենատին շրջանցելու համար մտքներով անց են կացրել իրենց ընտրյալներին օժտելու մագիստրատի լիազորություններով, և եթե նման իրավիճակը վավերացվի, մահացու սպառնալիք կծագի սենատի իշխանության համար (հմմտ. Լիվիոսի մոտ, 26, 2)։ Այդ պատճառով Լ. Մարկիոսի գործողությունները ճանաչելով փառահեղ, սենատն այնուամենայնիվ հրաժարվեց իր պատասխանը հասցեագրել նախկին պրետոր Լուկիոս Մարկիոսին. որոշվեց ժողովրդական ժողովի համար առաջադրել այն հարցը, թե ում պետք է վստահել Իսպանիայում զորքերի (որոնք ավելի վաղ եղել էին Գնեոս Կորնելիոս Սկիպիոնի ղեկավարության տակ) հրամանատարությունը (Լիվիոս, 26, 2)։

Իսկ առայժմ, Կապուայի գրավումից շատ չանցած, սենատը Գ. Կլավդիոս Ներոնին հանձնարարեց 6000 հետևազորայինով ու 300 հեծյալով, ինչպես նաև լատինական դաշնակիցների 6000 հետևազորայինով և 800 հեծյալով անցնել Իսպանիա։ Տառակոնի մոտ ափ իջնելով և այնտեղից դիմելով դեպի Իբեր գետը, Ներոնը զորքն ընդունեց Տիբերիոս Փոնտեոսից և Լուկիոս Մարկիոսից, իսկ այնուհետև շարժվեց կարթագենցիների վրա (Լիվիոս, 26, 17)։ Հասդրուբալ Բարկայանն այդ պահին գտնվում էր Սև Քարերի մոտ, Իլիտուրգեի և Մենտիսայի միջև։

Ներոնը գրավեց այնտեղի կիրճը և դրանով իսկ դժվարին կացության մեջ դրեց Հասդրուբալին։ Վերջինս որոշեց խորամանկության դիմել և հռոմեական հրամանատարին առաջարկեց բանակցություններ սկսել. եթե իր՝ Հասդրուբալի համար երաշխավորեն ազատ անցում, ապա նա պարտավորվում է կարթագենական բոլոր զորքերը տանել Իսպանիայից։ Ներոնը պիրով կառչեց այդ առաջարկից, որն առանց կռվի հռոմայեցիներին էր վերադարձնում ամբողջ պիրենեյան պլացդարմը, այն էլ այնտեղ հռոմեական բանակի կրած ծանր պարտությունից և երկու զորավարների կորստից հետո։ Հասդրուբալը խնդրեց որոշակի խնդիրների շուրջ բանակցությունները նշանակել հաջորդ օրը. անհրաժեշտ էր ճշտել քաղաքների հանձնման պայմանները, կայազորների էվակուացման ժամկետները և պունիկական ունեցվածքը դուրս տանելը։ Համաձայնություն ստանալով, աղջամուղջը վրա հասնելուն պես, լիակատար լռության մեջ, նա սկսեց բոլոր հնարավոր ճանապարհներով դուրս տանել իր գումակը։ Հաջորդ օրը բանակցությունները շարունակվեցին. կարթագենցիները այնքան, այդ թվում նաև գործին բոլորովին չառնչվող խնդիրների քննարկում պարտադրեցին հռոմեական կողմին, որ հարկ եղավ դրանց լուծումը թողնել հաջորդ օրվան, իսկ այնուհետև շատ անգամ հետաձգել։ Մինչ այս, մինչ այն, Հասդրուբալը գիշերները դուրս տարավ իր բանակը։ Վերջապես, երբ գրեթե ամեն ինչ կատարվել էր, Հասդրուբալը վերստին Ներոնից խնդրեց բանակցությունները տեղափոխել հաջորդ օրը, քանի որ, նրա ասելով այն օրը (շաբա՞թ), երբ նշանակված էր վճռական հանդիպումը, կրոնական հիմնարկները կարթագենցիներին արգելում էին որևէ գործ կատարել։ Միևնույն ժամանակ, օգտվելով մառախուղից, Հասդրուբալը իր հեծյալների ու փղերի հետ լուռ հեռացավ անվտանգ տեղ։ Հռոմայեցիները թշնամու դատարկված ճամբարը տեսան միայն այն ժամանակ, երբ մեգը ցրվեց. Ներոնը նեղվեց նրանց եռևից, սակայն Հասդրուբալը խուսափեց մարտից, և բանը վերջացավ պունիկյան վերջապահ զորքի և հռոմայեցիների առաջապահ զորամիավորումների միջև տեղի ունեցած փոքր ընդհարումներով (Լիվիոս, 26, 17)։

Սակայն Հռոմում Ներոնի ուղարկմամբ իսպանական պատերազմի ճակատագրին վերաբերվող խնդիրը ամենևին էլ լուծված չէին համարում։ Այնտեղ անհրաժեշտ գտան զգալիորեն ավելացնել Պիրենեյան թերակղզում պատերազմող բանակի թվակազմը և իրենց մոտ ուղարկել պրոկոնսուլի՝ զորավարի, որն օժտված պետք է լիներ բարձրագույն ռազմավարչական իշխանությամբ։ Այդ հարցի քննարկման ժամանակ պարզվեց, որ իշխանությունները նույնպես չեն կարող որևէ որոշման հանգել, և ոչ

ոք չէր ձգտում զբաղեցնել այդ պաշտոնը, ոչ մեկը, բացի քսանչորսամյա (ըստ Պոլիբիոսի (10, 6, 10)՝ քսանյոթամյա) Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնից, որը բոլորովին վերջերս Իսպանիայում զոհված Պուբլիոսի որդին էր և Գնեոս Սկիպիոնի ազգականը։ Չնայած հռոմեական տեսակետից անթույլատրելի իր երիտասարդ հասակին, անսպասելի հավակնորդն ընտրվեց, բայց մեծ կասկածներով ու տատանումներով (Լիվիոս, 26, 18)։

Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն—որդու, Հաննիբալի ապագա հաղթողի, մի մարդու, որը բացառիկ դեր է խաղացել Հռոմի քաղաքական կյանքում III դ. վերջին—II դ. առաջին կեսին, անձնավորությունը հարուցել է անտիկ պատմագրության սեռուն հետաքրքրություն։ Ինչպես էլ. որ գնահատվեն նրա մասին, նրա վարքի, նրա աշխարհայացքի վերաբերյալ եղած այս կամ այն պատմությունները, հաղիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ նա եղել է վերին աստիճանի արտասովոր անձնավորություն (հմմտ. Դիոն. Կասս. մոտ. Ֆրագմ., 83) և, անկասկած, Փարիոս Դանդաղկոտի և Մարկելլոսի հետ միասին ամենաընդունակ զորավարներից մեկը, որպիսիք ուներ հռոմեական բանակը Պունիկյան II պատերազմի ժամանակ։

Սկիպիոնը ծնվել է 236—235 թթ., պատրիկական շատ նշանավոր ընտանիքներից մեկում, որից սերածները, ինչպես ցույց են տալիս Սկիպիոնների նշանավոր դամբանագրերը, III—II դդ. քաղում տասնամյակների ընթացքում ականավոր դեր են կատարել Հռոմի քաղաքական կյանքում։ Ինչպես արդեն ասվել է, Սկիպիոնները սերտորեն կապված էին Էմիլիոսների հետ. հավանաբար ավելորդ չի լինի հիշեցնել, որ Սկիպիոնների հետ մերձավորություն ունեին Սեմպրոնիոս Գրակքոսները, և որ II դ. պլեբեյական շարժումը գլխավորող նշանավոր տրիբունների մայրը՝ Կորնելիան, Հաննիբալին հաղթողի դուստրն էր, իսկ նրանց քույր Սեմպրոնիան կնության էր տրվել Սկիպիոն-Էմիլիոսին, որը սերում էր Էմիլիոսների տոհմից և որդեգրվել էր Սկիպիոնների կողմից։ Ինչպես կարելի էր տեսնել, 218 թ., երբ սկսվեց պատերազմը, Իսպանիայում հռոմեական զորքերի նոր հրամանատարի հայրը կոնսուլ էր (Սկիպիոններն այդ պահին վճռորոշ դեր ունեին հռոմեական կառավարության մեջ), իսկ ավելի ուշ իր եղբայր Գնեոսի հետ գլխավորում էր Իսպանիայում եղած հռոմեական զորքերը։ Դրա հետևանքով երիտասարդ Պուբլիոսի հավակնությունը և նրա ընտրվելը կարելի է մեկնել որպես այն բանի հայտանիշ, որ Պիրենեյան թերակղզում պատերազմ վարելն ընկալվում էր որպես Սկիպիոնների յուրատեսակ ժառանգություն։ Թերևս դրանո՞վ է բացատրվում այն իրողությունը, որ այդքան պատվավոր և պատասխանատու պաշտոնի համար ուրիշ հավակնորդներ չկային։ Միգուցե խորապե՞ս սենատորների միջավայրում վաղօրոք որոշել են Իսպանիայում հրամանատարությունը հանձնել հենց այդ թեկնածուին, մերժելով բոլոր մյուսներին, այդ թվում իրենց լավ գրսևորած և փորձառու զորավարներին[139]։

Այս առնչությամբ ուշագրավ են Ապպիանոսի պատմածի (Ապպ., Իսպ., 18) որոշ մանրամասներ։ Համաձայն նրա պատմի, ելույթ ունենալով ժողովրդական ժողովում, երիտասարդ հավակնորդը ճամարտակությամբ խոսեց իր հոր և հորեղբոր մասին և, ողբալով նրանց կորուստը, հայտարարեց, որ ինքն անձամբ կարող է վրիժահատույց լինել նրանց և հայրենիքի համար. դեռ ավելին (նա այժմ ճառում էր ասես աստվածային ներշնչման պոռթկումի մեջ), նա գրավելու է ոչ միայն Իսպանիան, այլև Աֆրիկան և հենց Կարթագենը։ Ոմանք,— գրում է այնուհետև Ապպիանոսը,— գտան, որ այդ խոսքերը

երիտասարդական անխոհեմ ինքնագովություն են։ Սակայն մարդուրդին (անշուշտ, ի նկատի ունի պլեբեյական զանգվածը) Սկիպիոնը սարսափ ներշնչեց, և, բացի այդ, Սկիպիոնների կլիենտները ողջունեցին նրա ճառերը, և նա ընտրվեց Իսպանիայում հռոմեական զորքերի հրամանատար, այնպես, որ ասես թե խիզախ արարքներ էր կատարել և արժանի անձնավորություն էր։ Սենատորները (ծերերը, գրում է Ապպիանոսը) հակված էին խոսելու երիտասարդ Սկիպիոնի թեթևամիտ անխոհեմության մասին։ Իրազեկ դառնալով այդ եզրույթների մասին, Սկիպիոնը հայտարարեց, որ պաշտոնից կհրաժարվի, եթե ծերերից մեկնումները ստանձնի այն։ Ոչ ոք չդանվեց։ Բանը դրանով էլ վերջացավ։ Ապպիանոսի վկայությունից, անկասկած, հետևում է, որ սենատորական շրջաններում Սկիպիոնի դեմ ընդդիմադրություն կար (և իրոք, այդ հաղորդումը ծագում է նրա նկատմամբ բացահայտորեն ամբարտավանական ավանդությունից), և որ նա ընտրվեց գլխավորապես դեմոկրատական շրջանների աջակցության շնորհիվ։ Այն ենթադրությունը, որ իբր սենատը կանխատես էր որոշել Սկիպիոնի նշանակումը, Ապպիանոսի տրվյալների լույսի տակ հիմնազուրկ է դառնում։

Համենայն դեպս, Սկիպիոնի ընտրվելը Էմիլիոս-Կորնելիոս Սկիպիոնների խմբավորման քաղաքական նշանակալից հաջողությունն էր[140]։

Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի օգտին էին խոսում ոչ միայն նրա ծագումը, կամ միայն Սկիպիոնների անվան հեղինակությունը։

Պատմում էին, որ տասնյոթամյա հասակում նա մասնակցել է Տիկինոսի մոտ մղված ճակատամարտին և այնտեղ փրկել է իր հոր կյանքը, այսինքն՝ դրսևորել է նույն այն «բարեպաշտությունը», որը հռոմեական բարոյականությունը պահանջում էր որդուց (տե՛ս վերևում (Պոլիբիոս, 10, 3, 2—6, Լիվիոս, 21, 46, 7—8, Դիոն Կասս., Ֆրագմ., 38)։ Այս սրտաշարժ պատմությունը, որ բխել է հենց Սկիպիոններից և լայնորեն տարածվել նրանց կողմից (Պոլիբիոսն ինքը, մոտիկ լինելով Սկիպիոններին, վկայակոչում է Գայոս Լելիոսին՝ երիտասարդ հերոսի ամենամերձավոր ընկերներից մեկին, որը նրա օրոք կարևորագույն պաշտոններ էր վարում՝ լեգատ, հեծելազորի պետ և այլն) մթագնել է լիգուրիացի ստրուկի կողմից կոնսուլի փրկման վերաբերյալ Կելիոս Անտիպատրոսի մոտ եղած մյուս պատմությունը (Լիվիոս, 46, 10)[141]։ Սակայն այդ դեռևս բոլորը չէ։ Սկիպիոնը, որպես զինվորական տրիբուն, մասնակցել էր Կաննեի մոտ մղված ճակատամարտին. նա եղել էր նրանց մեջ, ովքեր փրկվել էին Կանուսիումում, և Ապպիոս Կլավդիոս Պուլքերի հետ ստանձնել էր հռոմեական հուզախռով և ընկճված զինվորների հրամանատարությունը. նա Լոկիոս Կեկիլիոս Մետելլոսին և նրա գործակիցներին խանգարել էր իրագործելու իրենց դավաճանական մտահղացումը՝ Հռոմը թողնելով բախտի քմահաճույքին, փախչել ուր աչքը կկտրի (տե՛ս վերևում (Լիվիոս, 22, 53, Դիոն., Կասս., Ֆրագմ., 28, Օրոսիոս, 4, 16, 6, Փրոնտիոս, 4, 7, 39, Նշան., 49, 5—6)։

Այսպիսով, ավանդությունը (իսկ նրա տեղեկություններն ու գնահատականներն, անկասկած, ծագում են Պունիկյան II պատերազմի ժամանակից) Սկիպիոնին պատկերում է որպես իսկական հռոմայեցի, բոցաշունչ հայրենասեր, քաջակորով զորական, որը ջանադիր կերպով, հաճախ կյանքի համար վտանգավոր պայմաններում, պահպանում էր

Հռոմի հզորությունն ու փառքն ստեղծողների բարոյական սկզբունքները։ Այդպիսի համբավն ինքնըստինքյան կարող էր ապահովել Սկիպիոնի ընտրվելը։ Սակայն նրա զինանոցում ևս մի հզորագույն միջոց կար։

Խոսելով այդ պահին հռոմեական պետության ունեցած ամենապատասխանատու պաշտոններից մեկում Սկիպիոնի ընտրվելու մասին, Տիտոս Լիվիոսը (2, 19, 3—5) գրում է. «Սկիպիոնը զարմանք էր հարուցում ոչ միայն իր իսկական արիություններով, այլև պատանեկական տարիներից տարբեր եղանակներով ի ցույց էր դնում դրանք. ամբոխի առջև շատ բաներ էր կատարում, մղված կա՛մ գիշերային տեսիլքներից, կա՛մ աստվածային ներշնչումից, կա՛մ այն պատճառով, որ ինքը նույնպես ինչ-որ չափով սնահավատ էր, կա՛մ որպեսզի նրա կարգադրություններն ու մտահղացումները, որպես յուրատեսակ պատգամախոսից ի վերուստ տրված, անհապաղ կատարվեին։ Սկզբից ևեթ մտքերը նախապատրաստելով դրան, նա այն ժամանակվանից, ինչ տղամարդու պարեգոտ հագավ, ոչ մի անգամ որևէ հասարակական կամ մասնավոր գործ չիատարեց, քանի դեռ չէր գնացել Կապիտոլիում և, մտնելով տաճար, չէր տեղավորվել և որոշ ժամանակ չէր անցկացրել այնտեղ՝ մեծ մասամբ մենության, առանձնության մեջ (հմմտ. նաև Դիոն. Կասս. մոտ, Ֆրագմ., 39), որն անշուշտ ծագում է Լիվիոսից (26, 19, 6)։ Այդ սովորությունը, ավելացնում է Լիվիոսը, Սկիպիոնը պահպանեց իր կյանքի ամբողջ ընթացքում։ Եվ այնուհետև (26, 19, 8). «Նա երբեք չէր խորհրդակցում այդ հրաշքների նկատմամբ ունեցած իր հավատը (ի նկատի է առնվում նրա հրաշածին լինելու վերաբերյալ առասպելը. այդ մասին մենք մտադիր ենք խոսել առաջիկայում— Ի. Կ.), այլև նա ավելի էր ամրապնդում այն, առանձին վարպետությամբ ոչինչ չէր ժխտում և չէր հաստատում»։ Լիվիոսի տված բնութագիրը հույժ անորոշ է. մեր առջև է կա՛մ անբասիր մի պատանի, որն անկեղծորեն հավատում է աստվածներին և աստվածային նշանակներին, որոնք կարգավորում են նրա ողջ կյանքը, կա՛մ ճարպիկ, սառն ու անպատկառ մի պաշտոնյա, որը հմտորեն շահագործում է ամբոխի կրոնական զգացումներն ու սնահավատությունը։ Պոլիբիոսը (10, 2, 12—13) հարկ է համարում հերքել Սկիպիոնի աստվածային ներշնչման վերաբերյալ պատմությունները և հոռետեսորեն տրամադրված իր ընթերցողին նշանավոր հռոմայեցու գործողությունները բացատրում է զգաստամիտ հաշվարկով. «Պուբլիոսը... ամբոխին միշտ ոգեկոչում էր, որ ինքն իր ծրագրերը մտահղանում է աստվածային ներշնչման ազդեցության տակ, ենթականերին նախապատրաստելով, որպեսզի նրանք ավելի համարձակորեն և ավելի մեծ հաճույքով դիմեն վտանգալից գործին։ Իսկ որ նա յուրաքանչյուր գործ կատարում էր, կանխապես հաշվելով ու կշռադատելով, և այդ պատճառով ամեն ինչ ավարտվում էր այնպես, ինչպես նա էր հաշվարկել, այդ պարզ կդառնա հետագա շարադրանքից»։

Ինչ կերպ էլ որ լիներ, Սկիպիոնի վարվելակերպը հռոմեական հասարակությանը պետք է ցույց տար նրա խորը կրոնասիրությունը, որում նա թերևս չէր զիջում նաև հենց Փարիոս Դանդաղկոտին։ Այն պետք է ցույց տար, որ Սկիպիոնը չէր պատկանում վճռականապես տրամադրված այն տարրերին, որոնք, թիչ էր մնում, որ Հռոմը կործանման հասցնեին։ Ինչով էլ որ բացատրվեր Սկիպիոնի վարվելակերպը, այն վերին

աստիճանի նպաստավոր վարկ էր ստեղծում նրա համար և, իհարկե, օժանդակում էր դեպի իշխանություն նրա շեշտակի առաջխաղացմանը։

Սկիպիոնի առանձին «կապերն» աստվածների հետ, վերջիվերջո հանգեցրին նրա աստվածային ծագման վերաբերյալ լուրերին։

Պատմում էին, որ նրա մոտ ննջարանում հաճախ տեսնում էին մի օձ, որը մարդկանց հայտնվելուն պես անկողնի վրայից ցած էր ընկնում և անհայտանում (Լիվիոս, 26, 19, 7, Նշան., 40, 1), որ Սկիպիոնը Յուպիտերի որդին է (Նշան., 49, 1—2, հմմտ. Դիոն. Կասս. մոտ., Ֆրագմ., 39) և որ, երբ նա գիշերները մենակում էր Կապիտոլիում, շները նրա վրա չէին հաչում։ Սկիպիոնի կենսագրություններում, որոնք կազմել են Գ. Հուլիոս Կեսարի ժամանակակից Գ. Օպիոսը և Օգոստոսի ժամանակներում ապրած Հուլիոս Գիգինոսը, ինչպես նաև այդ մարդուն նվիրված ուրիշ երկերում, պատմվում է, որ ապագա զորավարի մայրը երկար ժամանակ ամուլ էր համարվում, և նրա ամուսինը կորցրել էր երեխաներ ունենալու հույսը։ Հանկարծակի պարզվեց, որ ամուսնու բացակայության ժամանակ նրա ննջասենյակում և նրա անկողնու վրա, իր կողքին պառկած է մի հսկայական օձ. նրանք, ովքեր դա տեսան, սկսեցին սարսափահար գոռալ. օձն անհայտացավ, և հնարավոր չեղավ որոնել-գտնել նրան։ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն-հայրը դիմեց հարուսպիկներին։ Նրանք պատասխանեցին, որ երեխա է ծնվելու. մի քան օր հետո կինը զգաց, որ հղի է, և տասներորդ ամսում ծնեց Հաննիբալի ապագա հաղթողին (Գելլ., 6, 1, 2—4)։ Արդեն Լիվիոսը (26, 19, 7) այս ավանդությունը համեմատեց Ալեքսանդր Մակեդոնացու մոր մասին եղած համանման առասպելի հետ, որը «ճիշտ նույնպես ունայն է ու անհավատալի»։ Ավլուս Գելլիոսը (6, 1, 1) նույնպես հարկ է համարում շեշտել Ալեքսանդր Մակեդոնացու մոր՝ Օլիմպիադայի, և Սկիպիոնի մոր մասին եղած պատմության նույնականությունը։

Մի կողմ թողնելով այն հարցը, թե Լիվիոսը կամ նրա աղբյուրն ինչպես են վերաբերվել տվյալ պատմությանը (իսկ Լիվիոսի վերաբերմունքը ակնհայտորեն ծաղրական, անբարյացակամ է. նա բացահայտորեն հակված չէ հավատալու բոլոր այդ զրույցներին), չքննելով նաև դրան առնչվող մյուս՝ Հռոմի մշակութային կյանքի վրա հելլենիստական ազդեցության խնդիրը, կնշենք միայն հետևյալը։ Առասպելը պետք է ցույց տար, որ ի դեմս Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն-որդու աշխարհին է ներկայացել մի նոր Ալեքսանդր, Յուպիտերի որդին, որին վիճակված է մեծ սխրագործություններ կատարել, նվաճել տիեզերքը և նրան վայր գցել Հռոմի ոտքերի առաջ. ահա այն տպավորությունը, որ Սկիպիոնի մասին առասպելի հեղինակները կամենում էին արմատավորել ժողովրդի գիտակցության մեջ։ Իհարկե, Օգոստոսի դարաշրջանում աստվածային ծագման վերաբերյալ Սկիպիոնի հավակնությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը կարող էր թելադրվել կառավարական պրոպագանդայի պաշտոնական ղեկավար ցուցումներով, և դա հեշտությամբ է բացատրում Լիվիոսի դիրքավորումը։ Այդուհանդերձ բացառված չէ, որ

Լիվիոսի օգտագործած մակդիրները արտացոլում են նաև հեգնական այն կասկածանքը, որով Հռոմում դիմավորեցին Սկիպիոնի հավակնություններին[142]։

Սակայն վերջիվերջո Սկիպիոնի աստվածային ծագման վերաբերյալ լուրերը կարելի էր համարել որպես նրա իսկական կամ հմտորեն ձևացրած խորը կրոնասիրության յուրովի հատուցում։ Դրանք բացասաբար չանդրադարձան ո՛չ այդ մարդու ճակատագրի և ո՛չ էլ քաղաքական կարիերայի վրա։ Սենատը թեև առանց խանդավառության ընդունեց նրա ընտրությունը, հասկանալի է, չէր կարող հաշվի չառնել Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնի՝ հայրենիքի բարեպաշտ ու եռանդուն զավակի (որն այժմ գլխավորում էր հռոմեական պատրիկության ամենազորեղ ընտանիքներից մեկը և, բացի այդ, ձեռք էր բերել ժողովրդի աջակցությունը), ցանկությունները։ Սկիպիոնն ստացավ իր հետամտած նշանակումը՝ Իսպանիայում հռոմեական զորքերի հրամանատարի պաշտոնը։

Աղբյուրները չեն հաղորդում, թե Հաննիբալն ինչպես է արձագանքել այդ իրադարձությանը. սակայն, դատելով նրա վարմունքից, նա բացարձակորեն կարևոր նշանակություն չէր տալիս ռազմական գործողությունների իսպանական թատերաբեմին. Պիրենեյան թերակղզում գեռևս ոչնչով իրեն չդրսևորած նոր զորավարի հայտնվելը Հաննիբալին չստիպեց փոխելու այդ դնահատականը։ Նա ոչ միայն ինքը մնաց Իտալիայում (իհարկե, նա չէր կարող Իտալիայից հեռանալ, ինչը նրա համար կնշանակեր ճանաչել իր բոլոր մտահղացումների խորտակումը), այլև իր եղբորը՝ Հասդրուբալին հետագայում դրդեց՝ թողնելով Պիրենեյան թերակղզին, առաջ նետվել դեպի Իտալիա, ինչը վերջացավ Մետավրոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հասդրուբալի ողբերգական կործանումով։ Ըստ երևույթին, Հաննիբալի կարծիքով Իսպանիայում տեղի ունեցած իրադարձությունները չէին կարող վճռական ազդեցություն թողնել պատերազմի ընթացքի վրա. ամեն ինչ պետք է վճռեին ապագա ճակատամարտերն Ապենինյան թերակղզում։

Մինչդեռ Սկիպիոնը 10 հազար հետևազորայինից և 1000 հեծյալից բաղկացած իր բանակով ափ դուրս եկավ Էմպորիումում և մեկնեց Տառակոն։ Այնտեղ նա հաջող բանակցություններ վարեց բազմաթիվ դաշնակիցների հետ և վերջապես ստանձնեց այն զորքերի հրամանատարությունը, որոնք վաղուց արդեն գտնվում էին Պիրենեյան թերակղզու հյուսիսում։ Նրա համար հատկանշական էր, որ Մարկիոսին նա հարգանքով վերաբերվեց, ակնհայտորեն այն բանի համար, որպեսզի իր կողմը գրավի այն զինվորներին, որոնք իրենց միջից առաջադրել էին Մարկիոսին։ Սկիպիոնը մնաց Տառակոնի ձմեռային կացարաններում,

Գիսկոնի որդի Հասդրուբալը՝ Գադեսում, Մագոն Բարկայանը՝ Կաստուլոնյան լեռնաշղթայի մատույցներում, իսկ Հասդրուբալ Բարկայանը՝ Սագունտումի մերձակայքում (Լիվիոս, 26, 19—20)[143]։

Կապուայի անկումը բոլորովին էլ միակ աղետը չէր, որ Հաննիբալին վիճակվեց կրել իր համար հույժ ծանր այդ 211 թվականին։ Հռոմեական կառավարությունը թեև ոչ թե ռազմական այլ դիվանագիտական ավելի պակաս ուժեղ հարված չհասցրեց նրան Բալկանյան թերակղզում, որտեղ, ըստ երևույթին, արդեն 212 թ. նա, ինչպես ասվել է վերևում, բանակցություններ էր սկսել էտոլիական միության ղեկավարների հետ։ Կապուայի ճակատագիրն, անկասկած, ուժեղ տպավորություն թողեց էտոլիացիների վրա և վճռապես ներգործեց նրանց քաղաքական դիրքորոշման վրա, այդ պատճառով Կապուայի գրավումից շատ չանցած՝ Մարկոս Վալերիոս Լևվինոսը կարողացավ ներկայանալ էտոլիական միության հատուկ նիստին և այնտեղ բացահայտորեն դաշինք առաջարկեց Հռոմի հետ։ Սիրակուզայի և Կապուայի ճակատագիրը, ասում էր Լևվինոսը (Տիտոս Լիվիոսի շարադրանքում), ցույց է տալիս, թե հռոմայեցիները որքան հաջող պատերազմ են վարում Իտալիայում և Սիցիլիայում։ Նախնիներից, շարունակեց նա, հռոմայեցիները ժառանգեցին դաշնակիցների մասին հոգ տանելու սովորությունը. վերջիններից ոմանց նրանք շնորհում էին քաղաքացիական իրավունքներ, իսկ ուրիշներին այնպիսի բարենպաստ կացության մեջ էին դնում, որ նրանք ավելի շուտ գերադասում էին լինել դաշնակիցներ, քան քաղաքացիներ։ Էտոլիացիների (որոնք անդրծովյան ժողովուրդներից առաջինն էին բարեկամական հարաբերություններ հաստատելու Հռոմի հետ) դրությունը հատկապես պատվավոր էր լինելու. Մակեդոնիայի դեմ մղած պայքարում Հռոմը պաշտպանելու է էտոլիական միությանը և մասնավորաբար նրան պետք է սատարի, վերադարձնելու Ակարնանիան։ Քանի որ նախապես արդեն ամեն ինչ վճռված էր, Լևինոսի խոսքերը, դատելով մեզ հասած տեղեկությունից, առարկությունների չհանդիպեցին։ Փառաբանելով հռոմեական ժողովրդի զորությունն ու մեծությունը, Հռոմի հետ դաշինքի՝ օգտին արտահայտվեցին էտոլիական միության զորապետ Սկոպասը և նրա առաջատար քաղաքական գործիչներից մեկը՝ Դորիմաքոսը։ Գլխավոր խայծը, ինչպես շեշտում է նաև Լիվիոսը, իհարկե, Ակարնանիան էր, այսինքն՝ ելքը դեպի Հոնիական ծով։ Հռոմի և էտոլիական միության միջև դաշինքի պայմանները, ըստ Լիվիոսի շարադրանքի, հանգում էին հետևյալին։ Եթե էլեացիները, սպարտացիները, Պերգամոսի թագավոր Ատտալոսը, Թրակիայի թագավոր Պլևրատոսը, Իլլիրիայի արքա Սկերդիլեդոսը ցանկանային, ապա նույն այն պայմաններում, ինչ նաև էտոլացիները, նրանք կկարողանային դառնալ հռոմայեցիների դաշնակիցները։ Այս դրությունը չափազանց էական է, և զուր չէ, որ հռոմայեցի պատմիչը հենց նրանից է սկսում պայմանագրի շարադրումը. հռոմեա-էտոլիական դաշինքը Լևվինոսի ու Սկոպասի համոզմամբ դառնալու էր միջուկը հզոր այն միավորման, որը բոլոր կողմերից շրջապատելու էր Մակեդոնիան և վերին աստիճանի ծանրացնելու էր նրա ռազմաքաղաքական կացությունը։ Էտոլացիները պարտավորվում էին ցամաքային պատերազմ սկսել Փիլիպոս V-ի դեմ, իսկ հռոմայեցիները՝ նրանց օժանդակել ոչ պակաս, քան 25 պենտերայից բաղկացած նավատորմով (այլ կերպ ասած, Մակեդոնիայի դեմ մղվող պատերազմի ամբողջ ծանրությունը հռոմեական կառավարությունը դնում էր էտոլիացիների վրա, իսկ իր վրա էր վերցնում միայն ծովից նրանց գործողությունների պաշտպանությունը, որը պետք է խափաներ մակեդոնական նավատորմի գործողությունները, այդ թվում նաև Իտալիայի դեմ նրա հնարավոր քայլերը)։ Էտոլիայի և Կերկիրա կղզու միջև ընկած բոլոր քաղաքները իրենց տներով, պարիսպներով և հողերով պետք է բաժին ընկնեին էտոլիացիներին, իսկ մնացած ողջ ռազմավարը՝ հռոմայեցիներին. վերջիններս այնպես պետք է անեին, որպեսզի Ակարնանիան պատկաներ էտոլիացիներին. եթե էտոլիացիները Փիլիպոսի հետ հաշտություն են կնքել, պետք է վերապահում արվեր, որ մակեդոնական թագավորը հրաժարվում է հռոմայեցիների, նրանց դաշնակիցների ու հպատակների դեմ ռազմական գործողություններից։ Իր հերթին հռոմեական կառավարությունը պարտավորվում էր Մակեդոնիայի հետ հաշտություն կնքելու դեպքում սահմանել, որ Մակեդոնիան իրավունք չունի պատերազմ մղել էտոլիացիների ու նրանց դաշնակիցների դեմ (Լիվիոս, 26, 24)։

Այն բանի հետևանքով, որ այդ պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո էտոլիացիները ռազմի ելան Մակեդոնիայի դեմ, իսկ ինքը՝ Լևինոսը գրոհով գրավեց Զակինթոսը և, ակարնանիական երկու քաղաքների տիրանալով, դրանք հանձնեց էտոլիական միությանը, Փիլիպոս V-ի և Հաննիբալի միջև կնքված դաշնագիրը փաստորեն լիովին կորցրեց իր նշանակությունը, վերածվեց ոչ մի արժեք չունեցող մագաղաթի կտորի։ Բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված Փիլիպոս V-ը այժմ, եթե նույնիսկ կամենար, չէր կարող միջամտել իտալիկական գործերին։ Էտոլիական միության դեմ մղվող պատերազմը նրան հարկադրեց արևմուտքում և հյուսիսում հոգ տանել մակեդոնական սահմանների անվտանգության մասին, իսկ այնուհետև խորանալ հունական խնդիրների մեջ (Լիվիոս, 26, 24—26)։

II

Այսպիսով, Հաննիբալի համար 210 թվականի պատերազմն սկսվեց աննպաստ պայմաններում։ Ճիշտ է, երկարատև ու ավերիչ պատերազմը Հռոմում նույնպես հարուցեց ժողովրդի գնալով աճող դժգոհությունը։ Ասում էին, որ դաշտերն ամայացվել են, որ Իտալիան զորահավաքների հետևանքով ուժասպառ է եղել, որ յուրաքանչյուր տարի մեկը մյուսի ետևից կործանվում են բանակները, որ երկու կոնսուլները՝ Լևինոսը և Մարկելոսը, հույժ ռազմատենչ են և ավելի շուտ ընդունակ են խորին խաղաղության մեջ պատերազմ բորբոքել, քան պատերազմի ժամանակ պետությանը շունչ քաշելու հնարավորություն ընձեռել (Լիվիոս, 26, 26)։ Երբ հարկ եղավ, որ հռոմեական կառավարությունը հավաքի թիավարների մի նոր խումբ ու ոռճիկ ապահովի նրանց համար, և կոնսուլները կարգադրեցին, որպեսզի թե՛ թիավարներին և թե՛ նրանց պահելու ոռճկագրամը տրամադրեն մասնավոր անձինք՝ համապատասխան իրենց գույքային դրության, Հռոմում այնպիսի տրտունջ սկսվեց, որ, նկատում է Լիվիոսը, ավելի շուտ առաջնորդն էր պակասում, քան ապստամբության ոգին (26, 35)։ Սիցիլիացիներից ու կամպանիացիներից հետո կոնսուլները մտադիր էին կործանել և տանջահար անել հռոմեական պլեբեյներին, որոնք հարկերից ուժասպառ էին եղել և արդեն ոչինչ չունեին, բացի մերկ ու ամայի հողակտորից. նրանց տները հրդեհել էին թշնամիները, անդաստանները մշակող նրանց ստրուկներին տիրացել էր պետությունը, մերթ շնչին վարձավճարով փրկագնելով նրանց զինվորական ծառայություն կատարելու համար, երբեմն էլ հրամայելով հանձնել նրանց, որպես թիավարների. ամբողջ դրամը ծախսվել էր թիավարների ոռճկի և ամենամյա հարկերի վրա. ով ոչինչ չուներ, նրանից ոչինչ չէին կարող վերցնել. թող վաճառեն նրանց ունեցվածքը, խլեն նրանց ազատությունը, իսկ նրանք միջոցներ չունեն նույնիսկ փրկագնման համար. այսպիսի կամ սրա նման արտահայտություններով է Լիվիոսը (26, 35) հաղորդում այն, որ ֆորումում հավաքված հոծ ամբոխը կատաղորեն գոռում էր կոնսուլներին։ Իշխանությունները մեծ դժվարությամբ կարողացան դժգոհներին հանդարտեցնել, սենատորներին և հեծյալներին պարտավորեցնելով գանձարանին հանձնել գրեթե ամբողջ ոսկին, արծաթը և պղինձը։ Դրանից հետո կամավոր կամ կիսով չափ կամովին մուծումներ կատարեցին նաև մյուսները։

Սակայն Հաննիբալի դրությունը շատ ավելի վատթար էր։ Կապուայի անկումը նրա շատ «դաշնակիցների» ստիպեց դիմելու նոր «դավաճանության», այս անգամ արդեն հօդուտ Հռոմի։ Հաննիբալը չէր կարող

հույս դնել նրանց հավատարմության վրա, իսկ իր կայազորներով նրանց ետ պահել նա արդեն ի վիճակի չէր, ասենք նա այդքան զինվոր չուներ, որպեսզի ամենուրեք տեղակայեր իր կայազորները։ Նրա զորքը հալվում էր. ոչ մի տեղից օգնություն չէր կարելի ակնկալել, եթե միայն նա չէր կամենում Իսպանիան թողնել բախտի քմահաճույքին։ Փիլիպոս V-ի հետ նրա դաշինքը վերածվեց սնամեջ ու սակավ արդյունավետ հայտարարության։ Բոլոր այս հանգամանքները շուշացան իրենց ներգործությունը թողնելու Հարավային Իտալիայի կացության վրա. վերջինում նկատելիորեն աշխուժացել էին Հաննիբալի հանդեպ թշնամական տարրերը։

Այդպես եղավ մասնավորապես Սալապիայում, որը ժամանակին առաջինների թվում դավաճանեց Հռոմին և դաշնակցային հարաբերություններ հաստատեց կարթագենցիների հետ։ Իսկապես, գտնելով Լիվիոսի պատմությունից (26, 38), այնտեղ ոչ մի անգամ չի դադարել հռոմեական խմբավորման և նրա ղեկավար Բլատիոսի՝ քաղաքում ամենաազդեցիկ մարդկանցից մեկի, գաղտնի գործունեությունը։ Այժմ Բլատիոսը գաղտնի հարաբերությունների մեջ մտավ Մարկելոսի հետ և, հույս չդնելով իր սեփական ուժերի վրա, երկար վարանումներից, տատանումներից հետո իր կողմը թեքեց Հաննիբալի հանդեպ բարեկամական «կուսակցության» պարագլուխ Դասիոսին (ըստ Զոնարասի (9, 7). հռոմեամետ խմբակցությունը գլխավորում էր Պլավտիոսը, իսկ կարթագենամետը՝ Ալինիոսը)։ Սկզբնապես Դասիոսը չկամեցավ միանալ Բլատիոսին (Լիվիոսի ասելով, քանի որ նա բացասաբար էր վերաբերվում այդ մտահղացմանը և բացի այդ, անբարյացակամ էր տրամադրված Բլատիոսի՝ ազդեցության և իշխանության համար մղված պայքարում իր մրցակցի նկատմամբ) և նույնիսկ ամեն ինչի մասին տեղեկացրեց Հաննիբալին։ Վերջինս երկուսին էլ կանչեց իր մոտ՝ Ճամբար, և այնտեղ, գրում է Լիվիոսը, հույժ զարմանալի տեսարան տեղի ունեցավ։ Մինչ Հաննիբալը զբաղված էր ուրիշ գործերով, Բլատիոսը դարձյալ սկսեց Դասիոսի հետ խոսել միևնույն խնդրի մասին, և Դասիոսն սկսեց գոռգոռալ, որ հենց կարթագենյան զորավարի աչքի առաջ իրեն վերստին դավաճանության են մղում։ Հաննիբալն ու նրան շրջապատողները չհավատացին Դասիոսին, այնքան նրանց անհավանական էր թվում այն ամենն, ինչ նրանք լսեցին. դյուրությամբ կարելի էր ենթադրել, որ մատնիչներին դրդում են ատելությունն ու մրցակցությունը, այդ պատճառով նա մեղադրում է իր թշնամուն և այն էլ այնպիսի արարքներում, որոնք ոչ մի վկա չի կարող հաստատել կամ ժխտել։

Ինչո՞վ բացատրել Հաննիբալի վճիռը։ Մենք չգիտենք, թե արդյոք

սոսկ նրանով, որ նա, ինչպես ասում է հռոմայեցի պատմագիրը, չհամոզվեց Դասիոսի խոսքերով (սակայն նման իրավիճակում տարօրինակ է թվում բավական անսպասելիորեն իրավական նորմերի և ընդհանրապես ձևական-իրավաբանական արարողակարգի պահպանությունը, և առանձնապես վկաների բացակայությունը մատնանշելը) կամ էլ նաև նրանով, որ նա, թեև ուշացումով, փորձում էր իտալիկների մոտ իրենց ցույց տալ որպես օրինականության և կարգի պահապան։ Սակայն իրադարձությունների այդպիսի շրջադարձը Բլատիոսին հնարավորություն տվեց շարունակելու իր գործունեությունը և ոչ մի բան հաշվի չառնելով՝ նաև Դասիոսին մշակելը։ Վերջիվերջո Բլատիոսը հասավ իր նպատակին. Դասիոսը որոշեց մասնակցել դավադրությանը. համապատասխանաբար Սալապիայում եղած այն խմբավորումը, որի շահերի արտահայտիչն ու ղեկավարը նա էր, փոխեց իր արտաքին-քաղաքական կողմնորոշումը[144]. Քաղաքն անցավ հռոմայեցիների կողմը. կարթագենական կայազորը՝ նումիդական 500 հեծյալը, համարյա գլխովին ոչնչացվեցին փողոցային մարտում, և նրանցից միայն 50 հոգու հաջողվեց կենդանի մնալ։ Նրանք բոլորն ընկան թշնամու ձեռքը։ Ինչպես պատմում է Լիվիոսը, այդ ջոկատի կործանումը Հաննիբալի համար ավելի ծանր էր, քան Սալապիայի կորուստը. Հաննիբալը վերջնականապես կորցրեց հեծելազորում ունեցած իր առավելությունը։ Բայց և այնպես, նրա համար Սալապիայի կորուստը նույնպես զգալի հարված էր, մանավանդ, որ նրա օրինակին կարող էին հետևել նաև ուրիշները։ Զարմանալի չէ, որ այդ դեպքից հետո Հաննիբալը տեսավ, որ ստիպված է մեկնել Բրուտիում (Լիվիոս, 27, 1)։

Օգտվելով հանգամանքների այդպիսի բարեհաջող ընթացքից, Մարկելլոսը սամնիացիներից ու կարթագենցիներից գրոհով ետ գրավեց Մարմորեում և Մելի քաղաքները, մատնելով դրանք իր զինվորների բացարձակ կողոպուտին (նույն տեղը). ընդ որում պունիկյան կայազորի 3000 զորական ոչնչացավ։ Սակայն նույն ժամանակ հռոմայեցիների ձեռնարկած նոր փորձը՝ գրոհով գրավել Գերդոնիան, վերջացավ խոշոր անհաջողությամբ։ Այս գործողության համար վերին աստիճանի բարենպաստ պայմաններ էին ստեղծվել, քանի որ քաղաքի բնակչությունը կամենում էր դավաճանել Հաննիբալին և ճանաչել հռոմեական տիրապետությունը։ Գերդոնիայի մերձակայքում գտնվող պրոկոնսուլ Գն. Փուլվիոսը համոզված էր հաջողության մեջ և միջոցներ ձեռք չառավ բանակատեղում մարտական պահպանություն կազմակերպելու համար (բացի այդ, նա բանակել էր բոլորովին էլ ոչ անվտանգ վայրում)։ Իմանալով այդ մասին, Հաննիբալը վճռաբար սլացավ դեպի Գերդոնիա և մոտեցավ

հռոմեական դիրքերին, իր զորքերը դասավորելով մարտական կարգով։ Փուլվիոսն իր զորքերը ընդառաջ տարավ նրան։ Այս անգամ Հաննիբալը վճռեց վերստին կիրառել նույն այն զորաշարժը, որը Կաննեի մոտ հաղթանակ ապահովեց նրան. մինչ հետևազորը պատերազմում էր, նա իր հեծյալների մի մասին ուղարկեց հարձակվելու հռոմեական բանակատեղի վրա, իսկ մյուսներին՝ թիկունքից հարվածելու թշնամուն։ Հաննիբալի հաշիվները լիովին արդարացան, շատ հռոմայեցիներ փախուստի դիմեցին, շատերը (ըստ որոշ տեղեկությունների, 7000, իսկ այլ տվյալներով՝ 13 հազար, այդ թվում նաև ինքը՝ Փուլվիոսը (Ապպ., Հաննիբ., 43)), ոչնչացան մարտում։ Հաննիբալը դաժան հաշվեհարդար տեսավ քաղաքի բնակչության հետ. Գերդոնիայի բոլոր բնակիչներին նա գաղթեցրեց Մետապոնտոս և Թուրիա, իսկ տեղական ավագանուց նրանց, ովքեր մերկացվեցին Փուլվիոսի հետ ունեցած գաղտնի կապերի մեջ, հրամայեց մահապատժի ենթարկել (Լիվիոս, 27, 1)։

Գերդոնիայի մոտ տեղի ունեցած երկրորդ ճակատամարտում Հաննիբալի տարած հաղթանակը լրջորեն անհանգստացրեց հռոմեական կենտրոնական կառավարությանը, հատկապես այն պատճառով (և այդ շուտով հաստատվեցին Կամպանիայում տեղի ունեցած դեպքերը), որ այն կարող էր նպաստել Հռոմին թշնամի ուժերի աշխուժացմանը։ Հենց այդ պատճառով Մարկելլոսը, փութապես գալով Լուկանիա, բանակեց Նումիստրոնոսի մոտակայքի հարթավայրում, ի տես բլրի վրա կանգնած թշնամու։ Տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ սակայն ո՛չ Հաննիբալին և ո՛չ էլ Մարկելլոսին չհաջողվեց հասնել վճռական հաջողության։ Հաննիբալը խուսափեց մարտից, իսկ այնուհետև գիշերով անաղմուկ հեռացավ Ապուլիա։ Մարկելլոսը նետվեց նրա ետևից. Վենուսիայի մերձակայքում ընդհարումներ սկսվեցին, սակայն պունիկյան զորավարը չընդունեց ճակատամարտը և շարունակեց դեպի Ապուլիա իր ճանապարհը։ Մարկելլոսն անդադրում շարժվում էր նրա ետևից (Լիվիոս, 27, 2)։

Մինչ այդ Կամպանիայում, որտեղ հռոմեական կառավարությունը զբաղված էր կապուական ավագանուց խլված գույքի վաճառմամբ և վարձակալության էր տալիս պատերազմի իրավունքով հռոմեական ժողովրդի սեփականություն դարձած հողերը, մի խումբ տեղացի բնակիչներ, անշուշտ, ոչ առանց Գերդոնիայի մոտ Հաննիբալի տարած հաղթանակի ազդեցության, վճռեցին հուսահատ փորձ ձեռնարկել ատելի լուծը թոթափելու համար։ Օգտվելով այն բանից, որ Քվ. Փուլվիոս Փլակոսը իր զինվորներին հանել էր Կապուայից, նրանց տեղավորելով քաղաքի պարիսպների ու դարպասների մոտ, 170 կամպանիացի, Բլոսիոս պարիսպների ու դարպասների գլխավորությամբ, ծրագրեցին գիշերով հրդեհել հռոմեա-

կան ճամբարը։ Սակայն Բլոսիոսներին պատկանող ստրուկները ժամանակին նախազգուշացրին Փլակոսին, և սա անհապաղ փակեց դարպասները, տագնապ հայտարարելով, ոտքի հանեց զինվորներին և ձերբակալեց դավադիրներին։ Նրանք բոլորը մահապատժի ենթարկվեցին, իսկ մատնիչներն ստացան ազատություն և որպես պարգև յուրաքանչյուրը՝ 10 հազար ասս դրամ (Լիվիոս, 27, 3)։

Կապուայի անկումից հետո Իտալիայում կարթագենական զորքերի հիմնական, թեև ոչ շատ հուսալի հենարան էր մնում Տարենթոնը, որի ակրոպոլիսը շարունակում էին պահել հռոմեական կայազորը և կարթագենցիների հանդեպ թշնամի տարենթոնցիները։ Զախողվեց ակրոպոլիս թափանցելու և այնտեղ պարենամթերք հասցնելու հռոմեական նավատորմի փորձը։ Սապրիպորտոսի մոտ մղված ճակատամարտում այն ջախջախվեց, նրա հրամանատար Դ. Քվինկտիոսը զոհվեց, իսկ նավատորմապետի նավն ընկավ հակառակորդի ձեռքը։ Ճիշտ է, այս անհաջողությունն ինչ-որ չափով փոխհատուցվեց պաշարվածների հաջող արտագրոհով, որի ժամանակ քաղաքի շրջակայքի դաշտերում նրանք սկսեցին կոտորել անզեն և հարձակման չպատրաստ տարենթոնցիներին (Լիվիոս, 26, 39)։ Այժմ հռոմայեցիների գլխավոր խնդիրը դարձավ Տարենթոնից կարթագենցիներին դուրս քշելը, իսկ մինչև այդ՝ օգնություն ցույց տալ այնտեղի ակրոպոլիսում եղած կայազորին։ Այդ նպատակով, էտրուրիայում հաց գնելով, հռոմեական կառավարությունը Հռոմ քաղաքի կայազորի 1000 զորականի, ինչպես նաև 1000 դաշնակցի հետ այն ուղարկեց Տարենթոն (Լիվիոս, 27, 3)։ Այս անգամ, ըստ երևույթին, գործողությունը հաջող անցավ։

Սիցիլիայում Հիմերա գետի մոտ հռոմայեցիների տարած հաղթանակով բոլորովին էլ դեռ չավարտվեց պատերազմը։ Ի դեպ, դա սենատին թույլ տվեց Սիրակուզայի գրավումից հետո մերժել Մարկելոսի տրիումֆը և սահմանափակվել միայն «օվացիայով»՝ նշանակալիորեն ավելի քիչ պատվավոր ձևով և պակաս հանդիսավորությամբ Հռոմ մտնելով (Լիվիոս, 26, 21)։ Մարկելոսի մեկնելուց շատ չանցած կարթագենցիները կղզում ափ հանեցին 8000 հետևակորային և 3000 նումիդիական հեծյալ։ Կարթագենի կողմն անցան սիցիլիական մի քանի քաղաքներ, այդ թվում՝ Մուրգանտիան, Հիբլան և ուրիշներ։ 211 թ. ամբողջ ընթացքում նումիդիական հեծյալները Մուտոնի գլխավորությամբ ամայացնում էին Հռոմի դաշնակիցներին պատկանող դաշտերը։ Հռոմեական հրամանատար պրետոր Մ. Կորնելիոսը պետք է հանդարտեցներ իր բանակում եղած խլրտումները. բանակը դժգոհ էր ծառայության պայմաններից (Լիվիոս, 26, 21)։

210 թ. երկրորդ կեսին Սիցիլիա ժամանեց կոնսուլ Լևինոսը, որին հաջողվեց, օգտագործելով պունիկյան հրամանատարության մեջ եղած երկպառակությունները, կղզին ամբողջապես մաքրել կարթագենցիներից։ Բանն այն էր, որ Մուտոնի հաջողություններին և հրամանատարի նրա համբավին արդեն վաղուց նախանձում էր Սիցիլիայում կարթագենական զորքերի գլխավոր հրամանատար Հաննոնը։ Վերջիվերջո նրանց միջև հարաբերություններն այն աստիճան սրվեցին, որ Հաննոնը հեռացրեց Մուտոնին և նրա պաշտոնը հանձնեց իր որդուն։ Այս արարքի մեջ, թերևս ի նկատի առնենք, որ Մուտոնը, ինչպես ասվել է վերևում, Հաննիբալի դրածոն էր, չի կարելի չտեսնել Բարկյանների և նրանց քաղաքական հակառակորդների միջև իշխանության համար մղվող ներկարթագենական պայքարի արտացոլքը։ Սակայն Հաննոնը հաշիվները մաքրելու համար խիստ անհաջող պահ ընտրեց. բացի այդ, նա հաշվի չէր առել, թե որքան էին Մուտոնին սիրում իր զինվորները՝ նումիդիական հեծյալները։ Նրանք պարզապես հրաժարվեցին ուրիշ հրամանատարի ենթարկվել, իսկ Մուտոնն ինքը բանակցությունների մեջ մտավ Լևինոսի հետ՝ Ակրագանտի հանձնման շուրջը։ Երբ հռոմայեցիները մոտեցան քաղաքին, նումիդացիները մասամբ ցրեցին, մասամբ էլ, ոչնչացնելով պահակներին, գրավեցին դեպի ծով տանող դարպասները և նրանց միջով ներս թողեցին թշնամուն։ Աղմուկից անհանգստացած Հաննոնը կարծեց, թե գործ ունի սովորական զինվորական խռովության հետ և դուրս եկավ հանդարտեցնելու անհնազանդ հեծելազորայիններին։ Փողոցներում տեսնելով հռոմեական զինվորներին, լսելով նրանց աղաղակները, նա էպիկիդեսի հետ մեկտեղ դուրս փախավ ուրիշ դարպասներով, մտավ մի փոքր նավ, որով մեկնեց Աֆրիկա, Սիցիլիան թողնելով բախտի քմահաճույքին։ Իրենց հրամանատարներից լքված պունիկացիներն ու սիցիլիացիները նույնիսկ չփորձեցին դիմադրել. նրանք բոլորը ոչնչացան քաղաքի փողոցներում։

Ակրագանտում Լևինոսի կատարած հաշվեհարդարը սիցիլիացիներին հիշեցնում էր Կապուայի ճակատագիրը և ակնառու կերպով ցույց էր տալիս, թե ինչ է սպասում նրանց, ովքեր փորձում են դիմակայել հռոմեական զենքին. քաղաքային մագիստրատներին և խորհրդի անդամներին («նրանց, ովքեր Ակրագանտում առաջին մարդիկ էին»,— գրում է Լիվիոսը) ծեծեցին ճիպոտներով և մահապատժի ենթարկեցին, բոլոր մնացյալներին վաճառեցին ստրկության, վաճառեցին նաև քաղաքում ձեռք բերված ռազմավարը։ Զարմանալի չէ, որ սիցիլիական քաղաք-

ները մեկը մյուսի ետևից հանձնվում էին հռոմայեցիներին. միայն հարկ եղավ, որ Լևինոսը նրանցից վեցը գրոհով առնի։ Սիցիլիայի համար մղված դարավոր պայքարն ավարտվեց (Լիվիոս, 26, 40)։

Հետագայում Մուտոնն ստացավ ամենաբարձր այն պարգևը, որը միայն կարող էր ակնկալել՝ հռոմեական քաղաքացիության իրավունք (Լիվիոս, 27, 5)։ Դրանով հռոմեական կառավարությունը մեկ անգամ ևս շեշտեց, թե նա ինչպիսի նշանակություն էր տալիս կղզում Հռոմի համար պատերազմի հաջող ելքին։ Եվ իրոք, հռոմեական բանակը իրեն վերադարձրեց հրաշալի պլացդարմ Աֆրիկա ներխուժելու համար։ Ի դեպ, Ակրագանտի գրավումից փոքր-ինչ հետո, հռոմեական նավատորմը, Մարկոս Վալերիոս Մեսալոսի հրամանատարությամբ, հարձակում գործեց Կարթագենի աֆրիկյան տիրույթների վրա։ Հռոմայեցիներն ափ դուրս եկան Ուտիկեի մոտ, կողոպտեցին, ավերեցին նրա շրջակայքը և, հափշտակելով բազում գերիներ ու հարուստ ռազմաավար, վերադարձան Լիլիբեոն (Լիվիոս, 27, 5)։ Բացի այդ, Սիցիլիան Հռոմի կարևորագույն շտեմարանն էր. այնտեղից էժան հաց էր մատակարարվում Հռոմին. դա առանձին նշանակություն էր ստանում այն պայմաններում, երբ Իտալիան սնանկացել էր բազմամյա պատերազմի հետևանքով։ Գերդոնիայի մոտ տարած հաղթանակը, նույնիսկ հեռավոր կերպով, չէր կարող հավասարակշռել Սիցիլիայի կորուստը։ Ցուցանշական է սակայն, որ աղբյուրները ոչինչ չեն հաղորդում կղզում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ Հաննիբալի գործողությունների մասին. նա ոչ կարող էր Մուտոնին պաշտպանել Հաննոնի հետ ունեցած նրա ընդհարման դեպքում և կանխել նրա դավաճանությունը և ո՛չ էլ խանգարել Լևինոսին՝ գրավելու Սիցիլիան։

Իսպանիայում 210 թվականի պատերազմը նույնպես նշանավորվեց պունիկյան հրամանատարության, Բարկյանների ամբողջ քաղաքականության բացառիկ ծանր ձախողանքով. հռոմայեցիների ձեռքն ընկավ Պիրենեյան թերակղզում Կարթագենի կարևորագույն հենակետ Նոր Կարթագենը։ Վտանգի տակ դրվեց այդ շրջանում կարթագենցիների տիրապետությունը և, հետևաբար՝ Ջիբրալտարից այն կողմ ընկած ծովային առևտրաուղիներին մենաշնորհային ձևով նրանց տերուտնօրինությունը։ Ահա թե ինչպես պատահեց դա (Պոլիբիոս, 10, 6—20, Լիվիոս, 26, 41—45, հմմտ. նաև Ապպ. մոտ, Հաննիբ., 20—22)։

Գարնանամուտին Սկիպիոնը, հյուսիսում թողնելով ոչ մեծ կայազոր, իր հիմնական զորաուժը անցկացրեց Իբերից այն կողմ (25 հազար հետևակորային և 2500 հեծյալ) և այն շարժեց դեպի Նոր Կարթագեն։ Միաժամանակ նաև հռոմեական նավատորմը Գայոս Լելիոսի հրամանատարությամբ Իսպանիայի ափերի երկայնքով ուղղվեց դեպի այդ քաղաքը։ Գործողությունը նախապատրաստվեց, մշակվեց և իրականացվեց խիստ գաղտնի. արշավանքի վերջնական նպատակի մասին բացի իրենից՝ Սկիպիոնից, գիտեր միայն Լելիոսը, որին հրամայված էր նավարկությունը կատարել այնպիսի հաշվարկով, որ քաղաքին մոտենար ցամաքային զորամասերի հետ միաժամանակ։ Այս ամենն իսկությամբ կատարվեց։ Նոր Կարթագենի պաշտպանությունը ղեկավարում էր Մագոնը[145] (կարթագենցիների հիմնական ուժերը քաղաքից մոտավորապես 10 օրվա-հեռավորության վրա էին), որն իր զորականներին տեղավորել էր հետևյալ կերպ. 2000 քաղաքացիների՝ անմիջականորեն հռոմեական ճամբարի դիմաց, 500-ը՝ ակրոպոլիսում և դարձյալ 500-ը՝ քաղաքի ներսում գտնվող բլրի վրա։ Մնացած բոլորը պետք է ծառայեին որպես պահեստազոր և օգնության փութային այնտեղ, ուր հանգամանքները ոչ լիովին բարեհաջող էին դասավորվելու պաշարվածների համար։

Ձեռք առնելով այս միջոցառումները, Մագոնը հրամայեց դարպասները լայն բաց անել և զինվորներին տարավ թշնամուն ընդառաջ։ Սկիպիոնն իր զորականներին կարգադրեց մի փոքր նահանջել, որպեսզի ճամբարի անմիջական մերձակայքում և հնարավոր լիներ դյուրությամբ մատակարարել օժանդակ զորամիավորումներ։ Մարտում ի հայտ եկավ հռոմայեցիների թվական գերակշռությունը։ Մարտի մեջ անընդհատ մտցնելով նորանոր միավորումներ, Սկիպիոնը կարթագենցիներին հարկադրեց նահանջել, որը վերածվեց անկանոն փախուստի։ Հռոմայեցիները քիչ էր մնում թշնամու ետևից անմիջապես ներխուժեին քաղաք. նրանց կանգնեցրեց միայն չափազանց անժամանակ տրված նահանջի ազդանշանը։

Նոր Կարթագենում խուճապ սկսվեց։ Շատ զորականներ լքեցին պարիսպների վրա ունեցած իրենց պահակետերը, և Սկիպիոնը, որոշելով օգտվել նրանց իրարանցումից, սկսեց ընդհանուր գրոհը։ Սակայն քաղաքի պարիսպները պաշարողների համար խիստ բարձր դուրս եկան. միայն քիչ թվով աստիճաններ էին հասնում նրան. զինվորները չէին կարողանում բարձրանալ պարսպապատերի վրա, ընկնում էին աստիճանների հետ միասին, ուժեղ գլխապտույտից ցած էին գլորվում, և Սկիպիոնն ստիպված եղավ դադարեցնել մարտը, իսկ այնուհետև այն վերսկսել թարմ ուժերով։ Սակայն նրա համար արդեն պարզ էր, որ ճամբարային հարվածով Նոր Կարթագենը չէր գրավվի, և որ պարիսպների համար մղվող մարտը կարող էր սոսկ մի նպատակի ծառայել. հակառակորդի ուժերն ու ուշադրությունը շեղել այն կետերից, որոնց իրական

վտանգ էր սպառնում։ Հռոմեական զորավարը խոցելի տեղ էր փնտրում պաշտպանության մեջ, և այն գտնվեց։ Նոր Կարթագենի արևմտյան մատույցներում, քաղաքային պարսպի ճիշտ դիմաց, կար մի լիճ, որի ջրի մակարդակը իջնում էր տեղատվության ժամանակ. և բացի այդ քամին նույնպես ստորգետնյա վտակներով լճի ջուրը քշում էր դեպի ծով։ Նրա հատակով կարելի էր դյուրությամբ մոտենալ պարսպին։ Պաշարվածները, համոզված լինելով, որ պարիսպների այդ մասը անմատչելի է թշնամու համար, այնտեղից զորքերը տարան այն կետերը, որտեղ թվում էր, թե անմիջական վտանգ էր ստեղծվել քաղաքի համար։ Դրա հետևանքով հռոմեական ջոկատը կարողացավ առանց մարտի հաղթահարել պարիսպները, նետվեց դարպասների մոտ, որոնց շուրջը տեղի էր ունենում ամենաուժեղ ընդհարումը, հարվածեց պաշտպանվողների թիկունքից և, խառնաշփոթության մեջ ձգելով կարթագենցիներին, կոտրեց փականքները և լայն բացեց դարպասները։ Մագոնը փորձեց որոշ ժամանակ պաշտպանվել ակրոպոլիսում. հռոմայեցիներն առայժմ փողոցներում ոչնչացնում էին քաղաքացիներին։ Վերջիվերջո Մագոնը ամբողջ կայազորով հանձնվեց։ Կոտորածը դադարեց. սկսվեց ընդհանուր կողոպուտը։ Հռոմայեցիները Նոր Կարթագենում հափշտակեցին 276 ոսկյա գավաթ, յուրաքանչյուրը մոտավորապես մեկ ֆունտ քաշով, 18300 ֆունտ արծաթ (Նոր Կարթագենից ոչ հեռու կային արծաթահանքեր), ինչպես նաև բազմաթիվ արծաթյա ամաններ, 400 հազար մոդիոս ցորեն (1 մոդիոսը հավասար է 8,7 լիտրի), 270 հազար մոդիոս գարի, 63 փոխադրանավ, որոնցից մի քանիսը բեռնված էին։

Նոր Կարթագենում Սկիպիոնի արած կարգադրությունները բացառիկ հետաքրքիր են։ Քաղաքում նա բռնեց ընդամենը 10 հազար ազատ տղամարդկանց, որոնցից Նոր Կարթագենի քաղաքացիներին Սկիպիոնը ազատ արձակեց և քաղաքը նրանց «վերադարձրեց» (այսինքն՝ նրանց թույլ տվեց պահպանել քաղաքային ինքնավարությունը, օրենքները և այլն) ինչպես և այն գույքը, որը կողոպուտից զերծ էր մնացել։ 2000 արհեստավորների (ըստ երևույթին, Նոր Կարթագենում նրանք քաղաքացիական իրավունքներ չունեին և այնտեղ կախյալ բոդեր էին) նա դարձրեց պետական ստրուկներ և նրանց խոստացավ ազատել, եթե նրանք փութեռանդություն ցուցաբերեին առաջիկա պատերազմում։ Մնացած բոլորին, գլխավորապես երիտասարդությանը և ուժեղ ստրուկներին, Սկիպիոնը դարձրեց իր նավերի թիավարներ։ Նրանց նույնպես նա խոստացավ պատերազմն ավարտվելուց հետո ազատություն տալ։ Բացի այդ, Սկիպիոնը անհրաժեշտ քայլեր ձեռնարկեց այն բանի համար, որպեսզի հայրենիք վերադարձնի իբերական ցեղերի պատանդներին, որոնք գտնվում էին

Նոր Կարթագենում. ամենուրեք պատվիրակներ ուղարկեցին, որպեսզի բոլոր ցեղերի ներկայացուցիչները, գալով Սկիպիոնի մոտ, վերցնեին յուրայիններին, ակնհայտորեն հաստատելով Հռոմի հետ իրենց ունեցած գաշինքը։ Իհարկե, Սկիպիոնը վճռել էր Պիրենեյան թերակղզու, այդ թվում նաև փյունիկա-պունիկյան գաղութների բնակչության առջև ներկայանալ ոչ թե նվաճողի, այլ կարթագենական տիրապետությունից ազատագրողի դերով։ Նոր Կարթագենի ճակատագիրը մյուսներին պետք է համոզեր դիմադրության ոչ միայն անօգուտ, այլև ավելորդ լինելու մեջ, այն բանում, որ նրանց համար շատ ավելի ձեռնտու էր անցնել Հռոմի կողմը, քան հավատարմություն պահպանել Կարթագենի նկատմամբ։

III

Չնայած Իտալիայում, Սիցիլիայում և Իսպանիայում կրած ծանր պարտություններին, կարթագենական կառավարությունը դեռևս պատերազմը վերջնականապես տանուլ տրված չէր համարում։ Նա վճռեց նոր ջանքերի գնով, հօգուտ իրեն, հասնել արմատական բեկման։ Թե ինչում պետք է կայանային այդ ջանքերը, այդ մասին նույնպես երկու կարծիք չկար. Հասդրուբալ Բարկայանը պետք է հյուսիսից ներխուժեր Իտալիա, այնտեղ միանար Հաննիբալին և, նոր ուժերով պայքարը վերսկսելով Ապենինյան թերակղզում, հաղթանակ տաներ։ Կարթագենցիները ձգտում էին բոլոր միջոցներով ամրապնդել Մասանասայի հետ ունեցած դաշինքը. նրա հետ ունեցած բարեկամական հարաբերությունները ինչ-որ չափով Կարթագենի համար դյուրացնում էին նումիդիական մյուս թագավորի՝ Սիփաքսի դեմ պատերազմ մղելը։ Նրանք ամբողջ Աֆրիկայում հավաքագրում էին վարձկանների նոր միավորումներ, որոնց մտադիր էին ուղարկել Իսպանիա, Հասդրուբալի մոտ։ Նավատորմը նույնպես պատրաստվում էր Սիցիլիա նոր ներխուժում կատարելու համար (Լիվիոս, 27, 5, 11—13)։

Կարթագենական իշխանությունները չկարողացան գաղտնի պահել իրենց այս մտահղացումներն ու նախապատրաստությունները։ Մեսալիոսի ձեռք բերած գերիները նրան պատմեցին ամեն ինչի մասին։ Լուրը, որ Մեսալիոսը փութով հաղորդեց հռոմեական կառավարությանը, լրջորեն անհանգստացրեց սենատին։ Որոշվեց դիկտատոր նշանակել, և որոշ վեճերից ու քաշքշուկներից հետո (այդ պահին Հռոմում գտնվող Լևինոսը պնդեց Մեսալիոսի թեկնածության վրա), դիկտատուրական լիազորությունները հանձնվեցին Քվինտոս Փուլվիոս Փլակոսին, որը վերջերս հաշվեհարդար էր տեսել Կապուայի հետ։ Հեծելազորի հրամանա-

տար դարձավ Պուբլիոս Լիկինիոս Կրասոսը (Լիվիոս, 27, 5, 14—19)։ Հյուսիսում պաշտպանություն կազմակերպելու համար Փուլվիոսն էտրուրիա ուղարկեց իր լեգատին՝ Գայոս Սեմպրոնիոս Բլեզոսին (Լիվիոս, 27, 6, 1)։ Սակայն դիկտատուրան այս անգամ Հռոմում երկար գոյություն չունեցավ։ Իր՝ Փուլվիոսի և Քվ. Փաբիոս Մաքսիմոսի կոնսուլներ ընտրվելուց հետո, Փուլվիոսը հրաժարվեց այդ պաշտոնից (Լիվիոս, 27, 6, 12)։ Պետք է ասել, որ սենատը լուրջ հիմքեր ուներ անհանգստանալու. Հյուսիսից ու հարավից եղած անմիջական սպառնալիքից զատ, հանկարծակիորեն երևան եկավ ձգձգվող պատերազմից հոռմեական գաղութների և դաշնակիցների սուր դժգոհությունը։ Տասներկու գաղութներ նույնիսկ հրաժարվեցին զինվորներ և դրամ տրամադրելուց։ Սենատը մեծ ջանքերի գնով հաղթահարեց ծագած դժվարությունները, բայց և այնպես, նա չէր կարող թերագնահատել այդքան ահեղ հայտանիշի նշանակությունը (Լիվիոս, 27, 9—10)։ Մինչև իսկ հետագայում գաղութների և դաշնակիցների հնազանդությունն ապահովելու անհրաժեշտությունը դեպի իրեն էր ձգում սենատի ուշադրությունը և նշանակալից ուժեր ու միջոցներ։ Այդուհանդերձ, որոշելով 209 թվականի պատերազմի իրենց պլանը, կոնսուլները վճռեցին իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնել Տարենթոնի վրա. Տարենթոնի գրավումը, որն իր վրա վերցրեց Փաբիոսը, Հաննիբալին կզրկեր Իտալիայում ունեցած վերջին խոշոր հենակետից։ Փուլվիոսն ու Մարկելլոսը իրենց հարձակումներով պետք է շեղեին Հաննիբալի ուշադրությունը (Լիվիոս, 27, 12, 1—3)։ Բացի այդ, Փաբիոսը Ռեգիումի հոռմեական կայազորի պետին կարգադրեց ներխուժել Բրուտիում, իսկ այնուհետև սկսել Կավլոնիայի պաշարումը։

Կատարելով կոնսուլի հրամանը, Մարկելլոսն իր զորքերն ընդառաջ տարավ Հաննիբալին և նրան հանդիպեց Կանուսիումի մոտ։ Հավանաբար, սկսելով պատերազմը, Հաննիբալը կամենում էր մի ինչ-որ չափով վերականգնել իր դիրքերը Սամնիումում և Կամպանիայում. պետք է կարծել, որ դրանով է բացատրվում նաև այն, որ նա հայտնվեց Կանուսիումի պարիսպների մոտ, և այն, որ նա փորձում էր Կանուսիումի քաղաքացիներին համոզել իր կողմն անցնելու։ Մարկելլոսի հայտնվելը Հաննիբալին ստիպեց նահանջելու լեռնային շրջաններ։ Մարկելլոսը կրնկակոխ գնում էր նրա ետևից. մերթ ընդ մերթ տեղի էին ունենում ոչ մեծ ընդհարումներ, և վերջապես հոռմեական զորավարը Հաննիբալին մեծ ճակատամարտ պարտադրեց։ Կարթագենցիների ճնշումն այնքան ուժեղ էր, որ հոռմայեցիների աջ զորաթևը և ընտիր զորամասերը (extraordinarii) սկսեցին նահանջել։ Այդ միջոցին Մարկելլոսն այն է փորձում էր իր լեգեոններից մեկն առաջ շարժել դեպի առաջին շարքը,

սակայն, վերախմբավորման ժամանակ նրա զորքում իրարանցում սկսվեց, և հոռմայեցիները փախուստի դիմեցին։ Հաջորդ օրը ճակատամարտը վերսկսվեց։ Հաննիբալը գործողության մեջ մտցրեց փղերին և վերջապես փախուստի մատնեց հոռմեական զորքի մի մասը։ Սակայն հոռմայեցիները սկսեցին փղերի վրա տեգեր նետել։ Վիրավորված կենդանիները իրենց ետևից քաշեցին մյուսներին, շուռ տվեցին դեպի ետ և հարձակվեցին կարթագենցիների վրա։ Վերջիններս իրենց հերթին սկսեցին նահանջել։ Գիշերը Հաննիբալը թողեց իր բանակատեղը և քաշվեց Բրուտիում (Լիվիոս, 27, 12—15, 1)։

Սակայն այնտեղ նույնպես Հաննիբալի կացությունն այնպես հաստատուն չէր, ինչպես նախկինում։ Բրուտիումում իրադրության վրա մեծ ազդեցություն գործեցին և՛ Ռեգիումից կատարվող ապատակությունները, ինչի մասին արդեն խոսվեց, և՛ հատկապես գիրպինների, լուկանների ու վուլկիենտների (որոնք դավաճանել էին հոռմեական հրամանատարությանը և իրենց մոտ տեղակայված պունիկյան կայազորներին) անձնատուր լինելը Փուլվիոսին։ Քվինտոս Փուլվիոսը, Կապուայում իր կատարածին հակառակ, այս անգամ «ողորմածություն» ցուցաբերեց Հռոմի իշխանության տակ վերադարձածների նկատմամբ և սահմանափակվեց միայն բանավոր կշտամբանքներով (Լիվիոս, 27, 15)։ Այդպիսի վերաբերմունքը հեշտ է բացատրվում. Հաննիբալը տակավին գործում էր Իտալիայի ծայր հարավում, և հոռմեական կառավարությունը, իհարկե, շահագրգռված էր այն բանում, որպեսզի, ըստ հնարավորին, խաղաղ միջոցներով նրան զրկի վերջին դաշնակիցներից։ Այդ քաղաքականությունը տվեց իր պտուղները. Փուլվիոսի ճամբարում հայտնվեցին բրուտիների հույժ նշանավոր և ամենաազդեցիկ առաջնորդները՝ եղբայրներ Վիբիոսն ու Պակիոսը, առաջարկելով ճանաչել հոռմեական ժողովրդի իշխանությունը այն պայմաններով, որոնք նոր հենց վերապահվել էին լուկաններին (նույն տեղը)։

Մինչ այդ, Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսը շարժվեց դեպի Տարենթոն, ճանապարհին՝ սամնիացիների երկրում գրավելով Մանդուրիա քաղաքը։ Մոտենալով Տարենթոնին, նա բանակեց այնտեղի նավահանգստի մուտքի մոտ։ Միաժամանակ նա մի մեծ նավախմբով փակեց նաև ելքը դեպի ծով։ Դիպվածը օժանդակեց Փաբիոսին։ Իր ժամանակին Հաննիբալը Տարենթոնում թողել էր բրուտիների մի ջոկատ. այդ ջոկատի պետը սիրատածում էր մի ինչ-որ տարենթոնուհու, որի եղբայրը ծառայում էր հոռմայեցիների մոտ։ Քրոջ նամակից իմանալով հարուստ օտարերկրացու (որն իր ցեղակիցների մեջ մեծ պատիվ ու ազդեցություն ուներ) հետ նրա ծանոթության մասին, այդ մարդը վճռեց հանդամանքների նմանո-

բինակ զուգորդումը օգտագործել այն բանի համար, որպեսզի ծառայի հռոմայեցիներին։ Փաբիոսի թույլտվությամբ, նա փախստականի անվան տակ թափանցեց քաղաք, այնտեղ մերձեցավ բրուտիների պետին և նրան համոզեց իր պահակետը հանձնել հռոմայեցիներին։ Պայմանավորված ժամին Փաբիոսը դարանամուտ եղավ քաղաքի արևելյան ծայրամասի մոտակայքում, իսկ ակրոպոլիսից, նավահանգստից և նավերի վրայից տրվեցին մարտական ազդանշաններ, լսվեցին մարտականչեր։ Տարենթոնում խուճապ սկսվեց։ Նրա արևելյան մասի մատույցները պաշտպանող զորքերը փութապես տեղափոխվեցին այնտեղ, ուր, ըստ երևույթին, ճակատամարտ էր սկսվել, և Փաբիոսը, չհանդիպելով դիմադրության, բրուտիների օգնությամբ գրավեց պարիսպը, թափանցեց քաղաք և կոտրեց քաղաքի դարպասները։ Բուն քաղաքում տարենթոնցիները դրեթե դիմադրություն ցույց չտվեցին, միայն ագորայի մուտքի մոտ կատաղի ընդհարում տեղի ունեցավ։ Գաղանացած հաղթողները փողոցներում ամենուրեք ոչնչացնում էին տարենթոնցիներին, կարթագենցիներին և նույնիսկ բրուտիներին, որոնք նոր հենց հռոմեական զորքը ներս էին թողել քաղաք։ Տարենթոնում, ըստ լուրերի, հռոմայեցիները ձեռք բերեցին 30 հազար ստրուկներ, հսկայական քանակությամբ արծաթ, 83 հազար ֆունտ ոսկի, արվեստի արտադրանքներ (Լիվիոս, 27, 15—16, հմմտ. Ապպ., Հաննիբ., 49, Զոնարաս, 9, 8)։ Պլուտարքոսի պատմածը (Պլուտ., Փաբ., 21—22), որ ընդհանուր առմամբ համապատասխանում է հռոմեական անալիստական ավանդությանը, դրան էական մանրամասն է ավելացնում. Փաբիոսը հրամայեց կոտորել բրուտիներին, որոնց օգնությամբ գրավել էր քաղաքը, որպեսզի հայտնի չդառնար, թե նա Տարենթոնը գրավել է դավաճանության շնորհիվ...

Իսկ ի՞նչ էր անում Հաննիբալը։ Այդ ժամանակ նա զբաղված էր Կավլոնիան պաշարածների դեմ մղած պատերազմով և նրանց հարկադրեց անձնատուր լինել։ Նա, հավանաբար, պարզապես ուշադրություն չէր դարձնում Փաբիոսի շարժման վրա, կամ չէր հասկանում դրա նշանակությունը, այդպիսով հռոմեական կոնսուլին հնարավորություն ընձեռելով անարգել մոտենալու Տարենթոնին։ Լսելով Տարենթոնի պաշարման մասին, Հաննիբալը արագ զորաբեթով ուղղվեց այնտեղ, սակայն ուշացավ։ Կարճատև ժամանակ կանգնած մնալով քաղաքից կես մղոն հեռավորության վրա, Հաննիբալը շարժվեց դեպի Մետապոնտոս։

Հռոմայեցիների կողմից Տարենթոնի գրավումը ավելի վատթարացրեց նրա՝ առանց այդ էլ ծանր ռազմաքաղաքական կացությունը։ Այժմ նա կարող էր հենվել միայն Մեծ Հունաստանի երկու կամ երեք հոր քաղաքների և մեկ էլ բրուտիների վրա. թե՛ սրանց և թե՛ մյուս-

ների նկատմամբ լոկ աղոտ հույս կար։ Հաննիբալին անհրաժեշտ էր վերացնել իր ծանր սխալի հետևանքները և այժմ, որպեսզի թշնամուն հրապուրի դեպի իսկական կործանում, նա վճռեց խորամանկության դիմել։ Փաբիոսի համար անսպասելիորեն հռոմեական բանակատեղ եկան Մետապոնտոսի պատվիրակները, առաջարկելով հանձնել քաղաքը, եթե հռոմայեցիները հրաժարվեն նախկին «դավաճանության», այսինքն՝ Հաննիբալի կողմն անցնելու համար «պատժելուց»։ Այսպիսի առաջարկը Փաբիոսին միանգամայն բնական թվաց, առանձնապես Տարենթոնի անկումից հետո, և նա արդեն նշանակեց այն օրը, երբ մոտենալու էր Մետապոնտոսին։ Հաննիբալն իր հերթին դարանամուտ եղավ քաղաքի մերձակայքում։ Թվում էր, թե ամեն ինչ հաջողություն էր կանխատեսում։ Սակայն վերջին պահին Փաբիոսը, զուշակություն կատարելով, ստացավ անբարենպաստ նախանշաններ (հարուստիկը նրան նույնիսկ ասաց, որ պետք է զգուշանալ թշնամու դարանից ու նենգությունից) և հրաժարվեց արշավանքից։ Վերստին նրա մոտ՝ բանակատեղ եկան Մետապոնտոսի պատվիրակները. խոշտանգումների ազդեցության տակ նրանք պատմեցին պունիկյան զորավարի մտահղացումների մասին (Լիվիոս, 27, 16)։ Եվ այդ փորձը ձախողվեց։

Նոր Կարթագենի անկումը, ինչպես վերևում արդեն ասվել է, պունիկյան կառավարությանն ու հրամանատարությանը հարկադրեց վերանայել հետագա մարտական գործողությունների պլանը. որոշվեց Հասդրուբալ Բարկայանի գլխավորությամբ Իսպանիայից Իտալիա ուղարկել նոր բանակ Հաննիբալին միանալու համար։ Հասդրուբալը և նրա ընկերակիցները (Գիսկոնի որդի Հասդրուբալը և Մագոն Բարկայանը) հասկանում էին, որ, ձեռնարկելով այդ արշավանքը, հարկ էր լինելու վերացնել եթե ոչ Սկիպիոնին ու նրա բանակը, ապա գոնե այդ կողմից Պիրենեյան թերակղզում (որտեղ կարթագենցիների ուժերը Հասդրուբալ Բարկայանի հեռանալուց հետո խիստ կթուլանային) կարթագենական տիրապետության նկատմամբ եղած անմիջական սպառնալիքը։ Իսկ վտանգը շատ լուրջ էր. չխոսելով արդեն դրամի, պարենամթերքի, հանդերձանքի և նույնիսկ կարևորագույն հենակետի՝ պունիկյան Իսպանիայի յուրատեսակ «մայրաքաղաքի» կորստյան մասին, Սկիպիոնի փայլուն հաջողությունը վերստին Հռոմի կողմն անցնելու ալիք առաջացրեց իբերական ցեղերի մեջ. դրան պակաս չափով չնպաստեցին նաև կարթագենական զորավարների գործողությունները, որոնք Իսպանիայում բռնացումներով ու ահարեկմամբ հաստատեցին պունիկյան տիրապետությունը (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 10, 36, 3—6), և հենց Սկիպիոնի քաղաքա-

կանությունը։ Այսպես, հռոմեական բանակատեղ ներկայացավ Էդեսան ցեղի ղեկավար Էդեսկոնը, որը, Լիվիոսի բնութագրմամբ, իսպանական շատ երևելի առաջնորդներից մեկն էր (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 10, 34, 2—10)։ Հռոմեական հրամանատարության ձեռքերում էին նրա կինն ու երեխաները, ուստի նրա գործողությունները հետագա մեկնաբանություններ չեն պահանջում, թեև Լիվիոսը խոսում է նաև Էդեսկոնին դավաճանության դրդող ուրիշ պատճառների մասին։ Կարթագենական բանակից իրենց զորքերով հեռացան Ինդերիլոսն ու Մանդոնիոսը, որոնց Լիվիոսն անվանում է ամբողջ Իսպանիայի վստահելի առաջնորդներ (principes, Լիվիոս, 27, 17, Պոլիբիոս, 10, 35, 6—8)։ Ոչ մի հույս չկար, թե կենտրոնախույս այդ պրոցեսը ինքնաբերաբար կարող էր վերջ գտնել, և Հասդրուբալ Բարկայանը որոշեց որքան կարելի է ավելի շուտ ճակատամարտ տալ Սկիպիոնին (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 10, 37, 1—5)։ Պոլիբիոսը դա բացատրում է նրանով, որ Հասդրուբալը հույս ուներ շահել ճակատամարտը և այնուհետև որոշել հետագա անելիքը։ Այն դեպքում, եթե նրան անհաջողություն պատահեր, Հասդրուբալը մտադիր էր մեկնել Գալլիա, իսկ այնտեղից՝ Իտալիա։ Սակայն, և այդ մասին նոր հենց խոսվեց,— Հասդրուբալի արշավանքն Իտալիա բոլոր դեպքերում արդեն կանխորոշված էր. հաղթանակը նրան անհրաժեշտ էր, որպեսզի Իսպանիայում ամուր թիկունք ապահովի իր համար։ Սկիպիոնը նույնպես մարտի էր ձգտում. նա կամենում էր գործ ունենալ միայն Հասդրուբալի հետ, մինչև որ կմոտենային կարթագենական մյուս բանակները։ Գարնանամուտին Սկիպիոնը Տառակոնից ռազմերթի ելավ (Լիվիոս, 27, 17)։

Հասդրուբալ Բարկայանի բանակն այդ պահին կանգնած էր Բեկուլայի մոտակայքում։ Սկիպիոնն հենց այնտեղ տարավ իր զորքերը։ Հասդրուբալն իր բանակատեղի առջևում տեղավորել էր արգելափակող հեծելաջոկատներ, սակայն, հռոմեական թեթևազեն զինվորների և ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր գնում էին զորասյան առջևից, առաջին իսկ հարվածները հեծյալներին ստիպեցին սլանալ դեպի ճամբար։ Լիվիոսը գրում է, որ հետապնդելով փախչող թշնամուն, հռոմայեցիները քիչ էր մնում, որ գրավեին ճամբարի դարպասները։

Գիշերը Հասդրուբալը իր զինվորներին տարավ մի բարձունքի վրա, որի գագաթը տափարակ մի սարահարթ էր։ Դա մի հարմար դիրք էր, որն իշխում էր տեղանքին. գետը հարվածից հուսալիորեն պաշտպանում էր նրա թիկունքը, իսկ ճակատից ու թևերից դահավեժ զառիթափերը խիստ դժվարացնում էին վերելքը։ Սակայն այն ուներ նաև մի էական թերություն. այնտեղ կարելի էր պաշտպանվել, բայց այնտեղից դժվար էր հարձակողական գործողություններ կատարելը։ Այդ սարահարթի ներքևում, ուր տեղավորված էր Հասդրուբալ Բարկայանը, կային դարավանդներ, որոնք նույնպես բոլոր կողմերից շրջապատված էին զառիթափերով։ Հասդրուբալի հրամանով դրանք գրավեցին նումիդիական հեծյալները, ինչպես նաև բալեարական ու լիբիական թեթևազեն նետաձիգները (Լիվիոս, 27, 18)։ Սկիպիոնն իր կոհորտաներից մեկն ուղարկեց գրավելու հովտաբերանը, որի միջով գետը հոսում էր կարթագենցիների թիկունքը, իսկ մեկ այլ կոհորտայի հանձնարարեց կտրել այն ճանապարհը, որը Բեկուլայից տանում էր դեպի դաշտերը։ Նա ինքը թեթևազեն հեծելազորային ուժերի գլուխ անցած՝ սկսեց բարձրանալ հակառակորդի ճամբարը և, չնայած համառ դիմադրությանը, գրավեց դարավանդները, և այնուհետև երեք կողմից հարվածեց կարթագենցիների հիմնական ուժերին։ Հասդրուբալի ճամբարում իրարանցում սկսվեց, և, օգտվելով դրանից, հռոմայեցիները բարձրացան սարահարթը։ Բոլոր կողմերից շրջապատված, լքված իր հրամանատարից (Հասդրուբալը, դեռևս մինչև ճակատամարտն սկսվելը, ուղարկելով դրամներն ու փղերին, Տագոսի հոսանքով գնաց դեպի հյուսիս, Պիրենեյան լեռների կողմը), կարթագենական բանակը երկար չդիմադրեց. մոտավորապես 8000 զորական սպանվեց, իսկ 10 հազար հետևազորային և 2000 հեծյալ գերի ընկան։ Հետևելով իր քաղաքական գծին, Սկիպիոնը բոլոր իբերացիներին բաց թողեց առանց փրկավճարի։ Աֆրիկացիներին նա հրամայեց ստրկության վաճառել (Լիվիոս, 27, 18—19)[146]։ Գերևարված աֆրիկացիների մեջ գտնվեց Մասանասայի ազգական Մասիվան։ Սկիպիոնը նրան թույլ տվեց վերադառնալ հորեղբոր մոտ, և այդ սիրալիրությունը առաջին քայլը հանդիսացավ հռոմայեցիների և Մասանասայի միջև բարեկամական հարաբերությունների հաստատման ճանապարհին։

Ջախջախումը չկանգնեցրեց Հասդրուբալին։ Բեկուլայի մոտ մղված ճակատամարտից շատ չանցած՝ կարթագենական բանակները (Գիսկոնի որդի Հասդրուբալի, Մագոն Բարկայանի և Հասդրուբալ Բարկայանի զորքի մնացորդները) միացան Պիրենեյան թերակղզու հյուսիսում, և այնտեղ երեք հրամանատարները որոշեցին հետևել նշագծված պլանին. Հասդրուբալ Բարկայանը, հավաքելով որքան հնարավոր էր շատ զինվորներ, պետք է գնար Իտալիա, որտեղ վճռվելու էր պատերազմի բախտը (Լիվիոս, 27, 20)։

IV

Մինչ Հասդրուբալը կրկնում էր իր եղբոր իտալական արշավանքը, ռազմական գործողություններն Իտալիայում ընթանում էին իրենց հու-

նով։ 208 թվականի պատերազմն այն ժամանակվա կոնսուլներից մեկը՝ Տիտոս Քվինկտիոս Կրիսպինոսն, սկսեց նրանից, որ այն բանակը, որը նախկինում գլխավորում էր Քվինտոս Փուլվիոս Փլակոսը, օժանդակ զորաբաժինների հետ միասին, առաջ շարժեց դեպի Լուկանիա, իսկ այնուհետև ներխուժելով Բրուտիում, սկսեց Լոկրիսի պաշարումը (Լիվիոս, 27, 25)։ Այս գործողությունները համապատասխանում էին պատերազմի այն ընթացքին, որը նրան տվել էր Փաբիոսը՝ Տարենտոնի գրավմամբ. Իտալիայում հռոմեական հրամանատարության առջև այժմ, իհարկե, ծառացած էր Մեծ Հունաստանի քաղաքների գրավման և Հաննիբալին դեպի ծով ելք ունենալուց զրկելու խնդիրը։ Սակայն փոքր-ինչ հետո հարկ եղավ, որ Կրիսպինոսը վերացնի պաշարումը, քանի որ Հաննիբալն իր հերթին մոտեցել էր Լատինիումին (նա այդպիսով վերստին Ապուլիայում ամրանալու փորձ ձեռնարկեց), իսկ 208 թվականի մյուս կոնսուլը՝ Մարկելլոսը, որի հետ կամենում էր միանալ Կրիսպինոսը, դուրս եկավ Վենուսիայից։ Վերջիվերջո Կրիսպինոսն ու Մարկելլոսը բանակեցին Վենուսիայի և Բանտիայի միջև, միմյանցից մոտավորապես 3 մղոն հեռավորության վրա։ Այնտեղ եկավ նաև Հաննիբալը (նույն տեղում)։

Կոնսուլներն այրվում էին պատերազմելու ցանկությամբ։ Նրանք համոզված էին, որ եթե Հաննիբալը համարձակվի մարտնչել երկու բանակների դեմ, այդ դեպքում անխուսափելի կործանում է սպասում նրան։ Ամեն օր առավոտյան նրանք դասավորում էին իրենց զորքերն ու սպասում. միգուցե Հաննիբալը չդիմանա և հախուռն կերպով նետվի հակառակորդի վրա (նույն տեղում)։ Սակայն, հավանաբար կարթագենյան զորավարը նույնպես իր ուժերը բավական չէր համարում այդպիսի գործի համար։ Նա ամեն կերպ խուսափում էր ճակատամարտից, որը նրա վրին էին փաթաթել Կրիսպինոսն ու Մարկելլոսը, և սահմանափակվեց մանր ընդհարումներով, տեղ փնտրելով դարանակալելու համար (Լիվիոս, 27, 26)։

Հռոմեական հրամանատարությունն սկսում էր անզուսպ ջղայնությամբ առլցվել։ Ժամանակն անցնում էր, ոչ մի լուրջ բան տեղի չէր ունենում։ Այդպես ամբողջ ամառը կարող էր անցնել, առանց շոշափելի արդյունքի։ Այդ իսկ պատճառով, հռոմայեցիները ակնհայտորեն վճռեցին վերադառնալ Կրիսպինոսի սկզբնական մտահղացմանը և վերսկսել Լոկրիսի պաշարումը։ Հռոմեական նավատորմավարներից մեկը՝ Լուկիոս Կինկիոս Ալիմենտոսը, հրաման ստացավ իր գլխավորած նավախումբը տեղափոխել Լոկրիսի մատույցները. ցամաքից քաղաքը շրջափակելու համար որոշվեց օգտագործել Տարենտոնում կանգնած կայազորի մի մասը։ Սակայն Հաննիբալը ժամանակին իմացավ հռոմայեցիների այդ

նոր ձեռնարկման մասին. Հաննիբալին դա հաղորդեցին Թուրիայի ինչոր քաղաքացիներ։ Դա ինքնաստինքյան բնութագրում է Մեծ Հունաստանի բնակչության գոնե մի մասի տրամադրությունն ու համակրանքը։ Գունիկացին 3000 հեծյալ և 2000 հետևակային ուղարկեց Տարենտոնից Լոկրիս տանող ճանապարհը փակելու համար։ Կարթագենցիները դարանամուտ եղան Գնատիլիոսյան բլրի ստորոտում. հենց նրանց էլ հանդիպեցին անհոգ, առանց պահակազորի ու հետախուզության ընթացող հռոմայեցիները։ Մոտավորապես 2000 հռոմեական զորայիններ սպանվեցին, գրեթե 1500-ը գերի ընկան։ Մյուսներին կարթագենցիները ցանուցիր արեցին և հարկադրեցին վերադառնալ Տարենտոն (Լիվիոս, 27, 26)։

Այնինչ, Հաննիբալը, նախկինի պես, անխուսափելի ճակատամարտի կանխատեսմանը զուգահեռ, փնտրելով հարմար դարանատեղ, ուշադրություն դարձրեց կարթագենական ու հռոմեական ճամբարների միջև գտնվող անտառապատ բլրի վրա և մի գիշեր այնտեղ ուղարկեց նումիդիական հեծելազորի մի քանի ստորաբաժանում։ Կոնսուլներ Կրիսպինոսն ու Մարկելլոսը, իրենց շրջապատողների ազդեցության տակ, նույնպես հանգեցին այն մտքին, որ անհրաժեշտ է գրավել այդ բլուրը, և Մարկելլոսի առաջարկով փրեգելացիներից և էտրուսկներից կազմված 220 հեծյալների գլուխ անցած՝ մեկնեցին շրջապատելու։ Հանկարծակիորեն նրանց շրջապատեցին նումիդիացիները, և կարճատև մարտում Մարկելլոսն սպանվեց։ Վիրավորված Կրիսպինոսը փախավ ճամբար (Պոլիբիոս, 10, 32, 1—6, Լիվիոս, 27, 26—27)։ Հաննիբալն անմիջապես իր ճամբարը տեղափոխեց բլրի վրա, այնտեղ գտավ սպանված կոնսուլի դիակը և այն հողին հանձնեց։ Նա ընդհանրապես կամենում էր հակառակորդի հրամանատարության նկատմամբ (եթե օգտագործենք նշանակալիորեն ավելի ուշ ժամանակի արտահայտությունը) ցուցաբերել յուրատեսակ ասպետություն։ Կրիսպինոսը քաշվեց լեռները և ամրացավ այնտեղ (Լիվիոս, 27, 28)։ Համաձայն Ապպիանոսի պատումի (Ապպ., Հաննիբ., 50), Մարկելլոսը հարձակվել է շրջակայքն ավարի մատնող նումիդիական հեծյալների վրա և, շրջապատվելով թշնամիներից ու լքվելով իր զինվորներից, սպանվել է։ Հաննիբալն այրել է նրա մարմինը, իսկ ոսկորները ուղարկել է հռոմեական ճամբար՝ նրա որդուն։

Մարկելլոսի կորուստը (ճիշտ է, փոքր ընդհարման մեջ) և Կրիսպինոսի հափշտակ նահանջը Հաննիբալի համար ստեղծեցին որոշակի ռազմաքաղաքական առավելություն, որը նա փորձեց օգտագործել, ամրապնդելով ձեռք բերած հաջողությունը։ Հատկապես կարևոր էր թվում այն, որ Հաննիբալի ձեռքն ընկավ Մարկելլոսի կնքամատանին, և կար-

Թագենական զորապետը հնարավորություն ստացավ, քանի դեռ կոնսուլի կորստյան մասին լուրը չէր տարածվել, իբրև թե նրա անունից կեղծ հրամաններ ուղարկելու։ Նա մասնավորապես տեղեկություն ուղարկեց Սալապիա, որ Մարկելոսը առաջիկա գիշերը իր զորքերով գալու է այնտեղ։ Սակայն նրան կանխեցին. Կրիսպինոսը, որը ճիշտ նույնպիսի միտք էր հղացել, մոտակա բոլոր քաղաքներին փութապես տեղեկացրեց իր ընկերակցի մահվան մասին և նրանց նախազգուշացրեց՝ չհավատալ այն նամակներին ու կարգադրություններին, որոնք կարող են վավերացված լինել Մարկելոսի կնիքով։ Սալապիայում, որտեղ իշխանությունները երկյուղ էին կրում դավաճանության և կարթագենական հեծյալներին կոտորելու դիմաց Հաննիբալի հաշվեհարդարից, որոշեցին խորամանկության դիմել։ Պատվիրակին (սա հռոմեական փախստական էր) ուղարկելով իր տուն, նրանք քաղաքի՝ ռազմավարական տեսակետից կարևոր կետերում տեղավորեցին քաղաքացիների ջոկատներ, ուժեղացրին պարիսպների պահպանությունը, իսկ դարպասների մոտ կենտրոնացրին կայազորի լավագույն մասը։ Ուշ գիշերին, չորրորդ պահաժամի մոտերքը, Հաննիբալը մոտեցավ քաղաքին։ Առաջին շարքերում գտնվող հռոմեական փախստականների պահանջով պահակները համեմատաբար փոքր բարձրության վրա վեր հանեցին դարպասների մուտքը փակող վանդակը. երբ մոտավորապես 600 փախստական մտավ քաղաք, վանդակը անսպասելիորեն ցած իջավ, սալապիական կայազորի մի մասը նետվեց նրանց ոչնչացնելու, իսկ մյուս զորականները իրենց նետերն ու տեգերը տեղացին կարթագենցիների վրա (Լիվիոս, 27, 28, Պոլիբիոս, 10, 33, 7, Ապպ., Հաննիբ., 51, Զոնարաս, 9, 9)։

Խորամանկությամբ Սալապիան գրավելու փորձը չհաջողվեց, և Հաննիբալը արագությամբ շարժվեց դեպի հարավ, Լոկրիսի կողմը։ Գործերն այնտեղ անբարեհաջող էին ընթանում. Կինկիոսը հաջողությամբ իրականացնում էր պաշարումը, և Լոկրիսում կանգնած պունիկյան կայազորի հրամանատար Մագոնն արդեն մտածում էր հանձնվելու մասին. տեղեկություն ստանալով Հաննիբալի մոտեցման մասին, նա ոգի առավ և իր կողմից հարվածեց թշնամուն։ Երբ մարտի մեջ մտան Հաննիբալի նումիդիական հեծյալները, հռոմայեցիները, դեն նետելով պաշարողական սարքերը, նետվեցին դեպի իրենց նավերը, և այդպիսով պաշարումը վերացվեց (Լիվիոս, 27, 28)։

Եվ այսպես, սպանելով մի կոնսուլին (Մարկելոսին) և ծանր վիրավորելով մյուսին (Կրիսպինոսին) (Լիվիոս, 27, 33), Հաննիբալը, եթե չընդլայնեց, ապա, համենայն դեպս, պահպանեց իր դիրքերը Իտալիայի հարավում։ Կրիսպինոսն այս իրադարձություններից քիչ հետո վախճանվեց։ Մարկելոսի կորստից հետո հռոմեական բանակի անգործությունը Հաննիբալին թույլ տվեց վճռական հարվածով Լոկրիսն ազատագրել շրջափակումից։ Պատերազմի այսպիսի արդյունքը կարելի էր որոշ չափով հաջող համարել, մանավանդ որ Հաննիբալը պահպանեց Հասդրուբալ Բարկայանին հանդիպելու հնարավորությունը, որպեսզի նրա օգնությամբ Հռոմի դեմ ծավալի նոր ու ընդարձակ գործողություններ, եթե, իհարկե, դրա նշանակությունը չնվազեր Կարթագենի աֆրիկական տիրույթների վրա Լևինոսի հրամանատարությամբ 100 նավից բաղկացած հռոմեական նավատորմի նոր հարձակմամբ։ Ամայացնելով Կլուպեայի շրջակայքն ընդգրկող տարածքը, որտեղ նրանք ոչ մի մարդու չհանդիպեցին, հռոմայեցիները, երբ հազիվ էր իրենց հասել կարթագենական նավատորմի մոտեցման լուրը, վերադարձան դեպի նավերը։ Կլուպեայի մոտ տեղի ունեցած ծովային մարտում պունիկացիները, որոնց նավախումբը բաղկացած էր 83 նավից, ջախջախվեցին ,և Լևինոսը մեծ ու բազմատեսակ ռազմաավարով անարգել վերադարձավ Լիլիբեոն (Լիվիոս, 27, 29)։

Նույն այդ ժամանակ Հասդրուբալը իր բանակը առաջնորդեց Ապենինյան թերակղզի։ Գալլիայում նրա հայտնվելը խորը հուզումներ առաջացրեց այնտեղ. հաղորդում էին (և Արևմտյան Միջերկրականի համար մղած պայքարում Կարթագենի վաղեմի մրցակից Մասսալիայի պատվիրակները շտապեցին այդ մասին տեղեկացնել հռոմեական կառավարությանը), որ նա իր հետ մեծ գումար է բերել վարձկան զինվորներ հավաքագրելու համար։ Եվ իրոք, Հասդրուբալ Բարկայանը Գալլիայում մեծաթիվ զորք հավաքեց և, ըստ երևույթին, չհանդիպելով դիմադրություն, մոտեցավ Ալպերի ստորոտներին։ Մեր աղբյուրը, համենայն դեպս, ոչինչ չի ասում գալլական ցեղերի հետ Հասդրուբալի որևէ ընդհարման մասին։ Դեռ ավելին. մենք տեղեկանում ենք Հասդրուբալին ինչ-որ գալլական և ալպիական ցեղերի հարելու մասին (Լիվիոս, 27, 39)։ Վերահաս ձմեռային ցրտերը նրան խանգարեցին հաղթահարելու Ալպերը, սակայն ակնհայտ էր, որ գարունը գալուն պես, կարթագենական մի մեծ զորաբանակ ևս կհայտնվի Իտալիայում, թերակղզու հյուսիսում (Լիվիոս, 27, 36)։ Ճիշտ է, ինքը՝ Հասդրուբալը քանիցս պարտվել էր և նա Իտալիա էր գնում, դրա նախօրյակին պարտություն կրած լինելով Սկիպիոնից. բայց չէ՞ որ նա ևս մի ժամանակ չարաչար պարտության էր մատնում հռոմայեցիներին, իսկ բոլորովին վերջերս ճարպկորեն խաբեց Ներոնին՝ Իսպանիայում Սկիպիոնի նախորդին, և խուսափեց շրջապատումից ու, թվում էր, անխուսափելի գերությունից։ 207 թվականի կոն-

սուլները՝ Գայոս Կլավդիոս Ներոնը, նույն ինքը, որի նկատմամբ Հասդրուբալը իրագործեց իր նենգ հնարանքը, և Մարկոս Լիվիոսը՝ հետագայում Սալինատորոս մականվանյալը, իրենց առջև բավականին լուրջ հակառակորդ ունեին, իսկ Հաննիբալի ձեռքում նման բանակը կարող էր վերածվել ահեղ ուժի, որը հնարավորություն կտար պատերազմի ընթացքը փոխել հօգուտ իրեն։ Հարկ չկար թերագնահատել վտանգը։

Այս հանգամանքներով էին որոշվում պատերազմի ընթացքում երկու կողմերի անմիջական նպատակները։ Հաննիբալին անհրաժեշտ էր ինչ-գնով էլ լիներ միանալ Հասդրուբալին, ըստ հնարավորության մինչև հռոմեական զորքերի հետ նրա շփման մեջ մտնելը։ Հռոմեական հրամանատարությունը ձգտում էր ամենից առաջ Հաննիբալին պարտադրել հարավում շարունակելու զինված պայքարը և թույլ չտալ նրան՝ եղբորն ընդառաջ գնալու (այս խնդրի լուծումը հանձնարարվեց Լուկանիայում և Բրուտիումում հռոմեական զորքերի հրամանատար Ներոնին) և, երկրորդ, հյուսիսում չախչախել Հասդրուբալին, քանի դեռ նա չէր միացել Հաննիբալին։ Հասդրուբալին ոչնչացնելու գործողությունը պետք է իրականացներ Մարկոս Լիվիոսը, որին «պրովինցիա» էր նշանակված Այսբրալպյան, այսինքն՝ այսրկողմնային, Ալպերից հարավ ընկած Գալլիան։ Նրա իրավասության տակ դրվել էին Էտրուրիայում և Գալլիայում տեղավորված հռոմեական զորքերը, ինչպես նաև անմիջականորեն Հռոմում կանգնած զորամիավորումները։

Գարունը գալուն պես, Հասդրուբալն անցավ Ալպերը։ Տիտոս Լիվիոսը (27, 39) Հասդրուբալի տակտիկական հաջողությունը (ժամանակ շահելը) բացատրում է գլխավորապես ալպիական ցեղերի դիմադրության բացակայությամբ. վերջիններս համոզված էին այն բանում, որ իրենց տիրույթներով անցնող կարթագենցիները բոլորովին էլ չեն կամենում իրենց հնազանդեցնել։ Իտալիայում Հասդրուբալին արդեն սպասում էր լիգուրների ուժեղ մի ջոկատ։ Սակայն, Հաննիբալին միանալու համար փոխանակ դեպի հարավ շարժվելու, նա ձեռնամուխ եղավ Պլակենտիայի պաշարմանը։ Նրա դիտավորությունները պարզ էին. գրավել և ավերել Պլակենտիան, ինչը նա հույս ուներ կատարել առանց հատուկ դժվարության, սարսափի մեջ ձգել Իտալիայի հյուսիսում գտնվող մյուս քաղաքները և նրանց ստիպել անցնելու Կարթագենի կողմը։ Սակայն նրան չհաջողվեց գրավել Պլակենտիան։ Ապարդյուն պաշարումը միայն դանդաղեցրեց դեպի հարավ Հասդրուբալի շարժումը և, որն արդեն լիովին անմեկնելի է, Հաննիբալին դարմանալի միտք ներշնչեց. քանի դեռ Հասդրուբալը պաշարում է Պլակենտիան, դեռևս որոշ ժամանակ մնալ ձմեռային կացարաններում և դեպի հյուսիս ուղղի ելնել ավելի ուշ (նույն տեղը)։

Վերջիվերջո Հաննիբալն այնուամենայնիվ գնաց Լարինիումի մարզի սահմանների երկայնքով դեպի սալենտիններ։ Այս շարժման ժամանակ նրա զորքերը ենթարկվեցին Գայոս Գոստիլիոս Տուբուլոսի հրամանատարությամբ գործող հռոմեական ջոկատների անսպասելի հարձակմանը։ Կարթագենցիները կորցրեցին մոտավորապես 4000 մարդ։

Կարթագենյան զորավարի ձեռնարկած արշավանքի լուրը սալենտինների երկրում հռոմեական զորքերի հրամանատար Քվինտոս Կլավդիոսին հարկադրեց հեռանալ ձմեռային կացարաններից։ Ճակատամարտից խուսափելով, Հաննիբալը հեռացավ Բրուտիում, իսկ այնտեղից Լուկանիա և մոտեցավ Գրումենտումին։ Քվ. Կլավդիոսը վերադարձավ սալենտինների երկիրը, իսկ Գոստիլիոսը, մեկնելով Կապուա,, որտեղ նա պետք է փոխարիներ պրոկոնսուլ Քվ. Փուլվիոսին, Վենուսիայում հանդիպեց կոնսուլ Ներոնին և նրան հանձնեց իր զորքի մի մասը (Լիվիոս, 27, 40)։

Շարժվելով դեպի Գրումենտում, Հաննիբալը հույս ուներ իրեն վերադարձնել հռոմայեցիների կողմն անցած քաղաքները։ Սակայն Վենուսիայից նույն տեղը եկավ նաև Ներոնը, բանակելով Հաննիբալից մոտավորապես մեկուկես մղոն հեռավորության վրա։ Նրանց դիրքերի միջև բաց դաշտ էր ընկած, և այնտեղ մշտապես մանր ընդհարումներ էին բռնկվում։ Հաննիբալը, կամենալով ազատվել թշնամու զորքից, օրըստօրե զինվորներին հանում էր այդ դաշտը, սակայն Ներոնը նույնպիսի անդրդվելիությամբ խուսափում էր մարտից։ Կոնսուլը կամենում էր թշնամուն թույլ չտալ միանալու Հասդրուբալին։ Իհարկե, այդպես երկար չէր կարող շարունակվել։ Ներոնը մի որևէ բան պետք է վճռեր և մի անգամ գիշերը նա մի քանի կոհորտաների կարգադրեց դարանամուտ սպասել բլուրների ետևում, իսկ այգաբացին իր զինվորներին հանեց բանակատեղից և նրանց դասավորեց մարտական կարգով։ Պունիկյան բանակատեղում մարտի աղդանշան տրվեց։ Զինվորները, վերցնելով զենքերը, նետվեցին հռոմայեցիների վրա։ Անկարգության մեջ պունիկացիները չկարողացան դիմակայել լավ կազմակերպված թշնամուն։ Մարտի թեժ պահին Հաննիբալը փորձեց կարգ հաստատել, սակայն նույն պահին դարանից հարձակվեցին հռոմայեցիները։ Պունիկացիները փախան։ Մի քանի օր հետո Հաննիբալը գիշերն անաղմուկ դուրս եկավ իր զորատեղից և գնաց Ապուլիա (Լիվիոս, 41—42)։

Ավարի մատնելով կարթագենցիների լքած ամրությունները, Ներոնն իր բանակով հետապնդեց Հաննիբալին և Վենուսիայի մոտակայքում հասավ նրան։ Այնտեղ տեղի ունեցավ մի ընդհարում ևս, որտեղ ոչընչացան ավելի քան 2000 պունիկացիներ, և Հաննիբալը, կորուկ շուտ

գալով դեպի հարավ, մեկնեց Մետապոնտոս։ Այնտեղից նա տեղի կայազորի հրամանատար Հաննոնին ուղարկեց Բրուտիում՝ նոր զինվորներ հավաքելու, և երբ այդ կատարվեց, վերադարձավ Վենուսիա, իսկ այնտեղից անցավ Կանուսիում։ Ներոնը կրնկակոխ հետապնդում էր նրան (Լիվիոս, 27, 42)։

Նույն այդ ժամանակ Հասդրուբալը, վերջապես դադարեցնելով Պլակենտիայի պաշարումը, որոշեց գնալ և միանալ Հաննիբալին ու նրա մոտ ուղարկեց 4 հեծյալների՝ 2 գալլերի և երկու նումիդիացիների, մի նամակով, որտեղ, ինչքանով որ այդ մասին կարելի է դատել, ցույց էր տրված հանդիպման ժամանակը և վայրը (Ումբրիա)։ Նամակը չհասավ հասցեատիրոջը. գալլերն ու նումիդիացիները, ճանապարհը չգիտենալով, ընկան Տարենթոն և այնտեղ գերի վերցվեցին անասնակեր մթերող հռոմայեցիների կողմից։ Ծանոթանալով ձեռք բերված փաստաթղթի բովանդակությանը, Ներոնը համարձակ վճիռ ընդունեց. սենատին հղած նամակում նա առաջարկեց Կապուայում տեղակայված լեգեոնը ետ կանչել Հռոմ, լրացուցիչ զորահավաքի միջոցով համալրելով բուն հռոմեական կայազորը, այն կանգնեցնել Նարնիայի մատույցներում, հարկ եղած դեպքում Հաննիբալին դիմադրություն ցույց տալու նպատակով։ Իսկ ինքը՝ Ներոնը, հավաքելով 6000 հետևազորային և 100 հեծյալ, գիշերը շարժվեց դեպի Պիկենում։ Հարավում նա իրեն տեղակալ թողեց լեգատ Քվինտոս Կատիոսին (Լիվիոս, 27, 43)։

Հռոմում Ներոնի գործողությունները մեծ տագնապ առաջացրին։ Երկյուղ էին կրում, որ Հաննիբալը, իմանալով դեպի հյուսիս նրա շարժման մասին, կարող էր ոչնչացնել թե՛ հարավում գտնվող հռոմեական բանակը, որը մնացել էր առանց հրամանատարի, և թե՛ իրեն՝ Ներոնին (եթե Հաննիբալն սկսեր հետապնդել նրան), որն ընդամենը 7000 զինվոր ուներ։ Կասկածում էին, որ Ներոնը չի կարողանում հաղթել հակառակորդին՝ նենգ ու ընդունակ զորավարին, մանավանդ որ Հասդրուբալը մեկ անգամ արդեն խաբել էր նրան (Լիվիոս, 27, 44)։

Սակայն Ներոնին ուղեկցում էին ոչ միայն այդ կասկածները։ Ամբողջ ճանապարհին նրա ջոկատին դիմավորում էին տղամարդկանց ու կանանց բազմությունները, որոնք հաղթանակներ էին մաղթում զորականներին, նրանց կոչելով Հռոմի և հռոմայեցիների ազատության փրկիչներ, ուխտեր էին անում աստվածներին, առատորեն առաջարկում սննդամթերք և անասնակեր (Լիվիոս, 27, 45)։ Վերջապես մութ գիշերին. անաղմուկ, Ներոնը մտավ Սենայից ոչ հեռու գտնվող Մարկոս Լիվիոսի ճամբարը։ Հասդրուբալի ճամբարը գտնվում էր հռոմայեցիների զորա-

տեղից մոտավորապես կես մղոն հեռավորության վրա (տե՛ս Լիվիոս, 27, 46, հմմտ. Փրոնտինոսի մոտ, 1, 1, 9, Վալ. Մաքս, 7, 4, 4)։

Ներոնի պնդմամբ, արդեն հաջորդ օրը կոնսուլները և պրետոր Նորկիոս Լիկինոսը, որը փոխգործողության մեջ էր մտել Մարկոս Լիվիոսի հետ, որոշեցին ճակատամարտ տալ։ Հռոմեական զորքերը խորհրդից անմիջապես հետո մարտակարգ ընդունեցին։ Կարթագենցիներն արդեն պատրաստ էին մարտի, սակայն այն սկսվելուց անմիջապես առաջ, Հասդրուբալը, հռոմայեցիների մոտ տեսնելով հին վահաններ, որոնք նախկինում չէր տեսել, և ուժասպառ արված ձիեր, կասկածեց, թե Լիվիոսի մոտ օժանդակ զորամիավորումներ են եկել, և հրամայեց նահանջի ազդանշան տալ։ Հասդրուբալը վճռեց ստուգել իր կռահումները, և շատ շուտով նրա ամենավատթար ենթադրությունները հաստատվեցին. եթե նախկինում հռոմեական ճամբարում միայն մեկ անգամ էին մարտական ազդանշաններ տալիս, ապա այժմ երկիցս ազդանշան տվեցին. մեկը՝ Մ. Լիվիոսի զինվորների համար, իսկ մյուսը՝ Ներոնի ջոկատի համար։ Ամեն ինչ պարզ էր։ Հասդրուբալի դեմ կանգնած էին երկու կոնսուլներ։

Գիշերը Հասդրուբալը հրամայեց հեռանալ ճամբարից, սակայն ընկավ հույժ դժվարին կացության մեջ. ուղեկցողները փախան, իսկ կարթագենցիները ո՛չ ճանապարհը գիտեին և ո՛չ էլ անցահունները։ Անպատակ թափառելով դաշտերում, նա վճռեց ընթանալ Մետավրոս գետի ուղղությամբ։ Հասդրուբալը մի ամբողջ օր վատնեց անցահունի անհաջող որոնումների վրա, և հռոմայեցիները, որոնց անհամեմատ ավելի լավ հայտնի էին բոլոր ճանապարհները, առանց դժվարության, վրա հասան նրան։ Ճակատամարտից խուսափելն անհնար էր։

Հասդրուբալը մարտական կարգով ծավալեց երկարատև ու աննպատակ անցումից հոգնատանջ իր զինվորներին։ Հռոմեական աջ թևի (որին գլխավորում էր Ներոնը) դիմաց Հասդրուբալը դասավորեց գալլերին։ Հռոմայեցիների ձախ թևին, որտեղ գտնվում էր Մ. Լիվիոսը, հետևազորի հիմնական զանգվածով, Հասդրուբալը հակադրեց իր իբերական զորամասերը, որոնց վճռեց անձամբ գլխավորել։ Հասդրուբալը կենտրոնում Լիկինոսի զորամիավորումներին հանդիման կանգնեցրեց լիգուրների ջոկատները։ Հասդրուբալի դիրքը, որն, ըստ երևույթին, խիստ մեծացնում էր զորքի ձգվածությունը, շատ հարմար չէր. գալլերի առջև բարձրացող բլուրը նրանց խանգարեց մարտի մեջ մտնելու, երբ հռոմայեցիների ձախ թևում ճակատամարտ բռնկվեց։ Ձախ զորաթևում մղվող ճակատամարտը, որտեղ Հասդրուբալը մտցրեց նաև փղերին (աղմուկից ու վերքերից կատաղած՝ նրանք դես ու դեն էին նետվում պատերազմող

զինվորների մեջ), հույժ համառ ու արյունահեղ էր։ Կողմերից ոչ մեկը չկարողացավ գերակշռության հասնել։ Մարտի թեժ պահին Ներոնը, թիկունքից շրջանցելով հռոմեական զորքերը, աջ թևում անշարժ կանգնած իր մի քանի կոհորտաները տեղափոխեց ձախ թև ու հարվածեց Հասդրուբալի աջ զորաթևին։ Միաժամանակ հռոմայեցիները հակառակորդի վրա հարձակվեցին նաև թիկունքից։ Իբերներն ու լիգուրները գրեթե ընկան օղափակման մեջ. գալլերի մեծ մասն այս ու այն կողմ փախավ, իսկ նրանք, ովքեր մնացին, չկարողացան դիմանալ մարտին։ Հասդրուբալը համարյա դեռ փորձում էր դիմադրություն կազմակերպել, սակայն, տեսնելով, որ ջախջախումն անխուսափելի է, խթանեց ձիուն և ներխուժեց հռոմեական կոհորտաներից մեկի մեջ ու սպանվեց (Լիվիոս, 27, 47—49, Պոլիբիոս, 11, 1, 2—12, հմմտ. Ապպ., մոտ, Հաննիբ., 52, Օրոսիոս, 4, 18, 9—14, Զոնարաս, 9, 9)։

Ճակատամարտից անմիջապես հետո Ներոնը սրընթաց զորաբեթով (ամբողջ ճանապարհն անցնելով վեց օրում) վերադարձավ Իտալիայի հարավում գտնվող իր ճամբարը։ Նա իրեն չդրկեց Հասդրուբալի գլուխը թշնամու ճամբար նետելու և գերեվարված ու կապյալ պունիկացի թշնամի զինվորների առաջ ցուցադրելու բավականությունից։ Գերիներից երկուսին նա նույնիսկ ազատ արձակեց և ուղարկեց Հաննիբալի մոտ տեղի ունեցածի մասին պատմելու համար։ Կարթագենական զորավարը ցնցվեց։ Պատերազմի ընթացքն իր օգտին փոխելու նրա հույսերը խորտակվեցին։ Եղբայրն սպանվեց։ Որևէ ելք չտեսնելով, Հաննիբալը հավաքեց զորքերը և նրանց կենտրոնացրեց Բրուտիումում, որտեղ տեղափոխեց նաև Մետապոնտոսի բնակիչներին, ինչպես նաև՝ իր իշխանության տակ գտնվող լուկանիացիներին (Լիվիոս, 27, 51)։

V

Մետավրոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հասդրուբալի, նրա ամբողջ բանակի կործանումը Հաննիբալի ամենածանր ռազմաքաղաքական պարտությունն էր։ Ուստի կարելի է հասկանալ այն հաղթանակը, որով Հռոմում դիմավորեցին այդ իրադարձության վերաբերյալ տեղեկությանը (Լիվիոս, 27, 50—51)։ Եվ իրոք, Հաննիբալն արդեն չէր կարող այլևս հույս դնել օժանդակ զորամիավորումների վրա։ Նա իր ուժերով փոքր իսկ լուրջ գործողություններ ձեռնարկել նույնպես չէր կարող, ասենք նա չէր էլ փորձում դա անել (Լիվիոս, 28, 12)։ Նրան մնում էր միայն Բրուտիումում պասսիվ կերպով սպասել Իսպանիայում և Ապենինյան թերակղզու հյուսիսում ծավալվող իրադարձությունների ընթացքին։ Սակայն, ինչպես գրում է Ապպիանոսը (Ապպ., Հաննիբ., 54), Հաննիբալն, ըստ երևույթին, արդեն հասկանում էր, որ շատ մոտիկ ապագայում իրեն վերապահված է հեռանալ Իտալիայից, և հենց այդ պատճառով սկսեց իրեն թույլ տալ բրուտիների նկատմամբ ամեն տեսակ բռնություններ կատարելու։

207 թվականի պատերազմը Պիրենեյան թերակղզում, ինչպես իրավացիորեն նկատում է Տիտոս Լիվիոսը (28, 1, 1), թվում էր, թե հռոմայեցիների համար հեշտացավ Հասդրուբալի հեռանալու հետևանքով։ Սակայն նրա սկսվելուց փոքր-ինչ հետո կարթագենական կառավարությունը Պիրենեյներ ուղարկեց ևս մի հրամանատարի՝ Հաննոնին։ Վերջինս կարճատև ժամանակամիջոցում Կելտիբերիայում հավաքագրեց բազմաթիվ նոր զինվորների՝ Մագոն Բարկայանի և Գիսկոնի որդի Հասդրուբալի բանակները լրակազմելու համար։ Վերջինիս բանակը կանգնած էր Գադեսի շրջանում. այս քաղաքը Նոր Կարթագենի անկումից հետո նորից վեր էր ածվել Իսպանիայում կարթագենցիների կարևորագույն հենակետի։

Սկիպիոնը, կամենալով կանխել Հաննոնի գործողությունները, նրա դեմ ուղարկեց իր օգնականներից մեկին՝ Մարկոս Ցունիոս Սիլանոսին, մոտավորապես 10 հազար հետևազորայիններով և 500 հեծյալներով։ Շարժվելով արագ զորաբեթով, Սիլանոսը մոտեցավ Հաննոնի բանակին և իմացավ, որ իր ընթացած ճանապարհի ձախակողմում գտնվում է կելտիբերների ճամբարը (ավելի քան 9000 զինվոր), իսկ աջակողմում՝ բուն պունիկյան ամրացված և լավ պահպանվող ճամբարը։ Սիլանոսը հարձակվեց կելտիբերների վրա, այնուհետև մարտի մեջ ներքաշվեցին նաև կարթագենցիները։ Մագոն Բարկայանը հեծելազորի և հետևազորի մի մասի հետ փախավ Գադեսի կողմը, իսկ Հաննոնը գերի ընկավ (Լիվիոս, 28, 1—2)։ Օգտագործելով և զարգացնելով իր այդ հաջողությունը, Սկիպիոնը արագ կերպով դիմեց թերակղզու հարավը՝ Հասդրուբալի դեմ ելնելու համար. վերջինս այդ պահին գտնվում էր Բետիկայում։ Սակայն Հասդրուբալն անսպասելիորեն այնտեղից շարժվեց Գադեսի կողմը, իսկ իր բանակը բաժանեց, մաս-մաս տեղավորելով քաղաքին հարող տարբեր կետերում (Լիվիոս, 28, 2, հմմտ. Փրոնտինոսի մոտ, 1, 3, 5)։ Ցցանկանալով նրանց պաշարման ու գրոհի վրա ուժեր վատնել, Սկիպիոնը շուռ եկավ Տառակոնի կողմը, Բետիկայում գրավելով Օրոնգում քաղաքը (Լիվիոս, 28, 3)։

206 թ. գարնանը պայքարը վերսկսվեց։ Գիսկոնի որդի Հասդրուբալը և Մագոն Բարկայանը հավաքեցին նոր բանակ՝ 50 հազար (որոշ տվյալների համաձայն, 70 հազար) հետևազորային և 4500 հեծյալ

(Լիվիոս, 28, 12)։ Սակայն Բեկուլայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մագոնն ու Մասանասան ջախջախվեցին (Լիվիոս, 28, 13, Պոլիբիոս, 11, 21), իսկ Գիսկոնի որդի Հասդրուբալը, Իլիպայի մոտ տեղի ունեցած երկարատև ու համառ մարտից հետո փախուստի մատնվեց (Լիվիոս, 28, 14—15, Պոլիբիոս, 11, 22—24), սակայն վրա հասած թշնամու կողմից ևս մի կոտորածի, իսկ այնուհետև նաև պաշարման ենթարկվելուց հետո, նա լքեց բանակն ու փախավ Գադես։

Կարթագենցիների համար Պիրենեյան թերակղզում 206 թվականի պատերազմի անհաջող ելքը ցույց տվեց, որ նրանք արդեն ի վիճակի չէին Իսպանիայում գերիշխանության համար հաջողությամբ պայքարելու հռոմայեցիների դեմ (Լիվիոս, 28, 16)։ Ճիշտ է, առաջիկայում դեռևս մարտեր էին սպասվում Իսպանիայում։ Հռոմայեցիները դեռևս պետք է բախվեին իբերական ցեղերի՝ նոր նվաճողին ցուցաբերած շատ համառ դիմակայությանը։ Սակայն Պիրենեյան թերակղզում տիրապետության շուրջը եղած վեճը արդեն լուծված էր։ Թերևս հատկապես դրանով է բացատրվում հռոմայեցիների կողմն իր անցումը նախապատրաստելու համար հենց այժմ Սիլանոսի հետ գաղտնի բանակցություններ սկսելու՝ Մասանասայի միտումը (նույն տեղում)։ Վերջնական պայմանավորվածություն ձեռք բերվեց Մասանասայի ու Սկիպիոնի անձնական հանդիպման ժամանակ (Լիվիոս, 28, 35)։ Հենց դրանով է բացատրվում նաև մյուս ոչ պակաս կարևոր իրադարձությունը. որոշ ժամանակ հետո Սկիպիոնին ներկայացան գադեսցի փախստականներ, որոնց չէին վախեցնում ո՛չ իբերական որոշ ցեղերի դեմ Սկիպիոնի մղած ծանր պատերազմը և ո՛չ էլ բուն հռոմեական ճամբարում եղած հուզումները. և նրանք պատրաստակամ գտնվեցին հանձնելու քաղաքը կարթագենական կայազորով ու նավատորմով հանդերձ (Լիվիոս, 28, 23)։ Հնարավոր է, որ բացի Իսպանիայի ընդհանուր ռազմաքաղաքական կացությունից, գադեսցիների որոշման վրա ազդել է կարթագենական տիրապետությունից և կարթագենական առևտրական մենաշնորհից ազատվելու հեռանկարի հույժ ցանկալի ձևով իրականանալը։ Սակայն Մագոն Բարկայանը բաց արեց դավադրությունը ու դավադիրներին ուղարկեց Կարթագեն, և հռոմայեցիները Գադեսի պարիսպներից հեռացան դեպի Նոր Կարթագեն (Լիվիոս, 28, 31)։

Մասանասայի վարմունքը Սկիպիոնի համար չափազանց շահեկան էր։ Պատերազմն Իսպանիայում համարելով ընդհանուր առմամբ արդեն ավարտված, նա այժմ մտածում էր պատերազմը տեղափոխել Աֆրիկա, որը և պետք է ավարտեր Հաննիբալի դեմ մղվող պայքարը (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 11, 24, Դիոն Կասս., Ֆրագմ., 53—56)։ Սկիպիոնը դաշ-

նակիցների կարիք էր զգում։ Նա, լուրջ վտանգի ենթարկելով իր կյանքը, նույնիսկ մեկնեց Աֆրիկա, մասայսիլիների թագավորի՝ Մասանասայի թշնամի Սիփաքսի մոտ, որպեսզի նրան համոզի դաշնակցելու Հռոմի հետ։ Նույն այդ ժամանակ Սիփաքսի մոտ էր գտնվում Գիսկոնի որդի Հասդրուբալը, որը թագավորի մոտ էր եկել նույնպիսի առաքելությամբ։

Լիվիոսը պատմում է, որ Սկիպիոնը, հետևելով թագավորի ցանկություններին, պետք է Հասդրուբալի հետ ոչ միայն մասնակցեր թագավորական խնջույքին, այլև նրա հետ միասին պառկեր միևնույն օթյակում։ Սակայն հռոմայեցուն հաջողվեց, թեկուզ կարճ ժամանակով, կարթագենցուն հաղթել նաև դիվանագիտական գոտեմարտում։ Սիփաքսը դարձավ հռոմայեցիների դաշնակից (Լիվիոս, 26, 17—18)։ Դրա հետևանքով Սկիպիոնի համար ապահովվեց բոլոր նումիդիացիների՝ թե՛ մասայսիլիների (Սիփաքս) և թե՛ մասիլիների (Մասանասա) աջակցությունը։

Այս իրադրության մեջ Մագոն Բարկայանը դիմեց կարթագենական խորհրդին, համառ կերպով առաջարկելով վերստին օժանդակ զորամիավորումներ ուղարկել իրեն, որպեսզի մի կողմից Գադեսին թույլ չտա անջատվելու, և մյուս կողմից, օգտվելով հռոմայեցիների դժվարություններից, վերսկսի պայքարը Պիրենեյան թերակղզու համար (Լիվիոս, 28, 31)։ Սակայն օժանդակ զորամիավորումների փոխարեն Մագոնը հրաման ստացավ նավատորմը Գադեսից տեղափոխել Իտալիա, այնտեղ հավաքագրել ըստ հնարավորին շատ գալլերի ու լիգուրների և գնալ Հաննիբալին միանալու. դրա համար պետական գանձարանից նրան միջոցներ տրամադրվեցին. բացի այդ, ինքը՝ Մագոնը նույնպես, ինչքան կարող էր, հարստություն բռնագանձեց գադեսցիներից, կողոպտելով նրանց քաղաքային գանձարանը, տաճարները և ստիպելով բոլոր մասնավոր անձանց՝ հանձնելու ոսկի և արծաթ։ Ճանապարհին Մագոնը ծովից մտեցավ Նոր Կարթագենին, սակայն չկարողացավ գրավել այն և, լուրջ կորուստ կրելով, վերադարձավ Գադեսի կողմը (Լիվիոս, 28, 36)։ Սակայն նրան թույլ չտվեցին Գադես մտնել։ Քաղաքից դուրս հրապուրելով և մահապատժի ենթարկելով մագիստրատներին, Մագոնը մեկնեց Պիտիուսյան կղզիներ, որտեղ կարթագենական հնագույն գաղութ կար, իսկ այնտեղից՝ Բալեարյան կղզիներ, հույս ունենալով ձմեռել այնտեղ։ Բալեարական պարսատիկավորները մեծ կղզում նրան դիմավորեցին քարերի կարկուտով, սակայն նրան հաջողվեց հաստատվել փոքրում։ Գադեսը հանձնվեց հռոմեական հրամանատարությանը (Լիվիոս, 28, 37)։ Այժմ Պիրենեյան թերակղզում հռոմեա-կարթագենական պատերազմը վերջնականապես ավարտվեց հօգուտ Հռոմի։

Այդ ժամանակաշրջանում Հաննիբալի գործողությունների մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, հավանաբար այն պատճառով, որ նա, սպասելով դեպքերի բարեհաջող շրջադարձի, որն իրեն թույլ կտար հարձակման անցնել, ոչինչ չէր անում։ Իսպանիայի կորուստը նրա մեջ է՛լ ավելի պետք է խորացներ անելանելիության այն հոգեվիճակը, որը համակել էր նրան Մետավրոսի ճակատամարտից և Հասդրուբալ Բարկայանի կորստից հետո։

Այժմ կարելի էր կանխատեսել, որ Սկիպիոնը, որը չէր էլ թաքցնում իր դիտավորությունները, ձգտում է պատերազմը տեղափոխել Աֆրիկա։ Այդ վտանգը վերացնել կարող էր միայն Իտալիայում ռազմական գործողությունների ակտիվացումը։

205 թ. գարնանը Մագոն Բարկայանը ափ եկավ Իտալիայում, ունենալով 12 հազար հետեւազորային և 2000 հեծյալ, առանց մարտի գրավեց Ջենովան և դաշինք կնքեց լիգուրիական ինդաուների ցեղի հետ։ Տպավորությունն այնպիսին էր, որ վերստին պատերազմ է սկսվում, որը երկու տարի առաջ Հասդրուբալ Բարկայանը փորձում էր վարել հյուսիսում։ Հենց այդպես էլ Հռոմում ընկալվեց այդ իրադարձությունը. պրոկոնսուլ Մարկոս Լիվիոսը հրաման ստացավ գրավել Արիմինիումը, իսկ Մարկոս Վալերիոս Լևինոսը լեգեոնները տարավ Առետիում (Լիվիոս, 28, 46)։ Սակայն Հաննիբալը ոչ մի կերպ չէր արձագանքում տեղի ունեցածին, թերևս այն պատճառով, որ նրա դիվորները տառապում էին ժանտախտից ու սովից։ Սակայն, չէ՞ որ, եթե նա հաջողության նկատմամբ որևէ հույս տածեր, ապա գոնե պետք է փորձեր միանալ Մագոնի հետ։ Սակայն ոչ մի նման բան տեղի չունեցավ։ Ամառը Հաննիբալն անցկացրեց Լատինիումյան Յունոնի տաճարի մոտ։ Այնտեղ նա կանգնեցրեց զոհարան՝ պունիկերեն և հունարեն արձանագրությամբ, որտեղ պատմում էր իր կատարածների մասին (նույն տեղում)։ Այս արձանագրությունը, որը ցավոք, մեզ չի հասել, ինչպես ասվեց, վկայաբերում է Պոլիբիոսը։ Գուցե Հաննիբալը դա կատարեց, զգալով, որ իր համար արդեն ժամանակն էր Հռոմի դեմ մղվող պայքարին լիովին նվիրված իր կյանքի հանրագումարները տալու։ Համենայն դեպս, եթե Հասդրուբալ Բարկայանի արշավանքը Հաննիբալը դիմավորեց օգնության և պատերազմում առաջանալիք բեկման անհամբեր սպասումով, ապա Մագոն Բարկայանի ափ ելնելուն նա անտարբերությամբ վերաբերվեց, շատ հավանական է այն պատճառով, որ նրանից փոքր իսկ չափով փոփոխություններ չէր սպասում ռազմաքաղաքական կացության և Իտալիայում մղվող պա-

տերազմի ընթացքի մեջ։ Եվ եթե այդպես է, ապա Հաննիբալը չէր սխալվում իր գնահատականներում։

Չնայած այն տագնապին, որ հարուցեց Մագոնի հայտնվելը Իտալիայում, Աֆրիկա կատարվելիք արշավանքը չհետաձգվեց։ Ճիշտ է, երբ սենատում քննարկվեց այդ հարցը, հարկ եղավ, որ Սկիպիոնը բախվեր ազդեցիկ շրջանների՝ Կորնելիոսների հին թշնամիների և ամենից առաջ, Ֆաբիոսի առարկություններին։ Բախումը երևան եկավ Իսպանիայից Սկիպիոնի վերադառնալուց անմիջապես հետո։ Պիրենեյան թերակղզում ռազմական գործողությունների վերաբերյալ նրա հաշվետվությունը (քանի անգամ էր հաղթել թշնամուն, քանի քաղաքներ էր ուժով խլել թշնամիներից, ինչպիսի ժողովուրդներ էր ենթարկել Հռոմի գերիշխանությանը) սենատը լսեց Բելոնայի տաճարում, քաղաքի պարիսպներից դուրս, քանի որ Սկիպիոնը հույս ուներ տրիումֆի իրավունք ստանալ և նույնքանի որ Սկիպիոնը հույս ուներ տրիումֆի իրավունք ստանալ և նույնվելիքին, ինքն էլ չէր հավատում դրա կարելիությանը և չէր էլ պնդում։ Սկիպիոնին տրիումֆի իրավունք չտվեցին, թերևս այն պատշաճ պատրվակով, որ տրիումֆով քաղաք մտնել թույլ էր տրվում միայն մագիստրատներին, իսկ Սկիպիոնը մագիստրատ չէր եղել (Լիվիոս, 28, 38)։

Սենատն այդ գործողությամբ, անկասկած, կամենում էր Սկիպիոնին իր տեղը ցույց տալ, չափավորել Իսպանիայում նրա տարած հաղթանակների արժեքը և, հետևաբար, նրա հնարավոր քաղաքական ազդեցությունը։ Սակայն այդօրինակ, ասես գնդասեղի, ծակոցները նպատակին չէին կարող հասնել։ Մեծ պատերազմի հաջող ավարտումը և Իսպանիայի գրավումը հույժ մեծացրեց Սկիպիոնի ժողովրդականությունը։ Ամենուստ մարդիկ գալիս էին Հռոմ՝ նրան տեսնելու, այցելելու, Կապիտոլիումում նրան հանդիսավոր զոհամատուցման ժամանակ ներկա գտնվելու համար։ Ժողովրդի աննախադեպ համախմբման պայմաններում Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը մեծ պոնտիֆեքս Պուբլիոս Լիկինիոս Կրասսոսի հետ միաձայն ընտրվեց կոնսուլ 205 թվականի համար։ Քվեարկության ելքի վրա վճռական ազդեցություն թողեց ընդհանուր համոզվածությունն այն բանում, որ պատերազմը հաղթականորեն ավարտելը հենց Սկիպիոնին է վիճակված։ Բոլորը խոսում ու գործում էին այնպես, որ կարծես նրա համար արդեն «պրովինցիա» (այսինքն՝ գործունեության դաշտ) էր նշանակվել Աֆրիկան (նույն տեղը)։

Սկիպիոնը շահեց պատերազմն Աֆրիկա տեղափոխելու և այնտեղ Կարթագենին վճռական հարված հասցնելու իր գաղափարն իրագործելու հնարավորության համար մղվող պայքարի առաջին խաղաշրջանը։ Պրովինցիաները բաշխելիս Կրասսոսը, որպես մեծ պոնտիֆեքս, չէր կարող

հեռանալ Իտալիայից, ուստի իր համար ընտրեց Բրուտիումը և, հետևապես՝ դիմակայությունը Հաննիբալին։ Սկիպիոնին բաժին ընկավ Սիցիլիան, և բոլորը քաջ գիտակցում էին, որ նա չի սահմանափակվի այդ կղզում կատարվող գործողություններով։ Ասենք Սկիպիոնը չէր էլ մտածում թաքցնել ո՛չ իր դիտավորությունները, ո՛չ էլ սենատի հանդեպ իր արհամարհական վերաբերմունքը։ Նա այնպիսի ոգով էր արտահայտվում, որ ինքն իրը ընտրվել է ոչ թե պատերազմը շարունակելու, այլ այն ավարտելու համար, որ դրան կարելի է հասնել, եթե նա ինքը անցնի Աֆրիկա, և որ եթե սենատը առարկի, ապա նա իր կամեցածին կհասնի ժողովրդի օգնությամբ (Լիվիոս, 28, 40)։ Սենատում, ինչպես արդեն հիշվեց, Սկիպիոնի դեմ արտահայտվեց Փաբիոսը։ Իր ելույթում, ըստ Տիտոս Լիվիոսի հաղորդման (28, 40—42), ամենահեղինակավոր դիկտատորը, որն այն ժամանակ նախագահում էր սենատում, այլ լուծում առաջարկեց. սկզբում վերջնականապես ջախջախել Հաննիբալին, նրան դուրս քշել Իտալիայից և միայն դրանից հետո, արդեն անցնել Աֆրիկա։ Նա մատնանշեց դաշնակիցների անհուսալիությունը և հռոմայեցիների նկատմամբ Աֆրիկայի բնակչության թշնամական վերաբերմունքը։ Համաձայն Ապպիանոսի պատմածի (Ապպ., Լիվ., 7), աֆրիկական արշավանքի հակառակորդների պատճառաբանությունը հանգում էր հետևյալին. երբ Իտալիան քայքայվել է պատերազմից, երբ այն ավերածությունների է մատնում Հաննիբալը, երբ Մագոնն իր համար հավաքագրում է վարձկանների՝ լիգուրներին ու գալլերին, չի կարելի Աֆրիկայում պատերազմել, չի կարելի գրավել ուրիշի երկիրը, եթե ամենից առաջ չազատագրվի սեփական հայրենիքը։ Ընդդիմաբանելով, Սկիպիոնը պատմեց (Լիվիոս, 28, 43—44) իր հաջողությունների մասին Իսպանիայում, որտեղ պատերազմելը բնավ ավելի դյուրին չէ, քան Աֆրիկայում, և այն մասին, որ ինչպես ցույց է տալիս փորձը, Աֆրիկայում կարելի է հաղթանակ տանել կարթագենցիների նկատմամբ և հույս դնել լիբիական բնիկ ցեղերի պաշտպանության վրա։ Ըստ Ապպիանոսի (Ապպ., Լիբ., 7), Սկիպիոնի կուսակիցներն ամենից առաջ խոսում էին արշավանքի ռազմավարական նպատակահարմարության մասին. քանի դեռ պատերազմը Աֆրիկայի սահմաններից դուրս է, և Կարթագենը գտնվում է խաղաղության մեջ, նա, իհարկե, կփորձի Իտալիայում պահպանել իր դիրքերը. իսկ երբ նրան հարկադրեն պատերազմելու իր սեփական երկրում, կարթագենական կառավարությունը Հաննիբալին ետ կկանչի։

Վերջիվերջո սենատը Սկիպիոնի համար ցանկալի որոշում ընդունեց. կոնսուլներից մեկին (այսինքն՝ հենց Սկիպիոնին) տրվեց Սիցիլիան և թույլ տրվեց անցնելու Աֆրիկա՝ այն դեպքում, երբ նրա կարծիքով, դա

կթելադրեին պետության շահերը, մյուսին (այսինքն՝ Կրասոսին) վերապահվեց Բրուտիումը և անմիջական պայքարը Հաննիբալի դեմ։ Որքանով որ կարելի է դատել, փոխադարձ համաձայնություն ձեռք բերվեց. կոնսուլը պրովինցիաների վերաբերյալ հարցի լուծումը թողեց սենատին և հրաժարվեց անհաջողության դեպքում ժողովրդին դիմելու իր սկզբնական դիտավորությունից։ Եթե այդ մտահղացումն իրագործվեր, Սկիպիոնը կդառնար դեմոկրատական շարժման առաջնորդ, իսկ սենատի իշխանությունը կստանար լուրջ, եթե ոչ անուղղելի, հարված։ Դա կլիներ առաջին քայլը նրա միանձնյա իշխանության ճանապարհին։ Իր հերթին սենատը հանեց Սկիպիոնի պահանջների ու ռազմական պլանների էության դեմ եղած առարկությունները (Լիվիոս, 28, 45)։ Հետևապես, ընդհանուր առմամբ, Փաբիոսները տանուլ տվեցին։ Սակայն, և դա հատկանշական էր սենատի դիրքավորման համար, Սկիպիոնին հնարավորություն չտվեցին Իտալիայում զորք հավաքագրելու։ Նա պետք է սահմանափակվեր կամավորների զորակոչով և Սիցիլիայում եղած մի քանի ռազմանավերով։ Պետական գանձարանից Սկիպիոնին դրամ նույնպես չտվեցին. հետևապես, իր միջոցներով, ինչպես նաև ապավինելով մասնավոր անձանց փոխառություններին, նա պետք է դրամավորեր այն ռազմարշավը, որից կախված էր Հռոմի վերջնական հաղթանակն ու ճակատագիրը (Լիվիոս, 28, 45—46, Ապպ., Լիբ., 7)։ Սենատն ամեն ինչ անում էր, որպեսզի առավելագույն չափով դժվարացնի Սկիպիոնի ձեռնարկումը։

Իհարկե, Սկիպիոնի հանդեպ սենատական ընդդիմությունը բացատրվում էր ոչ այնքան նրանով, որ նրա «հունական նրբագեղությունը և խիստ ժամանակակից կրթությունն ու հայացքները քաղաքի կոպիտ ու վայրագ հայրերի ճաշակով չէին», և ոչ էլ կարգը պահպանելու և սենատի ցուցումներին անսալու նրա ընդունակության նկատմամբ եղած կասկածներով[147] կամ երիտասարդ Սկիպիոնի հանդեպ ծերունի Փաբիոսի տածած նախանձով[148], այլ ավելի խորը պատճառներով։ Ենթադրում են[149], որ Փաբիոսն ու նրա կուսակիցները լոկ կամենում էին որքան հնարավոր է շուտափույթ կերպով ազատվել Հաննիբալից, այն դեպքում, երբ Սկիպիոնը կամենում էր ջախջախել թե՛ Հաննիբալին, թե՛ հենց Կարթագենը։ Սակայն չէ՞ որ իրականում վեճը գնում էր միայն գործողությունների հաջորդականության և բոլորովին էլ ոչ պատերազմի նպատակների շուրջը։ Ավանդությամբ չի հաստատվում նաև մյուս կարծիքը. իբրև թե Սկիպիոնն ու Փաբիոսը միմյանցից տարբեր կերպ էին պատկերացնում Հռոմի ապագան։ Կարծում են[150], որ Փաբիոսը ներկայացնում էր պահպանողական հողագործական շրջաններին, որոնք ձգտում էին

վերջացնել պատերազմը, բուժել վերքերը և, թերևս, բարդավաճ դարձնել Հյուսիսային Իտալիան, այն դեպքում, երբ Սկիպիոնը, որի հորիզոնն ավելի լայն էր, կարծում էր, որ զուտ իտալիկյան քաղաքականությունն արդեն իր դարն ապրել է, և Հռոմը պետք է վերածվի միջերկրածովյան տերության։ Այն ենթադրությունը, որ, ի տարբերություն Սկիպիոնի, Փաբիոսը բացասաբար էր գնահատում Հռոմի վրա եղած հունական ազդեցությունը, հազիվ թե համապատասխանի իրականությանը։ Ցուցանշական է, որ Կաննեից անմիջապես հետո, երբ Փաբիոսի ազդեցությունը առավել զգալի էր, հռոմեական կառավարությունը դիմեց դելֆյան պատգամախոսին, և որ այդ առաքելությունը հանձնարարվեց Փաբիոսներից մեկին՝ Պիկտորին, որն իր պատմական աշխատությունը գրել է հունարեն։ Միևնույն ժամանակ Սկիպիոնը, ոչ պակաս, քան Փաբիոսը, նվիրվածություն դրսևորեց հռոմեական հինավուրց կրոնական ավանդության նկատմամբ։ Մենք հիմքեր չունենք նաև կարծելու, որ իբր Փաբիոսն առարկում էր կամ կարող էր առարկել Հռոմի հետագա զորեղացման դեմ։

Սկիպիոնի պլանների շուրջ մղվող պայքարն իր էությամբ Փաբիոսների և Կորնելիոսների խմբավորումների միջև իշխանության համար մղվող երկարատև պայքարի փուլերից մեկն էր։ Իր դանդաղկոտության շնորհիվ Հռոմը փրկած «բացառիկ այրի» վարկը (այդպես է դա արտահայտել Էննիոսը (Էննիոս, 370—372, տե՛ս նաև Ցից., Պարտավորութ., 1, 84) ներքաղաքական պայքարում Փաբիոսի համար կարևոր հաղթաթուղթ էր, չխոսելով արդեն այն մասին, թե այդպիսի վարկը ինքնաստինքյան որքան պատվավոր էր ու կարևոր։ Եվ Փաբիոսը, բնականաբար, չէր կամենում, որ Հաննիբալին հաղթողի համարում ձեռք բերի նաև Սկիպիոնը[151]։

Ժամանելով Սիցիլիա, Սկիպիոնն սկսեց եռանդուն կերպով նախապատրաստվել Աֆրիկա կատարելիք աշնանվանքին, և մասնավորապես այն բանին, որպեսզի ապահովի իր նկատմամբ սիցիլիական հույների բարեհաճ վերաբերմունքը, բոլոր միջոցները ձեռք առավ, որպեսզի սիրակուղացիներին վերադարձնի նրանց ունեցվածքը, որը նրանք կորցրել էին պատերազմի ժամանակ, սակայն, որը սենատը որոշեց վերադարձնել (Լիվիոս, 29, 1)։ Միաժամանակ կողոպուտի և շրջաղնության նպատակով նա Աֆրիկա ուղարկեց Գայոս Լելիոսին։ Լելիոսը գիշերը մոտեցավ Արքայական Հիպոնին, իսկ առավոտյան, ցամաք դուրս բերելով իր զինվորներին ու նավաստիներին, սկսեց ամայացնել շրջակայքը (Լիվիոս, 29, 3)[152]։

Սարսափահար համբավաբերները գուժեցին Կարթագեն, թե Աֆրիկայում արդեն հռոմեական նավատորմ է հայտնվել Սկիպիոնի գլխավորությամբ, և այդ գույժը խիստ ծանր տպավորություն թողեց Կարթագենի կառավարության ու ժողովրդի վրա։ Աֆրիկայի տարածքում հռոմայեցիների դեմ պայքարելու հեռանկարը, այն պայմաններում, երբ Իտալիան՝ կարթագենցիները չունեին մարտական բավարար հմտավարժություն, և նումիդիացիները կա՛մ արդեն դարձել էին թշնամիներ (Մասանասա), կա՛մ պատրաստվում էին այդպիսին դառնալու (Սիփաքս), և որ Մագոնի գործողությունները Լիգուրիայում պակաս արդյունավետ էին, քան Հաննիբալը Բրուտիումում բացահայտորեն կորցնում էր իր ուժերը,— նմանօրինակ հեռանկարը մարդկանց ձգում էր տագնապահարության մեջ։ Սակայն ոչինչ չէր կարելի անել։ Կարթագենական խորհուրդը որոշեց սպառնացող մահացու վտանգի պատճառով շտապփույթ կերպով զորահավաք անցկացնել, ամրացնել քաղաքը, հավաքել պարենամթերքը, պատրաստել սպառազինություն և նավեր ուղարկել դեպի Հիպոն, ընդդեմ հռոմեական նավատորմի։ Բոլոր այս նախապատրաստությունները բուռն ընթացքի մեջ էին, երբ Կարթագենում տեղեկացան, որ Աֆրիկայում ափ է դուրս եկել ոչ թե Սկիպիոնը, այլ Լելիոսը, այնպիսի զորքով, որի ուժերով սուսկ կարելի էր ամայացնել առափնյա երկրամասերը, բայց հնարավոր չէր երկարատև պատերազմ մղել և, մանավանդ, պաշարել Կարթագենը (Լիվիոս, 29, 4)։

Այսպիսով, Կարթագենին առայժմ անմիջական վտանգ չէր սպառնում, և նրա կառավարությունը հնարավորություն ստացավ ձեռնարկելու նաև այլ միջոցառումներ, որոնք պետք է ապահովեին ռազմական ու գիտանազիտական աջակցությունը, ինչպես նաև ավելի ակտիվացնեին Իտալիայում մղվող պատերազմը և հռոմեական սենատին հարկադրեին իր ուշադրությունը կենտրոնացնելու իտալիկական գործերի վրա։ Կարթագենցիները Սիփաքսի և հարևան մյուս թագավորների մոտ պատվիրակություններ ուղարկեցին, դաշնակցային հարաբերությունների վերականգնման ու ամրապնդման համար։ Փիլիպոս V-ի մոտ նույնպես ժամանեցին կարթագենական պատվիրակներ և նրան առաջարկեցին 200 տաղանդ արծաթ, եթե նա ներխուժեր Իտալիա կամ Սիցիլիա։ Սակայն ընդհանուր առմամբ դա անօգուտ գործ էր. Փիլիպոսն ինչ-որ ժամանակ դուրս եկավ խաղից։ Հունաստանում հակամակեդոնական միության դեմ երկարատև ու փոփոխական հաջողությամբ մղվող պայքարից հետո նա կարողացավ անջատ հաշտություն կնքել էտոլիական միության հետ (206 թ.), իսկ այնուհետև հասնել Հռոմի հետ՝ ինչպես հետո պարզվեց, ժամանակավոր կարգավորման (205 թ.)։ Հռոմայեցիները նախկինի պես մնացին Իլլիրիայում, ուստի Իտալիա Փիլիպոս V-ի ներխուժման մասին առայժմ խոսք լինել չէր կարող։ Բայց և այնպես, մակեդոնական թա-

գավորը չէր կամենում վերջնականապես խզել իր բարեկամական հարաբերությունները Կարթագենի հետ (չէ՞ որ դրանք հետագայում պետք կգային) և իր դաշնակիցներին ուղարկեց զինվորներ, որոնք հետագայում մասնակցեցին Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին։ Անցնելու էր մի քանի տարի, և հռոմայեցիներն այդ վարմունքը դասելու էին դողող մակեդոնացու արարքների շարքը։

Կարթագենցիները ձեռք առան նաև զուտ ռազմական միջոցառումներ։ Ապպիանոսի վկայությամբ (Ապպ., Լիբ., 9), Գիսկոնի որդի Հասդրուբալն ուղարկվեց նոր մայրաքաղաք փղեր որսալու։ Վերադառնալուց հետո Հասդրուբալը հավաքեց թռուցիկ մի ջոկատ, որը բաղկացած էր 6000 հետևակորայինից, կարթագենցիներից, լիբիացիներից և 600 հեծյալից։ Նրանց նա միացրեց ևս 2000 հեծյալ և, շարունակելով հավաքագրել վարձկանների, բանակեց Կարթագենից դուրս, Նումիդիա տանող ճանապարհին։ Իտալիայում կարթագենական զորավարները կարգադրություն ստացան բոլոր միջոցներով ետ պահել Սկիպիոնին։ Բացի այդ, Մագոնին ուղարկեցին 25 ռազմանավ, 6000 հետևակորային, 800 հեծյալ և 7 փիղ, ինչպես նաև մեծագումար դրամ վարձկաններ հավաքագրելու համար. նրան կարգադրվեց շարժվել դեպի Հռոմ և գնալ միանալ Հաննիբալին (Լիվիոս, 29, 4, Ապպ., Լիբ., 9)։

Սակայն միայն կարթագենցիները չէ, որ պատրաստվում էին նոր պատերազմին։ Իրադարձությունների հետագա ընթացքի նկատմամբ բացառիկ շահագրգռվածություն էր ցուցաբերում Մասանասան, որը հույս ուներ հռոմայեցիների օգնությամբ վերականգնել իր գիրքերը Նումիդիայում։ Երբ Լելիոսը բշեց տարավ իր վերցրած գերիներին, նրան ներկայացավ Մասանասան և սկսեց հռոմայեցուն համառորեն ներշնչել, որ Սկիպիոնը որքան հնարավոր է, պետք է ավելի շուտ ափ ելնի Աֆրիկայում, օգտվելով Կարթագենում տիրող տագնապից ու իրարանցումից. ինչպես նաև այն բանից, որ Սիփաքսը, որ հույժ անհուսալի դաշնակից է, զբաղված է հարևանների դեմ մղվող կռիվներով։ Ինքը՝ Մասանասան, թեև առայժմ արտաքսված է իր թագավորությունից, այնուամենայնիվ պատրաստ է հռոմայեցիներին տրամադրել նշանակալից չափով օժանդակ զորք՝ հետևակ և հեծյալ (Լիվիոս, 29, 4)։ Հենց այդ նպատակով Լելիոսը նավով մեկնեց Սիցիլիա (Լիվիոս, 29, 5, 1)։ Սկիպիոնը մեծ բավականությամբ ունկնդրեց Լելիոսի կողմից Մասանասայի՝ իրեն վերապատմված ելույթները։ Նա և նրա զինվորները ավելի մեծ անհամբերությամբ էին այրվում, սակայն հռոմայեցիներին ետ էին պահում իտալիկական գործերը։

Դրությունն Իտալիայում հետևյալ կերպ էր դասավորվել։ Հյուսիսում Մագոն Բարկայանը կարթագենական խորհրդի կարգադրությամբ գալլերի ու լիգուրների ժողով գումարեց, հայտարարեց, որ կամենում է նրանց ազատագրել հռոմայեցիներից և նույնիսկ դրա համար օժանդակ զորք ստացավ։ Սակայն թշնամու դեմ հաջողությամբ պայքարելու համար նրան դեռևս անհրաժեշտ էին նորանոր զորամիավորումներ։ Ներխուժումից երկյուղ կրելով, հռոմեական գալլերը համաձայնվեցին ծածուկ օգնություն ցույց տալ նրան, լիգուրները Մագոնին խոստացան երկու ամիս հետո ուղարկել իրենց զինվորներին։ Մագոնի հարձակման վտանգը գնալով ավելի իրական էր դառնում։ Որպեսզի այն ձախողի, Մ. Լիվիոսը անցավ Գալլիա և այնտեղ, իր բանակը միացնելով Լուկրետիոսի զորքին, պատրաստվեց հարձակվեր Մագոնի վրա, եթե նա կամենար շարժվել Հռոմի վրա։ Եթե Մագոնը եռանդուն գործողություններ չսկսեր, ապա Մ. Լիվիոսը մտադիր էր մնալ Արիմինումի մոտ (Լիվիոս, 29, 5)։

Այն, ինչ տեղի ունեցավ Հյուսիսային Իտալիայում, առանձնապես չէր կարող տագնապի մեջ ձգել Սկիպիոնին, մանավանդ, որ այնտեղ բավականին ուժեր կային կարթագենցիներին հակահարված տալու համար։ Նա նշանակալիորեն ավելի կարևոր էր համարում մեկ այլ իրադարձություն, որը նրան հնարավորություն տվեց գրավելու Լոկրիսը և էլ ավելի նեղացնելու օղակը Հաննիբալի շուրջը։ 205 թ. Լոկրիսի շուրջն ընթացող պայքարը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում շատ պատճառներով։

Լոկրիսը Հաննիբալի համար հույժ կարևոր ռազմավարական բնագիծ էր, և այն կորցնելու սպառնալիքը նրան հարկադրեց մի ինչ-որ ժամանակ արթնանալու յուրատեսակ լեթարգիական քնից, որի մեջ նա ընկղմվել էր Մետավրոսի մոտ մղած ճակատամարտից հետո։ Այստեղ առաջին անգամ Հաննիբալն ու Սկիպիոնը չափվեցին միմյանց հետ, սակայն հենց այստեղ էլ Հաննիբալը գերազանցեց խուսափել ուղղակի ընդհարումից։ Մյուս կողմից այդ միջադեպը երևան հանեց Սկիպիոնի հավակնությունների իսկական բովանդակությունը. վերջինս առանց տատանումների միջամուխ էր լինում իր պաշտոնակցի իրավասության ոլորտը (մեկ անգամ էլ հիշենք, որ Բրուտիումը Կրասոսի պրովինցիան էր) և այդ կերպ էապես սահմանափակում էր նրա իշխանությունը։ Վերջապես, Լոկրիսում թերևս առանձնահատուկ ուժով դրսևորվեց հռոմեական տիրապետության բռնակալական էությունը (Սիրակուզայում հռոմայեցիները կարողացան վկայաբերել պատերազմի օրենքները, Կապուայում՝ պատժամիջոցներ իրականացնելու անհրաժեշտությունը, սակայն Լոկ-

րիսում «ազատարար»-հռոմայեցիները այդպիսի արդարացումներ չունեին) և փաստորեն հռոմեական կառավարության չկամենալը՝ վերջ տալու խաղաղ բնակչության նկատմամբ սպանություններին, կողոպուտներին և ամեն տեսակ անարգանքներին (որոնք կատարում էին նրա զինվորները)։

Ամեն ինչ սկսվեց (Լիվիոս, 29, 6—7) նրանից, որ հռոմայեցիները հարձակումներից մեկի ժամանակ Լոկրիսի մոտակայքում հափշտակեցին գերիների, ապա նրանց ուղարկեցին Ռեգիում։ Գերիների մեջ կային արհեստավորներ, որոնք Լոկրիսում ամուր նստած պունիկացիների համար կատարում էին տարբեր տեսակի մանր աշխատանքներ։ Այդ արհեստավորներին ճանաչեցին լոկրիսցի տարադիրները, որոնք քաղաքից հեռացել էին այն ժամանակ, երբ կարթագենամետ «կուսակցությունը» այն հանձնել էր կարթագենցիներին, և այդ ժամանակից ի վեր ապրում էին Ռեգիումում։ Սկսվեցին նմանօրինակ դեպքերում սովորական խոսակցություններ, և գերիներն իրենց զրուցակիցներին տուն վերադառնալու հույս էին ներշնչում. եթե նրանց ստրկությունից փրկագնեն, ապա նրանք, բնակվելով Լոկրիսի երկու ակրոպոլիսներից մեկում, կկարողանան դյուրությամբ այն հանձնել հռոմայեցիներին։ Լոկրիսցի արհեստավորների գծած հեռանկարը ոչ միայն չափազանց գրավիչ էր, այլև լիովին իրական էր։ Լոկրիսի բնակչությունն արդեն ձանձրացել էր կարթագենական կայազորի կատարած բռնություններից ու հարստահարություններից, ուստի լիովին կարելի էր հույս դնել նրա պաշտպանության վրա։ Անհապաղ փրկագնելով գերիներին և նրանց ուղարկելով տները, լոկրիսցի տարագիրները ամեն ինչի մասին հայտնեցին Սկիպիոնին, որն անմիջապես կարգադրեց, որպեսզի զինվորական տribուններ Մարկոս Սերգիոսը և Պուբլիոս Մատիենոսը 3000-անոց հետևազորային ջոկատով Ռեգիումից ուղևորվի ելնեին դեպի Լոկրիս, և որպեսզի նախկին պրետոր Քվինտոս Պլեմինիոսը օժանդակեր նրանց։ Պայմանավորված ժամին, գիշերով հռոմայեցիները մոտեցան Լոկրիսին, իսկ այնուհետև դավադիրների սատարմամբ բարձրացան պարիսպների վրա, կոտորեցին կարթագենական քնած ժամապահներին և թափանցեցին ակրոպոլիսներից մեկը։ Փողոցներում տեղի ունեցած կարճատև ընդհարումից հետո կարթագենցիները փախան մյուս ակրոպոլիսը, որն արդեն հռոմայեցիներն ի զորու չեղան գրավել։ Այժմ մի ակրոպոլիսում նստած էր հռոմեական կայազորը՝ Քվ. Պլեմինիոսի գլխավորությամբ, իսկ մյուսում՝ կարթագենականը, որին գլխավորում էր Համիլկարը. ժամանակ առ ժամանակ նրանց միջև տեղի էին ունենում ընդհարումներ։

Տեղեկություններ ստանալով կատարվածի մասին, Հաննիբալը փութապես շարժվեց դեպի Լոկրիս, և հռոմեական ջոկատին սկսեց լուրջ վտանգ սպառնալ։ Միայն տեղացի բնակիչների աջակցությունը հնարավորություն տվեց հռոմայեցիներին՝ դիմանալու մինչև օգնության հասնելը։ Սկիպիոնը, լսելով Հաննիբալի շարժման մասին, ծովային ճանապարհով մեկնեց դեպի Լոկրիս։ Հաննիբալը, մոտենալով Բուլոտոս գետին, Լոկրիս՝ Համիլկարին հրաման ուղարկեց, որպեսզի նա ճակատամարտ սկսի Պլեմինիոսի դեմ. ինքը՝ Հաննիբալը կամենում էր մարտի ժամանակ հարվածել թիկունքից։ Սակայն տեղեկություն կատարելու ժամանակ, քաղաքային պարիսպների մոտ «կարիճից» (նետող սարք) կատարված քարաձգությամբ սպանվեց նրա կողքին կանգնած զորականը։ Հաննիբալը հրամայեց նահանջել։ Հաննիբալի անվճռականության հետևանքները չհապաղեցին զգալ տալ իրենց։ Սկիպիոնն անհրաժեշտ ժամանակ ստացավ Լոկրիսին մոտենալու, իր զինվորներին ափ իջեցնելու և քաղաք մանելու համար։ Հաջորդ օրը, երբ Հաննիբալը իր զինվորներին մոտեցրեց պարիսպներին, որպեսզի սկսի գրոհը, անսպասելիորեն դարպասները լայն բացվեցին, և նրանց միջից հայտնվեցին բազմաթիվ հռոմայեցիներ։ Կորցնելով 200 մարդ և տեղեկանալով, որ Սկիպիոնը գտնվում է Լոկրիսում, Հաննիբալը մնացածներին ետ տարավ ճամբար, իսկ այնուհետև հրամայեց նահանջել։ Լոկրիսի կայազորին թույլ տվեց փրկվել, ով ինչպես կարող էր։ Կարթագենցիները հրդեհեցին ակրոպոլիսը և միացան Հաննիբալին։

Մեր նպատակից դուրս է Լոկրիսի հետագա ճակատագրի նկարագրությունը։ Կնշենք միայն, որ Սկիպիոնը, մահապատժի ենթարկելով կարթագենամետ «կուսակցության» պարագլուխներին, քաղաքացիներին հրամայեց պատվիրակներ ուղարկել Հռոմ, որպեսզի սենատը կարգադրություններ անի նրանց հետագա ճակատագրի վերաբերյալ։ Լոկրիսում Սկիպիոնը թողեց կայազոր՝ Պլեմինիոսի գլխավորությամբ, և մեկնեց Մեսսանա։ Կարթագենցիների տիրապետությունն այժմ լոկրիսցիներին քաղցր երազ էր թվում։ Հռոմայեցիները կողոպտում էին և բռնանում։ Առանձնապես զայրույթ հարուցեց Պրոզերպինայի տաճարի գանձերի հափշտակումը։ Բանը վերջացավ իրենց իսկ հռոմայեցիների միջև տեղի ունեցած ընդհարմամբ. ընդ որում սկզբում Պլեմինիոսի հրամանով ճիպոտներով ձաղկեցին զինվորական տribուններին, իսկ ավելի ուշ այդ տribունների հրամանատարության տակ եղած զորականները գանակոծեցին Պլեմինիոսին և կտրեցին նրա քիթն ու ականջները։ Սկիպիոնն արդարացրեց Պլեմինիոսին և նրան թողեց որպես պրետոր, իսկ տribուններին հրամայեց ձերբակալել և ուղարկել Հռոմ։ Իր անպատժու-

թյունից խրախուսված՝ Պլեմինիոսը տրիբուններին ենթարկեց խոշտանգումների ու մահապատժի և նրանց դիակները չհանձնեց հողին։ Նա նույն կերպ վարվեց նաև Լոկրիսի այն քաղաքացիների նկատմամբ, որոնք փորձել էին Սկիպիոնի մոտ իրենից գանգատվել։ Միայն կրոնական պաշտամունքին վերաբերող հանցագործությունը՝ Պրոզերպինայի տաճարի կողոպուտը և զինվորական խռովության փաստը, սենատին հարկադրեց միջամտել։ Պլեմինիոսը ձերբակալվեց և մահացավ բանտում (Լիվիոս, 29, 8—9 և 16—22)։ Մեկ այլ պատումի համաձայն (Ապպ., Հաննիբ., 55), Պլեմինիոսը մահապատժի է ենթարկվել։ Պետք է ասել, որ սենատի վերաբերմունքի վրա որոշակի ազդեցություն է թողել Լոկրիսում կատարված հանցագործությունների կապակցությամբ՝ Սկիպիոնին մեղադրելու համար ստեղծված հնարավորությունը (Լիվիոս, 29, 19), սակայն քաղաքաբնակների ներկայացուցիչները հրաժարվեցին այդ մեղադրանքը պաշտպանելուց (Լիվիոս, 29, 21)։

205-ի ամռանը և 205—204 թթ. ձմռանը Սկիպիոնը պատրաստություններ տեսավ աֆրիկական արշավանքի համար, իսկ Կարթագենում պատրաստվեցին պաշտպանության։ Կարթագենական կառավարության համար հատկապես կարևոր նշանակություն ուներ Սիփաքսի հետ ունեցած դաշինքը, որն ամրապնդվեց թագավորի և Գիսկոնի որդի Հասդրուբալի դստեր՝ Սոփոնիսբայի դինաստիական ամուսնությամբ (Լիվիոս, 29, 23)։ Դրա ներգործությամբ Սիփաքսը պատվիրակություն ուղարկեց Սկիպիոնի մոտ. հռոմայեցիներն ու կարթագենցիները թող պատերազմեն Աֆրիկայից որքան կարելի է հեռավոր մի վայրում, որպեսզի Սիփաքսը հարկադրված չլինի պահելու որևէ մեկի կողմը։ Իսկ եթե հանկարծ Սկիպիոնը մտքով անցկացնի Աֆրիկա անցնելու, ապա Սիփաքսն ստիպված կլինի միանալ կարթագենցիներին (նույն տեղը)։ Դիոն Կասսիոսը (Ֆրագմ., 64), ըստ երևույթին, ճիշտ է, երբ գրում է, որ Սիփաքսը իրեն ներկայացնելով որպես կարթագենցիների բարեկամ, իրականում պարզապես չէր կամենում, որ հակառակորդներից մեկնումեկը տեր դառնար ամբողջ Հյուսիսային Աֆրիկային։

Սիփաքսի պատվիրակությունը, բնականաբար, Սկիպիոնին չհարկադրեց փոխելու իր պլանները։ Նրա տրամադրության տակ եղած հետևակազորայինների և հեծելազորայինների թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չկան. տարբեր հեղինակներ, որոնց երկասիրություններից օգտվել է Տիտոս Լիվիոսը (տե՛ս 29, 25), բերում են 12200-ից մինչև 35 հազարի հասնող թվեր։ Զորքերը միատեղելով Լիլիբեոնում, Սկիպիոնը նրանց նստեցրեց 440 նավերի վրա և հրամայեց ուղղություն վերցնել դեպի Էմպորիում։ Սակայն հռոմայեցիները ափ ելան Գեղեցիկ հրվանդանի մոտ (Լիվիոս, 29, 27) և բանակեցին այնտեղ, բլուրների վրա (Լիվիոս, 29, 28)[153]։

VI

Աֆրիկայում Սկիպիոնի գլխավորությամբ հռոմեական հսկայական զորքի հայտնվելը (թեև դրան վաղուց արդեն սպասում էին) այնտեղ առաջացրեց ուժգին տագնապ և վախ՝ ապագայի հանդեպ։ Ճանապարհները լցված էին մարդկանց հոծ բազմությամբ. մարդիկ հեռանում էին ապավինելու քաղաքի ամրություններին, հովիվները թշում էին անասուններին։ Կարթագենի դրությունը բավականին բարդ էր։ Նա տեղում միակը՝ Գիսկոնի որդի Հասդրուբալը, հոչակ էր ձեռք բերել գլխավորապես նրանով, որ ճակատամարտ ճակատամարտի ետևից տանուլ էր տվել Սկիպիոնին։ Այդ պատճառով, ավելացնում է Տիտոս Լիվիոսը (29, 28), ասես թե Սկիպիոնը մտադրվել էր անմիջապես դիմել Կարթագենի վրա։ Քաղաքում ղենքի կոչեցին բոլորին, ովքեր կարող էին մարտնչել, փակեցին դարպասները, պարիսպների վրա և պահակակետերում կանգնեցրեցին զինված պահապաններ, դիշերը, մինչև լույս չէին քնում, սպասելով հարձակման։ Սակայն Սկիպիոնն իր նավատորմն ուղարկեց Ուտիկա, ծովից փոքր-ինչ ետ քաշվեց և բանակեց բլուրների վրա, Ուտիկեից մոտավորապես մեկ մղոն հեռավորությամբ։ Այնտեղ նրա պահակետերի հետ ընդհարվեց կարթագենական հեծելազորը (1000 մարդ), որը հետախուզությունից զատ, պետք է խանգարեր նավերից հռոմայեցիների իջնելը։ Հեծյալներից մի քանիսը զոհվեցին մարտում, շատերը սպանվեցին նահանջելիս։ Նրանց մեջ էր նաև ջոկատի հրամանատար Հաննոնը (Լիվիոս, 29, 29)։ Սկիպիոնն ամայացրեց դաշտերը և գրավեց լիբիական մերձավորագույն քաղաքներից մեկը։ Սակայն Սկիպիոնի շահերի համար առավել էական էր այն, որ նրա բանակատեղ ժամանեց Մասանասան, որն հենց այդ պահին իր ազգական Լակումասայի և նրա խնամակալ Մակետուլոսի հետ իշխանության համար կատաղի պայքար էր ծավալել մասիլիների դեմ և, խորտակիչ պարտություն կրելով այդ պայքարում, կիսաավազակային թափառակյաց հրոսախմբի առաջնորդի կյանք էր վարում[154]։ Սկիպիոնը ցանկալի հնարավորություն ստացավ նումիդիական գործերին միջամտելու և Հռոմին ամեն ինչով պարտական և, իհարկե, հնազանդ թագավորին իշխանության գլուխ դնելու համար։

Կարթագենցիները, կորցնելով մի ուժեղ հեծելաջոկատ և նրա հրա-

մանատարին, միջոցներ ձեռք առան հեծելազորային նոր միավորում կազմավորելու համար և նրա գլուխ կարգեցին Համիլկարի որդի Հաննոնին, որը, շարունակելով վարձկանների հավաքագրումը (գլխավորապես նումիդիացիներից), իր զորախմբի թիվը արագ կերպով հասցրեց մինչև 4000 մարդու և գրավեց Սալեկա փոքրիկ քաղաքը, Ուտիկեից մոտավորապես 15 մղոն հեռավորության վրա։ Միաժամանակ նա օգնության կանչեց Գիսկոնի որդի Հասդրուբալին և Սիփաքսին։ Սկիպիոնն ամենից առաջ որոշեց Սալեկայում ոչնչացնել պունիկյան հեծյալներին։ Նրա հրամանով Մասանասան Համիլկարի որդի Հաննոնին և նրա զինվորներին քաղաքից դուրս հրապուրեց, իսկ այնուհետև, ճակատամարտի ամենաթեժ պահին, մարտի մեջ մտան հռոմեական հեծյալները և շրջապատեցին կարթագենցիներին[155]։ Նրանցից մոտավորապես 1000 հոգի (այդ թվում՝ նաև Համիլկարի որդի Հաննոնը) կտրվեց յուրայիններից և ջախջախվեց։ Մնացածները փորձեցին շատ արագ հեռանալ, սակայն փախուստի ժամանակ մոտավորապես 2000 մարդ, այդ թվում ոչ պակաս քան 200 բուն կարթագենական հեծյալներ (ըստ Օրոզիոսի, 11 հազար մարդ) սպանվեց կամ գերի ընկավ (Լիվիոս, 29, 34, Օրոսիոս, 4, 18, 17)։

Պատմելով այդ ընդհարման մասին, Տիտոս Լիվիոսը նկատում է, որ ոչ բոլոր հեղինակներն են խոսում հեծելազորային երկու մարտերում կարթագենական երկու նույնանուն զորապետերի կործանման մասին, երկյուղելով, որ սխալ կգործեն, միևնույն բանի մասին երկիցս պատմելով. և բացի այդ, Կելիոս Անտիպատրոսը և Վալերիոս Անտիատոսը պատմում են ոչ թե Հաննոնի կործանման, այլ գերվելու մասին (Լիվիոս, 29, 35)։ Հենց Լիվիոսի մոտ, ինչպես կարելի է տեսնել, առկա է այլ տեսակետ (մեր շարադրման մեջ մենք հետևում ենք նրա պատումին), թեև նա ուղղակի բանավեճի մեջ չի մտնում ո՛չ այս պատմիչների և ո՛չ էլ նրանց հետ, ում անունները չի տալիս։ Մեր տրամադրության տակ չկան այնպիսի աղբյուրներ, որոնք կարող էին հաստատել կամ հերքել այս կամ այն ավանդությունը։ Այն փաստը, որ Լիվիոսի օգտագործած ավանդությունը բոլորի կողմից չէ, որ ընդունվել է, վկայում է, համենայն դեպս, մի բանի մասին. հռոմեական անալիստիկայում այս առթիվ լուրջ տարակուսներ կային։ Տարբեր կերպ էին պատմում նաև Հաննոնի ճակատագրի մասին։ Սակայն մեզ թվում է, որ կարելի է որոշ փաստարկներ բերել հօգուտ Լիվիոսի ընդունած ավանդության։ Ամենից առաջ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ երկու ճակատամարտերի ընթացքը միմյանց հետ չի համընկնում. Լիվիոսն ընդգծում է, որ երկու Հաննոնները տարբեր անձնավորություններ են. առաջին դեպքում նա

Հաննոնին «երիտասարդ» է անվանում և չի նշում նրա հայրանունը, այն դեպքում, երբ երկրորդում նշում է այն՝ «Համիլկարի որդի»։ Երկու զորապետների անձնանունների համընկնումը ինքնըստինքյան չի կարող վկայել, այսպես կոչված, բառակրկնության ավանդության մասին, եթե ի նկատի ունենանք կարթագենցիների մոտ, այդ թվում և արիստոկրատական շրջաններում, այնպիսի անունների բացառիկ լայն տարածումը, որպիսիք էին Հաննոնը, Հասդրուբալը, Համիլկարը, Հաննիբալը[156]։

Համենայն դեպս, լուրջ կորուստներ պատճառելով կարթագենական հեծելազորին և ավելի ուշ գրավելով Լոխա քաղաքը (հմմտ. Ապպ. մոտ, Լիբ., 15), Սկիպիոնն առայժմ իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրեց Ուտիկեի պաշարման վրա. վերջինս նա կամենում էր ծովի ու ցամաքի կողմից դարձնել իր գլխավոր հենակետը։ Ուտիկեի քաղաքացիներն իրենց հույսերը դրել էին միայն Կարթագենի օգնության վրա։ Սակայն Կարթագենում զորք չկար, իսկ Գիսկոնի որդի Հասդրուբալը և Սիփաքսն այնքան էլ վճռական չէին գործում։ Հասդրուբալին հաջողվեց վարձել 30 հազար հետևազորային և 3000 հեծյալ, սակայն մինչև Սիփաքսի հայտնվելը, նա չհամարձակվեց մոտենալ թշնամուն։ Նումիդիական թագավորը հարկադրեց երկար սպասել իրեն, բայց վերջիվերջո մոտեցավ Կարթագենին, իր ետևից տանելով 50 հազար հետևազորային և 10 հազար հեծյալ։ Այնտեղից արագ զորաբերթով նա շարժվեց դեպի Ուտիկե։ Գիսկոնի որդի Հասդրուբալի և Սիփաքսի ժամանումը Սկիպիոնին հարկադրեց քաղաքը գրավելու քառասնօրյա անհաջող փորձերից հետո վերացնել պաշարումը (հմմտ. Ապպ. մոտ, Լիբ., 16) և նահանջել դեպի ձմեռային կացարանները, որոնք նա կառուցել էր ծովի մեջ հեռվում դուրս ցցված և դյուրությամբ պաշտպանվող հրվանդանի վրա (Լիվիոս, 29, 35)։

Մինչ Աֆրիկայում տեղի էին ունենում այս իրադարձությունները, Հաննիբալը նախկինի պես մնում էր Բրուտիումում։ Այնտեղ նրա դեմ կանգնած էր 204 թվականի կոնսուլներից մեկը՝ Պուբլիոս Սեմպրոնիոս Տուդիտանոսը։ Պատերազմի սկզբում արդեն Տուդիտանոսը որոշեց Հաննիբալին ճակատամարտ պարտադրել, և այն տեղի ունեցավ հռոմեական ու կարթագենական բանակների տեղաշարժման ժամանակ։ Կարթագենցիները ետ շպրտեցին հռոմայեցիներին, որոնք կորցրել էին շուրջ 1200 զորական, և նրանց ստիպեցին վերադառնալ բանակատեղ։ Հաջորդ գիշեր Տուդիտանոսը դուրս եկավ զորատեղից և միաժամանակ պրոկոնսուլ Պուբլիոս Լիկինիոս Կրասոսին կարգադրեց իր ամբողջ զորքով միանալ իրեն։ Նոր ճակատամարտում, որտեղ առաջին շարքում դասավորված էին Տուդիտանոսի լեգեոնները, իսկ երկրորդում՝ յուրատեսակ պահեստ-

տազոր կազմած՝ Կրասոսի զինվորները, պունիկացիները չդիմացան և փախուստի դիմեցին։ Առանց մի նոր մարտի իսկ դիմելու, Հաննիբալը հեռացավ Կրոտոն (Լիվիոս, 29, 36)։

Իտալիայի հյուսիսում Մագոնը, որքանով այդ մասին կարելի է դատել, մարտական ակտիվ գործողություններ չձեռնարկեց, սակայն ծավալեց դիվանագիտական բացառիկ գործունեություն։ Անկասկած է, որ նրա հրահրմամբ գրեթե ամբողջ էտրուրիան հակված էր դուրս գալու հռոմեական տիրապետության դեմ։ Բազմաթիվ երևելի էտրուսկներ բանակցությունների մեջ մտան կարթագենական զորավարի հետ՝ Հռոմից անջատվելու և ապագայում համատեղ գործողությունների շուրջը (Լիվիոս, 29, 36)։ Հետաքրքիր է, որ եթե Իտալիայի հարավի նկատմամբ դեռ կարելի է, թեև որոշ չափով, խոսել հակահռոմեական դեմոկրատական շարժման մասին, ապա III դ. վերջի էտրուրիայի մասին կարելի է խոսել հակահռոմեական, լիովին արիստոկրատական (ինչպես այն պատկերում է Լիվիոսը) շարժման մասին։

Ակնհայտ են այն պատճառները, որոնք էտրուսկական արիստոկրատիային գրգռեցին հակվելու Կարթագենի հետ դաշինքին։ Այստեղ առկա էին թե՛ հռոմեական տիրապետությունից ազատագրվելու հույսը և թե՛ Կարթագենի հետ ունեցած վաղեմի բարեկամական, քաղաքական և մշակութային սերտ հարաբերությունների մասին եղած հիշողությունները։ Եթե դավադրությունը հաջողվեր, Իտալիայի հյուսիսում Հռոմի համար կստեղծվեր լուրջ սպառնալիք, որն, անշուշտ, կարող էր սենատին հարկադրել Աֆրիկայից ետ կանչել Սկիպիոնին։ Սակայն Մարկոս Կորնելիոս Կետեգոսը (կոնսուլ, որի պրովինցիան էր էտրուրիան) դատական հաշվեհարդարներով հնազանդության մեջ պահեց էտրուսկական քաղաքները. բազմաթիվ դավադիրներ տարագրվեցին (Լիվիոս, 29, 36)։

Այսպիսով, Իտալիայում ո՛չ Հաննիբալը և ո՛չ էլ Մագոնը, ոչինչ չարեցին կամ ի վիճակի չեղան որևէ բան անելու, որը կկարողանար հռոմայեցիների ուշադրությունը շեղել Աֆրիկայից, ուր հստակորեն ուրվագծվում էր ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը։

204—203 թթ. ձմեռը Աֆրիկայում ռազմաքաղաքական մեծ ակտիվության ժամանակ էր։ Ճիշտ է, Լիվիոսի այն հաղորդումը, որ իբր Սկիպիոնը շարունակել է Ուտիկեի պաշարումը (30, 3), հակասում է պաշարումը դադարեցնելու մասին նրա իսկ (29, 5) պատմածին, այդ պատճառով հազիվ թե այն արժանահավատ լինի։ Այնուամենայնիվ Սկիպիոնի ճամբարը գտնվում էր Ուտիկեի մոտակայքում և այն նախկինի պես մնում էր սպառնալի դրության մեջ։ Սակայն ինքը՝ Սկիպիոնը նույնպես պետք է հաշվի առներ Գիսկոնի որդի Հասդրուբալի և Սիփաքսի զորքերի,

ինչպես նաև կարթագենական նավատորմի առկայությունը. վերջինս փորձում էր շրջափակման մեջ գցել Սկիպիոնի ծովային հաղորդակցության ուղիները (Լիվիոս, 30, 3)։ Սկիպիոնը Սիփաքսի հետ բանակցություններ սկսեց, հույս ունենալով նրան իր կողմը հակել։ Սակայն թագավորն իրենն էր պնդում։ Թող կարթագենցիները հեռանան Իտալիայից, հռոմայեցիները՝ Աֆրիկայից, և նրանց միջև կհաստատվեն բարեկամական հարաբերություններ (հմմտ. Ապպ., մոտ, Լիբ., 17)։ Իր հերթին Սիփաքսը փորձում էր դաշինք կնքել Մասանասայի հետ, խոստանալով ճանաչել նրան մասիլիների թագավոր և կնության տալ իր դուստրերից մեկին (նույն տեղում)։ Սիփաքսի այս փորձերից, ինչպես և պետք էր սպասել, ոչինչ դուրս չեկավ. Սկիպիոնի հետ ունեցած դաշինքը Մասանասային ավելի մեծ օգուտ էր խոստանում, քան կարող էր նրան առաջարկել Սիփաքսը։ Սկիպիոնի համար Սիփաքսի առաջարկները նույնպես բոլորովին անընդունելի էին։ Դեպի Աֆրիկա դժվարին ու թանկ նստող ռազմարշավը այն բանի համար չէր նա կազմակերպել, որպեսզի վերադառնար առանց հաղթանակի, հաշտությամբ, որը Հռոմին ոչ մի շոշափելի առավելություն չէր կարող ընձեռել։ Հռոմեական հրամանատարը Սիփաքսի հետ կապերը պահպանում էր արդեն լոկ մի նպատակով. իր մարդկանց հնարավորություն տալ անարգել կերպով հայտնվելու նումիդիական ճամբարում և խնամքով ուսումնասիրելու նրա դասավորությունը (Պոլիբիոս, 14, 1, 2—13, Լիվիոս, 30, 3)։

Կարթագենցիների և նումիդիացիների ձմեռային կացարանները կառուցվել էին հապճեպորեն։ Կարթագենցիներն ապրում էին ձեռքի տակ եղած նյութերից փութանակի կառուցված բնակարաններում, իսկ նումիդիացիները՝ եղեգնյա տնակներում, որոնք ցրված էին ճամբարի ողջ տարածքում, իսկ երբեմն էլ ամրություններից դուրս (Պոլիբիոս, 14, 1, 6—7 և 14—15, Լիվիոս, 30, 3)։ Սակայն նույն այդ ժամանակ Սկիպիոնը իր դեսպանների հետ միասին, բեռնակիր անասուններ քշողների անվան տակ, Սիփաքսի մոտ ուղարկեց ստրուկների զգեստ հագած ցենտուրիոնների, որոնք հետազոտեցին թշնամու ճամբարը, պարզեցին պահակետերի դասավորությունը և պահակային ծառայության կարգը, որոշեցին Սիփաքսի և Գիսկոնի որդի Հասդրուբալի զորատեղերի միջև ընկած տարածությունը։ Ոչ ոք նրանց չէր խանգարում. բանակցություններն ընթանում էին իրենց հունով։ Թե՛ նումիդիացիները և թե՛ կարթագենցիները, հույս ունենալով, որ շուտով խաղաղություն է հաստատվելու, թուլացրեցին զգոնությունը։ Մինչդեռ օրերից մեկում, երբ Սկիպիոնի մոտ ամեն ինչ արդեն պատրաստ էր, հռոմեական դեսպանները հայտարարեցին Սիփաքսին, որ առանց որոշակի պատասխանի չեն կարող

ներկայանալ իրենց հրամանատարին. Թագավորը թող որոշում կայացնի։ Եթե նրան անհրաժեշտ է խորհրդակցել Հասդրուբալի կամ կարթագենցիների հետ, թող խորհրդակցի. իսկ ընդհանրապես, արդեն ժամանակն է կա՛մ հաշտություն կնքել, կա՛մ պատերազմել ինչպես հարկն է։

Հասդրուբալի հետ Սիփաքսի խորհրդակցելուց հետո (հռոմայեցիներն այդ ժամանակն օգտագործեցին այն բանի համար, որպեսզի ստուգեն և ճշգրտեն իրենց հավաքած հետախուզական տվյալները) դաշնակիցները պատասխան տվեցին Սկիպիոնին։ Ո՛չ Պոլիբիոսը և ո՛չ էլ Լիվիոսը չեն ասում, թե ինչպիսի՞ էին նրանց առաջարկները։ Լիվիոսը սոսկ նշում է, որ մտածելով, թե իբր հռոմայեցիները ծարավ են խաղաղության, նրանք իրենց պատասխանի մեջ ի թիվս մյուս կետերի, մտցրեցին նաև բացարձակորեն անընդունելի պայմաններ։ Սակայն այդ բոլորն էական չէր. Սկիպիոնը կամենում էր ընդհատել բանակցությունները և, ինչպես երևում է, պատրվակ էր դարձնում ինչ-որ մի կետ, որի բովանդակությունը մենք չգիտենք։ Թագավորի դեսպանները իրենց համար անսպասելիորեն լսեցին, որ Սկիպիոնը ռազմական խորհրդին զեկուցել է բանակցությունների արդյունքների մասին, բայց և այնպես, չնայած նրա ջանքերին, խորհրդի անդամներից ոչ ոք հավանություն չի տվել հաշտության կնքմանը. Թագավորը կարող է հույսը դնել հռոմայեցիների հետ կնքվելիք հաշտության վրա, եթե հեռանա կարթագենցիներից (Պոլիբիոս, 14, 2, 5—14, Լիվիոս, 30, 4)։

Սակայն անարդարացի կլիներ կարծել, որ կարթագենցիները, հույս ակնկալելով Սկիպիոնի հետ Սիփաքսի վարած բանակցությունների խաղաղ ելքի նկատմամբ, բոլորովին աչքաթող էին արել ռազմական գործողությունների վերսկսման հնարավորությունը։ Նման դեպքում ենթադրվում էր, որ Թագավորն իր զորքերը կշարժի Ուտիկեի կողմը, իսկ Հասդրուբալը՝ Սկիպիոնի ճամբարի վրա (Ապպ., Լիբ., 18)։ Այնուամենայնիվ նրանք չկարողացան կենսագործել այդ մտահղացումները։

Գարունն սկսվեց, և Սկիպիոնը, ջրարկելով նավերը, նրանց վրա բեռնեց պաշարողական և նետող սարքերը, որպեսզի հակառակորդի մոտ այն տպավորությունն ստեղծի, որ իբր նա կամենում է ծովակողմից մոտենալ Ուտիկեին։ Միաժամանակ նա 2000 զորական ուղարկեց գրավելու Ուտիկեի վրա իշխող բլուրը, հենց այն, որը ավելի վաղ՝ մինչև ձմեռային կացարաններ տեղափոխվելը, գրավել էին հռոմայեցիները։ Բոլոր այս միջոցառումները պետք է շեղեին հակառակորդի ուշադրությունը և, բացի այդ, կանխեին Ուտիկեից սպասվող հարձակումը հռոմեական ճամբարի վրա, երբ այնտեղ թողնված լիներ թույլ կայազոր (Լիվիոս, 30, 4)։

Վերջացնելով պատրաստությունները, Սկիպիոնը հրամայեց նույն այդ երեկոյան սկսել զորաշարքեր կազմելը. առաջին պահաժամին զորքերն արդեն պատրաստ էին արշավանքի համար։ Կեսգիշերին հռոմայեցիները մոտեցան հակառակորդի դասավորությանը։ Իր զորքերի մի մասը դնելով Լելիոսի և Մասանասայի տնօրինության տակ, Սկիպիոնը նրանց հրամայեց կրակի մատնել նումիդիացիներին։ Կրակն արագությամբ ընդգրկեց այն տնակները, որտեղ քնած էին Սիփաքսի զինվորները. հրդեհը մարելու համար դուրս վազող մարդիկ ընկնում էին Մասանասայի զինվորների հարվածների տակ։ Շատերը ոչնչացան անկողինների մեջ, շատերն էլ անկարգ փախուստի ժամանակ ճզմվեցին նեղ դարպասների մեջ։ Սկիպիոնը մոտեցավ Հասդրուբալի ձմեռային կացարաններին։ Երբ այնտեղ, նումիդիացիների զորատեղի վերևում բոց տեսան ու երբ լսեցին վիրավորների ու մեռնողների վայնասունը, կարծեցին, թե հրդեհը պատահականորեն է առաջացել, և առանց զենքի նետվեցին օգնելու դաշնակիցներին։ Բայց նրանք, ովքեր պարիսպներից այն կողմ փախան, կոտորվեցին հռոմեացիների կողմից. Սկիպիոնը, հենց այդ ժամանակ ներս խուժելով դարպասներից, որոնք թողնված էին առանց պաշտպանության, հրդեհեց մոտակայքի կառույցները։ Կրակն ակնթարթորեն տարածվեց ամբողջ ճամբարում։ Կարթագենական զինվորները դես ու դեն էին նետվում հրե օղակի մեջ. նրանց, ովքեր չէին ողջակիզվել, սպանում էին հռոմայեցիները։ Դարպասները փակված էին վիրավոր և մեռնող մարդկանց ու սատկած կենդանիների պատճառով (Պոլիբիոս, 14, 4—5, Լիվիոս, 30, 5, հմմտ. Փրոնտինոսի մոտ, 2, 5, 29)։

Ապպիանոսն (Ապպ., Լիբ., 19—22) այլ կերպ է պատմում այդ իրադարձության մասին։ Նրա ասելով, Սկիպիոնը վճռեց հարձակվել հակառակորդի վրա այն բանի համար, որպեսզի կանխի նրա հարձակումը երկրում ցրված հռոմեական զորամիավորումների վրա։ Սկզբում հռոմայեցիները հարձակվեցին Հասդրուբալի ճամբարի վրա և հրկիզեցին այն, իսկ այնուհետև Մասանասան գրոհեց Սիփաքսի վրա, որը չէր օգնել դաշնակիցներին, և նրան հարկադրեց լքել ճամբարն ու փախչել։

Համենայն դեպս, 203 թվականի պատերազմի հենց սկզբում, մի վճռական հարվածով Սկիպիոնը ոչնչացրեց երկու (Սիփաքսի և Գիսկոնի որդի Հասդրուբալի) բանակները (հմմտ. նաև Օրոսիոսի մոտ, 4, 18, 18—19)։ Թեև Թագավորն ու պունիկյան հրամանատարը ողջ մնացին, սակայն նրանց հետ միասին ջարդից փրկվեցին ընդամենը 2000 հետեվազորային և 500 հեծյալ (Լիվիոս, 30, 5)։ Թե՛ Կարթագենը, թե՛ նումիդիական Թագավորությունը կանգնեցին պատերազմի եռուն պահին արագ կերպով իրենց դիմադրունակությունը վերականգնելու անհրա-

ժեշտության առջև։ Հռոմեական զենքի այդ հաջողությունը բավականին չափով որոշվեց նաև նրանով, որ Մասանասայի առջև իրական հնարավորություն բացվեց ոչ միայն իր իշխանության վերականգնման, այլև Նումիդիայում իր տիրույթները ավելացնելու համար, որը պետք է հանգեցներ Աֆրիկայում Կարթագենի ռազմաքաղաքական մեկուսացմանը։ Սկիպիոնի հաղթանակի արդյունքներն անմիջապես երևան եկան. մոտակայքի քաղաքներից մեկը հանձնվեց հռոմայեցիներին, իսկ ուրիշ երկուսը դյուրությամբ գրավվեցին ուժով և ավարի մատնվեցին։ Հասդրուբալը, որ փորձում էր թաքնվել նրանցից մեկում, հեռացավ Կարթագեն[157], իսկ Սիփաքսը գրավեց հրդեհատեղից 8 մղոն հեռավորության վրա գտնվող ամրացված դիրքերը։

Կարթագենում երբ տեղեկացան հրդեհի և Հասդրուբալի ու Սիփաքսի բանակների կործանման մասին, կարծեցին, որ այժմ Սկիպիոնը կդադարեցնի Ուտիկեի պաշարումը և կշարժվի հենց Կարթագենի դեմ։ Անհրաժեշտ էր փութապես վճիռ ընդունել, և սուֆետները դիմեցին խորհրդին։ Վերջինիս նիստում արտահայտվեցին տարբեր կարծիքներ։ Ոմանք առաջարկում էին բանակցություններ սկսել Սկիպիոնի հետ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ, մյուսները՝ Հաննիբալին ետ կանչել Իտալիայից, ոմանք էլ՝ վերստեղծել բանակը և Սիփաքսին համոզել շարունակելու պատերազմը։ Այս վերջին կարծիքը հաղթանակեց, և Հասդրուբալն ու Սիփաքսը փութապես հավաքեցին նոր բանակ, որի կազմում կար գրեթե 30 հազար մարդ (Պոլիբիոս, 14, 6, Լիվիոս, 30, 7)։ Սակայն շուտով պարզվեց, որ այդ միջոցառումները բոլորովին էլ բավարար չէին։

Սկիպիոնը, Բշնամու ջախջախումից անմիջապես հետո, վերադառնալով Ուտիկեի պաշարմանը, բնականաբար տեղեկացավ այդ պատրաստությունների մասին և Ուտիկեի պարիսպների մոտ թողնելով փոքր ջոկատներ, իր ամբողջ զորքով շարժվեց Հասդրուբալին և Սիփաքսին ընդառաջ։ Ճակատամարտը տեղի ունեցավ Մեծ Հարթավայրում[158], Հապճեպորեն հավաքված և վատ վարժեցված լինելով, նումիդիացիներն ու կարթագենցիները հռոմեական լեգեոնների առաջին իսկ հարձակման ժամանակ փախուստի դիմեցին։ Դիմադրություն ցույց տվեց միայն կելտիբերական վարձկանների ջոկատը. վերջիններս բոլորն առանց բացառության ընկան մարտում (Պոլիբիոս, 14, 8, Լիվիոս, 30, 8)։ Սկիպիոնը Լելիոսին ու Մասանասային հանձնարարեց հետապնդել Սիփաքսին ու Հասդրուբալին, իսկ ինքը, մասամբ խոստումներով, մասամբ ուժով, իրեն ենթարկեց շրջակայքի քաղաքներից դարձյալ մի քանիսը (Պոլիբիոս, 14, 9, 2—5, Լիվիոս, 30, 9, 1), իսկ այնուհետև ավելի

առաջ շարժվեց դեպի Կարթագեն և առավել բարենպաստ դիրքեր որոնելով, դեպի Թունետ։

Կարթագենին սպառնացող վտանգը գնալով ավելի ահավոր էր դառնում։ Այդ պայմաններում, ներքաղաքական սուր պայքարի իրադրության մեջ, կարթագենական կառավարությունը, երկարատև ու բուռն վիճաբանություններից հետո, որոշեց իր նավատորմն ուղարկել Ուտիկեի կողմը և այնտեղ հարձակվել հռոմայեցիների վրա, ինչպես նաև Իտալիայից կանչել Հաննիբալին։ Միաժամանակ պունիկյան իշխանությունները հոգ տարան քաղաքը պաշարման նախապատրաստելու ուղղությամբ և որոշեցին քննել հաշտություն կնքելու ուղիների վերաբերյալ հարցը։ Ինչպես երևում է, «խաղաղության կուսակցությունը» կարողացավ պնդել իր թե՛ մյուս և թե՛ այս առաջարկի վրա (Պոլիբիոս, 14, 9, 6—11, Լիվիոս, 30, 9)։

Ուտիկեի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտը վերջացավ կարթագենցիների հաղթանակով, սակայն ոչ այնպես վճռական, ինչպես կարելի էր սպասել, գլխավորապես այն պատճառով, որ նրանք Սկիպիոնին ժամանակ և հնարավորություն տվեցին մարտի պատրաստվելու համար (հմմտ. Պոլիբիոսի մոտ, 14, 10, 9—11)։ Ապպիանոսն (Լիբ., 25) ընդհանրապես չի գտնում, որ Սկիպիոնը պարտություն է կրել, իսկ նավերի հափշտակման մասին ավելի ուշ է խոսում և այլ առնչությամբ (Ապպ., Լիբ., 30)։ Պունիկացիները գրավեցին հռոմեական մի քանի փոխադրանավեր, և դրանք քշեցին-տարան Կարթագեն (Լիվիոս, 30, 10)։

Մեծ Հարթավայրում մղված ճակատամարտից հետո դադար առավ Սկիպիոնի և կարթագենցիների միջև մղվող անմիջական պայքարը։ Պունիկացիները սպասեցին Հաննիբալին, իսկ Սկիպիոնը ժամանակն օգտագործեց այն բանի համար, որպեսզի ոչնչացնի Սիփաքսին և Նումիդիայում հաստատի Մասանասայի իշխանությունը։ Այն բանից հետո, երբ հռոմայեցիներն առանց հատուկ դժվարության մարտում ջախջախեցին Սիփաքսին (հմմտ. Լիվիոսի մոտ, 30, 11) և թագավորին գերի վերցրեցին, Մասանասան դյուրությամբ գրավեց Կիրտան և դարձավ բովանդակ Նումիդիայի թագավորը (Լիվիոս, 30, 12)։ Լիվիոսը պատմում է (30, 12—15), որ սիրահարվելով Սոփոնիսբայի վրա, Մասանասան ամուսնացավ նրա հետ. իսկ երբ Սկիպիոնը պահանջեց, որ մյուս գերիների հետ նա այդ կնոջը հանձնի հռոմայեցիներին, Մասանասան թունավորեց նրան (հմմտ. նաև Ապպիանոսի մոտ (Լիբ., 26—28), որտեղ սակայն Սիփաքսի ջախջախման գործում վճռական դերը վերագրվում է հենց Մասանասային, որն իբր գլխավորում էր ամբողջ արշավանքը)։

Մասանասայի հաղթանակն, անշուշտ, Կարթագենին դրեց նախկինից ավելի ծանր կացության մեջ։ Բացի այն, որ նա Աֆրիկայում փոքր իսկ հուսալի բանակ չուներ, նրա հապճեպորեն հավաքված և գրեթե չվարժեցված զորքերը պարտություն պարտության ետևից էին կրում։ Կարթագենը զրկվել էր միակ դաշնակցից և իր բոլոր հույսերը կարող էր դնել կա՛մ պատերազմը դադարեցնելու, կա՛մ Հաննիբալի բանակի ժամանման վրա։ Լիվիոսը (30, 16) գրում է, որ այժմ արդեն չէին լսում առաջիկայում պատերազմելու առաջարկ անողներին, և որ հատկապես այդ տրամադրությունների ազդեցության տակ, երբ Սկիպիոնը վերադարձավ Նումիդիայից, Թունետ ուղարկվեց կարթագենական պատվիրակություն։ Մենք չգիտենք, թե ինչպիսի ստույգությամբ է հռոմայեցի պատմիչը ներկայացնում այն շարժառիթները, որոնցով առաջնորդվում էր կարթագենական խորհուրդը։ Ապպիանոսը (Ապպ., Լիբ., 31) չի բացառում, որ կարթագենցիները կամենում էին լրջորեն համաձայնություն գալ, սակայն, դատելով իրադարձությունների հետագա զարգացումից, խորհուրդը ղեխավորապես կամենում էր ժամանակ շահել։ Սկիպիոնի ճամբարում հայտնվեցին 30-ի խորհրդի (իշխանության բարձրագույն մարմին, որը ղեկավարում էր Կարթագենի ամբողջ քաղաքական կյանքը) անդամները և նրան դիմեցին նվաստացուցիչ խնդրանքով. խնայել քաղաքը, այն փրկել ավերածությունից ու կործանումից։ Սկիպիոնը պատասխանեց, որ ինքը պայմանագիր կնքելու համար չի եկել Աֆրիկա. նրա նպատակն է հաղթանակ տանել Կարթագենի նկատմամբ։ Այնուամենայնիվ Սկիպիոնը հաշտությունից չի հրաժարվում և առաջարկում է հետևյալ պայմանները. վերադարձնել գերիներին, փախստականներին ու ստրուկներին, կարթագենական զորքերը դուրս բերել Իտալիայից ու Գալլիայից, հրաժարվել Իսպանիայից, հեռանալ Իտալիայի ու Աֆրիկայի միջև գտնվող բոլոր կղզիներից, հանձնել բոլոր ռազմանավերը (բացի 20-ից), հռոմայեցիներին տալ 500 հազար մոդիոս ցորեն և 300 հազար մոդիոս գարի, ինչպես նաև դրամ, ըստ որոշ տեղեկությունների՝ 5000 տաղանդ, այլ տվյալներով՝ 5000 ֆունտ արծաթ, ուրիշների հաղորդմամբ՝ կրկնակի ռոճիկ տալ զորականներին։ Կարթագենցիները որոշեցին չմերժել այդ պահանջները, բնականաբար հաստատել Սկիպիոնի հետ և պատվիրակություն ուղարկել Հռոմ։ Առայժմ մինչ կրնթանային բանակցությունները, Հաննիբալը կկարողանար անցնել Աֆրիկա, և այն ժամանակ հնարավոր կլիներ այլ կերպ խոսել հռոմայեցիների հետ (Լիվիոս, 30, 16)։

Իտալիայում 203 թվականի պատերազմի սկզբին կարթագենական երկու (Հաննիբալի և Մագոն Բարկայանի) բանակները գործում էին (իսկ

ավելին՝ միշտ չէին գործում) մեկը մյուսից անկախ։ Մագոնի առաջ նախկինի պես ծառացած էր դեպի հարավ ճեղքել-անցնելու, եղբորը միանալու խնդիրը, և, որքանով որ կարելի է դատել, նա փորձեց այդ անել։ Հաննայն դեպս, մենք նրան հանդիպում ենք Գալլիայում, ինսուբրների երկրում, որտեղ վճռական ճակատամարտ տեղի ունեցավ նրա և հռոմայեցիների միջև. վերջիններիս գլխավորում էին պրետոր Պուբլիոս Քվինկտիլիոս Վարոսը և պրոկոնսուլ Մարկոս Կորնելիոս Կետեգոսը։ Սկզբնապես ո՛չ հռոմայեցիներին և ո՛չ էլ կարթագենցիներին չհաջողվեց հաղթահարել թշնամու դիմադրությունը։ Երբ Քվինկտիլիոսը մարտի մեջ մացրեց հեծելազորը, Մագոնը նրան հակադրեց փղերին, և հեծյալները չկարողացան տիրապետել սարսափահար ձիերին։ Վերջապես երկու կողմերը մարտի մեջ մտցրեցին հետևազորային օժանդակ զորամասերը։ Վճռական բեկման հանգեցրեց միայն հռոմեական տեգամարտիկների հարձակումը փղերի վրա։ Վիրավորված կենդանիները փախստյան մատնվեցին, և այն ժամանակ վերստին մարտի մեջ մտան հռոմեական հեծելազորայինները։ Պունիկացիներն սկսեցին նահանջել, Մագոնը ազդրից ծանր վիրավորվեց, և դրանից հետո նահանջը վերածվեց խուճապահար փախուստի (Լիվիոս, 30, 18)։ Այս անհաջողությունը Մագոնին հարկադրեց վերադառնալ դեպի ծով՝ Լիգուրիա։ Այնտեղ նա հանդիպեց կարթագենական պատվիրակներին՝ փութապես Աֆրիկա անցնելու հրամանով. Կարթագենի դրությունն այնպիսին չէ, որպեսզի շարունակեն պայքարն Իտալիայի ու Գալլիայի համար։ Ճանապարհին, Սարդինիայից ոչ հեռու, Մագոն Բարկայանը մահացավ[159]։

Իտալիայի հարավում, Բրուտիումում, քաղաքները միմյանց ետևից հանձնվում էին հռոմայեցիներին։ Հաննիբալը դեռևս փորձում էր ընդդիմակայել և բռնի ուժով հնազանդության մեջ պահել իր դաշնակիցներին (հմմտ. Ապպ. մոտ, Հաննիբ., 57)։ Կրոտոնի մոտ ճակատամարտ տեղի ունեցավ, որի ո՛չ ընթացքը, և ո՛չ էլ ելքը ստույգորեն հայտնի չեն։ Ճիշտ այդ պահին Հաննիբալին ներկայացան կարթագենական խորհրդի պատվիրակները. խորհուրդը շտապ հայրենիք էր կանչում նրան։ Հաննիբալը չկարողացավ և հավանաբար չկամեցավ թաքցնել այն ծանր զգացումը, որը նրան համակեց Աֆրիկա մեկնելու հրամանն ստանալիս։ Լիվիոսը (30, 20) նրա շուրթերին դնում է կծու, թեև հավանորեն բարոյական անարդարացի մեղադրանքներ, որից առաջացել է ժլատ առաքականների և քաղաքական անհեռատես հակառակորդների կողմից գործադրված հանճարեղ զորավարի մասին առասպելը. «Այժմ արդեն ոչ թե ակնարկներով, այլ բացահայտորեն ինձ կանչում են նրանք, ովքեր վաղուց արդեն ինձ դրդում էին թողնել Իտալիան, թույլ չտալով

ուղարկել օժանդակ զորաբաժիններ և դրամ, այնպես որ Հաննիբալին հաղթեց ոչ թե Հռոմեական ժողովուրդը, որը քանիցս պարտվել ու փախուստի է դիմել, այլ կարթագենական խորհուրդն իր անբարյացակամությամբ ու նախանձով, և իմ այս խայտառակ վերադարձով կուրախանա և նրանով կպարծենա ոչ այնքան Պուբլիոս Սկիպիոնը, որքան Հաննոնը, որն ուրիշ հնարավորություններ չունենալով, մեր տունը թաղեց Կարթագենի ավերակների տակ»։ Այս մեղադրանքների անարդարացիությունն ակնհայտ է. ամբողջ պատերազմի ընթացքում կարթագենական խորհրդում իշխում էին Բարկայանների կողմնակիցները՝ խաղաղության հակառակորդները, որոնք պետության բոլոր ջանքերն ուղղում էին Հռոմի դեմ պայքարի կողմը, ամենից առաջ իրեն՝ Հաննիբալին օգնելու համար։ Սակայն կարթագենցու մտքում ծագեցին նաև այլ խոհեր. նա դառնությամբ հանդիմանեց իրեն այն բանի համար, որ Կաննեից հետո ինքն իսկույն չէր դիմել Հռոմի վրա։ Իրեն ոչ անհրաժեշտ զինվորների մի մասն ուղարկելով Բրուտիումի տարբեր քաղաքներ՝ այնտեղ կայազորային ծառայություն կատարելու պատրվակով և այդպիսով նրանց դատապարտելով անխուսափելի կործանման, կողոպտելով դաշնակիցներին (Ապպ., Հաննիբ., 58), Իտալիայում թողնելով նաև իտալիկական ծագում ունեցող զորականների, որոնք հրաժարվեցին հետևել իրեն (թաքնվելով Լատինիումյան Յունոնի տաճարում, նրանք կոտորվեցին այնտեղ (հմմտ. Ապպ., Հաննիբ., 59, Դիոդորոս, 27, 9)[160], Հաննիբալը հեռացավ Իտալիայից։

Այն մասին, թե ինչպես էին բանակցություններն ընթանում կարթագենական խորհրդի ներկայացուցիչների և հռոմեական իշխանությունների միջև, անտիկ պատմագրությունը պահպանել է երկու ավանդություն, որոնք կտրուկ կերպով հակասում են միմյանց։ Տիտոս Լիվիոսի նկարագրության մեջ (30, 22—23) հռոմեա-կարթագենական կապերը հանդես են գալիս հետևյալ տեսքով։

Հաշտության բանակցություններ սկսելով Սկիպիոնի հետ, կարթագենական կառավարությունը, ինչպես գրել է Տիտոս Լիվիոսը, բոլորովին էլ չէր ձգտում դրական արդյունքների հասնել։ Նրա այս դիրքավորումը ակնհայտ դարձավ հենց այն պահին, երբ նրա կողմից Հռոմ ուղարկված պատվիրակները կանգնեցին սենատի առջև։ Իրենց ելույթներում նրանք փորձում էին, հակառակ փաստերին, ապացուցել, որ պունիկյան իշխանությունները մեղավոր չեն պատերազմի սանձազերծման մեջ, որ ամեն ինչում մեղավոր է միայն Հաննիբալը։ Այդ նա էր, որ առանց խորհրդի հրամանի, կռվով անցավ Իբերը և կտրեց Ալպերը։ Այդ նա էր, որ իր

իսկ հանդգնությամբ ու պատասխանատվությամբ, պատերազմ սկսեց նախ Սագունտումի, իսկ այնուհետև նաև Հռոմի դեմ, իսկ խորհուրդն ու Կարթագենի ժողովուրդը Հռոմի հետ ունեցած բարեկամությունն ու դաշինքն ընդհանրապես չեն խախտել և խնդրում են, որպեսզի հնարավոր լինի խաղաղությունը պահպանել այն պայմաններով, որոնք վերջին անգամ կնքվել էին կոնսուլ Գայոս Լուտակիոս Կատուլոսի հետ, այլ կերպ ասած, Պունիկյան I պատերազմի վերջում։ Կարելի է պատկերացնել, թե այդ ելույթները որքան լպիրշ ու կեղծ պետք է թվային սենատորներին, որոնք լավ իրազեկ էին թե՛ այն մասին, որ կարթագենական խորհրդում իշխում էին Բարկայանների կողմնակիցները, և թե՛ այն, որ խորհուրդը հրաժարվել է Հաննիբալի հետ չհամաձայնվելուց, և որ ընդհանրապես Հաննիբալը գործում էր խորհրդի հավանությամբ, եթե ոչ նրա ուղղակի կարգադրությամբ։ Դեռ ավելին. սենատորներն սկսեցին հարցեր տալ, ըստ երևույթին, գլխավորապես պատվիրակների վկայաբերած պայմանագրի բովանդակության առնչությամբ։ Իսկ պատվիրակները միալար պատասխանում էին, որ պայմանագրի բնագրին իրենք ծանոթ չեն, չեն հիշում։ Մեր աղբյուրը նրանց այդպիսի վարքագիծը բացատրում է աններելի երիտասարդությամբ, և այդ փաստն, անկասկած, պետք է ունենար իր նշանակությունը։ Պատանի պատվիրակները, թեև օժտված էին դիվանագիտական առանձնաշնորհումներով և համապատասխան անձեռնմխելիությամբ, հազիվ թե կարողանային լիազորություններ ունենալ ընդունելու այդքան կարևոր քաղաքական այն վճիռները, որոնք Հռոմում ծառացան նրանց առջև։ Սակայն գործը նշանակալիորեն ավելի լուրջ էր. Հռոմ պատվիրակություն ուղարկելով և նրան հանձնարարելով պնդել խաղաղ կարգավորման վրա, որը կարող էր վավերացնել Պունիկյան I պատերազմի արդյունքները, կարթագենական կառավարությունը (Տիտոս Լիվիոսի նկարագրության մեջ) բաց թողեց մի նրբանկատ և մանր հանգամանք. իր մարդկանց չէր հրահանգել և նրանց, թեկուզ և ընդհանուր գծերով, չէր հիշեցրել այն պայմանագրի բովանդակությունը, որը գրեթե 40 տարի առաջ կնքվել էր Գայոս Լուտակիոսի հետ։ Զարմանալի չէր, որ սենատում հաղթանակեց Լևինոսի կարծիքը, որն առաջարկեց Իտալիայից հեռացնել պատվիրակներին, պահակների հսկողության տակ նրանց հասցնել նավերի վրա, իսկ Սկիպիոնին գրել, որ նա չդադարեցնի պատերազմը։

Սակայն մեր տրամադրության տակ, ինչպես արդեն ասվել է, կա նաև այլ պատում, որն արմատապես տարբերվում է լիվիոսյանից։ Ապպիանոսը (Ապպ., Լիբ., 31—32) գրում է, որ սենատում կարթագենական խաղաղ առաջարկների քննարկումը երևան բերեց տարբեր տեսակետներ։

Սենատորներից ոմանք հիշեցնում էին կարթագենցիների ուխտադրժության, նրանց կողմից պայմանագրերը չպահպանելու, Իսպանիայում և Իտալիայում Հաննիբալի կատարած չարագործությունների մասին, ուրիշները ելույթներ էին ունենում խաղաղության շուրջը, նշելով, որ այն Հռոմին նույնքան անհրաժեշտ է, որքան և Կարթագենին։ Իտալիան ավերվել է այնքան պատերազմներից, իսկ ապագան վտանգալից է, քանզի միանգամից Սկիպիոնի վրա է շարժվում երեք բանակ. Հաննիբալինը՝ Հարավային Իտալիայից, Մագոնինը՝ Լիգուրիայից, ինչպես նաև՝ Կարթագենից մեկ այլ բանակ, որի հրամանատարին Ապպիանոսը, իր ընդունած ավանդության համապատասխան, անվանում է Հաննոն։ Սենատը որոշակի եզրակացությունների չհանգեց և, Սկիպիոնի մոտ ուղարկելով խորհրդատուներ, նրան առաջարկեց վերջնականապես ամեն ինչ վճռել նրանց հետ միասին և վարվել այնպես, ինչպես ինքը նպատակահարմար կհամարի։ Սկիպիոնը որոշեց հաշտություն կնքել։ Նա կարթագենցիներին պարտավորեցրեց Մագոնի բանակը դուրս բերել Լիգուրիայից, չհավաքագրել վարձկանների, 30-ից ավելի մարտանավեր չունենալ, չխառնվել ուրիշի գործերին, սահմանափակվելով միայն Փյունիկյան Խրամատոսի (այսինքն՝ բուն կարթագենական տարածքի) սահմանում ունեցած տիրույթներով, Հռոմայեցիներին հանձնել ռազմագերիներին ու փախստականներին, ինչպես նաև 1600 տաղանդի չափով ռազմատուգանք վճարել։ Մասանասային երաշխավորվում էր իշխանություն մասիլիների, ինչպես նաև Սիփաքսի տիրույթների այն մասի վրա, որը նա կկարողանար պահել իր ձեռքում։ Կարթագենական կառավարությունն ընդունեց այդ պայմանները, և նրա ներկայացուցիչները վերստին Հռոմ մեկնեցին՝ կոնսուլներից երդում ընդունելու, իսկ հռոմեական պատվիրակները նույնպիսի նպատակով հայտնվեցին Կարթագենում։ Ավելի ուշ, երբ պայմանագիրը խախտվեց, հռոմեական կառավարությունը պատվիրակներին հրամայեց հեռանալ Իտալիայից (Ապպ., Լիբ., 35)։

Եվ այսպես, մեր առջև այն հարցն է ծառացած, թե արդյոք կարթագենական ու հռոմեական իշխանությունների միջև ընթացող բանակցությունները գործնական բնույթ էին կրում, ինչպիսի՞ն էր սենատի որոշումը, արդյոք հաշտության պայմանագիր կնքվե՞ց, թե կողմերը համաձայնության եկան և իրո՞ք չէին կամենում այն։ Ցավոք, մեզ չի հասել բանակցությունների մասին Պոլիբիոսի պատմածը, ուստի դրա բովանդակության մասին մենք դատել կարող ենք միայն անուղղակի ցուցումների հիման վրա։ Խոսելով կարթագենցիների ուխտադրժության և նրանց կողմից հռոմայեցիների հետ ունեցած համաձայնության խախտման մասին, Պոլիբիոսը (15, 1, 2, հմմտ. նաև 9) գրում է, որ նրանք

խախտել են երդումներն ու դաշնագրերը, և որ նորից պատերազմ է սկսվել։ Այնուհետև (15, 2, 2) նա գրում է, որ կարթագենական խորհրդի անդամների մեծ մասը «ծանր տարան» պայմանագրի պահանջները։ Ցուցանշական է, որ Լիվիոսը (30, 25) նույնպես իր հետագա շարադրանքում, հետևելով Պոլիբիոսին և պատմելով կարթագենցիների հակահռոմեական ելույթի մասին, հավաստում է, որ հանցագործությունը կատարել են նրանք, ովքեր խնդրել էին հաշտություն և ռազմական գործողությունների ժամանակավոր դադարեցում. և որ խախտվել էին հաշտության նկատմամբ եղած հույսը և հավատարմությունը զինադադարին։ Վերջապես Պոլիբիոսը (15, 4, 8) ուղղակի ասում է, որ սենատն ու ժողովուրդը հաստատեցին կարթագենցիների հետ Սկիպիոնի կնքած պայմանագիրը և բավարարեցին նրանց ցանկությունները։ Պայմանագրի կնքման և այն հռոմայեցիների ու կարթագենցիների կողմից ընդունելու մասին եղած նույն այդ հիշատակությունը մենք գտնում ենք նաև Սկիպիոնի ճառում (Պոլիբիոս, 15, 8, 7—8)։ Հետևաբար, կարելի է հանգել այն եզրակացության, որ Պոլիբիոսի պատմության կորած մասում խոսվել է հաշտության պայմանագրի կնքման մասին, և որ այստեղ Ապպիանոսն ավելի մոտ է Պոլիբիոսին, քան Լիվիոսը։ Սրա հետ շատ բաներում համընկնում է նաև Դիոն Կասսիոսի և Զոնարասի պատումը (Դիոն Կասս., Ֆրագմ., 74—75, Զոնարաս, 9, 13). սկզբնապես հռոմայեցիները բնավ չէին կամենում հաշտության շուրջը բանակցություններ վարել կարթագենական պատվիրակների հետ, հայտարարելով, որ քանի դեռ Ֆնամու ճամբարը գտնվում է Իտալիայում, իրենք սովորություն չունեն պատվիրակներ ընդունել և պայմանավորվել։ Տեղեկանալով Մագոնի և Հաննիբալի մեկնելու մասին, սենատը հաստատեց հաշտության պայմանագրի պահանջները։ Դիոդորոսը (27, 11) խոսում է խաղաղության և պայմանագրի խախտման մասին։ Եվտրոպիոսի դիտողությունը (3, 21) նույնպես հիմնական գծերով համապատասխանում է Ապպիանոսի պատումին. սենատը, նկատի առնելով Սկիպիոնի որոշումը, հրամայեց հաշտություն կնքել կարթագենցիների հետ։ Սկիպիոնն առաջարկեց պայմաններ, որոնց համաձայն պունիկացիները պարտավորվում էին ունենալ ոչ ավելի, քան 30 նավ, վճարել 5000 ֆունտ արծաթ, հանձնել գերիներին և փախստականներին։ Մեզ անհայտ, թեև բացահայտորեն մինչև Պոլիբիոսն աշխատասիրած պատմագիրը, որի երկից մի պատառիկ է պահպանվել (Պապ., Ռ., 491) և ընդօրինակվել մինչև 130 թ., խոսում է այն մասին, որ հռոմայեցիները (?), ճանապարհելով պատվիրակներին, պայմանագիրն ամրապնդող երդում տվեցին և ազատեցին գերիներին։ Այնուհետև, ամենայն հավանականությամբ, պատմվում է հետևյալը.

սենատորները հավատացին նրանց, ովքեր ճարպկորեն խուսափեցին երդում տալուց, և հայրենիք վերադարձող պունիկացիների հետ Աֆրիկա ուղարկեցին իրենց ներկայացուցչությունը, որը լիազորված էր երդվելու հռոմեական կառավարության անունից և, իր հերթին, երդում ընդունելու կարթագենական իշխանություններից։

Հռոմայեցիները ժամանեցին Սկիպիոնի ճամբարը. պունիկյան պատվիրակությունը վերադարձավ Կարթագեն և հաղորդեց երկուստեք համաձայնեցված խաղաղության պայմանները։ Հետագա պատումից պահպանվել է միայն մի փոքր պատառիկ, որից հասկացվում է, որ կարթագենական խորհուրդը հրաժարվել է երդվելուց և հայտարարել է պատերազմը շարունակելու իր դիտավորության մասին[161]։ Պատմագրի (Պապ. Ռ., 491) միտումը ակնհայտ է։ Նա ձգտում է ցույց տալ, որ կարթագենցիները խաբել են պարզամիտ ու դյուրահավատ հռոմեական սենատորներին. նրանք, բանակցություններ վարելով հաշտության շուրջը և ստանալով պատերազմը դադարեցնելու պայմանները հստակորեն ձևակերպելու վերաբերյալ հռոմեական վարչակազմի համաձայնությունը, այնուամենայնիվ պայմանագիրը երդմամբ չհաստատեցին և, հետևաբար, վիժեցրին նրա կնքումը։ Այս պատումը կարթագենցիների նենգության և ռազմաշունչ ձգտումների հետևախորքի վրա վառ գույներով պատկերելով հռոմայեցիների խաղաղասիրությունը և իրենց խոսքին նրանց հավատարմությունը, անշուշտ, առաջնակարգ նշանակություն ուներ Հռոմի համար, երբ II դ. կեսին վեճեր էին գնում Կարթագենի ապագայի մասին, և 149 թ. հետո անհրաժեշտ էր բացատրել և արդարացնել այդ քաղաքի ոչնչացումը։

Այսպիսով, Լիվիոսի պատումը անտիկ պատմագրության մեջ գտնվում է մեկուսացված վիճակում։ Ապպիանոսի մոտ առավել ամբողջականությամբ պահպանված տարբերակի օգտին են վկայում, ըստ երևույթին, նաև Պոլիբիոսի հույժ հեղինակավոր ցուցումը և մյուս հեղինակների (որոնք պատմում են մեզ հետաքրքրող դիպվածի մասին) միաբան նշումները։ Մանրամասների մեջ եղած տարբերությունները տվյալ դեպքում էական չեն։

Սակայն նմանօրինակ խնդիրները չեն կարող լուծվել ձայների մեծամասնությամբ, այդ թվում նաև անտիկ պատմագիրների ձայների մեծամասնությամբ։ Հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ Ապպիանոսի մոտ եղած պատումը քաջ հայտնի է եղել Լիվիոսին, մանավանդ որ այն տեղ է գտել նաև Պոլիբիոսի մոտ։ Ինչպես երևում է, հռոմայեցի պատմագիրը գիտակցաբար օգտվել է մեկ այլ՝ բուն հռոմեական ավանդությունից, որը նա ավելի արժանահավատ է համարել։ Ըստ

երևույթին, այդ ավանդությունը նրան ավելի շատ բավարարել է նաև իր քաղաքական շարժառիթներով։ Ինչո՞ւ։

Քննության առնելով երկու պատմությունները, չի կարելի չնկատել նրանց հակակարթագենական սուր ուղղվածությունը. ընդ որում Ապպիանոսի պատումը քաղաքականապես ավելի սուր է, քան Լիվիոսի տարբերակը։ Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում կարթագենցիները հանդես են գալիս որպես, ըստ Ապպիանոսի՝ հաշտության պայմանագիրը, իսկ ըստ Լիվիոսի՝ զինադադարը, ուխտադրժորեն խախտողներ։ Ինչպես երևում է, մեզ հետաքրքրող ավանդությունների քաղաքական միտումը որոշվել է ներհռոմեական պայքարով, և այս առնչությամբ անխուսափելիորեն հարց է առաջանում Սկիպիոնի և սենատի դերի, նրանց փոխհարաբերությունների, տվյալ դեպքում նրանց հանդես գալու եղանակի մասին։

Ապպիանոսի ավանդությունից և նրան հարող պատմություններից հայտնապես երևում է, որ սենատն ու Սկիպիոնը գործում էին լիակատար միաբանությամբ, որ սենատը վարվում էր Սկիպիոնի նախանշումներին համապատասխան և հանձնարարում էր Սկիպիոնին բանակցությունները հասցնել մինչև նրանց տրամաբանական ավարտը։ Լիվիոսի մոտ ամեն ինչ այլ կերպ է։ Սկիպիոնը որոշում է ընդունում հաշտություն կնքելու վերաբերյալ և ձևակերպում է դրա պայմանները։ Սակայն սենատը, համոզվելով, որ կարթագենցիների մտադրությունները լուրջ չեն, ընդհատում է բանակցությունները և հրամայում շարունակել պատերազմը, հաշվի չառնելով Սկիպիոնի դիրքավորումը։ Այդպիսի կացությունը լիովին բնական է թվում, եթե նկատի առնենք Սկիպիոնի և սենատի՝ համենայն դեպս, Փաբիոսների բազմաթիվ կողմնակիցների միջև եղած լարված փոխհարաբերությունները։ Մյուս կողմից ուշագրավ է այն դերը, որ երկու ավանդությունները վերագրում են Սկիպիոնին։ Ապպիանոսի մոտ Սկիպիոնը զորապետ է, որը թշնամուն թելադրում է հաշտության պայմանները։ Ընդ որում, թշնամին ընդունում է այդ հաշտությունը, իսկ նրա խախտումը կարթագենական հասարակության որոշակի շրջանների ուխտադրժության և դժգոհության արգասիքն է։ Լիվիոսի մոտ Սկիպիոնը քաղաքագետ է, որին խաբել են պունիկյան պայմանագիր կողմի անդամները. նա ի վիճակի չի եղել գուշակելու բավականին պարզ խորամանկությունը, որը դյուրությամբ մերկացվում է սենատի կողմից։ Դժվար չէ հասկանալ, որ Սկիպիոնի հետ կապված Պոլիբիոսին կարող էր հարմար գալ միայն առաջին պատումը։ Իսկ Լիվիոսի ընտրությունը որոշվում էր նրա քաղաքական համակրանքներով ու հակակրանքներով։ «Պոմպեոսական» (ըստ Օգոստոսի գնահատականի) Լիվիոսը, որ խորապես համակրում էր հանրապետական կարգերը և բացասաբար էր վե-

բաբերվում Կեսարին, բնականաբար, «աստվածային» Սկիպիոնին ներկայացնում է աննպաստ լուսաբանությամբ։

Հաստատելով քաղաքականապես միմյանց հակադիր երկու՝ Սկիպիոնի նկատմամբ բարենպաստ և թշնամական պատումների առկայությունը, մենք դեռ չենք մոտենում հիմնական խնդրի լուծմանը. որքանո՞վ են արժանահավատ այդ պատումները։ Հավանաբար, պատասխանել կարելի է միայն մի եղանակով, պետք է փորձել բացահայտել, թե երկու պատմությունները որքանով են համապատասխանում այժմ հայտնի փաստերին։

Մենք արդեն ասել ենք, որ Լիվիոսի պատմությունը համապատասխանում է այն բանին, ինչ հայտնի է Սկիպիոնի և սենատի միջև մղվող պայքարի մասին. վերջինում այդ պահին և Պունիկյան II պատերազմի վերջին տարիներին ու նրա ավարտվելուց հետո, ականավոր դեր էին խաղում Կլավդիոսները, Փուլվիոսները և Փաբիոսները։ Իսկ Ապպիանոսի պատմությունը չի համապատասխանում նրան, ինչ մենք գիտենք այդ մասին։ Մյուս կողմից Սկիպիոնը, իհարկե, շահագրգռված էր հաշտության կնքման մեջ, որպեսզի սենատի ու ժողովրդի առջև ներկայանա հույժ վտանգավոր թշնամուն պարտության մատնած հաղթական զորավարի դերով։ Այնինչ սենատը դեռևս այնքան շահագրգռված չէր այնպիսի հաշտության կնքման մեջ, որը նա կհանձնարարեր հատկապես Սկիպիոնին։ Պատահական չէր, որ բազմիցս փորձում էին Սկիպիոնից խլել պաշտոնը, պատահական չէր նաև այն, որ բանաստեղծ Էննիոսի մոտ որպես Հռոմի միակ փրկիչ հանդես է գալիս ծերունի Փաբիոսը։ Սենատին անհրաժեշտ էր հաշտություն՝ կնքված, սակայն, ոչ թե Սկիպիոնի, այլ մի ինչ-որ ուրիշի կողմից։ Ուստի հեշտ է պատկերացնել, որ սենատը, երևան հանելով կարթագենական պատվիրակների անձեռնհասությունը, այն պատրվակ բռնելով, Սկիպիոնին հրամայեց շարունակել պատերազմը։ Վերջապես, հիմնականում Բարկայանների կողմը միտված կարթագենական խորհուրդը, նույնիսկ ավելի ծանր պայմաններում, Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, հակված չէր հաշտություն կնքելու։ Այս առնչությամբ մեկ անգամ ևս հիշենք Պոլիբիոսի խոսքերը (15, 2, 2) հաշտության սկիպիոնյան պայմանների նկատմամբ խորհրդի անդամների մեծ մասի թշնամական դիրքավորման մասին։ Դժվար չէ տեսնել, որ բանակցություններ վարելով, նրանք կամենում էին ժամանակ շահել։ Ավելի դժվար է ենթադրել, որ նման հանգամանքներում, երբ դեռևս չէին սպառվել բոլոր հնարավորությունները, նրանք լրջորեն կարող էին հաշտություն կամենալ։ Բոլոր այս նկատառումները հանգեցնում են այն մտքին, որ ավելի ճիշտ է Լիվիոսը, որ հաշտության

բանակցությունները վիժեցվել են թե՛ կարթագենական խորհրդի և թե՛ հռոմեական սենատի կողմից[162]։

Սակայն սենատն ինչպիսի որոշում էլ որ հաներ, կարթագենական խորհրդի համար միևնույնն էր։ Գլխավոր նպատակին հասան. Հաննիբալն ստացավ Աֆրիկա անցնելու համար անհրաժեշտ ժամանակ։

Աֆրիկայում Հաննիբալի հայտնվելուն նախորդեցին նաև ուրիշ, ավելի գրամատիկ իրադարձություններ, որոնք ցույց տվեցին, որ Կարթագենում ընդհանրապես հակված չեն հաշվի առնելու զինադադարը։ Ամեն ինչ սկսվեց այն բանից, որ կարթագենցիները գրավեցին բուն Կարթագենից ոչ հեռու, Էգիմուռեի մոտ ադեսի մատնված նավերը, որոնց լքել էր անձնակազմը (Լիվիոս, 30, 24)։ Ապպիանոսը (Լիբ., 34) չափազանց էական մանրամասներ է ավելացնում. անձնակազմի այն անդամներին, որոնց հնարավոր եղավ գերի վերցնել, կարթագենցիները շղթայակապ արեցին. կարթագենական խորհուրդը ամեն կերպ ջանում էր ժողովրդին ետ պահել այդ քայլից։ Հավանորեն ի նկատի են առնվում հաշտության կողմնակիցները։ Զինադադարի ժամկետը տակավին չէր լրացել, Հռոմից դեռևս չէին վերադարձել կարթագենական պատվիրակները, և համաձայնությունը (որին հենց իրենք՝ կարթագենցիներն էին համառորեն ձգտում) կոպիտ ձևով խախտելու հետևանքով խիստ զայրացած Սկիպիոնը Կարթագեն ուղարկեց իր պատվիրակներին՝ Լուկիոս Բերիոսին, Մարկոս Սերվիլիոսին (Պոլիբիոսի մոտ՝ Սերգիոսին) և Լուկիոս Փաբիոսին։ Կարթագենական խորհրդի նիստում, իսկ այնուհետև նաև ժողովրդական ժողովում հռոմայեցիները պունիկացիներին հիշեցրին այն մասին, թե ինչպիսի նվաստացուցիչ խոնարհությամբ էին նրանք հաշտության ձգտում։ Կարթագենցիներն իրենք իրենց մեղադրում էին հռոմեական հրամանատարության առջև այն բանի համար, որ առաջինն են խախտել Հռոմի ու Կարթագենի միջև եղած պայմանագիրը և իրենց արժանի էին համարում ամեն մի պատժի։ Հիշեցնելով ճակատագրի անակնկալների մասին, նրանք միայն գթություն էին խնդրում։ Հռոմեական զորավարներն այդ բոլորը լավ էին հիշում և այժմ զարմացած հարցնում էին իրենց, թե ինչի՞ վրա են հույս դնում կարթագենցիները, մոռանալով նախկին ելույթները և հանդդնելով խախտել երդումներն ու պայմանագրերը։ Հաննիբալի նկատմամբ եղած հույսերը խիստ կասկածելի են, քանզի նա հեռացավ Իտալիայից, հազիվ խուսափելով լիակատար կործանումից. սակայն, եթե անգամ նա Աֆրիկա գար որպես հաղթող, ապա պետք է նկատի առնվեր նաև Սկիպիոնի դեմ մղվելիք ճակատամարտում անհաջողության հնարավորությունը։ Եթե ձեզ դժբախտություն պատահի, ո՞ր աստվածներին եք աղերսելու, ասում էին պատվիրակները, հաղթողին ինչպիսի՞

խոսքերով եք աղերսելու ձեր դժբախտությունների նկատմամբ գիջողամիտ լինելու համար։ Ձեր ուխտադրժությամբ և անխելամտությամբ դուք ձեղանից հեռացրիք թե՛ աստվածների և թե՛ մարդկանց նկատմամբ եղած բոլոր հույսերը (Պոլիբիոս, 15, 1, 5—14)։

Կարթագենական խորհրդի անդամների մեծամասնությունը կարուկ կերպով հանդես եկավ հռոմայեցիների հետ համաձայնության դեմ։ Ձեռք բերված կարգավորումից չհրաժարվելու կոչ անող սակավաթիվ հռետորների ձայները կորչում էին զինվորականորեն կոպիտ լուսանքների հեղեղի մեջ, որոնք տեղում էին պատվիրակների վրա՝ նրանց ճառերի պատճառով, և հաշտության այն պայմանների, որոնք Սկիպիոնն էր առաջարկել և բոլորովին անընդունելի էին Կարթագենի համար (Պոլիբիոս, 15, 2, 2)։ Վրդովմունքն այնքան մեծ էր, որ հռոմայեցիները քիչ էր մնում ծեծի ենթարկվեին, և մագիստրատները (ըստ Ապպիանոսի (Լիբ., 34), հակաբարկալական կուսակցության պարագլուխներ Հաննոնն ու Հասդրուբալ Գեղը, այսինքն՝ Նոխաքը) հազիվ կարողացան նրանց խլել կատաղած ամբոխի ձեռքից։ Արդեն ոչ մի բանակցության մասին խոսք չէր կարող լինել. և իրոք, կարթագենցիների ժողովրդական ժողովը որոշեց հռոմեական դիվանագիտական հանձնախմբին առանց պատասխանի բաց թողնել (Պոլիբիոս, 15, 24)։ Համաձայն Պոլիբիոսի պատումի (15, 2, 1), պատվիրակները ելույթ ունենալուց հետո հեռացան ժողովրդական ժողովից։ Բեբիոսն ու նրա ընկերներն այժմ լոկ այն էին պահանջում, որ իրենց տրվեր պահակախումբ և անարգել կերպով յուրայինների մոտ վերադառնալու հնարավորություն։ Կարթագենական երկու տրիերայի ուղեկցությամբ նրանք հասան Բագրադա գետի գետաբերանը, որտեղից արդեն երևում էր հռոմեական ճամբարը. սակայն դրանից հետո, երբ պունիկյան պահակախումբը հեռացավ, Սկիպիոնի պատվիրակներին տանող հռոմեական պենտերայի վրա բաց ծովից հարձակվեցին թշնամական երեք քվադրիրեմաներ, և հռոմայեցիները փրկվեցին միայն ափ դուրս նետվելու շնորհիվ (Պոլիբիոս, 15, 2, 14—15, Լիվիոս, 30, 25)։ Ապպիանոսը (Լիբ., 34) նույնիսկ ասում է, որ պատվիրակների մեծ մասն սպանվեց, սակայն սկզբնական պատումը հավանաբար ի նկատի է ունեցել նավի անձնակազմի ճակատագիրը։ Այդպիսով զինադադարը վիժեցվեց, սակայն Սկիպիոնը չկամեցավ բռնություն գործադրել Իտալիայից վերադարձող կարթագենական պատվիրակների նկատմամբ և նրանց հնարավորություն տվեց անարգել հասնելու իրենց հայրենի քաղաքը (Պոլիբիոս, 15, 5, 9—10, Լիվիոս, 30, 25, Ապպ., Լիբ., 35, Դիոդորոս, 27, 12)[163]։

Պատվիրակների վերադարձը Կարթագենում քաղաքական պայքարի նոր բռնկում առաջացրեց։ Պատերազմը դադարեցնելու կողմնակիցները

համառորեն պահանջում էին վերսկսել բանակցությունները, որի համար, թվում էր, թե ճանապարհ էր բացում Սկիպիոնի սիրալիր վարմունքը, սակայն ժողովուրդը չհետևեց այդ կոչերին։ Նա իր բոլոր հույսերը կապում էր Հաննիբալի հետ (Ապպ., Լիբ., 35)։

Այդ միջոցին Հաննիբալն արդեն վերջացնում էր իր նավարկությունը։ Մոտենալով Աֆրիկայի ափերին, նա մի ինչ-որ նավաստու հրամայեց բարձրանալ կայմասյան վրա և դիտել, թե դեպի ուր է ուղղված նավաթիթը։ Իմանալով, որ առջևում ավերված գերեզման է երևում, նա դիտեց դա որպես անբարենպաստ նախանշան և հրամայեց ուղղություն վերցնել դեպի Լեպտիս, որտեղ և ափ դուրս եկավ (Լիվիոս, 30, 25, Օրոսիոս, 4, 19, 1)[164]։

Ինչպես երևում է, հենց Լեպտիսում և ոչ թե Հադրումետումում էր, ինչպես գրում է Ապպիանոսը (Լիբ., 33), որ Հաննիբալը կապեր հաստատեց նումիդիական ցեղերի՝ արսակյանների և մասայսիլիների հետ (Սիփաքսի որդին և հաջորդը՝ Վերմինան, որ տակավին մնում էր նրանց երկրների մի մասի տերը, միացավ նրան, սակայն Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին հավանաբար չէր մասնակցում)։ Այստեղից նա ղեկավարում էր նաև Մասանասային պատկանող քաղաքների գրավման գործը։ Ապպիանոսը (Ապպ., Լիբ., 33) Հաննիբալի կողմն անցած նումիդիական տիրակալների մեջ հիշատակում է նաև Մեստիլին (ըստ Լիվիոսի (29, 29—30), Մեսետուլ), որը Նումիդիայի վրա իշխանություն ունենալու համար մղվող պայքարի առավել գործունյա մասնակիցներից մեկն էր։ Փրոնտինոսի վկայությամբ (3, 6, 1), Հաննիբալն իր վերադառնալուց անմիջապես հետո իր կողմը հակեց և գրավեց լիբիական շատ քաղաքներ։ Սրանք վերստին գրավելու համար, Սկիպիոնը որոշեց վախ և փախուստ կեղծել։ Հաննիբալն սկսեց հետապնդումը և քաղաքներից հանեց իր կայազորները։ Մինչ նա առանց ակնհայտ արդյունքների հետապնդում էր Սկիպիոնին, Մասանասան հեշտությամբ գրավեց այդ կետերը։

202 թվականի պատերազմն սկսվեց նրանից, որ Հաննիբալը Լեպտիսից ռազմի ելավ Հադրումետումի ուղղությամբ, իսկ Սկիպիոնը իր ջոկատներով գրավեց Կարթագենի ցամաքային մատույցները։ Այս լուրը Հաննիբալին ստիպեց[165] արագացված զորաբերթով շարժվել դեպի Զամա (գտնվում էր Կարթագենից հինգօրյա ճանապարհի վրա), առաջ ուղարկելով հետախույզների (Պոլիբիոս, 15, 5, 3, Լիվիոս, 30, 29)։ Երբ Հաննիբալի հետախույզներն ընկան հռոմեական պահազորայինների ձեռքը, Սկիպիոնը նրանց հնարավորություն տվեց անարգել կերպով հետազոտել ճամբարը. նրանց ուղեկցող զինվորական տրիբունները պետք է

նրանց ցույց տային այն ամենը, ինչ նրանք կկամենային։ Այնուհետև, այդ հետախույզներին կանչելով իր մոտ, Սկիպիոնը հարցուփորձ արեց, թե արդյոք նրանց ամեն ինչ հաջողվեց տեսնել, և նրանց ուղարկեց Հաննիբալի մոտ (Պոլիբիոս, 15, 4—7, Լիվիոս, 30, 29, Ապպ., Լիբ., 39, Վալ. Մաքս., 3, 6, 1)։ Այդպես նրբորեն ծանակելը, որն իրեն կարող էր թույլ տալ միայն ուժեղ, հաղթանակի նկատմամբ վստահ հակառակորդը, մեծ տպավորություն գործեց Հաննիբալի վրա, որը վաղուց արդեն ապրում էր միշտ աղետալի ձախորդությունների ծանր տպավորության տակ։ Եվ բացի այդ, նա իմացավ, որ Սկիպիոնի մոտ ներկայացել է նաև Մասանասան՝ 6000 հետևազորայինով և 4000 հեծյալով։ Հաննիբալը որոշեց վերսկսել բանակցությունները և անձնական տեսակցության վերաբերյալ խնդրանքով դիմեց Սկիպիոնին։ Լիվիոսը, շրջանցելով և չժխտելով հանդերձ, բերում է նաև Կելիոս Անտիպատրոսի պատումը, որ իբրև պարտություն կրելով մարտում, Հաննիբալը ներկայացել է Սկիպիոնին՝ որպես դեսպան։ Ըստ երևույթին, առավել արժանահավատ է այն պատումը, որին հետևում է ինքը՝ Լիվիոսը։ Հանդիպումը տեղի ունեցավ Նարագարայից ոչ հեռու, սակայն ոչնչի չհանգեցրեց։ Հաննիբալն առաջարկեց Հռոմին հանձնել Աֆրիկայից դուրս գտնվող բոլոր տիրույթները. Սկիպիոնը պահանջեց նաև լրացուցիչ զիջումներ (ըստ Պոլիբիոսի պատումի՝ անվերապահ անձնատրություն) և դրանով կարծիքների փոխանակությունը դադարեցվեց (Պոլիբիոս, 15, 5, 8—8, 14, Լիվիոս, 30, 29—32, հմմտ. Ապպ. մոտ, Լիբ., 39)[166],

Հաջորդ օրը Զամայի մոտ (ըստ Ապպիանոսի (Լիբ., 40)՝ Կիլայի մոտ) տեղի ունեցավ գլխավոր ճակատամարտը[167]։ Սկիպիոնն իր զորքը դասավորեց ոչ թե համատարած ճակատով, այլ ջոկատներով, որոնց միջև թողնվեցին անցարաններ. դրանցով անհրաժեշտության դեպքում կարող էին գնալ մարտական փղերը։ Զախ թևում Լելիոսի հրամանատարության տակ նա տեղավորեց իտալիկական հեծյալներին, աջում՝ Մասանասայի նումիդիական հեծելազորը։ Ծանրազեն հետևազորայինների ջոկատների միջև եղած անցարանները նա լցրեց թեթևազեն զինվորներով, որոնք փղերի հայտնվելուն պես պետք է փախչեին թիկունք կամ միանային առավել մոտիկ գտնվող ջոկատներին։ Կենդանիները, շարժվելով զբաղված այդ անցարաններով, կընկնեին խաչաձև տեգահարության տակ (հմմտ. Ապպ. մոտ, Լիբ., 41)։ Հաննիբալն իր զորքերի առջևում կանգնեցրեց 80 փղերի, նրանցից հետո՝ լիգուրների, գալլերի, բալեարների և մավրերի օժանդակ ջոկատները, երկրորդ շարքում՝ կարթագենցիներին, լիբիացիներին և մակեդոնացիների մի թուցիկ խմբի, որոնց վերջապես օգնության ուղարկեց Փիլիպպոս V-ը (հմմտ. Լիվիոսի

մոտ, 30, 26), նրանցից հետո իտալիկների՝ մեծ մասամբ բրուտիների (որոնք ստիպված էին մեկընդմիշտ հեռանալ հայրենի երկրից) ջոկատները (Լիվիոս, 30, 33, Ապպ., Լիբ., 40, Փրոնտինոս, 2, 3, 16), և վերջապես, աջ թևում՝ էրթագենական, իսկ ձախում՝ նումիդիական հեծելազորը։

Ճակատամարտն սկսվեց նրանից, որ հռոմայեցիները իրենց աղաղակներով, փողեր, եղջերափողեր հնչեցնելով վախեցրին փղերին, որոնք քանիցս արդեն շուռ եկան յուրայինների՝ գլխավորապես ձախ թևում կանգնած մավրերի ու նումիդիացիների դեմ։ Հենց այնտեղ ուղղեց իր հարվածը նաև Մասանասան։ Այն փոքրաթիվ կենդանիները, որոնք նետվեցին թշնամու վրա, ընկան հռոմեական տեգերի հարվածների տակ և վերջիվերջո թեքվեցին դեպի աջ, կարթագենական հեծյալների դեմ, որտեղ իր հեծելազորը շարժեց նաև Լելիոսը։ Արդեն առաջին իսկ ընդհարման ժամանակ հռոմայեցիները նեղեցին թշնամուն և սկսեցին առանց դադարի շարժվել առաջ։ Կարթագենցիների առաջին շարքն սկսեց նահանջել, իր օժանդակ զորամասերը թողնելով առանց օգնության, և բանը հասավ նրան, որ նրանց և մյուսների միջև ընդհարումներ սկսվեցին։ Վերջիվերջո Հաննիբալի օժանդակ զորաբաժինները ետ շպրտվեցին դեպի թևերը։ Դրանից հետո հռոմայեցիների ճնշումը փոքր-ինչ թուլացավ, և այն ժամանակ Սկիպիոնը, հավաքելով վիրավորներին, մարտի մեջ մտցրեց նիզակամարտիկներին և տրիարիներին, այսինքն՝ գլխավոր օժանդակ զորամիավորումները։ Ճակատամարտը վերսկսվեց. մինչ այս, մինչ այն, Լելիոսն ու Մասանասան թիկունքից հարձակվեցին կարթագենական հետևազորի վրա, և կարթագենցիները փախուստի մատնվեցին։ Համաձայն Լիվիոսի տվյալների, այդ մարտում սպանվեց ավելի քան 20 հազար կարթագենցի և նրանց դաշնակից, նույնքան էլ գերի ընկավ (ըստ Պոլիբիոսի, ավելի քան 10 հազար)։ Հռոմայեցիները բացահայտորեն նվաղեցված տվյալներով, կորցրեցին 1500 մարդուց փոքր-ինչ ավելի։ Ինքը՝ Հաննիբալը մի փոքր հեծելաջոկատով փախավ Հադրումետում (Պոլիբիոս, 15, 9—14, Լիվիոս, 30, 32, հմմտ. Ապպ., մոտ, Լիբ., 42—46, որտեղ ճակատամարտի ընթացքը մի փոքր այլ կերպ է պատկերված)։

Դա վերջնամարտն էր։

Գլուխ վեցերորդ

ՀԱՆՆԻԲԱԼԸ ԿԱՐԹԱԳԵՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

I

Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո կարթագենական կառավարությունն այլևս չէր կարող հույս դնել իրադարձությունների բարենպաստ շրջադարձի վրա։ Ոչ մի տեղից օգնության հույս չկար, Կարթագենի ունեցած միակ մարտունակ բանակը՝ շատ տաղտնդավոր և հույժ փորձված զորավարի գլխավորությամբ, լիովին ջախջախված էր։ Ինքը՝ Հաննիբալը նույնպես կորցրել էր հույսը, և երբ նրան Հադրումետումից կանչեցին հայրենիք (Լիվիոս, 30, 35)[168], նա այնտեղ վերադարձավ միայն մի ցանկությամբ՝ ինչ գնով էլ լիներ, ցանկացած պայմաններով հաշտություն կնքել։

Դա հեշտ խնդիր չէր։ Կարթագենական հասարակության այն խմբավորումները, որոնք մշտապես գնում էին Հաննիբալի, Բարկյանների ետևից և պաշտպանում Հռոմի տապալմանը նպատակաուղղված ռազմական արկածախնդրությունների քաղաքականությունը, այդ խմբակցությունները նույնիսկ այժմ պատերազմը չէին համարում տանուլ տրված և պահանջում էին, ոչ մի բան հաշվի չառնելով, պայքարը շարունակել մինչև հաղթանակ։ Մյուս կողմից, Հռոմեական կողմում շատ էին ցանկանում (և մի ժամանակ այդ ցանկությունը բաժանում էր նաև ինքը՝ Սկիպիոնը) պատերազմն ավարտել Կարթագենի պաշարմամբ ու ոչնչացմամբ։ Սկիպիոնի գործողությունները, թվում էր, թե համապատասխանում էին այդ նպատակին. հաղթանակից անմիջապես հետո կողոպտելով հակառակորդի ճամբարը, նա Լելիոսին ուղարկեց Հռոմ, զեկուցելու փայլուն հաջողության մասին, և սկզբում իր լեգեոնները կենտրոնացնելով Ուտիկեի մերձակայքում, նրանց այնտեղից Գայոս Օկտավիոսի հրամանատարությամբ, ուղիղ ճանապարհով առաքեց Կարթագենի կողմը։ Ինքը՝ Սկիպիոնն օժանդակ նոր զորամիավորումներով ուժեղացված իր նավատորմը տարավ դեպի Կարթագենի նավահանգիստ։ Այդպիսով Սկիպիոնը միջոցներ ձեռք առավ, որպեսզի Կարթագենը շրջափակի ծովից ու ցամաքից։ Սակայն նավարկության ժամանակ նրան հանդիպեց մի նավ՝ պետության մեջ առաջին դեմքերը համարվող կարթագենցի պատվիրակներով։ Պատվիրակության գլուխ էին կանգնած հակաբարկայական «կուսակցության» ղեկավարներ Հաննոնը և Հասդրուբալ Գեղը

(Ապպ., Լիբ., 49)։ Հաննիբալը հասավ այն բանին, որ խորհուրդը որոշեց մշտապես հաշտություն խնդրել հաղթական թշնամուց։

Սկիպիոնը չկամեցավ պատվիրակների հետ խոսել և նրանց կարգադրեց ժամանել Թունետ, որտեղ նա կամենում էր տեղավորել իր ճամբարը։ Ճանապարհին հռոմեական հրամանատարությունը տեղեկություն ստացավ, որ Հաննիբալին օգնության է գնում Սիփաքսի որդի Վերմինան՝ հեծելազորով ու հետևազորով։ Վճռական հարվածով Սկիպիոնը ոչնչացրեց թշնամուն. ինքը՝ Վերմինան փախավ։ Վերջապես հռոմայեցիները մոտեցան Թունետին, որտեղ ժամանեցին նաև կարթագենցի պատվիրակները՝ 30-ի խորհուրդը լրիվ կազմով։

Հռոմեական բանակի ռազմական խորհրդի անդամները, որոնք պետք է լուծեին այն հարցը, թե շարունակե՞լ արդյոք պատերազմը, թե հաշտություն կնքել, ինչպես ասվել է, հակված էին այն բանին, որպեսզի կործանեն Կարթագենը։ Նրանց ետ էր պահում միայն մի հանգամանք. քաղաքը չէր կարելի վերցնել առանց երկարատև պաշարման, իսկ այդպիսի միջոցառման համար անհրաժեշտ էին լրացուցիչ զորամիավորումներ, որոնք Սկիպիոնը չուներ (Լիվիոս, 30, 36)։ Հնարավոր է, որ նրա հետագա գործողությունների վրա որոշակի ազդեցություն են թողել Հռոմում տեղի ունեցած իրադարձությունները։ Սկիպիոնը հավանաբար լավ գիտեր, թե ժլատ ու անհագ քանի ձեռքեր էին կարկառված հաղթողի դափնեպսակը իրենից խլելու համար։ Օրինակ, նա չէր կարող չիմանալ, որ երբ Հաննիբալը հեռացավ Իտալիայից, կոնսուլ Գայոս Սերվիլիոսը, իբրև թե հետապնդելով փախչող հակառակորդին, անցավ Սիցիլիա, որպեսզի հետո շարժվի դեպի Աֆրիկա, և հարկ եղավ Պուբլիոս Սուլպիկիոսին դիկտատոր նշանակել լոկ այն բանի համար, որպեսզի կոնսուլին ետ կանչեն Հռոմ (Լիվիոս, 30, 24), կամ որ 202 թվականի կոնսուլներ Մարկոս Սերվիլիոս Գեմինոսը և Տիբերիոս Կլավդիոս Ներոնը հասան այն բանին, որպեսզի իրենց համար պրովինցիա նշանակվի Աֆրիկան, և միայն ժողովրդական ժողովի որոշումը այն վերապահեց Սկիպիոնին (Լիվիոս, 30, 27)։ Անցնելու էր դարձյալ մեկ տարի, և 201 թվականի կոնսուլ Գայոս Կորնելիոս Լենտուլոսը, քանի դեռ հաշտություն չէր կնքվել և բանակցություններ էին տարվում, վերստին իր համար պահանջելու էր Աֆրիկան (Լիվիոս, 30, 40, Ապպ., Լիբ., 56)։ Սկիպիոնը գիտեր նաև այն մասին, որ անբարյացակամ ծերուկը՝ Փաբիոսը, արդեն Աֆրիկայում իր տարած առաջին հաղթանակներից հետո, համառորեն առաջարկում էր ետ կանչել իրեն Աֆրիկայից, քանի որ, ասում էր նախկին դիկտատորը, աստվածներն այդքան երջանկություն և հաջողություն չեն տալիս մի մարդու (Պլուտ., Փաբ., 26)։ Անհրաժեշտ էր շտապել[169],

Սկիպիոնն առաջարկեց հաշտության հետևյալ պայմանները. կարթագենցիները մնում են ազատ և պետք է ապրեն, օգտվելով սեփական օրենքներից։ Նրանք մինչև պատերազմը եղած սահմաններում իրենց իշխանության տակ էին պահելու քաղաքներն ու հողատիրությունները (հավանաբար ի նկատի էր առնվում միայն Աֆրիկայի տարածքը։ Ըստ Ապպիանոսի (Լիբ., 54), մինչև Փյունիկյան խրամափոսը), և հռոմայեցիները պետք է դադարեցնեին այդ շրջաններում կատարվող ավերածությունները։ Բոլոր փախստականներին, փախստական ստրուկներին և ռազմագերիներին պունիկացիները պետք է հանձնեին հռոմեական իշխանություններին։ Բոլոր ռազմանավերը, բացի 10 տրիերայից, նրանք հանձնելու էին հռոմայեցիներին։ Նրանց պետք է տային նաև բոլոր ընտելացված փղերին և չընտելացնեին նորերը։ Ո՛չ Աֆրիկայում և ո՛չ էլ նրա սահմաններից դուրս, կարթագենցիները չպետք է պատերազմեին առանց հռոմեական ժողովրդի թույլտվության[170]։ Նրանք պետք է Մասանասային վերադարձնեին նրա ունեցվածքը և տիրույթները այն սահմաններում, որոնք նա ցույց կտար իրենց, և դաշինք կնքեին նրա հետ։ Մինչև Հռոմից դեսպանների վերադարձը, այսինքն՝ մինչև վերջնական կարգավորումը, Կարթագենը Աֆրիկայում սննդամթերքով պետք է ապահովեր հռոմեական զորքերին, 50 տարվա ընթացքում նա պետք է ռազմատուգանք վճարեր 10 հազար տաղանդի չափով։ Բացի այդ, Կարթագենը 100 (ըստ Ապպիանոսի (Լիբ., 54)՝ 150) մարդու, որպես պատանդների, պետք է հանձներ Սկիպիոնին, ըստ նրա ընտրության։ Պատանդները տասնչորս տարեկանից փոքր և երեսունից մեծ չպետք է լիներին։ Վերջապես, Սկիպիոնը պահանջեց, որպեսզի կարթագենցիները վերադարձնեն նախընթաց դինադադարի ժամանակ իրենց կողմից ուխտադրժորեն հափշտակված փոխադրանավերը (Պոլիբիոս, 15, 18, Լիվիոս, 30, 37, Դիոն Կասս., Ֆրագմ., 82)։

Սկիպիոնի թելադրած հաշտությունը բացառիկորեն ծանր էր, և բանն այստեղ նյութական կամ տարածքային կորուստների մեջ չէր, որոնք կարթագենցիներն այս կամ այն կերպ կկարողանային փոխհատուցել։ Խոսքով հռչակելով Կարթագենի անկախությունն ու ներքին ինքնակայությունը, Սկիպիոնը էապես սահմանափակում էր հատկապես նրա գերապետական իրավունքները և դրանով իսկ պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու առավել կարևոր խնդրում Կարթագենին ուղղակի կախման մեջ էր դնում Հռոմից։ Ապպիանոսի բերած տարբերակում (Լիբ., 54) խոսքը գնում է բացարձակապես և կտրուկորեն (նույնիսկ անկախ Հռոմի դիրքից) պատերազմ վարելն արգելելու մասին։ Սակայն այդ դեռ բոլորը չէր։ Մեծ տերության իր դիրքը կորցրած Կարթագենի

ձեռքն ու ոտքը կապվում էր ամեն մի հնարավոր հակառակորդի դեմ ծավող պայքարում։ Սկիպիոնը Կարթագենի և Մասանասայի միջև քաղաքական կարգավորման որևէ պայման չէր նախատեսում, իսկ դաշինքի վերաբերյալ նրանց միջև ընթացող բանակցություններում, որը նա փաթթեց Կարթագենի վզին, վերջինիս դրեց աննպաստ պայմանների մեջ։ Բացի հռոմայեցիներից, ոչ ոք չէր կարող չափավորել Մասանասայի ախորժակը, իսկ հռոմեացիները դա չէին կամենում։ Ստեղծվել էր բոնկմամբ հղի իրադրություն, որն օգտագործելով, հռոմեական կառավարությունը հնարավորություն էր ձեռք բերում մշտապես միջամտելու Աֆրիկական գործերին, բոլոր տեսակի վիճելի հարցերի լուծման և Կարթագենից որևէ տարածք խլելու ցանկության դեպքում հանդես գալով միջնորդի դերով և միաժամանակ որպես բարձրագույն ատյան։ Ճիշտ է, ուժեղացնելով Մասանասային, Հռոմն Աֆրիկայում իր համար աճեցնում էր նաև նոր հնարավոր թշնամու, որը թեև ավելի ուշ, իրեն զգալ տվեց Յուգուրթական պատերազմի ժամանակ. սակայն այդ հեռանկարը հույժ անորոշ էր, և այն, ըստ երևույթին, նույնիսկ Սկիպիոնի մտքով չէր անցնում։ Իր հիմնական և նույնիսկ միակ խնդիրը նա համարում էր Կարթագենի ամեն կերպ թուլացումն ու հնազանդեցումը։

Սակայն Հաննիբալը, որին Լիվիոսը (30, 36) համարում է բանակցությունների նախաձեռնող, այլ ելք չէր տեսնում։ Նրա համար պարզ էր, որ տվյալ պահին Կարթագենը չէր կարող շարունակել պատերազմը, որ պահպանելով իր գոյությունը, նա կկարողանար վերականգնել իր ուժերը, իսկ այն ժամանակ կարելի կլիներ փորձել նորից պատերազմի դիմելու և հասնելու փոխադարձ վրիժահատուցման։ Այդ պատճառով իր ամբողջ աղդեցությունը նա օգտագործեց այն բանի համար, որպեսզի համաքաղաքացիներին համոզի ընդունելու հռոմեական պայմանները։ Միաժամանակ նա հույժ արտասովոր ձևով հանդես էր գալիս նրանց դեմ, ում վրա նա սովորություն ուներ հենվելու։ Վաճառականներն ու արհեստավորները (Ապպիանոսի արտահայտությամբ՝ «շուկայական ամբոխը»), երկյուղ կրելով, թե կկորցնեն այն ամենը, ինչ իրենք ունեին, պահանջում էին շարունակել պատերազմը, սպառնում էին կողոպտել մագիստրատներին, որոնք հացը տալիս էին հռոմայեցիներին, փոխանակ այն բաժանելու քաղաքացիների միջև։ Նրանք նույնիսկ չէին ցանկանում լսել Հաննիբալին (Ապպ., Լիբ., 55), և զորավարը, որ սովոր չէր առարկությունների, մի ինչ-որ ժամանակ կորցրեց ինքնազսպումը։ Բանն այնտեղ հասավ, որ երբ ոմն Դիսկոն, հոծ ամբոխի առջև սկսեց դատողություններ անել հաշտության անընդունելիության մասին, Հաննիբալը զինվորականի անփափկանկատությամբ նրան ցած իջեցրեց ամբիոնից։

Նա անմիջապես սթափվեց և երկար ժամանակ ներողություն էր խնդրում հավաքվածների առջև, իր վարմունքը բացատրելով զինվորական սովորությամբ և քաղաքային կյանքի բարքերին ու սովորույթներին անծանոթ լինելով, իսկ այնուհետև նույն լսարանին ներշնչեց, թե ինչու Կարթագենի համար այդքան աննպաստ պայմանագիրը պետք է այնուամենայնիվ ընդունել (Պոլիբիոս, 15, 19, Լիվիոս, 30, 37)։ Այս իրադեպը հիշում էին, ու թերևս հենց Հաննիբալի անդոսությունը վճռական ազդեցություն թողեց խորհրդի և ժողովրդական ժողովի վրա։ Ոչինչ չէր կարելի անել. փոխադրանավերն ու մարդկանց վերադարձրին հռոմայեցիներին, իսկ կորածի դիմաց վճարեցին։ Եվ կարթագենական պատվիրակները Լուկիոս Վետուրիոս Փիլոնի, Մարկոս Մարտիոս Ռալոսի և Լուկիոս Կորնելիոս Սկիպիոնի՝ զորահրամանատարի եղբոր, ուղեկցությամբ մեկնեցին Հռոմ (Լիվիոս, 30, 37—38)[171]։

Ի տարբերություն նախորդի, այժմ կարթագենական պատվիրակության մեջ կային առավել նշանավոր և շատ ազդեցիկ անձնավորություններ, այդ թվում նաև Բարկյանների հակառակորդներ, և, հետևաբար, Հռոմի հետ հաշտության մշտական կողմնակիցներ։ Նրանց մեջ էր նաև Հասդրուբալ Գեդը։ Արդեն այդ ընտրությունը սենատին ցույց տվեց, որ այս անգամ կարթագենցիներն իրոք հաշտություն են ցանկանում։ Բանակցությունների ժամանակ հետաքրքիր միջադեպ տեղի ունեցավ։

Սենատորներից մեկը Հասդրուբալին հարցրեց, թե պունիկացիները ո՞ր աստվածների վկայությամբ պետք է վավերացնեն պայմանագիրը, եթե նրանց, ում նախկինում մաղթում էին, խաբել են։ «Նույն նրանց,— պատասխանեց Հասդրուբալը,— ովքեր այնպես թշնամի էին համաձայնությունները խախտողների նկատմամբ։ Վերջիվերջո, սենատը նույնպես որոշեց Սկիպիոնին հանձնարարել վերջնականապես հաշտություն կնքել այնպիսի պայմաններով, որոնք նա հարմար կհամարեր։ Հռոմայեցիներն այժմ չափազանց հաշտարարորեն էին տրամադրված. կարթագենական պատվիրակները խնդրեցին թույլ տալ իրենց՝ փրկագնելու 200 մեծատոհմիկ գերիների, իսկ սենատը կարգադրեց նրանց հասցնել Աֆրիկա և այնտեղ, բանակցությունների հաջող ավարտից հետո, բաց թողնել առանց փրկավճարի (Լիվիոս, 30, 42—43)։

Վերջապես, արդեն Սկիպիոնի ճամբարում հաշտության պայմանագիրը[172] վավերացվեց ստորագրություններով ու կնիքներով (201 թ.)։ Կարթագենցիները Սկիպիոնին հանձնեցին իրենց (ինչպես ասում էին, թվով 500) ռազմանավերը, ինչպես նաև փղերը, փախստականներին, փախած ստրուկներին և գերիներին։ Հռոմեական հրամանատարը հրամայեց նավերն այրել Կարթագենի անմիջական մատույցներում, փախստականներին գլխատել, հռոմայեցիներին՝ խաչ հանել (Լիվիոս, 30, 43)։ Պունիկյան II պատերազմը, որ սանձազերծվել էր Համիլկար Բարկայի, նրա փեսա Հասդրուբալի և նրա որդու՝ Հաննիբալի կողմից, ավարտվեց հռոմեական զենքի հաղթությամբ։

II

Հաշտության պայմանագրի կնքումը, որին այնպես համառորեն ձգտում էր Հաննիբալը, իրենով նշանավորեց բոլոր նրա վիթխարի պլանների ու փառասիրական մտահղացումների լիակատար փլուզումը։ Հաղթողներին չեն դատում, սակայն, լինելով պարտված, նա չէր կարող իր համաքաղաքացիների աչքին չերևալ որպես Կարթագենին պատուհասված բոլոր դժբախտությունների գլխավոր պատճառ։ Բարկյանների հակառակորդները կարող էին հրճվանքով մատնանշել, որ տակավին Սագունտումի պաշարման ժամանակ պատերազմից հրաժարվելու կոչ անող Հաննոնի քաղաքական կանխագուշակումները լիովին արդարացան։ Որ այդպիսի խոսքեր լսվում էին, դրանում ամենափոքր իսկ կասկած չէր կարող լինել, և Հաննիբալը նետվեց իշխանության համար պայքարի մեջ։

Կարո՞ղ էր արդյոք պունիկյան զորավարը հույս դնել որևէ մեկի աջակցության վրա։ Անշուշտ, այո։ Ուժերի ու խմբավորումների հարաբերակցությունը Կարթագենում չէր փոխվել։ Նախկինի պես Կարթագենում պահպանվում էին խիստ ազդեցիկ շրջանները՝ վաճառականներն ու արհեստավորները, որոնք շահագրգռված էին առևտրական էքսպանսիայի և, հետևաբար, առևտրական ուղիների վրա կարթագենական տիրապետության հաստատման մեջ։ Հայտնի է, որ Պունիկյան II և III պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում կարթագենական վաճառականները գործառնություններ էին կատարում ոչ միայն միջերկրածովյան երկրներում, այլև Սև ծովի առափնյա շրջաններում[173], ինչպես նաև «համեմունքների երկրում», այսինքն՝ Հնդկաստան տանող ճանապարհների ինչ-որ մի վայրում[174]. Հաննիբալի անվան հետ հաստատուն կերպով կապում էին փոխադարձ վրիժահատուցման գաղափարը, և դա հատկապես գրավում էր բոլոր նրանց, ովքեր դեմ էին հաշտության պայմանագրին, ովքեր այրվում էին կռվելու ցանկությամբ։

Սկզբնական շրջանում քաղաքական պայքարի հիմնական առարկա դարձավ պարտության համար մեղավորների հարցը։ Մեր տրամադրության տակ է Դիոն Կասսիոսի թեկուզ և եղծված, սակայն, անկասկած, վերականգնված մի պատառիկը (Ֆրագմ., 86, հմմտ. նաև Զոնարասի

մոտ, 9, 14), որի համաձայն Հաննիբալը հայրենիքում դատի է տրվել այն բանի համար, որ չի կամեցել դրավել Հռոմը և յուրացրել է Իտալիայում ձեռք բերված ռազմաավարը։ Այս հաղորդման մեջ որոշակիորեն նկատվում է Հաննիբալին Թշնամի օլիգարխների՝ պարտության համար պատասխանատվությունը միայն նրա վրա բարդելու, դեմոկրատական շրջանների աչքին նրան վարկաբեկելու և այդպիսով մեկընդմիշտ անհաճո և վտանգավոր մրցակցից ազատվելու փորձը։

Հաննիբալը պարտք չմնաց։ Ինչպես կարելի էր տեսնել, արդեն Իտալիայից հեռանալիս, նա սկսեց տարածել այն կարծիքը, որ կարթագենական խորհրդի մանրախնդիր կծծիությունը և հականերգործությունը իրեն թույլ չեն տվել հաղթելու։ Այս նյութը նա ամեն պատեհ առիթով տարափոխում էր։ Ահա հույժ բնութագրական և, ըստ երևույթին, բազմաթիվ իրադեպերից մեկը։

Կարթագենական կառավարությունը դրամ էր հավաքում ռազմատուգանքի առաջին վճարումը կատարելու համար։ Պատերազմից հյուծված բնակչության համար այդ տուրքը չափազանց ծանր էր, և բացի այդ գնում էր ոչ թե պետական շահերի, այլ հաղթողի անսահման մեծ ախորժակների բավարարման օգտին։ Հասկանալի է, որ խորհրդում ճնշող տրամադրություն էր իշխում, շատերը լալիս էին, բայց հատկապես Հաննիբալին այդ պահին տեսնում էին ծիծաղելիս։ Հասդրուբալ Գեդը, հակաբարկայական խմբավորման նույն այն անդամը, որը Հռոմ էր մեկնել սենատի հետ բանակցելու, իրեն թույլ տվեց հանդիմանելու զորավարին ընդհանուր սգի պահին նրա ուրախության համար. չէ՞ որ նա ինքն էր քաղաքում հեղվող արտասուքների պատճառը։ Ինչպես վկայում է Լիվիոսը (30, 44), Հաննիբալը դրան պատասխանել է. «Եթե որևէ մեկի հոգին հնարավոր լիներ տեսնել այնպես, ինչպես դեմքի արտահայտությունն է երևում, ապա դուք հեշտությամբ կհասկանայիք, որ քո նախատած այդ ծիծաղը բխում է ոչ թե ուրախ, այլ դժբախտություններից գրեթե խելագարված սրտից։ Սակայն դա այնչափ անտեղի չէ, ինչպես ձեր այդ անհեթեթ ու զզվելի արտասուքները։ Այն ժամանակ էր պետք լաց լինել, երբ մեզանից խլեցին զենքերը, այրեցին նավերը, արգելեցին պատերազմելու արտաքին թշնամիների դեմ. չէ՞ որ այդ վերջից ենք մենք ոչնչանում։ Իհարկե, պետք է մտածել, որ հռոմայեցիները առաջնորդվում էին ձեր հանդեպ տածած ատելությամբ։ Ոչ մի պետություն չի կարող ապրել հանգստության մեջ։ Եթե նա թշնամիներ չունի դրսում, դրանց նա գտնում է ներսում, նման այն բանին, թե ինչպես շատ ուժեղ մարմինները պաշտպանված են թվում արտաքին ազդեցություններից, սակայն ճնշվում են իրենց սեփական ուժերի կողմից։ Իհարկե, պետությանը հասած արհավիրքներից մենք զգում ենք այն, ինչը շոշափում է մասնավոր շահերը։ Նրանց մեջ ոչինչ այնպես ցավագնորեն չի ապշեցնում, քան դրամի կորուստը։ Եվ այդպես, երբ Կարթագենի վրայից քաշեցին-հանեցին հաղթական զենք ու զրահը, երբ դուք տեսաք, որ աֆրիկական զինված այդքան ցեղերի մեջ նրան թողնում են անզեն ու տկլոր, ոչ ոք չհառաջեց. այժմ, քանզի անհրաժեշտ է մասնավոր միջոցներից տուրք հավաքել, դուք արտասուքներ եք թափում, ասես պետության հուղարկավորության վրա։ Վախենում եմ, չլինի թե հանկարծ դուք շատ շուտ զգաք, որ այսօր լաց էիք լինում խիստ չնչին դժբախտության պատճառով։

Լիվիոսի պատմած դիպվածից ակներև է, որ Հաննիբալը կարթագենական խորհրդին կշտամբում էր պետության շահերի հանդեպ ունեցած լիակատար անտարբերության մեջ, որը Կարթագենին հասցրեց մինչև նրա այժմյան աղետալի կացությանը։ Եվ նա գտավ ուշադիր ու համակրող լսարան։ Ըստ երևույթին, հենց ժողովրդական զանգվածների պաշտպանությունն էր, որ 196 թ. Հաննիբալին հասցրեց պետության մեջ բարձրագույն պաշտոնի. նա դարձավ սուֆետ (Կորն. Նեպ., Հաննիբ., 7, 4, Լիվիոս, 33, 46)։

Հաննիբալի այն ելույթները, որոնք քիչ թե շատ ճշգրտությամբ վերարտադրում է Տիտոս Լիվիոսը, ցույց են տալիս, որ նա ձգտում էր փոխադարձ վրիժահատուցման։ Պետությունը չի կարող անգործության մատնվել. դարաշրջանի լեզվով դա նշանակում էր, որ պետությունը պետք է մաքառի, և Հաննիբալն այդ մասին ասում էր միանգամայն անկեղծորեն։ Այն թշնամիներ է դտնում կա՛մ ներսում (և սա, իհարկե, քաղաքացիական պատերազմի և Հաննիբալի քաղաքական հակառակորդների ֆիզիկական ոչնչացման ուղղակի սպառնալիք էր), կա՛մ դրսում։ Կարթագենի արտաքին թշնամի ո՞ւմ պետք էր համարել. Մասանասայի՞ն։ Այո, անշուշտ։ Սա խորամանկ, համառ, քինախնդիր և ուժեղ հակառակորդ էր։ Սակայն նա ինքը մեն-միայն վտանգավոր չէր։ Նրա թիկունքին կանգնած էր Հռոմը, որը Պունիկյան I պատերազմից հետո Կարթագենից խլել էր Սիցիլիան ու Սարդինիան, իսկ II-ից հետո՝ Իսպանիան և ընդարձակ տարածքներ բուն Աֆրիկայում, նույն Հռոմը, որը դանդաղորեն, բայց ատույգ կերպով, գործն այժմ տանում էր դեպի Կարթագենի ոչնչացումը։ Բայց իսկապես ոչ մի ճառի հարկ չկար։ Այն երդումը, որ շատ տարիներ առաջ, տվել էր ինն ամյա մանուկը, լավ էին հիշում նրա թե՛ բարեկամները և թե՛ թշնամիները։ Հաննիբալի անունը ինքնաստինջյան Հռոմի դեմ պատերազմի քաղաքականության խորհրդանիշն էր,

և վերջինս, իհարկե, նրա ընտրության մեջ չէր կարող իր նկատմամբ լուրջ սպառնալիք չտեսնել։

Հաննիբալն արդյոք ունե՞ր հաջողության իրական հավանականություններ։ Կարթագենի նկատմամբ տարած հաղթանակը և հաշտության կնքումը հռոմայեցիներին թույլ տվեց գործուն կերպով միջամտելու արևելյան գործերին, ամենից առաջ, Պերդամոսի և Հռոդոսի դեմ Փիլիպոս V-ի մղած պայքարին։ Այդ միջամտությունը (220 թ. Հռոմը նոր պատերազմ հայտարարեց Մակեդոնիային) վերջնական հեռանկարում պետք է հանգեցներ Արևմտա-Միջերկրածովյան երկրների վրա հռոմեական տիրապետության հաստատմանը. նման վտանգը կարող էր նպաստել հակահռոմեական միության և, ամենից առաջ, Փիլիպոս V-ի և Առաջավոր Ասիայում Սելևկյան հզորագոր թագավորության տիրակալ Անտիոքոս III-ի միջև դաշնակցության առաջացմանը։ Ճիշտ է, այդ դաշինքը չկայացավ. Անտիոքոս III-ը երկյուղ էր կրում ոչ միայն հռոմայեցիներից, այլև Մակեդոնիայի չափազանց ուժեղացումից, ուստի գործուն կերպով չէր միջամտում հռոմեա-մակեդոնական պատերազմին։ Հռոմի կողմում, ընդդեմ Փիլիպոս V-ի, հանդես էին գալիս հունական բոլոր պետությունները, և 196 թ. թագավորն ստիպված եղավ դիմելու իր համար հույժ ծանր հաշտության։ Միայն երբ ակնհայտ դարձավ Փիլիպոսի պարտությունը, Անտիոքոս III-ը զորքերը մտցրեց Փոքր Ասիա, դրանով իսկ սպառնալիք ստեղծելով հռոմայեցիների համար, իսկ այնուհետև անցավ Եվրոպա։ Հասունանում էր նոր պատերազմի սպառնալիքը։ Այդ պայմաններում, եթե հաջողվեր միավորել Փիլիպոսի և Անտիոքոսի ուժերը, եթե նրանք Հռոմին հարվածեին արևելքից, իսկ Կարթագենը՝ արևմուտքից, կարելի էր հույս տածել պատերազմը շահելու և հաղթելու նկատմամբ։ Նույնիսկ Փիլիպոս V-ի պարտությունը չէր վերացնում այդ հեռանկարը. Հաննիբալը բոլոր հիմքերն ուներ հույս դնելու Անտիոքոս III-ի և այդ թագավորի հետ համատեղ գործողությունների վրա. Անտիոքոսը բոլորովին վերջերս Մարաստանում և Պարսքում հաղթել էր իր ապըստամբ զորավարներին և Եգիպտոսից ետ էր նվաճել Փյունիկիան, Հարավային Ասորիքը և Պաղեստինը։ Դրանով է, իհարկե, բացատրվում Պունիկյան II պատերազմից հետո ընկած առաջին տարիներին Հաննիբալի դիվանագիտական մեծ գործունեությունը, Անտիոքոս III-ի հետ նրա գաղտնի նամակագրությունը, որը հանգեցրեց ավելի սերտ կապերի հաստատմանը (Լիվիոս, 33, 45)։

Գլխավորը, որ Հաննիբալին սպասում էր նրա պաշտոնում, եթե նա կամենում էր լրջորեն պատրաստվել նոր պատերազմի, հին ժառանգական թշնամիների, բոլոր այդ նույն հակաբարկայական «խաղաղության

կուսակցության» ընդդիմակայությունը կոտրելն էր։ Նրա համար բավական չէր նրանց լռել ստիպելը և սոսկ իրենը պնդելը։ Օլիգարխներին պետք էր ոչնչացնել, եթե ոչ ֆիզիկապես, ապա գոնե քաղաքականապես, նրանց ձեռքից խլել իշխանության գործիքները, վերացնել կամ տիրանալ նրանց իշխանության հենարաններին։ Հատկապես այդպիսիք էին Հաննիբալի ձգտումները։ Իր պայքարում նա կարող էր, իհարկե, օգտագործել սուֆետի իրավազորությունը, սակայն նրա գլխավոր նեցուկը ժողովրդական զանգվածների աջակցությունն էր, և դա ակնհայտ դարձավ առաջին իսկ ընդհարման ժամանակ։ Իր հարվածը Հաննիբալը հասցրեց ուղղակի օլիգարխիական իշխանության արևահյուսակին՝ բուն միջուկին։

Լիվիոսը (33, 46) գրում է, որ հենց այդ ժամանակաշրջանում Կարթագենում իշխում էր «դատավորների դասը»։ Երկարատև ժամանակընթացքում միևնույն անձնավորությունները անընդմեջ դատական պաշտոն են վարել։ Ունեցվածքը, բարի անունը, մարդկանց կյանքն իսկ գտնվում էին նրանց իշխանության ներքո. նրանցից թեկուզ մեկին դիպչողը անխուսափելիորեն բախվում էր բոլոր «դատավորների» հետ։ Մենք բավարար նյութ չունենք դատելու այն մասին, թե իսկապես Լիվիոսն ինչ ի նկատի ունի, երբ խոսում է «դատավորների դասի» մասին։ Ըստ երևույթին, խոսքը 104-ի խորհրդի մասին է, որը դատական իրավազորություն ուներ և ստեղծվել էր V դ. կարթագենական արիստոկրատիայի կողմից, զորապետների՝ պետական հեղաշրջումներ կատարելու և միանձնյա իշխանության հասնելու փորձերի դեմ պայքարելու համար։ Կարթագենական զորապետները այդպիսի փորձեր բազմիցս կատարել էին V և IV դդ., սակայն այն ժամանակ դրանք վերջացել էին խռովարարների կործանմամբ։ II դարում իրադրությունը կրկնվեց, սակայն այժմյան խաղում Հաննիբալը հաղթեց իր հակառակորդներին։

Դառնալով սուֆետ, Հաննիբալը, ի շարս բազում կարգադրությունների, կատարեց նաև մեկը, որն արտաքուստ բոլորովին աննշան էր, սակայն ընդհարման առիթ ծառայեց. նա հրամայեց իր մոտ կանչել պետական գանձարանի տնօրեն մագիստրատին («քվեստորին», ինչպես հռոմեական կարգերի համանմանությամբ նրան կոչում է Լիվիոսը)։ Մագիստրատը հրաժարվեց. նա, պարզաբանում է Լիվիոսը, պատկանում էր թշնամական կուսակցությանը և, բացի այդ, մագիստրատուրայի ժամկետը լրանալուց հետո պետք է անցներ «դատավորների դասը», այսինքն՝ հավանաբար, մտներ 104-ի խորհրդի մեջ։ Բախումն ստացավ ուժերի փորձարկման բնույթ, և Հաննիբալն արձագանքեց համապատասխան ձևով. նա լրատար (հավանորեն սուֆետին կից պաշտոնատար անձ, որը կատարում էր ոստիկանական պարտականություններ) ուղարկեց ձեր-

բակալելու գանձարանապետին և դիմեց ժողովրդական ժողովին, որտեղ նա արդեն խոսեց ոչ այնքան մագիստրատի, որքան «դատավորների դասի» մասին, որոնք իրենց ամբարտավանությամբ չեն ենթարկվում ո՛չ օրենքին և ո՛չ էլ իշխանություններին։

Ժողովրդական ժողովը համակրանքով դիմավորեց Հաննիբալի ելույթները, և նա տեղնուտեղը օրենք անցկացրեց, որի համաձայն «դատավորներին» պետք է ընտրեին միայն մեկ տարվա համար, այնպես որ ոչ ոք երկու տարի անընդմեջ չէր կարող այդ պաշտոնը զբաղեցնել։ Հայտնի չէ, թե ինչ ճակատագիր ունեցավ գանձարանապետը, ասենք, դա էական էլ չէր (Լիվիոս, 33, 46)։

Հաննիբալի առաջարկած և ժողովրդական ժողովի կողմից ընդունված օրենքի հետևանքը պետք է լիներ 104-ի խորհրդի լիովին վերականգնումը։ Ինչպես արդեն ասվել է, այդ խորհրդի նոր անդամները սովորաբար համալրվում էին. ընդ որում դա կատարում էին հատուկ հանձնախմբերը՝ պենտարքոսները։ Մենք չգիտենք, թե Հաննիբալը կարողացա՞վ արդյոք պենտարքոսներում կարգել իր մարդկանց կամ փոխել ընթացակարգը, այնուամենայնիվ, ակնհայտ է մի բան. իր զինվորական ամբողջ վճռականությամբ ու անկաշկանդությամբ հանդերձ, նա չէր դիմի նման քայլի, եթե համոզված չլիներ, որ փոփոխությունների հետևանքով «դատավորների դասը» համալրվելու էր Բարկայանների կողմնակիցներով և վերածվելու էր իր դիկտատուրայի հենարանի։ Այդպիսով Հաննիբալը կարողացավ ներքաղաքական կարևոր հաղթանակ տանել։

Կարթագենական կառավարության հիմնական խնդիրը, ով էլ որ կանգնած լիներ իշխանության գլուխ, միշտ մնում էր նույնը՝ փոխհարաբերությունը Հռոմի հետ։ Պատրաստվելով նոր պատերազմի, գաղտնի բանակցություններ վարելով Անտիոքոս III-ի հետ, Հաննիբալը պետք է միշտ ի ցույց դներ Հռոմի հանդեպ իր օրինապահությունը, եթե միայն նա վաղաժամ խզում չէր կամենում, և ամենից առաջ, ճշգրտորեն պահպաներ հաշտության պայմանագրի պայմանները, իսկ այդ նշանակում էր ճշտիվ ու ժամանակին մուծել ռազմատուգանքը։ Դառն փորձն արդեն կարթագենցիներին ցույց էր տվել, որ հարկ չէր լինի գթության սպասել։ Երբ 199 թ. կարթագենական ներկայացուցիչները առաջին վճարը մուծելու համար արծաթ տարան Հռոմ, նույն այն արծաթը, որի առընչությամբ Հաննիբալն ընդհարվեց Հասդրուբալ Գեդի հետ, հռոմեական քվեստորները հայտարարեցին, որ այն վատորակ է։ Բացի այդ, փորձանմուշը վերցնելիս, այսինքն՝ հալելու ժամանակ, բերված գումարի մեկ քառորդն անհայտացավ։ Պունիկացիներին ոչինչ չէր մնում անելու, քան հենց Հռոմում փոխառության դիմել պակասող մասը վճարելու համար (Լիվիոս, 32, 2)։ Այդ խնդրի լուծումը պահանջում էր շատ խիստ, ինչպես մենք կասեինք այժմ, ֆինանսական կարգապահություն։ Դրամն անհրաժեշտ էր նաև նոր պատերազմի նախապատրաստվելու համար։

Մինչդեռ Հաննիբալը քաղաքային ֆինանսները գտավ բացառիկորեն ծանր վիճակում. հավանաբար անմիջականորեն դրանով է հենց բացատրվում քվեստորին հրավիրելը։ Լիվիոսը (33, 46) գրում է, որ պետական գանձարան կատարած մուծումները կրճատվում էին մասամբ հարկերը գանձելիս ցուցաբերած անփութության, մասամբ էլ այն պատճառով, որ դրանք հափշտակում էին մագիստրատներն ու պետության առաջատար դեմքերը։ Ռազմատուգանք վճարելու համար դրամը չէր բավականացնում, և Հաննիբալի կառավարությունը կանգնեց քաղաքացիներին լրացուցիչ հարկման ենթարկելու հեռանկարի առջև։ Այդպիսի միջոցառումն, իհարկե, անմիջապես հույժ անժողովրդական կդարձներ Հաննիբալին։ Նա պետք է ոսկին ու արծաթը այնպես ձեռք բերեր, որպեսզի այդ ընթացքում չխախտվեին իր կողմնակիցների ունեցվածքային շահերը։ Եվ Հաննիբալն ամբողջապես խորասուզվեց այդ խնդրի լուծման մեջ։ Նա ջանադիր կերպով ուսումնասիրեց կարթագենական պետության բյուջեն. ինչպիսի՞ մաքսեր են գանձվում ցամաքում և ծովում, ինչի՞ վրա են ծախսվում փողերը, որքա՞ն է ծախսերի գումարը, որքա՞ն են գաղտնի յուրացրել և գողացել նրանք, ովքեր նախկինում վարում էին դրամական եկամուտը։ Վերջացնելով այդ, Հաննիբալը հայտարարեց, և դարձյալ ժողովրդական ժողովում, որ գանձելով բոլոր ապառքները պետությունը կկարողանա վճարել ռազմատուգանքը, չդիմելով մասնավոր անձանցից դրամ հավաքելուն։ Ամեն ինչ կատարվեց ճշգրտորեն (Լիվիոս, 38, 47, Կորն. Նեպ., Հաննիբ., 7, 5)։

Հաննիբալի այս գործողությունները, ինչպես և պետք էր սպասել, դժգոհություն առաջացրեցին արիստոկրատական շրջաններում. կարծես թե, կծու հեգնանքով նկատում է Լիվիոսը, նրանցից խլել էին ունեցվածքը և ոչ թե գողացված բարիքը, և որպեսզի ետ պահեն, նրանց կարծիքով չափազանց եռանդուն պետական գործչին, արիստոկրատները դիմեցին հռոմայեցիներին, նրանց, ում հետ նրանք կապված էին փոխադարձ հյուրընկալության կապերով (հմմտ. նաև Զոնարասի մոտ, 9, 18)։ Հաննիբալի դեմ նրանց առաջադրած հիմնական մեղադրանքը հետևյալն էր. Հաննիբալը գաղտնի նամակագրություն ունի Անտիոքոսի հետ և նրա դեսպաններին ընդունում է իր մոտ. նա ասում է, որ պետությունն անձնատուր է եղել քնեածության վիճակի, և նրան արթնացնել կարող է միայն զենքի շաչյունը։ Այստեղ գրեթե բացառիկ կերպով մեջ է բերվում այն ճառը, որը մի փոքր ավելի վաղ Լիվիոսը դրել էր Հաննիբալի

շուրթերին (Լիվիոս, 33, 44, Հուստինոս, 31, 1, 7—8)։ Իր հերթին հռոմեական կառավարությունը միայն առիթ էր փնտրում, որպեսզի բացահայտորեն հանդես գար Հաննիբալի դեմ և հասներ նրա հեռացմանը (Հուստինոս, 31, 1, 9)։ Առարկում էր միայն Սկիպիոնը, որպես թե բացահայտ մարտում Հաննիբալին հաղթած հռոմայեցիներին վայել չէ այժմ խառնվելու կարթագենական երկպառակություններին։ Սակայն նրա փաստարկներն ուշադրության չառան, և շատ շուտով (իսկ Հաննիբալի համար, ըստ երևույթին, անսպասելիորեն) Կարթագենում հայտնվեցին հռոմեական դեսպաններ Գնեոս Սերվիլիոսը, Մարկոս Կլավդիոս Մարկելոսը և Քվինտոս Տերենտիոս Կուլեոնը։

Սենատի կողմից նրանց տրված առաջադրանքը բարդ չէր. Հաննիբալին մեղադրել Անտիոքոսի հետ ունեցած հարաբերությունների և պատերազմ նախապատրաստելու մեջ. տրամաբանորեն դրան պետք է հետևեր հանձնման պահանջը. Հուստինոսը (31, 2, 1) այլ կերպ է ձևակերպում դեսպանության նպատակները. Սերվիլիոսն ու նրա ընկերները այնպես պետք է անեին, որ Հաննիբալին գաղտնի սպանեին նրա հակառակորդները։ Երբ դեսպանները ժամանեցին Կարթագեն, Հաննիբալի թշնամիների խորհրդով նրանք սկզբում գերադասեցին չբացահայտել իրենց իսկական նպատակները և ասացին, որ իրենց հանձնարարված է քննել Մասանասայի և կարթագենական կառավարության միջև եղած վեճերը։ Ինչպես երևում է, դավադիրները երկյուղ էին կրում ժողովրդական ընդվզումից։ Սակայն Հաննիբալը հասկանում էր, որ հռոմայեցիները կամենում են ձեռք գցել իրեն. խոսք կարո՞ղ էր արդյոք գնալ օրինական հիմքի վրա հանձնման մասին, թե՞ անկյունից սպանություն էր կազմակերպվելու. դրանք արդեն երկրորդական մանրուքներ էին։

Իհարկե, նա կարող էր վերստին դիմել ժողովրդին, և, դատելով ըստ ամբողջ նախընթաց իրադարձությունների, նրա համար ավելի դյուրին էր իր հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելը։ Անշուշտ, դրան պետք է հետևեր պատերազմն ընդդեմ Հռոմի, բայց չէ՞ որ այն անխուսափելի էր այնպես, ինչպես անխուսափելի էր Հռոմի պատերազմն Անտիոքոսի դեմ։ Մենք չգիտենք, թե Հաննիբալն արդյոք գտնո՞ւմ էր, որ Կարթագենը դեռ պատրաստ չէ պատերազմի, կամ նա չէ՞ր կամենում հանդես գալ ժողովրդական խռովության առաջնորդի դերով։ Ինչպիսիք էլ որ լինեին նրա վարմունքի դրդապատճառները, նա չցանկացավ մարտի մեջ մտցնել միակ ուժը, որը նրան կօգներ պահպանելու իշխանությունը, այսինքն՝ ժողովրդին, և գերադասեց փախչել։ Դեռ առավոտյան նա երևում էր փողոցներում ու հրապարակներում, իսկ երեկոյան երկու ուղեկիցներով սլացավ Բիզակիում։ Այնտեղ հաջորդ օրը հայտնվեց իր

ամրացված տիրույթում («աշտարակում», գրում է Լիվիոսը)՝ Աքիլլայի ու Թապսոսի միջև, և նստեց նավ (Լիվիոս, 33, 47—48, հմմտ. Կորն. Նեպ. մոտ, Հաննիբ., 8, 6—7, Հուստինոս, 31, 2, 2—5, Ապպ., Ասոր., 4, Օրոսիոս, 4, 20, 13)։ Նա վերստին հեռացավ Աֆրիկայից։

Գլուխ յոթերորդ

ՓԱԽՈՒՍՏՆ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

I

Հաննիբալի հանկարծակի անհայտացումը շփոթություն առաջացրեց Կարթագենում։ Վաղ առավոտյան մեծագոր տիրոջը ողջունելու, նրա ուշադրությունը գրավելու, նրանից պարգևներ և այլ շնորհներ ստանալու համար Բարկայանների հինավուրց տան նախասրահում հավաքված մարդիկ անսպասելիորեն տեսան, որ ոչ մի տեղ նա չկար։ Ժողովուրդը համախմբվեց հրապարակում. ամենուրեք լսվում էին խոսակցություններ, թե Հաննիբալը փախել է, որ նրան սպանել են հռոմայեցիները։ Բարկայանների կողմնակիցները և հակառակորդները, թվում էր, թե պատրաստ էին միմյանց վրա նետվելու։ Սակայն այդ պահին հայտնեցին, որ փախստական սուֆետին տեսել են Կերկինե կղզում, և կամացկամաց վրդովմունքը հանդարտվեց։ Բարկայանների կողմնակիցները կարող էին ոտքի հանել ժողովրդին մարդասպաններից վրեժ առնելու համար։ Սակայն ոչ ոք չկար, որից վրեժ առնեին, և դա բոլորովին իզուր էր. փրկելով իր կյանքը, նույնիսկ չփորձելով պայքարել, Հաննիբալն իր կողմնակիցներին նետեց բախտի քմահաճույքին։ Ըստ երևույթին, հենց ժողովրդական զանգվածների խոր հիասթափվածությամբ է բացատրվում այն, որ հռոմայեցիները, առանց դժվարության ու պայքարի, ձեռք բերեցին իրենց ցանկացածը։

Սենատի դեսպանները կարող էին արդեն չթաքցնել իրենց հանձնարարությունները։ Ելույթ ունենալով Կարթագենական խորհրդի նիստում, նրանք Հաննիբալին մեղադրեցին այն բանում, որ եթե ավելի վաղ նա Փիլիպոս թագավորին հրահրում էր պատերազմել հռոմայեցիների դեմ, ապա այժմ նա համաձայնության է եկել Անտիոքոսի և էտոլիացիների հետ, թե ինչպես Կարթագենին դրդի անջատվելու Հռոմից։ Հաննիբալը փախել է ոչ այլուր, քան Անտիոքոսի մոտ և չի հանգստանա այնքան ժամանակ, մինչև որ պատերազմի բոցը բորբոքի ամբողջ երկրով մեկ։ Եթե կարթագենցիները կամենում են օրինապատշաճ գոհունակություն պատճառել հռոմեական ժողովրդին, նրանք չպետք է անպատիժ թողնեն

Զայդպիսի արարքները։ Խորհուրդը խոնարհաբար պատասխանեց, որ նա կանի այն ամենը, ինչ հռոմայեցիները արդարացի կհամարեն. այլ կերպ ասած, եթե Հաննիբալը հայտնվեր Կարթագենում կամ նրան պատկանող երկրամասերում, նա անմիջապես պետք է բռնվեր և հանձնվեր հռոմեական իշխանություններին. Հռոմում Հաննիբալին անխուսափելի հաշվեհարդար էր սպասում (Լիվիոս, 33, 48—49)։ Լիակատար հետևողականությամբ Հաննիբալին հայտարարեցին աքսորված, բռնագրավեցին նրա ունեցվածքը և ավերեցին տունը (Կորն. Նեպ., Հաննիբ., 7, 7)։

Հռոմեական դեսպանները չէին սխալվում. Հաննիբալն իրոք վճռել էր մեկնել Անտիոքոս III-ի արքունիքը։ Ասենք, նա ուրիշ ելք չուներ։ Գնար Մակեդո՞նիա։ Սակայն մակեդոնական թագավորը շատ թույլ էր, որպեսզի հռոմայեցիներից պաշտպաներ Հաննիբալին։ Եգիպտո՞ս։ Բայց եգիպտական դեսպանները բոլորովին վերջերս հռոմեական կառավարությանն օգնություն առաջարկեցին Մակեդոնիայի դեմ մղվող պայքարում, եթե Հռոմին չրավականացնեին իր սեփական ուժերը։ Պերգամո՞ս։ Սակայն Պերգամոսի թագավոր Ատտալոսը Հռոմի ամենաեռանդուն դաշնակիցներից մեկն էր։ Հետևաբար մնում էր միայն սելևկյան Ասորիքը։

Ճանապարհին Հաննիբալն այցելեց Կերկինե կղզի։ Այնտեղ նավահանգստում նա հանդիպեց ապրանքներով բեռնված փյունիկյան մի քանի առևտրանավերի։ Մեծահռչակ զորավարին ճանաչեցին. երբ նա ափ դուրս եկավ, բոլոր կողմերից լսվեցին ողջույններ։ Այդպիսի ժողովրդականությունը Հաննիբալի համար տեղիք էր տալիս մեծ դժվարություններ։ Եթե Կերկինեում իմանային նրա փախստյան մասին, կարող էին բռնել նրան և ուղարկել Կարթագեն։ Դրանից խուսափելու համար Հաննիբալն իր ուղեկիցներին կարգադրեց ասել, որպես թե ինքը կարթագենական ժողովրդի կողմից, իբրև պատվիրակ, ուղարկվում է Տյուրոս։ Ոչ մի անսովոր բան չկար դրանում. Կարթագենը Տյուրոսի գաղութն էր, և կարթագենցիները մշտապես Տյուրոս էին ուղարկում իրենց պատվիրակներին, թե՛ ամենօրյա սովորական գործերով, թե՛ տաճարային ու այլ պաշտամունքային արարողություններին մասնակցելու համար։ Այդպիսի պատվիրակություններին մասնակցում էին նաև բարձրագույն պաշտոնատար անձինք։ Կար նաև ուրիշ վտանգ, եթե նավերից մեկը հեռանար Կերկինեից և մեկներ Թապսոս կամ Հադրումետում, և այնտեղ հայտնի դառնար, թե որտեղ է գտնվում Հաննիբալը, նրա ետևից անպայման հետապնդում կկազմակերպեին։ Անհրաժեշտ էր, ինչ կերպ էլ լիներ, պահել նավատերերին ու վաճառականներին, մինչև որ Հաննիբալը կմեկներ Կերկինեից։ Ելքը գտնվեց։ Իրենց համար անսպասելիորեն,

թե՛ տանք և թե՛ մյուսները, հրավիրվեցին հանդիսավոր զոհամատուցմանը՝ հյուսիսարևմտյան սեմական ժողովուրդների, այդ թվում փյունիկացիների ու կարթագենցիների համար սովորական դարձած սրբազան ճաշկերույթի, որտեղ, ինչպես ենթադրում էին, անհերևույթ կերպով մասնակցում է աստվածությունը։ Հաննիբալը հյուրասիրության մեջ առատաձեռնություն ցուցաբերեց, և մինչ ճաշկերույթի մասնակիցները կուշտ քնելուց ու չափազանց առատ խնջույքից հետո ուշքի կգային, նա գիշերը անաղմուկ բարձրացրեց խարիսխը և դուրս եկավ ծով։ Կարթագենական ու հռոմեական իշխանությունները Կերկինեում նրա կայանելու մասին շատ ուշ իմացան (Լիվիոս, 33, 48)։ Հաննիբալին հետապնդելու համար կարթագենցիները երկու նավ ուղարկեցին (Կորն. Նեպ., Հաննիբ., 7, 7), սակայն այնպես՞էլ չհաջողվեց փախստականին բռնել։

Առանց նոր արկածների, Հաննիբալը հասավ Տյուրոս։ Այնտեղ նրան դիմավորեցին ամեն տեսակի պատիվներով, և նա իրեն պատկերացրեց յուրայինների մեջ, երկրորդ հայրենիքում։ Կարելի է պատկերացնել, թե նա ինչ պետք է զգար տարազրվելուց, մահացու վտանգից հրաշքով ազատվելուց և այն լարվածությունից հետո, որ նա ապրեց, հայտնվելով բարյացակամ մարդկանց մեջ, որոնք խանդավառությամբ նայում էին նրան և որսում նրա ամեն մի խոսքը։ Բայց և այնպես, նա չէր կամենում ժամանակ կորցնել։ Տյուրոսում մի քանի օր հանգստանալուց հետո Հաննիբալը մեկնեց Անտիոք։ Այնտեղ նա իմացավ, որ թագավորը գտնվում է Փոքր Ասիայում։ Մասնակցեց Դափնեում (Անտիոքի արվարձանը՝ հռչակված իր ճոխությամբ ու ցոփակեցությամբ) արքայազնի կազմակերպած խաղերին. քաղաքավարությունը և լավ հարաբերություններ հաստատելու ցանկությունը, իսկ գուցե և հետաքրքրասիրությունը, նրան թույլ չտվեցին հրաժարվելու. այնուհետև Հաննիբալը արագ մեկնեց Փոքր Ասիա։ Անտիոքոս III-ին նա գտավ Եփեսոսում (Լիվիոս, 33, 49)։

II

Հաննիբալը ժամանակին հայտնվեց Անտիոքոսի արքունիքում։ Թագավորը, որ Մակեդոնական II պատերազմում (200—196 թթ.) Փիլիպոս V-ի ջախջախումից հետո Հունաստանի ու Փոքր Ասիայի վրա տիրապետություն ունենալու համար մղվող պայքարում մնացել էր Հռոմի գլխավոր հակառակորդը, պատրաստվում էր անխուսափելիորեն մերձեցող պատերազմի, և, հասկանալի է, այդքան փորձված, տաղանդավոր, փառաբանված զորակոնի, Տրազիմենոսյան լճի և Կաննեի մոտ հաղթողի մասնակցությունը Անտիոքոսի ու նրա զինվորների մոտ հույս

և վստահություն էր առաջացնում հաղթանակի նկատմամբ։ Հուստինոսի խոսքերով (31, 3, 5—6), Անտիոքոսը այժմ մտածում էր ոչ թե այն մասին, թե ինչպես պետք է պատրաստվել պատերազմին, այլ ինչպես պետք է օգուտ քաղել հաջողությունից։ Իսկ որ հաջողություն լինելու էր, դրանում նա չէր կասկածում։ Տեղի ունեցածը հենց նույն կերպ էին գնահատում թե՛ Հռոմում և թե՛ Կարթագենում (Հուստինոս, 31, 2, 7—8)։ Հռոմայեցի քաղաքական գործիչները երկյուղ էին կրում Իտալիա Հաննիբալի նոր ներխուժումից (Լիվիոս, 34, 60). Նման անհանգստության համար նրանք հիմքեր ունեին։

Հաննիբալը շտապում էր Անտիոքոս III-ի մոտ, որի հետ, ինչպես մենք արդեն ասել ենք, նա վաղուց էր, ինչ պայմանավորվել էր Հռոմի դեմ համատեղ պայքարի մասին, ոչ այն բանի համար, որպեսզի հեռանալով գործերից, կամ թագավորի անձի կողքին շատ կամ քիչ ապահով դիրք զբաղեցնելով, կողքից հանգիստ կերպով դիտեր դեպքերի զարգացմանը։ Իհարկե, փախստական զորավարի թիկունքում պետություն չէր կանգնած, նա զորք չուներ, թեև բարենպաստ պայմաններում կարելի էր Կարթագենում սպասել հակահռոմեական շարժման նոր վերելքի և իշխանության գլուխ Հաննիբալի կողմնակիցների անցմանը։ Չէ՞ որ նրա փախուստը չէր վերացնում Պունիկյան II պատերազմից հետո Կարթագենում ծագած խնդիրները, ինչպես որ դրանք չէր կարող վերացնել նաև նրա կործանումը։ Հռոմեական դիկտատորի և օլիգարխիական «խաղաղության կուսակցության» նկատմամբ առևտրաարհեստավորական շրջանների թշնամական ելույթների նախադրյալները նախկինի պես պահպանվում էին։ Սակայն գլխավորն ուրիշ էր։ Հաննիբալը կամենում էր որպես զորավար, թագավորին առաջարկել իր ծառայությունները և պատերազմը վարելու իր ծրագիրը (հմմտ. Օրոսիոսի մոտ (4, 20, 13), որտեղ Հաննիբալը ներկայացվում է նույնիսկ որպես պատերազմի նախաձեռնող)։

Հաննիբալի ծրագիրը շատ պարզ էր։ Պատերազմը,— ասում էր նա,— պետք է մղել Իտալիայում. միայն այնտեղ կարելի է հաղթել հռոմայեցիներին։ Իտալիկները Հռոմի թշնամիներին կամ ստակարարեն և՛ դինվորներ, և՛ պարենամթերք։ Իսկ եթե Իտալիայում ամեն ինչ հանգիստ լինի, և հռոմայեցիներին թույլ տրվի պատերազմ մղել նրա սահմաններից դուրս, ո՛չ մի ժողովուրդ, ո՛չ մի թագավոր չի կարողանա նրանց հաղթել։ Հաննիբալը թագավորից խնդրեց 100 նավ, 10 հազար հետևակորային և 1000 հեծյալ. նրանց հետ նա պետք է մեկներ Աֆրիկա և այնտեղ կարթագենցիներին համոզեր ապստամբել հռոմայեցիների դեմ։ Եթե նրանք հրաժարվեին, նա ինքը պետք է անցներ

Իտալիա և հաղթանակ տաներ։ Բավական է որ,— ավելացրեց Հաննիբալը,— թագավորն անցնի Եվրոպա կամ միայն ցույց տա, թե ինքը պատրաստվում է այնտեղ դիմելու, արդեն կհասնի հաղթանակի կամ հաշտության բարենպաստ պայմանների (Հուստինոս, 31, 3, 7—10, Լիվիոս, 34, 60, Ապպ., Ասոր., 7)։ Հաննիբալը այդպիսի ելույթներ ունեցավ նաև հետագայում, երբ խորտակվեցին Կարթագենի աջակցության նկատմամբ նրա տածած հույսերը (Հուստինոս, 31, 5, 3—9, Ապպ., Ասոր., 14)։

Որպեսզի Կարթագենում բարենպաստ պայմաններ ստեղծի այդ մտահղացման իրագործման համար, Հաննիբալը գաղտնի այնտեղ ուղարկեց իր գործակալին՝ տյուրոսցի մի ինչ-որ Արիստոնի, որն այնտեղ շփման մեջ պետք է մտներ Բարկայանների հետ և պայմանավորվեր ամեն ինչի շուրջ։ Սակայն նրա առաքելությունը թաքցնել չհաջողվեց։ Հաննիբալի թշնամիները հասան այն բանին, որ Արիստոնին կանչեցին խորհուրդ. հարցաքննության ժամանակ նա անուններ չտվեց, բայց չկարողացավ նաև բավարար կերպով բացատրել, թե իսկապես ինչու է եկել և ինչու է զրույցներ ունեցել միայն բարկայական «կուսակցության» հայտնի գործիչների հետ։ Խորհրդում վիճաբանություններ սկսվեցին. ոմանք առաջարկում էին առանց հապաղելու, ձերբակալել Արիստոնին, ուրիշներն ասում էին, որ չի կարելի առանց որևէ պատճառի և հանցանքի ապացույցների ձերբակալել օտարերկրացու և այն էլ տյուրոսցու, և որոշեցին մեկ օրով գործը հետաձգել, իսկ նույն այդ ժամանակ Արիստոնը, մարդաշատ տեղում, այնտեղ, ուր սովորաբար նիստ էին անում մագիստրատները, կախելով արձանագիր տախտակներ, փախուստի դիմեց։ Արձանագրություններից մագիստրատներն իմացան, որ Արիստոնը ուղարկվել է ոչ թե որոշակի այս կամ այն մարդկանց, այլ ամբողջ ժողովրդի մոտ, և բարվոք համարեցին ամբողջ կատարվածի մասին հաղորդել Հռոմ (Լիվիոս, 34, 61, Ապպ., Ասոր., 8, Հուստինոս, 31, 4, 1—3)։ Արիստոնի առաքելության այդպիսի արդյունքը Հաննիբալին ցույց տվեց, որ նա դեռևս չի կարող հույս դնել կարթագենական բարեկամների վրա։

Այս իրադարձությանն առնչվում է Կորնելիոս Նեպոսի ևս մեկ պատումը (Կորն. Նեպ., Հաննիբ., 8, 1—2), որի համաձայն, իբրև թե Կարթագենում գործերի դրության վրա ավելի լավ ազդելու համար Հաննիբալը եկել է Կիրենե։ Սակայն այս հաղորդումը Նեպոսի մոտ ուղեկցվում է անհավանական մանրամասներով. Հաննիբալն, իբր թե իր մոտ՝ Կիրենե է կանչել իր եղբորը՝ Մագոնին (որն, ինչպես արդեն ասվել է, վախճանվել էր մինչև Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը)։ Այս պատումի մեջ Մագոնի հետագա ճակատագրի վրա լույս սփռող, բացա-

հայտորեն հնարածո մանրամասների մուծումը ամբողջապես կոսկածի տակ է դնում նաև Նեպոսի բերած ավանդությունը։ Սակայն, եթե անգամ ընդունենք, որ Հաննիբալն իրոք ժամանել է Կիրենե, չի կարելի չտեսնել, որ այն նրա համար բարենպաստ հետևանք չի ունեցել։

Արիստոնի անհաջողությունն ամենայն հավանականությամբ այն պատճառներից մեկն էր, որը Անտիոքոս III-ին հարկադրեց հրաժարվելու Հաննիբալի առաջարկից, թեև սկզբում թագավորը համաձայնվեց նրա հետ։ Իհարկե, Հաննիբալը, առանց իր հյուրասեր տանտիրոջ համաձայնության, չէր կարող իր գործակալին ուղարկել Կարթագեն։ Սակայն Կարթագենի վրա դրած հույսերը խորտակվեցին, իսկ Իտալիայում հենց Հաննիբալի մղած բազմամյա պատերազմի արդյունքներն, իհարկե, նրա մտահղացումների դեմ էին խոսում։ Եվ բացի այդ, Անտիոքոսը չէր կարող իրեն հաշիվ չտալ այն բանի համար, որ Հաննիբալն Իտալիան կոսկեր նվաճել իր համար (կամ Կարթագենի համար, որն այդ դեպքում միևնույնն էր), և, հետևաբար, հաջողության դեպքում միջերկրածովյան աշխարհի վրա իշխանության համար մղած պայքարում մի հակառակորդի փոխարեն երևան կգար նաև նորը, թերևս նույնիսկ ավելի վտանգավորը։ Դրա հետ մեկտեղ կային նաև անձնական շարժառիթներ։

193 թ. Եփեսոս ժամանեց հռոմեական դեսպանություն, որը պետք է մեկ անգամ ևս փորձեր Անտիոքոս III-ի հետ պարզաբանել վիճելի հարցերը և ամենից առաջ հասներ այն բանին, որ նա չմիջամտեր հունական գործերին։ Թագավորն այդ պահին զբաղված էր Պիսիդիայում մղվող պատերազմով, և դեսպանները, գլխավորապես Պուբլիոս Վիլիոսը, սպասման պահն օգտագործեցին այն բանի համար, որպեսզի Հաննիբալի հետ հաստատեին կամ ցույց տային թե հաստատում են, սերտ կապեր։ Ըստ Հուստինոսի խոսքերի (31, 4, 4), նրանք պետք է Հռոմի նկատմամբ խաղաղասիրական վերաբերմունք ներշնչեին Հաննիբալին, կամ, եթե այդ չհաջողվեր, թագավորի առջև վարկաբեկեին նրան։ Լիվիոսը մի փոքր այլ կերպ է բացատրում Վիլիոսի վարմունքը. նա կամենում էր ավելի խորը թափանցել Հաննիբալի մտահղացումների մեջ և հարցուփորձով իմանալ, թե Հռոմին վտանգ չի՞ սպառնում արդյոք։ Մեկը մյուսին չի բացառում. Վիլիոսը ևս, հավանաբար ինչպես նաև դեսպանության մյուս մասնակիցները, սպասելով թագավորի պաշտոնական պատասխանին, իրենց ամբողջ ժամանակն անց էին կացնում Հաննիբալի հետ։ Նրանք օտարոտի զրույցներ էին ունենում. Հաննիբալը կեղծ երկյուղից թողեց հայրենիքը, այն դեպքում, երբ հռոմայեցիներն ամենայն բարեխղճությամբ պահպանում էին հաշտության պայմանագիրը, որը կնքված էր ո՛չ այնքան նրա պետության, որքան հենց իր հետ. պա-

տերազմ Հաննիբալը մղում էր ավելի շատ Հռոմի հանդեպ տածած ատելության, քան հայրենիքի (որի համար լավագույն մարդիկ պետք է զոհաբերեին նույնիսկ կյանքը) նկատմամբ ունեցած սիրո պատճառով. ժողովուրդների միջև պատերազմներն առաջանում են ո՛չ թե զորավարների միջև ծագած երկպառակություններից, այլ պետական դրդապատճառներից։ Հռոմայեցիները զովաբանում էին Հաննիբալի արարքները, և խորին ծերության հասած զորավարը, տեղի տալով մարդկային ներելի թուլության առջև, դեսպանների հետ հաճախ և սիրով էր խոսում այդ նյութի շուրջը (Հուստինոս, 31, 4, 6—8)։ Ասենք նա ինքն էլ էր սիրալիր խոսքերով պատասխանում սիրալիրությանը։ Լիվիոսը (35, 14), Պլուտարքոսը (Փլամ., 21) և Ապպիանոսը (Ասոր., 10) հույժ հետաքրքիր պատմություն են պահպանել այն մասին, որ իբրև այդ դեսպանությանը մասնակցում էր նաև Սկիպիոնը։ Մի անգամ զրույցի ժամանակ Սկիպիոնը Հաննիբալին հարցրեց, թե ում է համարում մեծագույն զորավար։ Հաննիբալը պատասխանեց. «Ալեքսանդր Մակեդոնացուն, որը ոչ մեծաթիվ զորքով ջախջախեց թշնամու հսկայական բանակը և թափանցեց խիստ հեռավոր երկրներ. երկրորդը՝ Պյուրոսին, որն առաջինն սկսեց կառուցել զինվորական ճամբար, իսկ երրորդը՝ իրենս»։ «Ի՞նչ կասեիր,— շարունակեց Սկիպիոնը,— եթե հաղթեիր ինձ»։ «Այն ժամանակ,— ասաց Կարթագենցին,— ես ինձ բարձր կհամարեի և՛ Ալեքսանդրից, և՛ Պյուրոսից, և՛ բոլոր մյուս զորավարներից»։ Ժամանակակիցները, որոնց թվում նաև մեր աղբյուրը, այս խոսքերում միայն շողոքորթության կատարելագործված եղանակ էին տեսնում։ Հաննիբալն Սկիպիոնին հասկացնել տվեց, որ նրան ինքը ճանաչում է որպես ամենամեծ զորավար, առանց որևէ համեմատության Ալեքսանդր Մակեդոնացու հետ, չխոսելով արդեն մյուսների մասին։ Հաննիբալի ասածներում, անշուշտ, նման մասնիկ կար։ Սակայն մեզ համար կարևորն ուրիշ բան է. թե՛ դարաշրջանի և թե՛ հենց իր՝ Հաննիբալի համար հատկանշական խոնարհումը շատ կամ քիչ հաջողակ արկածախնդիրների, տիեզերքի նվաճողների առջև։ Այն երևան է հանում Հաննիբալի հոգևոր ծագումնաբանությունը. նա ինքը նույնպես իր դաստիարակությամբ, իր բոլոր արարքներով, մտածելակերպով ոտից գլուխ նվաճող-ռազմիկ էր. նա սովորել էր հույս դնել միայն վարձկան զինվորների վրա, որոնք հավատում էին իրենց զորավարին և նրա հաջողությանը. նա նույնպես, Ալեքսանդրի ու Պյուրոսի նման, ձգտում էր համաշխարհային տերություն ստեղծել Կարթագենի գերիշխանության տակ, այսինքն՝ վերջին հաշվով, իր համար։ Ապպիանոսը մեզ է հասցրել Հաննիբալի ևս մեկ, չափազանց կարևոր, դիտողությունը, որը բաց են թողել մյուս աղբյուրները։ Սկիպիոնի

հետ ունեցած զրույցում հիմնավորելով իր ինքնագնահատումը, Հաննիբալը խոսեց այն մասին, որ պատանի հասակում ինքը գրավել է Իսպանիան, անցել է Ալպերով (Հերակլեսից հետո առաջինը, տեղական ցեղերը և նրանց կանոնավոր ռազմարշավները նկատի չեն առնվում), իսկ Իտալիայում, օգնություն չստանալով Կարթագենից, գրավել է 400 քաղաք, հռոմայեցիներին երկյուղ ներշնչելով իրենց քաղաքի բուն իսկ գոյության համար։ Հետագարձ հայացք նետելով իր անցած ուղու վրա, Հաննիբալն իր մեջ նույնպես գնահատեց ամենից առաջ զորավարի արժանիքները։ Կրկնելով կարթագենական խորհրդի դիրքավորման մասին իր կարծիքը, նա այժմ ոչ միայն հետևում էր իրադարձությունների՝ իր համար միակ հնարավոր մեկնաբանությանը, այլև ջանում էր իրեն ներկայացնել որպես մի մարդու, որը փաստապես իր իսկ համարձակությամբ ու պատասխանատվությամբ, ձեռնարկել և վարել է պատերազմը, և որին են անբաժան կերպով պատկանում իր հաղթանակներն ու պարտությունները։

Պուբլիոս Վիլիոսը հասավ իր առջև դրված գլխավոր նպատակին. Անտիոքոսն սկսեց Հաննիբալին կասկածել դավաճանության մեջ, բացահայտ անվստահությամբ վերաբերվելով նրան (Լիվիոս, 35, 14, Պոլիբիոս, 3, 11, 2, Ապպ., Ասոր., 9., Կորն. Նեպ., Հաննիբ., 2, 2, Փրոնտինոս, 1, 8, 7, Հուստինոս, 31, 4, 8—9)։ Ճիշտ է, Հաննիբալին կարծես թե հաջողվեց ցրել իր գլխի վերևում կուտակված ամպերը. նա Թագավորին հիշեցրեց իր երդման և այն մասին, որ հենց ինքը՝ Հաննիբալն է Հռոմի ամենահետևողական և անհաշտ թշնամին։ Քանի դեռ Անտիոքոսը պայքարում է Հռոմի դեմ, նա միշտ կարող է հույս դնել Հաննիբալի աջակցության և հավատարմության վրա (Լիվիոս, 35, 19, Պոլիբիոս, 3, 11, 3—9, Կորն. Նեպ., Հաննիբ., 2, 3—6)։ Հաշտություն ձեռք բերվեց, սակայն խորթացումը պահպանվեց, և եթե Անտիոքոսն իր հյուրին դեռ կանչում էր խորհրդի, ապա ոչ այն բանի համար, որպեսզի հաշվի առնի նրա տեսակետը, այլ որպեսզի չերևար, թե իբր Հաննիբալին արհամարհում են (Հուստինոս, 31, 5, 1)։

Բացի այդ, Հաննիբալն, ըստ երևույթին, հարկ չէր համարում Անտիոքոսից թաքցնել սելևկյան բանակի վերաբերյալ իր ունեցած բացասական կարծիքը և այն արտահայտում էր ամեն մի պատեհ կամ անպատեհ առիթով, շատ չմտահոգվելով բառերի կամ խոսքի մեջ դարձվածքների ընտրության մասին։ Ահա այդպիսի իրադեպերից մեկը (Գելլ., 5, 4, 5). Անտիոքոսը Հաննիբալի ներկայությամբ կազմակերպում է իր հսկայական զորքի ստուգատես՝ նրա ոսկյա և արծաթյա նշանակներով, թանկարժեք զինահանդերձանքով և ամեն տեսակի զարդարանքներով։

«Արդյոք դու չե՞ս գտնում,— հարցնում է նա Հաննիբալին,— որ այս բոլորը բավական է հռոմայեցիների համար»։ «Բավական է, այս ամենը լիովին բավական է հռոմայեցիների համար,— հետևում է վայրկենական պատասխանը,— թեև նրանք շատ են ագահ»։ Այսպիսի անկեղծ արհամարհանքը չէր կարող հաղթանակի սպասող և արդեն հաջողության մեջ վստահ թագավորի սրտովը լինել։

Վերջապես, Անտիոքոսը պարզապես չէր կամենում Հաննիբալի հետ կիսել հաղթողի դափնիները (Հուստինոս, 31, 6, 2, հմմտ. Զոնարասի մոտ, 9, 8)։

Անտիոքոս III-ի և Հռոմի միջև սկսված պատերազմի սկզբում թվում էր, թե Հունաստանում լիովին նպաստավոր դրություն էր ստեղծվել Անտիոքոսի ծրագրերի իրագործման համար։ Հռոմայեցիների դեմ հանդես եկավ Էտոլիական միությունը, Անտիոքոսին հռչակելով իր գերագույն ստրատեգոսը։ Հռոմեական զինվորների գարշապարի տակ ճզմված Հունաստանում զորեղ էր դեմոկրատական, հակահռոմեական շարժումը, որն իր բոլոր հույսերը դնում էր Անտիոքոսի վրա։ Զուր էր Հաննիբալը Թագավորին առաջարկում դաշինք կնքել Փիլիպոս V-ի հետ կամ նրա ուշադրությունը շեղել սահմանային պատերազմով, զուր էր նա խորհուրդ տալիս պատերազմը տեղափոխել Իտալիա (Լիվիոս ,36, 7). Նրան ոչ ոք արդեն չէր լսում։ 192 թ. աշնանը Անտիոքոսն ափ դուրս եկավ Թեսալիայում, սակայն արդեն 191 թ. ապրիլին նա ջախջախվեց Թերմոպիլեի մոտ և իր բանակի շնչին մնացորդներով փախավ Փոքր Ասիա՝ Եփեսոս։ Բացի նրա զինվորների անպատրաստությունից, այդ պարտության պատճառը նաև այն էր, որ Անտիոքոսը Հունաստանում չստացավ այն աջակցությունը, որի վրա նա հույս էր դրել։ Նրա դաշնակիցները շատ քիչ զինվորներ տվեցին նրան, իսկ նրա հակառակորդների մեջ էին Աթենքը, Աքայական միությունը, Մակեդոնիան...

Հաննիբալին, որքանով որ կարելի է դատել այդ մասին, թագավորը պահում էր ստվերում և թույլ չէր տալիս մասնակցելու մարտական գործողություններին։ Միայն Թերմոպիլեի մոտ կրած պարտությունից հետո Անտիոքոսը որոշեց օգտվել նրա փորձից և... նրան նշանակեց հրամանատար փութանակի հանդերձած տորմիղի վրա, որը պետք է պաշտպաներ թագավորի դիրքերն Արևմտյան Միջերկրականում։ Նույնիսկ այժմ, երբ Փոքր Ասիայում սելևկյան տիրապետության նկատմամբ անմիջական վտանգ էր առաջացել, Անտիոքոսը ջանում էր Հաննիբալին ուղարկել առաջիկա պատերազմի ամենաերկրորդական ճակատամասերից մեկը։ Այնուամենայնիվ, այնքան ուժեղ էր ատելի թշնամուն մեկ անգամ

ևս հարվածելու, փոխադարձ վրեժ առնելու Հաննիբալի ձգտումը, որ նա ընդունեց իր համար անշուշտ վիրավորական այդ առաջարկը։

Հաննիբալի գործունեությունը նրա համար անսովոր՝ նավատորմավարի դերում, նրան հաջողություն չբերեց։ Նրա հակառակորդը Հռոմի դաշնակից Հռոդոսն էր, և Սիդոսի մոտ, Պամփյուլիայի ափերից ոչ հեռու, հռոդոսցիներն սկզբում նեղեցին ասորիքցիների (որոնց հրամանատարն էր Անտիոքոսի պալատականներից մեկը՝ Ապոլլոնիոսը) աջ զորաթևը, իսկ այնուհետև հարձակվեցին ձախի վրա, որտեղ էր ինքը՝ Հաննիբալը, որը մի ինչ-որ ժամանակ հաղթեց թշնամուն, բայց չդիմացավ նրա բուռն գրոհին և դիմեց փախուստի (190 թ., օգոստոս)։ Այդ ժամանակից ի վեր նա գործուն մասնակցություն չունեցավ պատերազմին (Լիվիոս, 37, 23—24, Կորն. Նեպ., Հաննիբ., 8, 3—4, Զոնարաս, 9, 20, Եվտրոպիոս, 4, 4)։ Ասպիանոսի մոտ դեպքերն այլ կերպ են շարադրվում և ակնհայտորեն պակաս արժանահավատությամբ (Ասպ., Ասոր., 22). ճակատամարտը տեղի է ունեցել հռոմեական և սելևկյան նավատորմների միջև. վերջինիս հրամանատարն էր Պոլիկսենիդեսը։ Միայն սելևկյան ծովայինների ջախջախումից ու փախուստից հետո Հաննիբալն ուղարկվեց Փյունիկիա և Կիլիկիա նոր նավատորմ հանդերձելու համար։ Հռոդոսցիները Պամփյուլիայի ափերի մոտ շրջափակեցին Հաննիբալին և գրավեցին մի քանի նավ։

Այսպես թե այնպես, Հաննիբալի անհաջողությունը Անտիոքոսին ստիպեց ավելի լրջորեն վերաբերվել ծովում ընթացող ռազմական գործողություններին և մարտի մեջ մտցնել իր ամբողջ նավատորմը։ Սակայն Միոնեսայի մատույցներում Ասորիքի նավատորմը վերստին ջախջախվեց, իսկ դարձյալ որոշ ժամանակ անցնելուց հետո, ըստ երևույթին 189 թ. հենց սկզբին, Մագնեսիայի մոտ տեղի ունեցավ ցամաքային վճռական ճակատամարտ, և գլխովին ջախջախված Անտիոքոս III-ն ստիպված էր հաշտություն հայցել[175]։ Նա համաձայնվեց հռոմայեցիների բոլոր պահանջներին (դրանցից գլխավորը եվրոպական ու փոքրասիական բոլոր տիրույթներից հրաժարվելն էր։ 188 թ. Ապամեայում կնքված հաշտության դաշնագրի պայմանների մեջ կար նաև այսպիսի կետ. «Հանձնել կարթագենցի Հաննիբալին» (Պոլիբիոս, 21, 14, 7))։

III

Անտիոքոս III-ի ջախջախումը շեշտակիորեն փոխեց իրավիճակը ամբողջ Արևելյան Միջերկրականում։ Հռոմը, որ տակավին այստեղ չուներ իր տիրույթները, Արևելքում դարձավ քաղաքական վճռական ուժ, դերագույն միջնորդ բոլոր տեսակի վեճերում. մշտապես միջամտելով և

իր տիրազոր խոսքով հարթելով բախումները, Հռոմը աստիճանաբար նախապատրաստում էր Փոքր Ասիայի, Ասորիքի և Եգիպտոսի բռնակցումը։ Ճիշտ է, նրան անհրաժեշտ եղավ դարձյալ ավելի քան 150 տարի, և հելլենիստական թագավորությունների վերջնական նվաճումը ավարտեց Օկտավիանոսը, սակայն հիմքը դրվեց 188 թ. ապամեյան պայմանագրով։

Իսկ ինչ վերաբերվում է Հաննիբալին, ապա նրա համար Անտիոքոս III-ի պարտությունը կենսական մեծագույն աղետ էր։ Խորտակվեցին վերջին հույսերը։ Այլևս մեկը չկար, որի հետ դաշինքի ձգտեր, մարդ չկար, որին արշավանքի դրդեր Հռոմի դեմ։ Ատելի թշնամին Հաննիբալի առջև հառնում էր որպես ահավոր մի զանգված, որը ոչ ոք ի զորու չէր խորտակել, որպես հզորազոր մի ուժ, որին ոչ ոք չէր կարող հակադրվել։ Զառամյալ զորավարին (նա հավանաբար, մոտավորապես 60 տարեկան էր) ամենայն հավանականությամբ մնում էր միայն մի բան՝ փնտրել ապաստան, որտեղ նա կկարողանար անվտանգության և անդորրի մեջ անցկացնել սակավաթիվ այն տարիները, որոնք նա դեռ պետք է ապրեր։ Սակայն այն պայմաններում, երբ ամենուրեք գերիշխում էին հռոմայեցիները, երբ հռոմեական կառավարությունը ամենայն որոշակիությամբ պահանջում էր հանձնել նրան, ոչ ոք չէր կարող ո՛չ անդորր և ո՛չ էլ անվտանգություն երաշխավորել նրան։ Ասենք ինքը՝ Հաննիբալն էլ մտադիր չէր հանձնվել։

Մեր տրամադրության տակ կա մի ավանդություն (Պլուտ., Լուկ., 31, 5, Ստրաբոն, 11, 14, 6), որի համաձայն Հաննիբալը եղել է Հայոց թագավոր Արտաքսիասի (Արտաշես I-ի) արքունիքում և նրա համար հիմնել է Արտաշատ (Արտաքսատա) քաղաքը Արաքսի վրա։ Այս ավանդության արժանահավատության նկատմամբ եղած կասկածները[176] ճիշտ չեն թվում[177]։ Ոչ մի ֆիզիկական անկարելիություն չկար այն բանի համար, որ Հաննիբալը Հայաստան մեկներ, օրինակ՝ այն պահին, երբ Մագնեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո բանակցություններ էին տեղի ունենում հռոմեական պատվիրակների ու Անտիոքոսի միջև (այդպես է Պլուտարքոսի մոտ)։ Սակայն Հայաստանում Հաննիբալը երկար չմնաց։ Մենք չգիտենք, թե ինչու նա հեռացավ այդ երկրից։ Թերևս նա չի՞ ցանկացել մահվան սպասել մի ինչ-որ հեռավոր ու ավելի խուլ վայրում, այն ժամանակվա աշխարհի ծայրամասում։

Ապամեյան հաշտության պայմանագրի կնքումից փոքր-ինչ հետո Հաննիբալը հայտնվեց Գորտինայում (Կրետե կղզի)։ Երկյուղ կրելով իր հարստությունների համար (կղզում լուրեր էին տարածվել, թե Հաննիբալն իր հետ հսկայական արժեքներ է բերել), նա այնպես էր ձևացնում, որ իբրև թե դրանք ի պահ է տվել Դիանայի տաճարում։ Բազմաթիվ եր-

Կունկանի մեծ սափորների մեջ պղինձ լցնելով, նա վերևից դրանք ծածկել է ոսկով ու արծաթով, իսկ այնուհետև սափորները տեղավորել է տաճարում։ Հաննիբալն իր դրամները թաքցրել էր պղնձե անդրիների մեջ, որոնք պահում էր այն տան բակում, ուր ինքն էր բնակվում (Կորն. Նեպ., Հաննիբ., 9, Հուստինոս, 32, 3—4)։

Կրետեում Հաննիբալը երկար չմնաց։ Այնտեղից նա մեկնեց Բիթանիա (Կորնելիոս Նեպոսի մոտ սխալմամբ՝ Պոնտոս), այնտեղի թագավոր Պրուսիասի մոտ։ Վերջինս հենց այդ ժամանակ պատերազմ էր մղում (խիստ անհաջող) Պերգամոսի թագավոր Եվմենեսի դեմ, որը Հռոմի հույժ եռանդուն դաշնակիցն էր. հռոմեական հրամանատարությունը Մագնեսիայի մոտ տարած իր հաղթանակի համար նշանակալի չափով նրան էր պարտական։ Հաննիբալը մասնակցություն ունեցավ իր համար այդ վերջին պատերազմին և նույնիսկ փորձեց, թեկուզև առանց հաջողության, կազմակերպել Պերգամոսի թագավորի սպանությունը։ Ծովային մարտում նրան հաջողվեց փախուստի մատնել պերգամոսական նավերը, նրանց տախտակամածներին նետելով օձեր պարունակող ամաններ (Կորն. Նեպ., Հաննիբ., 10, Հուստինոս, 32, 4, 6—7)։ Ավելի վաղ, թեկուզ և ապարդյունորեն, նա Անտիոքոսին էր առաջարկել օգտագործելու այդ ճարպիկ հնարքը (Փրոնտինոս, 4, 7, 10)։

Այդ միջոցին Պրուսիասի մոտ ժամանեց (183 թ.) հռոմեական դեսպան Տիտոս Քվինկտիոս Փլամինիոսը։ Ըստ Կորնելիոս Նեպոսի (Հաննիբ., 12, 1), բանակցություններն սկզբնապես ընթանում էին Հռոմում, Փլամինիոսի և Պրուսիասի դեսպանների միջև, և միայն դրանից հետո Փլամինիոսն ուղարկվեց Բիթանիա։ Հետագայում տեղի ունեցածի մասին կան հետևյալ պատմությունները։ Համաձայն Կորնելիոս Նեպոսի պատումի (Հաննիբ., 12, 2—3), Փլամինիոսը պահանջել է Հաննիբալին հանձնել հռոմայեցիներին. Պրուսիասը հայտարարել է, որ ինքը չի կարող խախտել հյուրասիրության օրենքները, բայց հռոմայեցիներն իրենք, առանց դժվարության, կարող են բռնել Հաննիբալին։ Ըստ Լիվիոսի (39, 51), կա՛մ Փլամինիոսը կշտամբում է Պրուսիասին այն բանում, որ նա իր մոտ էր պահում հռոմայեցիների խիստ վտանգավոր թշնամուն, կա՛մ ինքը՝ Պրուսիասը մտադրվում է սիրաշահել Հռոմին. համենայն դեպս, Հաննիբալը հանկարծ տեսավ, որ իր տունը բոլոր կողմերից շրջապատված է բիթանիական զինվորներով։ Նրանց դիտավորությունների նկատմամբ կասկած չէր կարող լինել։ Հաննիբալը դեռ փորձում էր փրկվել։ Նրա բնակարանը բոլոր կողմերից ընդամենը յոթ (այդ թվում նաև գաղտնի) ելք ուներ։ Հաննիբալը մի մանկահասակ տղայի ուղարկեց տեսնելու, թե արդյոք կարելի՞ է փախչել տնից, սակայն անմիջապես

ան տեղեկություն ստացավ. բոլոր ելքերի մոտ կանգնած էին թագավորի զինվորները։ Զսպասելով իր տուն նրանց խուժելուն, Հաննիբալը թույն ընդունեց (Պլուտ., Փլամ., 20, Կորն. Նեպ., Հաննիբ., 12, 3—5, Օրոսիոս, 4, 20, 29)։ Համաձայն Ապպիանոսի պատումի (Ասոր., 11), Հաննիբալին թունավորել է Բիթանիայի թագավորը։ Մահվանից առաջ, նա, ինչպես հաղորդում են, ասել է. «Հռոմայեցիներին ազատենք նրանց վաղեմի հոգսից, քանի որ նրանք արդեն այլևս չեն կարող սպասել ծերունու մահվանը»։

Հաննիբալին թաղեցին Լիբիսայում (Նշան., 42, 6, Պլուտ., Փլամ., 20, Ապպ., Ասոր., 11, Զոնարաս, 9, 21), Բոսպորի եվրոպական ափին, քարե սարկոֆագի մեջ, որի վրա փորագրեցին «Հաննիբալը թաղված է այստեղ» արձանագրությունը։

Գլուխ ութերորդ

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հաննիբալի դեգերումների վերջին տարիները և նրա ողբերգական վախճանը զինվորի այդ բուռն, արկածներով, փայլուն հաղթանակներով և զառն պարտություններով լեցուն կյանքի բնական ավարտն էին։ Փոթորկվելով Հռոմը գրավելու և, եթե հնարավոր է, ոչնչացնելու իր միակ ցանկությամբ, Հաննիբալն այդ պայքարում հետևողականորեն խաղաքարտի վրա էր դրել նաև իր հայրենիքի՝ Կարթագենի, ապագան և, արդեն բոլորովին միայնակ մնալով, նաև՝ սեփական կյանքը։ Դրանով նա հաստատեց իր ռազմավարական ու քաղաքական բոլոր սխալների համար։ Մոտենում էր նաև Կարթագենի դատաստանի ժամանակը. վերջինիս իր մեծագույն զորավարի մահվանից հետո ընդամենը միայն 37 տարվա կյանք էր վիճակված։

Վերևում մենք խոսեցինք այն մասին, որ Պունիկյան II պատերազմում կրած պարտությունն ընդհանուր առմամբ, չանդրադարձավ Կարթագենի տնտեսական դրության վրա։ Նա գործնականում առևտրական կապեր էր պահպանում Միջերկրածովքի և նույնիսկ նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր երկրների հետ. կարթագենական նավահանգիստներում խնամվում էին թե՛ իրենց և թե՛ օտարերկրյա առևտրանավերը, շուկան լեփ-լեցուն էր տառացիորեն ամենուստ հոսող ապրանքներով. կարթագենական վարպետների արտադրած ապրանքներն իրենց հաստատուն տեղն էին գրավում թե՛ հարուստ տներում, թե՛ աղքատների խրճիթներում։ Քաղաքում՝ թե՛ պետական դանձարանում, թե՛ վաճառականական կրպակներում և թե՛ արհեստավորական գործանոցներում,

հակայական դրամ էր կուտակվում։ Պատահական չէր, որ երբ արդեն սկսվեց Պունիկյան III պատերազմը, կարթագենցիները կկարողացան, ինչպես կտեսնենք առաջիկայում, շատ կարճ ժամանակում վերստեղծել իրենց նավատորմը և դիմել բանակը։ Քաղաքի բարեկեցության և ծաղկման ցուցանիշ էր նաև բնակչության թիվը. Ստրաբոնի տվյալներով (17, 3, 15) II դ. 50-ական թվականների վերջին Կարթագենում ապրում էր 700 հազար մարդ։ Ընչատերերի ճոխ, կանաչի մեջ սուզված շքեղ ամառանոցները, աղքատների և «միջակ ընչավետների» թաղամասերը, իրենց հակայական, բազմաբնակարանանոց, մի քանի (մինչև վեց) հարկանի տներով և նեղ ու կիսախավար փոքր փողոցներով, աղմկալից շուկան և այդ բոլորի վրա բարձրացող Բիրսա բլուրը իր միջնաբերդով և հինավուրց տաճարներով. այդպիսին էր Կարթագենը ներկայանում եկվոր առևտրականների ու նավագնացների առջև։

Կարթագենի տնտեսական ծաղկումը, Միջերկրականի առափնյա երկրների հետ ունեցած առևտրում նրա իշխող դիրքը Հռոմում լուրջ անհանգստություն էին հարուցում, և, իհարկե, բանը միայն նրանում չէր, որ Կարթագենը համաշխարհային շուկայում շարունակում էր մնալ որպես ախոյան ու մրցակից, թեև այդ գործոնը նույնպես խաղում էր իր դերը։ II դ. առաջին կեսին հենց իտալիկները առևտրական սերտ կապեր էին պահպանում կարթագենցիների հետ, շատերը բնակություն հաստատեցին Կարթագենում։

Հռոմում շատ լավ էին հիշում, թե ինչպես կարթագենական կառավարությունը (Բարկայանները), դիմանալով Պունիկյան I պատերազմին և վարձկան զինվորների ու լիբիական գյուղացիության խիստ ծանր ապստամբությանը, կարճ ժամանակամիջոցում վերականգնեց իր ռազմական հզորությունը և կազմակերպեց՝ սկզբում Իսպանիայի նվաճումը, իսկ այնուհետև՝ Իտալիա կատարված ներխուժումը, որը Հռոմը հասցրեց կործանման եզրին։ Այժմ, Պունիկյան II պատերազմից հետո, նոր մագատանավերի կառուցումը, սրեր, նիզակների, տեգերի ու նետերի համար վերջավորություններ կռելը, սաղավարտներ ու գրահներ պատրաստելն անշուշտ բնավ ավելի բարդ չէր, քան այն ժամանակ։ Հռոմում, իհարկե, լավ գիտեին կարթագենական պլերսի մարտական տրամադրությունների մասին. վերջինիս՝ Հաննիբալի փախուստից հետո պակասում էր միայն առաջնորդ։ Սակայն չէ՞ որ այդպիսի առաջնորդ ուզած պահին կարող էր հայտնվել։ Իհարկե, կարելի էր այս կամ այն կերպ Կարթագենը մտցնել Հռոմեական տերության կազմի մեջ և դրանով վերացնել վտանգը։ Ինչպես կտեսնենք առաջիկայում, հռոմեական կառավարության քաղաքականության մեջ միևնույն ժամանակ հետամտվում էր Կարթագենի հա-

մար արտաքուստ նպաստավոր մի գիծ. Հռոմը, թվում էր թե, հանդես է գալիս նրա շահերի պաշտպանի դերով, զորավիգելով նրան ընդդեմ նումիդիական թագավորի ոտնձգությունների։ Սակայն այս դեպքում նույնպես Կարթագենը, որի բարօրությունն ու բուն իսկ գոյությունը ուղղակի կախման մեջ էին գտնվում սենատի քմահաճույքից, ամուր կապված մնաց հռոմեական հաղթակառքին։ Հռոմում գտնում էին, որ այդպիսի կախվածությունը վերացնում էր Կարթագենի կողմից փոխադարձ վրիժահատուցման հնարավորությունը։ Բայց կար նաև այլ տեսակետ։ Քանի դեռ Կարթագենը գոյատևում է, քանի դեռ նրա պարիսպները բարձրանում են աֆրիկյան անծայրածիր հարթավայրի վրա, իսկ նրա հարստությունները աշխարհի բոլոր կողմերից դեպի իրենց են ձգում մարդկանց, Հռոմը չի կարող իրեն զգալ անվտանգության մեջ։ Այս նկատառումները վերջի-վերջո որոշեցին հռոմեական կառավարության քաղաքականությունը Կարթագենի և, հետևաբար, նաև նրա ավելի քան կես միլիոնանոց բնակչության նկատմամբ[178]։

Մենք հիշեցինք այն մասին, որ ավարտելով Պունիկյան II պատերազմը, հռոմեական իշխանություններն ամեն ինչ արեցին, որպեսզի նախ Կարթագենին դնեն Մասանասայի հետ անվերջ ընդհարումների իրավիճակի մեջ. վերջինիս տերիտորիալ հավակնությունները կարթագենցիները պետք է բավարարեին հենց թագավորի կողմից սահմանված չափերով։ Եվ երկրորդ, Կարթագենին զրկեն առանց հռոմեական ժողովրդի համաձայնության պատերազմելու արգելքին դիմակայելու հնարավորությունից, և երրորդ, հանդես գալով միջնորդի դերում, գործը հասցնեն մինչև Կարթագենի աստիճանական նվաճումը կամ ոչնչացումը։ Սենատը կամենում էր իր նպատակին հասնել Մասանասայի ձեռքերով. նումիդիական թագավորը մշտապես առիթ պետք է ընծայեր հռոմեական միջամտության համար, կա՛մ վերջիվերջո խեղդեր Կարթագենին, կա՛մ ստեղծեր պայմաններ, որոնց բերումով Կարթագենը բնական ճանապարհով կընկներ Հռոմի տիրապետության տակ, կա՛մ առանց Հռոմի հավանության, կարթագենցիներին զրդեր պատերազմի և, հետևաբար, հաշտության պայմանագրի խախտմանը, որը նոր պատերազմի առիթ կտար հռոմայեցիներին։ Իր կողմից Մասանասան հաճույքով էր հետևում իր հռոմեական բարեկամների կանխորոշումներին։ Նրան նույնիսկ առանձնապես պետք չէր զրդել։ Նա խորապես շահագրգռված էր թե՛ իր թագավորության ընդարձակման և թե՛ այն բանում, որպեսզի ծովային առևտրաուղիների վրա գրավեր Կարթագենի տեղը։ Զարմանալի ցուցանշական էր այն ընծայատրումը, որ նա մատուցեց միջերկրածովյան առևտրի խոշորագույն կենտրոններից մեկում՝ Դելոսում, գտնվող հու-

նական տաճարներին[179]։ Բարբարոս-արքան փորձում էր հաղորդակցվել հելլենական աշխարհին։ Իսկ ինչո՞ւ չպետք է աներ։ Չէ՞ որ այդ կարող էր անել Հաննիբալը։ Չէ՞ որ այդ ուղու վրա էին կանգնել նաև հռոմայեցիները։ Նույնիսկ փյունիկացիներն ու հրեաները, ոչ առանց հաջողության, հավակնում էին հույների հետ ազգակցության։ Ա՛յ, թե ինչպիսիք են այդ հելլենները։

I

Հաննիբալի փախուստը, դրանից առավել, Արիստոնի՝ թեև անհաջող, այնուամենայնիվ, հռոմեական տիրապետության համար հույժ վտանգավոր առաքելությունը սենատի աչքին չափազանց վարկաբեկեց կարթագենական կառավարությանը։ Արիստոնի հետ բացահայտորեն բանակցություններ էին տարվում, իսկ այն բանից հետո, երբ գործը բացվեց, Հաննիբալի գործակալը ոչ միայն չձերբակալվեց, այլև նրան թույլ տվեցին փախչել։ Այս հանգամանքներն ի նկատի ունենալով, Մասանասան կարող էր հաստատապես համոզված լինել, որ հռոմայեցիները չէին թողնի, որ իրեն վնաս հասներ, այլ, ընդհակառակը, նրա և Կարթագենի միջև եղած բոլոր տերիտորիալ վեճերն ու ընդհարումները կլուծեին հօգուտ Նումիդիայի։ Արիստոնի հետ կապված ոչ այնքան պարզ և վերին աստիճանի կասկածելի պատմությունը, ինչպես Մասանասան էր կարծում, ստեղծել էր առավել նպաստավոր իրավիճակ, և նա ներխուժեց Կարթագենին պատկանող ծովամերձ երկրամասը՝ Էմպորիում, ավերածության մատնեց այն, իսկ մի քանի քաղաքների, այդ թվում Լեպտիսին, հարկադրեց տուրք վճարել Նումիդիային։ Մասանասան փութաց իր գործողությունների համար ստեղծել նաև դիվանագիտական քողարկում։ Նա կասկածներ հարուցեց այն բանում, թե իսկապես ում է պատկանում այդ երկրամասը, Կարթագենի՞ն, թե՞ Նումիդիային։ Այս բոլոր իրադարձությունները տեղի ունեցան 193 թ. (Լիվիոս, 34, 62, Ապպ., Լիբ., 67)[180]։

Հնարավորություն չունենալով հարվածին հարվածով պատասխանելու, կարթագենական կառավարությունը իր դեսպանությանը, որը սենատում Արիստոնի առնչությամբ պետք է բացատրություն տար և արդարանար, հանձնարարեց պաշտպանել Կարթագենի իրավունքներն այն երկրամասի նկատմամբ, որը անակնկալ կերպով վիճելի էր դարձել և փաստորեն դուրս էր բերվել Կարթագենի իրավասությունից։ Նույն այդ ժամանակ Հռոմ ժամանեց նաև Մասանասայի դիվանագիտական հանձնախումբը նրա իրավունքները պաշտպանելու և նրա կատարած տարածքային ձեռքբերումները հիմնավորելու համար։

Այդ բանակցություններում կարթագենցիների դրությունը չափազանց ծանր էր. նրանք իրենց առջև ունեին բացահայտորեն աշառու և նույնիսկ թշնամի դատավորներ, որոնք բացի այդ, մտահոգված էին Հաննիբալի մասնակցությամբ նոր պատերազմի հեռանկարով։ Այդուհանդերձ, նրանք փորձեցին ոգորել, ամենից առաջ վկայակոչելով այն, որ վիճելի երկրամասը գտնվում էր հաշտության պայմանագիրը կնքելիս Սկիպիոնի կողմից որոշված սահմանների ներսում, և ուրվագծելով այն տարածքը, որը իրավականորեն պատկանում էր կարթագենցիներին։ Բացի այդ, ասացին նրանք, ինքը՝ Մասանասան նույնպես այդ երկիրը ճանաչում էր որպես կարթագենական. հետապնդելով ոմն Աֆտիրոսի, որը փախել էր իր թագավորությունից և նումիդիացիներից կազմված մի ջոկատով դեզերում էր Կիրենեի շուրջը, թագավորը կարթագենցիներից թույլտվություն խնդրեց անցնելու նույն այդ (որպես անշուշտ իրավունքով Կարթագենին պատկանող) երկրով։ Նումիդիացիները գրեթե չպատասխանեցին կարթագենցիներին. Սկիպիոնի կողմից սահմանները հաստատելու շուրջը եղած խոսակցությունները նրանք իսկույնեթ մերժեցին, համարելով անտույլ, իսկ Մասանասայի՝ քննարկման համար անպատեհ արարքների մասին զերազասեցին մունջ կտրել։ Դրա փոխարեն նրանք երկար խոսեցին իրավունքի մասին. Կարթագենցիներն ինչպիսի՞ իրավունքներ ունեն,— հարց տվեցին նրանք,— աֆրիկական հողերի նկատմամբ, և ինչի՞ վրա է այն հիմնված։ Նրանք եկվորներ էին և մի ինչ-որ ժամանակ (այստեղ նումիդիական դեսպանները հիշեցրին Կարթագենի հիմնադրման վերաբերյալ առասպելը (Հուստինոս, 18, 5, 9) ողորմածությամբ քաղաքի կառուցման և ամրացման համար այնքան հող ստացան, որը կարելի էր շրջապատել մի ցուլի կտրատված կաշվից պատրաստված գոտիով։ Նրանց իսկական բնակատեղը Բիրսան է. այն բոլորն ինչ նրա սահմաններից դուրս է, նրանք ձեռք են բերել ուժով ու անարդարությամբ։ Նույնիսկ այն երկրամասի առթիվ, որի շուրջը վեճ էր ծագել, կարթագենցիները ոչ միայն չեն կարող ապացուցել, որ իրենք մշտապես տիրել են այն, այլև, որ այն երկարատև ժամանակ պատկանել է իրենց։ Այն միշտ տիրել են նրանք, ովքեր ավելի ուժեղ են եղել՝ մերթ կարթագենցիները, երբեմն էլ նումիդիացիները։ Իսկ հռոմայեցիները թող բոլորը թողնեն այնպես, ինչպես եղել էր ավելի վաղ, մինչև այն պահը, երբ կարթագենցիները դարձան նրանց թշնամիները, իսկ նումիդիական թագավորը՝ նրանց բարեկամը, և միջամուխ չլինեն, այդ երկիրը պակաս ղորեղին ի տիրություն տալու համար (Լիվիոս, 34, 62)։

Սակայն մեկի բողոքից և մյուսների՝ ստապատիր (նումիդիացիներն, իհարկե, քաջ գիտեին, որ էմպորիումը մի քանի հարյուր տարի

նշել է Կարթագենի իշխանության տակ) բոլոր այդ եղությունները ընդհանուր առմամբ ոչ մի նշանակություն չունեին։ Սենատը երկու կողմերին պատասխանեց, որ Աֆրիկա կուղարկվի պատվիրակություն, որը տեղում կլուծի վեճը։ Հանձնաժողովի կազմում նշանակեցին Սկիպիոնին, Գայոս Կորնելիոս Կեթեղոսին և Մարկոս Մինուկիոս Ռուֆոսին, որոնք սակայն ամեն ինչ թողեցին կասկածի տակ, չընդունելով որոշակի վճիռ (Լիվիոս, 34, 62, հմմտ. Զոնարասի մոտ, 9, 18)։ Լիվիոսը չգիտե, թե արդյոք դա արվել է սենատի հրամանո՞վ, թե՞ պատվիրակները գործել են սեփական նախաձեռնությամբ. այնուամենայնիվ նրա համար անկասկած է, որ քաղաքական տեսակետից ավելի նպատակահարմար էին համարում վեճը պահպանելը, այլապես, իհարկե, Սկիպիոնը գլխի մի շարժումով կարող էր վեճը լուծել։ Ապպիանոսը (Լիբ., 67) գրում է, որ հռոմեական ներկայացուցիչները պետք է աջակցեին Մասանասային։ Այս մեկնակետերի միջև հակասություններ չկան. հաղորդ Մասանասայի նրա գրված երկրամասն ապահովելու համար լիովին բավական էր չեզոքություն պահպանելը, վարանելը և տարակուսաբար ձեռքերը լայն տարածելը։

Կարթագենա-նումիդիական վեճում հռոմեական կառավարության բռնած դիրքը կարթագենցիներին ցույց տվեց, որ նրանց գլխավերևում նոր հողմ է կուտակվում. անհրաժեշտ էր փութապես վճռել, թե այնուհետև ինչպիսի ճանապարհով պետք էր ընթանալ պահպանելու համար թեկուզ երևութական անկախությունը և նույնիսկ բուն գոյությունը։ Հատկապես սրանով է բացատրվում և ոչ թե տեսական բարդավաճմամբ, ինչպես միամտորեն կարծում է Ապպիանոսը (Լիբ., 68), Կարթագենում ներքաղաքական պայքարի հետագա սրումը։ Իրականում նախկին անլուծելի հակասություններին ավելացավ նաև մեկ ուրիշը. պունիկյան հասարակության կյանքում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեց մի գործոն՝ նումիդիան, որին առաջներում կարթագենական քաղաքագետներն ընդհանրապես հաշվի չէին առնում։ Հռոմեական քաղաքականության կողմնակիցների հետ, որոնց նախկինի պես գլխավորում էր այդ ժամանակ հավանաբար արդեն խորին ծերության հասած Հաննոնը, միաժամանակ պունիկյան արիստոկրատիայի մեջ առանձնացան Մասանասայի կողմնակիցները։ Նրանց գլխավորում էր Հաննիբալ Սարյակը (նույն տեղը)։ Մենք դժվարանում ենք որոշել, թե իսկապես նրանք ինչի վրա կարող էին հույս դնել. չէ որ թե՛ մեկը և թե՛ մյուսները հարկ էր, որ հասկանային, թե այս անգամ խոսքը կա՛մ Հռոմին, կա՛մ Նումիդիային լիով և ենթարկվելու մասին է։ Թերևս նրանք հո՞ւսա էին ակնկալում, որ սենատի կամ թագավորի իշխանության տակ կպահպանեն իրենց քաղաքական և տնտեսական դիրքերը և հատկապես այդ

պատճառով բանը հասցնում էին անձնատրության։ Առաջվա պես իր դիրքերը պահպանեց դեմոկրատական կուսակցությունը՝ Բարկյանների նախկին կողմնակիցները. Հաննիբալի տարագրվելուց ու մահվանից հետո նրանց պարագլուխներ դարձան Համիլկար Սամնիացին և Կարտալոնը (նույն տեղում)։

Հենց վերջիններս էլ, սպասելով բարեդեպ պահի, նախաձեռնությունը վերցրեցին իրենց ձեռքը։ Նրանց համար պահանջով կարթագենցիների օժանդակ զորաջոկատների հրամանատարը («բոեոտարքոսը», ինչպես նրան կոչում է Ապպիանոսը), նույնպես Կարտալոն անունով, հարձակվեց Մասանասայի զինվորների վրա, որոնք բնակվում էին վիճարկվող հողերում, վրանների մեջ։ Մի քանիսին նա սպանեց, հափշտակեց ռազմասավար. ընդհարումները շարունակվեցին։ Դրա հետևանքով ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որը հնարավոր դարձրեց հռոմեական միջամտությունը (նույն տեղը)։

Այս անգամ (182 թ.) վեճի առարկա դարձան այն երկրամասերը, որոնք ավելի վաղ պատկանում էին Կարթագենին, իսկ հետագայում գրավեցին Մասանասայի հոր՝ Գալայի կողմից։ Գալայից դրանք խլեց Սիֆաքսը և այնուհետև հանձնեց իր անիրոջը՝ Գիսկոնի որդի Հասդրուբային։ Հռոմեական մի պատվիրակություն ևս հայտնվեց Աֆրիկայում։ Կարթագենցիները պնդում էին, որ այդ տարածքը հնուց ի վեր պատկանել է իրենց և ժամանակին վերադարձվել է Սիֆաքսի կողմից. Մասանասան համառում էր այն բանում, որ ինքը վերցներ այն տիրույթները, որոնք բոլորովին վերջերս իր հոր իրավասության տակ էին։ Սակայն այս անգամ նույնպես պատվիրակները որոշակի վճիռ չընդունեցին և գործը հանձնեցին սենատի քննարկմանը (Լիվիոս, 40, 17)։ Ապպիանոսը (Լիբ., 68) հետաքրքիր մի մանրուք է պահպանել. պատվիրակները ոչինչ չասացին, որպեսզի քննության ընթացքում Մասանասան վնաս չկրեր, բայց կանգնելով վիճաբանողների միջև, կարկառեցին ձեռքերը, կարծես թե նրանց բաժանում էին միմյանցից։

Այդ քայլը պետք է ցույց տար, որ հռոմայեցիները կողմերի հաշտեցում են պահանջում։ Բացառված չէ, որ հենց այդ իրադարձություններին է վերաբերում Լիվիոսի ցուցումը (40, 34, 11), որը թվագրվում է արդեն 181 թվականով. հռոմեական կառավարությունը Կարթագենին վերադարձրեց 100 պատանդների և իր ու Մասանասայի անունից երդվեցրեց խաղաղություն պահպանել։ Այստեղ անհավանական ոչինչ չկա. դժվար չէ ենթադրել, որ մի ինչ-որ պահ Հռոմում հաղթանակեց Կարթագենը պահպանելու միտումը։ Առաջիկայում մենք կտեսնենք, որ նման ենթադրության համար բավականին լուրջ հիմքեր կան։

Սակայն այդպիսի գործողություններով Կարթագենի և Մասանասայի միջև մղվող անհավասար պայքարը լոկ մի առ ժամանակ կարելի էր կասեցնել։ Լիվիոսի իսկ լռությունը, որը հույժ մանրամասնելով, հանգամանորեն քննում է Աֆրիկայում հռոմեական դիվանագիտության բոլոր քայլերը՝ մի կողմի բողոքների և մյուսի հավակնությունների քննության առնչությամբ, հաստատ վկայությունն է այն բանի, որ վիճող պետությունների միջև եղած հարաբերություններում անդորր էր տիրում։ Վեճերի հիմնական նախադրյալները չէին վերացվել, և 172 թ. մենք վերստին Հռոմում հանդիպում ենք կարթագենական պատվիրակների ու նումիդիական իրավազոր ներկայացուցչի՝ արքայազն Գուլուսային, սենատը դարձյալ է ունկնդրում կարթագենցիների բողոքներն ու նումիդիացիների բացատրությունները և ընդունում է որոշում, որը կարող էր երևութապես հաշտեցնող լինել (Լիվիոս, 42, 23, 24)։

Պունիկացիներն ասացին, որ բացի այն հողերից, որոնց պատկանելիության շուրջը մինչ այդ քննություն էր գնում, վերջին երկու տարիների ընթացքում (այսինքն՝ 174—173 թթ.) Մասանասան բռնատիրել էր 70 քաղաք ու բերդ։ Ինչպես երևում է, սրան ճշտիվ համապատասխանում է Մեծ Հարթավայրի և Տուսկա (Տուգա) մարզի համար (նրա 50 քաղաքներով հանդերձ) Մասանասայի հարուցած գժտության մասին Ապպիանոսի պատմածը (Լիբ., 68)։ Նրա համար, շարունակեցին կարթագենցիները, որը ոչնչի վրա ուշադրություն չի դարձնում, դա դյուրին է, իսկ կարթագենցիները, կաշկանդված լինելով պայմանագրով, լռում են. չէ՞ որ նրանց թույլ չի տրվում պատերազմել իրենց սահմաններից դուրս։ Իհարկե, պունիկացիները գիտեն, որ, դուրս վանելով նումիդիացիներին, իրենք կվերցնեն իրենց երկրում. բայց և այնպես, իրենք վախենում են նույնիսկ դա անելուց, քանի որ իրենց կտրուկ կերպով արգելված է հռոմեական ժողովրդի դաշնակիցների դեմ պատերազմելը։ Կարթագենցիներն արդեն ի վիճակի չեն տանել նրա (այսինքն՝ Մասանասայի) ամբարտավանությունը, դաժանությունն ու ընչամոլությունը։ Սենատը երեք հնարավոր որոշումներից թող ընդունի մեկնումեկը. կա՛մ վերջապես վճիռ ներկայացնի, թե ում ինչ է պատկանում, կա՛մ կարթագենցիներին թույլ տա պաշտպանվելու, կա՛մ, եթե հռոմայեցիների համար բարեկամությունը ճշմարտությունից ավելի կարևոր է, ճշտիվ որոշի, թե ուրիշի բարիքներից ինչն է կամենում պարգևել Մասանասային։ Հռոմայեցիներն, իհարկե, նրան, այնքան էլ շատ բան չեն տա և, ամենից գլխավորը, ճշգրտորեն կիմանան, թե ինչ են տվել, մինչդեռ նա ինքը սահմանները կորոշի ոչ այլ կերպ, քան ըստ իր քմահաճության։ Իսկ եթե կարթագենցիները ոչնչի չհասնեն, եթե Սկիպիոնի հետ հաշտության պայմանագրի

կնքումից հետո նրանք ինչ-որ բանում մեղանչել են, ապա թող իրենց պատժեն հենց հռոմայեցիները։ Հռոմի իշխանության տակ ապահով ստրկությունն իրենք գերադասում են այն ազատությունից, որն իրենց անպաշտպան է դարձնում Մասանասայի բռնությունների առջև։ Անմիջապես ոչնչանալն իրենց համար ավելի լավ է, քան անագորույն դահճի քմահաճության տակ ողորմելի կյանք վարելը։

Գուլուսան իր պատասխան ճառում որոշակի ոչինչ չասաց։ Իրեն համար դժվար է, ասաց նա, բացատրվել այն բանի առիթով, ինչի մասին հայրն իրեն հանձնարարություններ չի տվել. իր հոր համար նույնպես հեշտ չէր իրեն որոշակի հանձնարարություններ տալը, քանի որ նա չգիտեր, թե էսկուլապոսի տաճարում (ի նկատի ունի Կարթագենում էշմուն աստծու հնագույն տաճարներից մեկը) երկարատև ու գաղտնի խորհրդակցություններից հետո կարթագենցիներն ինչ են տանելու Հռոմ։ Հայրն իրեն ուղարկել է խնդրելու սենատին՝ չհավատալ ընդհանուր թշնամիների (որոնք Մասանասային ատում են միայն հռոմեական ժողովրդի նկատմամբ նրա անփոփոխ հավատարմության համար) զրպարտանքներին։ Այս խոսքերի պարունակած կեղծիքը ակնհայտ է. Մասանասան հարկ էր, որ ըստ գործի հանգամանքների լավ գիտենար, թե ինչումն էր կայանում իր և Կարթագենի միջև հարուցված վեճի էությունը։ Իր որդուն Հռոմ ուղարկելով, նա ակամայից ցույց տվեց, թե իր համար որքան կարևոր է համարում առաջիկա քննությունը. նա միայն որդուն կարող էր վստահել բավականին բարդ դիվանագիտական իրադրության մեջ քաղաքական պատասխանատու վճիռներ ընդունելը։

Սենատը Գուլուսային կարգադրեց անհապաղ մեկնել Նումիդիա և այնտեղ հաղորդել հորը, որպեսզի սա, որքան հնարավոր էր, շուտափույթ իր ներկայացուցիչներին ուղարկեր կարթագենցիների մեղադրանքներին պատասխանելու համար. միաժամանակ Մասանասան կարթագենցիներին պետք է հայտներ, որ նրանք նույնպես ներկայանային Հռոմ, այսինքն՝ հավանարար ուղարկեին նոր պատվիրակություն գործը կրկին քննելու համար։ Այս ամենը չի համապատասխանում Ապպիանոսի պատմածին (Լիբ., 68), համաձայն որի, հռոմայեցիները խոստացան վեճը լուծելու համար նոր հանձնաժողով ուղարկել Աֆրիկա. սակայն հիմնականի հետ Ապպիանոսի պատմածը համընկնում է. հռոմայեցիները գործը երկարաձգեցին, մինչև որ պարզ դարձավ, որ կարթագենցիներն այն տանուլ են տվել։ Սենատն այս անգամ ևս խուսափեց որոշակի պատասխան տալուց,, սակայն իր պահանջին կցեց մի լրացում, որը պետք է ցուցադրեր նրա բարի կամքը. բոլորն, ինչ կարելի էր անել այն բանի համար, որպեսզի հարգանք մատուցվեր Մասանասային, արված էր և

պետք է արվեր, սակայն իրավունքը չպետք է զոհաբերվեր բարեկամությանը։ Սենատը ցանկանում է, որպեսզի յուրաքանչյուր ոք տիրի այն երկրին, որը պատկանում է իրեն. նա չի ցանկանում նոր սահմաններ հաստատել, այլ մտադիր է պահպանել հինը. պարտված կարթագենցիներին իրենց քաղաքն ու տիրույթները թողնվել են ոչ այն բանի համար, որպեսզի խաղաղության ժամանակ նրանցից բռնությամբ խլեն այն, ինչ չի վերցվել պատերազմի իրավունքով։ Այս սկզբունքների հոչակման մեջ դժվար չէ տեսնել Հռոմի աֆրիկական քաղաքականության մեջ ևս մեկ դրսևորումն այն միտումի, որի մասին խոսվեց վերևում. հռոմեական կառավարությունը 80—70-ական թթ. դեռևս չէր ցանկանում Կարթագենի վերջնական կործանումը. վերջինս, այն ժամանակ առավել աղդեցիկ սենատորների կարծիքով իրենից վտանգ չէր ներկայացնում Հռոմի համար, այլև կարող էր ծառայել որպես պատշաճ հակակշիռ ընդդեմ Մասանասայի. փոխադարձ պայքարը երկու հակառակորդներին հուսալիորեն կապում էր հռոմեական մարտակառքին։ Նմանօրինակ դիրքավորմամբ Հռոմը զգեստավորվում էր իրավարարի պարեգոտով. դա նրա գործողություններին առավել նպաստավոր իմաստ էր հաղորդում։ Նրան այդ կարևոր էր հատկապես այժմ, երբ վրա էր հասնում Մակեդոնիայի դեմ հերթական՝ թվով արդեն երրորդ պատերազմը։ Բայց և այնպես, Հռոմը չէր կամենում նեղացնել և իրենից հեռու վանել Մասանասային, և հենց այդ պատճառով որոշակի փոխադարձ հավակնությունների վերաբերյալ հարցը դարձյալ բաց մնաց, մինչև նոր քննությունը, որն ի վերջո հայտնապես ավարտվեց հօգուտ նումիդիական արքայի։ Գուլուսան և սենատը հրաշալիորեն նվագակցեցին միմյանց, այնպես որ Ապպիանոսը չէր սխալվում հռոմեական կառավարող շրջանների գործողություններին իր տված բնութագրման մեջ, թեև նա դրանց մոտենում էր փոքր-ինչ միակողմանիորեն։

171 թ. Հռոմում վերստին հայտնվեցին կարթագենցիներն ու Գուլուսան (Լիվիոս, 43, 3)։ Որքանով կարելի է դատել Լիվիոսի շարադրանքից, այս անգամ խոսքը գնում էր ո՛չ միայն կարթագենա-նումիդիական վեճերի, այլև այն բանի շուրջը, որ երկու կողմերն իրենց իրավարարին օժանդակ նավատորմ տրամադրեին Մակեդոնիայի դեմ պատերազմելու համար։ Գուլուսան հռոմայեցիներին նախազգուշացրեց խիստ շատ չվրատահել նենգադրուժ պունիկացիներին. նրանք դյուրությամբ նավատորմ կկառուցեն, իբրև թե հռոմայեցիների համար և ընդդեմ մակեդոնացիների, սակայն երբ նրանք այն հանդերձեն, իրենց իրավունքն է վճռել, թե ում պետք է համարել թշնամի և ում՝ դաշնակից։ Այս դիպվածի մասին Լիվիոսի պատմածի շարունակությունը կորել է, այնպես որ հայտնի չէ.

թե կարթագենցիներն ինչ ասացին և ինչ կատարեցին կամ ինչ արդյունք ունեցան Գուլուսայի դիվանագիտական բոլոր քայլերը։ Բայց մենք գիտենք (Լիվիոս, 43, 6), որ 170 թ. կարթագենցիները հռոմայեցիներին առաջարկեցին մեկ միլիոն մոդիոս ցորեն և կես միլիոն մոդիոս գարի. միաժամանակ կարթագենական դեսպանները խոստացին հռոմեական ժողովրդի ծառայությունների և այն մասին, որ մեկ այլ, ավելի բարեպատեհ ժամանակ կարթագենցիները կատարում էին անխտան ու հավատարիմ դաշնակիցների պարտականություններ։ Մենք չգիտենք, թե ինչից էր առաջացել զգացմունքների այսպիսի զեղումը. ամենից հավանականն այն է, որ դրանք պետք է համարել հաճոյակամության դրսևորում հզորագոր հաղթողի նկատմամբ, որի իշխանության տակ էր գտնվում Կարթագենը։ Գուցե կարթագենցիները հիշում էին սենատի այն հայտարարությունը, որը մի տեսակ երաշխավորում էր իրենց քաղաքի ապագան։ Ցուցանշական է, որ Մասանասայի դեսպանները, հռոմայեցիներին առաջարկելով նույն քանակությամբ ցորեն և գրանից զատ 1200 հեծյալ ու 12 փիղ, այս անգամ սահմանափակվեցին միայն սենատի ուրիշ ցանկությունները ևս կատարելու պատրաստակամությամբ։

II դարի 50-ական թվականների սկզբին Կարթագենում, որտեղ այդ ժամանակ արդեն այնքան միջոցներ էին կուտակվել, որոնք, ինչպես կարծում էին, բավական էին թե՛ Մասանասայի և թե՛ Հռոմի դեմ մղվելիք պատերազմի համար, գերակշռություն ձեռք բերեց դեմոկրատական «կուսակցությունը», որը ևս իր հերթին գործը հասցնում էր նոր ընդհարման։ Նրա համար խոսքը գնում էր ոչ թե Աֆրիկայում այս կամ այն երկրամասի կցման, այլև Կարթագենի զերապետական իրավունքների և ազատության մասին։

II դարի 50—40-ական թվականների սկզբի միջազգային դրությունը, թվում էր թե պունիկյան դեմոկրատներին որոշ հույսեր էր բնձեռում հաջողության համար։ Մակեդոնիայում, որը բոլորովին վերջերս նվաճվել և տրոհվել էր միմյանցից մեկուսացված երեք «հանրապետություններից», Հունաստանում, որտեղ հռոմայեցիներն ուժեղացրել էին իրենց ճնշումը տեղական բնակչության նկատմամբ, աճում էր հակահռոմեական խռովությունը, իսկ 149 թ. հայտնվեց մի ինքնակոչ (կնգած Փիլիպոս), որն իրեն ներկայացրեց որպես մակեդոնական թագավոր Պերսևսի որդի, և նրան հաջողվեց մի ինչ-որ ժամանակ ամրանալ Մակեդոնիայում ու Թեսալիայում։ Միայն 148 թ. հռոմայեցիներին հաջողվեց ճնշել այդ շարժումը։ 148—146 թթ. հռոմեական զորքերը պատերազմում են Աքայական միության դեմ և ոչնչացնում այն, հաղթահարելով խիստ համառ

դիմակայությունը (հունական առևտրական խոշորագույն կենտրոններից մեկը՝ Կորնթոսը, 146 թ. հիմնիվեր ավերվեց, իսկ այն վայրը, որտեղ նա էր գտնվում, նզովվեց)։ Այս պայմաններում կարթագենական դեմոկրատների ելույթը կարելի էր համարել որպես Միջերկրականի առափնյա երկրների ժողովուրդների հակահռոմեական ընդհանուր շարժման մի օղակը։

Մինչդեռ Հռոմում, որքանով մենք կարող ենք այդ մասին դատել, Կարթագենի նկատմամբ վերաբերմունքի հարցը II դ. 60-ական թվականներին չափավոր ու ծայրահեղ երկու ուղղությունների ներկայացուցիչների միջև դարձել էր համառ պայքարի առարկա, որի տակ որոշակիորեն հետամտվում էր Սկիպիոնների և նրանց քաղաքական հակառակորդների միջև մղվող պայքարը։ Փաբիոս Մաքսիմոսի մահից հետո վերջիններիս էր պատկանում և նրանց գլխավորում էր Մարկոս Պորկիոս Կատոնը, որն անցել էր ամբողջ Պունիկյան II պատերազմը՝ Տրազիմենոսյան լճից մինչև Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը[181]։ Լինելով համողված պահպանողական, խստաբարո, թե՛ քաղաքական վճիռներում, թե՛ մասնավոր կյանքում, նա միշտ եղել էր ծայրահեղությունների կողմնակից, իսկ Սկիպիոնների դեմ նա հանդես էր եկել դեռևս Պունիկյան II պատերազմի վերջին տարիներին։ Հռոմում Սկիպիոնների դրությունը, ինչպես հայտնի է, խիստ վատթարացավ արդեն Անտիոքոսի դեմ մղված պատերազմը հաղթականորեն ավարտելուց հետո, երբ նրանցից հաշիվ պահանջեցին այն դրամների համար, որը նրանք ստացել էին Անտիոքոսից (հմմտ. Գելլ., 4, 18) և Լուկիոս Կորնելիոսին (որը Ասիայում ձևականորեն գլխավորում էր հռոմեական զորքերը) ի վերջո դրամական տուգանքի ենթարկեցին, և երբ նա հրաժարվեց մուծել, քիչ էր մնում դատապարտեին բանտարգելության։ Լուկիոսին փրկեց միայն իր ազգականի՝ ժողովրդական տրիբուն Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսի, միջամտությունը (Նշան., 53, 2)։ Սակայն, չէ որ հարվածն ուղղված էր ոչ թե Լուկիոսի վրա, որը բոլորովին չնչին մարդ էր և հասարակական կյանքում ինքնուրույն դեր չէր խաղում (պատահական չէր, որ պատերազմի ժամանակ նրա մոտ լեգատի պարտականություններ էր կատարում նրա նշանավոր եղբայր Պուբլիոսը՝ Հաննիբալին հաղթողը, որը փաստորեն գլխավորում էր ռազմական բոլոր գործողությունները), այլ մեղադրողները թիրախ էին դարձնում հատկապես Պուբլիոսին և հասան քաղաքական բեմից նրա հեռանալուն։ Իր ադմուկ հանած ցենզորության ժամանակ, 184 թ., երբ նա սենատից դուրս քշեց բոլոր նրանց, ովքեր զառանցել էին հին անաղարտ բարքերը (նման այն սենատորին, որն անելուր բարոյազանց արարքի չարամիտ փորձ էր կատարել. օրը ցերեկով

և այն էլ դստեր մոտ, համբուրել էր իր կնոջը (հմմտ. Պլուտ. մոտ., Կատ., 17), Կատոնը Լուկիոս Սկիպիոնից խլեց ձին, այսինքն՝ նրան դուրս հանեց հեծյալների շարքից (Պլուտ., Կատ., 18, Նշան., 53, 3) և, հետևաբար, նրա առջև փակեց սենատի մուտքը։ Կարթագենի ճակատագրի մասին կատաղի վիճաբանությունները, ինչպես կտեսնենք առաջիկայում, Սկիպիոնների (որոնց այժմ գլխավորում էր Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոն Նասիկան) և Կատոնի միջև ուժերի նոր փորձարկում հանդիսացան։

Մեզ անճշմարտանման է թվում, երբ այդ պայքարում արտացոլումն են տեսնում ոչ միատեսակ տնտեսական հիմքի և մրցակցող խմբերի կողմնորոշման, որոնցից մեկը բնական տնտեսություն էր վարում և հենվում Իտալիայում իր ունեցած հողատիրությունների ու կլիենտների զանգվածի վրա (Սկիպիոններ), իսկ մյուսը՝ խոշոր հողասեփականատերեր էին (որոնք սերտորեն կապված էին շուկայի հետ և լայնորեն օգտագործում էին ստրկական աշխատանքը), կապալառուներ, առևտրականներ և այլն։ Չկան այնպիսի տվյալներ, որոնք թույլ կտային պնդել, որ Սկիպիոններն իրենց տնտեսությունը Կատոնից տարբեր կերպ էին վարում։ Լավագույն և օրինակելի քաղաքացի ճանաչված Նասիկան (Նշան., 44) իր հին-հռոմեական պահպանողականությամբ չէր զիջում Կատոնին. բավական է հիշել, որ նրա նախաձեռնությամբ կործանվեց Հռոմում առաջին թատրոնը, որը նա բնութագրեց որպես անօգուտ և հին, անաղարտ բարքերին վնաս հասցնող հաստատություն (Լիվիոս, Կոդ., 48, Օրոսիոս, 4, 21, 4)։ Դեռ ավելին. մրցակիցների միջև սկզբունքային տարակարծություններ չկային Հռոմի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների ու նպատակների հարցում, խոսքը գնում էր բացառապես նրա կենսագործման եղանակների, նրանց հասնելու ուղիների մասին։ Սկիպիոնները հնարավոր էին համարում Կարթագենի նկատմամբ կիրառել հռոմեական ուղեծրի մեջ մտցնելու հին և փորձված միջոցը՝ Կարթագենը վերածել Հռոմի դաշնակցի, այն դեպքում, երբ Կատոնը, երկյուղ կրելով Կարթագենի չափազանց հզորացումից, պահանջում էր այն ջնջել երկրի երեսից։ Նասիկայի դիրքավորման մեջ արտահայտություն գտան նաև Հռոմում ներքաղաքական պայքարի հանգամանքները. Նասիկան կարծում էր, որ Կարթագենի գոյատևումը և նրա կողմից եղած մշտական վտանգը կնպաստեին հռոմեական հասարակության միասնության ամրապնդմանը և նրա կայունացմանը, կհանգեցնեին տարաձայնությունների ու հակասությունների վերացմանը (այս ըմբռնումն ընդհանրապես բնութագրական է դարաշրջանի քաղաքական մտքի համար, այնպես որ Նասիկան իր դատողություններում բոլորովին էլ յուրատիպ չէր)։ Բացի այդ, Նասիկայի համար, ըստ երևույթին, էականորեն կարևոր էր

«օրինական» ընույթ տալ Կարթագենի դեմ մղվող պատերազմին, որպեսզի Հռոմը շրջապատող աշխարհի առջև ներկայանար անարդարացի պատերազմ մղող ագրեսորի դերով[162]։ Եվ այնուամենայնիվ պատահական չէր, որ Սկիպիոն Էմիլիանոսը (որդեգրված Սկիպիոն, ծննդյամբ՝ Էմիլիոս) վերջին մահացու հարվածը հասցրեց Կարթագենին, իսկ Կատոնը գովասանքով գնահատեց նրա (ճիշտ է, դեռևս ստորադասի և ոչ թե հրամանատարի) գործողությունները (հմմտ. Պլուտ. մոտ, Կատ., 27)։

Ցավոք, մենք հույժ քիչ ու վատ ենք իրազեկ այն իրադարձություններին, որոնք նախորդեցին 153 թվականի հռոմեական հայտնի դեսպանությանը, որին ի թիվս ուրիշների, մասնակցեց նաև Կատոնը։ Հայտնի է միայն, որ 157 թ. հռոմեական հերթական դեսպանությունը վերստին քննում էր Կարթագենի ու Մասանասայի միջև հողատիրությունների շուրջն ընթացող վեճերը, սակայն այս անգամ դեսպանները վերադարձան ըստ ցող տեղեկությամբ. նրանք Կարթագենում հայտնաբերել էին նավաշինության համար անհրաժեշտ նյութի հսկայական պաշարներ (Լիվիոս, Կոդ., 47)։ Այլ կերպ ասած, Կարթագենը կարող էր ուզած պահին վերականգնել իր հզորությունը և վերածվել վտանգավոր թշնամու։ Մենք չգիտենք, թե կարթագենցիներն իրոք կամենո՞ւմ էին ռազմական նավատորմ կառուցել, թե խոսքը վերաբերում էր առևտրանավերի կառուցմանը։ Համենայն դեպս, դեսպանների կողմից սենատին հասցրած տեղեկությունները Կատոնին և նրա կուսակցությանը թույլ տվեցին վերստին հարձակման անցնել։

Բացի այդ, Հռոմում սկսեցին լուրեր տարածել, թե իբր Կարթագենական երկրում նումիդիական հսկայաթիվ զորք կա, որին գլխավորում է Սիփաքսի թոռ Արիոբարզանը։ Կատոնը, օգտագործելով այդ տեղեկությունը, հաստատակամորեն առաջարկեց պատերազմ հայտարարել Կարթագենին, քանի որ Արիոբարզանի բանակը ո՛չ այնքան Մասանասայի դեմ է, դա լոկ պատրվակ է, որքան Հռոմի։ Նասիկան առարկեց նրան (նրա նյութի բովանդակությունը հայտնի չէ), և սենատը որոշեց դեսպանություն ուղարկել Աֆրիկա՝ տեղում ամեն ինչ կարգավորելու համար։

Դա, ինչպես երևում է, 153 թվականի նշանավոր այն դեսպանությունն էր, որին մասնակցում էր Կատոնը։ Ապպիանոսը (Լիբ., 68—69), ըստ երևույթին, իրադարձությունները խիստ մերձեցնում է միմյանց, երբ Կատոնի առաքելությունը անմիջական առնչության մեջ է դնում Մեծ Հարթավայրի և Տուսկայի համար հարուցված վեճի հետ։ Իրականում, ինչպես ցույց է տալիս լիբիական ավանդությունը, այդ ժամանակամիջոցի դեսպանությունները Նումիդիայի, իսկ թերևս նաև Հռոմի դեմ նոր պատերազմի համար կարթագենցիների կատարած կամ ենթադրվող

զաղտնի նախապատրաստությունների հետևանք էին։ Հետաքրքրական է, որ Լիվիոսի էպիտոման, այնուամենայնիվ, թերևս իր կարճառոտության հետևանքով, Կատոնին չի հիշատակում որպես դեսպան։

Դատելով Ապպիանոսի նկարագրությունից (Լիբ., 69), Կատոնի գործողությունները, ինչպես նշում են լիբիական ավանդությունները, լիովին համապատասխանում էին իր հետախուզական նպատակներին։ Տերիտորիալ վեճը կարգավորելու նպատակով ժամանելով Աֆրիկա և պահանջելով, որ երկու կողմերը ենթարկվեն իրենց վճռին, դեսպանները, այնուամենայնիվ, չցանկացան հրապարակել իրենց վճիռը, այլ մեկնեցին դիտելու երկիրը և բուն Կարթագենը, որի հզորությունն ու բազմամարդությունը զարհուրելի տպավորություն թողեցին նրանց վրա։ Պլուտարքոսը (Պլուտ., Կատ., 26) մոտավորապես հենց այդպես է պատկերում Կատոնի տպավորությունները. գտնելով, որ Կարթագենը, հակառակ հռոմայեցիների կարծիքին, արհավիրքներ չի կրում և չի գտնվում ծանր պայմաններում (ոչ բոլորովին է պարզ, թե մշտական առևտրական և դիվանագիտական շփումների առկայության պայմաններում Հռոմում ինչպե՞ս կարող էր այդպիսի կարծիք ստեղծվել։ Հավանաբար, ավյալ դեպքում Պլուտարքոսը դիմում է հռետորական հակադրման, որպեսզի շատ ավելի ցայտունորեն երևան հանի Կատոնի դիրքավորման ակունքները), այլև հույժ խտարնակ է, հսկայական հարստությամբ լի, տառացիորեն լեփ-լեցուն տարբեր տեսակի զենքերով ու զինահանդերձանքով, Կատոնը եկավ այն մտքին, որ եթե քաղաքը չդրավվի, ապա հարկ կլինի, որպեսզի հռոմայեցիները նախկինի պես կրեն նույն ձախողությունները։

Սակայն, այդ բոլորով հանդերձ, անորոշ է մնում, թե ինչ եղավ հռոմեական դեսպանների ստացած դիվանագիտական առաջարկությունը կամ թողարկումը։ Ապպիանոսի և Պլուտարքոսի մոտ առաքելությունը փաստորեն չի ավարտվում. բանակցությունների բովանդակությունը հեղինակներից ո՛չ մեկին և ո՛չ էլ մյուսին չի հետաքրքրում։ Բանն այլ կերպ է Լիվիոսի էպիտոմայում (Կոդ., 48)։ Այստեղ պատմվում է հետևյալը։

Կարթագենական խորհրդին պարսավելով այն բանի համար, որ, հակառակ դաշինքի շուրջը կայացած համաձայնության, պունիկացիները թե՛ բանակ ունեն (ի նկատի է առնվում անշուշտ Արիոբարզանի զորքը) և թե՛ նավատորմ կառուցելու համար նյութեր, դեսպանները ցանկություն հայտնեցին խաղաղություն հաստատել Կարթագենի ու Մասանասայի միջև. ընդ որում Մասանասայի վրա պարտավորություն էր դրվում հրաժարվելու այն տիրույթից, որը վեճի առարկա էր դարձել։ Ըստ Ապպիանոսի (Լիբ., 69), Մասանասան պատրաստակամություն հայտնեց են-

թարկվելու հռոմեական դեսպանների վճռին, այն դեպքում, երբ պունիկացիները, հռոմայեցիներին կասկածելով այն բանում, որ նրանք նախկինի պես կպաշտպանեն նումիդիացիներին, հայտարարեցին որևէ նոր որոշման ավելորդ լինելու մասին։ Բավական է միայն խստագույնս պահպանել իր ժամանակին Սկիպիոնի հետ կնքված պայմանագիրը։ Ըստ Լիվիոսի (Կոդ., 48), կարթագենական խորհուրդը արտահայտվեց դեսպանների վճռին ենթարկվելու օգտին։ Դա հեշտ էր, մանավանդ որ վճիռը նպաստավոր էր։ Սակայն այն ժամանակվա սուֆետ Գիսկոնը՝ Համիլկարի որդին (թերևս Գիսկոնի որդի Համիլկա՞րը, որի մասին վերևում խոսվեց), «խռովարարը», ինչպես նա կոչվում է աղբյուրում, հանդես եկավ, պնդելով Հռոմի դեմ պատերազմի օգտին։ Մեզ թվում է, որ տվյալ դեպքում Ապպիանոսն ու Լիվիոսը փոխադարձաբար լրացնում են միմյանց. ըստ երևույթին, Ապպիանոսը շարադրում է Գիսկոնի՝ Համիլկարի որդու, ելույթները։

Ամբողջ շարադրվածի առնչությամբ, համենայն դեպս, երկու հարց է ծագում։ Հռոմեական դեսպանությունն ինչո՞ւ բացահայտորեն, հօգուտ Կարթագենի, քամահրեց Մասանասայի շահերն ու հավակնությունները։ Եվ ինչո՞ւ Կարթագենի դեմոկրատական շրջանները, չնայած դրան, փաստորեն դիմեցին Հռոմի հետ խզման։

Հռոմեական դեսպանության դիրքավորումը կարող էր թելադրվել տվյալ դեպքում Հռոմի կացությունը Աֆրիկայում մղվելիք պատերազմով չբարդացնելու միտումով. վերջինս, այն պայմաններում, երբ պատերազմ էր գնում Իսպանիայում, և հասունանում էին խռովությունները Բալկանյան թերակղզում, խոստանում էր դառնալ դժվարին ու երկարատև։ Բացառված չէ նաև, որ հռոմեական դեսպանությունը, որն անկասկած տեղյակ էր կարթագենական դեմոկրատների տրամադրություններին, չհամարձակվեց որևէ բան անել, կանխապես համոզված լինելով, որ նրանք չէին համաձայնվի հռոմայեցիների որևէ առաջարկին։ Այդ դեպքում Հռոմը կարող էր պահպանել խաղաղասեր ու բարեհաճ միջնորդի դրությունը, մինչդեռ կարթագենցիները կներկայանային ագրեսիվորեն տրամադրված մարդկանց դերով, որոնք, բացի այդ, չգիտեին, թե ինչ են կամենում։

Եթե հռոմեական դեսպաններն այսպես էին դատում, այդ դեպքում նրանք չէին սխալվում իրենց կանխագուշակումներում։ Կարթագենական դեմոկրատների դիրքն, անկասկած, որոշվում էր այն բանով, որ նրանք ընդհանրապես դեմ էին հռոմեական միջամտությանը։ Ահա թե ինչու Համիլկարի որդի Գիսկոնը իսկույնևեթ մերժեց ամեն մի, նույնիսկ նպաստավոր, վճիռ, եթե այն բխում էր հռոմայեցիներից և, հետևաբար, նշանակում էր հռոմեական դերակայություն Կարթագենի նկատմամբ, բացի այդ, նա հիմնավոր կերպով կարծում էր, որ հռոմայեցիները, ինչ կերպ էլ լիներ, միջոց կգտնեին իրենց դաշնակցին լիովին բավարարելու համար։ Բանակի և շինարարական նյութերի առթիվ դեսպանների դիտողությունները պարզ նախազգուշացում էին այն բանի, որ Հռոմը թույլ չէր տա Կարթագենի զորացումը, չէր թողնի, որ նա դիմակայեր Մասանասային, չէր հանդուրժի նրա ինքնուրույնությունը։ Գիսկոնը և նրա ետևում կանգնած խմբավորումը գերադասեցին պատերազմել։ Հռոմի դեմ հաղթական պատերազմը մեկընդմիշտ կլուծեր նաև Նումիդիայի հետ ունեցած բոլոր վեճերը։

Հեշտ է պատկերացնել այն տրամադրությունը, որով դեսպանները վերադարձան հայրենիք։ Փաստորեն լիովին արդարացան նրանց ամենավատթար ենթադրությունները։ Կարթագենը բավականաչափ ուժեղ է պատերազմելու համար. դեռ ավելին, Կարթագենում վճռորոշ դեր են խաղում այն մարդիկ, ովքեր բացահայտորեն պատերազմի կոչ են անում Հռոմի դեմ և դիմում ուղղակի խզման։ Այս պայմաններում Կարթագենի զարհուրեցնող հզորության մասին դեսպանների պատմածները առանձնահատուկ հնչեղություն էին ստանում։ Կատոնն ասում էր, որ քանի դեռ Կարթագենը գոյություն ունի, Հռոմը չի կարող ապահով զգալ իրեն և երկյուղ չկրել իր ազատության համար (Ապպ., Լիբ., 69)։ Պատմում էին, որ սենատում նա թափել էր ձիթապտուղներ, որոնք բերվել էին Աֆրիկայից, երբ բոլորն սկսել էին հիանալ նրանց մեծությամբ ու գեղեցկությամբ, Կատոնն ասել էր, որ այն հողը, որ այսպիսի պտուղներ է աճեցնում, ընկած է Հռոմից երեքօրյա նավարկության չափով հեռավորության վրա (Պլուտ., Կատ., 27, հմմտ. Պլինիոսի մոտ, 15, 75)։ Այս ցուցադրման մեջ դժվար չէ, իհարկե, տեսնել հռոմեական գյուղացիներին ուղղված կոչ՝ տիրանալ աֆրիկական արգավանդ հողերին, իսկ դրա համար՝ ոչնչացնել Կարթագենը։ Մեզ է հասել Կատոնի ճառից մի հատված, որտեղ հիմնավորվում է Կարթագենի դեմ պատերազմի օրինականությունն ու անխուսափելիությունը (Կատոն, Ֆրագմ., 185). «Կարթագենցիներն արդեն մեր թշնամիներն են, քանզի նա, ով ամեն բան իմ դեմ է պատրաստում, որպեսզի երբ ցանկանա, ի զորու լինի պատերազմ սկսելու, արդեն իսկ իմ թշնամին է, եթե անգամ դեռ գործածության մեջ չի դրել զենքը»[183]։ «Բացի այդ, ես կարծում եմ, որ Կարթագենը պետք է կործանվի»,— այս դարձվածքով էր սենատում Կատոնը վերջացնում իր ամեն մի ելույթը (Վել. Պատ., 1, 13, 1, Պլինիոս, 15, 74, Գելլ., 1, 31, 4, Նշան., 47, Ցից., Կատ., 18)։ Այդ պայմաններում, երբ պունիկյան իշխանությունները գիտակցաբար դիմում էին Հռոմի հետ

հարաբերությունների ուղղակի սրման, Նասիկայի առարկությունները հույժ անհամոզիչ էին հնչում։

Մասանասան իր հերթին ամեն ինչ անում էր, որպեսզի ամրապնդի սենատի հակակարթագենական տրամադրությունները։ 152 թ. վերստին Հռոմ ժամանեց նրա որդի Գուլուսան՝ ամբաստանելով կարթագենցիներին, որոնք իբրև թե զորք էին հավաքում, կառուցում նավատորմ և, անկասկած, պատրաստվում պատերազմի։ Սենատում այս առթիվ վերստին բախում տեղի ունեցավ. Կատոնը պահանջում էր պատերազմ հայտարարել, այն դեպքում, երբ Նասիկան զգուշավորության կոչ էր անում. փութանակի, առանց մտածելու ոչինչ չպետք է անել։ Որոշվեց վերստին Կարթագեն ուղարկել տասը դեսպանի, որպեսզի տեղում հասու լինեն իրողությանը (Լիվիոս, Կոդ., 48)։ Աֆրիկայից վերադառնալով, դեսպանները, որոնց հետ ժամանեցին կարթագենական հանձնախումբը և Գուլուսան, հայտնեցին, որ իրոք իրենք Կարթագենում բանակ ու նավատորմ են հայտնաբերել։ Այժմ Կատոնն ու նրա կուսակիցները՝ սենատում մյուս նախագահողները, ինչպես հաղորդում է մեր աղբյուրը, նախկինից ավելի մեծ համառությամբ, առաջարկում էին անմիջապես զորք տեղափոխել Աֆրիկա։ Այնուամենայնիվ Նասիկան շարունակում էր ասել, որ ինքը պատերազմի համար օրինական պատճառ չի տեսնում։ Սենատը որոշեց հրաժարվել պատերազմից, եթե կարթագենցիներն այրեն իրենց նավերը և ցրեն բանակը. հակառակ դեպքում, ապագա կոնսուլները պետք է ձևականորեն դնեին Կարթագենի հետ նոր պատերազմի հարցը։

Նույն այդ ժամանակ իրադարձություններն Աֆրիկայում ընթանում էին իրենց հունով։ Հրաժարվելով միջնորդությունից և բանը հասցնելով մինչև Հռոմի հետ ուղղակի խզման, կարթագենական դեմոկրատները դիմեցին միանգամայն տրամաբանական քայլի՝ Կարթագենից արտաքսեցին Մասանասայի կողմնակիցներին. ժողովրդական ժողովը երդվեց երբեք թույլ չտալ նրանց ետ դառնալու և արգելել նրանց վերադարձի վերաբերյալ առաջարկ մտցնելը։ Արտաքսվածները փութացին Մասանասայի մոտ և սկսեցին թագավորին համոզել՝ Կարթագենի դեմ պատերազմ սկսելու։ Իրապես Մասանասային առանձնապես պետք էլ չէր դրդել, մանավանդ այն պայմաններում, երբ պունիկյան իշխանությունները բացահայտորեն քամահրում էին Հռոմի աջակցությունը. այնուամենայնիվ նումիդիական տիրակալը ցանկանում էր պատշաճություն պահպանել։ Նա իր որդիներին՝ Գուլուսային և Միկիպսային, ուղարկեց Կարթագեն, պահանջելով վերադարձի թույլտվություն տալ արտաքսվածներին, սակայն բուետարքոսը նրանց առջև փակեց դռները։ Նա չէր կամենում, որ Գուլուսան և Միկիպսան դիմեին ժողովրդին, և որ դատապարտյալների ազգականները կարող էին ժողովրդին դրդել փոխելու իր որոշումը։ Երբ Գուլուսան վերադարձավ, նրա վրա հարձակվեց Համիլկար Սամնիացին։ Մասանասան այս բոլոր դեպքերն օգտագործեց որպես առիթ ներխուժման համար։ Նա թափանցեց պունիկյան երկրամասը և ձեռնարկեց Հորոսկոպա քաղաքի պաշարումը։ Իր զորքերը դեպի այնտեղ շարժեց նաև Հասդրուբալը, որն այդ պահին գլխավորում էր պունիկյան բանակը։ Մասանասան սկսեց դանդաղորեն նահանջել, մինչև որ Հասդրուբալին հրապուրեց դեպի ամայի հարթավայրը, որը բոլոր կողմերից շրջապատված էր բլուրներով (Ապպ., Լիբ., 70)։ Այնտեղ, կատաղի ճակատամարտում կարթագենցիները ջախջախվեցին. նրանք դիմեցին այդ պահին պատահակնորեն Մասանասայի ճամբարում գտնվող Սկիպիոն Էմիլիանոսին, խնդրելով միջնորդություն անել։ Այժմ պունիկյան հրամանատարությունը համաձայնվեց նումիդիային զիջել Էմպորիումում գտնվող վիճելի տարածքը (այսինքն, ըստ երևույթին, իրավաբանորեն ճանաչել այն իշխանությունը, որը Մասանասան փաստորեն արդեն իրականացնում էր) և մուծել ռազմատուգանք. 200 տաղանդ արծաթ՝ անմիջապես և 800-ը՝ ժամանակի ընթացքում։ Սակայն բանակցությունները վիժեցվեցին այն պատճառով, գրում է Ապպիանոսը (Լիբ., 71—72), որ կարթագենցիները հրաժարվեցին հանձնել փախստականերին։ Մասանասան շրջապատեց Հասդրուբալի ճամբարը։ Թշնամիներին հաշտեցնելու համար հռոմայեցիների հերթական փորձը հաջողություն չունեցավ։ Հասդրուբալը վրդովեցուցիչ կերպով հայտարարեց, որ եթե Մասանասայի գործերը վատ են ընթանում, այն ժամանակ թող հռոմայեցիները վեճը լուծեն, իսկ եթե ավելի լավ վիճակում են, թող հրահրեն նրան (Ապպ., Լիբ., 72)։ Սովն ու հիվանդությունները ոչնչացրեցին Հասդրուբալի գրեթե ամբողջ բանակը։ Նրա 58 հազար զորականներից միայն քչերը, այդ թվում և հրամանատարը, կարողացան ճեղքել-հասնել Կարթագեն (Ապպ., Լիբ., 73)։ Ըստ երևույթին, Տիտոս Լիվիոսը 150 թ. հենց այս իրադարձություններն ի նկատի ունի (Կոդ., 48), երբ խոսում է այն պատերազմի մասին, որը հակառակ պայմանագրին, կարթագենցիները հայտարարեցին Մասանասային և տանուլ տվեցին։ Ամենայն հավանականությամբ, Կարթագենի հետ Մասանասայի հենց այս ընդհարումն է նկատի առնված Լիվիոսի՝ այսպես կոչված օքսիրինքոսյան էպիտոմայի հատվածում, որից, սակայն, պահպանվել են միայն վերջին՝ «ընդդեմ կարթագենցիների» բառերը[184]։

II

Մասանասայի դեմ մղված պատերազմում կրած պարտությունը Կարթագենին դրեց բացառիկ ծանր կացության մեջ։ Կորցնելով հսկայական բանակը և մնալով անպաշտպան նենգ ու անողոք թշնամու առջև, Կարթագենը, բացի այդ, դառնում էր նաև հռոմեա-պունիկյան պայմանագրի խախտողը։ Նա ոչ միայն պատրաստել էր բանակ ու նավատորմ. նա առանց սենատի թողտվության պատերազմ էր սկսել հռոմեական ժողովրդի դաշնակցի՝ Մասանասայի դեմ։ Այս ամենը Հռոմին բավարար չափով իրավական հիմք էին տալիս Կարթագենին պատերազմ հայտարարելու։ Եվ Հռոմում իրոք սկսեցին զորահավաքը (Ապպ., Լիբ., 74)։ Այսպիսի միջոցառման նշանակությունը անհնար էր սխալ ըմբռնել։ Այդպիսի պայմաններում կարթագենական կառավարության համար միայն երկու ելք կար. կա՛մ պատրաստվել պատերազմի, կա՛մ հանձնվել հռոմայեցիների ողորմածությանը, որոնք կամենում էին, ինչ կերպ էլ լիներ, Կարթագենը տանել դեպի վերջնական ստրկացում կամ նույնիսկ կործանում։ Հռոմեամետ արիստոկրատական «կուսակցությունը», որը Հասդրուբալի պարտության հետևանքով վերստին իշխանության գլուխ էր անցել, ընտրեց երկրորդ ուղին։ Ասես մի ինչ-որ խուճապային լուսագարության, կույր սարսափի նոպայի մեջ այն հլու-հնազանդորեն, մեկը մյուսի ետեից կատարում էր սենատի և հռոմեական հրամանատարության բոլոր պահանջները, Կարթագենը հասցնելով կործանման եզրին։

Կարթագենական կառավարողներն ամենից առաջ վճռապես սահմանազատվեցին Մասանասայի դեմ մղված պատերազմի բոլոր պաշտպաններից ու մասնակիցներից։ Դեմոկրատական շարժման ղեկավարները՝ Հասդրուբալը, Կարտալոնը և մյուս ականավոր գործիչները, դատապարտվեցին մահապատժի։ Այնուհետև կարծելով, որ իրենք բավականաչափ գործ են արել, որպեսզի շարարաստիկ պատերազմը ներկայացնեն որպես մասնավոր անձանց արկածախնդրություն, որի համար պետությունը չի կարող պատասխան տալ, կարթագենցիները Հռոմ ուղարկեցին հերթական պատվիրակությունը։ Այն մերկացրեց Մասանասային և նախատինքներ տեղացին այն անձանց վրա, ովքեր, փութեռանդորեն և վճռականությամբ պաշտպանվելով, քաղաքը ենթարկեցին պատերազմ վարելու մեջ մեղադրվելու վտանգին։ Սակայն բոլոր խոսակցություններն արդեն իզուր էին։ Սենատում վերջնականապես հաղթանակեց Կատոնի տեսակետը։ Եվ եթե Կարթագենին իսկույն պատերազմ չհայտարարեցին, ապա դա կատարվեց լոկ մի պատճառով. ցանկանում էին որքան կարելի էր, ավելի շատ ուժեր կուտակել։ Հռոմը ամբողջ թափով նախապատրաստվում էր։ Սենատի նիստում, որտեղ պատվիրակները ելույթներ էին ունենում, նրանց միայն մի հարց տրվեց. ինչպե՞ս կարող էր պատահել, որ կարթագենցիները մեղավորների նկատմամբ մահավճիռ կայացրեցին ոչ թե պատերազմի սկզբին, այլ պարտությունից հետո և Հռոմ ժամանեցին ոչ թե դրանից առաջ, այլ միայն այժմ։ Պունիկացիները չգիտեին ինչ պատասխանեն։ Կարթագենական կառավարությանը տրվեց առավելագույն չափով անորոշ պատասխան։ Նշվեց, որ այն բավականաչափ շարդարացավ հռոմայեցիների առջև։ Սակայն այդ խոսքերից պարզ երևում էր, որ սենատն այլևս ոչինչ չի ցանկանում լսել ո՛չ Մասանասայի, ո՛չ նրա հավակնությունները և ո՛չ էլ աֆրիկյան տիրույթների շուրջն ընթացող վեճերի մասին։ Բնականաբար պատվիրակներին մնում էր միայն իրազեկ դառնալ այն պատժի մասին, որին պետք է ենթարկվեր Կարթագենը իր վրայից մեղքը թոթափելու համար, եթե հռոմայեցիները նրանց մեղապարտ էին համարում։ «Բավարարել հռոմայեցիներին»,— սենատն այսպես ձևակերպեց իր պահանջները (Ապպ., Լիբ., 74, Դիոդորոս, 32, 3)։

Սակայն ի՞նչը կարող էր բավարարել հռոմայեցիներին։ Կարթագենական կառավարությունը, պատրաստակամ լինելով տառացիորեն ամեն բանի, չգիտեր ինչ ձեռնարկել։ Ոմանք կարծում էին, թե հռոմայեցիները դարձյալ դրամ են ցանկանում, ուրիշները գտնում էին, որ Մասանասային պետք է տրվեն վիճելի հողերը։ Նորից հռոմայեցիներին հարցում արեցին և դարձյալ լսեցին, որ կարթագենցիներն իրենք լավ գիտեն, թե ինչ են պարտավոր անել (Ապպ., Լիբ., 74, հմմտ. Դիոդորոսի մոտ, 32, 1)։ Դատելով ըստ Պոլիբիոսի պատմության մեզ հասած հատվածների (36, 3, 2—3), ստանալով այդքան «սպառիչ» ցուցում և ոչ մի ելք չտեսնելով, կարթագենական կառավարությունը սկսեց քննարկել քաղաքը հռոմայեցիներին հանձնելու հարցը։ Խոսքը միայն նրանց գերիշխանությունը ճանաչելու մասին չէր. հանձնվողներին դիտելով որպես ռազմավար, հռոմեական պետությունը դառնում էր նրանց պատկանող բոլոր հողերի, գույքի (այդ թվում և անշարժ), ինչպես նաև նրանց անձի սեփականատերը։ Պոլիբիոսը (36, 4, 1—4) հենց այդպես է բացատրում գործերի վիճակը տվյալ անցքի առնչությամբ։ Այլ կերպ ասած՝ խոսքը գնում էր ստրկության մասին, այս բառի ուղղակի և ճշգրիտ իմաստով։ Իրենց հերթին հռոմայեցիները սովորաբար հանձնվողներին մեծ կամ պակաս չափով «վերադարձնում» էին նրանց գերապետական և գույքային իրավունքները, իրենց թողնելով գերագույն իշխանությունը։ Դա իրենց քաղաքը, ինչ-որ չափով՝ ինքնավարությունը պահպանելու և նախկինի պես խոշոր հողատիրությունների շահագործմամբ, արհեստագործու-

թյամբ ու առևտրով հարստանալու հնարավորության որոշ հույս էր ընձեռում պունիկացիներին։

Դրության ծայրահեղ անորոշության և բացահայտորեն վրա հասնող աղետի հետևանքով Կարթագենում թագավորող խուճապն ու տագնապը է՛լ ավելի ուժեղացան, երբ հայտնի դարձավ, որ Ուտիկեն՝ Հյուսիսային Աֆրիկայում Տյուրոսի հնագույն գաղութներից մեկը, հնօրյա և, թվում էր, ամենահուսալի դաշնակիցը, որի վրա ուղած փորձության ժամանակ կարելի էր հույս դնել, և որը կարթագենական տերության մեջ առանձնաշնորհյալ դրություն ուներ, նույն այդ Ուտիկեն հանձնվել էր հռոմայեցիներին (Պոլիբիոս, 31, 3, 1, Ապպ., Լիբ., 75, Լիվիոս, Կոդ., 49) և, ըստ երևույթին, նույնիսկ իր օգնությունն էր առաջարկել նրանց[186]։ Բանն, իհարկե, միայն այն չէր, որ Ուտիկեն կանխեց կարթագենցիներին և դրանով իսկ նրանց զրկեց որոշ առավելություններից, որոնց նկատմամբ պունիկացիները հույս էին տածում (Պոլիբիոս, 36, 3, 4)։ Ուտիկեի որոշումը հռոմեական կառավարությանը ցույց տվեց, որ Կարթագենն այլևս չի կարող հույս դնել իր աֆրիկյան (այդ թվում նաև ամենամերձավոր) հպատակների ու դաշնակիցների վրա։ Այն սենատին դրդեց արագացնելու (Ապպ., Լիբ., 75) պատերազմի ձևական հայտարարումը (հմմտ. սակայն Լիվիոսի մոտ (Կոդ., 49), որտեղ Ուտիկեից պատվիրակները Հռոմ են ժամանում սենատի որոշումից անմիջապես հետո), և Կարթագենում (թեև այնտեղ, բնականաբար, միայն որոշ ժամանակ հետո իմացան այս հանգամանքի մասին) լավ էին հասկանում, որ Ուտիկեի կատարածը գործողության ազատություն էր ընձեռում հռոմայեցիներին։ Հենց այդ պատճառով, երկարատև ու ծանր քննարկումից հետո, խորհուրդը որոշեց հետևել նախկին վարքագծին և Հռոմ ուղարկեց անսահմանափակ լիազորությամբ օժտված դեսպանություն. դեսպանները տեղում պետք է ինքնուրույնաբար վճիռներ ընդունեին, ելնելով իրադրությունից և նկատի առնելով իրենց հայրենիքի կացությունն ու շահերը։ Սակայն դեսպանները Հռոմ ժամանեցին խիստ ուշացումով (ըստ Ապպիանոսի (Լիբ., 76) և Դիոդորոսի (32, 6), դեսպանությունը Հռոմ է ուղարկվել արդեն այն բանից հետո, երբ Կարթագենում իմացել են պատերազմի հայտարարման մասին)։

Որքանով մենք կարող ենք դատել ըստ լիվիոսյան ավանդության (Լիվիոս, Կոդ., 49), Կարթագենի ու նրա ճակատագրի նկատմամբ ունեցած հարաբերությանն առնչվող հարցը, մինչև վերջին պահը, Կատոնի ու Նասիկայի միջև մնում էր որպես քաղաքական սուր վիճաբանության առարկա։ Կատոնը, հենվելով այժմ, իհարկե, 150 թվականի դեպքերի վրա, է՛լ ավելի մեծ համառությամբ պահանջում էր ռազմական գործողություն սկսել, կործանել և ոչնչացնել Կարթագենը։ Նասիկան նախկինի պես առարկում էր, սակայն նրան արդեն չէին լսում։ Կարթագենա-նումիդիական ընդհարումը, հռոմեական դեսպանությունների նկատմամբ Կարթագենի դեմոկրատական մագիստրատների վերաբերմունքը և տերիտորիալ վեճերի լուծման ժամանակ միջնորդությունից նրանց հրաժարվելը սենատորների առջև հաստատեցին Կատոնի իրավացիությունը։ Սենատը որոշեց. քանի որ Կարթագենը, հակառակ պայմանագրի, պահպանել է նավատորմը, զորքը դուրս է հանել սահմանից, զենք է բարձրացրել Մասանասայի՝ հռոմեական ժողովրդի դաշնակցի ու բարեկամի դեմ, քաղաքից ներս թողել նրա որդուն՝ Գուլուսային, որն այնտեղ էր ժամանել հռոմեական դեսպանների հետ, այս ամենի համար պատերազմ հայտարարել Կարթագենին։ Այն հանձնարարվեց կոնսուլներ Մանիոս Մանիլիոսին (հետևազորի հրամանատարությունը) և Լուկիոս Մարկիոս Կենսորինոսին (նավատորմի հրամանատարությունը)։ Մեկնման ժամանակ Մանիլիոսի և Կենսորինոսի ստացած գաղտնի հրահանգները կանխավ բացառում էին խաղաղ կարգավորման որևէ հնարավորություն. նրանք Կարթագենը պետք է ջնջեին երկրի երեսից և միայն դրանից հետո իրավունք ունեին կատարված համարելու իրենց առաջադրանքը։ Որևէ այլ լուծում բացառվում էր (Ապպ., Լիբ., 75)։

Կարթագենական պատվիրակները, Հռոմ ժամանելով արդեն այս իրադարձություններից հետո, իհարկե, չգիտեին գաղտնի այն հրահանգների մասին, որոնցով վերջնականապես և անդրդվելիորեն վճռվել էր քաղաքի ճակատագիրը։ Բայց նրանք տեսան, որ այն պայմաններում, երբ պատերազմն արդեն սկսվել է, իրենք որևէ բանի շուրջն այլևս չեն կարող խորհրդակցել։ Դեռ այժմ էլ հույս ակնկալելով, որ խաղաղ ճանապարհով կբավարարեն սենատին, պատվիրակությունը հայտարարեց Կարթագենի լիակատար ու անվերապահ անձնատրության մասին (Պոլիբիոս, 36, 3, 8, Լիվիոս, Կոդ., 49, Դիոդորոս, 32, 6, 1)։ Դրանից ավելին անելը և պահանջելը արդեն անհնար էր թվում։ Պատվիրակներն իրենց հաշիվներում դաժանորեն սխալվեցին։ Ճիշտ է, պունիկյան հանձնախմբին հայտնելով հռոմեական կառավարության պատասխանը, պրետորը, որի անունն աղբյուրները չեն տալիս, հայտարարեց, որ սենատորը, որի անունն աղբյուրները չեն տալիս, հայտարարեց, որ սենատորները, նկատի առնելով կարթագենցիների հիանալի որոշումը, նրանց ընձեռում են ազատություն, օրենքներ, ամբողջ երկիրը և ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր գույքի տիրություն։ Բայց, ավելացրեց պրետորը, այս ամենը կարթագենցիները կստանան, եթե 30 օրվա ընթացքում Լիլիբեոն հասցնեն 300 պատանդների՝ խորհրդի անդամներին ու 30-ի կոլեգիայի անդամների որդիներին, ինչպես նաև կատարեն կոն-

խուլների մյուս պահանջները (Պոլիբիոս, 36, 4, 5—6, Դիոդորոս, 32, 6, 1, Ապպ., Լիբ., 76)։

Ստանալով այդպիսի պատասխան, կարթագենական կառավարությունը կարող էր թեթևություն զգալ։ Իհարկե, անորոշությունը պահպանվեց, քանի որ հայտնի չէր, թե կոնսուլներն ինչ են պահանջում։ Շատ էր անհանգստացնում նաև բուն քաղաքի մասին լուրը։ Սակայն գլխավորը՝ հավաստիացումն այն մասին, որ կարթագենցիները պահպանելու են իրենց կյանքը, ազատությունը և ինչքը, ստացել էին։ Պունիկացիները չգիտեին, որ սենատը Կատոնի համառ պահանջով կոնսուլներին գաղտնի հայտարարել էր իր նախկին որոշումը՝ գործը հանգեցնել պատերազմի և Կարթագենի ոչնչացմանը (Ապպ., Լիբ., 76, Լիվիոս, Կոդ., 49, Դիոդորոս, 32, 6, 1)։

Կարթագենական իշխանությունները փութացին պատանդներին ուղարկել Լիլիբեոն։ Փողոցներում և նավահանգստում մայրերը լացուկոծով փաթաթվում էին իրենց զավակներին, փորձում ուշացնել նավաստիներին, բռնում նավերից, պատռում առագաստները. մի քանիսը իրենց որդիներին տանող նավերի ետևից բաց ծովում լողացին դեպի հեռուն (Ապպ., Լիբ., 77, Պոլիբիոս, 36, 5, 7, Դիոդորոս, 32, 6, 2)։

Այնուամենայնիվ խորհրդին դեռ անհրաժեշտ էր իմանալ, թե ինչպիսիք էին կոնսուլների լրացուցիչ պահանջները. և կարթագենական հերթական պատվիրակությունը ներկայացավ Ուտիկե, որտեղ արդեն ժամանել էին հռոմեական զորքերը։ Այս անգամ կոնսուլները առաջարկեցին պունիկյան զինանոցներում պահվող ամբողջ զինապաշարը։ Կարթագենցիների անվճռական առարկությունները (քաղաքի շրջակայքում շրջում է Հասդրուբալը՝ դեմոկրատների պարագլուխը, Մասանասայի դեմ մղված պատերազմի պատճառ հանդիսացողը, որից անհրաժեշտ է պաշտպանվել) կտրուկորեն մերժվեցին (հռոմեական կառավարությունն ինքը կապահովի Կարթագենի անվտանգությունը)։ Հռոմայեցիներն ստացան 200 հազար համալիր հետևազորային սպառազինություն և 2000 (ըստ Ստրաբոնի ,3000) բարան (Պոլիբիոս, 36, 6, Ստրաբոն, 17, 3, 15, Դիոդորոս, 32, 6, 2, Ապպ., Լիբ., 79, Օրոսիոս, 4, 22, 2)։ Համաձայն Զոնարասի (9, 26), կարթագենցիները զենքի մի մասը թաքցրեցին։

Եվ միայն այժմ, երբ Կարթագենը կամովին զինաթափվեց, Մանիլիոսն ու Կենսորինոսը վճռեցին ներկայացնել գլխավոր պահանջը։ Գերուսիականներին կանչելով իրենց ճամբար, նրանք հայտարարեցին, որ կարթագենցիները պետք է հեռանան քաղաքից և բնակվեն իրենց պատկանող տարածքում գտնվող ցանկացած այլ վայրում, բայց ծովից առնվազն 80 ասպարեզ (այսինքն՝ մոտ 15 կմ, ըստ Լիվիոսի 10 մղոն) հեռավորության վրա (Ապպ., Լիբ., 81, Դիոդորոս, 32, 6, 3, Լիվիոս, Կոդ., 49, Զոնարաս, 9, 26)[186]։

Կարթագենական գերուսիականները հույս ունեին հլությամբ ու հնազանդությամբ սիրաշահել անողոք թշնամուն։ Եվ ահա նրանց սպասում էր համաքաղաքացիներին մահվան դատավճիռ հայտարարելը։ Դեպի ծով ելք չունենալով, հեռու մնալով նավագնացության կարևոր ուղիներից, կարթագենցիները, որ ապրում էին ծովային առևտրով, աշխատում համաշխարհային շուկայի համար, դատապարտվեցին անխուսափելի կործանման։ Կոնսուլների հետ բացատրվելու, կամ թեկուզ նրանց գումը շարժելու ուղղությամբ ներդրված բոլոր փորձերը ոչնչի չհանգեցրին։ Սենատի հրամանը պետք է կատարվեր առանց քաշքշուկների։ Այն քննարկման ենթակա չէր և չէր կարող փոխվել։ Միակ բանը, որ ձեռք բերեց այդ դիվանագիտական հանձնախումբը, այն էր, որ Կենսորինոսը կարթագենական նավահանգստի մուտքի մոտ կանգնեցրեց իր նավերը, որպեսզի ահաբեկված ժողովուրդը դյուրությամբ հնազանդվեր իր ճակատագրին...

Փողոցներում, դարպասների մոտ, քաղաքային պարսպապատերի վրա պատվիրակներին սպասում էր հոծախումբ ժողովուրդը։ Շատերը պատվիրակներին ընդառաջ վազեցին, քիչ էր մնում նրանց խեղդեին դարպասների մեջ, սակայն գերուսիականները լռելյայն շարունակեցին իրենց ճանապարհը։ Նրանք պարտավոր էին ամենից առաջ խորհրդին հայտնել հռոմայեցիների պահանջների մասին (Ապպ., Լիբ., 91, հմմտ. Դիոդորոսի մոտ, 32, 6, 5)։

Գերուսիականների մոայլ դեմքերից, ըստ այնմ, թե ինչպես էին նրանք ձեռքերը կարկառում դեպի աստվածները և բռունցքներով հարվածում իրենց գլուխներին, մարդիկ կռահեցին, որ ինչ-որ սարսափելի բան է տեղի ունեցել։ Խորհրդի շենքի առջև անհամբեր սպասման մեջ խռնված էր ժողովուրդը։ Հանկարծ սարսափելի լացուկոծ լսեցին, խուժեցին ներս, և... սկսվեց հուսահատության հիրավի խելահեղ տեսարան։ Ոմանք նետվում էին գուժաբերների վրա, ուրիշներն սպանում նրանց, ովքեր առաջարկում էին պատանդներ տալ և հանձնել զենքը, ոմանք էլ ցրվելով փողոցներում, կոտորում էին պատահականորեն քաղաքում գտնվող իտալիկներին։ Մեկը վազում էր դեպի տաճարները, մյուսը՝ ամայացած զինանոցները, մի ուրիշը՝ նավաշինարաններն ու նավակայանները (Պոլիբիոս, 36, 7, 3—5, Ապպ., Լիբ., 92, Զոնարաս, 9, 26)։ Եվ

միայն քչերը, որ պահպանել էին սթափ մտածելու կարողությունը, փախեցին դարպասները և սկսեցին քարեր տեղափոխել պարիսպների վրա։

Խորհուրդը, որտեղ այս անգամ վերջնականապես գերակշռություն էին ձեռք բերել դեմոկրատները, որոշեց մարտնչել։ Նրա առաջին միջոցառումը ստրուկներին ազատելն էր. վերջիններիս այդպիսով կարելի էր ընդգրկել զորքի մեջ (հմմտ. նաև Զոնարասի մոտ, 9, 26)։ Խորհուրդը քաղաքի պարիսպներից դուրս գործող զինված ուժերի հրամանատար ընտրեց Հասդրուբալին, որը բոլորովին վերջերս մահապատժի էր դատապարտվել։ Նրան խնդրեցին անհիշաչար լինել, երբ հայրենիքը ծայրահեղ վտանգի մեջ է գտնվում։ Հասդրուբալն իր տրամադրության տակ արդեն ուներ 20 հազար զինվոր։ Քաղաքի պարիսպների պաշտպանության համար նախատեսված մյուս բանակի կազմակերպումը հանձնարարեցին Մասանասայի թոռանը (աղջկա դծով)՝ Հասդրուբալին։ Միաժամանակ խորհուրդը դիմեց հռոմեական հրամանատարությանը՝ 30 օրյա զինադադարի վերաբերյալ խնդրանքով, որպեսզի հնարավորություն ունենա նոր պատվիրակություն ուղարկելու Հռոմ, բայց մերժում ստացավ (Ապպ., Լիբ., 93)։

Կարթագենցիները, որոնք լի էին ամեն ինչ կրելու վճռականությամբ, միայն թե չհեռանային հայրենիքից, պատրաստվեցին մաքառման։ Պետական և տաճարային բոլոր պիտավայրերը, բոլոր ընդարձակ ու հարմարավետ շենքերը նրանք վերածեցին արհեստավորական գործանոցների, որտեղ առանց դադարի, զոր ու գիշեր աշխատում էին տղամարդիկ ու կանայք։ Նրանք յուրաքանչյուր օր պատրաստում էին շուրջ 100 (ըստ Ստրաբոնի, 140) վահան, 300 սուր, 1000 սլաք բարձունների համար, 500 տեգ և նիզակ, ինչպես նաև հնարավորին չափ բարձուններ։ Թոկերը հյուսում էին կանացի մազերից։ Նավերի կառուցման համար վերածուլում էին պղնձե արձանները և հասարակական ու մասնավոր շենքերից վերցնում փայտյա հենաններ։ Ոչ ոք չէր խուսափում այդ աշխատանքից (Ապպ., Լիբ., 93, Ստրաբոն, 17, 3, 15, Դիոն Կասս., Տրագմ., 71, Օրոսիոս, 4, 23, 4)։ Կանայք իրենց ունեցած ոսկյա ամբողջ զարդանքը տալիս էին զենքեր և պարենամթերք գնելու համար (Դիոդորոս 32, 9)։

Մինչդեռ կոնսուլները հապաղում էին։ Նրանք, ըստ երևույթին, հույս ունեին, որ ցանկալի պահին, առանց հատուկ դժվարության, կկարողանան գրավել անգեն քաղաքը, իսկ զուցե նաև մի տեսակ չէին համարձակվում իրենց զինվորներին մատնել նրա պարիսպներին։ Բացառված չէ, որ նրանք հույսները դրել էին Կարթագենի անձնատրության վրա։ Եվ բացի այդ, հռոմայեցիների մոտ անախորժություններ ծագեցին Մասանասայի հետ, որը, առանց որևէ խանգարման, տեսնում էր, թե դաշնակիցներն ինչպես են իր քթի տակից հափշտակում շատ հարուստ ռազմավարը։ Նա թեպետ վերջիվերջո առաջարկեց իր օգնությունը, սակայն կոնսուլները պատասխանեցին, որ նրան կդիմեն անհրաժեշտության դեպքում (Ապպ., Լիբ., 94)։ Միայն մի քանի օր Մասանասայի հետ բանակցություններ վարելուց և պարենամթերքի մատակարարման համար հոգ տանելուց հետո կոնսուլները վերջապես մոտեցան Կարթագենին և փորձեցին գրոհով գրավել այն։

Մանիլիոսը շարժվում էր Կարթագենը մայր ցամաքի հետ միացնող պարանոցով, հույս ունենալով, որ կկարողանա լցնել այնտեղի խրամատները և նախ գրավել առջևում եղած ոչ մեծ ամրությունը, իսկ այնուհետև նաև պարիսպները։ Կենսորինոսը ցամաքից և ծովից աստիճաններ կացրեց դեպի պարսպի թույլ ամրացված անկյունը։ Սակայն հռոմայեցիները, հանդիպելով դիմադրության, որին նրանք չէին սպասում, նահանջեցին։ Մարտի ընթացքում թիկունքից մոտեցավ Հասդրուբալը և բանակեց ճահճի այն կողմում։ Հանկարծակի հարձակումից երկյուղ կրելով, կոնսուլներն սկսեցին ամրացնել սեփական ճամբարները (Ապպ., Լիբ., 97)։ Այդ աշխատանքն ավարտելուց հետո Կենսորինոսը ճահճի միջով մեկնեց փայտանյութ բերելու, պաշարողական մեքենաներ կառուցելու համար. այնտեղ նրա վրա հարձակվեց պունիկյան հեծելաջոկատի գլուխ անցած Համիլկար (Ապպիանոսի մոտ՝ Հիմիլկոն) Փամեան։ Կատաղի մարտում հռոմայեցիները կորցրեցին 500 մարդ, բայց Կենսորինոսն այնուամենայնիվ փայտեղեն ձեռք բերեց, և նրա հրամանով հռոմեական ճամբարում պատրաստեցին նոր աստիճաններ ու պաշարողական մեքենաներ։ Հռոմայեցիները վերստին գրոհի դիմեցին քաղաքի վրա և դարձյալ ետ նահանջեցին։ Մանիլիոսը պարանոցի կողմից քաղաքը գրավելու հույսը կտրեց (Ապպ., Լիբ., 97)։ Հռոմեական հրամանատարությունը մշակեց այլ պլան։

Ծովի մեջ խորը դուրս ցցված ցամաքալեզվակի երկարությամբ հողով լցնելով ճահճի մի մասը, Կենսորինոսը պարսպին մոտեցրեց երկու մեծ խոյ։ Դրանց շնորհիվ պարսպապատի մի մասը փլվեց, և արդեն կարելի էր տեսնել քաղաքի տներն ու փողոցները։ Բայց Կարթագենցիները նետվեցին դեպի ճեղքը և, հակառակորդին ետ մղելով, դիշերը փութով ձեռնամուխ եղան պարիսպը փակելու։ Նրանց մի մասը՝ զինված և անզեն, ձեռքներին միայն ջահեր բռնած՝ քաղաքի պարիսպներից դուրս եկան և այրեցին կամ փչացրեցին մեքենաները։ Առավոտյան ճեղքվածքի մոտ նոր ճակատամարտ սկսվեց։ Հռոմայեցիները փորձում էին թափանցել քաղաք։ Կարթագենցիները նրանց հակադրեցին

հայտ է։ Էմիլիանոսն ամեն ինչ անում էր, որպեսզի առավելագույն շափով թուլացնի Նումիդիական թագավորությունը և նրան ավելի ամուր կապի Հռոմին։ Նա թագավորական պատվատիտղոսը դարձրեց, ինչպես Ապպիանոսն է ասում, բոլոր երեք հավակնորդների՝ Միկիպսայի, Գուլուսայի և Մաստանաբալի ընդհանուր սեփականությունը. ընդ որում Միկիպսային նա ի տիրություն տվեց Կիրտան և թագավորական արքունիքը, այսինքն՝ ձևականորեն դերագույն իշխանությունը, Գուլուսային վերապահեց պատերազմ վարելն ու հաշտություն կնքելը և, հետևաբար, նաև զորքի հրամանատարությունը, իսկ Մաստանաբալին՝ հպատակների նկատմամբ դատաստանական իշխանությունը, այսինքն՝ քաղաքացիական կառավարությունը (Ապպ., Լիբ., 105—106, Լիվիոս, Կոդ., 50, Զոնարաս, 9, 27)[188]։ Այս որոշումը նրանցից յուրաքանչյուրին զրկում էր անհրաժեշտ լիիշխանությունից (հատկապես զավեշտական տեսարան պետք է ներկայացներ Միկիպսան, որը զրկված էր իրական իրավազորություններից) և հող էր նախապատրաստում հեռավոր ապագայում Նումիդիական արքայական անդամների միջև երկպառակությունների առաջացման համար։ Սակայն դա Էմիլիանոսին թույլ տվեց Գալուսայի հեծելազորայիններին բերելու հռոմեական ճամբար և նրանց ուղարկելու Փամեայի դեմ պատերազմի (Ապպ., Լիբ., 107)[189]։

Սակայն հարկ չեղավ նրա դեմ երկար պատերազմել։ Էմիլիանոսը առիթը գտավ Փամեայի հետ անձնական բանակցությունների մեջ մտնելու համար, նրան առաջարկեց փրկել իր անձը (քանի որ նա չէր կարող փրկել պետությունը) և ներում ու շնորհապարտություն խոստացավ հռոմայեցիների կողմից։ Փամեան, որն, ըստ երևույթին, կասկածամտորեն էր գնահատում Կարթագենի դիմադրության հեռանկարները, բայց չէր կամենում Էմիլիանոսի խոստումների նկատմամբ ցույց տալ իր շահագրգռվածությունը, ասաց, որ լավ կմտածի նրա ասածի մասին և ժամանակին կտեղեկացնի (նույն տեղը)։ Մինչդեռ Մանիլիոսը վերստին շարժվեց Նեփերիսի կողմը, Հասդրուբալի դեմ և բանակեց այնտեղ, սակայն նախկինի պես չկարողացավ հաջողության հասնել։ Ճիշտ այդ պահին Էմիլիանոսը տեղեկություն ստացավ Փամեայից, որն իր ջոկատի մի մասով (մնացածների դավաճանությանը խանգարեց Հաննոն Սպիտակը) անցել էր հռոմայեցիների կողմը (Ապպ., Լիբ., 108, Դիոդորոս, 32, 17, 1, Լիվիոս, Կոդ., 50, Զոնարաս, 9, 27)։ Այժմ Մանիլիոսը հնարավոր համարեց նահանջել դեպի իր հիմնական ճամբարը (Ապպ., Լիբ., 109)։

Այնտեղ նրան արդեն սպասում էր նոր կոնսուլը՝ Լուկիոս Կալպուրնիոս Պիսոն Կեսոնիոսը, որին սենատը հանձնարարել էր ղեկավարել աֆրիկյան պատերազմը։ Նավատորմի հրամանատար էին նշանակել

Լուկիոս Գոստիլիոս Մանկինոսին։ Մանիլիոսը պետք է վերադառնար Հռոմ. նա այնտեղ ուղարկեց նաև Էմիլիանոսին՝ Փամեայի հետ։ Սենատը առատաձեռնությամբ պարգևատրեց Փամեային, նրա դավաճանության համար, շնորհելով ոսկյա ճարմանդով ծիրանագեստ, ոսկյա հեծելասարքով ձի, լրիվ սպառազինություն և 10 հազար դրախմ։ Նրան ավելին խոստացան, եթե նա հետագայում ևս օգներ հռոմայեցիներին։ Փամեան իր հերթին ոչ վաղուցվա թշնամիներին հավաստիացրեց իր նվիրվածությունը և, ոգևորված իր առջև բացված փայլուն հեռանկարներով, վերադարձավ Աֆրիկա, հռոմեական զորաճամբար (նույն տեղը)։

148 թվականի պատերազմը Պիսոնն սկսեց աֆրիկական քաղաքների վրա կատարած գրոհներով։ Նրան չհաջողվեց գրավել Ասպիդան, բայց նա տիրացավ մի ինչ-որ այլ կետի, որի անունը աղբյուրը չի հիշատակում, իսկ այնուհետև մոտեցավ Հիպոն Դիարիումին և ապարդյուն կերպով այն պաշարեց ամբողջ ամռան ընթացքում։ Կորցնելով պաշարողական բոլոր սարքերը, Պիսոնը հեռացավ Ուտիկե՝ ձմեռային բնակարանները (Ապպ., Լիբ., 110, Զոնարաս, 9, 29)։

Ռազմական գործողությունների այսպիսի ընթացքը, բնականաբար, Կարթագենի դեմոկրատական կառավարությանը վստահություն էր ներշնչում իր ուժերի, և հույս՝ հաղթանակի նկատմամբ, մանավանդ որ Գուլուսայի մոտից փախչելով, Հասդրուբալին միացավ Նումիդիացի Բիտիան՝ 800 հեծյալով, իսկ Միկիպսան ու Մաստանաբալը բոլորովին էլ չէին շտապում օգնել հռոմայեցիներին (Ապպ., Լիբ., 111)։

Այս պայմաններում պունիկյան խորհուրդը դիվանագիտական եռանդուն աշխատանք ծավալեց, փորձելով հակահռոմեական նոր միություն ստեղծել։ Նրա դեսպանները այդ եռուն ժամանակաշրջանում եղան թե՛ Նումիդացիների և թե՛ Կեղծ Փիլիպոսի մոտ։ Կարթագենցիները վերբստին, մի տեղում ուժով, իսկ այլուր համոզելով՝ տիրացան գրեթե բոլանդակ Լիբիային (նույն տեղը)։

Բուն Կարթագենում վերսկսվեց և շափազանց սուր ձևեր ընդունեց իշխանության համար մղվող պայքարը, այս անգամ արդեն՝ դեմոկրատական կուսակցության ներսում։ Խորհրդի նիստերից մեկում Հասդրուբալը քաղաքի կայազորի պետ Հասդրուբալին՝ Մասանասայի թոռանը, հանկարծ մեղադրեց այն բանում, որ նա փաստորեն օժանդակում է իր հորեղբայր Գուլուսային։ Մեղադրվողը շփոթության մեջ անգիտացավ որևէ բան պատասխանել, և խորհրդի անդամները տեղնուտեղը նստատեղերով ծեծամահ արեցին նրան[190]։ Կարթագենական ամբողջ զորքը դրվեց Հասդրուբալի հրամանատարության տակ (Ապպ., Լիբ., 111, Օրոսիոս, 4, 22, 8)։ Ամեն ինչ ընթացավ նախկին հունով։

Պոլիբիոսը (38, 2, 7—12, հմմտ. 38, 1, 1) Հասդրուբալին, որպես զորավարի և պետական գործչի, պարզապես որպես մարդու, խիստ բացասական գնահատական է տալիս։ Նրա նկարագրության մեջ կարթագենյան հրամանատարը հանդես է գալիս սնափառ երկչոտի կերպարով, որն իր որովայնը լցնում է կերակրով այն ժամանակ, երբ իր համաքաղաքացիները սովամահ են լինում, և ընդունակ է լոկ պարծենկոտ ճառերի, սակայն բնավ էլ ո՛չ իսկական հերոսական արարքների։ Այս նկարագրության մեջ հասկանալի շափազանցությունները ակնհայտորեն շատ են։ Այդուհանդերձ, միակ հաջողությունը, որ Հասդրուբալը կարող էր ներկայացնել իբրև իր արժանիք, դա Նեփերիսի մոտ Մանիլիոսի դեմ ուղղված գործողություններն էին։ Հասդրուբալի՝ Մասանասայի թոռան, ողբերգական կործանումը նրա մեջ բացահայտեց իշխանատենչ դեմագոգին և բանսարկուին։

Մշտական անհաջողությունները թե՛ տագնապ և թե՛ անվստահություն էին ներշնչում Հռոմում բոլոր այդ Կենսորինոսների, Մանիլիոսների, Պիսոնների նկատմամբ, որոնք ապաշնորհ կերպով ձգձգում էին պատերազմը։ Մագիստրատների հերթական ընտրությունները, որոնք ընթացան ներքաղաքական սուր պայքարի պայմաններում, վերջացան դեմոկրատական շրջանների և Սկիպիոնների (որոնց պաշտպանում էին այդ շրջանները) պատկառելի հաղթանակով։ 147 թվականի համար կոնսուլներից մեկն ընտրեցին Սկիպիոն Էմիլիանոսին, թեև նա նույնիսկ չէր հասել այն տարիքին, որը նրան թույլ կտար հավակնել այդպիսի պաշտոնի, և իր թեկնածությունը առաջադրել էր ընդամենը միայն էդիլության համար (Նշան., 53, 5, Եվտրոպիոս, 4, 12, Դիոդորոս, 32, 9ա, Լիվիոս, Կոդ., 49, Զոնարաս, 9, 29) և դեռ անհրաժեշտ ռազմավարչական կարիերա չէր արել։ Այստեղ, իհարկե, վճռորոշ դեր խաղացին նրա անունը և համընդհանուր համոզվածությունն այն բանում, որ միայն նա կարող էր հաղթականորեն ավարտել պատերազմը և կործանել Կարթագենը։ Պատմությունը կրկնվում էր. կոնսուլները համառորեն մատնացույց էին անում այդպիսի ընտրության անթույլատրելիությունը (սրա տակ, անկասկած, հետամտվում էին հակասկիպիոնական կուսակցության գործողությունները սենատում (հմմտ. Լիվիոսի մոտ, Կոդ., 50), սակայն ժողովրդական ժողովի (որտեղ հույժ գործուն դեր էին խաղում ժողովրդական տրիբունները) ճնշման տակ սենատը հարկադրված եղավ զիջել։ Ժողովրդական ժողովի մեկ այլ որոշմամբ, հակառակ կոնսուլ Մարկոս Լիվիոս Դրուզոսի առարկությանը (վերջինս վիճակահանություն էր պահանջում), Աֆրիկայում մղվող պատերազմը հանձնարարվեց Էմիլիանոսին (Ապպ., Լիբ., 112)։

Օրբ Էմիլիանոսը, որպես արդեն կոնսուլ և հռոմեական զորահրամանատար, ժամանեց Ուտիկե, իր հետևակային զորամասերին գտավ Աֆրիկական մի քանի քաղաքներ պաշարելիս, իսկ նավատորմը՝ Կարթագենը գրոհելիս։ Զախողվեց քաղաք ներթափանցելու՝ Մանկինոսի փորթագենը գրոհելիս։ Զախողվեց քաղաք ներթափանցելու՝ Մանկինոսի փորձը, և միայն Էմիլիանոսի կողմից ժամանակին ուղարկված լրացուցիչ նավերը նրա դեսանտին փրկեցին կործանումից (Ապպ., Լիբ., 113—114)։

Հավանաբար Էմիլիանոսի համար սկզբից ևեթ պարզ էր, որ ինքը, մանավանդ տեսանելի ապագայում, չէր կարող հետևել Մանիլիոս Պիսոնի ռազմավարական գծին, գրավել Կարթագենը։ Հատկապես այդ պատճառով Էմիլիանոսը արմատական փոփոխության ենթարկեց պատերազմի ամբողջ ըմբռնումը և ուշադրությունը գլխավորապես բևեռեց Կարթագենի պաշարման վրա, ճամբարելով քաղաքի մատույցների մոտ։ Հռոմայեցիների անմիջական մերձակայքում, քաղաքի պարիսպներից 5 ասպարեզ (մոտավորապես 1 կմ) հեռավորության վրա ճամբար դրեցին նաև կարթագենցիները։ Այնտեղ ժամանեց Հասդրուբալը և պունիկյան հեծելազորի պետ Բիտիան (Ապպ., Լիբ., 114)։ Ամենայն հավանականությամբ, Էմիլիանոսը ինչ-որ միջոցառումներ ձեռնարկեց նաև զինվորական կարգապահության ամրապնդման ուղղությամբ (Ապպ., Լիբ., 115—117), թեև մենք չգիտենք նույնիսկ, թե այս անցքի մասին եղած պատմությունը որչափ է արտացոլում օբյեկտիվ իրականությունը և որքանով է այն թելադրված նոր զորավարին համակրող ավանդության հասկանալի ցանկությամբ՝ նրան հակադրել Պիսոնին, Մանիլիոսին և Կենսորինոսին։

Էմիլիանոսն իր առաջին գրոհն ուղղեց Մեգարայի՝ քաղաքի պարբերապատված հյուսիսային ծայրամասի դեմ։ Հարվածը հասցվեց գիշերը, երկու զորաթևերով։ Պաշտպանական կառույցները գրոհով հաղթահարելու փորձը չհաջողվեց, և այն ժամանակ Էմիլիանոսն ուղարկեց պատանիների ջոկատը, այն նպատակով, որ նրանք բարձրանային կարթագենական ամրությունների մոտակայքում գտնվող աշտարակը։ Այնտեղից զինվորները փոխադրվեցին պարսպապատի վրա, վայր ցատկեցին փողոցների մեջ և, կոտրելով ոչ մեծ դարպասները, ներս թողեցին Էմիլիանոսին։ Կարթագենցիները իրարանցման մեջ նետվեցին դեպի Բիրսա, սակայն հռոմեական հրամանատարը նույնպես վճռեց չպահել Միգարան. բանջարանոցներով ու այգիներով, ծառերով ու թփուտներով պատված, բոլոր ուղղություններով ոռոգման ջրանցքներով կտրատված այդ շրջանը խիստ անհարմար էր մարտ վարելու համար։ Էմիլիանոսը ետ նահանջեց (Ապպ., Լիբ., 117) (Զոնարասը (9, 29) Մեգարայում կատարված այս գործողությունները վերագրում է Մանկինոսին)։

Չնայած Մեդարայից հռոմեական ջոկատների նահանջին, Էմիլիանոսի հաջողությունը չափազանց բազմանշանակ էր։ Հռոմայեցիներն առաջին անգամ ներխուժեցին Կարթագենի տարածքը, նրանք, թվում էր թե, կարողացան հաղթահարել անառիկ պարիսպները։ Եվ Հասդրուբալը, անշուշտ իր համաքաղաքացիների «տրամադրությունը բարձրացնելու» համար, նաև, ինչպես արդարացիորեն նկատում է Ապպիանոսը, որպեսզի բացառի հաշտության ամեն մի հնարավորություն, Էմիլիանոսի գործողություններին պատասխանեց անիմաստորեն դաժան արարքով։ Նրա հրամանով, պարիսպների վրա, որպեսզի թշնամիները լավ տեսնեին, հանեցին հռոմեական գերեվարված զինվորներին և նրանց ենթարկեցին ամեն տեսակ խոշտանգումների. հանում էին աչքերը, հատում լեզուն, ձիերը, սեռական օրգանները, կտրում ոտքի ներբաններին, մատները, բերթելով հանում մաշկը։ Մահացողներին ցած էին նետում պարիսպներից ու ժայռերից[191]։ Սակայն նա հակառակ արդյունքի հասավ։ Անմարդկային հաշվեհարդարը ոչ միայն գազազեցրեց հռոմայեցիներին. այն վրդովմունք առաջացրեց նաև բուն Կարթագենում։ Զայրացած էին նաև խորհրդի անդամները, որոնք կամենում էին փրկության գոնե մի ինչ-որ հույս պահպանել։ Հասդրուբալը ուժով ճնշեց դիմադրությունը, դժգոհներից ինչ-որ մեկը կյանքով հատուցեց իր ելույթների համար։ Կարթագենում վերջնականապես հաստատվեց զինվորական դիկտատուրա (Ապպ., Լիբ., 118, հմմտ. Պոլիբիոսի մոտ, 38, 2, 12—13)։

Հասդրուբալի անգործությունը Էմիլիանոսին թույլ տվեց, առանց հատուկ դժվարության գրավելու նաև քաղաքի պարսպից դուրս գտնվող կարթագենական ճամբարը, իսկ այնուհետև պարանոցի լայնությամբ երկու փոս փորել, դրանք անցկացնելով մի ծովից մյուսը և այդպիսով Կարթագենը կտրել մայր ցամաքից։ Երկու զորաթևերի մոտակայքից նույնպես փոսեր փորեց։ Այնուհետև նա այդ քառանկյունին շրջապատեց այուներով ու ցցապատնեշներով և, վերջապես, դեպի Կարթագեն դարձած կողմում կառուցեց հզոր պարիսպ։ Այդպես ստեղծվեց ամրոցը, որի մեջտեղում Էմիլիանոսը կանգնեցրեց քարակերտ բարձր աշտարակ, իսկ նրա վրա՝ չորս հարկից բաղկացած փայտաշեն աշտարակ։ Այժմ նա կարող էր հետևել այն ամենին, ինչ տեղի էր ունենում Կարթագենում (Ապպ., Լիբ., 119)։

Նույն այդ ժամանակ հուսահատությունը Հասդրուբալին բոլորովին անհավատալի քայլ թելադրեց. նա փորձեց Գուլուսայի միջոցով բանակցություններ սկսել Էմիլիանոսի հետ, խնդրելով խնայել Կարթագենը և համաձայնվելով կատարել ցանկացած պահանջ։ Էմիլիանոսն սկզբում հույժ բացասաբար արձագանքեց և միայն Գուլուսայի ազդեցության տակ (վերջինս նախազգուշացրեց, որ հաջորդ տարի սենատը կարող է նոր կոնսուլներ ուղարկել, ուստի անհրաժեշտ է շտապել) համաձայնվեց Հասդրուբալին, նրա ընտանիքին և նրա մերձավոր տասը ընտանիքների երաշխավորել կյանք և իրենց հետ 10 տաղանդ դրամ ունենալու իրավունք, կամ իրենց բոլոր ստրուկներին հետները տանելու հնարավորություն (ըստ Դիոդորոսի, նաև 100 ստրուկների)։ Հասդրուբալը հրաժարվեց այդպիսի պայմաններ ընդունելուց (Պոլիբիոս, 38, 1, 1—2, 9, Դիոդորոս, 32, 22)։

Մինչ ընթանում էին բանակցությունները, Էմիլիանոսն իրականացրեց ևս մի կարևոր գործողություն. հռոմայեցիները կառուցեցին քարե ամբարտակ, որը պետք է փակեր Կարթագենից դեպի բաց ծով տանող բոլոր ելքերը (Ապպ., Լիբ., 121)։

Այդ աշխատանքի հաջող ավարտումը պետք է լիովին շրջափակեր պաշարված քաղաքը, և պունիկացիներն սկսեցին փութապես ու խիստ գաղտնորեն փորել նոր ջրանցք, որը կարթագենական նավահանգիստները պետք է կապեր Միջերկրական ծովի հետ։ Հենց նույն ժամանակ նրանք ձեռնամուխ եղան նոր նավերի կառուցմանը, և մի գեղեցիկ օր, բավական շատ զարմացնելով հռոմայեցիներին, նավահանգստից դուրս եկավ նավատորմը՝ բաղկացած 50 տրիերայից և բազմաթիվ փոքր նավերից (նույն տեղը)։ Այս դեպքից հետո, երրորդ օրը ծովային մարտ տեղի ունեցավ։

Մարտը շարունակվեց մինչև արևամուտ. կողմերից ոչ մեկը փոքր իսկ շոշափելի առավելության չհասավ, և կարթագենցիները վճռեցին նահանջել։ Սակայն մարտը վերսկսվեց նավահանգստի մուտքի մոտ, որտեղ պունիկյան փոքր նավերը փակել էին հենց իրենց խոշոր նավերի ճանապարհը։ Այս անգամ հռոմայեցիները խոյերի հարվածներով շարքից հանեցին և ոչնչացրին կարթագենական նավատորմի մեծ մասը (Ապպ., Լիբ., 122—123)։ Այդպիսով ծովային շրջափակումը ճեղքելու կարթագենցիների հուսահատ փորձը անհաջողությամբ վերջացավ։

Տանելով այդ կարևոր հաղթանակը, Էմիլիանոսը վճռեց գրավել հողապատնեշը, որտեղից նա կարող էր ուղղակի սպառնալիք ստեղծել նավակայանների համար։ Կարթագենցիները գիշերը ծովի կողմից շրջանցեցին հողաթումբը և հրկիզեցին հռոմայեցիների պաշարողական մեքենաները։ Հռոմայեցիները խուճապահար փախուստի դիմեցին, և կարթագենցիները հնարավորություն ստացան վերականգնելու թշնամու կողմից ավերված ամրությունը, նույնիսկ կառուցելու նոր աշտարակներ։ Սակայն վերջիվերջո Էմիլիանոսը այստեղ նույնպես ետ մղեց հակա-

ռակորդին, հողապատնեշը պաշտպանեց խրամափոսով և նրա վրա կառուցեց Կարթագենի պարիսպներին հավասար պարսպապատ՝ նրանից ոչ մեծ հեռավորության վրա (Ապպ., Լիբ., 125)։

Մոտենում էր ձմեռը, այն ժամանակը, երբ մարտերը սովորաբար դադարեցվում էին։ Էմիլիանոսը որոշեց այդ ժամանակն օգտագործել աֆրիկյան մայր ցամաքում պունիկյան բանակները ոչնչացնելու համար և ամենից առաջ, ճիշտ է դաժան մարտերից հետո, գրավեց Նեֆերիսը։ Ռազմական այդ գործողության մեջ վճռական դեր խաղաց Գուլուսան։ Դրանից հետո լիբիական բոլոր քաղաքները կա՛մ անցան հռոմայեցիների կողմը, կա՛մ առանց դժվարության գրավվեցին նրանց կողմից (Ապպ., Լիբ., 126, Լիվիոս, Կոդ., 51)։

146 թվականի գարունը գալուն պես, Էմիլիանոսը ձեռնամուխ եղավ Կոտոնի (Կարթագենի նավահանգիստներից մեկի) և Բիրսայի պաշարմանը։ Գիշերը Հասդրուբալը հրդեհեց Կոտոնի քառանկյունի մասը, սակայն դա Էմիլիանոսի ամենամերձավոր օգնականներից մեկին՝ Գայոս Լելիոս Սապիենսին, չխանգարեց տիրանալու նավահանգստի բոլորաձև մասին։ Գրավելով Կոտոնի շրջապարիսպը, Էմիլիանոսը տիրացավ նաև նրան հարող շուկայական հրապարակին։ Առաջին քայլը, որ կատարեցին քաղաք ներխուժած հռոմայեցիները, այն էր, որ նրանք նետվեցին կողոպտելու կրակի ասված Ռեշեֆի (որին հույները նույնացնում էին Ապոլլոնի հետ) տաճարը։ Հատկապես նրանց ուշադրությունը գրավում էր աստվածության ոսկեզօծ արձանը և ոսկյա թիթեղներով պատած որմնախորշը։ Քանի դեռ զինվորները ոսկին (1000 տաղանդ) չէին բաժանել միմյանց միջև, ոչ մի հրաման նրանց չէր կարող հարկադրել ավելի առաջ շարժվելու (Ապպ., Լիբ., 127)։

Կարթագենցիների դիմադրության հիմնական կենտրոնը և, անշուշտ, Էմիլիանոսի հիմնական նպատակը Բիրսան էր, որտեղ բոլոր կողմերից վազում էին մարդիկ։ Շուկայական հրապարակի կողմից դեպի Բիրսա ձգվելով, բարձրանում էր երեք փողոց, որոնք կառուցապատված էին վեցհարկանի բազմաթիվ տներով։ Յուրաքանչյուր տուն հռոմայեցիները պետք է վերցնեին գրոհով։ Մեկը գրավելուց հետո նրանք գերանների ու տախտակների վրայով վազանցում էին մյուսի տանիքը, և այնտեղ վերսկսվում էր կոտորածը։ Ներքևում, քաղաքի փողոցներում, կատաղի մարտեր էին տեղի ունենում։ Թե՛ գրոհողները և թե՛ քաղաքի պաշտպանները ոչնչանում էին ձեռնամարտերում, տակավին կենդանի ցած էին ընկնում տանիքներից, երբեմն՝ ուղղակի թշնամիների նիզակների վրա։ Վերջապես, հռոմայեցիները ճեղքելով հասան Բիրսայի պարիսպներին, և Էմիլիանոսը հրամայեց հրդեհել քաղաքը, ավերել տները՝ անցումները

մաքրելու համար (Ապպ., Լիբ., 129)։ «Դրա հետևանքով,— գրում է Ապպիանոսը (Լիբ., 129),— աղեխների ուրիշ տեսարան ստեղծվեց, քանի որ կրակն այրում էր ամեն ինչ, անցնում տնից տուն, իսկ մարդիկ ոչ թե ամենաճանաչաբար էին շենքերն ընտրում, այլ, միանգամից վրա պրծնելով, դրանք փուլ էին ածում։ Դրանից դղրդյունն ավելի էր ուժեղանում, և քարերի հետ միասին, թե՛ ողջերը և թե՛ մեռածները՝ մեծ մասամբ ծերունիներ, կանայք ու երեխաներ, որոնք թաքնվել էին տների մեկուսի անկյուններում, միմյանց ետևից վայր էին թափվում փողոցների մեջ։ Ոմանք վիրավորված, ուրիշները կիսովին այրված՝ սահմռկեցուցիչ ճիչեր էին արձակում։ Իսկ ոմանք էլ, այդպիսի բարձրությունից քարերի ու այրվող հեծանների հետ միասին ցած նետվելով ու վայր ընկնելով, ահավոր տանջանքներ էին կրում, կոտրում ոսկորները, ստանալով մահացու ջարդվածքներ։ Սակայն դրանով չէին վերջանում նրանց տառապանքները. քարեր հավաքողները, որոնք կացիններով, սակրերով և կեռերով շարշ էին տալիս ընկածներին և ճանապարհ մաքրում վագանցող զինվորների համար, ոմանք կացիններով ու սակրերով, ուրիշները կեռերի սուր ծայրերով, թե՛ մեռածներին, թե՛ տակավին ողջ մնացածներին նետում էին փոսերի մեջ, երկաթով քարշելով և շուռ տալով նրանց որպես դերաններ ու քարեր։ Մարդիկ աղբի պես լցվում էին փոսերը։ Գցվածներից ոմանք գլխիվայր էին ընկնում, և նրանց ոտքերը, գետնից դուրս ցցվելով, դեռ երկար ժամանակ ցնցվում էին. ուրիշները ցած էին ընկնում ոտքերի վրա, և նրանց գլուխները գետնից դուրս էին մնում։ Արշավասույր ձիերը ոտքի կոխան էին անում նրանց դեմքերն ու գանգերը, ոչ թե այն պատճառով, որ հեծյալներն էին այդ կամենում, այլ շտապելուց։ Նույն այդ պատճառով այդպես էին վարվում նաև քարեր հավաքողները։ Պատերազմի ծանրությունը, հավատը մոտալուտ հաղթանակի նկատմամբ, զորքերի կատարած տեղաշարժը, մունետիկների բոլորին զգոնող փողերի աղաղակները, զինվորական ցենտուրիոնների, որոնք իրենց ջոկատներով փոխնիփոխ վազանցում էին մոտիկից,— այս ամենը շտապելու պատճառով բոլորին դարձնում էր խելացնոր և անտարբեր այն բանի հանդեպ, ինչին ականատես էին նրանք»։

Աղյուսալից խրախճանքը տևեց վեց օր։ Ի վերջո Բիրսայից Էմիլիանոսի մոտ ժամանեցին Էշմունի[192] տաճարի քրմերը, խնդրելով պահպանել նրանց կյանքը, ովքեր ցանկանում են դուրս գալ Բիրսայից։ Էմիլիանոսը համաձայնվեց։ Ավելի քան 50 հազար այր և կին (ըստ Օրոսիոսի (4, 23, 3)՝ 25 հազար կին և 30 հազար տղամարդ) դուրս եկան ամրոցից և տեղնուտեղը կալանքի տակ առնվեցին։ Նրանց ցիրուցան-ստրկություն էր

սպասում[193]։ Միայն 900 փախստական-հռոմայեցիներ վազեցին դեպի էշմունի տաճարը և այնտեղից շարունակեցին պայքարը։ Նրանց հետ միասին թաքնվեցին Հասդրուբալը, նրա կինը և երկու մանկահասակ զավակները (Ապպ., Լիբ., 130)։ Սակայն Հասդրուբալը չդիմացավ վերջին փորձությանը։ Կնոջից և էշմունի տաճարի պաշտպաններից գաղտնի, նա մեկնեց Էմիլիանոսի մոտ։ Ժամանակակիցներն ու սերունդները նրան հիշում էին խիստ ամոթալի դրության մեջ՝ հաղթողի ոտքերի մոտ նըստած և իրեն կյանք աղերսելիս։ Փախստականները, որոնց անխուսափելի հաշվեհարդար էր սպասում, հրկիզեցին տաճարը։ Նրա բոցերի մեջ ոչընչացավ Հասդրուբալի կինը, որը՝ ցնցված Էմիլիանոսի աչքերի առջև, մորթեց իր երեխաներին (Ապպ., Լիբ., 131, Պոլիբիոս, 39, 4, Լիվիոս, Կոդ., 51, Դիոդորս, 32, 23, Զոնարաս, 9, 30, Օրոսիոս, 4, 23, 1—5)[194]։

Էմիլիանոսը երկար նայեց բոցավառվող քաղաքին։ Նրա կողքին կանգնած էր Պոլիբիոսը՝ Աքայական միության երբեմնի ղեկավարներից մեկը, իսկ այժմ, 167 թ. հետո, այն 1000 պատանդներից մեկը, որը մերձավորություն ուներ Սկիպիոնների ընտանիքի հետ, իր ժամանակի խոշորագույն պատմագիրը։ Հանկարծ Պոլիբիոսը լսեց, որ իր հովանավորը և աշակերտը հիշում է Հոմերոսի հունարեն բանաստեղծները.

Երբ՝ կգա, երբ կավերվի Իլիոնը սուրբ, կկործանվի
Պերիամոսն ու նիզակավոր ժողովուրդը Պերիամոսի։

(«Իլիական», VI, 446—447, թարգմանությունը Հ. Համբարձումյանի)։

«Դրանով ինչ ես կամենում ասել»— հարցրեց Պոլիբիոսը։ «Լավ է,— պատասխանեց Էմիլիանոսը,— սակայն վախենում եմ, որ երբևիցե այդպիսի լուր կբերեն նաև Հռոմի մասին» (Պոլիբիոս, 39, 5, 1, Ապպ., Լիբ., 132, հմմտ. Դիոդորոսի մոտ (32—24), որտեղ այս միջադեպը փոքր-ինչ այլ կերպ է պատմվում)։

Մոայլ մտքերը կարճ ժամանակ անհանգստացրեցին հաղթողին. Գրավելով Կարթագենը, Էմիլիանոսը իր զինվորներին թույլ տվեց մի քանի օրվա ընթացքում ավարի մատնել քաղաքը։ Նրանց արգելվեց դպչել միայն ոսկուն, արծաթին և տաճարներին արված նվիրատվություններին։ Հաղթանակի լուրը տանելու համար նա ուղարկեց ամենաարագընթաց նավը, որը բեռնված էր հարուստ ռազմավարով։ Հռոմայեցիները ցնծության պոռթկումով դիմավորեցին այդ նորությունը։ Ամբողջ գիշեր ոչ ոք չպառկեց քնելու, իսկ առավոտյան զոհության զոհեր մատուցեցին, կազմակերպեցին շքերթներ ու խաղեր (Ապպ., Լիբ., 133—135)։

Նոր հողատիրություններ կազմակերպելու համար սենատը Էմիլիանոսի մոտ ուղարկեց տասը «հայրերից» բաղկացած հանձնաժողով։ Հռոմի դաշնակիցներին, ամենից առաջ Ուտիկեին, նրանք ընդարձակ երկրամաս տրամադրեցին առափնյա շրջանում, կարթագենական հողերի մի մասը տվեցին Նումիդիային, իսկ մնացածը վերածեցին հռոմեական պրովինցիայի, որին պետք է կառավարեր պրետորի աստիճան ունեցող մագիստրատը։ Հռոմայեցիները ոչնչացրեցին Կարթագենին օգնող քաղաքները, իսկ բուն Կարթագենի ավերակները տառացիորեն ջնջեցին երկրի երեսից։ Այն վայրը, որտեղ նա էր գտնվում, հերկվեց, նզովվեց և այլևս երբեք չբնակեցվեց (Ապպ., Լիբ., 135, Օրոսիոս, 4, 23, 6)։ Հռոմեական գաղութ Կարթագենը, որը մոտավորապես մեկհարյուր դար հետո, Հուլիոս Կեսարի կտակով հիմնեց Օգոստոսը, կառուցեցին մերձակայքում։

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ

Կարթագենի հուսահատ պաշտպանությունը՝ այն ժամանակվա միջերկրածովյան աշխարհում իրեն պահպանելու նրա վերջին փորձը, որն անվանում են Պունիկյան III պատերազմ, վերջնականապես հանրագումարի բերեց Հաննիբալի քաղաքական ու ռազմական ամբողջ գործունեությունը, նրա ողջ կյանքը։ Կարթագենը կործանվեց, քանի որ Հաննիբալը համառորեն ձգտում էր Հռոմը հասցնել կործանման եզրին, որովհետև սենատում երկյուղ էին կրում նոր Կաննեներից, «հավիտենական քաղաքի» դարպասների մոտ նոր Հաննիբալի հայտնվելուց։ Ցուրաքանչյուր փորձ, որի նպատակն է ապացուցել, որ իբր Հաննիբալը չէր ձգտում Հռոմի դեմ պատերազմի[195], իբրև թե նրա գործողությունները զուտ պաշտպանողական բնույթ ունեին[196], աղաղակող հակասության մեջ է մեր ձեռքի տակ եղած բոլոր նյութերի հետ։ Հարավային Իտալիայի ավերվելն ու մարդաթափ լինելը, անտարակույս, նաև նշանակալի չափով հետևանք էին այն պատերազմի, որը Հաննիբալը մղում էր Աֆրիկյան թերակղզում[197]։

Ինքնին հասկանալի է, որ իրագործելով հատկապես այդպիսի քաղաքականություն, Հաննիբալը կատարում էր Կարթագենի միանգամայն որոշակի հասարակական խմբավորումների՝ առևտրաարհեստագործական այն շրջանների սոցիալական պատվերը, որոնք կենսականորեն շահագրգռված էին Միջերկրածովյան ավազանում կարթագենական տիրապետության հաստատմամբ։ Սակայն Հաննիբալի անձնավորությունն, անկասկած, իր կնիքն էր թողնում իրադարձությունների ընթացքի վրա.

մի շարք դեպքերում նրա գործողությունները որոշում էին դրանց ուղղությունը։

Ինքյան հասկանալի է նաև մեկ այլ բան. ոչ միայն Կարթագենը, այլև նրա հակառակորդ Հռոմը մղում էին անարդարացի, ագրեսիվ, զավթողական պատերազմ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, խորհրդածելով այդ արյունահեղ սպանդի էության և բնույթի շուրջը, Վ. Ի. Լենինը քանիցս մտովի դիմում էր Պունիկյան պատերազմների դարաշրջանին. Ինեսսա Արմանդին ուղղված նամակներից մեկում նա նկատել է. «Պայքար գաղութների համար, շուկաների համար և այլն (Հռոմ և Կարթագեն...)։ Ըստ ընդհանուր կանոնի, այդ կարգի պատերազմը երկու կողմից էլ կողոպուտ է»[198]։ «Կուսակցական ծրագրի վերանայման շուրջը» իր աշխատության մեջ Վ. Ի. Լենինը գրում է. «Իմպերիալիստական պատերազմները եղել են և ստրկության հողի վրա (Հռոմի պատերազմը Կարթագենի հետ երկու կողմից էլ իմպերիալիստական պատերազմ էր)». և այնուհետև պարզաբանում է. «Չի կարելի իմպերիալիստական չանվանել ամեն մի պատերազմ, որի մեջ պատերազմող երկու կողմն էլ կեղեքում են ուրիշ երկրների կամ ժողովուրդներ, պատերազմելով ավարի բաժանման համար, այն բանի համար, թե «ով է ավելի շատ կեղեքելու կամ կողոպտելու»[199]։ Այս հույժ ճշմարտացի հավաստումները վերջնականապես և անվերապահորեն լուծում են հռոմեա-կարթագենական ընդհարման և՛ բնույթի և թե՛ նրա նախապատմառ հանդիսացողների վերաբերյալ հարցը։ Դրանք ավելորդ են դարձնում հենց այն խնդրի քննարկումը, թե Պունիկյան II պատերազմում ով է հանդես եկել ագրեսորի դերով։ Երկու կողմն էլ բացահայտորեն գործը հասցնում էին զինված պայքարի, և այդ իրադրության մեջ արդեն այնքան էլ կարևոր չէր, թե ով էր հասցնում առաջին հարվածը, թեև ինքնըստինքյան դա նույնպես զուրկ չէ հետաքրքրությունից։

Հաննիբալի (և ընդհանրապես Կարթագենի) պարտության ընդհանուր պատճառների, Հռոմի հաղթանակի ակունքների վերաբերյալ հարցը նույնպես թվում է, թե ընդհանուր առմամբ լուծված է։ Հռոմը հաղթեց, որքան էլ այդ տարօրինակ է հնչում, իր հետամնացության հետևանքով։ Գյուղացիների քաղաքացիական աշխարհազորը դրսևորեց ավելի բարձր մարտական հատկություններ, քան վարձկանների պրոֆեսիոնալ զորքը։ Հռոմեական զինվորները մարտնչում էին հանուն իրենց հայրենիքի, իրենց պետության շահերի, այսինքն՝ վերջին հաշվով, ինչպես իրենք էին այդ հասկանում, իրենց շահերի համար։ Պունիկյան վարձկանները աշխատանք էին կատարում լոկ միայն իրենց ոռճիկի համար և անձնապես անտարբեր էին պատերազմի ելքի նկատմամբ։ Հաղթեց Հռոմի պետա-

կան և զինվորական կազմակերպությունը, որը Հռոմին թույլ տվեց ավելի արդյունավետորեն, քան այդ անում էր Կարթագենը, մոբիլիզացնելու իր միջոցները։

Այս նկատառումներն այնուամենայնիվ չեն սպառում ամբողջ խնդիրը։ Օրինակ, դրանք չեն բացատրում, թե ինչու Տիկինոսից մինչև Կաննե ընկած ժամանակաշրջանում Հռոմը իրար ետևից սարսափելի պարտություններ էր կրում և գտնվում էր կործանման եզրին։ Դրանք չեն պարզաբանում նաև մեկ այլ բան. ինչո՞ւ հատկապես Կաննեից հետո բացարձակ բեկում սկսվեց հօգուտ Հռոմի։ Առաջ քաշված կարծիքների թերությունն ակնհայտորեն այն է, որ դրանք հաշվի չեն առնում այն մարդկանց գործողությունները, մտածելակերպը, ընդունակությունները, բնավորությունները, ովքեր, կանգնած լինելով իշխանության գլուխ, ղեկավարում էին պատմության ընթացքի վրա։ Իհարկե, նրանց անձնական հատկությունները զգալի չափով որոշվում էին դաստիարակությամբ և, հետևաբար, միջավայրով, դարաշրջանով և այլն։ Սակայն չէ որ միևնույն դարաշրջանը դաստիարակում է տարբեր մարդկանց, և բոլորովին էլ միևնույնը չէ, թե հատկապես ով է կանգնած իշխանության գլուխ կամ ով է բանակի հրամանատարը։ Հաննիբալի հաղթական երթը մինչև Կաննե վկայում է այն մասին, որ Հաննիբալը երևան բերեց զորավարական ավելի բարձր հատկություններ, քան նրա հակառակորդները։ Հռոմի հաղթանակն անշուշտ վկայում է այն մասին, որ Կաննեից հետո Հռոմեական կառավարության կողմից առաջ քաշված զորավարները մի գլխով բարձր դտնվեցին Հաննիբալից, ջլատեցին նրա գործողությունները և Կարթագենը հասցրեցին աղետի։

Կարելի է հավանական համարել, որ, ներխուժելով Իտալիա, Հաննիբալը հույս ուներ, ջախջախելով հռոմեական բանակը և Հռոմի դեմ հանելով բոլոր իտալիկներին, ոչնչացնել այն կամ գոնե հարկադրել անձնատուր լինելու։ Իրագործելով այս պլանը, Հաննիբալը տարավ մի քանի փայլուն հաղթանակ, որոնցում իրեն դրսևորեց որպես ականավոր մարտավար։ Նրա հիմնական միջոցը թևային հարվածն էր, հարվածը թիկունքից, հակառակորդի հրապուրումն ու շրջապատումը։ Ճիշտ է, Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը ցույց տվեց, որ պատերազմի վերջում Հաննիբալի մարտավարական տաղանդը խամրել էր. բնորոշ էր, որ նա չէր կարողանում հրաժարվել մարտական փղերն օգտագործելուց, թեև արդեն պարզ էր դարձել, որ հռոմայեցիները սովորել էին շուտ տալ այդ զենքը հենց իր դեմ։ Զախողվեց նաև Հաննիբալի ռազմավարական ծրագիրը։ Մեկը մյուսի ետևից ոչնչացնելով հռոմեական վիթխարի բանակները, Հռոմի դեմ պայքարի հանելով Իտալիայի

զգալի մասը, նա չհասավ վերջինիս անձնատրությանը և չհամարձակվեց դրոհել կամ պաշարել քաղաքը։ Հաննիբալը բացարձակապես պատրաստ չէր իրադարձությունների այդպիսի շրջադարձի և լիովին կորցրեց նախաձեռնությունը։ Մինչդեռ նրա հակառակորդները, այդ թվում Փաբիոս Մաքսիմոսը, Մարկելոսը, Սկիպիոնը, տաղանդավոր ռազմավարներ էին։ Նրանք բոլորը հարձակում էին կատարում պլանաչափորեն, Հաննիբալին պարտադրելով պատերազմի իրենց ըմբռնումը, որով և կարողացան հաղթել։

Իհարկե, լիովին օրինաչափ էր, որ Հաննիբալն այդպես սխալվեց իր հաշիվներում։ Պունիկյան զորավարն ի նկատի չէր ունենում հռոմեական ժողովրդին, մինչև վերջ մարտնչելու և հաղթելու նրա անսահման վճռականությունը. նկատի չէր առնում հատկապես այն պատճառով, որ դաստիարակությամբ, մտածելակերպով, ամեն ինչով վարձկան զինվորների տիպիկ առաջնորդ էր և նա ըստ ամենայնի լավ էր հասկանում միայն իր վարձկան զինվորին։ Նա, ըստ երևույթին, պարզապես չէր կարող պատկերացնել, թե բանակը ոչնչացնելուց հետո ինչպես է հնարավոր շարունակել պատերազմը, և հենց դրանով է բացատրվում նրա գործելակերպը Կաննեից, նաև Զամայից հետո։

Հաննիբալի, որպես մեծ զորավարի համբավն անշուշտ հիմնվում է նրա փայլուն հաղթանակների արդյունքների վրա, որոնց մեջ թե՛ ժամանակակիցների և թե՛ հեռավոր սերունդների վրա բացառիկ տպավորություն են թողել և այժմ էլ թողնում են Տրազիմենոսյան լճի և Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտերը։ Եվ դա զարմանալի չէ. ամենից առաջ այդտեղ Հաննիբալը հանդես եկավ նորարարի դերով, համարձակ կերպով խորտակեց ռազմական արվեստի հին կանոնները, ստեղծելով մարտ վարելու և հաղթանակի հասնելու նոր եղանակներ։ Դրանք իրենցով ծածկեցին հետագայում նրա կատարած բոլոր սխալ հաշիվները և անհաջողությունները։ Պատահական չէր, որ Նապոլեոնը բարձր գնահատական էր տալիս Հաննիբալի զորավարական վարպետությանը[200], խորհուրդ էր տալիս՝ Հաննիբալի նման հարձակողական պատերազմ վարել, «կարդալ և վերընթերցել» նրա արշավանքների պատմությունը, սեփական անձը ձևավորել ըստ նրա կերպարի»[201]։ Գերմանական հայտնի ռազմական տեսաբան Ա. ֆոն Շլիֆենի համար Կաննեն ռազմական արվեստի բարձրագույն նվաճումն էր։ Նա լիակշիռ Կաննե էր համարում ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Սեդանի տակ տեղի ունեցած ռազմական գործողությունը[202]։ Նրա տեսակետով այդքան «մեծ նպատակի» հասնելու համար անհրաժեշտ էր, որպեսզի մի կողմից բանակը գլխավորեր Հաննիբալի, իսկ մյուս կողմից՝ Վատոնի տիպի զորավար։

Սովետական ռազմական պատմաբան Ե. Ա. Ռազինը[203] սուր և հիմնավորված քննադատության ենթարկեց Ա. ֆոն Շլիֆենի ըմբռնումը, որը, ընդունելով Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտը որպես օրինակ, ժխտում էր ռազմական արվեստի զարգացման հնարավորությունները և մի կողմի գործողությունները կախման մեջ էր դնում նրա դեմ կանգնած հակառակորդից։ Առարկելով Կաննեի, Սեդանի և Ստալինգրադյան ճակատամարտի նույնացման դեմ, Ե. Ա. Ռազինը շեշտում էր, որ Կաննեն տակտիկական շրջապատում էր, Սեդանը՝ օպերատիվ, Ստալինգրադը՝ ստրատեգիական, որ բոլոր այս դեպքերում տարբեր էին շրջապատման միջոցները, գործողությունների ձևերն ու եղանակները։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը և թե՛ երրորդը, ամբողջությամբ վերցրած, պայմանավորված էին ռազմական տեխնիկայի, պայքարի միջոցների, զինվորական կազմակերպության և ողջ ռազմական արվեստի բարդացմամբ։

Համենայն դեպս, ռազմական արվեստի այնպիսի նշանավոր օրինակներից առաջինը (որպիսիք համարում են Սեդանն ու Ստալինգրադյան ճակատամարտը) հանդիսացել է Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, և այս հանգամանքն, անշուշտ, չի կարելի նկատի չառնել Հաննիբալի որպես զորավարի մասին խոսելիս։

Եթե խոսելու լինենք կարթագենական զորապետի նպատակների և դրանց իրագործման եղանակների մասին, ապա չի կարելի չընդունել, որ Հաննիբալն անկասկած կանգնած է միևնույն շարքում աթիլլաների, չինգիզ-խաների և ուրիշ նվաճողների հետ, որոնք հրով ու սրով իրենց տիրապետությունը հաստատում էին պարտված ժողովուրդների ոսկորների վրա։ Այդուհանդերձ նա շահել է մարդկանց համակրանքը. անտիկ գրականության մեջ կարելի է բավական չափով ջառագովական էջեր գտնել, որոնք նվիրված են Հաննիբալի առաքինությունների, այն ամենի գովաբանմանը, ինչը վերջիվերջո յուրատեսակ առասպել էր հյուսում այդ զորավարի շուրջը։ Դեռ ավելին. Դելփյան պատգամախոսը, նախազուշակելով հռոմայեցիների հաղթանակը, իրեն թույլ տվեց իր համակրանքն արտահայտելու հենց Հաննիբալի նկատմամբ. «Ամենավատթար այրերը նույնպես... հաղթում են լավագույնին» (Գլուտ., Գյութ., 11)։ Սակայն նրա գիրքավորումը թերևս բացատրվում էր նրանով, որ պատգամ տրվել էր Փիլիպոս V-ին, և նրա մեջ խոսք է գնացել հռոմեա-մակեդոնական պատերազմի հնարավոր հեռանկարների մասին։ Համակրելով Հաննիբալին, պատգամախոսը ձգտում էր Փիլիպոսին ետ պահել միջամտությունից։

Եթե վերանանք հռոմեական գենքի փառքը Հաննիբալի փառաբանմամբ մեծացնելու՝ հռոմեական պատմագրության հասկանալի միտում

մից, զորավարի բացառիկ ժողովրդականությունը, մասնավորաբար հունական միջավայրում, կարելի է բացատրել Հռոմի դեմ հետևողականորեն և առանց փոխզիջման նրա մղած պայքարով։ Հռոմեական տիրապետության հաստատման պայմաններում այդ պայքարն ընդունում էր ազատագրական շարժման կերպարանք, արթնացնելով ընդհանուր համակրանք։ Ընդ որում, ասես մոռանում էին, որ ինքը՝ Հաննիբալը ձգտում էր հաստատել կարթագենական տիրապետությունը...

Հաննիբալը ժամանակակիցների երևակայությունը շլացնում էր այն բանով, որ, Ալեքսանդր Մակեդոնացու պես, նրանց առջև հառնում էր որպես մարտական արիությունների կիզակետերոն։ Անհատապաշտության լինելիության դարաշրջանում նա առավել լիակատարությամբ իրեն դրսևորեց որպես քաղաքացիական կոլեկտիվից վերին աստիճանի անկախ անհատ. նա մեն-միայն, համենայն դեպս այդպես էր թվում, հակադրվեց ամբողջ հռոմեական ռազմաքաղաքական մեքենային և բազմիցս հասավ հաջողություններ։ Հաննիբալն իրեն դրսևորեց նաև որպես պրող և որպես մտածող։ Ճիշտ է, հունական փիլիսոփայության առջև խոնարհվելը նրան չէր խանգարում Եփեսոսում անողոքաբար բնութագրելու պերիպատետիկ Փորմիոնի աղքատամտությունը. վերջինս մեծահռչակ զորավարի ներկայությամբ համարձակվել էր իր մտքերն արտահայտելու զորապետի պարտականությունների և ռազմական արվեստի մասին (Ցից., Ճարտաս., 2, 13)։

...Պունիկյան զորավարի շուրջը եղած վեճերը վկայություն է, ինչ կորցրել են իրենց հրատապությունը։ Իր՝ Հաննիբալի, նրա բարեկամների ու թշնամիների ոսկորները փտել են հողում. աշխարհի վրա իշխելու համար երբեմնի մրցակիցները ոչնչացել են. արդեն չկան ո՛չ պունիկացիներ, ո՛չ էլ հռոմայեցիներ։ Ժամանակն այժմ թույլ է տալիս Հաննիբալի վրա հայացք նետելու ավելի քան 2000-ամյա հեռավորությունից։ Անխնա կերպով ջնջելով կարմիր ու սպիտակ դեյնի բոլոր շպարները, այն երևման է հանում «մեծ» նվաճողների (որոնք այնքան արյունոտ ոգեհեր են մատուցել միշտ անհագուրդ իրենց իշխանամոլությանը) գործունեության բուն շարժառիթները։ Մեծադղորդ խոսքերով սքողված մանր դիտավորություններ, մեծության մլտված մղումների ունայնություն, մարդկային տառապանքների, և հենց բուն մարդկային կյանքի նկատմամբ գոռոզաբարո քամահրանք, լպիրշ համոզվածություն ցանկացած ոճրագործությունը կատարելու իր իրավունքի մեջ, միայն թե հաջողություն ձեռք բերվեր... Անհագ իշխանատենչներ, բռնադատողներ և մարդասպաններ, ի վերջո որպես այդպիսիք են մնում նրանք մարդկության հիշողության մեջ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Այս մասին ավելի մանրամասն տե՛ս* И. Ш. Шифман. Возникновение Карфагенской державы, М.—Л., 1963 /*այսուհետև՝* И. Ш. Шифман. Возникновение.../:

[2] И. Ш. Шифман. Рабство в Карфагене, — Д. П. Каллистов, А. А. Нейхардт, И. Ш. Шифман, Н. А. Шишова. Рабство на периферии античного мира, Л., 1968 /*այսուհետև՝* И. Ш. Шифман. Рабство.../, с. 245—257.

[3] И. Ш. Шифман. К вопросу о значении термина «бод» в пунийских надписях. — «Эпиграфика Востока». Вып. XV, М.—Л., 1963, с. 17—23.

[4] H. Bengston. Zur Karthagischen Strategie.—«Aegyptus». Milano, 1952, էջ 158—162:

[5] И. Ш. Шифман. Возникновение... с. 65—66.

[6] St. Gsell. Histoire ancienne de l'Afrique du nord (*այսուհետև՝* St. Gsell, HAAN). Vol. II; И. Ш. Шифман. Рабство...

[7] *Տե՛ս* Н. Б. Янковская. Общинное самоуправление в Угарите (гарантии и структура). — ВДИ. 1963, էջ 35—55; F. Marrassini. Formazione del lessico dell' ediziae militare nel semitico de Siria. Firenze, 1971, էջ 111—114:

[8] И. Ш. Шифман. Рабство...

[9] *Կարթագենի պետական կառուցվածքի ընդհանուր բնութագիրը տե՛ս.* H. Lüdemann. Untersuchungen zur verfassungsgeschichte Karthagos. Bottrop, 1933; И. Ш. Шифман. Возникновение...

[10] St. Gsell. HAAN. Vol. 1, էջ 421:

[11] *Երբ Թ. Դոջը Կարթագենի քաղաքական այդ խմբակցությունն անվանում է «դեմոկրատական»* (Th. A. Dodge. Hannibal. Boston, *1891, էջ 143*), *այդ բնութագրումը լիովին հակասում է փաստերին. իրականում, ինչպես կտեսնենք առաջիկայում, հատկապես Կարթագենի դեմոկրատական շրջանները էին պաշտպանում էքսպանսիայի քաղաքականությունը և հանդես էին գալիս ընդդեմ խաղաղության։*

[12] I. Vezcoutter. Les objets égyptiens et égyptisants du mobilier funeraire de Carthage. P., 1945.

[13] W. Von Bissing. Karthago und seine griechische und italische Beziehungen. Studi etruschi. Vol. VII. Firenze, 1933; U. Kahrstedt. Phoenikischer Handel an der italischen westküste. Klio, 1912.

[14] И. Ш. Шифман. Возникновение... с. 73—76.

[15] U. Wilcken. Puntfahrten in der Ptolemäerzeit. — «Zeitschrift für Aegyptische Sprache und Altertumskunde» Bd. 60. Lpz; 1925, էջ 86—102:

[16] И. Ш. Шифман. К восстановлению одной истрийской надписи. — ВДИ. 1958, № 4, с. 118—121.

[17] Մինչև Պունիկյան պատերազմները Հռոմի մանրամասն պատմությունը տե՛ս. K. I. Beloch. Römische Geschichte bis zum Beginn der Punischen Krige. B., 1926; E. Pais. Storia di Roma durante i primi cinque secoli. Roma, 1913—1920. Vol. I—V; G. de Sanctis. Storia dei Romani. Vol. I—II. Torino, 1907; С. И. Ковалев. История Рима. Л. 1948; А. И. Немировский. История раннего Рима и Италии. Воронеж, 1962.

[18] M. Gelzer. Die Nobilität der Römischen Republik. Kleine Schriften. Bd. I. Wiesbaden, 1962, (այսուհետև՝ M. Gelzer. Die Nobilität...), էջ 18—135; H. H. Scullard. Roman Politics 220—150 B.C. Oxford, 1951 (այսուհետև՝ H. H. Scullard. Roman Politics...); F. Gassola. I gruppi politici romani nel III secolo A. C. Trieste, 1962 (այսուհետև՝ F. Gassola. I gruppi...).

[19] Հռոմի պետական կառուցվածքի մասին տես՝ Th. Mommsen. Römisches Staatsrecht. Bd. I—III. Lpz; 1887—1888; И. В. Нетушил. Очерк римских государственных древностей. Вып. I—III. Харьков, 1894—1902.

[20] Նյութը հավաքված է Մ. Գելցերի մոտ (M. Gelzer. Die Nobilität..., էջ 38—41)։ Համաձայնվելով Լ. Ա. Ելնիցկու կարծիքի հետ (Л. А. Ельницкий. Возникновение и развитие рабства в Риме вVIII—III в. в. М., 1964, с. 89—90), որը գրանում է, որ Կինկինատոսի և նրա նման անձնավորությունների կերպարներում իրենց արտացոլումն են գտել հասարակության տարբեր խավերի հավասարարական միտումները և ձգտումները, այնուամենայնիվ, մենք պետք է ի նկատի առնենք կենսական այն իրողությունները, որոնք սնուցանում էին այդ գաղափարը։

[21] Տես՝ Н. Михневич. История военного искусства. СПб., 1895, էջ 59—65; Е. А. Разин. История военного искусства. Т. I, М., 1955, с. 282—290.

[22] Համմ. սակայն Ա.Ալֆյոլդիի մոտ (A. Alföldi. Early Rome and the Latins. Ann Arbor, 1963, էջ 350—355), որի կարծիքով տվյալ տարվա կոնսուլների՝ Մ. Հորատիոսի և Լ. Յունիոս Բրուտոսի, անունները իրենցից ներկայացնում են ուշ շրջանում կատարված կեղծիք, իսկ պայմանագիրը հանրապետության առաջին տարվան և, հետևաբար, հիշյալ կոնսուլներին վերագրելը Փաբիոս Պիկտորի հնարածն է։ Սակայն հարկ է ի նկատի առնել, որ Պոլիբիոսն օգտագործել է դիվանական նյութը, որոնց լատիներեն լեզվի հնարան լինելը պատահականորեն չէ, որ նա հավատում է։ Այդ պատճառով նրա ընդունած թվագրումը անկասկած ծագում է հռոմեական պաշտոնական տվյալներից։

[23] F. W. Walbank. A. Historical Commentary on Polybius. Vol. I. ox., 1957, էջ 342—343:

[24] St. Gsell. HAAN. Vol. I, էջ 457; F. W. Walbank. A. Historical Commentary, էջ 341—342, R. L. Beamont. The Date of the First Treaty Between Rome and Carthage. — «Journal of Roman Studies, 1939, էջ 76:

[25] L. Wickert. Zu den Karthagoverträgern. Keio, 1938, էջ 352—358: А. В. Мишулин. Античная Испания. М., 1952, с. 260—261; И. Ш. Шифман. Возникновение..., с. 75—76.

[26] St. Gsell. HAAN. Vol. III, էջ 68—71; A. Aymard. Les deux premiers traités entre Rome et Carthage.—«Revue des études anciennes». 1957, էջ. 3—4.

[27] F. Hampl. Das Problem der Datierung der ersten Verträge zwischen Rom und Karthago. Rheinisches Museum. Bd. 101 (այսուհետև՝ F. Hampl. Das Problem...), էջ 58—75.

[28] Т. Моммзен. История Рима. Т. I, М., 1936, с. 392—393; St. Gsell. HAAN. Vol. III, էջ 72:

[29] A. Hampl. Das Problem...

[30] Համիլկար Բարկայի տարիքի մասին տե՛ս St. Gsell. HAAN. Vol. III, էջ 56; O. Meltzer. Geschichte der Karthager. Bd. II (այսուհետև՝ O. Meltzer. GK), c. 338—339.

[31] J. Burian. Hannibal. Praha, 1967, էջ 34.

[32] Համիլկար Բարկայի սիցիլիական պատերազմի մասին տե՛ս Պոլիբիոս, 1, 56—64, Դիոդորոս, 23, 22 և 24, 5—13, Զոնարաս, 8, 16։ Դատելով ըստ լիվիոսյան ավանդության (Լիվիոս, Կոդ., 19) («Շատ զորավարներ հաջողակորեն պատերազմ էին վարում էլունիկացիների դեմ»), հռոմեական պատմագրության մեջ Համիլկարի գործողությունների նշանակությունը նվազեցնելու և պատերազմի վերջին տարիների իրադարձությունները, որպես հռոմայեցիների անընդմեջ հաղթանակների շղթա, ներկայացնելու հակում կար։

[33] Т. Моммзен. История Рима. Т. I, с. 505. Համմ. նաև՝ O. Meltzer. GK. Bd. II, էջ 353։

[34] Լիբիական պատերազմի հիմնական աղբյուրը Պոլիբիոսի Պատմությունն է (1, 66—68). Ապպիանոսը (Սից., 2) հաղորդում է կարևոր տեղեկություններ, որոնք, ըստ երևույթին, ծագում են ինքնուրույն ավանդությունից։ Կորնելիոս Նեպոսի (Համ., 2) և Դիոդորոսի (25, 2—6) տեղեկությունները սկիզբ են առնում, որքանով որ այդ մասին կարելի է դատել, Պոլիբիոսից։ Լիբիական պատերազմի սոցիալական բնույթի մասին տես՝ Н. А. Машкин. Последний век пунического Карфагена. — ВДИ. 1949, № 2; Л. А. Ельницкий. Возникновение... էջ 211—217։

[35] Ա. Վ. Միշուլինն, իհարկե, ճիշտ է, երբ գրում է, որ հակառակ Փաբիոս Պիկտորի կարծիքի, Համիլկարի արշավանքն Իսպանիա համապատասխան նշանակություն ունեցող գործ էր։ Այնուամենայնիվ, հաղիվ թե կարելի է նրա հետ համաձայնվել, երբ նա ասում է (А. В. Мишулин. Античная Испания, с. 272), թե իբրև Կարթագենում կուսակցությունների պայքարի մասին Տիտոս Լիվիոսի տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը. մեր տրամադրության տակ չկան այնպիսի նյութեր, որոնք կարող էին հերքել հռոմեական ավանդության տվյալները։

[36] Տե՛ս St. Gsell. HAAN. Vol. III, էջ 130: Օ. Մելցերի կարծիքով (O. Meltzer. GK. Bd. II, էջ 401), Դիոդորոսի տեղեկությունները, որոնց սկզբնաղբյուրն անորոշ է, հաղիվ թե արժանահավատ լինեն. սակայն մենք չունենք այնպիսի տվյալներ, որոնք կկարողանային հերքել դրանք։

[37] Մեկ այլ պատում տե՛ս Ապպիանոսի և Զոնարասի մոտ (Ապպ., Իսպ., 5, Զոնարաս, 8, 19)։ Տիտոս Լիվիոսն, ըստ երևույթին, սխալմամբ է Համիլկարի կորստյան վայր համարում Ակրա Լևկեն (Castrum Album)։ Ինչպես պատմում է Կորնելիոս Նեպոսը (Համ., 4, 2), Համիլկարը զոհվել է վնասների դեմ մղված կռվում։ Մեզ առավել հավատալի է թվում Դիոդորոսի պատումը, քանի որ այն ամենից ճշգրտորեն է համապատասխանում նախընթաց իրադարձությունների (որքանով որ դրանք մեզ հայտնի են) ընթացքին։

[38] F. R. Kramer. Massilian Diplomacy before the Second Punic War.—«American Journal of Philology». 1948, vol. 69, №1, էջ 1—26:

[39] Հենվելով սրա վրա, Վ. Պիրոգովը /«Исследования по римской истории преимущественно в области третьей декады Ливия». СПб., 1878. այսուհետև՝ В. Пи-

рогов. Исследования..., с. 27) կարծում էր, թե Սագունտումը, որին լոկ քաղաքական անկախություն էր երաշխավորված, Հռոմի դաշնակիցը չէր։ Այս տեսակետը ստուգման չի դիմանում։ Այն երաշխիքները, որոնց մասին գրում է Ապպիանոսը, չեն բացառում դաշնակցային հարաբերությունները։

[40] W. Otto. Eine antike Kriegsschuldfrage. Die Vorgeschite des 2 Punischen Krieges.—«Historische Zeitschrift». Bd. 145, 1931, էջ 489—516։ Այստեղ Վ. Օտտոն հեռանում է անտիկ պատմագրության համարան վկայություններից։

[41] В. Пирогов. Исследования..., с. 21—29.

[42] O. Gilbert. Rom und Karthago in ihren gegenseitigen Bezihungen 513—536 u. c. (241—218 v. Chr.). Lpz., 1876.

[43] W. Kolbe. Die Kriegsschuldfrage von 218 v. Chr. Geb. Heidelberg, 1934.

[44] M. Gelzer. Der Rassen gegen Satz als geschichtlicher Faktor beim Ausbruch der römischkarthagischen Kriege. Rom und Karthago. Lpz., 1943, էջ 189; հմմտ. M. Gelzer. Kleine Schriften. Bd. II. Wiesbaden, 1963, էջ 31։ Միծաղելի է, որ այնուհետև («Rom und Karthago», էջ 191) նա պունիկյան բնավորության որոշ գծերին հռոմայեցիների բացասական վերաբերմունքը «բացատրում է» նրանով, որ հռոմայեցիները պատերազմի սանձազերծմանը իրենց անհաղորդ լինելն ապացուցելու մեջ չէին կարող համեմատվել կարթագենցիների հետ։

[45] M. Gelzer. Kleine Schriften. Bd. III. Wiesbaden, 1964, էջ 87։ Մ. Գելցերը Պոլիբիոսի պատմածի մեջ տարբերում է երկու՝ Կատոնի (Հաննիբալն Իբերն անցել է պատերազմը հայտարարելուց առաջ) և Փաբիոս Պիկտորի (որը ձգտում էր արդարացնել Սագունտումին օգնություն ցույց տալու հարցում սենատի դիրքորոշումը) պատումների արտացոլքը։

[46] J. Carcopino. La traité d'Hasdrubal et la responsabilité de la deuxième guerre punique.—«Revue des études anciennes». Vol. 55, 1953, էջ 258—293:

[47] F. W. Walbank. A Historical Commentary, էջ 168—172.

[48] Համանման տեսակետ տես՝ A. B. Drachmann. Sagunt und die Ebro-Grenze in den Verhandlungen zwischen Rom und Karthago 220—18. Kobenhavn, 1920.

[49] W. Hoffmann. Livius und der zweite Punische Krieg. B., էջ 19—20:

[50] E. J. Bickermann. Hannibal's Covenant. — «American Journal of Philology». Vol. 73, 1952, էջ 18:

[51] І. І. Вейцківський. Зовнішня політика країн Західного Середземноморя в 264—219 р. р. до н. е. Львів, 1959, с. 103—133։

[52] F. R. Kramer. Massilian Diplomacy, էջ 11—14։ Տե՛ս նաև Ֆ. Կասոլայի կարծիքը (F. Casolla. I gruppi..., էջ 247—250), որը գտնում է, թե Հռոմի հետ Հասդրուբալի պայմանագիրը Սագունտումին որոշակի երաշխիքներ չի ընձեռել։ Վ. Օտտոն (W. Otto. Eine antike Kriegsschuldfrage, էջ 489—516) անհիմն է համարում Սագունտումի հետ դաշնակցային հարաբերություններ ունենալու՝ Հռոմի հավակնությունները։ Ի. Ի. Վեյցկովսկին (І. І. Вейцківський. Зовнішня політика..., с. 233) կարծում է, որ 226 թվականի պայմանագրից բխող պարտավորություններից կարթագենցիները հրաժարվեցին այն պատճառով, որ այն խախտեցին հռոմայեցիները, միջամտելով Սագունտումի գործերին։ Տ. Ա. Դորին (T. A. Dorey. The Treaty with Saguntum.—«Humanitas». San-Miguel de Tucuman. Vol. XI—XII, 1959—1960. էջ 1—10) կարծում է, որ 219 թ. Հռոմի ու Սագունտումի միջև պայմանագիր գոյություն չի ունեցել։

[53] Հաննիբալի դիմապատկերի մասին տե՛ս G. Charles—Picard. Le problème du portait d'Hannibal. Karthago. Vol. 12. P., 1963/1964, էջ 31—41:

[54] Օլկադների գլխավոր քաղաքի անունը հայտնի չէ։ Պոլիբիոսը խոսում է Ալփեայի մասին (3, 13, 5), այն դեպքում, երբ Տիտոս Լիվիոսը (21, 5, 4) տալիս է Կարտալայի անունը։ Ա. Շուլտենը ենթադրում էր («Fontes Hispaniae Antiquae». Barcelona, 1922, III, էջ 23—27; «Cambridge Ancient History». Vol. VII Cambridge, 1928, էջ 739, հմմտ. А. В. Мишулин. Античная Испания, էջ 276), որ աղբյուրներն ի նկատի ունեն երկու տարբեր քաղաքներ, սակայն այս հորինվածքը համոզիչ չէ արդեն այն պատճառով, որ և՛ Պոլիբիոսը, և՛ Լիվիոսը խոսում են օլկադների ամենաղորեղ և առավել նշանավոր քաղաքի մասին։ Եվ բացի այդ, երկու աղբյուրներն էլ թե՛ քաղաքի առումը, և թե՛ այդ իրագործության հետևանքները միատեսակ են նկարագրում։ Հնարավոր է, որ մեր առջև է քաղաքի կրկնակ անվանումը. տեղականը՝ Ալփեա, և պունիկականը՝ Կարտալա։ Հմմտ. պունիկերեն *qart քաղաք։ Իսպանիայում Հաննիբալի պատերազմների մասին տե՛ս նաև E. Meyer. Kleine Schriften. Bd. 2, Halle, 1924, էջ 401—406:

[55] А. В. Мишулин. Античная Испания, с. 276.

[56] Մի ենթադրության համաձայն, Լիվիոսի և Հուստինոսի հաղորդումներն այն մասին, որ Տագոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, մինչև Իբերն ընկած ամբողջ Հարավային Իսպանիան ընկել է Կարթագենի իշխանության տակ, նշանակալիորեն չափազանցված է։ Գտնում են, որ Վերին Տագոսի և Վերին Դուրիսի կելտիբերական ցեղերը չեն ենթարկվել կարթագենական արշավանքների (St. Gsell, HAAN. Vol. III, էջ 134—135; А. В. Мишулин. Античная Испания, с. 277)։ Սակայն այս ըմբռնումը չի հաստատվում մեզ հասած նյութերով։

[57] Հմմտ. А. В. Мишулин. Античная Испания, էջ 277։

[58] Այն տեսակետը, որին հետևելով Տիտոս Լիվիոսը սխալվում է, երբ խոսում է Սագունտումի, որպես հունական գաղութի մասին (G. Walter. La destruction de Carthage. P., 1947, էջ 279), անհիմն է թվում։

[59] E. Pais. Storia de Roma durante le guerre Puniche. Torino, 1935, այսուհետև՝ Storia...). Vol. 1, էջ 190։

[60] Այն հանգամանքը, որ Սագունտումի և իբերական ցեղերի միջև իրոք ընդհարումներ են տեղի ունեցել (տե՛ս O. Gilbert. Karthago und Rom, էջ 176—178), չի բացառում Հաննիբալի կողմից պրովոկացիոն ձեռնարկումները, վերջինս, ինչպես ցույց են տալիս հետագայում նրա կատարած բոլոր գործողությունները, կենսականորեն շահագրգռված էր ընդհարում հրահրելու մեջ։

[61] H. H. Scullard. Roman Politics..., էջ 39։

[62] Առավել մանրամասն նկարագրությունը տես Լիվիոսի մոտ (21, 7—9 և 11—15)։

[63] Վիննա—տախտակներով պատած շարժուն սենյակ, որը բաց էր առջևից ու հետից, առաստաղից (որը զինվորներին պաշտպանում էր վերևից հասցվող հարվածներից) խոյ էր կախվում։

[64] H. H. Scullard. Roman Politics..., էջ 40—41, F. Cassola I gruppi..., էջ 235; E. Meyer. Kleine Schriften. Bd. 2, էջ 348—349:

[65] E. Pais. Storia..., Vol. 1, էջ 300, տե՛ս նաև В. Пирогов. Исследования..., էջ 17—21։

[66] Օ. Միլցերը (O. Meltzer. GK. Bd. II, էջ 45) խոսում է տարբեր տեսակետների միջև փոխադարձ այն համաձայնության մասին, որը նրա կարծիքով ձևոք էր բեր-

վել սենատում։ Իրագործությունների իր շարադրման մեջ Օ. Մելցերը բաց է թողնում Գլակկոսի և Տամփիլիոսի պատվիրակության վերաբերյալ ավանդությունը։

[67] Հմմտ. սակայն՝ Lenschau. Hannibal. Pauly's Realenzyklopädie der klassischen Altertumswissenschaft, bearbeitet von G. Wissowa. Halbbd. 14. Stuttgart, 1914 (այսուհետև՝ Lenschau. Hannibal. P.—W.RE). Sp. 2323, որը հետևում է Գելիբիոսի պատումին։

[68] Այս փաստը ցույց է տալիս, որ ավանդությամբ պահպանված տվյալներին չի համապատասխանում Թ. Դոջի այն պնդումը (Th. A. Dodge. Hannibal, էջ 152), որ իբր Հաննիբալը չէր կարող օգնության հույս ակնկալել Կարթագենից, ուր կարևոր դեր էր խաղում խաղաղության գաղափարությունը։ Վերջինս նրան թույլ չէր տա պատերազմ հայտարարել, և որ իբր Հաննիբալը գործում էր կաշկանդված ձեռքերով, եռ կանչվելու մշտական սպառնալիքի պայմաններում։

[69] Գիոն Կասսիոսի և Զոնարասի ավանդության կարևորությունը հատկապես մատնանշում է Օ. Մելցերը (O. Meltzer. GK. Bd. II, էջ 450)։

[70] W. Hofmann. Livius und der Zweite Punische Krieg, էջ 23.

[71] H. H. Scullard. Roman politics..., էջ 42։ Օ. Մելցերը (O. Meltzer. GK. Bd. II, էջ 452) և Ե. Սկալլարդը կարծում են, որ հավանաբար պատվիրակության գլուխ էր կանգնած Մարկոս Փաբիոս Բուտեոնը, սակայն Լիվիոսը (21, 18, 1) որոշապես խոսում է Քվինտոս Փաբիոսի մասին։

[72] Հռոմեական ավանդության մեջ (Գելլ., 10, 27) գոյություն ուներ մի պատմություն, որի համաձայն, նկարագրվող իրադարձություններից տասնհինգ տարի առաջ, մի ընդհարման ժամանակ, Քվ. Փաբիոսը կարթագենցիներին ուղարկել է նիզակ, որպես պատերազմի և կռվի (զավազան)՝ իբրև խաղաղության խորհրդանշան, որպեսզի նրանք ընտրեին այն, ինչը կհամանձին (ըստ Վառոնի տարբերակի, փոքր տախտակներ՝ համապատասխան պատկերներով)։ Կարթագենցիներն ընտրությունը թողեցին իրեն՝ Փաբիոսին։ Համաձայն տվյալ պատմության, այս գործողությունը ոչ մի հետևանք չունեցավ։ Ավլոս Գելլիոսը վկայակոչում է «հին գրքերը», ինչպես նաև Մ. Տերենտիոս Վառոնին, սակայն բուն պատմությունն, ըստ երևույթին, ուշ շրջանում է ստեղծվել և գուցե առաջացել է ի դուգահեռ 218 թ. Կարթագենին պատերազմ հայտարարելու վերաբերյալ ավանդության (Հմմտ. В. Пироговъ. Исследования, էջ 165—166)։

[73] Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK. Bd. III, էջ 371, ծան. 1) Իսպանիայում և Գալլիայում հռոմեական պատվիրակության բանակցությունների վերաբերյալ պատմությունը համարում է գրական հերյուրանք, որը պետք է արդարացներ պատերազմին Հռոմի դանդաղ նախապատրաստվելը։ Նրան անհավանական է թվում այն, որ պատվիրակները, կատարելով այնպիսի բացառիկ արարք, որպիսին էր պատերազմ հայտարարելը, մեկնեին ճանապարհորդության, այնպես, որ նրանց կատարածությունը սկզբում իմացել է թշնամու ելույթի և հետո միայն՝ իր պատվիրակների վերադարձի մասին։ Այս դատողությունները, սակայն, ինքնըստինքյան չեն հերքում Լիվիոսի ուղղակի ցուցումները։ Իբերական և գալլական ցեղերի չեզոքությունն ապահովելը հույժ կարևոր խնդիր էր, որպեսզի նրա կատարումը կարելի լիներ հետաձգել, իսկ սենատն անշուշտ պատվիրակության ելքի մասին կարող էր իրազեկված լինել Հռոմ՝ նրա վերադարձից շատ առաջ։

[74] Հմմտ. E. Pais. Storia... Vol. 1, էջ 210։

[75] Այն հարցը, թե Հաննիբալը ո՞ր լեռնանցքով է անցել Ալպերը, երկար ժամանակի ընթացքում դարձել է ընդհանուր առմամբ անօգուտ վիճաբանությունների առարկա։ Արդեն Տիտոս Լիվիոսը (21—38) բերում էր այնպիսի վարկածներ, որոնց համաձայն

Հաննիբալը օգտվել է կա՛մ Պենինյան Ալպերից (Վալերիոս Անտիատոս), կա՛մ Կրեմոնյան լեռնանցքից (Կելիոս Անտիպատրոս)։ Նապոլեոնը կարծում էր, որ Հաննիբալն գարնանը լեռնանցքից (Napoleon I. Correspondence. Vol. 31. P., 1869, էջ 408)։ Ու. Կարշտեդտի կարծիքով (O. Meltzer. GK. Bd. III, էջ 121—188) Ալպերում Հաննիբալի ընթացուղին ճշգրտորեն որոշելը հեռավոր չէ։ Ու. Կարշտեդտը կարծում է, որ նա չէր կարող գնալ Սենն-Բերնարի միջով, ամենից հավանական ճանապարհները Մոն-Ժենևրը կամ Մոն-Սենին էին։ Կ. Նեյմանի կարծիքով (C. Neumann. Das Zeitalter der Punischen Kriege. Breslau, 1883, էջ 289), թե՛ Փոքր Սենն-Բերնարը, թե՛ Մոն-Սենին բացառվում էին. միայն մի հնարավորություն կար՝ Մոն-Ժենևրը։ Ն. Ս. Գոլիցինը («Всеобщая военная история древних времен». ч. III, СПб., 1874, с. 40—42) արտահայտվում է հօգուտ Մոն-Սենիի։ Ն. Միխնևիչը («История военного искусства», СПб., 1895, с. 87) որոշակի կարծիք չի հայտնում։ Է. Պաիսը (E. Pais. Storia..., Vol. 1, էջ 212—216) որոշակի տեսակետ չի արտահայտում։ Լենշաուն Lenschau. Hannibal. P—W. RE. SP.2329) ավելի հավանական է համարում, որ Հաննիբալն անցել է Փոքր Սենն-Բերնարով. հանձնման գիրքավորում ունի Թ. Դոջը (Th. A. Dodge. Hannibal. N. Y., 1897, էջ 114—115)։ Ժ. Վալտերը (G. Walter. La destruction..., էջ 311—314) արտահայտվում է Մոն-Սենիի օգտին։ Ջ. դե Բիրի տեսակետով (G. de Beer. Alps and elephants. N. Y., 1956) անցումը կատարվել է Կոլ դե լա Տրավերսետեով։ Ըստ Կոմբե-Ֆարնուի, Հաննիբալը հավանաբար Ալպերն անցել է Փոքր Սենն-Բերնարի և Մոն Ժենևրի միջև ընկած տարածքով։ Տես՝ B. Combet—Farnoux. Les guerres puniques. P., 1960, էջ 82։

[76] Զարմանալի է, որ Կորնելիոս Նեպոսը Հաննիբալի կենսագրության մեջ (5, 1—3) Քվինտոս Փաբիոս Մաքսիմոսի դիկտատուրան վերագրում է Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո ընկած շրջանին։ Նա բացահայտորեն այս դիկտատուրան շփոթում է այն դիկտատուրայի հետ, որն իրոք Կաննեից հետո մտցվել էր Հռոմում, երբ այնտեղ կար ուրիշ դիկտատոր՝ Մ. Ցունիոս Պերայոսը։

[77] Ապպիանոսը (Հաննիբ., 13—15) խճճում է իրադարձությունների հաջորդականությունը, այս միջոցով դնելով Փաբիոսի և Մինուկիոսի միջև եղած գժտությունից հետո։ Տե՛ս նաև Փրոնտինոսի մոտ (1. 5, 28)։

[78] Հմմտ. W. Hoffmann. Livius und der Zweite Punische Krieg, էջ 33—39։

[79] Լ. Էմիլիոս Պավլոսի ընտրությունն անշուշտ նշանավորում էր Փաբիոսների պարտությունը։ Բայց հիմքեր չկան կարծելու, որ սենատը հրաժարվել էր նախկին դիկտատորի քաղաքականությունից, և որ Էմիլիոսի՝ ճակատամարտ տալ չցանկանալու մասին պատմությունները չեն համապատասխանում իրականությանը (H. H. Scullard. Roman politics, էջ 50—52)։ Այն փաստը, որ Վառոնը Կաննեից հետո նույնպես պատասխանատու պաշտոններ էր զբաղեցնում, չի վկայում մինչև Կաննեն նրա և Էմիլիոսի, կամ նրա և սենատի միջև տարաձայնությունների առկայության մասին։ Այս ժամանակաշրջանի դատումների պոլիբիոսյան ըմբռնման մասին տես առաջիկայում։

[80] Մեր տրամադրության տակ եղած աղբյուրները հստակ պատասխան չեն տալիս այն հարցին, թե հատկապես ո՞ր ափին է եղել Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, և այդ ընդհարման տեղադրության վերաբերյալ հարցը երկար ժամանակվա ընթացքում դարձել է բուռն վեճերի առարկա։ Շատ ուսումնասիրողներ կարծում են, թե այն տեղի է ունեցել Աուֆիդոսի ձախ՝ հյուսիսային ափին (Th. A. Dodge. Hannibal, էջ 361—362, O' Connor Morris. Hannibal, էջ 173, 178—180, C. Neumann. Das Zeitalter der Punischen Kriege, Breslau, 1883) այսուհետև՝ C. Neumann.

Das Zeitalter...). F. Fried. Ueber die Schlacht bei Cannä Lpz., 1898; H. Delbrück: Die Schlacht bei Cannä,—HZ. Bd. 109, 1912, էջ 481—507; E. Pais. Storia..., Vol. I, էջ 311—321; G. de Beer. Hannibal, էջ 213; Г. Дельбрюк. История военного искусства. Т. 1. М.,1936, с. 265—266)։ Մյուս տեսակետի համաձայն, ճակատամարտը տեղի է ունեցել աջ ափին՝ կամ Կաննեի արևմտակողմում (O. Meltzer. GK. BD. III, էջ 428—429), կամ նրա արևելքում (J. Burian. Hannibal, էջ 78, հմմտ. նաև F. Cornelius. Cannae. Das militarische und literarische Problem. Lpz; 1932, էջ 13—20)։ Հիմնական տեսակետներն ամփոփված են Սկալարդի մոտ (H. H. Scullard. A History of the Roman World from 753 to 146 B.C., էջ 460—461)։ Մեզ թվում է, որ ճակատամարտի նախօրյակին հռոմեական և կարթագենական զորքերի գտնվելության նկարագրությունը ցույց է տալիս, որ այն կարող էր տեղի ունենալ միայն ձախ ափին։

81 C. Neumann. Das Zeitalter..., էջ 374: Lenschau. Hannibal. P.—W. RE, Halbbd. 14, sp. 2336.

82 E. T. Salmon. Strategy of the second Punic War. Greece and Rome. Vol. VII, 1960, էջ 131—132, I. Vogt. Römische Geschichte. Häfte I. Freiburg, 1932, էջ 9:

83 G. Bossi. La guerra d'Annibale in Italia da Canne a Metauro. Roma, 1891 (այսուհետև՝ G. Bossi. La guerra..., էջ 15—18; St. Gsell. HANN. Vol. IV էջ 158; E. Pais. Storia... Vol. I, էջ 250; B. H. Warmington. Carthage. L., 1960, էջ 177; С. И. Ковалев. История Рима. Л., 1948, с 238, С. Стоилов. Аннибал. София, 1966; Հմմտ. B. Combet—Farnoux. Les guerres puniques, էջ 86:

84 G. Walter. La destruction..., էջ 356:

85 A. D. Flitton Brown. After Cannae.—«Historia». 1959, Bd. 8, №3, էջ 365—371:

86 Կ. Նեյմանը (C. Neumann. Das Zeitalter..., էջ 374) կարծում է, որ Մահարբալի պլանը ռազմական տեսակետից անիրական էր. նումիդիական հեծելազորը լավագույն դեպքում կարող էր միայն ավերածել Հռոմի մերձակայքը. հետևաբար բաղաքին կմոտենար միայն երկու շաբաթ հետո, երբ արդեն կորսված կլիներ հանկարծակիության ապավորությունը։ Սակայն այս դեպքում ևս պահպանվում էր պաշարումն սկսելու և մի ինչ-որ ժամանակ հետո Հռոմը գրավելու հնարավորությունը։

87 Իրոք, ինչպես ցույց է տվել Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK. Bd. III, էջ 439—442), գործող և նոր միայն կազմավորվող լեգեոնների մասին Լիվիոսի բերած թվերն ու տվյալները հիմնված են անալիստական ավանդության վրա և, ըստ երևույթին, որոշ չափով չափազանցված են։ Տես նաև՝ C. Neumann. Das Zeitalter..., էջ 380—381; M. Gelzer. Die Glaubwürdigkeit der bei Livius überlieferten senatsbeschlüsse uber romische Truppenaufgebote, Keeine Schriften. Bd. 1. Wiesbaden, 1964, էջ 220—255։ Հակադիր տեսակետը տե՛ս A. Klotz. Das römische Wehrmacht im Zweiten punischen Kriege.—«Philologus». Bd. 88, 1933, էջ 42—89; A. J. Toynbee. Hannibals Legacy. Vol. II. L., 1965, էջ 36—45։

88 Մենք չենք կարող համաձայնվել Ու. Կարշտեդտի հետ (տե՛ս O. Meltzer. GK. Bd. III, էջ 443), երբ նա գրում է, որ Հաննիբալի պարտությունների մասին բոլոր տեղեկությունները ինքնբստինքյան իմաստազրկվում են, քանի որ համաձայն Պոլիբիոսի և Կորնելիոս Նեպոսի հավաստումների, մինչև Զաման Հաննիբալը ոչ մի ճակատամարտ տտնուլ չի տվել։ Ու. Կարշտեդտը խոսում է միայն հռոմեական զենքի մասնակի հաջողությունների մասին։ Մեր տեսակետով Պոլիբիոսի հավաստումները առանց լրացուցիչ կըռվանների (իսկ դրանք տակավին երևան չեն բերվել) չեն կարող արտահայտել ուրիշ աղբյուրների բերած որոշակի նյութը։ Մինչև նոր տվյալների հայտնաբերումը, մենք իրավունք ունենք Պոլիբիոսի խոսքերը հիմնադրելու համարելու։ Հավանաբար պատմիչը, մոտիկ լինելով Սկիպիոնների ընտանիքին, լիովին ջնջելով հռոմայեցիների հաղթանակները, կամեցել է Զամայի մոտ Սկիպիոններից մեկի տարած հաղթանակը ներկայացնել որպես միանգամայն բացառիկ երևույթ։ Ու. Կարշտեդտի համողմամբ, այն ամենը, ինչ հակասում է Պոլիբիոսին և այն եզրահանգումներին, որոնք կարող են բխեցվել նրա պատմությունից, պետք է մերժվեն։ Սակայն մեզ թվում է, որ չնայած Պոլիբիոս-պատմագրի ամբողջ հեղինակությանը, նրա տեղեկությունները, ինչպես և ամեն մի այլ ավանդություն, ստուգման կարիք են զգում։ Մենք չենք կարող նրան բացարձակորեն անկողմնակալ համարել Հռոմի ներքաղաքական պայքարում։ Այս առնչությամբ բնորոշ են Փրոնտինոսի (2, 3, 9) և Վալերիոս Մաքսիմոսի (4, 1, 7) նշումներն այն պարտությունների մասին, որոնք Հաննիբալը կրել էր Մարկելոսից։

89 Այս մասին տե՛ս Т. Моммзен. История Рима. Т. 1, էջ 574։

90 G. de Beer. Hannibal, էջ 221—222:

91 Т. Моммзен. История Рима. Т. 1, с. 574.

92 Հմմտ. И. Л. Маяк. Взаимоотношения Рима и италийцев в III—II вв. М., 1971 (այսուհետև՝ И. Л. Маяк. Взаимоотношения...), с. 91. Մենք չենք բաժանում Ի. Լ. Մայակի այն կարծիքը, թե իբրև Մոպսիոսների նահանջը Կոմպսայից և առանց մարտի այն հանձնելը, նշանակում էին, որ այնտեղի բնակչության մեջ Հռոմի կողմնակիցները փոքրամասնություն էին կազմում։ Լիվիոսի բնագրից հետևում է միայն, որ Կաննեի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Մոպսիոսների ազդեցությունը կորցրեց իր նշանակությունը։ Հաննիբալին դիմադրություն ցույց տալուց հրաժարվելը կարող էր բացատրվել դրա անհուսալիությամբ։

93 Т. Моммзен. История Рима. Т. I, с. 574; հմմտ. G. de Beer. Hannibal, էջ 216—217:

94 O. Meltzer. GK. Bd. III, էջ 446։

95 И. Л. Маяк. Взаимоотношения..., с. 92.

96 Կ. Նեյմանը (C. Neumann. Das Zeitalter..., էջ 376—377) կարծում էր, որ Պակուվիոսի գործողությունների մասին Լիվիոսի պատմությունը բոլորովին անհավատալի է, որ այն պատմավեպ է հիշեցնում, սակայն Կ. Նեյմանը չէր հիմնավորում իր տեսակետը։ Աղբյուրները, համենայն դեպս, չեն հերքում Լիվիոսի հաղորդումը։

97 Հմմտ. նաև՝ И. Л. Маяк. Взаимоотношения..., с. 96.

98 Այժմ Տարքվինիայից մի արձանագրություն է հայտնի, որը թողել է ոմն Փելսնաս Լարտ, որն ըստ երևույթին մարտնչել է Կապուայում, Հաննիբալի կողմում։ Բերում ենք դրա բնութագիրը. «felsnas: la: leves sval[ce]: avi/cvi murce: capue tlexe: hanipa-luscle» (A. J. Pfiffing. Eine Nennung Hannibals in einer Inschrift des 2 Jahrhunderts: v. Chr. aus Tarquinia. Studi Etrurischi. Vol. 35. Firenze, 1967 էջ 659—664։

99 Հմմտ. Т. Моммзен. История Рима, т. I, էջ 582—583։ C. Neumann. Das Zeitalter..., էջ 376։

100 Այս մասին տե՛ս Л. А. Ельницкий. Возникновение..., էջ 60, прим. 30:

101 Գրականության մեջ (W. Hofmann. Livius und der Zweite Punische Krieg, էջ 43—45) հիմնավորապես նշվել է քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանի գաղափարաբանության ակնհայտ ազդեցությունը Լիվիոսի պատմության վրա։

Լիվիոսը ձգտում էր ցույց տալ, որ հատկապես ժողովրդի միասնությունը փրկեց Հռոմը Կաննեի մոտ տեղի ունեցած ագետի հետևանքներից։ Սակայն Լիվիոսի մխիթարավորությունը կասկածի տակ չի թողնում բուն փաստը, որի մասին նա հաղորդում է. այն կացությունը, որի մեջ ընկել էր Հռոմը, ներքաղաքական տարաձայնությունների սրվելը և շեշտվելը նրա համար կարող էր համարժեք լինել մահվան։ Հասկանալի է, որ դա չէր բացառում իշխանության համար մղվող խուլ պայքարը։

102 Իհարկե, սենատի դիրքավորումը բացատրվում էր քաղաքական ավելի խոր նկատառումներով, քան էր միայն կարթագեցիներին հարստացնել չկամենալու ձգտումը (G. Walter. La destruction..., էջ 355)։ Սենատի համար կարևոր էր Կաննեից հետո բավականաչափ Իտալիային ցույց տալ, որ ինքը չի կամենում Հաննիբալի հետ բանակցություններ վարել և վստահ է պատերազմի ելքի նկատմամբ։ Չմոռանանք, որ խոսքը վերաբերում էր հանձնաղաքացիների, երբեմն ազգականների ճակատագրին և այլն։

103 Հմմտ. И. Л. Маяк. Взаимоотношения... էջ 93։

104 Կ. Նեյմանի կարծիքով (C. Neumann. Das Zeitalter..., էջ 379), այս պատումը, որ նախատեսված է գլխավորապես Բանտիոսի պատմության գունազարդման համար, Լիվիոսի մոտ անհաշտ է ներմուծված և վատ է պատճառաբանված։ Կ. Նեյմանի կարծիքով, Հաննիբալը պետք է անցներ Նոլայի մերձակայքով, երբ նա գնում էր Նուկերիայից դեպի Ակեռե. հնարավոր է, որ պունիկյան զորավարը մի քանի օր անց է կացրել Նոլայի մոտ, և որ իրոք ընդհարում է տեղի ունեցել, սակայն Մարկելլոսը չի համարձակվել բաց դաշտում պատերազմել։ Բոլոր այս նկատառումները հնարավոր չէ ստուգելի դրանք կարող են ընդունվել լոկ այն դեպքում, եթե այս կամ այն կանխակալ ըմբռնումների հիման վրա որոշվի ուղղել և ճշգրտել աղբյուրը, որը ուրիշ նյութերով դեռևս չի հերքվում։ Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK, Bd. III, էջ 446, ծան. 2) մերժում է Նոլայի մոտ Մարկելլոսի հաղթանակի մասին Լիվիոսի պատմածը, որպես բացարձակապես անհավատալի։ Դ. Դելբրյուկը /Г. Дельбрюк. История..., с. 280, прим. 2/ կարծում է, որ Նոլայի տակ Մարկելլոսի «իբրև թե մեծ հաղթանակները», ընդամենը միայն անենշան ընդհարումներ էին։ Այս առնչությամբ արժե նշել, որ Նոլայի տակ Մարկելլոսի տարած հաղթանակի մասին եղած պատմության արժանահավատության օգտին է վկայում Ցիցերոնի նշումը (Ցից., Բրուտ., 12)։ Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 35—43), Թ. Ա. Դոջը (Th. A. Dodge. Hannibal, էջ 397—401), Ժ. Վալտերը (G. Walter. La destruction..., էջ 363) ամբողջապես ընդունում են Նոլայի տակ տեղի ունեցած ճակատամարտի մասին պատմությունը։

105 Հմմտ. И. Л. Маяк. Взаимоотношения..., с. 93.

106 Ու. Կարշտեդտը (տես՝ O. Meltzer. GK, Bd. III, էջ 445, ծան. 2) ժխտում է Կապուայում Հաննիբալի ձմեռելու վերաբերյալ պատմությունների արժանահավատությունը, ընդհանրապես ավելորդ համարելով դրանք վերլուծել։ Հար և նման տեսակետ ունի նաև Կ. Նեյմանը (C. Neumann. Das Zeitalter..., էջ 29), ինչպես և Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 52), որը մասնավորապես նշում է, որ Կապուայում ձմեռելուց հետո նույնպես Հաննիբալը երկար տարիների ընթացքում պատերազմել է Իտալիայի հարավում և հաղթանակներ է տարել այնտեղ։ Համանման տեսակետի էր հետևում նաև Թ. Դոջը (Th. A. Dodge. Hannibal, էջ 406—407)։ Իհարկե, Կապուայում գտնվելը հանգեցրեց կարգապահության առանձին խախտումների, սակայն, ընդհանուր առմամբ, Հաննիբալի բանակը պահպանեց կարգն ու մարտունակությունը։ Սակայն արդեն Թ. Մոմզենը («История Рима. Т. I, с. 581) չէր կասկածում, հռոմեական ավանդության արժանահավատությանը։ Ժ. Վալտերը (G. Walter. La destruction..., էջ 364) կարծում է, որ Կապուայում Հաննիբալի ձմեռելու մասին Լիվիոսի պատմածը իր հիմքում համա-

պատասխանում է դրության իրական դրությանը, թեև դրանում կան նաև անվիճելի չափազանցություններ։ Այս քննիչ տես նաև՝ E. Pais. Storia... Vol. 1, էջ 261—262։

107 Ինչպես ցույց տվեցին նորերս կատարված պեղումները, այնտեղ պունիկյան շատ բնակատեղեր կային՝ առափնյակում և ներքին շրջաններում։ Տե՛ս G. Pesce. Sardegna punica. Cagliari, 1960.

108 Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK, Bd. III, էջ 450, ծան. 1) առավել ճշմարտանման է համարում այն, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Նուկերիայի մոտ (հմմտ. Լիվիոսի ձեռագրերում եղած numeriam-ը), քանի որ մակեդոնական պատվիրակությունը Լատինիումյան լեռներից մեկնել է Կամպանիա։ Սակայն պատվիրակների ճանապարհը անպայման չէր, որ պետք է ուղիղ լիներ, մանավանդ որ նրանք, անկասկած, ձգտում էին շրջանցել հռոմեական դեսպերը։

109 Ասվածի առնչությամբ սխալ է թվում հռոմեական մեկնաբերին համապատասխան պայմանագրի բովանդակությունը շարադրող Թ. Մոմզենի դիրքը (տե՛ս Т. Моммзен. История Рима. Т. I, էջ 573)։

110 E. J. Bickerman. Hannibals Covernant.—«American Journal of Philology». 1952. Vol. 73, № 1, էջ 1—23.

111 Հմմտ. O. Meltzer. GK. Bd. III, էջ 449; St. Gsell. HAAN. Vol. IV էջ 159:

112 Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 64) կարծում է, որ Փաբիոսի ուղին, ինչպիսին այն պատկերում է Լիվիոսը, անհնարին էր, քանի որ այդ ճանապարհը կտրել էր Կապուայում և նրա շրջակայքում գտնվող հակառակորդը։ Սակայն հռոմայեցիների կողմից հիշյալ քաղաքների գրավումը նա չի ժխտում։ Հմմտ. նաև Լիվիոս (24, 20)։

113 Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK. Bd. III, էջ 452, ծան. 1) կարծում է, որ Մանլիոսի հրամանատարության ներքո կարող էր լինել 17 հազարից ոչ ավելի մարդ։ Սակայն աղբյուրներում մեզ չեն ընձեռում այնպիսի վկայություններ, որոնք կկարողանային հերքել Լիվիոսի տվյալները։

114 Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 63—66) Նոլայի մոտ տեղի ունեցած երկրորդ ճակատամարտը դնում է Պետելիայում տեղի ունեցած դեպքերից և Լոկրիսի ու Կրոտոնի դավաճանությունից առաջ։ Մենք ավելի ճիշտ ենք համարում հետևել իրագործությունների այն հաջորդականությանը, որը տրված է Լիվիոսի մոտ։

115 Վ. Շարեյտից անմիջապես հետո Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 66) ենթադրում է, որ Նոլայի մոտ պունիկյան զորքերի հրամանատարը Հաննոն էր։ Սակայն աղբյուրը հիմք չի տալիս նմանօրինակ ենթադրության համար։

116 Թ. Դոջը կարծում է, որ Նոլայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կողմերից ոչ մեկը հաղթանակ չի տարել։ Հակառակորդները նահանջել են՝ մեկը դեպի իր ճամբարը, մյուսը՝ Նոլա, հնարավորություն չունենալով հսկելու թշնամու գործողությունները։ Տե՛ս Th. A. Dodge. Hannibal, էջ 420—421:

117 Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 83—88) կարծում է, որ Նոլայի մոտ տեղի ունեցած երրորդ ընդհարման մասին պատմությունը մի ինչ-որ անալիստի հերյուրածն է։ Նրա փաստարկը հանգում է հետևյալին։ Հաննիբալն իր գործողություններում հույս չէր ակնկալում Նոլայի պլեբսից։ Մարկելլոսն այն ճանապարհներով, որոնք մատչելի էին իրեն, մեկ օրվա ընթացքում չէր կարող ժամանել Նոլա։ Լիվիոսի պատմածը ենթադրում է քաղաքում հռոմեական կայազորի բացակայություն, այն դեպքում, երբ նրա իսկ խոսքերով, Նոլայում կայազոր կար։ Հռոմեական հեծելազորը չէր կարող խաղալ այն դերը, որը, դատելով ըստ Լիվիոսի նկարագրության, հատկացվում էր նրան։ Բոլոր այս նկատա-

ռումները չեն հերքում մեր աղբյուրի հաղորդումները։ Բոլոր դեպքերում խոսքը գնում է կա՛մ հնարավորությունների և ոչ թե իրականում տեղի ունեցած իրադարձությունների, կա՛մ տվյալ հաղորդմանը համապատասխանող այս կամ այն կանխակալ սխեմայի մասին։ Ջ. Բոսսիի՝ ուշադրության արժանի միակ նկատառումը Լիվիոսի (24, 17, 2) հաղորդման (որի համաձայն, Մարկելլոսը Սուեսսուլայից օգնություն էր կանչել նախկին պրետոր Մ. Պոմպոնիոսին) և նրա իսկ մյուս հաղորդման (24, 10, 3, որտեղ նշված է, որ Մ. Պոմպոնիոսի պրովինցիան Գալլիան էր) միջև եղած հակասության մասնակցումն է։ Անշուշտ, այստեղ Լիվիոսը կամ, որ ավելի հավանական է, նրա աղբյուրը փաստական սխալ են թույլ տվել, սակայն դա չի բացառում այն, որ Մարկելլոսը Սուեսսուլայից կարող էր օժանդակ զորամիավորումներ ստանալ, և մանավանդ Նոլայի տակ տեղի ունեցած ընդհարումից առաջ։

118 Այն պատմագիրներից մեկը, որին առարկում է Պոլիբիոսը, ըստ երևույթին, Բատոն Սինոպեցին, «Հիերոնիմի բռնատիրության մասին» երկասիրության հեղինակը (Աթենայոս, VI, 251), տե՛ս Lenschau. Hieronimus. P.—W. RE, Halbald. 16, Sp. 1537—1539.

119 Գրականության մեջ, որքան էլ դա տարօրինակ է, բոլորի կողմից ընդունվում է Հիերոնիմի բացասական բնութագիրը, որը ծագում է նրա նկատմամբ թշնամական հռոմեական ավանդությունից։ Տե՛ս օրինակ. Т. Моммзен. История Рима. Т. I, էջ 573; С. И. Ковалев. История Рима, էջ 242—243։

120 Պոլիբիոսի այս խոսքերը որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ Հիերոն II-ի հռոմեասիրական կողմնորոշումը անկեղծ չէր, և որ, ըստ էության, Գելոնը, իսկ նրանից հետո նաև Հիերոնիմը, փորձում էին գործնականում իրագործել Հիերոնի դաղտնի մտահղացումները (տե՛ս С. Я. Лурье. Архимед. М.—Л., 1945, էջ 214—215), որի քաղաքականությունը, չնայած Հռոմի նկատմամբ նրա կատարած բարեկամական դիմախաղերին, իբրև թե հետևողականորեն կարթագենամետ բնույթ ուներ։ Ս. Յա. Լուրյեն, ճիշտ է, անորոշ կերպով, վկայակոչում է Տ. Լենշաուի աշխատությունները, որոնցում, համաձայն նրա խոսքերի, երևան է հանված Հիերոն II-ի քաղաքականության այդ ուղղությունը։ Չգիտենք, թե Ս. Յա. Լուրյեն Թ. Լենշաուի հանգամանքներ ո՞ր աշխատությունն է ի նկատի ունեցել։ Հենց Հիերոն II-ին նվիրված մի հոդվածում (Lenschau. Hieron II. P.—W. RE, Halbald. 6, Sp. 1503—1511) Լենշաուն նշում է սիրակուզական թագավորի՝ բոլոր պետությունների, այդ թվում նաև երկու ընդդիմամարտող կողմերի հետ լավ հարաբերություններ պահպանելու ցանկությունը, իսկ պատերազմի ժամանակ՝ նրա անվերապահ դաշինքը Հռոմի հետ։ Մեզ հայտնի չեն Հիերոն II-ի այն գործողությունները, որոնք կարող էին բացահայտ հակահռոմեական բնույթ կրել։ Սիրակուզայում Արքիմեդի ղեկավարությամբ ռազմական սարքերի կառուցումը կարող էր ուղղված լինել նաև Բարկյանների դեմ, որոնց հաղթանակի դեպքում կարթագենցիների վերադարձը Սիցիլիա և Սիրակուզայի դեմ նրանց պայքարի վերսկսումը միայն ժամանակի հարց կարող էր դառնալ։ Ամենից հավանական է, որ Արքիմեդի սարքերը նախատեսվում էին Սիրակուզայի անկախության դեմ ոտնձգություն անող ցանկացած թշնամուց պաշտպանվելու համար։ Ս. Յա. Լուրյեի դրույթի օգտին եղած միակ անուղղակի ապացույցը դա Պոլիբիոսի կողմից Գելոնին տրված բնութագրությունն է։ Սակայն ոչ բոլորովին է պարզ, թե Պոլիբիոսը որքանով էր իրազեկ Հիերոնի և Գելոնի իսկական փոխհարաբերություններին։ Այս առնչությամբ մեկ անգամ ևս հիշենք Գելոնի խորհրդավոր կործանման մասին։

121 Հմմտ. С. Я. Лурье. Архимед, с. 179—182.

122 Հմմտ. W. Hofmann. Hannibal und Sizilien. Hermes. Bd. 29, 1961, էջ

478—494։ Թ. Մոմզենի այն ըմբռնումը, որի համաձայն Հաննիբալի սկզբնական պլանի մեջ չէր մտնում Սիցիլիայում պատերազմ վարելու դիտավորությունը, և որ պայքարն այնտեղ բռնկվեց մասամբ Հիերոնիմի երեխայական անփորձության հետևանքով /Т. Моммзен. История Рима. Т. I, с. 584/, հաշիվ թե համապատասխանի գործերի իրական դրությանը։ Այլ կերպ և, ըստ երևույթին ավելի հավատալի է իրադրությունը գնահատում Ստ. Գզելլը (St. Gsell. HAAN. Vol. IV, էջ 164—165), որը կարծում է, թե Հաննիբալը բարեհաճորեն էր վերաբերվում Սիցիլիայում ռազմական գործողությունների կատարմանը, չկամենալով Հռոմի ձեռքը թողնել թե՛ Սիցիլիան, թե՛ Սարդինիան։ Սակայն Գզելլի կարծիքով Սարդինիայում և Սիցիլիայում ոչնչացված բանակները կարող էին ավելի լավ օգտագործվել Իտալիայում, որտեղ տեղի էին ունենում վճռական մարտերը։

123 Օրտիգիա կղզին, Աքրադինան և Տիքան Սիրակուզայի քաղաքային շրջաններն էին։

124 С. Я. Лурье. Архимед.

125 Հմմտ. նաև Փրոնտինոսի մոտ (3, 3, 6), որտեղ սակայն դավաճանը անվանված է Կոնոնեոս։

126 Տարենթոնը Հաննիբալի կողմից գրավելու մասին տե՛ս Պոլիբիոսի մոտ (8, 26—36) եղած ավանդությունը, որն ընդհանուր առմամբ, ճշգրտորեն համապատասխանում է Լիվիոսի պատմածին։ Ապպիանոսը (Հաննիբ., 32—34), Փիլեմենոսի փոխարեն Տարենթոնի հանձնման կազմակերպիչ է անվանում Կոնոնեոսին, չհիշատակելով մյուս դավադիրներին։ Նրա նկարագրության մեջ քաղաքի գրավումն առնչվում է սոսկ Կոնոնեոսի գործողություններին։

127 Ըստ այլ պատումների, որոնք բերում է նաև Լիվիոսը (25, 17), Գրակքոսն սպանվել է պատահականորեն. կա՛մ լողանալու, կա՛մ զոհամատուցումների ժամանակ ընդհարվելով պունիկացիների հետ։

128 Հմմտ. սակայն՝ С. Я. Лурье. Архимед. с. 228—230.

129 Նույն տեղը, էջ 230։

130 Ու. Պարշտեդտը (O. Meltzer. GK, Bd. III, էջ 484, ծան. 1) կարծում է, որ Սիրակուզայի գրավումից մի քանի օր առաջ դեպի Աֆրիկա Տ. Օտակիլիոսի արշավանքի մասին Լիվիոսի պատմածի մեջ ճշմարիտ ոչ մի խոսք չկա։ Եթե, նկատում է նա, 80 քվինքվերեմայից բաղկացած Հռոմեական նավատորմը կանգնած լիներ Լիլիբեոնում, հարկ չէր լինի, որ Մարկելլոսը վախենար Բոմիլկարի նավախմբի թվական գերակշռությունից։ Սակայն այս ենթադրությունն ինքյան չի հերքում հռոմեական ավանդությունը. այն մասին, որ Սիցիլիայի ափերի մոտ, որպես ինքնուրույն մարտական միավոր, գործում էր հռոմեական նավատորմիղը, որի հրամանատարը Տ. Օտակիլիոսն էր, լավ հայտնի է։ Դատելով ըստ այնմ, որ Օտակիլիոսը դեռևս նախկինում ապատակել էր աֆրիկական առափնյա շրջանները, կարելի է կարծել, որ նրա ծովային ջոկատը այդօրինակ մի հատուկ հանձնարարություն ուներ և պետք է գործեր անկախ Սիրակուզայի մոտ զարգացող իրադարձություններից։ Բացի այդ, Սիրակուզայի տակ իրադրությունը հռոմայեցիների համար բարեհաջող էր դասավորված։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Սիրակուզայի տեղագրության մասին տե՛ս H. P. Drogenmüller. Sirakus. Heidelberg, 1969, էջ 139, 149։

131 Սակայն ասվածը հաշիվ թե նշանակի, որ Գիսկոնի որդի Հասդրուբալին հասցված պարտության մասին պատմությունը անալիտական կեղծիք է, որը պետք է հավասարակշռեր երկու Սկիպիոնների կրած պարտության տպավորությունը H. H. Scullard. Scipio Africanus in the Second Punic war. Cambridge, 1930, (այսուհետև՝ H. H.

Scullard. Scipio Africanus..., էջ 53); Այն փաստը, որ հռոմայեցիները կարողացան Իսպանիայում պահպանել իրենց պլացդարմը, վկայում է լիվիոսյան ավանդության արժանահավատության մասին։

132 Պոլիբիոսի պատմության մեջ (9, 6—7) խոսվում է այն մասին, որ հռոմայեցիներն ընդհանրապես չեն հեռացել Կապուայից։ Սակայն այդ որոշման կապակցությամբ Պոլիբիոսը տալիս է միայն Ապպիոս Կլավդիոսի անունը և ոչինչ չի ասում Փուլվիոսի մասին, ինչը ինքնաբերության կասկածելի է դարձնում նրա տեղեկությունները։ Է. Պաիսը (E. Pais. Storia..., Vol. 1, էջ 292) ընդունում է Փուլվիոսի շարժման մասին Լիվիոսի պատմածը։ Ջ. Բոսսին մերժում է այդ ավանդությունը (G. Bossi. La guerra..., էջ 133—138)։ Նա կարծում է, որ աղբյուրները Փուլվիոս Ֆլակկոսին շփոթել են Փուլվիոս Կենտիմալոսի հետ։

133 Հռոմեական սովորությունների համաձայն, Քվ. Փուլվիոսին Կապուայի պաշարման համար տրված իրավազորությունը (կոնսուլական իշխանության, այսինքն՝ պրոկոնսուլության երկարաձգումը) ուժ չուներ Հռոմ քաղաքի շրջագծի սահմաններում։

134 Պոլիբիոսը (9, 5, 8) գրում է, որ Հաննիբալը դեպի Հռոմ է դիմել Սամնիումի միջով, այն դեպքում, երբ Լիվիոսը (26, 9) այլ ընթացուղի է նշում՝ Կամպանիայի միջով դեպի Լատիում. շրջանցելով Կալեն՝ սիդիկիններին երկրամասի և այնուհետև Սուեսսայի, Ալիֆումի, Կասինումի միջով, Լատինական ճանապարհով, մի կողմ թողնելով Ինտերամնան և Աքվինումը, դեպի Փրեգելլե, իսկ այնտեղից՝ վիրտուումցիների, փերենտինոցիների և անագնիացիների երկրների միջով դեպի Լաբիկե, այնուհետև Ալդիդոսի միջով դեպի Տուսկուլում, այնտեղից՝ Գաբիում, որից հետո՝ արդեն դեպի պունիկյան մարդերը։ Կնիոս Անտիպատրոսի ավանդությունը (Լիվիոս, 26, 11, 10—13) մոտիկ է Պոլիբիոսի ցուցումներին. Հաննիբալը Կամպանիայից գնացել է Սամնիում, այնտեղից՝ Պելիգնիում և մի կողմ թողնելով Սուլմոնը՝ դեպի մառուկինոսների երկիրը։ Այնուհետև Ալբայի շրջանով դեպի մարսերի երկիրը, այնտեղից՝ Ամիտերնում և Փերուլե, որից հետո՝ դեպի Հռոմ։ Հետաքրքիր է, որ Լիվիոսը, չմոռանալով այս երթուղին, հարց է առաջադրում, թե այդ ճանապարհով Հաննիբալը դեպի Հռո՞մ է դիմել, թե՞ Հռոմից է գնացել։ Գրականության մեջ նախապատվություն է տրվում Պոլիբիոսի պատումին (Т. Моммзен. История Рима. Т. I, с. 605; O. Meltzer. GK. Bd. III, էջ 490, ծան. 2; St Gsell. HAAN. Vol. IV. էջ 165; H. H. Scullard. A History of the Roman World from 753 to 146 B.C., էջ 227; G. de Beer. Hannibal, էջ 245; W. O' Connor Morris. Hannibal, էջ 237; Ջ. Բոսսին (G. Bossi. La guerra..., էջ 126—133) կարծում է, որ Հաննիբալը գնացել է Սամնիումով՝ Վալերիոսյան ճանապարհով։ Կ. Նեյմանը (C. Neumann. Das Zeitalter..., էջ 439, ծան. 1) ժխտում է Պոլիբիոսի և Կնիոս Անտիպատրոսի բերած ավանդությունների արժանահավատությունը, բանի որ այն ճանապարհը, որի մասին նրանք խոսում են, Հաննիբալին թույլ չէր տա ցանկալի հետևանքների հասնել՝ պրոկոնսուլներին ներշնչել Հռոմին սպառնացող վտանգի վերաբերյալ միտքը։ Թ. Դոջի կարծիքով (Th. A. Dodge. Hannibal, էջ 483—484) Հաննիբալի համար ոչ մի անհրաժեշտություն չկար Սամնիում մեկնելու համար, ինչը նրան հշներ նշված երթուղուց։ Ժ. Վալտերը (G. Walter. La destruction..., էջ 375) կարծում է, որ Հաննիբալը գնացել է Լատինական ճանապարհով։ Է. Պաիսը (E. Pais. Storia..., Vol. 1, էջ 290) գրում է, որ ժամանակակից պատմաբանները չեն կարող ավյալ խնդրի ճիշտ լուծում առաջադրել, բայց տեղնուտեղը նշում է, որ հռոմեական ժամանակաշրջանում Կասինումը համարվել է սամնիական քաղաք. բացառված չէ, որ «ավելի վաղ» ժամանակներում «Սամնիում» բառը տարածվել է ավելի ընդարձակ շրջանի վրա, քան այն,

որը հետագայում նշվել է «Սամնիում» բառով։ Վերջին ենթադրությունը, որը վերացնում է աղբյուրների միջև եղած երևութական հակասությունը, մեզ ավելի ճշմարտանման է թվում, սակայն վերջնական լուծումը հնարավոր կլինի հավանորեն միայն նոր աղբյուրների հայտնաբերմամբ։

135 Եվտրոպիոսը (3, 14) դեպի Հռոմ Հաննիբալի արշավանքի մասին պատմում է, շտապելով Կապուայի պաշարման հետ և, ըստ երևույթին, պակաս արժանահավատությամբ. Հաննիբալն հասել է մինչև չորրորդ մղոնասյանը, իսկ նրա հեծյալները՝ մինչև քաղաքի դարպասները, այնուհետև, երկյուղ կրելով հակառակորդի զորքերից, նա վերադարձել է Կամպանիայ։ Օրոսիոսը (4, 17, 2—7) հետևում է Լիվիոսին։ Համաձայն Ապպիանոսի պատմածի (Հաննիբ., 40), Փուլվիոսը Հռոմ չի մտել, բայց տեղավորվել է Հաննիբալի ճամբարի դիմաց, Անիոնոսի մյուս կողմում։ Քանի որ գետի վրա դրված կամուրջը քանդված էր, Հաննիբալը որոշել է գետը շրջանցել նրա ակունքների մոտ։ Պատմում էին, որ գիշերը Հաննիբալը հիպասպիտների մի ջոկատով թափանցել է քաղաք, գաղտնի հետազոտել է այն և այնուհետև (այնքան ուժեղ է եղել նրա ստացած տպավորությունը) եկել է դեպի Կապուա։ Ըստ երևույթին Ապպիանոսի պատումը հետաքրքիր է միայն մի տեսակետից. մի քանի հարյուրամյակ հետո նույնպես Հաննիբալին համարում էին բացարձակապես ամեն ինչի ընդունակ։

Թ. Մոմզենը (История Рима. Т. I, с. 605) կարծում է, որ Հաննիբալը նույնիսկ չի կամեցել պատերազմել Հռոմի դեմ և հեռացել է քաղաքից, վազորդ մատակարարելու համար։ Սակայն սրա դեմ որոշակի վկայություն է պարունակում անանուն ավանդությունը։ Ու. Կարշտեդտը (տե՛ս O. Meltzer. GK. Bd. III, էջ 492) և Լենշաուն (Lenschau. Hannibal. P. W. RE, 2339) ամբողջապես մերժում են Լիվիոսի ավանդությունը։ Այնինչ, հակառակ նրանց կարծիքի, Լիվիոսի և Պոլիբիոսի ավանդությունները շատ մանրամասներում համընկնում են (կա՛մ բացատրվում մեկը մյուսով կա՛մ լրացնում միմյանց)։ Նրանք տարամիտվում են սոսկ մեկ, թեև հույժ էական կետում՝ տեղի ունեցա՞ել է արդյոք Փուլվիոսի շարժումը։ Հմմտ. նաև Վալտերի մոտ (G. Walter. La destruction..., էջ 376), որը լիովին հետևում է Լիվիոսին, բայց Փուլվիոսի գործողություններին առընչվող խնդրում՝ Պոլիբիոսին։

136 Տե՛ս И. А. Немировский. Идеология и культура раннего Рима. Воронеж, 1964, էջ 53։

137 Հմմտ. C. Neumann. Das Zeitalter..., էջ 443—44:

138 O. Meltzer. GK. Bd. III, էջ 489:

139 Հմմտ. Т. Моммзен. История Рима. Т. I, с. 595—596; C. Neumann. Das Zeitalter..., էջ 445—446; H. H. Scullard. Scipio Africanus: Soldier und Politican, էջ 31:

140 H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 39—41:

141 Ըստ երևույթին Հ. Սկալարդը ճիշտ է, երբ խոսում է ավյալ դեպքում ճշմարտությունը վերականգնելու անհնարինության մասին. բացառված չէ, որ Կնիոս Անտիպատրոսի պատումը նախատեսված է եղել Սկիպիոնին զրպարտելու, մինչդեռ Պոլիբիոսի պատումը՝ նրան փառաբանելու և մեծարելու համար (տե՛ս H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 37—38)։

142 Սկիպիոնյան առասպելի մասին տես նաև՝ R. M. Haywood. Studies on Scipio Africanus. Baltimore, 1933

143 Մ. Յումպերտցի կարծիքով (M. Jumpertz. Der römischkarthagische Krieg in Spanien 211—206. B. 1892, էջ 6—8), Լիվիոսը ժամանակագրական սխալ է թույլ տվել։ Ինչպես ուսումնասիրողն է կարծում, 211 թ. Սկիպիոնն ընտրվել է պրոկոնսուլ, ուստի

պաշտոնին կարող էր անցնել միայն 210 թ. մարտի 15-ից հետո։ Զմեռային կարգաբաներում նա եղել է 210—209 թթ. ձմռանը, իսկ Նոր Կարթագենը գրավել է 209 թ. (հմմտ. Պոլիբիոսի մոտ (10, 8, 1)։ Սակայն առայժմ հիմքեր չկան կարծելու, թե Սկիպիոնը պաշտոնին անցնելու համար ստասել է 210 թ. մարտի 15-ին։ Այդպիսի ենթադրությունը կհակասեր հռոմեական ավանդության ցուցումներին. այդ ավանդությունն անշուշտ լավ իրազեկ է խնդրի իրավական հայեցակետին, Սկիպիոնի գործողություններին։ Լիվիոսի այն հաղորդման մեջ (26, 37, 7), որտեղ պատմվում է Տարենտոնի գրավումից հետո հռոմեական զորքերն Իսպանիա ուղարկելու մասին, խոսքը վերաբերում է Սկիպիոնին օժանդակ զորամիավորումներ առաքելու մասին։ Իսկ ինչ վերաբերում է Պոլիբիոսի պատմածին (մասնավորապես [10, 8, 1], ապա այն չի բովանդակում ժամանակագրական այնպիսի ցուցումներ (բացի Սկիպիոնի տարիքի վերաբերյալ միանգամայն սխալ տեղեկություններից՝ 27 տարեկան, սակայն նրա ընտրվելը հարկ կլիներ դնել 209—208 թթ.), որոնք կբացատրեին Լիվիոսի տվյալները։

144 Ապպիանոսը (Ապպ., Հաննիբ., 45—47) ավանդության փոքր-ինչ այլ պատում է բերում։ Համաձայն նրա պատմածի, Դասիոսը Հաննիբալին չի դավաճանել։ Բլատիոսը՝ չվստահելով Դասիոսին, մեկնեց Հռոմ և այնտեղ խնդրելով ձեռք բերեց 1000 հեծյալ, իսկ Դասիոսը վերջին մեկնեց Հաննիբալի մոտ, հաստատեց իր ամբաստանությունը և կարթագենցիների մի ջոկատով նա վերադարձավ։ Սակայն Բլատիոսն արդեն գրավել էր Սալապիան։ Դասիոսին ներս թողնելով քաղաք, դարպասների մոտակայքում նա սպանեց թե՛ նրան և թե՛ նրա ուղեկցորդներին։ Դեպքերի այդպիսի զարգացումը պակաս հավանական է. մասնավորապես հավանական թե Բլատիոսը կարողանար Հռոմում ստանալ այդքան նշանակալից զորամիավորում, մանավանդ որ պունիկյան կայազորի հրամանատարությունը պարտավոր էր ջանադիր կերպով հետևել նրա շարժումներին։

145 Օրոսիոսն (4, 13, 1) ու Եվտրոպիոսը (3, 15) այս Մագոնին շփոթել են Մագոն Բարկայանի հետ։

146 Հմմտ. Հակատամարտի նկարագրությունը նաև Պոլիբիոսի (10, 38, 7—39, 9) մոտ, իսկ Նոր Կարթագենի անկումից հետո Իսպանիայում տեղի ունեցած անցքերի մասին՝ Ապպիանոսի մոտ (Ապպ., Իսպ., 24—28)։

147 Т. Моммзен. История Рима. Т. I, с. 615.

148 G. Walter. La destruction..., էջ 394—395; հմմտ.՝ E. Pais. Storia..., Vol. 2, էջ 462, հմմտ. նաև C. Neumann. Das Zeitalter..., էջ 508։

149 H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 160, 166, 109:

150 Նույն տեղը, էջ 161—163, 168։

151 Այս ավանդության արժանահավատության նկատմամբ եղած կասկածները (St. Gseil. HAAN. Vol. IV, էջ 204) հաղիվ թե հիմնավորված լինեն։

152 Հետազոտական գրականության մեջ կասկածներ են հայտնվել հենց Արքայական Հիպոնի մերձակայքում Լելիոսի ափ դուրս գալու առթիվ (տե՛ս Th. Zielinski. Die letzen Jahre des Zweiten Punischen Krieges, Lpz., 1880, էջ 7—16): Այս առնչությամբ եղած փաստարկումը հանգում է հետևյալին։ Արքայական Հիպոնը գտնվում էր մասիլիների երկրի ծովափին. այդ երկիրը պատկանում էր Մասանասային։ Հռոմայեցիների կողմից նրա շրջակայքի կողոպուտն անհնար էր, եթե ուշադրության առնենք, որ հռոմեական կառավարությունը զգում էր Մասանասայի հետ դաշինքի կարիքը։ Բացի այդ, հռոմեական նավատորմի հարձակումները միշտ նպատակաուղղված էին բուն կարթագենական տիրույթներին՝ (Զեղիտանան և Բիզակիումը)։ Արքայական Հիպոնը Կարթագենից շատ էր հեռու, այնպես որ վերջինիս տագնապն անմեկնելի է։ Թ. Զելինսկին նույնպես մերժում է այն ենթադրությունը, որ Լիվիոսն ի նկատի է ունեցել Հիպոն Դիարիտոսը,

քանի որ այդ դեպքում անհնար է թվում Փոքր Սիրտոսի մոտ թաքնված Մասանասայի տեսակցությունը Լելիոսի հետ։ Գիտնականն առաջարկում է Աֆրիկայի պատմաշխարհագրական քարտեզի վրա փնտրել նա մեկ Հիպոն և այն գտնում է Բիզակիումի շրջանում, Փոքր Լեպտիսի և Կերկինեի միջև։ Սակայն մեզ թվում է, որ այս նկատառումները չեն հերքում Լիվիոսի բերած ավանդությունները։ Նախ և առաջ Լելիոսի գինվորները ավարի են մատնել Հիպոնին պատկանող երկրամասը և, հետևաբար, վնաս չեն հասցրել Մասանասային, որպես մասիլիների թագավորի։ Երկրորդ, Կարթագենում տագնապն առաջացել էր Աֆրիկայում հռոմայեցիների (ինչպես ենթադրում էին՝ Սկիպիոնի) հայտնվելու հետևանքով։ Անմիջականորեն Կարթագենի վրա հարձակում սպասելով, նրա բնակչությունն ու կառավարությունը հաղիվ թե առանձնահատուկ նշանակություն տային (բացի իհարկե, զուտ տակտիկականից) տարածությանն առընչվող հարցին. հակառակորդը դեռ այն պետք է անցներ։ Վերջապես, Մասանասայի ու Լելիոսի տեսակցվելը այս դեպքում ևս չի կարելի ֆիզիկապես բացառված համարել։ Ամբողջ շարադրվածը թույլ է տալիս, գոնե մինչև նոր նյութերի հայտնաբերումն ու հրապարակումը, արժանահավատ համարել Լիվիոսի բերած ավանդությունը։ Գ. Ֆալտինը (տե՛ս C. Neumann. Das Zeitalter..., էջ 512, ծան. 2) նույնպես հարում է այն տեսակետին, որի համաձայն Լելիոսը չէր կարող ափ դուրս գալ Արքայական Հիպոնի մոտ, բայց միևնույն ժամանակ չի ընդունում ուրիշ ենթադրություններ։ Տիտոս Լիվիոսի բերած ավանդությունն ընդունում են Ստ. Գզելը (HAAN. Vol. IV, էջ 205), Ա. Սկալարդը (H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 112), Է. Պաիսը (E. Pais. Storia..., Vol. 1, էջ 494):

153 Հմմտ. սակայն՝ Th. Zielinski. Die letzen Jahre..., էջ 20—27:

154 Նումիդիայում իշխանության համար մղված պայքարի մասին Լիվիոսի պատմածն ավելի ճշմարտանման է թվում, քան Ապպիանոսի պատումը (Ապպ., Լիբ., 10—11), որի համաձայն իրադարձությունները բոլորովին այլ կերպ են ծավալվել։ Ապպիանոսը գրում է, որ Գիսկոնի որդի Հասդրուբալը Մասանասային խոստացել էր հանձնել Սոփոնիսբային։ Մինչ նրանք երկուսով գտնվում էին Իսպանիայում, կարթագենական կառավարությունը, առանց նրանց գիտության, Սոփոնիսբային հանձնեց Սիփաքսին։ Տեղեկանալով այդ մասին, Մասանասան գաղտնի դաշինք կնքեց Սկիպիոնի հետ, իսկ Հասդրուբալը, թեև խորապես վիրավորված էր իր դստեր և նրա նախկին փեսացուի համար, այնուամենայնիվ վճռեց վերացնել Մասանասային, երբ վերջինս Իսպանիայից վերադառնում էր Աֆրիկա։ Մասանասան խույս տվեց մարդասպաններից և այնուհետև թափառակյաց ավազակի կյանք էր վարում։ Կարթագենցիներն ու Սիփաքսը մտահղացան սկզբում ջախջախել Մասանասային և արդեն հետո պայքար սկսել հռոմայեցիների դեմ։ Ապպիանոսի պատմածը բացառվում է արդեն այն պատճառով, որ Սոփոնիսբայի ամուսնությունը առանց նրա հոր համաձայնության, հնարավոր չէր։

155 Լիվիոսի այս ցուցումն ավելի ճշմարտանման է, քան Ապպիանոսի բերած ավանդությունը (Լիբ., 13), որի համաձայն, Սկիպիոնի մեկնելուց հետո Հասդրուբալն ու Սիփաքսը բանակ են դրել Ուտիկեի մոտակայքում և այնտեղ, բայց նրանցից առանձին, բանակել է Մասանասան։ Կարթագենցիներն ու Սիփաքսը նրա հետ (իբրև թե) շինծու դաշինք են կնքել։ Աֆրիկայից ժամանելուց և ափ իջնելուց հետո Սկիպիոնի գործողությունները, նույնիսկ ինչպես դրանք Ապպիանոսն է նկարագրում (Լիբ., 14—15), չէին կարող տեղի ունենալ, եթե նա մշտական սպառնալիք զգար մոտակայքում գտնվող կարթագենական բանակատեղից։ Ապպիանոսը պատահական չէ, որ խոսում է (Լիբ., 14) այն մասին, որ Սիփաքսն իր զորքերը տարել է Նումիդիա։ Իսկ ինչ վերաբերում է Մասանասային, որ Սիփաքսն իր զորքերը տարել է Նումիդիա։ Իսկ ինչ վերաբերում է Մասանասայի հետ նրանց փոխհարաբերություններին, ապա դրանք ամբողջապես թշնամա-

կան էին, կենաց և մահու պայքար էր գնում և, հետևաբար, Լիվիոսի պատումն ավելի ճշգրտորեն է համապատասխանում Աֆրիկայում քաղաքական ուժերի դասավորությանը։ Կարթագենցիները չէին կարող լրջորեն հույս դնել Մասանասայի չեզոքության կամ նրա դյուրավստահության վրա, այնպես որ այդ «գաշինքը» կարող էր սոսկ խորացնել առանց այն էլ դժվարին կացությունը, այն դեպքում, երբ բացահայտ թշնամին՝ Մասանասան վտանգավոր էր լոկ այնքանով, որքանով նա գործում էր Սկիպիոնի հետ։ Համապատասխանաբար պետք է մերժել նաև Համիլկարի որդի Հաննոնի հետ հռոմայեցիների ընդհարման վերաբերյալ Ապպիանոսի պատումը (Ապպ., Լիբ., 14)։ Մասանասան իբրև թե գաղտնի եղել էր Սկիպիոնի մոտ և պայմանավորվել, որ ինքը գարանամուտ կլինի Ագաթոկլեսի Աշտարակի մոտ, Ուտիկեից ոչ հեռու, իսկ այնուհետև Հասդրուբալին համոզել էր Հաննոնին հեծյալների հետ ուղարկել՝ Ուտիկեն գրավելու։ Մոտենալով Աշտարակին, Հաննոնը փոքրաթիվ հեծյալներով սլացել էր դեպի Ուտիկե, իսկ մնացածները Մասանասայի հրամանով մարտի մեջ էին մտել հռոմայեցիների հետ։ Որոշ ժամանակ հետո, կարթագենցիների վրա հարձակվել էին նաև նումիդիացիները։ Ճակատամարտը վերջանալուց հետո Մասանասան բռնել էր Հաննոնին և տարել Սկիպիոնի մոտ, իսկ հետո նրան փոխանակել իր մոր հետ։ Այս բոլոր մանրամասները կատարելապես անհավատալի են թվում, եթե չենթադրվի, որ կարթագենական հրամանատարությունը անակնկալ կերպով մոռացել էր, թե ում հետ գործ ունի և Ապպիանոսի բառերով ասած՝ ինչպիսի «գաշինք» էր նա կնքել։

156 Հմմտ. նաև՝ Th. Zielinski. Die letzen Jahre..., էջ 27—36։ Գ. Ֆայտինը (տե՛ս C. Neumann. Das Zeitalter..., էջ 522) ընդունում է Ապպիանոսի պատումը և կարծում է, որ Լիվիոսի պատմածի մեջ տեղ է գտել ավանդության կրկնություն։ Ստ. Գզելը (HAAN. Vol. IV, էջ 216) և Խ. Սկալարդը (H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 120, 189—191) ամբողջապես հետևում են Լիվիոսի բերած ավանդությանը։ Է. Պայսը (E. Pais. Storia..., Vol. 1, էջ 496) որոշակի դիրքավորում չունի։

157 Ապպիանոսն (Ապպ., Լիբ., 24) այլ կերպ է պատկերում Գիսկոնի որդի Հասդրուբալի ճակատագիրը։ Որպես թե նա փախել է Անգա, ուր սկսել է վարձկաններ հավաքել, սակայն Կարթագենում նրան մահվան են դատապարտել, իսկ հրամանատարությունը հանձնել են Հաննոնին՝ Բոմիլկարի որդուն։ Դրանից հետո, սեփական բանակ կազմելով, Հասդրուբալն սկսել է ավար ձեռք բերել։ Ավելի ուշ Հասդրուբալն իբրև թե Հաննոնից պահանջել է, որպեսզի նա իրեն թույլ տա կիսելու հրամանատարի պարտավորությունները և առաջարկել է այրել Սկիպիոնի ճամբարը։ Հաննոնը համաձայնվել և նույնիսկ կողմնակիցներ է գտել բուն հռոմեական ճամբարում, սակայն Սկիպիոնն իմացել է դավադրության մասին և մահապատժի է ենթարկել դավադիրներին։ Կարթագենցիները հրաժարվել են իրենց մտահղացումից, սակայն Հաննոնն օգտագործել է իրադրությունը՝ Հասդրուբալին զրպարտելու համար (Ապպ., Լիբ., 30)։ Զոնարասը (9, 12) խոսում է միայն Հասդրուբալին հեռացնելու մասին։ Հետագա իրադարձությունները և, հատկապես տվյալ փաստի մասին Պոլիբիոսի ու Լիվիոսի հիշատակությունը ակնհայտորեն հավաստում են ընդդեմ Ապպիանոսի ու Զոնարասի բերած ավանդության։ Ապպիանոսը ոչինչ չգիտե Մեծ Հարթավայրում տեղի ունեցած ճակատամարտի մասին, ինչը նույնպես թույլ է տալիս կասկածելու նրա պատմածի արժանահավատությանը։

158 Այս ճակատամարտի մասին պատմող ավանդության վերաբերյալ տե՛ս Th. Zielinski. Die letzen Jahre..., էջ 36—44։ Մեծ Հարթավայրն ըստ երևույթին տեղորոշվում է Սուկ ալ-Կրեմիս վայրում, Կարթագենից 75 մղոն հարավ-արևմուտք։

159 Անշուշտ, Ապպիանոսի այն ցուցումը (Լիբ., 49), թե կարթագենական իշխանությունները միայն Կիլայի (այսինքն՝ Զամայի) ճակատամարտից հետո են Մագոնին հրամայել հեռանալ Իսպանիայից (և համապատասխանաբար նրա հետագա ճակատագրի մասին տվյալները) ճիշտ չեն։ Ու. Կարշտեդտը, իր սովորության համաձայն, անալիտական ավանդությունը (Լիվիոս, 30, 18) հավաստի չի համարում (O. Meltzer. GK. Bd. III, էջ 555), սակայն այն ավելի ստույգ է համապատասխանում հետագա դեպքերին։

160 Թ. Դոջը (Th. A. Dodge. Hannibal, էջ 593) և Յա. Բուրիանը (J. Burian. Hannibal, էջ 112) այս ավանդությունը վստահության արժանի չեն համարում։ Սակայն մեր տրամադրության տակ չկան այնպիսի փաստեր, որոնք թույլ կտային այն կասկածի տակ առնել։

161 A. Korte. Literarische Texte mit Ausschluss der Christlichen, Archiv für Papyrusforschung. Bd. 14, 1941, էջ 129—131։

162 Հմմտ. Թ. Զելինսկու մոտ (Th. Zielinski. Die letzen Jahre..., էջ 44), որը գալիս է այն եզրակացության, որ լիբիական ավանդության հիմնական բովանդակությունը չի կարող կասկածի տակ առնվել։ Սակայն Թ. Զելինսկին, փորձելով հաշտեցնել երկու պատումները, դեպքերի ընթացքը վերականգնում է հետևյալ ձևով։ Առաջին նիստում սենատը հրաժարվում է հաշտության պայմանագիր կնքելուց։ Սկիպիոնի պատվիրակները, տրիբունների օգնությամբ, ձեռք են բերում ժողովրդական ժողովի դրական որոշումը։ սենատին ոչինչ չի մնում անելու, քան երկրորդ նիստում վավերացնել ժողովրդի կամարտահայտությունը։ Մեր ձեռքի տակ չկան այնպիսի տվյալներ, որոնք կհաստատեին այս տեսակետը։ Գ. Ֆայտինը (տես՝ C. Neumann. Das Zeitalter..., էջ 532—533) կարծում է, որ սենատում բուռն քննարկումից հետո հաղթել է հաշտարար դիրքավորումը, և սենատը Սկիպիոնի մոտ հանձնաժողով է ուղարկել հաշտության պայմանները մշակելու համար։ Ըստ Ու. Կարշտեդտի (O. Meltzer. GK. Bd. III, էջ 557), սենատն ընդունել է հաշտության դաշնագրի պայմանները։ Ստ. Գզելը կարծում էր, թե սենատն ու ժողովուրդը հավանություն են տվել Սկիպիոնի կողմից առաջարկված և կարթագենցիների ընդունած պայմաններին (HAAN. Vol. IV, էջ 246)։ Սրան մոտիկ է նաև Խ. Սկալարդի դիրքավորումը (H. H. Scullard. Scipio Africanus..., էջ 221—223, 136—137)։ Ժ. Վալտերը (G. Walter. La destruction..., էջ 423—424), ինչպես նաև Է. Պայսը (E. Pais. Storia..., Vol. 2, էջ 505—506) ամբողջապես հետևում են Լիվիոսին։

163 Մեր տրամադրության տակ այժմ կա II դարի հունարեն պատմական երկասիրության մի պատառիկ, որի համաձայն, պունիկական պատվիրակությունը չի մեկնել Սկիպիոնի մոտ, այլ ուղղակի վերադարձել է Կարթագեն, և միայն նրա զեկուցումից հետո է մերժվել Հռոմում ձեռք բերված համաձայնությունը (A. Korte. Literarische Texte mit Ausschluss der Christlichen.—«Archiv für Papyrusforschung. Bd. 14, 1941, էջ 129—131)։ Այս պատմության կարթագենամետ կողմնորոշումն ակնհայտ է. պունիկացիները այստեղ արդեն հանդես չեն գալիս պայմանագիրը խախտողների դերով։ Հակադիր մեկնակերպն անկասկած առաջացել է հռոմեական, այս անգամ Սկիպիոնի համար նպաստավոր ավանդությունից (տե՛ս մասնավորաբար՝ M. Gelzer. Das Rassengegensatz als geschichtlicher Factor beim Ausbrux der zömisch-Karthagischen Kriege. Rom und Karthago. Lpz., 1943, էջ 195—196)։ Եթե Լիվիոսը ճիշտ է, և սենատը հրաժարվել է հաշտության պայմանագրից, հաղիվ թե հնարավոր լիներ Հռոմից դաշնագրի պայմանների վերաբերյալ տեղեկություններով պատվիրակների վերադարձը Կարթագեն, և այդ պայմանները կարթագենական խորհրդի կողմից մերժելը։

164 Թ. Զելինսկին (Th. Zielinski. Die Letzen Jahre..., էջ 24—25) Լեպտիսում Հաննիբալի ափ իջնելն անհնար էր համարում, քանի որ մյուս ավանդությունն այդ մասին չի հաղորդում (Թ. Զելինսկին վկայակոչում է Ապպիանոսին)։ Նրա կարծիքով Հաննիբալն ընդհանրապես չէր կարող ափ իջնել Լեպտիսի մոտ։ Վերջին փաստարկը համոզիչ չէ, եթե ի նկատի առնենք այն դերը, որ Լեպտիսը խաղում էր այն ժամանակի միջերկրածովյան առևտրում։ Իսկ ինչ վերաբերում է ավանդությանը, ապա Ապպիանոսի պատումներն ավելի քիչ են նախընտրելի։

165 Ելնելով ավելի վերևում շարադրվածից, Հաննիբալին Գիսկոնի որդի Հասդրուբալի միանալու և նրա հետագա ճակատագրի մասին Ապպիանոսի տվյալները (Լիբ., 36 և 38) պետք է համարել բացարձակապես անհավաստի։ Իրականությանը նույնքան քիչ է համապատասխանում նաև Ապպիանոսի բերած ավանդությունը հաշտության այն պայմանագրի մասին, որն իբրև թե Հաննիբալը կնքել էր Սկիպիոնի հետ և որից ժողովրդի համառ պահանջով ստիպված եղավ հրաժարվել (Ապպ., Լիբ., 37—39)։ Ավելի հավանական է, որ այս հաղորդումը կրկնում է կարթագենական իշխանությունների հետ Սկիպիոնի բանակցությունների մասին նախորդ պատմությունը (հմմտ. ВДИ, 1950, № 3, էջ 276, ծան. 5)։

166 Եվտրոպիոսի տվյալների համաձայն (3, 22), Սկիպիոնի հետ Հաննիբալի հանդիպման ժամանակ որոշվեց կնքել հաշտության պայմանագիր, սակայն կարթագենական կառավարությունը մերժեց պայմանագիրը և Հաննիբալին պարտավորեցրեց շարունակել պատերազմը։

167 Թ. Զելինսկին այն դնում է 202 թ. հուլիսին կամ օգոստոսին։ Տե՛ս Th Zielinski. Die letzen Jahre..., էջ 75։

168 Այն ավանդությունը, որի համաձայն Հաննիբալը ճակատամարտից հետո անմիջապես գնացել է Ասորիք (Լիվիոս, 39, 37), հազիվ թե հավաստի լինի, քանի որ հակասում է այն ամենին, ինչ հայտնի է Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Կարթագենում Հաննիբալի գործունեության մասին։

169 Ստ. Գզելը (HAAN. Vol. IV, էջ 286) կարծում է, որ Սկիպիոնի որոշումը թելադրվում էր ռազմական նկատառումներով, քանի որ Հռոմում նա կարող էր հույս դնել պլեբսի և սենատի մեծամասնության պաշտպանության վրա։ Ինչպես տեսնում ենք, դրությունը զգալիորեն ավելի բարդ էր։

170 Իտալիայից Մագոնի հեռացման պահանջը (Ապպ., Լիբ., 54) Սկիպիոնը չէր կարող առաջադրել, քանի որ Մագոնը տակավին Զամայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից առաջ լքել էր Իտալիան։

171 Ու. Կարշտեդտի այն դիտողությունը, որ իբր Հաննիբալի համար դժվար չէր հասնել իր տեսակետի ընդունմանը (O. Meltzer GK. Bd. III, էջ 567), լիովին հակասում է անտիկ պատմագրության վկայություններին։

172 Պայմանագրի լատիներեն բնագրի վերականգնման հետաքրքիր փորձը (տե՛ս H. Nissen. De pace anno 20 a Chr. Carthaginiensibus data. Marburg. 1870.

173 И. Ш. Шифман. К восстановлению одной истрийской надписи.—ВДИ. 1958, № 4, с. 118—121.

174 U. Wilcken. Puntfarten in der Ptolemäerzeit.—«Zeitschrift für Aegyptische Sprache und Altertumskunde». Bd. 60, 1925, էջ 86—102։

175 Օրոսիոսն (4, 20, 22), իհարկե, չափազանցում է, երբ գրում է, թե իբր հենց Հաննիբալի պարտությունն ու փախուստը՝ բանակի կորստյամբ հանդերձ, Անտիոքոսին դրդեցին հաշտության պայմանագիր կնքելու Հռոմի հետ։

176 Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 423—424։ T. Моммзен. История Рима. Т. I, с. 709.

177 Հմմտ. J. Burian. Hannibal, էջ 128; G. de Beer. Hannibal, էջ 299։

178 Հմմտ. սակայն Թ. Մոմզենի մոտ (История Рима. Т. I, с. 632—633), որտեղ հեղինակը հաշվի չի առնում Կարթագենի նկատմամբ հռոմեական քաղաքականության մեջ կատարված փոփոխությունները։ Մոմզենին մոտիկ է նաև Ստ. Գզելը (HAAN. Vol. IV, էջ 312)։ Իրադարձությունների ծավալումը և սենատի քաղաքական ըմբռնումների զարգացումը ավելի ճշգրտորեն է քննում Վ. Հոֆմանը (W. Hofmann. Die römische Politik des 2 Jahrhunderts und das Ende Karthagos.—«Historia», Bd. IX, 1960, № 3, էջ 309—344)։ Հեղինակը կարծում է, որ սկզբնապես հռոմեական քաղաքական գործիչները 201 թվականի պայմանագիրը դիտում էին որպես վաղեմի վեճերը վերջնականապես լուծելու և Հռոմի շահերը հուսալիորեն պաշտպանելու միջոց։ Անհանգստություն էր պատճառում միայն Հաննիբալի դիրքավորումը։ Միայն Մասանասայի ակտիվացման հետևանքով էր, որ փոխվեց Հռոմի քաղաքական գիծը, իսկ դրանից բխում էր Կարթագենում հռոմայեցիների հանդեպ թշնամական ուժերի իշխանության գլուխ անցնելը։ Հոֆմանի կարծիքով հենց դրանից առաջացավ նաև Կարթագենի նկատմամբ հռոմեական հասարակության վերաբերմունքի մեջ եղած փոփոխությունը. եթե նախկինում պատերազմի պատճառ էին համարում միայն Հաննիբալին, ապա այժմ մեղքը լիովին բարդվեց ամբողջ պետության վրա։ Սակայն մենք կարծում ենք, որ «կարթագենցիների հանդեպ սարսափը» (metus Punicus) Հռոմում առաջացել է արտաքին քաղաքականության շուրջը կատաղի վեճերի ժամանակամիջոցում և բխում էր այն շրջաններից, որոնք ի սկզբանե ձգտում էին կործանել կարթագենական պետությունը։

179 Я. А. Лепцман. Дар Массиниси.—ВДИ, 1948, № 4, էջ 55—64:

180 Նումիդիա-կարթագենական տերիտորիալ վեճերի և դրանցում հռոմեական կառավարության խաղացած դերի մասին Պոլիբիոսից (32, 2) մեզ է հասել լոկ համառոտ և խիստ ամփոփ մի քաղվածք։ Այստեղ բացի Աֆրիբոսին հետապնդելիս Մասանասայի խնդրանքը վկայաբերելուց, որևէ այլ մանրամասնություն չկա, ուստի անհնար է դատնում քննել անցքերի ժամանակագրությունը։ Մենք ճիշտ չենք համարում Պոլիբիոսի վկայակոչմամբ Էմպորիումի նկատմամբ Մասանասայի հավակնությունները 161 թվականին դնելը և այս դեպքերը 193 թվականին վերագրող անալիստական ավանդությունը (Լիվիոս) հերքելը (տե՛ս W. Hofmann. Die römische Politik, էջ 325—326):

181 Դ. Կինաստը (D. Kienast. Cato der Zensor. Heidelberg, 1954, էջ 130) չապացուցված է համարում այն, որ մինչև 152 թ. Կատոնը հանդես է եկել Աֆրիկայում հռոմեական կառավարության պահպանած անորոշ կացության դեմ։ Կարթագենի հզորության նոր վերելքի նկատմամբ միայն անձամբ համոզվելուց հետո, Կատոնը (այսպես է կարծում Դ. Կինաստը) սկսեց երկյուղ կրել, թե չլինի հանկարծ այդ վիթխարի ուժը շուտ գա Հռոմի դեմ։

182 Մանրամասնորեն տե՛ս M. Gelzer. Nasicas Widerspruch gegen die Zerstörung Karthagos. Kleine Schriften. Bd. II, էջ 39—72:

183 Ինչպես ցույց է տվել Ֆ. Դելա Կորտեն (F. Della Corte. Catone censore. Torino, 1949, էջ 130), այս պատառիկում որոշապես զգացվում է Դեմոսթենեսի արձագանքը (Դեմոսթենես, 3, 8)։

184 E. Kornemann. Die neue Livius—Epitome aus Oxyrhynchus. Lpz., էջ 21, հմմտ. նույն տեղում, էջ 47։

185 Նույն տեղը, էջ 23։

186 *Տե՛ս նաև Լիվիոսի օքսիրինխական էպիտոմաները* (E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 23): *Պետք է ասել, որ հռոմեական իշխանությունները ձեռականորեն դուրս չէին գալիս այսպես կոչված* deditio in fidem-*ի (որը կարթագենցիներին երաշխավորում էր միայն կյանք, ունեցվածք և անձնական ազատություն) սահմաններից։*

187 *Տե՛ս նաև* E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 23։

188 *Տե՛ս նաև* E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 25:

189 *Ցիցերոնը (Պետութ., 6, 4) այս միջոցին օգտագործել է, խոսելով Մասանասայի հետ քաղաքական նյութի շուրջ Էմիլիանոսի զրույցների և վերջինիս մարգարեական երազի մասին։ Էմիլիանոսի և Մասանասայի զրույցների ստույգ բովանդակությունը հայտնի չէ։*

190 *Հմմտ.* E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 27։

191 *Տե՛ս նաև* E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 25:

192 *Հույները նրան նույնացնում էին բժշկության աստված Ասկլեպիոսի հետ։ Կարթագենի կենտրոնական և ամենահարուստ տաճարը։*

193 *Հարկ է նշել, որ գրոհով առնված կամ երկարատև պաշարումից հետո անձնատուր եղած քաղաքի ազատ բնակչության ստրկացումը մ. թ. ա. II դ. սովորաբար արդեն չէր գործադրվում և, համենայն դեպս, գնահատվում էր որպես հրեշավոր դաժանության դրսևորում։*

Որոշ ժամանակ անցնելուց հետո, այն ժամանակ հայտնի իմաստասեր Հասդրուբալը (բնիկ կարթագենցի, որ, տեղափոխվելով Աթենք, այնտեղ ընդունել էր հունական Պլատոնաքոս անունը և Կարնեադեսի մահվանից հետո գլխավորել Ակադեմիան՝ Պլատոնի հետևորդների իմաստասիրական դպրոցը) մխիթարական մի նամակով դիմեց իր գիրյալ համաքաղաքացիներին (Ցից., Տուսկ., 3, 54)։ Հաղիվ թե այն հասած լիներ նրանց, ում հասցեագրված էր, սակայն, եթե նույնիսկ որևէ մեկին հաջողվեր այն ընթերցել, կարթագենցիների վրա ինչպիսի՞ տպավորություն պետք է թողներին Կենսորինոսի դատարկ ճամարտակությունները (Ցից., Ակադ., 2, 102), նույն այն Կենսորինոսի, որը հայտարարել էր Կարթագենը ոչնչացնելու վերաբերյալ հռոմայեցիների դիտավորության մասին. մի մարդու, որը չէր կամենար բախտակից լինել իր ժողովրդին։

194 *Տե՛ս նաև* E. Kornemann. Die neue Livius—Epitome, էջ 27:

195 J. Kromayer. Hannibal als Staatsmann.—HZ. Bd. 103, 1909, էջ 237—273; E. Groag. Hannibal als Politiker. Wien, 1929.

196 G. Egelhaaf. Hannibal, Stutgard, 1922, էջ 10։

197 *Հմմտ.* A. Toynbee. Hannibal's Legacy. Vol. I. 1965, էջ VI—VII:

198 *Վ. Ի. Լենին, Ի. Ֆ. Արմանդին. 19 հունվարի, 1917 թ., եկ., հ. 49, էջ 463։*

199 *Վ. Ի. Լենին, Կուսակցական ծրագրի վերանայման շուրջը. եկ., հ. 34, էջ 364։*

200 Napoleon I Correspondance. Vol. 32, P., 1869, էջ 307—308:

201 Napoleon I. Correspondence. Vol. 31, P., 1869, էջ 418:

202 А. фон Шлиффен. Канны, М., 1938.

203 Е. А. Разин, История военного искусства. Т. I, М., 1955, с. 319—321.





ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆԱՆՇԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ապպ., Հաննիբ. — Appianus. Hannibalica.
Ապպ., Լիբ. — Appianus. Libyca.
Ապպ., Իսպ.— Appianus. Hispanica.
Ապպ., Սամն.— Appianus. Samnitica.
Ապպ., Ասոր.— Appianus. Syrica.
Ապպ., Սից.— Appianus. Sicelica.
Ապուլեյոս— Apuleius. Apologia.
Արիստ.— Aristoteles. Politica.
Աթենայոս— Athenaeus. Deipnosophistae.
Գելլ.— A. Gellius. Noctes Atticae.
Դեմոսթենես— Demosthenes. Philippicae.
Դիոդորոս— Diodorus. Bibliotheca historica.
Դիոն Կասս.— Cassius dio. Historia Romana.
Եվտրոպիոս— Eutropius. Breviarium historiae Romanae.
Զոնարաս— Zonaras. Annales.
Էննիոս— Ennius. Annales.
Իլ.— Homerus. Ilias.
Լիվիոս — Livius. Ab Urbe condita (*Լիվիոս, Կոդ.*— Livius. Ab Urba condita periocha.
Կատոն.— Cato.
Կելիոս— Caelius Antipater.
Կոլումելլա— Columella. Res Zusticae.
Կորն. Նեպ., Համ.— Cornelius Nepos. Hamilcar.
Կորն. Նեպ., Հաննիբ.— Cornelius Nepos. Hannibal.
Հուստինոս— Justinus. Trogi Pompei historiarum Philippicarum epitoma.
Նշան.— de virris illustribus.
Ոդիս.— Homerus. Odyssea.
Պապ. Ռ.— Papyrus Rylands.
Պլինիոս— Plinius. Naturalis Historia.
Պլուտ, Ապոփթ.— Plutarchus. Regum et oratorum apophtegmata, Scipio junior.
Պլուտ., Լուկ.— Plutarchus. Lucullus.
Պլուտ., Կատ.— Plutarchus. Cato Maior.
Պլուտ., Հռոմ. գործ.— Plutarchus. Acta Romanorum.

---

* *Անտիկ հեղինակներին վկայակոչելիս առաջին թիվը նշում է գիրքը, երկրորդը՝ գլուխը, երրորդը՝ պարբերությունը։*

Պլուտ., Մարկ.— Plutarchus. Claudius Marcellus.
Պլուտ., Պյութ.— Plutarchus. De Pythiae oraculis.
Պլուտ., Պյուռ.— Plutarchus. Pyrrhus.
Պլուտ., Փաբ.— Plutarchus. Fabius Maximus.
Պլուտ., Փլամ.— Plutarchus. Flaminius.
Պոլիբիոս— Polibius. Historia.
Սերվիոս— Servius. In Aeneidam.
Սիլ. Իտ.— Silius Italicus. Punica.
Ստրաբոն— Strabo. Geographica.
Սուիդաս— Suida.
Վալ. Մաքս.— Valerius Maximus. Dictorum factorumque memorabilium
Վել. Պատ. Velleius Paterculus. Historia Romana.
Ցից., Ակադ.— Cicero. Academici.
Ցից., Բրուտ.— Cicero. Brutus.
Ցից., Կանխ.— Cicero. De divinatione.
Ցից., Կատ.— Cicero. Cato Maior.
Ցից., Ճարտաս.— Cicero. De oratore.
Ցից., Պարտավորութ.— Cicero. De officiis.
Ցից., պետութ.— Cicero. De republica.
Ցից., Սեստ.— Cicero. Pro Sestio.
Ցից., Վեր.— Cicero. I In Verrem.
Ցից., II Վեր.— Cicero II In Verrem.
Փեստ.— Festus. De Verborum Signiificatu.
Փլոր.— Florus. Epitome rerum Romanorum.
Փրոնտինոս.— Frontinus. Strategemata.
Օրոսիոս.— Paulus Orosius. Historiae adversus pagenos.
CIL — Corpus Inscriptionum Latinarum.
Fest. ——Sextus Pompeius Festus. De Verborum Significatu.
CIS — Corpus Inscriptionnum Semiticarum.
KAI — H. Donner, W. Rölling. Kanaanäische und aramäische Inschriften Bd. 1—3. Wiesbaden, 1966.

ԲԱՌԱՐԱՆ

Ավգուրներ (լատ. augur)—Հռոմայեցի քրմեր, որոնք սկզբնապես կատարում էին պրոզաբերությունն ապահովող ծեսեր։ Ավելի ուշ՝ նախանշանակների (կայծակ, որոտ, թռչունների թռիչքը, թռչնաձայները, սրբազան հավքերի սնունդ ընդունելը, գազանների վարքը և այլն) մեկնողներ։

Ագորա—շուկայական հրապարակ։

Ակրոպոլիս—անտիկ քաղաքների բերդամրոցը։

Անալիստիկա (լատ. annalis)—վաղ հռոմեական պատմագրություն։

Բերիա—Առաջավոր Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի բանանական ժողովուրդների մոտ՝ դաշնագիր։

Բիլեմա—երկշար թիեր ունեցող նավ։

Բոդեր—Կարթագենում կիսակախյալ բնակչության խմբերից մեկը։

Գերուսիա—Կարթագենում պետական իշխանության բարձրագույն մարմին։ Ըստ երևույթին, 30-ի խորհուրդը։

Գերուսիականներ—Կարթագենում գերուսիայի անդամները։

Դելֆյան պատգամախոսարան—Ապոլոնի պատգամախոսավայրը Դելֆիքում (Հունաստան)։

Դիկտատոր—Հռոմում բարձրագույն պաշտոնատար անձ, որն արտակարգ դրության գեպքում սենատի որոշմամբ նշանակվում էր կոնսուլ՝ վեցամսյա ժամկետով։ Օժտված էր բացարձակ իշխանությամբ։

Դիմտու (աքք.) *աշտարակ*—առաջավորասիական Միջագետքի առափնյա երկրներում տնտեսական համալիրը արտահայտող բաներից մեկը։

Էդիլներ—Հռոմում կարգի պահպանությունը, շուկաները, հասարակական խաղերը տնօրինող պաշտոնատար անձինք։

Էմպորիում (լատ. emporium<հուն.)—այն վայրը, որտեղ պահպանում էին պարենի ու զենքի պաշարներ։

Էպիտոմա—որևէ գրքի բովանդակության համառոտ շարադրանքը։

Իմպերիում—Հռոմում բարձրագույն ռազմավարչական իշխանություն։

Լեգեոն—հռոմեական բանակի հիմնական մարտական միավորը, որը կազմված էր 10 կոհորտայից, այսինքն՝ համապատասխանաբար՝ 30 մանիպուլոսից։

Լեկտիստերնիումներ—Հռոմում աստվածների համար կազմակերպվող սրբազան խրախճանքներ։

Լիկտորներ—Հռոմում բարձրագույն մագիստրատներին ուղեկցող պահապաններ։

Կլիենտներ (լատ. clientes, բառացի՝ «հնազանդներ», «հովանավորյալներ»)—Հռոմում ձևականորեն ազատներ, որոնք կախման մեջ էին հովանավորներից (պատրոններից)։

Կազնոմեն—Հռոմում տոհմական մականուն։

Կոլոններ—Հռոմում արիստոկրատներին պատկանող վարելահողերին նստած, ձևականորեն ազատ երկրագործներ։

Կոհորտա—Հռոմեական լեգեոնի տասներորդ մասը։ Կազմված էր 3 մանիպուլոսից կամ 6 ցենտուրիայից։

Կոմիցիաներ—ժողովրդական ժողովներ Հռոմում։

Կոմիցիաներ կուրիալ—Հռոմում ըստ կուրիաների ժողովրդական ժողովներ։

Կոմիցիաներ տրիբուտային—Հռոմում ըստ տրիբուտների ժողովրդական ժողովներ։

Կոմիցիաներ ցենտուրիալ—Հռոմում ըստ ցենտուրիաների ժողովրդական ժողովներ։

Կոմիցիում—Հռոմի ֆորումում այն վայրը, ուր տեղի էին ունենում ժողովրդական ժողովներ (ըստ կուրիաների)։

Կոնսուլներ—Հռոմում բարձրագույն պաշտոնատար անձինք։ Կոնսուլների՝ երկու հոգուց բաղկացած կոլեգիան ընտրվում էր մեկամյա ժամկետով։

Կուրիա—այն շենքը, որտեղ նիստեր էր ունենում սենատը։

Կուրիաներ—Հռոմում պատրիկական տոհմերի միավորումներ, որոնք, ըստ ավանդության, հիմնվել էին Ռոմուլոսի կողմից։ Հռոմում ընդամենը հաշվվում էր 30 կուրիա։ Հետագա հետ կուրիալ կոմիցիաներում սկսեցին մասնակցություն ունենալ նաև պլեբեյները։

Հարուսպիկներ (լատ. haruspices<էտրուսկ.)—Հռոմում կանխասաց քրմեր։

Հելլենիզմ—Արևելյան միջերկրածովյան երկրների պատմության մեջ ժամանակաշրջան, որը ձգվում է Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալությունից (մ. թ. ա. IV դ. վերջ) մինչև հռոմեական նվաճումները (մ. թ. ա. II—I դդ.)։

Հեծելազորի պետ (լատ. magister equitum)—Հռոմում դիկտատորի օգնականը։ Նշանակվում էր դիկտատորի կողմից։

Հիպասպիստներ—զինակիրներ, թեթևազեն հետևազորայիններ։

Մագիստրատներ—պաշտոնատար անձինք։

Մամերտինականներ—Հռոմեական այն զորականները, որոնք Գունիկյան I պատերազմի նախօրյակին դրավեցին Ռեգիումը։

Մանիպուլոս—հռոմեական զորամիավորում՝ բաղկացած 2 ցենտուրիայից։

Մեդիքս Տուտիկուս—Նապուլայում բարձրագույն մագիստրատը։

Մեծ պոնտիֆեքս—Հռոմում գերագույն քուրմը։

Միջթագավոր (լատ. interrex)—հռոմեական մագիստրատ. նշանակվում էր պաշտոնատար անձանց ընտրություններն անցկացնելու համար։

Մոդիոս—տարողության հռոմեական չափ. համապատասխանում է 8,7 լ։

Մունիցիպիում—Հռոմին ենթակա ինքնավար քաղաքներ։

Նոբիլներ (լատ. nobiles—տոհմիկ)—մ. թ. ա. III—I դդ. ձևավորված հռոմեական արիստոկրատիան։

Օյկումենա (հուն.)—բնակեցված աշխարհը։

Օվացիա—հաղթանակած զորապետի հանդիսավոր մուտքը Հռոմ։ Տրիումֆից (տե՛ս) տարբերվում էր նրանով, որ զորավարն ընթանում էր հետիոտն, կամ ձի նստած՝ հագին տոնական պարեգոտ։ Ցուպիտերին որպես զոհ, նա մատուցում էր ոչխար։ Օվացիայի իրավունք տրվում էր այն դեպքում, երբ սենատի կարծիքով, հաղթանակը պակաս նշանակալից էր տրիումֆի համար։

Պատրիկներ—Հռոմում արիստոկրատական դաս։ Ըստ երևույթին «բուն» հռոմայեցիների՝ քաղաքի հնագույն բնակչության, սերունդները։

Պելտաստներ (հուն.)—կաշվե վահանով, սրով, տեգով և երկար նիզակով զինված հետևազորայիններ։

Պենատքսսներ—Կարթագենում հինգ հոգուց բաղկացած հանձնախմբեր, որոնք նշանակում էին 104-ի խորհրդի անդամներին։

Պենտերա (հուն.)—անգ. քվինքվերեմա։

Պերիգատեոտիներ—Սրիստոտելի հետևորդ իմաստասիրները։

Պիլում—նետաձգակ։

Պլեբեյներ—Հռոմում սկզբնապես ոչ լիիրավ քաղաքացիների դաս։ Ըստ երևույթին համեմատաբար ուշ բնակվածների սերունդները։

Պլեբիսցիտ—Հռոմում տրիբուտային կոմիցիաների որոշումները։

Պրետորներ—Հռոմում պաշտոնատար անձինք, որոնք զեկավարում էին հասարակական կարգի պահպանությունը և արդարադատության իրագործումը։

Պրոլետարներ—սեփականազուրկ մարդկանց խավ Հռոմում։

Սատուրնալիաներ—տոնախմբություններ Հռոմում։

Սենատ—Հռոմում կառավարման պարտականություններն իրականացնող խորհուրդ։

Սիբիլլական գրքեր—ըստ հռոմեական ավանդության, կումեցի գուշակուհի Սիբիլլան Տարքվինիոս Զառամյալ արքային վաճառել էր գուշակությունների երեք գիրք։ Դրանք պահվում էին Յուպիտերի տաճարում (Օգոստոս կայսեր ժամանակներից՝ Ապոլլոնի տաճարում)։ Ցուցումներ ստանալու համար Սենատի որոշմամբ սիբիլլական գրքերին և պատգամախոսներին դիմում էր հատուկ հանձնախումբը։

Ստրատեգոսներ—հպատակ երկրներում կարթագենական կառավարության նշանակած զինվորական կառավարիչներ։

Սրբազան գարուն (լատ. Ver Sacrum)—Իտալիայում Մարսին կամ Յուպիտերին՝ աղետի հաջորդ տարում ծնված մարդկանց և կենդանիներ նվիրելու սովորույթ։

Սուֆետներ (դատավորներ)—Կարթագենում բարձրագույն պաշտոնատար անձինք։

Վելիտներ—հռոմեական թեթևազեն զինվորներ։

Վեստալուհիներ (լատ. virgines Vestales)—Հռոմում Վեստա աստվածուհու քրմերը, որոնք նրա տաճարում պահպանում էին հավերժական կրակը։ Վեստալուհիները մեծ հարգանք էին վայելում։ Նրանց հետ հանդիպելու դեպքում դատապարտված հանցագործը աղատվում էր պատժից։ Վեստալուհիներն իրենց պարտականությունները կատարում էին երեսնամյա ժամանակաընթացքում։ Նրանք պարտավոր էին ողջախոհություն պահպանել։ Անառակություն կատարած վեստալուհուն ողջ-ողջ թաղում էին հողում։

Տետերա (հուն.)—քառաշար թիեր ունեցող նավ։

Տրիարիներ—Հռոմում զորաշարքի երրորդ տողանում գտնվող զորական-վետերաններ, որոնք վտանգավոր իրադրություններում մտնում էին մարտի մեջ։

Տրիբուններ զինվորական—Հռոմում բանակային հրամանատարական կազմը։ Զինվորական տրիբունները գլխավորում էին զորամիավորումները, կատարում գերագույն հրամանատարության առանձին հանձնարարություններ, մասնակցում ռազմական խորհրդին։ Մ. թ. ա. 444—367 թթ. կոնսուլական իրավազորությամբ օժտված զինվորական տրիբունները երբեմն ընտրվում էին կոնսուլների փոխարեն, որպեսզի պլեբեյներին թույլ չտային հասնելու կոնսուլի պաշտոնին։

Տրիբուններ պլեբեյական—Հռոմում պլեբեյական մագիստրատներ, որոնք ընտրվում էին տրիբուտային կոմիցիաների կողմից՝ պլեբեյների շահերը պաշտպանելու համար։ Օգտվում էին սրբազան անձեռնմխելիությամբ։

Տրիբուս—Հռոմում սկզբնապես տոհմ։ Երեք տոհմերի միավորմամբ կազմվում էր հռոմեական ժողովուրդը։ Սերվիոս Տուլլոս թագավորին (մ. թ. ա. VI դ.) վերագրվող օրենքով Հռոմում ստեղծվեցին տարածքային վարչաշրջաններ, որոնք նույնպես կոչվում էին տրիբուններ։

Տրիերա—եռաշար թիերով նավ։

Տրիերարքոս—տրիերայի նավապետ։

Տրիումֆ—զորքի ու ժողովրդի ուղեկցությամբ հաղթանակ տարած զորավարի հանդիսավոր մուտքը Հռոմ։ Հաղթահանդեսով ժամանող զորավարը մուտք էր գործում լորս սպիտակ ձիեր լծած ոսկեզօծ կառքով, զգեստավորված Յուպիտերի պես և դափնեպսակով զարդարված։ Զորավարի եռևում կանգնած պետական ստրուկը ոսկե ծաղկեփունջը պահում էր նրա գլխավերևում և արտասանում խոնարհության կոչող ծիսական բանաձևեր։ Կառքի առջևից բերում էին ռազմասարը և գերիներին։ Կառքի ետևից ընթանում էին դափնիներով ու պարգևներով զարդարված զորականներ. նրանք գոչում էին. «Յուպիտեր, հաղթանակիրթ, ի պատիվ զորավարի, երգում գովասանական, ինչպես նաև շարակներից խուսափելու համար՝ ծաղրական երգեր։ Կապիտոլիումում, սենատի ներկայությամբ տրիումֆով մուտք գործած զորավարը Յուպիտերին զոհ էր մատուցում ցուլ։ Գերյալներին տանում էին բանտ, իսկ նրանցից առավել ազդեցիկներին հաճախ սպանում էին։ Տրիումֆ վերապահվում էր սենատի որոշմամբ, զորապետի խնդրանքով. վերջինիս հաշվետվությունը լսում էին քաղաքի սահմանագծից դուրս, Բելոնայի տաճարում։ Մինչև տրիումֆը նա քաղաք մտնելու իրավունք չուներ։

Ցենզորներ—Հռոմում պաշտոնատար անձինք, որոնք հինգ տարին մեկ ընտրվում էին՝ քաղաքացիների մարդահամար և նրանց գույքային հաշվեհամարը կատարելու նպատակով։ Վերահսկում էին քաղաքացիների վարքը։ Ցենզորները կազմում էին հեծյալների և սենատի ցուցակները։

Ցենտուրիա—Հռոմում զորական միավորում (հարյուրակ)։

Ցենտուրիոններ—Հռոմում ցենտուրիաների հրամանատարներ։

Փոխադարձ հյուրընկալության վերաբերյալ պայմանագիր—կնքվում էր զանազան հասարակություններից դուրս ելածների միջև. կողմերին պարտավորեցնում էր պաշտպանել և հովանավորել միմյանց։

Քվադրիեմա—չորս-թիաշարանի նավ։

Քվեստորներ—Հռոմում պաշտոնատար անձինք. տեսչություն էին գանձարանը։

Քվինքվերեմա—հինգ թիաշարանի նավ։

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ագաթարքոս, Սիրակուզայի թագավոր Հիերոնիմի մերձավորը—230
Ագաթոկլես, սիրակուզացի քաղաքական գործիչ—450
Ագաթոկլեսի աշտարակ, ամրություն Աֆրիկայում—450
Ագելայոս, նավպակտոսցի քաղաքական գործիչ—207
Ագրիական ծով—131, 209, 278
Ագատություն, հռոմեական աստվածություն 252
Ադենք—385, 454
Ադիլլա, հոների թագավոր 431
Ալբա, քաղաք Իտալիայում—446
Ալբանական բլուր—284
Ալգիդոս, քաղաք Իտալիայում—285, 446
Ալեքսանդր Մակեդոնացի, Մակեդոնիայի թագավոր, հռչակավոր զորավար (IV դ. վերջ)—8, 20, 298, 383
Ալեքսանդրիա, հելլենիստական Եգիպտոսի մայրաքաղաքը—240
Ալիենոս, քաղաքական գործիչ Սալապիայում (ըստ Զոնարասի)—303
Ալկոն, սաղմոնտումցի քաղաքական գործիչ—83
Ալիփը, քաղաք Իտալիայում—138, 140
Ալլիա, քաղաք Իտալիայում—446
Ալոբրոգներ, գալլական ցեղ—100, 101
Ալորկ, իսպանացի, ծառայում էր Հաննիբալի բանակում—83
Ալպեր—66, 92, 99—104, 126, 170, 290, 321, 322, 352, 384, 429
Ալփեա, քաղաք Իսպանիայում—437
Ալֆելդի Ա., Անտիկ աշխարհի այժմյան պատմության—434
Ակեռն, քաղաք Իտալիայում—198, 199, 442
Ակրա Լեկե (այժմ Ալիկանտե), կարթագենական գաղութ Իսպանիայում—59—62, 246, 433
Ակրագանտ, հունական քաղաք Սիցիլիայում—36, 244, 245, 270, 274, 307,
Ակրիլլա, քաղաք Սիցիլիայում—244
Ակրե, քաղաք Սիցիլիայում—244
Ակուկա, քաղաք Իտալիայում—223
Ամիտերնում, քաղաք Իտալիայում—124, 446
Անագնիա, քաղաք Իտալիայում—446
Անապոս, գետ Սիցիլիայում—244
Անաս (այժմ Գվադիանա), գետ Իսպանիայում—71
Անգա, քաղաք Աֆրիկայում—450
Անդրանոդորոս, սիրակուզացի քաղաքական գործիչ, Հիերոն II-ի փեսան—228, 231—232
Անիոնոս, գետ Իտալիայում—285, 286, 447
Անտիգոնոս Դոսոն, Մակեդոնիայի թագավոր (III դ.)—206
Անտիոքոս III, Սելևկյան պետության թագավոր—57, 372—337, 400, 452,
Անտիոք, քաղաք Ասորիքում, Սելևկյան պետության մայրաքաղաք—379
Անտիստիոս Մարկոս, հռոմայեցի պետական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—125
Անտորդում, քաղաք Իսպանիայում—275, 276
Ապամնա, քաղաք Փոքր Ասիայում—386
Ապենինյան թերակղզի 24, 41, 58, 101, 103, 138, 154, 183, 248, 275, 287, 291, 299, 311, 321, 327, 427
Ապոլոդորոս, Եփեսոսի տիրան (IV դ.)—225
Ապոլլոն, հունական աստվածություն—192, 193, 209, 427
Ապոլլոնիա, քաղաք Հունաստանում—207, 266, 278
Ապոլլոնիոս, Անտիոքոս III-ի մերձավորը—386
Ապպիանոս, հույն պատմագիր, Հռոմի պատմության (II դ.) վերաբերյալ աշխատությունների հեղինակ 6, 9, 50, 69, 75, 76, 80, 83, 96, 103, 117, 123, 142, 150, 165, 166, 195, 197, 199, 203, 250, 256, 259, 260, 274, 277, 281, 284, 288, 292, 296, 319, 350
Ապիյան Հանապարհ (Իտալիայում)—139, 190
Ապուլիա, մարզ Իտալիայում—130, 141, 144, 162, 175, 186, 208, 219, 220, 223, 261—262, 305, 323
Ապուլիացիներ—173
Առաջավոր Ասիա—372
Առեստիում, քաղաք Իտալիայում—125, 127, 330
Առնոս (այժմ Առնո), գետ Իտալիայում—126
Ասկլեպիոս, հունական աստվածություն—454
Ասկուա, քաղաք Իսպանիայում—188
Ասորիք, երկրամաս Մերձավոր Արևելքում—372, 378, 387, 451
Ասպիդա, քաղաք Աֆրիկայում—419
Աստարտ, փյունիկյան աստվածություն—12
Ավենտինոս, այն բլուրներից մեկը, որոնց վրա գտնվում է Հռոմը—285, 286
Ավերնոսյան լիճ (Իտալիայում)—220
Ավսետաններ, ազգություն Հյուսիսային Իտալիայում—91, 123
Ավստիկուլա, քաղաք Իտալիայում—176, 215
Ավտարիտոս, վարձկանների և վիրավոր զինվորների հակակարթագենական շարժման ղեկավար—53—55
Ավտոնոյոս, Թեսալացի, Սիրակուզայի թագավոր Հիերոնիմի մերձավորը—231
Ատարբա, Պունիկյան I պատերազմի ժամանակ պունիկյան նավատորմավար—38
Ատելլա, քաղաք Իտալիայում—129
Ատիլիոս Ռեգուլոս Մարկոս, Պունիկյան I պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—26, 37, 40, 45, 50
Ատիլիոս Ռեգուլոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—153—155, 159, 160, 164
Ատիլիոս Սերրանոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—94, 96, 104
Ատիլիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23
Ատիլիոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—256
Ատինատիա, քաղաք Իլլիրիայում—210, 278
Ատլանտյան օվկիանոս—152
Աստալես, սիրակուզացի քաղաքական գործիչ—264
Աստալես, Պերգամոսի թագավոր (III դ. վերջ—II դ. առաջին կես)—390, 278
Ատրինում, քաղաք Իտալիայում—249
Արաքս գետ—387
Արբոկալա, քաղաք Իսպանիայում—71
Արգեա, քաղաք Իտալիայում—73
Արես, հունական և փյունիկյան աստվածություն—209
Արիստուսա, ազբյուր Սիրակուզայի մոտակայքում—371
Արիմինում (այժմ՝ Ռիմինիում), քաղաք Իտալիայում—104, 121, 124, 129, 330, 337

Արիստոն, ողբերգակ դերասան Սիրակուզայում—234
Արիստոն, տյուրոսցի, Հաննիբալի զորավարը—381, 392
Արիոբարզան, Սիփաքսի թոռը, կարթագենական զորապետ (II դ.)—402, 403
Արմանդ Ի.—428
Արոմատների երկիր—369
Արպիք (Արգիրիպիք), քաղաք Իտալիայում—124, 130, 135, 174, 219, 248, 249, 259
Արսակյաններ, նումիդիական ցեղ Աֆրիկայում—361
Արսախ, իբերական ցեղ—73
Արքիմեդ, սիրակուզացի գիտնական և հասարակական գործիչ—226, 240, 243, 263, 272, 273, 274
Արևելյան Միջերկրական—11, 14, 16, 44, 56, 62, 73, 170, 173, 177, 321
Արևմտյան Միջերկրական—20, 372, 385, 386
Աուրինգում, քաղաք Իսպանիայում—274
Աուփիդոս, գետ Իտալիայում—163—165, 169, 439
Աքայական միություն, քաղաքական միավորում Հունաստանում—385, 399, 426
Աքիլլա, քաղաք Աֆրիկայում—377
Աքրագինա, Սիրակուզա քաղաքի շրջաններից—233, 239, 240, 266—272, 445
Աֆտիրոս, նումիդիացի քաղաքական գործիչ—393, 453
Աֆրիկա—3, 12, 14, 15, 18, 26, 31, 32, 37, 40, 46, 51, 54, 56, 79, 84, 87, 89, 103, 153, 158, 181, 275, 282, 296, 308, 311, 329—336, 340, 342, 344, 345, 348—351, 356, 359—362, 365—369, 371, 377, 380, 394—399, 402—406, 417—421, 424, 449, 450, 453
Աֆրիկացիներ—29

Բագբաղա (այժմ Մեջերդա), գետ. Հյուսիսային Աֆրիկայում—15, 32, 360
Բալեարյան կղզիներ, Միջերկրական ծովում—216, 329
Բալեարներ, Բալեարյան կղզիների բնակիչները—29, 48, 88, 116, 127, 165, 317, 329, 362
Բալկանյան թերակղզի—3, 74, 211, 273, 279, 300, 404
Բանականություն, հռոմեական աստվածություն—134
Բանտիա, քաղաք Իտալիայում—318
Բանտիոս Լուկիոս, քաղաքական գործիչ Նոլայում, Պունիկյան II պատերազմի ժամանակ—198, 442
Բաստուլներ, ազգություն Իսպանիայում—58
Բատոն Սինոպեցի, հույն պատմագիր—444
Բարգուսիներ, ազգություն Իսպանիայում—90, 91
Բարկաներ, արիստոկրատական ընտանիք Կարթագենում—23, 63, 69—71, 142, 307, 308, 352, 353, 354, 368, 369, 374, 377, 381, 390, 395, 444
Բարմոկար, զորապետ Հաննիբալի բանակում—209
Բեբիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—359, 360
Բեբիոս Գերենիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—155, 156
Բեբիոս Տամֆիլիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—79, 80, 84, 437
Բելոնա, հռոմեական աստվածություն—331
Բեկուլա, քաղաք Իսպանիայում—313, 317, 328
Բետիկա, մարզ Իսպանիայում—327
Բենևենտում, քաղաք Իտալիայում—137, 220, 222, 258—259
Բինդոռ, քաղաք Իսպանիայում—247
Բիզակիում, մարզ Աֆրիկայում—376, 449
Բիսստոիս, քաղաք Հյուսիսային Աֆրիկայում—31
Բիտիա, նումիդիական, իսկ հետագայում կարթագենական զորապետ—419, 421
Բիր Ջ. դե, հին աշխարհի այժմյան պատմաբան—439
Բիրսա, բլուր, որի վրա հիմնվել էր Կարթագենը—390, 393, 421, 424, 426
Բիքերման Է., հին աշխարհի այժմյան պատմաբան—66, 211
Բլանդե, քաղաք Իտալիայում—223
Բլատիոս, քաղաքական գործիչ Սալապիայում—303, 304, 448
Բլոսիոսներ, ազդեցիկ տոհմ Կապուայում—305
Բյութանիա, երկրամաս Փոքր Ասիայում—388
Բոմիլկար, զորապետ Հաննիբալի բանակում—217, 245, 268—270, 445
Բոյեր, գալլական ցեղ—93, 94, 98, 99, 103, 104, 109, 110
Բոսսի Ջ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—442, 444, 446
Բոստար, դիվանագետ Հաննիբալի մերձավորների միջավայրում—289
Բոստար, զորապետ Հաննիբալի բանակում—212
Բոսֆոր—389
Բովիանում, քաղաք Իտալիայում—258
Բրանկ, քաղաքական գործիչ ալոբրոգների մեջ—100
Բրիսարևս, հունական առասպելաբանության մեջ հարյուրաձեռն հսկա—243
Բրիկսիաններ, գալլական ցեղ—94
Բրունդիսիում (այժմ Բրունդիզի), քաղաք Իտալիայում—174, 208, 219, 224, 246, 248, 256, 260, 262
Բրուտիներ, ազգություն Իտալիայում—173, 202—204, 222, 313, 314, 327, 363
Բրուտիում, մարզ Իտալիայում 28, 41, 186, 202—204, 215, 217, 219, 221, 222, 248, 256—260, 280, 288, 292, 304, 313, 318, 322, 324, 326, 333, 337, 343, 351, 352
Բուլոտ, գետ Իտալիայում—339
Բուսա, մեծատոհմիկ կին Կանուսիումում—174
Բուրիան Յա., Հին աշխարհի այժմյան պատմաբան—450

Գաբիում, քաղաք Իտալիայում—285, 446
Գադես (այժմ Կադիս), փյունիկյան գաղութ Իսպանիայում—58, 62, 87, 327—329
Գալա, մասիլիների թագավոր—251, 395
Գալեագրա, աշտարակ Սիրակուզայում—265
Գալաթիա, բերդ Իտալիայում—28
Գալլիա, հնադարում երկիր. ընդգրկում էր այժմյան Ֆրանսիան և Հյուսիսային Իտալիան—3, 89—93, 121, 124, 153, 158, 159, 210, 316, 321, 337, 350, 438, 444
Գալլիա Այսրալպյան, Ալպերից հարավ ընկած երկիր—91, 94, 95, 100, 118, 122, 126, 322
Գալլեր (կելտեր), ցեղեր և ազգություններ, բնակվում էին Գալլիայում և մասամբ Իսպանիայում—7, 29, 47, 52, 59, 63, 66, 68, 74, 89, 91, 93, 96—99, 105—116, 118, 122, 126, 127, 158, 166, 171, 191, 247, 324—326, 329, 333, 337, 362
Գամե, քաղաք Իտալիայում—214
Գելա, հունական քաղաք Սիցիլիայում—38
Գելիկա (այժմ Էլչե), քաղաք Իսպանիայում—60
Գելլիոս Ավլոս, հռոմայեցի մատենագիր—195, 298, 438
Գելոն, Հիերոն II-ի որդին, սիրակուզացի պետական գործիչ—204, 224, 225, 234, 444
Գելցեր Մ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—65, 434
Գեղեցիկ Հրվանդան Աֆրիկայում—31, 32, 341

Գեղեցիկ հրվանդան Իսպանիայում—31
Գենուա, քաղաք Սիցիլիայում—245
Գետուններ, ցեղ Աֆրիկայում—200, 201
Գերոնտիա, քաղաք Իտալիայում—261, 304, 305, 308
Գերենիոս Բասոս, պետական գործիչ Նոլայում—218
Գերեոնիում, քաղաք Իտալիայում—141, 142, 146, 147, 152, 154, 159, 163, 164
Գերիոս Պետրոս, պետական գործիչ Նոլայում—217
Գզել Ստ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—445, 448—451, 453
Գիլբերտ Օ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—65
Գիսկոն, Պունիկյան II պատերազմի ժամանակ քաղաքական գործիչ Կարթագենում—367
Գիսկոն, Պունիկյան I պատերազմի վերջում Լիլիբեոնի պունիկյան պարեսը—46, 49, 53
Գիսկոն, Համիլկարի դեսպանը Փիլիպոս V թագավորի մոտ—204
Գիսկոն, Համիլկարի որդին, քաղաքական գործիչ Կարթագենում (II դ.)—404, 405
Գիրգիններ, ազգություն Իտալիայում—173, 175, 217, 313
Գնեոիչ Ն. Ի., ռուս բանաստեղծ—426
Գրիգին Ն. Ս., ռազմական արվեստի ժամանակակից պատմաբան—439
Դոմիտիոս Մանկինոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—139
Դոմիտիոս Մանկինոս Լուկիոս, հռոմեական զորապետ (II դ.)—419, 421
Դոմիտիոս Տուրբուլոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—323
Դոմատիոս, Համպսիկորայի որդին, Պունիկյան II պատերազմի ժամանակ սարդինացիների զորապետ—216
Դորպա, բնակավայր Աֆրիկայում—407
Դորտինա, քաղաք Կրետե կղզում—387
Դրումենտում, քաղաք Իտալիայում—215, 323
Դուլուսա, Մասանասայի որդին, նումիդիական պետական գործիչ—396—399, 406, 407, 411, 418—419, 422, 424

Դամիպոս, սպարտացի, Սիրակուզայի թագավոր Հիերոնիմի մերձավորը—231, 265
Դասիոս, բրունդիսիումցի, Կլաստիդիում բերդում հռոմեական կայազորի պետ—110
Դասիոս, պետական գործիչ Սալապիայում—175, 303, 304, 448
Դասիոս Ալտինիոս, պետական գործիչ Արպիքում—175, 248, 249, 252, 259
Դավնոսներ, ազգություն Իտալիայում—146
Դարինե, Անտիոք քաղաքի արվարձանը—379
Դելբրյուկ Գ, ռազմական արվեստի ժամանակակից պատմաբան—442
Դելոս, կղզի էգեյան ծովում—392
Դելֆիք, քաղաք՝ Հունաստանում, Ապոլլոնի նշանավոր պատգամախոսավայրը—192, 226
Դեմարատ, Հիերոն II-ի դուստրը—228
Դեմետրիոս Փարոսացի, հունական քաղաքական գործիչ (III դ.)—206, 210
Դեմոսթենես, աթենացի հռետոր և քաղաքական գործիչ—453
Դեկիոս Մագիոս, կապուացի քաղաքական գործիչ—182—185
Դիանա, հունական աստվածուհի—388
Դիմալա, քաղաք Իլլիրիայում—210
Դինոմենես, սիրակուզական զորապետ—232, 238
Դիոդորոս, հույն պատմագիր (I դ.)—6, 14, 34, 58—62, 272, 355, 423, 435
Դիոմեդես, Արպիքի առասպելական հիմնադիր—174
Դիոն Կասսիոս, հույն պատմագիր (մ. թ. II—III դ.դ.)—11, 79, 140, 196, 197, 199, 272, 340, 355, 369, 438

Դիոնիսիոս Ավագ, սիրակուզական տիրան (IV դ.)—225, 231
Դյակոնով Ի. Մ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—14
Դոլ Թ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—433, 438, 442, 443, 445, 450
Դորի Տ. Ա., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—436
Դորիմաքոս, էտոլիական միության քաղաքական գործիչ—300
Դրեպանում, քաղաք Սիցիլիայում—38
Դրուենկիա (այժմ Դյուրանոս), գետ Գալլիայում—100
Դուիլիոս Գայոս, Պունիկյան I պատերազմի ժամանակ հռոմեական պետական գործիչ և զորապետ—37
Դուկարիոս, ինստիտուտ, որն ստանձնեց Գ. Փլամինիոսին—128
Դուրիս (այժմ Դուերո), գետ Իսպանիայում—71, 437

Եգիպտոս—19, 43, 372, 378, 387
Ելնիցկի Լ. Ա., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—434
Եվկլիդես, հույն մաթեմատիկոս (IV դ. 2-րդ կես—III դ. 1-ին կես)—240
Եվմենես, Պերգամոսի թագավոր (II դ. 1-ին կես)—388
Եվրոպա—4, 372, 380
Եվրոպիոս, հռոմայեցի պատմաբան (մ. թ. IV դ.)—11, 84, 128, 186, 189, 209, 211, 355, 447, 448, 452
Երուսաղեմ, քաղաք Պաղեստինում—7
Եփեսոս, քաղաք Փոքր Ասիայում—379, 382, 432
Եփրատ, գետ Առաջավոր Ասիայում—8

Զակինթոս, հունական քաղաք Նուբանուն կղզում—73
Զամա, քաղաք Աֆրիկայում—7, 214, 336, 358, 364, 381, 400, 429, 440, 450, 452
Զեյնեկի Թ. Ֆ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—449—452

Զեգիստանա, մարզ Աֆրիկայում—449
Զևս, հունական աստվածուհի—208
Զոնիպոս, Հիերոնի փեսան—228
Զոնարաս, բյուզանդացի պատմիչ (մ. թ. XI—XII դ.դ.)—11, 39, 81, 93, 140, 209, 211, 273, 303, 355, 413, 420, 436, 438, 450

Էբեսոս (այժմ Իվիսա), կղզի Միջերկրական ծովում—152
Էգատեյան կղզիներ—43, 44
Էգիմուրե, վայր Հյուսիսային Աֆրիկայում—359
Էգեսկոն, էգեստաններ ցեղի առաջնորդ—316
Էգեստաններ, ցեղ Իսպանիայում—316
Էլիա, մարզ Հունաստանում—206
Էլիսա, Կարթագենի առասպելական հիմնադրուհի—11
Էկիոս, քաղաք Իտալիայում—223
Էկնոմոս, հրվանդան Սիցիլիայում—37, 38
Էմիլիոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—154
Էմիլիոս Պավլոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—84, 111, 157, 158, 160—162, 223, 439
Էմիլիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23, 79, 80, 84, 111, 118, 133, 143, 296, 439
Էմպորիում, երկրամաս Հյուսիսային Աֆրիկայում—31, 341, 392, 393, 407, 453
Էմպորիում, հունական քաղաք Իսպանիայում—122, 299
Էննիոս, հռոմեական բանաստեղծ—358
Էշմուն, փյունիկյան աստվածուհի—426
Էպիդամնոս, քաղաք Հունաստանում—210
Էպիկիդես, սիրակուզացի քաղաքական գործիչ—229, 231, 233—242, 264—270, 274, 307
Էպիկիդես Սինոն, սիրակուզացի քաղաքական գործիչ—270

Էպիդոլն, քաղաքամաս Սիրակուզայում—265, 266
Էպիրոս, մարզ Հունաստանում—209, 246
Էսկուլապոս, տե՛ս Էշմուն
Էսուլա, բերդ Իտալիայում—284
Էսքվիլինե, այն բլուրներից մեկը, որոնց վրա տեղավորված է Հռոմը—285
Էսքվիլինեյան դարպասներ Հռոմում—285
Էվրիալոս, բլուր և ամրոց Սիրակուզայի մերձակայքում—267
Էտոլիական միություն, քաղաքների միավորում Հունաստանում—206, 265, 279, 300, 335, 385
Էտովիսսա, քաղաք Իսպանիայում—91
Էտրուսկներ, ազգություն Իտալիայում—12, 31, 180, 319
Էտրուրիա, մարզ Իտալիայում—13, 117, 120—122, 125, 127, 129, 257, 306, 312, 322, 344

Թապսոս, քաղաք Աֆրիկայում—376
Թեմիստոս, սիրակուզացի քաղաքական գործիչ—234
Թեոդոտոս, սիրակուզացի քաղաքական գործիչ—229, 232, 233
Թեսալիա, մարզ Հունաստանում—385, 399
Թերմոպիլե, լեռնանցք Հունաստանում—385
Թուկիդիդես, հույն պատմագիր—4
Թունեսե (այժմ Թունիս), լիբիական քաղաք Աֆրիկայում—38, 48—53, 55, 56, 349, 350, 365
Թուրիա, հունական քաղաք Իտալիայում—101

Իբեր (այժմ Էբրո), գետ Իսպանիայում—59, 63—67, 71, 74, 77, 90—92, 122, 152, 188, 189, 212, 246, 277, 293, 308, 352, 436, 437
Իբերացիներ (իբերներ), հին Իսպանիայի բնակչությունը—7, 29, 48, 62, 70, 75, 86—89, 92, 96, 103, 108, 116, 122, 126, 127, 140, 152, 158, 165, 166, 271, 316, 317, 325—327, 437
Իբերիա (տե՛ս նաև Իսպանիա)—49, 50, 124
Իլերգետներ, ազգություն Իսպանիայում—88, 91, 123, 152
Իլիբերա, քաղաք Գալլիայում—92
Իլիպա, քաղաք Իսպանիայում—328
Իլիտուրգի, քաղաք Իսպանիայում—219, 247, 293
Իլլիրիա, երկիր Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմուտքում—80, 207, 208, 212, 246, 278, 279, 335
Իլլիրիացիներ, Իլլիրիայի բնակչությունը—73
Ինգաուններ, լիգուրիական ցեղ Իտալիայում—330
Ինդիբիլոս, իսպանացի քաղաքական գործիչ—276, 316
Ինդորա, իսպանացի քաղաքական գործիչ և զորապետ—59
Ինսումբրներ, գալլական ցեղ—103, 106, 119, 351
Ինտերամնա, քաղաք Իտալիայում—328
Ինտիբիլոս, քաղաք Իսպանիայում—219
Իոլայոս, հունական և փյունիկյան առասպելաբանության հերոսներից—209
Իսակա, Հաննիբալի բանակում գետուլական հեծյալների հրամանատար—200
Իսարա (այժմ Իզեր), գետ Անդրալպյան Գալլիայում—100
Իսպանիա—3, 11, 12, 19, 32, 58, 59, 62—70, 74—80, 85, 87—95, 123, 125, 134, 135, 138, 142, 152, 187—188, 205, 219, 247, 251, 275, 278, 282, 286, 293—295, 303, 315, 316, 321, 326—332, 350, 354, 384, 390, 404, 435—438, 447—449
Իսոկրատես, հելլենական քաղաքական գործիչ—58
Իտալիկներ, ազգություններ, բնակվում էին Իտալիայում (բացառյալ էտրուսկները)—7, 28, 29, 36, 99, 103, 110, 128, 130, 142, 169—171, 222, 253, 304, 362, 363, 380, 390, 413, 429
Իտալիա—3, 6, 11, 19, 24, 26, 33—37, 41—45, 58, 69, 74, 75, 84—88, 91—105, 108—114, 117, 119—122, 125, 128, 131, 135, 137, 142, 145, 148, 152, 154, 169—177, 181—190, 192, 196, 197, 199, 201, 205—213, 223, 227, 247—252, 256, 257, 263, 269, 275, 280, 282, 285, 287, 291, 299—302, 306, 308, 311—316, 317, 318, 321, 322, 327, 329—333, 335, 337, 344, 345, 348—355, 359, 365, 370, 380—385, 348, 401, 427, 429, 442, 445, 450

Լարիկե, քաղաք Իտալիայում—385, 446
Լակետանիա, մարզ Իսպանիայում—91
Լակումասա, մասիլիների ցեղի քաղաքական գործիչ—341
Լանուվիում—124
Լատինական ճանապարհ Իտալիայում—135, 190, 446
Լատինացիներ, ազգություն Իտալիայում—128, 187, 200
Լատինիում, քաղաք Իտալիայում—318
Լատինիումյան լեռներ Իտալիայում—443
Լատիում, մարզ Իտալիայում—31, 33, 446
Լենին Վ. Ի.—428
Լենշաու Տ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—439, 444—446
Լեոնտինե, քաղաք Սիցիլիայում—232, 233, 236—241, 264, 267
Լեոնտոս, վայր Սիցիլիայում—246
Լելիոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—296, 309, 334—336, 347, 348, 362—364, 449
Լելիոս Սապիենս Գայոս, Լելիոս Գայոսի որդին—424
Լեսբոս, փյունիկյան քաղաք Աֆրիկայում—361, 392, 452
Լեպտիս Փոքր, փյունիկյան քաղաք Աֆրիկայում—449
Լեսորիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23
Լիբիա, մարզ Հյուսիսային Աֆրիկայում—14, 16, 32, 47, 52, 55, 88, 416, 419
Լիբիացիներ, Հյուսիսային Աֆրիկայի բնիկները—7, 14, 15, 19, 28, 38, 48—52, 55, 56, 88, 103, 116, 127, 128, 165, 166, 195, 317, 336, 362
Լիբիափյունիկացիներ, ազգություն Աֆրիկայում—88
Լիբիա, բնակավայր Բոսֆորի Եվրոպական ափին—389
Լիգուրիա, մարզ Իտալիայում—12, 49, 120, 210, 335, 351, 354
Լիգուրներ, ազգություն Իտալիայում—7, 48, 88, 107, 322, 325, 326, 329, 330, 333, 337, 362
Լիլիբեոն, քաղաք Սիցիլիայում—35, 38, 45, 49, 95, 111, 153, 158, 207, 216, 275, 308, 321, 340, 411, 445
Լիկինիոս Գայոս, հռոմայեցի քաղաքական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—84
Լիկինիոս Կրասսոս Պուբլիոս, հռոմայեցի քաղաքական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—312, 331, 333, 337, 343
Լիկինիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Լիպարոսյան կղզիներ—37, 94
Լիսոս, քաղաք Իլլիրիայում—278
Լիվիոս Գայոս, պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի զորապետ—254
Լիվիոս Դրուզոս Մարկոս, հռոմայեցի քաղաքական գործիչ (II դ.)—420
Լիվիոս Սալինատորոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ—84, 224, 322, 325, 330, 337
Լիվիոս Տիտոս, հռոմեական պատմագիր—5, 9, 11, 15, 33, 43, 46, 58—64, 66—81, 84, 87, 90—93, 96—99, 102, 105—121, 124, 128, 129, 136, 139, 141, 144—149, 155—158, 160—165, 168, 169, 171—175, 178—182, 182—188, 194—196, 199—205, 211, 213, 218—221, 224, 228, 229, 233, 238, 241—244, 247, 248, 251, 252, 256—259, 262, 263, 266, 270, 272, 278, 281,

285, 288—291, 297—304, 316, 237, 326, 329, 333, 340—346, 350, 352—359, 362, 363, 368, 370—376, 383, 388, 394—397, 404, 405, 407, 413, 435—438, 441—452
Լիտերնում, քաղաք Իտալիայում—214
Լոխա, քաղաք Աֆրիկայում—343
Լոկրիս Էպիզեֆիրոսյան, հունական քաղաք Իտալիայում—41, 173, 204, 217, 234, 237, 318—321, 337—340
Լուկա, քաղաք Իտալիայում—120
Լուկանիա, մարզ Իտալիայում—6, 186, 215, 222, 223, 259, 260, 288, 292, 305, 318, 323
Լուկանիներ, ազգություն Իտալիայում—160, 173, 222, 261, 313, 326
Լուկերիա, քաղաք Իտալիայում—130, 208, 219, 220, 221, 223
Լուկրետիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—120, 337
Լուսին, փյունիկյան աստվածություն—209
Լուսիտանիա, մարզ Պիրենեյան թերակղզում—153
Լուսակիոս Կատուլոս Գայոս, Պունիկյան I պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—43—45, 353
Լևկադա, քաղաք Հունաստանում—208

Խալբ, տարտեսսիների քաղաքական գործիչ—188

Կալաբրիա, մարզ Իտալիայում—212, 246
Կալատիններ, քաղաք Իտալիայում—173
Կալելա, բերդ Իտալիայում—146
Կալիկուլա, լեռ Իտալիայում—139, 140
Կալիֆը, քաղաք Իտալիայում—138
Կալոն, սիրակուզացի քաղաքական գործիչ—228
Կալոր, գետ Իտալիայում—221, 259
Կալե, քաղաք Իտալիայում—138, 249, 290
Կալպուրնիոս Գայոս, դեպի Հռոմ Հաննիբալի արշավանքի ժամանակ Հռոմի քաղաքային պրետորը—285—290
Կալպուրնիոս Պիսոն Կեսոնիոս Լուկիոս, հռոմայեցի պետական գործիչ և զորապետ (II դ. առաջին կես)—419—421
Կամարինա, քաղաք Սիցիլիայում—38
Կամպանիա, մարզ Իտալիայում—138, 173, 176, 186, 199, 204, 209, 213, 221, 228, 257—260, 280, 281, 305, 312, 443, 447
Կամպանիացիներ, Կամպանիայի բնակիչները—49, 138, 181, 302, 305
Կաննե, քաղաք Իտալիայում—9, 27, 28, 109, 111, 141, 159, 160—164, 167—179, 184, 189—195, 199, 200, 205, 206, 211, 216, 220, 224, 226, 229, 234, 248, 283, 291, 296, 305, 334, 352, 379, 427—431, 440—442
Կանտիլիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ Հռոմում մեծ պոնտիֆեքսին կից դրագիր—191
Կանուսիում, քաղաք Իտալիայում—167, 174, 190, 193, 196, 312, 324
Կապենյան դարպասներ Հռոմում—285
Կապիտոլիում, այն բլուրներից մեկը, որոնց վրա տեղավորված է Հռոմը—168, 283, 285, 297, 298, 331
Կապուա, քաղաք Իտալիայում—6, 124, 138, 141, 173, 177—185, 200—202, 208, 213, 214, 219, 220, 223, 250, 257—263, 275, 279, 282, 283, 289—293, 300, 304, 305, 307, 311, 313, 323, 324, 337, 442—443, 447
Կասիլինում, քաղաք Իտալիայում—138, 139, 148, 196, 200—201, 223, 261
Կասինում, քաղաք Իտալիայում—138, 139, 445,
Կատոյա Ֆ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—436
Կատուլոն, քաղաք Իսպանիայում—70, 247
Կատուլոնյան լեռներ—152, 300
Կավդիա, քաղաք Իտալիայում—176, 217, 224
Կավդյան կիրճ Իտալիայում—175
Կավլոնիա, քաղաք Իտալիայում—312
Կատիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—324
Կարմիր ծով—19
Կելլիոս Անտիպատրոս, հռոմայեցի պատմիչ—108, 156, 182, 296, 342, 362, 446, 447
Կելտիբերներ, ազգություն Իսպանիայում—152, 275, 276, 327, 348, 436
Կելտիբերիա, մարզ Իսպանիայում—327
Կելտեր, տես Գալլեր
Կենտենիոս Գայոս, հռոմայեցի քաղաքական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—129, 132
Կենտենիոս Պենուլա Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի զորապետ—261
Կեկիլիոս Մետելլոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—190
Կեկիլիոս Մետելլոս Լուկիոս, հռոմայեցի մեծատոհմիկ, Պունիկյան II պատերազմի մասնակից—190, 297
Կեկիլիոս Մետելլոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ—148, 149
Կենոմաններ, գալլական ցեղ—116
Կերե, էտրուսկական քաղաք Իտալիայում—12, 124
Կերերա, հռոմեական աստվածություն—191
Կերկենե, մարզ Աֆրիկայի ափերի մոտ—153, 377, 378, 449
Կերկիրա, կղզի Հունաստանի արևմտյան ափերի մոտ—210, 301
Կեփալենիա, քաղաք Հունաստանում—207
Կիլա, վայր Աֆրիկայում—362, 450
Կիլիկիա, երկրամաս Փոքր Ասիայում—386
Կինաստ Դ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—453
Կինկիոս Ալիմենտոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—318, 319
Կիս, վայր Իսպանիայում—122
Կիրենե, հունական քաղաք Աֆրիկայում—380, 393
Կիրտա, քաղաք Աֆրիկայում—344, 418
Կլավդիոս Ավլոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—205
Կլավդիոս Ապպիոս, հռոմայեցի պետական գործիչ—27
Կլավդիոս Մարկելլոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—193, 196—198, 202, 217, 218, 221—223, 235—245, 265—274, 295, 302—306, 312, 313, 318—321, 430, 441, 442, 445
Կլավդիոս Մարկելլոս Մարկոս, Պունիկյան II պատերազմից հետո Հռոմի դեսպանը Կարթագենում—376
Կլավդիոս Մարկելլոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—27
Կլավդիոս Ներոն Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—222, 262, 280, 294, 321—326
Կլավդիոս Ներոն Տիբերիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—365
Կլավդիոս Պուլքիոս, Պունիկյան I պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—38
Կլավդիոս Պուլքեր Ապպիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—217, 229, 235—236, 239, 244, 245, 257—269, 280, 284, 290, 296, 446
Կլավդիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի զորապետ—323
Կլավդիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23, 111, 193, 358
Կլաստիդիում, հռոմեական բերդ Այսրալպյան Գալլիայում—110
Կլիտոմաքս, տե՛ս Հասդրուբալ-խմասասեր
Կլուպեա, կարթագենական բերդ Աֆրիկայում—37, 321
Կոզա, քաղաք Իտալիայում—134
Կոլ դե լա Տրավերսետե—439
Կոլբե Վ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—65

Կոլինեումյան դարպասներ Հռոմում—191, 285, 287
Կոմբե-ֆարնու Բ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—439
Կոմինիա Կերիտե, քաղաք Իտալիայում—258
Կոմպսա, քաղաք Իտալիայում—175, 176, 223, 441
Կոմպսլտերիա, քաղաք Իտալիայում—176, 223
Կոնսենս, քաղաքական գործիչ Տարենթոնում—445
Կոնսենտիներ, ազգություն Իտալիայում—248
Կովկաս—3
Կոտոն, կարթագենական նավահանգիստ—424
Կորնե, քաղաք Սիցիլիայում—216
Կորնելիոս Գնեոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—261
Կորնելիոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—306
Կորնելիոս Ասինա Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ—282
Կորնելիոս Լենտուլոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—365
Կորնելիոս Լենտուլոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ—79
Կորնելիոս Նեպոս, հռոմեական պատմիչ (I դ.)—6, 11, 39, 195, 381, 338, 435, 439, 440
Կորնելիոս Սկիպիոն Գնեոս, հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ Պունիկյան I պատերազմի ժամանակ—37
Կորնելիոս Սկիպիոն Գնեոս, հռոմեական զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ—100, 122, 152, 189, 246, 275—278, 293, 295, 445
Կորնելիոս Սկիպիոն Լուկիոս, հռոմեական զորապետ և պետական գործիչ, Հաննիբալին հաղթողի եղբայրը—367
Կորնելիոս Սկիպիոն Պուբլիոս, հռոմայեցի պետական գործիչ և զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ, Հաննիբալին հաղթողի հայրը—84, 89, 95—101, 103—114, 117, 118, 123, 125, 158, 189, 190, 247, 250, 275—278, 293, 295, 401,
Կորնելիոս Սկիպիոն Պուբլիոս, հռոմեական պետական գործիչ և զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ, Հաննիբալին հաղթողը—8, 107, 190, 295—298, 309, 310, 316, 317, 321, 326—367, 376, 383, 383, 393, 396, 400, 404, 417, 430, 441, 445, 447—452
Կորնելիոս Սկիպիոն Նասիկա Պուբլիոս, հռոմեական քաղաքական գործիչ (II դ.)—401, 402, 406, 411
Կորնելիոս Սկիպիոն Էմիլիանոս Պուբլիոս, հռոմեական զորապետ և պետական գործիչ (II դ.)—295, 402, 407, 416—426, 454
Կորնելիոս—Սկիպիոններ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23, 78—80, 84, 111, 118, 133, 143, 226, 295, 331, 334, 401, 420, 426—440
Կորնելիոս Կետեգոս Գայոս, հռոմայեցի քաղաքական գործիչ (II դ.)—394
Կորնելիոս Կետեգոս Մարկոս, հռոմայեցի քաղաքական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—394
Կորնելիա, Պ. Կորնելիոս Սկիպիոնի՝ Հաննիբալին հաղթողի, դուստրը—295
Կորսիկա, կղզի—33, 153
Կորտե Ֆ. Դելլա, Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—453
Կրեմոնա, հռոմեական գաղութ Այսրալպյան Գալլիայում—91, 93, 117
Կրեմոնայի լեռնանցք Ալպերում—439
Կրետե, կղզի—387
Կրետացիներ, կրետեի բնակիչներ—121
Կրոտոն, հունական քաղաք Իտալիայում—129, 204, 208, 344, 351, 443
Կումե, քաղաք Իտալիայում—213, 215, 219

Կուրիոս Դենտատոս Մանիոս, հռոմեական պետական գործիչ և զորապետ (III դ.)—26

Հադրումետում, փյունիկյան քաղաք Աֆրիկայում—361—364, 376
Համիլկար, կարթագենական զորապետ Պունիկյան I պատերազմի ժամանակ—39
Համիլկար, կարթագենական պարետ Լոկրիսում—338
Համիլկար, Գիսկոնի որդին, Մելիտա կղզու կարթագենական պարետ—95, 404
Համիլկար Բարկա, Հաննիբալի որդին, III դ. առաջին կեսի կարթագենական զորապետ և քաղաքական գործիչ—11, 12, 19, 22, 29, 38—49, 52—62, 64, 69, 70, 369, 434, 435
Համիլկար Սամնիացի, II դ. առաջին կեսի կարթագենական քաղաքական գործիչ—395, 407
Համիլկար (Հիմիլկոն) Փամեա, Պունիկյան III պատերազմի ժամանակ կարթագենյան զորապետ—415—419
Համոնիկորոս, սարդինիացի քաղաքական գործիչ—205, 216
Հայաստան—387
Հաննիբալ, III դ. կեսի կարթագենյան զորապետ—55
Հաննիբալ, տրիերարքոս, Հաննիբալ Բարկայանի բանակում—229
Հաննիբալ Մենամարտիկ (Մոնոմաքոս), կարթագենյան զորապետ Հաննիբալ Բարկայանի բանակում—87
Հաննիբալ Սարյակ, II դ. 1-ին կեսի կարթագենական քաղաքական գործիչ—394
Հաննիբալի անցում Ալպերով—103
Հաննոն, Հյուսիսային Աֆրիկայում պունիկյան հեծելազորատի հրամանատար—341
Հաննոն, Պունիկյան II պատերազմի ժամանակ Հյուսիսային Իսպանիայի փոխարքան—91
Հաննոն, Սարդինիայում, հակահռոմեական ապստամբության կազմակերպիչ—216
Հաննոն, կարթագենյան քաղաքական գործիչ, Բարկայանների հակառակորդ—45—47, 51, 54, 56, 69, 81, 186, 352, 360, 364, 369, 394
Հաննոն, Պունիկյան II պատերազմի ժամանակ Կասրուայում պունիկյան կայազորի պետ—289
Հաննոն, Պունիկյան II պատերազմի ժամանակ Սիցիլիայում կարթագենական զորահրամանատար—270, 274, 307, 308
Հաննոն, Իսպանիայում պունիկյան զորքերի հրամանատար, փոխարինեց Հասդրուբալ Բարկայանին—327
Հաննոն Սպիտակ, Պունիկյան III պատերազմի ժամանակ կարթագենյան զորապետ—418
Հաննոն, Բոմիլկարի որդին, Հաննիբալի զորքում սուֆետ և զորապետ—97, 166, 204, 215, 218, 219, 221, 222, 256—259, 443, 450
Հաննոն, Համիլկարի որդին, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենյան զորապետ—341, 342, 343, 354, 450
Հասդրուբալ, կարթագենական քաղաքական գործիչ, Բարկայանների կողմնակից—81
Հասդրուբալ, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենյան զորապետ—108, 123, 140, 166
Հասդրուբալ, Պունիկյան III պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ և քաղաքական գործիչ—407, 408, 412—426
Հասդրուբալ Դեդ (Նոխազ), Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենական պետական գործիչ—360, 364, 368—370, 374
Հասդրուբալ Ճաղատ, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ—206, 215
Հասդրուբալ, Համիլկար Բարկայի որդին, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ—45, 88, 101, 122, 142, 152, 187, 188, 212,

246, 250, 275, 277, 294, 299, 311, 316, 317, 321—327, 329, 330
Հասդրուբալ, Համիլկար Բարկայի փեսան, կարթագենական զորապետ և քաղաքական գործիչ (III դ.)—29, 57, 60—70, 74, 77, 85, 369, 437
Հասդրուբալ, Գիսկոնի որդին, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ—246, 276—277, 300, 315, 316, 326—330, 336, 340—343, 345—348, 395, 445, 449—452
Հասդրուբալ, Մասանասայի թոռը, Պունիկյան III պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ—414, 419, 420
Հասդրուբալ Իմաստասեր (II դ.)—454
Հելեններ, տե՛ս հույներ
Հելիկե, քաղաք—60
Հելյոր, քաղաք Սիցիլիայում—244
Հերա, հունական աստվածություն—209
Հերակլես (տե՛ս նաև Մելկերթ), փյունիկյան աստվածություն—209
Հերակլեա, Հիերոն II-ի դուստրը—228
Հերակլեա, քաղաք Իտալիայում—259
Հերակլեա Մինոյան, քաղաք Սիցիլիայում—244, 257, 274
Հերակլես (Հերկուլես), հունա-հռոմեական առասպելաբանության մեջ աստվածացված հերոս—87, 210, 285, 384
Հերակլեսյան սյուներ (այժմյան Ջիբրալտարը)—180, 250, 308
Հերբես, քաղաք Սիցիլիայում—238, 244
Հերոդոտոս, հույն պատմագիր (V դ.)—4
Հիբլա, քաղաք Սիցիլիայում—306
Հիերոն II, Սիրակուզայի թագավոր—36, 44, 94, 121, 154, 204, 224, 226, 228—231, 234, 241, 270, 444
Հիերոնիմ, Գելոնի որդին, Սիրակուզայի թագավոր—224, 225, 228—234, 262, 270, 444, 445
Հիմերա, գետ և քաղաք Սիցիլիայում—13, 231, 274, 306
Հիմիլկոն, կարթագենյան քաղաքական գործիչ, Բարկայանների կուսակից,—Պունիկյան II պատերազմի ժամանակվա զորապետ—186, 189, 151, 243, 245, 266, 267
Հիպոկրատես, սիրակուզացի զորապետ և քաղաքական գործիչ—229, 231, 238—243, 267, 268
Հիպոստեն, Սիրակուզայի թագավոր Հիերոնիմի մերձավորը—231
Հիպպոն Դիարիում, փյունիկյան քաղաք Աֆրիկայում—274, 419, 449
Հիպպոն Արքայական (Հիպակրիտ), փյունիկյան քաղաք Աֆրիկայում—51—54, 56, 335, 448
Հնդկաստան—20, 369
Հող, փյունիկյան աստվածություն—209
Հոմերոս, հույն բանաստեղծ—426
Հոնիական ծով—300
Հորացիոս Մարկոս, հռոմայեցի պետական գործիչ (VI դ.)—81, 434
Հորոսկոպա, քաղաք Աֆրիկայում—407
Հորտենզիոս, հռոմայեցի քաղաքական գործիչ (III դ.)—25
Հոֆման Վ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—453
Հոռդոս, կղզի Միջերկրական ծովում—372, 386
Հրեաներ, առաջավորասիական ազգություն—392
Հուլիոս Գիգինոս, հռոմայեցի բերական—298
Հուլիոս Կեսար Գայոս, հռոմեական պետական գործիչ—298, 358, 427
Հույներ—7, 15, 29, 35, 48, 59, 61, 63, 168, 173, 177, 192, 208—210, 226, 227, 254, 269, 334, 392
Հուստինոս, հռոմեական պատմագիր—6, 376, 380, 382, 437
Հունաստան—26, 31, 206—209, 211, 273, 279, 335, 379, 385, 399

Ճենովա, քաղաք Իտալիայում—330

Մագալ, բոյերի թագավոր—99
Մեծնեսիա, քաղաք Փոքր Ասիայում—386, 387
Մագոն, կարթագենական մատենագիր, երկրագործության վերաբերյալ երկասիրության հեղինակ—19
Մագոն, կարթագենյան քաղաքական գործիչ (III դ. առաջին քառորդ)—34
Մագոն, զորապետ Հաննիբալի բանակում—209, 256, 262, 320
Մագոն, Բարկայանների ազգակիցը, որ գերի էր վերցվել Սարդինիայում—216
Մագոն, Հաննիբալի դեսպանը Փիլիպոս V-ի մոտ—212
Մագոն, Նոր Կարթագենում պունիկյան կայազորի պետ—309, 310
Մագոն, Համիլկար Բարկայի որդին, Պունիկյան II պատերազմի ժամանակ կարթագենական զորապետ—45, 97, 108, 115, 117, 126, 166, 176, 186, 187, 205, 206, 246, 247, 276, 277, 300, 315, 317, 327, 328—331, 333—337
Մագոնյաններ, Կարթագենում դիկտատորների հարստություն (V դ.)—57
Մաթոս, վարձկանների և լիբիական գյուղացիների հակակարթագենական ապըստամբության ղեկավար—49—56
Մալակա (այժմ Մալագա), փյունիկյան գաղութ Իսպանիայում—58
Մակեդոնիա, պետություն Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելքում—169, 206—209, 246, 248, 265, 300, 301, 372, 378, 389, 398, 399
Մակեդոնացիներ, Մակեդոնիայի բնակչություն—208—212, 399
Մակետուլ, Մասիլիներ ցեղի քաղաքական գործիչ—341
Մահարբալ, Հիմիլկոնի որդին, հեծելազորի պետ Հաննիբալի զորքում—83, 196, 128, 129, 139, 166—169, 200, 280, 440
Մամերտիններ—37
Մայակ Ի. Լ., Հին աշխարհի այժմյան պատմաբան—177, 441
Մանդոնիոս, իսպանացի ցեղառաջնորդ—316
Մանդուրիա, քաղաք Իտալիայում—313
Մանիլիոս Մանիոս, հռոմեական զորապետ և պետական գործիչ (II դ.)—23
Մանլիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23
Մանլիոս Վոլսոնոս Գնեոս, հռոմեական զորապետ և պետական գործիչ—6
Մանլիոս Վալսոնոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—90, 94, 104, 194
Մանլիոս Վոլսոնոս Լոնգոս Լուկիոս, Պունիկյան I պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—37
Մանլիոս Տորկվատոս Տիտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ—194, 216, 443
Մասայսիլիներ, նումիդիական ցեղ—251, 328, 361
Մասանասա, նումիդիական թագավոր—251, 276, 331, 317, 328, 329, 336, 341, 345—349, 354, 361—363, 367, 371, 376, 391—397, 402—409, 411—415, 417, 449, 450, 453, 454
Մասեստուլ (Մեսոտիլ), նումիդիացի քաղաքական գործիչ—361
Մասիլիա, հունական գաղութ Ռոդանոս գետի գետաբերանի շրջանում (այժմյան Մարսելը)—63, 91, 96, 321
Մասիլիներ, նումիդիական ցեղ—251, 329, 341, 353, 448
Մասիկա, լեռնաշղթա Իտալիայում—139
Մասսանաբալ, Մասանասայի որդին, նումիդիացի պետական գործիչ—418, 419
Մաստիա, քաղաք Իսպանիայում—32, 67
Մավրեր, Մավրիտանիայի բնիկները—181, 189, 222, 362
Մավրիտանիա, մարզ Աֆրիկայում—251
Մատիենոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—238
Մարաստան, երկրամաս Իրանի հյուսիս-արևմուտքում—372
Մարիոս Ալիսիիոս, Կապուացի պետական գործիչ—214
Մարիոս Ստատիլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—161, 162

Մարկիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—277, 278, 295, 299
Մարկիոս Պալլայոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական պետական գործիչ—368
Մարկոս Կենսորինոս Լուկիոս, հռոմեական զորապետ և պետական գործիչ (II դ.)—411—415, 420, 421, 454
Մարկիոններ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23
Մարմորեում, քաղաք Իտալիայում—304
Մեգարա, Կարթագենի մի մասը—422
Մեգարա Հիբլեական, քաղաք Սիցիլիայում—238, 244
Մելե, քաղաք Իտալիայում—304
Մելիտա (այժմ Մալթա), կղզի Միջերկրական ծովում—95
Մելկարտ (տե՛ս նաև Հերակլես), փյունիկյան աստվածություն—40, 87
Մելտցեր Օ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—435—439
Մեծ Հարթավայր, վայր Աֆրիկայում—348, 349, 396, 402, 450
Մեծ Հունաստան, մարզ Իտալիայում—173, 252, 256, 260, 263, 292, 314, 318
Մենիգա, կղզի Աֆրիկայի ափերի մոտակայքում—153
Մենտիսա, քաղաք Իսպանիայում—293
Մեսսանա (այժմ Մեսսինա), քաղաք Սիցիլիայում—36, 217, 339
Մեսսինական նեղուց—94, 288
Մետապոնտոս, հունական քաղաք Իտալիայում—129, 255, 256, 260, 303, 315, 324, 326
Մետավրոս, գետ Իտալիայում—299, 325, 326, 330, 337
Մերիկոս, Սիրակուզայում իբերական վարձկանների հրամանատար—271
Մերձավոր Արևելք—20
Մերձսնծովյան երկրամաս—3, 369
Միլա, գետ Սիցիլիայում—238
Միլե—37
Միխնևիչ Ն., ռազմական արվեստի ժամանակակից պատմաբան—439
Միկիպսա, Մասանասայի որդին, Նումիդիացի պետական գործիչ—406, 418, 419
Մինուկիոս Ռուֆոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ և պետական գործիչ—132, 133, 139, 141—151, 155, 156, 164—167, 202, 440
Մինուկիոս Ռուֆոս Մարկոս, հռոմեական պետական գործիչ (II դ.)—394
Միշուլին Ա. Վ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—435
Միոնեսա—386
Միջերկրածովյան ավազան—3, 19, 20, 65, 67, 369, 389, 400, 427
Միջերկրական ծով—62, 423
Միջերկրածովք—122, 389։
Միջին Ասիա—3, 372, 379, 385, 387
Միրկան, զորապետ Հաննիբալի բանակում—209
Մոմզեն Թ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—45, 177, 442, 445, 447, 453
Մոն-ժենևր, լեռնանցք Ալպերում—439, 440
Մոն-սենի, լեռնանցք Ալպերում—449
Մոպսիոններ, արիստոկրատական տոհմ Կոմպանայում—175, 441
Մոտիա, փյունիկյան քաղաք Սիցիլիայում—8
Մորիս Ու., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—439
Մունդա, քաղաք Իսպանիայում—247
Մուտինա, քաղաք Այսրալպյան Գալլիայում—93
Մուտոն, կարթագենական զորապետ Հաննիբալի բանակում—274, 307, 308
Մուրգանտիա, քաղաք Սիցիլիայում—235, 245, 306

Ցապիգիա, մարզ Իտալիայում—130, 259
Ցումպերտց Մ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—448
Ցունիոս Բրուտոս Լուկիոս, հռոմեական պետական գործիչ (VI դ.)—81, 434

Ցունիոս Պերայոս Մարկոս, հռոմեական քաղաքական գործիչ Պունիկյան II պատերազմի ժամանակ—193, 201, 440
Ցունիոս Սիլանոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—197, 327, 328
Ցունիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Ցուսն, հռոմեական աստվածություն—11, 330, 352
Ցուպիտեր, հռոմեական աստվածություն—134, 285, 290, 298
Նաս, հրվանդան Իսպանիայի միջերկրածովյան եզերքում—32, 63, 66
Նապոլեոն Բոնապարտ—430, 439
Նավպակտոս, քաղաք Հունաստանում—207
Նարագարա, քաղաք Աֆրիկայում—362
Նարավաս, Նումիդիացի քաղաքական գործիչ (III դ.)—53
Նարնիա, քաղաք Իտալիայում—324
Նեապոլիս, քաղաքամաս Սիրակուզայում—267
Նեյման Կ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—439—442, 446
Նեիոս Կրիսպոս Քվինտոս, հռոմեական զորապետ, Պունիկյան II պատերազմի ժամանակ—246
Նեփերիս, քաղաք Աֆրիկայում—416—420, 424
Նիկե, քաղաք Իսպանիայում—247
Նիկոն, քաղաքական գործիչ Տարենտոնում—253, 254
Նոլա, քաղաք Իտալիայում—185, 196—199, 201, 215, 218, 221—223, 442, 443
Նոր Կարթագեն (այժմ Կարտահենա), կարթագենական գաղութ Իսպանիայում—40, 49, 69—72, 76, 81, 86, 91, 152, 308—311, 315, 327, 328, 329, 325
Նորկիոս Լիկինոս Լուկիոս, Պունիկյան պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ—325
Նումանտիա, քաղաք Իսպանիայում—8
Նումերիոս Դեկիմիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորքում սամնիական օժանդակ զորաբաժինների հրամանատար—147, 148
Նումիդիա, երկրամաս Աֆրիկայում—336, 348, 349, 361, 392, 394, 397, 402, 405, 407, 418, 427, 449
Նումիդիացիներ, Հյուսիսային Աֆրիկայի բնիկ վաչկատուն ցեղերը—29, 39, 53, 88, 97, 106, 107, 110, 114, 115, 126, 139, 163, 166, 167, 176, 181, 189, 220, 222, 251, 253, 274, 277, 281, 282, 285, 286, 290, 304, 307, 311, 317, 320, 324, 329, 335, 342, 345, 360—363, 391, 393, 396, 402, 419, 440, 450
Նուկերիա, քաղաք Իտալիայում—197, 198, 443
Նումիտորոն, քաղաք Իտալիայում—305

Շլիֆեն Ա. ֆոն, գերմանացի ռազմական տեսաբան—430
Շարեյտ Վ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—443
Շուլտեն Ա., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—437

Չինգիզ-խան—471

Պագոս (այժմ Պո), գետ Այսրալպյան Գալլիայում—91, 93, 101, 108, 113, 118
Պախ Է., Հին աշխարհի այժմյան պատմաբան—439, 446, 449—451
Պակիոս, բրուտիների առաջնորդ—313
Պակուվիոս Կալավիոս, քաղաքական գործիչ Կապուայում—178, 179, 182, 185, 441
Պաղեստին, երկրամաս Մերձավոր Արևելքում—372
Պամփյուլիա, երկրամաս Փոքր Ասիայում—386
Պանորմոս (այժմ Պալերմո), Փյունիկյան քաղաք Սիցիլիայում—245

Պապիրիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23
Պարթինիա, քաղաք Իլլիրիայում—210, 278
Պարսք, մարզ Իրանում—372
Պարինոս, հրվանդան Սիցիլիայում—230, 235, 243, 245, 269
Պելիգնիա, մարզ Իտալիայում—446
Պելիգներ, ազգություն Իտալիայում—140, 258
Պելոպոնես, մարզ Հունաստանում—256
Պենինյան Ալպեր—439
Պենատրոններ—173
Պեստում, քաղաք Իտալիայում—154, 174
Պետելիա, քաղաք Իտալիայում—202, 203, 445
Պետելիական բլուր Իտալիայում—319
Պերգամոս, քաղաք և պետություն Փոքր Ասիայում—372, 378
Պիկենում, մարզ Իտալիայում—124, 130, 324
Պինարիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—245
Պիսիդիա, մարզ Փոքր Ասիայում—382
Պիտիուսյան կղզիներ Միջերկրական ծովում—329
Պիրենեյան լեռներ, Պիրենեյներ—91, 92, 96, 317
Պիրենեյան թերակղզի—3, 11, 12, 19, 32, 58, 59, 63, 64, 68, 70—75, 86, 87, 142, 187—188, 206, 247, 250, 251, 275, 276, 292—295, 299, 308, 311, 315, 317, 327—329
Պլակենտիա (այժմ Պյաչենցա) հռոմեական գաղութ Այսրալպյան Գալլիայում—91, 93, 105, 108, 115, 123, 124, 322, 324
Պլավտիոս, քաղաքական գործիչ Սալապիայում (ըստ Զոնարասի)—303
Պլատոն, հույն իմաստասեր (IV դ.)—454
Պլեմինիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—338, 339, 340
Պլևրատ, Բրանկական թագավոր—301
Պլուտարքոս, հույն իմաստասեր և պատմագիր—158, 167, 242, 272, 314, 383, 389, 403
Պոլիբիոս, հույն քաղաքական գործիչ և պատմագիր—6, 7, 11, 14, 31—33, 40—51, 58—60, 63—68, 71, 75, 76, 77, 80, 85—88, 94—101, 103—106, 110—123, 129, 135, 137, 140, 144—150, 158, 159, 163—167, 173, 185, 203, 207—211, 225, 226, 229, 242, 243, 269, 284—288, 296, 297, 330, 345, 354—360, 363, 409, 426
Պոլիենես, սիրակուզացի քաղաքական գործիչ—233
Պոլիկլետես Կիրենեցի, Սիրակուզայի թագավոր Հիերոնի մերձավորը—229
Պոլիկսենիդես, սելևկյան նավատորմի հրամանատար (ըստ Ապպիանոսի)—386
Պոմպոկլիտես, սիրակուզացի քաղաքական գործիչ—270
Պոմպոնիոս Տիտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—248
Պոմպոնիոս Մատոնոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—131, 155, 190, 444
Պոնտոս, երկրամաս Փոքր Ասիայում—388
Պոսեյդոն, հունական և փյունիկյան աստվածություն—209
Պոստումիոս Ալբինոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—158
Պորկիոս Կատոն Մարկոս, հռոմայեցի քաղաքական գործիչ և գրող—64, 168, 401—406, 408—412, 417, 436, 453
Պրենեստե, քաղաք Իտալիայում—124, 135
Պրիամոս, Տրոյայի թագավոր—426
Պրոնոս, վայր Աֆրիկայում—55
Պրոսերպինա (Պերսեֆոնե), հունական աստվածություն—340
Պրուսիոս, Բիթինիայի թագավոր (II դ.)—388
Պունիկացիներ, տե՛ս կարթագենցիներ
Պուտեոլի, քաղաք Իտալիայում—219, 221, 261

Ռազին Ե. Ա., ռազմական արվեստի ժամանակակից պատմաբան—431
Ռեգիում, քաղաք Իտալիայում—35, 208, 283, 290, 292, 312, 313, 338
Ռեշեֆ, փյունիկյան աստվածություն—424
Ռոդանոս (այժմ Ռոնա), գետ Անդրալպյան Գալլիայում—93—100, 104
Սագունտում, քաղաք Իսպանիայում—8, 11, 64—68, 70—85, 90, 91, 152, 247, 300, 352, 369, 435
Սալամանտիկա (այժմ Սալամանկա), քաղաք Իսպանիայում—71
Սալապիա, քաղաք Իտալիայում—175, 224, 248, 303, 304, 320, 448
Սալեկա, քաղաք Աֆրիկայում—342
Սալենտիններ, ազգություն Իտալիայում—248, 323
Սամնիում (Սամնիտիդա), մարզ Իտալիայում—28, 137, 140, 141, 175, 176, 186, 223, 257, 312, 446
Սամնիտներ, Սամնիումի բնակչությունը—173, 180, 182, 217, 224, 304, 313
Սապրիպորտոս—306
Սարդինիա—12, 16, 21, 32, 37, 58, 121, 153, 205, 206, 216, 217, 351, 371, 445
Սարդինիացիներ, Սարդինիայի բնիկները—216
Սահարա—3
Սեդան, քաղաք Ֆրանսիայում—431
Սելևկյան թագավորություն Առաջավոր Ասիայում—372
Սեկսի, փյունիկյան գաղութ Իսպանիայում—58
Սեմպրոնիոս Գնեոս, ըստ ավանդության Կանների ճակատամարտից հետո գերի ընկած հռոմայեցիներից մեկը—195
Սեմպրոնիոս Բլեզոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական քաղաքական գործիչ—312
Սեմպրոնիոս Գրակքոսներ—395
Սեմպրոնիոս Գրակքոս Տիբերիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ—193, 201, 214, 219—223, 259, 261, 445
Սեմպրոնիոս Գրակքոս Տիբերիոս, հռոմայեցի քաղաքական գործիչ (II դ.)—400
Սեմպրոնիոս Լոնգոս Տիբերիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ—84, 89, 95, 105, 111—119, 125, 137, 146, 215
Սեմպրոնիոս Տուդիտանոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—167, 249, 343
Սեմպրոնիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23, 112
Սեմպրոնիա Պ., Կորնելիոս Սկիպիոն-Էմիլիանոսի կինը—295
Սենա, գետ Իտալիայում—329
Սեն-Բերնար Փոքր, լեռնանցք Ալպերում—439
Սեպիոս Լեսիոս, կապուացի պետական գործիչ—289, 290
Սերգիոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—238, 359
Սերվիլիոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—257, 258, 365
Սերվիլիոս Գեմինոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—359, 365
Սերվիլիոս Գեմինոս Գնեոս, հռոմայեցի քաղաքական գործիչ և զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ—118, 121, 124—127, 129, 132—134, 153—155, 159, 160, 165, 167

Սերվիլիոսներ, հռոմեական արիստոկրատական տոհմ—23, 118
Սերվիոս, հռոմայեցի մատենագիր—33
Սիդ—386
Սիդացիներ, ազգություն Իտալիայում—446
Սիկա (այժմ Կաֆ), քաղաք Աֆրիկայում—47, 49
Սիկաններ, ազգություն Սիցիլիայում—15
Սիլենոս, հույն պատմիչ—226
Սիկուլներ, ազգություն Սիցիլիայում—15
Սինոպա, քաղաք Փոքր Ասիայում—444
Սինուեսա, քաղաք Իտալիայում—139
Սիսիոս, սիրակուզացի քաղաքական գործիչ—233
Սիրակուզա, հունական քաղաք Սիցիլիայում—13, 61, 95, 224—249, 263, 265, 269—270, 273, 274, 300, 306, 337, 444
Սիրոս Փոքր, Միջերկրականի ծոց Աֆրիկայի ափերի մոտ—31—32, 449
Սիցիլիա—12, 13—15, 24, 31—45, 49, 84, 87, 89, 94, 95, 103, 104, 110, 121, 153, 158, 172, 180, 183, 193, 204, 207, 216, 227—238, 243, 245 255, 263, 269, 273, 274, 282, 300, 307, 308, 333—336, 365, 371, 449
Սիցիլին, քաղաք Իտալիայում—215
Սիփաքս, մասայսիլիների թագավոր—449
Սկալարդ Հ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—438, 439, 447—451
Սկերդիլեդ, Ֆիլիբրական թագավոր—300
Սկյուֆներ, ազգություն Հյուսիսային Մերձսևծովյան շրջաններում—3
Սկոպաս, հույն պետական գործիչ Էտոլիական միությունում—300
Սկրիբոնիոս Լուկիոս, ըստ ավանդության, Կաննեի ճակատամարտից հետո գերի ընկած հռոմայեցիներից մեկը—194
Սոսիգեն, սիրակուզական զորապետ—238, 267
Սոսիոս, հույն պատմիչ—226
Սոսիստրատոս, սիրակուզացի քաղաքական գործիչ—265
Սոփոնիսբա, Դիսկոնի որդի Հասդրուբալի զուգարը—340, 349, 449
Սպարտա, քաղաք Հունաստանում—206, 265, 301
Սպենդիոս, վարձկանների և լիբիական դյուղացիների հակակարգուկենական ապստամբության ղեկավար—49—56
Սպոլետիոս (այժմ Սպոլետո), քաղաք Իտալիայում—130
Ստալինգրադ (այժմ Վոլգոգրադ)—431
Ստատիոս Մեսիոս, կապուացի զորապետ—223
Ստատիոս Տրեբոնս, կոմպանացի մեծատոհմիկ—175
Ստատորիոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—250
Ստրաբոն, հույն պատմագիր և աշխարհագետ—390, 412, 413
Սուեսետաններ, ազգություն Իսպանիայում—276
Սուեսուլա, քաղաք Իտալիայում—199, 215, 219, 222, 249, 262, 444, 446
Սուլպիկիոս Գալբա Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—279, 365
Սուլպիկիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Սուկ ալ-Կրեմիա, վայր Աֆրիկայում—450
Սուկրո (այժմ Խուկար), գետ Իսպանիայում—66
Սուրա Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի զորապետ—153

Վասլ, կարթագենական աստվածություն—154
Վասլհամոն, կարթագենական աստվածություն—10
Վալենսիա, ժամանակակից քաղաք Իսպանիայում—66
Վալերիոսյան ճանապարհ Իտալիայում—446
Վալերիոս Անտիատոս, հռոմեական պատմագիր—342, 439
Վալերիոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—246
Վալերիոս Լևինոս Մարկոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ և պետական գործիչ—208, 212, 218, 224, 246, 300, 301, 303, 308, 312, 330, 353
Վալերիոս Մաքսիմոս, հռոմեական պատմագիր—272, 440
Վալերիոս Ֆլակկոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—308, 312
Վալերիոս Ֆլակկոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի քաղաքական գործիչ—79, 80, 283, 437
Վակեյներ, ազգություն Իսպանիայում—71, 72
Վալտեր Ժ., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—439, 442, 446, 451
Վանդալներ, գերմանական ցեղախումբ—8
Վեյցկովսկի Ի. Ի., Հին աշխարհի ժամանակակից պատմաբան—67, 436
Վեներա, հռոմեական աստվածություն—134
Վենուսիա, քաղաք Իտալիայում—137, 167, 174, 180, 181, 191, 305, 318, 323, 324
Վեսկելիում, քաղաք Իտալիայում—215
Վետոններ, ազգություն Իսպանիայում—435
Վետուրիոս Փիլոն Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական պետական գործիչ—155, 368
Վետուրիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Վերազարձնող (Պահապան-Վերադարձնող), հռոմեական աստվածություն—287
Վերգելիոս Մարոն Պուբլիոս, հռոմեական բանաստեղծ—3, 33
Վերգելոս, գետ Իտալիայում—195
Վերկելիում, քաղաք Իտալիայում—215
Վերմինա, Սիփաքսի որդին, մասայսիլիների թագավոր—361, 365

Վիբիոս, բրուտիների քաղաքական գործիչ—313
Վիբիոս Վիրիոս, կապուացի քաղաքական գործիչ—181, 290
Վիբոն, քաղաք Իտալիայում—95
Վիլիոս Պուբլիոս, II դ. սկզբի հռոմայեցի պետական գործիչ—382, 384
Վիկոնտիներ, գալլական ցեղ—20, 100
Վիկտումվիա, հռոմեական էմպորիում Այսրալպյան Գալլիայում—119
Վոլկեր, գալլական ցեղ—93, 97
Վոլկիաններ, ազգություն Իսպանիայում—90
Վոլտուրնոս, գետ Իտալիայում—138, 200, 202, 215, 280, 282, 284
Վոլումնիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Վուկանոսի կղզի—94, 95
Վուկիենտներ, ազգություն Իտալիայում—313

Տագոս (այժմ Տախո), գետ Իսպանիայում—71—73, 317, 437
Տաննետ, բնակավայր Այսրալպյան Գալլիայում—94
Տարակինա, քաղաք Իտալիայում—252
Տարակոն, քաղաք Իսպանիայում—123, 293, 300, 316, 327
Տավրիաններ, ազգություն Հարավային Իտալիայում—248
Տավրիններ, ազգություն Հյուսիսային Իտալիայում—104
Տավրոմենիում, հունական քաղաք Սիցիլիայում—274
Տարենտոն, հունական քաղաք Իտալիայում—35, 121, 166, 173, 223, 224, 255, 257—263, 269, 275, 290, 292, 306, 311—314, 319, 324, 445, 448
Տարշիշ, տե՛ս Տարտեսսոս
Տարսեյոս, տե՛ս Տարտեսսոս
Տարտեսսոս, քաղաք և պետություն Իսպանիայում—12, 32, 58
Տարտեսիններ, ազգություն Իսպանիայում—188
Տեանոս, իտալիկական քաղաք—290

Տելեսիա, քաղաք Իտալիայում—137, 223
Տեմենիտյան դարպասներ Տարենթոնում—254
Տեռակինա, քաղաք Իտալիայում—139
Տերենտիոս Քվինտոս, Հռոմայեցի պետական գործիչ (III դ.)—125
Տերենտիոս Վառոն Գայոս, Հռոմայեցի պետական գործիչ և զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ—211, 430, 438, 439
Տերենտիոս Վառոն Մարկոս, Հռոմեական մատենագիր—27, 163, 155—165, 167, 175, 180, 181, 190—193, 196
Տերենտիոս Կուլեոնոս Քվինտոս, Հռոմայեցի պետական գործիչ (II դ.)—376
Տերսիտներ (տարտեսացիներ), ազգություն Իսպանիայում—88
Տեփարիե Վելիտեաս, Կերե քաղաքի թագավոր—12
Տիբեր, գետ Իտալիայում—134
Տիբուր, Հռոմի արվարձան—135
Տիկինոս (այժմ Տիչինո), գետ Այսրալպյան Գալլիայում—105—110, 113, 115, 135, 296, 429
Տիններտ, կարթագենական աստվածություն—10, 11, 209
Տիսիա, քաղաք Իտալիայում—292
Տիրենյան ծով—45
Տիքա, քաղաքամաս Սիրակուզայում—266, 267, 279
Տիֆատա, լեռ Իտալիայում—214, 217, 219, 280
Տյուրոս (այժմ Սուր), Փյունիկյան քաղաք Միջերկրական Արևելքում—12, 378, 379, 410
Տորդոլետներ, տե՛ս Տուրդոլներ
Տրագիմենոսյան լիճ (այժմ Լագո դի Պերուջա)—127—135, 138, 152, 178, 220, 379, 400, 430
Տրեբիա, գետ Այսրալպյան Գալլիայում—110, 111, 113—117, 120, 134
Տրեբուլա, քաղաք Իտալիայում—176, 215
Տրիկորիներ, գալլական ցեղ—100
Տրիսկաստիններ, գալլական ցեղ—100
Տրիտոն, հունական և փյունիկյան աստվածություն—209
Տրոգիլյան նավահանգիստ, խարսխակայան Սիցիլիայում—265
Տրոյա, քաղաք Փոքր Ասիայում—426
Տուգա (Տուսկա), քաղաք Աֆրիկայում—336, 403
Տուլիոս Ցիցերոն Մարկոս, Հռոմայեցի պետական գործիչ, հռետոր և գրող (I դ.)—39, 273, 274, 442, 454
Տուսկա—402
Տուսկուլում, քաղաք Իտալիայում—285, 446
Տուտիա, գետ Իտալիայում—287
Տուրդետաններ, ազգություն Իսպանիայում—58
Տուրդոլներ (տորբոլետներ), ազգություն Իսպանիայում

Բուակինոն, քաղաք Գալլիայում—93
Բուտուլներ, ազգություն Իտալիայում—73

Ուզենտիններ—173
Ումբրիա, մարզ Իտալիայում—130, 324
Ունի, էտրուսկյան աստվածություն—12
Ուլբենկ Ֆ. Ա., Հին աշխարհի այժմյան պատմաբան—66
Ուտիկե, Փյունիկյան քաղաք Աֆրիկայում—51—56, 210, 275, 308, 342—349, 364, 410, 412, 419, 420, 427, 449, 450

Փաբիոս Լուկիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակվա պետական գործիչ—359
Փաբիոս Բուտեոն Մարկոս, Հռոմայեցի պետական գործիչ (III դ.)—438
Փաբիոս Մաքսիմոս Գանդաղկոտ Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ Հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—79, 84, 85, 89, 99, 111, 132—151, 153—160, 164, 190, 191, 215, 219—224, 249, 252, 283, 295, 297, 312—315, 318, 330, 333, 334, 358, 365, 400, 430, 438, 439, 443
Փաբիոս Մաքսիմոս Քվինտոս, Հռոմայեցի պետական գործիչ և զորապետ, նախորդի որդին—144, 220, 223, 248, 249
Փաբիոս Պիկտոր Քվինտոս, Հռոմայեցի հասարակական գործիչ և գրող—128, 191, 192, 226, 334, 434, 435
Փաբիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23, 112, 133, 333, 334, 358, 439
Փալարիդես, տիրան Ակրագանտում—225
Փալեոս, տարենթոնացի քաղաքական գործիչ—252
Փալերնոս, մարզ Իտալիայում—138, 140, 145
Փայլող դաշտավայր Իտալիայում—138
Փարոս, կղզի Իլլիրիայի ափերի մոտ—210
Փելյանասոս Լարտոս, էտրուսկ զինվոր Հաննիբալի բանակում—441
Փեսուլե (այժմ Ֆյեզոլե), քաղաք Իտալիայում—127
Փերոնիա, սրբազան պուրակ Հռոմի մոտակայքում—287
Փերուլե, քաղաք Իտալիայում—446
Փիդիաս, սիրակուզացի գիտնական, Արքիմեդի հայրը—240
Փիլեմենոս, Տարենթոնացի քաղաքական գործիչ—253, 254, 445
Փիլինոս, հույն պատմագիր—226
Փիլիպոս V, Դեմետրիոսի որդին, Մակեդոնիայի թագավոր—66, 207—213, 221, 256, 265, 273, 278, 301, 303, 335, 362, 372, 377, 379, 385, 431
Փիլիպոս (Կեղծ Փիլիպոս), Մակեդոնիայում գահի հավակնորդ—399, 419
Փիլիստոն, սիրակուզացի քաղաքական գործիչ—270
Փիլոդեմոս, արգոսցի, սիրակուզական զորապետ—229, 266, 267
Փյունիկիա, երկրամաս Մերձավոր Արևելքում—14, 15, 372, 386
Փյունիկիացիներ, մերձավորարևելյան ազգություն—7, 12, 58, 73, 205, 244, 311, 379, 392
Փյունիկյան խրամափոս, Աֆրիկայում բուն կարթագենական տարածքի սահմանը—354, 366
Փլամինիոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ Հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—119, 121, 124—129, 133, 136, 146, 149, 156
Փլամինիոսյան ճանապարհ—134
Փլավիոս Գնեոս, Հռոմայեցի պետական գործիչ—27
Փլավոս, լուկանիացի քաղաքական գործիչ—260
Փոնտեոս Տիբերիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—276, 277, 293
Փորմիոն, հույն իմաստասեր—432
Փոքր Ասիա—3, 372, 379, 385, 387
Փրաստոն, սիրակուզացի քաղաքական գործիչ—228, 229, 232
Փրեգելե, քաղաք Իտալիայում—283, 284, 446
Փրոնտինոս, ռազմական արվեստի վերաբերյալ երկասիրության հեղինակ—5, 143, 361, 439, 441, 445
Փրուսիոս, քաղաք Իտալիայում—446
Փրուգիփուլե, քաղաք Իտալիայում—223
Փուլվիոս Գայոս, Հռոմայեցի պետական գործիչ (III դ.)—120
Փուլվիոս Փլակոս Գայոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ և պետական գործիչ—280
Փուլվիոս Կենտիմալոս Գնեոս, Հռոմայեցի պետական գործիչ և զորապետ Պունիկյան II պատերազմի ժամանակ—250, 263, 279, 305, 446
Փուլվիոս Փլակոս Քվինտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ և պետական գործիչ—258—261, 279—287, 290, 305, 312, 313, 318, 323, 446
Փուլվիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23, 358

Քաղաքություն, հռոմեական աստվածություն—273
Քսանթիպոս, սպարտացի, Պունիկյան I

պատերազմի ժամանակ կարթագենական զորքի հրամանատարը—38
Քսենոփանես, որդի Կլեոմաքսի, հույն քաղաքական գործիչ—208, 212
Քսերքսես, պարսից թագավոր (V դ.)—31
Քվինկտիլիոս Վարոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—351
Քվինկտիոս Դեկիմոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ—306
Քվինկտիոս Կրիսպինոս Տիտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ և զորապետ—268, 318—320
Քվինկտիոս Կինկինատոս Լուկիոս, հռոմայեցի պետական գործիչ և զորապետ (V դ.)—26, 434
Քվինկտիոս Փլամինիոս Տիտոս, հռոմայեցի պետական գործիչ և զորապետ (II դ.)—388

Օգոստոս, հռոմեական կայսր (մ. թ. ա. 27 թ.—մ. թ. 14 թ.)—298, 357, 387, 427
Օգուլնիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Օլիմպիա, բնակավայր Սիցիլիայում—239
Օլիմպիադա, Ալեքսանդր Մակեդոնացու մայրը—298
Օլկադներ, աղգություն Իսպանիայում—437
Օկտավիանոս, տե՛ս Օգոստոս
Օկրիկուլում, քաղաք Իտալիայում—134
Օյբոնիոս, քաղաք Իտալիայում—130
Օնեսիգենես, Սիրակուզայի թագավոր Հիերոնիմի մերձավորը—230
Օնուսա, քաղաք Իսպանիայում—152
Օպիմիա, Պունիկյան II պատերազմի ժամանակ վեստալուհի Հռոմում—191
Օպիոս Գայոս, հույն պատմիչ—298
Օրոսիոս Պավլոս, հռոմեական պատմիչ—11, 128, 129, 167, 342, 425, 447
Օստիա, քաղաք Իտալիայում—134, 193, 196
Օստրովիտում, վայր Թոդանոս գետի վերին հոսանում—100
Օվկիանոսյան Նեղուց, տե՛ս Հերակլեսյան սյուներ
Օտակիլիոս Տիտոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմեական զորապետ և պետական գործիչ—134, 153, 158, 192, 216, 217, 275, 445
Օտակիլիոսներ, արիստոկրատական տոհմ Հռոմում—23
Օտտո Վ., Հին աշխարհի ժամանակագրից պատմաբան—64, 67, 436

Ֆալարին Դ., Հին աշխարհի ժամանակագրից պատմաբան—449, 451
Ֆլորենիա, Պունիկյան II պատերազմի ժամանակ վեստալուհի Հռոմում—191
Ֆուրիոս Ֆիլոս Պուբլիոս, Պունիկյան II պատերազմի ժամանակ հռոմայեցի պետական գործիչ—190

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Գլուխ առաջին. Հաննիբալի երդումը 10
Գլուխ երկրորդ. Իսպանիայի նվաճումը: Արշավանք դեպի Իտալիա . . 57
Գլուխ երրորդ. Օնոգուտ հաղթանակներ (Տիկինոսից մինչև Կաննե) . 103
Գլուխ չորրորդ. Մայրամուտ տանող ճանապարհին (Կաննեից մինչև Կապուայի անկումը) 168
Գլուխ հինգերորդ. Մայրամուտ տանող ճանապարհին (Կապուայի անկումից մինչև Զամա) 291
Գլուխ վեցերորդ. Հաննիբալը Կարթագենական կառավարության ղեկավար 364
Գլուխ յոթերորդ. Փախուստն Արևելք և կործանումը 377
Գլուխ ութերորդ. Վերջաբանի փոխարեն 389
Եզրափակում 427
Մանրագրություններ 433
Աղբյուրների կրճատ անվանանշանների ցանկ 456
Բառարան 458
Անվանացանկ 462

Կորաբլյով Իլյա Շոլեյմովիչ
ՀԱՆՆԻԲԱԼ

Кораблев Илья Шолеймович
ГАННИБАЛ
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1984

Հրատ. խմբագիր՝ Շ. Ս. Բաղինյան
Կրտսեր խմբագիր՝ Գ. Ռ. Կնյազյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ռ. Կարապետյան

ИБ 4534
Հանձնված է շարվածքի 10. 10. 1983 թ.։
Ստորագրված է տպագրության 19. 01. 1984 թ.։
Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպ. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 28,37 պայմ. տպագր. մամ., 28,82 պայմ. ներկ. թերթ, հրատ.՝ 28,83 մամ.։ Պատվեր՝ 2545։ Տպաքանակ՝ 20 000։ Գինը՝ 1 ռ. 90 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Айастан», Ереван—9, ул. Теряна 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна 65.



Հյուսիսային Իտալիա

Հարավային Իտալիա